

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍ

ՀԱՏՈՐ ԼԵ.

HAIGAZIAN UNIVERSITY PRESS

ՊԷՅՐՈՒԹ, 2015

THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

**HAIGAZIAN
ARMENOLOGICAL REVIEW
VOLUME 35**

HAIGAZIAN UNIVERSITY PRESS

BEIRUT, 2015

ISBN: 978-9953-585-16-1

FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN



Հայկազեան Հայագիտական Հանդէսը կը տպագրուի
Գալուստ Կիլպենկեան Հիմնարկութեան,
միլիարդներով

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԷՆ ԱՆԴԻՆ, ԵՒ՝ ԻՆՉ

Հայոց դեմ գործադրուած Ցեղասպանութիւնը հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան առանցքը կը կազմէ. անոր շուրջ յիշատակը դառնան անցնող հարիւրամեակի հայութեան պատմաքաղաքական, տնտեսական, ժողովրդագրական, մշակութային, ընկերային, բարոյահոգեբանական եւ այլ զարգացումները:

Հետեւաբար, Հայոց Ցեղասպանութիւնը է ու կը մնայ արդի հայագիտութեան օրախնդիր, մանաւանդ որ ցեղասպանութիւնը եւ անոր հետեւանքները չեն յաղթահարուած հայկականօրէն եւ մարդկայնօրէն: Առանց Ցեղասպանութեան յետնախորքը թափանցելու եւ երեւոյթները առաւելագոյն համակողմանիութեամբ ու հիմնաւոր ուսումնասիրելու եւ բացայայտելու՝ դժուար է հայ ժողովուրդի գիտական ամբողջական պատմութեան ընկալումը, որուն շնորհիւ կարելի կ'ըլլայ յստակօրէն տեսնել եւ ըմբռնել հայ ժողովուրդի մերօրեայ գոյութենական խորհուրդը, եւ ըստ այդմ՝ ռազմավարել հայ ժողովուրդի երթի տեսլականը՝ պետական եւ սփիւռքեան առումով: Ասոր ուղենիշ կրնայ հանդիսանալ հայ ազգի բոլոր բաղադրատարրերու մասնակցութեամբ դարբնուած Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Համահայկական Հռչակագիրը:

Ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչման ամենատարբեր միջոցառումները միջազգային ընտանիքի եւ պետութիւններու այլաբնոյթ մասնակցութիւններով եւ դրսեւորումներով, քանակական եւ որակական առումներով լայնածիր եղան եւ անկիւնադարձային ըլլալու նախանշանները կու տան:

Այս ասպարեզին մէջ իր ներդրումը ունեցաւ նաեւ Հայկազեան Համալսարանը, 31 Յունուար-1 Փետրուար 2015ին կազմակերպուած գիտաժողովով, սոյն հատորով եւ այլ ձեռնարկներով: Այս հատորը, որ նաեւ յարգանքի տուրք մըն է մեր կողմէ, իր նիւթերու բազմազանութեամբ փորձ մըն է յաւելեալ լոյս սփռելու Մեծ Եղեռնի ուսումնասիրութեան բարդ ու բազմաշերտ խնդրի տարբեր կողմերու գիտական հետազօտման:

Մակայն ո՛չ այս հատորը, ո՛չ ալ այլ հրատարակութիւններ կրնան յաւակնիլ տուած ըլլալ Հայոց Յեղասպանութեան համապարփակ գիտական պատմութեան ամբողջական պատկերը:

Անցնող հարիւր տարիներուն (մանաւանդ՝ երկրորդ կիսուն) լոյս տեսան Մեծ Եղեռնի պատմութիւնը արտայայտող բազմաթիւ երկեր ու աշխատութիւններ եւ արժանի աշխատանք կատարուեցաւ Հայոց Յեղասպանութեան վերաբերեալ փաստաթուղթերու եւ նիւթերու ծանրակշիռ ժողովածուներու հրատարակման: Մակայն Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութեան ոչ բոլոր ոլորտները արժանացան համաչափ եւ համարժէք ուսումնասիրութեան: Վերոյիշեալ իրագործումները, թէ՛ այլ յաջողումներ կատարուեցան թէ՛ պետականօրէն, թէ՛ հաստատութենական միջոցներով եւ թէ՛ անհատական նախաձեռնութիւններով: Այդուհանդերձ նորորա՛կ եւ առաւել՛ իրագործումներու յանձնառու պարտին ըլլալ նոյն այդ օղակները:

Արդարեւ, հայագիտութիւնը՝ իբրեւ հայագիտակցութիւն եւ ներգործութիւն հայութեան վրայ, ունի կարելիութիւնն ու իրաւունքը աւելի՛ն իրացնելու:

Յուժ կարեւոր է որ խարսխուելով ցարդ իրագործուածին վրայ, ԻԱ. դարու հայոց ցեղասպանագիտութիւնը իր ուշադրութիւնը սեւեռէ հետեւեալ խնդիրներուն վրայ.-

- Հայոց Յեղասպանութիւնը իբրեւ մարդկային եւ ազգային դատ, համաշխարհային առաջնահերթութիւն տեղափոխումը եւ իրաւական դաշտ փոխանցումը.
- Իրաւապահանջութեան գաղափարի զարգացումը եւ միջազգային ճանաչման համազգային, համախումբ մօտեցումի ձեւաւորումը.
- Հայութեան մարդկային, նիւթական, հողային եւ հոգեւոր կորուստներու տարողութեան եւ հետեւանքներու հայեցակարգի մշակումը.
- Յեղասպանութեան տակաւ շեշտաւորուող նոր հետեւանքներու վերլուծութիւնը.
- Հատուցման բազմաշերտ եւ յստակ բնորոշումը.
- Հայոց Յեղասպանութեան եւ այլ նմանատիպ ոճիրներու բաղդատական ուսումնասիրութիւնը.

- Սփիւոքի ծնունդը եւ կազմաւորումի ջանքերուն ու միջոցներուն ուսումնասիրութիւնը.
- Արեւմտահայ հողերու վրայ գոյատեւող թէ Պոլսոյ հայոց մնացորդացին ուսումնասիրումը.
- Թրքական Ժխտողական քաղաքականութեան գործընթացը.
- Հայ-թուրք յարաբերութիւններու գործընթացը:

Հետեւաբար, հրամայական է կենսունակ պահել հայագիտութիւնը, որուն հիմնական բնագաւառներէն մին դարձած է Յեղասպանութեան ուսումնասիրութեան կալուածը:

Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի ուղենշային այս հանգրուանին, միջազգային ցեղասպանագիտութեան ուսմունքին մէջ հայոց ցեղասպանագիտութեան առաւել միջազգայնացումը եւ անոր առաւել կենսաւորումը մարտահրաւեր է հայագիտութեան եւ նորահաս հայ սերունդին, իսկ անոր քաղաքական իրաւամշակումին յառաջմղումը՝ հայ պետականութեան եւ հայ միտքին:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Արտա Էքմէքճի (ի պաշտօնէ), Արշալոյս Թոփալեան, Արմէն Իւրնէշլեան, Անդրանիկ Տազեւեան (պատ. քարտուղար)

ԽՈՐՀՐԴԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Սիլվիա Աճեմեան, Ժիրայր Դանիէլեան, Երուանդ Երկանեան, Հրանոյշ Խառատեան, Սուրատ Հասրաթեան, Հրաչ Չիլինկիրեան, Մկրտիչ Պուլտուքեան, Սեդա Տատոյեան, Սուզըն Փեթի, Պերճ Ֆազլեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՀՀՀԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝

Արծուի Բախչինեան

WHAT BEYOND THE ARMENIAN GENOCIDE CENTENARY?

The Genocide perpetrated against the Armenians constitutes the axis of the contemporary history of the Armenian nation. Indeed, the historical, political, economic demographic, cultural, social, moral and psychological developments of the Armenians of the last one hundred years revolve around the Armenian Genocide.

As such, the Armenian Genocide remains on the agenda of the Armenian Studies, particularly as the Genocide and its consequences have not been fully addressed either humanistically or Armenian-wise.

Without uncovering the context of the Armenian Genocide as well as studying all possible aspects holistically and disclosing them, one can not grasp the complete history of the Armenians. Such an understanding would generate clear comprehension and existential insight of the modern Armenian nation. This in turn would enable us to strategise a 21st century vision and path for the Armenians as both a state and a Diasporic community. The Pan-Armenian Declaration on the Centennial of the Armenian Genocide, which was molded with the participation of all the constituents of the Armenian people, may spearhead this move.

The diverse activities conducted on the occasion of the Centenary, achieved in collaboration with a number of states and international organizations and extensive in number, nature, magnitude and diversity, herald a turning point in the resolution of the Armenian Genocide.

Haigazian University had its share in these events too, as it organized the conference “Armenian Genocide Centennial: Addressing the Implications” between January 31 and February 1, 2015, alongside public events and publications, including this volume. In fact this 35th volume of the *Haigazian Armenological Review* is a token of respect, which intends to further elucidate and objectively study the diverse and multilayered issues and aspects of the Armenian Genocide.

Nonetheless, neither this volume nor other publications can present the full-fledged history of the Armenian Genocide.

On the other hand, Armenian Studies as the discipline of Armenian awareness and its impact on the Armenians has the ability and right to go far beyond what it has achieved so far.

Particularly during the second half of the past century, a number of research books were published on the Armenian Genocide. Significant efforts were made in publishing documents and data elucidating the Armenian Genocide. These and other achievements were state, institutional

and individual initiatives. However, not all aspects of the Armenian Genocide have been scientifically and adequately researched.

Indeed, the above-mentioned actors should engage in achieving novel and further research in the field, focusing particularly on the following:

- Making the Armenian Genocide an international priority and positioning it in courts of law as a human and national cause.
- Developing the discourse of legal demands and formulating a pan-national, coordinated approach to the international recognition of the Armenian Genocide.
- Framing the discourse around the extent of the human, material, land and spiritual losses of the Armenians and their implications.
- Analysing the newly generated consequences of the Armenian Genocide, for example the sustainability of the Western Armenian Language.
- Clearly detailing the multilayered issue of retribution.
- Enhancing the comparative study of the Armenian and other genocides.
- Studying the birth of the Diaspora, efforts made and resources used for its formation.
- Investigating survivors in Western Armenia and the Istanbul Armenians.
- Documenting the denialist policy process of the Turkish state.
- Armenian-Turkish relations.

Accordingly it is imperative to maintain vitality in Armenian studies and in one of its basic disciplines, Armenian Genocide Studies.

At the crossroads of the centenary of the Armenian Genocide, its further internationalisation and vitalisation within the Genocide Studies discipline and is a challenge to Armenian studies and to the forthcoming Armenian generations, while enhancing its political and juridical development is a challenge to Armenian statehood and mind.

EDITOR IN-CHIEF

The Very Rev. Father Antranik Granian

EDITORIAL BOARD

Antranik Dakessian (executive secretary) - Arda Ekmekji (ex-officio) - Arshalouyse Topalian - Armen Urneshlian

CONSULTATIVE BODY

Sylvia Agemian - Megerditch H. Bouldoukian - Seta B. Dadoyan - Berj Fazlian - Murad Hasratian - Hranush Kharatian - Susan Pattie - Jirayr Tanielian - Hratch Tchilingirian - Yervand Yerkanian

Representative in Armenia

Artsvi Bakhchinyan

ԱՂԵՏԻ ՊԱՀԱՊԱՆԸ¹

ԱՇՈՏ ՈՍԿԱՆԵԱՆ

a.voskanian@mfa.am

Իսկ դու արթուն ես, հսկողներից մեկն ես, գտնում ես միւսին, թափահարելով այրուող փայտի կտորը, որ վերցրել ես կողքիդ ցախակոյտից: Ինչո՞ւ ես արթուն: Մեկն արթուն պետք է լինի՝ ասուած է: Ներկայ պետք է լինի մեկը:

Ֆրանց Կաֆկա

Ա. ՓՆՏՌԻՈՒՄ Է ԴԱՆԹԷ

Երեւի, Եղիշէ Չարենցի *Պատմութեան Քառուղիներով* պոեմը հայ ժողովրդի ճակատագրի մասին գրուած ամենայոյն տես գործն է՝ Խորենացու «Ողբը» ներառեալ: Երկի վերլուծութիւնը ես այլ տեղ եմ տուել²: Այստեղ միայն յիշեցնեմ, որ պոեմի խորքիմաստը հայերի «անանցեալ անցեալն» է: Հայ ժողովրդի պատմութիւնը, ըստ Չարենցի, պատմական չէ. այն «որպէս անմիտ գրոյց» տրոհուում է առանձին չկապակցուած պատահիկների, ի վիճակի չլինելով իրականանալ որպէս ինքնաշարժ ամբողջութիւն: Այդ անինքնություն եւ անազատ տեղապտոյտի արդիւնքը հայոց համընդհանուր ցրումն է: Արտաքին եւ ներքին ճնշումների ներքոյ հայ հասարակութիւնն այլասերուել, վերածուել է անհատների տձեւ կոյտի, որոնք դարեր շարունակ իրենց հոգու ստեղծարար հուրը բոլորից թաքուն վառել են միայնակ, վախվիւելով՝ ինչպէս յանցագործն է վառում իր լապտերը միգում՝

Ջլատուել է այսպէս ժողովրդի անեզր

Հաւաքական հանճարը զարկիչների հանդէպ,-

Եւ դարձել է ահա ժողովուրդը ե՛ւս,

Իր տէրերի նման անուղի ու անդէմ...³:

Չարենցն առաջինը չի եղել, որ արձանագրել է հայ ժողովրդի հաւաքական հանճարի ցրման, ատոմացման (atomization) իրողութիւնը, ոչ էլ միակը, որն այդ ցրումը յաղթահարելու համար անհրաժեշտ է համարել զօրաշարժի ենթարկել պատմական ասանդոյթի ստեղծագործ բաղկացուցիչը, նրա չօգտագործուած ներուժը: *Պատմութեան Քառուղիներով* պոեմի եւ «Պատգամ» բանաստեղծութեան լոյս աշխարհ գալուց տասնինը տարի առաջ, 1914ին երիտասարդ Յակոբ Օշականը (այն ժամանակ դեռեւս

Քիւֆէճեան), ազգային կեանքի անմխիթար վիճակը նկատի ունենալով, դառնութեամբ գրել է. «...Պատռտուած, հինցած, իր կեղորոնէն, իր երկրէն, իր կրօնքէն վոնտուած, թափառիկ, աննպատակ արշաւի մը գետնաքարշութեան մէջ նիւթացած, անուն չունեցող, մարմին չունեցող, իւրտուն զանգուած մը կայ մեր առջեւ...»⁴:

Օշականը, ի տարբերութիւն ազգային ամբողջը սոցիալական տեսանկիւնից դիտարկող Չարենցի, ժողովրդի նախասկզբնական, կորիզային հաւաքականութիւնը կրօնական աւանդոյթի միաւորիչ ուժի մէջ է տեսել: Հոգեւոր ամբողջականութիւնը խախտուել է, քանի որ «*հայ եկեղեցիները դադրած են մեր ժողովուրդին հոգիին համար բեւեռներ ըլլալէ*»⁵: Հաւատի ժողովող գործառոյթի անհետացմամբ սպառուել է այն լարման դաշտը, որն առանձին անհատներից հաւաքականութիւն է ձեւաւորում:

Այս մտահոգութեամբ է, որ Պոլսում ստեղծագործող մտաւորականների աստեղային խումբը (Կոստան Չարեան, Օշական, Դանիէլ Վարուժան, Գեղամ Բարսեղեան, Ահարոն Տատուրեան)⁶ ձեռնարկել է *Մեհեան* հանդէսի հրատարակութիւնը: Մեհեանականների հոգսը «ցեղի հոգին» է եղել, նպատակը՝ հոգեւոր հաւաքականութեան վերականգնումը:

Եթէ Օշականը հայ հոգու աղէտալի վիճակը մակաբերել է եկեղեցու ազդեցութեան պատմականօրէն հասկանալի թուլացումից, ապա *Մեհեանի* խմբագրապետ Չարեանը, հանդէսի երկրորդ պրակի էջերում աւելի կտրուկ հարցադրում է արել, կասկածի տակ դնելով «Հայու Յիսուս»ի, հետեւաբար՝ քրիստոնէութեան հայկական կերպի, նախասկզբնական որակները. «*Յիսուս օտար է մեզի: (...Ազգային հանճարը, հիանալի յայտնատեսութեամբ մը ընդունելով Քրիստոնէութեան հիմնադրին պատուէրները, չէ ըմբռնած, չէ ապրած անոր ներքին ու արտաքին պայքարը*»:

...Յաւով ըսենք՝ Հայ Հոգւոյն մէջ տուայտանք չկայ): Այս ժողովուրդը, որ ապրած է հարիւր հազար Գողգոթաներ հարիւր հազար Յիսուսներու, այս ժողովուրդը ապրած չէ երբեք ներքին, բարոյական Գողգոթայ մը»⁷:

Ելքը, ըստ Չարեանի, վրիպած ճանապարհը նորովի անցնելն է. «*Ուստի, որպէսզի ապրինք կենդանի կեանքով, հարկ է կա՛մ վերաստեղծել զայն նորէն ապրելով իր անձնական, ներքին*

պայքարը՝ արիական իտէալին հասնելու համար, կա՛մ պէտք է մարտնչիլ անոր դէմ, տապալել զայն, ստեղծելու համար նոր պատկերը մեր նոր հոգիին»⁸:

Անկախ Օշականի եւ Ջարեանի ձեւակերպումների էլեւէջներից, նրանց հարցադրումների միտումը միասնական է: Երկուսն էլ համոզուած են, որ ժողովրդի սկզբնական միասնականութիւնն ապահովող աւանդոյթի կենդանի սինկրետիզմը (syncretism) քայքայուած է, եւ որ նոր սերնդի խնդիրը «հայ հոգու» միասնութիւնը նոր հիմքի վրայ վերանուաճելն է:

Այդ ըմբռնումից ելնելով, Օշականը հարց է դրել ազգային հաւաքականութեան դիցաբանական առասպելաբանումն արուեստագէտի գեղարուեստական կեղծաբանումով փոխարինելու մասին: Նպատակը՝ ազգային գոյութիւնը օրինականացնող պատումի վերաձեւակերպումն էր գեղարուեստական գրականութեան միջոցներով: Ժողովրդի նիւթական պատկերաստեղծման խաթարուած կարողութեան տեղը պէտք է զբաղեցնէր հայաստանեայց գրականութիւնը: «Հայաստանեայց» բնորոշումը կարելու էր, քանի որ շեշտում էր հայ գրականութեան երկու՝ արեւմտեան եւ արեւելեան ճիւղերի միասնականութիւնը: Խնդիրն այն էր, որ բանաստեղծական համադրութեան ուժով կայանայ այնպիսի «տիեզերական կեղծիք» (fiction universelle)⁹, որն իր մէջ ամփոփի հայերի Սուրբ Գիրքը, հայ ժողովրդի հաւաքականութիւնը նորովի հաստատող սրբազան գիրը:

Քանի որ «ցեղի հոգին» արտայայտելու գործառոյթն այլեւս արխայիկ (archaic) հաւաքականութիւններից անցնում էր մեծ անհատականութիւններին՝ բանաստեղծներին, Օշականը խօսում է հայկական Դանթէի անհրաժեշտութեան մասին. «*Հատուածեալ մեր գոյութիւնը ամբողջութեան տանելու համար, կը սպասենք մեր Տանթէին*»¹⁰:

Բ. ՎԱՍՆԶԻ Ո՞Վ Է ՉԱՐԵՆՑԸ

Արդե՞օք հայաստանցի բանաստեղծ Չարենցն էր լինելու ժողովեալ հայաստանեայց գրականութեան հիմքերը ձեւաւորող այն նոր Դանթէն, որի գալստեանը սպասում էր արեւմտահայ հոգու անզուգական թարգմանը: Երեւակայելու համար, թէ ինչ տարակուսանք կարող էր առաջացնել նման ենթադրութիւնն

Օշականի մօտ, բաւական է յիշել վերջինիս՝ Չարենցին տուած գնահատականը. «Վասնզի ո՞վ է Չարենցը: Ո՞վ է այս՝ ինքզինքէն մատ մը անդին չտեսնող, ինքզինքէն դուրս պուտ մը կրակ չունեցող, իրմէն դուրս ոչ մէկ բանի հաւատացող մարդուկը, որ... իր պապերուն աճիւնները կոխկոտեց առանց գիտնալու, թէ ուր կ'երթայ»¹¹:

Այնուամենայնիւ, նոյնիսկ այս անբարենպաստ յուզական յենքի վրայ հարցադրումն անտեղի չէ: Ոչ միայն այն պատճառով, որ մեծ ֆլորենտացու համադրական հանճարի ազդակները բացորոշ ձեւով երեւան են գալիս Չարենցի բազմաթիւ գրութիւններում¹²: Ընտրուած տեսանկիւնից առաւել հետաքրքրականն այն է, որ Օշականը 1924ին հրատարակած քննադատական յօդուածում ինքն է անդրադարձել Չարենցի «Դանթէական յաւակնութիւններ»ին: *Դանթէական Առասպելի* առանձին դրուագները զուսպ դրուատելուց եւ ընդհանուր արդիւնքով իր անբաւարարուածութիւնն արտայայտելուց յետոյ, Օշականն ամփոփել է. «Ու Տանթէներուն ստուերը լաւ էր հանգիստ ձգել, երկու դիակ ու երկու պզտիկի մահ պատմելու համար:

Բայց ես հաւատք ունիմ, որ Եղիշէ Չարենց կրնար Տանթէն անգամ ստուերի մէջ ձգել, եթէ կենար, կենար իր ոտքերու վրայ, նեխած դիակներուն մէջտեղը ու նայէր, նայէր, նայէր...: Իր տեսածները զինուորի տպաւորութիւններ պիտի չըլլային այն ստեն: Ու իր գոյգ մը աչքերէն ցեղը պիտի նայէր, այդ օր-ցերեկով, առանց պատճառի մորթուած աչքը մեր ժողովուրդին»¹³:

Օշականի անբաւարարուածութիւնը բանաստեղծի ստեղծագործութեամբ տարիների հետ միայն աճել է: Եթէ քսանչորս թուին, հրաժարուելով Չարենցի մէջ Դանթէ տեսնելուց, Օշականը, այնուամենայնիւ, բաց է պահել հեռանկարը՝ «Ան մտած է առեղծուածի շրջանին մէջ: Ինչպէ՞ս դուրս կու գայ անկէ: Ապագան պիտի ըսէ ատիկա»¹⁴, ապա քառասնականներին Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի ուսանողներին թելադրած իր դասախօսութիւններում նա հնարաւոր է համարել վերջնական եւ անբեկանելի դատավճիռ կայացնել. «Իրողութիւն է, որ Չարենցի շինծու համբաւը, գերակառոյց վարկը բան չէ ասելցուցած արեւելահայ քերթողութեան»¹⁵:

Գ. ԱՂԷՏԻ ՀԱԻԱՔԱԿԱՆ ՈՒԺԸ

Որո՞նք էին այն բացերը, որ թոյլ չտուին Չարենցին ստանձնելու ժողովրդի հաւաքական ոգին արտայայտողի դերը՝ «ստուերելով անգամ Դանթեին»: Ահա դրանց ցանկը, ըստ Օշականի. «...անոր պարտականութիւնն էր տալ մարդերը». «...չկայ հոն մեր ցեղին աւանդական թշնամին, այնպէս՝ ինչպէս գիտէինք մենք՝ արեւմտահայերս». «...կը սպասէինք առնուազն տեսնել մեր Երկիրը... Աղէտի տարին...»¹⁶:

«Աղէտի տարին» - ահա կիզակէտը: 1924ին Օշականին *Մեհեանից* բաժանում էին տասը ողբերգական տարիներ եւ Աղէտը: Նրա եւ Չարենցի անհամատեղելիութիւնն Աղէտի նկատմամբ որդեգրած դիրքորոշման մէջ է: Օշականը, մի կողմից մեղադրում է Չարենցին սուբեկտիւիզմի (subjectivism), սեփական ապրումների վրայ կենտրոնացած լինելու, միւսից՝ հեռակայող քննադատականութեան մէջ՝ այն դէպքում, երբ նա պէտք է իր հայեացքը վերածէր միջոցի, որով աշխարհին է նայում «*օրը ցերեկով, առանց պատճառի մորթուած աչքը մեր ժողովուրդին*»:

Այս երկու, հակադիր թուացող մեղադրանքները համատեղող եւ վէճի նետարդն ի ցոյց դնող բանալին առանց պատճառի մորթուած ժողովուրդն է:

Արդե՞՞ք, խօսքը ճիշտ ենք ընկալում: Ի՞նչ է նշանակում Օշականի «առանց պատճառի»ն - Մեծ Եղեռնի զոհերի անմեղութիւնը (տեսակէտ, որ անշուշտ նաեւ Չարենցինն էր), թե՞ Աղէտը քաղաքական, ընկերային եւ այլ պատճառներով բացատրելու անհնարիւնութիւնը, այսինքն՝ Աղէտի «պատճառ չունենալը», հետեւաբար, հասարակական օրինաչափութիւնների ոլորտին չպատկանելը:

Որ «պատճառ»ն այստեղ նաեւ երկրորդ իմաստով է օգտագործուած՝ վկայում է նոյն վերլուծականի այն հատուածը, որում Օշականն իր քննադատութիւնը տարածում է «Ազգային Երագ»ի երգիծական կառոյցի վրայ.

Երկինքէն կախուած՝ կը նայի մեր երկրին: ...հոս մարդերը վիշտին ու Եղեռնին մարդերը չեն: Այլ կարծր ու բիրտ հեգնութեան մը տակ ծիծաղելի հերոսներ...:

Բայց պէտք չէ մոռնալ, որ մեր աղէտը իր ծիծաղելիութեամբը չէ, որ մեծ եղաւ: Մեծ է անիկա քայքայուող լերան մը նման: Մեծ է անիկա ծովերուն տակը սուգուող երկրամասի մը

կործանումին նման: Ու անտեղի է այդ հսկայ վերիվարումներուն դիմաց զբաղիլ պատիկ, եղկելի կիրքերու պայքարովը¹⁷:

Հայոց Մեծ Եղեռնը համեմատելով «քայքայուող լեռան» կամ «սուզուող մայրցամաքի կործանման» հետ, Օշականն այն օժտում է բնութեան երեւոյթներին յատուկ տիեզերական ընդհանրականութեամբ եւ վերածում է բացարձակ իրադարձութեան, որը սոցիալական քննադատութեան մակարդակով, իհարկէ, բացատրելի լինել չի կարող: Այստեղից, Չարենցին ուղղուած մեղադրանքը՝ «մանր, եղկելի կրքերի պայքարով» զբաղուելու վերաբերեալ:

Հասկանալի է, իհարկէ, որ Չարենցին՝ հայոց ազգային ողբերգութեան սոցիալական արմատների հետազօտման առումով, անհատ մարդկանց դէմ պայքարը չէ, որ հետաքրքրել է: «Ազգային Երագ»ում եւ մանաւանդ «Մահուան Տեսիլ»ում պատկերուած պատմական անձնատրոսիւնները՝ Ալիշանից մինչեւ առաջին հանրապետութեան քաղաքական առաջնորդները, որոշակի գաղափարների, հասարակական հոսանքների եւ միտումների մարմնատրոսներ են, որ մէկը միւսի ետեւից ասպարեզ ելնելով, ի բաց են դնում հայոց մշակութային, գաղափարական եւ քաղաքական կեանքի համայնապատկերը. այն համայնապատկերը, որի վերջում երեւակում է Աղէտը: Եւ եթէ ճիշտ է, որ պտուղներով կը ճանաչէք նրանց (Մատթ. 7,16), ապա ճիշտ է նաեւ Չարենցի համոզմունքը, որ հայոց պատմութեան մէջ գործող «բարոյական ուժերը» անմասն չեն կատարուածի համար պատասխանատուութիւնից:

Գիտենք, որ այդ հարցերն Օշականին էլ են տանջել: Մառնարիւն բանականութեան եւ անողոք ինքնառեֆլեքսիայի օրինակները, որ տուել է նրա Աղէտից սնուող արձակը¹⁸, հազուագիւտ են ոչ միայն հայ գրականութեան, այլեւ հայ տեսական մտքի համար: Ակնյայտ է, որ հայ հասարակութիւնն Օշականի վեպերում էլ անմեղ չէ, առնուազն՝ պատրանքներ ունենալու, միամտութեան կամ թրքացման ընթացքին չդիմակայելու առումով¹⁹: Ուրեմն հակասութիւնն այստեղ չէ: Երկու հակոտնեաների վեճն այլ հողի վրայ է ծաւալում:

Օշականը կասկածով էր վերաբերում «համամարդկային-ընկերային» բնոյթի փաստարկներին: Ոչ միայն այն պատճառով,

որ մտավախություն ուներ, որ «համաշխարհային առաջընթացի» թոհուրոհում կարող է մոռացուել-կորչել տառապող ժողովրդի ողբերգությունը²⁰: Որոշիչն այն էր, որ Օշականն Աղետի արմատները ընկերային յարաբերություններից անդին էր փնտռում՝ «հողով եւ արինով» պայմանաւորուած ազգային ենթագիտակցութեան խորքում, ուր, նրա ներզգացողութեան համաձայն, բիրեղացել են «թուրքի թրքութիւնն» ու «հայի հայութիւնը»²¹: Այս անհամատեղելի սուբստանցների (substance) փոխներթափանցումից առաջ է եկել Մեծ Եղեռնի երկրաշարժը, որը - անկախ պատմութեան յորձանուտը ներքաշուած հերոսների գիտակցուած կամ չգիտակցուած գործողութիւններից - մնում է անկասելի եւ անշրջանցելի՝ մայրցամաքներ կործանող ենթակեղեւային հրահեղուկի մակընթացութեան յանգոյն:

Սրա հետ ոչինչ անել հնարատր չէ: Եւ դա նշանակում էր, որ հայաստանեայց գրականութեան գալիք Դանթէների կոչումն այսուհետեւ ոչ թէ Աղետի բացատրութիւնն էր լինելու, այլ՝ նրա նկարագրութիւնը, այսինքն՝ պահպանումը գրութեան մէջ:

Այդպէս, *Մեհեանի*ց տարիներ յետոյ, բայց մեհենականների հարցադրումներին լիովին համապատասխան, Օշականը յայտնաբերել է հայոց սուրբ գրքի նոր տապանակը: Աներեւակայելի պարադոքսն (paradox) այն էր, որ հայ ժողովրդի հաւաքական հանճարի ցրումը վերջնական ջախջախման հասցրած Աղետը գալիս էր լցնելու աւանդական հաւատալիքների սպառման արդիւնքում առաջ եկած պարապը:

Աղետն էր յենքն այն նոր, տիեզերական կեղծիքի²², որի միջոցով Օշականը ջանալու էր կանխել ազգային կորիզի վերջնական քայքայումը:

Դ. ԿԵԱՆՔԸ ՈՐՊԷՄ «ԱՇԽԱՐՀ, ՄԻՋՈՑ ԵՒ ՆՊԱՏԱԿ»

Կործանման անխուսափելիութեան շնորհիւ՝ Աղետի պատումը մերձենում է հին յունական ողբերգութեան սեռին - հանգամանք, որ անիմաստ է դարձնում եղելութեան այլեւայլ, մանաւանդ՝ ընկերային պատճառների որոնումը եւ յարաբերականացնում նրա յորձանուտը ներքաշուած հերոսների մեղաւորութեան կամ անմեղութեան մասին հարցադրումը: Յարաբերականացնում է, բայց աւելորդ չի դարձնում, քանի որ սեփական գործողութիւնների կործանարար հետեւանքները

կանխել չկարողանալը, միեւնոյն է, մեղք է, որը *սուբէկտիօրէն* անմեղ մասնակցին միաժամանակ նաեւ մեղաւոր է դարձնում: Ամենաակնառու օրինակը *Էդիպ Արքան* է:

Միւս կողմից, սակայն, անտիկ ողբերգութիւնը բաւականաչափ «սուբէկտի» չէ մեզ անհանգստացնող դէպքն ամբողջութեամբ արտացոլելու համար: Ճակատագրի հարուածների տակ կործանուող յոյների ապրումներն ու յոյզերը հանդիսատեսի մօտ համակրանք կամ հակակրանք, սարսափ կամ կատարսիս (catharsis) առաջացնելով հանդերձ, հանդէս չեն գալիս որպէս վերջինիս գործողութիւնն առաջ մղող ազդակներ²³:

Այլ է ողբերգականի նորժամանակեայ ըմբռնումը, որն իրադարձութիւնների ճակատագրական անկասելիութիւնը մակաբերում է հերոսների հոգեկերտուածքից²⁴: Դրանով է, որ բնաւորութիւնների դրաման տարբերում է իրավիճակների դրամայից, հերթական անգամ արդարացնելով սուկրատեան թեզն այն մասին, որ «մարդու բնաւորութիւնը նրա դէն է»:

Անհատների կեանքի ելեւէջների նկատմամբ սեւեռուն ուշադրութիւնը Օշականի գրական մեթոդի կորիզային բաղկացուցիչներից է եղել: Բայց նրա ստեղծագործութեան գերնպատակն արեւմտահայութեան հաւաքական ճակատագիրն էր, իսկ վերջինիս «դեմոն»ը - եթէ նման *համատեքստում* այդ արտայայտութիւնը դեռեւս իմաստ ունի - հանրութեան հաւաքական բնաւորութիւնը պետք է լինէր, երեւոյթ, որը սովոր ենք իմաստաւորել որպէս «բարքեր»: Ինքը, Օշականը գերադասել է «հոգեխառնութիւն» արտայայտութիւնը, իր նպատակը համարելով «ժամանակի հոգեխառնութեան համապատկերի»²⁵ նկարագրութիւնը:

Կենտրոնացումը «հոգեխառնութեան» վրայ որոշիչ է: Օշականի խօսքը քաղաքական գաղափարների եւ նոյնիսկ բարոյական սկզբունքների մասին չէ: Հետազօտութեան առարկան հանրութեան մէջ գերակշռող մտածելակերպի եւ գործելակերպի այն օրգանական (organic) միաձուլումն է, որ յօդաբաշխուած չէ բացորոշ կանոնների ձեւով, այլ աւելի շուտ սնւում է լաի եւ վատի մասին հանրային փորձառութեան մէջ արմատաւորուած ներունակ պատկերացումներից: Այստեղ էլ, ինչպէս հնադարեան դիւցազնավէպում հաստատուած կարգն ու անհատական գործողութիւնները նոյն ակունքից են սնւում, քանի որ

անհատներին օրեկտիվի զսպաշապիկը պարտադրող միջավայրը նույն այդ անհատների գործողություններից հիստոլոգ հանրային յարաբերությունների ցանցն է²⁶: Եւ եթէ նման հաւաքական սուբեկտի հնարաւոր է «ողբերգական մեղք» վերագրել, ապա այն փառայեղօրէն միամիտ գոյա-բարոյաբանական իմաստով, որով Անաքսիմանդրոսը «մեղաւոր» է համարել բնութեան երեւոյթները, իրերի վախճանը դիտելով որպէս դրանց գոյութեան ընթացքում առաջ բերած անիրաւութեան հատուցում²⁷:

Այդ կերպ գոյութիւն ունեցող աշխարհն ինքնաբաւ տարերք է: Այն չի ենթարկուում ո՛չ դրսից պարտադրուող որեւէ (նաեւ աստուածային) կարգի, ո՛չ էլ առանձին անհատների իմացական ճիգի միջոցով իմաստաւորուած եւ յանձնառութեան վերածուած սկզբունքների եւ - այդ իմաստով - կարող է բնորոշուել որպէս կեանքը իր զուտ ընթացքի մէջ՝ կեանքը որպէս այդպիսին:

Օշականն աներկբայօրէն գիտակցել եւ ընդունել է այդ իրողութիւնը, յիշեցնելով, որ կեանքը գրողի համար «*աշխարհ է, միջոց էւ նպատակ*»²⁸:

Ե. ԻՆՉՊԷՍ «ՍՐԲԱ-ԳՐԵԼ» ԱՂԷՏԸ

Հոգեխառնութեան նոյնակերպ նկարագրութեան միջոցն արդէն ոչ թէ ողբերգութիւնն է (որը չէ՞ որ օրէնքի մասին միանշանակ պատկերացման եւ նրա խախտման հետ կապուած ընդհարումից է սնուում), այլ՝ վէպը, որի միակ հեղինակութիւնը կեանքն ինքն է, իսկ գաղափարները (հեղինակային կամ այլ) ոչ թէ ուղենիշներ են, այլ կերպաւորման ենթակայ տարրեր, բազմաթիւ այլ բաղկացուցիչների եւ բաղադրամասերի հետ մէկտեղ:

«*Վէպը Աստուծոց լքուած աշխարհի հերոսապատումն է*», - ասում է Լուկաչը²⁹:

Եւ այն դրականը, հաստատողը, որ վիպական ձեւն արտայայտում է՝ անկախ իր նիւթի վշտալից անմխիթարութիւնից, ոչ միայն խաւարում մարմրող իմաստն է, որ հազիւ է երեւակուում ձախողուած որոնումների մթնշաղում, այլ՝ կեանքի լրիւթիւնը, որն իյայտ է գալիս հենց որոնումների եւ պայքարի բազմակողմ ապարդիւնութեան մէջ³⁰:

Տարօրինակ եւ մելամաղձոտ մի *պարադոքս* է որ կեանքի անյաջողութիւնը դառնում է արժէքի բաղկացուցիչ՝ որպէս

իմաստատրումն ու ապրումն այն ամենի, ինչում կեանքը չի յաջողել, որպես աղբիւր, որից կարծես բխելիս լինի կեանքի լրիութիւնը: Թէեւ պատկերուողն իմաստի իրականացման լիակատար բացակայութիւնն է, պատկերումն ինքնին բարձրանում է այնպիսի հարուստ եւ աւարտուն լրիութեան մակարդակի, որը յատուկ է կեանքի իրական ամբողջականութեանը³¹:

Լուկաչի միտքը լրացուցիչ համոզչութիւն է տալիս յայտնի թեզին, թէ՛ Օշականը «սրբացրել է Աղէտը»³²: Կրթեալ ընթերցողի ուշադրութիւնից չի վրիպի, որ Մարկ Նշանեանի այս ձեւակերպումն աղերսուած է (կարծում եմ, գիտակցաբար) հեզնական փաստարկին, որով *Մնացորդացի* հազարապետ փաշան հակադարձում է յեղափոխական Մաթիկ Մելիքխանեանցին. «...մենք կը սրբագրենք մեր պատրանքները ու ձեզի պէս անոնք չենք սրբացներ»³³: Այդ զուգահեռը, սակայն, կոչուած չէ հաստատելու փաշայի կարծիքը եւ չի վկայում անցեալից դասեր քաղելու անկարողութեան մասին: Նախ, որովհետեւ սրբա-գրութիւնը մեղքերի անտեսում չի նշանակում: Անսքող գորովանքը, որով Օշականը սրբացրել է «արեւմտահայ մայր ցամաքի» վախճանը, երեւան է գալիս այնպիսի դրուագներում, որտեղ գրողը վիրաբուժի անողոքութեամբ ի ցոյց է դրել արեւմտահայ հանրութեան գոյակերպի գնալով ահագնացող այլասերումը³⁴: Բացի այդ, որ առաւել կարեւոր է, Օշականի խօսքը արեւմտահայութեան գոյութեան վերջը հանդիսացող տիեզերական Աղէտի մասին է, որը սկզբունքօրէն սրբագրելի լինել չի կարող³⁵:

Ասուածը նկատել է տալիս *Մնացորդացի* եւ *Երկիր Նայիրիի* զուգահեռականութիւնը: Չէ՞ որ Չարենցի վէպն էլ արեւելահայերի գոյութեան աւանդական ձեւի աւարտի մասին է, իսկ նրա նոստալգիական (nostalgic) գորովանքը հայրենի քաղաքի նկատմամբ, ի վերջոյ, երեւակում է գրական հերոսների «որոնումների եւ պայքարի բազմակողմ ապարդիւնութեան» ցուցադրման մէջ³⁶: Ընդ որում, այստեղ էլ կորուստն անսրբագրելի է. Չարենցը դա հաստատել է վէպի երկրորդ հրատարակութեան «պոստ սկրիպտումում» դրուած մեկանխուլիկ հարցով. «Գերեզմանից յետոյ - էլ ի՞նչ շտկում...»:

Երկու գլուխգործոցների սկզբունքային տարբերությունն այն է, որ արեւելահայութեան ասանդական գոյակերպի ասարտն ազդարարող չարենցեան վեպը ողողուած է նոր բացուող քաղաքական հեռանկարի լոյսով³⁷, այն դէպքում, երբ Օշականի ստեղծագործութեան գագաթը ոճաւորուած է որպէս վերջնական եւ անբեկանելի կործանումը սրբացնող պատում:

Զ. ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԷՍ «ՆՈՅՆԱԶԳԱՑ ԶԱՄԱԿՐՈՒԹԵԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՁԵԻ

«Հետեւել պատմութեանը,- ասում է Ռիկիորը,- նշանակում է առաջ շարժուել պատահականությունների եւ պատահարների միջով, ենթարկուելով սպասմանը, որն իրականանում է ասարտում: Այդ ասարտը ինչ-որ նախորդող նախադրեալների տրամաբանական հետեւանքը չէ: Այն պատմութեանը տալիս է 'ասարտական կէտ', որն իր հերթին պայմանաւորում է պատմութիւնը որպէս միասնական ամբողջ հասկանալու տեսակէտը:

...Երբ որեւէ պատմութիւն լաւ յայտնի է դառնում, պատմութեանը հետեւելն արդէն աւելի շուտ նշանակում է ճանաչել լայնօրէն յայտնի դրուագները որպէս այնպիսիք, որ առաջնորդում են դէպի տուեալ վախճանը»³⁸:

Ռիկիորի այս դրոյթները մեզ համար ուսանելի են երկու առումով: Նախ, դրանք խորհուրդ են տալիս պատմութեանը մօտենալ ոչ թէ «բացատրելու» (ասարտը նախորդող նախադրեալների տրամաբանական հետեւանքը չէ), այլ՝ «հասկանալու» ակնկալիքով, երկրորդ՝ տուեալ պատմութեան վախճանը առաջադրում են որպէս ողջ պատմութիւնը հասկանալու դիտակէտ:

Այս տիպիկ հերմենէւտիկական (hermeneutical) սկզբունքները ներկայանում են որպէս Վիլհելմ Դիլթայի «կեանքի փիլիսոփայութեան» յղացքի յետագայ զարգացումը արդի փիլիսոփայութեան միջոցներով: Դիլթայն, ինչպէս գիտենք, գտնում էր, որ (ա) կեանքը հնարաւոր է հասկանալ միայն ներթափանցող վերապրման միջոցով, (բ) վերապրումը պէտք է հիմնուի մասի եւ ամբողջի շարունակական յարաբերման վրայ, (գ) ամբողջի մասին վերջնական պատկերացում կարելի է ձեռք բերել միայն, երբ կեանքն արդէն ասարտուած է (ամբողջացած է), (դ)

պատմական իրադարձությունների վերաբերեալ նոյնակերպ պատկերացում տուող ամենակատարեալ հիսուածք այդ իրադարձությունները ներքինից վերապրած նշանակալից անհատի ինքնակենսագրությունն է³⁹:

Դժուար չէ տեսնել, որ Օշականի իրականացրած Աղէտի սրբագրութիւնը մեծապէս համապատասխանում է դիւրթայ-ռիկիորեան հերմենեւտիկական մոդելին⁴⁰:

Օշականը Չարենցի *Դանթեական Առասպելի* հիմնական թերութիւնը տեսնում էր նրանում, որ այն գուրկ է *«անմիջական թափանցումը առաջացնող հոգեկան նոյնազգաց համակրութենէն»*⁴¹, եւ երեւի ունէր այդ իրաւունքը, քանի որ սեփական ստեղծագործութեան մէջ - արդէն *Խոնարհներից* սկսեալ - գրողը մշտապէս ձգտել է նկարագրուող հերոսների հոգեկան աշխարհի նոյնազգաց համակրութեան: Հոգեթափանցման այդ ունակութիւնն իր յետագայ զարգացումն է գտել *Մնացորդացում* եւ միւս ուշ գրուած ստեղծագործութիւններում, կիրառուելով ոչ միայն անհատ մարդկանց հոգեբանութեան, այլեւ Օսմանեան Կայսրութեան մէջ իշխող հոգեխառնութեան բազմաթիւ կողմերի իմաստաւորման ընթացքում, ուր մշտական յարաբերութեան մէջ են դրուել հանրային բարքերն ու առանձին հերոսների ճակատագրերը:

Հեռանկարը, որից ելնելով Օշականը ներկայացնում է ամբողջացնում է արեւմտահայոց պատմութիւնը, Աղէտն է: Բայց Աղէտը որպէս վախճան դիտակէտ չէ՝ ընդունուած իմաստով: Այն մի կողմից՝ տեսանկիւն է, որից ելնելով իմաստաւորում է ընդհանուր պատկերը, միւսից՝ տիեզերական իրադարձութիւն, որն իր ամենակործան բնոյթի պատճառով, մնում է *տարուաւորուած* եւ անհասանելի: Աղէտին անվերջ մօտենալու եւ նրանից անընդհատ խոյս տալու Օշականի մարտավարութիւնը կարող է բնութագրուել որպէս *«պաշտպանութիւն Սրբազանի հետ անմիջական հանդիպման խելագարութիւնից»*⁴²:

Այդ հոգեմաշ շրջապտոյտի փուլերը յայտնի են: *Մնացորդացը* կիսատ թողնելով, Օշականը ձեռնամուխ է եղել *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան*ի շարադրանքին: Արտաքնապէս խնդիրը չի փոխուել, մանաւանդ որ գրողը վստահ է եղել, որ *«գրքերի կեանքը շատ չի տարբերուում մարմինների (միսերու) կեանքից»*⁴³, եւ որ գրական քննադատութիւնն ինքնին պատկանում

է գրականութեան ժանրին⁴⁴: Յայտարարուած նպատակն էր «հայ գրականութեան հոգեխառնութիւնը» դուրս բերել «միգամածային վիճակից» եւ նրան մարմին տալ թղթի վրայ⁴⁵:

Համապատկերի տասներորդ հատորով Օշականը սկսել է երրորդ շրջանը՝ արեւմտահայ գրականութեան վերաբերեալ անդրադարձը տարածելով իր իսկ ստեղծագործութեան վրայ: Մեփական գրական կենսագրութեան վերլուծական ամփոփումը դարձնելով «նոյնազգաց համակրութեան» բարձրագոյն ձեւ, նա հերթական անգամ հաւաստել է իր պատկանելութիւնը *հերմենէւտիկական* յարացոյցին:

Է. ԶԳՐՈՒՄԾԸ

Հասկացման *հերմենէւտիկական* ճիգը հոգեվերլուծական երանգներ է ձեռք բերել *Վկայութիւնի* այն հատուածներում, ուր գրողը փորձում է արդարացումներ գտնել *Մնացորդացն* անաւարտ թողնելու համար: Այդ խնդրին նուիրուած երկարաշունչ ինքնաերկիստութեանը (որի նախակաղապարն անշուշտ Իւան Կարամազովի գրոյցն է սատանայի հետ)⁴⁶ կ'անդրադառնանք ստորեւ: Առայժմ տեղին է յիշատակել 371-372 էջերում ծուարած (մարդկայնօրէն խորապէս յուզիչ) ծանօթագրութիւնը, ուր Օշականը խօսում է իր զգացած «գրիչէն անհուն զգուանքի մը» մասին եւ խոստովանում, որ *Համապատկերն* ինքնին փախուստ է եղել վեպը շարունակելու պարտականութիւնից. «*Մնացորդացը* լարում մըն էր, ուր այդ լարումը կը քանդէր անոր ջիղերը... *Համապատկէ թը*: Անիկա ստեղծում մը չէ»⁴⁷:

Եղեռնը ապրած եւ այն գրականացրած գրողի մօտ իյայտ եկած հոգեկան գերլարումը զարմանալի չէ: Կարելի է, իհարկէ, այլեւայլ վարկածներ կառուցել *Մնացորդացի* ընդհատումը բացատրելու համար: Սակայն, հետազօտութեան նպատակի առումով, առաւել արդիւնաւետ է թում հարցն այն մասին, թէ ի՛նչն է, որ պէտք է գրուէր եւ չի գրուել վերջին հատորում: Ուրեմն, անհրաժեշտ է հայեացք նետել այն վիպական շրջադարձերի վրայ, որոնք հեղինակը նախատեսում էր կերպաւորել *Դժոխք*ում⁴⁸:

Օշականի վկայութեամբ, չորրորդ հատորի աւարտական հատուածը պատկերելու էր հայ դատապարտեալների վերջին հրաժեշտը, երբ նրանք՝ մինչ թուրք ասկեարների կողմից շղթայուած մահուան ճանապարհը բռնելը, ներկայ են լինում

Կոմիտասի յանպատրաստից մատուցած պատարագին, որի բարձրակետն է դառնում վարդապետի բեկբեկուն ձայնով հնչեցրած «Տէր Ողորմեա»⁴⁹:

Թէև Օշականը, գոնէ սուրեկտիօրէն, վստահ է եղել այդ դրուագը գեղարուեստական միջոցներով մարմնաւորելու իր կարողութեանը՝

«Այս տողերը կը կարդաք: Բայց «Մնացորդաց»-ին այդ գիրքը պիտի նուաճէր այդ ժամը տեւողութեան ամէն մէկ մանրերկրորդը վերածելով ապրող իրողութեան»⁵⁰:

Մեզ՝ այսօրուաններին, այդ համարեա անմարդկային յուզական գերճիգ պահանջող գրական խնդիրն, այնուամենայնիւ, թուում է անիրագործելի, ստիպելով թաքստոց փնտոել Լիոտարի յայտնի ասոյթում. *«Ես կարող եմ միայն ասել, որ իվիճակի չեմ պատմել այս պատմութիւնը»:*

Այլ է վիպական պատմութեան միւս բաղկացուցիչը, որն ըստ Օշականի տեղեկութեան, պէտք է զբաղեցնէր չգրուած գրքի մօտ կէտը եւ (նման Բ. հատորի Մաթիկի եւ թուրք փաշայի երկխօսութեան) ներկայացնէր հայ աքսորեալների խօսակցութիւնները, որոնցում ամենատարբեր խաւերի ներկայացուցիչների հայեացքների խաչաձեւման միջոցով կերպաւորուելու էր 1914ի արեւմտահայ հասարակութեան «մտահայեացքը» ընդհանուր խնդրի՝ «հայ-թուրք հարցի» վերաբերեալ⁵¹:

Նաեւ այս դրուագում վտանգներն ու ներքին խորխորասներն ահռելի են, իսկ իրականութիւնը՝ այն աստիճան հոգեխոցիչ, որ շատ բան պարզապէս անասելի է թուում: Բայց տուեալ դէպքում իրավիճակը փոքր-ինչ այլ է, քանի որ այն, ինչ Օշականը արդէն իսկ ասել է «հայ-թուրք» հարցի մասին իր վէպի գրուած հատորներում, ինչպէս նաեւ կեանքի մայրամուտին երկնած միւս գործերում, որոշ նիւթ է տալիս գոնէ մասնակիօրէն վերակազմելու *Մնացորդացի* չգրուած հատորի չասուած անասելին:

Ը. ԹՈՒՐԲԸ ՈՐՊԷՍ ՃԱԿԱՏԱԳԻՐ - I

Հոգեխառնութիւնը, որն Օշականը կերպաւորել է իր վէպերում, հայ-թուրքական է հաւասարապէս: Այդ հանգամանքն, ի վերջոյ, անսպասելի չէ, մանաւանդ, երբ խօսքը գնում է հայ-թուրքական համակեցութեան բնական ձեւերի մասին, ինչպիսին է, օրինակ,

թուրքեհայ գիւղացիութեան խաղաղ գոյակցութիւնը՝ պայմանաւորուած նահապետական կենսակերպի նմանութիւններով, որի մասին յիշատակումները սփռուած են գրողի ամենատարբեր երկերի էջերում:

Ըմբռնելի են նաեւ երկու ազգերի մշակութային ներթափանցումները, նոյնիսկ այն դէպքերում, երբ Օշականը, իրեն յատուկ *պարադոքսալութեամբ*, այդ մասին խօսքը սրում-հասցնում է տագնապի, ինչպէս արել է, օրինակ, կոմիտասեան երաժշտութեան ծագումը բնորոշելիս.

Այն հողերը, ուրկէ բխած է այդ ոսկի երիզը, բնակուած են նոյն ատեն թուրքով: Ու երաժշտութիւնը թերեւս այդ հողերուն թելաւորումն է... Ո՞ւր է արուեստագէտը, որ համարձակէր վերլուծել մեր սրբազան երաժշտութիւնը ու գտնէր անոր մէջ կշիռը ինքնեկին եւ օտարամուտին⁵²:

Թուրքը, քիւրտը, ասորին, եգիտին, կովկասեան փախստականներ կ'երգեն մեզի պէս: Որքա՞նը Կոմիտասով ոճաւորուած իրաւութիւն կը պարունակէ իսկապէս հայ հոգին... Հարցուր եւ լո՛ւ⁵³:

Բայց հայ-թուրքական *սիմբիոտիկ* (symbiotic) փոխթափանցումը դրանով չի սահմանափակուում: Օշականը այդ երեւոյթն այնքան արմատական է համարել, որ այդ մասին հնարաւոր է գտել խօսել հետեւեալ ձեւակերպումներով.

«Օշականի վէպը իբրեւ յատակ ունի հայ-թուրք հարցը իր ընդարձակութեան ողջ սարսափով»: Չի կարելի ասել, որ այդ հարցը *«իմացական լինելուց առաջ ընկերային է»*, քանի որ 1880ից 1910ը մեր ժողովուրդն ունեցել է միայն գոյութեան հարց՝ «իր անգիտակցութեան իջած»: Եւ այս հարցը պայմանաւորուած է եղել թուրքով:

Այդ պատճառով *«թուրքին լիակատար վերլուծումը տիրական ազդակ մը ինչպէս իջած էր Օշականի անգիտակցութեան ու կը գործէր»:* Այդ բարդոյթը պայմանաւորուած է նրանով, որ *«արեան դրութիւն մըն էր թուրքը մեր ներսը»:*

Թուրքի մասին գրելն, այդպիսով, չի նշանակել օտարի մասին գրել: Ֆրանսիացի պոռնիկ պատկերելու պարտքը ֆրանսիացուն է պատկանում: *«Բայց թուրքը ահաւոր ազդակ մըն էր ու ձակատագիր մը: Որով՝ վէպի ատաղձ»*⁵⁴:

Թ. ԸՆԿԵՐԱՅԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄԸ

Ուշագրաւ է այս մեջբերումներում նկարագրուող երեւոյթի ընկերային բնոյթի ժխտումը: Հարցն, ինչպէս տեսանք, ընկերային չէ, դա գոյութեան խնդիր է՝ անգիտակցութեան իջած եւ պայմանաւորուած թուրքով: Եւ իսկապէս, ընկերային յարաբերութիւններն ազգայինով փոխարինելու միտումը կարմիր թելով անցնում է Օշականի հասուն շրջանի բոլոր գրութիւններում:

*Վկայութիւն*ում, անդրադառնալով Դոստոեւսկուց իր գրական մեթոդի ազդուածութեան հանգամանքին, Օշականը նկատել է. «Ռուս ազնուականութեան, ոստիկանութեան, չինովնիկներուն փոխարէն՝ մենք ունէինք թուրքը»⁵⁵: Այս անսպասելի համատեղումից առաջ եկող խճողման պատճառը միայն այն չէ, որ Դոստոեւսկու «պաշտօնեաները» ընկերային խաւ են, իսկ Օշականի «թուրքերը»՝ ազգային խումբ: Առաւել էական է, որ այդ պաշտօնեաները՝ անկախ դրանց տրուող բացասական կամ դրական գնահատականներից, կազմել են ռուս հասարակութեան բնականոն եւ անքակտելի մասը: Նոյնը, բնականաբար, ճիշտ է «թուրքերի» վերաբերեալ: Այսինքն, ինչպէս Ռասկոլնիկովները, իշխան Միշկինները կամ Կարամազով եղբայրները մտածելի չեն առանց վերը թուարկած, Ռուսական Կայսրութեան կմախքը կազմող ընկերային խաւերի՝ Սուիդրիգայլովների, Պորֆիրի Պետրովիչների եւ այլոց, այնպէս էլ արեւմտահայութեան գոյութիւնը մտածելի չէ առանց Օսմանեան Կայսրութիւնը կազմաւորող թուրքերի: Այդ անքակտելի փոխադերսուածութեան պատճառով հայեւթուրք էթնոսների նոյնիսկ մտովի տարանջատումը դառնում է անհնարին, իսկ բոլոր դատողութիւնները հայոց ինքնաբաւ ազգային կեանքի մասին ընկալում են որպէս չիմնաւորուած եւ անբովանդակ վերացականութիւններ:

Ասուածը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խօսքն այստեղ ոչ թէ տարբեր ազգութիւնների կողք կողքի, համատեղ կամ մէկը միւսի ենթակայութեան տակ գոյութեան մասին է, այլ՝ ընկերային խմբերի գործառոյթներն էթնիկական խմբերին վերագրելու, սոցիալական կապերը ազգային յարաբերութիւններով փոխարինելու մասին:

Դրա վառ օրինակն է գիւղի եւ քաղաքի հակադրութիւնը, որն Օշականի մօտ գուտ ազգային բնորոշում է ստանում - գիւղը հայն է, քաղաքը՝ թուրքը.

Դարձեալ բաշխուած՝ գեղին ահաւոր ձգողութեան եւ քաղաքին անասելի խռովքներուն մէջտեղ: Գիւղը... հողն էր, ու ասոր արթնցուցած հայրական, աստուածային բոլոր ապրումները:

...Քաղաքը՝ թուրքը, իր պալատներուն, մզկիթներուն, գօրանոցներուն, ջերմուկներուն, կիներուն անորակելի ծորումներովը:

Գիւղի եւ քաղաքի հակադրութիւնը ուրեմն Օշականի արուեստին մէջ սանկ ետքէն ճարուած, քննադատի վարպետութեան գրաւականը չէ, այլ՝ ամէնէն հիմնաւոր, ամէնէն բախտորոշ կնիք մը⁵⁶:

Այսպիսով, Օշականն արձանագրել է մի իրողութիւն, որը միաժամանակ անշարժ է եւ քայքայիչ: Անշարժ, քանի որ ազգային ինքնութեան խորքային բաղկացուցիչները համարեա ենթակայ չեն փոփոխութեան, եւ քայքայիչ՝ որովհետեւ ինքնութիւնները փոխկապակցուած են - գիւղն առանց քաղաքի կամ քաղաքն առանց գիւղի գոյութիւն ունենալ չեն կարող, եւ դա նշանակում է, որ ընդհանուր ընկերային կառոյցում դրանց տեղի հետ կապուած ամէն մի փոփոխութիւն ազգային հակամարտութեան ձեւ է ստանում:

Այդ օրինաչափութիւնը դրսեւորուել է Արեւմտահայաստանի հայաթափման ընթացքում, որ տեղի ունեցաւ որպէս Օսմանեան կառավարութեան 1840ին իրականացրած բարենորոգման, Թանգիմաթի տարիմաստ արդիւնք: Աւանդական ճորտատիրական կարգերի փոխարինումը ձեւականօրէն առաջադէմ վարձակալական յարաբերութիւններով, որը փաստօրէն դրսեւորուել է պարենային հարկը դրամականով փոխարինելու ձեւով, յանգեցրել է հայկական հողերի զանգուածային կորստի եւ լայն թափ հաղորդել գիւղը լքելու եւ քաղաք տեղափոխուելու գործընթացներին⁵⁷: Որ աւանդական գիւղի քայքայումն այն անխուսափելի գինն է, որ համարեա բոլոր երկրները վճարել են իրենց հասարակութեան արդիականացման համար՝ յայտնի է: Բայց Օսմանեան Կայսրութեան շրջանակներում, ուր ընկերային բաժանումը շարունակաբար հանդէս է եկել էթնիկականի տեսքով - ճորտացուած հայ

գիղացուծին, աւատատէր քուրդ բէկեր (որոնք, ըստ Լեոյի, եկել են փոխարինելու հայ նախարարների չքացած դասը⁵⁸), սեփական շահերը հետապնդող թուրք կառավարութիւն - ընկերային քայքայումը ազգային աղէտի տեսք է ընդունել, իսկ հողագրկումը վերածուել է հայրենիքի կորստի⁵⁹: Եւ պատահական չէ, որ գիղացիական հարցի քաղաքականացումը, որի մասին խօսում է Լեօն⁶⁰, տեղի է ունեցել Հայկական Հարցի տեսքով:

Ընկերայինի ազգային փոխակերպումը տեսանելի է նահապետական գիղի քայքայմանը հետեւած գործընթացներում: Սովորական բան է, որ հողագուրկ գիղացիական ընտանիքների գաւակներն իրենց բախտը փնտռում են քաղաքում: Այդ գաղթային հոսքի արդիւնքներից է եղել «հայ Պոլիսի» ձեւաւորումը եւ շարունակական համալրումը: Բայց Օշականը (առնուազն իր թուրք հերոսի բերանով) կասկած է յայտնում, արդեօք պոլսահայութիւնն իվիճակի կը լինէր պահպանելու իր ներունակ զարգացման ազդակը, երբ կտրուէր նրան գաւառի հետ կապող պորտալարը. *«ատ ալ ձեր Պոլիսն է, որմով խանդավառուիլ կանխահաս է դէռ: ...Գաւառներէն անդադար թարմ հոսանքն էր, որ արգիլեց նեխելէ, ճղճիմ ճռգելէ սարաֆներու, պագիրկեաններու, չերչիներու, էսնաֆներու կտորուանքներէն սանկունանկ ճարուած ձեր հասարակութիւնը»*⁶¹:

Մանաւանդ նկատի ունենալով, որ պոլսահայութեան կեանքը գուտ թաղային է, ըստ Էութեան՝ *գետտոյական*. *«Բերան եւ Մթամպուլը գատ, իրարու անթափանց կոյտեր են, էին»*⁶²:

Նոյնքան անհեռանկար են դիտւում էթնիկական փոխներթափանցման արդէն իսկ առկայ կերպերը, կապուած առաւել շարժունակ երկու խաւերի՝ ազգային բուրժուազիայի եւ օսմանեան հաստատութիւններում ծառայող հայ պաշտօնեաների՝ «էֆենդիների» հետ:

Հայ մեծահարուստներն, ըստ Օշականի, ազգային կառոյցին մաս չեն կազմում. *«Անոնք դուրս են մեր ազգէն, ինչպէս բոլոր հարուստները դուրս են իրենց ժողովուրդէն: Մեր ժողովուրդը այդ հարուստները կը դասէ օտար»*⁶³:

Հայ «էֆենդիների» կարգավիճակն առաւել հակասական է. այդ անբնական ընկերային շերտը հաւասարապէս մերժուած է ինչպէս հայերի, այնպէս էլ թուրքերի կողմից: Առաջինները հայերի

համարկումը օսմանեան հիմնարկային կառոյցում ընկալում են որպէս թրքացում եւ այլասերում.

Կը վարձատրէք շատ գողնալուն, շատ մատնելուն, շատ տուն մարելուն համար այն թշուառականը, որ իր ցեղին փոխանակ յատկացնելու իր ընդունակութիւնները, ծառայեց ձեզի: Դուք էք ստեղծած մեր նոր դասակարգին ամենէն անտանելի, ամենէն եսասէր, անարգ տարրը, - էֆէնտին⁶⁴:

Երկրորդներն այդ «համարկուած» հայերին չեն ընդունում որպէս իւրայիններ, քանի որ դրանց մէջ, միեւնոյն է, տեսնում են հաւանական դաւաճանների. *«Թուրքէն աւելի թուրք, բայց այդ իսկ պատճառով կասկածելի»*⁶⁵:

Ասուածից երեւում է, որ ինքնուրոյն ընկերային կառոյցի չգոյութիւնը եւ դրանով պայմանաւորուած *սոցիալականի* եւ ազգայինի փոխարինելիութիւնը, որ բնորոշ են Օշականի գեղարուեստական աշխարհին, գրողի *սուրբեկտի* հակումների կամ նրա կամայականօրէն ընտրած իմացական ռազմավարութեան արդիւնքը չեն: Դա պատմական իրողութիւն է⁶⁶, որում արմատաւորուած են Օշականի ստեղծագործութեան գոյաբանական նախադրեալները:

Այդ իրողութիւնը ճշգրտօրէն որսացել է Հրանտ Մաթեոսեանը, որը մէկ այլ արեւմտահայի՝ Յակոբ Մնձուրու ստեղծագործութեան կապակցութեամբ գրել է. *«Նման երկրում սոցիալական բողոքը փոխանակ քաղաքացիական կոռուի՝ վերաճում էր ազգամիջեան կոտորածների: ...Գիւղացու յաւերժական ատելութիւնը առ արհեստաւորն ու առեւտրականը՝ այստեղ դառնում էր թուրքի ատելութիւնը առ հայր...»*⁶⁷:

Ժ. «ԴԻԻԱՅԻՆ ԷՍԹԵՏԻԶՄԻ» ՈՐՈՒՄԱՅԹՆԵՐԸ

Անգիտակցութեանն իջած եւ թուրքով պայմանաւորուած խնդիրը, որի հիմքում ընկած է «արեան եւ սեռի փոխձգողականութիւնը», հոգեբանական, աւելի ճշգրիտ՝ հոգեվերլուծական մօտեցում էր պահանջում: Օշականի լուծումը կարող է այդպիսին համարուել: Բայց նրա հոգեվերլուծութիւնը, որքան էլ գրողն իր գործերում յիշատակում է Ֆրէյդի ուսմունքը, ոչ այնքան ֆրէյդական է, որքան դոստեւսկիական:

Դոստեւսկու գրական ազդեցութեան իւրայատուկ նմուշ է *Միւլէյան Էֆենտի* վէպը, որի գլխաւոր հերոսը՝ Քէլ Էտիւմը,

ակնյայտօրէն աղերսուած է ռուս մեծ գրողի «մութ կերպարներին»՝ Սուիդրիգայլովին *Ոճիր Եւ Պատիժից* կամ Ստարոգինին՝ *Դեւերից*⁶⁸: Այդ դիւային կերպարի գործողութիւնները պայմանաւորող ազդակները արիւնը եւ սեռականութիւնն են⁶⁹:

Օշականի «արիւնը» բազմիմաստ եզր է: Մի կողմից այն նշանակում է սպանութիւն, մահ, միւսից՝ բնութագրում է մարդկային էութեան խորքային, բնագոյային մակարդակը՝ այն, ինչ արեան մէջ է երեւան գալիս: Որպէս սպանութեան բնագոյի մարմնաւորում արիւնը ներկայանում է որպէս «*խուլ ու բնագոյական մոլութիւն մը... խաղին կամ այլքոյին կամ սեռին համահաւասար*»⁷⁰: Բայց նաեւ սեռականութիւնը՝ որպէս խորքային կենսականութեան արտայայտութիւն, նոյնպէս արեան խնդիր է: Երկուսն իրար հետ կազմում են հոգեվերլուծութիւնից մեզ յայտնի այն յարացոյցը, որի բեւեռներն են Էրոսը եւ Թանատոսը:

Իրենից դուրս որեւէ կարգաւորիչ ատեան չճանաչող, բացառապէս անձնական, յաճախ բնագոյային մղումներով եւ կրքերով ապրող հերոսները, ինչպէս գիտենք, պատկանում են «Էսթետիզմի» յարացոյցին: Դրանց արքետիպային նախակադապարը Դոն Խուանն է: Էսթետիզմի զարգացած, «դիւային» փուլը ներկայացուած է Կիրկեգորի եւ Նիցշէի գործերում⁷¹:

«Դիւային Էսթետիզմի» լարման դաշտը ներքաշուած կողմերի յարաբերումը երբեմն գայթակղութեան երանգներ է ձեռք բերում: Այդպիսի հոգեբանական խաղ ստանձնած հերոսները պարզ զգայական հաճոյքից գերադասում են հակառակ կողմին տարբեր հնարքներով գրաւելը եւ նրա նկատմամբ ֆիզիկական եւ հոգեբանական գերիշխանութիւն ձեռք բերելը: Ձգողականութիւնը յաճախ երկուստեք է, իսկ գայթակղութեան ենթարկուածի կեցուածքը՝ երկիմաստ: Նոյնիսկ աստելով իրեն ցաւ պատճառողին, նա դժուարանում է ազատուել իր համար ճակատագրական դարձած իրավիճակի ձգողականութիւնից: Այսպէս, արքետիպային Դոն Խուանի եւ նրա կողմից լքուած Դոննա Էլվիրայի մասին Կիրկեգորն ասում է.

Էլվիրան յանուն Դոն Խուանի ուրացել է իր աշխարհը, նրա միակ ունեցածը Խուանն է, եւ թէւ նա նրան ատում է

դաւաճանութեան համար, բայց սպանել ի վիճակի չէ, քանի որ սպանելով Դոն Խուանին, նա կը սպանի ինքնիրեն⁷²:

Այն մասին, որ տարօրինակ, սաղօ-մագոխիստական փոխձգողութեան յարաբերութիւններ են առաջանում նաեւ դահճի եւ նրա զոհի, խոշտանգողի եւ խոշտանգուողի միջեւ, նոյնպէս յայտնի է: Նման կախուածութիւն բնորոշ է *Միւլէյման Էֆենտի*ի հերոսներին՝ Քէլ Էտհէմին եւ Նայիլէ հանըմին:

Այս ամէնն, իհարկէ, ընդհանուր հոգեվերլուծական դատողութիւններ են: Օշականի վիպական աշխարհի իւրայատկութիւնն այն է, որ դիւային էսթետիզմը մարմնաւորող կենսակերպը նրա մօտ բացառապէս էթնիկական դիմագիծ է ստանում, հանդէս գալով որպէս թուրքի բնաւորութեան խորքային գծերի արտապատկերում:

Գրողի փաստարկները զուրկ չեն համոզութիւնից - որոշ չափով այնտեղ, ուր պարզապէս վկայակոչում են թուրքական էթնոսի ոչ այնքան հեռաւոր քոչուոր անցեալը, շատ աւելի՝ այն դէպքերում, երբ նա խօսում է թուրքական հասարակութեան մէջ ընտանիքի եւրոպական ասանդոյթի բացակայութեան, տղամարդու եւ կնոջ իսլամով պայմանաւորուած իւրակերպ յարաբերութեան, կենցաղի համատարած սեռականացման մասին, որի արտառոց դրսեւորումն է հարէմային կեանքի էրոսականութիւնը (սեռականութիւնը), որով ներծծուել են թուրքական հասարակութեան բոլոր շերտերը:

Օշականին ճիշտ հասկանալու համար յատկապէս կարեւոր է յիշել, որ նրա երկերում թուրք բնաւորութեան տիրական գիծը, «նիթապաշտ, վայելապաշտ գիշախանձութիւնը» չի կադապարում կենսաբանօրէն, այլ դիտարկում է որպէս քաղաքակրթական յատկութիւն, որի ազդեցութիւնը դուրս է գալիս թուրք էթնոսի շրջանակներից. *«Իվերջոյ, մեր՝ հայերուս, բոլոր իմաստութեան հակառակ, ու հակառակ Եւրոպայի ընդարձակ շահերուն, թուրքը իրականութիւն մըն է, պատմական մեծ acte մը, ու իբր այդ՝ որոշ քաղաքակրթութիւն մը: ...Մենք իսկ, մեր հաշուոյն, չենք բանաձեւած, այսօր մեզի համար անհասկնալի իմաստութիւնը.*

- «Մահման քաջաց զէնն իւրեանց»⁷³:

Թէեւ *Միւլէյման Էֆենտի*ում որեւէ հայ հերոս ներկայացուած չէ, ակնյայտ է, որ Օշականի դիտակէտը մնում է «հայ-թուրք»

յարաբերութիւնը, վերցուած որպէս «արեան դրութիւն», իսկ թուրքի բնաւորութեան երկու հիմնական բաղկացուցիչները⁷⁴ ձեւաւորում են հայի հետ յարաբերուելու յաւերժական յարացոյցը: Իրողութիւն, որ յիրաւի տանջալից է Օշականի համար:

Գուցէ թո՛ւմ է, որ հեղինակի կեցուածքն էլ երկիմաստ է դառնում. մի կողմից՝ հեռակայ հայեացք, բարոյական խիստ գնահատականներ, դատապարտում, նողկանք եւ պարսաւանք, միւսից՝ մանրամասների նկատմամբ այնպիսի ուշադրութիւն եւ նկարագրութեան այնպիսի մանրակրկիտութիւն, որոնցով հոգեկան նոյնագգաց համակրութեան նրա կարողութիւնը դուրս է գալիս գրական մեթոդի սահմաններից, վերածուելով որոշակի հիւանդագին հմայուածութեան՝ սեփական հերոսի դիւային փշացածութեամբ:

Արդե՞օք Օշականն էլ է ներքաշում այդ հոգեմաշ երկուստեք խաղի մութ որոգայթները: Ինքը պիտի ասէր. «Հարցուր եւ լռէ»:

ԺԱ. ԹՈՒՐԿԸ ՈՐՊԷՍ ՃԱԿՍՏԱԳԻՐ - II

Հայ-թուրք յարաբերութեան «յաւերժական յարացոյցի» ընթացքը բացորոշ է դառնում *Մնացորդացում*: Ընդ այդմ, վեպը հաւաստում է, որ այդ ճակատագրական ձգողականութիւնը միակողմանի - թուրքի սադիստական գործիականութեան եւ հայի մագոխիստական կրաւորականութեան - ճանապարհ չէ: Այն նկարագրում է շատ անելի խճողուած եւ, որ կարելոր է, երկսայր փոխառնչութիւնների միջոցով⁷⁵:

Ասուածի վկայութիւնն են գրուած վեպի վերջին հատորն ամփոփող Սողոմենց Սողոմի հարցաքննութեան եւ հաւատուրացութեան տեսարանները, որ ըստ էութեան ներկայացուած են որպէս գայթակղութեան յարաբերութիւններ: Երիտասարդ գիւղացու ուրացութիւնը չի բացատրում մահուան վախով. նրա ապրած ֆիզիկական եւ հոգեկան տառապանքները նրան անտարբեր են դարձրել մահուան հանդէպ: Թրքացումը, որ միեւնոյն ժամանակ նաեւ կեանքի փրկութիւն է նշանակում, հնարաւոր է դառնում թուրք փաշայի Սարայլ կնոջ եւ սրանց հայ խոհարար Աւետիս-Հաւատիսի սիրային կապից ծնուած՝ կիսով չափ հայ Կոզէլ-Եղնիկի դրդմամբ եւ յամառ ջանքերով: Ընդ որում, Եղնիկի աղջկական հրապուրուածութիւնը Սողոմով եւ նրա մօր թողտուութիւնն ու մասնակցութիւնն այդ վտանգաւոր արկածին

ենթադրել են տալիս, որ երկուսին էլ այս կամ այն ձևով հետապնդում է դատապարտուած հայի «արեան կանչը»⁷⁶:

Աղջկայ եւ Սողոմի հանդիպումը բանտում, ուր դեռեւս պահպանում են նախորդ սահմոկեցուցիչ գիշերը բզկտուած մարմինների մնացորդները, ներկայանում է որպէս կրկնակի գայթակղութիւն՝ մի կողմից իսլամի երկնքի զգայական գրաւչութիւնը հակադրում է երկնքի մասին քրիստոնէութեան ունեցած խստաբարոյ պատկերացումներին, միւսից՝ մթնոլորտը, ուր իշխում է Թանատոսը, յագենում է դեռատի իգականութեան ձգող ներկայութեամբ.

Ան ի նչ խեղճ բան է աս ձեր երկինքը: ...Դուն լսեի՛ր մերինէն...

...Յանկարծ զգաց, որ պատասխանին դժուարութենէն աւելի, անիկա ողորուած էր մարմինովը սա աղջկան, որ տեսիլքի՝ «արմանք» առթող տեսիլքի իր նկարագիրէն ելեր էր դուրս ու կ'ազդէր անոր զգայարանքներուն, անվրէպ մագնիսովը սեռին⁷⁷:

Սրան հետեւող բոլոր դրուագները՝ Սողոմի մօր յայտնուելուց մինչեւ ուրացութեան հետ կապուած հանդիսութիւնները նորից ու նորից ցուցադրում են «հայ-թուրք» կծիկի խճողուածութիւնը:

Հայոց ճակատագրում թուրքի հիմնարար՝ գոյաբանական, ներկայութեան անխուսափելիութեան գիտակցումն ու վերհանումը Օշական-գրողի գերագոյն նուաճումն է եւ դժբախտութիւնը միեւնոյն ժամանակ:

- ¹³⁹ One of the leaders of the Revolutionary Hnchagian Party, Suren Bartevian, met with Ahmed Rıza in order to get some guarantees from the CUP. Only after this meeting could Hnchags start to work legally in the Ottoman Empire (Manuk G. Çizmeciyani, *Badmutiun Amerigahai Kaghakagan Gusagtsutians 1890-1925* (The History of American-Armenian political parties 1890-1925), Fresno, 1930, p. 141, cited in Avagyan, pp. 40-42.

- ¹⁴⁰ Sdepan Sapah-Gulian and Murad (Hampartzum Boyadjian), “Harachapan” (Foreword), in *Dzrakir Hnchagian Gusagtsutian (Dacgasdani Hamar)* (The Program of the Hnchagian Party / For Turkey), İstanbul, 1908, pp. 3-4; the refusal of separatism was also declared in the Fifth Chapter of the Program “[The Party] refuses all kinds of separatism from constitutional Turkey”, p. 13; the same sentence was also in the 1910 Program of the Hnchagian Party, *Dzrakir Social-Democrat Hnchagian Gusagtsutian (Dacgasdani Hamar)* (Program of Social-Democrat Hnchagian Party/For Turkey), İstanbul, 1910, p. 15. Also Tashnaks declared their refusal of separatism in their Fifth Congress in 1909 with a reference to the Adana event, *Haidararakir yev Voroshumner*, pp. 3 and 6.
- ¹⁴¹ *Dzrakir Social-Democrat Hnchagian Gusagtsutian (Dacgasdani Hamar)*, p. 3.
- ¹⁴² S. Sapah-Gülyan, *Badaskhanaduneri* (The responsible officials), Beirut, Doniguiyan Press, 1974, p. 312, (cited in Avagyan, p. 94).
- ¹⁴³ These were: a) the Armenagan Party, b) a faction in the Veragazmial Hnchag Party, and c) Miutiunagan (Unity) Society.
- ¹⁴⁴ “Meşrutiyet ve Hukuk-u Avam Taraftarı Ermeni Fırkasının Beyanname ve Programıdır,” (the pro-constitution and peoples’ rights Armenian party’s declaration and political platform) in Ter Minassian, *Ermeni Devrimci*, p. 88; “Akıl ve mantığa tamamiyle muvafık ve memleketin menafı-i umumiyesi nokta-i nazarından müfid olan işbu metalib ve âmalin fırkamızla diğer anasır-i Osmaniyeye mensup siyasi fırkalar arasında vücudu ez-ser nev arzu olunan ve memleketin menafı-i esasiye ve saadet-i umumiyesinin bi’n-nesibe az bir müddette temini nokta-i nazarından elzem bulunan revabit-i vıfakin istihsal ve teyidinde hizmet...”.
- ¹⁴⁵ “Ermenilik Osmanlılıkla beraber ibaresi fırkamızın üss-ü mesleğidir,” Ibid., p. 93.
- ¹⁴⁶ Ibid., p. 92.
- ¹⁴⁷ Ibid., pp. 93-105.
- ¹⁴⁸ Darbinian, p. 205 in Avagyan, p. 47.
- ¹⁴⁹ Avagyan, p. 47.
- ¹⁵⁰ Ibid., pp. 48-49.
- ¹⁵¹ *Troshag* welcomed the suppression of the counter-revolutionary attempts as a “Second Revolution”, in April 1909 (4), p. 41.
- ¹⁵² Taner Akçam, *İnsan Hakları ve Ermeni Sorunu* (Human rights and the Armenian Question), Ankara, İmge, 1999, p. 248; “Ermeniler tek vücut olarak Anayasa’nın yanındalar. Devletin tuzu gibiler, bütün öteki unsurları peşlerinden çekiyorlar.”
- ¹⁵³ Asdvadzadurian, p. 71.
- ¹⁵⁴ Papazian, Vol. 2, p. 89.
- ¹⁵⁵ Armenian public opinion of the time connected the Adana massacres with the mutiny in İstanbul: “The beginning of the massacre on Thursday 1/14 April was not a coincidence. Naturally, Yıldız [the Sultan] played an important role in the Adana massacre.” “Giligian Sarsapner,” (The Horrors of Cilicia), *Troshag*, May 1909 (5), p. 54.
- ¹⁵⁶ *Meclisi Mebusan Zabıt Ceridesi: Devre: I, İctima Senesi: 1, Cilt: 3: 28 Mart 1325 Tarihli Elli Beşinci İnikattan-14 Mayıs 1325 Tarihli Seksen Birinci İnikada Kadar* (Ankara: TBMM Basımevi, 1982), p. 116; “(...) bugün Ermenileri fedaidir, yok bilmem nedir diye itham edemeyiz. Ermenilerde fedai vardır, ben gördüm onları, hakikaten hürriyet için canlarını feda ettiler ve hastanede bizim şühedamız için hizmet ettiler. Başka türlü bir fedai bilmiyorum. Hürriyete, bu kadar bizimle beraber hizmet eden bir millet ve bunca zulüm ve hakaret gördükten sonra ...büyük bir kabahatle itham edemeyiz.”
- ¹⁵⁷ Minassian, p. 149.

-
- ¹⁵⁸ Papazian, Vol. 2, p. 89.
- ¹⁵⁹ *Troshag*, October-November 1909 (10-11); Papazian, Vol. 2, pp. 128-129; Avagyan, pp. 71-72.
- ¹⁶⁰ *Ibid.*, p. 72.
- ¹⁶¹ Avagyan, pp. 70-71.
- ¹⁶² *Zartonk Patsarig. Nvirvadz Ramgavar Azadagan Gusagtsutian Karasnamiagin yev Zartonk Oraterti Ksanhingamiagin 1885-1962* (Zartonk Special issue. Dedicated to the 40th Anniversary of the Ramgavar Liberal Party and 25th Anniversary of the *Zartonk Daily* 1885-1962), Beirut, 1962, p. 76; Avagyan, p. 95.
- ¹⁶³ Avagyan, p. 99; Avagyan mentions the number nine for the Armenian deputies in the 1912 elections, which is wrong. There were ten Armenian deputies in all: two from İstanbul: Bedros Haladjian (CUP), and Krikor Zohrab (Independent); one from Aydın: Vahan Bardizbanian; one from Sivas: Dr. Paşayan; one from Aleppo: Artin Boshgezenian; one from Ergani: Isdepan Cheradjian; two from Erzurum: Karekin Pastrmajian, and Vartkes Serengulian; one from Bitlis: Kegham Der Garabedian; one from Van: Onnig Tertsagian Vramian.
- ¹⁶⁴ “Four-years’ experience of the New Turkey shows that the differentiation between ‘new’ and ‘old’ is only window dressing,” Vaghinag, “Ankhusapelin” (The Unavoidable), *Troshag*, November-December 1912 (11-12), p. 290; for a detailed list of the reasons for this policy transformation see “HH Tashnaksutian Yoterort Enthanur,” p. 147.
- ¹⁶⁵ M. Şükrü Hanioglu, *Bir Siyasal Örgüt Olarak Osmanlı İttihad ve Terakki Cemiyeti ve Jön Türklük (1889-1902)* (The Ottoman CUP as a political organization and the Jeune Turkism 1889-1902), İstanbul, İletişim, 1986, p. 191.
- ¹⁶⁶ Avagyan, p. 41.
- ¹⁶⁷ Tarık Zafer Tunaya, *Türkiye’de Siyasi Partiler, İkinci Meşrutiyet Dönemi* (Political parties in Turkey5 the second constitutional period), İstanbul: Hürriyet Vakfı, 1984, vol. II, p. 154.
- ¹⁶⁸ *Azadarar Sharjoum Panagi Haghtagan Mudke i Gonsdantnubolis* (The Victorious Entrance of the Action Army into Constantinople), İstanbul: 1909, p. 164.
- ¹⁶⁹ Tunaya, 264.
- ¹⁷⁰ *Ibid.*, p. 265.
- ¹⁷¹ Avagyan, p. 95
- ¹⁷² ARF’s opposition to the cooperation between SDHP and LEP: “The anti-İttihadist government came on the scene with slogans of decentralization and real equality of the nations. There are lots of stupid people – even in our national circles – who believed them, and applauded the fall of İttihat. ... The miserable slogan, ‘The İttihad has fallen; it is necessary to overthrow its Armenian partner’ is spreading from İstanbul to Tiflis.” “Grkere Lur” (The ambitions are quiet), *Troshag*, July-August 1912 (7-8), p. 177.

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ
ԵՐԻՏԹՈՒՐՔ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵՆԷՆ ԱՌԱՋ ԵՒ ԵՏՔ
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ԲՈՊԷՐ ՔՈՓԹԱՇ
rober.koptas@gmail.com

Ուսումնասիրությունը կը ներկայացնէ թուրք ազգայնական պատմագրութեան տեսակէտերը արեւմտեան տէրություններուն հետ արեւմտահայութեան գործակցութեան մասին, ինչպէս եւ՝ հայերու հանդէպ հնչող «անջատողականութեան», «դաւաճանութեան» մեղադրանքները, որոնք կը նկատուին տրամաբանական հակադարձություն, Երիտթուրք կառավարութեան կողմէ հայոց նկատմամբ կատարուածները արդարացնելու միտող:

Հեղինակը կը հերքէ վերոյշեալ տեսակէտերը, առարկելով նախեւառաջ թէ օսմանահայությունը միատարր զանգուած չէր. կային այլեւայլ խաւեր ու խմբաւորումներ, ինչպէս՝ գաւառահայությունը, պոլսահայությունը, ամիրաները, Էսնաֆները, արեւմտեան համալսարանաւարտ երիտասարդությունը, կուսակցությունները, պահպանողականները, կրօնական թելը, աշխարհիկ խմբաւորումը եւն.: Հեղինակը կը հաւաստէ որ այս շերտերն ու խմբաւորումները անուանական չէին. անոնք կը ջատագովէին հակադիր տեսակէտեր՝ արեւմտահայությունը յուզող ընկերային, տնտեսական, մշակութային, քաղաքական, ապահովական թէ այլ հարցերու լուծման:

Հեղինակը համառօտակի կը նկարագրէ արեւմտահայ գեղջուկին կրած կրկնակի հալածանքը պետութենէն եւ քրտական կեղեքումներէն: Ան հայ կուսակցությունները կը ներկայացնէ այս ծիրին մէջ ու կ'անդրադառնայ անոնց գաղափարախօսութեան եւ ազգային-քաղաքական արեւելումին, շեշտելով որ անոնք նախեւառաջ ձգտեցան Արեւմտեան Հայաստանի մէջ բարեկարգումներ յառաջացնելու:

Հեղինակը կ'առարկէ որ հայ քաղաքական կուսակցությունները տարութերեցան ինքնավարություն-անջատողականություն-բարեկարգություն այլընտրանքներուն միջեւ, ըստ օսմանեան ներքին քաղաքականութեան՝ սահմանադրութեան հռչակումէն առաջ եւ ետք: Ան վաւերական ապացոյցներով կը փաստէ որ հայ կուսակցությունները 1908ի Երիտթուրք Յեղափոխութենէն ետք վար դրին իրենց անջատողական ծրագրերը եւ ջանացին Իթթիհատ Վէ Թերաքքը ու Հիրրիէթ Վէ Իթիլաֆ Ֆիրքասի կուսակցութեանց քաղաքական գործակցութեամբ իրականցնել բարենորոգումներ: Այլ խօսքով, անոնք մտան յետ-սահմանադրական օսմանեան քաղաքական կուսակցութեանց օրինական համակարգին իրաւադաշտը:

Այսպիսով, կը հերքուին նաեւ թուրք պատմագրութեան մեղադրանքները հայերու դաւաճանութեան եւ արեւմուտքի հետ համագործակցութեան մասին:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՈՅԱՃԵԱՆԻ
(ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ) ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ (1908-1912)

ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ
jerejianyeghia@hotmail.com

ՄՈՒՏՔ

Հայոց Յեղասպանության ընթացքին, հայ քաղաքական միտքի առաւել ուշագրաւ գոհերու շարքին է Մեծն Մուրատը (Համբարձում Պոյաճեան, ծն. Հաճըն, 1867ին, կախաղան հանուած 1915ին, Կեսարիա):

Համիտեան բռնակարգին դէմ հայ ժողովուրդի մղած ազգային ազատագրական պայքարի փայլուն դէմքերէն Մեծն Մուրատ, յեղափոխական պայքարի յորձանուտին կը միանայ 1886ին. Պոլսոյ Բժշկական Համալսարանի երկրորդ տարուան ուսանող՝ ան կ'անդամակցի Պոլսոյ մէջ գործող Հայոց Յեղափոխական Ընկերութեան¹: 1890ին, կը միանայ Հնչակեան Կուսակցութեան եւ կը դառնայ անոր Պոլսոյ կազմակերպութեան կարեւոր դերակատարներէն մին²: 15 Յուլիս 1890ին, իր ընկերոջ Յարութիւն Ջահանկիւլեանի հետ կը գլխաւորէ Պոլսոյ մէջ տեղի ունեցած հակասուլթանական, համաժողովրդային առաջին՝ Գում Գափուի յայտնի ցոյցը: Փախստական կ'անցնի արտասահման (Ժնէ, Աթենք): 1892ին կը վերադառնայ Երկիր եւ կը ղեկավարէ Սասնոյ Ա. Ապստամբութիւնը: 1894 Օգոստոսին կը ձերբակալուի ու աւելի քան մէկ տարի Մուշի եւ Պիթլիսի բանտերուն մէջ չարչարանքներու ենթարկուելէ յետոյ կը դատապարտուի ցկեանս բանտարկութեան: Կ'աքսորուի Ափրիկեան Թրիփոլի (ներկայիս Լիպիոյ տարածք): 1906 Մայիսին, ընկերներուն օգնութեամբ կը յաջողի փախուստ տալ արքորէն³ եւ հասնիլ Փարիզ: Մինչ այդ, ՄԴՀԿ Ե. Համագումարը (Մեպտ. 1905), զինք ընտրած էր կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան անդամ: Սա միակ դէպքն է, երբ արքորի մէջ գտնուող հայդուկապետ մը կ'ընտրուի կուսակցութեան գերագոյն մարմնի անդամ: Նոյն տարին 1906ին, Մուրատ եւ Կեդր. Վարչութեան աստեճապետ Ստեփան Սապահգիւլեան, ՄԴՀԿի կողմէ բանակցութիւններ կը վարեն՝ Իթթիհատ Վէ Թերաքքը Կուսակցութեան ղեկավարներուն հետ՝

վերջիններու նախաձեռնութեամբ⁴: Այդ բանակցութիւնները արդիւնքի չեն հասնիր եւ հնչակեան-երիտօրօք վիւր ակտի կը խորանայ՝ առաւելաբար օսմանականութեան (ottomanism) գաղափարախօսութեան շուրջ յառաջ եկած չկամբջուող տարակարծութեան պատճառով⁵: Սակայն այդ հանդիպումներուն ընթացքին, Մուրատ եւ ընկերները առիթ կ'ունենան մօտէն ծանօթանալու Իթթիհատի գաղափարական ըմբռնումներուն: 1906 Հոկտեմբերին, Մուրատ կ'առաջարկէ հայ յեղափոխական կուսակցութիւններու համագումար կայացնել: Հակառակ որ Մուրատի այս հեռանկարային առաջարկը չ'իրականանար, սակայն հասարակական քննարկման առիթ կը դառնայ⁶ արժանանալով մտաւորական թէ ժողովրդային լայն խաւերու ջերմ արձագանգին: Նոյն տարին, Մուրատ կը կատարէ շրջապտոյտներ Եգիպտոսի, ԱՄՆի եւ Քանատայի հայաշատ քաղաքները, ուր կ'արժանանայ համազգային աննախընթաց ընդունելութեան⁷: Իր այցելած քաղաքներուն մէջ, ան կ'ունենայ հրապարակային ելոյթներ, ուր շեշտը կը դնէ միասնականութեան, համագործակցութեան եւ հասարակաց թշնամիին դէմ ուժերու մէկտեղման վրայ⁸: 24 Յուլիս 1908ի օսմանեան սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս յետոյ, Օգոստոս 15ին Մուրատ կը վերադառնայ Պոլիս ուր նոյնպէս կ'ընդունուի ջերմօրէն⁹:

1908էն 1912, Մուրատ մաս կը կազմէ օսմանեան խորհրդարանին: Կ'ընտրուի Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամ (15 Հոկտեմբերին, Գում Գափու թաղամասէն) ու մաս կը կազմէ անոր շարք մը յանձնախումբերուն: 1913էն ան կարելոր դերակատարութիւն կ'ունենայ Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի «Ապահովական Խորհուրդ»ին մէջ¹⁰: Ասիկա, պատրիարքին անձնական վերահսկողութեան տակ գործող մարմին մըն էր, որ առանց աղմուկի պէտք է հետապնդէր հայկական նահանգներու բարեկարգութեան ծրագիրը: 1914 Սեպտեմբերին, Օսմանեան Կայսրութեան տարածքին տեղի ունեցած հնչակեաններու ձերբակալութիւններուն¹¹ կը ձերբակալուի նաեւ Մուրատ, սակայն ազատ կ'արձակուի: 1915ին, հայ մտաւորականներու եւ քաղաքական գործիչներու շարքին վերստին կը ձերբակալուի ան: Կեսարիոյ բանտին մէջ կ'ենթարկուի անասելի տանջանքներու եւ նոյն տարին կախաղան կը բարձրացուի:

Այս ուսումնասիրության նպատակն է, հանգամանորեն քննել Մուրատի երեսփոխանական գործունեությունը որ ցարդ հայ պատմագրության կողմէ ուսումնասիրուած չէ¹²: Ոչ մէկ պատմագիրքի մէջ մեկնաբանուած է Մուրատի երեսփոխանական գործունեությունը: Միայն նշուած է անոր երեսփոխան ըլլալը¹³:

1908ի ՕՍՄԱՆԵԱՆ ԵՐԵՄՓՈՒԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ըստ օսմանեան սահմանադրութեան, Կայսրութեան պետական վարչամեքենային կարելոր բաղկացուցիչներէն պիտի ըլլար երկպալատ խորհրդարանը, որ լուծարուած էր սուլթան Ապտիլ Համիտ Բ.ի հրամանագրով 14 Փետրուար 1878ին: Այդ օրէն աւելի քան 30 տարի ետք, ընդդիմադիր ուժերու ճնշումով, Ապտիլ Համիտ կ'արտօնէ Օսմանեան Գ. երեսփոխանական ժողովի ընտրութիւններու կայացումը:

Ընտրութիւնները պէտք է տեղի ունենային ըստ 1877ի ընտրական օրէնքին, որուն վրայ կառավարութիւնը 1908 Մեպտեմբերին կատարած էր շարք մը փոփոխութիւններ: Բարեփոխուած օրէնքին համաձայն, քուէարկութեան կրնային մասնակցիլ 25 տարիքը բոլորած եւ պետութեան հարկ վճարող տղամարդիկ: Երեսփոխան կրնային ընտրուիլ 30 տարիքը ամբողջացուցած տղամարդիկ: Ընտրութիւնները տեղի կ'ունենային երկու հանգրուանով: Առաջին հանգրուանին, ընտրելու իրաւունք ունեցող տղամարդիկ կ'ընտրէին Բ. կարգի ընտրողները (*մուխթախապի սանաի*): Երկրորդ հանգրուանին, Բ. կարգի ընտրողները, իրենց հերթին կ'ընտրէին երեսփոխանը (*մեպուս*): Բ. կարգի ընտրողներուն կողմէ երեսփոխաններու ընտրութիւնները միաժամանակ չէին տեղի ունենար: Նոյնիսկ խորհրդարանի բացումէն, Ա. խօսնակի եւ յանձնախումբերու ընտրութիւններէն յետոյ, կային շրջաններ, ուր Բ. կարգի ընտրողները տակաւին երեսփոխան ընտրած չէին:

Ըստ ընտրաշրջաններու, 250-750 հոգի հաշուող ընտրախումբ մը իրաւունք ուներ ունենալու մէկ Բ. կարգի ընտրող. իսկ 50.000 հոգի հաշուող ընտրախումբ մը՝ մէկ երեսփոխան:

Օսմանեան խորհրդարանը կազմուած էր երկու պալատներէ՝ երեսփոխանական ժողով (*մեճլիսի մեպուսան*) եւ ծերակոյտ (*մեճլիսի այան*): Ծերակոյտի անդամները կը նշանակէր սուլթանը:

Ի տարբերություն 1877ի ընտրություններուն, 1908ին հրապարակ եկած էին կուսակցություններ, որոնք պետք է պայքարէին երեսփոխանական աթոռներուն համար: Սակայն, սահմանադրութեան հռչակումէն հազիւ երեք ամիս անցած, համասօմանեան տարողութեամբ ընտրութեան մը պատրաստ կուսակցություններ չկային տակաւին: Համեմատաբար, ընտրութեան պատրաստ միակ քաղաքական ուժը Իթթիհատ Վէթերաքքըն էր, որ գլխաւոր քաղաքներէն դուրս, առաւելաբար ծանօթ էր իբրեւ սահմանադրութիւնը բերած հեղինակութիւն մը, քան՝ կազմակերպուած, իր յստակ ծրագիրը ունեցող քաղաքական կուսակցութիւն մը: Իթթիհատին ընդդիմադիր միակ կուսակցութիւնը՝ Օսմանլի Ահրար Ֆիրքասին (Օսմանեան Ազատական Կուսակցութիւն), որ յարաբերաբար Իթթիհատէն աւելի ձախ էր, հրապարակ եկած էր Սեպտեմբերին՝ ընտրական թէժ պայքարէն հազիւ ամիս մը առաջ եւ Իթթիհատին համար ընտրական լուրջ մրցակից չէր հանդիսանար: Ուստի, ընտրություններուն դէկը կը գտնուէր Իթթիհատին ձեռքը:

Քանի որ սահմանադրութենէն առաջ հայ ազգային կեանքի կազմակերպման գլխաւոր դերակատարը Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութիւնն էր, նոյն հետեւողութեամբ, արեւմտահայութեան ընտրական աշխատանքները կազմակերպելու դերը եւս իր վրայ կը վերցնէ Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը, իր հովանաւորութեան տակ գործող Ազգային Ընդհանուր, Քաղաքական եւ Խառն Ժողովներուն միջոցով: Այս ժողովներուն տիրական ներկայութիւն էր Կեդրոն Խմբակցութիւնը, որ կը ներկայացնէր Պոլսոյ ունեւոր դասակարգն ու մտաւորականութեան զգալի մէկ մասը: Այս խմբակցութեան մաս կը կազմէին նորակազմ Հայ Սահմանադիր Ռամկավար եւ Վերակազմեալ Հնչակեան կուսակցություններուն ազգային երեսփոխանները: Կեդրոն Խմբակցութիւնը իր հայեացքներով պահպանողական էր եւ ընդհանրապէս կը պաշտպանէր պատրիարքին տեսակետերը: Ընտրություններուն կը նախապատրաստուին ՄԴ Հնչակեան, ՀՅ Դաշնակցութիւն կուսակցությունները, որոնք հայաշատ քաղաքներուն եւ գաւառներուն մէջ ունէին իրենց մասնաճիւղերն ու հետեւորդները¹⁴:

Առաջին պահէն, հայ բոլոր հոսանքներուն համար լուրջ մտահոգութիւն էր հայ երեսփոխաններուն վերապահուած արթոններուն թիւը՝ նորակազմ խորհրդարանին մէջ: Լուրջ հարց էր նաեւ հայ խորհրդարանականներուն ինքնութիւնը՝ պատկանելիութիւնը եւ հաւատարմութիւնը: Այս մտահոգութիւնները անտեղի չէին: Իրականութիւնը այն էր, որ ընտրաշրջաններուն բաժանումները դիտումնաւոր կերպով կատարուած էին ի վնաս քրիստոնէաներուն. «*Օրինակի համար գիւղ մը կամ տարածաշրջան մը որ բաղկացած էր հինգ հարիւր քրիստոնէայ ընտրողներէ (թիւ մը որ բաւարար է Բ. կարգի մէկ ընտրող տալու համար), կը բաժանուէր երեք կամ չորս շրջաններու եւ ապա այդ շրջանները կը միացուէին իսլամ գիւղերուն կամ ընտրաշրջաններուն*»¹⁵: Իսկ հայութիւնը կ'ապրէր ցրուած, եւ ոչ մէկ ընտրական տեղամասի մէջ մեծամասնութիւն կը կազմէր. ուստի Բ. կարգի ընտրողներու կողմէ, հայ թեկնածուի մը ընտրութիւնը մեծապէս կախեալ էր ոչ-հայ Բ. կարգի ընտրողներու կամքէն՝ որ իր հերթին, ընդհանուր առմամբ ենթակայ էր Իթթիհատի թելադրանքին:

Ընտրութիւններուն ընդառաջ, Իթթիհատ պաշտօնապէս կը դիմէ հայոց պատրիարքարան եւ կը խնդրէ որ իրեն տրուի հայ ընտրելիներուն ցուցակը, որպէսզի իր Բ. կարգի ընտրողներուն միջոցով ապահովէ անոնց ընտրութիւնը: Իթթիհատ կ'ուզէր, որ հայ թեկնածուներ հասնին խորհրդարան՝ իր լայնախոհութիւնը ցոյց տալու համար: Միւս կողմէ սակայն, ան կը փորձէր սահմանափակել հայ երեսփոխաններուն թիւը՝ որպէսզի այդ թիւին համեմատ քիչ երեւէր հայ ազգաբնակչութեան քանակը: Իթթիհատ կ'աշխատէր նաեւ ապահովել քաղաքականօրէն իրեն կողմնակից հայ երեսփոխաններ՝ ապագայի գլխացուանքները նուազագոյնի իջեցնելու համար:

Հայ կուսակցութիւնները շրջանցող Իթթիհատ-Պատրիարքարան յարաբերութեան այս ձեւէն դժգոհ կը մնայ ՀՅԴն, որ Իթթիհատը կը նկատէր իր դաշնակիցը եւ կ'ակնկալէր որ ան այդ դերը վստահէր իրեն՝ բան մը որ բնականաբար պիտի բարձրացնէր կուսակցութեան քաղաքական վարկը: Յարաբերութեան այս ձեւէն դժգոհ կը մնան նաեւ հնչակեանները. սակայն անոնք զայն կը սեպեն «*քաղաքական մի բարեբախտ*

սխալ»¹⁶, որուն շնորհիւ չեն ստիպուիր խնդրարկուի վիճակով բանակցութեան նստելու իրենց հին հակառակորդին հետ:

Սեպտեմբեր 9ին, պատրիարքական տեղապահ Եղիշէ Արք. Դուբեան, խորհրդակցութեան կը հրաւիրէ Մուրատը, Գրիգոր Զօհրապը, Ռուբէն Զարդարեանը եւ շարք մը հասարակական գործիչներ ու անոնց հետ կը քննարկէ հայ երեսփոխաններու թիւին եւ թեկնածուներուն ունենալիք յատկանիշերուն առնչուած հարցեր¹⁷: Սեպտեմբեր 25ին, Ազգային Երեսփոխանական Ժողովը, փակ քուէարկութեամբ կ'ընտրէ մարմին մը, որուն պարտականութիւն կը տրուի մշակել հայ երեսփոխաններու գործունէութեան ծրագիրը, ինչպէս նաեւ պատրաստել երեսփոխանութեան թեկնածուներուն ներկայացուելիք անհրաժեշտ պայմանագիր մը: Զօհրապի, Յարութիւն Շահրիկեանի, Մինաս Չերազի եւ ուրիշներու կողքին, Մուրատ կ'ընտրուի այդ մարմնին անդամ¹⁸: Պատրիարքարանի շրջագիծէն ներս, Մուրատի ատենապետութեամբ կը կազմուի նաեւ «Օսմանեան Ընտրական Պայքարի Յանձնաժողով»ը, որուն պարտականութիւնն էր հանդիպումներ ունենալ Բ. կարգի հայ ընտրողներուն հետ եւ անոնց փոխանցել հայ թէ այլազգի այն թեկնածուներուն անունները, որոնց շուրջ համաձայնութիւն գոյացած էր Պատրիարքարանին եւ Իթթիհատին միջեւ՝ Բ. կարգի հայ ընտրողներուն քուէները այդ անուններուն վրայ կ'էդրոնացնելու համար¹⁹:

Այս շրջանին Մուրատ կ'անդամակցի նաեւ համաօսմանեան Ազգի Նուիրեալներու Միութեան, «որը կազմուած է նախկին ռեժիմի օրով բանտարկուած, աքսորուած եւ հալածուած զանազան յեղափոխական տարրերից»²⁰, ինչպէս նաեւ «Փառլամենտական Ընտրութեանց Համար Պայքար Մղող» մարմնին՝ «կազմուած ինտէլիգէնտ եւ կարող անձնաւորութիւններից»²¹:

Այս հանգրուանին, Հնչակեան Կուսակցութիւնը կ'առաջադրէ Մուրատի թեկնածութիւնը Գոգանէն՝ Ատանայի Նահանգ: Մուրատի թեկնածութիւնը, հայ բոլոր հոսանքներուն կողմէ կ'ընդունուի առանց առարկութեան եւ ընտրապայքարը կ'ընթանայ հեզասահ. բան մը՝ որ այլոց պարագային չի կրկնուիր:

Ատանայի մէջ ընտրապայքարը կը սկսի ամենաշուտը²²: Այս առիթով *Մանգումէի* Ատանայի թղթակիցը կը գրէ. «*Ատանայի*

նահանգին կողմէ ընտրուելիք եւ Հաճընէն ընտրուող Օսմ. երեսփոխանը պիտի ըլլայ մեր սիրելի հայրենակիցը Համբարձում էֆ. Պոյաճեանը: Հաճընէն քուէները տրուած են արդէն ամբողջապէս միաձայնութեամբ յարմարագոյն քանտիտա Պոյաճեան էֆ.-ին: Ինչպէս ծանօթ է Համբարձում էֆ. Պոյաճեանը Հաճընցի է, եւ Հաճընցիք պաշտելու չափ կը սիրեն իրենց հայրենակիցը»²³: Բ. կարգի ընտրողներու Ատանայի ընտրական նիստը եւս կը գումարուի ամէնէն առաջ ընդհանուր համախոհութեան մթնոլորտի մը մէջ: Երեսփոխան կ'ընտրուի Մուրատ: Այս մասին Բիւզանդիոն կը գրէ. «Հաճընի մէջ Երիտասարդ Թուրք մը Թրքաց կողմէ ընտրելի ներկայացուած էր, բայց Տ. Ներսէս Օ. Վ. Դանիէլեան եւ Հայ երեւելիներ իրենց ազդեցութիւնը բանեցուցեր են Թուրքերուն մօտ՝ Հաճընցի ազատական Հայուն ընտրութեամբ բոլոր գաւառին պատիւ բերելու պէտքն յիշեցնելով, եւ Թուրքերն հաւաներ են, այնպէս որ Մուրատ ընտրուեր է թէ՛ Հայերուն թէ՛ Թուրքերուն սիրալիր միաբանութեամբը»²⁴: Այս միախոհ եւ կեդրոնացեալ աշխատանքին շնորհիւ, Մուրատի երեսփոխան ընտրութիւնը Բիւզանդիոն որպէս վերնագիր կը ծանուցէ՝ «Առաջին Հայ Երեսփոխան Օսմ. Խորհրդարանին Մէջ»²⁵:

Ընտրութիւններուն որպէս արդիւնք երեսփոխան կ'ընտրուին Գարեգին Փաստրմաճեան–Արմէն Գարօ (Էրզրում, ՀՅԴ), Վարդգէս Մերէնկիւլեան (Էրզրում, ՀՅԴ), Վահան Փափազեան–Կոմս (Վան, ՀՅԴ), Գեղամ Տէր Կարապետեան (Մուշ, ՀՅԴ), Յակոբ Պապիկեան (Թեքիրտաղ, Իթթիհատ), Պետրոս Հալաճեան (Պոլիս, Իթթիհատ), Յարութիւն Պոշկեզէնեան (Հալէպ, Իթթիհատ), Ստեփան Սպարթալեան (Իզմիր, անկուսակցական), Նազարէթ Տաղաւարեան (Մեքաստիա, անկուսակցական), Համբարձում Պոյաճեան–Մեծն Մուրատ (Ատանա, ՄԴՀԿ), Գրիգոր Զօհրապ (Պոլիս, Ահրար):

ՄԵԾՆ ՄՈՒՐԱՏ ՕՍՄԱՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆԴԱՍ

Երեսփոխանական ժողովի բացման օրը, 1908 Դեկտեմբեր 5ին, Կետիկ Փաշայի հնչակեան կեդրոնատեղիի շրջափակին մէջ տեղի կ'ունենայ ժողովրդային հաւաք. պատշգամին վրայ կ'երեւին «հնչակեան երեսփոխաններ պ.պ. ՄՈՒՐԱՏ եւ ՏԱՂԱԻԱՆՄԵՆ»²⁶: Ժողովուրդը ցնձագին ծափերով ընդունեց համբաւաւոր

գործիչները, որմէ յետոյ բազմութեամբ թափօրը դիմեց դէպի Նուրի Օսմանիէ»²⁷:

Բոլոր երեսփոխանները խորհրդարան կ'առաջնորդուին շքեղ երթերով. ի վերջոյ, խորհրդարանին բացումը կը խորհրդանշէր նախկին աստելի վարչակարգին աւարտը, ուստի պէտք է կատարուէր սոնական մթնոլորտի մէջ:

Համաժողովրդային ամենատարբեր երթերով դէպի խորհրդարան գացող թուրք եւ այլազգի երեսփոխաններէն շատերուն «աշխատանքային» առօրեային մասին Կոմս կը վկայէ. «Նիստերու ատենն ալ անոնցմէ [երեսփոխաններէն - Ե.Ճ.] շատերը չէին շեղեր իրենց տնային սովորութիւններէն. կը բարձրանային բազկաթոռներու վրայ եւ ծունկերը տակերնին ծալած, մուճակնին աթոռին տակ՝ մերկ ոտքերուն մատերու հետ կը խաղային եւ 'թեզպէհ' կը քաշէին, առանց նեղուելու: Քուէարկութեան ատեն կը նայէին իրենց վստահելի կամ Իթթիհատի խօսկան երեսփոխանի մատերուն ու կը պոռային 'կապուլ' (ընդունելի)»²⁸: Տարբեր չէ նաեւ Սապահգիլեանի կարծիքը, որ Օսմանեան Խորհրդարանը կը նմանցնէ «մի տեսակ արեւելեան սրճարան»ի, ու կ'եզրակացնէ. «բարլամենտի ծաղրանկար... Օտտոմանեան բարլամենտն է այդ»²⁹: Սապահգիլեան կ'արտայայտէ նաեւ խորունկ մտատանջութիւն մը, գրելով. «Սա այն օրէնսդիր ժողովն էր, որ պատմութեան, ժամանակի, յառաջադիմութեան ժանիքներից պիտի ազատէր անխուսափելի անկումի դատապարտուած մի պետութիւն: Այդ մարդիկը մեր հոգին, ուղեղը, իմացականութիւնը, երեւակայութեան թռիչքը, սրտի բաբախումն անգամ՝ սահմանների մէջ պիտի դնէին. սրանք էին որ մեզ պիտի թելադրէին ինչ անել, ինչ՝ ոչ: Կոյր բախտի հեգնութիւն.- Արեւմտեան քաղաքակրթութեան ռահվիրայ՝ հայը եւ հելլէնը թուրան-թաթարներից կեանքի համար օրէնքներ պիտի ստանային, եւ պատմութիւնը, քաղաքակրթութիւնը դա ոճիր չպիտի համարէր...»³⁰:

ՅԵՏԱՇՐՁԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՒ ԱՏԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

1908 Հոկտեմբեր 5-6ին, Օսմանեան Կայսրութիւնը կը դիմագրաւէ արտաքին լուրջ խնդիրներ:

Երկու օրերու ընթացքին՝ Պուկարիա կը յայտարարէ իր ամբողջական անկախութիւնը Օսմանեան Կայսրութենէն, Աւստրո-Հունգարիան իրեն կցուած կը յայտարարէ Պոսնիա-Շերցեկովինան, իսկ Կրետէ Կղզին ինքզինք կը կցէ Յունաստանին: Օսմանեան բանակները ո՛չ մէկ հակազդեցութեան կը դիմեն: շարիաթականները (իսլամական կրօնքի սկզբունքներով երկիրը ղեկավարելու կողմնակիցներ), լայնածիր տարածքներու կորուստին եւ իշխանութեան անգործնական կեցուածքին մեղքը կը բարդեն Իթթիհատին ու անոր բերած սահմանադրութեան ուսերուն:

Ներքին ճակատի վրայ, կարճ ժամանակամիջոցի մը մէջ, իր ձեռք բերած խորհրդարանական մեծամասնութեան շնորհիւ, Իթթիհատ կը յաջողի Միտհաթեան Սահմանադրութեան 119 յօդուածներէն 21ին մէջ փոփոխութիւններ կատարել³¹՝ բոլորն ալ ի շահ իր քաղաքական նպատակներուն: Այս փոփոխութիւններուն շնորհիւ, խորհրդարանը իրաւունք կ'ունենայ Իթթիհատի համակրութիւնը չվայելող վարչապետ Քամիլ փաշայի կառավարութենէն յետս կոչել վստահութեան քուէն: Նոր վարչապետ կը նշանակուի Իթթիհատի համակրութիւնը վայելող Հուսէյն Հիլմին: Այս քայլը ընդդիմութեան կողմէ կը նկատուի Իթթիհատի մենատիրութեան ամրապնդում: Ընդդիմութիւնը, որ հիմնականին մէջ կազմուած էր շարիաթականներէն եւ ազատականներէն, կը դիմէ զանգուածային ցոյցերու: Ստեղծուած լարուած մթնոլորտին մէջ, Ապրիլ 6ին, Ղալաթիոյ կամուրջին վրայ կը սպաննուի ընդդիմադիր *Սերպեստ* թերթի խմբագիր Հասան Ֆեհմին: Մթնոլորտը աւելի կը շիկանայ: Յաջորդ օր, խորհրդարանի նիստին Մուրատ եւ Զօհրապ հարց կը բարձրացնեն թէ ինչպէ՞ս ոճրագործը կը յաջողի փախուստ տալ, երբ Ղալաթիոյ կամուրջին երկու ծայրերուն մնայուն պահակակէտեր կային: Սա, իշխանութիւններուն հասցէին ուղղուած յստակ ամբաստանութիւն էր: Այս առիթով կը կարդացուի երեսփոխաններ Մուրատի, Զօհրապի, Իսմայիլ Հաքքըրի, Միւֆիթի, Տոքթ. Ռիզա Նուրիի, Քաալմ Զէյնի եւ Քոզմիթիի կողմէ ստորագրուած, խօսքի ազատութիւնը պաշտպանող ու կառավարութիւնը դատապարտող բողոքագիր մը, ուր կ'ըսուի. «*Երէկ գիշեր արձակուած այդ գնդակները ոչ թէ 'Սերպեստ'ի խմբագրապետին դէմ նետուեցան, այլ մամուլին ամբողջութեան*

դէմ, խիղճի եւ գաղափարի ազատութեան դէմ, միով բանիւ ամբողջ Օսմանեան ազգին դէմ արձակուեցան»³²:

Ապրիլ 13ին ցոյցերը կը դառնան լայնածիր եւ կը վերածուին ըմբոստութեան (այդ պատճառով, օրացուցային հին տոմարով անոնք կը կոչուին նաեւ Մարտ 31ի դէպքեր): Կատողած ամբոխը, սոֆթաներու³³ եւ ապստամբ զինուորներու առաջնորդութեամբ կը քալէ դէպի խորհրդարան: Ճամփուն վրայ ան կը քանդէ ամէն բան, որ կը խորհրդանշէր սահմանադրութիւնն ու Իթթիհատը: Կը սպաննուին Արդարադատութեան նախարար Նազըմ փաշան, երկու երեսփոխաններ, Իթթիհատի անդամ զինուորականներ եւ գործիչներ: Ամբոխը կը խոնուի խորհրդարանի շէնքին մէջ: Փոքրամասնութիւն կազմող երեսփոխաններով, Ա. խօսնակ կը յայտարարուի Մուստաֆա էֆենտի: Ժողովը կ'որոշէ վերադառնալ շարիաթի օրէնքներուն: Հուսէյն Հիլմի կը հրաժարի եւ սուլթանին կողմէ նոր վարչապետ կը նշանակուի Թեֆիկ փաշա:

Սահմանադրական կարգերը կորսնցնելու եւ համիտեան բռնակարգերուն վերադառնալու իրական վտանգ կը յառաջանայ:

Իթթիհատ իր հակահարուածը կը կազմակերպէ իր միջնաբերդ Սալոնիկէն: Ապրիլ 15ին, Մակեդոնական Երրորդ Բանակի հրամանատար Մահմուտ Շեքէթ փաշայի հրամանատարութեամբ կը կազմուի Շարժուն Բանակ (*հարաքաթ օրտուսու*), որ կը կոչուի նաեւ Ազատարար Բանակ: Սահմանադրական կարգերը պաշտպանելու կողմնակից երեսփոխանները եւ ծերակուտականները կը հաւաքուին Սան Ստեֆանօ քաղաքը ու «Ազգային Ընդհանուր Ժողով» անունին տակ գահընկէց կը հռչակեն սուլթան Համիտը եւ կ'օրինականացնեն Ազատարար Բանակին յետագայ գործունէութիւնը: Մուրատ կը գտնուի այդ երեսփոխաններու շարքին³⁴:

Հայութիւնը թիկունք կը կանգնի սահմանադրական ուժերուն եւ որոշ տեղեր անոնց կողքին գործնապէս կը մասնակցի կռիւներուն: ՄԴՀԿի եւ ՀՅԴի կողմէ կազմակերպուած կամաւորական խումբերը Ազատարար Բանակին կողքին կը կռուին Մաքրիքէյ³⁵, Բերա³⁶, Կետիկ Փաշա, Գում Գափու եւ Սամաթիա թաղամասերուն³⁷, Սկիւտարի³⁸ եւ մայրաքաղաքի այլ արուարձաններուն³⁹ մէջ: Յիշարժան կ'ըլլայ հայ կամաւորներուն մասնակցութիւնը Ոսկեղջիւրի Հովիտէն Տատաւլայի բարձունքներու գրաւման մարտերուն⁴⁰: Հայ կամաւորներէն

կ'իյնան նահատակներ⁴¹: Ֆերիտիյէի մէջ դաշնակցական եւ հնչակեան կամաւորուհիներու կողմէ կը կազմակերպուի դաշտային հիւանդանոց⁴²: Հայութիւնը Ազատարար Բանակին համար կը կատարէ նուիրահաւաք⁴³: Պոլիսէն դուրս, հայեր, Ազատարար Բանակին զինեալ օգնութիւն ցոյց կու տան նաեւ Ռոտոսթօ⁴⁴, Ատափագար⁴⁵, Նիկոմիդիոյ շրջաններ⁴⁶, եւ այլուր: Ազատարար Բանակը, առանց մեծ դժուարութեան կը գրաւէ Պոլիսը: Խորհրդարանը կը վերսկսի իր բնականոն աշխատանքները: Վարչապետ կը վերանշանակուի Հուսէյն Հիլմին:

Մինչեւ այդ սակայն, Պոլիս կը հասնին Ատանայի մէջ տեղի ունեցող հակահայ ջարդերու լուրերը: Անմիջապէս, հայ կրօնական երեք համայնքներէն կազմուած 18 հոգինոց պատուիրակութիւն մը կը շտապէ վարչապետ Թեւֆիկ փաշային մօտ: Վարչապետը նախ կը փորձէ չհանդիպիլ պատուիրակութեան հետ, պատճառաբանելով իր բազմազբաղ ըլլալը: Պատուիրակութիւնը տեղի չի տար եւ կը յայտնէ թէ պատրաստ է սպասել վարչապետը թէկուզ մինչեւ յաջորդ առաւօտ: Ստիպուած, Թեւֆիկ փաշա կ'ընդունի պատուիրակութիւնը ներկայացնող խումբ մը: Այդ պահուն խորհրդարանէն վարչապետարան կը հասնին երեսփոխաններ Մուրատ, Վարդգէս եւ Տաղաւարեան «*իրենց հետ բերելով Ատանայի եւ Հալէպի (այն նահանգները ուր ջարդերը ստացած էին մեծ տարողութիւն - Ե.Ճ.) թուրք եւ արաբ երեսփոխանները*»⁴⁷: Վարչապետը կը յայտնէ, որ «*կատավարութիւնը գիշեր ցերեկ այս գործով կը պարապի*»⁴⁸ եւ արդէն բանակային զօրքեր, տարբեր վայրերէ հասած են շրջան, դէպքերուն առաջքն առնելու համար:

Երբ Մուրատ սահմանադրութիւնը պաշտպանող երեսփոխաններուն հետ կը գտնուէր Սան Ստեֆանօ, հոն կ'այցելէ *Բիւզանդիոն* օրաթերթի խմբագիր Բիւզանդ Քեչեան, թերթին թարմ լուրեր հասցնելու նպատակով: Մուրատ եւ Տաղաւարեան զինք կը ծանօթացնեն խորհրդարանի Ա. խօսնակ Ռիզայի հետ: Հանդիպման ընթացքին, երեք հայերը Ռիզային կը բողոքեն Ատանայի մէջ տեղի ունեցող ջարդերուն մասին եւ կ'առաջարկեն անոր, կապ պահել զօրավար Շեւքէթ փաշային հետ ու խնդրել որ ջարդերը դադարեցնելու համար «*սզդու հեռագիր մը*» դրկուի Ատանայի նահանգապետին եւ Գոզանի գաւառապետին,

«որովհետև հիմա երկրին մեջ միակ գործօն իշխանությունը Ազատության Բանակն է»⁴⁹: Մուրատ, Տաղաւարեան եւ Քեչեան անձամբ կը խմբագրեն պահանջագիր մը ու զայն կը յանձնեն Ռիզային, որովհետև անկէ կ'իմանան թէ ինք շուտով պիտի հանդիպի Շեւքէթի հետ:

Այդ օրերուն, Մուրատ, իր ծննդավայրն ու ընտրաշրջանը եղող Ատանայի Նահանգէն կը ստանայ ջարդերը նկարագրող բազմաթիւ հեռագիրեր: Անոնցմէ մէկուն մէջ Մահակ կաթողիկոս կը գրէ. «Վիլայէթին շատ տեղեր արեան եւ կրակի մէջ կորան: Սոսի շուրջը չմնացին ազարակ, արտ, գոյք: Մեր քաղաքը պաշարուած էր: Կառավարութեան եւ մեր տեղացի իսլամ հայրենակիցներու ջանքով աւազակներն երէկ մասամբ ցրուեցան: Մեր ժողովուրդն առ ահի վանքին մէջ պատուարուած է: Կայսերական կառավարութենէն թախանձեցէք բաւական ուժ փութացնել, ապա թէ ոչ՝ վտանգի տակ ենք»⁵⁰: Այս հեռագիրէն երկու ժամ ետք, Մուրատ կը ստանայ Սիսի գաւառապետ Ֆեհմի պէյի սա հեռագիրը. «Միս ապահով է: Մանրամասնութիւնք Ապրիլ 7 թուով հեռագրուած են Տախիլիյէյին (Ներքին Գործոց Նախարարութեան - Ե.Ճ.)»⁵¹: Հաճընի առաջնորդ Ներսէս Եպս. Դանիէլեան, իր հեռագիրին մէջ կը նկարագրէ Ատանայի, Սիսի, Կարս-Պազարի եւ Բոււլուի մէջ տեղի ունեցող հակահայ վայրագութիւնները⁵², իսկ Քըրըք-Խանի կոտորածէն մազապուրծ Եպրուհի Քեհիայեան «մերկ, բոկոտն, սրտաճմլիկ վիճակաւ» կը հասնի Յիսուսեանց Եկեղեցի ու կը խնդրէ որ իր աղերսագիրը Մուրատի ձեռքով հասնի խորհրդարանի նախագահին⁵³:

Իրօք, Ազատարար Բանակին Պոլիսը գրուած օրը կայացած խորհրդարանի նիստին, Մուրատ կը կարդայ Ատանայէն եւ Սիսէն ստացած իր հեռագիրերը, որոնց հիման վրայ կ'որոշուի «յանուն Օսմ. խորհրդարանին պատուէր մը դրկել Անատոլուի կուսակալներուն, ջարդերուն վերջ տրուելու համար»⁵⁴: Իր ելոյթին աւարտին Մուրատ կը յայտարարէ. «Բռնապետութեան օրերուն լեռներու մէջ կոռուեցանք, մի թէ սահմանադրութեան այս շրջանին հարկադրուած պիտի լինենք լեռ բարձրանալ...»⁵⁵: Ժողովականները քրթմնջոցներով եւ դժգոհութեան արտայայտութիւններով կ'ընդունին Մուրատի այս խօսքերը:

Խորհրդարանի յաջորդ նիստին (Մայիս 2), կը կարդացուի Ատանայի նահանգապետ Ճեւիտ պէյի զեկուցագիրը: Ան ամբողջ

մեղքը կը բարդէ հայ ֆետայիներու ուսերուն եւ կը չքմեղանայ որ հնարաւոր չեղաւ դէպքերուն առաջին առնել, որովհետեւ բաւարար զօրք չկար: Կը կարդացուի երեսփոխաններ Մուրատի, Վարդգէսի, Տաղաւարեանի, Պապիկեանի, Տէր Կարապետեանի, Ալի Ճենանի, Արիֆ Իսմէթի եւ Իհսանի կողմէ համատեղ ներկայացուած պահանջագիրը, ուր դէպքերու նկարագրութենէն ետք կը պահանջուի.-

1. Դէպքերուն որպէս պատասխանատուներ ներքին գործերու նախարարի խորհրդական Ատիլ եւ Ատանայի կուսակալ Ճելիտ պէլերը դատել պատերազմական ատեանին առջեւ,
2. Զինուորական դրութիւն հաստատել Հալէպի Նահանգին մէջ եւս,
3. Տէօրթ Եոլէն անմիջապէս վերացնել բանակային շրջափակումը,
4. Անօգնական այրիներն եւ որբերը պատսպարելու եւ ողջ մնացածները անօթութենէ փրկելու համար բաւարար գումար յատկացնել,
5. Թալանուած գոյքը իրենց տէրերուն վերադարձնել. ցանկագրել հրկիզուած տուններու թիւն ու արժէքը, սպաննուածներուն անունները եւ այս գործին համար իւրաքանչիւր քաղաքի մէջ կազմել խառն եւ չէզոք յանձնախումբ⁵⁶:

Այս առիթով, Մուրատ իր ելոյթին մէջ կ'ըսէ.- «Կուսակալին նկատմամբ Հալէպի երեսփոխանք հեռագիրներ ստացած էին, ներքին գործոց խորհրդականին դիմում եղաւ, նկատողութեան պիտի առնենք պատասխանեց, բայց կարեւորութեան չտուաւ: Երբ տեսնուեցաւ որ առաջին ջարդէն յետոյ պաշտօնեաները չպատժուեցան, երկրորդ անգամ եւս պատահեցաւ: Կուսակալին հին դրութեան հետեւութեամբ տուած հեռագիրը կը հաստատէ իմ խօսքերս: Պահեստի զօրք դրկուած է, բայց անոնք ալ փոխանակ ժողովուրդը պաշտպանելու Կ.Պոլսոյ ապստամբ զօրաց նման ըմբոստ կողմին յարեցան: Կը յուսամ թէ մեր առաջարկները կ'ընդունուի [sic!], եթէ երեսփ. ժողովս խղճմտօրէն շարժի, ամէն ինչ կը կարգադրուի, երբ խղճմտօրէն կ'ըսես, մի այպանէք զիս, մինչեւ հիմա հայերն իբր կրօնքի եւ ազգի թշնամի կը նկատէիք, բայց հիմա ամէն ոք հասկցաւ թէ հայերն ամէնեւին յանցանք չունէին, ուստի կը յուսամ թէ յայտնի եղաւ, թէ սուտ կը խօսին այս կուսակալները, որոնք՝ հայերն իբր գէշ կը ցուցնեն: Զարդը կատարող բռնակալներն օտարներուն ալ վնասած են. երբ անոնք

բողոքեցին, խորհրդական Ատիլ պէյ հեռագրեց, թէ օտար հպատակներուն չդպչին եւ չվնասեն»⁵⁷:

Այս միջոցին, Ատանայի մէջ կը սկսի գործել Ռազմական Դատարանը: Սահմանադրութեան վերահաստատումէն մեծապէս խանդավառ՝ հայութիւնը, յոյսեր կը տածէ որ արդարութիւնը կը գտնէ իր տեղը եւ յանցագործները կը պատժուին: Հուրէն եւ սուրէն հազիւ ազատած հայը, բարոյահոգեբանական ծանր հարուած կը ստանայ, երբ կը տեսնէ թէ Ռազմական Դատարանին կանխակալ նպատակը եղած է ջարդարարն ու ջարդուողը, նախայարձակն ու ինքնապաշտպանութեան դիմողը դնել նոյն նժարին վրայ: Այս նպատակին իրագործման համար, Ռազմական Դատարանը բռնի ձեւերով կը փորձէ կարելի եղած չափով թուրք եւ հայ յանցագործներուն թիւերը հաւասարեցնել: Նոյնը՝ գոհերու քանակի պարագային: Այս մօտեցումը հայութեան մէջ կ'առաջացնէ ընդհանուր ընդվզում: Դուրեան Պատրիարք եւ հայ երեսփոխանները, իրենց յաճախակի բողոքները կը ներկայացնեն վարչապետին ու անկէ կը պահանջեն արդարամիտ կեցուածք:

Դժուար է գնահատել՝ արդարամիտ կեցուածքէ՞ բխած, թէ՞ հարցը կառավարութեան ուսերէն խորհրդարանին վրայ նետելու համար, վարչապետ Հիլմի խորհրդարանի Մայիս 13ի նիստին գրաւոր առաջարկ կը ներկայացնէ Ատանա ուղարկելու խորհրդարանական յատուկ յանձնախումբ մը, կազմուած չորս անձերէ՝ երկու իսլամ եւ երկու հայ, որոնցմէ երկուքը ըլլան պետական պաշտօնեայ եւ երկուքը՝ երեսփոխան: Յանձնախումբը խորհրդարանին պետք է ներկայացնէր իր անաչառ տեղեկագիրը: Որպէս պետական պաշտօնեաներ յանձնախումբին անդամ նշանակուած էին նախադատ ատեանի նախագահ Ֆայիք պէյը եւ Մոնաստր Նահանգի դատական քննիչ Յարութիւն Մոստիչեանը: Խորհրդարանին կը մնար ընտրել երկու երեսփոխաններ: Իթթիհատի կարծր թելի ներկայացուցիչներ՝ Թալէաթ, Զէյնէլապիտին, Վեհպի եւ ուրիշներ կ'ընդդիմանան այս առաջարկին: «*Բայց մեր, յոյներու եւ պուլկարներու ծայրայեղ, լարուած ու ջղային յարձակումներուն զիջելով՝ Իթթիհատի խօսնակներէն մէկը ելաւ յայտարարելու, որ դէպքին բացառիկ կարեւորութիւնը ի նկատի առնելով՝ իրենց խմբակը համաձայն է խորհրդարանական քննիչ մարմնի մը առաքման պահանջին: Կապուլ, կապուլ պոռացին...»⁵⁸:*

Գաղտնի քուէարկութեամբ, յանձնախումբին անդամներ կ'ընտրուին Եուսուֆ Քեմալ (Գարասի) եւ Յակոբ Պապիկեան (երկուքն ալ իթթիհատական): Չայներու առաւելութեամբ Պապիկեանէն ետք կու գան Վարդգէս եւ Մուրատ⁵⁹: Պարզ աչքով իսկ կարելի է նկատել, որ յատուկ յանձնախումբ կազմելու առաջարկը ընդունելէն ետք, Իթթիհատ կրցած էր ձայներու կեդրոնացում կատարել, մինչ այլ քուէներ տարտղնուած էին (օրինակ Վարդգէսի եւ Մուրատի միջեւ): Մինչդեռ տրամաբանութիւնը կը թելադրէր, որ ծննդավայրի, ընտրաշրջանի եւ կուսակցական պատկանելիութեան տեսակետերով (կիլիկահայութեան մէջ Հնչակեան Կուսակցութիւնը ամէնէն ազդեցիկն էր), այդ պաշտօնին ընտրուէր Մուրատը: Յանձնախումբը Ատանայի մէջ իր քննութիւնները կը կատարէ մինչեւ Յուլիս 8 եւ իրեն տրուած պայմանաժամէն առաջ կը վերադառնայ Պոլիս:

Յուլիս 21ին Մուրատ, Վարդգէս եւ Զօհրապ կը հանդիպին վարչապետին ու կը բողոքեն Ատանայի ջարդի յանցագործներուն ներում տալու կառավարական ծրագիրին եւ Հայկական Նահանգներու մէջ բանտարկուած չարագործներուն ներում տալու կառավարութեան մտադրութեան դէմ: Անոնք նաեւ կ'առաջարկեն, որ կառավարութիւնը պաշտօնապէս հերքէ Ատանայի Ռազմական Դատարանին տեղեկագիրը, որ ջարդերու պատասխանատու կը նկատէր հայկական կուսակցութիւնները: Հիլմի փաշա կը պատասխանէ, թէ Ատանայի դէպքերուն համար պիտի ըլլայ պատիժներու «փոքր թեթեւացում մը» եւ ոչ թէ ներում, իսկ գաւառներու բանտերը գտնուողներուն ներում չկայ. այդ կը վերաբերի միայն Պոլսոյ դէպքերու մասնակիցներուն (յետաշրջական շարժման), իսկ Ռազմական Դատարանին տեղեկագիրին հերքումը վտանգաւոր է, քանի որ նման քայլը կը գրգռէ մոլեռանդ ամբոխը⁶⁰:

Ռազմական Դատարանի անարդար որոշումները հակակշռելու միակ յոյսը կը մնայ խորհրդարանական յանձնախումբին տեղեկագիրը:

Խորհրդարանի Յուլիս 23ի նիստին, Պապիկեան կը յայտարարէ որ Ատանայի մէջ 21.000 մարդ զոհուած է⁶¹: Ան, մինչ այդ, թերթերու տուած հարցազրոյցներով թէ մասնակի ելոյթներու ընթացքին, իշխանութիւնները՝ ներառեալ իթթիհատական

բարձրաստիճան պաշտօնատարներ՝ մեղադրած էր յանցագործություններուն մեղսակցութեան մէջ: Նիստը կ'որոշէ, որ յաջորդ ժողովին Պապիկեան կարդայ իր զեկուցագիրը⁶²: Յաջորդ ժողովէն մէկ օր առաջ, Պապիկեան կը մահանայ: Յաջորդ նիստին Յունիս 5ին, խորհրդարանը ցաւ կը յայտնէ «Յակոբ էֆ. Պապիկեանի մահուան առիթով»: Այս կապակցութեամբ, անոր յանձնախումբի գործընկերը Քեմալ, իր ելոյթին փափաք կը յայտնէ «որ Յակոբ էֆ. Պապիկեանի տեղեկագիրն ալ կարդացուի, որովհետեւ անցեալ օր արդէն ներկայացուելիք ամէն կէտերու մասին համաձայնութիւն ունեցած էին»⁶³: Բայց, յանձնախումբի տեղեկագիրը խորհրդարանին մէջ բնաւ չի կարդացուիր:

Մուրատ, լաւ ըմբռնելով պահուն լրջութիւնը, թուրք գործընկերոջ մը հետ կ'այցելէ Պապիկեանին տունը, անոր կնոջ գիտակցութեամբ կը խուզարկէ ողբացեալին անձնական թուղթերը եւ կը յայտնաբերէ տեղեկագիրը: Ան իր երեսփոխանական կնիքով կը կնքէ տեղեկագիրը եւ որպէս աւանդ կը յանձնէ Պապիկեանի կնոջ: Յաջորդ օր Մուրատ, Միհրան Տամատեանի, Ազգային Վարչութեան քարտուղար Սարգիս Սուիհի (Միւնկիւճեան) եւ Շաւարշ Հովիւեանի հետ, լուսանկարչական գործիքներով կը վերադառնայ Պապիկեանի կնոջ մօտ, կը լուսանկարէ տեղեկագիրը եւ կը յանձնէ պատրիարքարան⁶⁴: Աւելի ուշ՝ 22 Յունուար 1910ի Ազգային Ընդհանուր Ժողովի Թ. նիստի իր ելոյթին մէջ, Մուրատ կու տայ հետեւեալ բացատրութիւնը.-

«Պաշտօնակիցս Վարդգէս էֆ., անդամ Օսմ. խորհրդարանի, ըսաւ թէ Պապիկեանի տեղեկագիրը կիսաւարտ մնացած է. ասիկա սխալ է. ես իմ տեսածս պատմեմ, որպէսզի մնայ ատենագրութեան մէջ: Հանգուցեալը ինչ որ տեսած էր Ատանայի մէջ, նօթագրել տուած էր. վերադարձին վեց էջ ինք խմբագրած էր, իսկ մնացածը ուրիշին ընդօրինակել տուած, ո[ր] իր տպաւորութիւններն են. հետեւաբար չի կրնար մեկնութեան առիթ տալ. եւ արդէն, պատրիարքարանի մէջ պահուած է անոր ճիշդ գովիին»⁶⁵: Տեղեկագիրը, Պուլտյ մէջ ֆրանսերէն լոյս կը տեսնէ 1912ին, իսկ 1919ին՝ նաեւ հայերէն:

Փաստօրէն, Մուրատի արագ եւ համարձակ նախաձեռնութիւնը անհետ կորուստէ կը փրկէ այդ յուժ կարեւոր փաստաթուղթը:

Մուրատ, կ'որոշէ իր երեսփոխանական արձակուրդը անցընել Ատանայի Նահանգին մէջ եւ մօտէն լսել ժողովուրդին ցաւերն ու պահանջքները: Սակայն ան դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու իր մայրը: Ստիպուած, կը մնայ Հաճընի իր հօրենական տան մէջ, ցաւակցութիւններ ընդունելու համար: Մասնակի ընդունելութիւններէն բացի, ան միայն մէկ անգամ հնարաւորութիւն կ'ունենայ կազմակերպելու ժողովրդային հաւաք մը⁶⁶: Պոլիս վերադառնալէն ետք, ան կ'իլիկահայութեան վիճակին եւ պահանջներուն մասին թարմ եւ վստահելի զեկոյցներ կու տայ Ազգային Ընդհանուր Ժողովի նիստերուն⁶⁷:

Ատանայի Աղէտին պատճառած մարդկային եւ տնտեսական վիթխարի կորուստէն անկախ, կար անօթեւան եւ անգործ մնացած մեծ բազմութիւն մը: Ասոնց մէջ առանձին վիճակ ունէին այրի կիները, որոնք իրենք զիրենք եւ իրենց զաւակները պահելու միջոցներէ զուրկ էին: Մուրատ կ'ընդգրկուի նաեւ այս աշխատանքին մէջ: Կ'անդամակցի «Կիլիկեան Այրիախնամ Յանձնաժողով»ին⁶⁸, որուն նպատակն էր այրիացած կանանց համար հիմնել արհեստանոցներ, սորվեցնել արհեստներ, ապա նոյն արհեստանոցներու արտադրութենէն գոյացած եկամուտը յատկացնել անոնց: Մուրատի քոյրը՝ Հայկանուշը, մաս կը կազմէ Միացեալ Ազգանուէր Հայուհեաց Ընկերութեան, որուն նպատակն էր որբուհիներուն համար բանալ գիշերօթիկ դպրոցներ⁶⁹: Այս աշխատանքին մէջ Հայկանուշին սերտ գործակիցներէն կ'ըլլայ Պոլսոյ հնչակեան պատասխանատուներէն, Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամ Տոքթ. Գրիգոր Ճելալի դուստրը՝ Ակիլիինէ Ճելալը: Երկու հայրենասէր օրիորդները կ'ունենան արդիւնաւէտ գործակցութիւն: Օրինակի համար, կարճ ժամանակի ընթացքին, վերոյիշեալ նպատակին համար անոնք Էտիրնէի, Տետէ Աղաճի, Սելանիկի, Իսքէշէի, Կիւմիւլճիսայի եւ շրջակայքի հայ, թուրք, յոյն եւ պուլկար հասարակութենէն կը յաջողին հանգանակել աւելի քան 25.000 դահեկան⁷⁰: Հաւանաբար գործունէութեան այս ծիրին մէջ ալ Մուրատ եւ Ակիլիինէ կը ծանօթանան իրարու, կը համակրին ու կ'ամուսնանան: Ակիլիինէ Մուրատ իր ազգանուէր գործունէութիւնը կը շարունակէ իր ամուսնոյն նահատակութենէն ետք ալ: Անոր կարեւոր իրագործումներէն կ'ըլլայ Փարիզի արուարձաններէն Ռենսի մէջ, Դպրոցասէր Տիկնանց Վարժարանին հիմնադրութիւնը:



ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ
ՕԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԻՆ ՀԵՏ ԿԱՊՈՒԱՑ ՀԱՐՑԵՐ

Օսմանեան Խորհրդարանին հիմնական հարցերէն կ'ըլլայ քրիստոնէաներու զինուորագրութիւնն ու ընդհանրապէս Բանակը նոր սկզբունքներով վերակազմակերպելու խնդիրը: Հակառակ որ *թանգիմաթի* շրջանէն քրիստոնէաներուն արտօնուած էր Բանակային ծառայութիւնը⁷¹, մինչեւ 1908 հայերը չէին զօրակոչուեր, այլ *պետէլ* զինուորական ծառայութեան փոխարէն տուրք կը վճարէին: *Պետէլը* եւ անոր հաւաքման ձեւերը նիւթաբարոյապէս կը սպառէին հայ գիւղացին: *Պետէլ* կը գանձուէր մահացածներէն, դեռ զօրակոչման տարիքը չհասածներէն, վաղուց արտագաղթածներէն եւն.:

Հայ երեսփոխանները կ'աշխատին օր առաջ փութացնել քրիստոնէաներուն զօրակոչման օրէնքին մշակումն ու ընդունումը, զայն նկատելով օսմանեան քաղաքացիներուն հաւասարութեան սկզբունքին գործնականացումը: Իշխանութիւնները կը ձգձգէն այդ օրէնքը՝ պետական պիտձէն նման պարարտ եկամուտէ մը չգրկելու, ինչպէս նաեւ շարիաթականները վերստին չգրգռելու համար: Այս մասին ՀՅԴի կողմէ Բերայի մէջ կազմակերպուած հաւաքին որդեգրուած յայտարարութեան մէջ կ'ըսուի. «1. *Դիմել Օսմ. բարլամէնթին եւ բոլոր քաղաքական կուսակցութիւններուն, համաձայն Օսմ. սահմանադրութեան հաւասարութեան սկզբունքին Հայ ժողովուրդի զինուորագրման անյետաձգելի իրաւունքն յայտարարելով, 2. Խնդրել բարլամէնթէն որ մերժելով դահլիճին ծրագիրը՝ փութայ հաստատել քրիստոնէայ տարրերու զինուորագրման օրինագիծը, յայտնելով որ յապաղումը տոյն խնդրոյն մէջ, կրնայ խոր դժգոհութիւններ պատճառել Օսմ. Հայրենիքի ազգաբնակչութեան մէկ մասին, որ իրաւամբ կը համարէ ներկայ պահանջին կիրառումն իբր երաշխիք սահմանադրական կարգերու հիմնաւորման»⁷²:*

Հայ երեսփոխաններէն միայն Մուրատ դէմ կը կենայ հայերու զօրակոչման օրինագիծին: Այս մասին Կոմս կը յուշագրէ. «Մուրատն ալ շատ մօտ էր մեզի, թէ՛ սկզբունքային եւ թէ՛ (բացի զինուորակոչութեան օրէնքէն), ազգային, աշխատաւորական եւ ապակեղորոնացման խնդիրներու մէջ: Վերին աստիճանի

բարեկիրթ, շիտակ եւ ազնիւ մարդ էր, հին երախտաւոր յեղափոխական մը»⁷³:

Մուրատ իր բանտարկութեան եւ արքայի տարիներուն լաւապէս ծանօթացած էր օսմանեան բանակին մէջ տիրող մթնոլորտին եւ յոռի բարքերուն. ան, այս հարցին հանդէպ կը դիրքորոշուէր գործնապաշտ նկատառումներէ ելած, եւ ոչ տեսական դրոյթներէ: Ապագան ցոյց տուաւ թէ ի՛նչ ճակատագիր վիճակուեցաւ հայ զինուորագրեալներուն...: Մուրատի առաջարկն էր որ հայ երիտասարդները ծառայեն ոստիկանական ուժերուն (*ժանտարմա*) մէջ⁷⁴: Սա կ'ապահովէր որ անոնք մնան երկրէն ներս ու չմեկնին հեռաւոր սահմաններ. այս ձեւով, անոնք նաեւ կրնային դառնալ հայ բնակչութեան ապահովութիւնը երաշխաւորող ուժ մը:

Զօրակոչման օրէնքը ուժի մէջ կը մտնէ եւ կը զօրակոչուին նոյնիսկ ուսուցիչներն ու եկեղեցականները. բան մը որ գաւառներուն մէջ կը սպառնայ հայկական դպրոցներու բնականոն աշխատանքին⁷⁵: Օրինագիծին քննարկման ժամանակ առաջարկ կ'ըլլայ բանակի ծառայութենէն ազատ կացուցանել պետական բարձրագոյն վարժարաններու եւ արտասահմանի մէջ ուսման հետեւողները: Մուրատ կ'առաջարկէ «*ոչ-խլամ ցեղերու բարձրագոյն վարժարաններուն մէջ*» ուսանողներն ալ ազատել զինուորական ծառայութենէն⁷⁶:

1910 Յունիսին, Պատերազմական Նախարարութեան պիւտճէի քննարկման առիթով իր ունեցած ելոյթին մէջ, Մուրատ կը քննադատէ զինուորական կառոյցները, որոնք չեն յարգեր բնակարաններու անձեռնմխելիութեան օրէնքը եւ օրինակ կը բերէ Մուշի Ս. Կարապետ վանքի խուզարկութեան պարագան⁷⁷: Ներքին Գործերու նախարար Թալէաթ փաշա կը պատասխանէ թէ կառավարութիւնը այդ մասին արդէն քննութիւն բացած է: Մուրատ իր ելոյթին ընթացքին կ'անդրադառնայ նաեւ պահեստային զինուորը (*րատիֆ*) վերստին ծառայութեան կանչուելէ ազատ կացուցուելու համար տուրք սահմանելու հարցին: Ան համաձայնութիւն կը յայտնէ, որ այդ տուրքը 50 ոսկիէն նուազի 30ի: Երբ այս առաջարկը քուէներու փոքր տարբերութեամբ (87 դէմ, 80 թեր) չ'անցնիր, Մուրատ կ'առաջարկէ առիթ տալ որ *րատիֆ*ները այդ տուրքը վճարեն մասնավճարներով որ դարձեալ չ'ընդունուի⁷⁸:

1911 Մարտ 22ի նիստին, խորհրդարանը կը քննարկէ ասպատակները հետապնդելու համար Պատերազմական Նախարարութեան յաւելեալ պիտոճէի պահանջը: Այս առիթով Մուրատ հարց կու տայ թէ «ասպատակներ» ըսելով ի՞նչ պէտք է հասկնալ. աւագակները, թէ՞ պետական պաշտօնեաներու կամակատարութիւններուն դէմ ըմբոստացողները (սրահը կ'աղմկէ): Շեքէթ փաշա ջղագրգիռ կը պատասխանէ, որ «*թէ գողութեան եւ թէ քաղաքական նպատակներով ասպատակներուն գլուխը պիտի ճգմէ (ծափեր)*»⁷⁹: Նոյն նստաշրջանին Մուրատ կը քննադատէ Համիտիէ Զօրագունդերու գոյութիւնը, որոնք վերանուանուած էին «թէթեւ հեծելագունդեր»: Եղածը ձեւական փոփոխութիւն մըն էր, որ պարզապէս կը միտէր սուլթան Համիտի անուան սղումը: Մուրատ կը պնդէ, որ սահմանադրական երկրի մը մէջ զինուորական ծառայութիւնը, բոլոր քաղաքացիներուն համար կ'ըլլայ միատեսակ: Այս առիթով *Կռհակ* կը գրէ. «*Պատերազմական պիտոճէի քննութեան եւ վիճարանութեան առիթով խորհրդարանին մէջ միակ երեսփոխանը, որ մատը դրաւ մեր բնաշխարհի սիրտը խոցող վերքին վրայ, ընկեր Մուրատն էր*»⁸⁰:

Պէտք է ըսել որ հայերու զինուորագրութեան հարցով, հայ հասարակական հոսանքներու մեծ մասը համաձայն չէր Մուրատի տեսակետին: Աւելի ուշ սակայն, ոմանք կը խոստովանին. «*Բայց երեք տարիէ ի վեր քրիստոնէաներէ զինուոր առնելով հանդերձ, ժէօն-թուրք ռէժիմն այնպիսի սխալներ գործեց որ կարծես ուխտ ըրած ըլլար հայերն ու միւս քրիստոնէայ ժողովուրդները պատժելու՝ բանակին ծառայութեան մէջ մտնել յօժարելուն համար*»⁸¹:

ՅԱՆՈՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ընկերային արդարութեան, օրէնքին առջեւ հաւասարութեան, ժողովրդավարութեան հարցերը եւ աշխատաւորական օրէնքները՝ Մուրատի խորհրդարան մտնելու առաջին իսկ օրէն կ'ըլլան անոր գլխաւոր մտահոգութիւններէն:

Խորհրդարանի 9 Փետրուար 1909ի նիստին կը քննարկուի Պասրայի Նահանգէն երեսփոխան ընտրուած Սէլիտ Թալիպին երեսփոխանական հաստատագիր տալու հարցը: Մուրատ իր

ելոյթին մէջ կը նշէ որ, Թալիպ Լեժէֆի նահանգապետ եղած ժամանակ յանցանքներ գործած է եւ ինք «չի փափաքիր որ ամբաստանուած մէկը գայ մեր մէջ տեղ գրաւէ: ...Հ. Պոյաճեանի այս յայտարարութեանը վրայ, Սուրիացի եւ Արաբացի բոլոր երեսփոխանները, որոնց մեծագոյն մասը ուրիշ առթիւ եւ աւագ կարեւորութիւն ունեցող խնդիրներու մէջ իսկ համար ու մունջ կը նստէին, ամէնքն ալ խօսք առին եւ ամէն կարելի միջոցներով պաշտպանեցին իրենց ազգակից երեսփոխանը»⁸²:

Խորհրդարանը իր 47րդ նիստին կը քննարկէ «դատարկապորտներու» (թափառաշրջիկներ) հարցը: Այս վերնագրին տակ քննարկուող օրինագիծը կը վերաբերէր Պոլսոյ փողոցներուն մէջ շրջագայող անգործ պատանիներն ու երիտասարդները ոստիկաններու կողմէ հարցապնդումի ենթարկելու եւ զանոնք ձերբակալելու իրաւունքին: Օրինագիծը ոստիկանին կու տար երկու ամիս առանց աշխատանքի մնացած անձը կալանաւորելու իրաւունք: Այս օրէնքը, բացի գործազուրկներուն վիճակը ծանրացնելէ, լուրջ դժուարութեան առջեւ կը դնէր զաւառներէն աշխատանք որոնելու համար Պոլիս եկած հայ պանդուխտները⁸³: Սուրատ համաձայն կ'ըլլայ, որ այդ ժամանակամիջոցը վերածուի վեց ամսուան ու կ'առաջարկէ. «միայն անոնք պէտք է նկատել իբր դատարկապորտ, որ չեն կրնար իրենց ինքնութիւնը կամ անցեալը հաստատել եւ երաշխաւորութիւն տալ»⁸⁴: Նոյն օրինագիծին մէջ, անչափահասներու պարագային, ոստիկանութեան իրաւունք կը տրուէր հարցաքննութեան ենթարկել անոնց ծնողքը կամ հոգատարները. «Համբարձում էֆ. Պոյաճեան (Սուրատ) այս յօդուածն անհրաւ գտաւ, քանի որ հանրային կրթութիւնը պարտաւորիչ նկատող օրէնք մը գոյութիւն չունի, եւ ըսաւ թէ դատարկապորտ տղայոց բնական պաշտպանը կառավարութիւնն է, հետեւաբար պէտք է նախ կառավարութիւնը պատժել»⁸⁵:

Պարտադիր նախակրթութեան հարցը Սուրատ կ'արծարծէ նաեւ Կրթական Նախարարութեան պիւտճէի քննարկման նիստին. ան իր ելոյթին մէջ «դիտել տուաւ թէ զանազան ելեւմտացոյցերուն միջեւ համեմատութիւն չկայ, ոչ կառավարութիւնն էւ ոչ ալ ժողովը նկատի չեն առներ երկրին ճշմարիտ պէտքերը, մանաւանդ կրթական պէտքերը: Ուստի

առաջարկեց որ նախնական կրթութիւնը պարտաւորիչ հռչակուի եւ գիրքերը ձրի տրուին»⁸⁶:

Ժողովրդային հաւաքները արտօնելու օրինագիծի քննարկման ժամանակ, առաջարկ կ'ըլլայ այդ արտօնութիւնը տալ միայն մեծ քաղաքներու բնակիչներուն, որովհետեւ գաւառներու բնակչութիւնը տակաւին մտայնօրէն պատրաստ չէր քաղաքական հաւաքներու մասնակցելու: Մուրատ դէմ կ'արտայայտուի այս առաջարկին, գտնելով որ *«սահմանադրութիւնն այն ատեն միայն կարելի պիտի ըլլայ ամրացնել, երբ սահմանադրութեան բարիքներն ու իրաւունքները վայելեն նաեւ գիւղերու բնակիչները»⁸⁷:*

Խորհրդարանի 1909 Մայիս 27ի նիստին կը քննարկուին գործադուլներու եւ գործաւորական ընկերութիւններու (արհեստակցական միութիւններ), օրինագիծերը: Աշխատաւորութեան շահերը պաշտպանող ամէնէն արմատական ելոյթները կ'ունենան Մուրատ, Զօհրապ եւ Վարդգէս: Մուրատ իր ելոյթին մէջ կ'ըսէ. *«Յեղային պայքար մը գոյություն ունի մեր մէջ եւ ամէն միջոցներով չենք յաջողիր այս պայքարն արգիլել, ջնջել: Երբ գործաւորական սենտիքաներ կազմուին, եղբայրութեան զգացումը պիտի տարածուի եւ զարգանայ բոլոր Օսմանցիներուն մէջ եւ այն ատեն կրօնամոլութիւն, մոլեռանդութիւն եւ ջարդեր ինքնին պիտի դադրին: Պէտք չէ որ նախարարը կարծէ թէ մեր երկիրը գործաւորներու երեսէն դժուարութիւններ կ'կրէ [sic!]: Մեզմէ իւրաքանչիւրը 50,000 աղքատ բնակիչ կ'ներկայացնէ այստեղ: Կարծեմ ասոր ալ չէք տարակուսիր: (Աղմուկ եւ բողոքի ձայներ, ատենախօսին ճառն արգիլել կ'ուզեն): Բացատրութիւններ տամ: Ինչու՞ համար չենք մտաբերեր թէ ապրուստի պէտքերը սղեցին հիմա: Հացին 40 փրյ. եղած ատենը գործաւորին 5 դրշ. օրական կ'վճարէինք, հիմա հացը 60 փրյ. է եւ մենք կ'ուզենք արգիլել գործաւորներն որ սենտիքա կազմեն եւ իրենց շահերը պաշտպանեն, առանց հոգ ընելու անոնց վիճակն եւ նեղութիւնը: Համբարձում է՛ք. Պոյաճեան շարունակեց իր խօսքը, հակառակ երեսփոխանաց բողոքներուն եւ ընդմիջումներուն»⁸⁸:* Անոր ելոյթէն ետք խօսք կ'առնէ Կեսարիոյ երեսփոխան Քասրմ Խոճա եւ հարց կու տայ. *«Աս սուսիալում է, ի՞նչ է, ասոր թուրքերէնը չի կա յ: Մենք հոս թուրքերէն խօսելու եկած ենք: Խոճային այս հարցումը ծիծաղ կը գրգռէ»⁸⁹:*

Խորհրդարանի 1910 Ապրիլ 27ի նիստին, կը քննարկուի «գործաւորներու եւ մանաւանդ կին ու տղայ [անչափահաս - Ե.Ճ.] գործաւորներու պաշտպանութեան համար Հալէպի երեսփոխան Յարութիւն էֆ. Պօշկէզէնեանի կողմէ ներկայացուած օրինագծին նկատմամբ օրինագիծերու յանձնաժողովին տեղեկագիրը»: Պօշկէզէնեան պահպանողական էր եւ շատ հաւանաբար անոր առաջարկած օրինագիծը չէր համապատասխաներ Մուրատի տեսակէտերուն: Ուստի, «Համբարձում էֆ. Պօյաճեան (Մուրատ) յայտնելով թէ քանի մը երեսփոխաններու հետ ինքն ալ ծրագիր մը պիտի ներկայացնէ, առաջարկեց Յարութիւն էֆ. Պօշկէզէնեանի ծրագիրն եւ անոր տեղեկագիրն յանձնաժողովին վերադարձնել»⁹⁰:

Այլ առիթով մը, Մուրատ դարձեալ կը պաշտպանէ բանուորական համադաշնութիւններու ազատ գործունէութեան իրաւունքը եւ իր ելոյթին մէջ կ'ըսէ թէ «անցեալները Մելանիկ գացած էր եւ տեսած էր թէ թուրք, հայ, յոյն, պուլկար եւ նոյնիսկ քիւրտ գործաւորներ իրարու հետ եղբայրաբար, ձեռք ձեռքի տուած գործաւորական միութիւն մը կազմած են: Այս միութիւնը [երկրին բաղկացուցիչ] տարրերու համերաշխութեան մէկ օրինակն է: Սակայն կատարութիւնը լուծեց զայն եւ արգիլեց անոր կազմութիւնը: Քաւալայի մէջ ալ արգիլուեցաւ գործաւորական միութիւնը: Բայց գործաւորներէն պէտք չէ վախնալ, որովհետեւ անոնք քաղաքականութեամբ չեն զբաղիր, այլ իրենց վիճակով: Մէկ կողմէ օսմանեան զանազան տարրերու միութիւնը կ'ուզենք, եւ սակայն միւս կողմէ կ'արգիլենք այդ միութեան համար անոնց ունեցած ձեռնարկները. Պրուսայի մանարաններուն մէջ մարդ չի կրնար ծամ մը իսկ մնալ՝ մթնոլորտին գարշահոտութենէն, սակայն վեց տարեկան տղաք եւ աղջիկներ ստիպուած են 10էն 12 ծամ մնալ: Ինչու իրաւունք չէք տար անոնց որ բողոքեն զիրենք ճշնող գործարանատէրերուն դէմ: Այս ընթացքը լաւ չէ ներքին քաղաքականութեան համար, որուն նպատակը պէտք է ըլլայ միմիայն տարրերու գործնական համերաշխութիւնը»⁹¹:

- ²⁰¹ “Le General Murray, Commandant en Chef les Forces expeditionnaires Britanniques en Egypte, au Contre-amiral de Spitz, Commandant la Division navale de Syrie”, General Headquarters, 7th September, 1916 (Beylerian, *Les Grandes*, p. 230).
- ²⁰² “M. DeFrance, Ministre de France au Caire, à M. Aristide Briand, Président du Conseil, Ministre des Affaires étrangères”, Le Caire, le 9 septembre 1916, and Annexe “Note du Lieutenant Brémond sur les Arméniens réfugiés à Port-Said”, Le Caire, le 7 septembre 1916 (Beylerian, *Les Grandes*, pp. 230-2).
- ²⁰³ “M. DeFrance, Ministre de France au Caire, à M. Aristide Briand, Président du Conseil, Ministre des Affaires étrangères”, Le Caire, le 15 septembre 1916 (Beylerian, *Les Grandes*, pp. 239-240).
- ²⁰⁴ “Note pour la Marine Française à Port-Said”, Port-Said, le 12 septembre 1916 (Beylerian, *Les Grandes*, p.236).
- ²⁰⁵ “Le colonel de La Panouse, Attache Militaire de France a Londres, au General Roques, Ministre de la Guerre”; M. Paul Cambon, Ambassadeur de France à Londres, à M. Aristide Briand, Président du Conseil, Ministre des Affaires étrangères”, Londres, le 13 septembre 1916 (Beylerian, *Les Grandes*, pp. 236-237).
- ²⁰⁶ “Le Vice-Amiral Moreau, Commandant le 3e Escadre de la Méditerranée, à M. DeFrance, Ministre de France au Caire”, Port-Said, le 5 fevrier [1916] (Beylerian, *Les Grandes*, p. 163).
- ²⁰⁷ “Le Président du Conseil, Ministre des Affaires étrangères, à M. DeFrance, Ministre de France au Caire”, Paris, le 10 novembre 1916 (Beylerian, *Les Grandes*, p. 267).

- ²⁰⁸ “Le Ministre de la Guerre au Contre-Amiral Lacaze, Ministre de la Marine”, Paris, le 23 septembre 1916 (Beylerian, *Les Grandes*, p. 242).
- ²⁰⁹ Minutes of the Civil Council , vol. 25, Session 29, 6 November 1916, p. 120
- ²¹⁰ Minutes of the Civil Council , vol. 25, Session 31, 17 November 1916, p. 127. For the terms on which the *Légion d’Orient* was created see “Décision prise par le Ministre à la date du 15 novembre 1916” (Beylerian, *Les Grandes*, pp. 276-7).
- ²¹¹ Minutes of the Civil Council, vol. 25, Session 32, 11/24 November 1916, p. 130.
- ²¹² Ibid.; Minutes of the Civil Council , vol. 25, Session 34, 5 December 1916, p. 135.
- ²¹³ The office of the Armenian National Union was at 3 Mouillard Street, Cairo; *Arev*, 18 December, 1918, p. 3.
- ²¹⁴ Minutes of the Community Council , vol. 43, Session 63, 3/16 December 1918.
- ²¹⁵ Minutes of the Community Council , vol. 43, Session 58, 3/16 March 1917, p. 233.
- ²¹⁶ “Le Ministre de la Guerre au Contre-Admiral Lacaze, Ministre de la Marine”, Paris, le 20 novembre 1915 (Beylerian, *Les Grandes*, p. 272).
- ²¹⁷ Full text published (Beylerian, *Les Grandes*, pp. 278-283).
- ²¹⁸ “Conditions d’engagement des volontaires arméniens de la Légion d’Orient”, Decembre 1916 (Beylerian, *Les Grandes*, pp. 291-2).
- ²¹⁹ “Dispositions générales” (Beylerian, *Les Grandes*, p. 284).
- ²²⁰ Tekeyan, “Inchpes Tsenav”, *Arara*, p. 71.
- ²²¹ “Azgayin Kronik: Hay Geriner” (National chronicle: Armenian POWs), *Arev*, 8 March, 1916, p. 3.
- ²²² Minutes of Civil Council, vol. 25, Session 32, 11/24 November 1916, p. 129.
- ²²³ Minutes of Civil Council, vol. 25, Session 7, 17/30 June 1916, p. 38. The POWs from the Mesopotamia front were first taken to India and from thence were brought to Egypt; for the case of four Armenian doctors and 100 soldiers in a village in India see *Arev*, 26 November, 1915.
- ²²⁴ Minutes of Civil Council, vol. 25, Session 47, 26 February 1917, p. 191.
- ²²⁵ Minutes of Civil Council, vol. 25, Session 1, 10 May 1916, p. 5.
- ²²⁶ Minutes of Civil Council, vol. 25, Session 43, 16/24 January 1917, p. 170.
- ²²⁷ Minutes of Civil Council, vol. 25, Session 61, 9/22 June 1917, pp. 254-5.
- ²²⁸ “Vranakaghaki Taretsuys 1915-1919”, *Alyakner*, pp. 255-6.
- ²²⁹ Tigran Poyadjian, *Haykakan Legeone* (The Armenian Legion), Watertown, Baykar, 1965, p. 23.
- ²³⁰ “Le Commandant Romieu, Chargé de mission en Égypte et à Chypre, au Général Roques, Ministre de la Guerre” 19 novembre 1916 (Beylerian, *Les Grandes*, p. 270).
- ²³¹ “M. Paul Cambon, Ambassadeur de France à Londres, à M. Aristide Briand, Président du Conseil, Ministre des Affaires étrangères”, Londres le 13 septembre 1916 (Beylerian, *Les Grandes*, p. 237).
- ²³² “Le Commandant Romieu, Chargé de mission en Égypte et à Chypre, au Général Roques, Ministre de la Guerre”, Port-Said, le 4 decembre 1916 (Beylerian, *Les Grandes*, p. 302); Poyadjian, p. 28. The members of this delegation from Egypt were: Sabah Gulyan (S.D.Hnchak), Artavazd Hanemian (Dashnak) and Mihran Damadian (H. S. Ramgavar).
- ²³³ “Vranakaghaki Taretsuys 1915-1919”, *Alyakner*, p. 256.
- ²³⁴ Tekeyan, “Inchpes Tsenav”, *Arara*, p. 72.
- ²³⁵ Poyadjian, p.26.
- ²³⁶ Ibid., pp. 91-4.
- ²³⁷ Government Press and Survey of Egypt, *A Brief Record of the Advance of the Egyptian Expeditionary Force: July 1917-October, 1918*, compiled from official sources and

-
- published by the Palestine News, Cairo, 1919, p. 45, plates 40-43; for details of the movement of the Armenian legionnaires consult Poyadjian, pp. 98-137.
- ²³⁸ Poyadjian, p. 96. Quoting from an article in the newspaper *Haratch* (Paris, 15 August 1964) by Vahan Portugalian, a volunteer lawyer and a sub-lieutenant in the *Legion d'Orient*.
- ²³⁹ *Ibid.*, p. 97.
- ²⁴⁰ *Ibid.*, pp. 97-98.
- ²⁴¹ *Ibid.*, pp. 98,100.
- ²⁴² *Ibid.*, pp. 103-109.
- ²⁴³ Matthew Hughes, *Allenby and British Strategy in the Middle East 1917-1919*, Frank Cass, London, 1999, p. 66.
- ²⁴⁴ Poyadjian, pp. 114-85, pp. 120-123.
- ²⁴⁵ “Haykakan Legeoni Heros-Nahatagneru Taghume” (The Funeral of the martyr-heroes of the Armenian Legion), *Arara*, p. 15.
- ²⁴⁶ The list of the names of the dead is published in *Arara*, p. 13. Some sources mention the number to be 24, as 3 of the wounded were fatally injured and died later.
- ²⁴⁷ The list of the names of the wounded is published in *Arara*, pp. 76-77. It includes 68 names (2 had died), and mentions the place of their origin and the locality they joined from.
- ²⁴⁸ Poyadjian, p.146.
- ²⁴⁹ “Haykakan Legeoni Heros-Nahatagneru Taghume”, pp. 15-18.
- ²⁵⁰ Atom Tagvorian, “Ararayi Viravornere Por Sa’idi Medj” (The wounded of Arara in Port Sa’id), *Arara*, p. 107.
- ²⁵¹ “Arevelian Lekeone” (The *Legion d'Orient*), *Arev* 25 October, 1918, pp. 1-2.
- ²⁵² Tagvorian, p. 109.
- ²⁵³ *Ibid.*, pp. 156-8.
- ²⁵⁴ “Huyj Karevor” (Extremely important), *Arev*, 18 December, 1918, p. 3.
- ²⁵⁵ For a detailed account of the movements of Allenby’s army in 1918 consult *The Egyptian Expeditionary Force*, plates 32-55.
- ²⁵⁶ Minutes of the Civil Council, vol. 25, Session 61, 9/22 June 1917, p. 255.
- ²⁵⁷ Richard Natkiel, “The Mesopotamia Campaign”, *Atlas of 20th Century History*, London, Hamlyn-Bison, 1982, Map B, p. 61.
- ²⁵⁸ Minutes of the Civil Council, vol. 25, Session 83, 10/23 November 1917, pp. 355-6.
- ²⁵⁹ *A Brief Record of the Advance of the Egyptian Expeditionary Force: July 1917-October, 1918*, facing plate 26.
- ²⁶⁰ Minutes of the Civil Council, vol. 25, Session 92, 1 February 1918, p. 396
- ²⁶¹ Minutes of the Civil Council, vol. 25, Session 88, 15/28 December 1917, pp. 376-7.
- ²⁶² Minutes of the Civil Council, vol. 25, Session 89, 4 January 1918, p. 382.
- ²⁶³ Minutes of the Civil Council, vol. 26, Session 95, 8 March 1918, p. 13.
- ²⁶⁴ Minutes of the Civil Council, vol. 26, Session 110, 13 September, 1918.
- ²⁶⁵ “Vranakaghaki Taretsuytse 1915-1919”, *Alyakner*, p. 257.
- ²⁶⁶ Minutes of the Civil Council, vol. 26, Session 102, 18/31 March 1918, p. 58.
- ²⁶⁷ Minutes of the Civil Council, vol. 26, Session 104, 15/ 28 June 1918, p. 63.
- ²⁶⁸ *Ibid.*, pp. 63-5.
- ²⁶⁹ Minutes of the Civil Council, vol. 26, Session 117, 8 November 1918, p. 124.
- ²⁷⁰ Minutes of the Civil Council, vol. 26, Session 119, 22 November 1918, p. 133.
- ²⁷¹ *Ibid.*, p. 133.
- ²⁷² “Vranakaghaki Taretsuytse 1915-1919”, *Alyakner*, p. 256.
- ²⁷³ “The World Wars” *The New Encyclopedia Britannica*, vol. 29, p. 972.

-
- ²⁷⁴ Minutes of the Civil Council, vol. 25, Session 85, 7 December 1917, p. 363.
- ²⁷⁵ Minutes of the Civil Council, vol. 25, Session 88, 15/28 December 1917, pp. 379-380.
- ²⁷⁶ “Vranakaghaki Taretsuytse 1915-1919”, *Alyakner*, p.257.
- ²⁷⁷ The table is formed on the basis of the data provided in “Vranakaghaki Taretsuytse 1915-1919”, pp. 257-260, and Gutulian, “Husher yev pusher”, p. 198, both in *Alyakner*.
- ²⁷⁸ Gartashian, pp. 263, 288.
- ²⁷⁹ Grigor Gutulian, “Husher Yev Pusher”, pp. 199-202. In this article, Gutulian, himself a refugee in the camp, gives detailed statistics on the refugees in the camp in June 1919. Another source mentions 10,000 as the total number of refugees in the camp in 1918 (“Vkayutiun Me” (A Testimony), Gartashian, pp. 184-5.
- ²⁸⁰ Gartashian, p. 263.
- ²⁸¹ Boris Adjemian, “In Service to Humanity”, *AGBU News Magazine*, April 2015, p. 16.
- ²⁸² M. Salbi, “Hay Baregortzakan Enthanur Miutian Por Sa’idi Vorbanotse” (The AGBU Orphanage in Port Sa’id), *Alyakner*, pp. 203-213.
- ²⁸³ “Vranakaghaki Taretsuytse 1915-1919”, *Alyakner*, p. 258.
- ²⁸⁴ Minutes of the Civil Council , vol. 26, Session 3, 9/22 November 1918, p. 135.
- ²⁸⁵ The table is formed on the basis of the data provided in “Vranakaghaki Taretsuytse 1915-1919”, *Alyakne*, pp. 266-269.
- ²⁸⁶ “Vranakaghaki Taretsuytse 1915-1919”, *Alyakner*, pp. 268-270.

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ,
ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ (1914-1919)
(ԱՄՓՈՓՈՒՄ)

Արմինէ Քրէտեան
armin_kredian@yahoo.com

Ուսումնասիրութիւնը կը քննէ Եգիպտոսի Ազգային Գաւառական Ժողովին դերը հայոց տագնապին մէջ, Ա. Համաշխարհային Պատերազմի ընթացքին Եգիպտոսի ունեցած ռազմաքաղաքական դիրքին ենթախորքին վրայ:

Առաջին Համաշխարհային Պատերազմի առաջացուցած քաղաքական կարեւորագոյն փոփոխութիւններէն մին հանդիսացաւ Օսմանեան Կայսրութեան անկումը: Օսմանեան իշխանութիւններու որոշումը՝ ներքաշուելու Ա. Համաշխարհային Պատերազմ, նշանակեց ամբողջ Միջին Արեւելքի ընդգրկումը առաւելաբար եւրոպական պատերազմի մը մէջ: Միւս կողմէն, Սուէզի Ջրանցքին ռազմագիտական կարեւորութեան պատճառով, Մեծն Բրիտանիա պատերազմի մէջ քաշեց Եգիպտոսը, որ Օսմանեան Կայսրութեան անուանական գերիշխանութեան տակ էր:

Ա. Համաշխարհային Պատերազմի վաղորդայնին, Եգիպտոսի մէջ գոյութիւն ունէր փոքր, բայց կազմակերպուած հայկական գաղութ մը: Պատերազմի խառնակ տարիներուն, Գահիրէի Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդարանը, վճռական դեր ստանձնեց շրջանին մէջ, մինչ հայ ժողովուրդը կը դիմագրաւէր ազգային աննախադէպ Աղէտը: Եգիպտոսի ռազմագիտական դիրքը Օսմանեան Պաղեստինի եւ Սուրիոյ ռազմաճակատին սահմանակցութիւնը, շեշտաւորեց Գահիրէի Առաջնորդարանին աշխարհագրաքաղաքական կարեւորութիւնը, իբրեւ լաւապէս հաստատութենականացած վարչական կեդրոն մը: Ան մօտ էր Օսմանեան տարածքին, ուր հայոց ոչնչացումի գործընթացը սկիզբ առած էր եւ հայութեան բնօրրանին ճակատագիրը կը վճռուէր: Աւելին, 1914ի սկիզբէն եւեթ, բրիտանական զինուորական իշխանութիւնները Միջին Արեւելքի մէջ թշնամիէն գրաւուած հողատարածքներու վրայ բնակող բոլոր հայերուն ազգային վարչական կեդրոնը նկատեցին Գահիրէի Հայոց Առաջնորդարանը:

Ուստի, 1915էն սկսեալ, պատերազմին ամբողջ տեւողութեան եւ մինչեւ 1919, Եգիպտոսի Ազգային Գաւառական Ժողովը ծանրաբեռնուեցաւ շրջանի զանազան վայրերէն Գահիրէի Առաջնորդարանին վրայ տեղացող բազմաբազում դիմումներով: Օրինակ, Կովկասէն կը դիմէին օգնելու համար պատերազմի գօտիի գաղթականներուն եւ աջակցելու՝ ռուսական բանակի հայ կամաւորներուն: Կոստանդնուպոլիսէն, փրկուած աքտրեալներ անմիջական յատկացումներ կը խնդրէին՝ անխուսափելի մահէ ազատելու համար: Միւս կողմէն, Փորթ Սայիտի մէջ մուսալեռցի 4200 հայ գաղթականներ հոգածութեան կարիք ունէին: 1916ին սկիզբ առաւ Արեւելեան Լեզեոնին յառաջացման համար կամաւորներ զինուորագրելու հարցը:

ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՒ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱԻԱՌ
ՀԱՍՏԱՏՈՒԱԾ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՔԱՆԱԿԸ

ԱՐՄԷՆ Ս. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ
armenani@mail.ru

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայոց Ցեղասպանության պատմությունը հայ պատմագիտության թերևս ամենաուսումնասիրուած շրջաններից մեկն է: Թե՛ հայրենիքում եւ թե՛ Սփիւռքում հրատարակուել են հարիւրաւոր յուշագրութիւններ եւ մենագրութիւններ: Հրապարակի վրայ է փաստավաւերագրական բնոյթի հսկայական տպագիր նիւթ (Եւրոպայի, Ամերիկայի եւ Մերձաւոր Արեւելքի երկրների արտաքին գերատեսչութիւնների արխիւներից հանուած փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածուներ): Այդուհանդերձ որոշ խիստ կարեւոր հարցերի - ինչպիսիք են օրինակ Արեւելեան Հայաստանի տարածքում հաստատուած հարիւր հազարաւոր փախստական-գաղթականների թուի, էթնօկրօնական կազմի, ըստ բնակչութեան նոր վայրերի տեղաբաշխման, տեղի բնակչութեան վիճակագրական պատկերի, ընկերային-տնտեսական դրութեան վրայ թողած ազդեցութեան - ուսումնասիրութեանը անցած հարիւրամեակի ընթացքում հայ պատմագրութիւնն ինչ-ինչ պատճառներով յաւուր պատշաճի չի անդրադարձել: Չի փորձել նոյնիսկ տարանջատել գաղթականութեանն ըստ խմբատեսակների՝ արեւմտահայ, արեւելահայ եւ պարսկահայ, կամ՝ փախստականներ ու գաղթականներ: Մինչդեռ 1914-1915ին մենք գործ ունենք միանգամից երեք խմբատեսակների հետ, 1916-1917ին՝ միայն պարսկահայերի եւ արեւմտահայերի հետ, իսկ 1918ին՝ գերազանցապէս արեւելահայերի հետ:

Արխիւային նորայայտ վաւերագրերի եւ ժամանակի մամուլի՝ *Գաւառի Չայն*, *Մշակ*, *Աշխատանք*, *Հորիզոն*, *Համբաւաբեր* եւն. հաղորդումների համադրմամբ մենք կը փորձենք այստեղ, ընթերցողի դատին յանձնել վիճակագրական բնոյթի հնարաւորինս սպառիչ տեղեկութիւններ Պարսկաստանից, ռուսական սահմանամերձ Կարսի, Սարիղամիշի, Կաղզուանի, Օլթիի,

Արդահանի տիրոջներից եւ Թուրքիայից 1914-1918ին Ալեքսանդրապոլի Գաւառ անցած փախստական-գաղթականների թուաքանակի մասին: Այս հարցերի ուսումնասիրութիւնը յատկապէս բարդանում է այն պարզ պատճառով, որ գաղթականութիւնն իր էութեամբ չափազանց հոսուն, անընդհատ տեղաշարժի մեջ գտնուող դժուար հաշուելի զանգուած էր:

Ա. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱԻԱՌ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՔԱՆԱԿԻ ՇՈՒՐՁ

Առաջին Աշխարհամարտի Կովկասեան ճակատում ռազմական գործողութիւնները սկսուեցին 1914 Նոյեմբերի 2ից: Յարձակման անցած ռուսական զօրքերը մէկը միւսի ետեւից գրաւեցին Խոյը, Թաւրիզը, Չեխինը, Ղարաքիլիսան, Խորասանը, Բայազետը, Դիաղինն ու Ալաշկերտը: Սակայն կարճատեւ այս յաջողութեանը յաջորդած ռուսական զօրքերի 1914 նոյեմբերեան եւ դեկտեմբերեան նահանջները մեծ խուճապ առաջացրին Ատրպատականի եւ Արեւմտեան Հայաստանի նուաճուած շրջանների քրիստոնեայ ազգաբնակչութեան շրջանում, ստիպելով տասնեակ հազարաւոր մարդկանց թողնել իրենց բնակավայրերը եւ շարժուել դէպի Արեւելեան Հայաստան:

Գաղթականութեան շարժը դէպի ռուսական տիրոջներ սկսուեց 1914 Նոյեմբերի կէսերին: Առաջինը գաղթի ճամփան բռնեցին պարսկահայերը, ապա սահմանամերձ շրջանների՝ Կարսի, Մարիդամիշի, Օլթիի եւ Արդահանի ռուսահպատակ քրիստոնեաները, իսկ այնուհետեւ՝ արեւմտահայերը:

Պատերազմի արհաւիրքներից մագապուրծ բազմահազար գաղթականներին ընդունելու, տեղաւորելու, սնունդով ու հագուստով ապահովելու նպատակով Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ի կարգադրութեամբ Անդրկովկասի հայաշատ նահանգներում, գաւառներում ու մեծ բնակավայրերում ստեղծուեցին «Եղբայրական Օգնութեան» կոմիտէներ:

1914 Հոկտեմբերի 31ին Ալեքսանդրապոլի թեմակալ առաջնորդ Արտակ Վարդապետի գլխաւորութեամբ «Եղբայրական Օգնութեան» կոմիտէ ստեղծուեց նաեւ Ալեքսանդրապոլում¹: Նոյեմբերի 2ից իր աշխատանքները սկսեց նաեւ Ազգային Կենտրոնական Յանձնաժողովը՝ վիրաւորներին, կամաւորներին, ինքնապաշտպանութեան, գաղթականներին օգնող եւ վիճակագրական

տեղեկություններ հաւաքող բաժիններով²: Հաշուած օրերի ընթացքում յանձնաժողովը միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 100-250 հոգանոց 18 բնակարան (հանրակացարան) կահաւորեց՝ փախստական-գաղթականների առաջին խմբերն ընդունելու համար: Նորեկները տեղաբաշխուելու էին գիւղից՝ գիւղ, քաղաքից՝ քաղաք տարբերակով եւ առայժմ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում ու Արեւելեան Շիրակի գիւղերում (գաղթականութեան գանգուածային ներհոսքը դէպի Փամբակի տեղամաս սկսուեց միայն 1915 Յուլիսին)³:

Յետագայում, գաղթականների թուի աճին զուգահեռ, երեւան եկան նաեւ հասարակական այլ կազմակերպություններ՝ «Պատերազմից Տուժածների Օգնութեան Կովկասեան Կենտրոնական Կոմիտէ», «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերություն», «Մոսկուայի Հայկական Կոմիտէ», «Պետրոգրադի Հայկական Կոմիտէ», «Հայուհեաց Ընկերություն», «Երիտասարդական Միություն» եւն.), որոնք եւս մեծ ներդրում ունեցան հիւանդանոցներ, դպրոցներ ու որբանոցներ բացելու գործում:

Առաջին 45 ընտանիք (281 մարդ) պարսկահայերը Ալեքսանդրապոլի Գաւառում յայտնուեցին 1914 Նոյեմբերի կէսերին⁴: Պարսկահայերի հետ միաժամանակ Ալեքսանդրապոլ քաղաքում եւ Արեւելեան Շիրակի գիւղերում հաստատուեցին նաեւ առաջին 100 ընտանիք (587 մարդ) կարսեցիները⁵: Յաջորդ երկու շաբաթների ընթացքում Կաղզուանից եւ Կարսի Խոջգեղի ու Կալկոս գիւղերից Ալեքսանդրապոլի Գաւառ տեղափոխուեցին եւս 88 ընտանիք (792 մարդ) հայեր⁶: Կարսեցիների հետ միաժամանակ Ալեքսանդրապոլի շրջակայ գիւղերում հաստատուեցին նաեւ առաջին սարիղամիշցիները՝ 101 ընտանիք (603 մարդ)⁷:

Ռազմական գործողությունների թատերաբեմից փախստականների հոսքն աւելի մեծ չափսեր ընդունեց ռուսական զօրքերի դէկտեմբերեան նահանջից յետոյ: Այսպէս, Արդահան Քաղաքի եւ համանուն գաւառի քրիստոնէայ ազգաբնակչութիւնը՝ թուով 314 ընտանիք (2021 մարդ) տեղաւորուեց Ալեքսանդրապոլ, Կարս եւ Ախալքալաք քաղաքներում: Նոյնկերպ վարուեցին նաեւ օլթեցի 499 ընտանիքներ (3221 մարդ): Օրինակ Թամրութ աւանի ողջ քրիստոնէայ ազգաբնակչութիւնը հաստատուեց Ալեքսանդրապոլի Գաւառի Շորագեալի տեղամասում: Հիմնականում Ալեքսանդրապոլ, մասամբ նաեւ Կարս եւ Ախալքալաք քաղաքներ-

րում հաստատուեցին Արդուինից փախած 121 (649 մարդ)⁸ ու Բաթումից փախած 62 ընտանիքներ (404 մարդ)⁹:

1915 Յունուարի առաջին օրերին Երեւանից Ալեքսանդրապոլ հասան եւս 400 պարսկահայեր¹⁰ եւ նաեւ առաջին 360 ընտանիք արեւմտահայ գաղթականները (մօտ 2000 մարդ)¹¹: Եւս 800 կիսամերկ ու ոտաբոբիկ փախստականներ Արեւելեան Շիրակի գիւղերում հաստատուեցին Ծննդեան Տօներից անմիջապէս յետոյ՝ Օլթիից եւ Կարսի Թախտա գիւղից¹²: Այս նոր ժամանումներից յետոյ ըստ Ալեքսանդրապոլի Ազգային Կենտրոնական Յանձնաժողովի Գաղթականական Բաժնի հաշուումների, միայն քաղաքում եւ շրջակայ միքսնի գիւղերում 1915 Յունուարի 8ի դրութեամբ փախստական-գաղթականների թիւը հասաւ 3250ի (հայեր՝ 2310, յոյներ՝ 900, ասորիներ՝ 20 եւ ռուսներ՝ 20)¹³:

Արխիւային վաւերագրերի եւ ժամանակի մամուլի հաղորդումների համաձայն՝ հայերի հետ Պարսկաստանից, ռուսական սահմանամերձ տիրոջներից եւ Թուրքիայից Երեւանի Նահանգ, ապա նաեւ Անդրկովկասի այլ շրջաններ անցան նաեւ մեծ թուով յոյներ ու ասորիներ: Ընդ որում, եթէ առաջինները հիմնականում Կարսի մարզից էին, ապա ասորիները գաղթում էին Պարսկաստանից եւ մասամբ նաեւ Թուրքիայից:

Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուած փախստական-գաղթականների մէջ հայերից յետոյ թուով երկրորդը յոյներն էին: Ընդ որում սրանք, ի տարբերութիւն հայերի, ռուսական հրամանատարութեան կողմից նախապէս տեղեկացուում էին զօրքերի տեղաշարժերի մասին, այնպէս որ գաղթում էին իրենց իսկ սայլերով եւ ունեցուածքով: Կովկասեան Ռազմաճակատում ռազմական գործողութիւնների առաջին երկու ամիսների ընթացքում միայն Արդահանի Գաւառից Ալեքսանդրապոլի Գաւառ էր տեղափոխուել 1030 յոյն, որից 186ը հաստատուել էր Ալեքսանդրապոլում, իսկ 48ը՝ Մեծ Ղարաքիլիսայում (Ալեքսանդրապոլ էր տեղափոխուել նաեւ 6 ռուս, 6 լէհ եւ 5 վրացի, եւս 17 ռուս հաստատուել էր Մեծ Ղարաքիլիսայում): Նոյն ժամանակահատուածում Սարիղամիշի Գաւառից Շորագեալի շրջան էր տեղափոխուել 500 ընտանիք (մօտ 2500 մարդ) յոյն, որից 200ը հաստատուել էր Բայանդուր գիւղում¹⁴: Մինչեւ 1914 Դեկտեմբերի վերջ եւս 4000 յոյներ (մօտ 650 ընտանիք) Արեւելեան

Շիրակ էին տեղափոխուել Օլթիի շրջանի եօթ յունական գիւղերից¹⁵: Մրանցից 234ը հաստատուել էր Ալեքսանդրապոլում¹⁶:

Արդիւնքում՝ միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 1915 Յունուարի 3ի դրութեամբ տեղաւորուել էր 600 յոյն փախստական¹⁷:

Ասորիներն անհամեմատ աւելի քիչ էին: Մինչեւ 1914 Դեկտեմբեր Ալեքսանդրապոլի Գաւառ հաստատուել էր 13 ընտանիք (64 մարդ)՝ մի մասը Սալմաստի Գաւառի Խոսրովա, Փաթաուուր եւ Վլա գիւղերից էր, իսկ միւս մասը՝ Վանի Նահանգի Բաշկալէի Գաւառի Արջ եւ Սաբա գիւղերից¹⁸: Յունուար 1915ի ընթացքում Արդահանի Գաւառից Արեւելեան Շիրակի եւ Զաւախքի գիւղեր տեղափոխուեց եւս ասորի 60 ընտանիք (360 մարդ)¹⁹:

1914 Նոյեմբերի-1915 Յունուարի վերջ ժամանակահատուածում Թուրքիայից, Պարսկաստանից եւ սահմանամերձ շրջաններից գաղթածների թուաքանակի մասին սպառնչ տեղեկութիւններ հաւաքելու համար Երեւանի Վիճակագրական Յանձնախումբը «Եղբայրական Օգնութեան» տեղի Հայկական կոմիտէի յանձնարարութեամբ Յունուարի 30ին Երեւանի Նահանգի եօթ գաւառներում, Կարսի Մարզի չորս շրջաններում եւ Թիֆլիսի Նահանգի Ախալքալաքի Գաւառում անցկացրեց գաղթականութեան մէկօրեայ ցուցակագրում: Սա միակ հնարաւոր միջոցն էր՝ անընդհատ շարժման մէջ գտնուող գաղթականների բազմահազարանոց զանգուածի մասին փոքրիշատէ ստոյգ վիճակագրական տուեալներ հաւաքելու:

Ալեքսանդրապոլի Գաւառում գաղթականութեան ցուցակագրումն անցկացրած «Եղբայրական Օգնութեան» տեղի կոմիտէն²⁰ արձանագրեց հետեւեալ տուեալները. ոչ-լրիւ երեք ամիսների ընթացքում Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գաւառի 63 գիւղերում հաստատուել էր 1027 ընտանիք (6909 մարդ), որից 688 ընտանիքը (4468 մարդ) հայ, 310ը (2270 մարդ)՝ յոյն, 18ը (109 մարդ)՝ ասորի, իսկ մնացած 11ը (62 մարդ)՝ ռուս, վրացի, լէհ, հրեայ ու օս: Նոյն ցուցակագրման համաձայն միայն Ալեքսանդրապոլ քաղաքում փախստական-գաղթականների թիւը կազմում էր 589 ընտանիք (3652 մարդ), որից 387 ընտանիքը (2262 մարդ) հայ, 177ը (1243 մարդ)՝ յոյն, իսկ 14ը (85 մարդ)՝ ասորի: Գաւառի գիւղերում նորեկներն անհամեմատ աւելի քիչ էին. ընդա-

մենը 438 ընտանիք (3257 մարդ), որից 301 ընտանիքը (2206 մարդ) հայ էին, 133ը (1027 մարդ)՝ յոյն, իսկ 4ը (24 մարդ)՝ ասորի²¹:

Ցուցակագրման արդյունքներն ամփոփող ձեռագիր մատեաններից երկուսն այսօր պահուում են Հայաստանի Ազգային Արխիւում²²: Կազմուելուց միայն մէկ դար անց ընթերցողի դատին ներկայացուած այս փաստաթղթերը, իրենց թերութիւններով հանդերձ, թուային տուեալներից զատ անգնահատելի տեղեկութիւններ են հաղորդում աշխարհամարտի առաջին ամիսների ընթացքում Արեւելեան Հայաստանում եւ մասնաւորապէս Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուածների բնակութեան նախկին եւ նոր վայրերի մասին, եւս մէկ անգամ ապացուցելով, որ նշուած ժամանակահատուածում Երեւանի Նահանգի տարածքում ապաստանածների մեծ մասը ռազմական գործողութիւնների թատերաբեմ դարձած սահմանամերձ շրջաններից փախած ռուսահպատակներ էին, եւ ոչ թէ պարսկահայեր կամ արեւմտահայեր: Օրինակ 1914 Նոյեմբերից մինչեւ 1915 Յունուարի վերջն ընկած ժամանակահատուածում Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուած 1027 ընտանիքներից (6909 մարդ) ձեռագրերը յստակ տեղեկութիւններ են հաղորդում 878ի (5784 մարդու) մասին: Սրանցից 820 ընտանիքը (5426 մարդ) Կարսի Մարզից էին, 34ը (195 մարդ)՝ Բաթումի Մարզից, 6ը (37 մարդ)՝ Ռուսաստանի ներքին նահանգներից, եւ միայն 18ը (126 մարդ)՝ Թուրքիայից եւ Պարսկաստանից: Նոյն սկզբունքով, Ալեքսանդրապոլ քաղաքում հաստատուած 589 ընտանիքներից ձեռագրերը յստակ տեղեկութիւններ են հաղորդում 559ի մասին (անյայտ են 30 ընտանիքների՝ 169 մարդու, նախկին բնակութեան վայրերը). սրանցից 524 ընտանիքը (3272 մարդ) Կարսի Մարզից էին, 20ը (119 մարդ)՝ Բաթումի Մարզից, 6ը (37 մարդ)՝ Ռուսաստանի ներքին նահանգներից եւ միայն 9ը (55 մարդ) Թուրքիայից եւ Պարսկաստանից (տե՛ս աղիւսակ 1): Գաւառի գիւղական բնակավայրերում դրութիւնն անհամեմատ աւելի բարդ է: Յայտնի են միայն 52 գիւղերում հաստատուածների բնակութեան նախկին վայրերը (319 ընտանիք կամ 2301 մարդ): Սրանցից 296 ընտանիքը (2154 մարդ) Կարսի Մարզից էին, 14ը (76 մարդ)՝ Բաթումի Մարզից, իսկ 9ը (71 մարդ)՝ Թուրքիայից եւ Պարսկաստանից (տե՛ս աղիւսակ 2): Գաւառի եւս 11 գիւղերում հաստատուած 119 ընտանիքների (956 մարդ) որտեղից լինելու մասին տեղեկութիւններ չունենք:

Աղյուսակ 1.- 1915 Յունուարի 30ի դրությամբ Թուրքիայից, Պարսկաստանից եւ սահմանամերձ շրջաններից Ալեքսանդրապոլ քաղաք գաղթածների ցուցակ

Նհնգ.,	Գւռ.	նախկին բնակ.	ընտ.	ար.	իգ.	ընդ.	Բցկյ.	ազգ.	Դւննք.
Կարսի Մարզ	Կարս	Կարս ք.	870	245	226	471	60	հայ	Առաք.
		Սարիղամիշ ք.	83	228	247	475	89	-/-	-/-/-
		Ղարաղայա	4	9	12	21	3	-/-	-/-/-
		Զարիշատ	1	4	4	8	---	-/-	-/-/-
	Օլթի	Թամուրթ	7	19	19	38	1	հայ	Առաք.
		Խուբթ-Էրիուկ	2	10	8	18	---	-/-	-/-/-
		Ագրակ	2	7	7	14	---	-/-	-/-/-
		Զարդանէս	2	4	4	8	---	-/-	-/-/-
		Ղարաուրդան	1	6	4	10	---	-/-	-/-/-
		Փանակաձոր	1	5	5	10	---	-/-	-/-/-
		Զեօհրապ	1	3	4	7	---	-/-	-/-/-
		Դէիկ	1	5	10	15	1	-/-	-/-/-
		Բանջուրատ	1	2	2	4	---	-/-	-/-/-
		Մեթինէս	7	28	37	65	1	յոյն	Ուղդ.
		Բարդուս	1	1	1	2	1	-/-	-/-/-
		Նարիման	23	87	80	167	15	-/-	-/-/-
	Արդահան	Արդահան ք.	58	158	164	322	26	հայ	Առաք.
		-/-/-	2	1	9	10	---	հայ	Կթլկ.
		-/-/-	3	14	4	18	2	ռուս	Ուղդ.
		-/-/-	1	2	1	3	---	օս	Ուղդ.
		-/-/-	1	3	3	6	---	հրեայ	Մուվս.
		-/-/-	24	81	80	161	12	յոյն	Ուղդ.
		Միրդինէկ	3	8	11	19	1	հայ	Առաք.
		-/-/-	1	4	4	8	1	ռուս	Ուղդ.
		-/-/-	1	3	3	6	---	յոյն	Ուղդ.
		Բիգթախաթուն	1	2	2	4	---	հայ	Առաք.
		Ֆախրիգ	5	16	14	30	---	յոյն	Ուղդ.
		Խանախ Ներք.	14	54	53	107	10	-/-	-/-/-
		Սինդիսգոմ	37	115	104	219	6	-/-	-/-/-
		Գիվաբերդ	7	24	25	49	---	-/-	-/-/-
		Թորասխէս	2	13	9	22	1	-/-	-/-/-
		Բերեթիկ	55	202	212	414	1	-/-	-/-/-
		Բիգթախաթուն	2	2	3	5	---	ասորի	Կթլկ.
Պարկաւ	4	12	14	26	3	ասորի	Կթլկ.		
Կաղզուան	Կաղզուան ք.	11	30	35	65	7	հայ	Առաք.	
Բաթումի Մարզ	Արդուին	Արտանուօ	6	13	17	30	7	հայ	Առաք.
		Տանձուտ	4	11	13	24	---	-/-	-/-/-
		Ենիթարաթ	3	12	11	23	2	-/-	-/-/-
		Սաթիլ	1	2	1	3	---	-/-	-/-/-
	Սաբաթ	4	9	11	20	---	-/-	-/-/-	
	Արդա-նուշ	Նորաշէն	1	4	5	9	---	հայ	Առաք.
Շաուշէթ		1	4	6	10	---	-/-	-/-/-	
Ռուսաստանի ներքին նահանգներ			4	12	15	27	4	հայ	Առաք.
			2	4	6	10	---	ռուս	Ուղդ.
Վան	Բաշկալէ	Արջի	8	27	27	54	8	ասորի	Նէստ.
Պարսկաստան	Թարիգ ք.		1	1	---	---	---	հայ	Առաք.
ԸՆԴԱՄԵՆԸ			559	1736	1747	3483	295		

Աղիւսակ 2.- 1915 Յունուարի 30ի դրութեամբ Թուրքիայից, Պարսկաստանից եւ սահմանամերձ շրջաններից Ալէք. Գաւառի գիւղեր գաղթածների ցուցակ

Նինգ., Գու.	Նախկին բնակ.	րնտ.	ար.	իգ.	րնդ.	Բցկյ.	ազգ.	Իննք.	
ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՄԱ									
Կարս	Արդահան	Արդահան ք.	1	4	1	5	----	յոյն	Ուղղ.
Բաթում	Արդուին	Ենգիքէօյ	1	3	2	5	----	--/--	--/-
Պարսկաստան		Թարիզ ք.	6	24	28	52	1	հայ	Առաք.
ՓՈՔԸ ՂԱՐԱՔԻԼԻՄԱ									
Կարս	Արդահան	Սասաղի	4	17	14	31	2	հայ	Կթլկ.
	Օլթի	Օլթի ք.	2	3	6	9	----	հայ	Առաք.
	Կարս	Սարիղամիշ ք.	2	12	4	16	1	--/--	--/-
ԲՈՂԱԶ ՔԵՄԱՆ									
Կարս	Կարս	Կարս ք.	1	2	6	8	1	հայ	Առաք.
	--/--	Սարիղամիշ ք.	2	5	7	12	2	--/--	--/-
	Օլթի	Օլթի ք.	1	3	3	6	----	--/--	--/-
	--/--	Զարդանէս	1	3	2	5	----	--/--	--/-
ՄԵԾ ՍԱՐԻԱՐ									
Կարս	Կարս	Կարս ք.	1	2	1	3	1	հայ	Առաք.
	Օլթի	Օլթի ք.	3	11	13	24	3	--/--	--/-
ՔԵԱՅԹԱՌԼԻ									
Կարս	Կարս	Կարս ք.	3	6	5	11	----	հայ	Կթլկ.
	Արդահան	Սասաղի	4	13	8	21	----	--/--	--/-
ՂԶՂՔ ԲԻԼԻՄԱ									
Կարս	Կարս	Կարս ք.	2	7	5	12	1	հայ	Առաք.
ՉԻՐՊԻԼԻ									
Կարս	Կարս	Կարս ք.	4	10	14	24	2	հայ	Առաք.
	Արդահան	Արդահան ք.	3	17	6	23	----	հայ	Առաք.
ՂԱԼԹԱԽՉԻ									
Կարս	Կարս	Կարս ք.	1	5	5	10	----	հայ	Առաք.
ՄԵԾ ԲԵՔԱՆԴ									
Կարս	Կարս	Կարս ք.	1	5	6	11	----	հայ	Առաք.
ՓՈՔԸ ԲԵՔԱՆԴ									
Կարս	Օլթի	Ճուճուրիս	1	2	5	7	----	հայ	Առաք.
ԳԻԻՂ ԵՈՒՈՒԻՇ									
Կարս	Կարս	Կարս քաղաք	7	14	23	37	1	հայ	Առաք.
ԻԼԽԻԱԲԻ									
Կարս	Կարս	Սարիղամիշ ք.	2	6	7	13	----	հայ	Առաք.
ՂՓՉԱՂ									
Կարս	Կարս	Սարիղամիշ ք.	3	10	8	18	6	հայ	Առաք.
ՂԱՍՄԱԼԻ									
Կարս	Կարս	Սարիղամիշ ք.	1	6	3	9	----	հայ	Առաք.
ԱՐԹԻԿ									
Կարս	Կարս	Սարիղամիշ ք.	3	8	6	14	----	հայ	Առաք.
	Օլթի	Թամրութ	1	9	9	18	----	--/--	--/-
ՂՈՆԱԽՂՈՍԱՆ									
Կարս	Կարս	Սարիղամիշ ք.	2	8	7	15	----	հայ	Առաք.
ԱՂԲՈՒԼԱՂ									
Կարս	Կարս	Սարիղամիշ ք.	2	7	8	15	1	հայ	Առաք.

ՄՈԼԼԱ ԳԷՕԿՉԱ									
Կարս	Կարս	Մարիդամիշ ք.	1	4	4	8	----	հայ	Առաք.
	Օլթի	Օլթի ք.	1	4	2	6	2	--/--	--/--
		Թամրուշ	1	6	3	9	----	--/--	--/--
Պրսկ ստն.	Սալմաստ	Խոսրովա	1	3	----	3	1	ասորի	Կթյկ.
	Ուրմիա	Մաւանա	2	9	7	16	----	--/--	--/--
ԴԱՀԱՐԼԻ									
Կարս	Արդահան	Արդահան ք.	3	9	11	20	----	հայ	Առաք.
		Ուչքիլիսա	10	39	32	71	----	յոյն	Ուղղ.
		Կոնկ	12	53	42	95	----	--/--	--/--
		Ուարգենիս	9	34	34	68	----	--/--	--/--
Բաթում	Արդանուշ	Շաուշէթ	1	2	2	4	----	հայ	Առաք.
ԹԱԼԻԲՕՂԼԻ									
Կարս	Արդահան	Արդահան ք.	1	7	1	8	----	հայ	Առաք.
		Սասադի	1	7	5	12	----	հայ	Կթյկ.
	Օլթի	Օլոբ	1	4	2	6	----	հայ	Առաք.
ՄԵԾ ԴՈՒԶՔԵՆԴ									
Կարս	Արդահան	Արդահան ք.	7	26	19	45	3	հայ	Առաք.
		Օլթի քաղաք	1	2	1	3	----	--/--	--/--
	Օլթի	Թամրուշ	6	26	33	59	----	--/--	--/--
		Զարդանէս	3	8	14	22	1	--/--	--/--
ԴԻՐԱՔԼԱՐ									
Կարս	Արդահան	Արդահան ք.	1	2	1	3	----	հայ	Առաք.
	Օլթի	Օլթի քաղաք	3	5	7	12	----	--/--	--/--
ՂՈՒԼԻԶԱՆ									
Կարս	Արդահան	Արդահան ք.	2	3	3	6	----	հայ	Առաք.
ՆԱԼԲԱՆԴ									
Կարս	Արդահան	Արդահան ք.	4	17	19	36	1	հայ	Առաք.
ՂՈԼՂԱԹ									
Կարս	Արդահան	Բիզթախաթուն	4	13	17	30	----	հայ	Առաք.
ՂԱՐԱՔԻԼԻՍԱ ԶՐԴ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	2	3	6	9	---	հայ	Առաք.
	Արդահան	Սասադի	1	2	5	7	1	հայ	Կաթ.
ՆՈՐԱՇԵՆ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	2	4	3	7	----	հայ	Առաք.
		Օլոբ	3	11	9	20	----	--/--	--/--
ՔԵՍՓԱՆԱԿ ՓՈՔՐ									
Կարս	Կարս	Կալէքոյ	3	8	11	19	1	հայ	Առաք.
Բաթում	Արդուին	Ենիթաբատ	2	8	5	13	----	--/--	--/--

ՔԵԱՓԱՆԱԿ ՄԵԾ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	5	17	12	29	----	հայ	Առաք.
Բաթում	Արղուին	Սաբաթ	3	9	9	18	----	--/--	--/--
ՀՈՌՈՍ									
Կարս	Արղահան	Արղահան Ք.	2	9	13	22	1	հայ	Առաք.
		Սասաղի	3	9	11	20	----	հայ	Կաթ.
		Բեբեթիկ	9	27	30	57	3	յոյն	Ուղղ.
ԲԱՅԱՆԴՈՒՐ									
Կարս	Արղահան	Ուռուտ	1	2	1	3	----	հայ	Առաք
		Արղահան Ք.	1	1	2	3	----	յոյն	Ուղղ.
		Ֆախրիկ	1	1	1	2	----	--/--	--/-
		Թուրքաշեն	41	177	165	342	----	--/--	--/-
		Միլղինեկ	1	2	3	5	----	--/--	--/-
		Դեմուրկապի	1	5	3	8	----	--/--	--/-
		Ուչքիյիսա	28	122	107	229	----	--/--	--/-
		Թախտա	1	1	3	4	----	--/--	--/-
		Կոնկ	1	9	7	16	----	--/--	--/-
	Ուարգենիս	9	34	34	68	----	--/--	--/-	
Օլթի	Նարման	5	17	20	37	----	--/--	--/-	
ՃԼՈՈՎ ԽԱՆԼԻ									
Կարս	Արղահան	Սասաղի	3	17	19	36	----	հայ	Կաթ.
	Օլթի	Օլոր	1	1	1	2	----	հայ	Առաք.
ԻՄԻՐԽԱՆԼԻ									
Կարս	Արղահան	Սասաղի	4	15	16	31	----	հայ	Կաթ.
Բաթում	Արղուին	Ենիթաբատ	1	5	4	9	----	հայ	Առաք .
ՂՈՒԹՆԻ ՂՇԼԱՂ									
Կարս	Արղահան	Սասաղի	2	10	11	21	----	հայ	Կաթ.
ՍՈՆԳՈՒՌԻ									
Կարս	Արղահան	Սասաղի	2	8	6	14	----	հայ	Կաթ.
ԹԱՓԱԴՈՒԼԱԿ									
Կարս	Արղահան	Սասաղի	2	15	11	26	----	հայ	Կաթ.
	Օլթի	Թամրութ	1	5	11	16	----	հայ	Առաք..
ՂԱՅՂՈՒԼԻ – ՂԱԶԱՆՉԻ									
Կարս	Արղահան	Սասաղի	1	5	3	8	----	հայ	Կաթ.
	Օլթի	Օլթի քաղաք	1	2	4	6	----	--/--	--/-
ՏԻՏՈՅ ԽԱՐԱԲԱ									
Կարս	Արղահան	Սասաղի	1	4	3	7	----	հայ	Կաթ.
ՔՈՌԱՂԲԻՐ									
Կարս	Արղահան	Սասաղի	1	4	3	7	----	հայ	Կաթ.
ԵԳԱՆԼԱՐ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	1	2	1	3	----	հայ	Առաք.
ԱՐՈՒՅ ՎԱԼԻ ՄԵԾ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	1	3	4	7	----	հայ	Առաք.
		Ճուճուրիս	1	7	3	10	----	--/--	--/-

ԱՐԸԽ ՎԱԼԻ ՓՈՔԸ									
Բաթում	Արդանուշ	Նորաշեն	2	3	5	8	----	հայ	Առաք.
ՋԱՋՈՒՌ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	2	5	10	15	----	հայ	Առաք.
		Զարդանես	2	5	5	10	----	--/--	-/-
Բաթում	Արդուին	Արտանուշ	2	2	3	5	----	--/--	-/-
		Սաբաթ	1	2	2	4	----	--/--	-/-
ՀԱՋԻ ՆԱՋԱՐ – ՂՈՒԼԻ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	2	4	6	10	----	հայ	Առաք.
ՀԱՄԱՄԼՈՒ									
Կարս	Արդահան	Միրդինեկ	1	3	3	6	----	հայ	Առաք.
			1	2	1	3	----	լոյն	Ուղղ.
ՂԱԶԱՆՉԻ									
Կարս	Օլթի	Օլթի քաղաք	2	9	7	16	----	հայ	Առաք.
ՉՐԱԽԼԻ									
Կարս	Օլթի	Թամրութ	2	7	9	16	----	հայ	Առաք.
		Ճուճուրիս	1	4	6	10	----	--/--	-/-
ՏԱՌԻՇԱՆՂՇԼԱՂ									
Կարս	Արդահան	Ագրակ	1	3	1	4	----	հայ	Առաք.
		Դեմուրկապի	2	8	13	21	----	լոյն	Ուղղ.
		Կոնկ	3	5	8	13	----	--/--	-/-
		Բեբեթիկ	1	1	2	3	----	--/--	-/-
ԹՈՄԱՐՏԱՇ									
Կարս	Օլթի	Փանակ	1	6	2	8	1	հայ	Առաք.
ՉՈՏՈՒՐ									
Կարս	Արդահան	Միրդինեկ	1	2	1	3	----	լոյն	Ուղղ.
Բաթում	Արդուին	Սաբաթ	1	4	6	10	1	հայ	Առաք.
ՂԱՓԼԸԻ									
Կարս	Օլթի	Նարինան	2	6	7	13	----	լոյն	Ուղղ.
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԷՕԶԱԼԴԱՐԱ									
Կարս	Արդահան	Բիգրախաթուն	1	1	5	6	----	սառիի	Կաթ.
ԸՆԴԱՄԷՆԸ			319	1168	1133	2301	38		

1915ի գարնանը փախստական-գաղթականների թիւն Ալեքսանդրապոլի Գաւառում հասաւ 8000ի (1142 ընտանիք), որից 6000ը (857 ընտանիք) հայ, 1400ը (200 ընտանիք)՝ լոյն, 570ը (81 ընտանիք)՝ սառիի, իսկ 30ը (4 ընտանիք)՝ ռուսներ: Համաձայն Մշակի թղթակից Գեորգ Ք. Մկրտումեանի հաշուումների 1915 Ապրիլի 24ի դրութեամբ նրանցից 3300ը (550 ընտանիք) տեղաւորուել էր Ալեքսանդրապոլի 15 հանրակացարաններում եւ 200 մասնաւոր տներում, իսկ 4700ը (783 ընտանիք)՝ Արեւելեան Շիրակի 80 գիւղերում²³:

Գաղթականութեան երրորդ մեծ շարժը սկսուեց 1915 Յուլիսին: Սարիղամիշի տակ թուրքերին ծանր պարտութեան մատնած

ռուսական զորքերը մինչև 1915 Մայիս գրաւեցին Թարիզը, Ուրմիան, ապա նաև Ալաշկերտը, Բաշկալէն, Մանազկերտը, Շատախը, Արճէշը եւ Վանը: Ռուսական զորքերի այս յաղթարշաւը հնարաւորութիւն տուեց տասնեակ հազարաւոր գաղթականների՝ վերադառնալ հայրենի բնակավայրերը: Սակայն 1915 Յուլիսի 13ին ռուսները միքանի օրում անակնկալ նահանջեցին՝ թուրքերին թողնելով գրեթէ բոլոր գրաւուած շրջանները:

Ռուսական զորքերի երրորդ «խորհրդաւոր» նահանջը մեծ խուճապ առաջացրեց Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթների քրիստոնէայ բնակչութեան շրջանում՝ առիթ տալով անկազմակերպ ու քառսային նոր գաղթի: Հաշուած օրերի ընթացքում Արեւելեան Հայաստան փախածների թիւն անցաւ 200,000ը:

Միայն Յուլիսի վերջին տասնօրեակում Վանից, Մանազկերտից, Մուշից եւ Բուլանըղի Համգաշէխ, Կողակ ու Փկաշէն գիւղերից Ալեքսանդրապոլի Գաւառ գաղթեց շուրջ 5653 մարդ: Սրանցից 1688ը, ըստ Բախշի Իշխանեանի, հաստատուեց Ալեքսանդրապոլ քաղաքում եւ Արեւելեան Շիրակի գիւղերում²⁴, իսկ մնացած 3965ը՝ «Եղբայրական Օգնութեան» Մեծ Ղարափլիսայի կոմիտէի հաղորդած տուեալների համաձայն՝ Փամբակի տեղամասի 23 գիւղերում²⁵: Արեւմտահայութեան ներհոսքը դէպի Ալեքսանդրապոլի Գաւառ իր բարձրակէտին հասաւ Օգոստոսի վերջին: Համաձայն Ալեքսանդր Խատիսեանի Համառուսաստանեան Քաղաքների Միութեան (Քաղաքների Միութիւն) Կովկասեան Բաժանմունք ներկայացրած զեկուցագրի՝ գաղթականների թիւը գաւառում հասաւ 31,000ի (7000ը՝ գաւառակենտրոնում, իսկ 24,000ը՝ գիւղերում)²⁶:

Գաղթականների աճին զուգահեռ գաւառում մեծապէս աւելացան համաճարակային հիւանդութիւնները՝ դիզինտերիան, բժաւոր տիֆը եւ խոլերան, որ այստեղ էին յայտնուել Երեւանից ու Էջմիածնից եկած արեւմտահայերի միջոցով: Ըստ Ատրպետի Օգոստոսի 27ից մինչև Նոյեմբերի 1ը Քաղաքների Միութեան Ալեքսանդրապոլի հիւանդանոցն այս ախշտանիշերով ընդունել էր 518 հիւանդ: Յաջորդ երկու ամիսների ընթացքում սրանցից 121ը մահացել էր, այդ թւում 90ը՝ Սեպտեմբերին, 31ը՝ Հոկտեմբերին²⁷: Հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի Գաւառում, շնորհիւ հասարարական կազմակերպութիւնների եւ յատկապէս

Քաղաքների Միութեան Կոմիտեի կողմից բացուած հիւանդանոցների, մահացութեան մակարդակը ընդհանուրի համեմատ խիստ ցածր էր: Համաձայն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ Վարդապետի 1916 Յունիսի 16ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ին ներկայացրած տեղեկագրի՝ ցրտից, սովից ու համաճարակային հիւանդութիւններից Ալեքսանդրապոլի Գաւառում 1915ի ընթացքում մահացել էր ընդամենը 1164 գաղթական (այդ թւում՝ 331ը Ալեքսանդրապոլում, իսկ 833ը՝ գաւառի գիւղերում)²⁸: Համեմատութեան համար նշենք, որ Էջմիածնում հաստատուած 32,000 գաղթականներից ըստ Իշխանեանի հաշուումների միայն 1915 Օգոստոսի վերջին տասնօրեակում սովի եւ համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ, օրական միջին թւով՝ 236 մարդ²⁹:

Բացասական իրադարձութիւններից զատ, 1915ի ամառը նշանաւորուեց նաեւ գաղթականութեան շրջանում դպրոցական գործի կազմակերպմամբ: 8-16 տարեկան երեխաների համար Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գաւառի գիւղերում, հասարակական կազմակերպութիւնների ջանքերով բացուեցին գաղթականական առաջին դպրոցները: Դրանցից առաջինը Ալեքսանդրապոլում բացուեց Եղբայրական Օգնութեան Կոմիտեի միջոցներով՝ Յովսէփ Միրզոյեանի կողմից 1915 Յունիսի 22ին: Իբրեւ ամառային դպրոց այն իր 280 սաներով (200 հայ, 80 յոյն) մինչեւ Սեպտեմբերի 1ը գործեց Արդութեան եւ Սելյանեան դպրոցների շէնքում³⁰: Մէկուկէսամսեայ դադարից յետոյ՝ Հոկտեմբերի 15ին դպրոցը վերաբացուեց՝ ունենալով 11 բաժանմունք (9 հայկական եւ 2 յունական) եւ 419 սան: Աշակերտներից 316ը հայեր էին, 54ը՝ յոյներ, իսկ մէկը՝ ռուս: Սրանցից 276ը՝ ռուսահպատակ փախստականներ էին, 138ը՝ արեւմտահայ, 2ը՝ պարսկահայ գաղթականներ: Ռուսահպատակներից 269ը՝ Կարսից, Օլթիից, Արդահանից եւ Սարիղամիշից էին, 6ը՝ Արդուինից եւ Տանձուտից, մէկը՝ Մինսկի Նահանգից: 138 արեւմտահայերից 15ը Մանազկերտից էին, 11ը՝ Էրզրումից, 20ը՝ Բիթլիսից, 16ը՝ Վանից, 43ը՝ Բուլանըղից, 14ը՝ Մուշից: Վերջապէս, դպրոցի ռուսահպատակ սաներից 12ը երկկողմանի ծնողազուրկ էին, 20ը՝ միակողմանի, իսկ արեւմտահայերից երկկողմանի ծնողազուրկ էին 29ը, միակողմանի՝ 48ը³¹: Մինչեւ տարեվերջ գաղթական 296 երեխաների համար դպրոցներ բացուեցին նաեւ

գաւառի Մեծ Ղարաքիլիսա, Համամլի, Ղշլաղ, Բոզիգիւղ եւ Բերանտ գիւղերում³²:

1915 Օգոստոսին ռուսական զորամասերը վերագրաւեցին յուլիսեան նահանջով կորցրած տարածքները, ինչը հնարաւորութիւն տուեց տասնեակ հազարաւոր արեւմտահայերի կրկին վերադառնալու հայրենի օջախներ: Այս նոր տեղաշարժը, ըստ Արտակ Վարդապետի, պիտի հնարաւորութիւն տար ձմռան նախաշէմին զգալիօրէն բեռնաթափել գաւառը գաղթականներից: Եղբայրական Օգնութեան տեղի կոմիտէի անցկացրած նոր ցուցակագրման համաձայն՝ Ալեքսանդրապոլում եւ գաւառի 139 գիւղերում 1915 Հոկտեմբերի 1ի դրութեամբ գաղթականների թիւը նուազել էր մինչեւ 22,815 մարդ³³ (տե՛ս՝ աղիւսակ 3):

Աղիւսակ 3

1915 Հոկտեմբերի 1ի դրութեամբ Ալեքսանդրապոլ Քաղաքում եւ համանուն գաւառում հաստատուած գաղթականների ցուցակ

N	բնակավայր	արակ.	իգ.	երեխ.	Ընդ.	աշխատունակ	
						ար.	%
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ ՔԱՂԱՔ							
1.	Եղբայրական Օգնութեան 12 հանրակացարաններ	435	968	1201	2604	280	10.7
2.	Քաղաքի մասնաւոր տներ	701	1582	1957	4240	464	10.9
ԸՆԴԱՍԵՆԸ		1136	2550	3158	6844	744	10.8
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌԻ ԳԻՒԴԵՐ							
1.	Ղափլի	68	63	116	247	57	23
2.	Քեալալի	23	30	32	85	20	23.5
3.	Ղողաչ	17	12	22	51	9	17.6
4.	Զիրպիլի	26	30	65	121	14	11.5
5.	Դահարլի	51	57	69	177	24	13.5
6.	Աղին	41	53	79	173	35	20.2
7.	Տաւշանդշլաղ	58	66	110	234	45	19.2
8.	Ղազարապատ	36	45	78	159	23	14.4
9.	Բաբուռլի	14	11	38	62	9	14.5
10.	Սուանվերդի	62	83	126	271	50	18.4
11.	Բուդդաշէն	23	27	49	99	22	22.2
12.	Ալեքսանդրովկա	15	22	22	59	12	20.3
13.	Ղաշավանք	46	42	60	148	30	20.2
14.	Ենիքէօյ	22	37	44	103	19	18.4
15.	Ղրլիջ-Եաթաղ	38	50	70	158	28	17.7
16.	Բոզդողան	49	49	91	189	35	18.5
17.	Ղրրիս	32	34	56	122	25	20.4
18.	Զարինջա	30	51	74	155	23	14.8
19.	Բազարխանա	57	62	92	211	47	22.2

20.	Տաշղալա	57	59	100	216	54	25
21.	Մուսուխի	45	47	70	162	38	23.4
22.	Փիլթիքեան	21	21	29	71	16	22.5
23.	Աղիեաման	41	46	61	148	32	21.6
24.	Սոգուրի	80	102	124	306	46	15
25.	Շիրվանջուղ	30	47	73	150	23	15.3
26.	Բողազքեան	29	35	56	120	26	21.6
27.	Մոլլա Գեօկչա	56	94	100	250	36	14.4
28.	Արմուրի	26	28	44	98	15	15.3
29.	Սոնգուրի	36	48	66	150	17	11.3
30.	Ճլովխանի	15	28	49	92	12	13
31.	Ղփչաղ	29	31	65	125	24	19.2
32.	Խաչաքիլիսա	4	10	16	30	4	13.3
33.	Բաշգիւղ	26	34	62	122	19	15.5
34.	Մեծ Արրխուալի	41	44	61	146	35	23.9
35.	Փոքր Արրխուալի	22	27	37	86	18	20.9
36.	Նորաշեն	32	35	51	118	23	19.4
37.	Գեօզաղարա	32	37	50	119	28	23.5
38.	Արթիկ	72	88	156	316	60	18.9
39.	Փոքր Բեքանդ	39	45	70	154	27	17.5
40.	Մեջիթի	33	40	73	146	23	15.7
41.	Թումարտաշ	24	27	80	131	20	15.2
42.	Մահմուդջուղ	50	64	108	222	30	13.5
43.	Թափաղոլլակ	21	40	74	135	13	9.6
44.	Ղազանչի	24	31	66	121	18	14.8
45.	Քեաֆթառլի	18	15	53	86	21	24.4
46.	Ղասամալի	10	22	35	67	6	8.9
47.	Ղուկիջան	24	46	31	101	12	11.8
48.	Եզանկար	40	70	44	154	26	16.8
49.	Ղուղաթ	14	17	16	47	5	10.6
50.	Իլխիաբի	34	44	46	124	18	14.5
51.	Թալիբօղլի	15	18	37	70	13	18.5
52.	Իմիրխանլի	20	22	38	80	13	16.2
53.	Հոռոմ	28	51	97	176	14	7.9
54.	Սարիբաշ	11	11	35	57	8	14
55.	Ղութնիղշլաղ	1	2	1	4	---	---
56.	Դանագիրմազ	47	48	53	148	33	22.2
57.	Ղոնդաղսազ	2	2	5	9	2	22.2
58.	Միրաք	1	2	3	6	1	16.6
59.	Մելիքբենդ	18	21	33	72	11	15.2
60.	Զառջառիս	8	9	17	34	3	8.8
61.	Զանգիթափա	8	11	14	33	4	12.1
62.	Հաջիխալիլ	33	34	42	109	17	15.5
63.	Ղրրխաղազիրման	31	36	44	111	23	20.7
64.	Ախղուլի	24	24	44	92	9	9.7
65.	Քեշիշքենդ	5	9	23	37	5	13.5
66.	Մունջուկլի	16	18	28	62	10	16.1
67.	Փամպ. Հայկական	9	21	28	58	6	10.3
68.	Դիրաքլար	23	33	50	106	12	11.3

69.	Քեափանակ Փոքր	8	11	27	46	5	10.8
70.	Քեափանակ Մեծ	39	41	73	153	25	16.3
71.	Զրախլի	52	63	90	205	35	17
72.	Խանուալի	6	9	13	28	5	17.8
73.	Դուզքենդ	88	120	90	298	38	12.7
74.	Հաջինազար-Ղուլի	59	60	81	200	44	22
75.	Ջաջուռ	98	95	91	284	39	13.7
76.	Աղքիլիսա	16	22	13	51	9	17.6
77.	Սարիար Փոքր	40	52	31	123	22	17.8
78.	Արրխուալի Յրդ	54	72	50	176	24	13.6
79.	Դարբանդ	25	25	24	74	7	9.4
80.	Թովատլի	53	55	57	165	21	12.7
81.	Ղոնախղոռան	71	80	57	208	25	12
82.	Սարիար Փոքր	23	26	25	74	9	12.1
83.	Ալիխան	15	16	10	41	5	12.1
84.	Սանդի	2	4	1	7	2	28.5
85.	Ղարաքիլիսա Նոր	5	4	6	15	----	----
86.	Բաշգիւղ Չրդ	4	18	17	49	3	6.1
87.	Ղանիջա Վերին	29	40	57	126	17	13.4
88.	Ղանիջա Ներքին	15	16	9	40	11	27.5
89.	Կապս	18	13	25	56	5	8.9
90.	Ջեյաբկեյուռ	13	18	25	56	13	23.2
91.	Այաքիլիսա	7	9	14	30	3	10
92.	Բանդեւան Նոր	7	9	11	27	5	18.5
93.	Բանդեւան Հին	10	16	22	48	4	8.3
94.	Ղարաքիլիսա Էլլի	7	17	17	41	2	4.8
95.	Թաքնալի	12	21	27	60	11	18.3
96.	Գիւրջի-Եոլ	15	20	27	62	13	20.9
97.	Փալուբլի	16	21	66	103	14	13.5
98.	Քեթի Փոքր	3	6	16	25	3	12
99.	Քեթի Մեծ	19	24	45	88	16	18.1
100.	Օրթաքիլիսա	14	16	24	54	9	16.6
101.	Չոռլի	2	3	4	9	1	11.1
102.	Ճգիլար	10	10	10	30	6	20
103.	Գիլլիբուլաղ	10	16	13	39	7	17.9
104.	Սալուռ	5	6	9	20	3	15
105.	Բոզեռխուշ	11	20	18	49	7	14.2
106.	Դուզ Խարաբա ³⁴	21	25	31	77	15	19.4
107.	Չիֆթալի	19	26	30	75	18	24
108.	Ղզրլքիլիսա Նոր	6	13	10	29	3	10.3
109.	Ղզրլոչ	26	29	35	90	14	15.5
110.	Ղուրթնիբուլաղ	17	15	18	50	11	22
111.	Շիշթափա	11	8	11	30	4	13.3
112.	Ղազանչի	13	17	29	59	6	10.1
113.	Դարաբեոյ	2	2	10	14	2	14.2
114.	Քոռաղբիւր	4	13	25	42	2	4.7
115.	Ղարաքիլիսա Մեծ	134	184	261	579	66	11.3
116.	Եաղուբլի	31	31	38	100	17	17
117.	Ղշլաղ	18	55	45	118	10	8.4

118.	Սարնուսախլի	12	19	22	53	6	11.3
119.	Հաջիդարա	18	21	21	60	14	23.3
120.	Դարբազ	22	34	33	89	5	5.6
121.	Բզովդալ	11	18	24	53	4	7.5
122.	Բոզիքենդ	38	47	96	181	12	6.6
123.	Համամի	91	131	171	393	30	7.6
124.	Չոտուր	16	20	18	54	6	11.1
125.	Վարդնով	48	59	59	166	17	10.2
126.	Ղաչաղան	23	21	23	67	8	11.9
127.	Չիկդամալ	7	7	16	30	3	10
128.	Սպիտակ	34	37	28	99	14	14.1
129.	Նայբանդ	29	42	53	124	12	9.6
130.	Թափանլի	33	33	56	122	13	10.6
131.	Աղբուվաղ	50	41	69	160	21	13.1
132.	Ղայթախչի	66	83	82	231	30	12.9
133.	Ատիբեկ	57	77	84	218	24	11
134.	Գիւղ եռխուշ	17	17	39	73	7	9.5
135.	Ղարաբոյս	15	18	28	61	7	11.4
136.	Ղարալ	47	53	73	173	19	10.9
137.	Բեքանդ Մեծ	119	134	177	430	30	6.9
138.	Գոզարան	50	44	68	162	21	12.9
139.	Գիլլիջա	40	49	68	157	17	10.8
ԸՆԴԱՄԷՆԸ		4059	5015	6897	15,971	2412	15.1
ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ		5195	7565	10,055	22,815	3156	13.8

Սակայն, գաղթականական բեռնաթափումը կրեց միայն ժամանակաւոր բնոյթ: Երեւանում եւ Էջմիածնում տեղաւորուած արեւմտահայութեան շրջանում դեռեւս Յուլիսի վերջերից ծայր առած համաճարակային հիւանդութիւնների եւ դրանցով պայմանաւորուած մահացութեան ահռելի չափերի դէմ պայքարելու համար տեղի Եղբայրական Օգնութեան Կոմիտէի առաջարկութեամբ որոշուեց գաղթականներին տեղափոխել նահանգի միւս գաւառներ: Արդիւնքում 1915 Հոկտեմբերի 20ին Ալեքսանդրապոլ քաղաքում եւ գաւառի 139 գիւղերում գաղթականների թիւը կրկին հասաւ 26,000ի³⁵:

Յաջորդ երկու տասնօրեակների ընթացքում Երեւանից Ալեքսանդրապոլի Գաւառի Մահմուդջուղ, Տաշղալա, Մասլուխլի, Ղըրիս, Փոքր Ղարաքիլիսա, Արթիկ եւ Քեաֆթառլի գիւղեր տեղափոխուեցին նախկինում Բուլանըղից, Մանազկերտից, Ալաշկերտից եւ Բասենից գաղթած եւս 1261 արեւմտահայեր³⁶: Իսկ արդէն Դեկտեմբերին, ըստ իշխան Ալեքսանդր Միխայիլովիչ Արդութեան-Երկայնաբազուկի Քաղաքների Միութեան Կովկասեան Բաժանմունք ներկայացրած զեկուցագրի՝

գաղթականներով բնակեցուցին Ալեքսանդրապոլի Գաւառի բոլոր 186 գիւղերը: Միայն Փամբակի 26 գիւղերում տեղաւորուել էր 4000 արեւմտահայ: Սրանցից 400ին Եղբայրական Օգնութեան Մեծ Ղարաքիլիսայի Կոմիտէն կարողացաւ ապահովել աշխատանքով. 100ն աշխատում էր տեղի պղնձի հանքերում, իսկ 300ը՝ երկաթգծի շինարարութեան վրայ: Մնացած 3600ն իր գոյութիւնն էր պահպանում նպաստների շնորհիւ³⁷:

Ցաւօք, գաղթականութեանը վերաբերող վիճակագրական նիւթի առատութիւնը յատուկ է միայն 1915ին: 1916ից սկսած Ալեքսանդրապոլի Գաւառում հաստատուածների վերաբերեալ վիճակագրական տեղեկութիւններն արխիւային վաւերագրերում եւ մամուլի էջերում տարեցտարի դառնում են կցկտուր, իսկ յաճախ՝ նաեւ իրարամերժ, ինչն էլ աւելի է բարդացնում նորեկների թուաքանակի եւ յատկապէս տեղաշարժի ուսումնասիրութիւնը: Օրինակ, 1916 Փետրուարի 14ին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կողմից անցկացուեց գաղթականութեան նոր ցուցակագրում, ըստ որի, Ալեքսանդրապոլի Գաւառում կար 32,000 գաղթական³⁸: Չորս ամիս անց՝ Յունիսի 20ին, ըստ տեղի թեմակալ առաջնորդ Արտակ Վարդապետի կաթողիկոսին ներկայացրած հաշուետուութեան՝ սրանցից մնացել էր 19,799ը (4739 տղամարդ, 6122 կին, 8938 երեխայ)³⁹: Թէ ո՞րն էր գաղթականների թուի նուազման պատճառը, եւ ի՞նչ ուղղութեամբ նրանք հեռացան՝ այսօր յայտնի չէ:

ՈՐԲԱՆՈՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աղբիւրներում համեմատաբար լաւ են լուսաբանուած 1916ից գաւառում մեծ թափ ստացած որբախնամ աշխատանքները: Առաջին երեք որբանոցները բացուել էին դեռեւս 1915 Նոյեմբերին: Դրանք են՝ Ալեքսանդրապոլի «Եղբայրական Օգնութեան Երիտասարդական Միութեան» որբանոցը, որ 1916 Փետրուարից վերանուանուեց «Միացեալ Ընկերութեան N 1 Որբանոց»⁴⁰, Մեծ Ղարաքիլիսայի «Պետրոգրադի Հայկական Կոմիտէի Որբանոց»ը եւ տիկին Իւետա Թայիրեանի որբանոցը⁴¹: 1916 Ապրիլի 1ին Ալեքսանդրապոլում բացուեց Պատերազմից Տուժուածներին Օգնող Հայկական Բարեգործական Ընկերութեան Կենտրոնական Կոմիտէի առաջին որբանոցը⁴²: Նոյն կոմիտէի երկրորդ եւ երրորդ որբանոցները բացուեցին 1916 Յուլիսին եւ 1917 Փետրուարին⁴³:

Ալեքսանդրապոլում եւս երկու որբանոցներ՝ բասէնցի եւ սասունցի որբերի համար բացուեցին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Ալեքսանդրապոլի ճիւղի կողմից՝ 1916 Յունիսի 7ին⁴⁴ եւ 27ին⁴⁵: 1916ին քաղաքում գործում էր նաեւ «Քոստո-Քաչալ» երեխաների որբանոցը⁴⁶, իսկ 1917 Յունուարից՝ Լոնդոնի Կարմիր Խաչի Կոմիտէի «Ռոբինզոն» որբանոցը՝ սասունցիների համար⁴⁷:

Ռուսական զօրքերի 1916 յուլիսեան - թուով չորրորդ - նահանջը պատճառ դարձաւ գաղթականութեան նոր ալիքի:

Դէպի Ալեքսանդրապոլի Գաւառ շարժուող արեւմտահայերի առաջին խմբերն այս անգամ հաստատուեցին Փամբակում: Եթէ 1916 Յունիսի դրութեամբ շրջանի 26 գիւղերում կար 3884 գաղթական (941 տղամարդ, 1133 կին եւ 1810 երեխայ)⁴⁸, ապա Օգոստոսին այդ թիւը հասաւ 4475ի (1060 տղամարդ, 1334 կին, 2081 երեխայ)⁴⁹: Սրանցից 284ին Եղբայրական Օգնութեան տեղի Կոմիտէն ապահովեց աշխատանքով, իսկ 4191ին՝ նպաստով⁵⁰: Օգոստոսին Ալեքսանդրապոլ եւ շրջակայ գիւղեր տեղափոխուեցին նաեւ 8000 կիսամերկ ու սոված սասունցիներ⁵¹: Սասունցիների ներգաղթը շարունակուեց մինչեւ տարեվերջ: Վերջին 1370 հոգին Արեւելեան Շիրակի գիւղերում հաստատուեցին Դեկտեմբերին⁵²:

Թէ 1917ի ընթացքում եւ 1918ի առաջին երեք ամիսներին արեւմտահայութեան ներգաղթը դէպի Ալեքսանդրապոլի Գաւառ ի՛նչ ծաւալներ է ընդունել՝ ո՛չ արխիւային վաւերագրերում, եւ ո՛չ էլ ժամանակի մամուլի էջերում մեզ գտնել չյաջողուեց: Ալեքսանդրապոլի գաղթականական գործերով զբաղուող հաստատութիւնների կողմից ընտրուած պատգամաւորներ Սմբատ Տէր-Գրիգորեանի եւ Սմբատ Բորոյեանի՝ Գեորգ Ե. Կաթողիկոսին ներկայացրած հաշուետուութիւնից յայտնի է միայն, որ 1917 Սեպտեմբերի 20ի դրութեամբ գաւառում - բացի որբանոցների սաներից - կար 25,754 արեւմտահայ գաղթական (14,333 արական եւ 11,421 իգական սեռերից), այդ թւում 1-4 տարեկան 1358 երեխայ, 5-14 տարեկան 2873 անչափահաս եւ 963 ծեր: Նոյն հաշուետուութեան համաձայն՝ 1915-1917ի ընթացքում գաւառն ընդունել, նիւթական օժանդակութիւն յատկացրել ու ճանապարհել էր մօտ 85-95,000 գաղթականի⁵³:

ՆՈՐ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ

1918ի գարնանը տարածաշրջանում ռազմա-քաղաքական իրավիճակը կտրուկ փոխուեց ի վնաս հայ ժողովրդի: Բրեստ-Լիտովսկի Պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը դուրս եկաւ պատերազմից: Անդրկովկասեան Սէյմը՝ չճանաչելով հաշտութեան պայմանները, փորձեց Թուրքիայի հետ Տրապիզոնում առանձին բանակցութիւններ վարել, սակայն յաջողութեան չհասաւ, իսկ Ապրիլի 1ին սկսուած թուրք-անդրկովկասեան պատերազմը հաշուած օրերի ընթացքում վերածուեց թուրքական զօրքերի յաղթարշաւի: Թուրքական յարձակումը հայութեան շրջանում կրկին խուճապ առաջացրեց՝ առիթ տալով նոր քառսային տեղաշարժի:

Փախստականների առաջին խմբերն Ալեքսանդրապոլ հասան Մարտին⁵⁴, սակայն զանգուածային բնոյթ գաղթն ընդունեց Ապրիլի 12ից յետոյ, երբ Սէյմի ապաշնորհութեան պատճառով Կարսն առանց դիմադրութեան յանձնուեց թուրքերին: Ըստ Կարսի Շրջանային Կոմիսար Չամոյեանի Անդրկովկասեան Սէյմ ուղարկած կանխատեսումների՝ մինչեւ 1918 Մայիսի 1ը Բասէնի եւ Կարսի շրջաններից Ալեքսանդրապոլի Գաւառի գիւղեր կարող էին անցնել 200,000 փախստականներ⁵⁵: Սրանց մի մասը, ով կը փրկէր իր ունեցուածքն ու անասուններին կը փորձի Լոռիով ու Դիլիջանով հասնել Թիֆլիս, ապա նաեւ Հիւսիսային Կովկաս, իսկ միւս մասը, կը մնայ տեղում: Ուրեմն եւ անհրաժեշտ էր շտապ միջոցներ ձեռք առնել գաղթականների այդ հոսքն ընդունելու, սնունդով ապահովելու եւ տեղաւորելու համար, որովհետեւ հասարակական այն կազմակերպութիւնները, որոնք վերջին տարիներին զբաղուել էին նմանօրինակ խնդիրներով, գաղթականների այսպիսի քանակին օգնել ի զօրու չէին:

Թէ ապրիլեան այս օրերին փախստական քանի՛ ընտանիք տեղափոխուեց Ալեքսանդրապոլի Գաւառ, եւ թէ քանի՛ սը յետագայում այստեղ մնաց յայտնի չէ: 1918 Մայիսի 15ին գաւառի մեծ մասը զինակալուեց թուրքերի կողմից, եւ ալեքսանդրապոլցիին ինքը դարձաւ փախստական:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ամփոփելով մեր խօսքը նշենք հետեւեալը. Առաջին Աշխարհամարտի տարիներին Ալեքսանդրապոլի Գաւառը ապաստան դար-

ձառ աւելի քան 95,000 գաղթականների: Նրանց առաջին խմբերն այստեղ հասան 1914ի վերջերին՝ գերազանցապէս Կարսի, Կադոուանի, Օլթիի, Արդահանի եւ Սարիղամիշի գաւառներից: Յաջորդ ամիսների ընթացքում ներգաղթն արդէն Պարսկաստանից եւ Արեւմտեան Հայաստանից ընդունեց զանգուածային բնոյթ: Եթէ 1915 Հոկտեմբերի 1ին գաւառում կար 22,815 գաղթական, ապա արդէն 1916 Յունուարի 3ին այդ թիւը հասաւ 32,000ի: Հաշուի առնելով 1918ի ապրիլեան դէպքերը, երբ Կարսը յանձնուեց թուրքերին, հակուած ենք ենթադրելու, որ հաշուած շարքների ընթացքում նորեկների թիւը գաւառում կը կրկնապատկուէր, սակայն ալեքսանդրապոլցիին ինքը՝ Մայիսին, փախստական դարձաւ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23-24: Որպէս կանոն, իւրաքանչիւր ռուս-թուրքական պատերազմ ուղեկցում էր հայերի գաղթով՝ զոնէ սահմանամերձ շարջաններից: Այսինքն, պատերազմը սկսուելու պահին արդէն Երեւանի Նահանգում գիտէին, որ Կովկասեան Ճակատում առաջին կրակոցից յետոյ սկսուելու է հայերի տեղաշարժ: Դրա համար էլ նախապէս էին պատրաստուում:
- ² Նոյն, գործ 1242, թ. 1:
- ³ Նոյն, թ. 3:
- ⁴ ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, գործ 21, թթ. 141-165:
- ⁵ Նոյն, գործ 20, թթ. 151-158:
- ⁶ Նոյն, թթ. 149-252:
- ⁷ Նոյն, թթ. 164-165:
- ⁸ Նոյն, թթ. 149-252:
- ⁹ Նոյն, թթ. 254-256:
- ¹⁰ *Գաւառի Չայն*, Ալեքսանդրապոլ, 1915, N 1, 11 Յունուարի, էջ 3:
- ¹¹ Հ. Սարգսեան, *Արեւմտահայերի Գաղթը Արեւելեան Հայաստան 1915թ. Յետոյ, Հայոց Յեղասպանութեան Պատճառները Եւ Դասերը, Մաս 3*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1995, էջ 9:
- ¹² *Մշակ*, Թիֆլիս, 1915, N 9, 16 Յունուարի, էջ 3-4:
- ¹³ *Գաւառի Չայն*, 1915, N 1, 11 Յունուարի, էջ 3:
- ¹⁴ *Մշակ*, 1915, N 4, 9 Յունուարի, էջ 3:
- ¹⁵ *Մշակ*, 1915, N 54, 13 Մարտի, էջ 2:
- ¹⁶ ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 21, թթ. 11-140:
- ¹⁷ ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1242, թ. 2. նաեւ՝ *Արեւմտահայ Գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում 1914-1922թթ., Փաստաթղթերի Ժողովածու*, խմբ. Կ. Ալեքսանեան, Երեւան, «Հայկարլի» Հրատ., 2012, փաստ. N4, էջ 48-54:

- ¹⁸ ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 21, թթ. 251-258:
- ¹⁹ Նոյն, թթ. 267-280:
- ²⁰ Մանրամասն տե՛ս՝ *Ալեքսանդրապոլի Գաւառը Վիճակագրական Նիւթերում (XIXդ.-XXդ. սկիզբ), Փաստաթղթերի Եւ Նիւթերի Ժողովածու*, աշխատասիրութեամբ Ա. Հայրապետեանի, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2011, էջ 232-235:
- ²¹ *Odnodavnaya Perepis Bejentsev Iz Turtsii, Persii I Iz Mest, Pogranichnikh S Turtsey (Armian, Aysorov, Grekov, I Pr.) 1914-1915gg., Perepis Proizvedena 30-ogo Yanvaria 1915 g.* (Գաղթականութեան միօրեայ ցուցակագրում՝ Թուրքիայից, Պարսկաստանից եւ Թուրքիայի սահմանամերձ շրջաններից (հայեր, ասորիներ, յոյներ եւն.) 1914-1915թթ.: Ցուցակագրումը կատարուած է 30 Յունուար 1915ին), Երեւան, էջ 26-31:
- ²² ՀԱԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 1-267, գործ 21, թթ. 1-282:
- ²³ *Մշակ*, 1915, N 100, 13 Մայիսի, էջ 3:
- ²⁴ *Մշակ*, 1915, N 204, 18 Սեպտեմբերի, էջ 2-3:
- ²⁵ *Մշակ*, 1915, N 187, 26 Օգոստոսի, էջ 3. նաեւ՝ *Համբաւաբեր*, Թիֆլիս, 1916, N 42, 16 Հոկտեմբերի, էջ 1328:
- ²⁶ *Kratskie Svedenia O Volne Bejentsev Iz Turetskoy Armenii V Yule 1915g. I O Merakh, Prinyatikh Kavkazskim Komitetom Soyuza Gorodov Dlya Borbi S Epidemiy Sredi Nikh* (Համառօտ տեղեկութիւններ Թուրքահայաստանից 1915 Յուլիսին գաղթականութեան ալիքի եւ նրանց շրջանում համաճարակի դէմ պայքարելու համար Քաղաքների Միութեան Կովկասեան Կոմիտէի ձեռնարկած միջոցների մասին), Թիֆլիս, 1915, էջ 26:
- ²⁷ *Մշակ*, 1915, N 249, 10 Նոյեմբերի, էջ 3:
- ²⁸ ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 3-7:
- ²⁹ *Մշակ*, 1915, N 203, 17 Սեպտեմբերի, էջ 2: Ի դէպ, 1915 Օգոստոսի վերջին տասնօրեակում Էջմիածնում մահացածների թիւը հաշուելիս Ա-Դօն նշում է 2613 մարդ (Ա-Դօ, *Մեծ Դէպքերը Վասպուրականում 1914-1915թթ.*, Երեւան, «Լոյս» Հրատ., 1917, էջ 485):
- ³⁰ *Գաւառի Չայն*, Ալեքսանդրապոլ, 1916, N 3, 23 Յունուարի, էջ 2. նաեւ՝ *Հորիզոն*, Թիֆլիս, 1916, N 48, 2 Մարտի, էջ 3-4:
- ³¹ ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թթ. 8-9. նաեւ՝ *Արեւմտահայ Գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի*, փաստ. N 18, էջ 78-82:
- ³² *Մշակ*, 1916, N 210, 22 Սեպտեմբերի, էջ 3:
- ³³ Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գաւառում հաստատուած արեւմտահայ գաղթականութեան ցուցակը կազմուել է Արտակ Վարդապետի կողմից ըստ Ամենայն Հայոց Հայրապետ Գեորգ Ե.ի 24.11.1915ի կարգադրութեան (ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5):
- ³⁴ Արիսիային վաւերագրերում գիւղը մինչեւ Ի. դարասկիզբ յիշատակուում է Ղայդուլի Դուքենդ անունով:
- ³⁵ *Kratkie Svedeniya O Polozhenii Bejentsev Na Kavkaze I Okazannoy Im Soyuzom Gorodov Pomoshi Za Vremia S 20ogo Sentiabrya po Ioye Noyabrya 1915g.* (Համառօտ տեղեկութիւններ Կովկասում գաղթականութեան վիճակի, եւ Սեպտեմբերի 20ից մինչեւ 1 Նոյեմբեր 1915 ժամանակամիջոցին Քաղաքների Միութեան

-
- նրանց ցուցաբերած օգնութեան մասին), *Հրատ.* 2, Թիֆլիս 1915, էջ 12. նաև՝
Մշակ, 1915, N 229, 17 Հոկտեմբերի, էջ 3:
- ³⁶ *Մշակ*, 1915, N 251, 12 Նոյեմբերի, էջ 3:
- ³⁷ *Մշակ*, 1915, N 271, 8 Դեկտեմբերի, էջ 3:
- ³⁸ ՀԱԱ, ֆոնդ. 28, ցուցակ 1, գործ 429, թ. 1-7:
- ³⁹ ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 10:
- ⁴⁰ ՀԱԱ ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 506, թ.125:
- ⁴¹ *Մշակ*, 1915, N 271, 8 Դեկտեմբերի, էջ 3:
- ⁴² ՀԱԱ, ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 506, թ. 116:
- ⁴³ Նոյն, գործ 506, թ. 123:
- ⁴⁴ Նոյն, գործ 428, թ. 15:
- ⁴⁵ Նոյն, գործ 506, թ. 129:
- ⁴⁶ Նոյն, գործ 547, թ. 4-5:
- ⁴⁷ Նոյն, գործ 901, թ. 2:
- ⁴⁸ *Աշխատանք*, Երևան, 1916, N 17, 29 Յունիսի, էջ 4:
- ⁴⁹ ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 28, թթ. 149:
- ⁵⁰ ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 18, թթ. 148:
- ⁵¹ *Մշակ*, 1916, N 244, 1 Նոյեմբերի, էջ 3:
- ⁵² *Մշակ*, 1916, N 282, 18 Դեկտեմբերի, էջ 3:
- ⁵³ ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24:
- ⁵⁴ *Մշակ*, 1918, N 69, 1 Ապրիլի, էջ 2:
- ⁵⁵ *Մշակ*, 1918, N 81, 17 Ապրիլի, էջ 2:

THE NUMBER OF REFUGEES SETTLED IN THE PROVINCE OF
ALEXANDROPOLE DURING WWI
(SUMMARY)

ARMEN S. HAYRAPETYAN
armenani@mail.ru

During WWI the Province of Alexandropole became a refuge to tens of thousands of the Christian residents of Western Armenia, particularly Armenians, Greeks, Syriacs, Russians etc.

The first group of refugees, some 3000, arrived in November 1914. The number of the refugees increased immensely during the Sarikamish battle. According to a one-day survey conducted on 15 January 1915, between December 1914 and January 1915 some 6909 fled and took refuge from Kars, Gaghzevan, Olti, Ardahan and Sarikamish. In the next months the flood of Western Armenian refugees became massive. According to lists prepared on 1 October 1915, there were 22,815 Western Armenians in the Province. The number had jumped up to 32,000 in lists prepared on 3 January 1916.

All in all, during 1914 and 1917 over 95,000 refugees fled to the Province of Alexandropole.

ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ԱՄՆԻ ԵՒ ԴԱՇՆԱԿԻՑ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
(1917-1918 ԹԹ.)

ԳԱՅԻԱՆԷ Գ. ՄԱԽՄՈՒՐԵԱՆ
ggmakhm@gmail.com

ՄՈՒՏՔ

Հայնաճառալ պատերազմի, առաւել ևս՝ աշխարհամարտի եւ յեղափոխութեան միաձուլումը, ամենաբարդ ու կորստաբեր իրադրութիւն է ստեղծում ցանկացած պետութեան ու ժողովրդի համար, մանաւանդ, երբ նրանք մարտնչում են միջազգային բազմակողմանի յարաբերութիւնների խաչաձեւուող համապատկերում լուսաբանում է նման վիճակում յայտնուած հայ ժողովրդի քաղաքական պահուածքը:

Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից (1917 Նոյեմբերի 7/Հոկտեմբերի 25) յետոյ նոր բոլշեւիկեան իշխանութիւնն առաջ քաշեց ռուսական պետութիւնը՝ Առաջին Աշխարհամարտից դուրս բերելու քաղաքականութիւնը, մինչդեռ Կովկասեան Ռազմաճակատում, ռուսական բանակը նշանաւոր յաղթանակներ էր ձեռք բերել՝ վայելելով տեղի հայ ազգաբնակչութեան ջերմ օժանդակութիւնը: Զօրքը 170 կլմ. առաջ էր անցել 1914ի սահմանից, հասել Մուշ ու Դատուան՝ իր նուաճած վայրերում կազմակերպելով սեփական վարչակարգ:

Հոկտեմբերեան Յեղափոխութեան առաջնորդները, սակայն, հետամուտ էին անյապաղ հաշտութիւն կնքել թշնամու հետ, իսկ վերջինս՝ ի դէմս Գերմանիայի, պահանջում էր վերադարձնել պատերազմի ընթացքում Օսմանեան Կայսրութիւնից գրաւուած բոլոր տարածքները:

1917ի Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ Անդրկովկասը ենթարկուում էր Ժամանակաւոր Կառավարութեանը, իսկ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից յետոյ բոլշեւիկների

իշխանութիւնը՝ նախագործ Բաքուի շրջանից բացի, չունեցաւ երկրամասի վարչութիւն, ղեկավարում. կազմակերպութիւնները առաջուայ նման ենթարկուում էին Ռուսաստանի բուրժուական, ժողովրդավարական մարմիններին: Այդուհանդերձ, Կովկասեան Ռազմաճակատի հրամանատարութիւնը կատարեց բոլշեւիկների պահանջը. 1917 Դեկտեմբերի 18ին (5ին) Երզնկայում օսմանեան բանակի հետ կնքուեց զինադադար:

Հարկ է նշել, որ ռուսական զօրքերը քիչ թէ շատ կայուն վիճակ էին պահպանում 1917 Փետրուարից յետոյ: Սակայն բոլշեւիկների «Խաղաղութեան Մասին» հռչակագիրը (Նոյեմբերի 8) խթանեց զինուորների 965 կլմ. ձգուող դիրքերի զանգուածային դասալքութիւնն ու 250,000 հոգուց բաղկացած բանակային կառոյցի քայքայումը¹: Իրավիճակը յի էր լայնածաւալ թուրքական առաջխաղացմամբ, որը կործանման եզրին կը դնէր ոչ միայն արեւմտահայ, այլեւ հայ ամբողջ ժողովուրդն անխտիր:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿԵՑՈՒԱԾՔԸ՝ ՓԵՏՏՈՒԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՈՒ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՃԱԿԱՏԻ ԹՈՒԼԱՅՄԱՆ ՀԱՆԴԷՊ. ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԶՕՐԱԲԱԺՆԻ ՄԱՍԻՆ

Քառեակ Դաշինքի եւ Անտանտի, միապետական, բուրժուական ու բոլշեւիկեան Ռուսաստանի շահերի բախման բարդ հանգոյցում առկայ էր աչքի չգարնող, սակայն արտաքին քաղաքականութեան ոլորտում կարեւոր դեր ունեցող եւս երկու պետութիւնների՝ ԱՄՆի եւ Պարսկաստանի գործօնը: 1917 Ապրիլին, անգամ ԱՄՆի՝ Համաշխարհային Պատերազմին միանալուց առաջ պետքարտուղար Ռ. Լանսինգը Կ.Պոլսում ԱՄՆ դեսպանատնից հեռագրեր էր ստանում՝ ռուսական բանակում քայքայիչ գործընթացներով ոգեւորւած օսմանեան իշխանութիւնների ուրախութեան եւ յաջողութեան ակնկալիքների մասին: Պետրոգրադի Փետրուարեան Յեղափոխութիւնից յետոյ Բարձր Դռան ղեկավարները վստահ էին Ռուսաստանի՝ Քառեակ Դաշինքի հետ անջատ պայմանագիր ստորագրելու հարցում²: Իսկ Քառեակ Դաշինքը Ռուսաստանից պահանջում էր վերադարձնել Արեւմտեան Հայաստանի ազատագրուած նահանգները նախկին բռնակալներին օսմանեան իշխանութեան³: Որպէս արձագանգ՝ նոյն թուականի Մայիսի 22ին ԱՄՆ նախագահ Ուուորո Ուիլսընը

դիմեց ռուսական Ժամանակաւոր Կառավարութեանը եւ շեշտեց, որ ոչ մի ժողովրդի չեն ստիպի ենթարկուել իրեն անընդունելի տիրակալութեանը⁴:

Ուիլսընի դիմումի տրամաբանութեամբ 1917 Մայիսի 29ին Թիֆլիսում⁵ ԱՄՆ հիւպատոս Ֆ. Ու. Սմիթը իր նստավայրում առաջին հանդիպումն է ունեցել զօրավար Անդրանիկ Օզանեանի հետ: Նրանք զրուցել են արեւմտահայ զօրքեր ստեղծելու մասին⁶: Քննարկումներին ներկայ են եղել խարբերոցի ուսուցիչ Լեւոն Լիւլէճեանն ու թարգմանչի դեր կատարող Վահան Թոթովէնցը: Հիւպատոսը առաջարկել է ֆինանսաւորել արեւմտահայ կազմաւորուելիք դիւիզիան՝ դրա գործողութիւնները վերահսկելու պայմանով⁷: Սմիթը ցանկանում էր օգտագործել նոյն օրերին Ծերակոյտում հաստատուած ռուսական 100-միլիոնանոց վարկի մի մասը⁸:

Յունիսի 2ին, Զօր. Անդրանիկը հիւպատոսին յանձնեց անհրաժեշտ բացատրագիրը⁹ եւ մարտական գործարական, քարտէզը¹⁰: Թիֆլիսում սկիզբ արած դիւանագիտական այդ նախաձեռնութիւնը համընկաւ Մոսկուի տակ՝ Անտանտին օժանդակող¹¹ ու Երոպայի Արեւմտեան Ճակատում, Ժամանակաւոր Կառավարութեան լայնածաւալ յարձակման նախապատրաստման աշխատանքներին: Այնուհետեւ, Պետրոգրադում ԱՄՆ դեսպան Դէյւիդ Ռ. Ֆրենսիսը Թիֆլիսից իր մօտ ժամանած Սմիթի վերոնշեալ փաստաթղթերը յանձնեց Ռազմական Ու Ծովային նախարար Ալեքսանդր Կերենսկուն, իսկ պատճէններն ուղարկեց Ուաշինգտոն ու երոպական մի շարք մայրաքաղաքներ: Միւս կողմից, Փարիզի Հայկական Ազգային Պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուբարը յուշագիր պատրաստեց պետքարտուղար Լանսինգի համար, որը 1917 Յունիսի 13ին հասաւ հասցէատիրոջը¹²:

Յուշագրի համաձայն.-

- 1) Հայաստանի կազմում ընդգրկուելու էին օսմանեան վեց նահանգները, Կիլիկիան եւ Տրապիզոնը
- 2) Այն ստանալու էր ինքնավարութիւն եւ լինելու էր Դաշնակիցների համատեղ հովանաւորութեան ներքոյ:
- 3) Հիմք ընդունելով ամերիկեան տեսակետը Ազգերի Լիգայի եւ մանդատների նկատմամբ՝ նոր խնամակալութիւնը աշխարհի բոլոր երկրների ձեռներեցներին տրամադրելու էր հաւասար

իրաւունքներ իր հսկողութեան տակ գտնուող ինքնավար նոր միաւորման տնտեսութեան, առետրի եւ կրթութեան ոլորտներում, ինչպէս նաեւ Բաղդադի երկաթգծով ազատ տեղաշարժի իրաւունք դէպի Պարսկաստան ու Հնդկաստան:

- 4) Տասնհինգամեայ մանդատի ընթացքում ռեւէ մէկ տէրութիւն պէտք է գործընկերներից վարկ ստանար ու փոխհատուցման հիմնադրամ ստեղծէր՝ օժանդակելով հատուցել Օսմանեան Կայսրութիւնում կազմակերպուած կոտորածների ու տեղահանման գոհերին կրած վնասները:
- 5) Հոգատար պետութիւնը կարող էր զօրքեր դասաւորել տեղում, իսկ նշուած 15 տարիների ընթացքում նրա բանակը աստիճանաբար պէտք է փոխարինուէր ձեւաւորուող հայկական զինուած ոստիկանութեամբ:

Պօղոս Նուպարի յուշագիրը անդրադառնում էր 1915-1917ի ընթացքում հայ ժողովրդի կրած սարսափելի կորուստներին: Նա նաեւ յիշեցնում էր, որ երբ 1832ին Բրիտանիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը ստեղծում էին օսմանցիներից անկախ Յունաստանի թագաւորութիւնը, այնտեղ բնակւում էր ընդամենը 400,000 յոյն: Յուշագիրը վերջում խոստանում էր, որ խնամակալութեան ներքոյ գտնուող Հայաստանը բախարգելման գօտի կը հանդիսանայ Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Միջագետքի եւ Սիրիայի միջեւ¹³:

Հայերի Ինքնավարութիւնը Օսմանեան Կայսրութեան Կազմում

Վերոյիշեալ յուշագիրը, սակայն, անպատասխան մնաց, իսկ արեւմտահայ զօրաբաժին ձեւաւորելու խնդիրը սառեցուեց մինչեւ 1917 Օգոստոսի 3ը: Այդ ժամանակահատուածում ռուսական բանակը անյաջող առաջխաղացումներ արձանագրեց Եւրոպայում եւ Մերձաւոր Արեւելքում (Պարսկաստանի եւ Իրաքի մէջ): 1917 Օգոստոսի 3ին ԱՄՆ պետքարտուղարը ծանօթացաւ Անտանտի՝ Հայաստանն ազդեցութեան ոլորտների բաժանելու ծրագրին: Նա տեղեկացաւ, որ Արեւմտեան Եւրոպայի տէրութիւններն այլեւս չէին սատարում հայերին՝ օսմանեան գերիշխանութիւնից ազատելու գաղափարին: Այժմ նրանք գերադասում էին հայերի ինքնավարութիւն՝ Օսմանեան Կայսրութեան կազմում, այն էլ առանց արտաքին հսկողութեան¹⁴: Ինչ վերաբերում էր

երոպացիների սպասուելիք ռազմական աւարի բաժիններին, ապա դրանք մնում էին անփոփոխ:

Այս նոր իրավիճակին ի պատասխան՝ Արտերկրեայ Առաքելութիւնների Լիագորների Ամերիկեան Վարչութեան աշխատակից, ականաւոր քարոզիչ է. Եարրովն հիւպատոս Սմիթի ներկայութեամբ Օգոստոսին Անդրանիկին ծանօթացրեց բրիտանացի զօրավար Օ. Շորի եւ վերջինիս ուղեկից Ջ. Գրեյսիի հետ¹⁵: Քառեակը քննեց 8 գնդից բաղկացած 10-20,000անոց հայկական զինուժ հաւաքելու հարցը՝ այն ֆինանսաւորելու եւ 150 բրիտանացի խորհրդականներ տրամադրելու պայմանով: Հայոց Ազգային Խորհուրդը նոյնպէս փորձեց կապ հաստատել եւրոպացիների հետ, սակայն նրա՝ Սմիթի հետ բանակցութիւնների մասին վկայութիւնները բացակայում են: Իսկ ԱՄՆի Պետքարտուղարութեան ղեկավարը 1917 Օգոստոսի 22ին ստացաւ նոր մանրամասներ Հայաստանին վերաբերող Սայքս-Պիկոյի 1916ի համաձայնագրի մասին¹⁶: (Այսպիսով, Փարիզի Հաշտութեան յետպատերազմեան Համաժողովում նախագահ Ուիլսընի պատճառաբանութիւնները՝ Արեւելեան Հարցից անտեղեակ լինելու մասին, իրականութեանը չեն համապատասխանում. 1917 Օգոստոսի դրութեամբ ամերիկեան կողմը քաջատեղեակ էր հայոց խնդրի վերաբերեալ հիմնական տուեալներին:)

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԸ՝
ՀՈԿՏԵՄԲԵՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ

Հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան շուրջ ընթացող բանակցութիւնների երրորդ՝ վճռորոշ փուլը, սկսուեց Հոկտեմբերեան Յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ: Դեռեւս այս զինուած ելոյթից առաջ՝ 1917 Հոկտեմբերի 30ին (նոր տոմարով), Լանսինգը տեղեկացաւ, որ Միջագետքում օսմանեան բանակը, ղեմառդէմ մնալով բրիտանացիների հետ, այնուամենայնիւ, պատրաստուում է լայնածաւալ յարձակման ու չի կամենում առանց կռուի յանձնել այդ ռազմաճակատը: Ճիշտ է, որ թուրք ուժերը դրանով շեղուում էին Կովկասեան ռազմաճակատում նախայարձակ քայլերից, սակայն Գերմանիան մեծ եռանդով ու յաջողութեամբ վարում էր իր եւրոպական մարտերը Ռուսաստանի դէմ: Յատկապէս այս վերջին

գործողությունների ճնշմանն ու գերման քաղաքական պահանջներին շնորհիւ, Օսմանեան Կայսրութիւնը իրօք որ փրկուեց Ռուսաստանից¹⁷:

1917 Նոյեմբերի 3ին, Պետքարտուղարութեան ղեկավարը ստացաւ Պօղոս Նուպարի նոր դիմումը: Նուպարը հաղորդում էր, թէ «Հայկական հարցը այժմ դասուեց միջազգային այն հարցերի շարքին, որոնք վճռելու է հաշտութեան ապագայ վեհաժողովը: [Իսկ պետական անձանց այսպիսի մեծ հաւաքում] Միացեալ Նահանգների կառավարութիւնը ունենալու է վճռորոշ ազդեցութիւն»¹⁸: Նոյն դիմումով Նուպարը խնդրել էր Լանսինգին՝ ճանաչել Գարեգին Փաստրմաճեանին ու Միհրան Սվազլեանին՝ որպէս ԱՄՆի կառավարութեանը կից հաւատարմագրուած Հայ Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչներ:

Նոյն ամսուայ վերջին, դիմումին տրուեց հաշուենկատ մի պատասխան. Պետքարտուղարութիւնը «հաստատեց այն նամակի ստացումը, որտեղ դուք յայտարարութիւն էք արել, թէ անհրաժեշտ էք համարում ներկայացուած լինել Ուաշինգտընում»¹⁹:

1917 Նոյեմբերի 7ին Լանսինգը ստացաւ Պետրոգրադի վրայով ուղարկուած Սմիթի զեկուցագիրը: Վերջինս տեղեկացնում էր քրդերի հետ Վանում բանակցելու եւ համաձայնութեան գալու հնարաւորութեան մասին: Նա մանրամասնում էր որ նախնական քննարկման ընթացքում քրդերը պահանջել են քաղաքական անկախութիւն ճիշտ այն պայմաններով, որոնք առաջարկուել էին արաբներին: Հայկական կողմը սատարում եւ իրագործելի էր համարում այդ նախագիծը²⁰: Ըստ հիւպատոսի զեկուցման՝ քրդերի ռազմական միջամտութիւնն Անտանտին ապահովում էր մեծ առաւելութիւններ. այն իրականանալի էր աննշան ծախսով եւ հնարաւոր էր կազմակերպել Թիֆլիսից: Դաշնակիցներին մնում էր կայացնել քաղաքական որոշում եւ հրամաններ արձակել:

Նոր իրավիճակը գնահատելու համար Լոնդոնում իսկոյն գումարուեց բազմամարդ համաժողով՝ ԱՄՆի ուժեղ պատուիրակութեան մասնակցութեամբ: Համաժողովի աւարտին Թիֆլիսի ԱՄՆ հիւպատոսը ստացաւ մի պատասխան, թէ քրդական ռազմութիւն վերաբերող նախագիծը «հետաքրքիր» էր, սակայն Ուաշինգտընը ի վիճակի չէ դրան աջակցել, այսինքն՝ յատկացնել իրենից պահանջուած դրամական միջոցները²¹: Այնուամենայնիւ, Նոյեմբերի 30ին պետական քարտուղարը

պատուիրեց իր մօտ՝ Պետդեպարտամենտ ուղարկել Պետրոգրադի բոլշևիկեան թերթերում հրապարակուած եւրոպական 1915-1917ի բոլոր գաղտնի համաձայնագրերը՝ նրանց հիմնադրոյթների մանրամասն շարադրանքով²²:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԴԻԻԻԶԻԱՅԻ ԿԱԶՄԱԻՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Միեւնոյն ժամանակ, Նոյեմբերի 21ին (8ին) Թիֆլիսում Հայոց Ազգային Խորհրդի (ՀԱԽ) նիստում Միքայել Պապաջանեանը արեց իր առաջին զեկոյցը: Նա պատմեց փոխգնդապետ Արսէնի Թորգոմի՝ երեք ամսում 12-16,000անոց արեւմտահայ հետեւակի զօրաբաժին կազմելու առաջարկի մասին: Դիւիզիան նոյն Թորգոմի եւ Անդրանիկի ղեկավարութեամբ պետք է «օգնութեան գնար անգլիացիներին»²³: Միջազետքում: Փոխգնդապետի տեղեկութիւններով՝ Անտանտի Երկրները մտադիր էին տրամադրել խորհրդականներ եւ հանդերձանք, իսկ ընդհանուր ծախսերը հոգալու էր ռուսական Ժամանակաւոր Կառավարութիւնը: Թորգոմը պատրաստ էր անցնել արտասահման եւ ՀԱԽի կարգադրութեամբ շարունակել բանակցութիւնները Եւրոպայում²⁴: Նոյեմբերի 30ին նա անձամբ՝ Արեւմտահայ Խորհրդի անդամների հետ միասին, ներկայացաւ ՀԱԽի նիստ, որտեղ յստակեցրեց, որ 10-15,000 հոգուց բաղկացած արեւմտահայ դիւիզիան ընդգրկուելու էր միասնական հայկական զօրաբանակի կազմ եւ պաշտպանելու էր Կովկասեան Ռազմաճակատի դիրքերը Արեւմտեան Հայաստանում: Ռուսական բանակի հրամանատարութիւնը, Արեւմտեան Հայաստանի զօրավար-կոմիսար Պետր Աւերեանովն ու Թովմաս Նազարբեկեանը դէմ չէին այդ զօրամասի ձեւաւորմանը:

Դաշնակիցներն իրենց օգնութիւնն էին առաջարկում նաեւ այդ ծրագրի կատարման համար, իսկ բրիտանացիների՝ Միջազետքում ձեռք բերած նուաճումները շեղում էին թուրքական բանակի առաջխաղացման հիմնական ուղին: Այնինչ ասկեարների համար միեւնոյն էր արեւմտահայ թէ արեւելահայ բնակչութեանը ոչնչացնել: Թորգոմը զգուշացրեց, որ ինքնապաշտպանութեան գործին մեծագոյն եռանդ է հարկաւոր, այլապէս Հայաստանի արեւելեան մասն էլ զերծ չի մնայ թշնամու հարուածներից²⁵: 1917 Դեկտեմբերի 12ին (Նոյեմբերի 29) զօրավարներ Նազարբեկեանն

ու Միքայել Արեշեանը անձամբ սատարեցին քննարկուող նախաձեռնությունը: Նրանց առաջարկեցին հաւաքագրել թուրքահայ եւ պարսկահայ կամաւորականներին առանձին, կանոնաւոր գնդերում²⁶:

Յաջորդ իսկ օրը ՀԱԽի անդամներն ունկնդրեցին Պօղոս Նուպարի՝ դիւանագիտական ուղիներով առաքուած հեռագիրը: Վերջինս հայցում էր որ ՀԱԽը համաձայնութիւն տայ քննարկումների շարունակմանը²⁷: Միեւնոյն ժամանակ Սմիթն առաջարկեց իր կառավարութեանը 1 միլիոն դոլար տրամադրել հայկական զօրամասերը համազգեստով ապահովելու համար, իսկ ԱՄՆ դեսպան Ու. Պէյջը տեղեկացրեց իր կառավարութեանը Լոնդոնից, թէ Անտանտի անդամները պատրաստ են մասնակցել այդ գործի ֆինանսաւորմանը:

ՊԱՐՄԿԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐԻՆ. ԱՆՏԱՆՏԻ ՏԷՐՈՒԹԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Դեկտեմբերի 17ին (4ին) միանգամայն անսպասելի, քաղաքական ընթացող զարգացումներին մասնակցելու հայտներկայացրին Պարսկաստանի իշխանութիւնները: Նրանք հայցում էին ԱՄՆի աջակցութիւնը՝ Յետպատերազմեան Հաշտութեան Համաժողովին մասնակցելու, եւ իրեն սահմաններում կռուող բոլոր ուժերը (Ռուսաստան, Բրիտանիա եւ Թուրքիա) իրենց երկրից հեռացնելու հարցում: Թեհրանը Միացեալ Նահանգների պետքարտուղարին յիշեցնում էր Պարսկաստանի չեզոքութիւնը: Այնինչ, այդ երեք բանակների տեղաշարժերն ու կռիւները մեծ վնաս էին հասցնում բնակչութեանը: Ի փոխհատուցում ԱՄՆի աջակցութեան՝ պարսկական դահլիճը խոստանում էր վերանայել 1828ի Թուրքմենչայի Պայմանագիրը, ինչպէս նաեւ չեղեալ յայտարարել վերջին ժամանակահատուածում իրեն պարտադրուած բոլոր համաձայնագրերը²⁸: Այսպիսով, շահը ԱՄՆին հրաւիրում էր իր երկրում փոխարինելու Ռուսաստանին եւ Բրիտանիային:

Եւ իրօք, 1918ի ամռանը Պարսկաստանում չեղեալ յայտարարուեց Թուրքմենչայի Պայմանագիրը, եւ Միացեալ Նահանգներին մատուցուեցին մինչեւ այդ Ռուսաստանին պատկանող բոլոր օտարագրերը (concessions)²⁹: Սակայն Թուրքմենչայից հրաժարուելու վճիռը առնչւում էր ոչ միայն

Ռուսաստանին. այն շօշափում էր Հայաստանի կենսական նշանակություն ունեցող շահերը եւ վնաս հասցնում Եւրոպայի եւս եօթ երկրների, յատկապէս Բրիտանիայի տնտեսական հնարաւորութիւններին: Արդէն եւրոպական բոլոր համաձայնագրերը հիմք էին ընդունում վերոնշեալ պայմանագրի մօտեցումներն ու սկզբունքները: Մասնաւորապէս, նրանք բոլորը ամրագրեցին արտերկրայնութեան (extritorial) իրաւունքը, երբ խօսքը քաղաքացիական դատավարութեան մասին էր: Քրեական գործերի պարագայում օտարերկրացին կանգնում էր տեղական դատարանի առաջ:

1917 Դեկտեմբերի 26ին պետքարտուղար Լանսինգը նոր զեկուցագիր ստացաւ եւրոպական գաղտնի համաձայնագրերի եւ Արեւմտեան Հայաստանում ռուսական ազդեցութեան գօտու չափերի մասին: Ըստ տեղեկացման՝ բոլշեւիկների՝ Վանից, Բիթլիսից եւ Էրզրումից հրաժարուելուց յետոյ Անտանտի առաջնորդները Փարիզի հայ պատուիրակութեանը պաշտօնապէս հաւաստիացրել են նրանց երկիրը թուրքական լծից մօտ ժամանակներում ազատելու եւ Դաշնակիցների խնամակալութեան ներքոյ ինքնավար պետութիւն հիմնադրելու մասին: Պետքարտուղարութեան ղեկավարը անմիջապէս պատասխանեց, որ ԱՄՆը միանում է Գերագոյն Ռազմական Խորհրդի աշխատանքներին: Եւ յաջորդ իսկ օրը՝ Դեկտեմբերի 27ին, նա ստացաւ գաղտնի համաձայնագրերի ամբողջական բնագրերը³⁰:

ԱՐԵՒՍՏԱՀԱՅ ԴԻԻԻԶԻԱՅԻ ԽՆԴԻՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նոր տոմարով Դեկտեմբերի 28ին առաւելապէս Արեւելեան Հայաստանի դրութեամբ զբաղուած Թիֆլիսի Հայոց (կենտրոնական) Ազգային Խորհուրդը նորից անդրադարձաւ Անտանտի եւ արեւմուտքում ազատագրուած տարածքների խնդրիներին: Անդրանիկը զեկուցեց ՀԱԽի անդամներին գործի էութիւնը: Նրա պատմածից հետեւում էր, որ ՀՅԴ Բիւրօս փորձեց իր կուսակցութեանը վերագրել համազգային ատեանի որոշումը: Սակայն Անդրանիկը շեշտադրում էր ինչպէս արեւմտահայ, այնպէս էլ արեւելահայ մարմինների կարեւորութիւնը: Ըստ նրա՝ ռուսական բանակի եւ արտաքին աշխարհի հետ պետք է գործ

ունենան համազգային կազմակերպությունները, եւ յատկապէս նրանց համատեղ որոշումներին է ենթարկուելու նրա ղեկավարած զօրքը³¹:

Արամ Մանուկեանը յաւելեց, որ ինքը՝ որպէս ՀԱԽի առաջնորդներից մէկը, պատկերացնում էր արդիական կանոնաւոր բանակային միաւորումը ռուսական գլխաւոր-կոմիսարութեան ենթակայութեամբ: Յատկապէս այդ կոմիսարութեանն Արամը անուանում էր Հայաստանի կառավարութիւն, իսկ երկու Խորհուրդները՝ նրանց ընտրուած 8-հոգանոց համատեղ մարմնի, Հայ Զինուորական Միութեան, կուսակցութիւնների եւ հասարակական կազմակերպութիւնների միջոցով, պէտք է նպաստէին ընդհանուր գործի յաջողութեանը: Անդրանիկը միանգամայն գոհացաւ նման մօտեցմամբ³²:

Անդանիկը շեշտադրեց նաեւ, թէ որքան նպաստաւոր էր Կովկասի անվտանգութեան համար Բաղդադում եւ Երուսաղէմում հաստատուած բարեկամական հսկողութիւնը: Այլ խօսքով, Բրիտանիայի եւ Ֆրանսիայի ներկայ իրավիճակից բխող միջոցառումները շահաւէտ էին հայ, յատկապէս արեւմտեան հատուածի ժողովրդի համար: Ռուսական բանակը վաղուց սերտօրէն կապուած էր ու ձեռք էր մեկնում Դաշնակիցների միացեալ սպայակոյտին, եւ ոչ մի կարիք չկար թոյլ տալ թշնամուն մօտենալ Անդրկովկասի շէմին: Ընդգծելով Նազարբեկեանի Հայկական Զօրաբանակին ենթակայ լինելու հանգամանքը՝ Անդրանիկը պահանջեց, որ երկու Խորհուրդների միացեալ մարմինը սահմանափակուէր տնտեսական հարցերով եւ օտարների կատարած ծախսերի հսկողութեամբ, իսկ ռազմական գործողութիւնները թելադրում են միանձնեայ ղեկավարութիւն, մասնագիտական հմտութիւն ու ռազմական կրթութեամբ եւ փորձառութեամբ օժտուած սպաների ներդրում³³:

Այս բոլոր քննարկումների համապատկերում Դեկտեմբերի 29ին դեսպան Պէշը Լանսինգին փոխանցեց եւրոպական խաղակիցների մէկ յուշագիր: Նրա գրութիւնը արեւմտահայ զօրքերի կազմաւորման համար շտապ կարգով գումար յատկացնելու եւ այդ զինուժին սպայ խորհրդականներ տրամադրելու անհրաժեշտութեան էր վերաբերում: Վաւերագրի հեղինակները պնդում էին, որ թուրքական ընդարձակումը Անդրկովկասում շատ աւելի վտանգաւոր է, քան գերմանական

փողով իրականացուած Բաղդադի երկաթուղու կառուցումը³⁴: Այնինչ, յատկապէս Բաղդադի երկաթգծի շուրջ ծաւալուած բախումը դասուել էր այս տարածաշրջանում պատերազմի գլխաւոր պատճառներին:

1918ի ճիշտ ամանորին թիֆլիսեան բանավէճը շարունակուեց, եւ ՀԱԽում ընթերցուեց Արեւմտահայ Կօնֆերանսի (Ուժեղացրած ժողովի) որոշումը, որը Երկրապահ Չօրաբաժնի մասին էր: Այդ խոշոր ստորաբաժանման մաս կարող էին կազմել եզդները, ասորիներն եւ բոլոր բարեկամ խաղաղատենչ ժողովուրդների ներկայացուցիչները: Կօնֆերանսը յայտարարեց ընդհանուր զօրակոչ, զօրամասն պէտք է ենթարկուէր Հայկական Չօրաբանակին, իսկ քաղաքական բնոյթի հարցերը յանձնուում էին գլխաւոր-կոմիսարութեանն ու երկու Խորհուրդները ներկայացնող, 16 հոգուց բաղկացած յանձնաժողովին: Չօրաբաժնի հրամանատար առաջարկուեց Անդրանիկ Օգանեանը³⁵:

Սակայն ՀԱԽի անդամներն ունէին երկու առարկութիւն: Սամսոն Յարութիւնեանը վիճում էր Վահան Փափազեանի հետ, թէ Արեւմտահայ Խորհուրդը չպէտք է ընդհանուր գործին մասնակցի որպէս հաւասարազօր կողմ, իսկ Արամայիս Երզնկեանը խօսք բացեց Անդրկովկասեան Կոմիսարիատին ենթարկուելու եւ 1914ի սահմանին ետ քաշուելու մասին, որպէսզի թուրքերն ու տեղի թաթարները չգրգռուէին:

Միւս կողմից, մերժելով Յակոբ Զարեանի (Զարիւելի) տեսակէտը՝ Ստեփան Մամիկոնեանն ու Ռուբէն Տէր-Մինասեանը արեւմտահայ համահաւաք Չօրաբաժնի ու նրա հրամանատարի դէմ ելոյթներ ունեցան: Նրանք ճգնում էին այս ծրագրի ղեկավարներին զրկել ինքնուրոյնութիւնից եւ Անտանտից շեղել դէպի Անդրկովկասեան Կոմիսարիատը: Շեշտադրում էին սեփական խորհրդի կարեւորութիւնն ու կուսակցական գործօնը: Թէեւ, հաշուի առնելով Վրաստանի եւ Ադրբեջանի քաղաքական առաջնութիւնները, երկրամասի միասնութեան քարոզն ու նրա հետ յոյսեր կապելը նշանակում էին գերմանա-թուրքական միութեանը հնազանդուելու համաձայնողական վարքագիծ:

Իր հերթին, Անդրանիկը յիշեցրեց, ինչպէս ընդամենը 3 օր առաջ Տէր-Մինասեանը չէր առարկում դիւիզիայի հարցում, ու հենց նրան առաջարկեց դառնալ այդ զինուժի պէտք: Չօրավար-կոմիսարի օգնական Զարեանը արդէն իսկ ստորագրեց ՀԱԽի

անդամներին կարդացած ու նրանց հաւանութեանն արժանացած հրամանը: Բհարկէ, օգնականն դա ինքնագլուխ չարեց, քանի որ ռուսական հրամանատարութիւնը Անդրանիկին առաջարկեց գնդապետեր, զէնք ու հագուստ տալ:

Սակայն ՀԱԽի կազմակերպչական աշխատանքը այժի չէր ընկնում նուաճումներով. զինճառայութեան համար բազմաթիւ պիտանի մարդկանցով հանդերձ, Հայկական զօրաբանակում կար ընդամենը 9,000 մարտիկ: Այնինչ Էրզրումում, օրինակ, մնաց 600 անտէր արդիական թնդանօթ, իսկ հակառակորդն հայերի չափ ուժասպառ էր ու սկար: Զօրավարի սրտից արիւն էր գնում³⁶:

Մինչդէռ Արեւելահայ Խորհուրդը չէր հաստատում արեւմտահայ պաշտօնակիցների միաձայն որոշումը եւ մտադիր էր կազմել զանազան վայրերում երկրապահ անջատ գնդեր միայն: Վերջնական վճիռը յետաձգուեց մինչեւ 1918 Յունուարի 2ը (1917 Դեկտեմբերի 20): Այդ իսկ օրը Խաչատուր Կարճիկեանը մեկուսացրեց ՀԱԽը գլխաւոր-կոմիսարութիւնից³⁷: Ի տարբերութիւն նրան՝ Անդրանիկը յստակօրէն բաժանեց կազմակերպչական գործառոյթներն ու պնդեց, որ ռազմական դիրքերում գտնուելիս նրա ստորաբաժանումն ենթարկուելու է Նազարբեկեանին, ուրեմն նաեւ՝ նրան հակադարձող թիֆլիսեան ՀԱԽի անդամներին:

Մամիկոնեանը նշեց ԱՄՆի, Բրիտանիայի եւ Ֆրանսիայի հիւպատոսների շահագրգռուածութիւնը եւ Արեւմտահայ Ազգային Խորհրդի ձգտումը համագործակցել այս տէրութիւնների դիւանագետների հետ³⁸: Ըստ նրա՝ ռուս-գերմանական անջատ հաշտութիւնից յետոյ քիչ հաւանական էր Արեւմտեան Հայաստանում հսկողութիւն պահպանել, քանի որ հակառակորդը իսկոյն կը յարձակուէր: Միքանի ելոյթից յետոյ Անդրանիկն արձագանգեց իրեն հակասողներին՝ պաշտպանութեան խնդրում անգործունեայ լինելու մեղադրանքով եւ տեղեկացրեց, որ վաղն իսկ գնալու է Էրզրում եւ հրաժարուում է իրեն տրուած պաշտօնից:

Շարունակելով նոյն քննարկումը՝ Կարճիկեանը յոյս յայտնեց, թէ իրական դրութիւնն ու շրջաններում հաստատուած հսկողութիւնը անպայման ազդելու էին ապագայ պայմանագրերի բովանդակութեան վրայ: Նա խօսեց ՀԱԽի զինուժի թոյլ լինելու մասին եւ առաջարկեց չխոչընդոտել արեւմտահայերի ջանքերին: Պարզապէս անհնարին է բանակցել, երբ թշնամուն չես դիմադրում

եւ թուրք զարթիչներին եւ յանձնում ազատագրուած տարածքները³⁹: Զարեանը նոյնպէս քննադատեց ՀԱԽին ու մերժեց իբր սխալ արտաքին քաղաքականութիւն վարելու նրան ներկայացուած մեղադրանքը: Նա յիշեցրեց՝ ոչ թէ հայերը, այլ Կովկասեան Բանակի հրամանատարութիւնն էր նախաձեռնել թիֆլիսեան բանակցութիւնները ամերիկացիների եւ ֆրանսիացիների հետ, ինչպէս նաեւ բրիտանացիների հետ հանդիպումները Պարսկաստանում: Մասնաւորապէս, կոմիսարութիւնը եւ նրա պետը, զօրավար-լէյտենանտ Աւերեանովը ստացել էին Դաշնակիցների համաձայնութիւնը 20 միլիոն ռուբլի վարկ տալ՝ Հայաստանը պաշտպանելու նպատակով: Ընդ որում, նրան հետեւեց եւ փող հայցեց նաեւ Անդրկովկասեան Կոմիսարիատը⁴⁰:

Լրացուցիչ վէճերից յետոյ որոշուեց կազմակերպել Հայաստանի Երկրապահ Զօրամասը: Երկու Խորհուրդներն ստեղծեցին եռանդամ մի մարմին, որ գործելու էր գլխաւոր-կոմիսարութեան կից: Զօրամասն յանձնուում էր Հայկական Զօրաբանակին: Այդ երկրապահ զինուժի հրամանատարին ընտրելու համար ստեղծուել էր հաւասարութեան հիմունքով ձեւաւորուած 12-հոգանոց կոմիտէ: Ի վերջոյ, երկու թեկնածուներից՝ Մ. Սիլիկեանից եւ Անդրանիկից, Անդրանիկը հաւաքեց 9 ձայն⁴¹:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՅՍՏԱԿԵՑՈՒՄՆ ՈՒ ՄԵԿՈՒՍԱՅՈՒՄԸ 1918Ի ՍԿԶԲԻՆ

Անդրանիկ Օգանեանին ընտրութիւնների յաջորդ իսկ օրը, ընդհանուր պատկերացում կազմելով Մերձաւոր Արեւելքում ԱՄՆի հեռանկարի մասին, Լանսինգը 1918 Յունուարի 3ին պատասխանեց պարսկական դեսպանորդին, որ Թեհրանի ներկայացրած հայցը՝ դուրս հանել իր երկրից բոլոր մարտնչող բանակները, ուշագրաւ է եւ արժանի ջերմ կարեկցանքի: Այնուամենայնիւ, այդ դիմումը լրացուցիչ հետազօտման կարիք ունի⁴²: Որպէս հետեւեանք՝ 1918 Յունուարի 21ին Ուաշինգտոնում ստացան Պարսկաստանի կառավարութեան պաշտօնական բողոքը՝ ինչպէս ամերիկացիների եւ Անտանտի համատեղ ճիգերով հայկական եւ ասորի զօրամիաւորումների հանդերձման, այնպէս էլ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի սպաների

ղեկավարութեամբ Ուրմիայի շրջանում նրանց վարժեցնելու վերաբերեալ⁴³: Մ. Նահանգների պաշտօնեաները խորհրդակցութիւն սկսեցին Բրիտանիայի իրենց ընկերակիցների հետ, քանի որ չէին ցանկանում խափանել Թեհրանի հետ հնարաւոր մերձեցումը կամ նպաստել Իրանում գերմանաթուրքական ազդեցութեան աճին: Հետեւաբար Ուաշինգտընը եռանդագին հերքում էր Ուրմիայի շրջանում զինուժի վարժեցման գործում դրամական որեւէ յատկացումով իր մասնակցութիւնը⁴⁴:

1918 Յունուարի 24ին Լոնդոնի ԱՄՆ դեսպանին առաջարկեցին ամերիկացի սպաներ ուղարկել պարսկական բանակ, ինչպէս եւ ամէն հնարաւոր ձեւերով մասնակցել եւրոպական ծրագրերին⁴⁵: Այնուհետեւ, Փետրուարի 1ին Թաւրիզում ԱՄՆի հիւպատոսից մի ուշագրաւ զեկուցագիր հասաւ Պետքարտուղարութիւն: Նրանում նշում էր, որ Թաւրիզում եւ Ուրմիայում ծաւալուած ռազմական շինարարութիւնը նախաձեռնել էին նոյն վայրում հաստատուած Անտանտի հիւպատոսները: Նրանք պաշտօնապէս ֆինանսաւորում եւ աջակցում էին հայերին, ասորիներին եւ այլ կամաւորականներին զինուորական ստարոբաժանումներում հաւաքագրումը, զինումն ու վարժեցումը՝ անգլիացի սպաների հրամանատարութեան ներքոյ: Նոր զինուժը պաշտպանում էր տեղական բնակչութեանը եւ տեղեկանալով Թիֆլիսից բխող ազդակների մասին՝ ձգտում էր նեցուկ լինել կովկասեան մտայղացումներին: Սակայն Թաւրիզի զօրավար-նահանգապետը կտրականապէս դէմ էր զինուորներին վարժեցնելուն, իսկ հիւպատոսներին սպառնում էին սպանութեամբ⁴⁶:

Մեր տրամադրութեան տակ առկայ աղբիւրագիտական տուեալները հնարաւորութիւն չեն տալիս միանշանակ պնդելու, թէ ներկայացուած բողոքները արտայայտում էին բացառապէս Թեհրանի կենտրոնական կառավարութեան վերաբերմունքը կամ արդիւնք էին թուրք-գերմանական ազդեցութեան: Այդուհանդերձ, դրանք անկասկած թուլացնում էին Անտանտի արեւելեան դիրքերը: Ուստի, Լոնդոնից առաջարկուեց սատարել պարսկական անկախութեանը եւ նրա օգտին եռակողմ յայտարարութիւն անել: Փետրուարի 14ին Ուաշինգտընը պատասխանեց, թէ «Պարսկաստանի հարցում Մեծ Բրիտանիայի եւ Մ. Նահանգների զբաղեցրած դիրքերը միմեանցից շատ են տարբերում»⁴⁷, հետեւաբար, «տուեալ պահին, [նրանց համատեղ

յայտարարութիւնը] չի կարող ամենախելացի արարք համարուել»⁴⁸: ԱՄՆը գերադասեց չպարզաբանել սեփական մտադրութիւնները, չմիանալ իր խաղակիցներին ու որեւէ պարտականութիւն չստանձնել, պահպանելով քաղաքական գործունեութեան լիակատար ազատութիւնը:

Փետրուար 15ին Պետքարտուղարութիւնում Թիֆլիսից զեկուցագիր ստացան, թէ՛ Կովկասեան Ռազմաճակատի գլխաւոր հրամանատար Եւզենի Վ. Լեբեդինսկին եւ Անդրկովկասեան Կոմիսարիատը բողոք են ներկայացրել թուրք-պարսկական սահմանը Դաշնակից զինուժի եւ մասնաւոր անձանց առջեւ փակելու համար⁴⁹: Նրանք առաջարկեցին հիւպատոս Սմիթին միանալ իրենց դիմումին, քանի որ սահմանի փակումն արգելում էր Արեւմտեան Հայաստանում գործող ստորաբաժանումների ուժեղացումը եւ անհնարին էր դարձնում այդ գծի պաշտպանութիւնը ռուսական կամ հայ-ասորական ջոկատներով: Այս ստորաբաժանումների չէզոքացումն եւ արեւմտահայ նահանգներից կտրելու հանգամանքը թուլացնում էր նաեւ բրիտանացիների դիրքերը Բաղդադում: Ի պատասխան՝ Սմիթը նրանց խորհուրդ տուեց խոստանալ պարսիկ կառավարութեանը՝ կարգաւորել ռուսական կողմի հետ ունեցած ֆինանսական եւ մաքսային հարցերը: Նա յիշեցրեց որ 1918 Փետրուարի 10ին (Յունուարի 28ին) Բրեստում արտասանուած «ոչ պատերազմ, ոչ խաղաղութիւն» չարաքաստիկ յայտարարութիւնը եւ միեւնոյն ժամանակ բոլշեւիկների հրամանը՝ բանակը ցրելու եւ պատերազմը դադարեցնելու մասին՝ խիստ բացասական ազդեցութիւն են գործելու Կովկասեան Ռազմաճակատի ընդհանուր իրադրութեան վրայ⁵⁰:

Նոր տոմարով Փետրուարի 18ին, Թեհրանում ԱՄՆ դեսպանորդը Լեբեդինսկուց ստացաւ նոյնաբնոյթ միջնորդագիր: Պետական պաշտօնեաների հետ աշխատանքային զրոյցում պարզուեց, որ սահմանը փակուել է բոլոր զինձառայողների, ինչպէս նաեւ Կովկասում հաւաքագրուած հայերի առջեւ: Իր հերթին, դեսպանորդը պահանջեց կառավարական միջոցառումներ կատարել՝ հնարաւորինս ապահովելու երկրում բնակչութիւն հաստատած ամերիկացիների եւ այլ քրիստոնէաների կեանքի եւ սեփականութեան անվտանգութիւնը⁵¹: Պետքարտուղարութիւնը մտահոգուած էր տեղում

գերմանաթուրքական ազդեցութեամբ եւ փորձում էր հասկանալ, թէ կարելի՞ էր արդեօք հաւատալ պարսիկների խոստումներին ու դիմումներին:

1918 Մարտի 14ին, Ուաշինգտընը տեղեկացաւ բրիտանացիների՝ Թեհրանում ներկայացրած հայտի բովանդակութեան մասին, որով պարզուով էր թէ Լոնդոնում վճռական էին պաշտպանելու Անտանտի տերութիւնների հաւաքական շահերը: Բրիտանական այս ուղերձը պարսկական դահլիճին նշում էր, որ Բրիտանիան նոր զօրքեր է տեղադրելու երկրի հիւսիս-արեւմտեան, այսինքն՝ Հայաստանին սահմանակից մասում: Դրա փոխարէն Լոնդոնը ապահովում էր պատերազմից յետոյ գումարուելիք համագումարում Պարսկաստանի լիիրաւ տեղը, պայմանով, որ դրան հաւասարապէս հրաւիրելու էին այլ մարտերին չմասնակցած պետութիւնների եւս: Բրիտանացիները վճռական էին պահել իրենց ենթակայ հարաւպարսկական հրաձիգներին պատերազմից յետոյ եւս, սակայն այդ զինուորների՝ յետագայ խաղաղ պայմաններում օտար սպաներին ստորադասութիւնը, պէտք էր կարգաւորել առանձին մի համաձայնագրով⁵²:

Մարտի 21ին, լուսաբանութեան համար, Պետքարտուղարութիւնը մի շարք հարցեր յղեց Թեհրանում գործող իր դեսպանորդին, թէ.-

ա) հնարաւո՞ր էր արդեօք բրիտանական զօրքերի մուտքը Կովկաս:

բ) արդեօ՞ք նրանք պատրաստ էին պաշտպանելու հայերի եւ քրիստոնէյ ասորիների կէանքը:

գ) ո՞րն է այդ բանակի նպատակը Ադրբեջանում եւ ամբողջ Կովկասում:

դ) արդեօ՞ք բրիտանական զինուորների ժամանումը թելադրուած է անհրաժեշտութեամբ, եւ ի՞նչ են անելու այդ ուժերը, եթէ պարսկական կողմը միանայ գերմանա-թուրքական դաշինքին:

ե) ի՞նչ դիրքորոշում ունեն Ռեշտում գտնուող բոլշեւիկները. արդեօ՞ք նրանք դիմադրելու են բրիտանացիներին. հայերին ինչպէ՞ս են վերաբերում⁵³:

Հեռագիրը ուղարկելու յաջորդ իսկ օրը, Լանսինգը Կոնգրեսի՝ իրադրութեանը վերաբերող հարցումին ի պատասխան

յայտարարեց, թէ չի կարող Բրիտանիայի եւ Ֆրանսիայի դեսպաններին սեփական կարծիք յայտնել 1915-1916ի գաղտնի համաձայնագրերի վերաբերեալ: Նա գերադասում էր նաեւ այդ փաստաթղթերի մասին հարցեր չտալ եւրոպացի նշեալ դիւանագետներին:

Այնինչ նրա ելոյթի պահին Անտանտի ներկայացուցիչ-սպաները Ուրմիայի նահանգում զինել, վարժեցրել ու իրենց հրամանատարութեան տակ էին պահում 5-7,000 հայ եւ ասորի ռազմիկների: Բաղդադից եկած բրիտանական ստորաբաժանումները տեղաւորուեցին Քերմանշահում, Համադանում եւ անընդհատ համալրում էին: Նրանց հրամանատարները բացատրում էին ամերիկացիներին, որ չեն պատրաստում գրաւել Կովկասի նախաբեր հորերը, սակայն լուրջ մտահոգուած էին Պարսկաստանում հայերի անվտանգութեան հարցով: Թուրքի ՄՄՆ հիւպատոսը չէր հաւատում Պարսկաստանի՝ Ուաշինգտընի նկատմամբ տածած քաղաքական թշնամանքին, բայց միաժամանակ կարծում էր, որ տեղի հայ բնակչութիւնը լուրջ վտանգի մէջ էր⁵⁴:

Մինչեւ Ապրիլի սկիզբ Մ. Նահանգները վերջնականապէս չէր հրաժարում արեւմտահայ զօրամասի հանդերձաւորումից, սակայն 1918 Ապրիլի 3ին Լանսինգը յիշեցրեց գործընկերներին, թէ՛ իր երկիրը Թուրքիային պատերազմ չի յայտարարել եւ, հետեւաբար, իր կառավարութիւնը չի կարող բանակաշինութեան նպատակով դրամական միջոցներ յատկացնել⁵⁵: Եւ եթէ նախկինում ամերիկեան դանդաղկոտութիւնը կարելի էր որակել որպէս Բրիտանիային ձեռնտու ու նրա հետ համաձայնեցուած ձգձգումներ՝ միայն, ապա պարսկական կառավարութեան վարքագիծը՝ տարածաշրջանում առաջացրեց շահերի բախում ԱՄՆի եւ Դաշնակիցների միջեւ: Ուաշինգտընը դրամ չյատկացրեց հայերի զինման աշխատանքի համար: ԱՄՆի բարձր իշխանութիւնը գերադասեց չթշնամանալ Թուրքիայի հետ, չդժուարացնել նրա արշաւանքը դէպի Բաքու եւ սահմանափակուել Եւրոպայում ծաւալուած իր բանակի գործողութիւններով եւ մարդասիրական օգնութեամբ՝ ի նպաստ Մերձաւոր Արեւելքում եւ Անդրկովկասում, յատկապէս սեփական ոստանում իրենց իսկ կեանքի համար մարտնչող հայերի:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

1917-1918ի իրադարձությունները վկայում են, որ.-

ա) ԱՄՆի ռազմավարությունը տարբերում էր Անտանտի Տերությունների ընթացքից ու նպատակներից: Ու թեև քարոզիչներն ու հիւպատոսները հիմք էին ընդունում իրենց երկրի նախագահի՝ Արեւմտեան Հայաստանին վերաբերող պաշտօնական յայտարարությունները, ԱՄՆի քաղաքական վերնախաւը գերադասում էր հակասութեան մեջ չմտնել եւրոպացի դաշնակիցների եւ Ռուսաստանի հետ:

բ) Հայ ժողովրդի համար ինքնապաշտպանությունը պարտադիր գրաւական էր՝ խաղաղ գոյակցություն ապահովելու խնդրում: Զիջողական պահուածքը ընդունելի էր միջազգային համաձայնագրեր կնքելուց յետոյ միայն, եւ միանգամայն անօգուտ էր որպէս դիւանագիտական միջոց: Հայութեան՝ ծայր աստիճանի բարդ ու ծանր իրավիճակը, հասարակութեանը թելադրում էր գործել ինքնուրոյն, որպէս առաւելագոյնս կազմակերպուած ու քաղաքական առումով լիիրաւ հասարակություն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ H. A. Gibbons, *Armenia in the World War*, NY, American Committee opposed to the Lausanne Treaty, 1926, էջ 13:

² Papers Relating to the Foreign Relations of the United States, 1917, Suppl. 2 The World War, in 2 vols., vol. I. Wash., GPO, 1932, էջ 16-17, 120 (Paper Relating):

³ United States National Archives, Washington D.C., Record Group 59 General Records of the Department of State, class 763.72119/document 549 (այսուհետեւ՝ US NA):

⁴ Papers Relating, 1917, Suppl. 2 The World War, vol. I, էջ 73:

⁵ Այժմ՝ Թբիլիսի:

⁶ Ա. Մարմարեան, *Զօր. Անդրանիկ Եւ Իր Պատերազմները*, Կ.Պոլիս, Կիւթէնպէրկ, 1920, էջ 263-264. նաեւ՝ Ա. Ս. Նազարեան, *Հայկական Զօրամասերի Կազմաւորումը Կովկասեան Ճակատում (1914-1918 Թուականներ)*, Երեւան, Զանգակ-97, 1999, էջ 116-117. նաեւ՝ Հ. Այվազեան, «Զօրավար Անդրանիկ Եւ Յովհաննէս Թումանեան», Երեւան, Հայկական Հանրագիտարանի Հրատ., 2004, էջ 76. նաեւ՝ Գ. Կարինեան, *Ազգային Հերոս Զօր. Անդրանիկ Եւ Իր Պատերազմները*, Փարիզ, Յ. Թիւրպպեան, 1953, էջ 171-3:

⁷ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), Երեւան, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 51:

⁸ Papers Relating, 1917, Suppl. 2 The World War, vol. I, էջ 73:

⁹ Մարմարեան, էջ 285-288:

¹⁰ Ա. Միհրանեան, *Ի՛նչպէս Պէտք Է Գրաւել Թրքահայաստանը (Զօր. Անդրանիկի Կարծիքը)*, Կ. Պոլիս, Տպ. Ս. Տէր Սահակեան, 1921, էջ 7:

-
- ¹¹ A. O. Arutyunian, *Kavkazskii Front V 1914-1918gg.* (Կովկասեան ռազմաճակատը 1914-18ին), Երևան, Հայաստան Հրատ., 1971, էջ 271-274:
- ¹² Papers Relating, 1917, Suppl. 2 The World War, vol. I, էջ 791:
- ¹³ US NA, RG 59, 701.67m51/2/Encl: Մեթոդոլոգիական առումով այդ խոստումը բաւական խոցելի էր. շատ աւելի յարմար է սեփական երկիրը դիտարկել որպէս կապող օղակ ու համաշխարհային առետրի եւ այլ տեսակի համագործակցութեան տարածք:
- ¹⁴ US NA, RG 59, 763.72/6168:
- ¹⁵ *Ջորավար Անդրանիկի Կովկասեան Ճակատի Պատմական Օրագրութիւնը 1914-1917, Օրագրուած Ջորավարին Թիկնապահ Ջինուորէն*, Պոսթոն, Տպ. Պայքար, 1924, էջ 62-63. նաեւ՝ Կարինեան, էջ 173-74. նաեւ՝ Նազարեան, էջ 176:
- ¹⁶ US NA, RG 59, 763.72119/750:
- ¹⁷ Papers Relating, 1917, Suppl. 2 The World War, vol. I, էջ 270:
- ¹⁸ Նոյն, էջ 795-796:
- ¹⁹ Նոյն:
- ²⁰ Նոյն, էջ 295:
- ²¹ Նոյն, էջ 304:
- ²² US NA, RG 59, 761.00/11a:
- ²³ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 20 շրջ.:
- ²⁴ Նոյն, թ. 20-21:
- ²⁵ Նոյն, թ. 35 շրջ.-36:
- ²⁶ Նոյն, թ. 51-51 շրջ.:
- ²⁷ Նոյն, թ. 52 շրջ.:
- ²⁸ Papers Relating, 1918, Suppl. I The World War, in 2 vols., vol. I. Wash., GPO, 1933, էջ 895-897:
- ²⁹ Նոյն, էջ 908-910, 912:
- ³⁰ US NA, RG 59, 763.72119/1708; Papers Relating, 1917, Suppl. 2 The World War, vol. I, էջ 493-497, 499, 502:
- ³¹ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 78 շրջ., 79 շրջ.:
- ³² Նոյն, թ. 80-80 շրջ.:
- ³³ Նոյն, թ. 82-82 շրջ.:
- ³⁴ Գալուստ Ա. Գալոյեան, *Հայաստանը Եւ Մեծ Տէրութիւնները 1917-1923թթ.*, Երևան, Գիտութիւն Հրատ., 1999, էջ 20:
- ³⁵ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 141, թ. 91:
- ³⁶ Նոյն, թ. 93 շրջ.-95:
- ³⁷ Նոյն, թ. 99:
- ³⁸ Նոյն, թ. 100 շրջ.:
- ³⁹ Նոյն, թ. 102:
- ⁴⁰ Նոյն, թ. 102 շրջ.:
- ⁴¹ Նոյն, թ. 103 շրջ.:
- ⁴² US NA, RG 59, 763.72119/2618:
- ⁴³ Նոյն, 763.72111/6862:
- ⁴⁴ Նոյն:
- ⁴⁵ Նոյն, 763.72/8632:

-
- ⁴⁶ Papers Relating, 1918, Suppl. I The World War, vol. I, p. 899. Նաև՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 3-3 շրջ., 6:
- ⁴⁷ US NA, RG 59, 763.72/8741:
- ⁴⁸ Նոյն. նաև՝ Papers Relating, 1918, Suppl. I The World War, vol. I. էջ 81, 125:
- ⁴⁹ Կովկասում պարսկական գլխավոր հիւպատոսի ՀԱԽԻՆ ուղարկուած նամակը՝ սահմաններ փակելու մասին՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 17, թ. 2, նաև՝ թ. 4-4 շրջ.:
- ⁵⁰ US NA, RG 59, 763.72/8867:
- ⁵¹ Նոյն, 763.72/8900:
- ⁵² Papers Relating, 1918, Suppl. I The World War, vol. I, էջ 904:
- ⁵³ US NA, RG 59, 763.72111/6905:
- ⁵⁴ Papers Relating, 1918, Suppl. I The World War, vol. I, p. 904-905:
- ⁵⁵ *Armeniya V Dokumentakh Gosudarstvennogo Departamenta S.S.H.A. 1917-1920gg* (Հայաստանը ԱՄՆ Պետական դեպարտամենտի 1917-1920թթ. Փաստաթղթերում), կազմ. Է. անգլերէնից թարգմ. Գ. Գ. Մախմուրեան, Երևան, ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտի Հրատ., 2012, էջ 24, 22:

THE POLICIES OF THE US AND THE ALLIED POWERS REGARDING THE
DEFENSE OF WESTERN ARMENIA (1917-1918)
(SUMMARY)

GAYANE MAKHMOURIAN
ggmakhm@gmail.com

The ruined Western Armenia, which was transformed into a battleground between revolution-swept Russia and the Franco-British alliance on the one side and the Turko-German forces on the other, needed massive defense. The Armenians and their still unshaped national state with two councils representing the Western and Eastern Armenians, namely the National Council and the Western Armenian National Council, took difficult steps in establishing the national army and the Western Armenian regiment.

Consolidating its foothold in the region, the USA refrained from subjecting its steps and objectives to British interests. The US opted for attracting Persia's sympathy and made an effort to avoid deterioration of its relations with Turkey, which were officially antagonistic but in reality good neighborly relations. Concurrently Washington did not dare to fully replace Russia, as it expected the latter would restore itself, which would likely necessitate collaboration with Great Britain.

Armenian authorities hoped that Ottoman Turkey would respect the Brest Litovsk Agreement signed with Russia and would not move further into Armenian territories in the east. In fact this vain hope reduced the defensive vigor of the Armenians, who eventually lost the war.

The author argues that in similar critical war conditions it is essential to organize the army and state in a self-reliant fashion, as self-defense and promoting self-interest is the *sine qua non* for establishing peace and implementing treaties with neighbours.

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱԻԱՌԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱԼՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918-1921)

ԿԱՐԻՆԷ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
karine.aleksanyan@yahoo.com

ՄՈՒՏՔ

Հայոց դեմ գործուած Յեղասպանութեան 100րդ տարելիցի տարում հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման հարցը առանձնակի հնչեղութիւն է ստացել: Հայաստանի Հանրապետութիւնում եւ տարածաշրջանում ընթացող քաղաքական բարդ ու հակասական գործընթացների եւ Թուրքիայի ժխտողական քաղաքականութեան պայմաններում ցեղասպանութեան հարցին համահայկական մօտեցում որդեգրելը եւ, ընդհանրապէս, թուրքական երկդիմի քաղաքականութեանը դիմակայելը լուրջ մարտահրաւեր է համայն հայութեանը: Թուրքական վտանգն այսօր նոյնքան իրական է, որքան Ի. դարի սկզբին: Թուրքերն այսօր էլ շարունակում են ցեղասպանութիւնը՝ ժխտելով այն: Այժմ էլ Թուրքիան փորձում է խաբել միջազգային հանրութեանը, հանդէս գալ որպէս երկխօսութեան ունակ եւ լարուածութիւնների մեղմացման ձգտող երկիր (որը ողջունւում է միջազգային հանրութեան կողմից), իսկ հայերին ներկայացնել որպէս երկխօսութիւնից խուսափող եւ հակամարտութեան ձգտող կողմ: Եւ որ աւելի վտանգաւոր է՝ իր երկդիմի քաղաքականութեամբ փորձում է սեպ խրել Հայաստանի Հանրապետութիւն-Մփիոք յարաբերութիւններում:

Թուրքական վտանգին դիմակայելու եւ թուրքերի հետ տարուելիք քաղաքականութեան սկզբունքները մշակելու եւ ճշտելու անհրաժեշտութեամբ է պայմանաւորուած Արեւելեան Հայաստանի ամենահոծ հայկական բնակչութիւն ունեցող Ալեքսանդրապոլի Գաւառում 1918-1921ին՝ հայոց ցեղասպանութեան քաղաքականութիւնը վերջնագծին հասցնելու շրջանում, հայ-թուրքական յարաբերութիւնների գիտական ուսումնասիրութեան կարեւորութիւնը:

ՆԵՐԱԾԱԿԱՆ

1918-1921ին թուրքերը պատմական տարբեր իրավիճակներում գրաւել եւ համապատասխանաբար՝ վեցական ամսով ռազմակալել են Ալեքսանդրապոլի Գաւառը (1918 Մայիս 15-Դեկտեմբեր 4, 1920 Նոյեմբեր 7-1921 Ապրիլի 21): Այդ ընթացքում նրանք, շարունակելով հայոց ցեղասպանութեան իրենց քաղաքականութիւնը, ֆիզիկապէս ոչնչացրել են արեւելահայ բնակչութեան մի ստուար զանգուած, ամբողջովին թալանել եւ տնտեսապէս քայքայել Ալեքսանդրապոլի Գաւառը, ձեռնարկել ամէն քայլ՝ իրենց հարեւանութեամբ առաջացած հայկական պետութեանը զրկելու կենսունակ պետութիւն դառնալու հնարաւորութիւնից ու պայմաններից¹:

Հայոց նորագոյն պատմութեան մեծագոյն ողբերգութիւններից էին թերեւս թուրքերի ներխուժումների ժամանակ Ալեքսանդրապոլի Գաւառի հայ բնակչութեան մէջ առաջացած անօրինակ խուճապը, թուրքերի հետ համագործակցող տեղական իշխանութեան մարմինների գործունէութիւնը եւ իր դիւերիմ ու դարաւոր թշնամուն «աղուհացով» դիմաւորող հայ գիւղացին: Բնական է, որ հայ հասարակութեանը եւ պատմագրութեանը յուզող խնդիրներից պէտք է լինէին վերը նշուած իրադարձութիւնները: Ենթադրուում է, որ դրանք կը միացուէին տարիներ ի վեր հայ հասարակութեանը յուզող «Ինչո՞ւ ընկաւ Կարսը» հարցին: Սակայն որքան էլ տարօրինակ է, վերոյիշեալ հարցերը յաճախ անջատուում են ընդհանուր խնդրից եւ դիտուում որպէս առանձին, տեղական երեւոյթներ: Հայ պատմագիտական մտքի եւ հասարակական գիտակցութեան մէջ առկայ են ոչ-այնքան թուրքական ցեղասպան քաղաքականութեան եւ Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութեան ապրած ողբերգութեան պատճառների բացայայտման, որքան վերջինիս մեղադրելու միտումները: Աւելին, նշուած ժամանակաշրջանում հայ-թուրքական յարաբերութիւններին առնչուող հարցերը հայ պատմագիտութեան եւ հասարակական գիտակցութեան մէջ վերածուել են կարծրատիպերի: Հետեւաբար, մեր առաջ խնդիր ենք դրել, արխիւային նոր փաստաթղթեր շրջանառութեան դնելով, ձեռնամուխ լինել պատմական վերոյիշեալ ժամանակաշրջանում թուրք-հայկական յարաբերութիւնների ուսումնասիրութեանը:

1918-1921՝ Ալեքսանդրապոլի Գաւառի թուրքական զինակալման շրջանում թուրք-հայկական յարաբերութիւններն, իրենց հիմքում ունենալով թուրքական պետականօրէն մշակուած ցեղասպանութեան քաղաքականութեանը դիմակայող Ալեքսանդրապոլի Գաւառի հայ բնակչութեան պայքարն իր ֆիզիկական գոյութեան համար, պայմանաւորուած էին թուրքական ներխուժումներին նախորդող քաղաքական գործընթացներով, Արեւելեան Հայաստանում իրականացուած թուրքական ցեղասպանութեան քաղաքականութեան առանձնայատկութիւններով, ինչպէս նաեւ հայ բնակչութեան բարոյահոգեբանական իրավիճակով:

Նախ՝ 1918 Մայիսին հայ ժողովրդի բախտը տնօրինող կազմակերպութիւնները եւ պետական գործիչները, ստեղծուած միջազգային իրավիճակում չկարողանալով ճիշտ կողմնորոշուել եւ Արեւմտեան Հայաստանը կորցնելուց ու Արեւելեան Հայաստանի բանալին՝ Կարսը, թուրքերին զիջելուց յետոյ կանգնելով անկախութեան փաստի առաջ, Ալեքսանդրապոլի գրաւումը դարձրել են անխուսափելի իրողութիւն, ապա՝ 1920ին, հայոց նորանկախ պետութիւնը, հրաժարուելով Հայաստանի խորհրդայնացումից եւ միաժամանակ իրական ուժ չունենալով՝ կանգնեցնել թուրքական արշաւանքը, թուրքերին հնարաւորութիւն է ընձեռել օգտագործելու խորհրդայնացման խաղաքարտը եւ գրաւելու Ալեքսանդրապոլի Գաւառը: Ալեքսանդրապոլի Գաւառի հայ բնակչութիւնը ստիպուած է եղել դիմակայել թուրքական պետութեան յատուկ մշակուած ցեղասպան քաղաքականութեանը:

Հայ պատմագիտութեան մէջ բաւականին լուսաբանուած են այս իրադարձութիւններին նախորդող միջազգային դրութիւնը, թուրքական դիւանագիտութիւնը, թուրքական ցեղասպանութեան քաղաքականութեան շարունակականութիւնն Արեւելեան Հայաստանում եւ հայերի ինքնապաշտպանական կոնիւները²: Մասնաւորապէս, նորովի են մեկնաբանուած 1920ի հայ-ռուսական յարաբերութիւնները, Խորհրդային Ռուսաստանի արեւելեան քաղաքականութիւնը³: Չենք կարող չնշել յատկապէս պատմաբան Էդիկ Զօհրաբեանի արժեքաւոր աշխատութիւնը, որտեղ հեղինակը ոչ միայն նորովի է լուսաբանել Խորհրդային Ռուսաստանի քաղաքականութիւնը, այլեւ անդրադարձել թուրք-

հայկական պատերազմի հետ կապուած այլեւայլ հարցերին, այդ թում եւ Ալեքսանդրապոլի Գաւառում տեղի ունեցած իրադարձութիւններին⁴: Այս առումով հետաքրքիր է նաեւ պատմաբան Լենդրուշ Խուրշուդեանի աշխատութիւնը, որտեղ նա գնահատելով Խորհրդային Ռուսաստանի քաղաքականութիւնը, ուղղակիօրէն գրում է. «*Ռուսաստանը հանդէս էր գալիս ոչ թէ Հայաստանի պաշտպանութեամբ, այլ պարզապէս ցանկանում էր ժամանակ շահել Հայաստանը խաղաղ խորհրդայնացնելու համար*»⁵: Խուրշուդեանը, վերլուծելով թուրք-հայկական պատերազմի ժամանակ Ռուսաստանի որդեգրած քաղաքականութիւնը, ապացուցում էւ հիմնաւորում էր այն տեսակէտը, թէ Թուրքիան Հայաստանի վրայ յարձակուել է միայն Ռուսաստանի համաձայնութիւնը ստանալուց յետոյ: Նա նկատել է նաեւ որ խորհրդայնացման առումով Ռուսաստանին ձեռնտու էր, որ պատերազմական վիճակը շարունակուի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը ծնկի չէր եկել⁶: Ըստ Խուրշուդեանի Թուրքիան եւ Ռուսաստանը «*փոխհամաձայնեցուած գործողութիւններով իրականացնում էին Հայաստանի բաժանման նախապէս մշակուած ծրագիրը: Հայաստանը, հայ պետականութիւնը գոհաբերում էր Ռուսաստանի արեւելեան քաղաքականութեանը*»⁷:

Հայ պատմաբանները ներկայացրել են նաեւ Հայաստանի Հանրապետութեան պատմութիւնը Խորհրդային Ռուսաստանի եւ Անտանտի Տերութիւնների շահերի ոլորտում: Նրանց կողմից շրջանառութեան դրուած նոր փաստաթղթերը, օտարազգի պատմաբանների ուսումնասիրութիւնների, ամերիկեան եւ բրիտանական արխիւների արժէքաւոր նիւթերը մեզ հնարաւորութիւն են տալիս պատկերացում կազմել ԱՄՆի, Բրիտանիայի եւ Խորհրդային Ռուսաստանի հայկական հարցում վարած քաղաքականութեան մասին⁸:

1918-1920՝ Հայաստանի Հանրապետութեան քաղաքական պատմութեան, հայ-թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ արխիւային փաստաթղթերի ժողովածուներ են հրատարակուել, որոնք լոյս են սփռում բազմաթիւ հարցերի վրայ⁹:

Թւում էր, թէ այս ամենից յետոյ նորովի կը մեկնաբանուէին նաեւ այդ շրջանում Ալեքսանդրապոլի Գաւառում տեղի ունեցած իրադարձութիւնները, կը բացայայտուէին թուրքական ցեղասպան

քաղաքականութեան առանձնայատկութիւնները 1918-1921ին եւ կը ներկայացուէր հայ բնակչութեան ապրած ողբերգութիւնը եւ պայքարն իր ֆիզիկական գոյութեան համար:

Մինչդեռ հայ պատմաբանները, ուսումնասիրելով Ալեքսանդրապոլի Գաւառի 1918-1920ի թուրքական ռազմակալման շրջանում հայ-թուրքական յարաբերութիւնների առանձին դրուագներ, շարունակում են մեղադրել գաւառի բնակչութեանը թուրքերի դէմ չկռուելու, նրանց հետ համագործակցելու համար:

Մասնաւորապէս մեր պատմագիտութեան մէջ գրեթէ լուսաբանուած չէ 1918ի թուրքական ներխուժման ժամանակ Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութեան դիմադրական շարժումը, Ալեքսանդրապոլում տեղական իշխանութեան մարմինների ստեղծումը եւ գործունէութիւնը, եւ, ընդհանրապէս, այստեղ թուրքերի վարած քաղաքականութեան առանձնայատկութիւնները: Հայ պատմագիտական միտքն աւելի շատ կենտրոնացել է 1920ի իրադարձութիւնների վրայ: Ընդ որում, թէ՛ խորհրդային եւ թէ՛ դաշնակցական պատմագիտութիւնը դրանք դիտարկել է կուսակցական մտայնութեամբ փոխադարձաբար մեղադրելով միմեանց, շատ յաճախ նաեւ բնակչութեանը:

Հայ պատմաբանները, յենուելով 1921 Ապրիլի 5ին կայացած Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Ալեքսանդրապոլի Քաղաքային Առաջին Կոնֆերանսի կողմից արուած գնահատականի վրայ, Ալեքսանդրապոլի Յեղկոմի գործունէութիւնը համարում են Ալեքսանդրապոլի կոմունիստական կազմակերպութեան սխալը, թուրքամետ կողմնորոշման արդիւնք: Մասնաւորապէս, Խուրշուդեանը, ներկայացնելով Հայկոմկուսի Կենտկոմի դիրքորոշումը թուրք-հայկական պատերազմի վերաբերեալ, գրում է, որ Կենտկոմի այս դիրքորոշումը պաշտպանել եւ իրականացրել է միայն Կոմկուսի Ալեքսանդրապոլի Գաւառային Կոմիտէն, իսկ Հայաստանի միւս շրջաններում խօսք կարող է գնալ միայն առանձին կոմունիստների մասին, քանի որ Հայկոմկուսն այն ժամանակ շատ փոքրաթիւ էր եւ իր ետեւից լայն ժողովրդական գանգուածներ չէր տանում¹⁰: Զօհրաբեանը մերժելով հայ պատմագրութեան մէջ հաստատուած այն կարծիքը, որ հայոց

բանակը չի կոուել բոլշեիկեան պրոպագանդայի հետեւանքով, բացառութիւն է համարում Ալեքսանդրապոլի բոլշեիկների եւ քաղաքային ինքնավարութեան կողմից թուրքերին աղ ու հացով դիմաւորելու, ինչպէս նաեւ Ալեքսանդրապոլի Յեղկոմի ստեղծման եւ թուրքերի հետ համագործակցելու փաստը¹¹:

Աւելին, յետխորհրդային հայ պատմաբաններն, ընկնելով ծայրայեղութեան մէջ, հայ բոլշեիկներին՝ Հայաստանի խորհրդայնացմանն աջակցելու գործողութիւններն որակում են որպէս դաւաճանութիւն: Մասնաւորապէս Խուրշուդեանը, քննարկելով 1920ի Հայկոմկոուսի դիրքորոշումը այն որակում է որպէս «հինգերորդ շարասին»: Նա եզրակացնում է, որ «Հայ ժողովրդի պատմութեան այս օրհասական ժամանակահատուածում հայ բոլշեիկները ոչ միայն պառակտեցին ժողովրդի միասնութիւնը, հանդէս եկան հակապետական ապստամբութեամբ, այլեւ աջակցեցին Ռուսաստանի եւ Թուրքիայի նուաճողական քաղաքականութեանը, օգնեցին ռուսական բոլշեիկեան կայսրութեանը կործանելու՝ դժուարութեամբ ձեռք բերուած հայկական պետականութիւնը եւ խորհրդայնացնելու Հայաստանը: Հայ բոլշեիկները ողջունեցին նաեւ թուրքական զօրքերի մուտքը Հայաստան, աջակցեցին նրանց: Հայ բոլշեիկներին քաղաքականութիւնը միանշանակ կարող է գնահատուել որպէս ազգային դաւաճանութիւն»¹²: Բնականաբար սա վերաբերում էր յատկապէս Ալեքսանդրապոլի բոլշեիկներին, որոնք այստեղ հռչակել էին խորհրդային իշխանութիւն:

Թէեւ Ալեքսանդրապոլը գրաւուել է թուրքերի կողմից Նոյեմբերի 7ի՝ թուրքական արեւելեան բանակի հրամանատար Քեազիմ Կարաբեքիր փաշայի եւ հայկական կողմի միջեւ կնքուած զինադադարի պայմաններով, հայ պատմագիտական գրականութեան մէջ շարունակում է իշխել այն տեսակետը, թէ Ալեքսանդրապոլի անկումը ստիպել է Հայաստանի կառավարութեանը ընդունել թուրքերի կողմից առաջարկուած զինադադարի պայմանները¹³:

Այնուամենայնիւ, հարկ է նշել, որ վերջին տարիներին հայ պատմաբանները փորձել են նորովի մեկնաբանել 1918-1920ի թուրք-հայկական պատերազմների հետ կապուած որոշ հարցեր: Մասնաւորապէս, մերժելով Ալեքսանդրապոլի Գաւառի

բնակչութեան չկռուելու միտքը, 1918 մայիսեան հերոսամարտերի շարքում առանձնացուել է նաեւ Շիրակի գոյամարտը, որին կարելոք տեղ է յատկացուել Սարդարապատի ճակատամարտում հայերի յաղթանակի գործում¹⁴:

Ղարաքիլիսայի ճակատամարտի վերաբերեալ փաստաթղթերի հաւաքածուի մէջ բազմաթիւ փաստաթղթեր վկայում են, որ Ղարաքիլիսայի ճակատամարտին մեծ մասնակցութիւն են ունեցել հազարաւոր գաղթականներ, ինչպէս արեւմտահայ, այնպէս էլ Ալեքսանդրապոլի Գաւառից փախած բնակիչներ, որոնք Ղարաքիլիսայում կեանքի ու մահուան կռիւ են տուել թուրք ջարդարարներին եւ յամառ դիմադրութիւնից յետոյ միայն ընկրկել իրենց թուապէս գերազանցող թուրքական ուժին¹⁵:

Սակայն այս միտքը դեռ չի ամրապնդուել պատմագիտութեան եւ հասարակական գիտակցութեան մէջ, որտեղ աւելի շատ տիրող է թուրքերի դէմ չկռուելու, նրանց աղ ու հացով դիմաւորելու եւ լուռ ու մունջ մորթուելու վերաբերեալ մտայնութիւնը: Ընդ որում ընդգծուում է աւելի քիչ թուով թուրքերի առկայութեան փաստը: Հայ պատմագիտական մտքի մէջ առկայ այս շատ վտանգաւոր մտայնութիւնը նաեւ լայն հասարակական հնչեղութիւն է ստացել: Հասարակական շրջանակներում յաճախ անհարկի դաւաճանութեան մէջ են մեղադրուում առանձին կուսակցութիւններ, քաղաքական գործիչներ, անհատներ:

Հայ հասարակական մտքի մէջ շատ ամուր է նստած յատկապէս Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութեան կողմից թուրքերին աղ ու հացով դիմաւորելու, թուրքերի դէմ չկռուելու եւ նրանց հետ համագործակցելու եւ ընդհանրապէս, առանց դիմադրութեան մորթուելու մասին պատկերացումները: Մասնաւորապէս Վլադիմիր Յովհաննիսեանն իր յիշողութիւններում ներկայացնելով գերութեան քշուող իր պապի ստորացուցիչ վիճակը, գրում է.

1920 թուականի աշնան վերջին ամսուայ ցեխոտ, անձրեւաձնախառը խոնաւ մի առաւօտ հօրս գիւղի «ժամի հայաթը» թուրքերը բերել-հաւաքել էին Թուրքիա գերութեան քշուող, Շիրակի գաւառից գերեվարուած հայ տղամարդկանց հերթական խմբաքանակը: Սպանդի քշելուց առաջ երէկուայ զինուորներին, մաճկալներին ու արհեստաւորներին հնարաւորութիւն էր տրուել վերջին հրաժեշտը տալ իրենց ընտանիքներին ու

հարազատներին: Գերի հայ տղամարդիկ բոլորը ծնկաչոք են եղել, ձեռքերը մէջքների ետևը, գլուխները կախ, հայեացքները գետնին: Առանց գլուխը բարձրացնելու, կողքերը նայելու իրաւունքի: Այդ գլուխը կախ չոքած հայ տղամարդկանցից մէկը եղել է իմ հորական պապը՝ հորս հայրը: Սեփական Աստծոյ Տան դիմաց, նոյեմբերեան ցրտին միայն ներքնագգեստով ու բոբիկ, ցեխի մէջ չոքած, նսեմացուած ու տրորուած, ոչնչացման ենթակայ, ու նման գալիքի հետ համակերպուած ու պատրաստ միանգամայն առողջ տղամարդկանց այդ խմբի մէջ, որոնց կախած գլխներին տեղում էր աշնան թաց ձիւնն ու անձրեւը, հայրս ճանաչում է իր հորը: Ու ձայն է տալիս: Ճշում է, գոռում: Պապս չոքած տեղում ցնցում է, բայց ձեռքերը մէջքի ետևից չի շարժում, գլուխը վեր չի բարձրացնում, որեւիցէ ձայն չի հանում: Հայրս հիւանդանում է, մի շաբաթ-տաս օր ընկնում է տենդի մէջ: Ու դրանից յետոյ ամէն աշնան այդ օրերին նա հիւանդանում էր... Թէ՛ փոքր տարիքիս, թէ՛ յետոյ, այդ ամբողջ պատմութեան մէջ ամէնից շատ խիղճս տալիս էր հորս: Իրաւաբանական լեզուով ասած, նրան ես ընդունում ու ընկալում էի ոչ թէ որպէս «տուժողի իրաւայաջորդ», այլ հենց որպէս «տուժող կողմ»: Կողմ, որը տուժող է թէ՛ թշնամու, ագրեսորի գործողութիւններից, թէ՛ թշնամուն դիմադրութիւն չցուցաբերած եւ անձնատուր եղած հսկայակազմ իր հօր կողմից¹⁶:

Հայ պատմագիտութեան մէջ քաղաքացիութիւն ստացած կարծիքը թուրքական ցեղասպան քաղաքականութեանը գոհ գնացած հայ բնաչութեանը մեղադրելու վերաբերեալ հասարակական հնչեղութիւն է ստացել: Իր որդու կեանքը փրկած զինուորականը մեղադրուում է վախկոտութեան մէջ: Միանշանակ է, որ հայրը այդ պահին փրկել էր իր որդու կեանքը: Մինչդեռ այս եւ անձնապաշտպանութեան բազմաթիւ այլ դէպքեր, որոնք պատմում են թուրքական բռնութիւնները վերապրածները եւ նրանց ժառանգները վկայում են Ալեքսանդրապոլի Գաւառի հայ բնակչութեան դիմադրական շարժման մասին¹⁷:

Արձանագրելով, մի կողմից թուրքական բռնագաւթումներին նախորդած միջազգային դրութեան հետեւանքով անխուսափելի դարձած Կարսի եւ Ալեքսանդրապոլի անկումը, հայ բնակչութեանը դիմադրական կարողութիւններից զրկելու եւ ֆիզիկապէս ոչնչացնելու թուրքական քաղաքականութիւնը, միւս

կողմից՝ անօգնական վիճակում յայտնուած հայ բնակչութեան անձնապաշտպանութիւնը որակում է որպէս դասայրութիւն, դաւաճանութիւն, վախկոտութիւն: Ընդ որում ժամանակակիցների կողմից դրանք այլ գնահատականներ ունէին: 1921ին Յակոբ Տէր Յակոբեանը ներկայացնելով 1920 Նոյեմբերի 11ից յետոյ հայկական բանակի նահանջի եւ թուրքական զօրքերի առաջխաղացմամբ ստեղծուած իրավիճակը, գրում է. *«Կացութիւնը օրէ օր աւելի սպառնալից կը դառնար եւ հայ ժողովրդի մէջ առաջ կու գար կոտորածի, աւերածութեան մղձաւանջը, զոր կը սպասէին քեմալականներէն եւ որու պատճառով ալ կը հեռանային այն վայրերէն ուր կը բնակէին: Կացութիւնը պարզ էր: Թուրքերը յաղթական էին: Երկրի ներսը յուսահատութիւն կը տիրէր»¹⁸:*

Յետագայում, 1930ականներին, երբ թուրքական վտանգն արդէն չկար, այդ որակումները օգտագործուում են Կոմունիստական Կուսակցութեան կողմից իրականացուող քաղաքական բռնաճնշումներն արդարացնելու համար: Բռնաճնշումների ենթարկուածների մեղադրանքների մէջ յատուկ տեղ ունէին թուրքական բռնագաւթումների շրջանում թուրքերի հետ ունեցած յարաբերութիւնները:

Մինչդէռ կարծում ենք նշուած ժամանակաշրջանում թուրքերի կողմից բռնակալուած հայկական շրջաններում տեղի ունեցած իրադարձութիւնները եւ թուրք-հայկական յարաբերութիւնները վերլուծելիս առաջին հերթին պէտք է նկատի ունենալ թուրքական ցեղասպանութեան իրականացման հետեւանքով ստեղծուած բարոյսահոգեբանական մթնոլորտը, բռնագաւթումներին նախորդող միջազգային իրավիճակը եւ արեւելահայութեանը բնաջնջելու թուրքական յատուկ մշակուած քաղաքականութեան առկայութիւնը: Մանաւանդ, որ հայկական պետութեան, Սփիւռքի, մասնաւորապէս, Մերձաւոր Արեւելքի հայկական գաղթօջախների եւ Արցախի հայութեան դէմ այսօր կիրառուող թուրքական քաղաքականութեան շատ տարրեր վերցուած են 1918-1921ի թուրքական դիւանագիտական զինանոցից:

ԱՐԵՒԵԼԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին Արեւելեան Հայաստանի ամենահոծ հայկական բնակչութիւն ունեցող Ալեքսանդրապոլի Գաւառը (1916ին այստեղ բնակւում էին 227,115 մարդ, որից հայեր էին 202,505ը, Ալեքսանդրապոլ քաղաքում ապրում էին 51,874 մարդ, որից հայեր էին 45,646ը) ապաստան էր դարձել եղեռնից մազապուրծ հազարաւոր արեւմտահայ գաղթականների¹⁹: Ալեքսանդրապոլի Գաւառ էին գաղթել ոչ միայն Արեւմտեան Հայաստանից, այլ նաեւ Մարիդամիշի, Օլթիի, Կարսի, Արդահանի եւ նրա շրջանի հայ գիւղերի բնակիչներ: 1915 Հոկտեմբերին Ալեքսանդրապոլի Գաւառում գաղթականների թիւը հասնում էր արդէն 22,815ի, որից 6844ը՝ Ալեքսանդրապոլ քաղաքում²⁰:

1917ին միայն Ալեքսանդրապոլի Եղբայրական Օգնութեան Խնամակալութեան տակ գտնւում էին 25,754 գաղթական²¹: Բազմաթիւ որբեր գտնւում էին այստեղ ստեղծուած ութ որբանոցների խնամակալութեան տակ²²:

Պատահական չէր, որ արեւմտահայութեանը եղեռնի ենթարկելուց յետոյ 1918-1921ին թուրքերն իրականացնում են արեւելահայ այդ խոշոր հատուածի բնաջնջումը: Այն հայերի նկատմամբ իրականացուող եղեռնի քաղաքականութեան եզրափակիչ գործողութիւնը պիտի լինէր:

Դեռեւս 1915ի վերջին Բարձր Դռան եւ մի քանի կովկասցի մուսուլմանների կողմից Ստամբուլում առաջ էր քաշուել Թուրքիայի հովանաւորութեամբ իբր անկախ, քաղաքականապէս միաւորուած, առանց ազգային եւ դաւանական խտրականութեան Կովկասի ստեղծման գաղափարը²³: Իսկ Առաջին Համաշխարհային Պատերազմի մէջ մտնելու կապակցութեամբ երիտթուրքերի կուսակցութեան գլխաւոր վարչութիւնը յայտարարել էր. «*Թուրքիան իր ազգային ծրագիրը մշտնջենապէս ապահովելու համար պէտք է սահմանները տարածի մինչեւ Կովկասեան լեռնաշղթան եւ տիրի Դերբենդի անցքին: Առանց այդ սահմանների Թուրքիան միշտ ենթակայ կը լինի Մոսկովեան ռոնձգութիւններին*»²⁴:

Թուրքական այս ծրագրերի իրականացման համար նպաստաւոր պայմաններ էին ստեղծուած Հոկտեմբերեան

Յեղաշրջումից²⁵ յետոյ, երբ ռուսական զօրքերի կազմալուծման արդիւնքում ռուս-թուրքական կովկասեան ճակատը բաց էր մնում թուրքերի առաջ: Վերջիններս յայտարարելով, որ կը շարունակեն ռազմական գործողութիւնները մինչեւ ռուսական զօրքերին հանդիպելը, անարգել շարժում են առաջ, ի վերջոյ կնքում Բրեստ-Լիտովսկի Պայմանագիրը²⁶:

Նորաստեղծ անդրկովկասեան իշխանութիւնները չեն կարողանում կազմակերպել երկրամասի պաշտպանութիւնը թուրքական յարձակումներից, առաւել էւս՝ թուրքական դիւանագիտական խաղերից:

1918ի սկզբներին թուրքերը գրաւելով Արեւմտեան Հայաստանը՝ միաժամանակ հաշտութեան բանակցութիւնների առաջարկներով թուլացնում են Անդրկովկասի ժողովուրդների դիմադրական կորովը, երկպառակութիւն գցում նրանց միջեւ: Այնուհետեւ դիւանագիտական խարդաւանքներով Կարսը գրաւելուց յետոյ տպաւորութիւն են ստեղծում, թէ այլեւս չեն առաջանայ, բթացնում հայոց զօրքի եւ բնակչութեան զօնութիւնը, ապա յանկարծակի յարձակումով գրաւում Ալեքսանդրապոլը:

Հայ զինուորների եւ բնակչութեան յուսալքմանը մեծապէս նպաստում են Բրեստ-Լիտովսկի Պայմանագրի ընդունումը եւ առանց կռուի Կարսի յանձնումը թուրքերին:

Դեռեւս Ապրիլի 6ին Անդրկովկասի Սէյմի եւ կառավարութեան հայ անդամների, Ազգային Խորհրդի, կուսակցութիւնների ներկայացուցիչների, Երեւանի եւ Կարսի նահանգական կոմիտէների եւ ազգային խորհուրդների լիազօրների Ալեքսանդրապոլում կայացած խորհրդակցութեան ժամանակ Խաչատուր Կարճիկեանը²⁷, դէմ լինելով Բրեստ-Լիտովսկի Պայմանագրի²⁸ ընդունմանը եւ պատերազմի դադարեցմանը, իրաւացիօրէն նշում էր. «Պատմական ամենախոշոր եւ ճակատագրական սխալը կատարած պէտք է լինենք, եթէ հիմա ընդունենք Բրեստի դաշնագիրը ու այդպիսով դադարեցնենք պատերազմը: Նախ եւ առաջ այդ մեզ չի ազատելու ու ապահովելու Տաճկաստանի առաջխաղացումից ու Անդրկովկասի լիովին գրաւումից: Հակառակ այն բոլոր հաւաստիացումներին, որ արել են տաճիկները, Կովկասի գրաւումը հանդիսանում է մի քաղաքական ծրագիր եւ անհրաժեշտութիւն Տաճկաստանի համար: Բաթումի եւ Կարսի գրաւումը առաջին էտապն է,

դիրացնելու այդ: Ինձ թուում է, որ այն բոլորին, երբ յայտարարուեց, որ խաղաղությունը կնքուած է, որ սահմանները որոշուած են, տիրելու է սոսկալի հոգեկան ռեակցիա, որը կը յաջորդի չորս տարուայ յոգնածութեանը: Ոչ միայն կը չքանայ ռզեւորութիւնը, կռուելու ու պաշտպանուելու ձգտումը, որը նկատուում է այժմ եւ ձեռք է բերուած երկար փորձութիւններէից յետոյ, այլեւ ամբողջ բանակը կը հալուի ու ոչ մի զինուոր չի մնայ զենքի տակ: Կասկածից դուրս է, որ դաշնագիրը ընդունելու օրից փաստօրէն զինաթափ են լինելու ու լուծուելու են մեր զինուորական ուժերը եւ բացելու ենք բոլոր դռները Տաճկաստանի առաջ»²⁹:

Վերլուծելով ստեղծուած վիճակը, Կարճիկեանը եզրակացնում է, որ ամէն պարագայում հայերը պետք է շարունակեն կռիւը եւ երբեք չպետք է կամովին տան իրենց դիրքերն ու ամրութիւնները: Եթէ անգամ այդ կռիւը լինի միանգամայն անյոյս եւ հետեւանքը պարզ, այնուամենայնիւ հայերը չեն կարող զիտակցաբար զենքը վայր դնել: Պատերազմը դադարեցնելը հայերի համար ինքնասպանութեան նշանակութիւն ունի: Իսկ հայերի անվերջ տատանումները եւ հասարակական զանազան խմբակցութիւնների ու մարմինների քարոզչութիւնը յօգուտ Բրեստի Պայմանագրի, մեծապէս թուլացնում է հայերի դիմադրական ուժը, անվստահութիւն ներշնչում հայ կռուողներին եւ կազմալուծում առաջ բերում թիկունքում: Վճռականապէս պետք է որոշել եւ ցուցադրել, որ կռիւը շարունակուելու է եւ որ անյոյս մի կռիւ չէ, որը անվիճելի կերպով տանում է հայերին դէպի կորուստ³⁰:

Ինչ վերաբերում է հայ քաղաքական գործիչների մեծամասնութեանը, ապա նրանք չգիտես ինչու վստահ էին եւ յոյս ունէին, թէ թուրքերը սահմանը չեն անցնի, իսկ եթէ անցնեն էլ, իրենք կարող են երկիրը պաշտպանել³¹: Մասնաւորապէս, անդրկովկասեան կառավարութեան պատուիրակութեան հայ ներկայացուցիչներ Ալեքսանդր Խատիսեանը եւ Յովհաննէս Քաջազունին, Տրապիզոնի բանակցութիւններում թուրքերի խոստումներին հաւատալով, Ալեքսանդրապոլի արտակարգ խորհրդակցութեան ժամանակ փորձում էին համոզել քաղաքական կուսակցութիւններին եւ ժողովրդական զանգուածներին Բրեստ-Լիտովսկի Պայմանագրի ընդունման անհրաժեշտութիւնը, այն համարելով չարիքներից փոքրագոյնը³²:

Անդրկովկասեան իշխանութիւնների պարտուողական քաղաքականութիւնը աղետալի հետեւանքներ է ունենում հայ ժողովրդին համար: Մինչ Ալեքսանդրապոլի խորհրդակցութեան մասնակիցները որոշում են բոլոր ազգային կուսակցութիւնների համար պարտադիր համարել մինչեւ 45 տարեկան հասակը զենքի կոչել բոլոր զենք կրելու ընդունակ հայերին՝ պարտաւորեցնելով ամէն մի գիւղական եւ քաղաքային համայնքի տալ որոշ քանակութեամբ փամփուշտ եւ հագուստ իրենց զինակոչիկներին, ամէն կերպ բարձրացնել ժողովրդի մարտական ոգին, Անդրկովկասի կառավարութիւնը հռչակում է անկախութիւնը, ընդունում Բրեստ-Լիտովսկի Պայմանագիրը եւ պատուիրակութիւն կազմում նոր բանակցութիւնների համար:

Բրեստ-Լիտովսկի Պայմանագրի ընդունումից եւ Կարսի յանձնումից յետոյ յոյս ունենալով, որ Բաթումում բանակցութիւնները կը շարունակուեն Տրապիզոնի սկզբունքներով, հայոց պատուիրակութեան ներկայացուցիչներ Քաջազունին եւ Խատիսեանը, Մայիսի 11ին յանկարծակիի են գալիս թուրքերի նոր, ծանր պահանջներից եւ իրենց համար տխուր եզրակացութիւն անում. «... Դուրս է գալիս, որ մենք եղել ենք խաբուած եւ ինքներս ակամայ խաբել ենք մեր ժողովրդին, հաւատալով, որ թուրքերը իրենց պահանջներում Բրեստից այն կողմ չեն անցնի»³³:

Մայիսի 13ին թուրքերի հետ մասնաւոր հանդիպման ժամանակ Խատիսեանն ընդգծում է, որ պահանջուող տարածքի զիջումը թուրքերին միանգամայն անընդունելի է, թէ՛ Անդրկովկասի եւ թէ՛ հայերի տեսանկիւնից՝ յատկապէս: Սակայն թուրքերը, շարունակելով դիւանագիտական խաղերը, մեղադրում են Անդրկովկասի իշխանութիւններին Տրապիզոնում պայմանագիր չկնքելու եւ պատերազմը շարունակելու համար, որի պատճառով էլ իբր իրենք ստիպուած են եղել խախտել Բրեստի Պայմանագիրը: Թուրքերը գտնում են, որ իրենք չեն կարող սահմանափակուել Բրեստի Պայմանագրով եւ պետք է ստանան լրացուցիչ փախհատուցում, քանի որ Տրապիզոնից անդրկովկասեան պատուիրակութեան հեռանալուց յետոյ իրենք ստիպուած արին են թափել³⁴:

Երեւանի Նահանգի պատկառելի մասի նկատմամբ թուրքական պահանջների շարժառիթներում գլխաւոր պատճառը

օսման են նախարարը համարում է Կովկասից եկող լուրերը՝ Բաքուում եւ Երեւանի Նահանգում մուսուլմանների նկատմամբ հայերի բռնութեան վերաբերեալ, որն իբր սաստիկ զայրացրել է Թուրքիայի հասարակութեանը:

Այնուհետեւ Հալիլ փաշան, դիմելով թուրքական դիւանագիտական զինանոցի իւրայատուկ հնարքներից մէկին, փորձում է ցոյց տալ իր «սրտակից» մօտեցումը հայերին: Դիւանագիտական այդ խաղի էութիւնն այն է, որ իբր երիտթուրքերի կուսակցութիւնում կայ երկու հոսանք՝ քիչ անհաշտ եւ՝ առաւել անհաշտ: Ամենավերջին պահին յաղթելու է երկրորդ հոսանքը, նա պնդելու է թուրքական նախագծի համեմատ նոր սահմաններ գծելու վրայ: Ինքը Հալիլը շատ վաղուց իր վրայ վերցնելով հայերի եւ թուրքերի միջեւ հաշտարարի դերը, այնքան էլ չի համակրել այդ նախագիծը, սակայն անուժ է գտնուել փոխելու այն, ինչպէս անուժ է այդ անելու այժմ: Ինքն իրեն արդէն թոյլ է տուել տրուած հրահանգից անելու մէկ խոշոր խախտում, իրեն հրամայուած էր պահանջը ներկայացնել վերջնագրի ձեւով, սակայն այդ չի արել եւ սահմանափակուել է միայն նախագգուշացումով³⁵:

Այնուհետեւ շարունակելով դիւանագիտական ճնշումը, Հալիլը դնում է երկու հարց: Նախ՝ հայերը Կովկասում պէտք է դադարեցնեն մուսուլմանների դէմ բռնութիւնները եւ «ապացուցեն», որ խելօքացել են, եւ երկրորդ՝ հնարաւորութիւն տան թուրքերին շուտափոյթ օգտագործել երկաթուղին՝ զօրքերը Պարսկաստան տեղափոխելու եւ Թաւրիզը հնարաւորինս շուտ անգլիացիներից գրաւելու համար: Իսկ երբ հայ պատուիրակները դնում են նախ՝ Բրեստ-Լիտովսկի Պայմանների ճանաչումը եւ սահմանների հարցի լուծումը, ապա Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով անցնելու թոյլտուութիւն տալու հարցը, Հալիլը ձեռնամուխ է լինում թուրքական դիւանագիտական հերթական միջոցին՝ սպառնալիքին: Նա յայտարարում է, որ վախենում է, որ եթէ ինքը Բրեստ-Լիտովսկի ճանաչման հարցով դիմի Կ. Պոլսին, ապա նրանք կը պահանջեն իրենից վերջնագրի ձեւով եւ՝ տարածքները զիջեն եւ՝ թոյլտուութիւն տան անցնելու: Բրիտանական առաջ շարժուող զօրքին դիմակայելու կարճ ճանապարհը Ջուլֆա-Թաւրիզ երկաթուղին է եւ ինքը ունի էնվեր փաշայի հրամանը շտապ գրաւել այդ գիծը³⁶:

Մեծ վտանգ տեսնելով թուրքական ծրագրերում՝ հայ պատուիրակները համաձայնություն չեն տալիս թուրքական զորքերի անցմանը³⁷: Մայիսի 14ին Չիսենկելին Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Լոսովի հետ համաձայնութեան է գալիս, որ կը թոյլատրուի թուրքական զորքերի անցումը, եթէ Գերմանիան երաշխաւորի Բրեստ-Լիտովսկի Պայմանագիրը: Սակայն դիւանագիտական եւ ռազմական յաղթանակն ապահոված Թուրքիայի համար արդէն կարեւոր չէր ո՛չ անդրկովկասեան իշխանութիւնների, ո՛չ նոյնիսկ իրենց դաշնակից Գերմանիայի, եւ առաւել եւս՝ հայերի կարծիքը: Թուրքական հրամանատարութեան ծանուցումն Անդրկովկասեան Հանրապետութեան տարածքով օսմանեան զօրքի անցման մասին անդրկովկասեան պատուիրակութիւնը ստանում է միայն Մայիսի 15ի առաւօտեան, երբ թուրքական զօրքերն արդէն մտել էին Ալեքսանդրապոլ:

Այս ամէնից անտեղեակ Ալեքսանդրապոլի բնակիչները, որոնք վստահ էին, որ Կարսի գրաւումից յետոյ թուրքերը չեն առաջանայ, թուրքական յանկարծակի յարձակումից ահաւոր եւ աննկարագրելի խուճապի են մատնուում: Փաստօրէն թուրքերը ոչ միայն հայ քաղաքական գործիչներին են մոլորութեան մէջ գցել, այլ նաեւ բնակչութանը եւ զօրքին: Վերջիններիս զօնութիւնը եւ դիմադրական կարողութիւնները թուլացնելու նպատակով նախապէս քաղաքում լուրեր են տարածում, որ իբր թուրքական զօրքերին հրամայուած է ետ քաշուել մինչեւ Սարիղամիշ, այնուհետեւ Մայիսի 14ին ետ են քաշել զօրքերը՝ մեծ ոգեւորութիւն առաջացնելով ժողովրդի եւ զօրքի մէջ: Այս ոգեւորութեանը յաջորդում է Մայիսի 15ի առաւօտեան թուրքերի անսպասելի յարձակումը քաղաքի վրայ: Քնից նոր արթնացած եւ յանկարծակիի եկած ժողովուրդը ընկնում է աննկարագրելի խուճապի մէջ: Յանկարծակիի եկած բնակիչները ոչինչ չվերցնելով իրենց հետ, փախչում են քաղաքից դէպի Ղարաքիլիսա: *«Թնդանօթի առաջին ռումբը տրաքելուց յետոյ,- գրում է Ալեքսանդրապոլի թեմի առաջնորդական փոխանորդ Արտակ վարդապետը՝ «Մի Պատմական Էջ Տաճիկների Կողմից Ալեքսանդրապոլը Գրաւելու Վերաբերեալ» յուշագրութեան մէջ,- ժողովուրդը մնաց շշմած դրութեան մէջ, երբ դորան յաջորդեցին երկրորդը, երրորդը եւ լուր տարածուեց, տաճիկները քաղաք են մտնում, էլ ով կարող է ասել, թէ ինչ էր կատարուում քաղաքում:*

Ժողովուրդը այնպիսի սարսափի ենթարկուեց, որ ինչպէս ասում են մայրն իր երեխային մոռացաւ: Ամբողջ ժողովուրդը փողոցում էր, մի գոռուն, գոչին, մի լաց, ամէնքը վազում են դէպի կայարան, դէպի Ջաջուռ: Ով կարող էր կառքով, ով կարող էր ֆուրգոնով, սայլով, ոտքով, բոլորն էլ կամ երեխի ձեռքը բռնած շտապում էին կայարան, առանց հասկանալու ետ ու առաջ էին վազում, կին, մարդ, երեխայ խառնուել էին միմեանց հետ: Զինուորներն էլ հրացանները ուսերին, ամէնքն էլ կնոջ կամ երեխի ձեռքը բռնած շտապում էին դէպի կայարան կամ Ջաջուռի շոստով (խճուղի – Կ.Ա.) դէպի Փամբակ գնում: Ով կարող էր երկայթուղով դէպի Երեւան կամ Ղարաքիլիսա, ով չէ՝ կառքով, սայլով կամ ֆուրգոնով կամ ոտքով դէպի Ղարաքիլիսա էին շտապում: Մնացած ամբոյն էլ խառնիխուռն դէպի սարերն էին բարձրանում: Մի ժամուայ մէջ համարեա ամբողջ քաղաքը դատարկուեց»³⁸:

Փաստօրէն Ալեքսանդրապոլի բնակչութեան մէջ առաջացած անօրինակ խուճապը հիմնականում պայմանաւորուած էր թուրքերի յանկարծակի յարձակմամբ եւ բնակչութեան անտեղեակութեամբ:

Բացի վերը նշուածներից Ալեքսանդրապոլի Գաւառում առաջացած անօրինակ խուճապին նպաստող հիմնական գործօններից մէկը թերեւս մեծաթիւ գաղթականութեան արկայութիւնն էր այստեղ եւ բարոյահոգեբանական այն մթնոլորտը, որ ստեղծուել էր թուրքական ցեղասպան քաղաքականութեան հետեւանքով³⁹:

Եղեռնից մազապուրծ հազարաւոր արեւմտահայ գաղթականներին ապաստան տուած եւ նրանց տառապանքներին ակնաստես Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութիւնը չէր կարող հոգեբանօրէն ազդուած չլինել դրանից: Ժամանակի հասարակական գիտակցութեան մէջ թուրքն ընկալուում էր որպէս ցեղասպան, հետեւաբար հասարակութեան կողմից ընդունելի էր ամէն կերպ թուրքական բռնութիւններից փրկուելու միտքը: Այս տրամադրութիւններն աւելի զգալի էին գաղթականների շրջանում, որոնք, լաւ իմանալով թուրքերի գազանութիւնների մասին, առաջինն էին փախչում: Մանաւանդ որ թուրքերը նախապէս յայտարարում էին, որ իրենք խաղաղ բնակչութեանը չեն վնասի, այլ միայն գաղթականներին եւ դաշնակցականներին, որոնք իբր

թէ յանցագործութիւններ էին կատարել թուրք բնակչութեան նկատմամբ⁴⁰:

Այս յայտարարութեամբ նրանք մի կողմից արդարացնելով իրենց առաջխաղացումը, միւս կողմից՝ պառակտում էին հայ հասարակութեանը, գրկում վերջինիս դիմադրական կարողութիւններից եւ մեծապէս նպաստում խուճապի առաջացմանը: Մասնաւորապէս դաշնակցական իշխանութիւնները, իմանալով թուրքերի վերաբերմունքը իրենց նկատմամբ, առաջինն էին հեռանում՝ թողնելով անպաշտպան խաղաղ բնակչութեանը բախտի քմահաճոյքին: Վերջինս, տեսնելով այդ, անօրինակ խուճապի մեջ է ընկնում եւ դիմում փախուստի⁴¹:

Այսպէս, 1918ի թուրքական ներխուժման ժամանակ Ալեքսանդրապոլը լքում է ոչ միայն բնակչութեան մեծ մասը, այլ նաեւ քաղաքային ինքնավարութեան ամբողջ կազմը, հասարակական գաղթականական, դրամատնային, մթերային բոլոր կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ քաղաքային ոստիկանութիւնն իր ամբողջ կազմով⁴²:

Հայ հասարակութեանը պառակտելու միջոցով նրա դիմադրական կարողութիւնները թուլացնելու քաղաքականութիւնը թուրքերն իրականացնում են նաեւ 1920ի արշաւանքի ժամանակ: Իրենց ներխուժումն այս անգամ պայմանաւորելով իբր դաշնակցականների վարած քաղաքականութեամբ, հանդէս են գալիս տեղական իշխանութիւն ստեղծելու եւ թուրքերին ընդառաջ գնալու նախաձեռնութեամբ:

1920 Նոյեմբերի 7ին Քեազիմ Կարաբեքիրը, Ալեքսանդրապոլի քաղաքագլխին ուղղուած նամակում թուրքական զօրքերի առաջխաղացումը պայմանաւորելով դաշնակցութեան վարած քաղաքականութեամբ, հերթական անգամ խոստացել է ձեռք չտալ խաղաղ բնակչութեանը, կոչ արել հանգստութիւն պահել եւ չգաղթել: *«Դաշնակցականների կողմից շարունակուած խառնակութեան հետեւանքով,- ասուած է այդ նամակում,- բանակս ստիպուած եղաւ յառաջ խաղաղ: Արեւելեան հրամանատարութիւնը եւ Երեւանի կառավարութիւնը ընդունած են, որ Գիւմրին գրաւուի:*

Գիւմրիի բերդը եւ կայարանը գրաւելու մասին որոշած զօրամասը այսօր ճաշից յետոյ որոշեալ տեղը պէտք է հասնի: Իմ

անենաբունն ցանկութիւնն է, որ զօրքը մտած ժամանակ ժողովրդեան կեանքին, պատուին ու գոյքին ձեռք չպէտք է տրուի, խնդրում եւ, որ բոլորը վստահութեամբ իւրաքանչիւր մարդ իր գործով զբաղուի:

Քաղաքի ապահովութիւնը եւ խաղաղութիւնը պահպանելը Ձեր խնամքին կը յանձնուի, մինչեւ որ Ձեր կողմից օգնութիւն չպահանջուի մեր կողմից երբեք միջամտութիւն չպէտք է լինի:

Յատկապէս կը դիմեմ Գիւմրիի ժողովրդին: Թող իրազեկ լինեն այս յայտարարութեանը եւ ունեն մի ուրիշ ցանկութիւն, խնդրում եմ մի մարմնի միջոցով ինձ յայտնեն այդ մասին»⁴³:

1920ի թուրքական ներխուժման ժամանակ եւս դաշնակցական իշխանութիւնները լքում են քաղաքը: Դեռեւս Նոյեմբերի 5ին, չնայած կառավարութեան որոշմանը, թէ թուրքերի կողմից քաղաքը գրաւելու դէպքում քաղաքային վարչութեան անդամները եւ բոլոր պաշտօնեաները պէտք է մնան քաղաքում, նրանք թողնում են քաղաքը՝ մատնելով այն անիշխանութեան, աւերման ու հրդեհման⁴⁴:

Քաղաքում ստեղծուած նոր իշխանութեանը ոչինչ չէր մնում քան համաձայնել տեղական իշխանութիւն ստեղծելու եւ թուրքերին ընդառաջ գնալու թուրքական նախաձեռնութեանը:

Թուրքերը նախապէս յայտարարելով, որ չդիմադրելու դէպքում չեն վնասի խաղաղ բնակչութեանը եւ, միաժամանակ դաժանօրէն ճնշելով բնակչութեան դիմադրութեան ամէն մի փորձ, զրկում էին վերջինիս դիմադրական կարողութիւններից: Մասնաւորապէս Գիւմրու Գաւառի վարչութեան նախագահ Մեհմէդ Ռեջեբի քաղաքային վարչութեան նախագահին ուղղուած 1918ի հրամանում տեղեկացում է, որ Սոգիւթի ուղարկուող թուրք զինուորներին դիմադրելու համար Արթիկ, Շիրվանջուղ եւ Մահմուդջուղ գիւղերի բնակիչները զինուորական օրէնքի խստութեամբ պատժուած են, պահանջում է մէկ անգամ եւս գիւղական բնակչութեանը յայտարարել զինուորների դէմ զէնք բարձրացնող գիւղերի ոչնչացման մասին օրէնքը⁴⁵: Հայաստանի Կենտրոնական Վիճակագրական Բիւրոյի 1919ի տուեալների համաձայն Սոգիւթի գիւղում թուրքերին յամառ դիմադրութիւն ցոյց տալու համար սպանուել են 250 մարդ, թալանուել գիւղի ամբողջ ունեցուածքը⁴⁶: Նոյն պատճառով Շիրվանջուղում սպանուած են 218, Մահմուդջուղում՝ 177 մարդ⁴⁷: Բնակչութեանը

դիմադրելու հնարաւորութիւնից զրկելու նպատակով թուրքերը հաւաքում եւ կոտորում էին հայկական զօրքի շարքերում ծառայած, մանաւանդ զինուորական համազգեստ ունեցող տղամարդկանց:

1918 Յուլիսին Ալեքսանդրապոլի քաղաքային վարչութեան բնակչութեանն ուղղուած յայտարարութեան մէջ տեղեկացում էր որ, Արթիկ գիւղում Կարապետի որդի Կիոսի մօտ զէնք է յայտնաբերուել եւ նա դատապարտուել է մահուան եւ որ *«Այս դէպքը առիթ է տալիս Կառավարութեանը վերջին անգամ յայտնելու, որ մինչեւ Յուլիսի 31ը թէ՛ քաղաքում եւ թէ՛ գիւղերում թաքնուած զէնքերը պէտք է յանձնուեն, յանձնողները խստիւ կը պատժուին»*⁴⁸:

1920ի թուրքական ռազմակալման շրջանում բնակչութեան եւ զօրքի մէջ դիմադրական կարողութիւնների թուլացմանը եւ յուսահատութեան առաջացմանը, վերը նշուած դիւանագիտական խաղերից բացի, մեծապէս նպաստում է նաեւ թուրք-բոլշեւիկեան դաշինքի ապահովումը:

Կարսը գրաւելուց յետոյ պաշտօնապէս դիմելով Հայաստանի կառավարութեանը խաղաղութեան բանակցութիւններ սկսելու, թուրքերը առիթը բաց չէին թողնում իրենց առաջխաղացումը շարունակելու, փորձելով այն պայմանաւորել Խորհրդային Ռուսաստանի շահերով:

Կարաբեքիրն իր յետագայ առաջխաղացումը ապահովելու նպատակով փորձում էր Խորհրդային Ռուսաստանին համոզել, որ իր բանակը «յեղափոխական» «ազատարար» բանակ է, որի նպատակն է փրկել հայ աշխատաւորութեանը *«դաշնակցականների լծից եւ Հայաստանում հռչակել բանուորագիւղացիական իշխանութիւն»*⁴⁹: Արդէն Նոյեմբերի 3ին Կարաբեքիրը մի հեռագիր է յղում 11րդ Կարմիր Բանակի հրամանատարին, որում վերջինիս փորձում էր համոզել յարձակուելու Հայաստանի վրայ, ասելով, որ դա ոչ թէ պատերազմ կը լինի այլ մի թեթեւ զբօսանք, որը հեշտութեամբ կը յանգեցնի խորհրդային կարգերի հաստատմանը Հայաստանում⁵⁰:

Կարաբեքիրը մի կողմից իր առաջխաղացումը պայմանաւորելով Ռուսաստանի շահերով, միւս կողմից զինադարարի պայմանով Նոյեմբերի 7ին գրաւում է Ալեքսանդրապոլի կարելոր ռազմագիտական կէտերը՝ բերդն ու

կայարանը⁵¹: Այնուհետև հաստատուելով Ալեքսանդրապոլում, Նոյեմբերի 8ին ներկայացնում է Անկարայի կառավարության զինադադարի շատ անելի ծանր պայմանները, նպատակ ունենալով մերժման դեպքում, զարգացնել յաջողութիւնները եւ գրաւել Ալեքսանդրապոլի Գաւառը: Կարաբեքիրի հաշիւները ճիշտ են դուրս գալիս: Հայաստանի կառավարութիւնը անընդունելի է համարում այդ առաջարկները: Թուրքական զօրքերը վերսկսելով ռազմական գործողութիւնները, գրաւում են Ալեքսանդրապոլի Գաւառը⁵²:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան համոզմամբ՝ թէ՛ Խորհրդային Ռուսաստանը եւ թէ՛ Անտանտը չէին կարող թոյլ տալ թուրքերի յետագայ առաջխաղացումը, քանի որ ըստ իրենց, դա չէր բխում նրանց շահերից⁵³:

Սակայն, Հայաստանի կառավարութիւնը կրում է նաեւ դիւանագիտական ծանր պարտութիւն: Թուրքերի առաջխաղացումը մտնում էր թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի շահերի մէջ: Դաշնակիցները յոյս ունէին, որ թուրք-հայկական պատերազմում թուրքերի առաջխաղացմանը կը յաջորդի թուրքական յարձակումի ընդլայնումը Անդրկովկասում, ինչը կը յանգեցնի Խորհրդային Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ պատերազմի⁵⁴: Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանին, ապա այն տալով դիւանագիտական միջնորդութեան իր համաձայնութիւնը, ռազմական օգնութիւնը պայմանաւորում էր նախ Սեւրի Պայմանագրից հրաժարմամբ, ապա եւ Հայաստանի խորհրդայնացմամբ⁵⁵:

Հայաստանի կառավարութիւնը Դեկտեմբերի 2ին ստիպուած է լինում կատարել անխուսափելի՝ իշխանութիւնը յանձնել բոլշեւիկներին: Նոյն օրն իսկ կնքելով Ալեքսանդրապոլի հաշտութեան պայմանագիրը թուրքերի հետ:

Թուրքերն այս անգամ արդէն հրաժարուելով Խորհրդային Ռուսաստանի միջնորդութիւնից, շտապեցնում են կնքել հաշտութեան պայմանագիրը, ակնարկելով, որ հակառակ դեպքում կը շարժուէն Երեւանի վրայ: 1920 Նոյեմբերի 30ի գիշերը Կարաբեքիրի վերջնագրին պատասխանելու նպատակով տեղի ունեցած յատուկ ժողովը, որին մասնակցում էին խորհրդարանի պատգամաւորները, կառավարութեան անդամները, ՀՅԴ Բիւրօն իր ողջ կազմով եւ մի շարք անհատ գործիչներ, որոշում է ընդունել

հաշտութեան պայմանները՝ յանուն հայ ժողովրդի փրկութեան: Պատճառաբանութիւնը հետեւեալն էր. «*Եթէ մերժէինք Կարաբեքիրի առաջարկը, թուրք բանակը, ամենայն հաւանականութեամբ առաջ պիտի շարժուէր եւ մինչեւ ռուս զօրքերի հասնելը Էջմիածինն ու Երեւանն էլ պիտի գրաւէին յարակից շրջաններով միասին: Յետագայում ռուսները կարող էին հեռացնել թուրքերին, բայց սրանք արդէն աւերն ու կոտորածը գործած կը լինէին*»⁵⁶:

Հայաստանի կառավարութիւնը վերը նշուած պայմանագրի կնքումով փորձում էր ուղղակի բանակցութիւնների մէջ մտնելով թուրքերի հետ, ամէն գնով կանգնեցնել նրանց արշաւանքը, փրկել Հայաստանի մնացած բնակչութեանը կոտորածներից մինչեւ նոր կառավարութեան կազմուելը եւ Կարմիր Բանակի մուտքը Երեւան: Յամենայնդէպս նրանց այդպէս էր հաւատացնում Կարաբեքիրը: Խատիսեանը 1921 Փետրուարի 20ին Կ. Պոլսի Պատրիարքարանում հաւաքուած բարեկամների փոքրիկ շրջանակի մէջ ասել է. «...*երբ Քեազիմ Քարաբեքիրի մօտ կը պնդէի, թէ ռուս պօլշեիկ ներկայացուցիչ Մոլիւանին պէտք է մասնակցի բանակցութիւններուն ու Քարաբեքիր կը մերժէր, ըսի թէ պօլշեիկները իրեն չեն ներեր այդ բանը: Այն ատեն Քարաբեքիր մտերմօրէն պատասխանեց,- Դուք պէտք է գիտնաք Պ. Խատիսեան, որ մենք նախապէս համաձայնած ենք Մոսկուայի հետ ստանալով Կարսի նահանգը, աւելի մեզ չեն տար, բայց եթէ այժմ դուք չընդունէք մեր պայմանները, ես կը քալեմ աւելի առաջ, փոյթ չէ, թէ վաղը ստիպուած ետ դառնամ*»⁵⁷: Դրա օգտին է խօսում այն փաստը, որ ռուսները ուժեր չէին կենտրոնացնում Հայաստանում, վախենալով ներքաշուել պատերազմի մէջ⁵⁸:

Փաստօրէն, Ալեքսանդրապոլի Գաւառի գրաւումը ինչպէս 1918ին, այնպէս էլ 1920ին ստեղծուած միջազգային իրադրութեան, հայ քաղաքական ուժերի կողմից իրականութեան ոչ-համարժէք ընկալման եւ հայկական բանակի բարոյալքման պայմաններում անխուսափելի էր:

1918-1920՝ պատմական տարբեր պայմաններում թուրքերը ռազմական գործողութիւնները զուգակցելով դիւանագիտական խարդաւանքներով, երկու անգամ վեցական ամսով ռազմակալում են Ալեքսանդրապոլի Գաւառը, իրականացնում հայ բնակչութեան թալանն ու կոտորածը: Այն ինչ կատարում են նրանք այստեղ հայ

բնակչութեան նկատմամբ անհնար է այլ կերպ բնութագրել, քան՝
 ցեղասպանութիւն⁵⁹: Ալեքսանդրապոլի Գաւառի անպաշտպան
 մնացած բնակչութիւնը, բնականաբար չէր կարող դիմակայել
 թուրքական պետականօրէն մշակուած ցեղասպանութեան
 քաղաքականութեանը: Հետեւաբար, թուրքական
 դաժանութիւնները ճաշակած այդ մարդկանց մեղադրել
 թուրքերին չդիմադրելու, վախկոտութեան, դաւաճանութեան կամ
 դասալքութեան մեջ առնուազն բարոյական չէ: Ճիշտ է
 դիմադրութեան փորձեր վերը նշուած պատճառներով, չեն կրել
 կազմակերպուած ինքնապաշտպանութեան բնոյթ, սակայն չի
 նշանակում, որ դրանք չեն եղել: Այլ բան է, որ դրանք առանձին
 անհատների կողմից անձնապաշտպանութեան ձեւեր են ընդունել:
 Թուրքական սարսափները վերապրածների յիշողութիւններում
 կարող ենք հանդիպել նման բազմաթիւ դրուագների⁶⁰:
 Մասնատրապէս Գուսան Շահէնը իր յիշողութիւններում
 նկարագրում է, թէ ինչպէս են իր տատը եւ մայրը սպանել իրենց
 տուն ներխուժած թուրքերին. «Տեսնելով որ տունը թալանուած է,-
 գրում է Շահէնը իրենց տուն ներխուժած թուրքերի մասին,-
 սկսեցին տատիս վախեցնել եւ ոսկի պահանջել, երբ տատս ասաց,
 որ ամէն ինչ տարել են, չհաւատացին եւ սկսեցին նրան ծեծել:

*Այդ պահին ասքեարներից մէկին դրսից ձայն տուին. նա դուրս
 եկաւ: Աղմուկից Համասիկը արթնացաւ ու լաց եղաւ, էս ասքեարն
 իր հրացանը դէմ տուեց դրսի դռանը, խանչալով ներս մտաւ ու
 յարձակուեց քոյրիկիս վրայ, մազերից բռնած հանեց, ասաց, որ կը
 մորթի, եթէ տատս չասի ոսկու տեղը: Աստղիկը վախից դուրս
 թռաւ, ընկաւ ուղիղ սրա ոտքերի տակ: Ասքեարը խանչալի ծայրով
 հրեց երեխային, քրոջս թուշը ծակեց, արիւնը սկսեց չոպ: Այդ
 տեսնելով մայրս ուզեցաւ իր թաքստոցից դուրս գցի, բայց
 միւսները թեւերը բռնեցին:*

*Այս իրարանցման ժամանակ, տատիս յաջողուեց վերցնել
 հրացանն ու որքան ուժ էր մնացել իր ծերացած ձեռքերում՝ սկսեց
 թափով խփել ասքեարի գլխին: Թուրքը տատիս հարուածից մեռել
 էր: Կանայք մեզ տարան ներս, մայրս դուրս եկաւ, որ տատիս օգնի,
 միւս ասքեարը ներս մտաւ, տեսնելով ընկերոջն ընկած, հրացանի
 կողով սկսեց տատիս ոտքերին խփել ու երկու ոտքերը ջարդեց,
 այնքան էր տարուել իր աշխատանքով, որ չէր նկատել, թէ ինչպէս*

էր մայրս մօտեցել: Նա քրոջս վիրաւորող խանչալով մէջքից խփեց արտին ու սպանեց»⁶¹:

Ինչ վերաբերում է թուրքական ռազմակալումների ընթացքում Ալեքսանդրապոլի Գաւառում տեղական իշխանութեան մարմինների ստեղծմանը եւ թուրքերի հետ համագործակցութեանը, ապա սրա հիմքում եւս թուրքական բռնութիւններից բնակչութեան ֆիզիկական գոյութեան պաշտպանութիւնն էր: Իրենց ռազմական առաջխաղացումը Արեւելեան Հայաստանում պայմանաւորելով մի դէպքում իբր թէ մահմեդականների նկատմամբ հայերի բռնութիւններով, միւս դէպքում՝ Խորհրդային Ռուսաստանի շահերով, թուրքերը փորձել են բռնութիւնների ու թալանի քաղաքականութիւնն իրականացնել «մեղմ» եւ «օրինական» միջոցներով⁶²: Շարունակելով հայոց ցեղասպանութիւնը իրենց համար ոչ-այնքան բարենպաստ միջազգային նոր իրավիճակում՝ նրանք ստիպուած էին լինել աւելի զգուշ եւ շրջահայեաց: Մասնաւորապէս, իրենց գործողութիւններին օրինական տեսք տալու համար՝ օգտագործել տեղական իշխանութեան մարմիններին:

Թուրքական ռազմակալման պայմաններում գտնուող հայ բնակչութիւնն իր հերթին, ձգտելով մեղմել թուրքական բռնութիւնները, աջակցել է տեղական իշխանութեան մարմիններ ստեղծելու թուրքական քաղաքականութեանը՝ հասկանալով, որ այդպիսի պայմաններում հեշտութեամբ կարող է դառնալ նաեւ անիշխանութեան ու կամայականութեան զոհ:

Ալեքսանդրապոլում մնացած բնակչութեան պահանջով 1918 Մայիսի 17ին Լեւոն Սարգսեանի գլխաւորութեամբ կազմաւորուեց Ալեքսանդրապոլի Քաղաքային Վարչութիւնը, որը համագործակցեց թուրքերի հետ մինչեւ նրանց հեռանալը⁶³: Թուրքերի հետ համագործակցութեան այս փորձն օգտագործուել է նաեւ 1920 Նոյեմբերին, երբ բախտի քմահաճոյքին թողնուած Ալեքսանդրապոլի Գաւառի խաղաղ բնակչութիւնը հերթական անգամ յայտնուում է կործանուելու իրական ու դաժան փաստի առաջ: Ճիշտ է, այդ իշխանութիւնը գործում է մինչեւ Նոյեմբերի 17ը, երբ թուրքերի նախաձեռնութեամբ ստեղծուում է Ալեքսանդրապոլի Յեղկումը, բայց մեծ դեր է կատարում բնակչութեան խուճապը կանգնեցնելու ուղղութեամբ: Այս գործը շարունակում է Ալեքսանդրապոլի Յեղկումը⁶⁴, իր կոչերով

հանգստացնելով բնակչութեանը, թէ այս թուրքերն իբր նախկին թուրքերը չեն, թէ սրանք միայն դաշնակցականների թշնամիներն են, եւ նրանց նպատակը միայն դաշնակցութեանը իշխանութիւնից հեռացնելն է⁶⁵: Իհարկէ, դա այդպէս չէր, բայց եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ Նոյեմբերի կէսերին սպասուող գաղթը ուղղակի անխուսափելի մահուան կը դատապարտէր բնակչութեանը, կարելի է ասել, որ Յեղկոմի կոչերը բնակչութեան մի ստուար զանգուածի օգնել են փրկուելու անխուսափելի կործանումից: Մեծ թուով հայեր փրկուել են՝ նաեւ կոմունիստ ձեւանալով, քանի որ թուրքերը կոմունիստների հեղինակութիւնը բարձրացնելու նպատակով նրանց ձեռք չէին տալիս⁶⁶:

Օգտուելով թուրքերի՝ բոլշեւիկեան յեղափոխութեանը աջակցելու քաղաքականութիւնից, որն, ի դէպ, թուրքերն իրականացնում են Խորհրդային Ռուսաստանի առջեւ իրենց առաջխաղացումը արդարացնելու նպատակով՝ Ալեքսանդրապոլի հայ բնակչութիւնը փորձել է իր ֆիզիկական գոյութիւնը ապահովել խորհրդային իշխանութիւն հռչակելու միջոցով: 1920ին Ալեքսանդրապոլի բոլշեւիկների կողմից խորհրդային իշխանութիւն հռչակելը մի կողմից վկայում է թուրքերի կողմից խորհրդայնացման խաղաքարտն օգտագործելու դիւանագիտական վարպետութեան եւ միւս կողմից՝ ստեղծուած վիճակից հնարաւորինս քիչ կորուստներով դուրս գալու հայ բնակչութեան ջանքերի մասին: Հարկ ենք համարում նշել, որ Յեղկոմի նախագահ Մաթեոս Գրիգորեանը Արեւմտեան Հայաստանի Մազկերտ քաղաքից էր: Միանշանակ է, որ եղեռնից մազապուրծ, թուրքական ցեղասպան քաղաքականութեանը ծանօթ մարդը չէր կարող խաբուել թուրքերից եւ առաւել եւս՝ նրանց հրաւիրել Արեւելեան Հայաստան: Եւ ոչ միայն նա, այլ նաեւ Ալեքսանդրապոլի միւս բոլշեւիկները, որոնք 1918ին վեց ամիս ապրել էին թուրքական բռնազաւթման պայմաններում, անծանօթ չէին թուրքական վայրի բնագոյներին: Ի դէպ, 1918 Ապրիլին թուրքական արշաւանքի նախօրեակին ՌԿ/Բ/Կ Ալեքսանդրապոլի կոմիտէն Թուրքիայի դէմ պայքարելու համար կոչ էր անում ստեղծել կարմիր գուարդիայի ջոկատներ⁶⁷:

Հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի Յեղկոմի իշխանութիւնից հրաժարուելուց ընդամենը մի քանի օր յետոյ 1921 Փետրուարի մէկին, Ալեքսանդրապոլի յեղկոմի անդամներ Արշակունու եւ

Գրիգորեանի հետ բանակցելուց յետոյ յայտարարութիւն է արուել նոր իշխանութեան ստեղծման մասին, որի նպատակն է եղել կարգ ու կանոն հաստատել քաղաքում առանց կուսակցական եւ ազգային տարբերութեան⁶⁸: Փաստօրէն Ալեքսանդրապոլում 1921 Փետրուարից թուրքերի համաձայնութեամբ ստեղծուել է հերթական իշխանութեան մարմինը Մերգէյ Մատինեանի գլխավորութեամբ: Իսկ երբ վերջինս, թուրքերի իշխանութեան թուլանալուն զուգընթաց, փորձել է ամբողջ իշխանութիւնն իր ձեռքը վերցնել եւ իրեն հռչակել դիկտատոր, թուրքերը նրան հակակշռելու համար երկիշխանութիւն են առաջացրել կեանքի կոչելով քաղաքային ինքնավարութիւնը⁶⁹: Հետեւաբար, Ալեքսանդրապոլի յեղկոմի ստեղծումը միայն բոլշեւիկների քաղաքականութեամբ պայմանաւորուած չէր. այն թուրքերի կողմից ստեղծուած հերթական տեղական իշխանութեան մարմինն էր:

Միանշանակ է, որ թե՛ 1918, թե՛ 1920 եւ թե՛ 1921 թուականներին Ալեքսանդրապոլի Գաւառում տեղական իշխանութեան մարմինների ստեղծումը պայմանաւորուած է եղել նոյն շարժառիթներով: Կայացման շրջանում գտնուող հայկական նորանկախ պետութիւնը չէր կարողանում պաշտպանել իր քաղաքացիների ապահովութիւնը, եւ բնակչութիւնը զգալով, որ ինքը յանձնուած է բախտի քմահաճոյքին, փորձել է ժողովրդական դիւանագիտութեամբ լուծել իր ֆիզիկական գոյութեան խնդիրը: Բնականաբար, թուրքերի համաձայնութեամբ ստեղծուած տեղական իշխանութիւնները գործել են այն չափով, ինչքանով թոյլ են տուել պայմանները: Դրանք թէեւ հանդիսացել են թուրքական նախաձեռնութեան արդիւնք, այնուամենայնիւ բխել են նաեւ հայ բնակչութեան շահերից իր ֆիզիկական գոյութիւնը պահելու անհրաժեշտութիւնից⁷⁰: Խօսքն առաջին հերթին վերաբերում էր բնակչութեան տեղում մնալն ապահովելու խնդրին, քանի որ գաղթն ուղղակի նոր անդառնալի կորուստներ կը պատճառէր նրան: Եթէ արեւմտահայերը գաղթելով ինչ-որ կերպ փրկուել էին եաթաղանից, հասել իրենց արեւելահայ եղբայրների մօտ եւ նրանց աջակցութեամբ կեանքի ու մահու պայքար էին մղում իրենց գոյութեան համար, ապա արեւելահայերը գաղթելու տեղ չունէին եւ միանալով արեւմտահայ գաղթականութեան հոսանքին՝ գնում էին ստոյգ կործանման:

Մանաւանդ, որ Արեւելեան Հայաստանում թուրքական ցեղասպան քաղաքականութեան առանձնայատկութիւններից էր նաեւ գաղթը չխրախուսելը: Թուրքերն իրենց առաջխաղացումը պայմանաւորելով իբր մահմեդականների նկատմամբ հայերի բռնութիւնները կանխելու եւ կարգ ու կանոն հաստատելու պատրուակով, փախստականներին մեղադրում էին մահմեդականների նկատմամբ բռնութիւններ կատարելու մէջ եւ յայտարարում օրէնքից դուրս: Դա նրանց հնարաւորութիւն էր տալիս մի կողմից ֆիզիկապէս ոչնչացնել գաղթականութեանը, միւս կողմից՝ տիրանալ նրանց ունեցուածքին: Թուրքերը փախստականների ունեցուածքը համարելով պետութեան սեփականութիւն օրինական ճանապարհով թալանում էին դրանք:

Ի դէպ, գաղթի կասեցմամբ շահագրգռուած էին նաեւ Հայաստանի քաղաքական շրջանակները: Երեւանի Հայոց Ազգային Խորհուրդը Ղարաքիլիսայի բնակչութեան գաղթը դադարեցնելու անհրաժեշտութեան մասին 1918 Մայիսի 23ի իր կոչում գրում է. «... Պարզ է, որ գաղթելու տեղ չկայ, եւ գաղթը միանգամայն կորստաբեր է: Իմացէք եւ հետեւեալը: Երբ որ տաճիկները մի որեւէ տեղ տիրապետում են, այն տեղից փախած ժողովրդին նրանք այլեւս թող չեն տալիս վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը: Ուրեմն երկու չարիքից փոքրագոյնն այն է, որ ժողովուրդը չգաղթի եւ մնայ իր տեղերում»⁷¹:

1918-1921 թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլի Գաւառում թուրքերի կողմից ստեղծուած տեղական իշխանութեան մարմինները, մի կողմից՝ ընդառաջ գնալով թուրքական պահանջներին, միւս կողմից՝ հանդէս են եկել միջնորդի դերում, հնարաւորութեան սահմաններում փորձել պաշտպանել քաղաքացիների շահերը, բնակչութեան պահանջները, որբերի, գաղթականների բազում խնդիրները: Եւ որ ամենակարեւորն է՝ կանգնեցնել խուճապը եւ գաղթը, անխուսափելի կործանումից փրկելով հազարաւոր մարդկանց:

Ճիշտ է, թուրքական բռնագաւթման պայմաններում այս մարմինները չէին կարող գործել թուրքերից անկախ, բայց հնարաւորինս ապահովել են հայ բնակչութեան կարիքները, իսկ թուրքական իշխանութեան թուլացմանն համընթաց՝ զսպել անիշխանութիւնը եւ ապահովել բնակչութեան անվտանգութիւնը: Եւ կարծում ենք՝ արժանին պետք է մատուցել այդ մարդկանց,

որոնք կարողացել են իրենց հնարաւորութիւնները սահմաններում աջակցել բախտի քմահաճոյքին մնացած բնակչութեանը, մեղմել թուրքական բռնութիւնները: Սովորաբար այդ մարդիկ բարձրագոյն կրթութեամբ, միքանի լեզուների՝ յատկապէս, թուրքերէնի տիրապետող, բնակչութեան կողմից յարգուած մարդիկ են եղել, պարտադիր ոչ-դաշնակցական ներկայացուցիչներ:

Պատահական չէ, որ ժամանակակիցները բարձր են գնահատել թուրքերի հետ գործակցելու միջոցով հայ բնակչութեան ֆիզիկական գոյութիւնն ապահոված գործիչներին: Մասնաւորապէս, 1918ին թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետութեան Արտգործնախարարութեան ներկայացուցիչ Գեորգ Խոյեցեանը ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղուած իր 1918 Դեկտեմբերի 4ի զեկուցման մէջ, անդրադառնալով Ալեքսանդրապոլի տեղական իշխանութեան մարմիններին, նշել է. «...Այն՝ ինչ նրանք կրում են այս վեց ամսում, այս կամայականութեան եւ բռնութեան շրջանում, նրանց տոկունութիւնը, նրանց յուժկու եւ համարձակ բողոքը այն բոլորի դէմ ինչ նոյնիսկ նրանց իրաւասութիւնից վեր էր եւ աւելի լայն բնոյթ էր կրում, այն անձնագոհ պաշտպանութիւնը ժողովրդի շահերի, որի պատճառով նրանք շարունակ հալածուել են եւ նոյնիսկ վտանգի ենթարկել իրենց կեանքը ու միայն հրաշքով կարողացել են այսօր խաւարի իշխանութիւնից դուրս գալ ու դուրս բերել իրենց խնամքին յանձնուած ժողովուրդը եւ հանգիստ սրտով դիմաւորել հայ զինուորներին եւ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանը, այս բոլորը՝ նրանց անձնագոհութիւնը, ազնուութիւնը, կորովն ու համարձակութիւնը միայն խորին յարգանքի զգացմունք է զարթնեցնում իմ մէջ ու այս բոլորի վրայ եմ դարձնում կառավարութեան ուշադրութիւնը: Քաղաքային ինքնավարութիւնը խոշոր օգնութիւն է ցոյց տւել նաեւ զանազան շրջաններից փախած գաղթականներին, որոնք ապաստանել են քաղաքումս բանալով նրանց համար որբանոց, հանրակացարան եւ այլն»⁷²: 1919 Յունուարի 15ի արտակարգ նիստում Քաղաքային Վարչութիւնը յարգելով տիֆից մահացած Մկրտիչ Ղազարեանի յիշատակը, որոշում է նրան յուղարկաւորել Պատուոյ Բլուր կոչուող գերեզմանատանը⁷³: 1919 Ապրիլի 16ի նիստում Ալեքսանդրապոլի Քաղաքային Խորհուրդը որոշել է նոյն Ղազարեանի

ընտանիքին թոշակ նշանակել, իսկ նրա օրագիրը հրատարակել, որպես յատուկ բրոշյուր եւ վաճառել հատը երկու ռուբլով, եւ հասոյթը յատկացնել նրա երեխաներին⁷⁴: Իսկ աւելի ուշ՝ 1919 Յունիսի Յին, Ալեքսանդրապոլի Քաղաքային Խորհրդի արտակարգ նիստը որոշում է ընդունել Լեւոն Սարգսեանին Ալեքսանդրապոլի պատուաւոր քաղաքացու կոչում տալու մասին, նրա անունով կոչելով քաղաքի հիւանդանոցներից մէկը⁷⁵:

Ինչ վերաբերում է Կումունիստական Կուսակցութեան Ալեքսանդրապոլի Քաղաքային Առաջին Կոնֆերանսի կողմից 1921 Ապրիլի 5ին Ալեքսանդրապոլի Յեղկումի գործունէութեան գնահատականին, ապա այն յենուած է եղել Հայաստանի Կումունիստական Կուսակցութեան տրուած գնահատականի վրայ, որն իրական վիճակը չէր կարող ներկայացնել, քանի որ աւելի շատ կուսակցական շահեր էր հետապնդում: Մասնաւորապէս, Փետրուարեան Ապստամբութիւնից յետոյ անհրաժեշտ էր կուսակցութեան հեղինակութիւնը բարձրացնել եւ այստեղ խորհրդային իշխանութեան դիրքերն ամրապնդել: Պատահական չէ, որ Յեղկումի առանցքային անդամներից մէկը՝ Ներսիկ Ստեփանեանը, լսելով Յեղկումի գործունէութեան գնահատականը, ասում է. *«Շատ խօսեցիք ընկերներ, բայց փաստացի ոչինչ չասեցիք... Եղէք ընկերներ օրեկտիւ: Այսպիսի մի իշխանութեան կողքին ինչպիսին իմպերիալ թուրքերն են եղել որ ամբողջ ժամանակ իրենց պահանջներով խաղացել են տգեղ քաղաքականութիւն, մենք կարողացել ենք տոկուն ձեւով տանել, թէ սխալներ են եղել, այդ մեղաւոր է եղել ոչ թէ Յեղկումը, այլ մենք բոլորս: Ամբողջ Յեղկումը իր ենթաբաժիններով արել է այնքան, որքան թոյլ են տուել քաղաքական պայմանները»*⁷⁶:

Յետագայում, երբ թուրքական վտանգն արդէն չկար, հասարակական գիտակցութեան մէջ սկսել են արմատաւորուել թուրքերի դէմ չկռուելու, նրանց հետ համագործակցելու համար ալեքսանդրապոլցիներին մեղադրելու միտումները: Իսկ պատմագիտութեան մէջ փորձեր չեն արուել գիտականօրէն ուսումնասիրել այդ երեւոյթի պատճառները: Մինչդեռ միջազգային բարդ պայմաններում եւ հայոց պետականութեան կայացման շրջանում ապրող Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութիւնը մեծագոյն ողբերգութիւն է ապրել՝ դառնալով

Թուրքիայի ցեղասպան եւ Ռուսաստանի ու Անտանտի դաւադիր քաղաքականութեան զոհը:

Այլ հարց է, որ 1915թ. Մեծ Եղեռնից ուշքի չեկած հայ ժողովուրդը չկարողացաւ դիմակայել ցեղասպան թուրքի դիւանագիտական խարդաւանքներին: Ակնյայտ է, որ մենք որպէս ազգ եւ պետութիւն անպատրաստ գտնուեցինք այս պատերազմներին եւ կորցրեցինք ոչ միայն մեր տարածքները, զրկուեցինք պետականութիւնից այլ հնարաւորություն տուեցինք թուրքին շարունակելու ցեղասպանութեան քաղաքականութիւնը:

Բնականաբար այս պարտութիւնը ամբողջ հայ ժողովրդինն է եւ ոչ թէ նրա մի հատուածինը եւ դրա պատասխանատուութիւնը պէտք է ստանձնեն նշուած ժամանակաշրջանում գործող բոլոր քաղաքական ուժերը, հասարակութեան բոլոր շերտերը եւ հանրապետութեան շրջանները:

Հայ նորագոյն պետականութեան կերտման եւ ազգային խնդիրների լուծման առումով այսօր առաւել քան երբեւէ անհրաժեշտ է նորովի եւ գիտականօրէն ուսումնասիրել հայոց պատմութեան մանրամասները, վեր հանել բացթողումները, իրացնել պատմութեան դասերը:

Արդի շրջանում հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման առանցքում պէտք է դրուեն պատմական իրողութիւնների գնահատականները: Թուրքերի հետ տարուող քաղաքականութիւնը պէտք է խարսխուած լինի գիտական հիմքի վրայ, այլապէս այն կ'ունենայ կործանարար հետեւանքներ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Կարինէ Ալեքսանեան, «Թուրքիայի Ցեղասպանութեան Քաղաքականութեան Շարունակութիւնն Ալեքսանդրապոլի Գաւառում», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, թիւ 1, Երեւան 2005, էջ 18-25:

² Ա. Յարութիւնեան, *Թուրքական Բնութեանցիան Անդրկովկաս 1918թ. Եւ Բնքնապաշտպանական Կռիւները*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984. նաեւ՝ Հրանտ Աւետիսեան, *Հայկական Հարցը 1918թ.*, Երեւան Բարձրագոյն Դպրոց, 1997. նաեւ՝ M. Tumanian, *Diplomaticeskaya Istoriya Rerspubliki Armeniya 1918-1920 gg.*, (Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական պատմութիւն 1918-1920թթ.), Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2012. նաեւ՝ Ա. Խաչատրեան, *Արեւելահայ Եւ Թուրք Դիւանագիտական Յարաբերութիւնները*, կազմ. Ղազախեցեան եւ ուրիշ., Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2010:

- ³ Երուանդ Սարգսեան, *Դաւադիր Գործարք, Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1995.* նաև Կարեն Խաչատրեան, *Հայ-Ռուսական Յարաբերությունները 1920-1922թթ.,* Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտի Հրատ., 2007:
- ⁴ Էդիկ Զօհրաբեան, *1920թ. Թուրք-Հայկական Պատերազմը Եւ Տէրութիւնները,* Երևան, Ոսկան Երևանցի Հրատ., 1999:
- ⁵ Լենդրուշ Խուրշուդեան, *Հայաստանի Բաժանումը 1920 Թուականին,* Երևան, Երևանի Համալս. Հրատ., 2002, էջ 205:
- ⁶ Խուրշուդեան, էջ 194:
- ⁷ Նոյն, էջ 314:
- ⁸ Արարատ Յակոբեան, *Հայաստանի Հանրապետություն,* Երևան, 1992. նաև՝ Գալուստ Գալոյեան, *Հայաստանը Եւ Մեծ Տէրութիւնները 1917-1923թթ.,* Երևան, ՀՀ ԳԱԱ. Գիտություն Հրատ., 1999. նաև՝ Գայիանէ Մախմուրեան, *Հայաստանը ԱՄՆ Պետական Դեպարտամենտի 1917-1920թթ. Փաստաթղթերում,* Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության Ինստիտուտ, Երևան 2012. նաև՝ Մուրատ Կարապետեան, *Հայաստանը 1912-1920 Թուականներին. Ուսումնական Ձեռնարկ ԲՈՒՀ-երի Համար,* Երևան, Զանգակ-97, 2003:
- ⁹ *Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ (Քաղաքական Պատմություն. Փաստաթղթերի Եւ Նիւթերի Ժողովածու),* կազմ. Գ. Գալոյեան, Վ. Ղազախեցեան, Վ. Մելիքեան, Ս. Միգոյեան, Ա. Վիրաբեան, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն Հրատ., 2000. նաև՝ *Համահայկական Խորհրդակցություններ (1912-1920 թթ.), Փաստաթղթերի Ժողովածու, Արեւմտահայ Գաղթականությունը Ալեքսանդրապոլի Գաւառում 1914-1922թթ., Փաստաթղթերի Հաւաքածու,* կազմ. Կարինէ Ալեքսանեան, Երևան, 2012. նաև՝ *Ղարաքիլիսայի 1918թ. Հերոսամարտը Փաստաթղթերի Ժողովածու),* կազմ. Վ. Դալլաքեան, Ա. Մարուքեան, Երևան, Երևանի Համալսարանի Հրատ., 2008. նաև՝ *Համահայկական Խորհրդակցություններ (1912-1920թթ): Փաստաթղթերի Եւ Նիւթերի Ժողովածու,* կազմ. Ա. Վիրաբեան, Գ. Աւագեան, Ռ. Գիրգորեան, Ա. Կիրիմեան, Երևան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2004:
- ¹⁰ Խուրշուդեան, էջ 169:
- ¹¹ Զօհրաբեան, էջ 351:
- ¹² Խուրշուդեան, էջ 171:
- ¹³ Ա. Մելքոնեան, Է. Գեորգեան, Կ. Խաչատրեան, Ա. Վիրաբեան, Ե. Յովսէփեան, Է. Մինասեան, *Հայոց Պատմություն, 12-րդ Դասարան, Հումանիտար Հոսքի Դասագիրք,* Երևան, Զանգակ-97 Հրատ., 2010, էջ 54:
- ¹⁴ Ա. Մելքոնեան, Վլադիմիր Բարխուդարեան, *Հայոց Պատմություն, Հումանիտար Հոսքի Դասագիրք,* Երևան, Զանգակ-97 Հրատ., 2010, էջ 286. նաև՝ «1918թ. Մայիսեան Գոյապալքարի Պատմութեան Նոր Էջ», *1918թ. Մայիսեան Հերոսամարտերի Եւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան 85-Ամեակին Նուիրուած Գիտաժողովի Նիւթեր,* Երևան, 2005:
- ¹⁵ Դալլաքեան, Մարութեան, *Ղարաքիլիսայի 1918թ.:*
- ¹⁶ Վլադիմիր Յարութիւնեան, «Վերջին Հայ Սամուրայը», *Հասարակություն,* 30 Հոկտեմբերի 2012:

-
- ¹⁷ Վերժինէ Սվազլեան, *Հայոց Յեղասպանութիւն, Ականատես Վերապրողների Վկայութիւններ*, ՀՀ ԳԱԱ, Գիտութիւն Հրատ., Երեւան, 2011:
- ¹⁸ Յակոբ Տէր Յակոբեան, *Հայաստանի Վերջին Աղէտը*, Կ.Պոլիս, Տէր Սահակեան, 1921, էջ 118-119:
- ¹⁹ Կարինէ Ալեքսանեան, «Ալեքսանդրապոլի Գաւառում Հաստատուած Գաղթականութիւնը Առաջին Համաշխարհային Պատերազմի Տարիներին», *Հանրապետական Գիտական Նստաշրջան, Նիւթերի Ժողովածու*, Գիւմրի, 2007, էջ 144-147. նաեւ նոյնի՝ «Արեւմտահայ Գաղթականներն Ալեքսանդրապոլի Գաւառում Առաջին Համաշխարհային Պատերազմի Տարիներն (Փաստաթղթերի Հաւաքածու)», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, Երեւան 2008, թիւ 2, էջ 40-56:
- ²⁰ ՀԱԱ, ֆ.57, ց.2,գ.1287, թ.4-5:
- ²¹ ՀԱԱ, ֆ.57, ց.2,գ.1311, թ.23-24:
- ²² «Արեւմտահայ Գաղթականներն Ալեքսանդրապոլի Գաւառում, էջ 40-56:
- ²³ Աւետիսեան, էջ 9:
- ²⁴ Նոյն:
- ²⁵ Հոկտեմբերեան յեղաշրջում - 1917 Հոկտեմբերի 25ին (Նոյեմբերի 7ին) Պետրոգրադում իրականացուած յեղաշրջման արդիւնքում Բոլշեւիկների Կուսակցութիւնը իշխանութիւնը վերցրեց իր ձեռքը: Բոլշեւիկների առաջնորդ Լենինի գլխաւորութեամբ կազմուած նոր կառավարութիւնը՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդը հռչակեց հաշտութեան, հողի, Ռուսաստանի ժողովուրդների իրաւունքների մասին օրէնքները: Ռուսաստանի կենտրոնում տեղի ունեցած իշխանափոխութեամբ Այսրկովկասում առաջացած իշխանական ճգնաժամը յաղթահարելու համար Նոյեմբերի 15ին ձեւաւորուեց Անդրկովկասի կոմիսարիատը: Կոմիսարիատը Նոյեմբերի 21ին հաշտութեան բանակցութիւններ սկսեց Թուրքիայի հետ, իսկ Դեկտեմբերի 5ին Երզնկայում կնքուած զինադադարից յետոյ կովկասեան ռուսական զօրքերի ետքաշումը ճակատային դիրքերից վերածուեց տարերային փլուզման եւ զօրքերի անկազմակերպ նահանջի:
- ²⁶ Աւետիսեան, էջ 81:
- ²⁷ Խաչատուր Կարճիկեանը 1918 Նոյեմբերի 11ին իր աշխատասենեակում սպանուել է դաշնակցական սպայ Եգոր Տէր-Մինասեանի կողմից:
- ²⁸ Բրեստ-Լիտովսկի Պայմանագիրը կնքուել է 1918 Մարտի 3ին Խորհրդային Ռուսաստանի եւ Քառեակ Միութեան երկրների միջեւ: Անտանտի նախկին դաշնակից Ռուսաստանը, անջատ հաշտութիւն կնքելով դուրս եկաւ Ա. Համաշխարհային Պատերազմից: Հաշտութեան 4րդ յօդուածով եւ ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի համաձայն՝ Թուրքիային անցան Արեւմտեան Հայաստանի ազատագրուած մարզերը: Ռուսաստանը պարտաւորուեց իր զօրքերը շուտափոյթ դուրս բերել ոչ միայն Արեւմտեան Հայաստանից, այլեւ Արդահանի, Կարսի, Բաթումի մարզերից: Դրանցում ստեղծուելիք «նոր կարգը» պէտք է համաձայնեցուէր հարեւան պետութիւնների, մասնաւորապէս Թուրքիայի հետ: Ռուսաստանը պարտաւորուում էր նախկին պետական սահմանից որոշակի հեռաւորութեան վրայ գտնուող տարածքից հանել բոլոր ուժերը, զօրացրել հայկական

-
- կամաւորական ջոկատները, կովկասում պահել մէկ ստորաբաժանում: Իսկ Թուրքիան իր բանակը պահելու էր պատերազմական վիճակի մէջ:
- ²⁹ *Համահայկական Խորհրդակցութիւններ:*
- ³⁰ Նոյն, էջ 326:
- ³¹ ՀԱԱ, ֆ.57,ց.5,գ.187, թ.
- ³² *Համահայկական Խորհրդակցութիւններ*, էջ 311-312:
- ³³ Աւետիսեան, էջ 195:
- ³⁴ Նոյն:
- ³⁵ Խաչատրեան, *Արեւելահայ Եւ Թուրք Դիւանագիտական*, էջ 159:
- ³⁶ Նոյն:
- ³⁷ Նոյն:
- ³⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 178, թ. 10-13:
- ³⁹ *Արեւմտահայ Գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում:*
- ⁴⁰ ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2713, թ. 19:
- ⁴¹ ՀԱԱ, ֆ. 205, ց.1, գ. 709, թ. 10:
- ⁴² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ.187, թ.1-41:
- ⁴³ ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 3000, թ.1:
- ⁴⁴ ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ.122, թ. 1:
- ⁴⁵ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.126, թ.126:
- ⁴⁶ ՀԱԱ, ֆ.127, ց.1, գ.2976, թ. 156:
- ⁴⁷ *Բանբեր Հայաստանի Արխիւների*, Երեւան 1996, էջ 109:
- ⁴⁸ ՀԱԱ, ֆ.105, ց.1. գ.2768, թ. 34:
- ⁴⁹ Զօհրաբեան, *1920-Թուրք Հայկական Պատերազմը*, էջ 287:
- ⁵⁰ Նոյն:
- ⁵¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 600, թ.111:
- ⁵² ՀԱԱ, ֆ. 4033, ց. 1, գ. 127, թ.167:
- ⁵³ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 272, թ. 35-38:
- ⁵⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 602, մաս 4, թ. 255:
- ⁵⁵ ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 272, թ. 36
- ⁵⁶ Սիմոն Վրացեան, *Հայաստանը Բոլշեւիկեան Մուրճի Եւ Թուրքական Սալի Միջեւ* (ռուսերէն), Երեւան, Միքայէլ Վարանդեան Հրատ., 1992, էջ 95:
- ⁵⁷ *Ժողովուրդի Չայն*, Կ. Պոլիս, 24 Փետրուարի 1921:
- ⁵⁸ Գալոյեան, էջ 369:
- ⁵⁹ Կարինէ Ալեքսանեան, «Թուրքիայի Յեղասպանութեան Քաղաքականութեան Շարունակութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, թիւ 1, Երեւան 2005, էջ 18-25:
- ⁶⁰ Սվազլեան, էջ 521-524:
- ⁶¹ Էլինար Շահէն, *Շահէնի Յուշամատենը*, Երեւան, «Լուսակն» Հրատ. 2001, էջ 32:
- ⁶² Կարինէ Ալեքսանեան, «Տեղական Կառոյցների Օգտագործման Թուրքական Քաղաքականութիւնը Ալեքսանդրապոլի Գաւառում 1918-1921թթ»՝ *ՀՀ ԳԱԱ ՇՀՀ Կենտրոնի «Գիտական Աշխատութիւններ»*, Գիւմրի, 2005:
- ⁶³ Կարինէ Ալեքսանեան, «Փաստաթղթեր 1918թ. Սայիսին Թուրքական Բանակի Կողմից Ալեքսանդրապոլի Գրաման Եւ Քաղաքային Ինքնավարութեան Նոր

-
- Մարմինների Ձեռնարկի Վերաբերեալ», *Բանբեր Հայաստանի Արխիվների*, թիւ 1, Երեւան, 2011, էջ 12-24:
- ⁶⁴ Ալեքսանդրապոլի Յեղկոմը ստեղծուել է 1920 Նոյեմբերի 17ին: Հրաժարուել է իշխանութիւնից 1921 Յունուարի 25ին Հայ-յեղկոմի պահանջով Կոմունիստական Կուսակցութեան հեղինակութիւնը բնակչութեան մէջ պահպանելու եւ խորհրդային իշխանութեան գաղափարը չվարկաբեկելու նպատակով:
- ⁶⁵ ՀԱԱ, ֆ. 3, ց.1, գ. 6, թ.13:
- ⁶⁶ ՀԱԱ, ֆ. 144, ց.2, գ. 10, թ.1-5:
- ⁶⁷ ՀԱԱ, ֆ.1021, ց.1, գ.426, թ. 1:
- ⁶⁸ ՀԱԱ, ֆ. 144, ց.3^ա, գ.70, թ. 10:
- ⁶⁹ ՀԱԱ, ֆ.144, ց.3, գ.4, թ.10:
- ⁷⁰ Կարինէ Ալեքսանեան, «Ալեքսանդրապոլի Գաւառի Տեղական Իշխանութեան Գործունէութիւնը Թուրքական Ռազմակալման Շրջանում (1918 Մայիս-Դեկտեմբեր)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Լ.Դ.*, Պէրոթ, 2014, էջ 283-300:
- ⁷¹ Ա. Մանուկեան, *Փաստաթղթերի Եւ Նիւթերի Ժողովածու, Հաւաքածու*, խմբ. Ա. Վիրաբեան, Երեւան, Հայաստանի Ազգային Արխիւ, 2009, էջ 306:
- ⁷² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, թ.90-96:
- ⁷³ ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2711, թ. 163:
- ⁷⁴ ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2711, թ. 198-199:
- ⁷⁵ ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ. 2711, թ. 1:
- ⁷⁶ ՀԱԱ, ֆ. 3, ց.1, գ.33, թ.55-57:

ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE
OCCUPATION OF THE DISTRICT OF ALEXANDROPOLE (1918-1921)
(SUMMARY)

KARINE ALEXANIAN
karine.aleksanyan@yahoo.com

The Armenians and Turks had two conflicting objectives during the occupation of the District of Alexandropole (1918-1921): a) the struggle of the Armenian population for its physical survival and b) the Turkish state's policy of devastation.

Turkey's intent was to make the best of the prevailing international conditions in the region and through diplomatic duplicity occupy as much as possible of the territory inhabited by Armenians; in unexpected attacks, generate panic within the Armenian population and create conflicts between the diverse segments of Armenian society; disable Armenian defense mechanisms; massacre and loot the Armenian population. These acts were disguised by Turkey as she proclaimed herself to be a peacemaker and an enforcer of law and order.

During their occupation of the District, the Turks made good use of their diplomatic capacity and took advantage of the new international situation. The Armenian political leaders, on the other hand, had learned nothing. Their inadequate perception of the conditions both in 1918 and in 1920 led to the massacre and looting of the defenseless population of the District of Alexandropole.

Nonetheless, the population had learnt through popular diplomacy and self-defense mechanisms how to maintain its physical survival. Both in 1918 and in 1920 the population of the District of Alexandropole generated local governing bodies, which acted as intermediaries between the local population and the Turkish occupying authorities. These local bodies tried to reduce Turkish atrocities, and with the gradual decline of the occupying power extend their power, enforce law and order, and deter lawless elements, who were not less dangerous in menacing the peace of the local population.

The population of the Alexandropole district knew that to undermine the defensive capacities of the local population the Turks ruthlessly punished any attempt at self-defense. Accordingly, some left the area, others went under cover and whenever possible defended their families.

ԱՌԵԻԱՆԳՈՒՄԻ ԵՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻ
ՄԹՆՈԼՈՐՏ.

ԿԻՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ
ՆԵՐԳՐԱԻՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ
ՈՒ ԱՆԿԷ ԵՏՔ՝

ԼԵՌՆԱ ԷՔՄԷՔՃԻՕՂԼՈՒ
lernaek@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Առաջին Աշխարհամարտի աւարտին, Պոլիսը գաղթակայանի կը նմանէր: Յոյն, թուրք, ռուս, հայ եւ այլազգի ամբոխ մը փախուստ տուած էր Թրակիայէն մինչեւ Հարաւային Ռուսաստան տարածուող աղէտեալ գօտիէն եւ խոնուած էր քաղաքին մէջ: Մեծ Եղեռնի վերապրողներուն օթեւան տուող այլ կայաններու շարքին, Ղալաթիոյ գաղթակայանը որպէս ժամանակաւոր կացարան կը ծառայէր դեռատի աղջկան մը, որ պատերազմի տարիները անցուցած էր մահմետականներու մէջ: Շատերու նման, ան ալ առեւանգուած ու բռնաբարուած էր: Անյայտ դէպքերու շարան մը գայն նետած էր Պոլիս՝ Հոկտեմբեր 1918ի Մուտրոսի զինադադարէն ետք: Գուցէ հայկական բարեսիրական կազմակերպութիւն մը գայն ազատագրած էր կամ առեւանգողը ազատ արձակած էր, եւ կամ իր կալանքէն խոյս տուած էր պարզապէս: Ամէն պարագայի, անոր նշանածը բռնաբարումին ականատես ըլլալու պարտադրուած ու ապա սպաննուած էր, իսկ ոճրագործը դժբախտ աղջիկը յղի ձգած էր այնուհետեւ:

Ազգակիցներու խնամքին տակ՝ դաշնակիցներէն գրաւուած Պոլսոյ մէջ, ան փորձած էր յղութեան վերջ տալու ամէն կարելի միջոց: Յղութեան առաջին եռամսեակին, ան այցելած էր գրագիտուհի Զարուհի Գալէմքեարեանին (1874-1971), որ աւելի ուշ, առանց աղջկան անունը տալու, անոր մասին պիտի խօսէր իր յուշերուն մէջ: Ահա թէ ինչո՞ւ այս «աղջիկը» պիտի յիշենք Ք. անունով: Ք. օգնութիւն հայցած էր երեխան վիժեցնելու համար, բայց Գալէմքեարեան, հակառակ աղջկան հանդէպ տածած խոր համակրանքին, միանգամայն մերժած էր: Տեղի տուած չէր նոյնիսկ

երբ Ք. սկսած էր ամենօրեայ այցելություններ կատարել եւ գլուխը զարնել տախտակամածին՝ փորձելով ինքզինք վիրաւորել, քանի որ «*իրը ասելու թիւն մըն էր, վրէժ մը, որ կը հրդեհէր իր հոգին*»³:

Գալէմքեարեան հիմնադիրներէն էր Հայ Կարմիր Խաչին, որուն ղեկավարած հիւանդանոցը ի վիճակի էր վիժումը կատարելու: Սակայն, վախնալով, որ Ք. մանկասպանութեան դիմէր, Գալէմքեարեան եւ ուրիշ խնամակալ տիկիներ հրահանգած էին, որ ան կալանքի տակ պահուէր Հայ Կարմիր Խաչի Շիշլիի հիւանդանոցի մայրանոցը: Այս մայրանոցը կ'ընդունէր միայն «անտէրունջ երիտասարդ մայրեր», որոնք մահմետական հայրերէ ծնունդի կը սպասէին⁴:

Առողջ մանուկ մը ծննդաբերելէ քանի մը ժամ ետք, Ք. անձնասպան կ'ըլլար այդ «յատուկ» մայրանոցին մէջ: Երեխաներու համատեղ դայեակութեան սովորութեան հակառակ, այլ մայրեր հաւաքաբար մերժած էին նորածինը սնուցանել, զինք անէծքի ենթարկելով: Գալէմքեարեան երեխային ճակատագիրը չէ արձանագրած:

Ինչո՞ւ ազգային իշխանութիւնները մերժած էին, որ Ք. վիժումը կատարէր⁵: Ինչո՞ւ մօր վերաբերումը՝ սաղմին հանդէպ որպէս ոճրագործի պտուղ, այնքան խորապէս կը բախէր Գալէմքեարեանի եւ այլ խնամակալ տիկիներու՝ այդ նորածիններու ընկալումին հետ, «*որոնց արձագանգը թոչունի ճռուողումներու պէս թեւաթափումներ կու տար [անոնց] հոգիներուն*»⁶: Առաջին հայեացքով, Գալէմքեարեանի կարծիքը տարօրինակ կ'երեւի, որովհետեւ մահմետականներն ու քրիստոնէաները երկար ժամանակ դաւանած էին, որ նորածինը կը պատկանէր հօր ու հօրենական խմբաւորումին, ինչ որ օրէնքով ընդունուած էր: Այդուհանդերձ, Ազգային Խնամատարութիւնը Պոլսոյ գաղթականներուն օժանդակող կազմակերպութիւնը, մահմետական հօրմէ ծնունդները «*մէր որբերը*» կը կոչէր: Ի՞նչ պարագաներ պայմանաւորած էին հայրութիւնը անկարելորդ նկատելու՝ հայկականութիւնը ճշդելու ժամանակ:

Այս հարցումին պատասխան կու տանք յետպատերազմեան (1918-1922) Պոլսոյ շրջագիծին մէջ: Հետազօտութեան հիմքը կը կազմեն միութենական տեղեկագրեր, օսմանեան պետական եւ Պատրիարքարանի արխիւները, հայ եւ թուրք մամուլը, մտաւորականներու անտիպ թուղթեր եւ յուշագրութիւններ:

Մեկնակէտը Հայոց Ցեղասպանութեան սեռային բնութեան եւ տարիքային անխտրականութեան գիտակցուած արարքն է, ինչպէս եւ օսմանեան պատմական նախընթացը, որոցմով կիներու ու երեխաներու առեւանգման քաղաքականութիւնը կարելի դարձած էր եւ արդիւնաւէտութիւնը՝ ապահովուած: Ապա պիտի անցնինք յետպատերազմեան շրջանին, երբ դաշնակիցները գրաւած էին պարտուած Օսմանեան Կայսրութեան մայրաքաղաքը: Մինչ մեծ պետութիւնները Փարիզ ժողով կը գումարէին աշխարհի քարտէսը վերագծելու համար, հայերն ու թուրքերը հաւասարապէս կը պահանջէին այդ քարտէսին մէկ մասը: Միջազգային դիւանագիտութիւնը, ԱՄՆի նախագահ Ուուսթօ Ուիլսընի ինքնորոշման սկզբունքին շուրջըրորը դառնալով, հողային պահանջներն ու ժողովրդագրութիւնը զիրար կապած էր, ինչ որ հայերն ու թուրքերը կ'առաջնորդէր ամէն կարելի միջոցի գործադրութեան՝ իրենց թիւը բազմացնելու: Քաղաքական այս համագրին եւ կիներու ու մանուկներու խորհրդանշական ու գործառնական կարեւորութեան խաչաձեւումը ո՛չ միայն առեւանգուածները ազատագրելու, յետպատերազմեան ճիգ մը ստեղծած է, այլև բուռն պայքար՝ պատկանելիութեան շուրջ: Ազատագրումի ճիգը երբեմն յարձակողական էր, իսկ բռնաբարութեան զոհեր ու իսլամ հայրերու զուակներ պաշտօնապէս կ'ընդգրկուէին հայ հաւաքականութեան նոր սահմաններուն մէջ: Յոյց պիտի տանք, որ այս արարքները՝ յետ-ցեղասպանական զոհի հակազդեցութեան օրինակ ըլլալու կողքին, կը միտէին բնաջնջման արդիւնքները շրջելու, եւ միաժամանակ կը ներկայացնէին գիտակից ընտրութիւն մը՝ ազգային ղեկավարութեան կողմէ, որ կը փորձէր վերակենդանացնել ազգը եւ պետականութիւնը⁷:

Ազգային-կրօնական պատկանելիութեան կանոններու վերաձեւման այս վերլուծումը ապշեցուցիչ օրինակ մըն է, թէ ինչպէս, որոշ հանգամանքներու բերումով, հայրիշխանութիւնը կրնայ թուլցնել իր հիմնական խարիսխներէն մէկը՝ հայրութեան գերակայութիւնը մայրութեան նկատմամբ: Բայց ասիկա պայմանաւորուած չէ կիներու դերակատարութեամբ՝ խմբային պատկանելիութիւնը ճշդելու գործին մէջ: Ընդհակառակը, հազուադէպ էր, որ ազատագրումի ջանքերը ընտրութեան միջոց տային թիրախներուն՝ իրենց կեանքին ու մարմնին տիրութիւն

ընելու: Հայրիշխանական կանոններ շրջել է հեռու, անոնք կը վերարտադրեին հայրիշխանական նուիրապետութիւնը, անփոփոխ ձգելով հնօրեայ ենթադրութիւններ՝ կիներու բնոյթին, մշակոյթին եւ կարողականութեան մասին:

ԱՌԵԻԱՆԳՈՒՄԻ ՄԹՆՈԼՈՐՏ. ՀԱՅ ԿԻՆԵՐՆ ՈՒ ԻՐԵՆՑ
ԶԱԻԱԿՆԵՐԸ Ա. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Հայ բնակչութենէն ձերբազատելու կոչուած Օսմանեան պետութեան քաղաքականութիւնը կ'ընդգրկէր զանազան ռազմավարութիւններ, որոնք աղերս ունէին սեռի ու տարիքի հետ: Նպատակը հայութեան կործանումն ու ապագայ վերարտադրութեան կանխարգիլումն էր, ինչ որ հայ նկատուած իւրաքանչիւր անհատի սպանութիւնը չէր պահանջէր միայն, այլէ՛ հայութիւնը փոխանցելու կարողութիւնը ունեցողներու կամ կրողներու ոչնչացումը: Ահա թէ ինչու, առաջին հանգրուանին, ընդհանուր (թէ՛ւ ոչ համընդհանուր) միտումը չափահաս այրերու ջարդն էր: Հնարաւոր էր ազգային-կրօնական ինքնութիւն փոխանցելու անատակ խումբերը սպանդէ գերծ կացուցանել եւ նոյնիսկ օգտագործել, ինչ որ իգական մարմիններու իւրացումը եւ երկսեռ մանուկներու սեփականացումը կը բացատրէ: Այս ռազմավարութիւնը, որ ժողովրդագրական ճարտարագիտութեան (demographic engineering) բազմաթիւ այլ ծրագիրներու պարագային բնակչութեան քանդումի սովորական միջոց մը եղած է, ո՛չ միայն պատերազմի, տեղահանութեան եւ ջարդերու պատճառած ամայացումը պիտի թեթեւցնէր, այլէ՛ ցեղասպանական հոլովոյթին զանգուածային մասնակցութեան դրդապատճառ պիտի ընծայէր⁸: Հայկական գոյքի կողոպուտը եւ կիներու ու անչափահասներու գրեթէ անսահմանափակ մատչելիութիւնը պատերազմական աւար պիտի ըլլային: Մէկ խօսքով՝ ներքին եւ արտաքին քաղաքականութեան դարաւոր օգտապաշտական աւանդութեան հետեւելով, Երիտասարդ Թուրքերը պայմաններ ստեղծած էին՝ օսմանեան մահմետական ընտանիքներուն (թուրքեր, քիւրտեր, արաբներ, չերքէզներ, չեչէններ, գնչուներ եւ Պալքաններէն գաղթականներ) արտօնելու եւ բացայայտօրէն քաջալերելու, որպէսզի հայ (նուազ ծաւալով՝ այլ քրիստոնեայ խումբերէ, ինչպէս յոյներ եւ ասորիներ) կիներ եւ մանուկներ ընդգրկելին իրենց կազմին մէջ⁹: Այս երկու խմբաւորումները

օսմանցի վաւերական մահմետականներու պիտի վերածուէին՝ համապատասխան կերպարանափոխումէ ետք, դադրելով Երիտասարդ Թուրքերու վերջնական նպատակին՝ բնակչութեան համասեռութեան սպառնալիք ըլլալէ:

Այս ռազմավարութեան համակարգային բնոյթը պատշաճ ուսումնասիրութեան կը կարօտի տակաւին¹⁰, սակայն պետական միտումնաւոր քաղաքականութիւն մը ըլլալու լայն ապացոյցներ կան, յատկապէս՝ օսմանեան պետական գրագրութեան մէջ¹¹: «Հայերու Տեղահանութեան Ժամանակաւոր Օրէնք»ին համակարգումը ստանձնած Ներքին Գործոց Նախարարութեան շարք մը հրամանագրերը բացատրած են այրիացած կամ առանց ծնողքի մնացած երիտասարդ հայերու պարագային որդեգրուելիք ընթացակարգը: Զանազան գաւառներու յղուած Ներքին Գործոց նախարար Թալէաթ փաշայի 30 Ապրիլ 1916 թուակիր յուշագիրը, որուն պատճէնը Պատերազմի նախարար Էնվեր փաշային ուղարկուած է, այս երեւոյթին լուսանկարչական պատկեր մը կը ներկայացնէ¹².

«(1) Այն ընտանիքները, որոնք *kimsesiz* [տառացիօրէն՝ «մէկը չունեցող»] եւ *velisiz* [անծնող] դարձած են, որովհետեւ անոնց այրերը տեղահանուած են կամ ներկայիս օսմանեան բանակին մէջ կը ծառայեն, բաժնուելու (*tevzi*) [են] գիւղերու եւ քաղաքներու միջեւ, ուր օտարներ կամ հայեր չկան: Անոնց ապրուստի ծախսերը վճարուելու են Գաղթականներու Ֆոնտէն (*Muhacirin Tahsisâtı*) եւ անոնք պէտք է յարմարին տեղական սովորութիւններուն (*âdat-i mahalliye ile istînaslarına*):

(2) Երիտասարդ եւ այրիացած կիները ամուսնացուելու [են] դուրսը (*tezviclerine*):

(3) Մինչեւ տասներկու տարեկան երեխաները բաժնուելու [են] *մէք* որբանոցներուն միջեւ:

(4) Եթէ որբանոցները բաւարար չըլլան այս գործին համար, անոնք յայտնի, ունեւոր (*sâhib-i hâl*) իսլամներու պէտք է յանձնուին, որպէսզի տեղական բարքերու եւ կենցաղի ընտելանան (*âdâb-ı mahalliye ile terbiye ve temsillerine*):

(5) Եթէ նման յայտնի իսլամներու բաւարար թիւ չգտնուի, պէտք է ջանալ, որ անոնք բաժնուին գիւղացիներու միջեւ, վստահեցնելով, որ ամսական 30 դրուշ պիտի վճարուի Գաղթականներու Ֆոնտին կողմէ: Այս բոլոր գործարքներուն

[մանուկներ ստացող ընտանիքներու] ցուցակները պարբերաբար պետք է կեդրոն դրկուին»¹³:

Համապարփակ վերլուծում մը՝ մամլոյ գեկոյցներու եւ յուշագրութիւններու օժանդակութեամբ, յստակ կը դարձնէ Երիտասարդ Թուրքերուն քաղաքականութեան հետեւանքով առեւանգումի մթնոլորտի մը ստեղծումը հայ կիներու եւ երեխաներու նկատմամբ: Այս քաղաքականութիւնը օսմանցի մահմետականներուն կը թոյլատրէր հայերու ներգրաւումը իրենց տուններուն, գործերուն, ագարակներուն եւ պետական հաստատութիւններուն մէջ: Հայերը տարբեր ձեւերով ապրած են այդ փորձառութիւնները՝ ըստ աշխարհագրական վայրի եւ բախտի: Ջարդերը աւելի զանգուածային եղած են Արեւմտեան Հայաստանի մէջ, ուր հայութիւնը կեդրոնացած էր պատերազմէն առաջ: Ցեղասպանական քաղաքականութիւնը սովորաբար աւելի ընտրովի էր դէպի արեւմուտք ու հարաւ՝ սեռի ու տարիքի հաշուով: Չափահաս այրերու ջարդին զուգահեռ, ընդհանուր միտումն էր կիներու, երեխաներու եւ ծեր այրերու տեղահանումը դէպի միջագետքեան անապատները, սովորաբար ոտքով կամ գնացքով:

Մանուկները յաճախ կ'անջատուէին իգական սեռի հարազատներէն, նոյնիսկ կարաւաններու մեկնումէն առաջ: Շատ աղջիկներ ու տղաներ շուտով կ'առնուէին տեղացի իսլամներու կամ կառավարական պաշտօնեաներու կողմէ եւ կը փոխանցուէին որոշակի տուններու, մզկիթներու, դպրոցներու կամ որբանոցներու: Ոմանք կ'իսլամացուէին, ուրիշներ տեղացի մահմետականներու ընտրութեան կը յանձնուէին (երբեմն՝ բժիշկի մը ներկայութեան), իսկ մնացեալները պարզապէս տարբեր տեղեր կը տարտղնուէին: Կարգ մը մայրեր իրենց զուակները յանձնած են վստահելի դրացիներու, որոնք կը խոստանային զանոնք խնամել մինչեւ իրենց վերադարձը: Երիտասարդ կիները, ներառեալ դեռատի աղջիկներ եւ փոքրիկ երեխաներու նորապսակ մայրեր, սովորաբար կ'առեւանգուէին տեղահանութենէն առաջ: Որոշ կիներ նախաձեռնարկ եղած են մահմետական այր մը գտնելու, որպէսզի սեռային ծառայութիւն մատուցանէին՝ փոխան տեղահանութենէ պաշտպանութեան կամ անմիջական ազգականի մը ազատագրութեան¹⁴:

Տեղահանութեան շարասիւնները մահուան կարաւաններ դարձած են, պատճառ դառնալով շատ մը ծերերու եւ մանուկներու արագ շիջումին: Կիներ, աղջիկներ եւ մանուկներ սեռային բռնութեան եւ առեւանգումի ենթարկուած են¹⁵: Կարաւանները վերահսկող ոստիկանները յաճախ կը համակարգէին կիներ եւ երեխաներ որոնող տեղացիներու բանակատեղի խուժումը, կամ պարզապէս աչք կը գոցէին: Երբեմն տարագիրները իրենց գաւակները կը փոխանակէին դրամով կամ ուտելիքով, կամ ընտանիքի ուրիշ անդամներու պաշտպանութեան համար¹⁶: Բազմաթիւ երիտասարդ աղջիկներ եւ կիներ կը գերեվարուէին պոռնկութեան յանձնուելու կամ արեւելեան ստրկավաճառութեան մաս կազմելու համար: Այդ առեւտուրը ուժեղացած է Յեղասպանութեան ընթացքին ու անկէ ետք՝ Արաբիա վաճառուած կիներու եւ երիտասարդ աղջիկներու պատճառով, նիւթ մը որուն ուսումնասիրութիւնը այս յօդուածէն դուրս է, բայց որ անհրաժեշտութիւն մը կը մնայ:

Առեւանգուած մանուկները սովորաբար մահմետական ընտանիքներու կը ծառայէին որպէս ստրուկներ՝ հողը մշակելու համար: Աւելի յաճախ, տղաքը կը դրուէին որբանոցներու եւ զինուորական վարժարաններու մէջ: Աղջիկներն ու կիները առհասարակ տուններու կը մտնէին որպէս աղախիններ, կենակիցներ կամ ամուսիններ: Որպէս օրէնք, ձուլումը կրօնափոխութեամբ, անուանափոխութեամբ եւ տիրական լեզուի (քրտերէն, թրքերէն, արաբերէն եւն.) գործածութեամբ կը սկսէր, իսկ հայերը ընդհանրապէս թոյլտուութիւն չունէին շփուելու այլ հայ կրօնափոխներու հետ, թէեւ գիտէնք, որ ասիկա յաճախ կը պատահէր, յատկապէս երբ աւելի քան մէկ հայ կ'ընդունուէր տան մը մէջ¹⁷:

Պոլսահայերը բաւական տարբեր պայմաններ դիմագրաւած են պատերազմի տարիներուն, ի բաղդատութիւն օսմանեան այլ տարածքներու մէջ ապրող հայերու: Մայրաքաղաքը միւս շրջաններուն պէս մեկուսացած չէր եւ կը գտնուէր եւրոպական պետութիւններու տեսադաշտին վրայ. այս հանգամանքը կանխարգիլած է կառավարութեան մտադրութիւնը՝ պոլսահայերու տեղահանութիւն, ջարդ, առեւանգում կամ ձուլում հրահանգելու¹⁸: Գաւառացի հայերու եւ պոլսահայերու շփումը կանխելու նպատակով, տեղահանուածներուն քաղաք մուտքը

արգիլուած էր: Նոյն ձեռով, Ներքին Գործոց Նախարարութիւնը քաղաքացիական ծառայողներու եւ զինուորական սպաներու արգիլուած էր Պոլիս բերել որեւէ հայ գերի, թերեւս բնակիչ եւրոպացիներու ուշադրութիւնը չգրաւելու համար¹⁹:

Ներքին Գործոց Նախարարութիւնը կազմակերպած էր Անատոլիոյ որբ երեխաներու - ոչ միայն հայ, այլեւ յոյն, քիւրտ, թուրք եւ այլք - փոխանցումը Պոլիս, որպէս միջոց օգտագործելով Իսլամ Կիներու Աշխատանքի Ընկերութիւնը (*Kadınları Çalıştırma Cemiyet-i İslâmiyesi*), որ 1916ին հաստատուած էր Էնվեր փաշայի կողմէ՝ օսմանցի մահմետական կիներու աշխատանքային ասպարէզ մուտքը խրախուսելու նպատակով: Քանի որ որբերու թիւը - 16.000՝ պատերազմի առաջին տարին - Պոլսոյ որբանոցներու կարողութենէն անհամեմատ բարձր էր, Ընկերութիւնը աւելի մնայուն լուծում մը գտած էր. աղջիկները բաժնուած էին մահմետական տուններու, որոնք ընտրուած էին Ներքին Գործոց Նախարարութեան կողմէ, իսկ տղաքը յանձնուած էին գործարաններու, աշխատանոցներու, ազարակներու եւ փոքր խանութներու՝ Պոլսոյ եւ Անատոլիոյ մէջ²⁰: Թէեւ շատերուն հայ ըլլալը յայտնի էր, սակայն բոլորը մահմետական կ'ենթադրուէին՝ անկախաբար իրենց ազգային ծագումէն, այլապէս պարտաւոր էին կրօնափոխուիլ:

Ըստ թուրք պաշտօնական եւ ազգայնական պատմագրութեան պնդումին, ազգային պատկանելիութիւնը անտեսող ներգրաւումի այս քաղաքականութիւնը կը փաստէ օսմանեան պետութեան բարեսրտութիւնը՝ նոյնիսկ ոչ-մահմետականներու նկատմամբ: Հետեւաբար բացայայտ առեւանգումի քաղաքականութիւնը կը դիտուի որպէս «փրկարար» գործողութիւն²¹: Անկասկած, բազմաթիւ հայ մանուկներ ստոյգ մահէ ազատած են շնորհիւ այն մահմետական ընտանիքներուն կամ հաստատութիւններուն, որոնց փոխանցուած էին: Բայց անոնց վերապրումի նախապայմանը հայ ըլլալէ դադրիլ էր, ինչ որ մարդասիրութենէ տարբեր դրդապատճառ մը կը բացայայտէ: Պոլիս փոխանցուած ռեւէ որբ չէ յանձնուած մայրաքաղաքի մեծաթիւ բնիկ քրիստոնէայ թէ հրեայ ընտանիքներուն կամ քրիստոնէայ որբանոցներուն: Թէեւ շատ մահմետական օսմանցիներ, գթասարտութենէ մղուած, հայերը ընդունած եւ խնամքով վերաբերած են անոնց, այդուհանդերձ կեդրոնի հրահանգները եւ անոնց գործադրութիւնը՝ տեղոյն վրայ

կը բացայայտեն քաղաքականութիւն մը, գոր կրնանք կոչել «առեւանգում՝ բնաջնջումի համար»: Այս գործընթացը համեմատելի է այն ձեւին, որով բնիկ ամերիկացի մանուկներու գիշերօթիկ դպրոցները զանոնք «քաղաքակիրթ» ամերիկացիներ դարձնելու կը ձգտէին²²:

Պատմական ի՞նչ նախադէպ ծառայած է այս քաղաքականութեան յղացումին, եւ ի՞նչը մղած է մահմետական բնակչութիւնը՝ զայն գործադրելու այնքան արդիւնաւետ կերպով: Այս հարցադրումները կարելոր են, որովհետեւ անոնց պատասխանները կը լուսաբանեն հայոց վերաբերումը առեւանգեալներուն եւ անոնց շառաւիղներուն նկատմամբ:

Ինչպէս յայտնի է, Օսմանեան Կայսրութեան բնակչութիւնը կազմակերպուած էր կրօնական հիմքով, գէթ մինչեւ կայսրութեան վախճանական շրջանը: Ասիկա շատ տարբեր էր հրեական Ողջակէզը սնող պատկերացումէն, որովհետեւ ««հայկականութիւնը» շատ աւելի նուազ անջնջելիօրէն դրոշմուած [էր] թուրքերուն վրայ, քան «հրեականութիւնը» խորապէս ցեղապաշտ նացիներուն վրայ»²³: Ողջակէզի ընթացքին, բնաջնջումի առաջին թիրախը յղի կամ փոքրիկ երեխայ ունեցող հրեայ կիներն էին: Բռնաբարումը պաշտօնապէս արգիւտուած էր, իսկ տեղի ունենալու պարագային, հրեայ զոհերը սովորաբար կը սպաննուէին՝ «ցեղային ապականումը» կանխելու համար:

Ա. Աշխարհամարտի սկզբնաւորութեան, Իթթիհատի ղեկավարները հետզհետէ արմատական դարձած էին եւ ցեղապաշտ լեզու կը գործածէին: Հայերը յաճախ կը կոչուէին «ուռեր», որոնք վիրահատութեան պահանջը կը դնէին, «արիւնածուծեր», որոնք կը սնէին մահմետականներէն, կամ «մանրէներ՝ հայրենիքի մարմնին մէջ», գորս պետք էր ի սպառ ջնջել²⁴: Այսուհանդերձ, նման բռնապաշարի կիրարկումը արգելք չէ եղած այնպիսի քաղաքականութիւններու յղացումին ու գործադրումին, որոնք կը հիմնուէին այն ենթադրութեան վրայ, որ խմբաւորումներու միջեւ տարբերութիւնները բնածին ու անջնջելի չէին, այլ փոփոխելի: Հայ կիներու եւ երեխաներու արիւնը մահմետական ազգը ապականելու կարողութենէն զուրկ կը նկատուէր, որովհետեւ ներգործութիւն կամ հետեւանք չունէր: Ըստ քրիստոնէայ եւ մահմետական օսմանցիներու հայրագիծ եւ հայրաբնակ հասարակաց արանդութեան, երեխան

ինքնաբերաբար հորենական ընտանիքին ու համայնքին կը պատկանէր: Ըստ Քարոլ Փէյթմանի՝ թրքական գիւղի մը մէջ վարած հետազոտական աշխատանքի տուեալներուն վրայ հիմնուած պնդումին, կիները բացարձակապէս որեւէ դեր չունին պտղաբերութեան մէջ: Ասիկա իսլամի ու քրիստոնէութեան բաժնեկցած հայրութեան տրամաբանութիւնը կ'արտայայտէ, ըստ որուն՝ հայրը միակ արարիչն է, ըստ միաձնական մտայնութեան: Կիները երեխային բնախօսական նպաստ մը կը բերեն, բայց բնաչի մտածուի, թէ զայն կը յղանան²⁵: Արգանդը դատարկ ամանի մը (կամ դաշտի մը) կը վերածուի, որ զայն լեցնող հեղուկին (այսինքն՝ սերմին) կերպարանքն ու ձեւը կը ստանայ:

Օսմանեան պատմութեան բազմաթիւ օրինակներ կը փաստեն, թէ ինչպէ՛ս կիներն ու փոքր երեխաները վերածրագրաւորելի (reprogramable) կը նկատուէին, հետեւաբար թէ՛ արժէքաւոր եւ թէ՛ վտանգաւոր: Օսմանցիները որդեգրած էին իսլամական Հանաֆի մտածողութեան դպրոցին ուղղութիւնը, որ կը հիմնուի իրաւական հարցերու մասին կարծիքներու արտայայտութեան վրայ: Հանաֆի դպրոցը այս մտայնութիւնը կ'արտայայտէր՝ արտօնելով, որ մահմետականները ամուսնանային ոչ-մահմետական կիներու հետ, բայց արգիլելով ոչ-մահմետական այրերու ամուսնութիւնը մահմետական կիներու հետ²⁶: Կայսրութեան վեց դարերու տիրապետութեան ընթացքին, սուլթանները էթնիկ եւ կրօնական արտամուսնութիւն կնքած են: Բացառելով առաջին դարերու քանի մը դէպքեր, արքայական ռեւէ ամուսին ծագումով իսլամ կամ թուրք չէր: Թէեւ գրեթէ բոլոր սուլթաններուն մայրերը ծագումով քրիստոնէայ էին, կայսրութեան հպատակները երբեք չէին մտածեր տիրապետող ընտանիքին իսլամութիւնը հարցականի տակ առնել: Տրուած ըլլալով, որ իսլամական ասանդութիւնը օրինաւոր կը նկատէ այրի մը՝ ստրուկէ ունեցած զաւակը (ի տարբերութիւն եւրօ-ամերիկեան ապօրինութեան օրէնքներու), ստրկային կենակցութիւնը արքայական վերարտադրութեան նախասիրած միջոցներէն մէկը մնացած է²⁷: Մեռային գուզնկերութիւնը ոչ-մահմետական ստրուկներու հետ առաւելութիւն մըն էր, որովհետեւ ստրուկները տոհմային անցեալ չունէին, այսինքն՝ ընտանիք մը, որ իրաւունք ունենար խառնուելու արքայական ընտանիքի գործերուն եւ, թերեւս, օսմանեան քաղաքականութեան:

Հաւանաբար, սուլթանի մը դրդապատճառները շատ տարբեր չէին օսմանցի մահմետական այրերու պատճառներէն, որոնք հայ կին մը կ'ընտրէին կամ կ'առեւանգէին ամուսնական նպատակներով: Օժիտ վճարելէ խուսափելու կողքին, անոնք ձեռք կը բերէին կին մը, որ զրկուած էր իր ծննդեան ընտանիքի թանկագին աջակցութենէն: Որոշ աղբիւրներ կը հաւաստեն, որ հայ կիներու բարձր պահանջարկ եղած է, որովհետեւ տեղացի մահմետականներն ու քաղաքական գործիչները զանոնք աւելի գեղեցիկ, յառաջադէմ եւ կրթուած կը նկատէին, եւ նոյնիսկ՝ աւելի արեւմտականացած, քան մահմետական կիները²⁸: Հայազգի կին ունենալու ամէնէն գործնական պատճառը, սակայն, անվճար ու շահագործելի աշխատուժ ըլլալն էր, իսկ օսմանեան տունները վարժուած էին այդ փորձառութեան: Միջին եւ բարձր դասակարգի շատ ընտանիքներ՝ քրիստոնէայ թէ մահմետական, երեխաներ որդեգրած էին (*besleme* կամ *evlatlık*), սովորաբար՝ աղջիկներ, եւ մեծցուցած՝ տան ծառայ դարձնելու նպատակով: Որդեգիր աղջիկները որպէս անվճար աղախին կը ծառայէին տէրերու, որոնք իրենք զիրենք «բարեգործ» կը նկատէին, քանի որ կը կերակրէին, կը հիւրընկալէին եւ կը հագցնէին անձ մը, որ այլապէս մեռած պիտի ըլլար²⁹: Հաւանական է, որ Ա. Աշխարհամարտի ընթացքին, հայեր առեւանգած (կամ «պաշտպանած/փրկած», ըստ այլ ընթերցումի) օսմանցի մահմետականները այս հոլովոյթը իմաստաւորած ըլլան իրենց սեփական մեծահոգութեան տեսանկիւնէն: Աւելի'ն. օսմանեան կառավարութիւնը խրախուսած է այս փոխանցումը՝ հայ որբ մը ընդունողներուն վճարելով կամ որբին մահացած ծնողներուն սեփականութիւնը մահմետական նոր ընտանիքին փոխանցելով³⁰:

Օսմանեան այլ հիմնարար սովորութիւն մը՝ *devshirmé* (մանկահաւաք), դասական օրինակ մըն է պետութեան խոր համոզումին՝ մանուկները ձուլելու կարողականութեան: Մանուկներու զինուորագրման այս համակարգին մէջ, օսմանցիները անչափահաս քրիստոնէայ երեխաներ կը հաւաքէին ու կ'իսլամացնէին եւ իսլամական արանդութիւններու կը վարժեցնէին, մարզելով ու անդամագրելով զանոնք կայսերական հաստատութիւններու, ներառեալ՝ պալատին ու բանակին: Այս համակարգը ուղղուած էր կանխելու թուրք ազնուականութեան ստեղծումը, որ ենիչերիներու դասակարգին մրցակից կրնար

դառնալ: Այլ խօսքով, մանկահաւաքի համակարգը թէև մահմետական բնակչութեան աճ չէր հետապնդէր, սակայն կ'աշխատէր ոչ-մահմետական երեխաներ մահմետական այրերու վերածել:

Թուրքերու ժամանումէն առաջ իսկ, (արքաներու թէ սովորական մարդոց կողմէ) առեւանգումը հինաւորաց սովորութիւն մըն էր: Առեւանգումը իշխանութեան, արժեքի, առնականութեան եւ քաջութեան վերահաստատումն էր, որ դիմացինը թերարժեւորելու յաւելեալ «յատկութիւն» մըն ալ ունէր. առեւանգեալները կը ստորնանային, իսկ անոնց ընտանիքները, համայնքները եւ ազգը կ'անպատուէին³¹: Աղջիկներու եւ կիներու «մանր» առեւանգումներուն սովորական նպատակը սեռային յարաբերութիւնն ու ամուսնութիւնն էին, մինչ տղաքը մեծաւ մասամբ կ'առեւանգուէին՝ հնարաւոր ապստամբ հրոսախումբերու մաս դարձնելու համար, ինչպէս որ ներկայիս տեղի կ'ունենայ փրփրիկեան ու ասիական երկիրներու մէջ՝ այսպէս կոչուած «երեխայ զինուոր»ի հասկացողութեան անունին տակ: Այս վերջին սովորութեան հետեւանքով, ԺՁ. դարէն օսմանեան պետութիւնը առեւանգումի ոճիրին որպէս պատիժ աւելցուցած էր նաեւ ամորձատումը³²: Այսուամենայնիւ, նոյնինքն սուլթանները առեւանգումով կը զբաղէին, իսկ անոնց «հերոսական» առեւանգումները, երբ թշնամի առաջնորդի մը կիներ կամ զաւակները կը գերեվարուէին, գերագոյն յաղթանակ կը նկատուէին, ինչ որ օրինական կը դարձնէր ռազմագերիներու առումը օսմանեան զինուորներու կողմէ:

Հայոց Յեղասպանութեան ժամանակ հայ կիներու եւ մանուկներու վերաբերող Ներքին Գործոց Նախարարութեան հրամանագրերը տեղական իշխանութիւններուն հասնելէ առաջ, թէ՛ դահիճները, թէ՛ զոհերը արդէն գիտէին, որ երկար ճամբորդութիւնը դէպի հարաւ բազում բռնաբարումներ եւ առեւանգումներ պիտի ենթադրէր: Ամէն ոք պիտի վերյիշէր համիտեան ջարդերը, որոնց ընթացքին տղամարդիկ սպաննուած էին, կալուածներ՝ կողոպտուած, եւ կիներ ու մանուկներ՝ առեւանգուած: Այնուհետեւ, ֆրանսացի եւ բրիտանացի հիւպատոսներուն յարաճուն ճնշումին պատճառով, պետութիւնը՝ հետաքննական յանձնախումբ մը դրկած էր գաւառները՝ մահմետական տունները գտնուող քրիստոնէայ գերիներու շուրջ

պրպտումներ ընելու: Յանձնախումբին ատենապետը՝ Ապտիլլահ փաշա, եզրակացուցած էր, որ Արիֆ էֆենտի՝ տեղական քիւրտ ղեկավար եւ ջարդերու ու առեւանգումներու ազդեցիկ կազմակերպող, պէտք է արքորուէր «յօրինակ նման այլոց»: Օսմանեան կառավարութիւնը, սակայն, մերժած էր զայն արքորել եւ, փոխարէնը, թելադրած՝ Ապտիլլահ փաշային, որ «ինքզինքը ժամանակաւորապէս Մոսուլ տեղաւորէր»³³: Առեւանգեալներէն միայն աննշան մաս մը ազատած էր: Օտարականներու «միջամտութիւն»ը անօգուտ եղած էր, որովհետեւ սուլթանը բացարձակ ղեկավարը մնացած էր ազդեցիկ պետութեան մը, որ կարելորութիւն կը ներկայացնէր եւրոպական պետութիւններու համար:

Ա. Աշխարհամարտի աւարտին, սակայն, պարտուած Օսմանեան Պետութեան վիճակը շատ տարբեր էր: Մայիս 1915ին դաշնակիցները ազդարարած էին Բարձրագոյն Դրան, թէ օսմանեան կառավարութիւնը պատասխանատու պիտի նկատուէր ջարդերուն եւ *«Թուրքիոյ կողմէ գործուած նոր ոճիրներուն»*³⁴: Երիտասարդ Թուրք ղեկավարները երկրէն փախուստ կու տային 1 Նոյեմբեր 1918ին, իսկ նոր կառավարութիւնը կը հրամայէր, որ բոլոր «քրիստոնէայ աղջիկներն ու երեխաները, որոնք բռնի ուժով (*cebren*) պահուած էին մահմետական տուներու մէջ, ազատ արձակուին եւ վերադարձուին իրենց հարազատներուն»³⁵: Ինն օր ետք ստորագրուած զինադադարին պայմանները թեթեւցնելու յոյսով, հրամանը կ'ազդարարէր, որ գերեզարոււմը *«դէմ [է] մեր հայրենիքի հիմքերուն եւ կը խախտէ մեր Մահմանադրութիւնը [1876ի *Kânûn-ı Esâsî*'], որ բոլորին կ'ընծայէ անձնական ազատութիւն, անկախաբար կրօնքէ եւ աղանդէ»*: Գերիները վերադարձնելու մերժումները, կը շարունակէր փաստաթուղթը, *«կրնան առաջնորդել մեղադրանքներու՝ օսմանցիներուն դէմ: Հետեւաբար, ասիկա նորէն չի կրնար պատահիլ եւ պէտք է կանգ առնէ անմիջապէս»*³⁶:

Զինադադարին ստորագրութիւնը՝ օսմանեան պարտութիւնը հաստատելով, քաղաքական նոր մթնոլորտի մը ազդանշանը դարձած էր, ուր առեւանգեալները կրնային ազատագրուիլ կամ իրենք-զիրենք ազատել: Օսմանեան ռազմագերիները ազատ արձակելու դրոյթը համընդհանուր մեկնաբանութեան

կ'ենթարկուէր՝ յօգուտ իսլամացած կիներու եւ մանուկներու: Տեղահանուած հայերը իրաւունք կը ստանային իրենց բնակավայրերը վերադառնալու: Դաշնակիցները շուտով կը գրաւէին Պոլիսն ու Անատոլիոյ որոշ շրջաններ: Պոլսոյ հայոց պատրիարքը՝ Զաւէն արք. Տէր Եղիայեան, Փետրուար 1919ին արտօրէն կը վերադառնար եւ հայկական *միլլէթը* ղեկավարելու իր պարտականութիւններուն գլուխը կ'անցնէր: Ազգային Ժողովը, որ համայնքային խնդիրները վերահսկած էր 1860ականներէն, իր գործունէութեան կը վերսկսէր: Պատրիարքին ստանձնած առաջին պարտականութիւններէն մէկը իսլամացած հայերու ազատագրումն էր: Ան նիւթական միջոցներ, անձնակազմ, ընթացակարգ եւ քաղաքականութիւն պէտք է յառաջացնէր՝ ազատագրութեան գործողութիւնը վարելու համար:

ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԹՆՈԼՈ՞ՐՏ. ՈՐԲԱՀԱԻԱՔԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Մահմետական տուներու եւ որբանոցներու մէջ բռնի պահուող մանուկներ եւ կիներ գտնելու, ազատագրելու եւ ազգային կեանքի վերադարձնելու արշաւները «որբահաւաք» անունով ծանօթ դարձան: «Որբ» եզրոյթը ո՛չ միայն մէկ կամ երկու ծնողներէ զուրկ մանուկներու կը վերաբերէր, այլեւ այն կիներուն, որոնց ընտանիքը վերապրող արական անդամներէ զուրկ էր: Տարիքէն կամ սեռէն աւելի, որբութիւնը արական հարազատի մը չգոյութիւնը կ'ենթադրէր, ուստի թրքերէն համարժէքները *bi-kes*, *kimsesiz*, կամ *sahipsiz* (անպաշտպան, չպահանջուած կամ մոռցուած) էին, որոնց պէտք էր աւելցնել *yetim* (հայրազուրկ որբ) եւ *öksüz* (մայրազուրկ որբ) եզրոյթները:

Թէեւ որբահաւաքը Պոլսոյ մէջ սկսած է Մուտրոսի զինադադարէն ետք, սակայն Սինայի, Պաղեստինի, Սուրիոյ եւ Իրաքի մէջ, արդէն ծայր առած էր 1917ի վերջաւորութեան՝ բրիտանացիներու ժամանումէն ետք³⁷: Պոլսոյ մէջ, Պատրիարքարանը կը ստեղծէր եւ նիւթապէս կը հովանաւորէր Որբահաւաք Մարմին մը, որուն մաս կը կազմէին վերակացու մը (Առաքել Չազըրեան, որ Փարիզ ուսանած քիմիագիտութեան դասախօս էր Պոլսոյ Համալսարանը) եւ չորս երիտասարդներ, որոնք Պատրիարքին անձամբ ծանօթ էին ու անոր վստահութիւնը կը վայելէին³⁸: Քանի մը աղջիկներ ու կիներ ալ գործի անցած էին՝ մահմետական վայրեր աւելի դիւրաւ մուտք գործելու համար³⁹:

Բրիտանական դեսպանատունը իւրաքանչիւր որբախոյզի յանձնած էր դաշնակից ոստիկանութեան ուղղուած նամակ մը, որ անոր օժանդակութիւնը կը հայցէր ի պահանջեալ հարկին: Բրիտանացիները նաեւ բռնագրաւած էին թուրք փաշաներու նախկին բնակարաններ՝ ազատեալներուն ապաստան տալու համար: Բնիկ պոլսահայ կիներու կողմէ հիմնուած ու ղեկավարուած Հայ Կարմիր Խաչը օթեւաններուն մեծ մասին գործունէութիւնը կը վերահսկէր: Ըստ Զաւէն Պատրիարքի յուշերուն, մինչեւ 1922ի վերջաւորութեան, որբախոյզները հինգ հազար առեւանգուածներէն շուրջ երեք հազարը գտած էին Պոլսոյ մէջ⁴⁰:

Մերի դաշնագիրը որբահաւաքին աւելի զարկ կու տար: Ան ո՛չ միայն 1914-1918ի բոլոր իսլամացումները չեղեալ կը համարէր, այլեւ օսմանեան կառավարութենէն կը պահանջէր օժանդակել խնդրոյ առարկայ անձերը գտնելու եւ իրենց բնիկ համայնքներուն վերադարձնելու բոլոր ջանքերուն: Նորակազմ Ազգերու Ընկերութիւնն ալ կ'ընդգրկուէր պատերազմի փոթորիկէն զարնուած միջին արեւելեան ընտանիքները միացնելու ճիգերուն⁴¹: 1922էն սկսեալ, Ազգերու Ընկերութեան Միջին Արեւելքի Կիներու եւ Մանուկներու Պաշտպանութեան Հետաքննական Յանձնախումբը ազատագրութեան գործողութիւններ կը կատարէր Պոլսոյ ու Հալէպի մէջ եւ օթեւաններ կը բանար. 1922-1926ին չորս հազար չափահասներ եւ չորս հազար մանուկներ ազատագրեուած են, մեծաւ մասամբ՝ հայեր⁴²:

Մուտրոսի զինադադարին եւ Պոլսոյ գրաւումին յաջորդող առաջին ամիսներուն յատկապէս, օսմանեան կառավարութիւնը որբահաւաքին աջակից կ'ըլլար⁴³: Գաւառ ուղարկուած հրահանգներ կը զգուշացնէին, որ հայեր պահող անձերը պէտք է զանոնք իշխանութիւններուն յանձնէին մէկ շաբթուան միջոցին, իսկ զանոնք թաքցնողները խստիւ պիտի պատժուէին: Հայերը կրնային յանձնուիլ եկեղեցական իշխանութեան կամ, անոր բացակայութեան պարագային, տեղական ոստիկանատան⁴⁴: Այս ազդարարութիւնները դրական արձագանգ գտած էին. Զինադադարին յաջորդող ամիսներուն կարգ մը թուրք կամ մահմետական ընտանիքներ կամովին իրենց մօտ գտնուած հայերը Պատրիարքարանին յանձնած են⁴⁵:

Սակայն, կառավարությունը իր աջակցությունը նուազեցուցած է 1919ի ընթացքին, երբեմն բացայայտորեն թշնամական կեցուածք որդեգրելով: Շատ մը հայերու ազատագրումը այժմ բռնի միջոցներով տեղի կ'ունենար, ինչ որ քաղաքական փոփոխական պայմաններու թէ՛ հակադեցութիւն եւ թէ՛ նշան էր: Դաշնակիցները սիրաշահելու ուղղուած սուլթան Մեհմետ Վահտեթիինի հակա-իթթիհատական քաղաքականութիւնը իր վստահելիութիւնը կը կորսնցնէր, երբ Մայիս 1919ին յոյները արեւելեան Փոքր Ասիան կը գրաւէին: Թուրք ազգայնական շարժումը, որ աճած էր զինադադարէն ետք Անատոլիոյ մէջ, այժմ կազմակերպուած էր Մուսթաֆա Քեմալի առաջնորդութեամբ եւ հետզհետէ աւելի հակահայ եւ հակայոյն բնոյթ կը ստանար: Արդէն Փետրուար 1919ին «մահմետական» որբերու վերստացումը եւ հայացումը սկսած էր մտահոգել մահմետական բնակչութիւնն ու կառավարութիւնը⁴⁶:

Որբախոյզները այլազան աղբիւրներէ ծանօթ էին հայ որբերու տեղադրութեան: Առաքել Չազըրեան կարողացած էր Պոլսոյ Իսլամ Կիներու Աշխատանքի Ընկերութեան (*Kadınları Çalıştırma Cemiyeti Islâmiyesi*) տոմարները ձեռք ձգել եւ իսլամացած մանուկներուն անունները գտնել, քանի որ անոնց ծնողներուն հայկական անունները տակաւին տեսանելի էին, թէեւ մասնակիօրէն ջնջուած ու թրքական անուններով ծածկուած⁴⁷: Այլ որբեր գտնուած էին դրացիներու եւ ազգականներու տեղեկատուութեան շնորհիւ, մինչ ազատագրուած հայերը յաճախ տեղեկութիւններ կը հայթայթէին ուրիշ գերիներու մասին⁴⁸: Յաճախ, իսլամացած հայերը՝ իմանալով որբահաւաքի մասին, քաջութիւնն ու միջոցները կը գտնէին ամենամօտ օթեւանը ապաստանելու: Երբեմն որբախոյզները յոյն մանուկներու կը հանդիպէին ու կը վերադարձնէին Յունաց Պատրիարքարան, որ նմանօրինակ գործողութիւններու ձեռնարկած էր՝ իսլամացած յոյն ուղղափառ որբեր յայտնաբերելու համար⁴⁹:

Յոյն եւ հայ ազատագրութեան ճիգերուն խորապէս ցնցիչ երեւոյթներէն մէկը կարգ մը անձերու ազատագրուելու մերժումն էր: Բազմաթիւ «գերիներ» իրենց տեղը կ'ուզէին մնալ⁵⁰:

Վկայութիւններ, յուշագրութիւններ ու բանաւոր պատմութեան հարցազրոյցներ, ինչպէս եւ Մարտ 1919ի տեղեկագիր մը, որ պատրաստուած էր Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեան

համար, կ'օգնեն հասկնալ, թէ ինչո՞ւ որոշ կիներ եւ մանուկներ դէմ եղած են վերահայացման⁵¹: Առեւանգումը, կուսութեան կորուստը, չարաշահումը թշնամիի ձեռքին կամ թշնամիէ զուակ ունենալը այնպիսի խոր դժբախտութիւններ կը սեպուէին, որ բազմաթիւ ամուսնացած կիներ իրենց յարաբերաբար հանդուրժելի պայմանները չէին ուզեր լքել բնիկ համայնքին մէջ ստոյգ խարանուճով ապրուելիք կեանքի մը փոխարէն⁵²: Իսլամացածները, եթէ այդ քայլին դիմած էին նոյնիսկ զենքի պարտադրանքով եւ նոյնիսկ այր ըլլալով հանդերձ, տեսած էին, թէ ինչպէս իրենց անունը սեւցած էր⁵³: Ոմանք կ'ենթադրէին, որ հայերը պիտի մերժէին իրենց «իսլամ» զուակները, զորս չէին ուզեր լքել: Շատերը գիտէին, որ ընտանիք մնացած չէր, որուն ծոցը վերադառնային, իսկ ուրիշ շատեր գնուած կամ փրկուած էին ոստիկաններէն «խաղաղ մահմետականներու կողմէ, որոնք յարաբերաբար հանդուրժելի կեանք մը ապահոված էին անոնց» եւ որուն համար կիները երախտապարտ կը մնային⁵⁴: Ոմանք կը սիրէին իրենց ամուսինները եւ փոխադարձաբար սիրուած էին⁵⁵: Կարգ մը կիներ, որոնք անբախտ ամուսնութիւններ կնքած էին պատերազմէն առաջ, թերեւս իրենց նոր կեանքը բարելաւում նկատած ըլլան, իսկ առեւանգումը՝ իրենց կնոջական վիճակին բարելաւում⁵⁶:

Վերադառնալու առաւել եւս անտրամադիր էին մանուկները, իսկ անչափահաս բազմաթիւ վերադարձողներ ետ կը փախչէին: Ազատագրութեան պահուն անոնք արդէն չորս կամ հինգ տարի անցուցած էին իրենց «նոր» տուներուն կամ հաստատութիւններուն մէջ, իսկ շատեր ուրիշ կեանք չէին ճանչնար: Որբահաւաքը առեւանգումի կը նմաներ այն պարագաներուն յատկապէս, երբ մանուկը ներդաշնակօրէն ձուլուած էր ընտանիքի մը մէջ: Որոշ պարագաներու՝ մանուկները պարզապէս իրենց հայութիւնը ընդունելէ շատ կը վախնային⁵⁷:

Պատրիարքարանը եւ օսմանեան կառավարութիւնը իրարմէ տարբեր քաղաքականութիւններ ունէին վերադառնալ մերժող առեւանգեալներուն հանդէպ: Առհասարակ, հայերը համակարծիք էին, որ բոլոր հայ մանուկները ազգին ծոցը վերադառնային, անկախաբար իրենց ցանկութենէն կամ հաւատացեալ մահմետական եղած ըլլալ պնդելէն: Օսմանեան կանոնները այս քաղաքականութեան կը սատարէին, հրահանգելով որ մինչեւ

քսան տարեկան բոլոր նախկին հայերը, անկախաբար իրենց կեցուածքէն, կը նկատուէին բռնութեամբ իսլամացածներ, ինչ որ ինքնաբերաբար չեղեալ կը նկատուի անոնց կրօնափոխութիւնը⁵⁸:

Հեղինակութեան երկու կեդրոնները տարամիտումի մէջ էին, երբ խնդիրը կու գար քսան տարեկանէն վեր անձերու: Օսմանեան կառավարութիւնը հրահանգած էր, որ այդպիսի անձեր իրաւունք ունենային իրենց յարմար դատած լաւագոյն ընտրութիւնը կատարելու: Գլխաւոր հարցը ամուսնացած կիներն էին. գաւառներուն յղուած 28 Նոյեմբեր 1918 թուակիր հրահանգը կը պնդէր, որ «սահմանադրութիւնը կը հրահանգէ խղճի ազատութիւնը» եւ որ քսան տարեկանէն վեր ամուսնացեալ կիներ ազատ էին վերահայանալու, որուն պարագային անոնց իսլամացումն ու մահմետական ամուսնութիւնը չեղեալ պիտի համարուէին: Եթէ ուզէին իրենց բնիկ կրօնքին վերադառնալ առանց ամուսնալուծուելու, դատարան պէտք է դիմէին⁵⁹: Մինչեւ քսան տարեկան ամուսնացեալ կիներուն կրօնափոխութիւնը թէեւ անվաւեր կը նկատուէր, սակայն անոնք չէին պարտադրուէր վերահայանալու եւ ամուսնալուծուելու - անոնց պարագան, կը յայտարարէր կառավարութիւնը - պիտի որոշուէր դատարանին մէջ, անոնց բնիկ ընտանիքի անդամներու (եթէ կային), եկեղեցական իշխանութիւններու, քրիստոնէայ միախոնարներու (կամ այլ արեւմուտքցիներու) եւ օսմանցի պաշտօնատարներու ներկայութեան⁶⁰:

Պատրիարքարանը տարբեր դիրքորոշում որդեգրած էր, պնդելով, որ անկախաբար տարիքէ, ընտրութենէ, ամուսնական կարգավիճակէ կամ ինքնաբնութագրումէ, ամէն նախկին հայ պէտք է ետ պահանջուէր, իսկ փախչելու պարագային՝ բանտարկուէր⁶¹: Կարելոր է դիտել տալ, որ որբահաւաքին ո՛չ բոլոր մասնակցողները այս տեսակէտին համաձայն էին: Ոմանք, ինչպէս Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան նախագահ Աւետիս Ահարոնեանը, կը մտածէին, որ այն կիները որոնք կ'ապրէին համեմատաբար տանելի մահմետականներու հետ, զուակ ունէին եւ իրենց ապրելակերպին վարժուած էին, իրենց տեղը պէտք է մնային: Ահարոնեան չէր հաւատար, որ այն կիները, որոնք հանգիստ կեանք ունէին մահմետական տուններու մէջ, պիտի կարենային յաջողութեամբ վերահամարկուիլ հայութեան մէջ: Ան կ'ընդգծէր, որ հայերը ճիգ պէտք չէ խնայէին

«վայրագ ցեղեր»ու ձեռքը տառապող իւրաքանչիւր հայ աղջիկ եւ կին ազատագրելու, բայց կը զգուշացնէր, որ եթէ կին մը նոր մահախտական ընտանիքը ընտրէր, անոր ազատագրումը բռնի միջոցներով՝ ընդդէմ ամուսնոյն ցանկութեան, պիտի գրգռէր «վայրագ ցեղեր»ը, որոնք վաղուան Հայաստանի դրացիները պիտի ըլլային⁶²:

Զարուհի Պահրիի պէս ուրիշներ ալ կը համարէին, որ անհատական երջանկութեան նկատումները երբեմն անձնական ցանկութեան յարգանքը կը պարտադրէին: Պահրի բնիկ պոլսահայ էր՝ Զարուհի Գալէմքեարեանի նման, ու Զինադադարի շրջանին շատ աշխուժ դերակատարութիւն ունեցած է որպէս որբանոցի վարիչ, յօդուածագիր եւ Հայ Կարմիր Խաչի աշխատող, որուն հիմնադիրներէն մէկն էր: Զաւէն Պատրիարքի՝ անձնական խնդրանքով, ան ստանձնած էր իր տան դիմացը՝ Շիշլիի մէջ գտնուող Չեզոք Տան որբանոցի մը տնօրէնութիւնը, ուր կիներ եւ մանուկներ կը պատսպարուէին մինչեւ որ անոնց իսկական ինքնութիւնը պարզուէր:

Իր յուշերուն մէջ, Պահրի չափաւոր քննադատութեամբ հանդէս եկած է, նշելով, որ Պատրիարքը բնաւ համակրանք չէր ցուցաբերած այն ազատագրուած կիներուն հանդէպ, որոնք կ'ուզէին վերադառնալ առեւանգուելէ ետք մտած տուները: Պահրի՝ խիստ քննիչ մը, որ մէկէ աւելի անգամներ օրերով իրենց հայութիւնը ժխտած երեխաներու եւ կիներու հայկական ինքնութիւնը երեւան բերած է, գէթ երկու պարագաներու Պատրիարքէն խնդրած էր, որ այսպիսի կիներ ազատ ձգէր: Առաջին դէպքին, Պատրիարքը, կասկածելով, որ Պահրի կրնար օժանդակել ոմն Ադանի Գազազեանի փախուստին (որ արդէն երկիցս փորձած էր փախչիլ), հրահանգած էր, որ Ադանի մտային հիւանդ յայտարարուէր եւ Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցը տեղաւորուէր: Արդարեւ, Ադանի, որուն միակ ախտը ամուսինին ու զաւակին կարօտն էր, հիւանդութեան որեւէ նշան չունէր: Պահրի անոր զաւակը սահմանած էր որպէս «իրաւ թուրք» ու աւելցուցած. «[Բ]այց իր արիւնէն է եւ իր զաւակն է վերջապէս»⁶³: Երկրորդ պարագային, երիտասարդ հայուհի մը երջանիկ ամուսնութիւն մը կնքած էր պարսիկի մը հետ, որ զայն փրկած էր տեղահանութեան ժամանակ: Մինչ Ազգային Ժողովի պաշտօնեաներ արգիլած էին որ կիներ վերադառնար իր

ամուսինին քով, Պահրի դառնութեամբ նշած է, որ նոյն ժամանակ անոր ամուսինին նոյնպէս պարսիկ եղբայրը ձեռնարկած էր ամուսնանալու պոլսահայ աղջկան մը հետ, ազատօրէն եւ երկու կողմերու ամբողջական հաւանութեամբ⁶⁴: Զաւէն Պատրիարքի յուշերը մանրամասնօրէն կ'անդրադառնան Չէզոք Տան, բայց լուռ կը մնան մահմետականներու մէջ մնալ նախընտրած որբերու եւ կիներու մասին:

Նման դէպքեր, ինչպէս եւ բազմաթիւ բողոքներ, թէ որբահաւաքները իսկական մահմետականներ կը վերահայացնէին՝ թիրիմացութեամբ կամ դիտումնաւոր կերպով, անհանգստացնող բնոյթ ունէին թուրք պաշտօնատարներու եւ հանրութեան համար: Մէկ խմբաւորումէն միւսը փոխանցուելով, կիներ ու մանուկներ կը յայտնուէին բուռն վիճաբանութիւններու կիզակէտին, թէ ո՞վ էր առեւանգողը⁶⁵: Թուրքերը կը մեղադրէին հայերը որպէս նորածիններու գողեր *«որոնք իրենց պատերազմական ժամանակի կորուստները կը յուսային համալրել մահմետական աւագանէն»*⁶⁶: Կառավարամետ թրքական թերթեր կը պնդէին, թէ հայերը մահմետական մանուկներուն ծեծ կը սպառնային, որպէսզի «ընդունէին» իրենց հայկական ծագումը⁶⁷: Հայ մամուլը կը հակադարձէր՝ թուրք մամուլը ամբաստանելով ցեղասպան մտայնութեան պահպանումով, երբ զոհերը կը մեղադրուէին դահիճներու յանցանքներուն համար: *Տողովորդի Չայնքի* խմբագիր Տիգրան Զաւէն այսպէս կ'եզրափակէր իր յօդուածը այս նիւթին մասին. *«Իրաւ է թէ միամտութիւն է խօսիլ գոյներու վրայ կոյրի մը, ձայներու վրայ խուլի մը եւ խղճի վրայ ջարդարարի մը»*⁶⁸:

Մանուկներու բուն պատկանելիութեան վերասահմանումին ի խնդիր քաղաքական մրցակցութիւնը մինչեւ ուշ ԺԹ. դար հասնող պատմութիւն մը ունի Օսմանեան Կայսրութեան մէջ: Թէեւ իրենք զիրենք ազգ համարող հաւաքականութիւնները մանուկներուն խորհրդանշական հզօր դեր վերագրած են, ուշ Օսմանեան Կայսրութեան պայքարը «ոչ ոքի երեխաներուն» մասին նաեւ փլուզուող կայսրութեան ժողովրդագրական մտահոգութիւնները կ'արտայայտէր: Արագօրէն արդիականացող Պոլսոյ քաղաքային փոփոխական հիւսքին հետ միասին, այս մտահոգութիւնները մրցակցութեան առաջնորդած են պետութիւնը, ոչ-մահմետական աշխարհական ու կրօնական ղեկավարները եւ միսիոնարները՝

գտածոյ եւ լքուած երեխաներու «սեփականացման» համար⁶⁹: Մինչ կեդրոնական պետութիւնն ու քաղաքապետութիւնը կ'ենթադրէին, որ բոլոր գտածոյ երեխաները մահմետական էին, ոչ-մահմետական ղեկավարները կ'առարկէին, թէ առնուազն անոնք, որոնք կը լքուէին եկեղեցիներու եւ սինակոկներու առջեւ, պէտք է ընդունուէին համապատասխան համայնքին կողմէ: Կաթողիկէ միսիոնարներու ստանձնած աշխուժ դերը՝ գտնուած մանուկներու խնամքին մէջ, յունաց եւ հայոց պատրիարքարանները ահագանգի մատնած էր, որովհետեւ միսիոնարները, որոնց թոյլատրուած չէր մահմետականներու կրօնափոխութիւնը, կը շարունակէին քրիստոնէայ երեխաներ ընդունիլ ու կաթողիկէ դարձնել:

Յետպատերազմեան Պոլսոյ մէջ, հակընդդէմ կողմերու պայքարը այնքան սուր էր, որ բրիտանական գրաման ուժերու միջամտութեամբ «Չէզոք Տուն»-եր բացուած էին՝ մանուկներու կամ կիներու տուեալ խումբի մը պատկանելիութիւնը ճշդելու համար: Պոլսոյ Չէզոք Տունը (թրքերէն՝ *Bitarafhane*) հաստատուած էր Շիշլի, Հայ Կարմիր Խաչի վերոյիջեալ մայրանոցին մօտ: Թուրքէ մը, հայէ մը եւ ամերիկացի տնօրէնուհիէ մը բաղկացած յանձնախումբ մը կը վարէր զայն: Մահմետական ինքնութեան պնդում ընող մանուկներ եւ երիտասարդ կիներ, որոնք իրենց հայկական ինքնութիւնը թաքցնելու կասկածի տակ էին՝ իսլամական վրէժխնդրութենէ վախի կամ պարզապէս ուղեղալուացքի հետեւանքով, հոն կը մեկուսացուէին իրենց մահմետական ընտանիքներէն: Անոնք, քանի մը շաբաթ հայերով շրջապատուած ապրելէ ետք, իրենց հայ ըլլալը մեծաւ մասամբ կ'ընդունէին⁷⁰: Այս գործընթացին միջոցին, թուրք տնօրէնը հրաժարած է որպէս բողոքի նշան, այն պնդումով, որ թուրք մահմետական մանուկները հայացումի կ'ենթարկուէին:

Առկայ փաստերը ցոյց կու տան, որ որբահաւաքը գիտակից եւ տարածուն հայացման քաղաքականութիւն կիրարկած չէ, իսկ որոշ սխալներ ճշգրտուած են՝ մանուկներու կամ կիներու իրենց ընտանիքներուն վերադարձով⁷¹: Սրբագրութիւնները ո՛չ միայն կը միտէին թիրիմացութիւններ ճշդելու, այլեւ ցոյց կու տային ազգային իշխանութիւններուն զգուշութիւնը թուրք ծրագիրներու նկատմամբ, որոնք, անոնց կարծիքով, ուղղուած էին հայերը որպէս թուրք երեխաներու առեւանգողներ ներկայացնելու յաչս գրաման ուժերուն եւ Ազգերու Ընկերութեան: Մարտ 1922ի

ներքին տեղեկագրի մը մէջ, Առաքել Չազրրեան դիտել տուած էր Պատրիարքին, որ եթէ թուրք մէկ երեխայ իսկ գտնուէր հայկական որբանոցի մը մէջ, թուրքերը մեծ գայթակղութիւն պիտի սարքէին: Ան խորհուրդ տուած էր, որ հայկական որբանոցները արձակէին այն սակաւ մանուկները, որոնք կը պնդէին թուրք ըլլալու մասին:

Յայտնի չէ, թէ այս արձակումը իրօք տեղի ունեցած է⁷²:

Թէեւ հայացումը ընդհանուր քաղաքականութիւն չէր, որբախոյզները կարկինը շատ լայն բացած էին անձի մը հայութիւնը գնահատելու համար: Եթէ ենթական չէր բողոքեր եւ չէր պահանջուէր ոեւէ մէկու կողմէ, ան հայ կը համարուէր, նախկին լեզուն, ընտանիքը կամ վայրը յիշէր թէ ոչ: Չարուհի Պահրի պատմած է, թէ ինչպէս ոմն Ջեքիլէ՛ ինքզինք որպէս հայ ներկայացուցած կին մը, դիւրաւ օթեւան գտած էր հայկական որբանոցներու մէջ, թէեւ ո՛չ հայերէն գիտէր եւ ո՛չ ալ հայու կը նմանէր⁷³: Աղաւնի Գազազեանի մահմետական ամուսինը Ջեքիլէն վարձած էր, որպէսզի ապաստարանը մտնելով իր կինը համոզէր վերադառնալու մասին:

Որքի մը հայ ըլլալու հնարաւորութեան մշտապէս կողմնակից ըլլալէ գատ, իշխանութիւնները երբեմն բռնի խոստովանութիւններ կը կորզէին (ճշմարիտ կամ թերեւս կեղծ) եւ մերթ մահմետական երեխաներ կը հայացնէին կամ կ'անտեսէին, երբ ուրիշներ նման բան ընէին⁷⁴: Ամերիկահայ գրագէտ Արամ Հայկազ (1901-1986), որ այդ ժամանակ պատանի մըն էր «Էսաեան» որբանոցին մէջ, իր յուշերուն մէջ պատմած է տասը տարեկան մանուկի մը մասին որ, ի տարբերութիւն շատերու, իր հայութիւնը չէր ընդունէր եւ որբանոցը որոշ ժամանակ անցընելէ ետք, նոյնիսկ սպառնալիքներու եւ ճնշումներու տակ կը շարունակէր պնդել իր թրքութեան մասին: Ի վերջոյ, Հայկազ ու իր ընկերները հաւատալով հանդերձ անոր պնդումներուն, որոշած էին, որ «եթէ նոյնիսկ ան գտարիւն թուրք էր, պահենք ու աստիճանաբար հայացնենք զայն»⁷⁵:

Հայկազի բացատրութիւնը, թէ ինչու պահած էին այս երեխան, գիտնալով հանդերձ, թէ ան թուրք մայր ու հայր ունէր որբանոցի պատերէն դուրս, մեզ կ'առաջնորդէ հարց տալու, թէ ինչու ազատագրութեան այս ճիգը երբեմն այնքան յարձակունակ, կրքոտ եւ վճռական էր: Հայկազի հետ աշխատած որբերէն մէկը հաստատած է. «*Անոնք մեզմէ հազարներով թրքացուցին, հաստ*

մ'ալ մենք անոնցմէ հայացնենք»⁷⁶: Իր ընտանիքէն միակ վերապրող Արամ Հայկազը, որ պատերազմի տարիները անցուցած էր օսմանեան Քիւրտիստանի մէջ, ուր կրօնափոխ եղած ու որդեգրուած էր մահմետական ընտանիքներու կողմէ, նշած է թէ այստեղ հարցը փոխվրէժի մասին էր: Վրէժը այս պատմութեան մէկ մասն էր միայն: Ամբողջութիւնը հասկնալու համար, պէտք է հասկնանք ժամանակակից միջազգային քաղաքական շրջագիծը եւ ընթացող հողային պայքարը:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԵՒ ՀՈՂԻ ՊԱՀԱՆՁԸ

Կիներու եւ մանուկներու շուրջ պայքարը կը խորհրդանշէր հայ-թրքական աւելի ընդարձակ հակամարտութիւնը Արեւմտեան Հայաստանի շուրջ: Ինչպէս անչափահասներու եւ կիներու պարագային, երկու կողմերը հողը որպէս սեփականութիւն կը պահանջէին եւ կը պայքարէին ռազմական կամ դիւանագիտական միջոցներով:

Ք.ի պատմութեան ժամանակ, մեծ պետութիւնները հաւաքուած էին Վերսայ՝ աշխարհի քարտէսը վերագծելու համար: Հայերը լաւ պատրաստուած պատուիրակութիւն մը ուղարկած էին Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովին՝ Օսմանեան Կայսրութեան յետագայ անդամահատումէն բաժնի մը իրենց իրաւասութիւնը հիմնաւորելու համար: Անոնց նպատակը Հայաստանի Հանրապետութեան ընդլայնումն էր՝ պատմական հայրենիքի արեւմտեան մասի ընդգրկումով: Մեծ Հայաստանի կամ Միացեալ Հայաստանի հաստատումը ո՛չ միայն պիտի իրագործէր հայոց «դարաւոր երագ»ը, այլ փոխվրէժ պիտի ըլլար հայ ազգին ի սպաս ոչնչացումը փորձած թուրքին դէմ⁷⁷:

Ոչնչացումի այդ փորձը վերապրած ըլլալով հանդերձ, հայերու թիւը անբաւարար էր՝ հողը բնակեցնելու համար, ինչ որ յատկապէս ծանր մարտահրաւեր մըն էր յետպատերազմեան տարիներուն: Փարիզի Խաղաղութեան բանակցութիւնները, յենլով ուիլսընեան «ինքնորոշում»ի սկզբունքին վրայ, յանգած էին այն եզրակացութեան, որ շրջանի մը պատկանելիութիւնը պէտք է յատկացուէր անոր բնակչութեան մեծամասնութիւնը կազմող համայնքին⁷⁸: Հայերը պէտք է արագօրէն բազմացնէին իրենց թիւը:

Ազգային Պատուիրակութեան ի նպաստ եւրոպական շրջապտոյտին ընթացքին, Զաւէն Պատրիարքը առիթը ունեցած էր

մօտէն ծանօթանալու միջազգային դիւանագիտութեան բարդութիւններուն: Լոնտոնի մէջ, Հայաստանի ապագայ սահմաններուն նշումը ստանձնած յանձնախումբը անոր յայտնած էր, թէ «որքան մարդ ունենաք այնքան հող կ'ունենաք»⁷⁹: Մեծն Բրիտանիոյ Արտաքին Գործոց նախարար Լորտ Քըրզընի օգնականը նոյնպէս յորդորած էր Պատրիարքը «որ աշխատիմ ցրուած Հայութիւնը խրախուսել, անմիջապէս հայրենիք դառնալու եւ զայն լեցնելու»⁸⁰:

Թէ՛ հայերը եւ թէ՛ քեմալական շարժումին ղեկավարները «վիճակագրական պատերազմ»ի մը շղթայագերծումը կը կանխատեսէին⁸¹: Նորակազմ թրքական պաշտպանութեան կոմիտէներուն ամենէն կարեւոր գործերէն մէկը «գիտական միջոցներով» փաստել էր, որ մահմետականները մշտապէս մեծամասնութիւն եղած էին այն շրջաններուն մէջ, որոնց հայկական բնօրրանին պատկանելիութիւնը Փարիզի Ազգային Պատուիրակութիւնը կը փորձէր փաստել՝ նոյնպէս վիճակագրութեան ճամբով:

Փարիզէն հեռու գտնուող հայերը թիւերու եւ հողերու յարաբերակցութեան գիտակից էին: Դեկտեմբեր 1919ին, *Հայ Կինի* խմբագրուիի Հայկանուշ Մառք, որ Զարուիի Գալէմբեարեանի եւ Զարուիի Պահրիի պաշտօնակից էր, կ'ահագանգէր իսլամացած հայերու իրենց բուն կրօնքին վերադարձի անհրաժեշտութիւնը՝ «Հայաստան մը ունենալու փափաքով»⁸²: Քանակական աճ արձանագրելու եւ հարկաւոր ժողովրդագրական դիմագիծ ստեղծելու նպատակով, հայերը համընդհանուր արշաւի մը ձեռնարկած էին ծննդաբերութեան ի խնդիր՝ «Ազգային Վերածնունդ» կոչուած ակադեմիական արշաւին ծիրին մէջ⁸³: Այդ արշաւները ուղղուած էին հայ բնակչութեան քանակը, հողատիրութիւնը եւ կեանքի որակը բարձրացնելու նախապատերազմեան մակարդակին, եթէ ոչ աւելիին:

Այս արշաւը, ինչպէս նախատեսելի էր, կիները պէտական կառուցման ծրագրին կեդրոնը պիտի գետեղէր թէ՛ որպէս իսկական դերակատարներ եւ թէ՛ որպէս խօսոյթի (discourse) առարկաներ: Մանկական եւ պատանեկան մահացութիւնը նուազեցնելու համար, մամուլը կը յորդորէր, որ մայրերը մանկատաճումի գիտական սկզբունքներ որդեգրէին: Այնպիսի նիւթեր, ինչպէս նորածիններու դիեցումը, մաքուր օդ շնչելու

առաւելութիւնը եւ յարմար հագուստներու գործածութիւնը, մանրամասն տեղեկատուութեան կ'արժանանային մամուլին կողմէ: Կնոջական հանդէսները գեղեցիկ երեխաներու մրցոյթներ կը կազմակերպէին՝ մայրերը քաջալերելու համար, մինչ լրագրողներն ու մասնագէտները երիտասարդ կիներն ու այրերը կը խրախուսէին շուտ ամուսնանալու եւ շատ զաւակներ ունենալու գաղափարներով⁸⁴: Վիժումը դաւաճանութեան համագոր կը դառնար: *Հայ Բուժակ* հանդէսը, որ կանոնաւորապէս կը տեղեկագրէր Պատրիարքարանի տուած ամուսնական վկայագրերու թիւը, վիժումի հետամուտ կիները կը բնութագրէր որպէս անձնասէր եւ անպարտաճանաչ: Հաւասարեցնելով վիժումն ու մանկասպանութիւնը, ան հայ կնոջ կը դիմէր. «...[Դ]ուն պէտք է խիզախես եւ հեռու վանես քեզմէ ամէն այլասեր մտածում եւ սկզբունք, ու նուիրուիս միմիայն արարչագործութեան, ինչ որ **միակ պարտաւորութիւնդ է**: Այդ պարտաւորութեանդ լիովին կատարումն է որ պիտի իրագործէ մեր իտէալը»⁸⁵:

Այս «իտէալ»ը իրագործելու ճիգը արդարացուցած է այնպիսի չափանիշերու եւ գործելաձեւերու կիրարկումը, որոնք գրեթէ աներեւակայելի էին պատերազմէն առաջ: Ամէնէն նշանակալից երեւոյթը այն էր, որ ազգային իշխանութիւնները, ինչպէս եւ մտաւորականներն ու մասնագէտները, պատրաստակամ էին օրինական պատկանելիութեան սահմանումի կէտերը փոխելու: Ազատագրուած յղի կիներուն եւ անոնց սերունդին մասին թէ՛ վարչական կանոնները եւ թէ՛ խօսոյթը (discourse) ցոյց կու տան, որ ազգային իշխանութիւնները, գոյութենական տագնապի մը դէմ յանդիման գտնուելով, ազգային հաւաքականութեան մէջ ներգրաման չափանիշը փոխած են, ու տեղ բացած՝ իսլամ հայրերու զաւակներուն, որոնք այլապէս դուրս մնացած պիտի ըլլային⁸⁶:

1920ի ամրան, Ք.ն կալանքի տակ պահող Հայ Կարմիր Խաչի հիւանդանոցին պատասխանատու բժիշկը՝ Տոքթ. Եաղուպեան, դասախօսութիւն մը կը կարդար Հայ Կանանց Լիկայի կեդրոնին մէջ: Ան կը փաստարկէր, որ բնակչութեան նուազումը ազգի մը զարգացման վատթարագոյն թշնամին էր եւ, հետեւաբար, բժշկական, ընկերային ու նիւթական բոլոր ջանքերը անոր դէմ պէտք է ուղղուէին: Ընդգծելէ ետք մայրերու եզակի դերը ազգային այս նպատակին իրագործման մէջ, ան ոչ-գաղթական կիներն ու

աղջիկները կը խրախուսէր՝ հիւանդապահուիչ ու դայեակ դառնալու, որպէսզի կանխեն գաղթականներու, յատկապէս փրկուած կիներու եւ աղջիկներու վիժումներն ու մանկասպանութիւնները: Ան կը յայտնէր.

«Մենք կը յարգենք կանոնաւոր ամուսնութեանց զաւակները, եւ կ'ատենք այն ազատ գաղափարականները որոնք կը քաջալերեն ազատ սէրը եւ անոր հետեւողները. հայ զաւակը կանոնաւոր պսակուած, Սբ. Եկեղեցւոյ օրհնութեանը արժանացած ծնողքներուն պտուղը պէտք է ըլլայ, բայց... մոռնալու ալ չենք խաբէբայ կեանքին մէջ պատահած անիրականալի դժբախտութիւնները. մեր տարագրեալ քոյր ու ամուսիններէն քանիներ մայր եղած են ստիպմամբ, մահուան դանակի վախով. քանիներ կիսամեռ վիճակի մէջ, վայրենի ցեղերուն հաճոյքներուն զոհ եղած են (. . .): Խելացի դայեակը պիտի գիտնայ խրախուսել եւ մխիթարել այսպիսի դժբախտները, պիտի ջանայ ծածկել անոնց ամօթը եւ նա մանաւանդ փրկել փճացումէ անոնց անկանոն զաւակը. մեծ տէրութիւնները մասնաւոր ապաստարաններ կառուցած են այսպէս դժբախտ արարածներուն [համար] եւ մասնաւոր օրէնքներով պաշտպանած են ապօրէն ամուսնութիւններէն ծնելիք երախաներուն իրաւունքները: Իսկ մենք պզտիկ ազգերու նուազագոյնն ենք՝ ինչպէս կրնանք ոչնչացունել մեր սաղմերը. ըլլան անոնք անգամ անկանոն յարաբերութիւններուն պտուղը»⁸⁷:

Խօսուն փաստ է, որ Եաղուպեան «մեր սաղմերը» բռնաբարութեան արդիւնքը համարած է, յատկապէս անոր հաստատումին լոյսին տակ, թէ այս մանուկներուն հայրերը «վայրենի ցեղերուն» կը պատկանէին: Տրուած ըլլալով, որ իսլամական եւ քրիստոնէական ւանդութիւններն ու օրէնքը կը հաստատէին, որ սերունդը հայրական արտադրութիւն էր ըստ էութեան եւ, հետեւաբար, հօր կը պատկանէր, Եաղուպեանի հաստատումը, որբահաւաքի բազմաթիւ սովորութիւններու նման, կը գտնուէր նուիրագործուած սովորութիւններու կտրուկ հակադրութեան մէջ: Կիները այժմ արարչագործական եւ ոչ սոսկ ընդունողական դեր կը ստանձնէին պտղաբերութեան մէջ.

կ'ենթադրուէր, որ անոնք սերունդը յղացած էին եւ ոչ թէ պարզապէս նպաստ մը բերած էին:

Այս հակազդեցութիւնը խառն ժառանգութեան՝ բռնաբարութեան պտուղ երեխաներու հանդէպ ընդհանրական երեւոյթ չէ: Օրինակ, փաքիստանցի զինուորականներ շուրջ երկու հարիւր հազար կիներ բռնաբարած էին Պանկլատէշի 1971ի անկախութեան պատերազմին: Պատերազմի վաղորդայնին, Պանկլատէշը բռնաբարութեան զոհերը «պատերազմական հերոսուհիներ»ու կարգավիճակին բարձրացուցած էր: Սակայն, անոնց զաւակները բացառուած են ու դասակարգուած՝ որպէս փաքիստանցի: Այս մանուկներուն ներկայութիւնը բացասական նկատուած է երկրի ընկերային կառոյցներուն իր ներգործութեամբ, պատերազմի ցաւոտ յիշատակները յաւերժացնելով. հետեւաբար, վիժումը եւ օտարականներէ որդեգրումը, որոնք անցեալին քրէական յանցանք եւ անընդունելի երեւոյթ համարուած էին, օրինաւոր դարձած են⁸⁸: Ի հակադրութիւն հայ կիներուն, որոնք բռնաբարութեան իրենց զաւակները վիժեցնելու թոյլտուութիւն չէին ստացած, Պանկլատէշի կիները իրենց շառաւիղներէն զրկուած են՝ կա՛մ պարտադիր վիժման եւ կա՛մ որդեգրման յանձնելու ճանապարհով:

Հայոց պարագային, ամէնէն իւրայատուկ յատկանիշը, թերեւս, հայրութեան կանոններու փոփոխութեան քննարկման, չըսելու համար՝ ընդդիմութեան պակասը կը կազմէ: Ա. Աշխարհամարտին գերմանացիներու կողմէ բռնաբարուած ֆրանսացի կիներու զաւակները՝ «բարբարոսի երեխաները» (*enfants du barbare*), հակադիր պարագայ մը կը կազմեն: Այս կիներուն եւ անոնց զաւակներուն կացութիւնը տնօրինելու, վերջիններուն պատկանելիութեան եւ այլ հարցերու մասին բուռն բանավեճեր տեղի ունեցած են Ֆրանսայի մէջ: Ոմանք, ներառեալ՝ կաթողիկէ կրօնաւորներ, վիժումի կողմ եղած են՝ յանուն ցեղային մաքրութեան: Ուրիշներ վիժման դէմ եղած են, առարկելով, որ աւելի մեծ էր կիներու, քան այրերու նպաստը պտղաբերութեան, որ երեխային մէջ ֆրանսական «քաղաքակրթութիւնը» պիտի յաղթահարէր գերմանական բարբարոսութեան վրայ, եւ որ Ֆրանսան քաղաքացիներու պէտք ունէր⁸⁹:

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի վարած քաղաքականութեան դէմ ընդդիմախօսութեան պակասը կարելի է բացատրել «ազգային իտեալ»ի զգացումով⁹⁰: Հայկական պետականութեան վերջնական հաստատումը թերեւս այս արտակարգ միջոցառումները պիտի արդարացնէր: Աւելի՛ն, կնճիոյն ցեղասպանական բնոյթը կրնայ ազդած ըլլալ թէ՛ քաղաքականութեան եւ թէ՛ բանավէճերու բացակայութեան վրայ: Բաղդատական ուրիշ օրինակով, գիտենք, որ Ռուստական Ցեղասպանութենէն ետք, պետութիւնը արգիլած է բռնաբարման արդիւնք երեխաներու միջազգային որդեգրումը: Քաղաքացիներու կարիք ունենալով հանդերձ, Ռուստա վիժումներու արգիլման աստիճանին հասած չէ: Փաստօրէն, վիժումի նախկին արգելքը ժամանակաւորապէս վերցուած է, որպէսզի բռնաբարութեան զոհերը կարողանան դիմել այդ միջոցին: Ուստի, վիժումներու խնդրով հայկական վարքագիծը, բաղդատական պարագաներու կը հակադրուի:

Ասոր կողքին, Եաղուպեանի վերի մէջբերումին ահազանգային երանգը կը բացայայտէ, որ բոլոր գաղթականները «ազգային օրակարգ»ը չէին կիսեր: Շատերը, որոնք պարտաւոր էին մայրանալ իբրեւ բռնաբարութեան արդիւնք, պարզապէս չէին ուզեր այդ գաւակին ծնունդ տալ, ինչ որ, դարձեալ, ընթացիկ հակազդեցութիւն մըն է ցեղասպանական բռնաբարութեան վերապրողներու կողմէ: Պոսնիացի մահմետական եւ ռուստացի թուրքի կիներու պարագային, գիտնականները վիժումի, մանկասպանութեան, անուշադրութեան եւ մանուկներու լքումի յարաճուն համեմատութիւններ արձանագրած են⁹¹: Հայերու պարագային, հազուադէպ փաստերը կը բխին պոլսաբնակ կիներէ, թէ՛ հայ եւ թէ՛ ամերիկացի, որոնք աշխատած են ազատագրեալներուն հետ: Անոնք պատմած են, թէ ինչպէս Ք.ի նման ազատագրուած որոշ յղի կիներ թեթեւացումի զգացում ունեցած էին՝ իրենց նորածիններուն մահէն ետք (ու թերեւս դիտաւորեալ անուշադրութեան մատնած են զանոնք)⁹², եւ թէ ոմանք դիմած էին որբանոցներուն, որպէսզի իրենց մահմետական գաւակները ընդունէին ու խնայէին անոնց սպանութիւնը որպէս բռնաբարողի շատաւիդ⁹³: Իմանալէ ետք, որ յղիութեան վաղ հանգրուանը թելակոխած էր, անոնցմէ մէկը իր ամերիկացի

բժիշկին պարգապէս պատասխանած էր. «Շատ լաւ, հօրը պիտի դրկեմ գայն»⁹⁴:

Ըստ որբահաւաքի քաղաքականութեան, իշխանութիւնները չէին թոյլատրեր, որ նորածինը հօրը դրկուէր. ան կը դրուէր որբանոց եւ կը մկրտուէր եկեղեցւոյ կողմէ⁹⁵: Յայտնօրէն, խառնածին սերունդը արմատապէս տարբեր խորհուրդ ունէր անոնց մայրերուն, վերապրող մօրենական ազգականներուն եւ ղեկավարներուն համար: Թրքական պետութիւնն ու հանրութիւնը կը թուին ինդիքը անտեսած ըլլալ, քանի որ կեդրոնացած էին լիովին մահմետական որբեր եւ հայ ձուլուած կիներ թշնամիին զիջելու սպառնալիքին վրայ:

Առկայ փաստերը ցոյց կու տան, որ ընդհանուր առմամբ վերապրող հայ հարազատները անհամբեր էին իրենց առեւանգուած կիներն ու մանուկները ետ ստանալու, առանց հաշուի առնելու բռնաբարուած ըլլալը, վերադառնալու ցանկութիւն ունենալը կամ «սխալ մանուկներ»ու ծնունդ տուած ըլլալը: Անշուշտ, անոնք կը պնդէին անոնց վերադարձին վրայ: Բայց երբեմն ազգականները չէին ուզեր «թշնամիին զուակները» բերել իրենց ծոցը: Հարցազրոյցի մը ընթացքին, վերապրող մը յիշած է տասներկու տարեկանին առեւանգուած կին մը, որ թուրքի մը հետ ամուսնացած եւ անկէ երկու զուակ ունեցած էր: Մեծ Եղեռնէն ետք, անոր հայրը յայտնաբերած էր զայն եւ գրած, թէ կ'ուզէր որ ան վերստին միանար իրեն, բայց չէր ուզէր անոր զուակները, «որոնք թուրքի մը կը պատկանէին»: «*Ան կու լար ու կու լար, առանց ընելիքը գիտնալու: Ի վերջոյ, որոշած էր մեկնիլ Պէյրութ, ուր չէր կրնար ապրիլ առանց զուակներուն, բայց չափազանց կը վախնար վերադառնալէ: (...) Ան թշուառ վիճակի մէջ էր*»⁹⁶:

Որոշ մայրեր նախընտրած են փախչիլ իրենց զուակներուն հետ, յաջողութեամբ պսակելով իրենց փորձը: Այդ կիներէն մէկը կ'ապրէր քանատահայ հանրային գործիչ Քերոբ Պտուկեանի գաղթակայանը: Պտուկեան, որ մանուկ մըն էր, իր յուշերուն մէջ նշած է, որ 22ամեայ կնոջ միամեայ տղան ո՛չ միայն անկարելի կը դարձնէր անոր ամուսնութիւնը հայու մը հետ, այլեւ «*զայն կը կնքէր որպէս բոզ մը*»: Այս պարագան արգելք եղած չէ, որ կնոջ ճարպիկ մայրը զայն ամուսնացնէր ամերիկահայ վայելչակազմ տղամարդու մը հետ, որ Պոլիս ժամանած էր կին գտնելու

նպատակով: Ամերիկահայը սկիզբը նշանուած էր իր ապագայ կնոջ 18ամեայ գեղեցիկ քրոջ հետ, զոր մայրը յայտնապէս գործածած էր որպէս խայծ: Պտուկեան պատմած է գաղթակայանի դրացի վերմակին վրայ քնացող ընտանիքին պատմութիւնը. «Անոնց մայրը դասաւորած է, որ ան [ամերիկահայը] Ամերիկա երթար մեծ դստեր եւ երեխային հետ, որպէսզի տեղաւորուէին կամ թերեւս անոր օգնէր ամուսին մը գտնելու, նախքան իր իսկ հարսը կանչելու: Երեք ամիս ետք, ապագայ հարսը կատողեցաւ, երբ իմացաւ, որ իր նշանածը ամուսնացած էր քրոջ հետ: Մայրը փորձեց բացատրել, որ դիւրին էր ամուսին մը գտնել իրեն համար, բայց քրոջ պարագան տարբեր էր: Եթէ ան քոյրը կը սիրէր, պէտք է ուրախ ըլլար: Լա՛ւ, ան քոյրը չէր սիրէր եւ հոգը չէր, որ աշխարհը տեղեակ ըլլար»⁹⁷:

Բազմաթիւ ազատագրուած կիներու եւ գաղթականներու համար, պատշաճ ամուսնութիւն մը որոջ կայունութիւն ու ապահովութիւն ձեռք ձգելու ամէնէն յարմար միջոցն էր⁹⁸: Ազատագրեալներուն եւ ազատագրողներուն նպատակները այստեղ կը խաչաձեւէին: Որբահաւաքներու օրակարգին մէջ, դեռատի կիներու ու աղջիկներու ամուսնացումը հայ տղամարդոց հետ եւ անոնց զուակներուն որպէս խնամեալ (երեխաներ կամ որդեգիրներ) տեղաւորումը հայ ընտանիքներու մօտ իտեալ լուծում մըն էր. անոնք ետ կը ստանային թուրքերուն գողօնը եւ զայն կը գործածէին հայութիւնը վերապրեցնելու համար:

Նկատի ունենալով նախատեղեմեան գաղափարները մաքրութեան եւ պատշաճութեան մասին, ազգային ղեկավարութիւնը պատրաստի գործ ունէր իր առջեւ՝ ազատագրուած կիները որպէս յարմար ամուսնութեան թեկնածուներ եւ ապագայ մայրեր ներկայացնելու: 1916ին իսկ, Պոստընի *Հայրենիք*ը կը յայտարարէր, թէ հայ տղամարդ մը պէտք չէ մերժեր առեւանգուած կին մը, որովհետեւ վերջինս անմեղ զոհ մըն էր, որ իր վիճակին բարոյապէս պատասխանատու չէր կրնար նկատուիլ⁹⁹: *Հայ Կինի* աշխատակից մը կը զգուշացներ, թէ «*հայոց սգաւոր կոյսերը բնաւեր, յափշտակուած մայրենի գրկէն, կը լլկուէին, կը յօշոտուէին գազանակերպ փոհմակներէն*», որոնց գործունէութեան համար զոհերը պէտք չէ մեղադրուէին¹⁰⁰:

Հայրական պատկանելիութեան կանոններու առկախումով, պատշաճ ամուսնութեան մասին գաղափարներն ալ փոխուած

էին, գէթ առժամաբար: Բայց, ի տարբերութիւն առաջիններուն, զանգուածը կը թուի ամուսնութեան փոփոխական յղացքները կիսած ըլլալ՝ հասկնալի պատճառներով: Արտասահման ապրող այր մարդիկը, գոնէ, անհամբեր էին ամուսնանալու ազատագրուած կիներու հետ: 1919ին Սկիւտարի Հայ Կարմիր Խաչի մասնաճիւղին ապաստանարանը գտնուող եօթանասուն կիներէն քսանմէկը ամուսնացած էին՝ իրենց հոն ապրած առաջին տարուան ընթացքին¹⁰¹: Մեծամասնութիւնը Ամերիկա մեկնած էր, շատերը՝ «լուսանկարի հարս»ի (picture bride) հանգամանքով: Փեսաներէն շատերը Հիւսիսային Ամերիկա հաստատուած էին պատերազմէն առաջ, որուն ընթացքին կորսնցուցած էին իրենց ընտանիքները: Վերապրող մը դիտել տուած է, որ տղամարդիկ «*Ամերիկայէն վերադարձած էին մէկ նպատակով՝ ամուսնանալու որբերու եւ այրիներու հետ, բուժման օգնելու եւ անոնց ողբերգական անցեալը մոռցնել տալու, նոր օճախ մը ընծայելու եւ նոր յոյս ստեղծելու համար: Կը մտածէին, որ նուագագոյնն էր, գոր կրնային ընել վերապրողներուն համար*»¹⁰²: Բազմաթիւ ազատագրեալներու դէմքի ու ձեռքերու դաջուածքները (արաբական եւ քրտական արանդութիւն մը) զանոնք անպայմանօրէն չամուսնանալու չէին դատապարտեր¹⁰³: Հասկնալիօրէն, այս կիներէն շատերը իրենց դաջուածքները ատած են, իսկ ոմանք փորձած են զանոնք ջնջել թթուի գործածութեամբ ու իրենց երեսը այլանդակած¹⁰⁴:

Արտասահման ապրող մարդիկ, որոնցմէ շատերը պարզ աշխատատեղեր էին, կ'ուզէին ամուսնանալ ազատագրուած որբերու հետ զանազան պատճառներով, ինչպէս՝ առօրեայ պայքարին ընկերակից մը եւ ընտանիքի կորուստը յաղթահարելու օգնող մէկը ունենալ: Միաժամանակ, ասիկա վերստին առնականանալու ինքնահամոզումի միջոց մըն էր: Այս էր պարագան այն մարդոց, որոնք իրենց ընտանիքին բռնաբարման ականատես ըլլալու պարտադրուած կամ այդ բռնաբարման ժամանակ հեռու կը գտնուէին, եւ հիմա առիթ կ'ունենային ընելու այն, ինչ որ նախօրօք պէտք է ըրած ըլլային. իրենց կիներն ու անչափահաս աղջիկները պաշտպանել: Եւ ահաւասիկ, անոնց ազատագրումը, տառացիօրէն կամ ամուսնութեան ճամփով՝ հակառակ անոնց վիճակին, յանցանքի եւ առնագրկումի զգացումներէ կ'ազատէր զիրենք: Ժողովուրդ եւ հող վերագտնելու

կողքին, որբահաւաքը առիթ կու տար առնականութիւն վերագոնելու:

Առկայ խօսոյթը՝ առնականութեան բացայայտ բառապաշար մը չէր գործածեր, այլ պաշտպանութեան (հայերէն՝ *տէր կանգնիլ*, թրքերէն՝ *sahip çıkmak*), բարեսիրութեան, պատուի եւ վրէժի¹⁰⁵: Օրինակ՝ 1921ին, Պաղտատի հայ եկեղեցին հարիւրաւոր նոր ազատած երեխաներ կ'ընդունէր, ներառեալ՝ ըստ պետեւի ասանդութեան դաջուած բազմաթիւ աղջիկներ, եւ քահանան՝ զանոնք հաւաքաբար կը մկրտէր Վրէժ անունով¹⁰⁶: Պատրիարքը՝ *parens patriae*ի (հայրենիքի հայր) իր պաշտօնին յարմարելով, իր անպաշտպան հօտին հովուութիւնը լրջօրէն ընկալած էր¹⁰⁷: Բոլոր ազատագրուածները ազգին «տարաբախտ քոյրեր»ն էին, ներառեալ պոռնիկները, գորս ան փրկած էր Մուսուլ իր աքսորի ընթացքին, եւ, կարելոր է նշել, տակաւին ազգին պատիւը կը ներկայացնէին, այն թանկագին ազգային պատիւը գոր այրերը պէտք է պաշտպանէին՝ անոնց հետ ամուսնանալով¹⁰⁸:

Գրագիտուհի Անայիս (Եւփիմէ Աւետիսեան, 1872-1950) այսպիսի պսակ մը նկարագրած է Պոլսոյ մէջ: Հարսանիքը տեղի ունեցած է Չէզոք Տան մէջ, իսկ Պատրիարքը նախագահած է եկեղեցական արարողութեան.

«Քիչ անգամ հանդէս մը այդքան լուրջ, տպաւորիչ եղած է:

Երբ քահանան խունկին հոտերուն մէջ կ'օրհներ սպիտակագգեաց հարսը եւ երիտասարդ թխագեղ փեսան, կարծես մուխին ծածանուտ ծուէններուն մէջէն կրկնապատկերի մը պէս կ'ընդնշմարուէին բիւրաւոր հոգիները նահատակուածներու, որոնք, մոռնալով իրենց աշխարհական չարչարանքը, աքսորը տաժանելի, տօթը անապատին, պապակը անհանդուրժելի, մտրակը անողորմ չավուշին, լիճերը արիւնի, եւ ընկերակցութեամբ լուսացնող քերովբէներու, եկած էին տեսնելու պսակը՝ խանձած մեծ դաշտին թոշնած ծաղիկներէն մնացած մէկ քնքոյշ բողբոջին, որ այգեւէտ սարերու վրայ պիտի ծլէր, ծաղկէր գեղեցկօրէն եւ ցեղը պիտի շարունակուէր աննուաճ»¹⁰⁹:

Պարբերութիւնը կարգ մը պատճառներով զարմանալի է: Հարսը մաքրութեան գոյնը կը կրէր, թէեւ ազատագրուած էր իսլամ տունէ մը, ուր հաւանաբար ծառայած էր որպէս ամուսին կամ կենակից: Անոր սպիտակ տարազը կը ժխտէր երբեմնի

փորձառությունը, տառացի եւ փոխաբերական իմաստով բռնաբարողին մերժելով հայ աղջկան մը կուսությունը բռնաբարելու իրաւունքը, եւ լայն իմաստով, անպատուելու անոր ներկայացուցածը՝ իր արական ազգականներուն եւ ազգին պատիւը: Ասիկա փոխվրէժի արարողություն մըն էր նաեւ, գորնահատակները գոհունակութեամբ դիտած պէտք է ըլլային. երկու հայերու հարսանիքը, որոնցմէ մէկը կրնար առյաւէտ կորսուած ըլլալ, կը նշանակէր, որ հայությունը պիտի շարունակուէր ի հեճուկս թուրքերուն: Այն հաստատումը, որ այս քնքուշ բողբոջը պիտի ծլէր «այգելտ սարերու վրայ», մեզ ուղղակի կը տանի դէպի հողային հարցը: Քանի որ Արարատը հայոց պատմական հողի գերագոյն խորհրդանիշն էր, լեռներու մասին անդրադարձը հայկական ընդհանուր ծրագրին երկու երեսները՝ հողի պահանջը եւ մարդոց պահանջը, զիրար կը կապէր:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Պատմական դէպքերը շուտով այս ծրագիրը ձախողութեան պիտի մատնէին: Միացեալ Հայաստանը երբեք չիրականացաւ, իսկ Հայաստանի առաջին հանրապետությունը ինկաւ Դեկտեմբեր 1920ին: Լոզանի Դաշնագիրը ո՛չ միայն հայութեան որեւէ տարածք չյատկացուց, այլեւ ընդհանուր ներում սահմանեց պատերազմական ոճիրներու համար, ինչ որ փաստօրէն Մեծ Եղեռնի հեղինակներուն համաներումը կ'ենթադրէր: Հոկտեմբեր 1923ին Օսմանեան Կայսրութեան անկումը կը նուիրագործուէր Թուրքիոյ Հանրապետութեան հռչակումով:

Որբահաւաքը վերջ գտած էր 1922ի աշնան, երբ առաջին քեմալական սպաները յաղթականօրէն Պոլիս կը մտնէին եւ դաշնակիցները քաղաքին պարպումը կը սկսէին: Որբահաւաքին հետ կապուած շատ մարդիկ, ինչպէս Զաւէն Պատրիարքը, Զարուհի Պահրի, Անայիս, Առաքել Չագրբեան, որոնք գործակցած էին գրաման ուժերուն հետ, երկրէն խուճապահար կը փախչէին կամ կը վտարուէին¹⁰: 1926ին Ազգերու Լիկան կը դադրեցնէր ազատագրումի իր ջանքերը Պոլսոյ, իսկ 1927ին՝ Հալէպի մէջ: Հազարաւոր կիներ ու երեխաներ շարունակած են կամայ թէ ականայ ապրիլ մահմետական տուններու կամ որբանոցներու մէջ, եւ ապրած ու մեռած են որպէս մահմետական թուրք քաղաքացիներ¹¹: Ումանք ձեւը գտած են կապերը վերականգնելու

իրենց նախկին հայ ազգականներուն հետ՝ նամականերու, դրամի կամ նոյնիսկ այցելութիւններու փոխանակումով¹²: Մինչեւ վերջերս, երբ անոնց թոռները սկսած են վերարծարծել անոնց յիշատակները, այդ պատմութիւնները մեծաւ մասամբ լռութեան մատնուած էին Թուրքիոյ մէջ¹³: Որպէս ազգային խօսոյթի եւ մարդասիրական ու բարեսիրական կիզակէտ, որբերն ու որբութիւնը կեդրոնական դեր խաղացած են հայոց համար: Ազատագրուած աղջիկներու ու կիներու ընձեռուած ուշադրութիւնը, սակայն, դանդաղօրէն նուազած է:

Այս յօդուածը զանոնք յիշած է որպէս աւետեաց երկիր մը բնակեցնելու յետ-ցեղասպանական ազգի մը քաղաքականութեան առարկան: Իգական սեռի ներկայացուցիչները անհաւատալի արժէք կը ներկայացնէին պատերազմի ընթացքին՝ ցեղասպան խումբին, իսկ յետոյ՝ վերապրողներուն համար, ո՛չ միայն իրենց ունեցածով, բայց նաեւ չունեցածով: Արգանդները խումբին ֆիզիքական վերարտադրութիւնը կ'ապահովէին, իսկ զանոնք կրողները՝ ընկերային վերարտադրութիւնը: Սակայն, վերոյիշեալ կենսական պաշտօնները գործադրելով իւրաքանչիւր խումբի ներկային ու ապագային համար, կիները չէին կրնար սահմանել խումբին եւ իրենց շառաւիղներուն պատկանելիութիւնը: Ահա թէ ինչու անուանելու թուացեալ պակասութիւնը կիները արժէքաւոր կը դարձնէր նոյն նպատակները հետապնդող հակընդդէմ ազգայնականներու համար: Ազգայնական գաղափարախօսութիւնը, որ կիները որպէս ազգային կորիզ, ազգային էութիւն եւ հիմնական տարբերութիւն ներկայացուցած է, ամէն ատեն հայրիշխանական մնացած է ու ստեղծագործելու որեւէ կարողութիւն մերժած է անոնց: Ծինային արդիւնքի թուացեալ չգոյութիւնը, ուրեմն, պէտք է աւելցնել պատճառներու այն ցուցակին, թէ ինչո՞ւ կիները կարելոր են ազգային, էթնիկ եւ պետական ծրագրերու համար:

Ահա սոյն յօդուածին կեդրոնական խնդրառութիւնը. ինչո՞ւ պոլսահայ համայնքին հայրիշխանական կառոյց մը, որ տառացիօրէն կը ղեկավարուէր Պատրիարք Հօր մը կողմէ, այս ենթադրութիւնները շրջած էր՝ այլապէս դուրս մնացողներուն տեղ բանալու համար: Բազմաթիւ այլ պետութիւններու կամ պետականատիպ կառոյցներու նման, որոնք իրական կամ երեւակայական գոյութենական ճգնաժամեր անցուցած են, հայերը

շտապ իրավիճակի օրենքներ վաերացուցած եւ սեռային որոշակի հետեւանքներով նորամուծութիւններ ըրած են: Ժառանգական օրենքներու ժամանակաւոր փոփոխութիւնը պատճառ դարձած է, որ մահմետական հայրերու բազմաթիւ զաւակներ հայ մեծնան: Մինչ կարգ մը «թաքուն հայ» նախնիներ հանրային տեսանելիութեան արժանացած են ժամանակակից Թուրքիոյ մէջ, դեռ հարկ է պարզել Ք.ի մանչ զաւակին պատմութիւնը, որ, առանց մայրական կաթի վերապրած ըլլալու պարագային, իր կեանքը որպէս հայ շարունակած պիտի ըլլար¹⁴:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Օ.Խ. - Անգլերէնէ հայերէնի թարգմանութիւն՝ Վարդան Մատթէոսեանի:

- ¹ Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել Հուրիկ Ադդարեանին, Մելիսա Պիլալին, Լեւիլ Փիրսին, Էլիզապէթ Ֆրիքսընին, Սոլի Նոլլնին, Ֆաթմա Միլկէ Կեօշքին, Ռոնըլտ Գ. Միւնիին, Ժիրայր Լիպարիտեանին, Լորա Լիւայնին, Շէն Մինքինին, Նորա Ներսէսեանին, Վարդան Մատթէոսեանին, Մարք Մամիկոնեանին եւ Massachusetts Institute of Technologyի (MIT) գործընկերներու՝ տարբեր հանգրուաններու ընթացքին այս ուսումնասիրութիւնը կարդալու կամ անոր մասին լսելու համար: Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ Վահէ Թաշճեանին՝ սկզբնաղբիւրներ հայթայթելու համար:
- ² 1927 թուակիր ու Նիւ Եորք գրուած յուշին համար («Պատմութիւն Սը Թոննիկիս Համար, Երբ Որ Մեծնաս»), տե՛ս՝ Զարուհի Գալէմքեարեան, *Կեանքիս Ճամբէն*, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1952, էջ 293-298:
- ³ Անդ, էջ 296:
- ⁴ *Երկամեայ Տեղեկագիր Հ[այ] Կ[արմիր] Խաչի Կեդր[ոնական] Վարչութեան, 1918 Նոյ[եմբեր] 18-1920 Դեկ[տեմբեր] 31*, Կ. Պոլիս, Մ. Յովակիմեան, 1921, էջ 30: Պոլսոյ Հայ Կարմիր Խաչը պաշտօնապէս չէր ճանչցուած Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի կողմէ (ICRC), թէ՛ երկու կազմակերպութիւնները պաշտօնական թղթակցութիւն պահած են: Այդ թղթակցութիւնը ICRCի դիւանը կը գտնուի (Ժընէւ, ACICR, B CR 0075-245): Հայ Կարմիր Խաչը լուծարուած է 1922ին՝ քեմալական զօրքերուն Պոլիս մուտքէն ետք, եւ երբեք չէ վերականգնած:
- ⁵ Օսմանեան Կայսրութեան մէջ հայկական վիժումի օրենքներու, սովորութիւններու եւ համեմատութիւններու ուսումնասիրութիւններ կը պակսին, որոնք թոյլ տան գնահատել, թէ՛ ո՛ր աստիճան նպաստից պաշտօնեաններուն վարքագիծը աննախադէպ էր:
- ⁶ Գալէմքեարեան, *Կեանքիս*, էջ 297:
- ⁷ Ներկայ յօդուածը կը հերքէ Վահէ Թաշճեանի այն պնդումը, թէ հայ ղեկավարութիւնը ցուցաբերած է «նախապաշարումի հակառակ ձեւեր [...] ազգի երկու լիակատար բաղադրիչներու հանդէպ. մէկ կողմէ դրական՝ որբերու

հանդէպ, իսկ միւս կողմէ բացասական՝ որոշ լքուած կիներու եւ աղջիկներու հանդէպ»: Թէեւ Թաշճեանի աղբիւրները արաբական Միջին Արեւելքէն են, ի՞ր իսկ բերած օրինակները բաւարար են հերքելու այն փաստարկը, որ այդ պատասխանատուներուն քաղաքականութիւնը բռնաբարուած կամ առեւանգուած կիներու կամ պոռնիկներու հանդէպ հիմնուած էր «բացառում»ի վրայ, ինչպէս յօդուածին խորագիրը կը թելադրէ: Թաշճեանի օրինակները կ'ակնարկեն բացառումի *ենթադրութեան* կամ անոնց նախկին ընտանիքի անդամներուն (եւ ո՛չ «հայ ներկայացուցիչներ»ու) չկամութեան մահմետական ծնունդով երեխաներ ընդունելու իրենց համայնքներուն մէջ, եւ նոյնիսկ այս պարագաներուն, ընտանիքները յօժար կը թուին նախկին առեւանգուած կիները ընդունելու: Այն փաստը, որ կարգ մը ղեկավարներ չեն պնդած վերադառնալ չուող կիներ բռնի ուժով «ազատագրելու» մասին, չի թելադրեր, որ այդ ղեկավարները յիշեալ կիները բացառած են: Թաշճեանի միակ օրինակը, ուր ղեկավար դիրքով անձ մը մահմետական ծագումով երեխաները «օտար երեխաներ» նկատած է, ոչ-հայու մը կը վերաբերի, որ ոչ-հայկական հովանաւորութեամբ պատսպարան մը կը ղեկավարէր: Արդարեւ, *դանիացի* միսիոնար եւ ընկերային գործիչ Քարէն Եփփէ Հալէպի Ազատագրութեան Տունը կը վարէր *հրբեւ* Ազգերու Ընկերութեան Յանձնակատար (commissioner) (Vahe Tachjian, “Gender, Nationalism, Exclusion: The Reintegration Process of Female Survivors of the Armenian Genocide,” *Nations and Nationalism* 15, 1 (2009), էջ 60-80, յատկապէս էջ 65: Յօդուածին նախընթաց հայերէն տարբերակին համար, տե՛ս՝ Վահէ Թաշճեան, «Ազգայնականութիւնն ու Սեռային Խտրութիւնը՝ Ցեղասպանութեան Վերապրած Կիներու ու Աղջիկներու Վերահամարկման Գործընթացին Մէջ», *Բազմավէպ*, 2007, էջ 229-259): Այս ոլորտի հետազոտութեան պակասը եւ Թաշճեանի յօդուածին անքննական ընթերցումները պատճառ դարձած են, որ նորագոյն հրատարակութիւններ կրկնեն այս տեսակէտը եւ նոյնիսկ զայն օգտագործեն՝ անհիմն ընդհանրացումներ կատարելու. օրինակ՝ հայկական պատմագրութիւնը իբրեւ թէ անգոյ համարած է վերապրող առեւանգուած կիները, *որովհետեւ* յետպատերազմեան հայ ազգայնականները առեւանգուած կիները դիտած են որպէս «այլասերած», «ապականած», իսկ անոնց զուակներուն պտղաբերութիւնը՝ որպէս «անոնց ոճրագործներուն սերմը» (Selçuk Akşin Somel, Christoph K. Neumann, and Amy Singer, “Introduction: Re-Sounding Silent Voices,” in *Untold Histories of the Middle East: Recovering Voices from the 19th and 20th Century*, London, Routledge, 2011, p. 17): Ինչպէս այս յօդուածը կ'ապացուցանէ, որբա՛հաւաքի ամբողջ գործընթացը հիմնուած էր այն ենթադրութեան վրայ, որ ի հեճուկս այս կիներուն «ապականում»ին, զանոնք «մաքրելու» եւ համայնքին վերադարձնելու միջոց մը կար:

⁸ Մեռի խտրութիւն չընող «լիակատար» ցեղասպանութիւնները բացառութիւն են, աւելի քան օրէնք (Elisa Von Joeden-Forgey, “Gender and Genocide,” տե՛ս Donald Bloxham and A. Dirk Moses, eds., *The Oxford Handbook of Genocide Studies*, Oxford, Oxford University Press, 2010, էջ 6):

⁹ Գործնական պայմաններ, ինչպէս եւ դիպուածներ, պատճառ դարձած են, որ ընդունակ որոշ հայ այրեր սպանութենէ բացառուէին, եթէ անհրաժեշտ

նկատուէին օսմանեան ընկերութեան բարօրութեան համար (օրինակ՝ արհեստաւորներ, երաժիշտներ, խոհարարներ կամ դերձակներ): Սոյն քննարկումը կը բացառէ այն հայերը, որոնք «կամովին» իսլամացած են, ըլլալ տեղահանութենէ խուսափելու ջանքով, որ նպատակին հասած չէ միշտ, կամ տեղահանութեան ու հալածանքի լուրջ սպառնալիքի տակ:

¹⁰ Գիրքով հրատարակուած միակ ուսումնասիրութիւնը կը պատկանի թուրք պատմաբանի մը, որուն մանրամասն հետազոտութիւնը ուղղուած է ցեղասպանութեան «հայկական պնդումները» հերքելու (İbrahim Ethem Atnur, *Türkiye’de Ermeni Kadınları ve Çocukları Meselesi, 1915–1923*, Ankara, Babil, 2005): Անոր հիմնադրոյթն է, որ օսմանեան պատերազմական քաղաքականութիւնը քրիստոնէայ կիներու եւ մանուկներու նկատմամբ ուղղուած էր խոցելի այս բնակչութեան պաշտպանութեան, ուստի կարելի չէ զայն բռնի փոխադրութիւն նկատել: Ներկայ յօդուածը կը հերքէ այդ փաստարկը:

¹¹ Զարմանալիօրէն, այս փաստաթուղթերը հրատարակուած են Թուրքիոյ Հանրապետութեան Վարչապետարանի Պետական Արխիւներու Ընդհանուր Տնօրէնութեան կողմէ, որուն նպատակը ցեղասպանութեան պնդումներ մերժել էր՝ «հայկական խնդրի» հրապարակումով: Տրուած ըլլալով, որ ցեղասպանութեան իրաւական սահմանումը, ըստ ՄԱԿի (1948), կը ներառնէ «մանուկներու բռնի փոխանցումը մէկ խումբէն միւսը», նման «փոխանցումի փաստաթուղթեր»-ու հրատարակութեան որոշումը 1990ականներուն որոշ բացատրութեան կը կարօտի: 1980ական, 1990ական եւ նոյնիսկ վաղ 2000ականներուն, թրքական պաշտօնական պատումը կը յենէր այն դրոյթին վրայ, որ հայկական խնդիրը հրէական Ողջակէզը չէր եւ որ «ցեղասպանութիւն» եզրոյթին կիրարկումը «պատերազմական շրջանի հայկական տեղահանութեան» առնչութեամբ, թէ՛ ցեղասպանութեան յղացքին եւ թէ՛ Ողջակէզի ժառանգութեան սպառնալիք մը կը ներկայացնէր: Թուրք պաշտօնատարներուն փաստարկը հաշտ էր եւ իր ներշնչումը կ’առնէր ցեղասպանագիտութեան նորածին կալուածէն, որ կը շեշտէր Ողջակէզին եզակիութիւնը եւ վերջինիս անհամեմատելիութիւնը այլ օրինակներու հետ: Թուրքիոյ «խաւար անցեալի» պատումի բնաշրջումին մանրամասն վերլուծումին համար, տե՛ս՝ Jennifer M. Dixon, “Changing the State’s Story: Continuity and Change in Official Narratives of Dark Pasts,” դոկտորական աւարտաճառ, University of California, Berkeley, 2011: Նոյնիսկ 2005ին, թուրք ազգայնական գիտնականներ, ինչպէս Աթնուր (*Türkiye’de Ermeni Kadınları*), նման փաստաթուղթերու եւ ապրող հայ կիներու ու մանուկներու պարզ գոյութիւնը կը մեկնաբանէին որպէս *բոլոր* հայերը բնաջնջելու «դիտաւորութեան» (ցեղասպանութեան իրաւական պահանջ) չգոյութիւն:

¹² Ասիկա այս տեսակի առաջին փաստաթուղթը չէ, բայց ամենէն մանրամասնեալը կը թուի ըլլալ: Մեծաւ մասամբ կեդրոնացած ըլլալով ֆիզիքական կործանումի փաստագրումին վրայ, հայոց ցեղասպանութեան ուսումնասիրութիւնները երկարատեւ անտեսած են փոխանցումի/առեւանգումի նման փաստաթուղթեր, որոնք, կը կարծենք, ապացուցային արժէք ունին: Ասիկա սպասելի է, նկատի ունենալով թուրք պետութեան ժխտումը եւ «ցեղասպանութիւն» ու «մահ» նոյնացնելու ընդհանուր

միտումը: Սակայն, վերջին շրջանին փոփոխություն մը կը նշմարուի, քանի որ 2012ին երկու գիտնականներ անդրադարձած են նիւթին (Taner Akçam, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton, Princeton University Press, 2012, էջ 316–28. նաև՝ Uğur Ümit Üngör, “Orphans, Converts, and Prostitutes: Social Consequences of War and Persecution in the Ottoman Empire, 1914–1923,” *War in History* 19, 2 (2012), էջ 173–92): Երկուքն ալ կը նշեն, թէ առաջին փաստաթուղթը, որ կը հրահանգէր հայ մանուկներու օսմանեան մահմետական որբանոցներու մէջ տեղաւորումը, Յունիս 26, 1915 թուականը կը կրէ (Başbakanlık Osmanlı Arşivleri, DH. ŞFR no. 54/411):

- ¹³ Ընդգծումը մերն է: Փաստաթուղթին համար (Başbakanlık Osmanlı Arşivleri, DH. ŞFR, no. 6/142), տե՛ս՝ *Osmanlı Belgelerinde Ermeniler, 1915–1920*, Ankara, T. C. Başbakanlık Devlet Arşivleri Genel Müdürlüğü Osmanlı Arşivi Daire Başkanlığı, 1994, էջ 141–42: Հետեւեալ նախագրուչացումը անհրաժեշտ է. հակառակ այս եւ նման հրահանգներու, քաղաքականութեան գործադրութիւնը մեծ տարբերութիւններ ունեցած են տեղւոյն վրայ: Մանուկներու սպանութիւնը, ի մասնաւորի, սովորական երեւոյթ մը կը թուի եղած ըլլալ:
- ¹⁴ Իւրաքանչիւր տեսակի օրինակներու համար, տե՛ս՝ Ara Sarafian, “The Absorption of Armenian Women and Children into Muslim Households as a Structural Component of the Armenian Genocide,” in Omer Bartov and Phyllis Mack (խմբ.), *In God's Name: Genocide and Religion in the Twentieth Century*, New York, Berghahn Books, 2001, էջ 209–221:
- ¹⁵ Ցեղասպանութեան ընթացքին սեռային հիմքով բրտութեան համար, տե՛ս՝ Vahakn Dadrian, “Children as Victims of Genocide: The Armenian Case,” *Journal of Genocide Research* 5 (2003), էջ 421–38. նաև՝ Katharine Derderian, “Common Fate, Different Experience: Gender-Specific Aspects of the Armenian Genocide, 1915–1917,” *Holocaust and Genocide Studies* 19, 1 (May 2005), էջ 1–25. նաև՝ Matthias Bjørnlund, “‘A Fate Worse than Dying.’ Sexual Violence during the Armenian Genocide,” in Dagmar Herzog (խմբ.), *Brutality and Desire: War and Sexuality in Europe's Twentieth Century*, New York, Palgrave Macmillan, 2009, էջ 16–58.
- ¹⁶ Երուանդ Օտեանի յուշերը այս բոլոր փորձերը արձանագրող բազմաթիւ յուշագրութիւններուն մէկ նմուշն են (Երուանդ Օտեան, *Անիծեալ Տարիներ*, Երեւան, Նայիրի Հրատ., 2004):
- ¹⁷ Թէեւ ձուլումը կանոնական ընդհանրականն էր, բացառութիւններ եղած են, երբ մանուկներուն թոյլ տրուած է քրիստոնէայ մնալ իրենց մահմետական նոր տան մէջ (տե՛ս՝ Ստեփան Փանոսեան, *Կեանք Սը Իր Հանգրուաններով Ու Մոհերով*, Թորոնթօ, Հայ Գիր, 2009, էջ 134–138):
- ¹⁸ Ասիկա կը բացառէ Պոլսոյ մէջ նշանաւոր գործիչներու եւ գաւառացի մշակներու արքորն ու սպանութիւնը:
- ¹⁹ Atnur, էջ 71:
- ²⁰ Yavuz S. Karakışla, “Kadınları Çalıştırma Cemiyeti Himayesi’nde Savaş Yetimleri ve Kimsesiz Çocuklar: ‘Ermeni’ mi, ‘Türk’ mü?” *Toplumsal Tarih* 6 (Sept. 1999), էջ 46–55:
- ²¹ «Ազատագրում» եւ «առեւանգում» գոյգը կեդրոնական եղած է խմբաւորումներու հասկացողութեան՝ իրենց մանուկներուն ցեղային, էթնիկ կամ պետական

- սահմաններ գլել-անցնելու մասին: Քարեն Տուպինսկի վերջերս քննարկած է նման պատումներ միջազգային եւ ներքին միջցեղային որդեգրումներու իմաստով, ինչպէս եւ Քուպայի ու ԱՄՆի բանավեճերը «Փիթըր Փէն մանուկներ»ու մասին (Karen Dubinsky, *Babies without Borders: Adoption and Migration across the Americas*, New York, New York University Press, 2010):
- ²² David Wallace Adams, *Education for Extinction: American Indians and the Boarding Experience, 1875-1928*, Lawrence, University Press of Kansas, 1995:
- ²³ Bjørnlund, էջ 36:
- ²⁴ Hans-Lukas Kieser, “From ‘Patriotism’ to Mass Murder: Dr. Mehmed Reşid (1873–1919),” in Ronald G. Suny, Fatma Müge Göçek, and Norman M. Naimark (խմբ.), *A Question of Genocide: Armenians and Turks at the End of the Ottoman Empire*, New York: Oxford University Press, 2011, էջ 126-47:
- ²⁵ Carol Delaney, “The Meaning of Paternity and the Virgin Birth Debate”, *Man* 21, 3 (1986), էջ 494-513:
- ²⁶ Օսմանցիները յաճախ կեղրոնէն կը վարէին ամուսնութեան ժողովրդագրութիւնը եւ խորապէս գիտակից էին անոր նշանակութեան (Karen Kern, *Imperial Citizen: Marriage and Citizenship in the Ottoman Frontier Provinces of Iraq*, Syracuse, Syracuse University Press, 2011՝ կը քննարկէ, թէ ինչպէս 1874ի օրէնքը արգիլած է օսմանցի սիննի կիներու ամուսնութիւնը իրանցի շիա տղամարդոց հետ՝ իրանեան քաղաքացիներու ստեղծումը կանխելու համար):
- ²⁷ Leslie Peirce, *The Imperial Harem: Women and Sovereignty in the Ottoman Empire*, New York, Oxford University Press, 1993.
- ²⁸ Թէեւ արեւմտեան աղբիւրները, ինչպէս եւ հայկական յուշագրութիւններն ու բանաւոր պատմութեան հարցազրոյցները մշտապէս կը յիշեն «ամենագեղեցիկ աղջիկներու» առեւանգումը, Վահագն Տատրեանի այն պնդումը, թէ «օսմանցի թուրքերը հայկական ծինային աւագանը թուրք ազգի հարստացումի անգնահատելի աղբիւր նկատեցին», առկայ փաստական կամ հետազոտական որեւէ յենարանէ զուրկ է (Dadrian, էջ 422): Այսուհանդերձ, այն իրողութիւնը, որ Փոքր Ասիոյ միսիոնարական դպրոցներու աշակերտները եւ ուսուցիչները առեւանգումներու առաջին թիրախներուն շարքին էին, կը թելադրէ որ այս նիւթը յաւելեալ հետազոտութեան կը կարօտի:
- ²⁹ Nazan Maksudyan, “Foster-Daughter or Servant, Charity or Abuse: *Beslemes* in the Late Ottoman Empire,” *Journal of Historical Sociology* 21, 4 (December 2008), էջ 488-512:
- ³⁰ Աքչամ յղում կ’ընէ Օգոստոս 11, 1915ին Լքեալ Գոյքերու Յանձնաժողովներու ատենապետին կողմէ բազմաթիւ գաւառներ ղրկուած հեռագրի մը, որպէս փաստ, թէ այս օրինականացած մտեցումը ուղղուած էր մահմետականները քաջալերելու, որպէսզի հայ կիներ ու մանուկներ ձեռք ձգէին (Akçam, *The Young Turks’ Crime*, էջ 319): Սակայն, յաւելեալ հետազոտութեան անհրաժեշտութիւնը կը զգացուի, քանի որ մէկ փաստաթուղթ անբաւարար է որպէս ընդհանրացման աղբիւր: Վերապրողներու յուշերը նման մտեցում չեն յիշեր:
- ³¹ Leslie Peirce, “Abduction with (Dis)honor: Sovereigns, Brigands, and Heroes in the Ottoman World,” *Journal of Early Modern History* 15 (2011), էջ 311–29:
- ³² Անդ, էջ 312:

- ³³ Selim Deringil, “The Armenian Question Is Finally Closed”: Mass Conversions of Armenians in Anatolia during the Hamidian Massacres of 1895-1897,” *Comparative Studies in Society and History* 51, 2 (2009), էջ 363:
- ³⁴ “Allies to Punish Turks Who Murder; Notify Porte that Government Heads Must Answer for Armenian Massacres,” *The New York Times*, 24 May 1915.
- ³⁵ Başbakanlık Osmanlı Arşivleri, DH-ŞFR, 92/196, մեջբերումը տե՛ս՝ Atnur, էջ 133
- ³⁶ Անդ:
- ³⁷ Միջագետքի մեջ գործած որբախոյզի մը յուշերուն համար, տե՛ս՝ Ishkhan Jinbashian and Levon Parian (խմբ.), *Crows of the Desert: The Memoirs of Levon Yotnakhparian*, Tujung (Ca.), Parian Photographic Design, 2012, էջ 109-113:
- ³⁸ Զաւէն Տէր Եղիայեան, *Պատրիարքական Յուշերս. Վաւերագիրներ Եւ Վկայութիւններ*, Գահիրէ, Տպ. «Նոր Աստղ», 1947, էջ 287-293:
- ³⁹ Այն ատեն 19ամեայ աղջիկ մը յիշած է, թէ ինչպէս մահմետական տունէր կ’երթար երկու այր պահակներով եւ, նոյնիսկ երբ տանտիրուհին կը պնդէր, որ «անհուատներ» (ոչ-մահմետականներ) չկային, ան բռնի ուժով տունը կը մտնէր եւ թաքնուած մանուկներ կը գտնէր նկուղներուն մէջ (Eliz Sanasarian, “Gender Distinction in the Genocidal Process: A Preliminary Study of the Armenian Case,” *Holocaust and Genocide Studies* 4, 4 (1989), էջ 449-61, յատկապէս՝ էջ 455): Բանաւոր պատմութեան հարցազրոյցները վերապրողներու հետ, մեծաւ մասամբ Միացեալ Նահանգներու մէջ, քննուած չեն որբահաւաքի ջանքերու կապակցութեամբ:
- ⁴⁰ Անդ, էջ 185: Ըստ Հայոց Պատրիարքարանի կողմէ Սպրիլ 1921ին պատրաստուած տեղեկագրի մը, առեւանգուած հայերու ընդհանուր թիւը կը հասնէր 63.000ի, որոնցմէ վեց հազարը Պոլիս եւ իր շրջակայքը կը գտնուէր (Hikmet Özdemir, *Ermeniler: Sürgün ve Göç*, Ankara, Türk Tarih Kurumu, 2004, էջ 123): Նման աղիւսակի մը համար, տե՛ս՝ «Բաղդատական Վիճակագրութիւն Հայ Բնակչութեան Օսմանեան Կայսրութեան Մէջ Տեղահանութենէ Առաջ Եւ Վերջ (Պատրաստուած 1 Սպրիլ 1921ին)», Թէոդիկ, *Ստէնուն Տրեցոյցը, ԺԶ. Տարի*, Պոլիս, Տպգր. Ս. Յովակիմեան, 1922, էջ 261-265:
- ⁴¹ Keith David Watenpaugh, “The League of Nations’ Rescue of Armenian Genocide Survivors and the Making of Modern Humanitarianism, 1920-1927,” *American Historical Review* 115, 5 (2010), էջ 1315:
- ⁴² Vahram Shemmasian, “The League of Nations and the Reclamation of Armenian Survivors,” տե՛ս՝ Richard Hovannisian (խմբ.), *Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide*, New Brunswick, N.J., Transaction Publishers, 2003, էջ 94:
- ⁴³ Հալիտէ Էտիպին (Ատիվար) ուղղուած բաց նամակի մը մէջ, Զարուհի Գալէմքեարեան արձանագրած է օսմանեան ոստիկանութեան նպաստը ազատագրութեան ճիգերուն: Ան Հալիտէն խնդրած է կազմակերպել մահմետական կիները, որպէսզի օժանդակեն ոստիկանութեան՝ հայ որբերու փնտռութիւն հարէմներու մէջ («Բաց Նամակ Հալիտէ Էտիպ Հանըմին», Դեկտեմբեր 29, 1918, Եղիշէ Զարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, Զարուհի Գալէմքեարեանի ֆոնտ): Հալիտէ՝ ժամանակի ամենէն յարգուած գրագիտուհիներէն ու կին գործիչներէն մէկը, նաեւ հայոց ծանօթ էր

որպես արի դեմք մը, որ բացէ ի բաց դատապարտած էր 1909ի Ատանայի եղեռնը: Այս նամակը հաւանաբար գրուած էր նախքան Հալիտէի գործօն դերին բացայայտումը՝ հայ մանուկներու իսլամացումին՝ Լիբանանի որբանոցներուն մէջ (տե՛ս ծանօթ. 67):

⁴⁴ Atnur, էջ 135-138:

⁴⁵ Զաւէն Պատրիարքը նշած է փաստը՝ առանց թիւեր յիշելու (Տէր Եղիայեան, էջ 288):

⁴⁶ Փետրուար 20, 1919 թուակիր նմանօրինակ գանգառի մը համար, տե՛ս՝ *Osmanlı Belgelerinde Ermeniler*, էջ 224-225:

⁴⁷ Տէր Եղիայեան, էջ 288-290:

⁴⁸ Արամ Հայկազ, *Պանդոկ*, Պէյրուօ, Տպ. Մշակ, 1967, էջ 138:

⁴⁹ Այս նիւթը ուսումնասիրուած է յունական պատմագիտութեան մէջ: Սկզբնական փորձի մը համար, տե՛ս՝ Konstantina Adrianopoulou, “Social Policy and ‘National Mission’: ‘Little Ethnomartyrs’ in the Christian Orthodox Community of Istanbul during the First World War,” զեկուցում, Փրինսթըն Համալսարանի Յունական Ուսմանց սեմինար, 2007:

⁵⁰ Աշխարհի տարբեր կողմեր կատարուած հետազոտութիւններ կը հաւաստեն, որ առեւանգուած մարդիկ յաճախ կ’ընդդիմանան բռնի ուժով իրենց ծննդեան համայնքները վերադարձուելու: Ասիկա շատ սովորական է, երբ անոնք յարաբերաբար յաջող կերպով ձուլուած են առեւանգող խմբաւորումին մէջ՝ առանց խիստ խտրականութեան ենթարկուելու, կամ երբ տարիներով հեռու մնացած են եւ վերադառնալու պարագային կը նախատեսեն խարանուրը հայրենակիցներու կողմէ: Հնդկաստանի եւ Փաքիստանի մէջ, բազմաթիւ կիներ, որոնք 1947ի բաժանումին իրենց տուններէն բռնօրէն այլուր տարուած էին, իրենց նոր տուններէն զիրենք «ազատագրելու» ճիգերուն ընդդիմացած են: Նմանապէս, բազմաթիւ սպիտակամորթ կիներ ու մանուկներ, որոնք ԺԸ.-ԺԹ. դարերուն գերեզմարուած են բնիկ ամերիկացիներու կողմէ, անտրամադիր կ’ըլլային սպիտակ ընկերութեան գիրկը վերադառնալու: Այս պարագաները կը հակադրուին այլ դէպքերու, օրինակ՝ կեդրոնական եւ արեւմտեան Աֆրիկէի մէջ, ուր առեւանգուած աղջիկներ մեկուսացած են խրճիթներու մէջ՝ որպէս սեռային ստրուկներ ծառայելու համար, եւ սովորաբար փրկարար ճիգերը ողջունած են Բադդաստական քննարկումի մը համար, տե՛ս՝ Andrea Parrot and Nina Cummings, *Sexual Enslavement of Girls and Women Worldwide*, Westport, Conn., Praeger Publishers, 2008:

⁵¹ «Ոչ-իսլամ կիներու եւ մանուկներու ազատագրումը Թուրքիոյ մէջ» Մարտ 1919ի տեղեկագիրը պատրաստուած էր Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեան համար՝ Զապէլ Եսայեանի կողմէ (Zabelle Essayan, “La liberation des Femmes et Enfant Nonmusulmans en Turquie,” Նուպարեան Գրադարան, Ազգային Պատուիրակութեան Արխիւ, 1-15, նամակագրութիւն Փետր.-Մարտ 1919, տեղեկագիր խորագրուած 1919, էջ 9):

⁵² Ըստ վերապրողի մը վկայութեան, քանի մը հայ տղամարդիկ պատերազմին ԱՄՆ եղած էին եւ ապա Ատանա վերադարձած՝ իրենց կիները փնտռելու: Յայտնի դարձած էր, որ բոլորն ալ ամուսնացած էին մահմետականներու հետ: Ան նկարագրած է կիներուն հանդիպումը իրենց նախկին եւ նոր

ամուսիններուն հետ. «Բոլորը [նախկին կիները] եկան հագուած թուրքի պէս՝ քողերով: [Մահմետական ամուսինները] ըսին [հայ ամուսիններուն] որ պատերազմի ժամանակ ամէն բան կրնայ պատահիլ... [Հայ կիները] չէին ուզեր մեկնիլ. անոնցմէ մէկը ըսաւ, թէ վերադառնալու պարագային, մարդիկ պիտի ըսէին, թէ թուրքերու կիները եղած էին եւ պիտի ծաղրէին զանոնք: Բոլորը [հայ ամուսինները] տեղի տուին [...]: Վերստին ամուսնացան, եւ բոլորը [հայ ամուսինները] ԱՄՆ վերադարձան» (Derderian, էջ 13):

⁵³ Հայկազ, էջ 157:

⁵⁴ Yesayan, “La liberation”.

⁵⁵ Տե՛ս՝ մեր նկատողութիւնները՝ Չարուհի Պահրիի յիշած պարագաներուն մասին:

⁵⁶ Ժամանակի թուրք մամուլը եւ յետագայ ազգայնական պատմագրութիւնը հայ կիներու վերապահութիւնը մեկնաբանած են որպէս սկզբնական հաւանութեան կամ վերջնական երջանկութեան փաստ, հասկցնել տալով, որ կիները աւելի երջանիկ էին մահմետականներու, քան հայերու մէջ: Հայկական պատմագրութիւնը, միւս կողմէ, պարզապէս անտեսած է վերապահ կիներն ու մանուկները, ցոլացնելով այր յուշագրողներու կողմնակալութիւնը:

⁵⁷ Չարուհի Պահրի, «Ի՞նչ էր Չէզոք Տունը», *Այսօր*, Մայիս 3, 1953:

⁵⁸ 8 Փետրուար 1919, Başbakanlık Osmanlı Arşivleri, DH-ŞFR, 96/100, մէջբերումը տե՛ս՝ Atmur, էջ 174:

⁵⁹ Անդ, էջ 180:

⁶⁰ Անդ, էջ 181:

⁶¹ Հիմնուելով գաղթական կիներու յուշերու հետազոտութեան եւ Քարէն Եփփէի՝ իր Ընդունելութեան Տունը ժամանող գաղթական կիներու մասին տեղեկագիրներուն վրայ, Վիքթորիա Ռօու զուգահեռաբար հասած է մեր նոյն եզրակացութեան, թէ «հայ եւ միջազգային համայնքը քաղաքականութեան վերածած է կիներուն հայ համայնքը վերադառնալու առիթ տալը» (Victoria Rowe, “Armenian Women Refugees at the End of Empire: Strategies of Survival,” in Panikos Panayi and Pipa Virdee, eds., *Refugees and the End of Empire: Imperial Collapse and Forced Migration in the Twentieth Century*, New York, Palgrave Macmillan, 2011, էջ 164):

⁶² «Պր. Ահարոնեանի Բանախօսութիւնը Ճրագալոյցի Իրիկունը», *Նոր Կէանք*, 22 Յունուար 1919:

⁶³ Չարուհի Պահրի, *Կէանքիս Վէպը*, Պէլրութ, ա.հ., 1995, էջ 189:

⁶⁴ Անդ, էջ 191:

⁶⁵ Հալիտէ Էտիպ Ատիվար մեղադրած է հայերը՝ մահմետական երեխաներու ուղեղալուացքով (*The Turkish Ordeal: Being the Further Memoirs of Halide Edib*, London, Century Co., 1928, էջ 17): Հայերը, միւս կողմէ, զայն ամբաստանած են որպէս հայ մանուկներ իսլամացնող (տե՛ս, օրինակ՝ Aghavnie Yeghenian, “The Turkish Jeanne D’Arc, An Armenian Picture of Remarkable Halide Edib Hanoum,” *The New York Times*, 17 September 1922): Էտիպ քիւրտ (կամ թերեւս հայ) պատերազմական որբուհի մը իր տունը պահած է (İpek Çalişlar, *Halide Edib: Biyografisine Siğmayan Kadın*, Istanbul, Everest, 2010, էջ 158):

- ⁶⁶ Թէւէ յստակօրէն թուրք ազգայնական տեսանկիւնէ մը գրուած (հայերը միակ առեւանգողներն են), հետեւեալ գործը շահեկան կը մնայ. Funda Selçuk, “Türk Basınında Ermeni Sorunu (Mayıs 1919-Aralık 1920),” մագիստրոսական աւարտաձառ, Ankara Üniversitesi, 2003:
- ⁶⁷ Raymond Kévorkian, *The Armenian Genocide: A Complete History*, New York, I. B. Tauris, 2011, էջ 760-62:
- ⁶⁸ Տիգրան Զաւէն, «Միամտութիւն է Խօսիլ Գոյներու Վրայ Կոյրի Մը, Խղճի Վրայ Ջարդարարի Մը», *Ժողովուրդի Չայնը*, 26 Յունիս 1919:
- ⁶⁹ Nazan Maksudyan, “The Fight over Nobody’s Children: Religion, Nationality and Citizenship of Foundlings in the Late Ottoman Empire,” *New Perspectives on Turkey* 41 (Fall 2009), էջ 151-180:
- ⁷⁰ Անահիտ Դալիթեան, *Երկու Ծիրաններ (Արուեստը Եւ Ընկերային Ծառայութիւնը)*, Պէյրութ, ա.հ., 2006, էջ 168:
- ⁷¹ Չագրեան անձամբ վերադարձուցած է ոմն Թեւֆիք Էֆենտիի դուստրը, որ սխալմամբ գտնուած էր որբախոյզներու կողմէ ու չորս օր պահուած: Թէւէ Չագրեան ներողութիւն խնդրած էր Թեւֆիք Էֆենտիէն, Կարապետ անունով ուրիշ որբախոյզ մը այնուհետեւ կրկին տարած էր աղջիկը, իսկ Չագրեան կրկին վերադարձուցած էր զայն (Atnur, էջ 165):
- ⁷² Պոլսոյ Պատրիարքարանի արխիւներ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան, PCI Bureau, 3d report, 6 Mar. 1922.
- ⁷³ Պահրի, էջ 187:
- ⁷⁴ Ազգային Ժողովի քննարկումներն ալ այս կէտը կը հաստատեն, բայց միայն այս քաղաքականութեան լրացուցիչ հետազօտութիւններ աւելի խոր ըմբռնում մը պիտի տան մեզի: Հայ քննադատներ, որոնց շարքին՝ Ժողովի ատենապետ Դալիթ Տէր Սովսէսեանը, Չէզոք Տունը մեղադրած են «հաւատարմական դատարան»ի պէս գործելու, որբերը ծախելով կամ անոնց մահմետական ընտանիքներէն կաշառք վերցնելով: Պատրիարքական յանձնախումբին քննութիւնը գտած է, որ այս մեղադրանքները անհիմն էին, թէւ ասիկա արգելք չէ եղած, որ Տէր Սովսէսեան զանոնք կրկնէր իր յուշերուն մէջ (Դ. Տէր Սովսէսեան, *Գաղութահայութեան Համար Ելից Միակ Քաղաքը*, Փարիզ, Տպ. Ճարեան, 1935, էջ 196-207):
- ⁷⁵ Հայկազ, էջ 138: Պատասխանատու անձերու յուշերը մերժած են մեղադրանքները կամ լրած՝ նիւթին մասին: Ազգային Խնամատարութեան պետ Մատթէոս Էպիղաթեան իր յուշերուն մէջ կ'ըսէ. «Կը հաստատեն որ մենք **թուրքի զաւակ մը հայացնելու** ոչ մէկ փափաք ունէինք: Եւ սակայն, ոչ մէկ հայ պիտի մտածէր, այնքան ահռելի սպանդներէն ետք, մնացեալ հայորդիներէն ալ հարիրաւորներ զոհել թուրքերու նենգ կեղծաւորութեան» (Մատթէոս Էպիղաթեան, *Կեանք Մը Ազգիս Կեանքին Մէջ. Ականատեսի Եւ Մասնակցողի Վկայութիւններ 1903-1923*, Պէյրութ, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Սեծի Տանն Կիլիկիոյ, 1987, էջ 185. Ընդգծումը բնագրային):
- ⁷⁶ Հայկազ, էջ 138:
- ⁷⁷ Տէ'ս Յարութիւն Խաչատուրեան, «Հայուն Վրէժը», *Ամէնուն Տարեցոյցը*, ԺԵ. Տարի, 1921, էջ 135:

- ⁷⁸ Eric Weitz, “From the Vienna to the Paris System: International Politics and the Entangled Histories of Human Rights, Forced Deportations, and Civilizing Missions,” *American Historical Review* 113, 5 (2008), էջ 1313-43:
- ⁷⁹ Տէր Եղիայեան, էջ 331:
- ⁸⁰ Պատրիարքը անոր վստահեցուցած է, որ օտար երկիրներ ապաստանած վերապրողները կը ջանային առաջին առիթով հայրենիք վերադառնալ եւ ոչ իսկ կը փորձէին իրենց (ժամանակաւոր) տուներուն վիճակը բարւօքել (*անդ*, էջ 207):
- ⁸¹ Fatma Ülgen, “Reading Mustafa Kemal Atatürk on the Armenian Genocide of 1915,” *Patterns of Prejudice* 44, 4 (2010), էջ 369-391, յատկապէս՝ էջ 376:
- ⁸² Հայկանոյշ Մառք, «Խմբագրական. Հայ Ըլլանք», *Հայ Կին*, Ա. Տարի, Թիւ 3 (1 Դեկտեմբեր 1919):
- ⁸³ Սոյն քննարկումէն դուրս կը մնայ ֆիզիքական վերարտադրութեան միջոցով (այսինքն՝ մեռելներու փոխարինումը ողջերով) վերականգնում իրագործելու կամ փորձել իրագործելու հոգեբանական հարցերը: Վիճակագրական տուեալներ կը պակսին ճշդելու համար, թէ իսկապէս ծնունդներու քանակական «պայթում» մը տեղի ունեցած է ցեղասպանութենէն ետք:
- ⁸⁴ *Հայ Կինի* աշխատակից մը առաջարկած է, որ Հայոց Պատրիարքարանը ամուրիներէ լրացուցիչ տուրք գանձէ եւ տուրքերը նուազեցնէ բազմազանակ ընտանիքներու պարագային (Արմենակ Սալմասլեան, «Բնակչութիւն Եւ Ամուրիներու Վրայ Տուրք», *Հայ Կին*, Ա. Տարի, Թիւ 21 (1 Սեպտեմբեր 1920):
- ⁸⁵ Տօթթ. Տէրոբդի, «Ուր Կ’երթաս Հայ Կին», *Հայ Բուժակ*, Գ. Տարի, Թիւ 9 (Յուլիս 1922), էջ 150 (ընդգծումը բնագրային):
- ⁸⁶ Կիլիկիոյ հողերու եւ գերիշխանութեան նկատմամբ հայկական պահանջները վերլուծելով, Սէմ Քափլան ցոյց տուած է, թէ ինչպէս հայ գործիչները, իրենց թուական մեծամասնութիւնը «փաստելու» համար կը պնդէին, որ շրջանի բոլոր բնակիչները, նոյնիսկ թրքախօս մահմետականները, Կիլիկիոյ հայկական թագաւորութեան շահաւիղներ էին ու հետեւաբար՝ հայազգի: Թէեւ Քափլանի վերլուծումը նկատի չէ առած ցեղասպանութեան դերը հայկական պահանջատիրութեան մէջ (բացի հագուադէպ ակնարկութիւններէ «պատերազմի ողբերգութիւններ»ուն կամ «երկպառակող թշնամութեան»), անոր դիտողութիւնները նշանակալից են ցոյց տալու համար, որ, անհրաժեշտութեան պարագային, հայ բանբերները կրնային մահմետականներու տեղ բանալ հայկականութեան նոր սահմանումներու մէջ (Sam Kaplan, “Territorializing Armenians: Geo-Texts and Political Imaginaries in French-Occupied Cilicia, 1919–1922,” *History and Anthropology* 15, 4 (2004), էջ 399-423):
- ⁸⁷ Տօթթ. Եադուպեան, «Հայ Կնոջ Առողջապահական Դերը Հայաստանի Մէջ Գ.», *Հայ Կին*, 1, 19 (1 Օգոստոս 1920):
- ⁸⁸ Nayanika Mookherjee, “Available Motherhood: Legal Technologies, ‘State of Exception’ and the Dekinning of ‘War Babies’ in Bangladesh,” *Childhood: A Global Journal of Child Research* 14, 3 (2007), էջ 339-354:
- ⁸⁹ Ruth Harris, “The ‘Child of the Barbarian’: Rape, Race and Nationalism in France during the First World War,” *Past and Present* 141 (1993), էջ 170-206:

- ⁹⁰ Յատուկ ուշադրութիւն չէ ընծայուած այն հագուադէպ պարագաներուն, երբ հայ մօր ներկայութիւնը բաւարար նկատուած չէ ազգային պատկանելիութեան համար: Այդպիսի օրինակի մը համար, տե՛ս՝ Պետրոս Պոնտացիի գրութիւնը, ուր ան կը վստահեցնէ իր «պատուոյ գոհ քոյրերուն», որ անոնք կոյս պիտի մնան այն հայ մարդոց համար, որոնց հետ նոր հարսանիքներ պիտի ունենան նոր Հայաստանի մէջ, բայց միաժամանակ կը զգուշացնէ. «Խեղդեցէ՛ք վիժածներն ձեր արգանդին մէջ գողունի: Հայաստանը հարազատի պէտք ունի» (Պետրոս Պոնտացի, «Եղեռնային Հարսանիք», տե՛ս՝ «Երեւան»ի *Տարեցոյցը*, Կ. Պոլիս, ա.տ., 1920, էջ 32):
- ⁹¹ Patricia Weitsman, “The Politics of Identity and Sexual Violence: A Review of Bosnia and Rwanda,” *Human Rights Quarterly* 30 (2008), էջ 561-578:
- ⁹² Գոհար Մազլըմեան, «Բռնի Մայրութեան Պարտադրուած Դեռատի Մայրերու Հոգեկան Վիճակը Եւ Անոնց Երախաներուն Զրկանքները», *Հայ Կին* 1, 11 (1 Ապրիլ 1920): Բռնաբարութեան ծնունդ մանուկներ անտեսած կամ լքած վերապրողներու հետ հարցազրոյցներու համար, տե՛ս՝ Donald E. Miller and Lorna Touryan Miller, *Survivors: An Oral History of the Armenian Genocide*, Berkeley, University of California Press, էջ 101-102:
- ⁹³ Զարուհի Գալմբէարեան, «Զաւակը», տե՛ս՝ *Կեանքիս Ճամբէն*, էջ 272:
- ⁹⁴ Mabel Elliott, *Beginning Again at Ararat*, New York, Fleming H. Revell Company, 1924, էջ 25:
- ⁹⁵ Օրինակի մը համար, թէ ինչպէս «բնականօրէն» Ստանայի հայ եկեղեցին մկրտած է ազատագրուելու ժամանակ յի կնոջ մը զաւակը, տե՛ս՝ Varteres Garougian, *Destiny of the Dzidzernag: Autobiography of Varteres Mikael Garougian*, Princeton, Gomidas Institute, 2005, էջ 96:
- ⁹⁶ Մէջբերումը տե՛ս՝ Derderian, էջ 14:
- ⁹⁷ Kerop Bedoukian, *Some of Us Survived: The Story of An Armenian Boy*, New York, Farrar Straus Giroux, 1979, էջ 201:
- ⁹⁸ Իզապել Գաբրիէլեան-Չրչիլ հարցազրոյցներ ունեցած է «լուսանկարի հարս»երու հետ, որոնք Քանատա մտած են 1920ականներուն: Ան եզրակացուցած է, որ գաղթական աղջիկներուն անմիջական թիրախը ամուսնութիւնն էր, որուն պատճառները բազմազան էին՝ իրենց ընտանիքին վերապրող անդամները Նոր Աշխարհ բերելու եւ «ազատագրելու» դրդապատճառէն մինչեւ «տարանցիկ» կեանքի մը վերջակէտ դնելը (Isabel Kaprielian-Churchill, “Armenian Refugee Women: The Picture Brides 1920–1930,” *Journal of American Ethnic History* 12, 3 (1993), էջ 3):
- ⁹⁹ Անը, էջ 22 ծանօթ. 54, էջ 29, ծանօթ. 111:
- ¹⁰⁰ Նարգիզ Քիպրիթեան, «Կոչ Մը Հայ Մայրերուն», *Հայ Կին*, Ա. Տարի, Թիւ 10 (16 Մարտ 1920):
- ¹⁰¹ *Եռամսեայ Տեղեկագիր Հ. Կ.*:
- ¹⁰² John Minassian, *Many Hills Yet to Climb: Memoirs of an Armenian Deportee*, Santa Barbara, Calif., J. Cook, 1986, էջ 236:
- ¹⁰³ Ասիկա չի նշանակեր, որ ամէն ոք զանոնք ընդունած է լայնասիրտ կերպով: Այսուհանդերձ, զանազան վերապրողներ եւ արեւմուտքի ընկերային գործիչներ կը նշեն, թէ դաջուածքները համարկումի եական արգելք չեն եղած:

Վրրճինիա Մեդրունի, որուն յուշերը հագուագիւտ են պետեւիներու մէջ բռնաբարման եւ դաջուելու հոլովոյթին մասին բացայայտ յիշատակումով, նաեւ յիշած է, թէ նշանածը, որ Ամերիկա գտնուած էր պատերազմի ընթացքին, դաջուածքները «քաջութեան եւ պատիւի» նշան կը համարէր: (Mae M. Derderian and Virginia Meghrouni, *Vergeen: A Survivor of the Armenian Genocide*, Los Angeles, ATMUS Press, 1997, էջ 249): Իր բնիկ ընտանիքին 37 տարի ետք վերադառնալու փորձ կատարած ու դաջուած կնոջ մը ողիսականին պատմողական վերականգնումին համար, տե՛ս՝ Hourig Attarian, “Lifelines: Matrilineal Narratives, Memory and Identity,” PhD diss., McGill University, 2009:

- ¹⁰⁴ Հակառակ իր անհիմն ընդհանրացումներուն, նորագոյն փաստանկար մը հայեացք մը կը նետէ դաջուած կնոջ մը կեանքին, որ զայն շարունակած է որպէս հայ (Suzanne Khardalian, *Grandma's Tattoos*, New York, Cinema Guild, 2011):
- ¹⁰⁵ Նման կեցուածքի մը ամէնէն ծանօթ պարագան Գեղամ Տէր Կարապետեանի ամուսնութիւնն էր երիտասարդ Կիւլիզարի հետ, որ ինքզինք ազատած էր քիւրտ Մուսա Պէյի տունէն, ուր բռնի տարուած էր 1893ին: Յետպատերազմեան պոլսահայոց կողմէ այս դէպքին յիշողութեան օրինակի մը համար, տե՛ս՝ «Մուսա Բէկ Եւ Կիւլիզար», *Ասէնուն Տարեցոյցը*, Ժ.-ԺԴ. Տարի, Պոլիս, Տպգր. Կ. Քէշիշեան Եւ Որդի, 1916-1920, էջ 151-152:
- ¹⁰⁶ Սահակ-Մեսրոպ, «Եղեռնի Յուշարձան, Անոնց Անունը», *Առաւօտի Տարեգիրք*, Ա. Տարի, Պոլիս, Արարատ, 1921, էջ 83-86:
- ¹⁰⁷ Պատրիարքը դիրութեամբ որբուհիներ չէ յանձնած, նոյնիսկ երբ հայ հարազատները ազգականական կապի լայն փաստեր ներկայացուցած են (Հայկազ, էջ 133):
- ¹⁰⁸ Հայկանոյշ Մառք, «Խմբագրական. Անկեալ Կիներու Համար», *Հայ Կին*, 3, 4 (16 Դեկտեմբեր 1921):
- ¹⁰⁹ Անայիս (Եւփիմէ Աւետիսեան), *Յուշերս*, Փարիզ, ա.հ., 1949, էջ 264:
- ¹¹⁰ Յիսուն հազար յոյն եւ հայ լքած է քաղաքը Հոկտեմբեր-Դեկտեմբեր 1922ին (Alexis Alexandris, *The Greek Minority of Istanbul and Greek-Turkish Relations, 1918-1974*, Athens, Center for Asia Minor Studies, 1983):
- ¹¹¹ Սոյն խումբը կոչելով «խլամացած հայ վերապրողներ», Այշէ Կիւլ Ալթինայ եւ Եքթան Թիւրքելլիմազ քննադատած են թուրք եւ հայ պատմագրութիւնները, որոնք կամ այս խումբին գոյութիւնը կ'անտեսեն, կամ զայն «կեանք պահպանելու» օսմանեան կառավարութեան ջանքի արտայայտութիւն (թուրք պատմագրութիւն) կամ «արմատախիլ ազգ»ի ներկայացուցիչ (հայ պատմագրութիւն) կը դարձնեն: Անոնք պնդած են, որ անտեսելով կրօնափոխ այս կիներուն ու մանուկներուն «վերապրող»ի բնոյթը, պատմաբանները զանոնք ոչ-էականերու վերածած են: Կրօնափոխներու կեանքին ուսումնասիրութեան ներկայացուցած կարեւորութեամբ հանդերձ (ինքնութեան իմաստով), կը կարծենք, որ «վերապրող»ի չտարբերակուած պիտակը խնդրական է, որովհետեւ ցեղասպանութեան սկզբնական տրամաբանութիւնը հաշուի չ'առնէր: Ֆիզիքական յարատեւումը եւ ազգային-կրօնական ինքնութեան շարունակութիւնը պէտք է քննուին անջատաբար: Եթէ «վերապրող» կը նշանակէ «ան, որ կը շարունակէ գործել *ի հեճուկս* ընդդիմութեան», անհրաժեշտ է նկատի ունենալ (այլազան ազգակներու

շարքին) այն բռնութեան բնոյթը, որ «վերապրող-ութեան» չափանիշ կը դառնայ: Այդ կիներուն ու մանուկներուն *ինքնին* ֆիզիքական կեանք շարունակելը բաւարար պատճառ չէ զանոնք խմբելու այս յատուկ ցեղասպանութեան «վերապրող»ներու դասակարգին մէջ, որուն ընթացքին ցեղասպաններուն նպատակը (ինչպէս կը փաստենք այս ուսումնասիրութեան մէջ) եղած է, ու յաջողած, զանոնք անդառնալիօրէն ձուլել մահմետական համայնքին մէջ: Այլ խօսքով, նախկին հայ այս անձերուն յետպատերազմեան կեանքի շարունակութիւնը որպէս մահմետական թուրքեր, քիւրտեր կամ արաբներ եւ մահմետական թուրքերու, քիւրտերու կամ արաբներու ծննդաբերումը չեն նշանակեր, որ ցեղասպանական տրամաբանութիւնը ձախողած է (ինչպէս «վերապրող» եզրը ցոյց կու տայ), այլ կը վկայէ անոր յաջողութեան մասին: Աւելի՛ն. «խալամացած հայ վերապրողներ» նկարագրականին «հայ» բառն իսկ պէտք է ինդրականացնել աւելի քան ենթադրել, որովհետեւ բազմաթիւ կրօնափոխներ, իրենց կրօնափոխութեան պայմաններէն անկախ (բռնի կամ ոչ), ապրած ու մեռած են որպէս թուրքեր, քիւրտեր կամ արաբներ եւ կամ բարեպաշտ մահմետականներ: Արեան վրայ հիմնուած հայկականութեան սահմանումի մը բացակայութեան դէմ յանդիման (ուր հայկականութիւնը անհպելի պիտի մնար՝ անկախաբար ընկերային արտաքին պայմաններու առկայութենէն), բոլոր նման կրօնափոխներու ոչ-քննական բնորոշումը որպէս «հայեր» կրնայ կանխել անոնց բազմախաւ ինքնաբնութագրումներուն քննարկումը, աւելի քան գիտութեան լոյսի տակ դնել (Ayse Gül Altınay and Yektan Türkyilmaz, “Unraveling Layers of Gendered Silencing: Converted Armenian Survivors of the 1915 Catastrophe,” in *Untold Histories of the Middle East: Recovering Voices from the 19th and 20th Centuries*, London, Routledge, 2011, էջ 25-53):

¹¹² Անոնց թոռներուն հետ հարցազրոյցներու հաւաքածոյի մը համար, տե՛ս՝ Ayse Gül and Fethiye Çetin, *Torunlar* (Istanbul: Metis, 2009):

¹¹³ շարկ է նշել, որ հայկական ծագում ունենալը տակաւին ամօթալի կը նկատուի Թուրքիոյ թուրք մահմետական քաղաքացիներու միջեւ, իսկ անձը՝ թերեւս անվստահելի: “*Ermeni döliü*” (հայկական սերմ) դեռ կը գործածուի որպէս նախաստինք: Փետրուար 2004ին, երբ թրքահայ *Ulyou* շաբաթաթերթը կը պնդէր, որ Սուսթաֆա Քեմալ Աթաթիւրքի որդեգիր դուստրերէն մէկը հայ որբուհի մը կրնար եղած ըլլալ, թրքական լրատվութիւնները եւ զանազան պետական հաստատութիւններ բռն մերժումի արշաւի մը ձեռնարկած էին: Սապիհա Կեօքչէն ո՛չ միայն «նոր Թուրքիոյ հիմնադրի» դուստրն էր, այլեւ առաջին մարտական օդանաւորդուհին, ինչ որ թրքական արդիականացման ծրագրի յաջողութեան գրաւական մըն էր: Կեօքչէնի շուրջ բանավեճով կը սկսէր Հրանդ Տինքը սատանայացնելու գործընթացը, որ ի վերջոյ պիտի յանգէր անոր սպանութեան Յունուար 19, 2007ին: Սատանայացումի մանրամասն քննարկումին համար, տե՛ս՝ Fatma Ülgen, “‘Sabiha Gökçen’s 80-Year-Old Secret’: Kemalist Nation Formation and the Ottoman Armenians,” դոկտորական աւարտաճառ, University of California, San Diego, 2010, էջ 109-153:

¹¹⁴ Հանրային որոշ ուշադրութեան առարկայ դարձած անցեալի միակ ծանօթ դէպքը արձանագրուած է 1962ին: Ֆրանսաբնակ ոմն Տիկ. Փիլիպոսեան, մահմետական ծնած եւ Պոլսոյ ու Ֆրանսայի հայկական որբանոցներու մէջ

մեծցած, Թուրքիա այցելած եւ իր թուրք եղբայրներն ու քոյրերը գտած էր: Այս պատմութիւնը թրքական ժողովրդական թերթի մը գլխատր լուրն էր (Esin Talu, “Akşam Köşesi/Madam Pilibüsyen’in Macerası,” *Akşam*, 17 Դեկտեմբեր 1962, էջ 1 եւ 5):

CLIMATE OF ABDUCTION AND REDEMPTION:
THE POLITICS OF INCLUSION OF WOMEN AND CHILDREN DURING AND
AFTER THE ARMENIAN GENOCIDE
(SUMMARY)

LERNA EKMEKCIOGLU
lernaek@gmail.com

This article explores a forcible, wartime transfer of women and minors from one ethnic group to another and its partial reversal after the war. The author analyzes the historical conditions that enabled the original transfer, and then the circumstances that shaped the reverse transfer. The setting is Istanbul during and immediately after World War I, and the protagonists are various influential agents connected to the Ottoman Turkish state and to the Armenian Patriarchate. The absence and subsequent involvement of European Great Powers determines the broader, shifting context. The narrative follows the bodies of women and children, who were the subjects of the protagonists’ discourses and the objects of their policies. The study connects two processes involved: the wartime integration of Armenian women and children into Muslim settings, and postwar Armenian attempts to rescue, reintegrate, and redistribute them. The author explains why and how the Armenian *vorpahavak* (gathering of orphans and widows) worked as it did, and situates it comparatively with similar events. She highlights its uniqueness and the theoretical possibilities that it offers toward understanding why and how children and reproduction matter so much to collectivities in crisis.

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՆ՝
ՈՒՐՖԱՅԻ ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ԱՐՀԵՍՏԱԳԷՏ ՅԱԿՈԲ ՄԱՆԵՐԵԱՆ**

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

Ա. ՄՈՒՏՔ

Հայկական պղնձագործության համապարփակ ուսումնասիրությունը կը շարունակե՛լ յամենայ: Եղած հրատարակությունները, ուսումնասիրությունները, հաւաքածոներու նուիրուած նկարագիրքերը եւ յօդուածները մասնակի են, սահմանափակ եւ նոյնիսկ իրենց նեղ ծիրին մէջ համընդգրկուն չեն: Ի դէպ, անտեղեակ ենք նաեւ հայկական կնիքներու նուիրուած համապարփակ ուսումնասիրութեան մը գոյութենէն: Թերութիւնը թերեւս պէտք է վերագրել նաեւ նիւթերու անբաւարարութեան¹:

Սուրիան էր սփիւռքեան մեծագոյն դաշտը նախա- եւ յետ-եղեռնեան հայ պղնձագործութեան արտադրանքի ձեռքբերման: Դժբախտաբար, այսօր այնտեղ յառաջացած տագնապը սկսած է անհետացնել կամ լուծարել հայկական պղինձի հաւաքածոները, այդ արհեստին յետնորդ վերջին մոհիկանները, հայ արծաթագործութեան հալէպահայ վերջին մնացորդները, հաւաքորդները՝ առաւել դժուար դարձնելով անոնց ուսումնասիրութիւնը:

Ի ձեռք ունիմ պղինձէ ափսէ մը, նախշուած ու կնքուած:

Անոր գեղեցկութիւնը կը պարտադրէ որ զայն արուեստի հայ հանրութեան ուշադրութեան յանձնեմ: Զայն ձեռք բերի Յուլիս 2014ին, Պէյրութի մէջ հնավաճառէ մը: Պէյրութի պղնձավաճառքի շուկային մէջ շեշտակիօրէն հագուադէպ է կնքուած կամ հայերէն արձանագրութեամբ գործեր գտնել²: Ուստի երբ ձեռք անցընես՝ մեծապէս ուրախ կը զգաս՝ Եղեռնի պատճառով անհետացումէն բան մը փրկած ըլլալու գոհունակութեամբ:

Բ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Բ1. Նկարագրութիւն Եւ Չափագրութիւն

Ափսէն հարուստ է լաւապէս պահպանուած նախշերով: Ան կը կշռէ 1154 կրամ, ունի 42,5 սանթիմէթ տրամագիծ եւ 1,1մմ հաստութիւն:

Արաբատառ օսմաներէն կնիքով արձանագրուած անձնանունը, տեղանունը եւ թուականը կը հաւաստեն որ ան նախաեղեռնեան ստեղծագործութիւն մըն է: Կնիքը հաւկթաձեւ է. եռատող գրութեան կը յաջորդէ իսլամական թուականը: Իւրաքանչիւր տող կը հաշուէ մէկ բառ: Կնիքը հետեւեալն է.-

- أكوب (Յակոբ)
- متریان (Մաներեան)
- اورفة (Ուրֆա)
- 3١٣٢٧ (1327)

Հետեւաբար, ան Ուրֆայի մէջ, Յակոբ Մաներեանի կողմէ, կամ անոր աշխատանոցէն արտադրուած գործ մըն է:

Հիճրէթի թուական հանդիսացող 1327ը կը համապատասխանէ քրիստոնէական 1909ին: Նման դրոշմ-կնիքներ չէին արտադրուեր տարեկան դրութեամբ, այսինքն արհեստանոցը իւրաքանչիւր նոր տարուան համա ը նոր կնիք չէր օգտագործեր: Նոր կնիք կը պատրաստուէր արհեստանոցին առնչութեամբ մեծ

փոփոխութեան մը, կամ՝ կնիքի մաշումին, կամ կնիքի



անուանատիրոջ մահուան ու նոր վարպետի

գործին

ամրապնդման պարագային: Հետեւաբար, կրնայ ըլլալ որ այս ափսէն 1909ին կամ անկէ ետք արտադրուած գործ մըն է, շատ հաւանաբար 1915էն առաջ.




նուազ հաւանական է որ ան 1915էն ետքի ստեղծագործութիւն ըլլայ⁴:

Կեդրոնի նախշը համադրութիւն մըն է. շուրջ 8,9սմ. տրամագիծով կլոր շրջագիծի մը կեդրոնը նախշուած է վեցթեւանի աստղ մը: Կեդրոնի ծաղկանման բուսական պատկերին շուրջ՝ զուգահեռ ընթացող եօթ կոհակաձեւ շրջագիծեր կան: Իւրաքանչիւր կոհակ բաղկացած է զոյգ շրջագիծէ: Առաջին 4 կոհակները իրարմէ հեռու են գրեթէ համաչափօրէն՝ շուրջ

կեսական սանթիմետրով: 4րդ եւ 5րդ կոհակներուն միջեւ եղած հեռաւորութիւնը աւելի մեծ է՝ շուրջ 2,8 սանթիմետր: 5րդ եւ 6րդ կոհակներուն միջեւ եղած հեռաւորութիւնը շուրջ 7,5 սանթիմետր է, իսկ 6րդ եւ 7րդ կոհակներուն միջեւ եղած հեռաւորութիւնը շուրջ 1,5 սանթիմետր: Այնուհետեւ 1,5 սանթիմետր հեռաւորութիւն մը կայ 7րդ կոհակին ու փսէին աւարտին՝ դուրսի ծայրի անկիւնաւոր գոգաւորութեան միջեւ:

Բ2. Նախշեր

Նախշազարդ այս փսէն կարծես, առաջին ակնարկով, շողարձակող արեգակ ըլլայ՝ կեդրոնէն դէպի բոլոր ուղղութիւններով տարածուող ճառագայթներով, որոնք բուսական նախշեր են: Արեւն ու բուսական նախշազարդը կը համատեղուին կեանքի եւ կենսատուութեան հասկացութեամբ:



Աթսէին կեդրոնին իրարու հպող չորս կամարաձէ գիծերը (կիսակլորի հատուած) այս կլոր շրջագիծի ներքնամասը կը բաժնեն 12 մասերու: 12 մասերէն վեցը սահմանափակուած են կիսակլորներով, որոնք *օւաշներ* գոյացուցած են: Այս *օւաշներուն* մէկ ծայրը կը բխի վեցթեւանի աստղին կեդրոնէն ու կ'աւարտի կլոր շրջագիծին վրայ: Երկրորդ վեցեակը այս 12 մասերուն՝ կը պատկերէ իրարու կոնակ տուած երկու կամարներու միջեւ ինկած նեղէն դէպի լայն բացուող տարածութիւն մը, որ կը փակուի կլոր շրջագիծով: Այս տարածութեան ստորին բաժինին նետաձէ նախշ մը զիկզակուած է, իսկ վերի մասը աւելի յատկանշական ուշագրաւութիւն մը ունի. հոն՝ կլոր շրջագիծէն շուրջ մէկ սանթիմետր առաջ վերէն դիտուած ծաղիկի մը շրջագիծը նախշուած է:

Կոհակներուն միջեւ եղած տարածութիւնը մենք կ'անուանենք դաշտ: Այս դաշտերուն մէջ, փսէին ամբողջ տարածքին նախշեր

կան: Իւրաքանչիւր դաշտի նախշը տարբեր է միւս դաշտերու նախշերէն: Կեդրոնական շրջագիծի գծանկարէն բացի ասիսէն ունի հինգ նախշատեսակ:

4րդ եւ 5րդ կոհակներուն միջեւ առկայ 28 նոյնանման նախշերը քառաթեւ ու հաւասարաթեւ, իրարմէ համաչափ հեռաւորութեամբ դրոշմուած 28 խաչեր են:

5րդ եւ 6րդ կոհակներուն միջեւ առկայ 39 նախշային համադրութիւնները միօրինակ են: Բուսական այս նախշերը կիսակլոր հիմք ունին. ասոնք կը յենին 5րդ կոհակին վրայ երկու տերեւներու կիսակլոր միացումով գոյացած կիսալուսնաձեւ տերեւանախշի մը, եւ կը բացուին դէպի վեր, իրենցմէ բխեցնելով շուրջ 8 սմ. երկարութեամբ բուսական ուղղահայեաց 39 սիւներ: Իւրաքանչիւր տերեւանախշ՝ տերեւի 'ջիղերու' ուրուագիծն ունեցող 1 սմ. երկարութիւն ունի: Իւրաքանչիւր սիւն ունի իրարու վրայ բարձրացած այսպիսի չորս, կրկնուող տերեւանախշեր: Իւրաքանչիւր սիւնի գագաթին դրուած է մէկ գնդիկէ բխող երեք ուղղագիծ, որոնց գագաթին մէկական գնդիկներ կան: Այս ուղղագիծերը կը գոյացնեն շուրջ 50 աստիճան անկիւն մը, որ կը կիսուի ուղղագիծերէն մէկէն: Վերոյիշեալ 39 սիւներէն միայն մէկը կը հաշուէ չորսի փոխարէն երեք տերեւանախշ, որուն վրան՝ միւսներուն նման դրուած է նոյն նախշը, ապա՝ հակթաձեւ կնիքը:

6րդ եւ 7րդ կոհակներուն միջեւ մարգարտաձաղիկի 70 նոյնանման նախշեր կան: Ասոնք միաշարք են:

Ուշագրաւ է նաեւ, որ ի տարբերութիւն 4րդ եւ 5րդ ու 6րդ եւ 7րդ կոհակներուն միջեւ եղած նախշերուն հորիզոնական ընթացքին, 5րդ եւ 6րդ կոհակներու դաշտի նախշերը ուղղահայեաց են: Իրար չղպչող ուղղութիւններու այս "երեւակայական" խաչաձեւումները ասիսէին նախշային ընդհանուր պատկերին տարբեր շարժունակութիւն մը կը հաղորդեն:

Գ. ՁԵՌԱՐՈՒԵՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Իւրաքանչիւր տերեւի ու խաչի կիսալուսնաձեւ գոյգ տերեւանախշն ու մարգարտաձաղիկի նախշերը յառաջացած են միանշանակ, ամբողջական դրոշմներով, այլ խօսքով՝ նախշերը չեն գոյացած ուղիղ գիծեր ունեցող սեպերու մրճահարումով (եւ կամ սրածայր գործիքի մը փորագրումով), այլ առանձինս ամբողջական նախշեր ունեցող սեպերով, ինչ որ կը խօսի

նախնականությունն անդին անցնող, յառաջացած նախազգործության մասին: Պետք է ըսել նաև, սակայն, որ նոյնատեսակ նախշերը ո՛չ համաչափ հեռաւորութիւն, ո՛չ ալ նոյն հարթակին վրայ են: Այլ խօսքով՝ թե՛ հորիզոնական եւ թե՛ ուղղահայեաց անհամաչափութիւն ունին:

Դրոշմներու զարգացածութեան կողքին, արհեստին զարգացածութեան այլ ցուցանիշ մըն է այն, որ ափսէն չունի մրճահարուածի հետքեր, ինչ որ կը խօսի կլոր, կանխաւ պատրաստուած, հարթ պղնձաթերթի մասին: Գոգաւորութիւն եւ ալիքաւոր եզերքի յառաջացումը այնքան համաչափ է որ պահ մը կը կարծենք որ պատրաստուած են կաղապարային մեքենաներով: Սակայն, այդպէս չէ: Պարզապէս բժախնդիր, արհեստին տիրապետած վարպետի մրճահարուածներու արդիւնք է ան, ինչ որ դարձեալ կը խօսի վարպետութեան բարձրորակութեան մասին:

Դ. ՆԱԽՇԵՐՈՒՆ ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱՐՈՒԵՍԻ ԱՅԼ ՆՄՈՒՇՆԵՐՈՒ ՄԷՁ⁵

Դ1. Կեդրոնական Ձարդանախշ

Ասատուր Մնացականեան, իր մեծարժէք *Հայկական Ձարդարուեստ* հատորին մէջ կը վերլուծէ մեր ափսէին կեդրոնական նախշին նմանատիպ մը. «...նկարուած է մի նուռ. դա սովորական նուռ չէ, այլ գաղափարական հասկացողութիւնների մի բարդ ու բովանդակալից խտացում... Այդ նուան մակերեսը ամբողջովին ծածկուած է զարդերով. կենտրոնում գտնուում է մի քառաթերթ ծաղիկ, որի շուրջը աւելի մեծ չափով պատկերուած է մի ուրիշ քառաթերթ ծաղիկ. վերջինիս իւրաքանչիւր թերթիկը ունի երեք բլթակ... իրար վրայ պատկերուած այդ եռայարկ ծաղիկի թերթերի միջեւ գտնուող չորս նեղ տարածութիւնները կազմում են մի խաչաձև ծաղկազարդ... իրար վրայ դրուած վերոյիջեալ երեք ծաղիկների թերթերի սահմանները եւ նրանց շարունակութիւնները կազմում են նուան մէկական խոշոր բացուած ծաղիկ... Այսպիսով, ամբողջ նուան պատկերը ներկայացնում է մի շրջագծի մէջ առնուած 12 ծաղիկներից կազմուած մի բարդ կոմբինացիա, որոնցից չորսը կրում են մէկական նուան հատիկ... Այս բոլորից պարզ է, որ այստեղ գործ ունենք ոչ թէ մի սովորական նուան կամ անիմաստ զարդի հետ, այլ գաղափարական մի բարդ ու բովանդակալից զարդաձևի, որը

հայկական զարդարունեստի ամենաինքնատիպ եւ ամենալաւ նմուշներից մէկն է: ...Նոան ճեղքուածքից դուրս գալու տեսքը խօսում է այդ հատիկի ծլելու մասին, ուստի եւ նոյն իմաստն է թելադրում նաեւ միւս երեքի համար... չորս հատիկները կապում են չորս էլեմենտների (հող, ջուր, օդ, հուր) հասկացողութեան հետ, իսկ իրար մէկընդմէջ յաջորդող 8 ծաղիկները (պտղով եւ անպտուղ) արտայայտում են ծաղիկ-պտուղ-ծաղիկ-պտուղ... գաղափարը, կամ կեանքի յաւերժութեան իմաստը»⁶:

Երկու նկարներուն բաղդատութիւնը ցոյց կու տայ ընդհանուր նմանութիւններ: Հակառակ անոր որ մեր ափսէին նկարը չունի Մնացականեանի նկարին բարդութիւնը, բայց հոն նշմարելի են նոյն գծանկարներուն տարերային նմուշները: Ասիկա կրնայ ենթադրել տալ, որ նուազ, պտղաբերութեան գաղափարը որ շեշտուած է Մնացականեանի նկարին մէջ, իբրեւ գաղափար իր տեղը զիջած է զարդի, յարդարանքի գաղափարին: Այլ խօսքով, եթէ Մնացականեանի ափսէն ունի գաղափարական նշանակութիւն եւս, ապա Մաներեանի ափսէն ունի զարդարանքային եւ կիրառական նշանակութիւն:

Դ2. Բուսական Ուղղահայեաց Միւնէր

Այս սիւնէրուն յղացքը, գաղափարը նոյնպէս նորութիւն չէ. անոր նախնական եւ առաւել մշակուած տարբերակներուն կը հանդիպինք հայկական քիլիմներու (նկ. 1, 27), մանրանկարներու (նկ. 38), ասեղնագործներու (նկ. 18⁹), զարդանկարներու (նկ. 4, 5¹⁰) եւ որմնանկարներու մէջ: Անոնք կը խորհրդանշեն կենաց ծառը: Այս ափսէին պարագային, սակայն, այդ սիւնէրը կրնան միայն հեռաւոր տպաւորութիւնը տալ կենաց ծառին:

Դ3. Ծաղկային Զարդանախշ

Ուշագրաւ է որ ափսէին վրայ կնքուած զարդանախշերէն ամենէն տարածուածը 6րդ եւ 7րդ կոհակներուն միջեւ գտնուող վեցթերթանի մարգարտածաղիկն է: Այդ նախշին կը հանդիպինք հայ առաջին տպագիր գիրքին մէջ (նկար 6¹¹), ինչպէս նաեւ ԺԸ. դարու հնատիպերու մէջ (նկար 8¹²):

Նոյն այս զարդանախշին, կամ անոր նախօրինակներուն եւ տարբերակներուն կը հանդիպինք նաեւ հայ ձեռագիր մատեաններու կաշեկազմերու վրայ դաջուած, ձեռագրերու

մետաղակազմերու վրայ (նկ. 7, 9, 10, 11, 12, 13¹³): Կան եւ ամբողջ էջ մը կազմող մետաղեայ պատեաններու վրայ (նկ. 14¹⁴): Այլ խօսքով, մարգարտածաղիկի այս նախշի գործածութիւնը ունեցած է լայն տարածում՝ թէ՛ արուեստի զանազան սեռերու մէջ եւ թէ՛ անցած է դարէ դար ու հայկական զանազան բնակավայրեր:

Տակաւին, այս զարդանախշին կը հանդիպինք կրօնական թէ աշխարհիկ կիրառութեան այլեւլ իրերու վրայ (նկ. 15, 16, 17, 19¹⁵): Այս իրերուն յառաջացման շրջանը կ'երկարի ԺԴ.-ԺԸ., ԺԹ. դարեր: Ան չի սահմանափակուիր նաեւ Հայկական Լեռնաշխարհի ու Կիլիկիոյ որեւէ տարածքով: Դեռ աւելին, նոյն այս մարգարտածաղիկի նախշին կը հանդիպինք նաեւ Հալեպի մէջ 1970ականներուն աշխատուած արծաթեայ ավսէներու վրայ¹⁶:



Ե. ՊՂՆՁԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՈՒՐՖԱՅԻ ՄԷՋ

Դժբախտաբար քիչ բան գրուած է ու գիտենք Ուրֆայի հայ պղնձագործութեան մասին: Չենք գիտեր թէ Ուրֆայի մէջ որքա՛ն զարգացած էր պղնձագործութիւնը: Ուրֆայի մասին գրուած գիրքերէն ոմանք¹⁷ բնաւ չեն յիշատակեր տեղի պղնձագործութեան մասին: Պերճ Կարապետեան, իր «Հայկական Պղինձը 1600-1915թթ.» յօդուածին մէջ անցողակի կը նշէ թէ հայ պղնձագործ վարպետներ ցրուած էին զանազան քաղաքներու մէջ, անոնց շարքին նաեւ՝ Ուրֆա¹⁸:

Արամ Սահակեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած *Դիւցազնական Ուրֆան Եւ Իր Հայորդիները* հատորին մէջ, սակայն, հետեւեալը կը կարդանք Ուրֆայի պղնձագործութեան մասին. «Պղնձագործութիւն. Սհաւասիկ արհեստ մը էւս, որ ուրֆացի արհեստաւորը կը մօտեցնէր արուեստի սահմաններուն: Քաղաքին մէջ գտնուող 180ի մօտ խանութները, ամբողջ զաւառին պղնձէ ամաններու պէտքերը կը հոգային եւ գործը կը վերածէին վաճառականութեան: Վերջին տարիներուն հրապարակ եկած էին արհեստաւորներ, որոնք պղինձի վրայ կատարած իրենց փորագրութիւններով, «ցուկէ [sic] թասերով» ու զանազան արձանակերպ արտադրութիւններով տիրացած էին մեծ հռչակի:

Այդ օրերէն մնացած հայ արուեստագէտներու հազուագիւտ գործերը, իբրեւ հնութիւն եւ արուեստի գլուխ գործոցներ, այսօր կը փնտռուին հրապարակի վրա»¹⁹:

180 պղնձագործ արհեստաւորներու թիւը կը վկայէ Ուրֆայի մէջ հայ պղնձագործութեան տարածուածութեան եւ արմատականացման մասին: Դեռ աւելին, այս թիւը կը հաւաստէ Ուրֆայի հայ պղնձագործութեան ատենի չափանիշերով զանգուածային արտադրութեան փաստը: Ասոր յաւելեալ ապացոյց կը հանդիսանան Ուրֆայի մէջ գործող պղինձի միքանի վաճառականները: Արդարեւ, Սահակեան, «1908էն Վերջ Ուրֆայի Հայ Վաճառականները» վերնագրին տակ, այլոց շարքին կու տայ անունները հետեւեալներուն՝ «*Թափթափեան Յովհաննէս-Երկաթեղէն եւ պղինձ ներածող*», «*Տապպաղեան Հապիպ-Երկաթեղէն, ներկ եւ պղինձ ներածող*»²⁰: Ասկէ կարելի է ենթադրել թէ քաղաքին մէջ եւ քաղաքէն դուրս եւս պղինձի մեծ պահանջարկ կար՝ պղնձագործութեան արտադրութեան համար, զոր կը հայթայթէին Ուրֆայի պղնձագործները: Չարմանալի պէտք չէ թուի ասիկա, որովհետեւ Ուրֆան կը հանդիսանար վաճառաշահ Տիգրանակերտ-Տիարպէթիւր Անտիոքին ու Արեւմուտքին կապող կարեւոր առեւտրական կէդրոն²¹:

Զ. Ո՞Վ Է ՅԱԿՈՒՄ ԱՆԵՐԵԱՆ

Զ1. Մաներեաններ

Ուրֆայի հայկական պատմութեան նուիրուած շարք մը հատորներու մէջ չենք հանդիպիր Մաներեան անունին²²: Հալեպի հայոց գերեզմանատան տապանաքարերու արձանագրութիւնները եւս ոչինչ կ'ըսեն Մաներեաններուն մասին²³: Ազգանուններու բառարանն ալ չի յիշատակեր Մաներեանը. այնտեղ կը յիշատակուի Մանըրեան-Մանաւեան, Մանրիկեան, Մանրոյեան, բայց ոչ՝ Մաներեանը իր տարբերակներով՝ Մանրեան-Մանըրեան²⁴: Շուրջ 700 պղնձեղէնի տուեալներու հիմամբ պատրաստուած իր ուսումնասիրութեան մէջ Պերճ Կարապետեան եւս չի յիշատակեր Մաներեան կամ Յակոբ Մաներեան անունը:

Համացանցի հետեւեալ հասցէին վրայ՝ <http://armenian.name/index.php?a=term&d=3&t=4562> վրայ կը գտնենք Մաներեան ազգանունը: Կը հաստատուի գոյութիւնը

Յակոբ Մաներեան անուն անձի մը. ան 1935ին Լոս Անճելըս հաստատուած էր եւ ներկայիս 87 տարեկան է, ծնած էր մօտաւորապէս 1928ին: Պարզ է որ ան մեր փնտռած անձը չի կրնար ըլլալ:


Սահակեան, վերոյիշեալ հատորին յաւելուածի բաժնով յիշատակուող վերապրող ուրֆացիներու անուանացանկերուն շարքին, Հալէպի ուրֆացիներուն ցանկին մէջ կու տայ Եղսա Ճաներեան անունը, զոր եթէ տպագրական վրիպակ նկատենք կրնանք կարդալ Եղսա Մաներեան²⁵: Այդ հատորին մէջ տրուած է նաեւ Ուրֆայի հերոսամարտին նահատակուած հերոսներու եւ հերոսուհիներու անուանացանկը, որուն մէջ կը հանդիպինք «Մաներ Մաներեան» անունին²⁶, իսկ *Ուրֆայի Հերոսամարտը* հատորին մէջ, այլոց կարգին կը յիշատակուի անունը Մանուկ Մաներեանի, որ 60է աւելի երիտասարդ ուրֆացիներու հետ կ'ապրի ողիսականը 1918 Ապրիլին Սուէտա-Ճեպէլ Տրուզի միջով Աքապա հասնելու եւ միանալու Շերիֆ Ալիի զօրքին²⁷: Նոյն բաժնին մէջ, Քամիշլիի ուրֆացիներուն շարքին կը կարդանք Նշան Մաներեանի անունը²⁸: Սահակեան կու տայ նաեւ Լոս Անճելըս-Քալիֆօրնիոյ ուրֆացիներու հայրենակցական միութեան վարչակազմը, ուր իբրեւ վարչական կը հանդիպինք Խաչիկ Մաներեանի անունին²⁹: Ասոնց արհեստները կամ աշխատանքի ասպարէզները չեն յիշուած: Կայ սակայն «Քենտիրճի Մաներենց տունը», արտայայտութիւնը, որով կը պարզուի թէ Մաներեաններուն մէջ կային նաեւ քենտիրճիներ³⁰, որոնց արհեստը պղնձագործութիւնը չէր:

Ձ2. Այլ Գործեր Յակոբ Մաներեանէն

Յակոբ Մաներեանի կնիքը կրող պղինձէ գործ մը եւս ունինք՝ ափսէաչափ աման մը, որ նախշ չունի, պարզունակ վիճակ մը ունի, թէեւ իբրեւ գործ նրբութեան զգացում մը կը հաղորդէ: Այս գործը կը կշռէ 1156 կրամ, հաստութիւնը 1,4մլմ. է, տրամագիծը՝ 38 սմ.: Ամանը երկու հարթութիւն ունի. յատակային մակերեսը եւ անկէ որոշ թեքութեամբ դէպի վեր բարձրացող երկրորդ հատուածը: Առաջին հատուածին տրամագիծն է մօտաւորապէս 24,5 սմ, իսկ թեք հատուածին լայնքը՝ 7 սմ.:

Հաղորդակցութեան մէջ մտնելով հալէպահայ եւ պէլրոթահայ հաւաքորդներու հետ, կրցանք հասնիլ միակ արդիւնքի մը: Մինչեւ

վերջերս Հալեպ բնակող, հայրենի արուեստաբան Հրազդան Թոքմաճեանին ուղղած մեր հարցումին ի պատասխան, ան Փետրուար 2015ի վերջաւորութեան նամակով մը յայտնեց թէ՝ «Իմ ունեցած հայ պղնձագործների անուանացանկի մէջ Յակոբ Մաներեան անունը կայ: Յաւօք որեւէ կենսագրական մանրամասնութիւն այս մարդու մասին չկայ: Իմ տրամադրութեան տակ եղած կնիքը Ռուբէն Պարսումեանի մօտ գտնուող առարկայի վրայից եմ նկարել»³¹: Աւելի ետք, ան



մեզի դրկեց Յակոբ Մաներեանի կնիքը կրող առարկային նկարը՝ որ կը պատկերէր գեղեցիկ ջրաման մը, որ կու գար, ուրեմն, հալեպաբնակ երկարամեայ հաւաքորդ, այնթապցի պղնձագործներու յետնորդ Ռուբէն Պարսումեանի հաւաքածոյէն: Դժբախտաբար, Թոքմաճեան կը յայտնէ թէ Պարսումեանի հաւաքածոյին վերոյիշեալ ջրամանին մասին ոչինչ նոթագրուած է, իսկ Ռուբէն Պարսումեան ի վիճակի չէ որեւէ մանրամասնութիւն հաղորդելու ջրամանին ձեռքբերման կամ անոր հեղինակին մասին:



Այս ջրամանը զարդանախշեր չունի բնաւ: Սակայն գործին որակը առաւել էւս կը հաւաստէ որ գործ ունինք արժէքաւոր պղնձագործի մը հետ, որ պղինձի իր արդիւնաբերութիւնը հասցուցած է արուեստի մակարդակի:

Պէյրութի ուրֆահայերու շրջանակին մէջ մեր որոնումները մասնակի արդիւնքներ տուին: Ոչ ոք ծանօթ էր Մաներեաններուն: Սակայն ծագումով ուրֆացի լիբանահայ պղնձագործութեան վերջին մոհեկան Զաւէն Գազանճեան մեզի ցոյց տուաւ 1958ին Հալեպի մէջ իր ստեղծագործած երկու ջրամանները, որոնք ուշագրաւօրէն նման են Մաներեանի ջրամանին:

2.3 Ուրֆայի Մէջ Գործած Այլ Պղնձագործներ

Պերճ Կարապետեան, վերոյիշեալ յօդուածին մէջ, իր պատրաստած զանազան ցանկերուն մէջ կը յիշատակէ Եղեսիա-Ուրֆայի պղնձագործութեան վերաբերող միակ անուն մը՝ «Յակոբ», որուն մասին ինք կը նշէ թէ քաղած է դրոշմ-կնիքէ մը³²: Դժուար թէ նոյն անձը ըլլան անոնք: Արդեօք այս յօդուածին կերպարը հանդիսացող Յակոբ Մաներեանը Եղեսիոյ 180 պղնձագործներու երկար շարքին մէջ Հայոց Յեղասպանութենէն փրկուած պղնձագործի մը անունն է: Թէ՛ անունը՝ Ուրֆայի հերոսամարտին կամ այնուհետեւ տարագրութեան ճամփաներուն անհետացած արհեստագէտի մը:




Է. ԻՐԱԻԱՅԻ ՀԱՐՅԱԴՐՈՒՄՆԵՐ

Գէորգ Սարաֆեան, Այնթապի պատմութեան իր գիրքին մէջ, ի միջի այլոց կը ներկայացնէ Այնթապի պղնձագործութիւնը: Չուլագործութեան անդրադառնալով, ան կը նշէ որ «*ձուլիչութեան սկիզբը 1800-ի տեսնները պիտի ըլլայ,- աւելցնելով որ,- 1915-ին կը հաշուուէր 22 խանութ, 3 կամ 4-ական գործաւորով*»³³: Իսկ անդրադառնալով պղնձագործութեան, Սարաֆեան կը ճշդէ «*Արհեստին սկիզբը կրնանք 1840-50 թուականներուն դնել:....1880-ական թուականներէն սկսեալ, արհեստն ստացած էր արտածող հանգամանք:..- հուսկ, կ'աւելցնէ,- աւելի քան 60 խանութ կ'աշխատէին այս գործի վրայ, իւրաքանչիւրին մէջ 4-էն 10 գործաւորով*»³⁴:



Եթէ ճիշդ են Սարաֆեանի 60 խանութներու եւ Սահակեանի 180 խանութներու գոյութեան տուեալները, ապա տրամաբանական հարց մը իր գլուխը կը բարձրացնէ: Միջին Արեւելքի հայօճախներս աւելի ծանօթ ենք Այնթապի պղնձագործութեան քան՝ Ուրֆայի: Չարմանալի է սակայն, որ շուրջ եռապատիկ աւելի հաշուող պղնձագործներու գումարտակ ունեցող Ուրֆային մասին այս առնչութեամբ գրեթէ ոչինչ կայ Միջին Արեւելքի հայօճախներու բանաւոր յիշողութեան մէջ:

Զանազան բացատրութիւն-վարկածներ կրնանք յառաջ քաշել.-



Ա) Թերեւս որակային առումով, Այնթապի պղինձի գործերը շատ աւելի մշակուած, գեղարուեստական, մրցունակ էին, որոնք ալ մնացին մեր բանաւոր յիշողութեան մէջ: Ի վերջոյ, պղնձագործութիւնը «ագդեցիկ ու մեծ էսնաֆ» էր Այնթապի մէջ³⁵:



Նկ. 1. Աղօթքի քիլիմ, Կաղզուան: Նկ. 2. Այտինի քիլիմ:
Նկ. 3՝ 989թ. Աւետարանի մանրանկար: Նկ. 4. Չարդանկար




Նկ. 5՝ Կենաց ծառի զարդանկար: Նկ. 6՝ Հայերեն առաջին տպագիր գիրքին Պարզայտունաբլեն էջ սը (1513): Նկ. 7՝ Աւետարան, ժԷ. դար




Նկ. 8՝ Պատմութիւն Տարօնոյ գիրքէն, Պոլիս, 1719: Նկ. 9՝ ԺԵ. դարու կաշեկազմ: Նկ. 10՝ 1505թ.ի կազմ, Կարին



Նկ. 11՝ ԺԷ. դարու Աւետարան: Նկ. 12՝ Աւետարան, 1458թ., Աղթամար:
Նկ. 13՝ Աւետարան 1724թ., Զեյթուն



Նկ. 14՝ Ձեռագիր Աւետարան, 1374թ., Գարանադեղեաց Գաւառ: Նկ. 15՝ Նկ. Սրուակ, ԺԸ. դար, Տրապիզոն:
Նկ. 16՝ Խաչ մասունքով, 1735թ. Մուշ



LXXXIII 1. Կանաչի վարսի փոքր: 2-4. Ուրբատու-ուրբատուկ (Սիսիան):



Նկ. 17՝ Սյրի, 1779, Շամախի:
 Նկ. 18՝ Կանաչի ներքնագլխտի ասեղնագործ նախշ, Սիսիան:
 Նկ. 19՝ Ս. Ֆադեոս Առաքելի աջը, ԺԷ. դար

Բ) Արդեօ՞ք Ուրֆայի հայերը աւելի մեծ թիւով նահատակներ տուին, ու պղնձագործութիւնը չշարունակուեցաւ, կամ խամրեցաւ ուրֆահայերուն քով, մանաւանդ եթէ արհեստաւորներուն մեծամասնութիւնը նահատակուեցաւ կամ անհետացաւ: Իսկ անդին, Այնթապի հայերը աւելի քիչ թիւով կոտորուեցան եւ արհեստը կարելի եղաւ շարունակել:

Գ) Արդեօ՞ք պատճառը այն էր որ այնթապցիք խմբովին սահմանը անցնելով հաստատուեցան Հալէպ եւ առանց ամբողջովին ոչնչացնող աղէտի կրցան շարունակել իրենց արհեստը: Խորքին մէջ, անոնք (կամ անոնցմէ ոմանք) պղնձագործութեան իրենց գործիքներն իսկ իրենց հետ բերին: Իսկ Այնթապէն Հալէպ այնքան ալ երկար եւ հեռու ճանապարհ չէ: Իսկ Հալէպի արհեստաւորական միջավայրը նմանութիւններ ունենալով Այնթապին, հաւանաբար դիրութեամբ պիտի համարկէր այնթապահայ պղնձագործները իր շուկային: Ուստի եւ, Այնթապի պղնձագործութիւնը գոյատեւեց, հոչակուեցաւ ու անցաւ-մնաց ժողովուրդի բանաւոր յիշողութեան մէջ: Մինչ, նոյն բարեբախտութիւնը չունեցան ուրֆահայ պղնձագործները:

Թերեւս այս վերջինը ամենէն աւելի հաւանականը ըլլայ: Խորքին մէջ երկրորդ եւ երրորդ վարկածները իրար կ'ամբողջացնեն:

Արդարեւ, 1915ին շուրջ 20,000 այնթապահայեր կը տարագրուին իրենց բնօրրանէն: Աքսորէն գերծ կը մնան շուրջ 1500 հոգի՝ «իբր մասնագէտ, արհեստաւոր եւ զինուորի ընտանիք»³⁶: Օրինակ, այնթապահայ Վահէ Կիլէտերեան կը պատմէ պատմութիւնը իր պղնձագործ հօր եւ ընտանիքին, ինչպէս նաեւ այլ ընտանիքներու Այնթապէն չտեղահանուելուն՝ շնորհիւ հօր արհեստին: Ան, ի միջի այլոց կը յիշատակէ որ «բանակի պիտոյից պատրաստութեան համար» չտեղահանուած *'սենախ'*՝ արհեստաւորներուն շարքին էին ձուլագործներ ու պղնձագործներ³⁷: 1915ին այնթապահայեր կը տեղահանուին զանգուածաբար, երկու ուղղութեամբ. 1) Աքճա Քոյունէն Հալէպ, ապա Դամասկոս-Համա-Հոմս-Տարաս եւ՝ 2) Աքճա Քոյունէն Տէր Զօր: Զինադադարին շուրջ 10,000 այնթապահայեր եւ շուրջ 8000 սեբաստահայեր կը հաստատուին Այնթապ (մինչ շուրջ 5000 վերապրող այնթապահայեր չեն վերադառնար): Թուրք ազգայնական շարժումին տարածումով, սակայն, կարճ ժամանակ

ետք պաշարման օղակի մեջ կ'առնուի Այնթապը, ուր մեկտեղուած հայութիւնը կը կազմակերպէ 314 օրեր երկարող ինքնապաշտպանութիւն՝ 1 Ապրիլ 1920էն մինչեւ 1921 Փետրուար 8, որմէ ետք դիմադրականները կը ստիպուին լքել բնօրրանը ու անցնիլ Հալէպ:

Ի տարբերութիւն այնթապահայութեան, Ուրֆայի շուրջ 35,000 հայութիւնը իր ինքնապաշտպանութիւնը կը կազմակերպէ 1915 Սեպտեմբերի վերջաւորութեան: Ուրֆայի քսանհինգօրեայ ինքնապաշտպանութեան ընթացքին ակերակոյտի կը վերածուին Ուրֆայի հայկական թաղերը, 2300 հայկական տուներէն հազիւ 50ը կանգուն կը մնայ: Ի վերջոյ թրքական ուժերը կը յաջողին մտնել հայկական շրջանը պատճառել մեծաթիւ զոհեր եւ աքսորել շուրջ 15,000 ուրֆահայ: Ուրֆահայութեան տեղահանութիւնը չի կատարուիր զանգուածաբար, այլ անոնք կը ցրուին տարբեր ուղղութիւններով, փոքր խումբերով (1.- Թէլ Ապիատ-Այն Արուս-Րազգա-Տէր Զօր-Միատին-Շետտատ, 2.- Քուտեմէ, 3.- Մըսէպին--Աքապա)³⁸: Զինադադարին ընդամենը շուրջ 6000 ուրֆահայ կը վերադառնայ իր բնօրրանը³⁹:

Այլ խօսքով, հակառակ անոր որ թէ՛ Ուրֆայի եւ թէ՛ Այնթապի հայութիւնը կ'ենթարկուի աքսորի ճամփաներուն վրայ խժոժութեանց, այդուհանդերձ ուրֆահայերուն առաջին ելիցը կոտորակուած կ'ըլլայ, ի տարբերութիւն այնթապահայերուն, որոնցմէ շուրջ 1500 արիեստաւորներ անվնաս կը մնան, ուղղակիօրէն սատարելով Այնթապի արիեստագործութեանց գէթ մասնակի պահպանման: Ուրֆահայերը կը գաղթահանուին սպառիչ ինքնապաշտպանութենէ մը ետք, ի տարբերութիւն այնթապահայերուն:

Մակայն, օրինական այլ հարցում մը կրնայ կասկածի ենթարկել Յեղասպանութեան պատճառականութեան այս վարկածը, առարկելով որ այս բացատրութիւնը չի կիրառուիր ասեղնագործութեան կալուածին վրայ, որովհետեւ գրեթէ նման հռչակ ունին Ուրֆայի եւ Այնթապի ասեղնագործութիւնները: Փաստ՝ Այնթապի եւ Ուրֆայի ասեղնագործութեան նուիրուած նորագոյն ակումբները⁴⁰: Այսինքն, եթէ Յեղասպանութեան պատճառով տուժած էր Ուրֆայի պղնձագործութիւնը, ապա նոյնպէս եւ տուժած պէտք էր ըլլար Ուրֆայի ասեղնագործութիւնը, սակայն Ուրֆայի ասեղնագործութեան նուիրուած հատորը

ապացոյց է որ Յեղասպանութեան պատճառականութեան այս վարկածը կատարելապէս ճիշդ չէ:

Մեր առարկութիւնը այս մեկնաբանութեան այն է որ մեր յառաջադրած վարկածը՝ ցեղասպանութեան պատճառականութեան, կը հաստատուի նաեւ Ուրֆայի ասեղնագործութեան նուիրուած վերոյիշեալ գիրքով եւս: Արդարեւ, եթէ Այնթապի ասեղնագործութեան վերոյիշեալ զոյգ հատորներուն մէջ կը հանդիպինք այդ դպրոցի մինչեւ մերօրեայ մշակումներուն, ապա նոյնինքն Ուրֆայի հատորը իր ներածական բաժնին մէջ կու տայ ուշագրաւ բացատրութիւն մը. թէ՛ այս ալպումին նիւթերը կը կազմեն 1956 Փետրուար 24ին Սաթենիկ Պեզիկեանի կողմէ Հայաստանի Պետական Պատկերասրահին վաճառուած ասեղնագործ նմուշներու հաւաքածոն: Իսկ այդ հաւաքածոն պատկանած է 1885ին ծնած Սաթենիկ Նշան Թահմիզճեանին, որ 1915ին ամուսնացած էր Եղեսիա հաստատուած գերման բանակի սպայ Պրունօ Էքարտի հետ: Վերջինս, 1910ին Եղեսիա առաքուած էր վարելու Եղեսիոյ գորգի եւ հայ հին ձեռագործներու գործարանը, ուր աշխատած են աւելի քան 80 հայուհիներ: Էքարտի ուշադրութիւնը կը գրաւէ Ուրֆայի ասեղնագործութիւնը ու ան կը հաւաքէ նմուշներ՝ զանոնք ցուցադրելու համար Պերլինի Ձեռագործներու Ցուցահանդէսին: Սակայն 1914ի աշխարհամարտը կը տապալէ ծրագիրը: Էքարտ կը մեկնի ճակատ, ուր կը զոհուի 1918ին: Էքարտ, ճակատ մեկնելէ առաջ իր կնոջ կը յանձնէ այդ ալպումները, որոնք ի վերջոյ կը հասնին Հայաստանի Պետական Պատկերասրահ: Հետեւաբար, Ուրֆայի ասեղնագործութեան նուիրուած այս ալպումին նմուշները վերոյիշեալ հաւաքածոն են: Ուստի եւ աւելի կ'ամրապնդուի Յեղասպանութեան պատճառականութեան մեր վարկածը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ուստի, կրնանք փաստացի այլ վկայութեամբ հաւաստել որ Հայոց դէմ գործուած Յեղասպանութիւնը գործեց նաեւ այլ տեսակի աւերներ, եւ մշակութային եղեռնը չի սահմանափակուիր միայն հայկական ճարտարապետական գոհարներու, ձեռագիրներու, բանաւոր գրականութեան՝ բանահիւսութեան կորուստներով, այլեւ՝ կը ներառէ արհեստները: Այս եզրակացութեան շօշափելի ապացոյց կարելի է ծառայեցնել Ուրֆայի եւ Այնթապի հայ

պղնձագործներու եւ Ուրֆայի ու Այնթապի հայ ասեղնագործութեան ճակատագրերը:

Յարգանք՝ Ուրֆայի պղնձագործ արհեստագետ Յակոբ Մաներեանին եւ միւս արհեստակիցներուն:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Այլապէս ինչպէս բացատրել - ըսենք - Սէրիկ Դաթեանի *Դրուագներ Հայկական Միջնադարեան Կիրառական Արուեստի Պատմութեան* հատորը, որ կ'անդրադառնայ գործուածքներու (դիպակ, դաջագործութիւն, ասեղնագործութիւն, ժանեակագործութիւն), գորգի, ոսկերչութեան-արծաթագործութեան, կաշեպատ կազմերուն, փայտի գեղարուեստական մշակումի, խեցեգործութեան, յախճապակիի եւ խճանկարչութեան արուեստներուն, բայց հպանցիկ պարբերութիւն մը կամ՝ երկու կը յատկացնէ պղնձագործութեան (Սէրիկ Դաթեան, *Դրուագներ Հայկական Միջնադարեան Կիրառական Արուեստի Պատմութեան*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ, 1981, էջ 133):
- ² Թէեւ ակնկալելի էր որ Սուրիոյ տագնապին բերմամբ նման իրերու որոշ արտահոսք մը նկատուէր դէպի լիբանանեան շուկայ, սակայն մենք անոր ականտեսը չեղանք:
- ³ Թուականը յարաբերաբար ընթեռնելի ըլլալով հանդերձ, շփոթի կը մատնէ վերջին երկու թիւերուն ընթերցումը՝ կա մ 1237 եւ կա մ 1327: Մենք հակամտ ենք զայն 1327 կարդալու:
- ⁴ Կան պարագաներ երբ այնթապցի պղնձագործներ Յեղասպանութենէն եւ կրկնաքսոթէն ետք, Հալէպ հաստատուելով, գէթ սկզբնապէս պահպանած են իրենց Այնթապի կնիքը, իսկ աւելի ետք զայն փոխարինած նորով, ուր Այնթապ տեղանունը փոխարինուած է Հալէպով, թուականը փոխուած, իսկ արհեստատիրոջ անունը պահպանուած է:
- ⁵ Այս առումով որոնումներ կատարեցինք գորգագործութեան, ասեղնագործութեան, մանրանկարային զարդանկարչութեան եւ քանդակագործութեան հետեւեալ հատորներուն մէջ.- Սէրիկ Դաթեան, *Հայկական Ասեղնագործութիւն*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1972. նաեւ՝ նոյնի՝ *Հայկական Կարպետ*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1975. նաեւ՝ *Ալպով, Հայ Ձեռագրային Զարդանկարչութիւն*, կազմ.՝ Լ. Դուրնովօ, իմբ.՝ Ա. Մնացականեան, Հրատ. Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ Մատենադարան, Հայաստանի Պետական Պատկերասրահ, Երեւան, Սովետական Գրող Հրատ., 1978. նաեւ՝ Սաստուր Մնացականեան, *Հայկական Զարդարուեստ. Հիմնական Մոտիւների Ծագումն ու Գաղափարական Բովանդակութիւնը*, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1955. նաեւ Լեւոն Աւդոյեան, *Ճանաչել Ձիւնաստութիւն Եւ Ձիւրատ. Հայկական Գրական Աւանդոյթի Պատկերազարդ Ակնարկ Կոնգրէսի Գրադարանից. To Know Wisdom and Instruction*, Երեւան, Կոնգրէսի Գրադարան, «Լաիբի», 2013. նաեւ՝ *Մատենադարանի Արծաթապատ Կազմերով Ձեռագրերը-Silberbeschlagene*

Handschriften Aus Dem Matenadaran, հրատարակութեան պատրաստեց Գայիանէ Էլիազեանը, Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Գիտահետազոտական Ինստիտուտ Մատենադարան, Երևան, Նայիրի Տպ., 2011. նաեւ՝ *Պարզայտումար, 1513*, «Հայերէն Տպագիր Առաջին Գրքերի Նմանահանութիւնների Մատենաշար», տպագրութեան պատրաստեց Բ. Լ. Չուգասզեան, Երևան, Գինդ Հրատ., 1996. նաեւ՝ Իւլետա Մկրտչեան եւ Սէրանուշ Մանուկեան, *Կատալոգ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Հաւաքածուից, Հայ Եկեղեցու Գանձերը. Յուցահանդէս «Մոսկուայի Կրեւն» Պետական Թանգարանում, Յուլիս-Օգոստոս 1997*, Նաթան Ծ. Վրդ. Յովհաննիսեան, իւմբ., Raster's Print & publishing, Moscow, 1997:

⁶ Մնացականեան, *Հայկական Զարդարուեստ*, էջ 115-117:

⁷ Alastair Hull & José Luczyc-Wyhowska, *Kilim: the Complete Guide. History, Pattern, Technique, Identification*, Thames & Hudson, 2000, էջ 107, 102:

⁸ Ալպում, *Հայ Ձեռագրային Զարդանկարչութիւն*, էջ 3:

⁹ Դաթեան, *Հայկական Ասեղնագործութիւն*, էջ LXXXIII:

¹⁰ Մնացականեան, *Հայկական*, էջ 9:

¹¹ *Պարզայտումար*, էջ Լ. եւ ԼԱ.:

¹² Աւոյեան, էջ 45, 52:

¹³ Էլիազեան, էջ 91, 43, 71, 73, 141, 143:

¹⁴ Մկրտչեան-Մանուկեան, էջ 83:

¹⁵ Նոյն, էջ 56, 48, 68, 36:

¹⁶ Ափսէն մեզի տրամադրեց պէրոյնայ Մայտա Յարութիւնեանը, յայտնելով որ ան ձեռք բերուած է 1970ականներուն, Հալէպէն, ծագումով այնթապցի Նազարեաններու արհեստանոցէն:

¹⁷ Մ. Յ. Գնաճեան, *Յեղափոխութեան Ձոռերը*, Տպարան Հայրենիք, Պոսթըն, 1935. նաեւ՝ *Հերոսապատում Մեծ Եղեռնի*, Հրատ. Ազգակ Օրաթերթի, Պէրոյթ, Տպարան Համազգային, 1978. նաեւ՝ Զարեհ Վ. Որբերեան, *Ուրֆայի Վերջին Օրերը (Դիցագնեղութիւն)*, Պէրոյթ, Տպարան Ատլաս, 1961. նաեւ՝ Եղեսիացի Հայ մը, *Եղեսիոյ Սոսկայի Դէպքը Եւ Ողբերգութիւն Կոտորածին Եղեսիոյ*, Շումլա, Պուլկարիա, Տպարան Յ. Աւետարանեան, 1904:

¹⁷ Արամ Սահակեան, *Դիցագնական Ուրֆան Եւ Իր Հայորդիները*, Հրատ. Ուրֆայի Յուշապատումի Յանձնախումբին, Պէրոյթ, Տպ. Ատլաս, 1955, էջ 923:

¹⁸ Պերճ Կարապետեան, «Հայկական Պղինձը 1600-1915թթ.», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Ձ. Հտր.*, Պէրոյթ, 1977-78, էջ 206:

¹⁹ Սահակեան, *Դիցագնական*, 1955, էջ 606:

²⁰ Նոյն, էջ 731:

²¹ Վալենտինա Աբրահամեան, *Արհեստները Հայաստանում, IV-XVIII դդ.*, Երևան, Հայկ. ՄՍՈ ԳԱ Հրատ, 1956, էջ 24:

²² Գնաճեան, *Յեղափոխութեան Ձոռերը*. նաեւ՝ *Հերոսապատում Մեծ Եղեռնի*. նաեւ՝ Որբերեան. նաեւ՝ Եղեսիացի Հայ մը:

²³ Ըաֆֆի Քորթոշեան, *Հալէպի Արձանագրութիւնները*, RAA *Արձանագրութիւններ, Գիրք ԺԶ*, գիտ. Խմբ. Էմմա Աբրահամեան, ՀՀՈՒ Հրատ., Երևան, Տպարան Բիւրակն, 2013:

- ²⁴ Տիգրան Աւետիսեան, *Հայոց Ազգանունների Բառարան (17051 Ազգանուն)*, Երևան, Տպ. Վան Արեան, 2000:
- ²⁵ Սահակեան, *Դիւցազնական*, 1955, էջ 11 (յաւելուած):
- ²⁶ Նոյն, էջ 923:
- ²⁷ Լուրթեր, *Ուրֆայի Հերոսամարտը*, Պէրուրթ, Տպագր. Ազդակ, 1933, էջ 210-217. նաեւ՝ Արամ Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան Եւ Իր Հայորդիները*, վերհրտ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայոց Յեղասպանութեան 100Ամեակի Արեւմտեան Հայաստանի Եւ Կիլիկիոյ Յուշամատեան, Հտր. 6, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2014, էջ 933:
- ²⁸ Սահակեան, *Դիւցազնական*, 1955, էջ 33 (յաւելուած):
- ²⁹ Նոյն, էջ 1296-97:
- ³⁰ Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան*, 2014, էջ 720:
- ³¹ Անձնական նամակ Հրազդան Թոքմաճեանէն, Մարտ 4, 2015:
- ³² Կարապետեան, էջ 226:
- ³² Գեորգ Ա. Սարաֆեան, *Պատմութիւն Անթէպի Հայոց, Հատոր 2*, Լոս Անձելըս, Քալիֆորնիա, Տպ. Central Typesetting Company, 1953, էջ 275-276:
- ³² Սարաֆեան, 1953, էջ 278:
- ³³ Սարաֆեան, 1953, էջ 275-276:
- ³⁴ Սարաֆեան, 1953, էջ 278:
- ³⁵ Գեորգ Ա. Սարաֆեան, *Պատմութիւն Անթէպի Հայոց*, վերհրտ. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայոց Յեղասպանութեան 100Ամեակի Արեւմտեան Հայաստանի Եւ Կիլիկիոյ Յուշամատեան, Հտր. 3, Անթիլիաս, Տպ. Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2013, էջ 1036:
- ³⁶ Ս. Ակունի, *Միլիոն Մը Հայերու Ջարդի Պատմութիւնը*, Հրատ. 'Հայաստան' Գրատան, Բ. տիպ, Կ. Պոլիս, Տպագր. Յ. Ասատուրեան Որդիք, էջ 311:
- ³⁷ Սարաֆեան, *Պատմութիւն Անթէպի Հայոց*, 2013, էջ 1036-1039:
- ³⁸ Սահակեան, *Դիւցազնական Ուրֆան*, 2014, էջ 871-900:
- ³⁹ *Հայկական Համառոտ Հանրագիտարան, Հատոր 1, Ա-Դաջում*, Հրատ. Հայկական Հանրագիտարանի Գլխաւոր Խմբագրութեան, Երևան, 1990, էջ 172-173. նաեւ՝ *Հայկական Համառոտ Հանրագիտարան, Հատոր 4, Նոր Դար-Ֆուտուրիզմ*, Երևան, 2003, էջ 819-820:
- ⁴⁰ Հրազդան Թոքմաճեան, *Ուրֆայի Ասեղնագործութիւն, Ա. Հատոր*, իմբ. Յասմիկ Յարութիւնեան, Հրատ. Բերիոյ Հայոց Թեմի, Հալէպ, Տպ. Ոսկետառ, 2014, 294 էջ. նաեւ՝ Հրազդան Թոքմաճեան, *Այնթապի Ասեղնագործութիւն, Ա. եւ Բ. Հատոր*, իմբ. Սվետլանա Բազէեան, Արմէնուհի Ստեփանեան եւ Արմինէ Սարգսեան, Հրատ. Հալէպի Կրթասիրաց Մշակութային Միութեան եւ Փիւնիկ Համահայկական Բարեսիրական Հիմնադրամի, Հալէպ-Երևան, Տպ. Տիգրան Մեծ, 2015, 760 էջ:

A VICTIM OF THE ARMENIAN GENOCIDE: THE ART OF URFA COPPERSMITHS
AND COPPERSMITH HAGOP MANERIAN
(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

The number of Urfa coppersmiths was the triple of that of Aintab. Nonetheless, the fame of the Aintab coppersmiths has survived the Genocide unlike that of the Urfa Armenians.

The article analyses the reasons behind this discrepancy and argues that the fame of both Aintab needlework and the Aintab copper work has prevailed over that of Urfa needlework and the copper work due to the Genocide of the Armenians. In this context, the author explores a copper tray produced in Urfa, at around 1909 by a coppersmith named Hagop Manerian, who had disappeared with no trace at all except for three copper works stamped in his name.

The author notes that the Armenians of both these towns faced annihilation and massacre. However, unlike the Aintab survivors, the Urfa Armenians could not regroup themselves and had not the chance of reconstructing their pre-genocide habitat in a closed environment. Indeed, the Aintab Armenians opted for self defense in April 1920 and after leaving Aintab resettled in Aleppo, a location only ninety minutes driving distance from Aintab. This enabled them to carry and transfer with them their stock and equipment. The case of the Urfa Armenians differed: their heroic self defense of 1915 lasted some 25 days and ended with extensive killing and the eventual exile of the survivors to the Syrian desert, where they were dispersed. Accordingly, they could not survive as a group and could not carry much with them beyond very basic belongings.

The author underpins his argument with the case of needlework. He notes that the lately published Aintab needlework album includes a large number of post-genocide creations, unlike the lately published Urfa needlework album, which is the collection of German officer Bruno Eckart, who had collected samples between 1910 and 1914.

1936-38Ի ԴԵՐՍԻՄԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՂՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁ

ՌՈՒԲԷՆ ՄԵԼՔՈՆԵԱՆ
rubenmelk@gmail.com

ՄՈՒՏՔ

1923ին հռչակուած Թուրքիայի Հանրապետութիւնը մեծապէս շարունակեց Օսմանեան Կայսրութեան որդեգրած ցեղասպան եւ միատարրութեան ձգտող քաղաքականութիւնը, որը տարածուեց ինչպէս ոչ-մուսուլմանների (հայեր, յոյներ, հրեաներ, ասորիներ), այնպէս էլ մի շարք մուսուլման ժողովուրդների (քրդեր, զազաներ, չերքեզներ) նկատմամբ: Այդ քաղաքականութիւնը միքանի կարեւոր դրուագներ ունի, որոնցից է 1936-38ի Դերսիմ Նահանգում տեղի ունեցած դէպքերը եւ մասնաւորապէս՝ այնտեղի բնակչութեան կոտորածն ու տեղահանումը: Յօդուածում ներկայացուած է Դերսիմի ցեղասպանութեան հայկական ուղուածութիւնը: Փաստերի, վկայութիւնների հիման վրայ ի ցոյց է դրուում, որ 1915ից յետոյ Թուրքիայում պահպանուած հայութեան մի որոշակի խումբ՝ դերսիմահայերը, արդէն 1937-38ին ենթարկուեցին յստակ, ծրագրուած եւ իրականացուած ցեղասպանութեան: Այս թեմայի ուսումնասիրութիւնը կարեւոր է յատկապէս Օսմանեան Կայսրութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան պետական քաղաքականութեան շարունակականութիւնը ապացուցելու եւ վեր հանելու տեսանկիւնից:

Ներկայումս Թուրքիայի տարածքում գտնուող Դերսիմը տարբեր ժամանակաշրջաններում իւրայատուկ տեղ է զբաղեցրել ինչպէս հայերի, այնպէս էլ այդ տարածքներում հաստատուած զազաների, քրդերի համար: Դերսիմը գտնուում է Հայկական Լեռնաշխարհի Եփրատ, Քղի, Արածանի գետերի եւ Շաղագումքի (Օւաջըղ) դաշտի միջեւ: Շնորհիւ իր աշխարհագրական դիրքի, Դերսիմը բազմիցս է դարձել ըմբոստների եւ հալածեալների ապաստարան: Կան տարածուած աւանդազրոյցներ եւ կարծիքներ, որ հենց այդ լեռնոտ գաւառում է ապաստանել հայերի մի խումբ, որը Բ. դարում չի ընդունել քրիստոնէութիւն եւ մնացել է հին հայկական հաւատքին: Զարմանալի է, որ Ի. դարի սկզբին

անգամ տեղի զագաները յիշում են, որ իրենց նախնիները եղել են հեթանոս հայեր, անգամ գիտեն հեթանոսական պաշտամունքի վայրերը (օրինակ՝ Անահիտի մեհեանը) եւ այն որ այդ կառոյցները ւաւերել են հենց հայերը՝ քրիստոնէութիւն տարածելու ժամանակ¹: Աւելի ուշ՝ պաւլիկեան եւ թոնդրակեան շարժումների ժամանակ նոյնպէս, Դերսիմը ծառայել է ապաստարան այդ գաղափարների հետեւորդների համար: Հայ-քրդական յարաբերութիւնների ուսումնասիրողներից Կարօ Սասունին անդրադառնալով Դերսիմում աղանդաւոր հայերի ապաստանելու խնդրին՝ նշում է. «Կասկածներ կան որ տերսիմցիները թոնդրակեցիներու կամ անոնց նախորդներու մէկ մասն են հոտ մնացած»²: Այս նոյն խնդրին է անդրադարձել նաեւ Նիկողայոս Արոնցը Դերսիմի հայ բնակչութեան մի մասին անուանելով «հայկական պաւլիկեանութեան հետեւորդներ». «Դերսիմի բարձունքները յարակից տեղավայրերով այս աղանդաւորների յենակէտն էին... Պաւլիկեան աղանդաւորները գրաւում էին ճիշտ այն տերիտորիան, որը Դերսիմի լեռնային շրջանից տարածում էր մինչեւ Խարբերդ...»³: Ապա խօսելով Դերսիմում ապաստանած հայ աղանդաւորների յետագայ ճակատագրի մասին՝ նշում է. «Բիզանդիայի ճնշման տակ նրանց մի մասը միացաւ պաշտօնական եկեղեցուն... Միւս կէտը տեղի տուեց իսլամի ազդեցութեանը... Բիզանդական եկեղեցու նկատմամբ տածած իրենց մոլեռանդ ատելութեան մէջ պաւլիկեանները, չցանկանալով ճանաչել նրա գերիշխանութիւնը գերադասեցին ընդունել իսլամը...»⁴:

Յայտնի է նաեւ, որ Դերսիմի քրիստոնէայ հայերը տարբեր ժամանակներում եւ տարբեր պատճառներով կրօնափոխ են եղել ընդունելով մահմեդականութիւնը, սակայն այս գործընթացն ունի որոշակի առանձնայատկութիւններ: Նախ հարկ է նկատել, որ բացի հայ բնիկներից, Դերսիմում բնակութիւն են հաստատել նաեւ զագաներ, քրդեր, որոնց շրջանում բաւական տարածուած է ալեւիականութիւնը, ինչը ենթադրում է հանդուրժողականութիւն՝ այլակրօնների նկատմամբ: Կրօնա-դաւանանքային այս պատկանելութիւնը զգալիօրէն տարբերել է ալեւի զագաներին՝ կայսրութեան միւս շրջանների մուսուլմաններից, որոնց մօտ յաճախ գերիշխել է կրօնական մոլեռանդութիւնը եւ այլամերժութիւնը: Դերսիմում բնակուող, կամ տարբեր դարերում

այնտեղ տեղափոխուած հայերը կրօնափոխութեան դէպքում, փաստօրէն, ընդունել են ալեւիականութիւն: Դերսիմցի հայերի կրօնափոխութեան, աւելի որոշակի՝ ալեւիականութեան անցնելու կարեւոր շրջան է ԺԷ. դարի սկիզբը, երբ յատկապէս ջալալիների ապստամբութեան եւ կոտորածների պատճառով որոշակի թուով հայեր կրօնափոխ են լինում⁵: Ալեւիականութիւնը նաեւ հնարաւորութիւն էր տալիս կտրականապէս չխուսափել ընդունել եւ յայտարարել իրենց իրական էթնիկ պատկանելութեան՝ հայ լինելու մասին: Եւ առաւելապէս հենց այս հանգամանքով է պայմանաւորուած այն, որ դարերի ընթացքում առարկայական ու ենթակայական պատճառներով իրենց հայկական ակունքներից հեռացած, ընդհանուր «դերսիմեան ինքնութիւն» ձեռք բերած էթնիկ հայերը նախ իրենք չէին խուսափում ընդունել իրենց հայկական ծագումը եւ երկրորդ՝ նրանց շրջապատը նոյնպէս աւելի հանդուրժողական էր մօտենում այդ հարցին: Դարերի ընթացքում, նաեւ որոշակի իրողութիւնների հետեւանքով կրօնափոխուած հայերը հետզհետէ աւելի են հեռանում հայկական նկարագրից եւ տարրալուծում ալեւի-զզըլբաշ-զազա ինքնութեան մէջ, սակայն պահպանում յիշողութիւն՝ իրենց ծագման մասին, նաեւ՝ կրօնական, լեզուական, կենցաղային որոշակի բաղադրիչներ:

Դերսիմի բնակչութեան մի մասի հայկական ծագում ունենալու հարցը տարբեր ժամանակներում գրաւել է ուսումնասիրողներին, եւ այդ մասին պահպանուել են մի շարք վկայութիւններ: Այսպէս, Արշակ Ալպոյաճեանը անդրադառնալով զզըլբաշների ծագմանը, նշում է. «*Գզըլպաշները՝ աղանդաւորներ են, որոնց մէկ մասը վաղէմի հայեր եղած են*»⁶: Հայրենիք ամսագրում Թափառական կեղծանունով հանդէս եկած ազգագրագէտ եւ ծագումով դերսիմցի Գէորգ Հալաջեանը գրում է. «*Տերսիմը հայկական ծագում ունի եւ բնակիչները նախկին հայեր են, որ զանազան արշաւանքներու եւ վարչաձեւերու փոփոխութեանց հետեւանքով իսլամութիւնը կամ ալէուիութիւնը ընդունելով հանդերձ, կը պահեն իրենց հայկական ծագումն ու քրիստոնէական սովորութիւնները*»⁷: 1911ին անգլիացի սպայ Լ. Մ. Միլը այցելում է Դերսիմ եւ պատրաստում զեկոյց՝ «Այցելութիւն Դերսիմ» վերնագրով, որտեղ խօսելով դերսիմցիների ծագման մասին նշում է, որ իր լսած տեղեկութեան համաձայն նրանք էթնիկ հայեր են⁸: Նոյն զեկոյցում շեշտուում է Դերսիմում հայկական քրիստոնէական յուշարձանների գոյութեան փաստը.

անգլիացի զինուորականը փոխանցում է տեղացիների հետ գրոյցը, թե՛ «65 տարի առաջ (այսինքն՝ 1840ականներին - Ռ.Մ.) Դերսիմի բոլոր շրջաններում հայեր էին ապրում եւ Դերսիմում կար 136 եկեղեցի ու 4 վանք»⁹: Ի դեպ, այդ վանքերից առանձնացում է յատկապէս Սուրբ Կարապետի յայտնի վանքը, որի դիրքը եւ գոյութիւնը, ըստ սպայի, խօսում է հայկական գերակայ ներկայութեան մասին¹⁰:

Ի վերջոյ, հենց իրենք՝ Դերսիմի գազա ալեիները, շատ յաճախ չեն մերժում իրենց հայկական ծագումը ինչպէս անցեալում¹¹, այնպէս էլ ներկայումս: Ժամանակակից Հայաստանում եւս ալեիների ու հայ-ալեիական շփումների մասին հետազոտութիւններ են կատարուել: Վարդան Յարութիւնեանը իմի բերելով տարբեր ժամանակաշրջանների հայ ուսումնասիրողների հետազոտութիւնները՝ ալեիների եւ մասնաւորապէս դերսիմցի ալեիների հայկական ծագման մասին, գալիս է հետեւեալ եզրայանգման. «*Այնուամենայնիւ, ուսումնասիրելով վերոնշեալ նիւթերը, ակներեւ է դառնում, որ ալեիների՝ որպէս կրօնական համայնք ձեւաւորման, ինչպէս նաեւ յետագայում համայնքի մեծացման հարցում մեծ է հայկական տարրի ներգործութիւնը*»¹²:

Դերսիմի աշխարհագրական լեռնոտ դիրքը ազդել է նաեւ այնտեղի բնակչութեան հոգեկերտուածքի վրայ. ըմբոստութիւնը, խիզախութիւնը, ինչպէս նաեւ կրօնական հանդուրժողականութիւնը լայն տարածում են գտել այդ տարածքում: Դերսիմում Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան հաստատումից յետոյ էլ այնտեղ պահպանուել է կիսանկախ վիճակ եւ պետական իշխանութիւնը լիակատար չի գործել՝ բախուելով նաեւ ցեղապետական (աշիրէթային) համակարգին:

Դերսիմի կիսանկախ եւ անհանգիստ վիճակը օսմանեան իշխանութիւնների համար տարբեր ժամանակաշրջաններում եղել է մտահոգութեան առարկայ եւ ստիպել որոշակի գործողութիւններ կատարել: Դրանք յատկապէս սկսեցին ցայտուն դրսեւորուել ԺԹ. դարում: Առաջին ռազմական որոշակի գործողութիւնը Դերսիմում՝ օսմանեան իշխանութիւնները իրականացրել են 1830ականներին¹³: Անյաջող այդ փորձից յետոյ օսմանեան իշխանութիւնները ձեռնարկում են Դերսիմի

հանդարտեցմանը միտուած քայլեր 1850ականների սկզբին՝ Ղրիմի Պատերազմից առաջ եւ օսմանեան բանակը դաժան հաշուեյարդար է տեսնում Դերսիմի խաղաղ բնակչութեան նկատմամբ¹⁴: Արդէն Ղրիմի Պատերազմից յետոյ ձեռնարկուած միւս փորձը՝ ծնկի բերել ապստամբած Դերսիմը, կրկին մատնուում է անյաջողութեան եւ թուրքական բանակը կարողանում է արձանագրել լոկ ժամանակաւոր ու տեղային յաջողութիւններ՝ հնազանդեցնելով Դերսիմի դաշտային շրջանները, իսկ լեռնայիները շարունակել են մնալ կիսանկախ¹⁵:

1877-78ի ռուս-թուրքական պատերազմից առաջ Դերսիմում նորից լարուում է իրավիճակը եւ թուրքական իշխանութիւնների փորձերը՝ մինչեւ պատերազմի սկիզբը մարել այդ անհանգիստ օջախը տապալուում է: Ուշագրաւ է, որ հակաթուրքական պայքարում, վճռական պահին զազաներին օգնութեան են հասնում հայերը եւ նրանց միացեալ ուժերին յաջողում է ետ մղել թուրքական կանոնաւոր բանակին¹⁶: Կիսանկախ Դերսիմում ապստամբական շարժումներ են արձանագրուել նաեւ յետագայում օրինակ՝ 1905ին, որը շարունակուել է նոր թափ է ստացել 1908ին¹⁷:

Դերսիմի խնդրի սրացումը նաեւ ստիպել է պետութեանը՝ կատարել ուսումնասիրութիւններ, որոնք ստացել են «դերսիմեան զեկոյցներ» անուանումը: Թուրքական ներքին քաղաքականութեան մէջ որոշակի տեղ գրաւած եւ քաղաքական մշակոյթի մի մաս դարձած այս «զեկոյցները» իրենց բնոյթով իրավիճակի նկարագրութիւն եւ ելքերի ու լուծումների առաջարկութիւններ էին, որոնք պատրաստուում էին մեծ մասամբ բարձրաստիճան զինուորականների կողմից: Առաջին «դերսիմեան զեկոյցը» պատրաստուել էւ սուլթանին է ներկայացուել 1896ին¹⁸. արդէն այդ զեկոյցում արձանագրուած էին այն հիմնական մօտեցումները, որոնք շարունակուելու էին ընդհուպ մինչեւ 1930ականները: Մասնաւորապէս Դերսիմը՝ բոլոր զեկոյցներում ներկայացուում էր որպէս «թարախապալար», որը պէտք է հեռացուէր, իսկ հարցի լուծման մեթոդների մէջ առաջնային էին համարուում բնակչութեան արքայը, վերաբնակեցումը, ձուլումը եւ, ի վերջոյ, ֆիզիկական ոչնչացումը: Երբեմն որոշ զեկոյցներում խօսուում էր բռնի դաւանափոխութեան

մասին. օրինակ՝ 1899ին Շաքիր փաշայի պատրաստած զեկոյցում առաջարկում էր ալեիների բռնի սուննիացում¹⁹:

Դերսիմում անհանգիստ էր կիսանկախ վիճակը շարունակուեց նաեւ Օսմանեան Կայսրութեան անկման եւ քեմալական շարժման տարիներին: 1920ին դերսիմցիների մի որոշակի հատուածում սկսեց նկատուել պահանջների աւելի համակարգուած ձեւակերպում. նահանգի բնակչութեան որոշ առաջնորդներ առաջ քաշեցին ինքնավարութեան կամ անկախութեան գաղափարը²⁰: Դերսիմի խնդիրը դարձաւ այդ տարիներին ծաւալուող քեմալական շարժման եւ անձամբ Մուսթաֆա Քեմալի մտահոգութիւններից մէկը, որի նկատմամբ վերջիններս ստիպուած էին դիրքորոշում որդեգրել: Քեմալականները ինչպէս շատ այլ հարցերում, այս հարցում եւս շարունակեցին նախկին բռնապետական սովորոյթները, գործելակերպը, սակայն իրավիճակից ելնելով կտրուկ դէմ չարտայայտուեցին դերսիմցիների պահանջներին եւ ժամանակ շահելու նպատակով որոշ խոստումներ տուեցին ու միաժամանակ սկսեցին պառակտման քաղաքականութիւն իրականացնել այնտեղ: Եւ, ընդամենը մէկ տարի անց, 1921ին, աւելի վստահ լինելով իրենց ուժերին՝ քեմալականները հանդէս եկան կտրուկ պահանջներով եւ տեղի ունեցան նաեւ զինուած բախումներ նրանց ու քրդերի միջեւ²¹: Չնայած այդ ժամանակ յոյն-թուրքական պատերազմի լարուածութեանը՝ Քեմալը որոշում է յոյների դէմ պատերազմող զօրքի մի մասին ուղարկել արեւելք՝ քրդական շարժման դէմ կռուելու²²: Քեմալականների երկդիմի քաղաքականութիւնը որոշակի յաջողութիւններ արձանագրեց. իյայտ եկաւ դերսիմցիների ուժերի ջլատում, որը նպաստաւոր էր թուրքերի համար: Սակայն կարեւոր է նշել նաեւ, որ քրդական շարժման առաւել իրատեսական ուժերը յստակ գիտակցում էին քեմալականների քայլերի խորքային նպատակները եւ իրենց այդ փորձառութեան համար կողմնորոշիչ էր Հայոց Տեղասպանութեան փաստը: Այդ առումով ուշագրաւ է հետեւեալ դրուագը. Անկարայի կառավարութիւնը հեռագիր է ուղարկում Դերսիմի առաջնորդներին, որպէսզի իմանայ նրանց յետագայ գործողութիւնները, արդէօք շարունակում են պայքարը, թէ՛ պատրաստ են հաշտութեան եւ զինաթափման: Դերսիմցիների պատասխան հեռագրում տեղ է գտնում հետեւեալ միտքը. «*Քանի*

որ իրենք գիտեն, որ թուրքական կառավարությունը նպատակ ունի ոչնչացնելու իրենց, ինչպես ոչնչացրել են հայերին, ուստի նրանք շարունակելու են պայքարը»²³:

Ի վերջոյ, քեմալական ուժերը կարողանում են որոշ յաջողութիւնների հասնել եւ դաժան մեթոդներով ճնշել ապստամբութիւնը, սակայն իզօրու չեն լինում այդ պահին ամբողջովին հպատակեցնել կիսանկախ Դերսիմը: Այդ խնդիրը փոխանցուելու էր արդէն նորաստեղծ Թուրքիայի Հանրապետութեան քաղաքական օրակարգ ու դառնալու էր թուրքական իշխանութիւնների առաջնային մտահոգութիւններից:

Թուրքիայի Հանրապետութեան գոյութեան առաջին տարիներից սկսած, պետութիւնը իր բոլոր միջոցներով սկսեց զբաղուել Դերսիմի խնդրով եւ մշակել դրա թուրքանպաստ լուծման ամբողջական ծրագիր: Նախ շարունակուեց «դերսիմեան զեկոյցներ» պատրաստելու աւանդոյթը եւ սկսած 1920ականներից գրեթէ ամէն տարի տարբեր բարձրաստիճան պաշտօնեաների յանձնարարուել է ներկայացնել իրավիճակային զեկոյց ու առաջարկներ՝ խնդրի վերաբերեալ: Մասնաւորապէս՝ նման զեկոյցներ են պատրաստել Ներքին Գործերի նախարար Շուքրու Քայան (Նոյեմբեր 1931), Թուրքիայի բանակի գլխաւոր շտաբի պետ, զօրավար Ֆելզի Չաքմաքը (Սեպտեմբեր 1930), վարչապետեր Իսմէթ Ինեօնիւն (1935), Ջելալ Բայարը (Դեկտեմբեր 1936) եւ այլք: Հանրապետական Թուրքիայում «դերսիմեան զեկոյցներ»ի թիւը հասել է 20ի²⁴: Այսօր այդ զեկոյցների մեծ մասը գաղտնագերծուած է եւ դրանցից պարզ է դառնում, որ Դերսիմի խնդրի լուծման համար հիմնական առաջարկուում էր հարցի ուժային լուծում՝ ռազմական միջամտութիւն, ժողովրդի բռնի տեղահանում եւ կոտորած²⁵: Իդէպ, այդ բոլոր զեկոյցների ժամանակ յատուկ ուշադրութիւն է դարձուած Դերսիմում հայկական ներկայութեանը եւ յատկապէս թուրք զօրավար Ալփիդողանի մինչ օրս էլ կիսափակ պահուող 1934-35ի պատրաստած զեկոյցում գիւղ առ գիւղ, տուն առ տուն մանրակրկիտ նշուած է հայ բնակչութեան տեղաբաշխուածութիւնը, թուաքանակը եւն.:

1930ականների կէսերին թուրքական իշխանութիւնները սկսեցին որոշակի քայլեր անել Դերսիմի խնդրի իրենց տեսանկիւնից վերջնական լուծման համար: Այդ ամբողջ

գործընթացը ղեկավարում էր անձամբ հանրապետութեան նախագահ Քեմալ Աթաթուրքի կողմից, որի առաջարկով էլ Դերսիմի խնդիրը քննարկուեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի դռնփակ նիստում²⁶: 1936 Նոյեմբերի 1ի ազգային մեծ ժողովի նիստին ելոյթ ունենալով՝ Աթաթուրքը յայտարարել է. «Մեր երկրի ներսում ամենակարեւոր խնդիրը Դերսիմն է»²⁷: Շարունակելով՝ նա Դերսիմի հարցը համարել է թարախապալար, որը պետք է արմատախիլ արուի ինչի համար կառավարութեանը տրուել են «լայն իրաւասութիւններ»²⁸:

Որոշ ժամանակ անց սկսեցին իրականացուել վարչական քայլեր. ընդունուեց «Թունջելիի օրէնքը», այսինքն՝ տեղի ունեցաւ նահանգի անուանափոխում, ստեղծուեց «չորրորդ տեսչական գօտի», որի ղեկավար-նահանգապետ նշանակուեց տխրահռչակ գորավար Ալփիդոհանը: Հենց նա էլ 1936ին Թունջելիում եւ յարակից Խարբերդում ու Բինգօլում յայտարարեց ռազմական դրութիւն եւ զազա ցեղապետերից պահանջեց յանձնել իրենց մօտ գտնուող զէնքերը²⁹: Ստանալով դերսիմցիների մերժումը՝ արդէն 1936ի վերջում թուրքական զօրքերը, ինչպէս նաեւ օդուծը սկսեցին ռազմական գործողութիւններ իրականացնել, որոնք ընդմիջուեցին ձմռան պատճառով: Իդէպ, թուրքական ռազմական ինքնաթիռներից մէկի օդաչուն եղել է Աթաթուրքի որդեգիր դուստր Սաբիհա Գեօքչէնը, որը յետագայում պարգուել է, որ 1915ի հայ որբուհիներից է՝ Խաթուն Սեբիլջեան անուամբ: 1937ի սկզբից ռազմական գործողութիւնները վերսկսուեցին. դերսիմցիները ուժերի ներածին չափով հակահարուած էին տալիս, սակայն թուրքական կանոնաւոր զօրքերը կարողացան էական հարուած հասցնել դիմադրութեանը: 1937 Սեպտեմբերին գորավար Ալփիդոհանը խաբէութեամբ իր մօտ հրաւիրեց ապստամբութեան ղեկավար Սէլիթ Ռըզային եւ ձերբակալեց, իսկ որոշ ժամանակ անց մահապատժի ենթարկեց նրան: Փաստօրէն՝ դերսիմցիները զրկուեցին առաւել ընդունելի ղեկավարից, ինչը լուրջ հարուած հասցրեց պայքարին եւ դրա կազմակերպուածութեանը: Աւարտելով Դերսիմի ապստամբութեան ճնշման առաջին փուլը՝ այսինքն՝ ճնշելով զինեալ դերսիմցիներին, գլխատելով շարժումը՝ թուրքական իշխանութիւնները իրենց գործը չհամարեցին աւարտուած. վարչապետ Բայարը յայտարարութիւն արեց Դերսիմում գործողութիւնների շարունակման մասին³⁰:

Այսօր հրապարակում եղած բազմաթիւ փաստերը, ականատես-վերապրողների վկայութիւնները յստակ ցոյց են տալիս եւ ապացուցում, որ թուրքական իշխանութիւնների յայտարարած «գործողութիւնները» յստակ ցեղասպանութիւն էր Դերսիմի բնակչութեան նկատմամբ, որի ժամանակ գործի դրուեցին մեթոդներ, որոնք կիրառուել էին Հայոց Ցեղասպանութեան տարիներին³¹: Ինչպէս նկատում է զազա ուսումնասիրող Սէյֆի Ջենգիզը, Դերսիմի կոտորածին եւ ռազմական գործողութիւններին պարբերաբար ներկայ են գտնուել Թուրքիայի ղեկավարները՝ ներառեալ նախագահ Քեմալ Աթաթուրքը, վարչապետեր Ինեօնիւն, Բայարը եւ անձամբ ղեկավարել այդ ամէնը: 1938ին Թուրքիայի վարչապետ, իսկ 1950-1960՝ նախագահ Բայարը, իր յուշերում խոտովանել է, որ դերսիմցիներին կոտորելու հրամանը տուել է անձամբ Աթաթուրքը³²: Թուրքական իշխանութիւնների վայրագութիւններին զոհ են գնացել տարբեր տուեալներով 70-100,000 մարդ³³:

Ինչպէս նշուեց, Դերսիմի կոտորածի ժամանակ գործել են իթթիհադական մեթոդները եւ աւելորդ չէ նշել, որ այդ ամէնում ներգրաւուած են եղել նախկին երիտթուրք գործիչներ: Յատկապէս առանցքային դեր է ունեցել Թուրքիայի Ներքին Գործերի նախարար Շուքրու Քայան, ով երիտթուրքերի կառավարման ժամանակ եւ Հայոց Ցեղասպանութեան տարիներին եղել է Աշիրէթների Եւ Գաղթականների Ընդհանուր Վարչութեան պետը: Նա պատասխանատու է եղել Հալէպի եւ Ադանայի նահանգների հայերի աքսորի համար ու Ա. Համաշխարհային Պատերազմից յետոյ Հայոց Ցեղասպանութեանը մեղսակից այլ յանցագործ օսմանեան պաշտօնեաների հետ աքսորուել է Մալթա, որտեղից որոշ ժամանակ անց փախել է եւ արդէն Թուրքիայի Հանրապետութիւնում ստանձնել բարձր պաշտօններ դառնալով քաղաքապետ, պատգամաւոր, նախարար³⁴:

Դերսիմի կոտորածի վայրագութիւնները երբեմն անտարբեր չեն թողել անգամ թուրք պաշտօնեաներին եւ ինչպէս 1915ին, այնպէս էլ 1937-38ին նրանցից որոշները իրենց կամքով հեռացել են պաշտօններից: Նման պաշտօնեաներից է օրինակ՝ թուրքական բանակի Էրզրումի զօրաբաժնի հրամանատար Թեւֆիք փաշան, ով հրաժարուեց իր պաշտօնից եւ ետ կանչուեց Անկարա³⁵:

1938 Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին Դերսիմի ապստամբությունը լիովին ճնշուել էր, իսկ բնակչության մի մասը կոտորուել էր, միւս մասն էլ տեղահանուել եւ վերաբնակեցուել երկրի առաւել թուրքաբնակ շրջաններում: Այս քայլով էլ իշխանությունները նպատակ են հետապնդել թուրքական միջավայրում լիովին ձուլել դերսիմցիներին:

Հարկ է յատուկ շեշտել, որ թուրքական թե՛ հասարակական, թե՛ քաղաքական շրջանակներում շատերը քաջատեղեակ են եղել Դերսիմում տեղի ունեցածների եւ դրանց ցեղասպանական բնոյթի մասին: Քաղաքական շրջանակներում այդ մասին պահպանուել է «համաձայնեցուած լռութիւն», սակայն, միեւնոյն ժամանակ, Դերսիմի թեման պարբերաբար դարձել է քաղաքական փակ քննարկումների առաջնային նիւթ: Օրինակ՝ այդ մասին հետաքրքիր փաստեր է փոխանցուում Թուրքիայի նախկին նախագահ Սուլէյման Դեմիրելը՝ յայտնի լրագրող Հասան Ջեմալի հետ գրոյցի ընթացքում: Խօսելով 1980ի ռազմական յեղաշրջումից առաջ ստեղծուած վիճակի մասին՝ Դեմիրելն ասել է. *«Չինուորականներին 1980ից առաջ ասացի, որ ինձանից չպահանջեն մի նոր «Դերսիմի օրէնք»: Դերսիմում սարսափելի իրադարձութիւններ էին տեղի ունեցել»*³⁶: 1986ին Դերսիմի վերաբերեալ խոստովանական յայտարարութիւն է անոււմ տարբեր տարիներին Թուրքիայի Արտաքին Գործերի նախարարի, անվտանգութեան պետի պաշտօնները զբաղեցրած Իհսան Սաբրի Չաղլայանգիլը. *«Մարդիկ թաքնուել էին քարանձաւներում: Բանակը կիրառեց թունաւոր գազ եւ սրանց մկների նման թունաւորեց: Եօթից մինչեւ եօթանասուն տարեկան բոլոր դերսիմցիներին կոտորեցին»*³⁷:

Դերսիմը եւ արդէն 1930ականներին այնտեղ ծաւալուող ռազմական ու ցեղասպան գործողութիւնները ուղղակի առնչութիւն ունեն Հայոց Ցեղասպանութեան հետ: Այսպէս, ըստ տարբեր տուեալների արդէն 1894-96ի համիդեան ջարդերի ժամանակ մեծ թուով հայեր նաեւ յարակից նահանգներից ապաստան են գտել Դերսիմում եւ որոշ ժամանակ անց ընդունել ալեւիականութիւն: Սակայն ջարդերից ապաստան փնտռող հայութեան աւելի հոծ շերտ Դերսիմ է տեղափոխուել 1915ի ցեղասպանութեան ժամանակ: Յատկապէս Դերսիմի ընտրութիւնը, ըստ տարբեր հեղինակների, պայմանաւորուած էր

միքանի հանգամանքներով. նախ պատերազմի մեջ գտնուող օսմանեան բանակը մեծ վերահսկողութիւն չի ունեցել այդ տարածքների վրայ, ինչն էլ հնարաւորութիւն է տուել տեղացիներին՝ պատասպարել հայերին: Բացի այդ, այս անգամ եւս ալեւիների կողմից հայերին ապաստան տալը բխել է ալեւիականութեան վերոնշեալ մարդակենտրոն դրոյթներից: Դերսիւմի ալեւիների հետ մեր անձնական շփումների արդիւնքում տեղեկացել ենք, որ, օրինակ, մինչեւ այսօր էլ նրանց շրջանում տարածուած է մի դարձուածանման միտք՝ «Մեր տան հայը», որը կարելի է ընդունել իբրեւ հայերին՝ իրենց տներում ապաստան տալու ուղղակի վկայութիւն եւ յիշողութիւն:

Գալով 1915ին Դերսիւմում ապաստանած հայութեան թուաքանակին, ապա հրապարակում եղած տարբեր աղբիւրներում եւ ուսումնասիրութիւններում նշում է 10-30 հազար թիւը: Օրինակ՝ զազա հետազօտող Մ. Քալմանը խօսում է 1915ին Դերսիւմում ապաստանած մօտ 30,000 հայերի մասին, որոնց մի մասը որոշ ժամանակ անց ենթադրաբար ռուսական բանակի հետ տեղափոխուել է Արեւելեան Հայաստան, իսկ մի մասը մնացել Դերսիւմում³⁸: Խորհրդային ուսումնասիրողները նշում են Դերսիւմում ապաստանած 20,000 հայերի մասին³⁹: Նոյն թուաքանակի մասին տուեալներ ենք հանդիպում նաեւ Սասունիի մօտ. «*Տերսիւմը հայութեան փրկութեան օճախներէն մէկը եղած է, որուն շնորհիւ մօտ 20,000 հայ ազատուած է Երզնկայի եւ Էրզրումի գծով*»⁴⁰: Սակայն Դերսիւմում ապաստանած հայերի ստոյգ թուաքանակը յայտնի չէ եւ որոշ աղբիւրներում էլ նշում են 10,000⁴¹ ու անգամ 8000⁴² թուերը:

Գիտական եւ քաղաքական շրջանակներում միանշանակ չի ընդունուում նաեւ դերսիւմիների կողմից հայերին փրկելու եւ ապաստան տալու հարցը. որոշ աղբիւրներ, նոր իյայտ եկող փաստեր, ինչպէս նաեւ ականատես-վերապրողների յուշեր աւելի՛ վիճելի են դարձնում հարցը: Առաւել արժանահաւատ է թուում այն տեսակէտը, որ Դերսիւմի աշիրէթների մէջ եղել են այնպիսիները, որոնք իրօք օգնել են հայերին եւ ապաստան տուել, սակայն եղել են նաեւ աշիրէթներ, որոնք մասնակցել են հայերի կոտորածներին: Ուսումնասիրող Թալին Բահչեւանօղլուն, ով հետազօտում է Դերսիւմի 1936-38ի պատմութիւնը, իր դաշտային հետազօտական աշխատանքների ընթացքում հետաքրքիր

փաստերի է հանդիպել: Այսպէս, ըստ Բահչեւանօղլուի, Խօսելով 1915ին իրենց նախնիներին փրկած ալեւիների մասին, դերսիմահայերի ժառանգներն առանձանցնում են Արաբալը, Եուսուֆիանը, Ֆերիաթան ցեղախմբերին, որոնք օգնել է ապաստան են տուել հայերին: Բահչեւանօղլուի հետ գրուցած դերսիմահայերից մէկը վերոնշեալ վիճելի հարցի վերաբերեալ ասել է. «*20 հազար հայերի ազատեցին, 40 հազարի էլ սպանեցին*»⁴³: Եւ իրօք, Հայոց Յեղասպանութեան տարիներին արձանագրուել են բազմաթիւ դէպքեր, երբ դերսիմցի քուրդ, զազա մի շարք ցեղախմբեր համագործակցել են օսմանեան իշխանութիւնների հետ եւ մասնակցել հայերի սպանողի ու նրանց գոյքի թալանին: Պահպանուել են նաեւ դերսիմցի զազա ցեղապետերի իրենց խոստումը դրժելու եւ ճիշտ հակառակ քայլեր ձեռնարկելու մասին վկայութիւններ:

Միւս կողմից, 1915ին Դերսիմում ապաստանած հայերի հասցէին տարատեսակ մեղադրանքներ են հնչում նաեւ թուրքական պատմագրութեան մէջ եւ, օրինակ՝ Թուրքիայի Հանրապետական-Ժողովրդական Կուսակցութեան անդամ, պատմաբան Սուաթ Աքգիւլը, որը Դերսիմի դէպքերը քննում է պաշտօնական՝ քեմալական պատմագրութեան տեսանկիւնից, անգլիական եւ ամերիկեան զեկոյցների հիման վրայ պատրաստած իր գրքում ոչ-առարկայականօրէն եւ պետական պատմագրութեանը յատուկ թիւր կարծիքներ է ներկայացնում: Խօսելով 1915ին Դերսիմում ապաստանած հայերի մասին նշում է, որ հայերին ապաստան են տուել մի շարք դերսիմեան աշիրէթներ, աւելին՝ նրանցից ոմանք, ինչպիսին է օրինակ՝ Բահթիյարուշադը եւ Քըրգանը աշիրէթները 1915 Յունիսի 15ին իրենց մօտ ապաստանած հայերի հետ միասին իբրեւ թէ յարձակուել են թուրքական զինուած ուժերի վրայ⁴⁴:

Դերսիմում ապաստանած հայերի հարցը թուրքական իշխանութիւններին մտահոգել է հենց Հայոց Յեղասպանութեան տարիներին եւ օսմանեան տարբեր պաշտօնեաներ դիմել են դերսիմեան ցեղապետերին սպանողից փրկուած հայերին յանձնելու պահանջով: Արդէն 1915 Յունիսի 2ին Թեշքիլաթը Մահուսայի շրջանի պատասխանատու, գաւառապետ Ջեւդէթը հեռագիր է յղում Խարբերդի նահանգապետին, որտեղ նշում է. «*Դերսիմիցիները հայերի հետ ընկերական յարաբերութիւնների*

մէջ են, հազարաւոր հայերի են թաքցնում եւ ապաստան տալիս»⁴⁵: Ջեդէթը նահանգապետից նաեւ հարցնում է, թէ ինչ միջոցներ է պէտք ձեռք առնել այդ հարցի նկատմամբ: Իսկ Հոգաթի նահանգապետը 1916ին Դերսիմի մի շարք ցեղախմբերից երկու անգամ գրաւոր պահանջել է «10 հազար հայերին», սակայն մերժում ստացել⁴⁶: Դերսիմի մասին 1918ին զեկոյց է պատրաստել տխրահոշակ զօրավար Քիազըմ Քարաբեքիրը. նա անվստահելի է համարում այդ տարածքների մի շարք ցեղախմբերին եւ ցեղապետերին հենց այն հիմքով, որ նրանք 1915ին ապաստան են տուել փախստական հայերին⁴⁷:

Հայերին յանձնելու պահանջը լուրջ խնդիր է առաջացրել հենց ալեւիների համար, քանի որ նրանք կանգնել են բարդ երկրնտրանքի առաջ՝ կենտրոնական իշխանութիւնների կարգադրութեան եւ իրենց դաւանանքի սկզբունքների միջեւ: Շատ յաճախ կենտրոնական իշխանութիւնների հրամանը մերժուել է, իսկ երբ պահանջները սաստկացել են, ալեւի ցեղապետերը ապաստանած հայերի մի մասին օգնել են փախչել Արեւելեան Հայաստան կամ Ռուսաստան⁴⁸: Սակայն այս ամէնից զատ, արձանագրուել են բազմաթիւ դէպքեր, երբ ալեւիների մօտ ապաստանած հայերը ստիպուած արտաքուստ փոխել են իրենց անունը, կրօնը եւ ներկայացել որպէս ալեւի զազաներ: Այս հանգամանքը նաեւ թոյլ է տուել ցեղապետերին կենտրոնական իշխանութիւններին ներկայացնել, որ կասկածեալները ոչ թէ հայ են, այլ ալեւի զազաներ:

Թուրքական իշխանութիւնները Դերսիմում ապաստանած հայերի խնդիրը ուշադրութեան կենտրոնում են պահել նաեւ հանրապետութեան հռչակումից յետոյ. քեմալական իշխանութիւնները պարբերաբար զազա ցեղախմբերին յիշեցրել ու պահանջել են յանձնել փրկուած հայերին եւ նրանց սերունդներին⁴⁹: Չազա հետազօտող Քալմանի հետ զրոյցում 1985ին Քըրզան աշիրէթից Մ. Թ.ն անդրադառնում է 1938ի կոտորածին նախորդած դէպքերին եւ նշում. «*Ձինուորները նախ մեր զէնքերը հաւաքեցին: Իրականում զինուորականները Դերսիմից պահանջում էին յանձնել զէնքերը, վճարել հարկերը եւ տալ հայերին*»⁵⁰ (ընդգծումը մերն է - Ռ.Մ.): Այս առումով ուշագրաւ է 1936-38ի դերսիմեան դիմադրութիւնը ղեկավարած Սէյիթ Ռըզայի հօր՝ Սէյիթ Իբրահիմի պահուածքը, ով ի պատասխան

թուրքական իշխանությունների պահանջին՝ յանձնել շուրջ 20 տարի առաջ 1915ին Դերսիմում ապաստանած հայերին, ասում է. «Մենք վիրավոր արծիւներին որսորդներին չենք յանձնում»⁵¹:

1937ին ճնշելով Դերսիմի դիմադրությունը եւ լծուելով ցեղասպանութեան՝ թուրքական իշխանությունները արդէն բացայայտ էին յայտարարում, որ իրենց հիմնական թիրախներից են Հայոց Ցեղասպանութեան ժամանակ փրկուած եւ Դերսիմում բնակություն հաստատած հայերը⁵²: Մփիւռքահայ պատմաբան Չաւէն Մարըլեանը այդ մասին նշում է. «1938ին երբ Թուրքիա Տերսիմի շրջանի ալեւիներուն տեղահանութեան ու մասնակի բնաջնջման ձեռնարկած էր, հոն Քրզըլպաշ գիւղերու մէջ ապրող 1915ի ցեղասպանութենէն ճողոպրած հայ իւլեակներուն վերջնական ոչնչացման ալ ձեռնարկեց»⁵³: Պատմաբան Հանս-Լուկաս Կիեսէրը Դերսիմի ցեղասպանութեան խորքային պատճառներին անդրադառնալով՝ նշում է. «Դերսիմում 1937-38ին գործադրուած ծայրայեղ բռնութեան մի պատճառն էլ այդ տարածքներում հայերի գոյությունն էր, այդ հարցում ես կասկած չունեմ»⁵⁴:

Հայերի բացայայտ թիրախաւորուելը եւ թուրքական իշխանությունների կողմից իրենց ցեղասպան նպատակների բարձրաձայնումը նախ եւ առաջ արտայայտուեց քաղաքական վերնախաւի երբեմն գաղտնի, իսկ երբեմն էլ հրապարակային հռետորաբանութեան մէջ: Դրանցից ամենացայտունը Դերսիմի ցեղասպանութեան եւ տեղահանութեան հիմնական կազմակերպիչներից զօրավար Ալփոդոյանի 1938ին Բինգոլի Քիդի Գաւառում հրապարակային ելոյթն էր, որը նա ունեցել էր արդէն կոտորածից յետոյ. «Թունջելիում (Դերսիմ - Ռ.Մ.) բնակություն հաստատած ծպտեալ քրիստոնէայ հայեր կային, սրանք անունները փոխել եւ թուրքի պէս էին ապրում: Դերսիմի ապստամբութեան մէջ սրանց մատը խառն էր, սրանք ամէն տեսակի անիշխանութեան, խռովութեան եւ խառնակչութեան կազմակերպիչներն էին»⁵⁵: Ցեղասպան զօրավարը այդ հայերի մասին խօսում էր անցեալ ժամանակով, որտեղից էլ կարելի է ենթադրել, որ թուրքական բանակը արդէն իրագործել էր իր առջեւ դրուած խնդիրը՝ կոտորել փրկուած հայերին: Հետաքրքիր է, որ այս մտածողութիւնը տասնամեակներով փոխանցուել է թուրքական պաշտօնի համակարգում եւ արդէն ԻԱ. դարի

Թուրքիայում եւս կան պետական գործիչներ, գիտնականներ, որոնք շարունակ պնդում են այն միտքը, թէ Դերսիմի ալեւիների, զազաների շրջանում կան արտաքուստ կրօնափոխուած հայերի սերունդներ, որոնք տարատեսակ հակապետական կազմաւորումների առաջնորդներ են:

Պէտք է նկատել, որ ժամանակի թուրքական մամուլը եւս աջակցելով իշխանութիւնների քաղաքական գծին՝ տպագրել է իր բնոյթով հակահայկական բազմաթիւ յօդուածներ եւ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ Դերսիմի դիմադրութեան ղեկավարներին փորձել վերագրել կա՛մ հայկական ծագում, կա՛մ հայերի հետ կապ: Մասնաւորապէս Դերսիմի ապստամբութեան ղեկավար Սէյիթ Ռըզայի մասին նիւթերում բացայայտ ակնարկներ են արուել հայերի նկատմամբ նրա դրական վերաբերմունքի մասին: 1937 Հոկտեմբերի 7ի համարում *Ուլուս* թերթը բացասական շեշտադրումներով նշում է, որ Սէյիթ Ռըզայի վրանից յայտնաբերուած իրերի թւում կան հայերէն գրքեր, խաչեր, հայերէն գրութիւններ պարունակող թագեր⁵⁶: Սրանով փորձ է արուել նաեւ «փաստական» հիմքով ցոյց տալ Սէյիթ Ռըզայի եւ հայերի միջեւ եղած կապը: Այս քայլով թուրքական իշխանութիւնները նաեւ հասարակութեան մէջ ցանկացել են է՛լ աւելի լարել ազգայնամոլական տրամադրութիւնները եւ ներկայացնել, որ Դերսիմում իրենք պայքարում են ոչ թէ կրօնակից քրդերի եւ զազաների դէմ, այլ «գեաւոր» ու դաւաճան հայերի կամ նրանց կողմից հրահրուած «մոլորեալների» դէմ:

Պահանջելով եւ չստանալով Դերսիմում ապաստանած հայերին՝ թուրքական բանակը 1938ի կոտորածի ժամանակ եւս յատուկ ուշադրութիւն է դարձրել նրանց նկատմամբ եւ դիտարկել որպէս յատուկ թիրախ: Դերսիմի կոտորածը վերապրած Սիրեկան Վարդլեանին (Խոզաթի Գաւառի Զմրէկ գիւղից) հանդիպել ենք 2012ին Երեւանում եւ զրուցել այն դէպքերի մասին, որոնց նա անձամբ ականատես է եղել: 1938ին Սիրեկանը եղել է 7 տարեկան եւ յիշում է, որ գիւղ ներխուժած թուրք զինուորները առանձնացրել են մեծերին, կապել նրանց ձեռքերը եւ գիւղից ոչ-հեռու գնդակահարել: Այնուհետեւ գիւղամէջում հաւաքուած կանանց եւ երեխաներին նոյնպէս գնդակահարել ու սուինահարել են: Սիրեկանը մնալով դիակների տակ վիրաւոր, կարողացել է փրկուել եւ փախչել ու ապաստանել մի մուսուլման ընտանիքի

մօտ՝ Ուշաքում, որտեղ էլ նրան տրուել է Մեհմեդ անունը: Դերսիմի ցեղասպանության ականատես-վերապրողը փոխանցեց, որ 1938ին իրենց գիւղ ներխուժած թուրք զինուորները ասել են, թէ այնտեղ հայեր են մնացել եւ *«քրդերի դէմ գործողութիւնները լաւ առիթ են հայերի հետ հաշիւները փակելու համար»*⁵⁷: 13 տարեկանում Սիրեկանի մօտ պահպանուած աղոտ յիշողութիւնները իր ծագման, ընտանիքի մասին վերակենդանանում են եւ նա յայտարարում է, որ հայ է: Աւարտելով զինուորական ծառայութիւնը 1958ին՝ նա տեղափոխուում է Ստամբուլ, վերընդունում քրիստոնէութիւն, եւ վերականգնում իր հին անունը՝ Սիրեկան: Աւելի ուշ նա տեղափոխուում եւ բնակութիւն է հաստատում Եւրոպայում:

Դերսիմի դէպքերը դարձել են նաեւ վաւերագրական ֆիլմի նիւթ: Բեմադրիչ Օզգիւր Ֆընդըքի «Մեւ Վագոն» ֆիլմը յենուած է դերսիմցի զազաների ու հայերի յուշերի, ինչպէս նաեւ ժամանակի թուրք պաշտօնեաների եւ զինուորականների ինքնախոստովանական ելոյթների վրայ: Ֆիլմում ականատես վերապրողները յստակ շեշտում են, որ Դերսիմի 1938ի ցեղասպանութիւնը հայերի համար 1915ի շարունակութիւնն էր, եւ՝ 1938ին հայերը յստակ թիրախաւորուած էին: Ֆընդըքը իր հարցազրոյցներից մէկում նշել է. *«Գրեթէ բոլոր այն հայերը, որոնց հետ ես զրուցել եմ, ասում էին հետեւեալը. «1915 թուականից փրկուեցինք, սակայն 1938 թուականից չկարողացանք փրկուել»*⁵⁸:

Դերսիմում ապաստանած հայերի կոտորուելու մասին է պատմում նաեւ թուրք յայտնի ձախակողմեան գործիչ Հասան Իզեթթին Դինամօն, նշելով որ այդ տարածքում ապաստանած եւ իսլամ ընդունած (ալեւի) հայերը կոտորածի ենթարկուեցին նաեւ 1938ին: Ըստ նրա, մոլեռանդ մուսուլման ջարդարարները կոտորածների ժամանակ ուշադրութիւն էին դարձնում, որ հայերին զազաներից առանձին սպանեն, որպէսզի *«հայկական արիւնը չխառնուի մուսուլմանական արեան հետ»*⁵⁹:

Դերսիմի ցեղասպանութեան ժամանակ զոհուածների ստոյգ թուաքանակը ներկայումս էլ քննարկումների փուլում է, սակայն հրապարակում կան միքանի տուեալներ, որոնցից ոմանք առաւել արժանահաւատ են թուում: Այսպէս, ԽՍՀՄ Արտաքին Գործերի Նախարարութեան արխիւային փաստաթղթերը վկայում են, որ Դերսիմի կոտորածի ժամանակ սպանուել է ընդհանուր

բնակչութեան երեք-չորրորդը⁶⁰: Այս թիւը մօտաւորապէս համապատասխանում է տարածուած 70,000 զոհերի մասին տուեալների հետ: Սակայն բաւական բարդ խնդիր է վեր հանել այդ տարիներին կոտորուած հայերի՝ այդ թւում եւ ալեւիացած հայերի թուաքանակը: Այս առումով ուսումնասիրող Հայկագուն Ալվրցեանը յենուելով որոշ աղբիւրների վրայ՝ բերում է 15 հազար սպանուած հայերի թիւը⁶¹, որը, կարծում ենք, նոյնպէս կարօտ է առաւել մանրամասն հետազօտութեան: Այս առումով աւելորդ չէ մէջբերել ՀԽՍՀ Արտաքին Գործերի Նախարարութեան 1946ին պատրաստած տեղեկանքը, որտեղ անդրադարձ կայ Դերսիմ Նահանգում ապրող հայերի ինչպէս վիճակին, այնպէս էլ թուաքանակին՝ 1938ի ցեղասպանութիւնից յետոյ: Տեղեկանքում մասնաւորապէս նշուած է. *«Դերսիմի հայերը հետզհետէ ձուլում են եւ հեռանում այդ վայրերից եւ ներկայումս նրանց թիւը կազմում է 6-7 հազար: Նրանք ապրում են իրարից հեռու գիւղերում, ծայրայեղ չքաւորութեան մէջ, փոխելով իրենց անունները եւ ձուլուելով»*⁶²: Փաստօրէն՝ ըստ արխիւային այս փաստաթղթի, 1946ին Դերսիմում ապրել է շուրջ 7 հազար հայ, սակայն տարբերակում չի դրում, թէ դրանք 1915ին այնտեղ ապաստանած հայերն ու նրանց սերունդներն են, թէ՞ աւելի վաղ այդ տարածքներում բնակուող եւ ալեւիականութիւն ընդունած հայերը: Ուշագրաւ է նաեւ, կրկին խորհրդային Արտաքին Գործերի գերատեսչութեան պատրաստած մէկ այլ տեղեկանքը արդէն 1947ին, որտեղ նշում է, որ այդ պահի դրութեամբ Դերսիմում բնակուել է 1250 հայ⁶³: Կարելի է ենթադրել, որ այս թիւը, ամենայն հաւանականութեամբ, վերաբերել է քրիստոնէայ մնացած ծպտեալ հայերին այսինքն՝ 1915ից վերապրածներին:

Ինչպէս Հայոց ցեղասպանութեան տարիներին, այնպէս էլ Դերսիմի ցեղասպանութեան ժամանակ տեղի են ունեցել բռնի իսլամացման, իսկ երբեմն էլ բռնի դաւանափոխութեան՝ սուննիացման դէպքեր եւ հայերի, եւ զազաների նկատմամբ: Այսինքն՝ 1915ին փրկուած հայերը ենթարկուել են ցեղասպանական եւս մէկ գործողութեան՝ բռնի կրօնափոխութեան: Ընդ որում, մեծ մասամբ նոյնն են եղել մեթոդները՝ նախ իսլամի պարտադրում, իսկ արդէն կրօնափոխութիւնից յետոյ այդ մարդկանց տեղաբաշխել են հոծ թուրքական բնակչութիւն ունեցող շրջաններում, որպէսզի

լիակատար ձուլման ենթարկուեն: Բռնի իսլամացման համար թիրախատրուած են եղել հիմնականում կանայք եւ երեխաները, սակայն երբեմն տղամարդիկ էլ արդէն արքայի ընթացքում ենթարկուել են կրօնափոխման: Օրինակ՝ ըստ Ֆընդըքի, 1938ին դերսիմցի հայ տղամարդկանց այլ նահանգներ արքայի ժամանակ ստուգել եւ բռնի թլփատել են, իսկ այնուհետ նրանց տուել իսլամական անուն ու գրանցել որպէս սուննի մուսուլման⁶⁴: Կանանց բռնութեամբ ամուսնացրել են մուսուլմանների հետ եւ ստիպել, որ կրօնափոխ լինեն. այդ մասին, յատկապէս ներկայումս, նոր մանրամասներ եւ փաստեր են ի յայտ գալիս: Անգամ տարեց կանայք այժմ սկսում են խոստովանել, որ իրենք հայ են եւ փոքր հասակում Դերսիմում կորցնելով իրենց ընտանիքները առեւանգուել են թուրքական բանակի զինուորների կողմից, շահագործուել եւ բռնի ամուսնացուել մուսուլմանների հետ⁶⁵:

Բռնի իսլամացման բազմաթիւ դէպքեր արձանագրուել են յատկապէս երեխաների նկատմամբ: Ներկայում ընթացող մի շարք ուսումնասիրութիւնների ժամանակ իյայտ են գալիս տարբեր մանրամասներ, որոնք բացայայտում են 1936-38ի Դերսիմում տեղի ունեցածների ողջ սարսափելի բնոյթը: Այսպէս, դերսիմցի Ռեսէ Հէմըլին պատմում է այդ թուականների մասին. «5-6 տարեկան երեխայ էի: Մի օր թուրք հեծեալ զինուորականները մեր գիւղ եկան: Ինձ եւ իմ երկու ընկերներին բռնեցին ու նրանցից մէկը իջեցնելով մեր շալուարները ստուգեց, իսկ այնուհետ նայելով իրենց հրամանատարին՝ գլխով հաստատման նշան արեց եւ ասաց. «Այո, սրանք թլփատուած են»: Մեզ բաց թողեցին: Բախտս բերել էր, որ հայրս ինձ վաղ տարիքում էր թլփատել. էթէ թլփատուած չլինէի հիմա հաստատ ողջ չէի լինի»⁶⁶:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Դերսիմում 1936-38ի տեղի ունեցածները լինելով ցեղասպանական արարքներ, ունէին նաեւ հակահայկական յստակ ուղուածութիւն եւ դերսիմաբնակ հայերը (ինչպէս 1915ին ապաստանած, այնպէս էլ դարեր շարունակ այնտեղ բնակուող) թուրքական իշխանութիւնների կարեւոր թիրախներից էին: Թուրքիայում պահպանուած հայութեան այս խմբի նկատմամբ, փաստօրէն, իրագործուեց ծրագրատրուած ու մանրակրկիտ մշակուած ցեղասպանութիւն, ինչպէս նաեւ բռնի իսլամացում եւ ձուլում:

Հարկ է նկատել նաև, որ Դերսիմը իւրայատուկ տեղ է զբաղեցնում Թուրքիայում ընթացող էթնիկ ինքնութեան ճգնաժամի եւ հայկական ինքնութեան վերազարթօնքի համապատկերում: Ալեւի բնակչութեան ոչ-այդքան մոլեռանդ դիրքորոշումը թոյլ է տուել, որ մինչեւ մեր օրերը դերսիմցի հայերը եւ նրանց սերունդները, ցանկութեան դէպքում, պահպանեն հայկական ինքնութեան որոշակի տարրեր: Բացի այդ, Դերսիմում, հայկական դարաւոր ներկայութեան, ինչպէս նաև 1915ին բազմահազար հայերի այնտեղ ապաստանելու արդիւնքում հայկական մշակոյթի, սովորոյթների, հայոց լեզուի որոշ տարրեր փոխանցուել են զազայական միջավայր: Օրինակ՝ զազա լեզուում ակնյայտ է հայերէն փոխառեալ բառերի որոշակի շերտ, զազայական մի շարք տօներ, սովորոյթներ իրենց մէջ ունեն հայկական գծեր, մինչեւ այսօր էլ Դերսիմում ժողովրդի շրջանում օգտագործուում են հին հայկական մի շարք տեղանուններ:

Թուրքիայում սկիզբ առած էթնիկ ինքնութեան ճգնաժամի շրջանակներում գնալով աւելի շատ են տեղի ունենում նախկինում բռնի կրօնափոխ հայերի սերունդների վերադարձ դէպի քրիստոնէութիւն, վերամկրտում: Նմանօրինակ բազմաթիւ դէպքեր արձանագրուում են Դերսիմում ալեւիական ինքնութեամբ ապրող հայերի սերունդների շրջանում եւս⁶⁷:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Գեորգ Հալաջեան, «Դերսիմի Հայերի Ազգագրութիւնը», *Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւստութիւն*, Հտր. 5, Երեւան, ՀՄՄՀ ԳԱ Հրատ., 1973, էջ 256-257:
- ² Կ. Սասունի, *Քիւրտ Ազգային Շարժումները Եւ Հայ-Քրտական Յարաբերութիւնները (ԺԵ. Դարէն Մինչեւ Մեր Օրերը)*, Պէյրութ, Տպ. Համազգային, 1969, էջ 44:
- ³ Նիկողայոս Ադոնց, *Հայկական Հարցի Լուծման Շուրջ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1989, էջ 106, 20:
- ⁴ Նոյն:
- ⁵ Հալաջեան, էջ 249:
- ⁶ Արշակ Ալպոյաճեան, «Քրտական Ազգութեան Նկարագիրը Եւ Ցեղակցական Յարաբերութիւններ Հայոց Հետ», *Հայրենիք Ամսագիր*, Բոստոն, 1931, vol IX, թիւ 10, էջ 90:
- ⁷ Թափառական, «Կիսանկախ Տերսիմի Հայկական Ծագումը (Փաստեր Պատմութեան Համար)», *Հայրենիք Ամսագիր*, Բոստոն, 1931, vol. IX, թիւ 12, էջ 142:

- ⁸ S. Akgül, *Amerikan Ve İngiliz Raporları Işığında Dersim*, 3-üncü basım (Դերսիմը՝ ամերիկեան եւ անգլիական զեկուցումների լոյսի տակ), İstanbul, Yaba Yayınları, 2004, էջ 89:
- ⁹ Նոյն, էջ 98:
- ¹⁰ Նոյն, էջ 115:
- ¹¹ Հալաջեան, էջ 254:
- ¹² Վ. Յարութինեան, «Հայ Հետազոտողները Ալեիների Մասին», *Մերձատր Արեւելք (Յօդուածների Տողովածու)*, Հտր. VII, Երեւան, ՀՀ ԳԱԱ Արեւելագիտութեան Ինստիտուտ, 2011, էջ 173:
- ¹³ *Kurdskiye Dvijenije V Novoye I Noveyshe Vremya* (Քրդական շարժումը նոր եւ նորագոյն ժամանակաշրջանում), Մոսկուա, «Նաուկա» շրատ., 1987, էջ 18:
- ¹⁴ Նոյն, էջ 18-19:
- ¹⁵ Հալաջեան, էջ 31:
- ¹⁶ *Kurdskiye Dvijenije*, էջ 20:
- ¹⁷ Նոյն, էջ 44-45, 55:
- ¹⁸ H. Aygün, *Dersim 1938 ve Zorunlu Iskân: Telgraflar, Dilekçeler, Mektuplar* (Դերսիմ 1938 եւ պարտադիր բնակութիւն. հեռագրեր, աղերսագրեր, նամակներ), Ankara, Dipnot Yayınları, 2009, էջ 46:
- ¹⁹ Նոյն, էջ 48:
- ²⁰ *Kurdskiye Dvijenije*, էջ 93:
- ²¹ Նոյն, էջ 94:
- ²² Նոյն, էջ 95:
- ²³ Նոյն. նաեւ՝ M. N. Dersimi, *Kürdistan Tarihinde Dersim* (Դերսիմը Քիւրտիստանի պատմութեան մէջ), Halep, 1952, էջ 146:
- ²⁴ Aygün, էջ 58:
- ²⁵ Նոյն, էջ 59:
- ²⁶ *Kurdskiye Dvijenije*, 159.
- ²⁷ Մանուէլ Հասրաթեան, *Kyrdi Turtsi V Noveyshee Vremia* (Թուրքիայի քրդերը նորագոյն ժամանակներում), Երեւան, Հայաստան շրատ., 1990, էջ 186:
- ²⁸ Նոյն, էջ 187:
- ²⁹ Dersimi, էջ 270.
- ³⁰ *Kurdskiye Dvijenije*, էջ 162:
- ³¹ Տե՛ս օրինակ՝ *Dersimli Gregoryan Ailesinin Anıları: Gökyüzünü Kaybeden Kartal* (Hazırlayan Murat Kahraman) (Դերսիմցի Գրիքորեան ընտանիքի յուշերը. երկնակամարը կորցրած արծիւր), İstanbul, İletişim Yayıncılık, 2015, էջ 22-37:
- ³² S. Chengiz, “Dersim I Desrimski Vopros: Kratkii Obzor” (Դերսիմ եւ Դերսիմի Հարցը), *Իրան-Նաւէ. Արեւելագիտական Հանդէս*, Հտր. 44-45, Երեւան, 2012-2013, էջ 98:
- ³³ Հասրաթեան, էջ 198:
- ³⁴ Ա. Հիւր, *Մալթայի Աքտրեալները, Թուրքերը Թուրքերի Մասին*, Հտր. 3, Կազմ. եւ խմբ. Ռուբէն Մելքոնեան, Երեւան, ԵՊՀ շրատ., 2011, էջ 82-83:
- ³⁵ *Kurdskiye Dvijenije*, էջ 162:
- ³⁶ “Demirel'den Evren'e Ağır 12 Eylül İthamı!” (Դեմիրելից Էւրենին, 12 Սեպտեմբերի ծանր ամբաստանութիւնը), *Milliyet*, 08, 10, 2010.

- ³⁷ A. Hür, “1937-1938’de Dersim’de Neler Oldu?”(1937-1938ին Դերսիմի մէջ ի՞նչեր պատահեցան), *Taraf*, 16, 11, 2008:
- ³⁸ M. Kalman, *Belge ve Tanıklarıyla Dersim Direnişleri* (Փաստաթղթերով եւ վկայութիւններով Դերսիմի դիմադրութիւնները), İstanbul, Nûjen Yayınları, 1995, էջ 112:
- ³⁹ *Kurdskoje Dvijenije*, էջ 76:
- ⁴⁰ Սասունի, էջ 218:
- ⁴¹ H. Hayreni, 1915’in Denek Taşında Türk ve Kürt Siyaseti (2. Bölüm)(Թուրք եւ Քիւրտ քաղաքականութիւնը 1915ի փորձաքարին), (http://hyetert.blogspot.com/2012/04/1915in-denek-tasnda-turk-ve-kurt_29.html):
- ⁴² «Ազատարար Տերսիմցիներ» Ասացուածքը Վե՛րջ Կը Գտնէ, <http://www.aztagdaily.com/archives/56053> :
- ⁴³ Նոյն:
- ⁴⁴ Akgül, էջ 40:
- ⁴⁵ G. B. Dinç, “Dersim Ermenileri 2,” (Դերսիմի Հայերը) <http://www.dersimnews.com/Dosya/Dersim-Ermenileri-2-1198.htm> :
- ⁴⁶ Hayreni:
- ⁴⁷ Նոյն:
- ⁴⁸ Kalman, էջ 112:
- ⁴⁹ Նոյն, էջ 173:
- ⁵⁰ Նոյն, էջ 232:
- ⁵¹ E. Hanioglu, “Dersim Ermenileri Şimdi Nerede?,” (Ո՞րտեղ են Դերսիմի հայերը հիմա), <http://blog.radikal.com.tr/Sayfa/dersim-ermenileri-simdi-nerede-14537> :
- ⁵² Kalman, էջ 340-341:
- ⁵³ Զ. Մարրլեան, *Հայոց Յեղասպանութենէն Առաջ Եւ Ետք*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 2011, էջ 189:
- ⁵⁴ Dinç:
- ⁵⁵ Aygün, էջ 68. նաեւ՝ İ. Bahadır, *Cumhuriyetin Kuruluş Sürecinde Atatürk ve Aleviler* (Աթաթիւրքը եւ ալեւիները հանրապետութեան հիմնադրութեան ընթացքում), İstanbul, 2002, էջ 81:
- ⁵⁶ Kalman, էջ 340-341:
- ⁵⁷ Հարցազրոյց Սիրեկան Վարդլեանի հետ (23, 09, 2012), Ռուբէն Մելքոնեանի անձնական արխիւ:
- ⁵⁸ Ինչպէս են թուրքերը բռնի կերպով թլփատել հայերին. Թուրքիայում կը ցուցադրուի Դերսիմի կոտորածների մասին պատմող ֆիլմ, <http://www.tert.am/am/news/2011/05/03/dersim/276231> (03, 05, 2011) :
- ⁵⁹ Kalman, էջ 405:
- ⁶⁰ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 151, թ. 2:
- ⁶¹ Հայկազ Ալվրցեան, *Կրօնափոխ Հայերի Խնդիրները Թուրքիայի Հանրապետութիւնում*, Երեւան, Էդիթ Պրինտ Հրատ., 2014, էջ 127:
- ⁶² ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 151, թ. 2:
- ⁶³ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 197, թ. 27:
- ⁶⁴ Ինչպէս են թուրքերը բռնի կերպով:

⁶⁵ N. Sarıdoğan, Dersim'in Ermeni kayıp kızı kaybolan yıllarını istiyor (Դերսիմի կորսուած հայ աղջիկը պահանջում է իր կորսուած տարիները), <http://www.stargazete.com/politika/dersimin-ermeni-kayip-kizi-kaybolan-yillarini-istiyor/haber-571903> :

⁶⁶ Dinç:

⁶⁷ Հալաջեան, էջ 256-257:

THE ARMENIAN FACTOR IN THE DERSIM GENOCIDE (1936-38)
(SUMMARY)

RUBEN MELKONYAN
rubenmelk@gmail.com

The role of Dersim has always been unique not only for Armenians but also for Zazas and Kurds living in the region. Due to its geographical position Dersim has often become a refuge for rebels and insurgents. The semi-independence of Dersim was a matter of concern for the Ottoman authorities at different times and made them take certain actions, which became especially apparent in the 19th century.

After the proclamation of the Republic of Turkey in 1923, the Dersim problem assumed more importance, and the state embarked on a genocidal project against the region. State's military actions against Dersim in the 1930s had a direct connection with the Armenian Genocide. In fact the Genocide in Dersim in 1936-38 had anti-Armenian undercurrents, as Armenians living in Dersim were among the first and most important targets of the Turkish authorities.

Բառերուն Միւս Երեսը

"ՋԱՐԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ" ԵՒ

ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ

ԱՆԴՐԱՆԻԿ Ծ. ՎՐԴ. ԿՌԱՆԵԱՆ

ՄՈՒՏՔ

Հայկազեան Հայագիտական Հանդէսին (ՀՀՀ) ԼԳ., այնուհետեւ՝ յաջորդող միքանի հատորներուն մէջ, առիթն ունեցած էի յօդուածաշարք մը հրատարակելու՝ «Բառերուն Միւս Երեսը» վերնագրին ներքեւ, ուր փորձած էի կարգ մը հայերէն բառերուն ստուգաբանութիւնը կատարել¹:

ՀՀՀի Յեղասպանութեան 100ին նուիրուած այս հատորով ինծի առաջարկուեցաւ այս անգամ՝ Յեղասպանութեան գաղափարին հետ առնչուած հայերէն կարգ մը բառերը ստուգաբանել, ինչպէս՝ «ջարդ», «կոտորած» եւն.: Այս յօդուածին մէջ զանոնք դասաւորեցի «ջարդաբանութիւն» տիտղոսին ներքեւ:

Հարկ է ընդունիլ, թէ Յեղասպանութեան կողքին՝ նաեւ «Լեզուասպանութիւն» կը գործադրուի...: Արդարեւ՝ Յեղասպանութիւն կը գործադրուի նաեւ երբ «կը սպաննեն» կամ մոռցնել կու տան ազգի մը լեզուն, որ իր հերթին՝ արտայայտութիւնն է ազգին մտածելակերպին ու զգայնութեան, այլ խօսքով՝ անոր հոգեւոր գոյութեան...:

Այս մասին՝ ուրիշ առիթով...:

ԱՔՍՈՐ

Ասորական ծագումով «աքսոր» բառը կը նշանակէ իր բնիկ երկրէն կամ հայրենիքէն արտաքսում, եւ ասիկա՝ կա՛մ իբր պատիժ եւ կա՛մ որեւէ ուրիշ պատճառի մը համար:

ԱՆՃԻՏԵԼ

Այս բայը իւրայատուկ իմաստ մը ունի: Ան կազմուած է «ճետ» արմատէն, որ կը նշանակէ զարմ, արու զաւակ-սերունդ:

«Անճիտել» կը նշանակէ մէկը անճետ, առանց արու զարմի, ուստի անզաւակ թողուլ ու այսպէս՝ գերդաստանի մը շարունակութիւնը ջնջել, քանի արու զաւակն է որ իր մէջ ցեղի մը շարունակութիւնն ունի:

ԲՆԱԶՆՁՈՒՄ

«Բնաջնջում» արմատն է «բնաջնջել» բային, որ կը նշանակե՛ր քան մը իր «բունեն» կամ արմատեն ոչնչացնել, ինչպե՛ս ծառ մը իր բունեն արմատախիլ կամ «բնաջինջ» կ'ընեն...:

Մարդուն դէմ գործադրուած «բնաջնջում»ի այս ոճրային արարքը՝ կերպով մը մարդս բոյսի կը նմանցնէ:

«Բնաջնջում» բառը, իբր բառակազմութիւն՝ կը հակադրուի «բնատեր» բառին, որ կը նշանակե՛ր «բուն կամ հարագատ տեր»:

«Բնաջնջում»ի արարքը կրնայ գործադրուիլ ազգի մը դէմ, անոր բնակած երկրէն զինք տեղահան ընելով, արտագաղթի դատապարտելով, աքսորելով, անոր բնակած երկիրն ալ, ի հարկին աւերելով...:

«Բնաջնջում»ի գործը՝ իր գոհը կ'ոչնչացնէ իր բունէն ու իր արմատէն, իր հողէն, եւ այս պատկերաւոր ոճէն դուրս գալով՝ ըսենք. իր հայրենիքէն...:

ԵՂԵՌՆ

Գրաբարին մէջ «եղեռն» բառը նշանակած է «դառնութիւն», հետեւաբար նաեւ «ողբ»: Այս իմաստէն մեկնելով, Գրիգոր Նարեկացիի աղօթքներն ալ կոչուած են մեղքին վրայ դառնացող սրտի մը «տաղք եղեռնականք»:

«Եղեռն» բառին այս ողբային նշանակութեան հետեւողութեամբ, ուրիշ արարքներ եւս կոչուած են «եղեռնական», այսինքն՝ լալու եւ ողբալու արժանի: «Եղեռն»ը ի վերջոյ դարձած է նաեւ «սուգի երգ» ու այս իմաստէն՝ յառաջ եկած են «եղերերգակ» ու «եղերամայր» բառերը, որոնք կը յուշեն անցեալին՝ ողբալու համար կանչուած ողբերգակ կամ լալամայր կիները:

Յետագային՝ «եղեռն» բառը աճեցնելով իր գրաբարեան նշանակութիւնը, առած է վնասի, չարիքի, աղէտի, փորձանքի, ոճիրի՝ իմաստներ, որոնց իբր հետեւանք՝ նաեւ «եղեռնագործ» բառը կազմուած է:

Բայց քանի որ «եղեռն» բառը «ցեղասպանութիւն» բառին սպանութեան իմաստը բացայայտօրէն չունի, այս պատճառով ալ՝ հայերս 1915ի եղեռնը կոչած ենք «ՄԵ՛Ծ Եղեռն», անոր տալով ցեղասպանութեան յատուկ նշանակութիւն:

ԿՈՏՈՐԱԾ

«Կոտորած» բառին արմատն է «կոտոր», այսինքն՝ բեկոր, փշուր, հատուած, որ արդիւնքը կամ հետեւանքն է հարուածի կամ բեկումի:

«Կոտոր» բայարմատէն յառաջ կու գան «կոտոր» եւ «կոտոր» բառերը, որոնք կը նշանակեն ամբողջութենէ մը մնացած մաս կամ բաժին: Նոյն բառէն յառաջ կու գան «կտրօն» բառը, մկրատ նշանակող «կտրոց»ը, ինչպէս նաեւ «կտրուկ» (պատասխան) եւ «կտրիճ» (երիտասարդ, ջարդող-փշրող) բառերն ու ասոյթները: «Կոտոր» բառէն յառաջ կու գայ յատկապէս «կոտորել» բայը: «Կոտորել»ը՝ միայն մանրել չէ, այլ բան մը ուժի զօրութեամբ պատառի վերածել ու ջնջել կամ ոչնչացնել է: «Կոտորել»ը ուժ գործածել է առարկայ մը իր ամբողջութենէն անջատելու կամ կոտորի վերածելու եւ այսպէս՝ զայն փճացնելու կամ անգործածելի դարձնելու աստիճան:

Բան մը «կոտորել»ու համար հարկ է քար, կացին, տապառ, սուր, զէնք կամ որեւէ գործիք ու մէկ խօսքով՝ ուժ, գործածել եւ այսպէս՝ կոտորած դարձածը անգործածելի ու թափուելիք դարձնել է:

«Կոտորել» բայէն յառաջ եկած է նաեւ «Կոտորած» գոյականը: «Կոտորած» բառը կ'ենթադրէ բազմութիւն մը կամ ամբողջութիւն մը, զոր կոտորելով՝ զայն ո՛չ միայն մանր մասերու կը վերածեն, այլ նաեւ՝ եթէ կենդանի էակ է, կը սպաննեն:

«Կոտորած» բառը կը տարբերի «կոտորակ»էն, անով որ մինչ կարելի է «կոտորակ»ներով ուրիշ բան մը վերակազմել, «կոտորած»էն առարկայ մը ո՛չ միայն բեկորներու կը վերածենք, այլ զայն պարզապէս կ'ոչնչացնենք: «Կոտորած»ը կը ձգտի որոշ ամբողջութիւն մը, բազմութիւն մը, ա՛զգ մը բնաջնջել:

«Կոտորած»ը հաւաքականութեան մը դէմ գործադրուած ոճիր մըն է, ինչպէս՝ Յիսուսի ժամանակ՝ Երուսաղէմի մանուկներուն կոտորածը: «Կոտորած»ը ամբողջութեան մը դէմ չի կատարուիր, այլ կերպով մը՝ հատուածական, selective ոճիր է:

Ասիկա՝ է նաեւ Հայ Ազգի կոտորածին պարագան...:

ՆԱԽՃԻՐ

«Նախճիր» պարսկերեն բառ է, որ կը նշանակէ «որս»: «Նախճիր»ը ինքնին՝ որսորդութեան միջոցին անասուններու դէմ կատարուած կոտորածն է:

Բայց երբ յետագային այս «որսորդութիւն»ը ... մարդո՛ց դէմ ալ գործադրուած է, բառը նշանակած է ո՛չ միայն որս, այլ նաեւ «վնաս», «հարուած»:

«Նախճիր» կոչուած է նաեւ պատերազմի ատեն մարդոց դէմ գործուած անխնայ կոտորածը:

ՇԿՕԹԱԿ

Պահլաւական ծագումով այս բառը՝ պղտոր նշանակութիւն ունի: «Շկօթակ ընել» պարսկերէնի մէջ կը նշանակէ յանցաւորի մը մարմնի անդամները հատել եւ կամ զինք հեռաւոր երկիր աքսորել, իբր պատիժ տարագրել կամ օտարութեան դատապարտել:

ՋԱՐԴ

«Ջարդ» բառը՝ ամբողջական քայքայում նշանակող «ջարդել, ջարդուիլ, ջարդուփշուր ընել» բայերուն բայարմատն է:

Նաուս մը ժայռերու վրայ փշրուիլը կամ «ջարդուիլ»ը՝ ինքնին կամաւոր արարք մը չէ՛, այլ՝ արկած: Իսկ մարդու դէմ գործուած «ջարդ»ը ո՛չ արկած է եւ ո՛չ ալ արկածի գործ, այլ՝ մարդկային խումբի մը կողմէ ծրագրուած, կազմակերպուած ու գործադրուած ոճիր՝ մարդկութեան դէմ:

Ջարդ մը կերպով մը կը յիշեցնէ փայտահատը, որ իր կացինով անտառին ծառերը կը ջարդէ: «Ջարդել»ը՝ փայտահատի մը նոյն գործն ընել է, բայց գործադրուած՝ մարդկային հաւաքականութեան մը դէմ: «Ջարդել» բային ա՛յս նշանակութենէն յառաջ եկած է «ջարդարար» բառը: «Ջարդարար»ը իր գոհերուն նկատմամբ խտրութիւն չի դնէր:

«Ջարդ»ը երբ ցեղի մը ամբողջական ջնջումի իմաստ առած է, այն ատեն «ցեղասպանութիւն» բառը ստեղծած ու անոր հոմանիշ դարձած է:

ՍՊԱՆ-ՍՊԱՆԴ-ՍՊԱՆԱՆԵԼ

«Սպան» բառը զենտական արմատ ունի, որ կը նշանակէ «վար կամ գետին ձգել», տապալել, քանի որ ամէն սպանուած մարմին՝ վար կ'իյնայ, կը տապալի:

«Սպան» արմատէն յառաջ եկած են զենումի նշանակութիւն ունեցող «սպանում, սպանութիւն» բառերը եւ հուսկ՝ «սպանանել» բայը, որ կորսնցնելով զոհի կամ մատաղի նշանակութիւնը, ծագում կու տայ մարդասպան, եղբայրասպան, ցեղասպան, եւն. բառերուն:

«Սպան» արմատէն՝ յառաջ եկած է նաեւ «սպանդ» բառը, որ կը նշանակէ զոհ, մատաղ կամ զինում, իսկ անոր վայրը՝ սպանդանոց, սպանդարան, ու յատուկ նշանակութեամբ՝ զոհարան:

ՎՏԱՐԱՆՂԻ

«Վտարանդի» բառը յառաջ եկած է «վտարել» եւ կամ «օտարել» բայերէն, որոնց արմատն են՝ «ի տար» կամ «օտար» բառերը, որոնք կը կազմեն «օտարանալ» բայը:

«Վտարել» կը նշանակէ բնիկը իր երկրէն արտաքսելով, տարագրել, պանդխտացնել, զինք օտարական դարձնել:

Մարդս կը վտարեն՝ անոր պատկանածին կամ սեփականածին տիրանալու համար:

«Վտարանդի» բառէն կազմուած է «վտարանդութիւն» բառը, որ կը նշանակէ պանդխտութիւն, գաղթ, աքսոր:

«Վտարանդիութիւն» կը վերաբերի ա՛յն անձերուն, որոնք զուրկ են պատկանելիութենէ ու դիմագիծէ:

Նո՛յն «վտարանդի» բառէն յառաջ եկող «վտարական» բառն էւս՝ «օտարական»ի նշանակութիւն ունի, քանի վտարուած մէկը՝ գաղթական կամ հայրենագուրկ կը դառնայ:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

«Յեղասպանութիւն» բառին արմատը՝ «ցեղ» է, որ կը նշանակէ տոհմ, ազգատոհմ, որմէ յառաջ եկած է նաեւ «ցեղաբանութիւն» գիտական բառը:

Յեղասպանութիւնը անհատաբար գործուած ոճիր մը չէ՛, այլ ամբողջական ցեղի մը կողմէ ուրիշ ամբողջական ցեղի մը դէմ գործուած ոճիր է: Ան ցեղէ՛ ցեղ կը գործադրուի:

«Յեղասպանութիւն» բառին հետապնդած նպատակը ամբողջ ցեղ մը սպաննելով՝ զայն բնաջնջել է:

Չեմ գիտեր թէ անցեալին՝ Հայոց Յեղասպանութեան նման ուրիշ ազգերու մօտ ալ ցեղի մը ամբողջական բնաջնջումը կատարուած է: Ամէն պարագայի, 1915ին Հայոց դէմ գործադրուած Եղեռն-ոճիրէն ծնունդ առաւ «Յեղասպանութիւն» հայերէն բառը, զոր Եւրոպան հաւատարմօրէն թարգմանեց Genocide բառով, որ այսօր մեզի համար Թուրքիոյ Հայոց դէմ գործադրած հայաջինջ արարքը կը բնորոշէ յատկապէս:

Հայերս «Յեղասպանութիւն»ը կոչած ենք նաեւ «Հայասպանութիւն»:

Հայերէնի մէջ Յեղասպանութեան հետ առնչուած այս քանի մը բառերէն զատ, կարելի է ուրիշ բառեր ալ գտնել: Չանոնք մեր ուշիմ ընթերցողներուն ուշադրութեան կը յանձնենք:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ

¹ Տե՛ս՝ «Բառերուն Միւս Երեսը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԺԳ, Պէյրութ, [Տպ. Գրիգոր Անթունեան], 1993, էջ 11-27. նաեւ՝ «Բառերուն Միւս Երեսը (Բ)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԺԴ, Պէյրութ, [Տպ. Գրիգոր Անթունեան], 1994, էջ 11-27. նաեւ՝ «Բառերուն Միւս Երեսը (Գ)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԺԵ, Պէյրութ, [Տպ. Գրիգոր Անթունեան], 1995, էջ 13-48. նաեւ՝ «Բառերուն Միւս Երեսը (Դ)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԺԶ, Պէյրութ, [Տպ. Գրիգոր Անթունեան], 1996, էջ 289-336. նաեւ՝ «Բառերուն Միւս Երեսը (Ե)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԺԷ, Պէյրութ, [Տպ. Գրիգոր Անթունեան], 1997, էջ 331-373. նաեւ՝ «Բառերուն Միւս Երեսը (Զ)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԺԸ, Պէյրութ, [Տպ. Գրիգոր Անթունեան], 1998, էջ 153-194. նաեւ՝ «Բառերուն Միւս Երեսը (Է)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԺԹ, Պէյրութ, [Տպ. Գրիգոր Անթունեան], 1999, էջ 171-195:

THE OTHER SIDE OF THE WORDS
WORDS DENOTING MASSACRES ETC.
(SUMMARY)

FATHER ANTRANIK GRANIAN

In previous volumes of the *Haigazian Armenological Review* (Volumes 13 to 18), the author has already put in the limelight sets of Armenian words and explained their meanings, their connotation and their nuances in expressions.

In this article the author highlights a number of Armenian words related to the Armenian Genocide. These are:

1. Aksor/Aksorel - exile, to exile.
2. Antjitel – to detach the body from the head.
3. Bnadjendjum – to eliminate from its roots.
4. Yeghern/yeghernagan – agony, anguish, lament/lamentable, song of mourning, catastrophe, crime.
5. Kotoratz/kotor – massacre, shred, crumble
6. Nakhtjir – prey, the massacre of animals while hunting.
7. Shkotak – to cut into pieces the body of a guilty person, to exile to a distant country.
8. Djard/djardel – slaughter, total annihilation
9. Span/spand/spananel – to throw down, to topple, to kill
10. Vtarandi/vtarel/otarel – to alienate, exile someone from his/her native country
11. Tseghaspanutyun/tsegh – killing of a race, race.

The author examines the above-mentioned words, examines their roots, checks whether they have been borrowed from other languages, and analyses the evolution of their meaning, and lists words constructed from them.

MEMORY, POSTMEMORY, AND BEYOND: TRACING TRANS-GENERATIONAL TRAUMA IN THE LITERARY WORKS OF SAROYAN, BALAKIAN, AND BOHJALIAN

ANITA MOUTCHOYAN
anitamoutchoyan@gmail.com

INTRODUCTION

“I have given orders to my Death Units to exterminate without mercy or pity men, women, and children belonging to the Polish-speaking race. It is only in this manner that we can acquire the vital territory which we need. After all, who remembers today the extermination of the Armenians?”

Adolf Hitler, August 22, 1939
qtd. in *Forgotten Bread*

In the aftermath of the Armenian genocide, Armenians have pieced together a response to what Hitler assumed was a rhetorical question, for the Armenian race, Armenian history, Armenian culture, Armenian art, and Armenian American literature all confirm that the annihilation of the Armenians is a topic of ample discussion and is not to be forgotten even after the lapse of, to date, 100 years. Starting with an overview of Armenian literature and zooming in on Armenian American literature, this study traces the post-genocidal response of Armenian Americans of different generations, delving into literary space and tracing how the literature of renowned authors, belonging to different generations, reflects the response of the generation to the Armenian genocide, respectively.

In his article “Armenian Literature, Past and Present” written in 1935, Armen Kalfayan discusses the reasons why Armenian literature has not gained worldwide acclaim. He notes that literature written in the Armenian language has lacked individuality that marks other national literatures; furthermore, he adds that the Armenian language was a language too distant for American scholars to analyze. Although there have been renowned Armenian writers over the years, Kalfayan makes note of a reality that can be the starting point of this study: “if a literature needs a soil in which to grow normally, then the growth of Armenian literature must be a strange phenomenon [since] Armenians live on too many soils”.¹ In the brink of their literary prosperity, an entire generation of writers was silenced in 1915, and “with the destruction of the Armenians in Anatolia, Western Armenian literature was strangled. Diasporan Armenian writers would continue to write in the Western Armenian dialects; but once snuffed out on its native soil it was ostensibly extinguished”.² Kalfayan

adds that the political turmoil that Armenians have lived through in the past century has “not only scattered their literary energy and decimated the ranks of their writers but also, in a certain degree, produced racial and linguistic estrangement,” for many Armenians have used foreign languages in order to express themselves in writing (Kalfayan 13).

In order to understand the reason why Armenians have been scattered, a brief overview of their history is necessary, for it has played a major role in shaping their literature.

Between 1908 and 1915, the Young Turks aimed to eliminate all that stood in the way of establishing a “Turkish nation based on racial purity” (*Black Dog* 163) including the Armenians. Thus, the regime started to demonize the Armenians, launching their plan of race extermination which officially started on April 24, 1915 with the execution of 250 renowned Armenian leaders and intellectuals. Armenians in different areas were “rounded up, arrested, and either shot outright or put on deportation marches.” The deportations quickly became either scenes of mass killing for the men, or death marches for the women, children, and elderly who were whipped, raped, tortured and shot in an ongoing procession”.³ In the years between 1915 and 1922, the Armenian death tolls ranged “from over a million to a million and a half” (180). Those who survived the death march were scattered into different parts of the world.

Since the content of this study deals with Armenian-American literature, it is primarily concerned with the survivors who settled in the United States. According to Khatchig Tololyan, ethnics face the struggle of maintaining individuality while seeking assimilation, for “the self-representations they create are haunted by the paradoxes of simultaneously seeking sameness and difference, [in addition to] inclusion and exclusion”.⁴ This was the case with children of Armenian genocide survivors who needed to maintain their Armenian identity while becoming Americans; they also had to deal with the inaccessible, traumatic past that haunted their parents. As a result, “many talented young Armenian Americans found writing to be their salvation in their struggle for dignity, identity, and meaning, while creating a niche for themselves in [the] country that their parents called the Diaspora, but for them was home”.⁵ Here, it is noteworthy to mention the important question that Lorne Shirinian raises in relation to Armenian American literature written in English, for she asks how and whether “Armenianness can be communicated in a non-Armenian language”.⁶ The analysis of Armenian American literature, written in English, in this study portrays how the afore-mentioned is accomplished and Armenianness is, in fact, maintained irrespective of the language used.

Tracing Armenian American writing since the 1890s, Tololyan notes that most of the content appeared as “essays, columns, polemical articles of

great passion and rhetorical eloquence, patriotic verse, sentimental poetry, short stories (a few of them very good), autobiographies and memoirs that make no pretense of narrative sophistication” (Tololyan 20). He adds that prior to World War I, most of the immigrants wrote in the Armenian language and Armenian American literature in English started to appear in the 1920s; however, it accomplished prominence only after the 1960s. Much of the earlier literature written in Armenian depicts “diasporan dislocation, the contradictory yearning for a home in the homeland and at-homeness in the host land, [and] the fear and fascination of the encounter with the *odar* (the Other, the Alien).” In general, it is agreed that the Armenian genocide and its trauma has been the “the central formative experience of diasporized Armenians and of Armenian ethnic literatures.” The genocide’s constant denial by the Turks has placed the healing process in perpetual postponement; thus, “other experiences of pain and loss are routinely, if symbolically, assimilated and even subordinated” within the larger context of genocide (Tololyan 24). Shirinian states that Armenian-North American literature has become a means of facing the fear of disappearance, for through literature, the Armenian story continues to be exposed (Shirinian 61). Furthermore, she states that:

The genocide has become a field of knowledge called discourse; that is, the Armenian genocide has become a discursive event. Collective symbols such as the genocide have their origin in a specialized discourse as their field of origin. “Pain” and “confusion” and associated lexical and semantic items connote, for example, the loss inflicted by the tragedy of the genocide and the difficulty in coping with life in the transplanted world of the Diaspora (Shirinian 97).

Most second and third generations of ethnics have had access to their atrocious Armenian past through stories narrated orally since their lack of knowledge of the Armenian language has prevented them from reading the earlier works about the genocide written in Armenian. However, the Middle Eastern diaspora has depended on genocidal narratives in Armenian produced in the United States between the 1920s and 1970s by “authors like Hamasdegh, Benjamin Noorigian, Aram Haigaz, Vahe Haig-Dinjian, and Hagop Asadoorian” (Tololyan 26). On the other hand, some of the works of famous, ethnic Armenian American authors has been translated into Armenian and is widely read. Among these authors is William Saroyan, a first-generation, Anglophone, Armenian-American writer who has been awarded a Pulitzer Prize since his literary work has, to a certain extent, received worldwide acclaim. Saroyan was born in America in 1908 unlike his three siblings who had arrived there a year before. He received instant fame with his first book, *The Daring Young Man on the Flying Trapeze* (Kherdian). Through his literary work, he has been able to

successfully create a realm that echoes the psychological reality of the Armenians in the initial macrocosm of diaspora. Throughout its history, Armenian American literature has, to some extent, reflected the social state of the ethnics which is a central point of discussion in this study. "However, literary representation does not simply reflect; it refracts, mediates, and displaces experience, recoding it." The immigrants who arrived to the United States between 1880 and 1925 were exposed to prejudice, discrimination, and negativity which resulted in creating feelings of seclusion. The Armenian characters Saroyan has created in his fiction defy the stereotypical, negative image of the Armenian immigrants, yet, at the same time, possess a dark, melancholic nature which is the consequence of their haunting past and alienated present (Tololyan 27- 28).

Since through the collective symbol of genocide, "the past is contained in the present and is liable to intrude or impose upon it at any moment" (Shirinian 263), the major themes in Armenian American writing stem from this collective symbol. The themes include: the search for identity, alienation, loss, and recovery (Kherdian). In addition, the family and the role it plays on an intergenerational level is also a crucial theme that appears in various Armenian-American literature. The search for the Father in order to unravel the silence of the past, and the image of the mother and grandmother as providers of information becomes central from the 1930s till the 1970s. Three of the most prominent novels that revolve around this theme are: Saroyan's *Rock Wagram*, Peter Sourian's *The Gate*, and Peter Najarian's *Voyages*. Sourian's *The Gate* traces the attempt of a young man, named Paul, to unravel his grandfather's Armenian history through reading his witness accounts of the genocide. Since the notes are written in Armenian, he asks his father to mediate; however, because the memory is too painful, the father refuses to translate and remains in silence. Paul seeks to defy "the silent resistance of the father and imposed silence of the grandfather" claiming that, if all else fails, he will regain his ancestor's past through imagination (Tololyan 32). It is interesting to note, that what Paul, a fictitious Armenian character created by a first generation Armenian American writer, seeks to accomplish in earlier literary work is paralleled later on in reality through Peter Balakian's, a third generation Armenian American's, lifelong attempt to reconnect with the past in all means possible.

Another renowned Armenian American author is Michael J. Arlen whose *Passage to Ararat* won the National Book Award for Contemporary Affairs in 1976. Arlen's father after having silenced the past and provided conditions of complete assimilation to his son, fails to keep the history hidden, for the only way Arlen can put his father to rest is through a journey of discovery he takes to Armenia which gives him insight into an

important aspect of his identity. Furthermore, a prominent female Armenian-American author is Carol Edgarian whose *Rise the Euphrates*, published in 1994, reached commercial success. Her work focuses on the “matrilineal” representation of genocidal reaction; once again, “translation, transmission, and transfer” appear as issues of immense importance in her work (Tololyan 35-37).

page of his novel, it is written that “this book is a work of fiction. Names, characters, businesses, organizations, places, events, and incidents either are the product of the author’s imagination or are used fictitiously. Any resemblance to actual persons, living or dead events, or locales is entirely coincidental.” Upon delving into the novel, one finds more than a mere coincidental resemblance between the narrator, Laura Petrosian, and Chris Bohjalian. In fact, in an interview with Tom Vartabedian,⁴¹ Bohjalian admits that Laura represents a fictional version of himself and that her grandparents’ house is a replica of his grandparents’ house. Furthermore, Laura is a novelist who attempts to unravel the history of her grandparents in the same way that Bohjalian, through his historical research and fictitious literary work, attempts to understand the faded truth. Laura, like Bohjalian, notes that she had attempted to put into words the trauma of her Armenian ancestors in the past, yet had failed to create a successful product since “it was too cold, too distant” (6) which is actually what Bohjalian had experienced prior to writing this novel, for he has previously written fifteen other novels that do not deal with his Armenian past. In the presentation Bohjalian gave about his novel upon his visit to Beirut, he accentuated the role his grandparents’ “exotic” home has played in his own memory. Thus, at least an immediate link can be made between the introductory pages in the novel and Bohjalian’s own childhood, for the “aura of sadness, secrets, and wistfulness,” the “oriental” setting of the home, and the Armenian “cooked lamb and meat” were all a very real part of Bohjalian’s own life (4-5). Hence, it can be concluded that a real connection, one etched in his personal memory, is what Bohjalian uses as a gateway into the Armenian world of his grandparents. What then is the significance of highlighting this commonality? Why would a novelist who shares the past of the character he creates make the conscious choice of establishing a clear detachment between himself and the narrator that, to some extent, echoes him? Unlike Balakian who vividly displays his biographical links to his literary work, Bohjalian chooses to do the exact opposite. The lack of insight into his grandparents’ past does not allow him to make a personal appearance in the novel, for with fictitious characters he is allowed to create a complete plot that in reality can never be possibly achieved in his own life. Although his grandparents were survivors of the Armenian genocide, the only stories he came to know about them was through his father, years after they had passed away through bits and pieces of information and photography which was surely not enough to retrace and rebuild a complete family history. On the other hand, by creating Laura, Bohjalian is allowed to voice his own struggle and opinion through her, allowing his imaginative investment to fill in all the gaps that he strives to unravel. Furthermore, the character he chooses to “represent” him

in the novel is a female which ascertains further detachment and hence more insight.

In his article about the cathartic role narratives play in dealing with the pain of traumatic events, Kearney discusses the Armenian genocide, among other genocides, and notes that “in witnessing to past pain, narratives imitate the life of suffering and action in such a way as to refigure events absent, unbearable and otherwise forgotten”.⁴² In this novel, Laura is given the opportunity, through a photograph, to trace her grandparents’ history, and in the plot of that history, the readers explore life in the Syrian desert in 1915 during the time of deportation and genocide; furthermore, they witness the barbaric treatment of the Armenians and the trauma Armenian men, women, and children experienced. By being engaged in this plot, the readers experience “a certain cathartic release from deep [ancestral] trauma in having their histories (personal or communal) recounted and acknowledged” (53). In his presentation, Bohjalian noted the communal response the novel has received from non-Armenians who knew “next to nothing” about the first genocide of the 20th century; he also noted how it awakened the need among Armenian Americans to reconnect with their distant past and attempt to understand the trauma of their ancestors. “The act of testimony involves both an affective empathy with the victims and a cognitive knowledge of the event which actually occurred” (Kearney 65) and that is what Bohjalian’s novel seems to accomplish. Moreover, this also explains his use of popular culture as means to reach a larger audience.

Perhaps the most haunting image in the novel is that of Hatoun, an eight year old girl who is first introduced by her guardian, Nevart, a genocide survivor, as being “unkillable” (17). Having witnessed the death of her mother and sister, Hatoun is too traumatized to have conversations and cannot really understand the point behind discourse since she had witnessed the useless echoes of pleas that remained unanswered. What perhaps captures her traumatized state of mind most is the way she handles a doll that she is given in order to play with. Hatoun tears the china head from the doll’s body and carries the head with her since the world she has emerged from was filled with decapitation and execution (110). Furthermore, the reason Hatoun prefers silence is because she knows that if she does start talking she will not be able to stop sobbing (172); thus, silence becomes her way of holding back. This recounting of traumatic experience through a fictitious character and plot accomplishes a type of release and gives “a future to the past” (51); furthermore, Kearney notes how various modes of Holocaust narrative testimonies: “cinematic, theatrical, literary, documentary,” engage future generations to recall the events of the Holocaust and reconnect with that part of history as if they were experiencing it for themselves. He notes that these narratives cannot

fully recapture the horror, yet allow remembrance and commemoration (64). *The Sandcastle Girls* seems to convey the same effect, for by understanding the pain of the past, the actual event becomes a more immediate experience.

The novel shifts between 1915 Syria and 2012 New York capturing how the past and present become simultaneous realities because of the collective symbol of Armenian genocide that constantly appears in the present. There are no clear distributions between the past and the present, for they seem to overlap within sections. In the end Laura accomplishes what Bohjalian can only accomplish through his fictitious narrative. Indeed, “narrative catharsis [becomes] a way of making absent things present in a unique balancing of compassion and dispassion, of identification and contemplation, of particular emotion and universal understanding. It is a task which, if finely and delicately achieved, may proffer some measure of healing” (Kearney 66).

B. Fourth Generation Armenian American Literature

It is interesting to note whether the cathartic function of narrativizing the trauma of the Armenian past can go further and delve into fourth generation Armenian American literature. If so, that might open a gateway to yet another mode of memory that transcends immediate memory and Postmemory, perhaps touching upon a phase of post Postmemory where the fourth generation descendants of Armenian genocide survivors voice their psychological reception of the genocide, continuing the demand for justice and vigorously fighting for the Armenian cause. In such cases, it is interesting to trace what narrative strategies this literature would employ in order to discuss the gap in time and experience; would the trauma of almost a century withstand the passage of time and leave its imprint in later generations? Garin Hovannisian is one example of a fourth generation Armenian American writer who has published a memoir, *Family of Shadows: A Century of Murder, Memory, and the Armenian American Dream*, which reflects upon the history of Armenia, its witnessing and reception through three generations of the Hovannisian family. Hovannisian has noted that writing the book “wasn't a matter of choice – but a matter of courage”.⁴³ This statement shows the inherent presence of the need for expressing the Armenian traumatic past irrespective of generational gap. Indeed, the denial of the genocide continues to trigger a trans-generational reaction to the atrocities of the Armenian past. It remains yet to be explored how the literature will continue to deal with this collective symbol as it becomes a further memory. Furthermore, if the genocide ceases to be denied in the near future, it would be interesting to trace the changes that Armenian-American literature will witness in the

future, and how it will compare to the literature of the previous generations.

ENDNOTES

- ¹ Armen Kalfayan, "Armenian Literature, Past and Present," *Books Abroad* 9 (1935, *Jstor*. Web. 9 Aug. 2010, p. 12.
- ² Peter Balakian, *Black Dog of Fate: A Memoir*, New York, Basic Books, 1997, p. 244.
- ³ Peter Balakian, *The Burning Tigris: The Armenian Genocide and America's Response*, New York, Harper Collins, 2003, p. 237.
- ⁴ Khatchig Tololyan, "Armenian-American Literature," *New Immigrant Literatures in the United States: A Sourcebook to Our Multicultural Literary Heritage*, ed. Alpana Knippling. Westport, Connecticut, Greenwood Press, 1996, p. 19.
- ⁵ David Kherdian, "Introduction," *Forgotten Bread: First-Generation Armenian American Writers*, ed. David Kherdian, BerKeley, Heyday Books, 2007. Print
- ⁶ Lorne Shirinian, *Armenian-North American Literature: A Critical Introduction: Genocide, Diaspora, and Symbols*, New York: The Edwin Mellen Press, 1990, p. 49.
- ⁷ Margaret Bedrosian, *The Magical Pine Ring: Culture and the Imagination in Armenian/American Literature*, Detroit, Wayne State UP, 1991, p. 191.
- ⁸ Mary Margaret Hoogasian, "Genocide Past and Present: A Comparison of Three Armenian-American Writers – Saroyan, M. J. Arlen and Balakian," MA study, American University of Beirut, 2000.
- ⁹ Chris Bohjalian, *The Sandcastle Girls*, New York, Doubleday, 2012. Print.
- ¹⁰ Cathy Caruth, "Unclaimed Experience: Trauma and the Possibility of History," *Yale French Studies*, 79(1991), p. 61. *Jstor*. Web. 15 Aug. 2012.
- ¹¹ David Stephen Calonne, "William Saroyan and the Armenian Genocide." *Journal of the Society for Armenian Studies*, 7 (1994), p. 100. *Literature Resource Center*. Web. 20 Nov. 2010.
- ¹² Donald E. Miller and Lorna Touryan Miller, "Armenian Survivors: A Typological Analysis of Victim Response," *The Oral History Review* 10 (1982), p. 49. *Jstor*. Web. 19 Nov. 2010.
- ¹³ Qtd. in Matthew A. Jendian, *From: Becoming American, Remaining Ethnic: The Case of Armenian-Americans in Central California*, New York, Scholarly Publishing, 2008, p. 1.
- ¹⁴ John Durham Peters, "Nomadism, Diaspora, Exile: The Stakes of Mobility within the Western Canon," *Home, Exile, Homeland: Film, Media, and the Politics of Place*, ed. Hamid Naficy, London, Routledge, 1998, p. 19.
- ¹⁵ William Saroyan, *Inhale & Exhale*, New York, Random House, 1936, p. 437.
- ¹⁶ William Saroyan, *My Name is Aram*, New York, Dell, 1974, p. 54.
- ¹⁷ Trihn T. Minh-ha, "Other Than Myself/My Other Self," *Travelers' Tales: Narratives of Home and Displacement*, ed. George Robertson et al, New York, Routledge, 1994, p. 13.
- ¹⁸ William Saroyan, *The Daring Young Man on a Flying Trapeze*, New York, Bantam, 1961, p. 32.
- ¹⁹ Peter Balakian, Personal Interview, 14 Nov. 2012.
- ²⁰ *The Hakawati* is the Arabic word for the teller of tales.
- ²¹ Marianne Hirsch, "Past Lives: Postmemories in Exile," *Poetics Today* 17(1996), p. 662. *Jstor*. Web. 4 Nov. 2010.
- ²² Marianne Hirsch, "The Generation of Postmemory," *Poetics Today* 29.1(2008), pp. 106-107. *Jstor*. Web. 4 Nov. 2010.

-
- ²³ Walter Kalaidjian, *The Edge of Modernism: American Poetry and the Traumatic Past*, Baltimore, John Hopkins UP, 2006, pp. 30-31.
- ²⁴ Maggie Ann Bowers, *Magic(al) Realism*, New York, Routledge, 2004, p. 3.
- ²⁵ Lois Zamora and Wendy Faris, "Introduction", *Magical Realism: Theory, History, Community*, ed. Lois Zamora and Wendy Faris, Durham and London, Duke University Press, 1995, p. 6.
- ²⁶ *Sad Days of Light* (New York: The Sheep Meadow Press, 1951), contains a collection of poems that portray the Turkish massacre of Armenians in 1915 and explore the experiences of the author's grandmother, a survivor of the attack.
- ²⁷ Rebeka Presson Mosby, "The Voice of History: An Interview with Peter Balakian," *New Letters* 67.1 (2001), p. 53. Web.
- ²⁸ Qtd. in Claude Fischler, "Food, Self and Identity," *Social Science Information* 27:2 (1988): 275-292.
- ²⁹ Roland Barthes, "Toward a Psychosociology of Contemporary Food Consumption," *Food and Culture: A Reader*, ed. Carole Counihan and Penny Van Esteri, New York, Routledge, 1997, p. 26.
- ³⁰ Claude Levi-Strauss, "The Culinary Triangle," *Food and Culture*, p. 29.
- ³¹ William Delassio, "Food Preparation, Food Consumption, and the Process of Identity Formation in Peter Balakian's Memoir *Black Dog of Fate*," *Studies in the Humanities* 34.1 (2007), p. 105. *General OneFile*. Web. 19 Sep. 2012.
- ³² Dori Laub, "Truth and Testimony: The Process and the Struggle," *Trauma: Explorations in Memory*, ed. Cathy Caruth, Maryland, The Johns Hopkins University Press, 1995, p. 69.
- ³³ Cathy Caruth, *Trauma: Explorations in Memory*, p. 151.
- ³⁴ *Dyer's Thistle*, Pittsburgh, Carnegie Mellon University Press, 1996, a collection of poetry that unfolds discoveries of myth and history.
- ³⁵ Peter Balakian, "Falling Into a Rug: Some Notes on Imagination and the Artifact," *Introspections: American Poets on One of their Own Poems*, ed. Pack and Parini, Middlebury, University of New England Press, 1997.
- ³⁶ Edward W. Said, "The Mind of Winter: Reflections on Life in Exile," *Harper's Magazine* 269 (1984), p. 49.
- ³⁷ Peter Balakian, *Reply From Wilderness Island*, New York, The Sheep Meadow Press, 1988.
- ³⁸ Peter Balakian, *Ziggurat*, Chicago, The University of Chicago Press, 2010.
- ³⁹ Sharon Leiter, *Critical Companion to Emily Dickinson: A Literary Reference to Her Life and Work*, New York, Infobase Publishing, 2007, p. 68-69. Web.
- ⁴⁰ Ernst Van Alphen, "Second-Generation Testimony, Transmission of Trauma, and Postmemory," *Poetics Today* 27:2(2006), p. 488. *Academic Search Elite*. Web. 26 Jan. 2011.
- ⁴¹ Tom Vartabedian, "'We Are Still the Mountain': An Interview with Chris Bohjalian," *The Armenian Weekly* (2012). Web.
- ⁴² Richard Kearney, "Narrating Pain: The Power of Catharsis," *Paragraph* 30.1 (2007), p. 66.
- ⁴³ Qtd. in Siranush Gevorgyan, "From the Shadows: Fourth Generation Hovannisian Tells Famous Family History," *Armenian Now*. 17 Sept. 2010. Web.

ՅՈՒՇԸ, ՎԵՐ-ՅՈՒՇԸ ԵՒ ՅԵՏ-ՅՈՒՇԸ.
ՄԻՋ-ՍԵՐՈՒՆԴԱՅԻՆ ԹՐՈՄԱՅԻՆ ՀԵՏՔԵՐԸ
ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ, ՓԻԹԸՐ ՊԱԼԱԳԵԱՆԻ ԵՒ ՔՐԻՍ ՊՈՆՃԱԼԵԱՆԻ
ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՆ ՄԷՋ
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ԱՆԻԹԱ ՄՈՒՉՈՅԵԱՆ
anitamoutchoyan@gmail.com

Ուսումնասիրությունը լուսարձակի տակ կ'ամեն Հայոց Ցեղասպանության ընկալումը՝ ամերիկահայ առաջին եւ երրորդ սերունդի հեղինակներու գրական ստեղծագործություններուն մէջ:

Հեղինակը նախ կ'ընդգծէ Ուիլիըմ Սարոյեանի (1908-1981) հակադարձությունը Ցեղասպանության հանդէպ: Ժամանակի առումով մօտ ըլլաով Ցեղասպանության դէպքերուն, ինչպէս նաեւ գլխաւորաբար կլանուած ըլլալով սփիւռքացումի եւ ձուլումի երեւոյթներով, Սարոյեան անկարող եղած է ամբողջութեամբ ըմբռնելու Ցեղասպանության պատճառած հոգեխոցը:

Ուսումնասիրությունը ապա կը սերտէ երրորդ սերունդի հեղինակ Փիթըր Պալագեանի (ծն. 1951) գրական երկերը, շեշտելու համար Հայոց Ցեղասպանության միջ-սերունդային ընկալման տարբերությունները: Հիմնուելով Մարիան Հիրշի վերյուշի տեսութեան վրայ, աշխատությունը կը խորանայ Պալագեանի բանաստեղծություններուն վերլուծութեան մէջ, օգտագործելով գիտական տեսություններ, որոնք գլխաւորաբար կը կիրարկուին Ողջակիզումի եւ այլ ազգերու Ցեղասպանության գրականութեանց սերտողութեան համար: Կախարդական իրապաշտութեան տարրերու, ճաշի պատկերումներու, տարանջատումի, հոգեխոցի, երեւակայութեան, եւ աքսորի ենթաշերտեր յայտնաբերելով Պալագեանի բանաստեղծութեան մէջ, սոյն ուսումնասիրությունը կը միտի վերհանել թէ ինչպէս Ցեղասպանության վերյուշի գիտակցականությունը վերականգնուած է անոր երկերուն մէջ:

Ուսումնասիրությունը նաեւ կ'օղակէ Պալագեանի սոյն անդրպատմական (Ցեղասպանության վերյուշի) հոգեխոցը անոր անմիջական հոգեխոցին՝ Սեպտեմբեր 11ի ողբերգութեան:

Վերլուծությունը քայլ մը եւս յառաջանալով կ'անցնի վերյուշի ոլորտը եւ լոյս կը սփռէ պատմողական արձակի ունեցած լիցքաթափային դերին վրայ՝ Քրիս Պոհճալեանի (ծն. 1962) վէպին ընդմէջէն:

Հուսկ, ուսումնասիրությունը ճամփայ կը հարթէ ամերիկահայ չորրորդ սերունդի գրականակութեան մէջ Ցեղասպանության հոգեխոցին ընկալման վերլուծութեան ու կը հարցադրէ թէ արդե՞օք այնտեղ անդրյուշը արդէն սկսած է դրսեւորուիլ:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԻ
ԱՐԾԱՐԾՈՒՄԸ
ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ԱՐՄԷՆ ԻԻՐՆԷՇԼԵԱՆ
urneshlian@yahoo.com

Յաճախ արծարծուած նիւթ է, թէ սփիւոքահայ գրականութիւնը չկրցաւ ստեղծել եղեռնապատումի գեղարուեստական իրաւամբողջական արտացոլումը՝ ա՛յն մակարդակով որ Յեղասպանութիւնը է Սփիւոքին համար իբրեւ գոյութեան հիմնական նախադրեալ:

Յակոբ Օշական, իօսելով Արամ Անտոնեանի *Մեծ Ոճիրքին* մասին, կը թուէ այն պատճառները որոնք պիտի դժուարացնէին այդ գիրքին գրականութեան վերածումը. «*Մէկ կողմէն անոր անհաւոր ընդարձակութիւնը, բեմին տարադէպ գանազանութիւնները, դերակատարներուն անըմբռնելի տեսակէ մը ընտրուած մարդերէ բաղկանալը, հեղինակին (գիրքը կառուցանող) միջոցներու անբաւականութիւնը ու ոճիրին յաջորդ այլապէս հրատապ հարցերը*»¹: Կը կարծենք որ Օշականի դատումները կարելի է տարածել նաեւ միւս գրողներու փորձերուն վրայ: Այդուհանդերձ, հայ գրականութեան է՛ւ գեղարուեստական արձակը, է՛ւ չափածոն է՛ւ թատրերգութիւնը 1920ականներէն ի վեր կը շարունակեն անդրադառնալ Եղեռնի թեմային, որովհետեւ անիկա ամէնէն հայկական նիւթերէն մէկը ըլլալով հանդերձ, ամէնէն համամարդկայինն է: Ըստ Վահէ Օշականի, Յեղասպանութիւնը կը շարունակուի, որովհետեւ ոչինչ ներուած ու մոռցուած է. այնքան ժամանակ, որ Յեղասպանութիւնը չէ ընդունուած եւ հատուցում չէ կատարուած, անիկա պիտի շարունակէ գոյութիւն ունենալ, արգելակելով այդ նիւթին գեղարուեստական մատուցումը²:

Յամենայնդէպս, իւրաքանչիւր սերունդ, ժամանակի ու միջավայրի թելադրանքով կը շարունակէ իւրայատուկ մօտեցում ցուցաբերել Մեծ Ոճիրին՝ Յեղասպանութեան, տարբեր մանրամասնութիւններուն ու երեսակներուն հանդէպ, այդպիսով այդ նիւթին հաղորդելով երկար կեանք: «*Ըստ երեւոյթին, Սփիւոքի*

մէջ անկարելի է փախուստ տալ Յեղասպանութենէն»³ իրաւամբ կը նշէ Լոռն Շիրինեան, իսկ Վահէ Օշական կը գրէ. «Առումով մը, 1915էն ետք գրուած ամբողջ գրականութիւնը որոշ առնչութիւն մը ունի Յեղասպանութեան հետ: ... Վերջիվերջոյ, Յեղասպանութեան ահաւոր փաստը, պատմուածքին մէջ ներկայ ըլլայ, թէ բացակայ, միակ գլխաւոր նիւթն է, որուն այսպէս թէ այնպէս կը վերաբերին բոլոր մնացեալները»⁴:

Այսօր, սփիւռքածին երրորդ-չորրորդ սերունդներու նոյնիսկ ոչ-հայախօս ներկայացուցիչները իրենց մէջ կը կրեն Եղեռնի «չսպիացող վերքը»: Ասոր վառ ապացոյցը Եղեռնին նուիրուած ոչ-հայագիր գրականութեան գոյութիւնն ու աճն է, որ վիպագրութեան, բանաստեղծութեան ու նոյնիսկ թատրերգութեան մարզին մէջ արտադրած է ու կ'արտադրէ ոչ-արհամարհելի թիւով գեղարուեստական գործեր⁵: Այդուհանդերձ, սփիւռքահայ գրականութեան ա՛յդ նիւթը գեղարուեստական որակի եւ գործերու քանակի առումով կը մնայ թերի:

Սոյն աշխատասիրութեան համար քննութեան ենթարկեցինք շուրջ 20 հայերէն թատրերգութիւններ: Ընտրութիւնը չկատարուեցաւ յատուկ սկզբունքով մը: Այստեղ ընդգրկուած են ե՛ւ սիրողական ե՛ւ վաստակաւոր թատերագիրներու գործեր: Նպատակն է ցոյց տալ Եղեռնի նիւթին անդրադառնալու «գայթակղութիւնը», պահանջը, դժուարութիւնները եւ ընդհանրութիւնները:

Ա. ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1.- Եղեռնի Յաճախանքը

Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութիւնը իր աղէտալի չափերով ահաւորագոյն փորձառութիւն մըն էր՝ «Որեւէ երեւակայութիւնէ վեր իրադարձութիւններով»⁶: Եթէ գրեթէ դար մը ետք, անիկա, մանաւանդ իր մանրամասնութիւններով, կը շարունակէ սահմոկեցնել հեղինակներն ու ընթերցողները, ապա պէտք է ունենալ լայն երեւակայութիւն, պատկերացնելու՝ վիճակը ականատեսներուն կամ ժամանակակիցներուն, որոնք կենդանի նահատակներ մնացին, անընդմէջ գտնուելով Ադէտին մղձաւանջին տակ: Լեւոն Չորմիսեանի *Եղեռնը* թատրերգութեան հերոսը՝ Ղեւոնդ, վերադառնալով հայրենի գիւղ, կ'ապրի խելագարեցնող պահեր. վերապրողին կեանքը մղձաւանջային է.

«Ի՞նչ է... իրական աշխարհն ալ... ուրուականներով բնակուած եւ մղձաւանջով լեցուն»⁷: Բոլոր գրողներն ալ ունէին Ղեւոնդի ապրումը, այդուհանդերձ պէ՛տք էր գրել: Դժուար է պատմել անպատմելին, սակայն գրականութիւնը, արուեստը ընդհանրապէս, իւրայատուկ խոստովանութիւն են նաեւ, աւելին՝ զայրոյթի, անզօրութեան եւ այլ հոգեվկիչ զգացումներէ լիցքաթափում: Սեդրաք Շահէն, *Տանջուածները* թատրերգութեան «Երկու խօսք»ին մէջ, խօսելով՝ չկարենալ գրելու երեւոյթին մասին, կը վկայէ. «Իմ միտքը [հայու տառապանքի կսկծեցուցիչ պատկերին] այդքան ծանրութեան չդիմացաւ, այլ հալեցաւ...»⁸: Սփիւռքահայ հեղինակները, որքան ալ գիտակցին, թէ Եղեռնի մասին գեղարուեստական գրականութիւն ստեղծելը՝ մանաւանդ թատրերգութեան պէս դժուար սեռ մը մշակելը վեր է իրենց կարողութենէն⁹, այդուհանդերձ արտայայտուելու, պարպուելու, ահագնագոյնը մոռացումէ փրկելու մտասուեռումը կը հալածէ զիրենք. ինչ փոյթ, թէ իրենց կը պակսի կարողութիւնը, հմտութիւնը թատերական սեռը մշակելու. հոս արդէն գեղարուեստական պահանջներն ու խնդիրները կը դառնան երկրորդական. կարելորը խօսիլ-պատմելն է, ի լուր աշխարհին յայտարարելը՝ հայոց կրած անօրինակ տառապանքներուն մասին: Աւելին. այս առնչութեամբ, Երեմիա Ս. Քէհեայեան, հարկ կը սեպէ ընդմիջել իր կերպարներուն խօսքը, թատրերգութեան սեռին խորթ հեղինակային ծանօթագրութեամբ մը մատնանշելով նման գործերու կարելորութիւնը. «...Այն պատկերները տեսնել թող չսոսկացնէ մեզ. այլ իբրեւ անշէջ կայծեր թող գրգռէ մեր վրէժի ու ատելութեան բոցը մեր ազատութեան պայքարը կարենալ շարունակելու համար»¹⁰...:

2.- Վաւերականութեան Անխուսափելիութիւնը

Եղեռնի թատրերգութիւններուն երկրորդ առանձնայատկութիւնը մասնակի վաւերականութիւնն է: Հեղինակներէն ոմանք կա՛մ ականատեսներ էին¹¹, կա՛մ ժամանակակիցներ, որոնք Ա. դէմքով տեսած-լսած էին մանրամասնութիւնները Ադէտին. հետեւաբար եղերական դէպքերը այնքան ծանր նստուածք թողուցած էին իրենց էութեան խորքը, որ անհնար էր ձերբազատիլ անոնցմէ: Ապա կար նաեւ ոճական խնդիր մը. իրական դէպքերը այնքա՛ն էին խօսուն,

իրաքանչիւր դժբախտութիւն իր եզակիութեան մէջ այնքա՛ն էր ընդհանրական, որ հարկ չկար դիմելու հեղինակային երեւակայութեան, ներկայացնելու համար Եղեռնի արհաւիրքները: Կար նաեւ կատարուածը աշխարհին ծանօթացնելու, հայոց կրած տառապանքները մոռացութեան չմատնելու անդիմադրելի մղում մը, որ անուղղակիօրէն կը ստիպէր գրողները դիմելու իրականութեան, կերպարները յականէ յանուանէ ընտրելու իրական անձնաւորութիւններէ, ինչպէս ըրած է Վահան Արսէնեան *Հաճընի Անկումը Կամ Յեղին Յարութիւնը* թատրերգութեան մէջ¹²: Ա՛լաւելի բարացուցական է Ս. Շահէնի պարագան. *Զէյթուն* թատրերգութիւնը գրելու համար հեղինակը դիմած է Զէյթունի 1895-96ի ապստամբութեան ղեկավար Ադասիին, որ հայթայթած է կարեւոր մանրամասնութիւններ¹³, որուն հետեւանքով բաւականին հանգամանալից տրուած են ինքնապաշտպանութեան անցուդարձերը: Նիւթով վաւերականութեան կը մատչին նաեւ Հրանդ Մարգարեանի *Երբ Արեւը Կը Լռէ*¹⁴, Մանուէլ Ադամեանի *Մեծ Եղեռն*¹⁵ եւ Հրանդ Հրահանի *Յաւերժ Անմահներ*¹⁶ թատրերգութիւնները, որոնք կ'անդրադառնան հայ մտաւորականներու ձերբակալութեան, արքորին ու սպանութեան նիւթին, յատկապէս կեդրոնական կերպար ունենալով Կոմիտաս Վարդապետն ու Ռուբէն Սեւակը¹⁷: Մարգարեան յաջողութեամբ ներգրուած է թատերական խորհրդապաշտական լուծումներ (գանկեր, Ռ. Սեւակի «Զարդին Խենթը» բանաստեղծութեան խորհրդապատկերը, մութի ու լուսութեան մէջ մի առ մի բարձրացող խաչեր են.):

Վաւերականութեան նպաստող ազդակներ են նաեւ լեզուի անհատականացման ձգտող փորձերը. Ս. Շահէնի քղեցի հերոսը կը խօսի իր բարբառով՝ *«Ըս քամպախ էրկրի ջուրնըլ ըսանկա, ձագո՛ւկ, տիրուն քոռը լցուկ»*¹⁸, Արսէնեանի տարեց կամ անուս հերոսները կը խօսին Հաճնոյ բարբառով՝ *«իյկընուցո բանլիքնին աս մայդուն քելն է. էսուէլ իթահոտ էիք թիւմդ ա, հա մնացէք բայէւ»*¹⁹, անդին ուրիշ հեղինակներ կը յաջողին գծել գիւղացիի կամ պարզ մարդու յաջողած կերպարը անոնց ժողովրդական դարձուածքներով լեցուն խօսքին ընդմէջէն, օրինակ Արամ Երէցեան՝ *«Խոյը եթէ եղջիւր չունենար, մաքին անոր պիտի չհնազանդէր»*²⁰, Անուշաւան Ֆրանկիւլեան՝ *«Տաճիկ մը սպաննեմ, աչքս պաց չերթամ ըսկից»*²¹ են.:

3.- *Խօսքին Ուժը*

Դժբախտաբար, բացի լաւագոյն թատերագիրներու հատուկէնս գործերէն, շատերու թատերագրական ոճն ու լեզուն կը մնան խոցելի: Այդպիսին է յատկապէս Արսէնեանի *Հաճընի Անկումը...*, որ ունի բոնագրօսիկ թատերական կառոյց եւ բարձր հռետորական ոճ՝ խառնուած բարբառային շերտերով, այնքան որ բառացիօրէն անկարելի կը դառնայ ընթերցումը: Հռետորութենէ ու գաղափարներու տողանցքէ կը տառապի նաեւ Քէհեայեանի *Գոյութեան Պայքարը*, որ հակառակ սիրային ու արկածային տեսարաններ ներմուծելու ջանքին, կը մնայ ասպարէզ գաղափարային կոչերու, որոնք կերպարները կը վերածեն հեղինակային խօսափողի: Նոյն կացութիւնն է Սուրէն Պարթեւեանի պարագային, որուն հերոսներէն մէկը կ'արտայայտէ այսպիսի միտքեր՝ «[Ս. Համաշխարհային Պատերազմին մասին] այն գարհուրելի համարագումը՝ որուն վարկածին առջեւ քաղաքակիրթ խղճմտանքը պակուցմամբ կ'ընկրկէր»²² եւն.: Եթէ տուեալ ոճական «առանձնայատկութիւնները» ըստ ոմանց որոշ չափով ընդունելի համարուին ընթերցանութեան համար սահմանուած գործերու մէջ, ապա բեմին վրան անոնք աւերներ կրնան գործել, որովհետեւ բեմական լեզուն, որ արդէն կը տարբերի վիպական կամ բանաստեղծութեան լեզուէն, ալ ուր մնաց ներկայացուի բարբառախառն կամ ճոռոմարան ոճով մը, որ կ'արգելակէ բեմ-հանդիսատես հաղորդակցութիւնը:

3. Օշականի *Երկինքի Ճամբովի*²³ նոյնպէս ունի իւրայատուկ ոճ: Յ. Օշականի յատկապէս վիպական եւ գրավերլուծական ստեղծագործութիւնները տեղ-տեղ կը տառապին ոճի խճողուածութեամբ ու բարդութեամբ: Այդ առումով, անոր թատերախաղերը (ո՛չ՝ քնարախաղերը) գրուած են համեմատաբար պարզ լեզուով մը, զոր իրաւամբ ոչ-գրքային, բայց հեռու առօրեայի տափակութենէն, կը համարէ Էլօ Սարաճեան²⁴: Թէեւ երբեմն Յ. Օշական ալ կ'իյնայ ոչ-բնական հռետորականութեան մէջ, օրինակ, հայագգի, բայց թուրքի կին հերոսուհին՝ Գանար, ամուսնոյն՝ Խալիլ պէյի, հետ վէճի մը ընթացքին, համարեա հայրենասիրական ճառ կ'արտասանէ²⁵: Գրիգոր Պըլտեան *Երկինքի Ճամբովի* լեզուն բաղդատելով նոյն հեղինակին *Աքլորամարտը*, *Նոր Պսակ* եւ *Կնքահայրը* թատերախաղերու լեզուին՝ կու գայ այն եզրակացութեան, որ

անոր լեզուն կը մնայ «*Հեղինակային խօսք*»ի սահմաններուն մէջ», այն պարզ պատճառով, որ «*չի լծորդուիր հասարակութեան մը հետ*»²⁶: Լեւոն Շանթ չի հաւատար գործողութիւնը փոխարինող բառին. ան կորսուած, չիրացուող ու չընկալուող կը համարէ այն կտորները, «*Ուր բառը մնացած է միայնակ, դարձած է միակ արտայայտիչ միջոցը հոգիին ու մտածումին*»²⁷: Իսկ Յ. Օշական մեծ համարում ունի թատերական երկխօսութեան վրայ. այս առումով ան գնահատելի կը գտնէ Թլկատինցիի թատրերգութիւնը²⁸. Երկխօսութիւնը կը տանի նկարագիրերու, կեանքի ճանաչողութեան, ուրկէ կը բխի թատրոնին նախանիւթը եւ կը վերածուի գործողութեան, որ «*ամբողջ թատրոնն է*»²⁹: Հաւատալով որ «*թատերական գործողութիւն մը առաջնորդելու մէջ մեր տկարութիւնը կը կործանէ մեր բոլոր շնորհները*», Յ. Օշական կը զանազանէ այն թատերախաղերը, որոնք գործողութիւնը փոխադրած են «*հոգեկան մակարդակին... այսինքն բառերը պարտաւոր են թէ՛ [գործողութեան] պակասը, թէ՛ ասոր արտայայտութիւնը ըլլալ*»³⁰:

Խօսքի ուժին հանդէպ Յ. Օշականի մեծ համարումէն մեկնելով կը հիմնաւորուի *Երկինքի Ճամբովի* Գանարին հռետորականութիւնը, կամ հայ հոգեւորականներուն՝ հաւատքով նահատակուելու, թէ ուրացումով փրկուելու տարակարծութիւնները, բոլորն ալ արտայայտուած խօսքի միջոցով: *Երկինքի Ճամբովի* զուտ հոգեբանական թատրերգութիւն մը չէ, սակայն, ինչպէս աւելի ուշ ալ պիտի տեսնենք - եւ ոչ միայն Յ. Օշականի պարագային - բռնի կամ վախէն ուրացած, թուրքի կին ու թուրք զաւակի մայր եղած հայուհիներու տասնեակ մը կերպարներ կան, որոնց տառապանքը աւելի հոգեկան է քան ֆիզիքական. նոյն է պարագան այն հայերուն, որոնք կը գտնուին ֆիզիքական կամ հոգեկան մահուան երկընտրանքին դիմաց: Բառն է որ պիտի յաջողի կամ ձախողի արտայայտել հոգեկան այդ տուայտանքը, տառապանքը որ կ'ապրին անոնք, որոնք Եղեռնը ներկայացնող սփիւռքահայ թատրերգութիւններուն ամենէն՝ յատկանշական եւ յաջող կերպարները պիտի կազմեն (այս մասին՝ աւելի ուշ):

4. - *Գաղափարական-Քաղաքական Կողմնորոշումներ*

Հոետորականութեան նպաստող ազդակ է նաև հեղինակներուն արտագեղարուեստական նպատակադրումները: Ցեղասպանութիւնը գուտ հակամարդկային ոճիր մը ըլլալէ աւելի, քաղաքական երեւոյթ մըն է, եւ ինքնաբերաբար պիտի արժանանար նաև քաղաքական գնահատանքի ու ծնունդ տար ազգային-գաղափարախօսական լոզունգներու, մեկնաբանութիւններու եւ զգար կարիքը համապատասխան բառապաշարի օգտագործումին: Հրապարակագրութեան մէջ սա միանգամայն բնական է, սակայն երբ հարցը կը վերաբերի գեղարուեստական գրականութեան՝ կը դժուարանայ միանշանակ դրական գնահատել ընդգծուած քաղաքական-գաղափարական ենթիմաստի առկայութիւնը, նոյնիսկ Եղեռնի գրականութեան մէջ: Անշուշտ կարելի է հասկացողութիւն ցուցաբերել հեղինակներուն հանդէպ, միշտ ի մտի ունենալ անոնց եւ գրական ունակութիւնները, եւ գրիչ ձեռք առնելու նպատակները, որոնք միշտ չէ որ կը հետապնդէին գեղարուեստական նպատակներ, ընդհակառակը ունէին գաղափարական ներքին յանձնառութիւն:

Քննութեան առնուած 20 թատերախաղերուն գրեթէ կէսին մէջ առկայ են սա կամ նա չափով գաղափարական-քաղաքական կողմնորոշումներ, որոնք կը թուլցնեն թատրերգութեան բնականոն զարգացումը եւ կը տկարացնեն անոր գեղարուեստական արժէքը:

Եղեռնապատումին լուսաւոր ու յուսատու աւարտ մը հաղորդելու համար, Ս. Շահէն եւ Քէհեայեան կ'անդրադառնան Հայաստանի վերածաղկումին՝ *«Արեան շիթերէն բողբոջներ փթթած են նորէն զարդարելու հողը»*³¹ կամ *«[Պայքարը] ասկէ վերջ դրօշակի պահպանման համար պիտի լինի»*³². ցաւէն ետք վերապրելու, յոյսի եւ տոկալու ուժի առհաւատչեան է Սփիւռքի երկունքը՝ *«Ազատ Հայաստան հաստատեր, դրօշակի տիրացեր եւ բանակներ կազմած ենք, որուն մէկ կենդանի օրինակը հոս ներսն է իր դպրոցովը, եկեղեցիովը, թատրոնովը ու լսարանովը»*³³ եւն.: Ցեղասպանութեան քաղաքական գնահատանքը հիմնականին մէջ կ'արտայայտուի յետ-պատերազմական մեկնաբանութիւններով. հեղինակները պարզապէս ժամանակային անցում կատարած են եւ իրենց հերոսներուն ըսել տուած են խօսքեր, որոնք աւելի ուշ մտած են լայն շրջանառութեան մէջ, ինչպէս գերման

մեղսակցութիւնը՝ «Տեղահանութիւնը զանգուածային մահացումի ամենէն անվրիպելի սիստեմն է գոր գերման նենգութիւնն ու տաճիկ վայրագութիւնը յղացան»³⁴, կամ «Իթթիհատը չի՛ պիտի փախցնէ մեզ ազգովին ոչնչացնելու այս երագուած ու ցարդ չի գործադրուած առիթը»³⁵: Որքան այժմեական կը հնչէ Գրիգոր Վահանեանի հերոսին խօսքը, գրուած 1932ին. «Չորպային մէջ մտած դգայը մածունին մէջ չի մտներ եղեր... ամմա հայուն արիւնը մտնող տաճիկը եւրոպացւոց մէջ կը մտնէ»³⁶: Պարսաւանքի կ'արժանանան նաեւ հայկական քաղաքական ու կրօնական իշխանութիւնները՝ «Պատրիարքը չէ՞ր գրած, կուսակցութիւններուն պետերը չէի՞ն հրահանգած, որ որեւէ ընդդիմութիւն ցոյց չտանք կառավարութեան»³⁷, կամ «Երբ 1908ի Սահմանադրութենէն յետոյ, ազատութիւնը նոր տեսնող մարդու չտեսութեամբ փռեցինք մեր արժէքներն ու կարողութիւնները հրապարակին վրայ, թուրքերուն մօտ արթնցուցինք նախանձի զգացումը»³⁸: Անշո՛ւշտ, կարելի է վիճարկել այս դատումներուն բովանդակութիւնը, սակայն մեր նպատակը աստիկա չէ: Պարզապէս աւելի ուշ ծնած մտորումներ, կարծիքներ, ժամանակին մէջ ետ երթալով, որոշ չափով կը խանգարեն գործին բնականութիւնը: Յամենայնդէպս միշտ պետք է վերլիշել, թէ նիւթը Եղեռնն է, իսկ հեղինակներուն նպատակը աւելի՛ն է գեղարուեստական երկ մը ստեղծել: Միտումնաւոր գրականութեան բարացուցական նմուշներ են ասոնք, ուր գրականութիւնն ու վկայութիւնը, ցան ու յոյսը, զայրոյթն ու վրէժը կարելի չէ սահմանազատել: Կարծես փնտռութի մէջ է գրողը, անհաստատ է անոր ստեղծագործութեան գրական-գեղարուեստական հիմքը, ահա թէ ինչու, Ռուբինա Փիրումեան կ'ընէ հետեւեալ հաստատումը. «Այդ մասին արտայայտուող արուեստի գործերը դեռ կը կրեն առեղծուածի մը, անհասանելի վախճանակետի մը կնիքը»³⁹: Եթէ վերլիշեալ դատումները, վիճարկելի ու տարժամանակեայ ըլլալով հանդերձ, հասկնալի են, ապա կուսակցական արտայայտութիւնները ամբողջովին անտեղի են. «Երբ կուսակցութիւնը ձեզ հետ է, ԱԶԳը ձեզ հետ է»⁴⁰, «Կարգ մը պահպանողական անզգամներ... թուրք կառավարութեան շնորհքին աչք տնկած կը ջանան միջնորդելու խաբկանքով մեր գունդերը թուլացնելը»⁴¹ եւ այլ հատուածամուկական ինքնագովասանքները կամ մրցակից կուսակցութեան նկատմամբ

ձաղկումները, կը տկարացնեն արդեն գրական ոչ-բացառիկ յաջողութիւն ունեցող երկերուն նաեւ գաղափարական նպատակադրումը:

Բ. ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄ ԹԱՏԵՐԳՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ի՞նչ Եւ Ինչպէ՞ս Գրել Թուրքին Մասին

Թուրքը. ահաւասիկ այն արգելակիչ ազդակներէն մին, որուն հետեւանքով Սփիւռքը դժուարացաւ գրելու իր եղերական ծննդոցին մասին: Ինչպէ՞ս կերպաւորել գրականութեան մէջ ոչ միայն այն՝ ինչ կը կոչուի թուրքի նախատիպար, այլեւ այն որ աւելի ընդգրկուն տարողութիւն ունի, եւ կը կոչուի թրքութիւն: Սակայն կարելի չէ գրել Եղեռնին մասին առանց թուրքին: Այդպիսով գրականութեան մէջ վերայայտնուեցաւ թուրքի կերպարը: Արեւմտահայ գրականութեան անձանօթ չէ եղած ջարդարար թուրքը: Մինչեւ 1908, օսմանեան գրաքննութեան պայմաններուն տակ կարելի չէր գրել թուրքին մասին: Կիլիկիոյ Աղէտին (1909) կապակցութեամբ արդէն բաւական շեշտակի գոյներով կերպաւորուեցաւ թուրքը Սիւսանթոյի *Կարմիր Լուրեր Բարեկամէս*, Զապէլ Եսայեանի *Աւերակներուն Մէջ*, Պարթեւեանի *Կիլիկիոյ Արհաւիրքը* եւ այլոց գործերուն մէջ: Յամենայնդէպս, դեռ կարելի չէր եղած ամբողջովին ցոլացնել թուրքի կերպարը: Այդ աշխատանքին ձեռնարկեց Յակոբ Օշական *Մնացորդացի* միջոցաւ, որուն «Երրորդ աշխարհը» «Դժոխքը» պիտի նուիրէր Եղեռնին, սակայն չկրցաւ լրումի հասցնել իր նպատակը⁴²:

1ա.- Թուրքը՝ Ատելութեան Եւ Ցասումի Կրողը

Եղեռնին մասին պատմող սփիւռքահայ թատերգութեան մէջ բնականօրէն մեծ տեղ կը տրուի թուրքերուն: Սակայն թատերագիրներէն ոմանք, հետաքրքրական դեր մը վերապահած են անոնց: Բացի թատերական կերպար մը ըլլալէ, անոնք հեղինակներուն ատելութեան, ցասումին կրողներն են: Ոմանք բացայայտօրէն, ուրիշներ անուղղակիօրէն կը պատկերեն գազանացած, արինարբու մարդու կերպարը, ատով ալ իրենց կեցուածքը արտայայտելով արդէն վաւերականութեան մատչող թատերական վայրենի արարքներու հեղինակներուն հանդէպ: Հակաթուրք արտայայտութիւնները երբեմն կ'արտայայտուին սեւ

հեզնանքով՝ «[Հին թուրքը] իր գոհը նո՛յնհետայն կը հափափէր... նորը տեսակ մը պշտանք կը դնէ իր ոճրագործութեան մէջ»⁴³, «Դուք էք որ ձեզի համար գոհաբերուող ջեղ մը կոտորելու, բնաջնջելու մէջ դրիք սա հեշտանքը, մեծավայելուչ անգթութիւնը»⁴⁴ եւն.: Անոնք յաճախ ձեռք կը ձգեն նաեւ մղձաւանջային վերյուշի կերպարանք, ինչպէս Մանուկ Խանպէկեանի հերոսուհիին մղձաւանջին թրքուհի կինը, որ դիւային քրքիջներով մեռելական պար կը պարէ հայ նահատակներու կողերուն վրան⁴⁵, կամ Քէհեայեանի Չապէլն ու Չարեհը, որոնք կը վերյիշեն մարդակերութեան դէպքեր եւն.⁴⁶: Աւելին. ջարդարար թուրքը քանիցս, կատաղօրէն ու անզիղջ կը խօսի ի՛ր իսկ կատարած «քաջագործութիւններուն» մասին. կու տամ միայն քանի մը յատկանշական օրինակներ. «Ինչ սքանչելի հաճոյք մըն է բռնի կողոպտել ու անպատիժ մնալ»⁴⁷, «Իմ ձեռքովս միայն քսան անհաւատներ եմ սպաննած»⁴⁸ եւն.: Անշուշտ սեփական ոճիբին մասին թուրքին բացայայտօրէն խօսիլը յագուրդ կու տայ մեր ազգային զգացումներուն. մինչ, իսկութեան մէջ թուրքերը կ'ուրանան իրենց ոճիբը, թատերական *virtual* իրականութեան մէջ մենք խոստովանիլ կու տանք իրենց գործած ոճիբը, եւ այն ալ ինչպիսի՛ բնապաշտական մանրամասնութիւններով:

Հաւասարակշռելու համար ինքնաձաղկումը, հեղինակները տուած են նաեւ թուրքերուն «արդարացումները». «Միշտ ուրիշէն բարձր կը զգաք դուք ձեզի... ձեզ ջարդողներն իսկ խեղճ մարդիկ կը սեպէք»⁴⁹, «Իմ հայրենիքիս մէջ ձե՛ր հայրենիքը կը քարոզէ: Մեր դուրսի մեծ թշնամիին հետ թշնամի մըն ալ դուք էք, նե՛րսը՝ մե՛ր երկրին մէջ»⁵⁰ եւն.: Սա ալ հեղինակային չեզոքութեան պահպանման թատերագիրներուն քիչ մը բռնագրօսիկ, գեղարուեստականօրէն չյաջողած փորձը պէտք է սեպել:

Եղեոնապատում թատերգութիւնը գերծ չէ նաեւ թուրքին կողմէ հայուն վերագրուող առաքինութիւններուն, հայուն գովաբանութեան փաստերուն ու անոնց պատճառներուն խոստովանութիւններէն: Սփիւռքահայ թատերագիրները չեն բաւականացած ջարդարարներուն ինքնաձաղկումով՝ «Զրկուեցինք աշխատատր եւ շինարար դրացիներից... մեր միջոցով կոտորել տուին մեր բարեկամներին»⁵¹ եւն., անոնք թուրքին բերնով գովքը ըրած են հայուն աշխատասիրութեան, հաւատքի անսասանութեան, տոկունութեան՝ «Հառաչանքով

պիտի փնտռենք խլուած ժողովուրդի կորույթի [աշխատող] բազուկը»⁵², «Իրենց կեանքը վրայ կու տան բայց ազգութիւննին եւ հաւատքնին չեն փոխեր»⁵³ եւն.:

Հարիւրամեակ մը յետոյ, արդէն շատ փաստեր յայտնի են աշխարհին, ըլլա՛յ քաղաքական, ըլլա՛յ ռազմավարական առումով, թէ ինչո՛ւ տեղի ունեցաւ Յեղասպանութիւնը: Կատարուած եղեռնագործութիւնը միջոտ ալ ծնունդ տուած է ու կու տայ հարցադրումներու ինչո՛ւ, ինչպէ՛ս այսքան անգթութիւն եւն.: Նոյն հարցումները յուզած են հայ գրողները նոյնիսկ Եղեռնի օրերուն: Ս. Շահէն դեռ 1917ին հրատարակուած *Գարկառուն Կամարներ* թատերախաղին մէջ կ'անդրադառնայ թէ՛ ջարդերուն, թէ՛ Գարահիսարի ինքնապաշտպանութեան, կը փորձէ հարցումներ տալ, պատասխաններ գտնել, նիւթը կը կորսուի դասակարգային պայքարի գաղափարախօսութեան մէջ⁵⁴, սակայն կը ջանայ հասկնալ թուրքին հայատեացութիւնը:

Վերոյիշեալ թրքական ամբաստանութիւնները՝ թէ *«հայը գերակայ կը զգայ ինքզինք»*, *«հայը ռուսին հետ թուրքը կը հարուածէ»* եւն., չեն բաւականացներ սփիւռքահայ դարձած թատերագիրը. ան կը պեղէ թուրքին հոգին եւ կը յայտնաբերէ բնագոր: Յ. Օշականի Խալիլը պատասխանն է «ինչո՛ւ» հարցումին: Խալիլ զարգացած, Եւրոպա տեսած, ուսանած նոր թուրքն է, որ Շիլլէր կը կարդայ, սակայն իշխանութեան սա կամ նա պահուն իր ու նմաններուն *«կիսամութ բնագոյները իրենց լրումին»* կը հասնին, ու անոնք կը ճեղքեն գերմանական դաստիարակութեան *«կեղծ պատմուճանք»⁵⁵* եւ թրքութեան անգերազանցելիութեան զգացումէն մղուած ու հայրենիքին սերը պատրուակելով յազեցում կու տան բռնութեան բնագոյներուն⁵⁶: Նման դատում ունի նաեւ Ֆրանկիլեան. ան թուրքին ընել կու տայ հետեւեալ ինքնաբնութագրումը. *«Պէտք է մարդ սպաննել սորվիս. այս է թուրքերուն տիրապետելու (իմա՛ իշխելու - Ա.Բ.) միջոցը եւ դարերով սնուցած բնագոր»⁵⁷:*

1բ.- «Միւս» Թուրքը

Արիւնարբու թուրքին դիմաց հարկ էր պատկերել նաեւ «միւս թուրք»ը, այն որ կարեկից էր գոհերուն, փորձեց թէթեւցնել անոնց տառապանքները: Հազուադիւտ են ազնիւ, զղչացող կերպարները. անոնցմէ են Քէֆէլեանի թուրք երախտապարտ գաղթական

Հասանք, որ կ'ապրի հայուն տունը եւ տեղահանութեան ժամանակ թաքստոց կը տրամադրէ տան տղամարդոց. «*Այսքան ժամանակ է ձեր հացը կ'ուտենք*»⁵⁸, կամ Յ. Օշականի Ֆայիտ Պէյը, որուն կինը գերմանուհի է. Ֆայիտ չի հաւատար ազգերու տարբերութեան, «*Աստուած սրտերը մէկ խմորէ շինած է, եւ մենք ենք որ այդ խմորին գոյն ու անուն տուեր ենք*»⁵⁹ եւն.: Չորմիսեան նոյնպէս ունի «միւս թուրք»ի օրինակներ իր հայուհի կինը սիրող թուրք ամուսին մը, գործած եղեռնագործութիւններուն համար զղջացող մը, որուն մեղայականը սոսկալիօրէն բռնազբօսիկ է եւն.:

Բարեսիրտ «թուրք»ի կերպարի առումով հետաքրքրական է այլ մօտեցում մը: Չկարենալով ժխտել նաեւ ազնիւ թուրքերու գոյութիւնը, Շահան Նաթալի եւ Ֆրանկիլեան, իրենց ազնիւ թուրք կերպարներուն մէջ կը յայտնաբերեն... հայու արին: «*Ով որ անզիններ, ծերեր, կիներ ու մանուկներ կը կոտորէ, ան վատ է*»⁶⁰ յայտարարող, հայ կին մը ու դեռատի աղջիկ մը ազատելու համար թուրք ջարդարարը սպաննող, յայտնի թուրք ընտանիքի զաւակ Ասլանը, ի վերջոյ կ'իմանայ, թէ ինք, նոյն այդ կնոջ զաւակն է, եւ առեւանգուած է մանուկ ժամանակ: Նոյնպէս, Ֆրանկիլեանի *Արիւնի Մարտրին* թուրք կերպարներէն Նուրի, որ հօր ու եղբօր ստիպումով սպաննած է իրենց տան հայ պարտիզպան Տիգրանը, կ'իմանայ թէ վերջինս իր ու քրոջ՝ Եշալի հայրն է, եւ իրենք ծնունդ են ապօրինի կապերու: Կը պարզուի երկուքին հայասիրութեան ակունքը:

Անշուշտ, իրականութեան մէջ եղած են դէպքեր, երբ հայ ընտանիքներէ առեւանգուած կամ հայու հետ կենակցութենէ ծնած են «թուրք» տղաք ու աղջիկներ, սակայն գտարիւն թուրքին ազնուութեան ժխտումը, իսկ բացառութիւններուն մէջ անպայման հայու արին տեսնելու հեղինակներուն ենթակայական մօտեցումը, մղած է զիրենք բռնազբօսիկ ճիգով մը զգայացունց, խորհրդաւոր, անհամոզիչ գործողութիւններ սարքելու, որոնք աւելիով տկարացուցած են թատերգութիւններուն կառոյցը:

1գ.- Հայը Եւ Թուրքը

Հայ հասարակութիւնը որքան ալ պատրաստ չըլլայ արծարծելու հայ-թուրք «սիրային» յարաբերութիւններու նիւթը, սակայն կարելի չէ ամբողջովին ուրանալ անոր գոյութիւնը, որուն

որոշ ուղղակի-անուղղակի անդրադարձներուն կը հանդիպինք նաեւ սփիւռքահայ թատրերգութիւններուն մէջ:

Նախեւառաջ հարկ է նշել, որ Մեր՝ բառին բովանդակ իմաստով, գոյութիւն չունի մեր քննարկած թատրերգութիւններուն հերոսներուն միջեւ: Հազուադէպ պարագաներու, անիկա միակողմանի զգացում մըն է թուրքին կողմէ, որ թէեւ չի բախիր հայուն ամբողջական մերժումին, սակայն հաւասարապէս ալ չի փոխադարձուիր: Այդպիսին է Չորմիսեանի թուրք կերպարներէն Մեհմետի սերը Տիգրանուհի-Լուիֆիէի հանդէպ. կնոջ նկատմամբ ծագած հրապոյրը սիրոյ կը փոխուի. նախկին ջարդարարը կը խոստովանի իր արարքները, միաժամանակ կը յայտնէ նաեւ, թէ «*Թուրք ըլլալով մարդը չէ մեռած*»⁶¹ իր մէջ: Յամենայնդէպ Մեհմետի մարդկային զգացումները համոզիչ չեն թուիր. անոր հոգեփոխութիւնը չ'երեւիր թատրերգութեան մէջ: Միակողմանի սեր մըն է նաեւ Երեցեանի քրտուհի կերպարին՝ Նուրիէի սերը Գէորգ Չաուշին հանդէպ. հայ ֆիտայիին քաջութեան համբաւը կ'առինքնէ քիւրտ ցեղապետին կինը, որ կը համարձակի նոյնիսկ մասնակցիլ Առաքելոց Վանքի կռիւին, սերը կը խոստովանի վանահօր, կը համբուրէ Գէորգը եւ անոր նահատականութենէն ետք երկա՛րօրէն գովքը կ'ընէ անոր խիզախութեան եւն.: Այստեղ ալ, հեղինակը չէ կրցած կամ չէ ուզած ստեղծել քրտուհի-Գէորգ Չաուշ կապը. Գէորգին հանդէպ սիրոյ զգացում տաժող քրտուհին, պարզապէս միջոց է, արտայայտելու համար նաեւ ոչ-հայերու ակնածանքը, սերը հայ քաջամարտիկին հանդէպ: Թատերախաղին յուզական մթնոլորտ հաղորդելու նպատակով սիրային միջամտութիւն մը կատարած է նաեւ Ֆրանկիլիւեան: Եշալի (որ թրքուհի է, բայց ծնունդ է հայ պարտիզպանի ու թուրք մօր արտամուսնական կապի) եւ Սեպուհ Արծրունիի (նոյն այդ պարտիզպանին որդին) միջեւ փոխադարձ սեր կայ. սակայն այս յարաբերութիւնը նոյնպէս իր զարգացումը չ'ապրիր, որովհետեւ հեղինակին նպատակը եղած է առաւելաբար շեշտել հայրենակցական կապի ու արեան կանչի գործօնը, քան սիրավէպ մը հիւսել: Եշալ ու Սեպուհ նախօրօք չէին գիտեր, բայց հեղինակը գիտէ՛ր որ անոնք քոյր-եղբայր են: Եւ այդպիսի կապի մը անգիտակից երիտասարդներու միջեւ ձեւաւորուող սիրավէպ-կենակցութիւն մը, նոյնիսկ այդպիսի պայմաններու տակ անընդունելի էր նոյնինքն հեղինակին համար. լուծումը

պատրաստ է. Սեպուհի նահատակութեամբ ի չիք կը դառնայ նման զարգացում մը: Նման է պարագան Նաթալիի *Ասլան Բէկ* գործին Ասլանի եւ անոր հօր երկրորդ կնոջ՝ Ճեմիլէի՝ յարաբերութեան: Նոյնիսկ Ասլանի հայ ըլլալուն յայտնութիւնը՝ այսինքն Ճեմիլէի ամուսնոյն հարագատ գաւակը չըլլալը, արդարացում չէ նման յարաբերութեան. Ճեմիլէ պաշտպանելու համար Ասլանը, կը սպաննէ ամուսինն ու ինքզինք: Հեղինակները պարզապէս ուզած են ցոյց տալ նման երեւոյթներու գոյութեան հնարաւորութիւնը, մանաւանդ՝ խճճուած յարաբերութիւններու մէջ, թերեւս ալ զգայացունց շունչ մը հաղորդելու թատերախաղերուն. ստոնցմով հանդերձ, նշուած թատերախաղերուն կառոյցն ու դէպքերուն թաւալքը կը շարունակեն մնալ թոյլ:

Խանայէկեանի Նազէ-Նազըն սիրած է թուրք ամուսինը, որուն հետ ամուսնացած է հայ ամուսնոյն նահատակութենէն ետք, միակ գաւակը ողջ պահելու համար: Ազնիւ մարդ եղած է Ազիզ, նոյնիսկ «*Յիսուսը պաշտելու*» ազատութիւն տուած է Նազընին, քայց արկածամահ ըլլալով, կիւնը մնացած է դաժան տագրոջ ու ռիսկալ կետրոջ հետ: Իսկ Անդրանիկ Կոնստանի Ճեմիլէ-Նուարդը մեծցած է իբրեւ իսլամ թրքուհի⁶²: Ուշ իմացած է իր ծագումին մասին. հարց չունի թուրք ապրելու մէջ, մանաւանդ կը սիրէ իր ամուսինը. սակայն երբ ան ու կեսուրը կ'իմանան իր հայու ծագումին մասին, զինք ու նորածին գաւակը դուրս կը դնեն տունէն: Նուարդ անձնասպան կ'ըլլայ: Եթէ հայն իսկ ընդունի, թո՛ւրքը, այս պարագային, կը մերժէ հայու հետ կապը:

Որքա՛ն ակնյայտ է բոլոր թատերագիրներուն ալ բացայայտ վերաբերմունքը հայ-թուրք կենակցութեան հարցին: Բոլոր պարագաներուն ալ անիկա դատապարտուած է ձախողութեան. բոլորին մէջ ալ կողմերէն մէկը կը մահանայ, կա՛մ անձնասպանութեամբ, կա՛մ սպանութեամբ: Հետեւաբար, ներկայացնելով հանդերձ նման կարելիութիւններ, դէպքեր՝ բոլոր հեղինակներն ալ միահամուռ արտայայտիչն են նման կապերու բարեյաջող եւ ուրախ աւարտի անկարելիութեան ազգային վերաբերմունքին: Դժբախտաբար սակայն, հեղինակներուն մեծամասնութիւնը, իր, թէկուզ ենթակայական վերաբերմունքը չի յաջողիր մատուցել համոզիչ կերպով: Այո՛, ստեղծուած են արկածային վիճակներ, արտաքին յարաբերութիւններու

հանգոյցներ, փորձ ալ եղած է որոշ չափով ներկայացնելու հոգեկան ապրումներ, սակայն անոնք ընդհանրապէս չեն վերաճած տրամաթիք պահերու, հոգեբանական բախումներու:

2.- Փափուկ Մեռի Ողիսականը

2ա. Թուրքի Մը Կինը Եւ Թուրք Չաւակի Մը Մայրը

Սփիւռքահայ թատրերգութիւններուն մէջ յաճախակի յայտնուող, Եղեռնի ծանրութիւնը իրենց ուսերուն կրող կերպարներէն ամէնէն աւելի կայացածներն են կիները՝ յատկապէս բռնի կամ ստիպուած ուրացած եւ թուրքի հետ ամուսնացած հայուհիները:

Առեւանգում, բռնաբարութիւն, բռնի ամուսնութիւն եւ զակի ծնունդ, մայրական սիրոյ ու ազգային զգացմանց միջեւ տուայտանք եւ այլ տագնապներ կը կազմեն Եղեռնէն անցած հայ կիներու ստուար մէկ զանգուածին հոգեկան կեղեքումին տարբեր երեսակները: Իբրեւ թէ փրկուած այս հայ կիներուն ապրած կեանքը վերածուած է աւելի ահաւոր դժոխքի, քան՝ մահը այն միլիոնին, որոնք արժանացան նահատակութեան փառքին: Ասոնք կենդանի նահատակներն էին, որոնք եթէ իմանային իրենց վիճակուած ճակատագիրն ու հոգեկան լլկումը, թերեւս նախընտրէին մեռնիլ, սակայն անոնց վիճակուած էր ապրիլ, ու կրել ուրացողի, թրքացածի խարանը: Լուրթֆիէի վերածուած Տիգրանուհի կ'ապրի այդ հեռանկարին ահաւորութիւնը. «Վաղն ալ բոլոր մարդիկը (իմա՝ հայերը - Ա.Բ.) Լուրթֆիէն պիտի տեսնեն իմ մէջ: ...Պիտի տեսնեն միշտ թուրքի մը կինը եւ թուրք զաւակի մը մայրը»⁶³:

Կարգ մը հասարակաց յայտարարներ կը միացնեն այս կիները: Գլխաւորաբար իրենց զակին սէրը եւ անոր պաշտպանութիւնն է, որ կը մղէ զիրենք հանդուրժելու իրենց անտանելի կեանքը. Չորմիսեանի Տիգրանուհի-Լուրթֆիէն, Խանպէկեանի Նազէ-Նազըն, Պարթեւեանի Սիրանուշը, Ս. Փարսադանի Մարօն, բոլորն ալ կը հանդուրժեն ուրացումը, թրքացումը, նուաստացումները յանուն իրենց որդիներուն, որոնք երբեմն ծնունդ են նաեւ թուրքի, այսինքն պարզապէս թուրք են. «Մայր մը կրնա՞ յ լքել եւ ուրիշին յանձնել իր զաւակը. ...ի՞նչ որոշեմ կեանքի այս աքցանին մէջ սեղմուած»⁶⁴ կը տատամսի Տիգրանուհի, մինչ հայ հօր ծնունդ երեխան չկորսնցնելու, զայն ողջ պահելու համար

Մարո «Երեխային մեծացնելու նպատակով հաշտուեցի իմ դաժան բախտի հետ»⁶⁵ կ'ըսէ:

Այլ ընդհանրական յատկանիշ մը որ կ'անցնի այս տիպի կերպարներուն ընդմէջէն, անձնասպանութեամբ իրենց կեանքին վերջ տալու երեւոյթն է. այդպէս են նոյն Սիրանուշի եւ Տիգրանուհիի, նաեւ Ս. Շահէնի Եղունիկի ու Կռանեանի Նուարդի եւ այլոց պարագաները. Սիրանուշ եւ Եղունիկ անձնասպան կ'ըլլան քրիստոնէութեան վերադառնալով. Սիրանուշ ինքզինք կը սպաննէ Քրիստոսի խաչելութեան պատկերին առջեւ, Եղունիկ գաղտնօրէն խոստովանանք ըլլալէ եւ հաղորդութիւն առնելէ ետք թունաւոր խնձորով կը սպաննէ ինքզինք ու թուրք ամուսինը:

Պատմութիւնը կը վկայէ, որ իսկապէս դաժան ճակատագիր վիճակուած է այս կիներուն⁶⁶: Մեծ մարդասէր, հայասէր ու բարեգործ դանիացի Քարէն Եփփէ, որ Հալէպի մէջ յատուկ աշխատանք կը ծաւալէր հայ կիները պատսպարելու, զանոնք ինքնաբաւ դարձնելու, պսակելու ուղղութեամբ, կը մերժէր ընդունիլ թուրքերէ փախած հայ կիներուն թուրքի կամ իսլամի ծնունդ զուակները⁶⁷, ուստի այդ կիներէն ոմանք կը վերադառնային իրենց թուրք ամուսինին, չդիմանալով իրենց զուկին կարօտին: Յամենայնդէպս, զուկի սիրոյն թրքացած կիներուն մարդկային «տկարութիւնը» հասկնալով հանդերձ, այս հեղինակներուն մեծամասնութիւնը զանոնք չէ ընդունած հայկական միջավայր, այլ, անոնց ըմբռնելի, բայց աններելի «մեղքը» քաւել տուած է անձնասպանութեամբ, որ ըստ իրենց հայեցողութեան, լաւագոյն միջոցն էր ինքնամաքումի: Ներումի չ'արժանանար նոյնիսկ Կռանեանի Նուարդը, որ «Ազգս չեմ ճանչցած, կրօնս չեմ գիտեր»⁶⁸ կը վկայէ, չի կրնար բաժնուիլ իր վարժուած տարիներու կեանքէն եւ հարստութեան ու ամուսնութեան հեռանկարէն: Տասնամեակներ ետք վերագտնուած մայրն ու եղբայրը չեն ներեր իրենց հարազատին այս թուլութիւնը. իսկ երբ անոր ամուսինն ու կեսուրը կ'իմանան իր հայ ըլլալը, կը վռնտեն զինք ու զուակը. Նուարդ կու գայ մօր մօտ, անոր յանձնելու իր զուակը, որ հիմա «Մերկ է, ո՛րք է... հայ դարձաւ», ու ինքզինք թունաւորած ըլլալով կը մեռնի⁶⁹:

2բ. Հայ Մայրը «Հայ»ուն Եւ «Մօր» Միջեւ

Եղեռնին նուիրուած սփիւոքահայ թատրերգութիւններուն ընդհանրական կերպարներէն են մայրերը: Անտոնեանի *Այն Սեւ Օրերուն*⁷⁰ գործին կերպարներուն մասին խօսելով, Յ. Օշական կը գրէ. «Ուշագրաւ է որ պատկերներուն կէսը գայ **մայրերու** (ընդգծ. հեղինակին - Ա.Բ.) տրամայէն, մեր գրականութեան մէջ *pontif* (առաջնակարգ - Ա.Բ.) դարձած նիւթ, ու այդ մայրերը, նոյնիսկ հոն, ուր դադարն է պարտադիր՝ բոլոր զգայական իրողութիւններուն, գտնեն իրենց տիրական, սիրտ բզկտող իմաստը, ցեղային իրենց *խորհուրդը*»⁷¹: Սփիւոքահայ թատրերգութեան մէջ մայրերը ունին հիմնական երկու դրսեւորում: Ոմանք ականջալուր են իրենց մայրական բնագոյնին, կը պաշտպանեն կամ կ'ըմբռնեն իրենց զաւակներուն թրքանալու ընտրանքը, «Ճարպիկն ու կտրիճը անոնք են, որոնք միջոցով մը ինքզինքնին կ'ապրեցնեն որ վաղը հայ ազգը յաւերժանայ»⁷², բայց ի հարկին պատրաստ են վրէժ լուծելու իրենց դժբախտութեան պատճառէն, ինչպէս կ'ընէ Հուրի-Նուրիէն, որ կը սպաննէ աղջկան վրայ բռնացող անոր տագրը, ըսելով «Տասնէօթ տարի այս վայրկեանին սպասեցի»⁷³: Հակառակ խառնուածքին կը պատկանին միւս մայրերը. Կոստանի թատրերգութեան Ճեմիլէ-Նուարդին մայրը, տեսանք թէ չհասկցաւ աղջկան կացութիւնը, պահանջեց լքել ամէն ինչ ու հետեւիլ իրեն, իսկ անդին, այլ հայ մայր մը, զէյթունցի Մառա, բողոքական կրթութիւն ստացած իր դեռատի աղջիկը կը մեղադրէ կռիւէն խրտչելուն համար, ու կ'ըսէ «Կը նախընտրեմ քեզ չուանով խեղդել՝ քան թողուլ որ վախկոտ վարժուհիներու մեղկ քարոզներէն Ձէյթունցիի արիւնդ ջլանայ, թուլնայ ու իյնայ...»⁷⁴: Հետաքրքրական է, որ յաճախ հռետորաշունչ, գաղափարակիր թատերագիրները, մայր-դուստր յարաբերութեան հարցին մէջ զգալիօրէն մեկդի դրած են իրենց ազգասիրական միտումները եւ փոխանակ առաւելաբար ցայտուն դարձնելու վերոյիշեալ մօր նման հերոսական կերպարները, տուրք տուած են «թոյլ ու տկար» բայց մարդկային կերպարներու: Թատերագիրները մարդկայինը շեշտելով, ուզած են ստեղծել տրամաթիք վիճակներ, զգացական, նոյնիսկ զգայացունց կացութիւններ, որոնք թատրերգութիւններուն պիտի հաղորդէին կենդանութիւն, մանաւանդ ներքին ու արտաքին բախումներ, որոնցմէ պիտի շահեր երկը:

3. Թերի Կամ Բացակայ Թատերական Կերպարներ

3ա.- Այր Մարդը

Հակառակ որոշ չափով յաջող, ու համեմատաբար ամբողջական կերպով ներկայացուած կին կերպարներուն, Եղեռնի նիւթով գրուած սփիւռքահայ թատրերգութիւններուն գլխաւոր կերպարներուն մէջ համարեա չկան կայացած այրմարդու տիպարներ: Անոնք գլխաւորաբար հանդէս կու գան իբրեւ հեղինակին կարծիքներուն, մտորումներուն, գաղափարախօսական հակումներուն արտայայտիչը, հազուադէպ վերածուելով ներքին կամ արտաքին բախումներու մէջ գտնուող հերոսներու:

Ս. Շահէն *Տանջուածները* թատերախաղին մէջ կը համարձակի քահանայ Տէր Յակոբը մոլլա դարձնել, սակայն անոր կու տայ լուսանցքային դերակատարութիւն, յառաջ մղելով կնոջ եւ աղջիկներուն ողբերգութիւնը: Գ. Վահանեանի *Մուրադը*, *Չորմիսեանի Ղեւոնդը*, *Կռանեանի Արան*, *Փարսադանի տերվիշ ծպտուած ամուսինը*, դէմ յանդիման կու գան իրենց թրքացած նշանածին, քոյրերուն կամ կնոջ, սակայն սովորական զայրոյթէ մը, բարձրագոյ խօսքերէ անդին չ'անցնիր անոնց վերաբերմունքը: Անդին, *Քէֆէլեանի*, *Արսէնեանի*, *Ս. Շահէնի*, *Ֆրանկիւլեանի* վաւերական կամ մտացածին հերոսները, որոնք նաեւ ինքնապաշտպանութեան կազմակերպիչներ են, ժողովի սեղաններու շուրջ անընդհատ պատմութիւն կը պատմեն, անիմաստօրէն կը վիճին, հռետորական ճառեր կ'արտասանեն, եւ եթէ նոյնիսկ գտնուին ինչ-որ դէպքերու հանգոյցին մէջ (օրինակ բանտարկութիւն, կտտանքներ եւն.) այնտեղ եւս չեն յաջողիր կենդանանալ. *Ֆրանկիւլեանի Սեպուհն* ու *Աւետիքը* այնպիսի ահաւոր չարչարանքներու կ'ենթարկուին, որ ոչ միայն չեն կքիր, այլեւ հոգեկան արդէն անհամոզիչ արիութեամբ կը ձաղկեն զիրենք տանջողները:

Նոյնպէս համոզիչ չի դառնար *Գեորգ Չաւուշի* մարդկային կերպարը. պատանութեան, իբրեւ Սասունցի Դաւիթ մը կը ներկայացուի ան: Յետագային, նոյնիսկ ահագնագոյն հոգեկան վիճակի մէջ՝ ստիպուած կ'ըլլայ ենթարկուիլ մատնիչ հորեղբայրը սպաննելու հրահանգին, պահ մը կը մարդանայ, ներքին բնական տառապանք մը կ'ապրի, զոր հեղինակին միջամտութեամբ անմիջապէս կը դարմանուի, երբ մահամերձ հորեղբայրը կը ներէ

իր եղբորորդին: Մարդ կը տարուի մտածելու, որ հերոսներուն չեն վայելէր հասարակ մահկանացուներու զգացումներ: Նոյնիսկ էթէ ոմանք փորձած են զանոնք նաեւ իբրեւ սովորական մարդիկ պատկերել, յատկապէս սիրային, քնարական պահերու մէջ զետեղելով զանոնք, այնուամենայնիւ համոզիչ չեն դառնար իրենց այդ փորձին մէջ⁷⁵:

Միայն կարելի է ափսոսալ, որ Եղեռնին նուիրուած սփիւռքահայ, առանց այդ ալ խոցելի թատրերգութիւններուն կերպարներու կերտումը կը մնայ թերաճ, այդ մարդ կերպարի բնական, բանական ու կենդանի ներկայութեան չգոյութեան պատճառով:

3բ. Ասպնջական Արաբը

Յատկապէս Միջին Արեւելքի մէջ ապրող հայերուն ազգային հոռտորութեան մէջ անպակաս է «ասպնջական արաբը»՝ ան, որ «իր դռները լայն բացաւ հայութեան դիմաց» եւն.: Պատմութեան հանդէպ մեղանշում եւ արաբին հանդէպ ապերախտութիւն է ժխտել այդ իրողութիւնը: Սակայն հետաքրքրական, զարմանալի ու նոյնիսկ վրդովեցուցիչ է այդ արաբին բացակայութիւնը Եղեռնին նուիրուած թատերախաղերուն մէջ: Անմիջապէս ըսենք, որ այդ թերութիւնը յատուկ չէ միայն թատրերգութիւններուն: Արձակին մէջ ալ այնքան լուսանցքային ներկայութիւն են այդ կերպարները, որոնք ոչինչ կը յաւելուն նիւթին, եւ մանաւանդ չեն դառնար որակ: Մեր՝ «Արաբի Կերպարը Լիբանանահայ Գրականութեան Մէջ»⁷⁶ յօդուածին մէջ, հակառակ մեր բուն ցանկութեան, չկրցանք մէկ տասնեակ տողէ աւելի տեղ յատկացնել Յեղասպանութեան նիւթին մէջ արաբի դրական կամ ժխտական կերպարին: Իսկ մեր ուսումնասիրած թատրերգութիւններուն մէջ, անոնք գրեթէ չկան:

4. «Ու ը Ես Տէր...»

Եղեռնին նուիրուած սփիւռքահայ թատրերգութիւններուն մէջ հրատապ հարց է նաեւ Քրիստոնէութեան, հաւատքի նիւթը: Հաւատքով նահատակուիլ, թէ՞ ուրացումով փրկուիլ, քրիստոնէութեան մեր կառչածութիւնը օգտակար էր, թէ՞ վնասակար: Այստեղ եւս կը խաչաձեւուին հեղինակներուն կարծիքները:

Ս. Շահէնի մոլլա դարձած Տէր Յակոբը վերյիշելով Եղեռնը, իր ընդվզումը կը յայտնէ Աստուծոյ լռութեան նկատմամբ՝ «Ո՛ր էս Տէր... Գէթ նորածիններու աղիողորմ կանչերուն լսէիր... Մի՞թէ ամբողջ Հայաստանի մէջ մէկ արդար իսկ չգտնուեցաւ... Մի՞թէ մեր մեղքը Սողոմն ալ անցած էր»⁷⁷: Ս. Շահէն եւ Պարթեւեան, քրիստոնէութեան մէջ կը դիտեն մեր տկարութեան պատճառները. անիկա տկարացուց մեր կռուելու ոգին, աղօթատեղին ու բերդը անջատեց իրարմէ. Պարթեւեանի հերոսը կ'ունենայ այսպիսի մտորումներ. «Եթէ աղօթքով ըլլա՞ր, Հայութիւնը արեւելքի դարաւոր մարտիրոսը մնալու տեղ՝ այսօր ինքզինքը քիչ-շատ ապահով կռուանի մը վրայ կը գտնէր»⁷⁸: Գրողները հաւատացեալ հոգիներու բնական ընդվզումին արտայայտիչն են. քրիստոնէութիւնը իր ազգային էութեան, անհատական կեանքին անտրոհելի մասը նկատած հայը, դարերով դիմացաւ բազմապիսի արհաւիրքներու, սակայն Յեղասպանութիւնը վեր էր ամէն երեւակայութենէ, որ պարպեց հայուն համբերութեան բաժակը:

Քրիստոնէութեան ընդդէմ կողմնորոշուելու ազդակներէն մէկն ալ եւրոպական քաղաքականութիւնն է. յատկապէս Գերմանիա, իր թրքամէտ կեցուածքով անտեսեց կրօնական բարոյականութեան բոլոր սկզբունքները, կողմնորոշուելով քրիստոնէայ հայուն դէմ: Յատկանշական է Յ. Օշականի հերոսին հարցադրումը. «Կա՞ս թէ չկաս դուն, որուն անունն է **քրիստոնէայ խղճմտանք**, բայց մարմինը, անորակելի բան մը... Որ շահ է, հաշիւ է, փաշա է» (ընդգծումը՝ հեղինակին)⁷⁹:

Կը վերադառնանք Յ. Օշականի *Երկինքի ճամբու*ին, որուն առանցքը կը կազմէ հաւատարմութիւն-ուրացութիւն նիւթը, ուր հանգամանալից կերպով կը ներկայանան համարեա բոլոր թատերախաղերուն մէջ հնչող տեսակետերը:

Բանտարկուած են հայ հոգեւորականներ՝ առաքելական եւ աւետարանական, որոնք կը սպասեն իրենց ճակատագրին: Ապարդիւն ջանքեր կ'ըլլան զանոնք ազատելու:

Թատերախաղին հիմնական միտք բանին կը ծաւալի բանտ-ախոռին մէջ հաւատքի, փրկութեան, ուրացումի հարցերուն առնչութեամբ հոգեւորականներուն երկարատեւ խօսակցութիւններուն ու վէճերուն շուրջ: Անոնք բաժնուած են երկու տարակարծ խումբերու, առաքելականները՝ Տէր Ներսէսի գլխաւորութեամբ, եւ աւետարանականները՝ Պատուելի

Շմառնեանի գլխաւորութեամբ: Հիմնական բանավեճը կը կայանայ երեսանց ուրացումի հարցին շուրջ: Ուրացման կողմնակիցները իբրեւ պատմական նախընթաց կը բերեն Վարդանանց պարագան, աստուածաբանական փաստարկներով կը փորձեն համոզել նախեւառաջ իրենք զիրենք. «*Անժուժելի տառապանքներուն դիմաց [...] մարդկային արարքները [...] զիրենք զսպանակող մեղքէն կամ առաքինութիւններէն չեն դատուիր Նախախնամութեան նժարին մէջ*»⁸⁰: Ի տարբերութիւն միւս թատերագիրներուն, Յ. Օշական թատերագիրը իսկապէս կը յաջողի երկխօսութիւններու միջոցով կերտել այնպիսի խորունկ կերպարներ, որոնք բառերով կը ներկայացնեն ամբողջ ներաշխարհ մը, որ ալեկոծ է: Այդպիսով թատերախաղին կը հաղորդուի ներքին տրամաթիգ մը, որ կը բարեխառնէ գործին ազգային-գաղափարական կեդրոնացումը, չխաթարելով անոր գեղարուեստականութիւնը: Ասոր շնորհիւ է, որ ուրացման կողմնակից պատուելիները չեն ենթարկուիր միւսներուն, նոյնիսկ ընթերցողին քամահրանքին, որովհետեւ Յ. Օշական անոնց տեսակէտը կը դիտէ մարդկային տկարութենէն աւելի, զոհողութեան պարունակին մէջ. համոզուած են անոնք, երբ կ'ըսեն, թէ քրիստոնէային համար ուրացումը ինքնին զոհողութիւն է, եւ հարկ է երթալ այդ ինքնագոհողութեան, եթէ անիկա պիտի փրկէ ժողովուրդը⁸¹:

Այս տեսակէտին դիմաց կը հիւսուի երկու այլ տեսակէտ. ուրացումը փրկութիւն չէ եւ նահատակութիւնը փառք է: Ուրացումը կը դիտուի իբրեւ ժամանակաւոր, ֆիզիքական փրկութիւն. կը փրկուի մարմինը, ժամանակաւորն ու մահկանացուն, սակայն ի սպառ պիտի սպաննուի հոգին՝ կորիզը, էութիւնը, յաւիտենականը: Եւ Յ. Օշական, վարպետութեամբ կը յաջողի համոզել ընթերցողը այս անիմանալի թուացող, վերացական գաղափարին ճշմարտացիութեան մէջ: «*Ճիշդ այդ ժողովուրդին համար է, որ մենք կը խնդրենք ձեզմէ (ուրացման համոզող գերմանուիստներէն - Ա.Բ.) պաշտպանել մեզ մեր արժանաւոր քրիստոնէայ որոշումին մէջ. [...] Երբ դադրին այս սարսափները [...] պիտի պատմէք ձեր զաւակներուն թէ ինչպէ՞ս ժողովուրդները կը ջարդուին, բայց չեն մեռնիր, վասնզի մահը կը հասնի մարմինին ու անգոր է հոգիին վրայ*»⁸²: Յ. Օշական կը յաջողի անձէն անցում կատարել ազգին, անհատէն՝ ընդհանուրին: Տէր Ներսէս հոս

սովորական մարդը չէ, այլ՝ ազգին մարմնաւորումը: Անոր վերամբարձ թուացող այդ խօսքերը, եթէ հնչէին եկեղեցւոյ խորանէն, հանդիսաւորապէս զգեստաւորուած հոգեւորականին բերնէն, պիտի չունենային նոյն ներգործութիւնը. սակայն խօսողը ժամեր, օրեր ետք մահուան երթալիք քահանան է, որ կ'ապրի, որովհետեւ «մեռնիլ գիտէ». *«Ուրացման գնով ճարուած այդ տարիները մենք պիտի հագնինք կրակէ պատմուճաններու նման ու քալենք մշտական խայթին տակ մեր խղճմտանքին»*⁸³: Նմանատիպ գաղափար կ'արտայայտէ նաեւ Մարգարեանի Ռուբէն Սեւակը. *«Կամուրջներ կան կեանքի մէջ որոնք անցնելէ ետք, չէ՛ս կրնար ետ դառնալ: Միւս ափին՝ հոգիի մահն է»*⁸⁴:

Ընդհանրապէս դժուար է ներկայացնել ինքնակամ մահուան, այն ալ ինչպիսի՛ մահուան, գացող մարդու կերպարը, առանց իյնալու արուեստականութեան, ճոռոմաբանութեան թակարդներուն մէջ: Մեր միւս թատերագիրներն ալ ունին նման կերպարներ, սակայն Յ. Օշականի մօտ նահատակներուն համոզումը կը հնչէ այնքան բնական, որ կարծես պարզ բանի մը մասին է որ կը գրուցեն. անոնք կրցած են պայքարիլ իրենց մարդկային զգացումներուն դէմ, յաղթած են անոնց, յաղթահարած են բոլոր երկմտանքները, ու հիմա *«Անկողոպտելի խաղաղութեամբ»* մը պատրաստ են նահատակութեան երթալու. *«Ես ուրախ եմ չափազանց, որ Աստուած մեզ վիճակած է սա բարձրագոյն բախտին, մեզ ընտրելով նահատակութեան սա շքեղ հանդէսին համար, իբրեւ կամաւոր, բանաւոր պատարագ»*⁸⁵: Յ. Օշական վարպետօրէն կը հիւսէ այս խօսքին նախորդող իրադարձութիւնները, հնչած տեսակետերը: Անոնք կ'ընկալուին կատարեալ բանականութեամբ, կարծես չըլլային մահուան մասին:

Բաց աստի, հոգեւորականները սովորական մարդիկ չեն, անոնք ժողովուրդին հոգեւոր առաջնորդներն են, այն մարդիկը, որոնք օրինակելի տիպարը պիտի ըլլան հոգեկան ու ֆիզիքական նոյն տառապանքներուն մատնուած հօտին: Հետեւաբար յանուն ժողովուրդին ուրանալը, նոյնինքն ժողովուրդին մահն է, որովհետեւ ուրացողները իբրեւ օրինակ պիտի ծառայեցուին. *«Մեր օրինակովը, մեր ձեռքովը տաճկեցնել մնացած ափ մը ժողովուրդը ու պատճառ դառնալ անոր յաւիտենական կորուստին»*⁸⁶: Պըլտեան Տէր Ներսէսի մէջ կը դիտէ նահատակութեան կիրքը⁸⁷: Կիրքը վեր է բանականութենէն, տրամաբանութենէն, ինչպէս որ է բնագոյր, գոր

3. Օշական կը դիտէ թուրքին ոճրամոլութեան մէջ: Բնագղածին սպանութեան դիմաց կրթոտ նահատակութիւն՝ «մեռնիլ գիտնալ»: Ահա թէ ինչպէս մահը կը յաղթէ ստորաքարշ գոյութեան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Եղեռնը ներկայացնել փորձող այստեղ սերտուած համարեա բոլոր թատերախաղերն ալ հիմնուած են անհատական-ընտանեկան տրամաներու, ողբերգութիւններու վրան, եւ ըստ այդմ ալ, սփիւռքահայ թատերգութեան մէջ Տեղասպանութիւնը ոչ թէ ռազմա-քաղաքական արարք մը, այլ՝ զուտ ոճիր մըն է. ահա թէ ինչու այնտեղ առաւելաբար շեշտուած են անգթութեան տարրերը, անհատական ողբերգութիւնները, որոնց իբրեւ պատճառ հայատեացութեան բնագոյը կը թուի ըլլալ լաւագոյն պատասխանը⁸⁸:

Հեղինակներէն շատեր կը ներկայացնէին իրենց անձնական-ընտանեկան փորձառութիւնները. նախ պէտք էր հասկնալ կատարուածը անհատական գետնի վրայ, ապա զայն մեկնաբանել համազգային ոլորտի մէջ: Ի տես Եղեռնապատումի մասին գրուած մանաւանդ օտարագիր հայ գրողներու վէպերուն⁸⁹, կ'ակնկալուի, որ այս միտումը շարունակուի նաեւ գալիք տարիներուն, բայց արդէն ոչ որպէս ականատեսի վկայութիւն, այլ ընտանիքի պատմութիւն: Ըստ երեւոյթին, հարիւրամեակ մը անց, հայոց դեմ գործուած ցեղասպանութեան յետնորդները կը շարունակեն պեղել պատասխանը «ինչու՞» հարցումին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Յակոբ Օշական, *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, Հտր. Թ.*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 1980, էջ 271: Այդ նիւթով նաեւ՝ «Յակոբ Օշական Չանդըրըի Բանտին Մէջ. Դասախօս Մարկ Եշանեան, 12 Մարտ 2008», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԲԹ.*, էջ 447. նաեւ՝ Ռուբինա Փիրումեան, *Literary Responses to Catastrophe, A Comparison of the Armenian and the Jewish Experience (Studies in Near Eastern Culture and Society)*, Atlanta, Scholars Press, 1993, էջ 213, 223:

² “The Armenians have not recovered from the trauma, and with nothing forgotten and nothing forgiven, the Genocide is still continuing. ...And as long as the Turkish government refuses to admit its guilt and make amends to the victims, the Genocide will continue and will prevent the Armenians from producing any work of art from the theme”, Vahé Oshagan, “The Theme of Armenian Genocide in Diaspora Prose”, *The Armenian Review*, Volume 38, No. 1 (Spring 1985), էջ 60:

- ³ [“*It appears to be impossible to escape from the genocide in the Diaspora*”], Lorne Shirinian, *Armenian-North American Literature: A Critical Introduction: Genocide, Diaspora and Symbols*, ԱՄՆ, Studies in comparative literature (Lewiston, N.Y.) ; v. 11. 1990:
- ⁴ [“*In a sense, all Diaspora literature written since 1915 bears some relation to the Genocide. ... In the final analysis the horrible fact of the Genocide, whether present or absent from the novel is the one major theme to which all else refers in some way or other*”], Vahé Oshagan, էջ 57-58:
- ⁵ Կը յիշատակենք անգլիագիր ամերիկահայ թատերագույններէն Աննա Անթառամեանի եւ Պիլ Ռոլլըրիի *The Armenian Question*ը (1977, 2002-3), Նորա Արմանիի *Snowflakes In April*ը (2005), Արամ Գոլյումճեանի *The Delicate Lines*ը (2005) եւ *Protest*ը, Լոռն Շիրինեանի *Exile in the Cradle*ը (2003), *This Dark Thing*ը (2004) եւ *Red Threads on White Cloths*ը (2004), Լիլի Թոմասեանի *Let the Rocks Speak*ը (2003) եւն.: Նշուած գործերէն ոմանք միայն բեմադրուած են, առանց իբրեւ գիրք հրատարակուած ըլլալու (www.armeniandrama.org):
- ⁶ Յ. Օշական, *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան - Արուեստագէտ Մերունդ, Հտր7 Զ.*, Անթիլիաս, Տպարան Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 1968, էջ 250:
- ⁷ Լեւոն Չորմիսեան, *Եղեռնը*, Փարիզ, 1974, էջ 60:
- ⁸ Սեդրաք Շահէն, *Տանջուածները*, Պէյրուօ, Մատենաշար Արարատի թիւ 46, Տպ. Արարատ, 1965, էջ 3:
- ⁹ Այս առումով բարացուցական է Յարութիւն Ս. Քէֆէլեանի խոստովանութիւնը, թէ իր ուժերէն վեր է թատերագույն գրելը, սակայն ինք *Արիւնտ Դաշտը* գրած է որպէս յուշարձան իր «գերդաստանին ու ցեղին բիրաւոր նահատակներուն» (Յարութիւն Քէֆէլեան *Արիւնտ Դաշտը*, Փարիզ, տպ. Տէր Յակոբեան, 1966, էջ 77):
- ¹⁰ Երեմիա Ս. Քէհեայեան, *Գոյութեան Պայքարը*, Լոս Անճելըս, 1927, էջ 73:
- ¹¹ Քէֆէլեան կը վկայէ որ իր «*տիպարները՝ երեւակայական ու մտացածին հերոսներ չեն*» (էջ 8), իսկ իր պատմածը՝ աղբիւր ունի իր ականատեսի փորձառութիւնը Եղեռնէն (էջ 77):
- ¹² Վահան Արսէնեան, *Հաճընի Անկումը Կամ Յեղին Յարութիւնը*, Աթէնք, 1927. այնտեղ կը հանդիպինք ականաւոր հաճընցիներու՝ Սարգիս Ճեպէճեան եւ ուրիշներ, որոնք գործօն մասնակիցներ եղած են Հաճնոյ ինքնապաշտպանութեան:
- ¹³ Սեդրաք Շահէն, *Զէյթուն*, Նիւ Եորք, հրտ. «Արմենիա», 1920, էջ 3:
- ¹⁴ Հրանդ Մարգարեան, *Երբ Արեւը Կը Լռէ*, Երեւան, ՀԳՄ հրտ., 2009:
- ¹⁵ Մանուէլ Ադամեան, *Մեծ Եղեռն*, Երեւան, ԵՊՀ հրտ., 2005:
- ¹⁶ *Շիրակ* ամսագիր, Պէյրուօ, Ժ. տարի թիւ 4-5, Ապրիլ-Մայիս 1966, էջ 180:
- ¹⁷ Նոյն նիւթով ստեղծուած լաւագոյն թատերախաղերէն է Պերճ Զէյթունցեանի *Մեծ Լռութիւնը* (1985). արձակի մարզին մէջ կարելի է յիշել Ալեքսանդր Թոփճեանի *Եւ Անգամ Մահից Յետոյ* (2005), Անդրանիկ Շառուկեանի *Մէրը Եղեռնին Մէջ* (1987) վեպերը:
- ¹⁸ Սեդրաք Շահէն, *Տանջուածները*, էջ 39:
- ¹⁹ Արսէնեան, էջ 20:

-
- ²⁰ Արամ Երեցեան, *Գեորգ Չաուշ*, Հալէպ, 1952, էջ 9:
- ²¹ Անուշաւան Ֆրանկիլեան, *Արիւնի Մարտը*, Պէյրուօ, Տպ. Էտվան, 1952, էջ 83:
- ²² Սուրէն Պարթեւեան, *Աննահ Բոցը*, Փարիզ, 1929, էջ 12: Ա. բեմադրութիւն՝ Ալեքսանդրիա 1917:
- ²³ Յակոբ Օշական, *Երկինքի Ճամբով*, Մատենաշար Գառնի թիւ 2, Պէյրուօ, Տպ. Ալթափրէս, 1985:
- ²⁴ Նոյն՝ «Յառաջաբան», էջ 5:
- ²⁵ Նոյն՝ էջ 94-100:
- ²⁶ Գրիգոր Պըլտեան, *Մարտ*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 1977, էջ 405:
- ²⁷ Լեւոն Շանթ, «Թատերական Կառուցում», *Երկեր*, Ե. Հատոր, Պէյրուօ, Համազգայինի հրտ., 2008, էջ 407:
- ²⁸ Յակոբ Օշական, «Թլկատինցի Թատերագիրը», *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան*, Բ. Հտր., Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 1979, էջ 164:
- ²⁹ Նոյն՝ էջ 147:
- ³⁰ Նոյն:
- ³¹ Շահէն, *Տանջումները*, էջ 56:
- ³² Քէհեայեան, էջ 75:
- ³³ Նոյն՝ էջ 84:
- ³⁴ Նոյն:
- ³⁵ Պարթեւեան, էջ 25:
- ³⁶ Գրիգոր Վահանեան, *Թաղում Քանձը*, Պէյրուօ, Տպ. Ազատ, 1932, էջ 75:
- ³⁷ Չորմիսեան, *Եղէնը*, էջ 10:
- ³⁸ Նոյն՝ էջ 12:
- ³⁹ “*Artistic expressions of that event still bear the imprint of an enigma, an unencountered terminus*” (Piroumian, “Literary response”, էջ 223):
- ⁴⁰ Քէհեայեան, էջ 39:
- ⁴¹ Շահէն, *Զէյթուն*, էջ 54:
- ⁴² Օշական, *Համապատկեր... 10րդ Հտր.*, էջ 371-2: Օշական կը վկայէ, թէ *Մնացորդագին* կէտը, «*Հարիւր մէկ տարուան*» ներուն շարքը նուիրում է թուրք բարքերու, տիպարներու» (նոյն, էջ 234):
- ⁴³ Պարթեւեան, էջ 51:
- ⁴⁴ Օշական, *Երկինքի Ճամբով*, էջ 107:
- ⁴⁵ Մանուկ Խանաթեկեան, *Կարսի Գետը*, Վենետիկ, Տպ. Ս. Ղազար, 1952, էջ 32-3:
- ⁴⁶ Քէհեայեան, էջ 58:
- ⁴⁷ Նոյն, էջ 33:
- ⁴⁸ Չորմիսեան, էջ 25:
- ⁴⁹ Նոյն, էջ 31:
- ⁵⁰ Մարգարեան, էջ 46:
- ⁵¹ Բժ. Ստեմէլ Փարսադան, *Օրորոցի Երգը*, Շտուտկարտ, «Մաշթոց» հրտ., 1947, էջ 26:
- ⁵² Շահէն, *Տանջումները*, էջ 6:
- ⁵³ Չորմիսեան, էջ 25:

- ⁵⁴ Սեդրաք Շահեն, *Կարկառուն Կամարներ*, Շիրակօ, տպ. «Երիտասարդ Հայաստան», 1917, էջ 42:
- ⁵⁵ Օշական, *Երկինքի Ճամբով*, էջ 40:
- ⁵⁶ Նոյն, էջ 102:
- ⁵⁷ Ֆրանկիլեան, *Արիւնի Մարտը*, էջ 12:
- ⁵⁸ Քէֆէլեան, *Արիւնոտ Դաշտը*, էջ 67:
- ⁵⁹ Օշական, *Երկինքի Ճամբով*, էջ 81:
- ⁶⁰ Շահան Նաթալի, *Ասլան Բէկ*, Պոսթըն, հրատ. «Հայրենիք», 1918, էջ 30:
- ⁶¹ Չորմիսեան, էջ 79:
- ⁶² Անդրանիկ Կոսնեան, *Նուարդը*, Հրատ. ԹՄՄ, Պէյրուօ, Տպ. Զարթօնք, 1966:
- ⁶³ Չորմիսեան, էջ 45:
- ⁶⁴ Նոյն, էջ 97:
- ⁶⁵ Փարսադան, *Օրորոցի Երգը*, էջ 65:
- ⁶⁶ *Օ.Խ.*- Այս մասին աւելի մանրամասն ու վաւերական տե՛ս՝ սոյն հատորի «Առեւանգումի Եւ Ազատագրումի Մթնոլորտ. Կիներու Եւ Մանուկներու Ներմուծման Քաղաքականութիւնը Հայոց Ցեղասպանութեան Ընթացքին Ու Անկէ Ետք» Լեռնա Էքսէքճիօղլուի յօդուածը:
- ⁶⁷ «Վերականգնել Ազգը Կիներու Եւ Որբերու Ճամբով, Գործն Ու Անոր Հակասութիւնները» Դասախօս՝ Դոկտ. Վահէ Թաշճեան, *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. Ի.Զ.*, Պէյրուօ, 2006, էջ 459. նաեւ՝ Էքսէքճիօղլու, վերոյիշեալ յօդուածով կը ժխտէ այս դրոյթը [*Խմբ.*]:
- ⁶⁸ Կոսնեան, էջ 24:
- ⁶⁹ Նոյն, էջ 40:
- ⁷⁰ Պոսթըն, 1919:
- ⁷¹ Յ. Օշական, *Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան, Իններորդ Հտր.*, Անթիլիաս, Տպ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 1980, էջ 264:
- ⁷² Շահեն, *Տանջուածները*, էջ 23:
- ⁷³ Խանսպէկեան, *Կարսի Գետը*, էջ 145:
- ⁷⁴ Շահեն, *Զէյթուն*, էջ 8:
- ⁷⁵ Կը յիշենք Շահենի *Զէյթուն*ին Աւետիքն ու Ճելլատը, Ֆրանկիլեանի *Արիւնի Մարտը*ին Սեպուհը եւ Վահանեանի *Թաղուած Գանձը*ին Մուրատը եւն.:
- ⁷⁶ *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-day Community*, Haigazian University and the Armenian Heritage Press of the NAASR, Պէյրուօ, էջ 181:
- ⁷⁷ Շահեն, *Տանջուածները*, էջ 19: Հին Կտակարանի քաղաքներէն Սոդոմ եւ Գոմոր, վերածուած էին մեղքի որջերու եւ Աստուածային հրամանով պիտի ոչնչանային: Անսարով Աբրահամի ինդրանքին, Աստուած կը համաձայնի ներել երկու քաղաքներուն, եթէ անոնց մէջ գտնուէր գէթ մէկ անմեղ մարդ. այդպէս ալ չի գտնուիր, եւ Աստուած երկինքէն ձուլմբ ու կրակ տեղացնելով կը կործանէ Սոդոմն ու Գոմորը (*Աստուածաշունչ*, «Գիրք Օճնորգ», գլ. 19):
- ⁷⁸ Պարթեւեան, էջ 13:
- ⁷⁹ Օշական, *Երկինքի Ճամբով*, էջ 23:
- ⁸⁰ Նոյն, էջ 74:
- ⁸¹ Նոյն, էջ 77:
- ⁸² Նոյն, էջ 69:

⁸³ Նոյն, էջ 91:

⁸⁴ Մարգարեան, էջ 68:

⁸⁵ Օշական, *Երկիրնքի Ճամբով*, էջ 90:

⁸⁶ Նոյն, էջ 86:

⁸⁷ Պըլլտեան, էջ 398

⁸⁸ Այստեղ կ'առանձնացնենք պոլսահայ թատերագիր Արման Վարդանեանը, որ իր «անհեթեթի թատրոն»ի ոճական յատկանիշներուն մատչող թատերախաղերուն մէջ, այլաբանօրէն անդրադարձած է հայոց դէմ գործուած ցեղասպանութեան ու հայ-թուրք յարաբերութիւններու հոլովոյթին: Յատկապէս կ'առանձնանան *Գանկրուկը* (1981) եւ *Հեղձակը* (1989) թատերախաղերը Յեղասպանութիւնը ներկայացնող իրենց այլաբանական ուժգնութեամբ: Այս մասին աւելի հանգամանալից տե՛ս՝ Արմէն Իւրնէշլեան, «Ազգային Հիմնախնդիրները Արման Վարդանեանի Թատրերգութիւններուն Մէջ», *Գանթեղ, Գիտական Յօդուածներ*, թիւ 1 (46), Երեւան, 2011:

⁸⁹ Քրիս Պոհճալեան, *The Sandcastle Girls* (2012). նաեւ՝ Նենսի Գրիգորեան, *Zabelle* (1998). նաեւ՝ Ադամ Պաղտասարեան, *The Forgotten Fire* (2000). նաեւ՝ Դաւիթ Խերտեան *The Road from Home* (1979) եւն.:

THE REFLECTION OF THE ARMENIAN GENOCIDE IN
DIASPORA ARMENIAN PLAYS
(SUMMARY)

ARMEN URNESHIAN
urneshlian@yahoo.com

Narrating the genocide perpetrated against the Armenians has been a basic call of Armenian Diaspora literature. Since the first playwrights themselves walked through “the valley of the shadow of death”, most of them did not let their artistic inadequacy stop them and tried hard to put into words their painful experience, having the latent fear that what the Armenian people went through might be forgotten.

For the first generation writers, literature and theater were a means of sharing the pain and emphasizing the agony they went through, whilst for the second and third generation, writing about the Genocide is a means of searching self-identity and ethnic roots.

The article reviews Armenian plays written in the period between the early-1930s and the late-1980s, which have the genocide as their subject matter. The author assesses their literary quality and states they are not well-structured, the statements of the characters sound more like rhetoric, and the actions of the Armenian characters are idealised. These and other features make some of these plays somewhat unconvincing. The author groups the characters of these plays as Turks, women, and children and analyses them. Unlike the Turks, who are basically presented as blood-thirsty killers, women are depicted as the main bearers of the Turkish atrocities.

Urneshlian notes these plays reflect the mentality of the authors and the community at large.

ՀԱՅԻ ԽՏԱՏԻՊԻ ՄԻՔԱՆԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐ
ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ «ՀԱՅՑ»
ԽՈՂԱԳՐՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐԻՆ

ԿԱՐԻՆԷ ՌԱՖԱԵԼԵԱՆ
karine.rafaelyan@mail.ru

Դերենիկ Դեմիրճեանի Հայր» խոհագրութիւնն առաջին անգամ տպագրուել է *Հայաստանի Անկախութեան Փոխառութիւն* միօրեայ թերթում (Թիֆլիս, 1920, Օգոստոսի 2): Երկրորդ անգամ տպագրուել է Դեմիրճեանի *Երկերի ժողովածու*ում (Դերենիկ Դեմիրճեան, *Երկերի ժողովածու 14 Հատորով, Հատոր 14*, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ Հրատ., 1987, էջ 461-463, ծանօթագրութիւններ՝ էջ 633)՝ բաւական լուրջ աղճատումներով:

Մօտ երկու տասնամեակ առաջ Դեմիրճեանի տուն-թանգարանում յայտնուեց թիֆլիսեան թերթի պատճենուած էջը՝ Հայր»ի անխաթար բնագրով¹: Այդուհետ տուն-թանգարանի աշխատակիցները հետամուտ եղան հենց այդ տարբերակը հանրութեանը ծանօթացնելու. կազմակերպուեցին թեմատիկ քննարկումներ տարբեր լսարանների համար, խոհագրութիւնը ներկայացուեց մտաւորականների, ուսանողների դատին, բնագիրը տրամադրուեց արուեստաբան, գրող Ռուբէն Անգալադեանին՝ սեփական վերլուծութիւն-խոհագրութիւնը շարադրելու նպատակով², գերմանացի մասնագէտ Եորգան Գիսփերթին՝ այն գերմաներէն թարգմանելու եւ հրատարակելու նպատակով³: Նշենք, որ Հայր» խոհագրութիւնը թարգմանուած է նաեւ ռուսերէն⁴, հունգարերէն⁵, սակայն վերջին թարգմանութիւններում, ի տարբերութիւն գերմաներէնի, օգտագործուել է գրողի ակադեմիական հատորում տպագրուած ոչ-լիարժէք տարբերակը: Բարեբախտաբար, Դեմիրճեանի ծննդեան 135ամեակի առթիւ Լեւոն Խեչոյեանի կազմած եւ հրատարակած *Ընտրանիում*⁶ գետեղուած է Հայր» խոհագրութեան ամբողջական տարբերակը, որը լաւագոյն ճանապարհին է հասարակութեանն այս երկը լիարժէք տեսքով հասանելի դարձնելու համար: Ի դէպ, իր հրատարակած հատորի ներածականում Խեչոյեանը վերլուծել է Դեմիրճեանի ստեղծագործութիւնը՝ դիտարկելով այն գրողի ապրած ժամանակի աշխարհաքաղաքական, բարոյահոգեբանական իրողութիւնների հոլովոյթում: Դեմիրճեան գրողին տրուած ընդհանրական գնահատականի մէջ որոշակիանում է Հայր» խոհագրութեան հեղինակի գնահատականը: Խեչոյեանի բնագրում մասնաւորապէս կարդում ենք. մենակեաց էր, բայց որոնողի հոգով, տեսանողի աչքով: Ոչ ցարիզմի փռչի դառնալը, ոչ էլ յեղափոխութիւնը

միանգամից չընկալեց: Կասկածոտ, կասկածամիտ էր, սպասում, ճշտում էր իրադարձությունները: Միտքը զննող էր, բնաւորութիւնը՝ հեռու քաշուած, համարեա յոռետես: Խորաթափանց էր, պատմական ժամանակաշրջանների լաբրինթոսներում կռահումների ետեւից գնացող եւ վերլուծական եզակի կարողութիւններով:

Նրան գուցէ եւ կարելի է համեմատել միայն Չարենցի հետ, որի իմացութիւնն ուղղակի դարերի թնջուկն էր մաղում՝ փնտռելով ազգի զօրութեան կենսական կորիզը»⁷:

Մեր այս ուսումնասիրութեան նպատակն է վերլուծել հայի *գենօտիպի* դեմիրճեանական ընկալումն ու գեղարուեստական մատուցումը, ինչպէս եւ դրա խորապատկերում անդրադառնալը այլ հայ հեղինակների կողմից տարբեր ժամանակներում եւ աշխարհագրական, ընկերա-հոգեբանական տարբեր միջավայրերում հայ ազգային տեսակին տրուած գրական-գեղարուեստական, խոհափիլիսոփայական գնահատականներին: Անշուշտ, մէկ յօդուածի շրջանակներում անհնար է անդրադառնալ բոլոր հեղինակներին եւ հայի տեսակը բնորոշող բոլոր տեսակէտերին, սակայն մենք փորձել ենք քննութեան առնել մեր կարծիքով դրանցից առաւել ուշագրաւները, հայի կերպարի վերաբերեալ իրենց դիտարկումների մէջ առաւել դիպուկ եւ ընդհանրական գնահատական պարունակող գրական, հրապարակախօսական նիւթերը:

Դեմիրճեանն իր խոհագրութիւնը սկսում է հարցով. *Արդեօք մի բան հասկանում էր հայից...*⁸: Ընթերցողը քաջատեղեակ իր դասականի խորագիտութեանը, ակնկալում է հենց իրենից լսել բարձրացուած հարցի պատասխանը: Բայց տալի՞ս է արդեօք Դեմիրճեանն այդ պատասխանը: Թուում է՝ ոչ: Եւ այնուամենայնիւ, հետաքրքրասիրութեան սերմն արդէն նետուած է մէկ հակիրճ հարցի միջոցով, եւ ընթերցողը տրուում է շարադրանքի ընթացքին: Դեմիրճեանը խորացնում է թնջուկը. հայը չի բացայայտում իր նկարագիրը, արտաքուստ երեւան չի հանում իր ինքնութիւնը, իր ցեղային բնութագիրը, թոյլ չի տալիս, որ հեշտութեամբ իրեն ճանաչեն, գաղտնազերծեն: Ինչո՞ւ: Որովհետեւ հենց ինքն էլ իրեն ճանաչելու, ըմբռնելու պահանջն ունի, սակայն հենց իր համար իսկ անհնարին է բաւարարել այդ պահանջը: Հայը» խոհագրութեան մէջ արժարձուած ընդհանրական որակների մի նեղ երակ դասականը երեւան է հանում իր մէկ այլ երկում՝ 1926ին գրուած Հայը Ամենաքնքուշը» երգիծական մանրապատումում: Կարծում ենք, որ Դեմիրճեանը, ոչ առանց հիմքի, խորհրդային կարգերի հաստատումից յետոյ ունեցել է այն մտավախութիւնը, որ իր՝ 1920ին գրուած խոհագրութիւնը չի հասնի խորհրդահայ ընթերցողին կամ կը հասնի ոչ այն տեսքով, որով գրել է ինքը:

Եւ Դեմիրճեանը չէր սխալուում: Նրա խոհագրութիւնը միայն տասնամեակներ անց պիտի հասնէր խորհրդահայ ընթերցողին՝ զգալի

աղաւաղումներով: Հակառակ սրան՝ սփիւոքսահայութիւնն ունէր բարեբախտութիւնը իր տարագրութեան օրրաններում աւելի վաղ ձեռքն առնել դասականի երկը եւ անգամ ազդուել նրանից՝ հայի նկարագրի վերաբերեալ սեփական յղացումներում⁹: Խօսքը մասնաւորապէս Նշան Պէշկեպաշլեանի Հայր» երգիծապատումին է վերաբերում, որում հայի տեսակին տրուած բնութագիրը չափազանց մեծ աղերսներ ունի դեմիքճեանական բնութագրումների հետ:

Եւ ուրեմն, Հայր» խոհագրութեան տպագրութիւնից վեց տարի անց Դեմիքճեանը նորովի, առաւել անվտանգ» երանգով ներկայացնում է իր ազգի տեսակը՝ Հայր Ամենաքնքուշը» պատումում: Ինչ էլ ասում այն հայի տեսակի, հայի էթնօնկարագրի մասին: Նոյնպիսի հակասական գնահատում, որ բնորոշ է Հայր» խոհագրութեան տրամադրութիւններին: Դեմիքճեանը վերլուծում է հայի համար յաճախ գործածական հայ չէ ս» հարցադրումը: Մի դէպքում այն հայի հանդէպ սիրոյ, ջերմութեան, վստահութեան դրոշմն է կրում. *Բայց հետաքրքիր է, թէ հայ ասելով ինչ է հասկանում հայը:*

Ինչ կարծիք ունի հայի մասին:

Գուցէ իր երեւակայութեան մէջ հային ներկայացնում է ամենադաժան գծով մի մա ըդ, համարում է աշխարհիս ամենավատ, ամենագծուծ, ամենասանգութ արարա ծը, ամենաստուկայի կարծի քը հայի մասին:

Ո՛չ,- ամենաքնքուշ կարծիքն ունի հայը հայի մասին:

Եւ դա է, որ նրան ամէն առիթի վիրաւորում է մինչեւ հոգու խորքը:

Երբ մի հայ տեսնում է, որ դիմացի հայն իր խօսքը չի հասկանում՝ իբրեւ վերջին արգումենտ, գոռում է նրան երեսնիվայր.

- Տօ, հայ չէ ս: Չէ ս հասկանումս¹⁰:

Բայց միեւնոյն ժամանակ հայի համար հայ լինելու ենթախորքը փոխում է՝ կախումած հանգամանքներից: Դեմիքճեանը նոյն մանրապատումում գրում է. ...*հայը սաստիկ վիրաւորումած բողոքում է եւ գանգատում միւս հայերի մօտ՝ ասելով.*

- Իհարկէ, անաստուածութիւն կ'անի, մարդու տուն կը քանդէ, հայ չէ՞ ...

Սա էլ ասում է ամենասաստիկ վիրաւորումած հայը միւս հային, մինչեւ հոգու խորքը վիրաւորելու համար¹¹:

Բայց ինչպէս Հայր» խոհագրութեան մէջ է հեղինակը հասկանում, սիրում հակասական, գովելի ու մերժելի յատկանիշների տէր իր հայրենակիցներին, այնպէս էլ այս երկում է բանաձեւում իր սէրը՝ ի հեճուկս այդ սիրոյ հիմքերի խաթարումին պատճառ հանդիսացող դրսեւորումների. ...*ամենաքնքուշ բանը հայի համար աշխարհիս երեսին հայն է՞¹²:*

Պեշիկթաշլեանը հայի երկուութեան այլ բանաձևէ է առաջարկում, նրա կարծիքը հետեւեալն է. *Սստուած Հայր հրեշտակ է ստեղծած. վերջը զոջացած է ու սատանայի է վերածած: Յետոյ ջնջած է անոր սատանայութիւնն ալ: Հայր, սակայն, երկու էակներէն մէյ-մէկ բան պահած է իր մէջ*¹³:

Վերադառնանք Դեմիքճեանի Հայր»ին ու թերթէնք հայի ազգային դիմապատկերի դեմիքճեանական միւս շերտերը: Խաբուսիկ, տարօրինակ, հանելուկային տեսակ է հայր: Պեշիկթաշլեանն այդ տեսակը հասկանալու համար փորձում է առաջարկել իւրօրինակ բանալիներ»:*Դժուար է հայր ճանչնալ իր ներսէն*¹⁴,- Դեմիքճեանի նման զգուշացնում է նա ու թուարկում հային գաղտնագերծելու հնարաւոր տարբերակները, որոնք բազում են, բայց բոլորն էլ անստոյգ, խաբուսիկ: Հայր, ըստ Պեշիկթաշլեանի, թիւ է, խօսք է, ոտանաւոր է, հանելուկ է, առեղծուած է, աշխատանք է, նիւթ է, ոգի է,- *գործի մարդ է անձնական ձեռնարկի մէջ ու խօսքի մարդ՝ հանրային ձեռնարկի մէջ*¹⁵: Իր թուարկած որակները սպառիչ չեն թուում հենց իրեն՝ հեղինակին, ու նա եզրակացնում է. *Սստուած Հայր երկիր դրկած է իբրեւ ֆենոմէն: Հայր մարդ չկրցաւ ըլլալ աշխարհի մէջ*¹⁶: Եւ սրանից Պեշիկթաշլեանը բխեցնում է հայի պատմական ճակատագրի ողբերգականութեան իր մեկնաբանութիւնը. *Արեւուն տակ ան անմեղ եղաւ Հրեշտակի մը պէս ու այս պատճառով է, որ հող չունեցաւ երկրի վրայ: Հրեշտակները տեղ չունին աշխարհի մէջ: Եղաւ նաեւ սատանայի մը չափ խելացի, բայց հակառակ իր խելքին, սատանայի մը պէս ալ մնաց միշտ դժոխքի մէջ*¹⁷:

Ըստ Դեմիքճեանի՝ հայն ամենատառապածն է աշխարհում: *Հայր ոգու ժողովուրդ է, իսկ ոգուն ներյատուկ է տառապանքը: Բոցից, երկունքից, ցաւից ծնաւ իր Վահագնը – ահա՛ հայու կենսագագացողութիւնը, նրա աշխարհիւրացումը: Նրա համար չէ լոկ կեցութեան ուրախութիւնը: Հայու համար աշխարհի հետ հաշտ եւ ուրախ լինելու համար բաւական չէ կուշտ լինելը*¹⁸,- կարողում ենք զօրավար Գարեգին Նժդեհի Բանտային Գրառումներում:

Հայն աշխարհիս երեսին գոյութիւն ունեցող ամենահին ցեղատեսակն է: Այսպէս է բնութագրում հայերին Դեմիքճեանը, իսկ Նժդեհը մեկնաբանում է աշխարհի այդ ամենահին ցեղատեսակի վերաբերմունքն այդ նոյն աշխարհի նկատմամբ, եթէ կ'ուզէք պատասխանատուութեան զգացումն այն ամէնի հանդէպ, որ կատարում է աշխարհում. *Հայր հաւատարապէս տառապում է ինչպէս՝ իր գոյութեան ծանրածանր պայքարի առթած ցաւից, այնպէս էլ՝ աշխարհի եւ մարդկային ազգի անկատարելութեան գիտակցութիւնից:*

*Նրա համար աշխարհը դեռ այն չէ, ինչպիսին կարող է լինել, եւ պէ՛տք է որ լինի*¹⁹:

Բնահանուելու, բնաջնջուելու հազարամեակների իրողութեանը հակընդդէմ՝ հայն ամենայամառն է իր հայրենի եզերքի հանդէպ ունեցած կապուածութեամբ. սա Դեմիրճեանի տեսակէտն է: Այս հարցում Դեմիրճեանի համախոհն է Ժամանակի թելադրանքով գրիչը զենքով փոխարինած մէկ այլ գրող՝ վաղամեռիկ Վազգէն Սարգսեանը, որ զարմանալի զուգադիպութեամբ իր խոհերը հայի ու հայ հողի վերաբերեալ շարադրել է՝ իբրեւ ուսումնասիրութեան յենք ունենալով Դեմիրճեանի բնօրրանը Ջաւախք աշխարհը: Նրա *Քարի Մէջ Արուն Կայ»* ակնարկում կարդում ենք. *Այս հողի վրայ կը բնաւորուէր ճարահատ, բայց զարմանալի պինդ ու աշխատասէր մի ժողովուրդ: Այս հողն, այո, մարդու չնման-մարդու չհաւան կնկայ նման ուզուողին չէր տրուի: Սա բազմակողմանիօրէն ու հանգամանալի մի լաւ պիտի մշակուէր: Աշխարհն էլ առա՛տ, ընտրութեան հնարաւորութիւնը մե՛ծ, ո՛վ զլուխ կը դնէր էդ սեւ տրճէի հետ: Ջարմանալի պինդ ու համբերատար տղամարդկանց ցեղ էր պէտք, որ սեփական ճակատագրի հետ քեալլա տալով էդ սեւ տրճէից բազմաբեղուն ծննդկան շինէր եւ, որ իրենց նման պինդ ու հաստատուն սերունդներ տային աշխարհին. մենք՝ մենք ենք, խօսէք, տեսնենք՝ դո՛ւք ու՛քեր էք»²⁰:*

Եւ մի՞թէ սա նորութիւն է հայի ազգային նկարագրում, մի՞թէ Դեմիրճեանի ու Սարգսեանի պատկերած հայը նոյն Հայկը չէ, որ պատմահայր Խորենացու վկայութեամբ ցուրտ սառնամանիքների մէջ բնակուեց ու կենաց-մահու պայքարով մերժեց բարեբեր հողերում իբրեւ հպատակ ապրելու Բէլի շողոքոքթ առաջարկը: Այս բնութագրի արձագանգները Հայկի եւ Բէլի արանդապատումից հազարամեակներ, Դեմիրճեանի խոհագրութիւնից տասնամեակներ ու Սարգսեանի խոհապատումից մի քանի տարի անց որսում ենք Աղասի Այվազեանի Հայ Հայր» պատմուածքում, ուր Հայկին մարմնաւորող գրական կերպարը տարագիր ու հայրենաբաղձ հայն է, Բէլին մարմնաւորողը պետանվտանգութեան խորհրդային գործակալը. *Ու Հայ հայր, թողնելով իր բարեյարմար արեւմտեան կեցոյթը, վերադառնալով տուն, նստեց նրա համար տրամադրած յատուկ մէքենան, նրա կողքին՝ ներքին գործերի աշխատակիցը, ու մի ամբողջ գիշեր շրջում էր Երեւանի փողոցներով, հոտոտում նրա տամկութիւնն ու բորբոսը, մտովի փաղաքշում նրա ցեխածեփ պատերը... Ու շների գաւառական հաչոցները նրա լսողութեանն էին հասնում որպէս ցեղի կարօտի գերակայ երաժշտութիւն: Ու արցունքակալուեցին նոյնիսկ իր կողքին նստած հայ աշխատակցի աչքերը հայրենիքի այն մեծ իմաստից, որ դնում էր Հայ հայր իր գոյութեան մէջ: Միայն մէկ գիշեր, ու միւս օրը, ինչպէս եւ պայմանաւորուած էր, նրան քստրեցին Միբիր, որտեղ եւ վերջ դրուեց նրա մարմնական ներկայութեանը այս աշխարհում»²¹:*

*Որքա՛ն անյոյս է թւում իր ապագան, բայց եւ որքա՛ն յուսացող է նա: Ասենք՝ իր կեանքում երկու բան բնաւ չտեսաւ. մէկ՝ Բախտ, մէկ էլ՝ յուսահատութիւն»²², - գրում է Դեմիրճեանը: Եւ այստեղ կրկին խաչում են հայաբանութեամբ զբաղուած գրողների հայեացքներն ու ասելիքը: Պէշիկթաշլեանը գրում է, թէ հայը ...երբեք չէ ներկայացուած Տիար Յուսահատութեան եւ ոչ մէկ ծանօթութիւն ունի անոր հետ»²³: Այվազեանը թուարկում է հայի արտաքին տեսքի, խառնուածքի, վարքի դրսեւորումների հնարաւոր տարատեսակները, ու համեմատութեան եզրեր չունեցող այս գնահատականների խորքից դուրս բերում հայի ընդհանրական տիպը. *Բայց կայ մէկը եւս, որ իմ մէջ մի միամիտացող գուարթակերպ տխրութիւն է առաջացնում: Դա Հայ հայն է: Նա երբեք չի մտածում, թէ ինքն ինչ է, այնպէս, ինչպէս երբեք մարդ չի խորհում, որ ինքը երկու ոտք ունի, երկու ձեռք, մի քիթ եւ մի բերան... Երբեմն ինձ թւում է, որ նա հենց այդպէս՝ առանց վերլուծելու, առանց գնորոշելու, գիտէ մի բան, որ իմ մանրահետող խելքով չեմ կարողանում ըմբռնել, իմանալ կեանքիս երկար տարիների ներշարչարելի վերլուծումներից յետոյ:**

Հայ հայը երբեք չի վիատում. ամէն ինչ նրա շուրջն է, ամէն ինչ իրենն է, եւ ինքը ոչինչ չունի»²⁴:

Այդ անընկճելի Հայ հայը ապահովագրուած է մահացումից, նրա՝ Դեմիրճեանի գնահատմամբ ինքնախորտակում յիշեցնող ջանքը, մեջքը ճկել-կոտրելու աստիճան ինքնախոշտանգուելու բնագործ (թէ՞ գիտակցական մղումը) չեն ենթադրում հայի վախճանը: Պէշիկթաշլեանն ունի իր բացատրութիւնը. *Հայը ինչով ալ զբաղի, կ'ընէ նաեւ դագաղագործութիւն: Ան ամէն օր կը շինէ քանի մը դագաղ, բան մը թաղելով իրմէ: Բարեբախտաբար անսպառ է իր կենդանութիւնը»²⁵:*

Իր վիճակի ողբերգականութեանը տրուելու, իր անօրինակ դժբախտութիւններին կու գնալու հեռանկարից ապահովագրուած է հայը. *Իր էութեան բերումով հայն իր գոյութեանը հաղորդում է որոշ սրբազնութիւն եւ նպատակ՝ ձգտելով իմաստաւորել եւ կատարելագործել այն»²⁶, - գրում է Նժդեհը:*

Հայի տեսակը մերժում է սուգ եւ ողբասացութիւն. ...եթէ մենք բոլորս մեկնենք, ցրուենք աշխարհի հեշտակեցութեան վայրերը՝ Սան Ֆրանցիսկօ, Նիւ Ջրքսի, Նէապոլ, Քեբէկ... Հայ հայը կը մնայ մէնակ: Ու նա չի նկատի, որ մէնակ է, ու նրա դէմքին, ի գարմանս իմ՝ հոգի տնտղողի ջանքերի, ժպիտ կը լինի, ոչ թէ կեղծ կենսահաստատման, ի հեճուկս, ոչ թէ միտումնաւոր, այլ նախնայակ ժպիտ, Հայ հայի աներկբայութեան ժպիտ, որի նպատակն ու իմաստը այնքան էլ հեշտ չէ վերծանել: Ի՛նչ գիտէ նա՝ Հայ հայը: Երեւի ինչ-որ բան գիտէ... Թէ՛ւ նրա մէնակութիւնը հիմնկուանից ուզում եմ ողբալ, բայց ես համոզուած եմ, որ արժէ միայն նրա կողքին մի քանի ժամ մնալ, ու իմ ողբը յօդս կը ցնդի՝

*անբնական ու անխոհեմ դառնալով»²⁷: Սա էլ Այվազեանի համոզմունքն է: Այս հայն է դեգերում Ռոստովի գարեջրատներից մեկում ու յայտնում Ուիլիըմ Սարոյեանի գրողական տեսադաշտում: Այս հայի կերպարով ենք ոգեշնչում, երբ Սարոյեանի գրով հաւաստիանում ենք նրա վերապրումի անխուսափելի փաստին. *Կուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար այս ցեղը, կոտակ ու հպարտ մարդկանց այս ցեղը, որի պատմութիւնը պատմուած, բոլոր կռիւները մղուած ու տանուլ են տրուած, որի շինութիւնները խորտակուած, գրքերը չընթերցուած ու երգերը լռած են:**

Փորձէք կործանել այս ցեղը, ասացէք՝ դարձեալ 1915 է, ու աշխարհի աչքը՝ պատերազմի ծխով բռնուած: Կործանեցէք Հայաստանը, տեսէք՝ կը կարողանա՞ք: Իրենց տներից քշեցէք անապատ, մի՛ մոռացէք ձեռքներից խլել ճամփի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի տուէք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսէք՝ նրանք դարձեալ պիտի չապրեն: Տեսէք՝ ցեղը դարձեալ պիտի չյառնի՞, երբ նրանցից երկուսը քսան տարի յետոյ հանդիպեն ու ծիծաղեն իրենց մայրենի լեզուով:

Ձանացէք, տեսէք՝ կարողանա՞ք պիտի, շունշանորդիներ, նրանց արգելել, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ գաղափարները, որ աշխարհում երկու հայ չխօսեն իրար հետ, փորձէք ջնջել նրանց»²⁸:

Պէշիկթաշլեանի մօտ հայի անկոտորում կամքի ու անհատնում գոյութեան վերաբերեալ խորհրդածումն այսպիսին է. *Ան արիւնաքամ, իր Գողգոթային կատարէն, ներողութեամբ, բարեսիրտ հեզմութեամբ եւ աստուածային քաղցր ակնարկով կը նայի վար՝ զօրաւորներու խաժամուժերուն, որոնք կը համարձակին դեռ աղմկել Ազատութեան, Արդարութեան, Եղբայրութեան եւ փոքր ազգերու պաշտպանութեան անունով»²⁹:*

Դեմիրճեանն իր խոհագրութեան մէջ սահմանում է հայի չափը. *Իր չափը չափազանցն է, զարմանալի հաւասարակշռութիւն, որ ծայրայեղութեան մէջ է»³⁰: Նժդեհը եւս ձեւակերպում է հայի այս յատկանիշը. *Գերազանցն իր տեսակի մէջ - ահա՛ ճշմարիտ հայն իբրեւ ոգի եւ կերպար»³¹:**

Դեմիրճեանի նկարագրած հայը նաեւ չարչի է, զծուծ, անկուշտ, հեռու բարձր արժէքների գիտակցումից: *Ինչ որ իրն է ու անմիջապէս դրամի չի վերածուիր՝ չի գնահատեր: Օրինակ՝ իր տաղանդաւորները»³²,*- սա էլ Պէշիկթաշլեանի տեսակէտն է: Բայց այս ամէնը երեւոյթ է, սրա տակ այլ բովանդակութիւն կայ: *Ձեռք էին առնում, ծաղրում էին Հայ հային, իսկ նա գոհ խնդմնդում էր քթի տակ: Նրա քթի տակ շատ աւելի իմաստութիւն կար, քան ոմանց գլխի մէջ: Ու այդպէս քթի տակ, անաղմուկ նա կուտակում էր հարստութիւնը՝ Հայաստանի շնորհքը»³³,*- այսպէս է կարծում Այվազեանը: Տեսնենք, թէ որն է հայի ամենաբնորոշ գիծը՝ Նժդեհի կարծիքով. *Ո՞րն է հայկական նկարագրի հիմնական գիծը:*

- *Լրջութիւնը, հայու մտաւոր եւ բարոյական լրջութիւնը, որն ամէն բանից առաջ ծանրախոհութիւն է ենթադրում»³⁴:*

Այվազեանի ակնարկած Հայաստանի շնորհքը՝ մշտապէս ցրուած է աշխարհի տարբեր ծագերում, ու հայը նախանձախնդիր է դրանք հաւաքելու, ամբարելու, դրանց վրայ գուրգուրալու հարցում: Բայց անօրինակ իր տքնանքով կուտակած բարիքը շոայլելում եւս եզակի է հայը, եւ հոգ չէ, որ կարող է մնալ չհասկացուած. *Դարասկզբին, երբ Հայ հայր Փարիզ ընկաւ աշխարհ տեսնելու, եւ գրպանում դրամ ուներ, փնտռեց ու գտաւ ջրաւոր գրող Շիրվանզադէին ու ամէն օր նրան կերակրում էր Փարիզի ճաշարաններում ու բիստրօներում՝ երբեմն-երբեմն արժանանալով մտաւորականի ուրախ ու նենգամիտ ծաղրին»³⁵,*- Այվազեանն է փաստագրում:

Աշխատանքն իր համար կենսաձեւ դարձրած հայը հիացնում է օտարին իր տեսակով. *Հայուն կամքը կարծր է, քարէն ալ կարծր է: Հայուն կամքը պողպատի պէս է. կը պայքարի, տաք պահելով սիրտը: Քարը հպատակեցաւ Հայուն»³⁶,*- կարդում ենք Պէշիկթաշլեանի Հրաշագործ Հայը՝ պատմութեամբ: Հրաշագործ հայը ոչ թէ թշնամանքի, այլ ակնածանքի է հանդիպում իր պապենական հողում բնաւորուած թուրք գիւղացիների կողմից. *Հայը մեկնեցաւ, օրհնութիւնը հատաւ...»³⁷,*- խոստովանում են թուրք գիւղացիները իր ծննդավայր Տաղաւար գիւղ այցելած Յարութին հրաշագործ հային: Իսկ հեղինակը, համադրելով պատմական եւ կենցաղային փաստերը, գրում է. *Հայերուն զօրաւոր դրացիները միշտ փափաքած են Հայերը իրենց երկրին մէջ ունենալ, շէնցնելու համար քաղաքները արհեստներով, արուեստներով ու վաճառականութեամբ: ...Իսկ թուրքերը հակառակը ըրին. հեռացուցին Հայերը. եւ հեռացնելէ զատ, հազար գէշութիւն ըրին. եւ ի նչ եղաւ հետեւանքը. երկիրը ամայացաւ, աղքատացաւ, վերածուեցաւ ւաւրակի, անապատի: Ճիշտ է, որ Հայերը շինող են: Հայերուն թող տան խաղաղութիւն ու Հայուն հրաշքները թող տեսնեն ամէն օր»³⁸:*

Իր հողն ու տունն անտրտունջ շէնացնող, ինքն իրեն ամենաչարքաշ աշխատանքին յօժարական լծած տեսակ է հայը: *Աշխատանքն է օրէնքների օրէնքը հայու համար: Կուրօրէն ու կրաւորաբար չենթարկուել իր դժխեւ ճակատագրին, այլ պայքարել նրա դէմ, պայքարել շինարարելով: Այսպէս են վարուում հայաբարոյ ժողովուրդները միայն»³⁹,*- Նժդեհի գնահատականն է՝ ի լրումն Յարութին-հրաշագործ հային տրուած Պէշիկթաշլեանի գնահատականի:

Դեմիրճեանը գրում է. *Ամենաչարքաշ անասունը՝ իր արտի մէջ: Այնպէս է հաւաքում բերքը, կարծես յաւիտեան պիտի ապրի, կարծես ոչ ոքի բաժին չպիտի թողնի»⁴⁰:*

Այստեղ գուգահեռը կրկին պէտք է անցկացնել Դեմիրճեանի եւ Սարգսեանի հայեցակէտերի միջեւ: *Եկեղեցի եւ տուն շինող ժողովուրդ է*

հայր: Եկեղեցին ոգու տաճար է, տունը, օջախը՝ կեցութեան: Հասկանալ է պէտք հիմնաւոր տուն ու տեղ դնելու հայի պաշտամունքը. որքան շատ բան ունես կորցնելու, այնքան աւելի ամուր կը լինես հող ու օջախիդ կապուած»⁴¹, - գրում է Սարգսեանը:

Պէշիկթաշլեանի ուշադրութիւնը բեւեռուած է նաեւ հայի մէկ այլ յատկանիշի՝ սնապարծութեան վրայ. *Բայց վա՛յ, եթէ իր ցեղին պատկանող միջակ մը ստանայ օտարներու ներբողականը, չտեսի մը նման, մեծով-պզտիկով, բարեկենդան կը սարքէ, կ'ուռի ու կը պայթի»⁴²:*

Թէ՛ Դեմիրճեանը, թէ՛ Պէշիկթաշլեանը, բազում հարցերում համակարծիք ու տարակարծիք լինելով հանդերձ, իբրեւ անքննելի յատկանիշ, մատնանշում են հայի հիւրասիրութիւնը: *Բայց գնա՛ իր խրճիթը. հագար գող, մարդ, շուն ու գէլ նրա հացի վրայ են: Ուտում են նրա հացը, ինչպէս հայր Աբրահամի սեղանից»⁴³* (Դեմիրճեան): *...երբ խանութը երթաս՝ կը գտնես Հրեայ մը, երբ իր ժողովին երթաս՝ կը գտնես Բիւզանդացի մը, երբ իրեն հետ յարաբերիս՝ յաճախ կը գտնես Քիւրտ մը, երբ հրապարակ երթաս՝ կը գտնես Ճինիւիզ մը: Բայց եթէ իր տունը երթաս, այնտեղ կը գտնես իր լաւագոյն յատկութիւնները: Ու մէջէն չես կրնար ելլեր»⁴⁴* (Պէշիկթաշլեան):

Դեմիրճեանի հայեացքը բազմաբեւեռ է, այն դիտարկում է հայի տեսակը բոլոր շերտերով եւ դրսեւորումներով: Եւ ահա նա երեւակում է մէկ այլ հայի՝ ծոյլ ու ձրիակեր: Սա հայն է, որը հալածուած է սեփական տնից, բնաւեր է, գաղթական: *Եթէ տարագրուի կամ աղքատանայ կամ երբ աշխարհի հեռաւոր մէկ անկիւնը իյնայ, շուտով կը գտնէ հացի ճամփան: Փորձէ իրեն նպաստ տալ, այն ժամանակ կը ծուլանայ, մոլութենէ մոլութիւն կը գլորի:*

Կարելի չէ ոչ սուրով, ոչ հուրով սպանել զինքը: Զինքը մեռցնելու միակ միջոցը իրեն նպաստ տալն է»⁴⁵, - գրում է Պէշիկթաշլեանը: Դեմիրճեանն ունի իր բացատրութիւնը. աշխատանքի նուիրեալ, ժրաջան հայր չի ցանկանում դառնալ օտարի վարձկանը. *Մարդը իր հացի եւ գործի տէրն է ուզում լինել եւ ոչ թէ նրա ծառան: Եւ արդէն հայ նշանակում է տէր...»⁴⁶*: Ու երբ նա տէր է ու ինքնիշխան, նաեւ բարեգործ է, մեծահոգի, անձնուրաց, սիրտն ու ձեռքը բաց ամէնքի առաջ: Եկեղեցի է շինում (*Շինարարութեան բնածին հերոս է հայր»⁴⁷*, - գրում է Նժդեհը), բայց հարկ չի համարում մտնել մէջն ու աղօթք անել: *Տօնական օր մըն ալ կը մտածէ եկեղեցիի ու դպրոցի մասին: Իր մտածումին չափ արագ կը կանգնէ տաճարը եւ ուսումնարանը... ...Օրեր կ'անցնին. մեր ֆէնտմէնը մատուռին առջեւ կը հայիոյէ ու վարժարանին առջեւ կ'աղօթէ»⁴⁸* (Պէշիկթաշլեան): Աղօթք չի անում, բայց ծնում է Նարեկացի: Ո՛րն է այս երկուութեան մեկնաբանութիւնը: Նժդեհն ունի իր պատասխանը. *Նա շատ վաղ հայացրեց քրիստոնէութիւնը: Հայկականութիւնն է հայու ճշմարիտ կրօնը: Արդ, թէ ինչու եմ ասում՝ - Չկան հայեր», կայ Հայր»⁴⁹:*

Ըստ Սարգսեանի՝ հայի հաւատքի հիմքերն ընտանիքում են արմատաւորուած. *Քրիստոսից էլ առաջ քրիստոնէայ մեր ժողովրդի միակ պատուար-պահապանը ընտանիքն է եղել: Հարիւրաւոր տարիներ պետականութիւնը կորցրած հայի իւրաքանչիւր ընտանիք մի-մի միկրոպետութիւն էր՝ իր թագաւորով, մեծ ու փոքրով, օրէնքներով եւ աւանդոյթներով (երեւի այս պատճառով է նաեւ, որ մէկ, միակ թագաւորի հարցում շատ նախանձախնդիր ենք եղել: Ոչ անկառավարելի, այլ նախանձախնդիր, մեզ արժան թագաւորի կարօտ): Հայի արեան կարմիր գնդիկներն են ընտանիքները, յարատեւման խորհուրդը»⁵⁰:*

Եւ ի՞նչ կրի ունի հայն Աստծոյ հետ, երբ մէկ այլ գրողի մեկնաբանութեամբ հայը մարդկային ցեղի հենց այն տեսակն է, որ իր երկրային գործով լրացնում է Աստծոյ բաց թողածը: Այսպէս է խորհում եւ գրում հայերի մասին ռումինահայ գրող, 2013ին Նոբէլեան մրցանակի ներկայացուած Վարուժան Ոսկանեանը՝ իր սքանչելի *Շշուկների Մատեան* վեպում: Նրա մատեանի հերոսները ԺԹ.-ԻԱ. դարերի բազում փորձութիւնների միջով անցած ու վերապրող հայերը, Աստծոյ կամքն ի կատար ածողներն են. *Մարդիկ, ովքեր ամբողջացրել էին Աստծոյ կամքը, որը 20րդ դարում սովորականից աւելի անուշադիր էր եղել»⁵¹:*

Կրկին անդարդառնանք Սարգսեանին, որ իւրովի է փորձել բանաձեւել հայի կապը Աստծու, աստուածաշնչեան ճշմարտութիւնների հետ. *Աստուածաշնչի մէր կերպարը Ղովտի կինն է՝ նա, որ Աստծոյ պատուիրանին հակառակ էտ նայեց ու քարացաւ: Ինչպէս չնայէր, ախր շատ բան ունէր թիկունքում թողած:*

Մե՞զ էլ էտ նայելու համար այսպէս քարացրեց այդ նոյն Աստուած... Տեսնես փոքր ժամանակ իրեն չէ՞ն սովորեցրել, որ քարի հետ խաղալ չի կարելի՝ մէջն արիւն կայ: Այլեւս թող իմանայ, ուրեմն. մենք հենց այն քարն ենք, որի մէջ արիւն կայ ու մեզ ստիպում է շրջուել: Ու որ երկնքից Աստուած, ասել է թէ ինքն էլ իջնի, մենք էտ ենք նայելու: Ետ ենք նայելու անգամ ժայռանալու գնով: Ախր շատ բան ունենք թիկունքում թողած»⁵²:

Ու հայի եկեղացաշինութիւնը սոսկ շինարարական իր բնատուր ձիրքերը կեանքի կոչելու պարզ նպատակ չէ, այլ Աստծուն մերձենալու, աշխարհը մաքրագործելու ձգտում: *Իսկ ճարտարապետել – հայկական, ինչպէս եւ հեզէլական իմաստով – նշանակում է՝ սրբել, սրբագործել երկրի որոշ կէտերը, որպէսզի այնտեղ Աստուած ու աստուածայինը բնակեն»⁵³,* կարծում է Նժդեհը: Եւ շինել-շէնացնելը հայի համար համաժամանակեայ յատկանիշ է, ոչ այս կամ այն պարագայի, այս կամ այն պետական-հասարակական կարգի պարտադրանք: *Մեր երկրագնդի վրայ երկու ուժեր չեն յոգնում – ժամանակն ու հայը՝ մէկը կործանելով, միւսը վերաշինելով»⁵⁴,* դարձեալ Նժդեհն է գնահատում:

Իսկ Պեշիկթաշլեանը վստահ է. Գիտունները կը փնտռեն յալիտենական շարժումը: Հայը կը խնդայ անոնց վրայ ու կ'ըսէ իւրովի. ես եմ յալիտենական շարժումը եւ ինձի է, որ կը փնտռեն»⁵⁵:

Դեմիրճեանի նկարագրած ծէս ու ձեւականութիւն մերժող, դիւանագիտութեան մէջ կասկածելիութեան չափ անկեղծ, ցանկացած գնով ճշմարտութեանը հետամուտ հային Նժդեհն այսպէս է բնոշորում. *Չարի ու բարու իր հասկացողութեամբ, դեռ այսօր էլ հայը մղում է ամենայն աշխարհասիրութեամբ - անքաղաքագիտօրէն - դիրք ճշտելու մէկի թէ միւսի հանդէպ, առանց հաշուի առնելու գոյութիւն ունեցող առարկայական պարագաները:*

*Իր այդ հոգեգծի պատճառով՝ նրա մտածողութիւնն ու արտաքին վարքագիծը ընդունել են ասպաքաղաքական, որով եւ անաշխարհայարմար բնոյթ»*⁵⁶:

Այս բնոյթով էլ հայը հակադրում է աշխարհի միւս ազգութիւններին, իր հարեւաններին, հօր, եսակենտրոն տէրութիւններին, որոնք մեծ դիւանագիտութեան մէջ ընդամէնը սեփական շահին միտուած իրենց խաղն են խաղում, ու այդ խաղում մշտապէս տանուլ է տալիս հայը. *...քաղաքականութեան մէջ բաւական է եւրոպացի շողորթօ մը խաբելու համար ամբողջ հայութիւնը»*⁵⁷, - գրում է Պեշիկթաշլեանը: *...շոյի ը, եւ կը կողոպտուի»*⁵⁸, - գրում է Դեմիրճեանը: Հայը խաբւում է, որովհետեւ ոչ թէ խաղում է ազնուութիւն, արդարամտութիւն, այլ իսկապէս այդպիսին է ու դրանով իսկ խանգարում է աշխարհաքաղաքական հարցեր լուծող ուժեղներին: *Շողորթներ կան,- գրում է Նժդեհը,- որոնք իրենց բացասօրէն մարդկայինը - իրենց նկարագրի ամենադատապարտելի թերիները, կենսաբանական անհրաժեշտութեամբ, ծառայեցնում են իրենց գոյութեան պաշտպանութեան: Հայը վաղուց է դատապարտել աշխարհաքանդ շարութիւնն իբրեւ պայքարի գէնք»*⁵⁹:

Հայը բացառիկ է թէ՛ խոնարհութեան, թէ՛ վախկոտութեան, թէ՛ ըմբոստութեան մէջ: *Հայուն մէջ երկու հոգի կայ. վախկոտ մը եւ քաջ մը կամ ստորուկ մը եւ հերոս մը: Ամէն ազգի մէջ վախկոտը կը կծկուի քաջին ետեւը. հակառակն է Հայուն մէջ՝ քաջը կը գտնուի վախկոտին տակը»*⁶⁰, - գրում է Պեշիկթաշլեանը: Այս տեսակը ամենից յաճախ բնութագրում է իր անկանխատեսելիութեամբ: Սա Սարոյեանի Արտաշն է՝ Հայ Մուկը», որ անօրինակ յաղթանակ է տանում սարսափազդու Ռալֆ օձի հետ մենամարտում: Իրեն մատուցուած խորտիկը՝ Արտաշին, վայելելու նախապատրաստուած օձը *...լսեց Արտաշին, բայց ոչ ծածուացող ու գուրջ հայցող: Նա լսեց հայհոյող Արտաշին, որն անկասկած այլեւս այսպիսի խօսքեր ասելու կարիք պիտի չունենար»*⁶¹:

Եւ սա շարքային հայն է, ոչ՝ բացառիկն ու շնորհեալը: Սա, ինչպէս գրում է Դեմիրճեանը, հայոց դիւցազնավէպի Ձէնով Օհանն է, որ հերոսանում է գերագոյն վտանգի պահին: Սա Այվազեանի միջակ հայն է՝

բարձրաստիճան միջակութիւնը», որ անսպասելիօրէն, ի հեճուկս ամենայն տրամաբանութեան, յաղթում է ոսոխի գերազանցներին ու ունակներին. *Կայ գերազանց հայ, կայ տարօրինակ հայ, կայ ծուռ հայ եւ կայ միջակ հայ. միջակը միջակութիւնից տարբեր է: Միջակութիւնը իր համար նպաստաւոր օրերին երկու թելերը լայնօրէն տարածում է ուղեփակոցի պէս եւ մնացածին պահում իր թելերի ետեւում. միայն իր չափով, միայն իր լայնութեամբ ու երկարութեամբ: Կեցութեան փորձուած ձեւն է, զգուեցնելու չափ ծանօթ ու կրկնուած: Ու նա համապատասխանում է մեծ կայսրութիւններին, իսկ փոքրիկ երկիրը միշտ մազից է կախուած, ու այդ մազի ծայրին եւ գերազանցն է, եւ տարօրինակը, եւ ծուռը, եւ անօգնականը, ու նաեւ բարձրաստիճան միջակութիւնը: Եւ երբ նեղ օրերին քո վրայ արշաւում են ոսոխի գերազանցներն ու տարօրինակները, ունակներն ու կամայինները, նրանց դիմակայելու պէտք է որ դուրս գան տարիների ընթացքում միջակութեան ուղեփակոցի ետեւում հաւաքուած միջակութիւնները»⁶²:*

Դեմիրճեանն իր խոհագրութեան մէջ հայի տեսակը բնութագրելիս վկայակոչում է Սասունցի Դաւիթ դիւցազնավէպի հերոսների յատկանիշները, մասնաւորապէս յիշատակում է դանդաղ, խոնարհ, անսպասելի ըմբոստ ու հարուածող Դաւիթին, քծնող, ստրկացող, յանկարծակի հերոսացող Ձէնով Օհանին: Նժդեհի գրառումներում եւս զուգահեռում են իրական հայի եւ նրա Սասունցի Դաւիթ դիւցազնավէպի հերոսների վարքն ու յատկանիշները, որոնք, ըստ ազգային գործչի, *խոր յարգանք են պարտադրում»*⁶³:

Ի տարբերութիւն Դեմիրճեանի՝ Նժդեհն իր ցեղատեսակի տիպական դրսեւորումը համարում է Սասունցի Դաւիթ դիւցազնավէպի Միերին (իհարկէ՛ Փոքրին). *Միերը՝ հայկական էպոսի հերոսը – իմա՛ ինքը հայ ժողովուրդը – մերժում է գոյութիւն ունեցող աշխարհակարգը՝ լաւագոյնի պահանջ զգալով եւ առաջադրելով»*⁶⁴: Փոքր Միերի կերպարի մէջ հայի տիպաբանութեան շեշտադրումներին ենք հանդիպում նաեւ հայ գրականութեան տարբեր ստեղծագործութիւններում: Ամենաուշագրաւներից մէկը Աւետիք Իսահակեանի՝ Սասունցի Դաւիթ դիւցազնավէպի այդ հերոսին ձօնուած անաւարտ երկն է՝ Սասնայ Միեր» վիպերգութիւնը՝ գրուած 1922ին: Սակայն հայ գրողների եւ մտածողների հայեացքը շարունակում է մինչ օրս էլ յառած մնալ ազգային դիւցազնավէպի այդ ամենաառեղծուածային հերոսի կերպարին, ու մեր օրերում էլ ծնւում են երկեր, որոնց հեղինակները խորագնին հայեացքով փորձում են ներթափանցել Ազաւաքարի մութ քարայրից ներս եւ յայտնաբերել ճշմարտութեան սերմնահատիկը Միերի, ասել է, թէ հայ ազգի ճակատագրում: Ամենաթարմ եւ խօսուն օրինակը Խէչոյեանի *Միերի Դռան Գիրքը* վէպն է, որի վրայ հեղինակն աշխատեց աւելի քան

տաար տարի եւ մահուան մահճում հասցրեց տեսնել նորատիպ վեպի հեղինակային ազդորինակը միայն:

Եւ ի նչ են տալիս հային իր ցեղին բնորոշ արժանիքները, արդեօ՞ք դրանք ծառայում են ինչ-որ շօշափելի նպատակի: Բնաւ ո՛չ: Հայի արժանիքներով, որպէս կանոն, չեն հիանում, նրա հետ չեն բարեկամանում իր շնորհների համար: Աւելին, հայի հանդէպ թշնամանում են, հայի դէմ չարանում, որովհետեւ ինքն է այդ թշնամանքի ու չարութեան նիւթողը, իր նկարագրի դրսեւորումներից է դա: Ըստ Դեմիրճեանի՝ հայն իր դէմ ատելութիւն ծնելու տաղանդն ունի, եւ նախանձ է այլոց յաջողութիւնների նկատմամբ: Ըստ Այվազեանի՝ նախանձելու յատկանիշը հայի միջից արմատախիլ են արել վաղուց. չեքեացող սպին աւելի քան հինգհազարամեայ վաղեմութիւն ունի. *Խօսում էին՝ վիրահատել են Հայ հային, նրա միջից հանել են նախանձի մարմնի մասը, ինչպէս հանում են կոյր աղիքը: Թէպէտ ես կտրուածքը չտեսայ նրա վրայ. հաւանաբար վիրահատութիւնը Հայկ նահապետի կողմից էր կատարուած»*⁶⁵: Նժդեհը եւս Դեմիրճեանի համախոհը չէ հայի նախանձի հարցում: *Հայ հոգում տեղ չունի արտաքին նախանձը: Վաղուց է, ինչ հայը նախանձողին – իր արքային - Արտաւազդին շղթայի զարկած պահում է վիհերում: Նախանձում է չարը, նաեւ՝ հոգեպէս տկարը: Հայը խորշում է թէ՛ մէկից, թէ՛ միւսից»*⁶⁶, - գրում է հայոց զորավարը: Պէշկեպաշեանն ունի հայի նախանձը պատճառաբանելու, աւելին՝ մաքրագործելու միտումը. *Ինկիր ու Հայը ձեռք մը կու տայ քեզի: Ելիր ու կ'ընդունիս իր ոտքը կամ իր նախանձէն եկող կիցը, որ սակայն ազգօգուտ է, որովհետեւ կը մարզէ քեզ ու պատճառ կ'ըլլայ, որ պինդ կենաս ու այ չիյնաս»*⁶⁷:

Բնական է, որ նաեւ բախում են հայ գրողների, մտածողների, հայի տեսակի վերլուծութեամբ զբաղուածների տեսակետները: Ու հենց իրենք իրենց հետ են բախում ու ինքնաժխտում Դեմիրճեանի, Պէշկեպաշեանի, Այվազեանի՝ հային տրուած գնահատականները:

Ըստ Դեմիրճեանի՝ հայն ամենաներողամիտ ցեղն է աշխարհում: Նրան լրացում է Նժդեհը. *Հայուն ծանօթ չէ չարութեան ուրախութիւնը: Չարախնդայ, չէ՛, նա կ'ուզէ իր գոյութեան թշնամիներին իսկ միայն պարտուած տեսնել. բայց ոչ է՛ւ դժբախտ»*⁶⁸:

Դեմիրճեանի հայը անմիաբան է, խռովարար. *Ուր յեղափոխութիւն՝ այնտեղ հայութիւն: Բայց իբրեւ 'ական'՝ ծայրայեղական է»*⁶⁹: Այս նկարագիրը չի փոխուել նաեւ տասնամեակներ անց, ինչպէս որ չի փոխուել Խորենացու *Հայոց Պատմութիւն* մագաղաթի, մանաւանդ այն եզրափակող Ողբ»ի գրութեան ժամանակներից ի վեր: Որպէսզի համոզուենք, մէջբերենք ժամանակակից արձակագիր Վանօ Սիրադեղեանի նորօրեայ բնութագիրը հային. *Հայը պատմական հայրենիքը գերադասում է իրական հայրենիքից:*

Գերադասում է, քանզի պատմական հայրենիքը խնամք չի պահանջում:

Այդ հայրենիքը տուրք չի պահանջում, քրտինք չի պահանջում, պաշտպանության կարիք չունի:

Եւ այդ հայրենիքի հմայքն այն է, որ այնտեղ ապրելը պարտադիր չէ:

Եւ հարիւրամեակներ շարունակ մենք մեր հայրենիքը մաս-մաս դարձնում ենք պատմական հայրենիք ու կապում նրան հաւաքական, չպարտաւորեցնող, սրտագին սիրով:

Հայր հաւաքական գոյութիւնից վեր է դասում հաւաքական սէրը առ ոչինչ»⁷⁰:

Աւս'դ, ճշմարիտ, անվիճելի գնահատական մեր յատկապէս այսօրուայ նկարագրին, որ դարձեալ մեզ վերադարձնում է Դեմիրճեանի խոհագրութեանը, ուր հայը բնորոշւում է որպէս Դոն Քիշոտ, մի տեսակ, որի իրականութիւնն անիրականութիւնն է, նպատակներն ու ձգտումները՝ անգոն ու ինքնանպատակը: Ու այս գնահատականի առումով Սիրադեղեանն ու Դեմիրճեանը համախոհ են, միաբան: Նրանց հետ համակարծիք է նաեւ Պէշիկթաշլեանը. *Հայը, երբ կուսակցական է, կը ճառէ ազատութենէ, երբ չէզոք է՝ կը խօսի միութենէ: Իբր մարդ՝ անհշխանական է, իբր Հայ՝ ազգայնական: Անգամ մը, որ տիրանայ իր հայրենիքին, կրկին անհշխանական կը դառնայ»⁷¹*: Դեմիրճեանի հայն իր պետութիւնն է ուզում ստեղծել, բայց ստեղծելուն պէս լծում է այն իր իսկ ձեռքով քանդելու գործին: Հայն անկարգ է, անհշխանական, անմիաբան, խռովարար: Դեմիրճեանի նկարագրած այս հայը Պէշիկթաշլեանի բնորոշմամբ. *Քաղաքական կեանքի մէջ գործազուրկ է ու գործազրկութեան նպաստ չի տրուիր իրեն»⁷²*:

Սակայն ոչինչ անհետ չի կորչում հայի գոյութեան տիրոջներում, ամէն մի թանկ կորուստ լրացում է համարժէք մէկ այլ ձեռքբերումով: *Հայաստանի քաղաքական անկախութեան կորուստի փաստով հայու համար դարերով ու դարերով պետութեան դերը պիտի կատարէր ազգութիւնը»⁷³*, - գրում է Նժդեհը: Բայց իր պետութիւնից դուրս հայը մարդ-պետութիւն է, մարդ-Հայաստան: Այս են վկայում Նժդեհի հետեւեալ տողերը. Օտարի լծերի տակ երկարօրէն ապրած ժողովուրդներին յատուկ է մի հոգեգիծ, որը հոգեգիտութիւնը անուանում է 'ստրկական երկիւղ':

Այդ ամօթալից արատից, այդ չարիքից գերծ է հայ էութիւնը, որովհետեւ օտար իշխանութեանց լուծը կրելով հանդերձ, նա չէ դադարել իրեն զգալ աւելի բարձր իր երկրին բռնօրէն տիրողից»⁷⁴:

Սեփական պետութեան ներսում հայը յաճախ ուրանում է իր լեզուն, իր սովորոյթներն ու ինքնութիւնը: *Հայը կապուած է իր ցեղին, իր լեզուին. քիչ թէ շատ իր օրաթերթին ու գրականութեանը եւ մշակոյթին: Սակայն վայ, եթէ օտար լեզու մը սորվի՝ կարդացածը հասկնալու չափ, կամացուկ*

մը 'մնաս բարով' կ'ըսէ իր մշակոյթին՝ վերէն նայելով անոր վրայ ու կը բռնէ այլասերման նրբուղին»⁷⁵,- գնահատում է Պէշիկթաշլեանը:

Սակայն բոլորովին այլ է պատկերը, երբ հայն ապրում է օտար հողում, երբ նրա գլխին կախուած է իր տեսակը կորցնելու սպառնալիքը: Մահացու վտանգի ենթարկելով անգամ իր անձը՝ հայը կառչում է սեփական ինքնութիւնից, ինչպէս ամենափրկիչ փարոսից: *Կոստանդնուպոլսում ես հաղիպեցի Հայ հային,- գրում է Այվազեանը:- Նրան երկար ժամանակ ստիպել էին մոռանալ հայերէնը: Մեղմել էին, ճնշել, ու հայոց խօսքը նահանջել էր լեզուից, բայց գնացել էր ներս՝ ողնաշարի մէջ, ուղեղի հեղանիւթի մասն էր կազմել, ու հիմա տատապագին դուրս էր ուզում գալ նրա աչքերից, ձեռք ու ոտքի շարժումներից: Նա տասներեք թուրքերէն բառ էր ասում, մէկ՝ հայերէն, ու նրան թուում էր, որ հայերէն է խօսում: Եւ ինձ էլ արդէն թուում էր, որ, իսկապէս, հայերէն է խօսում, քանզի այդ մի հայերէն բառը իր մէջ հաւաքում էր, հունցում տասներեքը: 'Ղարաբաղ', եւ մնացած ամէն ինչը հասկանալի էր: 'Հայաստան' եւ մնացած ամէն ինչը ոչ միայն հասկանալի էր, այլեւ, չիմանալով մի հատիկ թուրքերէն բառ, ես մանրամասն ընկալում էի նրա տուայտանքները, տեսնում Հայաստանի մեծ կերպարը նրա գոյեղինութեան մէջ»⁷⁶:*

Պէշիկթաշլեանի կարծիքով հայի՝ իր ցեղին կապուած լինելու գլխաւոր գործօնը հենց լեզուն է. *Հայուն իրապէս իր ցեղին կապուած ըլլալը այն ատեն միայն կը հասկցուի. երբ ան օտար տարածուն լեզու մը գիտնալով հանդերձ՝ չի հեռանար Մեսրոպին աննման գիրերէն»⁷⁷:*

Որքան յիշեցնում է այս բնութագիրը Սարոյեանի պատմութեան հայերին: Ասել է, թէ Սարոյեանը եւս հանդիպել է Այվազեանի, Նժդեհի, Պէշիկթաշլեանի ճանաչած հային: *Հանդիպել է, ոգեւորուել, գօտեպնդուել, դիմանկարել նրան՝ բառերի իրեն յատուկ մոգականութեամբ. Եւ հայոց մեր շարժումները, որ այնքան բան է ասում, ծնկներին խփելն ու պայթուն ծիծաղը: Եւ կեանքի ու մեծ-մեծ գաղափարների ծաղրը: Եւ հայերէն բառը, նայուածքը, ժպիտը, եւ այս ամէնի միջից զարմանալի յառնումը ցեղի՝ ուշացած, բայց դարձեալ զօրաւոր, թէեւ տարիներ են թաւալուել, թէեւ քաղաքները կործանուել, հայրերը, եղբայրներն ու զուակները սպանուել, վայրերը մոռացուել, երազները փշրուել, եւ հոգիները յիսից սեւացել են»⁷⁸:*

Հակասութիւնների թնջուկ այս ցեղատեսակը չունի իր սխալներից, անգամ իր դժբախտութիւններից դասեր քաղելու հմտութիւնը: Նոյնիսկ հակուած չէ դէպի նման դաստիարակութիւնը: Նա ոչ միայն չի կոտորում, այլեւ չի չարանում: *Ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մէջ»⁷⁹,*- գրում է Դեմիրճեանը: Բայց եւ պատուախնդիր է, ազատատենչ, ինքն է որոշողն իր ճակատագրի, չի ընդունում օտարի օժանդակութիւնը: Օրհասական պահին ամենածայրայեղ արկածախնդրութիւնն է իր գտած ելքը: Ու սա

Հայկի օրերից մինչև այսօր չհնացող վարքագիծ է: Եթե ըստ Դեմիրճեանի հայը նման է իր որովայնը պատռող վիրաւորուած ճապոնացու կամ լեռներից ցած բերուած գերի արծուի, ապա ըստ Խեչոյեանի՝ հայը իր ստորացուած պատուի ու գապուած վիրաւորանքի մղումով պատրաստ է անգամ դաշն կնքել գիշատիչների հետ: Խեչոյեանի *Արշակ Արքայ, Դրաստամատ Ներքինի* պատմավեպը, որ իրաւամբ հայ պատմավիպագրութեան ողջ ընթացքի խորապատկերում նշանակալից մի երեւոյթ է, Տիրան, Արշակ, Պապ արքաների ժամանակների հոլովոյթում հիւսուող մի պատում է՝ հայի բոլորժամանակեայ նկարագրին տրուող գնահատականներով: Վեպում շարադրուած է մի ցնցող պատմութիւն, որը թէ՛ գեղարուեստական, թէ՛ հայի տիքանական վերլուծութեան առումով ունի համաժամանակեայ նշանակութիւն: Մէջբերենք Արշակ արքայի գրոյց-խրատները՝ ուղղուած իր թագաժառանգ որդուն՝ Պապին:

Թագաժառանգ, քո տարիքին էի, իմ հօրը՝ հայոց թագաւորին, քո Տիրան պապին, իմ դէմ ածուխը դրեցին աչքերին ու կուրացրին: Ու մեզ բոլորիս թագաւորական գերդաստանով, անապատները քալլեցնելով, տարան պարսից մեծ դուռը՝ աքսոր: Պարսից արքունիքի դրանիկ ծառաները կոյր Տիրանին հանում էին պարտէզ՝ զբօսանքի, յետոյ յանկարծ, իբրեւ թէ որեւէ բան էին յիշում, որեւէ պատրուակ էին գտնում, նրան թողնում էին տաղաւարում նստած ու իրենք ժամերով անհետանում էին: Նրանց բացակայ ժամանակ ծառերից իջնում ու պալատից դուրս էին գալիս Շապուհի՝ Որմիզդի տաճարին նուիրուած սրբազան, ձեռնաստուկ կապիկները ու ճաղատ Տիրան թագաւորի գլխի վրայ ընկոյզ էին ջարդում: Յետոյ մինչև մորէմերկ՝ նրա շորերն էին հանում, իսկ մեծ դռան պատուհաններից ծածուկ նայող աչքերը գուարճանում էին պարտէզի կենտրոնում լուռ ու մունջ կանգնած երբեմնի թագաւորով: Էլ ընտրութիւն չկար, ես բաց թողեցի Շապուհի պարտէզում վանդակուած յովազներին նրանց բոլորի վրայ: Յովազները պատահողտեցին ու փախստական դարձրին կապիկներին, իսկ Տիրան թագաւորին հոտոտեցին ու թողեցին հեռացան: Ես ու մերկ Տիրան թագաւորը պարտէզի կենտրոնում իրար փաթաթուած լացում էինք»⁸⁰:

Պատմութիւնն այստեղ չի աւարտում. ժողովրդական առակների յանգոյն՝ Արշակ արքան իր պատանի որդու համար մեկնաբանում է Առակս զինչ ցուցանէ՝ յաւելուածը, նրա գիտակցութեանը հասցնում պատմութիւնից բխող խրատաբանութիւնը. ...*կարո՞ղ ես գուշակել, թէ ինչու, եբք պարսից աքսորում քո Տիրան պապին Շապուհի սրբազան կապիկները պարտէզի կենտրոնում մերկացնում էին, օգնութիւն չէր աղաղակում, դրանիկ ծառաներին չէր կանչում: Չգիտես, բայց պարտաւոր ես իմանայ, իբրեւ թէ՛ նրա ազնուական ծագումը, թագաւորական տոհմի հպարտութիւնը, հայոց թագաւոր լինելը, թոյլ չէր*

տալիս օգնություն կանչել: Իսկ պարսից արքունի վարագորյունների ետեւից ու լուսամուտներից նայող մեծամեծները, ազնուականներն արդէն գուշակել էին այդ ու հենց դրանով էլ գուարճանում էին, փորձութեան ենթարկելով Տիրանի թագաւորական արժանապատուութիւնը, ստիպում էին նրան օգնութիւն աղաղակել: Իսկ դու պիտի տարբերես խեղճ գոռոզամտութիւնը յովազներին միաժամանակ բոլորի վրայ արձակելու դէպքից ու այդ երկուսի փորձից, միշտ երբորդը՝ քոնը պիտի ունենաս»⁸¹:

Իսկ ո՞րն է այդ երբորդը, տրամաբանականը, հայինը: Դեմիրճեանին լսելով՝ կը հասկանանք, որ նսեմութեան ու վսեմութեան, թերարժէքութեան ու կատարելութեան, ստորութեան եւ ազնուափայլութեան միջակայքում խարխափող հայի տեսակը մի անքննելի, ամէն բան արդարացնող ու պատճառաբանող նկարագիր ունի, որ ձեւակերպում է Հայը» խոհագրութեան եզրափակիչ պարբերութեան մէջ: Դեմիրճեանն իր խոհագրութեան եզրափակումին հասնելուց առաջ ասես քիչ-քիչ լիցքաւորում է իր խօսքի պարկուճը, որն անխուսափելիօրէն պիտի պայթի ու ոչ թէ ւաւերութիւն գործի, այլ դառնայ հմայող տեսիլք, հրավառութիւն: Դեմիրճեանի փոքրածաւալ այս երկում վերելքի գագաթը եւ հանգուցալուծումը գալիս են միաժամանակ՝ մէկ հատիկ նախադասութեան տեսքով, որը պատճառաբանում, վերլուծում, սրբագործում է հայի ամենադատապարտելիից մինչեւ ամենաներկայանալի յատկանիշների միաձոյլ գնահատականը: *Եթէ դուք սիրում էք կեանքը, ես սիրում եմ կեանքից աւելի թանկ բանը՝ Ազատութիւնը...»⁸²*, - հպարտօրէն յայտարարում է հայը՝ ի պատասխան իրեն ստրկացնել փորձողներին:

Նոյն միտքն է արտայայտում Նժդեհը՝ իր *Բանտային Գրառումներում*. *Նկարագրի անկախութիւն – ահա՛ էականը»⁸³:*

Պէշիկթաշլեանը համաձայն է իր երկու մեծ հայրենակիցների հետ, սակայն նաեւ լրացնում է վերջիններիս միտքը, յուշում, թէ ինչու հայը չի կարողանում հասնել այդքան բաղձալի անկախութեանը. *Ինքն այ, սակայն, բան մը կը փնտռէ՝ Անկախութիւնը, ու զայն առնելու համար օտարին դռները ափ կ'առնէ: Կ'ըսես իրեն՝ Անկախութիւնը դուն պիտի յայտարարես: Այս անգամ կը չէզոքանայ՝ անկախ հռչակուելու համար»⁸⁴:*

Այսօր էլ հայ գրականագէտների, մտաւորականների որոշակի շրջանակում պտտում է Դեմիրճեանի Հայը» խոհագրութեան առնչութեամբ ոչ-բարեհաճ կարծիքը: Ոմանք այս խորախորհուրդ երկում տեսնում են հայի տեսակը վիրաւորող, նսեմացնող երանգներ միայն: Մակայն հայ գրականութեան կարկառուն դասականը ոչ թէ միտում է ունեցել վիրաւորել, պախարակել իր ցեղը, այլ խորաթափանց գեղագէտի ու իմաստուն գրողի վարպետութեամբ վերծանել այդ ցեղի բազմաշերտ էութիւնը: Արուեստաբան Անգալադեանն այս առիթով գրել է. *Հայաստանի հանդէպ չարակամները՝ թէ՛ ազգի ներսում, թէ՛ ոչ ներսում*

եղող նրա թշնամիներն ու ընդդիմախօսները, այս գործում կը տեսնեն հայ ազգն անարգելու նպատակին ծառայող հրաշալի քաղուածքագիրք: Բայց Աստուած նրանց հետ: Ես հօ տեսնում եմ ազգային մշակողի թափը, ընդարձակութիւնը, ընդգրկուն մտածողութիւնը Հայր» հրապարակագրութեան մէջ: Դ. Դեմիրճեանը ոչ ոքի չի մեղադրում, ոչ ոքի չի դիմում, բայց միեւնոյն ժամանակ նա մեզ հետ է, գրում ու մտածում է մեր մասին, եւ մենք կրում ենք նրա միտքը, ինչպէս իմաստնութեան թանկագին սերմնահատիկ: Մենք նման չենք այն ազգերին, որոնք հրապարակայնօրէն այրել ու այրում են ստեղծագործութիւններ, որոնցում այս կամ այն չափով բացասաբար է խօսուում իրենց մասին: Էլ ուր մնաց, թէ հետապնդել ու սպանել այդ ստեղծագործութիւնների հեղինակներին: Նման օրինակները մեծաթիւ են. բացառութիւն չեն նաեւ մեր հարեւանները»⁸⁵:

Չի կարելի չհամաձայնել Անգալադեանի հետ, թէկուզ յիշելով միայն վերջին տարիներին սեփական երկրի իշխանութիւնների ու հասարակութեան որոշ շերտերի կողմից հալածուած թուրք գրողներ Օրհան Փամուկի, Էլիֆ Շաֆաքի, աղբբեջանցի գրող Աքրամ Այլիսլի օրինակները: Լայնախոհ այս մարդիկ իրենց երկերում⁸⁶ ոչ թէ սեփական ժողովրդին նսեմացնելու, այլ նրանց ճշմարտութեանը հասու դարձնելու, այդ ճշմարտութեան քուրայում մաքրագործելու առաքելութիւնն են ստանձնել: Ճիշտ այնպէս, ինչպէս Դեմիրճեանը, որը ոչ թէ իր ազգը դատափետելու նպատակն է հետապնդում Հայր» խոհագրութեամբ, այլ հայի սխալներն ի ցոյց դնելու, շօշափելի դարձնելու միջոցով դրանք շտկելու քարոզն է կարողում իր ազգի գլխին, ինչպէս անում է իւրաքանչիւր սրտցաւ ծնող իր սխալուած երեխայի դէպքում: Եւ, փառք Աստծոյ, որ Դեմիրճեանին հասկացող, նրա ծնողական խրատին ականջալուր հայորդիներն անհամեմատ աւելի շատ են, քան իմաստուն այդ խրատատուին կարճամտօրէն մերժողները: Մէջբերենք եւս մէկ հատուած Անգալադեանի Հայից՝ Ութունինը Տարի Անց» խոհագրութիւնից. Եւ ի՞նչ է ցուցանում Հայր» խոհագրութիւնը՝ ազգային բնաւորութեան այդ համառօտ հանրագիտարանը: Այդ խոհագրութիւնը հնարաւորութիւն է ընձեռում խորհել այն մասին, թէ ինչպիսի մօտեցում է ունեցել ազգը ամենագլխաւորին՝ սեփական սխալներին, այն բարդոյթներին, որոնք ծագել են ԳՈՅԱՏԵԻՄԱՆ հազարամեակների ընթացքում՝ ազգային եւ հզօր պետականութեան բացակայութեան պայմաններում: Եւ մենք յանգում ենք կարեւորագոյն եզրակացութիւնների՝ անհրաժեշտ է ազգային աշխարհընկալման եւ աշխարհագրացողութեան հիմնարար հարցերի վերանայում: Այս մասին նա ուղղակի չի ասում, բայց այս գաղափարով է համակուած նրա ցաւն ու սէրը կեանքի այդ կծիկի՝ հայի հանդէպ»⁸⁷:

Դեմիրճեանի հետ բանավիճում են» այսօրուայ ուսանողը, քաղաքական գործիչը, մտաւորականը, քննադատում կամ հիանում են նրա խոհագութեամբ: Եթէ անգամ բացայայտօրէն համաձայն չեն նրա ինչ-ինչ մտքերի հետ, ապա ներքուստ կիսում են դրանք. իրենք Դեմիրճեանի համախոհներն են: Պարզապէս դէմ են, որ բարձրաձայն խօսուի հայի այն յատկանիշների մասին, որոնք ներկայանալի չեն, գովաբանելի չեն: Սակայն աւելի շատ են նրանք, որ բարձրաձայն գնահատում են Դեմիրճեանի անաչառ, սթափ, ինքնաքննադատական մօտեցումը սեփական տեսակին, սեփական էութեանը: Ու շատերն այդ խոհագրութեան մէջ իրաւամբ ոչ թէ դատաւիտում, այլ խրատ են տեսնում, ինչպէս մերօրեայ հասարակական-քաղաքական կեանքի եռանդուն տիկնանցից մէկը՝ Երեւանի Դերենիկ Դեմիրճեանի անուան դպրոցի նախկին տնօրէն Անահիտ Բախշեանը: *Գիտէ՞ք՝ երբ եմ դա (Հայր) - Կ.Ռ.) կարդում,- խոստովանում է տիկինը:- Յատկապէս այն ժամանակ, երբ սիրտս նեղում է, խոսովում եմ իմ տեսակից, իմ գենից: Երբ մի տեսակ ջղայնանում եմ, թէ ինչո՞ւ ենք մենք այսպիսին»⁸⁸:*

Ինչպէս նշել էինք յօդուածի սկզբում, այս հրապարակումը գերծ է հայի խոսատիպի գրական-հրապարակախօսական դրսեւորումների լիարժէք, համապարփակ գնահատականը տալու յուսկնութիւնից: Մենք ընդամենը կարող ենք դնել մի պայմանական վերջակէտ եւ անսալ Դեմիրճեանի իմաստուն խրատին:

Ստորեւ ներկայացուած է Դերենիկ Դեմիրճեանի Հայր» խոհագրութեան բնագիրը: Այն ամբողջութեամբ ստուգուած եւ ճշտուած է՝ ըստ թիֆլիսեան միօրեայ թերթի: Բնագրում շեղ տառատեսակով առանձնացուած հատուածներն ակադեմիական հրատարակութեան մէջ բացակայում են: 2012ին Հայր»ի ամբողջական բնագիրը գունաւոր յուշաթերթիկի տեսքով հրատարակուել է Դերենիկ Դեմիրճեանի տուն-Թանգարանի կողմից⁸⁹ խիստ սահմանափակ տպաքանակով՝ 100 օրինակով, եւ բաժանուել Դեմիրճեանի գրականութեան ու յիշատակի նուիրեալներին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Թերթի այդ էջի պատճենում օրինակը պահպանում է Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի ֆոնդում, այն գրանցուած է ՄՄ-647 համարով: Ինչպէս «Հայր» խոհագրութեան՝ այս յօդուածին կցուած տարբերակի, այնպէս էլ մեր խօսքում մէջբերուող քաղուածքների համար հիմք է ծառայել հենց այդ օրինակը: Այսուհետեւ մեր խօսքում Դեմիրճեանի «Հայր» խոհագրութիւնից մէջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից:

² Ռուբէն Անգալադեանի խոհագրութիւնը գրուած է ռուսերէն, այն հրապարակուել է Մոսկուայում լոյս տեսնող *Անիւ (Aniv)* պարբերականի 2010

թուականի թիւ 5(26)ում: Հրապարակումը կարելի է գտնել հետևեալ յղումով՝ <http://www.aniv.ru/archive/19/ot-armjanina-cherez-89-let-ruben-angaladjan/>: Այս յօդուածում մեջբերուած հատուածների հայերէն թարգմանութիւնը կատարուած է մեր կողմից:

- ³ Եորգան Գիսփերթի թարգմանութեամբ «Հայը» խոհագրութիւնը տպագրուել է Ֆրանկֆուրտում լոյս տեսնող *ADK (Armenisch – Deutsche Korrespondenz)* (Հայ-գերմանական թղթակցութիւններ) հանդէսում, 1999 թուականի 4րդ թողարկման 40-41րդ էջերում: Խոհագրութեան մասին իր վերլուծութիւնն է տպագրել նաեւ Գիսփերթը՝ “Der Armenier’ Als Dichte Beschreibung” (‘Հայը’՝ որպէս տեսակարար կշռի բնութագիր) վերնագրով: Տպագրուել է նաեւ մեր ներածական խօսքը՝ “Derenik Demirschjan Und Sein Essay ‘Der Armenier’” (Դերենիկ Դեմիրճեանը եւ նրա ‘Հայը’ խոհագրութիւնը) վերնագրով:
- ⁴ Ռուսերէն թարգմանութիւնը հրապարակուել է համացանցում՝ Կարէն Աղէկեանի թարգմանութեամբ: Հրապարակումը կարելի է գտնել հետևեալ յղումով՝ <http://karen-aghhegian.livejournal.com/20901.html>:
- ⁵ «Հայը»ի հունգարերէն թարգմանութիւնը լոյս է տեսել *Erdélyi Örmény gyökerek füzetek* (Տրանսիլուանիայի հայկական արմատներ տետրակներ) պարբերականում՝ հունգարացի հայագետ Լասլօ Բոռդելիի թարգմանութեամբ, Բուդապէշտ, 2013, Փետրուար, էջ 23:
- ⁶ Դերենիկ Դեմիրճեան, *Ընտրանի*, Երևան, Նայիրի, 2012:
- ⁷ Դեմիրճեան, *Ընտրանի*, էջ 4:
- ⁸ Տե՛ս ծանօթագրութիւն 1:
- ⁹ Դեմիրճեանի «Հայը» խոհագրութիւնը կարելի է գտնել Բենիամին Թաշեանի *Հայկարան Է. եւ Ը. Տարիներ* դասագրքի 254-257 էջերում: Դասագրքի 6րդ տպագրութիւնը կատարուած է Պէրոյթ, 1967ին, Տպարան Համազգային:
- ¹⁰ Դերենիկ Դեմիրճեան, *Երկեր Երկու Գրքով, Գիրք Երկրորդ*, Երևան, Սովետական Գրող, 1977, էջ 259: Այսուհետեւ Դեմիրճեանի «Հայը Ամենաքնքուշը» երգիծական մանրապատումից մեջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից: Այս ստեղծագործութիւնն առաջին անգամ տպագրուել է *Խորհրդային Հայաստան* պարբերականում, 10 Դեկտեմբեր 1926ի, թիւ 284:
- ¹¹ Նոյն, էջ 260:
- ¹² Նոյն, էջ 260:
- ¹³ Նշան Պէշկլթաշլեան, *Հայ Աղբրտիք*, Փարիզ, 1941, էջ 52: Այսուհետեւ Պէշկլթաշլեանի «Հայը» երգիծապատումից մեջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից:
- ¹⁴ Նոյն, էջ 52:
- ¹⁵ Նոյն, էջ 53:
- ¹⁶ Նոյն, էջ 52:
- ¹⁷ Նոյն, էջ 57:
- ¹⁸ Գարեգին Նժդեհ, «Բանտային Գրառումներ, Հայը»: Նիւթը տեղադրուած է հետևեալ կայքում՝ <http://hay-power.com/publ/10-1-0-284>: Այսուհետեւ Նժդեհի խոհագրութիւնից մեջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից:
- ¹⁹ Նոյն:

-
- ²⁰ *Գաբուն* ամսագիր, Երևան, 1989, թիւ 3 (268), էջ 7: Այսուհետև Վազգէն Սարգսեանի «Քարի Մէջ Արուն Կայ» ակնարկից մէջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից:
- ²¹ Աղասի Այվազեան, *Երկրի Վրայի Զբաղմունքը*, Երևան, Նայիրի, 1993, էջ 126: Այսուհետև Այվազեանի «Հայ Հայր» պատմուածքից մէջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից:
- ²² Տէ՛ս՝ ծանօթ. 1:
- ²³ Տէ՛ս՝ ծանօթ. 13:
- ²⁴ Տէ՛ս՝ ծանօթ. 21, էջ 125:
- ²⁵ Տէ՛ս՝ ծանօթ. 13, էջ 54:
- ²⁶ Տէ՛ս՝ ծանօթ. 18:
- ²⁷ Տէ՛ս՝ ծանօթ. 21, էջ 129:
- ²⁸ Ուիլիըմ Սարոյեան, *Ընտիր Երկեր, Երէք Գրքով, Գիրք Ա*, Երևան, Նայիրի, 2008, էջ 38: Այսուհետև Սարոյեանի «Հայր Եւ Հայր» պատմուածքից մէջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից:
- ²⁹ Տէ՛ս՝ ծանօթ. 13, էջ 57:
- ³⁰ Տէ՛ս՝ ծանօթ. 1:
- ³¹ Տէ՛ս՝ ծանօթ. 18:
- ³² Տէ՛ս՝ ծանօթ. 13, էջ 55:
- ³³ Տէ՛ս՝ ծանօթ. 21, էջ 127:
- ³⁴ Տէ՛ս՝ ծանօթ. 18:
- ³⁵ Տէ՛ս՝ ծանօթ. 21, էջ 125:
- ³⁶ Նշան Պէշիկթաշլեան, *Հրաշագործ Հայր*, Պէյրութ, Էտվան, 1957, էջ 22: Այսուհետև Պէշիկթաշլեանի «Հրաշագործ Հայր» պատմուածքից մէջբերուող քաղուածքները կը լինեն նշուած աղբիւրից:
- ³⁷ Նոյն, էջ 18:
- ³⁸ Նոյն, էջ 19:
- ³⁹ Տէ՛ս՝ ծանօթ. 18:
- ⁴⁰ Տէ՛ս՝ ծանօթ. 1:
- ⁴¹ Տէ՛ս՝ ծանօթ. 20, էջ 12:
- ⁴² Տէ՛ս՝ ծանօթ. 13, էջ 55:
- ⁴³ Տէ՛ս՝ ծանօթ. 1:
- ⁴⁴ Տէ՛ս՝ ծանօթ. 13, էջ 53:
- ⁴⁵ Նոյն, էջ 54:
- ⁴⁶ Տէ՛ս՝ ծանօթ. 1:
- ⁴⁷ Տէ՛ս՝ ծանօթ. 18:
- ⁴⁸ Տէ՛ս՝ ծանօթ. 13, էջ 53:
- ⁴⁹ Տէ՛ս՝ ծանօթ. 18:
- ⁵⁰ Տէ՛ս՝ ծանօթ. 20, էջ 12:
- ⁵¹ Վարուժան Ոսկանեան, *Շուկների Մատեան*, Երևան, ՀԳՄ Հրատ., 2012, էջ 467:
- ⁵² Տէ՛ս՝ ծանօթ. 20, էջ 8:
- ⁵³ Տէ՛ս՝ ծանօթ. 18:
- ⁵⁴ Նոյն:

-
- 55 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 54:
- 56 Տե՛ս՝ ծանօթ. 18:
- 57 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 56:
- 58 Տե՛ս՝ ծանօթ. 1:
- 59 Տե՛ս՝ ծանօթ. 18:
- 60 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 55-56:
- 61 Ուիլիըմ Սարոյեան, *Հայ Մուկը*, Երևան, Ամարաս, 2000, էջ 16:
- 62 Տե՛ս՝ ծանօթ. 21, էջ 127-128:
- 63 Տե՛ս՝ ծանօթ. 18:
- 64 Նոյն:
- 65 Տե՛ս՝ ծանօթ. 21, էջ 127:
- 66 Տե՛ս՝ ծանօթ. 18:
- 67 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 55:
- 68 Տե՛ս՝ ծանօթ. 18:
- 69 Տե՛ս՝ ծանօթ. 1:
- 70 Վանօ Սիրադեղեան, *Երկիր: Ցպահանջ...*, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2011, էջ 59: «Խաչակրաց Բանակին Սպասելիս» հրապարակագրությունն առաջին անգամ լոյս է տեսել *Հայք* թերթում, 23.10.2000ին:
- 71 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 53-54:
- 72 Նոյն, էջ 54:
- 73 Տե՛ս՝ ծանօթ. 18:
- 74 Նոյն:
- 75 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 55:
- 76 Տե՛ս՝ ծանօթ. 21, էջ 128:
- 77 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 55:
- 78 Տե՛ս՝ ծանօթ. 28, էջ 38:
- 79 Տե՛ս՝ ծանօթ. 1:
- 80 Լևոն Խեչոյեան, *Արշակ Արքայ, Դրաստամատ Ներքինի*, Երևան, Նայիրի, 1995, էջ 155:
- 81 Նոյն, էջ 159:
- 82 Տե՛ս՝ ծանօթ. 1:
- 83 Տե՛ս՝ ծանօթ. 18:
- 84 Տե՛ս՝ ծանօթ. 13, էջ 54:
- 85 Տե՛ս՝ ծանօթ. 2:
- 86 Նկատի ունենք մասնաւորապէս Օրհան Փամուկի *Չիւնը*, Էլիֆ Շաֆաքի *Ստաւրուլի Բիճը*, Աքրամ Այլիսլիի *Քարէ Երազներ* ստեղծագործությունները:
- 87 Տե՛ս՝ ծանօթ. 2:
- 88 Հրապարակումը գետեղուած է հետեւեալ կայքում՝ <http://www.armtimes.com/18295> :
- 89 Յուշաթերթիկի մէկ օրինակ պահպանում է Դերենիկ Դեմիրճեանի տուն-թանգարանի գիտաօժանդակ ֆոնդում՝ ԳՕՄ-876 համարով:

DERENIK DEMIRCHYAN'S ESSAY "THE ARMENIAN" IN RELATION WITH
OTHER ARMENIAN AUTHORS' MANIFESTATIONS REGARDING THE
CHARACTER OF THE ARMENIAN
(SUMMARY)

KARINE RAFAYELIAN
karine.rafaelyan@mail.ru

Derenik Demirchyan's essay "The Armenian" is presented in the following article. Though mainly concentrating on Demirchyan's estimation of the character of the Armenian, more noteworthy estimations made by other Armenian writers and politicians about our national character during different periods are also reflected upon in the article.

The Armenian with his past and present is in Demirchyan's sight. During all the hardships in our history over the millennia, the image of the Armenian character has not varied. The field of our survey includes assessments of the national and human character of the Armenian by authors from all periods. They are as follows: the father of Armenian history, Movses Khorenatsi (V century), Derenik Demirchyan, Nshan Peshiktashlyan, William Saroyan (20th century), Aghasi Ayvazyan, Vazgen Sargsyan, and Levon Khechoyan , as well as writers who are alive, such as Varoujan Voskanyan and Vano Siradeghyan. Some works in the frame of our survey can be rightly called oratorical, not literary-fiction. It is the activity and personality of these authors that lets us speak about them not as writers but as politicians engaged in the vital problems of our nation. Such authors are Garegin Nzhdeh, Vazgen Sargsyan, Vano Siradeghyan.

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ
ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ
ԶՈՒԱՐՃԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԷՍ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՐՄԷՆ Շ. ՍԱՐԳՍԵԱՆ**

Հայ ժողովուրդը դարեր շարունակ, անկախ ժամանակներից ու տրամադրությունից, բանարուեստի անգին գոհարներ է ստեղծել ու սնունել ի՛ր իսկ ստեղծածով: Այդ սնունդներից մեկն էլ եղել է ժողովրդական երգիծական մանրապատում-գուարճախօսությունը: Ինչքան էլ ծանր ու դաժան է եղել կեանքը, այն իր կենսափիլիսոփայությամբ, սեղմ խօսքով շատ բան ասելու կարողությամբ ու դրական լիցքերով օգնել է մարդուն՝ ծիծաղի պրիսմակով նայել անգամ ստեղծուած ամենաողբերգական իրավիճակներին, հնարաւորինս ձերբազատուել հոգեկան ցնցումներից, վերականգնել կենսագործունէութիւնն ու տրամադրուել նորանոր արարումների:

Հայոց Մեծ Եղեռնը իր անդրադարձն է գտել հայ ժողովրդական վիպական եւ քնարական բանահիւսութեան մի շարք տեսակներում (աւանդագրոյց, ժողովրդական յուշապատում, առած-ասացուածք, անէծք, տեղահանութեան, կոտորածի, օրօրոցային, լալեաց կամ սգոյ երգեր եւն.): Իսկ բանաւոր ստեղծագործութեան այնպիսի տեսակ, ինչպիսին երգիծական մանրապատում-գուարճախօսութիւնն է, ինչպէ՛ս էր արտացոլելու ցեղասպանութեան թեման...:

2014ին, իբրեւ Հայոց Ցեղասպանութեան փաստացի ապացոյցներ, փորձեցինք տպագիր զանազան պատմաազգագրական ժողովածուներից, յուշագրութիւններից եւ անէկդոտների գրքերից, ինչպէս նաեւ մեր անձնական գրառումներից ի մի բերել Ցեղասպանութեանն առնչուող գուարճապատում-գուարճախօսական բնոյթի նիւթեր եւ բանագիտական մօտեցումներին զուգահեռ՝ ներկայացնել նաեւ դրանց փաստավաւերագրական արժէքը:

Մեծ Եղեռնը վերապրածների մէջ եղան մարդիկ, որոնք տարիներ անց կարողացան իրենց մէջ ուժ գտնել՝ այդ օրերին ու

դրա հետեւանքներին առնչուող տարատեսակ յուշերը գրառելու, գալիք սերունդներին ի պահ տալու թուրքի ու նրա աջակիցների կողմից իրագործուած վայրագութիւնները՝ որպէս աշխարհի քաղաքակիրթ մարդկութեան երեսին դաջուած ամօթանքի խարան, որպէս մարդկութեանն ուղղուած սթափութեան կոչ ...:

Յաւր մի փոքր մեղմուելուց յետոյ յուշագրութիւններին զուգահեռ՝ պատահ-պատահ հաւաքում, գրի են առնում նաեւ Յեղասպանութեանն առնչուող զուարճապատում-զուարճախօսութիւններ: Վերքերը բուժել սկսող փրկուածների բեկորներն ու նրանց ժառանգները փորձում էին երգիծանքի կաղապարի մէջ տեղաւորել ոչ թէ բուն եղեռնի օրերի, այլ դրանց յաջորդած ժամանակների գաւեշտալի պատմութիւնները:

Խորհրդային Հայաստանում եւ Սփիւռքում (Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Յունաստան, Ֆրանսիա, Կանադա, ԱՄՆ, Թուրքիա՝ Ստամբուլ) Մեծ Եղեռնը վերապրածներից գրառած բանաւոր վկայութիւնները՝ յուշերը, գրոյցները եւ պատմական բնոյթի երգերը վաստակաշատ բանահաւաք-բանագէտ Վերժինէ Սվազլեանը ի մի բերեց իր *Հայոց Յեղասպանութիւն. Ականատես Վերապրողների Վկայութիւններ*² ստուարածաւալ աշխատութեան մէջ: Իսկ երբեմնի հայաշունչ բնակավայրերի (Մուսա Լեռ, Կիլիկիա, Պոլիս) բանաւոր մշակութային արժէքները նա կարողացաւ իր վերապրող ժողովրդին վերադարձնել առանձին ժողովածուներով³:

Աշխարհով մէկ ցրուած սփիւռքահայութեան համար նմանատիպ նիւթերի հրատարակումով, հեղինակները ամէն կերպ ձգտում էին յօշոտուած հայրենիքի իրենց անկիւնը վերակենդանացնել, տալ հայրենի բնօրրանում ապրած հայութեան կեանքը, Յեղասպանութեան հետեւանքով աշխարհով մէկ ցրուած նրանց բեկորների յիշողութիւններն ու զուարճալի պատմութիւնները⁴:

Այլ էր պատկերը Խորհրդային Հայաստանում: Մինչեւ 1950-60ականները Յեղասպանութեան եւ պահանջատիրութեան թեմայով խօսելն անգամ արգելուած էր, ուր մնաց թէ յուշապատումներ եւ անեկդոտներ հրատարակելը: Միայն Ստալինի մահից յետոյ սկզբում վախով ու ցածրաձայն, այնուհետեւ՝ Խ. Հայաստանում եւս սկսեցին բարձրաձայն պատմել, որոշ ժամանակ անց նաեւ հաւաքել ու տպագրել թէ՛ Մեծ

Եղեռնի յուշագրութիւնները, թե՛ քաղաքական ու Ցեղասպանութեան թեմաներով երգիծապատում-գուարճախօսութիւնները:

Ցեղասպանութեան թեմային առնչուող երգիծապատումները մինչեւ 1960ականները գերազանցապէս ծաւալուն սիւժետային կառուցուածք ունեն, ժողովրդական յուշապատում-գրոյցների տեսքով են հանդէս գալիս, հերոսները եղեռնի կնիքը կրող որոշակի դէմքեր են, իսկ անսպասելի ծիծաղ յարուցող վերջաբանային աւարտն էլ յուշում է նրանց տեսակային յատկանիշը:

Այսպէս, Սարգիս Բախտիկեանը (Ներսէս Եպս.) «Բերան Դրուելիք Է» գուարճապատումում հակիրճ ներկայացնելով 1895ին ջարդերին յաջորդ տարում շեփիկցիների կենսունակութեան եւ գոյութեան պայքարի նկարագիրը, ներկայացնում է աւերակ եկեղեցու մնացորդները օրհնելու նպատակով քաղաքից քահանայ հրաւիրելու, «*գայն վերակառուցանելու մասին մտածելու եւ ժողովուրդին Սրբութիւն, Հաղորդութիւն տալու*» հետ կապուած պատմութիւնը եւ Շեփիկայ Խելացիի հետ տեղի ունեցած գուարճալի երկխօսութիւնը:

Բոլորը հաւաքուել են, բացի Խելացիից, որ «...անդին, հեռուն գլուխը կախ կ'աշխատէր առանձին:

- Աղբար Խելացի, աղբա՛ր...

- ...

- Աղբա՛ր, աղբա՛ր...

- Ծօ տնաւեր, ի՞նչ կայ, ի՞նչ...

...

- Ծօ, էկու՛ր, էկու՛ր, ծօ Տէր Պապը քաղքէն էկեր է, ծօ սրբութիւն կուտաւեա, սրբութիւն ն...

- Իմ փայրս փենճիրէն թող դնէ, փենճիրէ՛ն...

Ծօ, աւ փենճիրէ դրուելիք չէ, բերան դրուելիք է, բերան, բերա՛ն...»⁵:

Իսկ «Տղա՛ս, անիկա ես ալ կ'առնեմ»⁶ գուարճապատումում կոտորածներից հրաշքով փրկուած մի ընտանիքի բաժին հասած ճակատագրի հակիրճ, բայց միաժամանակ խօսուն նկարագրութեամբ ներկայացնում է փախէփախի ժամանակ կորած եւ նորից յայտնուած կնոջ ու դեզերումներից յետոյ մէկ ուրիշի հետ

եկեղեցով պսակուած ամուսնու անելանելի վիճակը եւ դրանից դուրս գալու "ելքի" առաջադրումը.

«Տարագրութեան սեւ օրերէն վերջ պատահած ողբերգութեան մը մանրանկարը մարաշցի Տ. Յակոբի պարզամիտ արտայայտութեամբը երգիծանքի նիւթ կը դառնայ:

Ա. Համաշխարհային Պատերազմէն առաջ ամուսնացած գոյգի մը ամուսինը, ազատուելով սպանդէն՝ Զինադարարէն ետք՝ նախ Կիլիկիա եւ ապա Պէյրութ կ'իյնայ: Իր կիներ Բաւական մը փնտտելէ եւ սպասելէ վերջ՝ չի կրնար գտնել զայն եւ յուսահատ՝ կը յաջողի ամուսնանալ ուրիշ հայուհիի մը հետ:

Իր ամուսնանալէն յետոյ՝ չար բաղդէն ըսենք, նախկին կիներն ալ գտնուելով կու գայ կը հասնի իր ամուսնին մօտ: Բնական է Հայ Եկեղեցին մէկ պսակ կ'ընդունի եւ բազմակնութիւնը չ'արտօներ: Այս երկու օրինական կիները եւ իրենց միակ ամուսինը՝ կը դիմեն Պէյրութի Առաջնորդարանը դատաստանուելու:

Իրենց Առաջնորդարան եկած ատեննին մարաշցի Տ. Յակոբն՝ ալ հոն կ'ըլլայ: Այս երկու կիներէն առաջին ամուսնացողը՝ գաւառացիի տարագով, քիչ մը ոչ-նրբացած, տգեղ մէկը կ'ըլլայ, իսկ երկրորդը՝ աւելի ներկայանալի ու գեղեցիկ, առաջին կնկան հետ բաղդատելով:

Հիմա երկու կիները քով քովի կեցած են եւ դիմացն ալ իրենց միակ ամուսինը. Տէր Յակոբ քահանան խօսքը ուղղելով միակ ամուսնին կ'ըսէ.

- Տղա՛ս, մեր եկեղեցին պսակի վրայ ուրիշ պսակ չ'ընդունիր, բայց գէշ օրերու մէջ այսպիսի բան մը ակամայ պատահած է: Ասոր մէջ դուն յանցաւոր չես, ժամանակն ու պայմաններն են յանցաւորը, բայց կրնաս նպաստել այս թնճուկի լուծման. ըսէ՛ նայիս, որ կիներ կ'ընդունիս եւ անոր հետ կենակցիլ կ'ուզես, առաջինի՞ն հետ թէ՞ երկրորդին...:

Խեղճ մարդը հիմա ի՞նչ ըսէր, երկուքն ալ իր պսակեալ կիներն էին: Մէյ մը կը նայի գաւառացի կնկան, իր խեղճ ու կրակ վիճակին մէջ, մէյ մըն ալ երկրորդ կնոջ, որ աւելի վայելուչ էր դէմքով, մարմնով եւ հագուստով. այս երկընտրանքին մէջ ի վերջոյ՝ իր նախընտրութիւնը կ'իյնայ երկրորդ կնկան ու ձեռքի մատնանշումով մը ցոյց կուտայ Տէր Հօր, որ վերջինին հետ կ'ուզես կենակցիլ...:

Այս մատնանշումէն դժգոհ՝ Տէր Յակոբը իր ծանօթ պարզամտութեամբ կը գռչէ.

- Օղուլ, անիկա ես ալ կ'առնեմ, մարիֆէթը միւսը առնելն է: Եկու ը Հայ Քրիստոնէի բարի հոգիով մը՝ միւսը առ. ասիկա անտէր չի մնար, մի վախնար. բայց մեղք կ'ըլլայ միւսին...»:

Որքան էլ նկարագրուող իրադարձութիւնները ծանր լինէին, եւ ստեղծուած իրավիճակը՝ անելանելի, հենց այս առաջադրուած «ելլն» էլ զուարճապատումում դառնում է անսպասելի ծիծաղի աղբիւրը:

Ազգագրագէտ Սերինէ Աւագեանն Արճակ Գաւառին նուիրուած իր աշխատութեան մէջ 1896 եւ 1915 թուականների ցեղասպանութիւններին առնչուող յուշապատումային նիւթեր է օգտագործել՝ համեմուած արճակցի զուարճախօս եղբայրների սրամտութիւններով ու «սգերգային» նմանակումներով.

«1896ի կոտորածին լրիւ որբացած, լրիւ թալանուած, սակայն արդէն տնտեսութիւնները վերականգնուած եղբայրներին, որոնցից մէկը մի պարզ գեղջուկ է, միւսը՝ վարագի որբանոցն աւարտած գիւղական ուսուցիչ, եւ սակայն իրենց ախտում ունէին տասը անասուն, զարմանք է պատճառում, որ շահբաղցու ախտում կայ ընդամէնը մի կով, մի հորթ ու մի գետնատարած էջ ...»:

...Վշտակցի տխուր տեսք ընդունելով, նրանք բռնում են իշատիրոջ թելերից,– Կյազպար աղա, ըտըսկընա մի՛ անէ, խոկյատառց կ'անես, մեղքի ի,– ասում է աւագ եղբայրը, իսկ փոքրը լրացնում է,– Տիւ խաց խալալ ասա, մենք էլ մեր խուկի խամար շարական ասենք»:

Պագում են հրաշալի ձայն ունեցող երիտասարդները՝ գետնատարած էջի գլխավերեւն ու ոտնատակը, մէկը բռնում է էջի պոչը, միւսը՝ ականջը եւ սկսում են փոխ առ փոխ երգել՝ Կովկասից Արճակ հասած «Մատկած Բշու» մասին, երգիծական ողբը՝ պրիստաւ, գուբերնատոր, մայական եւ այլ խօսքերը փոխարինելով վանի մեծահարուստների ազգանուամբ ու աւելի ճոխացնելով կատակերգը.

- Ջիդաչուն փալթոյացու լայէդ սեւ կաշուտ մեռնեմ, իշօ ջան, չոշօ ջան.

Շահբաղու ռէս խատներ, տիւ չմեռնիր, չոշօ ջան...

- Թիւթունջու տան լայեղ՝ չայի կտել ակրնջներացըտ մեռնեմ,
իշօ ջան, չոշօ ջան.

Շահբաղու տիրացուն խատներ, տիւ չմեռնիր, չոշօ ջան...»

Եւ այսպէս շարունակուում է տեղայնացուած ծաղրերգը, մինչեւ
էշը հոգին փչում է, ինչից յետոյ միայն շահբաղի գինեգործը
սթափուելով՝ ասում է.

*«- Առճակցիք... ասպար ծէ ըտըսկնա ուրախ պախի, էսա
կարաս իմ տան խամար եմ պախէ, տիւք էլ էսա կարսի կյինուց
խմէք, գնա կ'ասեմ՝ ասպած ծէ հյա ըտըսկնա պախի:*

*Աստուած Ֆրանգուլեան եղբայրներին 'ուրախ' պահեց
նրանով, որ յղեց թուրքական բանակ՝ անվերադարձ... Իսկ երեքը՝
մեծ եղբօր, մէկը՝ փոքր եղբօր մանկիկները, իրենց ջահել մայրերի
եւ պառաւ տատի հետ... հալուեցին 15ի Եղեռնին, այնպէս որ
Ֆրանգուլեան Սարգսի տոհմը մոռացուեց»⁷:*

Ի տարբերութիւն յետեղեռնեան՝ մինչեւ 1960ականները
ստեղծուած գուարճապատումների՝ 1960ականներից յետոյ
շրջանառուող նիւթերը հիմնականում երգիծական կարճաոտ
խտացումներ են՝ գուարճախօսութիւններ, մի մասն էլ՝
երկխօսական գուարճալիքներ: Դրանց մէջ Հայոց
Յեղասպանութիւնը ներկայացում է տարբեր դրսեւորումներով.-

Ա. Խորհրդային տարիներին լռեցրած ցաւի պոռթկում եւ պահանջատիրութիւն

1965 Ապրիլի 24ին բողոքի եւ պահանջատիրութեան ցոյցերն
ընդգրկեցին ողջ Խորհրդային Հայաստանը: Դերասան, բեմադրիչ
Գրիգոր Չալիկեանը սեւակեան իր յուշապատումում Երեւանում
տեղի ունեցած փոթորկալից այդ օրերի մասին ասեա թէ ինչ է
գրում. *«Աշխարհասփիւռ հայ մարդը գրկաբաց-սրտաբաց
ընդունեց «Չանգակատունը»: Նրա ղօղանջները շուտով իրենց
արձագանգն ունեցան եղեռնի 50ամեակի պոռթկման օրերին,
որպէս զարթօնքի կոչ: Ժողովուրդը յորդեց, ծովացաւ
կենտրոնական հրապարակում, ալեկոծուեց՝ 'հողէ բը, հողէ բը'
մոնչալով: Հրէջջ մեքենաները ջրախեղդ էին անում ամբոխին...»⁸:*

Ազգային ցաւի ժայթքումը ջրի շիթերով լռեցնելու՝
կառավարութեան ձեռնարկած այդ քայլը արձանագրուեց նաեւ
գուարճախօսութիւնների մէջ.

1965 թուականի Ապրիլի 24ին՝ եղեռնի 50ամեակի օրը ժողովուրդը հրաբխի պէս պոռթկաց ու ժայթքեց՝ լցունելով հրապարակ, այնուհետեւ՝ օպերայի մօտ՝ վանկարկելով.

- Հո-դե՛ -րը, հո-դե՛ -րը...

Ու յանկարծ յայտնուում են հրշէջ մեքենաներն ու ջրի շիթերով փորձում ցրել ժողովրդին:

Ժողովուրդ, – գոռում է ինչ-որ մէկը՝ խառնուած ամբոխի միջից, – ջուրը տուին, մնացին հողերը...

Այդ օրերին ժողովրդի մէջ սկսեց շրջանառուել «Մենք հող ենք ուզում, սրանք ջուր են տալիս» անեկղոտային արտայայտութիւնը...⁹:

Հողերի պահանջատիրութիւնը արտայայտուած է նաեւ Լոռիում գրանցուած պատումներից մէկում, որտեղ անսպասելի ծիծաղը դրսևորուում է միամիտ ու այդ պոռթկումներին անտեղեակ ու անհաղորդ լոռեցի գուարձախօսի պատասխանի միջոցով.

«1965 թուականին Եղեռնի 50ամեակի ցոյցերի ժամանակ Կիրովականի (այժմ՝ Վանաձոր) հրապարակում հաւաքուած ժողովուրդը վանկարկում էր.

- Հո-դե՛ -րը, հո-դե՛ -րը, հո՛-դենք ու-զում, հո՛-դենք ու-զում...

Ցուցարարներից մէկը, տեսնելով լոռեցի Ռուբէնին, հարցընում ա.

- Ռուբէ՛ն դայի, դու էլ ե՞ս հողերն ուզում:

Ասում ա.

- Չէ, բալա՛ ջան, ինձ մի աւտօ աւազ ա պէտկը...» (ԱՄՇՀ):

Բ. Հայկական ծինի յաւերժութեան ու ծլարձակման վկայութիւններ

Սարոյեանն իր «Հայը Եւ Հայը» պատմուածքում այսպիսի պոռթկումով է հիմնաւորում դա. «Կ՛ուզենայի աշխարհիս երեսին տեսնել այն ուժը, որ խաթարել կարենար այս ցեղը... Փորձէք կործանել այս ցեղը, ասացէք՝ դարձեալ 1915, ու աշխարհի աչքը՝ պատերազմի ծխով բռնուած: Կործանեցէք Հայաստանը, տեսէք՝ կը կարողանա՞ք: Իրենց տներից քշեցէք անապատ, մի՛ մոռացէք ձեռքներից իլէլ ճամփի հացն ու ջրի վերջին ումպը, կրակի տուէք իրենց ու իրենց Աստծու տները: Տեսէք՝ նրանք դարձեալ պիտի չսպրե՞ն: Տեսէք՝ ցեղը դարձեալ պիտի չառնի՞,՝ երբ նրանցից

երկուսը քսան տարի յետոյ հանդիպեն ու ծիծաղեն իրենց մայրենի լեզուով...»¹⁰:

Անեկղոտներում դա ապացուցում է մտքի թռիչքներից մեկի՝ շախմատի հայ երիտասարդների աներեւակայելի յաջողութիւնների ենթախորքում.

«Ձորջ Բուշը իր մօտ է կանչում երկրորդ տեղը գրաւած ԱՄՆի շախմատի ողիմպիական հաւաքականի անդամներին եւ ասում.

- Էդ ու՞մ էք պարտուել:

Ասում են՝ հայերին:

- Ի՞նչ հայ, բոլոր հայերին 1915 թուին չկոտորեցի՞ն:

- Բանից պարզում է՝ 6 հոգի մնացել էր...» (ԱՄՇՀ)¹¹:

Գ. Թուրքին անընդհատ հետապնդող հայկական հարցը Աստծոյ օգնութեամբ վերջնականապէս «լուծել» փորձելը

«Թուրքերը Աստծուն են դիմում, թէ՛

- Տէ՛ր Աստուած, Հայաստանում մի լաւ երկրաշարժ արա, որ էս հայերից էլ պրծնենք, հայկական հարցից էլ:

Յաջորդ օրը Վանի երկրաշարժն է լինում: Խտնուած թուրքերը նորից են Աստծուն դիմում, թէ՛

- Աստուա՛ծ ջան, ախր քեզ խնդրեցինք, ասինք՝ երկրաշարժը Հայաստանու՛մ արա, էս ի՞նչ օյին բերիք մեր գլխին:

Աստուածն ասում է.

- Բայց էս ի՞նչ մեղաւոր եմ. երեւի ձեռքիս քարտեղը հին Հայաստանինն է եղել...» (ԱՄՇՀ):

Տարբերակ՝ «Ես ի՞նչ մեղաւոր եմ. Հայաստան ասելիս էս տարածքն եմ հասկանում» (ԱՄՇՀ):

Դ. 1988ականների միտինգների «գործողութիւն».

Խորհրդային տարիների արգելուած թեմաները 1980-ականների վերջին կտրել էին բոնաստիրութեան կապանքները: Ղարաբաղեան Շարժման շնորհիւ հայոց ցեղասպանութեան եւ պահանջատիրութեան վերաբերեալ կորցրած յիշողութիւնն էր վերականգնուել.

«Ղարաբաղեան շարժման ամենալարուած օրերին մէկը միտինգից յետոյ տաքսի ա կանգնացնում, նստում ու ասում ա.

- Քշի՞ Թուրքիա:

- Ո՛ւր...

- Ասի՛ թուրքիա:
- Թուրքիա՛ ինչ գործ ունես, ա՛յ ախպեր:
- Թուրքերը հայերին կոտորել են:
- Հա, բայց դա տասնըհինգ թուին ա եղել:
- Ես հենց նոր իմացայ. քշի՛ թուրքիա...» (ԱՄՇՀ):

Ե. Եղեռնի հետեւանքով մարդկային կորուստների առկայութեան պայմաններում նիւթական արժէքի անխաթար վիճակը «Բախտաւորութիւն» համարելը՝ զուեշտի աղբիւր

«Գաղթից նոր էին վերադարձել: Մաթոսէնց գերդաստանից ոչ ոք կենդանի չէր մնացել: Հարեւան Ջարուհին հիացմունքով նայեց Մաթոսէնց տներին ու ասաց.

- Բախտաւոր Մաթոս փաշա, ի՛նչ դրրդ ունիս, տներդ դուռուլի (կանգուն) մնացել են»¹²:

Դ. Գաղթականների դիմագրաւած բարբառային եւ լեզուական դժուարութիւնները

Ինչպէս օտարութեան մէջ յայտնուած ամէն մարդ, այնպէս էլ ցեղասպանութեան հետեւանքով աշխարհով մէկ սփռուած հայ գաղթականը մինչեւ լեզուական խոչընդոտները յաղթահարելը, բարբառախօս հայրենակիցների եւ օտարագրիների հետ շփուելիս յաճախ է զուեշտալի իրավիճակների մէջ յայտնուում՝ առիթ հանդիսանալով բազում երգիծական մանրապատումների ստեղծման.

Արցախցին ասում է՝ *«Եր կըրցէք, քինանք մեր տոն, միւրէ գիլեջա [մի քիչ գրոյց] անենք...»* խօսքին վանեցին պատասխանում է. *«Վախտ կ'երթա: Պա գիլեջան խո ըի, ինչի՛ չիք պիրէ՛ անենք...»:* (գիլեջա անելը վանեցի գաղթականները ընկալել են *«ինչ-որ աշխատանք անել»¹³:*

Ամերիկա գաղթած այնթապցու՝ *I want a knife (դանակ մը կ'ուզեմ)ի փոխարէն արտաբերած I want a wife (կնիկ մը կ'ուզեմ) արտայայտութիւնն էլ դարձել է զուարճապատումի անսպասելի ծիծաղ յարուցող միջոցը¹⁴:*

Ե. Թուրքերի եւ նրանց աջակցող քրդերի հանդէպ հայի ունեցած վերաբերմունքն ու մտածողութիւնը

«Թուրքը, Քիւրտը եւ Սասունցին կը կանչուին Աստուծոյ քով: Աստուած կը հարցնէ.

- Ի՞նչ կը փափաքիս աշխարհիս վրայ:

Քիւրտը կը պատասխանէ.

- Թուրք չմնայ աշխարհիս վրայ:

Թուրքին կը հարցնէ, թուրքն ալ կ'ըսէ.

- Քիւրտ չմնայ աշխարհիս վրայ:

- Դուն ի՞նչ կը փափաքիս, - կը հարցնէ Աստուած սասունցիին:

- Ես բան մը խնդրած չունիմ, դրացիներուս փափաքը կատարէ միայն, - կը պատասխանէ Սասունցին»¹⁵:

Զ. Ցեղասպանութիւնը թուրքին՝ մղձաւանջ

Որքան էլ թուրքը փորձեր անի մարդկութիւնից թաքցնել իր յանցանքը, միեւնոյնն է, Ցեղասպանութիւնն անտես մի գործիքով ծակծկելու է նրա ուղեղը. նրա մտածողութիւնից հնարաւոր չէ հեռացնել անընդհատ հետապնդող «ներքին եւ արտաքին» թշնամուն.

«Մի թուրքի պարտիայի [համայնավար կուսակցութեան] շարքերն են ընդունում, հարցնում են.

- Ովքե՞ր են մեր թշնամիները:

- Հայերը:

- Դրանք մեր ներքին թշնամիներն են, արտաքինի մասին եմ հարցնում:

- Արտասահմանի հայերը, - պատասխանում է թուրքը»¹⁶:

Է. Թրքախօսութիւն

ԺԹ. դարի երկրորդ կէսի եւ Ի. դարի անեկդոտների ժողովածուներում թրքախօսութեան նիւթով բազմաթիւ գուարճախօսութիւններ են տպագրուել: Դրանց մի մասն էլ առնչում է Ցեղասպանութեանը, որտեղ թրքախօսութիւնը ներկայացւում է իբր «փրկութեան» ելք, որին կուրօրէն հաւատացել են նաեւ հայ մեծամեծները:

«1915ին տեղահանութեան հրաման կու գայ Այնթապ: Վալին կը կանչէ Այնթապի մեծամեծները ու կը հաղորդէ, թէ բոլոր հայերը պէտք է այսինչ թուականին պարպեն քաղաքը ու երթան:

Այնթապի մեծամեծները կը պատասխանեն.

- Էֆենտի՛, մեզի համար բան մը չկայ, պիզիմ հափըմըզըն անա լիսանը թուրքչա: (Մեր բոլորին մայրենի լեզուն թրքերէն է)»¹⁷:

Կամ մէկ ուրիշը.

«Տարագրութենէն վերջ Հալէպ հաւաքուած գաղթականները Պատարագի եւ ժամերգութեան համար այնթապցիներու Ս. Աստուածածին եկեղեցին կ'երթային: Քահանան այլեւս հայերէն քարոզ կը կարդար:

Այնթապցի Մարաշցիին կ'ըսէ.

- Պու դարիպլար վար եա... Սաֆարպիրլըկըն կէօզը քէօր օլսըն: Պու դարիպլար կելտիլար պիզիմ անա լիսանըմըզը հարապ էթտիլար: Օնըն կարրնտա էրմանճա քարոզ վերէօր պիզիմ քահանայ: (Այս պանդուխտները կը տեսնէ՞ս... Տարագրութեան աչքը կուրնայ... Այս պանդուխտները եկան, մեր մայրենի լեզուն քանդեցին, այդ պատճառով մեր քահանան հայերէն քարոզ կու տայ)»¹⁸:

«Կիլիկիոյ պարպումէն ետքը, երբ Կիլիկիոյ ժողովուրդը Պէրութ էկաւ, ատանացիները արապաճիներ էին. մէկ բառ հայերէն չգիտէին, բայց ամէն մէկը, մէջքը դանակ մը խրած, դաշնակցական կոմիտէի ժողովի կ'երթային:

Ժողովի ժամանակ շրջաբերականը կը կարդացուի հայերէն: Անշուշտ, աս ատանացիները բա ն չեն հասկնար: Մէկը միւսին կ'ըսէ.

- Նէ՞ դեդի, դէօյիւշ վա ը: (Ի՞նչ է ասում՝ կոբի կայ):

- Եոք (ո չ):

- Հադէ՛, հէ՛յ վալլա (դէ՛, փա՛ոք Աստծոյ): Քանի որ կոբի չիկայ, մենք հոս տեղը ի՞նչ գործ ունինք: Մենք գացինք, դուք հայերէնը կարդացէք»¹⁹:

Ը. Քրիստոնէական բարոյախօսութեան անգործիւնը թուրքին դէմ

Բազմաթիւ երգիծական մանրապատումներ կան՝ կապուած հոգեւորականների կողմից հայիոյանքի ճարահատ կիրառութիւնների հետ: Դրանք առաւել ընդգծուած դրսեւորում են ստանում յատկապէս թուրքերի սանձարձակութիւնների ու կոտորածների ժամանակ: Նման պարագաներում ամէն մի քրիստոնէական բարոյախօսութիւն անգործ է դառնում հակազդել

մարդու դիմակ հագած գագանին, եւ հետեւում է եզրակացութիւնը. թուրքին դիմագրաւելու միակ ելքը հենց իր՝ թուրքի լեզուով խօսելն է: «Տէր Գէորգ Պապայի «Քաջագործութիւն»ներէն» մանրապատումում երբ փորձում են հայիոյելու համար դիտողութիւն անել քահանային, թէ՛ «*մենք եկեղեցիի պաշտօնեաներ ենք, կը վայելէ՞ր այդ լեզուագարութիւնը*», հետեւում է կտրուկ եւ ուղղորդող պատասխանը.

- *Պատուելի՛.... դուն Ս. Գրքի լեզուով խօսեցար եւ տեսար թէ ի՛նչ ընդունելութիւն գտանք. այդ անիծեալներուն պէտք էր խօսիլ իրենց հասկցած լեզուով, իթինքի տէյնէկ...»²⁰:*

Այրուած սրտից դուրս ժայթքած գայրոյթն է արտացոլուած նաեւ «Հաւատացեալ Մամիկին Բողոքը» մանրապատումում, ուր ներկայացուած է եղեռնից մազապուրծ աստուածապաշտ մամիկին, որը «...*եաշմախին ծնօտի մասը քիթէն վեր, ճակատի մասը արտեւանունքներէն վար պահեց՝ մինչեւ իր մահը: Երբ կին մը տեսներ այքերը ծարիր, երեսը ներկուած, բերանը բաց, «մեղա՛յ, մեղա՛յ» ըսելով իր լաչակը անգամ մըն ալ կ'ամրացներ քթին վրան, եւ կ'աղօթէր...*

Մեր սեւ օրերուն անիկա ալ խառնուեցաւ տարագրութեան կարաւանին եւ անօթի ծարաւ հասաւ Մասնի անապատները եւ հոն ծախեց ծաւրեց՝ գոր ինչ ունէր եւ պատերու տակ մնաց տկլոզ եւ դեռ կ'աղօթէր...:

...Ամէն օր, արեւու քիթով անիկա կը շտկուէր դիակներու մէջէն, կ'իյնար սար ու ձոր, խոտ կը փնտռէր...: Խոտ գտնելն ալ շնորհ մըն էր այդ օրերուն, բայց 'հա ց, հա ց' ճուացող փոքրիկները ամէն օր խաշած խոտով խաբելն ալ դիւրին գործ չէր...»²¹:

Հաւատացեալ մամիկի ըմբոստութիւնն այս անգամ ուղղուած է այդ անմարդկային տառապանքների ականատես Աստծուն. «*Վերջապէս արցունքով թրջուած իր եաշմախը վեր առաւ, բերանը բացաւ, պտղուց մը խոտ մատներուն մէջ, այքերը երկինք տնկած՝ խաշուած խոտը վեր նետեց եւ ըսաւ.*

- *Ա՛ն, Աստուա ծ, կ'ուտուի նէ պատառ մըն ալ դուն կէ՛ր...»²²:*

Թ. Հաւատքի ուժը

Մէկ այլ ժողովրդական երգիծապատումում թուրքերի անօրինութիւնների դէմ քաջարի զէյթունցիներն են դուրս գալիս եւ

թշնամու բանակում ահ ու սարսափ եւ խուճապ տարածում:
Զարմացած անօրէնները փորձում են այդ գաղտնիքը բացայայտել.

«Ձէլթունցիները շատ քաջ մարդեր էին: Անոնք երբ միշտ կռիւի կ'երթային թուրքերուն դէմը, կ'աղօթէին, օգնութեան կը կանչէին իրենց Սուրբ Փրկիչին, կ'ըսէին.

- Եա՛, Սուրբ Փրկիչ,- ու կը յաղթէին:

Թուրքերն ալ կը զարմանային, կ'ըսէին.- Աղ գեաւորները 'սիւփիւրկէ' կ'ըսեն, կը սկսին կռուիլ ու կը յաղթեն:

«Սիւփիւրկէ» թուրքերէն կը նշանակէ աւել: Աւելը ի՞նչպէս անոնց կ'օգնէ»²³:

Այսպիսով, եթէ մինչեւ 1960ականները ցեղասպանութեան թեմայով հրատարակուած երգիծական մանրապատումները ծաւալուն սիւժետային կառուցուածք ունէին, ժողովրդական յուշապատում-գրոյցների տեսքով էին հանդէս գալիս, եւ միայն յանկարծակի վերջաբանային աւարտն էր յիշեցնում նրանց տեսակային յատկանիշը, ապա 60ականներից յետոյ կատարած գրառումները ցոյց են տալիս, որ դրանք առաւելապէս սեղմ ու երկխօսական բնոյթի են՝ արծարծած թեմայի որեւէ բնորոշ դրուագի մատնանշմամբ, ինչը հաստատում են Սվազլեանի, Չոլաքեանի, Ա. Սարգսեանի եւ այլոց գրանցած նմուշները:

Մի հետաքրքիր հանգամանք եւս. մեր ձեռքի տակ եղած Ցեղասպանութեանն առնչուող նիւթերում գրեթէ բացակայում են երգիծական մանրապատումների եւ զուարճախօսութիւնների գերակշռող մասին բնորոշ պատկերաւորման տարատեսակ միջոցներով (ժողովրդական դարձուածք, բառազեղչում, բառամիացում-բառաբաժանում եւն.) ու հնչիւնական եւ հնչերանգային զանազան ձեւերով ու ոճական հնարանքներով (ձայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, երգեցիկ ոճ, բարձր եւ ցածր, երկարացման հնչերանգ եւն.) անսպասելի ծիծաղ առաջացնելու դրսեւորումները: Ինչպէս վերը բերուած օրինակներում տեսանք, դրանք իրագործում են հիմնականում գործողութիւններից բխող կտրուկ եւ անակնկալ ծիծաղ յարուցող խօսքի օգնութեամբ:

Հայոց Մեծ եղեռնին առնչուող հայ ժողովրդական երգիծապատում-զուարճախօսութիւնները բանահիսութեան միւս սեռերից առանձնանում են ոչ միայն իրենց տեսակային

առանձնայատկություններով, այլև Յեղասպանությունը հաւաստող պատմա-վաւերագրական նիւթի մատուցման իւրայատկութեամբ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Այս երկու եզրերը տարանջատել ենք՝ զուարճապատումի համար հիմք ընդունելով նրա սիւժէտային՝ պատումային յատկանիշը, զուարճախօսութեան համար՝ անսիւժէ՝ անպատում, նաեւ՝ երկխօսական բնոյթը:
- ² Վերժինէ Սվազլեան, *Հայոց Յեղասպանություն. Ականատես Վերապրողների Վկայություններ*, երկրորդ համալրուած հրատարակություն, Երեւան, ՀՀ ԳԱԱ, Գիտություն Հրատ., 2011:
- ³ Վերժինէ Սվազլեան, *Մուսա Լեռ, Հայ Ազգագրություն Եւ Բանահիւստիւթիւն, Հատոր 16*, Երեւան, ՀՄՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1984. նաեւ՝ Սվազլեան, *Գրիկիկա.Արեւմտահայոց Բանաւոր Աւանդությունը*, Երեւան, ՀՀԳԱԱ Հրատ., 1994, նաեւ՝ Սվազլեան, *Պոլսահայ Բանահիւստիւթիւնը*, Երեւան, ՀՀ ԳԱԱ, Գիտություն Հրատ., 2000:
- ⁴ *Մարաշ*, Երկասիրեց Գր. Ն. Գալուստեան, Հրատարակություն Մարաշի Հայրենակցական Սիւթեան Կեդր. Վարչություն, ԱՄՆ, Նիւ Եորք, 1934, վերահրատարակուած՝ 1988. նաեւ՝ *Պատմություն Անթէպի Հայոց, Գ Հատոր*, իւրբագիր Երուանդ Պապայեան, Լոս Անջելըս, 1944. նաեւ՝ *Հայկական Զրոյցներ. Առակներ, Առածներ, Մանրավէպեր, Զուարճալի Ասացուածքներ Եւ Իմաստուն Խօսքեր*, պատրաստեց Կարապետ քահանայ Գայֆայեան, Լոս Անճելըս, Պոզաճեան Տպ., 1944, վերահրատարակութիւնը՝ *Գիրք Առակաց, Լիբանան, Պէրոյթ, Տպ. Տօնիկեան, 1957. նաեւ՝ Ազնաւորեան, Հէքիաթներ, Զուարճալիքներ*, Սիչիկըն-Պէրոյթ, Տպ. Տօնիկեան 1971. նաեւ՝ *Միջ-Գաւառական Անեքթոտներ*, հաւաքեց եւ ներկայացուց Յակոբ Չոլպեան, Հալէպ, 1988 եւն.:
- ⁵ Սարգիս Բախտիկեան, *Շեկիկայ Խելացին (Հայկական Զուարճախօսութիւններ)*, Պէրոյթ, Տպ. Օլիմփիք, 1953, էջ 24:
- ⁶ Գալֆայեան, *Գիրք Առակաց*, էջ 156-157:
- ⁷ Սերինէ Աւագեան, *Վանի Նահանգ, Գ. Արճակ, Հայ Ազգագրություն Եւ Բանահիւստիւթիւն, Հատոր 8*, Երեւան, ՀՄՍՀ ԳԱ Հրատ., 1978, էջ 128-129:
- ⁸ Գրիգոր Չալիկեան, *Անլոելի Սիրահարը*, Երեւան, ՀԳՄ Հրատ., 2004, էջ 64-65:
- ⁹ Արմէն Սարգսեանի անձնական հաւաքածու (ԱՄՇՀ):
- ¹⁰ Վիլիամ Սարոյեան, *Պատմուածքներ, Հարցազրոյցներ, Էսսէներ, Նամակներ, Յուշեր*, Երևան, Նաիրի Հրատ., 2010, էջ 153-154:
- ¹¹ Զուարճախօսութեան գրառումը կատարուել է Հայաստանի շախմատի հաւաքականի՝ 2006ին աշխարհի ախոյեան դառնալուց մէկ շաբաթ անց, իսկ տարբերակը՝ 2 ամիս անց:
- ¹² Հմայեակ Գրիգորեան, *Մրամտում է Զուախքը: Անեկդոտներ*, Երեւան, Նաիրի Հրատ., 1992, էջ 60:
- ¹³ Բենիկ Ղուկեան, *Գիլիստան. Պատառիկներ Մօտիկ Անցեալից*, Երեւան, Զանգակ-97, 2004, էջ 44:
- ¹⁴ *Պատմություն Անթէպի Հայոց*, էջ 380:

-
- ¹⁵ *Միջ-Գաւառական Անէքթոտներ*, էջ 103:
- ¹⁶ *Պատմում Եւ Կատակում Էր Գալուստ Գալստեանը*, հաւաք. եւ կազմ. Լենա Անթառանեան, Երևան, Վերնատուն Հրատ., 1994, էջ 59:
- ¹⁷ *Միջ-Գաւառական Անէքթոտներ*, էջ 86:
- ¹⁸ Նոյն, էջ 86:
- ¹⁹ Սվազլեան, *Կիլիկիա*, էջ 110:
- ²⁰ *Պատմութիւն Անթէպի Հայոց*, էջ 377-378:
- ²¹ Գալֆայեան, *Գիրք Առակաց*, էջ 150-151:
- ²² Նոյն:
- ²³ Սվազլեան, *Կիլիկիա*, էջ 107: Այս պատումի առաջին մասը վիպերգային կառուցուածք ունի. եթէ «Կարոս Խաչ» վիպերգում թշնամու դէմ կռուելիս հայերին օգնում է Նեխուրի (Քարաուզի) դաշտում յայտնուած խաչը, *Սասնայ Օռերում*՝ Խաչպատարագին, ապա այս գուարճապատումում գէթունցիներին օգնութեան է հասնում Սուրբ Փրկիչը, որի բարբառային «Սույփ Փյկիչ» եւ թուրքերէն «սիւփիւրկէ» արտաբերումների համադրումը մանրապատումում դառնում է գաւեշտի մէխը:
- Ի դէպ, գէթունցիների այս ինքնատիպ գուարճապատումի մէկ այլ տարբերակ Հալէպում գրառել եւ հրատարակել է նաեւ հայագէտ Յակոբ Չոլաքեանը (*Միջ-Գաւառական Անէքթոտներ*, էջ 55):

ARMENIAN POPULAR COMIC ANECDOTES AS
REFLECTIONS OF GENOCIDE ACCOUNTS
(SUMMARY)

ARMEN SH. SARKSYAN

In the aftermath of the Genocide a survivor, losing hope of finding his wife, marries a widow. The first wife, however, reappears. As polygamy is forbidden by the Armenian Apostolic Church, a priest calls the three and asks the husband to choose between his two legitimate wives. The husband chooses his good-looking new wife. The priest, concerned with the fate of the poor, miserable old wife, comments on the decision: "I would have married your good-looking wife. The problem is what happens to your old wife." Eventually he suggests that the husband select the old wife.

The author highlights a number of such comic anecdotes and humorous situations that happened during the Armenian Genocide, were caused by it, happened in its aftermath or are related to the Genocide.

The author categorises these anecdotes according to the circumstances and notes that these go far beyond reflecting the genocide per se. Rather, they are meant to reinvigorate Armenian spirit and pride.

TURKISH FALSEHOODS CONCERNING THE
ARMENIAN GENOCIDE:
SELECTED DOCUMENTARY EVIDENCE
ZAVEN MESSERLIAN

Instead of recognizing the genocide perpetrated on the Armenians during 1915-1923 by the Ottoman Turkish government led by the Young Turkish *Ittihad ve Tarraki* Party and the nationalists, the current Turkish leaders are denying or minimizing the fact.

While still the Prime Minister of Turkey, current Turkish President Recep Tayyip Erdogan, during a visit to Germany, told German Chancellor Angela Merkel “we are aware that in the coming year there are budgetary allocations in your country for the 100th anniversary of the 1915 event. I recommend that you address this issue more carefully and caution your party about any allocations.”¹ In response Merkel reportedly told the Turkish PM that “Germany is a democratic country and her government cannot intervene in decisions”, and added “Turkey must come to terms with its history. We cannot compare the Armenians living in Armenia with the Armenians who were forcibly dispersed around the world”. Erdogan replied, “You are forcing us to accept something we have not done.” He denied the genocide of Armenians and claimed that the entire Turkish archives are open to the world.² Other Turkish officials claimed that Turkish archives are open, and that Armenia should open up her archives.

Vice president Bülent Arınç on another occasion blamed those who termed the events of 1915 genocide; he added, “Painful events took place, but do not call them genocide”.

Egemen Bağış, minister charged with European Union matters, appealed to Germany to solve the problem raised by the French decision to penalize negationists, by saying that “There must be documents about the 1915 events in the German archives”, and appealed to Germany to open them up. He said that the documents he has seen prove that in the Ottoman Empire the annihilation of Armenians was not pursued, that there was a civil war, and there were Turkish and Armenian victims.³

During his visit to Yerevan then Turkey’s Minister of Foreign Affairs Ahmet Davutoğlu, said to the Turkish press accompanying him “the deportations of 1915 were inhuman”. This was as far as he went, and for that many criticized him in Turkey.⁴

We shall take up each point raised by the Turkish leaders and show not only that what they state are falsehoods, but that Ottoman, German, Austrian, Italian, Danish and American documents unequivocally show

that what the Turkish leaders call “events” was genocide. We shall site only a few selected documents.

First we take the case of the Ottoman Archives. According to Turkish historian Taner Akçam, who has used some Ottoman archives, not all the archives are open. Those unavailable are the weekly reports from the *vilayets* (governorates) during the course of the genocide and the records of the so-called abandoned properties (i.e. the property forcibly taken from the Armenians) or the Ottoman cadastre of property records. The archives of the genocide period were purged; that is many incriminating documents were destroyed in 1918, as well as after 1980, before the archives were opened.⁵ The military archives are inaccessible.

The destruction of incriminating documents will be shown here, essentially from Turkish sources.

During the post-war trial of the leaders of the Young Turkish government and the Central Committee members of the *Ittihad ve Terraki* party, right in the first trial on 27 April 1919, in the indictment the court stated “the inquiry revealed that important documents relating to the Central Committee of the party and to the *Teskilate Mahsousa* (Special Organization) were removed. Similarly, reliable witnesses certified that before the dismissal of Talat Bey, directives and other important correspondence sent from the Interior Ministry to Aziz Bey, former director of the ministry of public security, were not returned.”⁶

Turkish historian Şevket Surreya wrote, “Talat had a big suitcase filled with documents, that he burnt in a hurry, in a garden when the fast German warship U67, on which Talat and his friends were escaping, landed them in Geozleve (Eupatoria) in Crimea, near Simferapole.”⁷

Vice Col. Hussamettin Ertürk, a leader of *Teskilate Mahsousa*, has written in his memories that he “hid *Teskilate Mahsousa* documents in a secret corner of Fatih mosque.”⁸

The British high commissioner’s office secret reports from Constantinople to London report on, 4 March 1920, about “the disappearance of documents” concerning Turkish leaders resident in Germany, Switzerland and Malta accused of the mass-killing of Armenians. The report specified that Raouf Bey had demanded from local Turkish leaders the quick destruction of documents and that he had also organized the disappearance of documents related to him and Enver Pasha.⁹

The fact that most of the documents related to the Armenian genocide were destroyed was common knowledge in 1918. The Turkish newspaper *Sabah* wrote in its issue of November 7, 1918 that Talat and his friends, probably before leaving power, had ordered the destruction of all their orders concerning the massacres.¹⁰

In the trial of the former director of the Post and Telegraph Office, Osman Nuri Effendi, in Çatalca on August 4, 1919 the defendant stated, “I burned some papers in accordance with the order that had been given.”¹¹

In most cases, the most incriminating orders came along with the final order to destroy them after reading. Ahmed Esat, who headed the Department of the Security Directorate during the war, after his arrest by the British said that “orders regarding the killing of the [Armenian] deportees were sent via courier to the various governors, and that after being read, the original message was to be given back to the courier”.¹²

Other secret orders ended with instructions “take the copy of this cable from the telegraph office and destroy it”,¹³ or “it has been ordered that, after having been shown to the necessary persons, this is to be completely destroyed”,¹⁴ or “[this] is to be destroyed after its contents have been communicated to the necessary parties.”¹⁵

According to Taner Akçam:

Ittihad ve Tarraki (Union and Progress) party “developed the dual track mechanism that it used during the deportations, whereby government channels were employed only for correspondence on the “official” dimensions of the deportations (i.e. deportation, orders, dates of assembling and setting out, destinations, etc.). Orders concerning the annihilation of the deportees were sent to the relevant provinces by private channels, chief among them the Unionist’s so-called responsible secretaries. In addition, the planners of these massacres meticulously ensured that no written documentations of the crimes would be left behind.”¹⁶

OTTOMAN TURKISH EVIDENCE


Despite the cleansing and purges Turkish historian Taner Akçam has found plenty of evidence in the Turkish Prime Ministerial Archives showing the planning and the execution of the Armenian Genocide by the Ottoman Turkish authorities. He writes, “The information in the Prime Ministerial Ottoman Archive clearly points in the direction of a deliberate Ottoman government policy to annihilate its Armenian population.”¹⁷

Taner Akçam writes “the clearest statement that the aims of the [Ottoman Turkish] government’s policies toward the Armenians was annihilation is found in a coded cable of 29 August 1915 from Interior minister Talat Pasha to the province of Ankara. “The Armenian question in the eastern provinces has been resolved”, he asserted. “There’s no need to sully the nation’s and the governments[’s honor] with further atrocities (*fuzuli mezâlim*).” Talat’s statement clearly implied that up to the end of August 1915, crimes had indeed been committed. This document alone

should put an end to many of the long-standing and unnecessary debates on this issue.”¹⁸

After the official remonstrance of their German allies Talat, in a conversation with the German ambassador, said that the anti-Armenian measures had been stopped adding “the Armenian question no longer exists.”¹⁹

Turkish document dated 29 June 1915, published in Nor Haratch (Paris) 23 August, 2011, p. 3, taken from BOA, DH/ŞFR, No 54/406.




Another document dated June 29, 1915 addressed to the vilayet of Diarbekir by Talat is published on the website of the Turkish Historical Institute. The letter says that news has reached Constantinople that in the vilayet of Diarbekir that other Armenians and Christians were massacred after being deported; they were slaughtered like sheep at night in Mardin. Talat continues that news has reached them that already about 2000 were massacred. There is also fear that, if this is not stopped immediately, the Moslems of the area will revolt and massacre all the Christians. The political measures foreseen for the political restraint of the Armenians should not be extended to other Christians. That is absolutely not purposeful; it leaves a very bad impression on public opinion.”

The above letter published to show that Talat did not want the killing of Armenians is counterproductive. The “political restraints” were nothing other than “mass killing”.

In fact “deportation” meant annihilation by mass murder or massacre. This is a fact well established by the Turkish Officials who committed or ordered these crimes, as well as their German allies.

Below we shall cite a few examples of this incriminating evidence.

The man behind the planning and executing of the genocide, Interior Minister Talat said the primary intent of the deportations was “eliminating [the Armenian problem] in a manner that is comprehensive and absolute [esasli bir suretde hal ve fasli ile külliyen izalesi].”²⁰



“Ottoman Document 55/290. A cable from interior minister Talat Pasha on 29 August 1915 that reads, “The Armenian question in the Eastern Provinces has been resolved. There’s no need to sully the nation and the government[‘s honor] with further atrocities [fuzuli mezâlim].” Source: Akçam, p. 205.

In this respect the written testimony of Ihsan Bey, who was the director of the Interior Ministry’s private secretariat in the post-war period, is important he “recalled that while he was serving as the head official of Kilis county, Abdullahad Nuri Bey came to him en route from Istanbul to Aleppo and revealed that the real purpose of the deportation was to annihilate the Armenians, “I was in contact with Talat Bey and

received the annihilation order from him personally”, explained Nuri Bey. “The safety of the country is tied to this.”²¹

The former commander of the Third Ottoman Army, Vehip Pasha, who was appointed in February 1916 to this position, in a written statement to the post-war Ottoman Investigatory Commission said, “The massacre and annihilation of the Armenians and their looting and pillaging by the killers were the result of a decision made by the C[entral] C[ommittee] of the [Committee of] Union and Progress.”²²

Behaettin Şakir, the head of the *Tashkilate Mahsusa* in charge of the annihilation of Armenians, sent a telegram to Resneli Nazim, the Unionist responsible secretary (*Ketibe Messulla*) in Harput, on 21 June 1915. In it Sakir asked, “Have the Armenians who have been dispatched from there been liquidated (*tasfiye ol*)? Have those detrimental and dangerous persons, whom you reported to have been exiled and sent off been exterminated (*imhâ edil*) or simply sent off into exile somewhere else? Please be explicit in your report, brother.”²³

As to the German reports, we shall cite a few.

On 30 June 1915 the German consul general, Mordtmann, informed his superiors of a conversation he held with interior minister Talat. The latter explained to him the real purpose of the Armenian deportations. He said, “What we are talking about here... is the annihilation of the Armenians.”²⁴

On 23 August 1915 a top secret report by the German officer Stang, who served alongside Behaettin Şakir in the *Teshkilate Mahsusa*, wrote on the basis of his personal observation that the Armenian deportations and massacres were not carried out as a result of war-time necessities, rather, he wrote, “What we are dealing with here is a long- and well- thought-out plan” in response to some isolated events”. However “the decision to deport and annihilate [the Armenian populations] was taken by the Young Turk Committee in Istanbul” and coordinated by Şakir in Erzurum.²⁵


German Consul Rössler reported from Aleppo on 3 January 1916 on the methods used by Turks “to exhaust and decimate a convoy of deportees who were forced to walk back and forth” up to 500 km. He further reported that the Director of Deportations, Şukru Kaya, had told a reliable German source, a Baghdad Railway employee, “the end result of the Turkish measures must be the eradication of the Armenian race.”²⁶

The neutral American diplomats as well reported what deportations meant. Leslie Davis, the American consul in Harput, reported on 24 July 1915, to the U.S. ambassador at Constantinople, that “the shooting and killing of people a few hours after their departure from here is barbarous and shows that the real intention of the Government is not to exile them but to kill them.”²⁷

The American Ambassador wrote in his memoires, “When the Turkish authorities gave the orders for these deportations, they were merely giving the death warrant to a whole race; they understood this well, and in their conversations with me, they made no particular attempt to conceal the fact.”²⁸

Even during the wartime period this was understood. In the Secret Arabian Report of the British Foreign office, dated 27 December 1916, Appendix B, entitled Armenian massacres, there is a report of a captured war prisoner, Lt. Sayied Ahmed Moukhtar Ba’aj. Ba’aj informed British intelligence that “being a member of the court martial I knew that deportation meant massacre.”²⁹

According to 1916 British intelligence reports, based on the testimony of a female, inhabitant of Athlit nationality undisclosed, Germans told her “the Turks had determined to exterminate all the Armenians, with the exception of about half a million”. Then she gave “a description” of the “destruction of the



Armenian nation” as told to her by an eyewitness. This was done

“By organised deportation accompanied by neglect and by the unchecked ravages of disease, but in addition there is systematic butchery of men and boys. The usual method employed was to organise labour battalions in which boys and men were collected together and these were sent under a guard of about twenty Turkish soldiers to some out-of-the-way place where no provision was made for rations or water. The guard was given orders to use their rifles without hesitation in case of desertion, or any sign of mutiny, on the part of those put under their charge. After a day or two the guard would return alone. The story given was either the Armenians as a whole attempted to desert, or that there had been a mutiny and the guard in self defence had been compelled to kill the lot”.³⁰

During the postwar Ottoman Court Martial for those responsible for the massacre of the Armenians in Yozgat the court clarified that deportations meant murder or annihilation on two occasions.

In the ninth sitting, a cipher cable dated 22 July 1915 was read. Therein it was mentioned that a group of Armenians were “sent off to their destination”, when the court asked for clarification, Mustafa, one time military Governor and Chief of the Recruitment Bureau of Boghazliyan, said “destination” meant “murdered”. In the twelfth sitting, a telegram by Lt. Halasi marked “secret”, was read out. The cable contained the phrase “deported, namely annihilated.”³¹

In the fourth sitting of the Military court on 11 February 1919 deputy Şakir testified “that the orders for deportation were superseded by ‘secret orders’ for massacre.”³²

Mustafa Arif, the post-war Turkish Minister of Interior, stated on 13 December 1918. “Unfortunately, our wartime leaders, imbued with a spirit of brigandage, carried out the law of deportation in a manner that could surpass the proclivities of the most bloodthirsty bandits. They decided to exterminate the Armenians, and they did exterminate them.”³³

GERMAN EVIDENCE

Minister Egemen Bağış ignores the fact that the German documents have been published. The German archives are open. The most recent is that of the Zorian Institute of Toronto publication “The Armenian Genocide 1915-1916, evidence from the German Ministry of Foreign Affairs Archives”. The editor was Wolfgang Gust. The book has also been published in German. The Turkish *Hürriyet* newspaper wrote, “When you read the book and look at the documents, if you are one who is getting acquainted with the case through this book, then it is impossible that you won’t believe in the Genocide and [you won’t] justify the Armenians.”³⁴

Even the war time ally of the Ottoman Empire, Germany, realized what was happening. In July 1915, the German Ambassador Von Wangenheim reported to Berlin, to the German Chancellor, that there no longer was any doubt that the Sublime Porte was trying to “exterminate the Armenian race in the Turkish Empire.”³⁵

Below are a number of documents from the German archives.

Ambassador Hohenlohe on 12 August 1915: “The systematic butchery of the uprooted and deported Armenians had assumed such scope (*umfang*)... it was not only tolerated but openly promoted by the government. It meant the extermination of the Armenians (*die Ausrottung der Armenier*).”³⁶

Consul Kuckhoff from Samsun on 4 July 1915: “...nothing less than the destruction (*Vernichtung*) of an entire people is at issue, the eradication (*Ausmerzung*) of one of the oldest and unhappiest people of this earth, the disappearance (*das Verschwinden*) of the populations driven from entire cities.”³⁷

Consul Rössler from Aleppo, 10 May 1915: “Government’s anti-Armenian measures are intended for the destruction (*Vernichtung*) of Armenians in whole districts.”³⁸

Consul Scheubner-Richter from Erzurum, on 28 July 1915: “The partisans of Ittihad are unabashedly conceding that their aim (*Endziel*) is the total annihilation (*gänzliche Ausrottung*) of the Armenians of Turkey,” adding “After the war we no longer will have any Armenians in Turkey.”³⁹

Consul Scheubner-Richter from Erzurum, in 10 August 1915.

“the Armenian Question, which for centuries engaged the attention of European diplomacy, is supposed to be finally solved in the course of this war...the governmental measures are being carried out in such a way that they amount to an absolute annihilation of the Armenians (*einer absoluten Ausrottung...gleichkam*). Also, I don’t believe a culture which is older and much more elevated than that of the Turks could be successfully destroyed in any other way...Only a violent eradication policy, a violent annihilation of the entire people, could enable the Turkish government thereby to achieve the desired ‘goal’: the ‘solution’ of the Armenian Question.”⁴⁰

AUSTRIAN DOCUMENTS

Austrian-Hungarian Ambassador Pallavicini, who at first in his reports to Vienna blamed the Armenians and justified the Turks, soon after gaining full knowledge of what was going on, sent detailed reports to his superior.

On 27 June 1915, he reported “...the Armenian population which is being expelled from its homeland is not only being subjected to the greatest misery but also to a total extermination” (*einer gänzlichen Austrrottung*).⁴¹

On 1 July 1915 , he reported to Vienna his admonition to the Turkish Grand Vizier Sayid Halim Pasha. “The manner in which the Armenians are being deported for settlement purposes is tantamount to a death sentence (*Todesurteil*) for the affected people.”⁴²

DANISH EVIDENCE

The Danish emissary in Constantinople wrote a letter dated 4 September 1915 addressed to the Minister of Foreign Affairs of Denmark. “The Turks are resolutely realizing their terrible intent having as their aim the annihilation of Armenians.”⁴³

AMERICAN EVIDENCE

On 16 July 1915 the American Ambassador to Turkey, Henry Morgenthau, sent a telegram to the Secretary of State.


“Deportation of and excesses against peaceful Armenians is increasing and from harrowing reports of eye witnesses it appears that a campaign of race extermination is in progress under a pretext of reprisal against rebellion.”⁴⁴

The American Consul in Harput, Leslie Davis, further reported to the U.S Ambassador at Constantinople that “it has been no secret that the plan was to destroy the Armenian race as a race, but the methods used have been more cold-blooded and barbarous, if not more effective, than I had first supposed.”⁴⁵

ITALIAN EVIDENCE

The Italian consul general at Trebizond since 1911, G. Gorrini, gave the following eyewitness testimony of the deportation decree’s implementation.

“The official proclamations of internment came from Constantinople. It is the work of the Central Government and the Committee of Union and Progress...it was a real extermination and slaughter of innocents, unheard of thing, a black page stained with the flagrant violation of the most sacred rights of humanity...”⁴⁶



SWITZERLAND

Switzerland was a neutral country, but it did not remain silent. In Switzerland in September-October 1915, 99 Swiss professors, national councilors, public officials, pastors etc. signed an Appeal in which they said that the systematic annihilation of a people, the Armenians, was being undertaken in the Turkish Empire and appealed to those who could influence Constantinople to safeguard the survivors.⁴⁷

Journal De Geneve in its issue of 8 September 1915 under the title “Extermination of a people”, wrote that a fact that surpasses in horror what humanity can contemplate is being accomplished at this hour: the violent and systematic extermination of a people. The paper added the Armenian provinces were completely evacuated, hundreds of thousands of Armenians had been massacred.⁴⁸

OTHER FALSEHOODS EXPOSED

In my book *The Premeditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians*, I wrote.

“Turks and some apologists for Turks claim, the genocide did not occur and that there was a civil war and other hardships resultant of World War I and both sides suffered. They claim as a result more Turks died than Armenians. The bare truth, as given below by a non-Armenian source and an ally of Turkey, Vice Marshal Joseph Pomiankowski, Austrian military plenipotentiary in Constantinople and Military Attache at Ottoman General headquarters during World War I, speaks for itself.”⁴⁹

“The gruesome annihilation of the Armenian nation by the Young Turk regime was a barbaric act, arousing human feelings to the highest extent...

“The cost of this war was carried in the first place by the Turkish Army in Asia Minor. Hunger caused the loss of hundreds of thousands of Turkish soldiers in Armenia. The Armenian caravans, totally devoid of many forms of cleaning facilities and hygiene, became carriers of disease...a general epidemic of typhus broke out, from which at the least a million Mohammadans [mostly Turks] died. This was the vengeance of the deported murdered Armenians on their executioners.”⁵⁰

As to the civil war allegations, one of whose advocates is Justin McCarthy, we wish to quote Turkish historian Taner Akçam, who has studied the documents available in the Turkish archives. He writes, “not a single top secret document at the highest levels of the state makes the slightest allusion to a civil war or “intercommunal warfare”. On the contrary, Ottoman documents show that the Armenian areas were evacuated under tight government control.”⁵¹

The genocide perpetrated on the Armenians in the Ottoman Empire was one where a government and the party in power annihilated two-thirds

of their defenseless Armenian subjects or citizens to appropriate for good their historical homeland and property.

Finally to the archives of Armenia, which are open to all researchers. The first Turkish citizen using them was Ektan Turkyelmaz. Since 2009 the University of Deersim's History Department chairman Çandan Badem has been using the archives of Armenia, in Yerevan, where as he reported in Istanbul's *Agos* Armenian newspaper, all documents are open to researchers.⁵²

The Armenian archives are full of eyewitness reports of survivors. Verjiné Svazlian published in English a documentary book of eyewitness reports entitled *The Armenian Genocide, Testimonies of the Eyewitness Survivors*, Yerevan, 2011. The 847 page book was translated and published in Turkish as well in Istanbul.

Such eyewitness reports are plentiful. One report given below is from a book published in 2009.

An imprisoned Armenian, Philippos Balikian, who succeeding in escaping, gives his testimony.

"[The Turks] began to bring forty to fifty Armenians to the jail [in Mamuret-al-Aziz] daily. Each time our number reached 300, the policemen came in the evening with lists, read names, and said: "Come, you have been pardoned; you will leave the jail."

"Those whose names were called were led to the Red building, lined up in rows of four, and tied to each other with thick ropes. There, they were taken, under watch by policemen with bayonets, to a location some five or six hours away, and made to sit, to rest. Then hundreds of Turks would come out of hiding and attack them with axes, swords, bills, and cudgels, mercilessly massacring these Armenians who could neither flee nor resist, since they were tied to each other.

"Three months passed by in this way. They killed more than 20,000 Armenians in this fashion."⁵³

The above was just in one city, Mamuret-al Aziz.

The above was done elsewhere as well. On 19 April 1915, in the province of Van, 2500 Armenian men were shot in groups of fifty.⁵⁴ This was repeated in 80 Armenian villages of the province of Van, with 24,000 Armenians killed.⁵⁵ All in all due to massacre, starvation and disease 1.5 million Armenians perished, two-thirds of the Armenians of the Ottoman Empire. Above all Western Armenia was emptied of its native people, who had lived there continuously for 3000 years.

Turkey must acknowledge the Genocide that the Young Turkish *Ittihad ve Terraki* led Ottoman Turkish government committed, ask for forgiveness and make material and territorial reparations.

ENDNOTES

- ¹ *Hürriyet* of February 6, 2014.
- ² *Asbarez* Armenian News-<http://asbarez.com>, posted on 7 February, 2014, as quoted from the Turkish-language version of *Hurriyet* of 6 February, 2014 (*Zartonk* daily, Beirut, 11 February 2014).
- ³ Hayots Tseghasbanoutian Hartsov Tourkia Kermanatsineroun Oknoutioun ge haytse (On the question of the Armenian Genocide Turkey asks the help of Germans), *Zartonk*, 9 February 2012, p. 2; Bağış Hayots Tseghasbanoutian jkhdmn Kreaganaytsoumi Yevrobagan Mioutian mech daradzoume anhavanagan ge ngade (Bağış considers the spreading of penalization for denial of the Armenian Genocides as unprobable in the European Union), *Aztag*, daily, Beirut, 3 February 2012, p. 1).
- ⁴ La Turquie deplore les deportations “inhumaines” d’Armeniens en 1915, *L’Orient Le Jour*, Beirut, 14-15 Decembre 2013, p.11.
- ⁵ Taner Akçam’s impressions, *Nor Haratch*, Paris, 3 December 2011.
- ⁶ *Takvimi Vekayi*, Constantinople 27 April 1919, as translated in Vartkes Yeghiayan, *The Armenian Genocide and Trials of the Young Turks*, La Verne, 1990, p. 13.
- ⁷ Şevket Sürreyya Aydemir, *Makedonyadan Ortuasyaya Enver Pasa*, Ucuncu cilt, 1914-1922, Istanbul, 1972, pp. 493-500, quoted by Levon Vartan, *Togh Turke Khosi* (Let the Turk Speak) Beirut, 1975, p. 40.
- ⁸ Haykazn Ghazarian, *Tseghasban Turke* (The genocidal Turk) Beirut, 1968, p. 61 as quoted from Hassannettin Ertürk’s *İki Devrin Perde Arkase*.
- ⁹ F.O. 371/6500, F.O. 371/5166.
- ¹⁰ *Sabah* (Constantinople), 28 January, 1919.
- ¹¹ Taner Akçam, *The Young Turks’ Crime Against Humanity*, Princeton, 2012, p. 17.
- ¹² *İkdam*, Constantinople, 11 February 1919 as quoted by Akçam, p. 13.
- ¹³ Prime Ministerial Ottoman Archive (Basbakanlik Osmanli Arsivi) / DH.SFR, N 54/100, dated 22 June 1915, as quoted by Akçam, p.15
- ¹⁴ BOA/DH.SFR, N 54/411, dated 12 July 1915, as quoted by Akçam, p. 16.
- ¹⁵ BOA/DH.SFR, N 54/122, dated 23 June 1915, as quoted by Akçam, p. 303.
- ¹⁶ Akçam, p. 27.
- ¹⁷ Ibid.
- ¹⁸ BOA/DH.SFR, N 55/290, dated 29 August 1915, as quoted by Akçam, p. 203-206.
- ¹⁹ Politisches Archiv des Auswartiges Amt R 14087 DE/PA-AA/ Bo.kons., vol.170, as quoted by Akçam, p. 207. Report by German Ambassador to the Porte, Hohenlohe-Langeburg to Chancellor Bethman-Hollweg, dated 4 September 1915. The same was also recorded by another German Embassy Officer, Göppert during the 31 August 1915 conversation. More or less similar conversations took place between Talaat and German Ambassador Bernstorff (see Count Johann von Bernstorff, *Memoirs of Count Bernstorff*, New York, 1936, p. 176.
- ²⁰ *Ati*, Constantinople, 24 February 1920, as quoted by Akçam, p. 125
- ²¹ *Takvimi Vekaye*, Constantinople, N 3540, 5 May 1919, as quoted by Akçam, p. 198.
- ²² Akçam, p. 199.
- ²³ *Takvimi Vekaye*, No 3540, 5 May 1919, as quoted by Akçam, pp. 200-201.
- ²⁴ DE/PA-AA/Bo.Kons./Band 169, dated 30 June 1915, as quoted by Akçam, pp. 201-202.
- ²⁵ DE/PA-AA/Bo.Kons./Band 170, dated 23 August 1915, as quoted by Akçam, p. 202.

- ²⁶ Vahakn Dadrian, *Documentations of the Armenian Genocide in German and Austrian Sources, The Widening Circle of Genocide: A Critical Biographic Review*, vol.3, Charny Israel ed., Brunswick, 1994, p. 106.
- ²⁷ Leslie Davis, *The Slaughter House Province*, New York, 1990, p. 159.
- ²⁸ Morgenthau, *Ambassador Morgenthau's Story*, New York, 1918, p. 309.
- ²⁹ F.O. 371/2781/201201.
- ³⁰ F.O. 371/2781/4815.
- ³¹ Annette Hoss, "The Trial of Perpetrators by the Turkish Military Tribunals, The Case of Yozgat", *The Armenian Genocide*, ed. Richard Hovannisian, New York, 1992, p. 216.
- ³² Ibid.
- ³³ *La Renaissance*, Constantinople, 14 December 1918, No. 6, translated from *Vakit* newspaper, Constantinople.
- ³⁴ Hradaragouadz e tseghasbanoutian masin kermanagan kaghdni pastatoughterou anklere (The English translation of the secret German documents concerning the genocide is published), *Aztag*, daily, Beirut, 13 January 2014.
- ³⁵ Ulrich Trumpner, *Germany and the Ottoman Empire 1914-1918*, Princeton, 1968, p. 213.
- ³⁶ Turkei 183/38, A24507, as quoted in Vahakn Dadrian, *Documentation of the Armenian Genocide in German and Austrian Sources*, p. 100.
- ³⁷ Turkei 183/37, A22101, as quoted in Dadrian, p. 10.
- ³⁸ Turkei 183/37, A17735, as quoted in Dadrian, p. 10.
- ³⁹ K170, N4674, as quoted in Dadrian, p. 107.
- ⁴⁰ Turkei 183/39, A28584, as quoted in Dadrian, p. 107.
- ⁴¹ 12 Turkei 209, N 50/P.C., as quoted in Dadrian, p. 102.
- ⁴² 12 Turkei 209, N 51/P.E., as quoted in Dadrian, p. 102.
- ⁴³ Danish National Archives, Foreign Affairs Ministry, group works 1909-1945, section 139, N1, Turkey-Internal Affairs, file 1, 31 December 1916, as published in *Zartonk* daily, 27 June 2012, p. 2, taken from *Nouvelles d'Armenie* magazine, Paris, tr. by Asdghig Mayilian.
- ⁴⁴ U.S. official document, to Secretary of State, Washington D.C. from US. Ambassador Henry Morgenthau, Constantinople, 16 July, 1915, Index 867.4016/76.
- ⁴⁵ Davis, pp. 156-157.
- ⁴⁶ *Il Messagero*, Rome, 25 August 1915, as quoted in Viscount Bryce, *The Treatment of Armenians in the Ottoman Empire*, Second Edition, Beirut, 1972, pp. 291-292.
- ⁴⁷ F.O. 371/2488.
- ⁴⁸ Ibid, *Journal de Geneve*, 8 September 1915.
- ⁴⁹ Zaven Messerlian, *The Premeditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians*, Antelias, 2001, p. 87.
- ⁵⁰ Joseph Pomiankowski, *Der Zusammenbruch des Ottomanischen Reiches*, Zurich, 1928, p.165, as quoted by Edward Gulbekian, "On Claims that Armenians Massacred One Million Turks", *The Armenian Mirror Spectator*, Boston, 18 July 1987, p. 2.
- ⁵¹ Akçam, p. 228.
- ⁵² "Turk Badmapan Hayastani Azkayin Arkhive patse polor hedazodoghnerou archev" (Turkish historian [says], Armenian's National Archives are open in front of all researchers), *Zartonk*, 12 February 2014.
- ⁵³ Philippos Balikian, *Biographical Memoir*, Belmont, 2009, pp. 40-41.
- ⁵⁴ Joseph Green, *Leavening the Levant*, Boston, 1916, p. 45.
- ⁵⁵ Morgenthau, p. 297.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ԹՐՔԱԿԱՆ ԽԵՂԱԹԻԻՐՈՒՄՆԵՐԸ ՀԵՐՔՈՂ՝
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՒ ԸՆՏՐԱՆԻ ՄԸ
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Հեղինակը լուսարձակի տակ կ'առնէ Փետրուար 2014էն սկսեալ Թուրքիոյ բարձրագոյն պաշտօնատարներու կոչերը՝ Արեւմտեան Աշխարհին չընդառաջելու Հայոց Ցեղասպանութեան 100ամեակին առնչութեամբ առնուելիք քայլերուն: Ան կ'առանձնացնէ այդ կոչերուն հիմք ծառայող թրքական առարկութիւնները չգործուած ցեղասպանութիւն մը ճանչնալու, օսմանեան արխիւներու մէջ ցեղասպանական արարքը հաստատող փաստաթուղթերու չգոյութեան, օսմանեան արխիւներու մատչելիութեան եւ ընդհակառակը Հայաստանի արխիւներուն անմատչելիութեան են.:

Հաւաստելով որ բերուած թրքական առարկութիւնները սխալ ու կեղծ են, Մսրըլեան կը բերէ օսմանեան, գերմանական, աստրիական, դանիական, իտալական եւ ամերիկեան արխիւային փաստաթուղթերէ փաստարկներ, հերքելով թրքական յայտարարութիւնները: Մսրըլեան յստակ ակնարկութիւններ կը կատարէ նաեւ կարգ մը արխիւային փաստաթուղթերու ոչնչացման մասին՝ վկայակոչելով փճացման գործողութեանց փաստացի աղբիւրները: Ապա ան կը բերէ նաեւ ատենի արեւմտեան մամուլէն հատուածներ եւ այս բոլորին վերլուծումով կ'ընդգծէ թրքական պետական ժխտողական քաղաքականութեան անհիմն ու ստապատիր ըլլալը:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԸ ԵՒ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՆԵՐԸ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

ԱՐԵՍՏԱԿԷՍ ՄԻՄԱՒՈՐԵԱՆ
ares@noravank.am

ՄՈՒՏՔ

Ի. դարասկզբին Օսմանեան Կայսրութեան կողմից պետական մակարդակով հայոց դէմ իրականացուած ցեղասպանութեան հարցերին նուիրուած հայրենական ուսումնասիրութիւններում հազուադէպ ենք հանդիպում հայ կաթողիկէների առնչուող աղբիւրներին, որոնք մատնացոյց անեն, որ օսմանեան ղեկավարութեան համար դաւանանքային տարբերութիւնն ամենեւին էլ նշանակութիւն չունէր, երբ հարցը վերաբերում էր հայերի համակարգուած եւ ծրագրուած ոչնչացմանը: Հակառակ այն իրողութեանը, որ հայ կաթողիկէների նկատմամբ առանց խտրականութեան իրականացուել է ցեղասպանութեան նոյն քաղաքականութիւնը, ինչ եւ կայսրութեան ողջ հայութեան նկատմամբ, թուրքական գիտական եւ մերձգիտական շրջանակները չհիմնաւորուած նշում են, որ հայ կաթողիկէները չեն տուժել, քանի որ եղել են եւրոպական տէրութիւնների եւ յատկապէս Հռոմի պապի պաշտպանութեան տակ¹: Սակայն փաստերը, աղբիւրները վկայում են, որ թուրքական մօտեցումներն անհիմն են: Այս քննարկումով մենք կը ջանանք հերքել այդ տեսակէտը:

Ցեղասպանութեան հարցում ժխտողականութեան դիրքերից հանդէս եկող թուրք «գիտնականները» (Եուսուֆ Հալաջօղլու, Դաուութ Քըլըչ² եւ այլք) Առաջին Աշխարհամարտի տարիներին կայսրութեան կաթողիկէ եւ աւետարանական հայերի վերաբերեալ հրատարակած հետազոտութիւններում այդ համայնքների հանդէպ իրենց դրական գնահատականները կառուցում են միքանի թուրքական պետական փաստաթղթերի վրայ³, որոնք, անկասկած, միակողմանի են ու չեն դիմանում այլ աղբիւրների⁴ հակառակ պնդումներին:

Հարկ է նկատել, որ նախքան Մեծ Եղեռնը, Օսմանեան Կայսրութիւնում գոյութիւն ունէր 120,000անոց հայ կաթողիկէ համայնք: Միայն Արեւմտեան Հայաստանում եւ Կ.Պոլսում հայ կաթողիկէների թուաքանակը 84.000 էր, որից միայն 25.000ը փրկուեց ջարդերից եւ մաս կազմեց սփիւռքի Հայութեան⁵:

Օսմանեան Կայսրութիւնում դիւանագիտական առաքելութեան մէջ գտնուող օտարերկրեայ դեսպանների, հիւպատոսների, կաթողիկ եւ աւետարանական միսիոներների՝ հեռագրերը, նաեւ ջարդերից փրկուած հայ կաթողիկէների՝ յետագայում տպագրուած յուշերը եւ այլ նիւթեր բացայայտում են նրանց նկատմամբ իրականացուած տեղահանման, համատարած կոտորածների, բռնի իսլամացման եւ թուրքացման համակարգուած քաղաքականութիւնը:

Դեռեւս 1915 Փետրուարին անակնկալ կերպով Ստամբուլի հայ կաթողիկէ համայնքին պատկանող Միխիթարեան Վարժարան է այցելում Կրթութեան Նախարարութեան կողմից ուղարկուած պատկառելի մի յանձնախումբ եւ պահանջում տեղեկութիւններ՝ ուսուցիչների, անձնակազմի, դպրոցի եւ ծրագրերի մասին⁶: Յատկանշական է, որ դա կատարուում է այն ժամանակ, երբ կայսրութիւնն արդէն պատերազմի մէջ էր: Կարծում ենք, որ յիշեալ նախարարութիւնը կրթական ինչ-ինչ խնդիրների պատրուակով տեղեկութիւններ է հաւաքել եւ հաւանաբար տրամադրել պետութեանը համապատասխան մարմիններին՝ հայերի տեղահանութեան եւ կոտորածներին նախապատրաստուելու համար:

1915 Ապրիլի 24ին, Կ.Պոլսի հայ մտաւորականութեան ձերբակալութեանը զուգահեռ, թուրքական ոստիկանութեան կողմից իրականացուել է մէկ այլ գործողութիւն եւս՝ Ախալքալաքի ռուսահպատակ հայ կաթողիկէների նկատմամբ, որոնք, տնտեսական եւ ընկերային ծանր պայմաններից ելնելով, առեւտուր էին անում կամ ուսումնառութեան նպատակով գտնուում էին Կ.Պոլսում, որոշակիօրէն պահպանելով կապը նաեւ իրենց բնօրրանի՝ Արեւմտեան Հայաստանում գտնուող Կարին-Էրզրումի հետ: Անգամ օտարերկրեայ հպատակութիւնը չի խանգարել թուրքերին ձերբակալել եւ Տէր-Զօր աքսորել նաեւ հայութեան այս շերտին⁷:

Յեղասպանութեան տարիներին հայ կաթողիկէների վերաբերեալ առաջին թուրքական աղբիւրները թուագրում են 1915 Մայիսի 24ով: Դրանցում մասնաւորապէս նշում էր. «*Հայերի հանդէպ կառավարութեան կողմից ձեռնարկուած հարկադիր միջոցառումները բացառապէս հիմնուած են երկրի անվտանգութեան եւ հասարակական կարգ ու կանոնը բաւարարելուն եւ պաշտպանելուն: Հայերի դէմ կառավարութիւնը չի վարում ջարդերի քաղաքականութիւն, դեռեւս չէզոք դիրքորոշման մեջ մնացող կաթողիկէներին եւ բողոքականներին ձեռք չեն տուել*»⁸: Սա, ինչպէս նշում է թուրք հետազօտող Հալաջօղլուն՝ Օսմանեան պետութեան կողմից տրուած պատասխանն էր արեւմտեան երկրներին⁹, որով փորձ էր կատարում պետական մակարդակով հերքելու ջարդերի վերաբերեալ տեղեկութիւնները, որոնք արձագանգ էին գտել արեւմտեան մամուլում եւ դիւանագէտների հեռագրերում: Հայ կաթողիկէների եւ աւետարանականների մասին շեշտադրումները բացառապէս նպատակ ունէին չէզոքացնել այն երկրների արտաքին միջամտութեան հնարաւորութիւնները, որոնք շահագրգռուած էին տեղի հայ կաթողիկէների եւ բողոքականների պաշտպանուածութեամբ:

Չնայած թուրքական կեղծ հաւաստիացումներին, թէ հայերի, մասնաւորապէս՝ կաթողիկէ եւ աւետարանական դաւանանքային խմբերի նկատմամբ բացառում էր որեւէ գործողութիւն, այդուհանդերձ, կոտորածները չըջանցեցին վերջիններիս: Հայ կաթողիկէ հոգեւորականութիւնը որոշակի ջանքեր էր գործադրում՝ փրկելու իր համայնքը կոտորածներից եւ տեղահանութիւններից: Այս առումով յիշարժան են այդ տարիներին Հայ Կաթողիկէ Եկեղեցու պատրիարք, Պօղոս-Պետրոս ԺԳ.ի վերոյիշեալ ուղղութեամբ կատարուած ջանքերը, որոնք առանձնապէս դրական ազդեցութիւն չունեցան: Այսպէս, դանիական աղբիւրներից իմանում ենք, որ «*1915 թուականի Օգոստոսի 16ին Գերմանիայի դեսպանն ընդունելութեան ժամանակ իր մօտ է կանչել Թուրքիայի նախարարին եւ խնդրել նրան՝ համոզել իր կառավարութեանը վերջ դնել հայերի հալածանքներին, յատկապէս կաթողիկէ հայերի, ովքեր երբեք ոչ մի յեղափոխութեան չեն մասնակցել եւ չեն խառնուել քաղաքականութեան... Երբ թուրք վեզիրի տուած խոստումները*

դրժուեցին, եւ հալածանքներն ու սպանութիւնները շարունակուեցին, նորին մեծութիւն Փոլ Պիէռ 13րդը (Պօղոս-Պետրոս ԺԳ. - Ա.Ս.)՝ հայ-կաթոլիկ եկեղեցու պատրիարքը, դիմեց Իսպանիայի նախարարին եւ խնդրեց նրան Իսպանիայի անունից եւս մէկ անգամ դիմել վեզիրին, որ գոնէ կաթոլիկ հայերին չենթարկեն հալածանքների: Իսպանիայի նախարարը համաձայնեց եւ անցած երկուշաբթի օրը ընդունելութեան ժամանակ դիմեց վեզիրին, սակայն վերջինս «զարմացաւ»՝ լսելով, թէ ինչ դաժանութիւններ են կատարուել, եւ խոստացաւ անմիջապէս հրամայել, որ կաթոլիկ հայերին ձեռք չտան»¹⁰:

Հայ կաթողիկէների կոտորածներին վերջ դնելու՝ Պօղոս-Պետրոս ԺԳ.ի յորդորները պատահական չէին: Դեռ 1915 Մայիս-Յունիսին տարաբնոյթ պատրուակներով նախ աքսորում, յետոյ տարբեր վայրերում ոչնչացում են Մխիթարեան եւ Արծիւեան միաբանութիւնների բազմաթիւ կղերականներ: Հայ Կաթողիկէ եկեղեցուն ծառայող հոգեւորական դասի նկատմամբ նման առաջին գործողութիւններն իրականացուեցին Մալաթիայի եպիսկոպոս Միքայել Խաչատուրեանի, Տիգրանակերտում՝ Անդրէաս եպիսկոպոս Չելէպեանի, տեղի եկեղեցու հայ քոյրերի հետ. յետագայ ամիսներին դրանք շարունակուեցին այլ վայրերում¹¹:

Իզմիրի Մխիթարեան հայրերը երկարամեայ տառապանքներից յետոյ վերադարձան աքսորից՝ ազդեցիկ մի հայի միջամտութեամբ, իսկ Պարտիզակի հայրերն աքսորուելուց յետոյ, մէկ այլ բարերարի միջնորդութեամբ, հնարաւորութիւն են ստանում ապաստանել Կ.Պոլսում¹²: Մինչդեռ Մարդին քաղաքի հայ կաթողիկէ համայնքի առաջնորդ Իզնատիոս արքեպիսկոպոս Մալոյեանը, ինչպէս նաեւ Տրապիզոնում գտնուող Մխիթարեան երեք հայրերը սպանում են¹³: 1915 Յունիսին Մալոյեանին առաջարկում են հրաժարուել քրիստոնէութիւնից եւ ընդունել մահմեդականութիւն, ինչը նա մերժում է: Մերժումից յետոյ նրա հետ միասին Մարդին քաղաքի հայ կաթողիկէ համայնքի 400 բնակիչներ տեղահանում են եւ ուղարկում Տիգրանակերտ: Ճանապարհին տեղահանուածներն առանձնացում են միմեանցից, վերածում փոքր խմբերի ու մերձակայ ձորակներում սպանում թուրք զինուորականների կողմից: Իսկ Մալոյեանը

Տիգրանակերտի մօտակայքում գտնուող Քարաքեօփրու Գիւղում գնդակահարում է¹⁴:

Կոտորածներին զուգահեռ՝ իրականացուել է նաեւ հայ կաթողիկէների իսլամացման գործընթաց: Մինչեւ ցեղասպանութիւնը բռնի կրօնափոխուել են ամբողջ գիւղեր Արդահանում (Մամանելիս, Վէլ եւն.), իսկ ցեղասպանութեան տարիներին այդ գործընթացները շարունակուել են: Կրօնափոխութեան դէպքեր՝ հայ կաթողիկէների մէջ արձանագրուել են նաեւ Կարինի հայաբնակ Արծաթի եւ Թուանջ գիւղերում: Այս գիւղերի բնակիչների մի մասը, որ 1830ին չէր տեղափոխուել Ջաւախք, Հայոց Ցեղասպանութեան տարիներին մահուան սպառնալիքի տակ հրաժարուել է կաթողիկոսիւնից եւ իսլամացել¹⁵, իսկ մի մասն էլ կոտորուել է:

Օսմանեան բանակում ծառայող զինուորների եւ այդ երկրում դիւանագիտական առաքելութեան մէջ գտնուող գերմանացի բարձրաստիճան ծառայողների հեռագրերից յայտնի են դառնում հայ կաթողիկէների եւ աւետարանականների նկատմամբ իրագործուած տեղահանութիւնների եւ իսլամացման փաստեր.

«Հայերի հետապնդումներն արեւելեան նահանգներում թելակոխել են իրենց վերջնական փուլը: Թուրքական կառավարութիւնը թոյլ չտուեց իրեն խանգարել Հայկական հարցի լուծումը հայ ցեղի ոչնչացման ճանապարհով իր ծրագրի կատարմանը ո՛չ մեր միջնորդութիւնների, ո՛չ ամերիկեան դեսպանի եւ պապական նուիրակի, ինչպէս նաեւ Անտանտի կողմից սպառնալիքների, առաւել եւս Արեւմուտքի հասարակական կարծիքը հաշուի առնելու միջոցով: Այժմ նա պատրաստուում է ձուլել եւ ցրել առաջին տեղահանութիւնը վերապրած հայերի վերջին մնացորդները: Ընդ որում, խօսքը վերաբերում է Հիւսիսային Միրիայում (Մարաշ, Հալէպ, Ռասուլ-Այն), ինչպէս նաեւ Փոքր Ասիայի որոշ խոշոր բնակավայրերում (Անգորա, Կոնիա) մնացածներին, յատկապէս նրանց, ովքեր այնտեղ են յայտնուել տեղահանութեան հետեւանքով, կամ էլ աւելի շուտ այնտեղ տեղափոխուածներին: Մական հնարանկների շրջանում, ինչպէս նաեւ կաթողիկ եւ բողոքական հայերի շրջանում, այժմ կատարւում են «գտումներ», թէեւ Բարձր Դուռը կրկին խոստացել է խնայել այս վերջիններին:

Այս մնացածները մասամբ տեղահանում են աւելի հեռու՝ Միջագետք, իսկ մասամբ էլ ենթարկում մահմեդականացման: Մարաշում եւ Հալէպում տեղահանութիւնն ընթանում է մեծ թափով: Դիարբեքիում իր գործունէութեամբ յայտնի վալի Ռաշիդ բէյը Անգորայում զբաղուած է փնտռելով վերջին **հայերին՝ ներառեալ կաթողիկէներին**, եւ տեղահանում նրանց: Նոյն ձեւով վարում էին Էսքիշեհիում եւ Բզմիթի շրջակայքում դեռ **մնացած բողոքական եւ կաթողիկ հայերի** հետ (ընդգծումները մերն են - Ա.Ս.): Չնայած պաշտօնական անձանց բոլոր ժխտումներին, հայերի հետապնդման այս վերջին փուլում մեծ դեր է խաղում մահմեդականացումը¹⁶:

Հայ կաթողիկէների բռնի իսլամացման քաղաքականութիւնն անգամ Եղեռնի տարիներին եղել է կառավարութեան ուշադրութեան կենտրոնում: Դրա վկայութիւնն է հետեւեալ փաստը: 1917 Յունիսին Էդիրնէի եւ Անկարայի նահանգներում բարձրանում է այնտեղ մնացած եւ բռնութեամբ իսլամացած կաթողիկէ հայերին աքսորելու խնդիրը: Ինչպէս պարզում է, բռնի իսլամացումը կաթողիկէ հայերի շրջանում պետութիւնը նկատել էր գաղտնի կերպով քրիստոնէական կաթողիկ սովորոյթների պահպանման դէպքեր, ինչն էլ հիմք է ծառայել նրանց աքսորելու¹⁷:

Գերմանացի հետազօտող Վոլֆգանգ Գուստը, անդրադառնալով Օսմանեան Կայսրութեան հայ կաթողիկ եւ աւետարանական բնակչութեան նկատմամբ գերմանական կաթողիկ եւ բողոքական եկեղեցիների պահուածքին, նշում է.

Գերմանիայի կայսրը միայն մէկն էր նրանցից, ովքեր կարող էին փրկել հայերին: Կային նաեւ այլ հզօր եւ ազդեցիկ հաստատութիւններ՝ գերմանական եկեղեցիներ: Բարձրագոյն կաթողիկը քաղաքական գործիչների շրջանում Մաթիաս Էրցբերգերն էր, որը յաճախ էր լինում Թուրքիայում եւ հաղորդագրութիւններ էր կազմում, թէ ինչպէս կարելի է փրկել հայերին: Նրա առաջարկները բաւականին պարզամիտ էին: Այնուամենայնիւ, նրա միջոցով տեղեկացուած էր Գերմանիայի կաթողիկ եկեղեցին: Եւ ի նչ արեց այն: Ոչինչ: Աւելի նշանակալից էր աւետարանական եկեղեցու վերաբերմունքը: Նրա բարեգործական կենտրոնները Թուրքիայում անում էին ամէն ինչ՝ հայերի տառապանքները մեղմացնելու համար: Եւ նրանք

ստոյգ տեղեկութիւններ էին հաղորդում ցեղասպանութեան մասին, ինչպէս նաեւ Լեւիսիոսն էր ճշգրտօրէն տեղեկացրել իր աւետարանական եղբայրներին՝ գաղտնի հանդիպումների ժամանակ: Եւ ինչ արեցին գերմանացի բարձրագոյն բողոքականները: Ոչինչ: Նրանք ընդհանուր բանաձեւ յղեցին կանցլէրին՝ յստակ իմանալով, թէ ինչ քաղաքականութիւն է նա վարում հայերի հանդէպ: Միայն իր ստորագրեալների քանակով եւ որակով յարգանքի արժանի այս յուշագիրը փոխանցուեց Կոստանդնուպոլսի դեսպանատանը եւ յանգեցրեց նրան, որ Գերմանիայի բարձրաստիճան ներկայացուցիչները Թուրքիայում սկսեցին խնդրել խնայել գոնէ հայ կաթողիկէներին, նախեւ առաջ հայ բողոքականներին, քանի որ նրանք յատկապէս օրինապաշտ են եւ գերծ յեղափոխական գաղափարներից: Այլ կերպ ասած՝ գերմանական բողոքականների կարծիքով՝ հարկաւոր չէր անվերապահօրէն վստահել գրիգորեանական հայերին: Ցեղասպանութեան համար պատասխանատուութիւն կրող թուրք պաշտօնեաները «իրար էին շփում ձեռքերը» բաւականին անսպասելի այս օժանդակութիւնը ստանալով: Կաթողիկէ եւ բողոքական հայերին գրեթէ ոչինչ չօգնեց, նրանք նահատակուեցին, ինչպէս եւ իրենց հայ առաքելական հաւատակից եղբայրները¹⁸:

Պատմական փաստերի համաձայն, հայ կաթողիկէ համայնքից ցեղասպանութեան զոհ դարձան աւելի քան 30,000 հայեր, Հայ Կաթողիկէ եկեղեցու 102 հոգեւորական, միքանի եպիսկոպոս եւ 45 վանական¹⁹: Հայ կաթողիկէների մեծ մասը ստիպուած եղաւ գաղթել եւրոպական եւ մերձաւորարեւելեան երկրներ: Ինչպէս իրաւացիօրէն նկատել է պատմաբան Մալուաթ Արոյեանը. «Թուրքական ջարդարարները հայերին կոտորում էին ոչ թէ նրա համար, որ նրանք առաքելականներ էին կամ հայ կաթողիկէներ: Նրանք կոտորուեցին միայն նրա համար, որ ... հայ էին»²⁰:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ներկայացուած միքանի փաստերը հայ կաթողիկէների նկատմամբ իրականացուած ցեղասպանական գործողութիւնների ընդամենը դրուագներ են եւ վկայում են, որ թուրքական «գիտական» մօտեցումները, թէ հայ կաթողիկէները չեն

ենթարկուել տեղահանման եւ ոչնչացման, ընդամենը պատմական փաստերն աղաւաղելու փորձեր են:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Davut Kılıç, “1915’te Tehcir Edilmeyen Ermeniler”, Ermeni Araştırmaları 1. *Türkiye Kongresi Bildirileri* (1915ին չաքարուած հայերը. հայկական հետազոտութիւններ,) 1, Թուրքիայի կոնգրէսի արձանագրութիւնները II, Անկարա, 2003, էջ 118:
- ² Kılıç, էջ, 114-117:
- ³ Yusuf Halaçoğlu, *Ermenilerin Suriye’ye Nakli: Sürgün Mü, Soykırım Mı?* (Հայերի արտաքսումը Սիրիա. բռնագաղթ, ցեղասպանութիւն), Belgeler Ankara, Nadir kitap, 2004, էջ 11-12, 22. նաեւ` Yusuf Halaçoğlu, *Ermeni Tehciri* (Հայերի բռնագաղթը), Istanbul, Babiali Kültür Yayıncılığı, 2004, էջ 82:
- ⁴ Մանրամասն տե՛ս` Wolfgang Gust, *Ermeni Soykırımı 1915-1916 Alman Dışişleri Bakanlığı Siyasi Arşiv Belgeleri* (Հայոց Ցեղասպանութիւնը Գերմանիայի ԱԳՆ 1915-1916 արխիւներում), Istanbul, Belge yayınları, 2012, էջ 445-447, 460-463, 542, 641, 646, 673, 707, 737, 819, 822. նաեւ Թանէր Աքչամ, *Երիտթուրքերի Գործած Ոճիրը Մարդկութեան Դէմ*, Երեւան, «Տիգրան Մեծ» Հրատ., 2015, էջ 463:
- ⁵ Թորգոմ Փոսթաճեան, *Հայաստանեայց Եկեղեցին Եւ Միւսները*, Լոս Անճելոս, Այբ Բէն, 2005, էջ 192:
- ⁶ *Համայնապատկեր Վիեննական Միսիթարեան Հայրերու Կրթական Գործունէութեան, Հատոր Ա.*, Իսթանպուլ, «Միսիթարեան» Տպ., 2008, էջ 43:
- ⁷ Մանրամասն տե՛ս` Ն. Մակարոֆ, *Դէր-Էզ-Զօրի Աքարեայը*, Երեւան, «Չանգակ-97», 2001, էջ 25-35:
- ⁸ Halaçoğlu, *Ermenilerin Suriye’ye*, էջ 21-22:
- ⁹ Նոյն, էջ 21:
- ¹⁰ «Հայոց Ցեղասպանութեան Վերաբերեալ Դանիական Փաստաթղթերից», <http://norkhosq.net> :
- ¹¹ Մանրամասն տե՛ս` *Յուշամատեն Չմմառու Տիրատօր Վանքին Հիմնարկութեան 1749-1999*, Պէյրութ, Տպ. Փոմիկրավիւր-Մաթչ Փրինթ, 2001, էջ. 247-259, 269-280:
- ¹² Յովհաննէս Աւագ Սրկ. Մկրտիչեան, «Մեր Նահատակ Կղերականները», *Մասիս*, Ապրիլ, Պէյրութ, 2011, էջ 22
- ¹³ Նոյն, էջ 30:
- ¹⁴ Նոյն, էջ 22-29:
- ¹⁵ Արեստակէս Սիմաւորեան, Վահրամ Հովեան, *Ջաւախահայութեան Որոշ Հիմնախնդիրներ (Ջաւախահայութեան Դաւանանքային Եւ Տեղեկատուական Վիճակի Ուսումնասիրութիւն)*, Երեւան, «Գասպրինտ», 2009, էջ 23:
- ¹⁶ Մետերնիխ, «Հայերի Հետապնդումները Թուրքիայի Արեւելեան Երջաններում, Տերապիս, 10 Յուլիսի 1916թ.», *Գայսերական Գերմանական Դեսպանութիւն N 368*, <http://www.genocide-museum.am/arm/german.php> :
- ¹⁷ F. Dündar, *Modern Türkiye’nin Şifresi. İttihat ve Terakki’nin Etnisite Muhendisliği (1913-1918)*, (Ժամանակակից Թուրքիայի գաղտնաբառը. Իթթիհատ Վէ Թերաքքըի

Էթնիկ Ճարտարապետությունը (1913-1918), İstanbul, “İletişim”, 2008 (2-inci baskı), էջ 315:

- ¹⁸ Հատուած Վոլֆգանգ Գուստի «Կարո՞ղ Էր Արդեօք Գերմանիան Փրկել Հայերին», Ֆրանկֆուրտի Ս. Պողոս Եկեղեցում 2009 Ապրիլի 24ի ելույթից (<http://www.wolfganggust.net/armenocide/gusthome.nsf/d3cb8075f11223b4c12572ef004f2e81/e4971e2aa8ad1bd3c12576210077c32e?OpenDocument>):
- ¹⁹ «Հայ Կաթոլիկ Եկեղեցի» (<http://araratian-tem.am/media/Hay%20Katolik%20Ekexeci.doc>):
- ²⁰ Ս. Արոյեան, Համառոտ Պատմություն Հայ Կաթողիկէ (Կաթոլիկ) Եկեղեցու, 2002, <http://www.armeniancatholic.ru/pdf/armchurch.pdf>:

THE ARMENIAN GENOCIDE AND THE ARMENIAN CATHOLICS:
SOME REMARKS
(SUMMARY)

ARESTAKES SIMAVORYAN
ares@noravank.am

According to historical records at least 30,000 Armenians from the Armenian Catholic community, 102 clergymen of the Armenian Catholic Church, several bishops and 45 monks became victims of the Genocide, and numerous members of the community were violently converted to Islam. In spite of this reality Turkish scientific and semi-scientific circles make the baseless claim that the Armenian Catholics did not suffer as they were under the aegis of the European powers. In the article a number of facts from Turkish sources are presented. They demonstrate that the Young Turks were free in their actions, and the Turkish “scientific” findings that the Armenian Catholics were under the aegis of European countries are only a policy to distort the facts of the Armenian genocide.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՒ
ԹՈՒՐՔԻԱ-ԻՍՐԱՅԷԼ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԵԱՆ
garshakyan@mail.ru

ՍՈՒՏՔ

Յօդուածում անդրադարձ է կատարուում թուրք-իսրայէլական յարաբերութիւններում առկայ աննախադէպ լարուածութեանը եւ դրա հիմնական դրդապատճառներին, որոնք սկիզբ են առել դեռեւս 2008 Դեկտեմբեր-2009 Յունուար ամիսներին Իսրայէլի կողմից Գազայի Հատուածի վրայ յարձակման հետեւանքով:

Այս համապատկերում դիտարկուում են Իսրայէլի իշխանութիւնների կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման հնարաւորութիւնը եւ դրան նպաստող հիմնական գործօնները:

Յօդուածում վերլուծուում են նաեւ թուրք-իսրայէլեան յարաբերութիւնների լարուածութեան պայմաններում եւ դրա զարգացման բոլոր փուլերում Թուրքիայի հակաիսրայէլեան քաղաքականութեան կանխարգելման համար ԱՄՆի կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման հնարաւորութիւնը՝ ԱՄՆի հրէական կազմակերպութիւնների աջակցութեամբ:

Ա. ԳԱԶԱՅԻ ՌՄԲԱԿՈՇՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ
ԼԱՐՈՒԱԾՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Իսրայէլ-Թուրքիա պետական յարաբերութիւնները լուրջ փորձութիւնների առջեւ կանգնեցին Իսրայէլի կողմից պաղեստինեան տարածքներում 2008ի վերջին սկսած եւ 22 օր տեւած ոմբակոծումների հետեւանքով («Չուլածոյ Արճիճ» գործողութիւն): Լարուածութիւնը սկսուեց, երբ Թուրքիայի վարչապետ (այժմ նախագահ) Ռեճեփ Թայիփ Էրդողանը խստօրէն դատապարտեց Իսրայէլի կողմից Գազայի Հատուածի ոմբակոծութիւնը՝ այն որակելով ցեղասպանութիւն: Թէեւ 2009 Յունուարի 17ին Իսրայէլը միակողմանի զինադադար յայտարարեց եւ սկսեց զօրքերի դուրսբերումը Գազայի Հատուածից, իսկ «Համաս»ը մէկ շաբաթով միացաւ զինադադարին, բայց Էրդողանը շարունակեց դատապարտել

Իսրայելի գործողությունները: Նախքան զինադադարը նա Իսրայելին դատապարտում էր Գազայի Հատուածում ռազմական գործողություններ իրականացնելու համար: Զինադադարից յետոյ նա սկսեց դատապարտել «Պաղեստինին իբրև պետություն», իսկ «Համաս»ին՝ որպես «երկրի օրինական իշխանություն» չճանաչելու համար՝ պատճառաբանելով, թե 2005 Յունուարի ընտրություններում «Համաս»ը ստացել է ընտրողների ձայների 75 տոկոսը: Էրդոդանը Իսրայելին մեղադրեց նաև «Մարդու Իրաւունքները կոպտօրէն խախտելու եւ Ժընեւի Ուիստը ոտնահարելու մէջ»:

Էրդոդանի ելոյթները խստութեամբ քննադատեց Իսրայելի Քնեսէթի պատգամաւոր, փոխարտգործնախարար Մ. Վեբին: Նա 2009 Յունուարի 12ին մասնաւորապէս ասեց. *«Էրդոդանի յայտարարութիւններն զգացմունքային են եւ չեն արտացոլում իրականութիւնը: Եթէ նա անկողմնակալ լինէր, ապա հրթիռակոծութիւնը դադարեցնելու կոչով կը դիմէր նաև «Համաս»ին... Էրդոդանն ասում է, որ Գազայում «ցեղասպանութիւն» է իրականացում: Ի՞նչ է, մենք էլ որպէս «ցեղասպանութիւն» բնութագրենք Թուրքիայում հայերի հետ կատարուածը»²:*

Յարաբերութիւնները խիստ լարուեցին 2009 Յունուարի 30ին - Դաւոսում տեղի ունեցած Համաշխարհային Տնտեսական Համաժողովի «Գազան՝ Մոդէլ Միջին Արեւելքի Համար» խորհրդածողովից յետոյ: Ուղիղ երթում Էրդոդանը նշեց, որ Իսրայելը բացօթեայ կալանավայրի է վերածել Գազան, անհամաչափ ուժ օգտագործել եւ անխնայ սպանել երեխաներին: Նա յանդիմանեց Իսրայելի նախագահ Շիմոն Պերէսին. *«Ձեր արարքը բխում է յանցագործի հոգեբանութիւնից, եւ իսրայէլցիներդ սպանել լաւ գիտէք»³:*

Էրդոդանին անմիջապէս արձագանգեցին Իսրայէլն ու ԱՄՆի հրէական կազմակերպութիւնները, ընդ որում՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման պատրաստակամութեամբ: ԱՄՆի հրէական ամենաազդեցիկ հինգ կազմակերպութիւններ նամակ յղեցին Թուրքիայի վարչապետին⁴ իրենց լուրջ վրդովմունքը յայտնելով այնտեղ ծաւալուող «հակաիսրայէլեան» դրսեւորումների համար⁵:

Աշխարհի ամենազանգուածային լրատուամիջոցներ, մեղադրելով Էրդոդանին «դիւանագիտական քաղաքավարութեանն անյարիր արարք»ի համար, յայտարարեցին, որ նա «ջղաձգութեան նոպայի ազդեցութեան տակ կոխի է սարքել»⁶:

Ակնկալւում էր, որ Էրդոդանը ետքայլ կը կատարի: Սակայն, իսլամական աշխարհում հերոսացած Էրդոդանը շարունակեց դատապարտել Իսրայելի նախագահին: Նրա ելոյթը գովեստի արժանացրեցին «Համաս»ի ներկայացուցիչները, իսկ թուրքերն օդանավակայանում իրենց վարչապետին դիմաւորեցին որպէս ազգային հերոսի: Իր հերթին, Թեհրանի քաղաքապետի որոշմամբ, նա դարձաւ Թեհրանի պատուաւոր քաղաքացի: Այդ ամէնը է՛լ աւելի սրեց Իսրայել-Թուրքիա յարաբերութիւններնը⁷:

Բ. ԹՈՒՐԿ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՑՈՒՄԸ

Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ ճգնաժամը նոր թափով սկսեց զարգանալ 2009 Սեպտեմբերից: Պաշտօնական Անկարան ամէն կերպ փորձում էր հանդէս գալ պաղեստինցիների իրաւունքների պաշտպանի դերում: Թուրքիայի արտգործնախարար (այժմ վարչապետ) Ահմեդ Դաւութօղլուն դարձեալ իր երկրի անհանգստութիւնն արտայայտեց Գազայի Հատուածում տիրող իրավիճակի վերաբերեալ եւ դարձեալ քննադատութեան ենթարկեց Թէլ Աւիւի որդեգրած քաղաքականութիւնը: Թուրքիայի պնդմամբ՝ Իսրայելը խաթարում էր տարածաշրջանի կայունութիւնը⁸:

Թուրքիայի դիրքորոշումը նախ եւ առաջ պայմանաւորուած էր այն փաստով, որ պաշտօնական Անկարան ձգտում է մեծացնել իր ազդեցութիւնը իսլամական աշխարհում: Իսկ մեծացման ամենահեշտ տարբերակը իսլամական աշխարհի «թիւ մէկ թշնամուն»՝ Իսրայելին հակադրուելն է: Աւելին, Ալ-Քաիդայի առաջնորդներից Ալ-Չաուահիրին յայտարարեց, որ Թուրքիան պէտք է դառնայ իսլամական աշխարհի առաջնորդը եւ պաշտպանը⁹:

Նշենք, որ չնայած Թուրքիան աշխարհիկ պետութիւն է, սակայն Արդարութիւն Եւ Զարգացում Կուսակցութեան (ԱԶԿ) իշխանութեան անցնելուց յետոյ երկրում աւելի ու աւելի յաճախ սկսեց խօսուել իսլամի, դրա դերի եւ նշանակութեան մասին¹⁰:

Այդ երեւոյթն իր արձագանգն է գտել նաեւ Wikileaksի գաղտնագերծած փաստաթղթերում: Դեռեւս 2003ին Անկարայի ԱՄՆի դեսպանի Ուաշինգտոնն ուղարկած մի փաստաթղթում նշուում է, որ Թուրքիայում իսլամը միաձոյլ չէ, այլ քաղաքականապէս տարանջատուած, քանի որ տարբեր քաղաքական խմբեր այն փորձում են օգտագործել սեփական նպատակներին հասնելու համար¹¹: Թուրքիայի եւ, մասնաւորապէս, իշխող ԱԶԿի կողմից իսլամի օգտա-

գործման նպատակներից մեկն էլ իսլամական երկրների շրջանում առաջատար դիրքի հասնելն է, որի վերաբերեալ նոյնպես կան գաղտնագերծուած փաստաթղթեր¹²:

Թուրքիայի հակախարայելեան քաղաքականութեան միւս օրինակը Իսրայելին չներառելն էր բազմազգ զօրավարութիւններում, որոնք տեղի ունեցան Թուրքիայում 2009 Հոկտեմբերի 12ին: Ի նշան բողոքի՝ ԱՄՆը, Իտալիան եւ Հոլանդան չներկայացրին զօրավարութիւններին իրենց մասնակցութեան հայտերը¹³: Վարչապետ Էրդոդանը յայտարարեց, որ Իսրայելին չներառելը զինավարութիւններում պայմանաւորուած էր թուրք ժողովրդի պահանջով¹⁴: Առաջին անգամ Թուրքիայի զինուորականութիւնը միացաւ կառավարութեանը՝ որդեգրելով հակախարայելական դիրքորոշում: Աւելին, Թուրքիան առաջ անցնելով բանաւոր մեղադրանքներից՝ ձեռնարկեց որոշակի գործողութիւն:

Որոշ ժամանակ Իսրայելի կառավարութիւնը հանդուրժում էր թուրք պաշտօնատարների յայտարարութիւնները, քանի որ իր ռազմօդային ուժերին թոյլատրում էր օգտագործել Թուրքիայի օդային տարածքը, իսկ հետախուզութիւնը գործակցում էր թուրք գործընկերների հետ: Սակայն, իսրայելցիների գայրոյթը կրկնապատկուեց, երբ 2009 Հոկտեմբերի սկզբին թուրքական հեռուստակայանից հեռարձակուեցին տեսարաններ, թէ ինչպէս են իսրայելցի զինուորները սպանում պաղեստինցի երեխաներին եւ գործում բռնարարքներ: Իսրայելի արտգործնախարար Աւիգդոր - Լիբերմանը դրան արձագանգեց՝ Թուրքիայի դեսպանին իր մօտ հրաւիրելով եւ մեղադրելով Թուրքիային՝ իսրայելցիների հանդէպ թշնամանք սերմանելու մէջ: Նա նշեց, որ նոյնիսկ Իսրայելի թշնամիները նման թշնամական հեռուստաթողարկումներ չեն ցուցադրում: Իսկ Իսրայելի փոխվարչապետ Սիլվան Շալունը Թուրքիայից պահանջեց «խելքի գալ»¹⁵: Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանիահուն կտրականապէս մերժեց Թուրքիայի միջնորդական դերը Սիրիայի հետ բանակցութիւններում¹⁶: Միեւնոյն ժամանակ, Իսրայելը յայտարարեց, որ Թուրքիայում իշխանութեան եկած իսլամիստ կուսակցութիւնը կարողացել է ձնշել բանակի դիմադրութիւնն ու Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ աւանդական ռազմավարական համագործակցութիւնը մօտեցել է իր վերջին: Աւելին, իսրայելեան լրատուամիջոցները նշեցին, թէ Թուրքիան անչափ մօտ է Իրանի հետ դաշինքի ստեղծմանը, թէ՛

ամրապնդում են Թուրքիայի յարաբերությունները Միբիայի հետ, եւ՝ Իսրայելին շատ է մտահոգում Անկարա-Դամասկոս-Թեհրան դաշինքի ձեւաւորման հեռանկարը, քանի որ այն կարող է լրջօրէն վտանգել Իսրայելի անվտանգութիւնը: Իսրայելեան լրատուամիջոցներն աւելի յաճախ սկսեցին յայտարարել, որ ռազմավարական կապերը Թուրքիայի հետ կարծես «աւարտուել են»¹⁷:

Իսրայելում հասարակութեանը կոչեր եղան՝ բոյկոտելու թուրքական առողջարաններ այցելութիւնները: Մասնաւորապէս, հանրային ռադիօն հաղորդեց, որ Իսրայելի ամենամեծ արհմիութիւնը այսուհետեւ դէպի Թուրքիա շրջագայութիւններ չի կազմակերպելու իր հազարաւոր աշխատողների համար: Փոխարէնը նրանց առաջարկուելու է այցելել Յունաստան եւ Բուլղարիա: Միաժամանակ, Իսրայելի կառավարութեան անդամներ հաւաստեցին, որ ներկայ չեն գտնուելու Թուրքիայի անկախութեան օրուայ առթիւ թուրքական դեսպանատան երեկոյին¹⁸:

Յարաբերությունների վատթարացման կապակցութեամբ մտահոգութիւն յայտնեց հրէական Anti Defamation Leagueի (ADL, Հակախաթարման համադաշնութիւն) ղեկավար Ֆոքսմանը՝ 2010 Յունուարին նշելով, որ լարուածութիւնը չի անդրադառնայ «հրէաթուրքական սերտ բարեկամութեան վրայ» եւ թէ՛ այդ բարեկամութիւնը հին ու ամուր է, ուստի նոր խնդիրները չեն կարող ազդել եթէ Թուրքիան ցանկանում է մերձենալ արաբական մերձաւոր արեւելեան երկրների հետ, ապա խնդիր չկայ, սակայն ինչո՞ւ դա պէտք է արուի ի վնաս թուրք-հրէական բարեկամութեան. նա յոյս յայտնեց, որ լարուածութիւնը ժամանակաւոր բնոյթ կը կրի: Անդրադառնալով Հայոց Յեղասպանութեանը՝ Ֆոքսմանը նշեց, որ ADLի դիրքորոշումն այդ հարցում անփոփոխ է եւ թէ՛ Հայոց Յեղասպանութեան հարցը պէտք է լուծուի Թուրքիայի ու ՀՀի միջեւ, ոչ թէ ԱՄՆ կամ Ֆրանսիայի խորհրդարաններում¹⁹:

Այնուամենայնիւ լարուածութիւնը շարունակում էր զարգանալ, որի օրինակներից էր 2009 Նոյեմբերի 17ին Դաւութօղլուի յայտարարութիւնը, թէ՛ Թուրքիայի քաղաքականութեան մէջ չկայ որեւէ փոփոխութիւն, եւ որ՝ տարածաշրջանում Իսրայելի որդեգրած քաղաքականութիւնը հակասում է Թուրքիայի քաղաքականութեանը. *«Մենք Երուսաղէմը որպէս Իսրայելի մայրաքաղաք չենք ճանաչում: Համոզուած ենք, որ Արեւելեան Երու-*

սաղէմը պաղեստինեան տարածք է: Այդ իսկ պատճառով մեր դեսպանատունը ոչ թէ Երուսաղէմում է, այլ Թէլ Աւիւում»²⁰:

2009 Նոյեմբերի 20ին թուրքական կողմը չեղեալ յայտարարեց Իսրայէլի հետ դեռ 2005ին կնքուած պայմանագիրը, որի համաձայն, Թուրքիան Իսրայէլից պետք է ձեռք բերէր 10 անօդաչու թռչող սարքեր²¹: Սա աւելի՛ սրեց յարաբերութիւնները: Այդ օրերին ԱՄՆում գտնուող Թուրքիայի ԱԶԿի երեք հոգուց բաղկացած պատգամաւորները հանդիպումներ էին ունեցել նաեւ ԱՄՆ 13 տարբեր հրեական կազմակերպութիւնների ղեկավարների հետ եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչմանը խոչընդոտելու համար աջակցութիւն խնդրել նրանցից: Սակայն, Էրդողանի դաւուսեան ելոյթից դժգոհ հրեական կազմակերպութիւնները պատասխանել էին, որ «ոչ կը խոչընդոտեն, ոչ էլ կ'աջակցեն հայկական օրինագծի ընդունմանը»։ «*Ամենաշատը կարող ենք չէզոքութիւն պահպանել ԱՄՆի կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցում*» յայտարարել էին նրանք²²: Յետագայում Արտաքին Գործերի նախարար Իսմայիլ Զէմը նշեց, որ ԱՄՆում եւ այլ պետութիւններում հրեական լոբին մշտապէս օժանդակել է Թուրքիային²³:

Իսրայէլի կառավարութիւնն այդ ընթացքում քայլեր ձեռնարկեց՝ թուլացնելու լարուածութիւնը: 2009 Նոյեմբերի 23ին Թուրքիա ժամանած Իսրայէլի Առեւտրի Եւ Արդիւնաբերութեան նախարար Բենիամին Բէն Էլիզարը յայտարարեց, որ Իսրայէլը կողմ է, որ - Թուրքիան շարունակի Իսրայէլ-Սիրիա յարաբերութիւններում հանդէս գալ որպէս միջնորդ, սակայն մէկ պայմանով, որ Թուրքիան պահպանի իր անկողմնակալութիւնը²⁴:

Վերոյիշեալ այցից օրեր առաջ վարչապետ Նեթանիահուն յայտարարել էր, թէ Սիրիայի հետ բանակցութիւններում իրենց միջնորդ հարկաւոր չէ, յատկապէս՝ Թուրքիային եւ նրա վարչապետ Էրդողանի նմանները: Հրեաների դէմ աճող ատելութեան մէջ մեղադրուեց, մասնաւորապէս, Թուրքիայի վարչապետը²⁵, որին Իսրայէլում համարում են հրեայ ժողովրդի թշնամի: Հրեայ վերլուծաբանների գնահատմամբ՝ Թուրքիայի վարչապետը մեծ վտանգ է ներկայացնում ոչ միայն Իսրայէլի, այլեւ ողջ արեւմտեան քաղաքակրթութեան: Ուստի պատահական չէ, որ Իսրայէլեան մի շարք թերթերի խմբագիրներ, եւ Միջին Արեւելքի Ֆորում Վերլուծական Ընկերութեան նախագահ Դ. Պիպէսը համարում են, որ Էրդողանը Բէն Լադէնից աւելի վտանգաւոր է: Աւելին, Իսրայէլում կարծիքներ

հնչեցին, որ եթէ Անկարան շարունակի Իրանի հետ վարել «ջերմ քաղաքականություն», ապա ԹԷԼ Աւիւն այլևս դա չի հանդուրժի եւ գլխիվայր կը փոխի իր քաղաքականությունը²⁶:

2009 Դեկտեմբերի 2ին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գիւլը յայտարարեց. «Միջին Արեւելքում կայուն խաղաղություն պէտք է ապահովենք: Պաղեստինցիներն էլ անկախ պետություն ստեղծելու իրաւունք ունեն: Թուրքիան Իսրայէլի սխալ քաղաքականությունը անպատասխան չի թողնի»²⁷:

Այս համապատկերում 2009 Դեկտեմբերի 6-8 Ուաշինգտոն կատարած այցի ընթացքում վարչապետ Էրդողանը դարձաւ նախագահ Թուրգուլ օզալից յետոյ Թուրքիայի առաջին ղեկավարը էր, որ չհանդիպեց ԱՄՆ հրեական կազմակերպութիւններին²⁸:

Նոյն օրերին Թուրքիայի վարչապետը նախագոյնական յայտարարութիւն արեց Իսրայէլին, նշելով. «Եթէ Իսրայէլը երրորդ երկրի դէմ լրտեսական գործողութիւններ իրականացնելու նպատակով փորձի խախտել Թուրքիայի օդային տարածքը, ապա - Թուրքիայի պատասխան հակազդեցութիւնը «երկրաշարժի» նման կը լինի: Իսրայէլը մէկ այլ երկրի վրայ յարձակուելու համար չի կարող օգտագործել մեր հետ ունեցած յարաբերութիւնը: Իսրայէլը չի կարող յոյս ունենալ, որ մենք ձեռքներս ծալած կը նստենք»²⁹: Խօսքը վերջին օրերին բազմիցս շրջանառուող այն լուրի մասին էր, որ Իրանի դէմ իրականացուելիք յարձակումից առաջ հետախուզական տեղեկանք հաւաքելու նպատակով իսրայէլեան ինքնաթիռները խախտել են Թուրքիայի օդային սահմանը³⁰:

Այնուամենայնիւ, Իսրայէլի ղեկավարութիւնը փորձեց ինչ-որ կերպ յաղթահարել ճգնաժամը: 2009 Դեկտեմբերի 9ին Իսրայէլում Թուրքիայի նոր դեսպան Օդուգ Չելիքկոլի նշանակման առիթով կազմակերպուած հանդիպման ժամանակ նախագահ Պերէսը յայտարարեց, որ ցանկանում է Թուրքիայի նախագահ Գիւլին տեսնել ԹԷԼ Աւիւում: Պերէսը մասնաւորապէս նշեց. «Մենք դեռ ակնկալում ենք, որ Թուրքիայի նախագահը կ'այցելի Իսրայէլ: Մեր դռները միշտ բաց են նրա առջեւ: Իսրայէլի ու Թուրքիայի փոխ-յարաբերութիւնները երկար պատմութիւն ունեն, իսկ յետագայում՝ նաեւ պայծառ ապագայ: Մենք ցանկանում ենք, որ մեր յարաբերութիւնները շարունակեն բարելաւուել»³¹:

Սակայն, ճգնաժամը շարունակեց խորանալ: Լարուածութիւնը ընդհուպ դիւանագիտական յարաբերութիւնների խզման եզրին

հասաւ 2010 Յունուարին: Մասնաւորապէս, Իսրայէլի փոխարտգործնախարար Դաւիթ Այալոնը Թուրքիայի դեսպանին հրաւիրեց Արտաքին Գործերի Նախարարութիւն եւ բողոքի գիր յանձնեց նրան՝ թուրքական հեռուստաընկերութիւններից մէկի հակաիսրայէլեան ֆիլմ ցուցադրելու համար, որտեղ իսրայէլական յատուկ ծառայութեան աշխատակիցը ներկայացում էր որպէս երեխայ առեւանգող: Հանդիպման ժամանակ Այալոնը հրաժարուեց սեղմել Թուրքիայի դեսպան Չելիքկոլի ձեռքը՝ երբ այդ մասին խնդրել էին լրագրողները: Աւելին, նա եբրայերէն ասեց լրագրողներին. «Մենք միայն ցանկանում ենք, որ ընդգծուի, որ նա մեզանից աւելի ցածր աթոռին է նստած, եւ, որ սեղանին միայն մէկ դրօշ կայ»: Ապա անգլերէնով դիմելով դեսպանին նա ասեց. «Ցաւօք, ինչ որ բան մեզ անհանգստացնում է, որը ես ցանկանում եմ քննարկել Ձեզ հետ առանց մամուլի ներկայութեան...»³²:

Այս միջադէպը խիստ արձագանգ ստացաւ Թուրքիայում: Թուրքիայի իշխանութիւնները յայտարարեցին, որ Իսրայէլը պէտք է ներողութիւն խնդրի դիւանագիտական խայտառակ վարմունքի համար, հակառակ դէպքում Անկարան ետ կը կանչի Իսրայէլում իր դեսպանին՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով³³: Այալոնը հարկադրուած եղաւ երկու անգամ ուղերձ յղել Անկարա, որը բաւարարեց թուրքական կողմին: Թուում էր, թէ դրանով հարթուել է դիւանագիտական ճգնաժամը: Սակայն 2010 Յունուարի 17ին - Թուրքիա այցելած Իսրայէլի Պաշտպանութեան նախարար Էհուտ Բարաքի ցանկութիւնը՝ հանդիպել Թուրքիայի վարչապետի եւ նախագահի հետ, մերժուեց՝ թուրք-իսրայէլեան դիւանագիտական խայտառակութեան պատճառով³⁴:

Գ. «ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԻԱՏՈՐՄԻՂ»Ի ՄԻՋԱԴԷՊԸ ԵՒ ԹՈՒՐԶ-ԻՄՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այսպիսով, լարուածութիւնը ժամանակ առ ժամանակ բաւական թեժանում էր, սակայն «Ազատութեան Նաւատորմիդ»ի միջադէպից յետոյ աննախադէպ սրուեց:

2010 Մայիսի 31ի գիշերը Իսրայէլի ռազմածովային ուժերը յարձակում գործեցին «Մեր Ուղեգիծը Պաղեստինն է, Իսկ Բեռը՝ Մարդասիրական Օգնութիւն» կարգախօսով վեց նաւից բաղկացած «Ազատութեան Նաւատորմիդ»ի վրայ, որը 10 տոննա մարդասիրական օգնութիւն էր տանում Գազա: Յարձակման հե-

տեւանքով 16 մարդ սպանուեց, մօտ 30ը՝ վիրաւորուեց: Ձոռուածների թում էին 9 պաղեստինամետ գործիչներ, հիմնականում՝ Թուրքիայի քաղաքացիներ: Վիրաւորների թում էին Իսրայէլում արմատական իսլամական շարժման առաջնորդ Ռաէդ Սալահը եւ լիբանանեան մարդասիրական առաքելութեան ղեկավար Հանի Սուլէյմանը: Բացի Թուրքիայի քաղաքացիներից, նաւի վրայ եղել են նաեւ այլ երկրների ներկայացուցիչներ³⁵: Թուրքիան պնդում էր, որ «Ազատութեան Նաւատորմիդ» անուանումը կրող շարասիւնը մարդասիրական օգնութիւն էր տեղափոխում, մինչդեռ Իսրայէլը հաւաստում, որ 6 նաւով Գազայի հատուած ուղեւորուող շուրջ 700 գործիչները նաեւ զէնք են կրել³⁶:

Այս միջադէպը լուրջ արձագանգ ստացաւ միջազգային հանրութեան շրջանում: Իսպանիան, որն այն ժամանակ նախագահում էր ԵՄը, Իսրայէլից ետ կանչեց իր դեսպանին՝ տեղի ունեցածի վերաբերեալ բացատրութիւններ լսելու համար: Բացատրութիւն պահանջուեց նաեւ Շուէդիայում, Դանիայում ու Յունաստանում Իսրայէլի դեսպաններից: Իր հերթին Միացեալ Թագաւորութեան վարչապետ Դէւիդ Քեմըրոնը Իսրայէլի գործողութիւնները «անընդունելի» համարեց, իսկ Ֆրանսիայի նախագահ Նիկոլայ Սարկոզին դատապարտեց Իսրայէլին՝ «անհամաչափ ուժի կիրառման» համար³⁷:

Իսրայէլեան զինուորական գործողութիւններին ամենամեծ հակազդեցութիւնը ցուցաբերեց Թուրքիան՝ ներգրաւելով ժողովրդական լայն զանգուածների: Դիտարկելով այդ գործողութիւնը որպէս պետական ահաբեկչութեան դրսեւորում՝ Էրդողանի կառավարութիւնը պահանջեց, որ Իսրայէլը դատապարտուի միջազգային իրաւունքի կանոնները խախտելու համար, հարցը հետաքննի ՄԱԿը, պատժուեն պատասխանատուները, փոխհատուցուեն տուժածները, անյապաղ ազատ արձակուեն նաւատորմիդի անձնակազմն ու ուղեւորները, որոնք ձերբակալուած էին, եւ Իսրայէլը պաշտօնապէս ներողութիւն խնդրի Թուրքիայից³⁸:

Այս առթիւ, նախագահ Գիւլն իր հերթին յայտարարեց, որ իր երկիրն Իսրայէլին երբեք չի ների իր քաղաքացիների սպանութեան համար: Նա, մասնաւորապէս, նշեց. *«Թուրքիան ոչ մի դէպքում չի ների իրականացուած յարձակումը: Թուրքիան եւ Իսրայէլն այլեւս երբեք չեն լինի այնպէս, ինչպէս նախկինում էին: Իսրայէլն իր պատմութեան մէջ ամենակոպիտ սխալն է թող տուել, որի հա-*

*մար յետոյ շատ կը գղչայ»*³⁹: Թուրքիայում նոյնիսկ հնչեցին յարաբերությունները խզելու եւ Իսրայելի դէմ ռազմական համարժեք գործողությունների դիմելու անհրաժեշտութեան մասին կարծիքներ⁴⁰:

Չնայած Թուրքիայում հակախարայելեան համատարած դժգոհություններին, թուրքական իշխանությունները, այնուամենայնիւ, կոշտ յայտարարություններից հեռու չգնացին: Յունիսի 1ին, ի պատասխան Իսրայելի դէմ ռազմական համարժեք գործողությունների դիմելու կոչերին, փոխվարչապետ Բիւլէնթ Արընչը Թուրքիայի ազգային մեծ ժողովի ամբիոնից յայտարարեց. «*Թող ոչ ոք չսպասի, որ մենք պատերազմ կը յայտարարենք Իսրայելին*»⁴¹:

Չնայած ՄԱԿի Անվտանգութեան Խորհրդի՝ արտգործնախարար Դաւութօղլուի նախաձեռնութեամբ գումարուած արտակարգ նիստը չկատարեց Թուրքիայի պահանջները՝ Իսրայելին դատապարտելուց զատ, Անկարան, այնուամենայնիւ, չխզեց թուրք-իսրայելական յարաբերությունները⁴²:

Ուշագրաւ է, որ չնայած Թուրքիայի յամառ պահանջներին, Իսրայելը ոչ թէ ազատ արձակեց կալանուած նաւատորմիդի ձերբակալուած անձնակազմին եւ ուղեւորներին, այլ արտաքսեց երկրից, այն էլ՝ 15 ժամեայ խիտ բանակցություններից յետոյ⁴³: Ինչ վերաբերում է Թուրքիայից պաշտօնապէս ներողութիւն խնդրելու պահանջին, ապա դա էլ Յունիսի 2ին կտրականապէս մերժեց վարչապետ Նեթանիահուն, ասելով, թէ իր պետութիւնը չի պատրաստուած ներողութիւն խնդրել, իսկ ինքը հպարտանում է գործողութիւնը իրականացրած իսրայելցի զինուորներով⁴⁴:

Թուրքիայում հակախարայելեան դրսեւորումները դժգոհություններ առաջացրեցին նաեւ Իսրայելի հասարակական-քաղաքական շրջանակներում. լուրջ քննարկումներ ընթացան հակաթուրք մի շարք միջոցառումներ իրականացնելու մասին: Մասնաւորապէս, թուրք-իսրայելեան այս միջադէպից եւ Անկարայի բարձրացրած աղմուկից յետոյ Իսրայելի նախկին նախարար Ալէքս Գոլդֆարբը եւ աջակողմեան Մերեց Կուսակցությունից Փինհաս շար Զահաւը հանդէս եկան Հիւսիսային Կիպրոս Իսրայելական «Ազատութեան Նաւատորմիդ» ուղարկելու նախաձեռնութեամբ: Նաւախումբը Կիպրոս պետք է ուղեւորուէր Յունիսի 20ին⁴⁵:

2010 Յունիսին լուրեր տարածուեցին, թէ Թուրքիայի նախարարների խորհրդի նիստի ժամանակ քննարկուել են

Իսրայելի դեմ պատժամիջոցներ կիրառելու հարցեր: Դրանք հիմնականում վերաբերելու էին Իսրայելի հետ Թուրքիայի ռազմական համագործակցությանը եւ արտայայտուելու էին միլիարդաւոր դոլարների հասնող պայմանագրերի չեղեալ յայտարարմամբ կամ առկախմամբ: Բացի այդ Էրդոդանը կոչ էր յղելու միջազգային հանրութեանը՝ Իսրայելի դեմ պատժամիջոցներ կիրառելու⁴⁶:

2011 Սեպտեմբերի 2ին Թուրքիան ոչ միայն կասեցրեց Թէլ Աւիւի հետ բոլոր ռազմական համաձայնագրերը, այլեւ սառեցրեց երկու երկրների միջեւ տնտեսական համագործակցութիւնը:⁴⁷

Այնուամենայնիւ, դատելով տեղի ունեցած զարգացումներից, թէ՛ Թուրքիան, թէ՛ Իսրայելը չէին ցանկանում է՛լ աւելի սրել յարաբերութիւնները, այլ փորձում էին մեղմել լարուածութիւնը: Մասնաւորապէս, իսրայէլեան կառավարութեան միջամտութեամբ չեղեալ յայտարարուեց «Վե՛րջ Թուրքական բռնազաւթմանը Կիպրոսում» կարգախօսով արշաւը⁴⁸: Թէլ Աւիւի միջամտութեամբ չեղեալ յայտարարուեց նաեւ մի խումբ իսրայելցի ուսանողների՝ - Թուրքիա «Ազատութեան Նաւատորմիդ» ուղարկելու նախաձեռնութիւնը, որի նպատակն էր աշխարհի ուշադրութիւնը եւս մէկ անգամ հրաւիրել թուրքական իշխանութիւնների՝ Հայոց Յեղասպանութիւնը ժխտելու փորձերի, ինչպէս նաեւ Թուրքիայում քրդերի դեմ իրականացուող բռնութիւնների վրայ⁴⁹:

Դ. ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱԿԱԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՐԵԻՈՐ ԳՈՐԾՕՆ

Թուրք-իսրայէլեան յարաբերութիւնների լարուածութեան պայմաններում եւ դրա զարգացման բոլոր փուլերում Թուրքիայի հակաիսրայէլեան քաղաքականութեան կանխարգելման համար Իսրայելի իշխանութիւնները որպէս սպառնալիք եւ հակազդեցութեան միջոց յաճախ օգտագործեցին Հայոց Յեղասպանութեան ճանաչման հնարաւորութիւնը ինչպէս Իսրայելի կողմից, այնպէս էլ ԱՄՆի հրեական կազմակերպութիւնների աջակցութեամբ՝ ԱՄՆի կողմից: Թուրքիայի հակաիսրայէլեան բացայայտ դրսեւորումների պայմաններում Իսրայելի քաղաքական շրջանակներում է՛լ աւելի ծաւալ առան խօսակցութիւնները թէ՛ Իսրայելի դեմ Թուրքիայի իրականացրած քաղաքականութեան պատճառով Թէլ Աւիւը պէտք է դիմի ԱՄՆին եւ Եւրոպային՝ այլեւս չօգնել թուրքերին ժխտելու

Հայոց Ցեղասպանութեան փաստը: 2009 Յունիսին ԱՄՆում Իսրայելի նորանշանակ դեսպան Մայքլ Օրէնը, անդրադառնալով Հայոց Ցեղասպանութեան հիմնահարցին, այն անուանեց ցեղասպանութիւն⁵⁰:

Իսրայելի հասարակական շրջանակները եւ բնակչութեան մի ստուար հատուած նոյնպէս խիստ դժգոհ էին Իսրայելի հանդէպ Թուրքիայի քաղաքականութիւնից: Մեծ թուով վրդովուած հրեաներ գտնուում էին, որ որպէս հակաքայլ Իսրայելը պէտք է ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը: *Իսրայէլ Հայո՛ւմ* թերթում Դան Մարգալիտը թուրքերին մեղադրեց ոչ միայն ցեղասպանութիւն գործելու, այլեւ կատարուածը ժխտելու եւ դրա դէմ իրենց զայրոյթն արտայայտող տարբեր պետութիւնների դէմ պայքարելու «շարունակուող ոճրագործութեան մէջ»⁵¹: Բար-Լան Համալսարանի Ռազմավարական Ուսումնասիրութիւնների Կենտրոնի (BESA) վարիչ Ե. Ինքարը յիշեցրեց թուրքերին, որ նրանք դեռեւս կարիք ունեն «Ուաշինգտընում Իսրայելի ներգործութեան, որպէսզի Ներկայացուցիչների Տունը չընդունի հայկական ցեղասպանութիւնը հաստատող բանաձեւը»⁵²:

Ուշագրաւ էր 2009 Հոկտեմբերի 16ին իսրայէլեան «Իմ Թիրձու» (Եթէ ցանկանաք) շարժման ներկայացուցիչների Թէլ Աւիուում թուրքական դեսպանատան առջեւ անցկացրած բողոքի ցոյցը: Շարժման գործիչները թուրքական իշխանութիւններից պահանջեցին ճանաչել Օսմանեան Կայսրութիւնում իրականացուած Հայոց Ցեղասպանութեան փաստը: Ցուցարարները ցուցադրեցին ցեղասպանութեան վերաբերեալ նկարներ: Այդ ցոյցը Իսրայելում հնարաւոր եղաւ միայն թուրք-իսրայէլեան վատթարացող յարաբերութիւնների շնորհիւ⁵³:

Յարաբերութիւնների վատթարացման հետեւանք կարելի է դիտարկել Իսրայելի իշխանութիւնների թոյլտուութիւնն այդ երկրում գործող «Արարատ» Հայկական Միութեան նախաձեռնութեամբ Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած յուշարձանի կառուցումը 2010 Պետաշ Տիկուայում⁵⁴:

Աշխուժացան նաեւ ԱՄՆի հրէական կազմակերպութիւնները: 2010 Փետրուարին ԱՄՆի Բոստոնի եւ Մեսէչուսէցի հայկական եւ հրէական համայնքները հանդէս եկան on-line պահանջագրով, կոչ անելով ԱՄՆի նախագահին եւ Ներկայացուցիչների Տան՝ ընդունել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման մասին 252րդ բանաձեւը⁵⁵:

Թուրք-իսրայելեան լարուածութիւնը ամերիկահայ որոշ շրջանակներում առաջացրեց ոգեւորութիւն՝ մտահոգութիւն պատճառելով թուրքական շրջանակներին: Ինչպէս ոգեւորութեան, այնպէս էլ մտահոգութեան հիմքում Իսրայելի եւ ԱՄՆի հրեական կազմակերպութիւնների՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանը նպաստելու պատրաստակամութիւնն էր: Թուրքիայի Արտաքին Գործերի նախարար Ալի Բաբաջանը նոյնիսկ յայտարարեց, որ ԱՄՆի հրեական լոբին նախկինի պէս չի աջակցի Թուրքիային՝ Հայոց Ցեղասպանութեան փաստի ճանաչումը կանխելու հարցում: Միեւնոյն ժամանակ, Բաբաջանը յայտարարեց. *«Մակայն թուրք-իսրայելեան յարաբերութիւնները կրում են ռազմավարական բնոյթ: Առանց Թուրքիայի աջակցութեան տարածաշրջանում այնքան էլ հեշտ չի լինի Իսրայելի գոյութիւնը: Այո՛, քննարկման առարկայ չէ հրեական լոբիի՝ ամերիկեան վարչակազմի եւ Ներկայացուցիչների Տան վրայ ունեցած ազդեցութիւնը: Մակայն 1915ի իրադարձութիւնների առնչութեամբ վերջին տարիներին տարակարծութիւններ են ձեւաւորուել հրեական կազմակերպութիւնների միջեւ: Հրեական կազմակերպութիւնները նախկինի պէս չեն որդեգրում, այսպէս կոչուած Հայոց Ցեղասպանութեան պնդումների դէմ աջակցող գործելաձեւ»*⁵⁶:

Ուշագրաւ էր հրեայ բարձրաստիճան գորավար Աւի Միգրահիի Էրդողանին ուղղած մեղադրանքը՝ խորհուրդ տալով «նախ հայելու մէջ իրեն նայել» եւ վերյիշել հայերի հանդէպ իրականացրած ցեղասպանութիւնը, քրդերի հանդէպ գործադրած ճնշումները, Հիւսիսային Կիպրոսի բռնազաւթումը եւն.⁵⁷:

Մակայն թուրք-իսրայելեան յարաբերութիւնները մեծ նշանակութիւն ունեն երկու երկրների համար, ուստի երկկողմ յարաբերութիւններում լարուածութեան թուլացման անհրաժեշտութիւնը ստիպեց ԱՄՆի հրեական ADLին «ըմբռնումով» մօտենալ Էրդողանի քննադատութիւններին: 2009 Փետրուարին վարչապետ Եհուտ Օլմերտը զգուշացրեց կառավարութեանը. *«Թուրքիայի հետ մեր յարաբերութիւնները կարելոր են, հետեւաբար խորհուրդ եմ տալիս չափաւորել յայտարարութիւնների ոճը»*⁵⁸: Իսկ Ուաշինգտոնը յիշեցրեց, որ Իսրայելն ու Թուրքիան ԱՄՆի վաղեմի դաշնակիցներն են տարածաշրջանում⁵⁹:

Ի հետեւանս վերը ասուածի, չնայած լարուած յարաբերութիւններին, քնեսէթը մերժեց քննել Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի

նախագիծը, որը 2009 Ապրիլին խորհրդարան էր ներկայացրել Մերեց Կուսակցութեան նախագահ Օրոնը: Սոյն նախագծին դէմ էր յատկապէս Իսրայէլի կառավարութիւնը⁶⁰:

Նկատելի էր, որ Իսրայէլը շարունակում էր օգտագործել Հայոց Ցեղասպանութիւնը ճանաչելու եւ նրա հերքումը քրեականացնելու ճնշամիջոցը՝ Էրդողանի կառավարութեան դէմ: Մասնաւորապէս, 2012 Յունիսի 12ին քննէժը պատմութեան մէջ առաջին անգամ իր լիակազմ նիստի ժամանակ քննարկեց նաեւ երկրում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցը: Այս անգամ նախաձեռնութիւնը Մերեց Կուսակցութեան առաջնորդ Զահաւա Գալ-Օնին էր⁶¹:

Քննարկման ժամանակ Ցեղասպանութեան ճանաչման ջատագովներից պատգամաւոր Զէւի Էլկինը իր խօսքում նշեց, որ քննէժը պարտաւոր է այս գործընթացը տրամաբանական աւարտին հասցնել ու պաշտօնապէս ճանաչել հայերի ցեղասպանութիւնը⁶²: Հարցին անդրադարձաւ նաեւ Իսրայէլի Բնապահպանութեան նախարար Գիլադ Էրդանը, որը Յունիսի 12ին յայտարարեց, որ «*Իսրայէլը պէտք է փոխի իր քաղաքականութիւնը եւ 1915ի դէպքերը ցեղասպանութիւն ճանաչի*»⁶³: Ի վերջոյ, Յունիսի 12ին կայացած նիստի ժամանակ պատգամաւորները միաձայն որոշեցին վերջնական որոշում կայացնել կրթութեան յանձնաժողովի շրջանակներում:

Հայոց Ցեղասպանութեան ճանաչման շուրջ քննարկումները քննէժում պարբերաբար շարունակւում են: Մասնաւորապէս, 2014 Մայիսի 13ին քննէժը յատուկ լիագումար նիստ անցկացրեց՝ քննարկելու Հայոց Ցեղասպանութեան թեման: Հարցը օրակարգ էր ներկայացրել Մերեց Կուսակցութեան պատգամաւոր Գալ-Օնը՝ կոչ անելով երկրի կառավարութեանը ճանաչել Օսմանեան Թուրքիայում Հայոց Ցեղասպանութիւնը մինչեւ այդ ողբերգական իրադարձութիւնների 100ամեայ տարելիցը: Քննարկումների ժամանակ իր ելոյթում քննէժի խօսնակ Եուլի-Եոէլ Էդելշտայնը յայտնեց, որ որպէս նախարար պաշտօնավարելիս ծաղկեպսակ է դրել Հայոց Ցեղասպանութեան գոհերի Ծիծեռնակաբերդի յուշարձանին: Նա արտայայտել է իր դիրքորոշումը, ըստ որի՝ «անհրաժեշտ է յիշել հայ ժողովրդի կոտորածը»: Իսրայէլի արտգործնախարար Լիբերմանի անունից հանդէս եկաւ Զբօսաշրջութեան նախարար, Լիկուդ-Իսրայէլ Բէյթենիւ:

խմբակցութեան պատգամաւոր Իւզի Լանդաուն, ով հաւաստեց թէ իրենք՝ որպէս հրեաներ եւ իսրայելցիներ, «նոյնիսկ բարոյական պարտաւորութիւն ունեն ճանաչելու մարդկային նորերգութիւնները, այդ թւում՝ Հայոց Յեղասպանութիւնը»⁶⁴:

Յաւելենք, որ Իսրայէլում գտնուող ԱՄՆի նախագահ Բարակ Օբամայի նախաձեռնութեամբ 2013 Մարտի 22ին հեռախօսազրոյց էր տեղի ունեցել Իսրայէլի եւ Թուրքիայի վարչապետերի միջեւ, որի ընթացքում վարչապետ Նեթանիահուն ներողութիւն խնդրեց վարչապետ Էրդողանից՝ «Մաւի Մարմարա» նաւի վրայ գործուած յարձակման համար: Նեթանիահուն նաեւ պատրաստակամութիւն յայտնեց փոխհատուցում կատարել թուրք գոհերի ընտանիքներին⁶⁵:

Նեթանիահուի՝ Էրդողանից ներողութիւն խնդրելն, անկասկած, թուլացրեց լարուածութիւնը Թուրքիայի եւ Իսրայէլի միջեւ, սակայն դեռեւս շատ ժամանակ պէտք կը լինի յարաբերութիւնները կարգաւորելու եւ վստահութիւնը վերականգնելու համար: Բացի այդ, Թուրքիայի եւ Իսրայէլի միջեւ երկու նախկինի պէս էական տարակարծութիւններ կան արտաքին քաղաքական կարեւորագոյն հարցերի վերաբերեալ⁶⁶:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ելնելով վերը ասուածից, կարող ենք եզրակացնել.-

1. Թուրքիային յատուկ է, ելնելով իրադրութիւնից՝ խուսանաւելը, կամ կտրուկ քայլեր իրականացնելը: Բաւական է յիշել 1974ի կիպրոսեան հակամարտութեան ժամանակ Թուրքիայի խուսանաւող քաղաքականութիւնը Արեւմտեան եւ Խորհրդային կողմերի միջեւ: Ներկայումս ականատես ենք լինում նման քաղաքականութեան փուլերից մէկին:

2. Թուրքիայի կողմից կտրուկ ցուցադրական գործողութիւններից բաւական է յիշել Թուրքիայի աջակցութիւնը 1975ին ՄԱԿի Ընդհանուր Ժողովի նստաշրջանում ներկայացուած բանաձեւին, որտեղ սիոնիզմը որակւում էր որպէս ցեղամոլութեան եւ ցեղային խտրականութեան մի ձեւ:

3. ԱՄՆի հրեական ազդեցիկ կազմակերպութիւնները լուրջ անհանգստութիւն ցուցաբերեցին թուրք-իսրայէլեան յարաբերութիւնների լարուածութեան կապակցութեամբ եւ որոշ կազմակերպութիւններ նոյնիսկ սկսեցին գործակցել հայկական

կազմակերպությունների հետ ԱՄՆի Ներկայացուցիչների Տանը Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի ընդունման օգտին տարուող լոբիինգին, այնուամենայնիւ ԱՄՆի ամենաազդեցիկ հրէական կազմակերպությունները սկսեցին ջանքեր գործադրել՝ հարթելու տարակարծությունները:

4. Թուրքական իշխանությունների հակախորայելեան դիրքորոշումը խիստ բացասական արձագանգ ստացաւ Իսրայէլի հասարակական-քաղաքական եւ գործարար շրջանակներում: Ինչպէս Իսրայէլի ղեկավարութեան որոշ ներկայացուցիչներ, այնպէս էլ բնակչութեան մի ստուար զանգուած իշխանություններից պահանջեց խիստ արձագանգել Թուրքիայի հակախորայելեան քաղաքականութեանը՝ ընդհուպ մինչեւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի ընդունումը քննէտքում:

5. Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի ճանաչման սպառնալիքը, օգտագործուել է ինչպէս Իսրայէլի, այնպէս էլ ԱՄՆի հրէական գրեթէ բոլոր կազմակերպությունների կողմից թուրք-իսրայելեան յարաբերությունների լարուածութեան բոլոր փուլերում, Թուրքիայի համար զսպման լուրջ միջոց եւ լծակ է:

6. ԱՄՆը, ունենալով ռազմավարական սերտ յարաբերություններ Թուրքիայի եւ Իսրայէլի հետ, թուրք-իսրայելեան լարուած յարաբերությունների նկատմամբ իր ներկայիս քաղաքականութեամբ չափաւորում է Թուրքիայի հակախորայելեան քաղաքականութիւնը՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հեռանկարով:

7. Վերջին ժամանակներս ԱՄՆի հայկական եւ հրէական մի շարք կազմակերպություններ սկսել են առաւել գործակցել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի շուրջ տարուող լոբիիստական աշխատանքներում, ինչը լուրջ նախադրեալներ է ստեղծում ԱՄՆում հայկական եւ հրէական ազդեցիկ լոբիիստական կառոյցների յետագայ գործակցութեան խորացման:

8. Թուրքիայի գործողությունները հանդիսանում են Մերձաւոր Արեւելքում նրա ղերակատարութեան բարձրացմանն ուղղուած ռազմավարութեան մի երեսակ: Արաբ-իսրայելեան շարունակուող հակամարտութեան պայմաններում տարածաշրջանում առաջնորդութեան յաւակնելը անհնար է առանց հակախորայելեան քաղաքականութեան: Առաջնորդութեան հարցում Թուրքիան առաջին հերթին մրցակցում է Իրանի հետ:

9. Թուրքիայի եւ Իսրայելի միջեւ ռազմական, առեւտրատնտեսական, աշխարհագրաքաղաքական եւ ռազմավարական սերտ համագործակցութեան յենքի վրայ կասկածելի է Թուրքիայի եւ Իսրայելի յարաբերութիւններում առկայ լարուածութեան լրջութիւնը: Բացի այդ, ներկայումս Իսրայելի հետ Թուրքիայի յարաբերութիւններում առկայ լարուածութիւնը առաջին անգամը չէ: Այս միտումը դեռեւս սկիզբ է առել 1960-70ականներին: 1967ի արաբ-իսրայելեան վեցօրեայ պատերազմից յետոյ Թուրքիան միացաւ արաբ ժողովրդին՝ դատապարտելով Իսրայելի գործողութիւնները. մասնաւորապէս՝ արաբական երկրներից տարածքների զաւթումը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ E. Inbar, “Israeli-Turkish Tensions and Beyond”, *Israel Journal of Foreign Affairs*, IV: 1, 2010, էջ 30. նաեւ՝ “Gaza disaster tenses Turkey, Israel ties in 2009”, 01.01.2010 (<http://www.worldbulletin.net/?aType=haberArchive&ArticleID=52079>):
- ² Յ. Չաքրեան, “Որքան էլ Կոշտ Լինեն Էրդողանի «Հակաիսրայելական» Յայտարարութիւնները, Պարտաւորեցնող Չեն”, *Ազգ.* 21.01.2009 (http://www.azg.am/wap/?nl=AM&id=2009012107&Base_PUB=0):
- ³ A. A. Koritski, “Turetsko-Izaryilskiye Otnosheniya: Vzgliad Iz Ankari” (Թուրք-իսրայելեան յարաբերութիւններ. ակնարկ՝ Անկարայից), *Azia I Afrika Segodnia*, № 5, 2012, էջ 39. նաեւ՝ B. Lombardi, “Turkey and Israel Brinkmanship and the Grand Strategy of the Erdogan Government”, *The Levantine Review*, Volume 1 Number 1, Spring 2012, էջ12-13:
- ⁴ Նամակը ստորագրել են Ամերիկայի Հրէական Կոմիտէի (AJC) համակարգող Իսաակսոնը, «Բնայ Բրիտի» ղեկավար Մարիաշինը, Հակախաթարման Համադաշնութեան (ADL) հրաժարեալ նախագահ Ֆոքսմանը, Ամերիկայի Հրէական Գլխաւոր Կազմակերպութիւններ Համագումարի (CPMAJO) գործադիր խորհրդի նախագահ Հոնլէյնը, Ազգային Անվտանգութեան Գործերի Հրէական Ինստիտուտի (JINSA) ղեկավար Նիւմանը:
- ⁵ H. Sassounian, Major American-Jewish Organizations may no Longer Back Turkey in Congress, 29.01.2009 (http://www.huffingtonpost.com/harut-sassounian/major-american-jewish-org_b_161346.html):
- ⁶ Յ. Չաքրեան, “Միջազգային Սկանդալ Դավոսում”, *Ազգ.* 31.01.2009 (http://www.azg.am/wap/?nl=AM&id=2009013102&Base_PUB=0):
- ⁷ “Posle Skandala V Davose Turetskii Premyer Stal Pochetnim Grajdanimom Tegerana” (Դաւոսի սկանդալից յետոյ. Թուրքիայի վարչապետը դարձաւ Թեհրանի Պատուաւոր Քաղաքացի), 03.02.2009 (<http://lenta.ru/news/2009/02/02/erdogan/>). նաեւ՝ “Էրդողանը Թեհրանի Պատուաւոր Քաղաքացի”, *Ազգ.* 04.02.2009:
- ⁸ A. Bozkurt, “Davutoğlu Slams Israel for Keeping Mideast under Constant Tension”, 17.11.2009

- (http://todayszaman.com/newsDetail_getNewsById.action?sessionId=F7E1920ABE8C20AB99FB68E371529A48?newsId=193126):
- ⁹ “Al-Qaeda Wants Turkey as Muslim World Leader”, 29.07.2010 (http://www.b92.net/eng/news/world-article.php?yyyy=2010&mm=07&dd=29&nav_id=68774):
- ¹⁰ S. Çağaptay, “Why Turkey Will Emerge as the Leader of the Muslim World”, 21.11.2010 (<http://www.hurriyetdailynews.com/default.aspx?pageid=438&n=why-turkey-will-emerge-as-the-leader-of-the-muslim-world-2010-11-21>). նաև՝ S. Kinzer, “Turkey Leads the Muslim World”, 27.10.2009 (<http://www.guardian.co.uk/commentisfree/2009/oct/27/turkey-muslim-world-leader-israel>):
- ¹¹ WikiLeaks: “V Turtsii Islam Eksploatiruetsya Dlya Dostijeniya Politicheskikh Tseley” (Թուրքիայում իսլամը քաղաքական նուաճողական նպատակներ է հետապնդում), 25.03.2011 (<http://news.am/rus/news/52610.html>):
- ¹² A. Kalman, Wikileaks: “Turkey Planned to ‘Burn Bridges’ with Israel Even Before Flotilla”, 29.02.2012 (<http://www.timesofisrael.com/wikileaks-turkey-wanted-to-burn-bridges-with-israel/>). նաև՝ WikiLeaks: “Erdogan Khochet Stats Liderom Islamskogo Mira” (Էրդողանը ուզում է դառնալ Իսլամական Աշխարհի ստաջնորդը) 01.03.2012 (<http://www.mk.ru/politics/news/2012/03/01/677215-wikileaks-erdogan-hochet-stat-liderom-islamskogo-mira.html>):
- ¹³ İ. Aytürk, “The Coming of an Ice Age? Turkish-Israeli Relations Since 2002”, *Turkish Studies*, Volume 12, Issue 4, 2011, էջ 678. նաև՝ Balci and Kardaş, էջ 114. նաև՝ Inbar, էջ 30:
- ¹⁴ S. Kardas, “Postponed Military Exercise Tests Turkish-Israeli Cooperation”, *Eurasia Daily Monitor*, Vol. 6, Issue 189, October 15, 2009:
- ¹⁵ A. Liel, “Israeli-Turkish Relations under Strain”, *Israel Journal of Foreign Affairs*, Volume 4, No. 1, (2010), էջ 25. նաև՝ “Turkish-Israeli Relations: A Critical Assessment of the Last Period”, 23.10.2012 (<http://politikaakademisi.org/turkish-israeli-relations-a-critical-assessment-of-the-last-period/>). նաև՝ “Gaza Disaster Tenses Turkey, Israel Ties in 2009”, 01.01.2010 (<http://www.worldbulletin.net/?aType=haberArchive&ArticleID=52079>). նաև՝ H. Sassounian, “Cannot Pretend to be Both Pro-Israeli and Pro-Palestinian”, *The California Courier*, 20.10.2009 (<http://www.turkishnews.com/en/content/2009/10/20/turkey-exposed/>):
- ¹⁶ H. Brackman, “From Ally to Nemesis: How Erdoğan’s Islamists Hijacked Atatürk’s Nation and Put It on A Collision Course with Israel and the U.S.,” *Simon Wiesenthal Center*, October 2011, էջ 4. նաև՝ “Gaza Disaster”:
- ¹⁷ Inbar, էջ 32-33.
- ¹⁸ H. Sassounian, “Cannot Pretend to be Both Pro-Israeli and Pro-Palestinian”, *The California Courier*, 20.10.2009 (<http://www.turkishnews.com/en/content/2009/10/20/turkey-exposed/>):
- ¹⁹ “ADL-Concerned over Turkish-Israeli Relations Worsening”, 17.01.2010 (<http://www.armenianweekly.com/2010/01/17/adl-concerned-about-anti-jewish-climate-in-turkey-maintains-position-on-genocide/>). նաև՝ H. A. Foxman, “Turkey’s Dangerous Diplomacy”, 02.07.2012 (http://www.huffingtonpost.com/abraham-h-foxman/turkey-israel-relations_b_1260736.html):

- ²⁰ Bozkurt, “Davutoğlu Slams”:
- ²¹ B. Dahl and D. Slutzky, էջ 7; “Military Cooperation was at Heart of Turkey-Israel Ties”, 01.06.2010 (<http://www.defencetalk.com/military-cooperation-was-at-heart-of-turkey-israel-ties-26704/>):
- ²² H. Sassounian, “Major American-Jewish Organizations May no Longer Back Turkey in Congress”, 29.01.2009 (http://www.huffingtonpost.com/harut-sassounian/major-american-jewish-org_b_161346.html):
- ²³ “Ismail Cem: In the United States the Jewish Lobby has Always Supported Turkey”, 15.04.2005 (<http://news.pseka.net/index.php?module=article&id=741>):
- ²⁴ “Gaza Disaster Tenses”:
- ²⁵ B. Ravid, “Netanyahu: Turkey Can’t Be ‘Honest Broker’ in Syria Talks”, *Haaretz*, October 18, 2009 (<http://www.haaretz.com/print-edition/news/netanyahu-turkey-can-t-behonest-broker-in-syria-talks-1.5940>). նաև՝ Brackman, էջ 4:
- ²⁶ “Daniel Pipes Equates Keith Ellison to Hitler”, 21.12.2009 (<http://www.loonwatch.com/2009/12/daniel-pipes-equates-keith-ellison-to-hitler/>):
- ²⁷ “Turtsia Ni Ostavit Bez Otveta Nepravilnuyu Politiki Izrayilia: Gyul” (Գիւլ Թուրքիան անպատասխան չի թողնի Իսրայելի ոչ-ճիշդ քաղաքականությունը) 02.12.2009 (<http://news.am/rus/news/9838.html>):
- ²⁸ “Turkish Prime Minister Not to Visit Jewish Community on US Trip”, 04.12.2009 (<http://ashbarez.com/74207/turkish-prime-minister-not-to-visit-jewish-community-on-us-trip/>):
- ²⁹ *Hurriyet*, 08.12.2009:
- ³⁰ Նոյն:
- ³¹ “Turkish Ambassador to Israel Presents Credentials to President”, 09.12.2009 (http://www.todayzaman.com/newsDetail_getNewsById.action?load=detay&link=195067):
- ³² CNNTurk, “Buyukelci Oguz Celikkol Turkiye’de” (գլխավոր (մեծ) դեսպան Օղուզ Չելիկկոլը Թուրքիայում), 16.01.2010 (<http://www.cnntrk.com/2010/turkiye/01/16/buyukelci.oguz.celikkol.turkiyede/559648.0/index.html>). նաև՝ Kushner, էջ 26-27. նաև՝ C. Kasapoğlu, “Türk Dış Politikasında Davutoğlu Doktrini Altında Türk-İsrail İlişkileri” (Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ Դավուտօղլուի սկզբունքներով Թուրքիա-Իսրայել յարաբերությունները), *Ege Stratejik Araştırmalar Dergisi*, Cilt 3, Sayı 2, 2012, s. 8. նաև՝ Koritsii, էջ 39:
- ³³ “Israel Snubs Turkish Ambassador in Public”, 12.01.2010 (http://www.nbcnews.com/id/34825873/ns/world_news-mideast_n_africa/t/israel-snubs-turkish-ambassador-public/#.Ue-H99LjdaZ):
- ³⁴ “Turkish President, Prime Minister, Refuse to Meet Barak”, 17.01.2010 (http://www.imemc.org/index.php?obj_id=53&story_id=57659):
- ³⁵ Աւելի մանրամասն տե՛ս՝ C. Migdalovitz, “Israel’s Blockade of Gaza, the Mavi Marmara Incident, and Its Aftermath”, *CRS Report for Congress*, էջ 2-3. նաև՝ Özkeçeci-Taner B., “From Allies to Frenemies and Inconvenient Partners: Image Theory and Turkish-Israeli Relations”, *Perceptions: Journal of International Affairs*, Autumn 2012, Volume XVII, Number 3, էջ 119. նաև՝ U. Uzer, “Turkish-Israeli Relations: Their Rise and Fall”, *Middle East Policy*, Vol. XX, No. 1, Spring 2013, էջ 100. նաև՝ CNNTurk, “9 Türk’e Toplam 30 Kursun...” (9 թուրքի 30 փամփուռ), 05.06.2010

- (<http://www.cnnturk.com/2010/dunya/06/05/9.turke.toplam.30.kursun/579019.0/index.html>) :
- ³⁶ Özkeçeci-Taner, էջ 119. նաև՝ Migdalovitz, էջ 5:
- ³⁷ Migdalovitz, էջ 7. նաև՝ “EU to Hold Urgent Talks over Gaza Raid”, 31.05.2010 (<http://www.heraldsun.com.au/news/breaking-news/eu-to-hold-urgent-talks-over-gaza-raid/story-e6frf7jx-1225873737180>) :
- ³⁸ Migdalovitz, էջ 5-6. նաև՝ Özkeçeci-Taner, էջ 119-120:
- ³⁹ Kushner, էջ. 28. նաև՝ M. Khawaja, “We Will Never Forgive Israel: Turkish President”, *Foreign Policy Journal*, 03.06.2010 (<http://www.foreignpolicyjournal.com/2010/06/03/we-will-never-forgive-israel-turkish-president/>) . նաև՝ “Gül Exclaims: "Turkey will never forget the Israeli raid on Gaza Flotilla"”, 08.06.2010 (<http://www.tcgb.gov.tr/news/397/49923/gul-exclaims-turkey-will-never-forget-the-israeli-raid-on-gaza-flotilla.html>) :
- ⁴⁰ Koritskii, էջ 39:
- ⁴¹ Յ. Չաքքեան, «Մարմարա» Նախ Կրայ Իսրայելցիների Յարձակումը Սիրիայի Եւ Իրանի Նկատմամբ ամրապնդել է Թուրքիայի Դիրքերը Պաղեստինում», *Ազգ*, 04.06.2010 (http://www.azg.am/wap/?nl=AM&id=2010060401&Base_PUB=0) :
- ⁴² Նոյն:
- ⁴³ S. Arsu, “Ship in Israel Raid Returns to Turkey”, 28.12.2010 (<http://www.nytimes.com/2010/12/27/world/europe/27turkey.html?adxnml=1&adxnmlx=1374671025-H4jxjWi5jLWJyrXVjEo6Aw&r=0>) . նաև՝ Ya'ar Chana, “Mavi Marmara Arrives in Turkey; Ankara Holds Out for Apology”, 26.12.2010 (http://www.israelnationalnews.com/News/News.aspx/141344#Ue_RgtLjdaY) :
- ⁴⁴ Koritskii, էջ 39. նաև՝ R. Medzini, “PM: Israel will not Apologize to Turkey”, 09.04.2011 (<http://www.ynetnews.com/articles/0,7340,L-4117551,00.html>) . նաև՝ “Izrayil Ne Budet Izvinyatsya Za Shturm Tureckogo Sudna” (Իսրայել ներողութիւն պիտի չիսնդրի Իսրայելի նաւատորմի գրոհի համար), 04.09.2011 (<http://ru.tsn.ua/svit/izrail-ne-budet-izvinyatsya-za-shturm-tureckogo-sudna.html>) :
- ⁴⁵ G. Hoffman, “Anti-Turkish Occupation Flotilla to Cyprus Called Off”, 16.06.2010 (<http://www.jpost.com/Israel/Anti-Turkish-occupation-flotilla-to-Cyprus-called-off>) :
- ⁴⁶ “Turtsiya Prizivayet Vvesti Sanktsii V Otnoshenii Izrayilia” (Թուրքիան կոչ է անում Իսրայելի դէմ պատժամիջոցներ կիրառելու), 07.06.2010 (<http://izvestia.ru/news/472570>) . նաև՝ “Turtsiya Prizvala Mir Vvesti Sanktsii V Otnoshenii Izrayilia” (Թուրքիան կոչ է անում աշխարհին՝ պատժամիջոցներ կիրառել Իսրայելի դէմ), 07.06.2010 (<http://korrespondent.net/world/1083681-turciya-prizvala-mir-vesti-sankcii-v-otnoshenii-izrayilya>) :
- ⁴⁷ Cagaptay and Evans, էջ 5. նաև՝ Koritskii, էջ 39. նաև՝ Balci and Kardaş, էջ 115:
- ⁴⁸ G. Hoffman, “Anti-Turkish Occupation Flotilla”:
- ⁴⁹ Նոյն:
- ⁵⁰ H. Sassounian, “Israel’s New Ambassador to the U.S. Calls Armenian Killings “Genocide””, 26.06.2009 (<http://asbarez.com/65446/israels-new-ambassador-to-the-u-s-calls-armenian-killings-genocide/>) :
- ⁵¹ H. Sassounian, “Cannot Pretend to be Both Pro-Israeli and Pro-Palestinian”, *The California Courier*, 20.10.2009 (<http://www.turkishnews.com/en/content/2009/10/20/turkey-exposed/>) :

⁵² Նոյն:

⁵³ Նոյն:

⁵⁴ “Եղեռնի Զոհերին Նուիրուած Յուշարձան Իսրայելում”, *Ազգ*, 08.10.2009:

⁵⁵ “ԱՄՆի Հայերը Եւ Հրեաները Հանդէս Են Եկել Հայոց Ցեղասպանութիւնը Ճանաչելու Պահանջագրով”, 03.02.2010 (<http://panarmenian.net/m/arm/news/43573>):

⁵⁶ “ԱՄՆի Հրեական Լոբբին Նախկինի Պէս Զի Աջակցի Թուրքիային”, *Ազգ*, 31.01.2009 (http://www.azg.am/wap/?nl=AM&id=2009013104&Base_PUB=0):

⁵⁷ Avi Mizrahi, “Comments Anger Turkey”, 15.02.2009 (<http://www.drivebyplanet.com/2009/02/israeli-general-avi-mizrahi-comments.html>). նաև՝ H. Sassounian, “Israel vs. Turkey: Escalating Tensions Between Two Strategic Allies”, 17.02.2009 (http://www.huffingtonpost.com/harut-sassounian/israel-vs-turkey-escalati_b_167753.html):

⁵⁸ Յակոբ Չարբեան, “Տարեցտարի Աճում Է ԱՄՆ Հրեական Կազմակերպութիւնների Նպաստը Հայոց Ցեղասպանութեան Բանաձևերին”, *Ազգ*, 04.02.2009 (http://www.azg.am/wap/?nl=AM&id=2009020412&Base_PUB=0):

⁵⁹ Նոյն:

⁶⁰ E. Sanamyan, “Washington Briefing: Israeli Knesset Revisits Armenian Genocide”, 08.05.2009 (<http://www.reporter.am/go/article/2009-05-08-israeli-knesset-revisits-armenian-genocide->):

⁶¹ H. Zaken, “Knesset Debates Recognition of Armenian Genocide”, 12.06.2012 (<http://www.timesofisrael.com/knesset-debates-recognition-of-armenian-genocide/>). նաև՝ L. Harkov, “MK Fails to Block Knesset Talks on Armenian Genocide”, 26.12.2011 (<http://www.jpost.com/Diplomacy-and-Politics/MK-fails-to-block-Knesset-talks-on-Armenian-genocide>):

⁶² H. Sassounian, “Israel Has One Good Reason for Recognizing Armenian Genocide”, 19.06.2012, <http://asbarez.com/103720/israel-has-one-good-reason-for-recognizing-armenian-genocide/>:

⁶³ Sassounian, “Israel Has One Good Reason”; “Israel Has Moral Duty to Recognize Armenian Genocide”, 28.04.2014 (<http://www.al-monitor.com/pulse/originals/2014/04/israel-armenian-genocide-turky-prime-minister-erdogan-moral.html>):

⁶⁴ L. Harkov, “Recognizing Armenian Genocide is a Moral Imperative for Jews”, 13.05.2014 (<http://www.jpost.com/Middle-East/Knesset-Speaker-Recognizing-Armenian-genocide-is-a-moral-imperative-for-Jews-352169>):

⁶⁵ H. Sherwood and E. MacAskill, “Netanyahu Apologises to Turkish PM for Israeli Role in Gaza Flotilla Raid”, 22.03.2013 (<http://www.guardian.co.uk/world/2013/mar/22/israel-apologises-turkey-gaza-flotilla-deaths>). նաև՝ C. Levinson and J. Parkinson, “Israeli Apology Resets Alliance With Turkey”, 22.03.2013 (<http://online.wsj.com/article/SB10001424127887323419104578376352205848268.html>):

⁶⁶ A. Simsek, “Turkey and Israel: Reviving Strategic Ties?”, 25.03.2013 (<http://www.dw.de/turkey-and-israel-reviving-strategic-ties/a-16698673>):

ARMENIAN GENOCIDE RECOGNITION AND
TURKISH-ISRAELI RELATIONS

KRIKOR ARSHAGYAN
garshakyan@mail.ru

The study surveys Turkish-Israeli state relations between late 2008 and mid-2013. The author refers to the Israeli attack on the Gaza Strip in December 2008, the reaction of the Turkish state, the escalation of tension between Turkey and Israel and the deterioration of relations, which had negative impacts on the military and economic cooperation of these two countries.

While highlighting certain episodes of Turkish-Israeli state relations following the Gaza attack, the author details the action and reaction of state officials of these two countries. The statements and declarations of state officials led to a rupture in certain aspects of Turkish-Israeli interstate cooperation. The author details the intervention of diverse actors who supported the Turkish stance, while other actors, like US and Jewish American organizations, called for restraint.

The author analyses how the issue of Israel recognizing the Armenian Genocide was brought to Turkish state attention. The author notes as well that Jewish-American lobbies hinted that they would stop supporting Turkish state efforts to foil the recognition of the Armenian Genocide in the US Congress. The author notes that these two factors played an essential role in causing the further deterioration of Turkish-Israeli relations and concludes that the issue of the recognition of the Armenian Genocide has become a factor used by both the US and Israel as leverage in their foreign relations.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՈՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ
ԽՆԴԻՐԸ ՈՐՊԷՍ ՀԱՅՈՑ
ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ

ՎԱՀՐԱՍ ՀՈՎԵԱՆ
Vahram@noravank.am

Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման խնդիրը եւ պահանջատիրութիւնը գտնուում են միմեանց հետ սերտ փոխկապուածութեան մէջ եւ դիտուում որպէս մէկ միասնական ամբողջի բաղադրիչներ: Ըստ այդմ՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը դիտուում է որպէս նախընթաց քայլ կամ մարտավարական խնդիր պահանջատիրութեան նկատմամբ՝ այն տրամաբանութեամբ, որ նախ պէտք է հասնել Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանն ու դատապարտմանը, ապա՝ դրա հետեւանքների վերացմանը՝ տարածքային, գոյքային եւ ֆինանսական փոխհատուցմանը, որով եւ բնորոշուում է պահանջատիրութիւնը:

Ներկայումս, քանի դեռ լիովին լուծուած չէ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ դատապարտման հարցը, վաղ է խօսել ամբողջական փոխհատուցման մասին: Այնուամենայնիւ, կան պահանջատիրութեան որոշ բաղադրիչներ, որոնք ներկայումս էլ հրատապ են եւ որոնց բարձրացումը ներկայումս էլ ունի իրատեսական բնոյթ:

Այդպիսի բաղադրիչներից է ինչպէս Ցեղասպանութեան տարիներին, այնպէս էլ դրանից յետոյ բռնագրաւուած եւ աւերուած եկեղեցական գոյքի վերադարձի խնդիրը: Դրա համազգային կարելորութիւնը այն է, որ ժամանակակից Թուրքիայի Հանրապետութեան տարածքում են գտնուում հայոց պատմական հայրենիքի մեծ մասը՝ Արեւմտեան Հայաստանը եւ Կիլիկիան, իսկ վերադարձման ենթակայ եկեղեցական գոյքի եթէ ոչ մեծ, ապա զգալի մասը գտնուում է այնտեղ: Փաստօրէն, խնդիրը վերաբերում է հայոց պատմական հայրենիքում գտնուող հայկական գոյքի վերադարձմանը՝ իրենց օրինական տէրերին: Այդ կերպ, օտար տիրապետութեան տակ գտնուող հայոց հայրենիքում թէկուզ մասնակիօրէն, կը պահպանուի հայկականութիւնը մինչեւ նրա ազատագրումը:

ԽՆԴՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնեայ համայնքներին պատկանող գոյքի բռնագրաւումը Թուրքիայում եղել է ազգային եւ կրօնական փոքրամասնութիւնների նկատմամբ պետական հալածանքների ու ճնշումների քաղաքականութեան բաղադրիչներից մէկը: Չնայած Առաջին Աշխարհամարտից յետոյ Անտանտի Երկրների եւ Թուրքիայի միջեւ կնքուած Լոզանի Խաղաղութեան Պայմանագիրը (24 Յուլիսի 1923) Թուրքիայի ոչ-մուսուլմանական փոքրամասնութիւնների համար երաշխաւորում էր մի շարք իրաւունքներ եւ ազատութիւններ, սակայն շուտով Թուրքիան գնաց հաստատութեանական՝ օրէնսդրական մակարդակով այդ իրաւունքները սահմանափակելու ճանապարհով:

Մասնաւորապէս, Լոզանի Պայմանագիրը Թուրքիայի ոչ-մուսուլման փոքրամասնութիւնների համար երաշխաւորում էր սեփական միջոցներով կրթական, ընկերային, բարեգործական եւ կրօնական կառոյցներ հիմնելու եւ ղեկավարելու ազատութիւնը: Համաձայն պայմանագրի 40րդ յօդուածի՝ Թուրքիայի կրօնական փոքրամասնութիւնները *«պէտք է ունենան հաւասար իրաւունք իրենց սեփական ծախսերով հիմնելու, կառավարելու եւ վերահսկելու ցանկացած բարեգործական, կրօնական եւ ընկերային կառոյց, դպրոցներ եւ այլ կրթական ու ուսումնական հաստատութիւններ»*¹:

Մինչդեռ 1936ին Թուրքիայի կրօնական փոքրամասնութիւնների վրայ պարտաւորութիւն դրուեց պետութեանը ներկայացնել իրենց ունեցուածքի ցանկը: Դա արուեց դեռեւս 1935ին ընդունուած վաքըֆների՝ կալուածքների մասին օրէնքի հիման վրայ ընդունուած յայտարարագրով: Այդ կերպ, փաստօրէն, Թուրքիայի կրօնական փոքրամասնութիւնների գոյքը անցնում էր պետութեան վերահսկողութեան ներքոյ՝ ի դէմս Վաքըֆների Գլխաւոր տնօրինութեան: 1974ին, կիպրոսեան ճգնաժամի խորացման բերմամբ, աւելի սաստկացան ոչ-մուսուլմանական համայնքների նկատմամբ հալածանքները, եւ այդ ենթախորքում Թուրքիայի վճռաբեկ դատարանի իրաւական խորհուրդը որոշում ընդունեց, ապօրինի եւ պետութեան կողմից առգրաւման ենթակայ ճանաչել կրօնական համայնքների՝ 1936ից ի վեր ձեռք բերուած գոյքը, որը ներկայացուած չէր նշեալ յայտարարագրում: Բացի սոյն իրաւական ակտերը, թուրքական

իշխանությունները կիրառում էին նաև զանազան բարդ ու խճճուած կանոնակարգեր՝ ոսնահարելու քրիստոնէայ համայնքների անհատական եւ համայնքային գոյքային իրաւունքները, գրկելու նրանց իրենց սեփականութիւնից: Այսպիսով, 1936ից օրէնքով սկսուեց կրօնական փոքրամասնութիւնների կողմից ձեռք բերուած գոյքի բռնագրաւումը պետութեան կողմից, որը մեծ չափերի հասաւ 1974ից²:

ԽՆԴԻԻ ԼՈՒԾՄԱՆ ՆԱԽԱԴԵԱԼՆԵՐԸ

Բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձը պայմանաւորուած է մի շարք հանգամանքներով, որոնց առկայութիւնը ներկայումս իրատեսական է դարձնում այդ խնդրի լուծման համար պայքարը:

Նախ, չնայած Հայոց Յեղասպանութեանը, Հայ Առաքելական Եկեղեցին Թուրքիայում որպէս հայերի ինքնակազմակերպման եւ ինքնավարութեան հաստատութիւն-հիմնարկ շարունակեց պահպանել իր գոյութիւնը՝ ի դէմս Կ. Պոլսի Հայոց Պատրիարքութեան: Թուրքիայում, թէև փոքրաթիւ համայնքներով եւ առանց իրաւական կարգավիճակի, այսօր գործում են նաև Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիները: Ահա՛ հայկական այս երեք եկեղեցիներն են, որ ներկայումս հանդիսանում են Թուրքիայում բռնագրաւուած եւ աւերուած հայկական եկեղեցապատկան գոյքի (եկեղեցիներ, դպրոցներ, հիւանդանոցներ, կալուածներ, հողատարածքներ են.) վերադարձման իրաւատերերը:

Բացի յիշեալ հաստատութիւններից, եկեղեցական գոյքի վերադարձման իրաւատերեր են հանդիսանում նաև Թուրքիայի տարածքից դուրս գործող հայկական կրօնական հաստատութիւնները: Մասնաւորապէս, իօսքը վերաբերում է Հայ Առաքելական Եկեղեցու գոյգ կաթողիկոսութիւնների՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան (Անթիլիաս, Լիբանան): Վերջիններս նոյնպէս, ունենալով իրենց պատկանող կալուածքներ, կորցրել են դրանք Յեղասպանութեան եւ դրան յաջորդած տարիներին: Մասնաւորապէս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ստիպուած է եղել լքել իր պատմական նստավայրը՝ Սիսը, եւ հեռանալ ժամանակակից

Թուրքիայի տարածքից 1921ին³: Այդ կերպ այն կորցրել է ոչ միայն իր անանդական կենտրոն-նստավայրը, այլև ժամանակակից Թուրքիայի տարածքում մնացած ողջ գոյքը:

Թե Հայ Առաքելական Եկեղեցու երկու կաթողիկոսությունները նոյնպես հանդիսանում են իրաւատէր բոնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձման հարցում, անուղակիօրէն վկայում է նաեւ 2013 Մայիսի 24ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ.ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի համատեղ յայտարարութիւնը, որով գոյգ հայրապետերը կոչ էին անում թուրքական իշխանութիւններին *«Անյապաղ վերադարձնել հայ ժողովրդին՝ որպէս իրաւատիրոջ, հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան կալուածքները եւ հոգեւոր-մշակութային արժէքները»*⁴:

Վերջին շրջանում եկեղեցապատկան խլուած գոյքի վերադարձման հարցը որոշակի միջազգային հնչեղութիւն է ձեռք բերել, ինչը եւ նպաստում է խնդրի լուծման իրատեսական կարելիութեան: Մասնաւորապէս նման պահանջներով են հանդէս գալիս Եւրոպական Միութիւնը (ԵՄ) եւ ԱՄՆը:

Յայտնի է, որ ԵՄն Թուրքիայի անդամակցութեան նախապայմաններից մէկն է համարում այդ երկրում կրօնական փոքրամասնութիւնների դրութեան բարելաւումը: Սա իր մէջ ներառում է նաեւ բոնագրաւուած եկեղեցապատկան գոյքի վերադարձը: *«Եւրոպայի համար,- գրում է Վ. Բաումը,- անփոխարինելի արժէքներից են կրօնի, ժողովների գումարման եւ կարծիքի անսահմանափակ ազատութիւնը, ամէն կարգի դպրոցների արտօնութիւնն ու նրանց նիւթական օժանդակութիւնը, բոլոր արխիւների բացումը միջազգային հետազօտութիւնների համար, գողացուած եկեղեցական մշակութային ունեցուածքի վերադարձը եւ դրա պաշտպանութիւնը (կադաստրում ամրագրուած՝ սրբազան սպասք, ձեռագրեր ու գրադարաններ ունենալու իրաւունք), ինչպէս նաեւ փոքրամասնութիւնների համապարփակ պաշտպանութիւնը»*⁵:

ԱՄՆը նոյնպէս, ելնելով քաղաքական, այն է՝ այս կամ այն խնդրի առնչութեամբ Թուրքիայի վրայ ճնշում գործադրելու նկատառումներից, մերթընդմերթ առաջ է քաշում քրիստոնէաների իրաւունքների պաշտպանութեան խնդիրը՝ դրա

մէջ ներառելով նաեւ բռնագրաւուած գոյքի վերադարձման հարցը: Այս տեսակետից ուշագրաւ էր 2011 Յունիսի 15ին ԱՄՆ Ներկայացուցիչների Պալատի կողմից ընդունուած 306 բանաձեւը, որը կոչ է անում Թուրքիային *«իրենց օրինական տէրերին վերադարձնել բոլոր քրիստոնէական եկեղեցիները եւ այլ պաշտամունքի վայրերը, վանքերը, դպրոցները, հիւանդանոցները, յուշարձանները, մասունքները, սրբավայրերը, եւ այլ կրօնական գոյքը, ներառեալ շարժական գոյքը, ինչպիսիք են արուեստի գործերը, ձեռագրերը, զգեստները, անոթները, եւ այլ իրերը»*⁶:

2014 Յունիսի 26ին խնդրի առնչութեամբ ԱՄՆ Ներկայացուցիչների Պալատի Արտաքին Յարաբերութիւնների Յանձնաժողովն ընդունեց նոր թիւ 4347 բանաձեւը⁷: Բովանդակային առումով նոր բանաձեւը ընդունուած թիւ 306 բանաձեւի շարունակութիւնն է:

Քանի որ երկու բանաձեւերն էլ վերաբերում են նոյն խնդրին՝ Թուրքիայում քրիստոնէայ փոքրամասնութիւններից բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձմանը, գործառութային առումով, կարելի է ասել, որ դրանց միջեւ կայ նմանութիւն: Սակայն խնդրի դրուածքի սրութեան առումով կան որոշակի տարբերութիւններ.

1. Եթէ 306րդ բանաձեւը վերաբերում էր միայն Թուրքիայի տարածքում գտնուող քրիստոնէայ եկեղեցիների գոյքին, ապա նոր բանաձեւը վերաբերում է նաեւ Կիպրոսի հիւսիսային գրաւուած շրջաններում գտնուող եկեղեցական գոյքին:

2. Եթէ նախորդ բանաձեւով Թուրքիայի քրիստոնէայ փոքրամասնութիւններից բռնագրաւուած գոյքի վերադարձման հարցում գործող իրաւական ենթակայի դերում հանդէս էին գալիս թուրքական իշխանութիւնները, քանի որ վերջիններիս էր վերապահուում այդ գոյքի վերադարձման գործը, ապա նոր բանաձեւով, քրիստոնէական գոյքի վերադարձման խնդիրը, բացի թուրքական իշխանութիւններից, դրւում է նաեւ ամերիկեան կառավարութեան վրայ, քանի որ, ըստ բանաձեւի, վերջինս թուրքական կառավարութեան հետ միասին պետք է զբաղուի եկեղեցական գոյքի վերադարձման խնդրով:

3. Եթէ նախորդ բանաձեւը չէր նախատեսում որեւէ վերահսկողութիւն՝ եկեղեցական գոյքի վերադարձման գործընթացի նկատմամբ, ապա նորը նախատեսում է: Ըստ նոր

բանաձեւի, ԱՄՆ Պետքարտուղարութիւնը պարտաւոր է մինչեւ 2021, ամէն տարի հաշուետուութիւն ներկայացնել Խորհրդարանի երկու պալլատներին (Ներկայացուցիչների Պալատին եւ Օերակոյտին) Թուրքիայում քրիստոնէայ փոքրամասնութիւններից խլուած գոյքն իրենց օրինական տէրերին վերադարձնելու ուղղութեամբ գործադրուած ջանքերի վերաբերեալ:

Նոր բանաձեւի ընդունումը Ներկայացուցիչների Պալատի Արտաքին Յարաբերութիւնների Յանձնաժողովի նախագահ Էդ. Ռոյսը հիմնաւորում է նրանով, որ *«Թուրքիայում քրիստոնէական եկեղեցիների հետ կապուած իրավիճակը վատթարանում է ... Եւ չնայած Թուրքիայի կառավարութեան՝ եկեղեցիները վերաբացելու խոստումներին, այդ տեղի չի ունենում»*⁸:

Նշեալ հիմնաւորմանը գումարում են նաեւ այն փաստարկները, որ Թուրքիայում շարունակում են ոտնահարուած մնալ քրիստոնէայ փոքրամասնութիւնների իրաւունքներն ու ազատութիւնները: Դրա դրսեւորումներն են.

1. Քրիստոնէայ փոքրամասնութիւնները չունեն Թուրքիայում իրենց կրօնական ծիսակատարութիւններն ազատ իրականացնելու հնարաւորութիւն:

2. Իրենց պատկանող եկեղեցիների, յուշարձանների վերականգնման, նորերի կառուցման հարցում բախում են բազմաթիւ խոչընդոտների:

3. Քրիստոնէաները ենթարկւում են բռնութիւնների՝ ընդհուպ մինչեւ սպանութիւնների եւ այլ յանցագործութիւնների:

ԱՄՆ հայ, յոյն եւ ասորի համայնքները ողջունել են ընդունուած նոր բանաձեւը: Համաձայն Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Քէն Հաչիկեանի՝ *«բանաձեւի ընդունումը հզօր ազդանշան է ուղարկում Անկարային՝ կոչ անելով դադարեցնել հակաքրիստոնէական քաղաքականութիւնը եւ համակերպուել հայերի, ասորիների, կիպրացիների, պոնտացիների եւ Թուրքիայի անպատիժ յանցագործութիւնների միւս զոհերի առջեւ բարոյական, նիւթական եւ իրաւական պարտաւորութիւնների հետ»*⁹:

Բանաձեւին դրական արձագանգեց նաեւ Հայ Առաքելական Եկեղեցին՝ այն համարելով կարեւոր քայլ ի պաշտպանութիւն

Թուրքիայում քրիստոնեական փոքրամասնությունների եւ նրանց իրաւունքների¹⁰:

Վերապահումներով հանդերձ՝ եկեղեցական գոյքի վերադարձման խնդրում դրական գործօն է նաեւ այն, որ տեղի տալով միջազգային ճնշումներին՝ Թուրքիայի իշխանութիւնները նոյնպէս 2011 Օգոստոսին օրէնք ընդունեցին բռնագրաւուած եկեղեցական գոյքը վերադարձնելու վերաբերեալ:

ԳՈՅՔԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՀԵՏ ԿԱՂՈՒԱԾ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Չնայած Թուրքիայի քրիստոնեայ փոքրամասնութիւններից խլուած գոյքի վերադարձման մասին իրաւական ակտերի ընդունմանը, գործնականում առ այսօր փոքր առաջընթաց է գրանցուել այդ հարցում: Պատճառը Թուրքիայի կողմից ստեղծուող արհեստական խոչընդոտներն են, որոնք գործնականում բարդացնում, իսկ երբեմն էլ՝ անհնարին են դարձնում բռնագրաւուած գոյքի վերադարձը: Այդ խոչընդոտները կարելի է բաժանել երկու մասի՝ իրաւական եւ քաղաքական:

Իրաւական հարթութեան մեջ եկեղեցական գոյքի վերադարձման խոչընդոտները հիմնականում հետեւեալներն են.-

1. Ժամանակային սահմանափակումը: Վերոնշեալ օրէնքը նախատեսում է կրօնական փոքրամասնութիւններին վերադարձնել միայն 1936ից յետոյ բռնագրաւուած գոյքը: Մինչդեռ կրօնական փոքրամասնութիւններից գոյքի բռնագրաւումը տեղի չի ունեցել միայն 1936ից յետոյ: Աւելին, կրօնական փոքրամասնութիւնների գոյքագրկում հիմնականում տեղի է ունեցել նախընթաց ժամանակահատուածում՝ ջարդերի ու ցեղասպանութեան տարիներին: Այդ շրջանում է, որ հայերը (առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական), Պոնտոսի յոյները, ասորիները եւն. կորցրին իրենց պատկանող եկեղեցական գոյքի մեծ մասը: 1936ից յետոյ պետութեան կողմից բռնագրաւուել է միայն այդ տարուանից յետոյ ձեռք բերուած գոյքը: Նշանակում է, որ օրէնքի լիակատար կիրառման պարագայում անգամ կրօնական փոքրամասնութիւնները հնարաւորութիւն են ունենալու ետ ստանալ իրենց կորցրած գոյքի միայն փոքր մասը:

Իսկ ինչ վերաբերում է նախընթաց ժամանակաշրջանում բռնագրաւուած գոյքին, ապա թուրքական կառավարութիւնը մտադրութիւն չունի դրանք վերադարձնել քրիստոնեական

համայնքներին: Դրա լուսազոյն վկայությունը Վանի Աղթամար Կղզու Սուրբ Խաչ Եկեղեցու օրինակն է, որը վերականգնուելով գործում է որպես թանգարան եւ պատկանում է ոչ թէ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանին, այլ Թուրքիայի Մշակոյթի Եւ Զբոսաշրջութեան Նախարարութեանը: Թուրքական իշխանությունները - չնչին բացառություններով - թոյլ չեն տալիս վերականգնել անբուսած եւ լքուած քրիստոնէական եկեղեցիները, իսկ իրենց կողմից վերանորոգուածները ծառայեցում են ոչ թէ որպէս գործող եկեղեցի, այլ թանգարանային նմուշ՝ զբոսաշրջությունը զարգացնելու համար:

2. Եկեղեցիների իրաւական կարգավիճակի հարցը: Ներկայումս Թուրքիայում իրաւական կարգավիճակ ունեն միայն Հայ Առաքելական Եկեղեցին, Յոյն Ուղղափառ Եկեղեցին եւ հրէական համայնքը: Այս համակարգը ներմուծուել է դեռեւս Մեհմէդ Բ. սուլթանի (1444-1446, 1451-1481) կողմից¹¹: Թէեւ 19րդ դարում՝ կաթողիկէ եւ բողոքական համայնքների առաջացման եւ պետութեան կողմից ճանաչման հետ, այս իրավիճակը որոշակիօրէն խախտուեց, սակայն յետագայում՝ Առաջին Աշխարհամարտից յետոյ, վերականգնուեց:

Իսկ *դէ ֆակտո* առկայ միւս քրիստոնէական համայնքները, ինչպիսիք են Հռոմի Կաթողիկէ Եկեղեցին, Հայ Կաթողիկէ Եկեղեցին, բողոքական ուղղութեան համայնքները, այդ թւում նաեւ՝ Հայ Աւետարանական Եկեղեցին, քրիստոնէայ արարները, ասորիները, պաշտօնապէս ճանաչուած չեն պետութեան կողմից: Վերջինս, թէեւ ընդունում է նրանց գոյութեան փաստը, սակայն հրաժարում է նրանց իրաւական կարգավիճակ տալուց: Անգամ Հռոմի Կաթողիկէ Եկեղեցին, չնայած Վատիկանի կողմից գործադրուող ջանքերին (Վատիկանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերություններն ունեն անելի քան կէտդարեայ պատմություն¹²), դեռեւս չի կարողացել Թուրքիայում ստանալ իրաւական գրանցում:

Իրաւական գրանցման բացակայությունը զգալիօրէն սահմանափակում է չճանաչուած համայնքների գործունէութեան հնարաւորությունները, այս դէպքում, մասնաւորապէս իրենցից խլում զոյքը ետ ստանալու հարցում: Թուրքիայի հայ համայնքի առնչութեամբ դա նշանակում է, որ Հայ Առաքելական, Կաթողիկէ

եւ Աւետարանական եկեղեցիներից միայն առաջինը կարող է նման հայտ ներկայացնել պետութեանը:

3. Ժամկետի սահմանափակությունը: Վերոնշեալ օրէնքը մէկ տարի ժամկետ է սահմանում, որպէսզի կրօնական փոքրամասնութիւնները հայտ ներկայացնեն իրենց պատկանող գոյքը ետ ստանալու համար¹³: Հաշուի առնելով, որ հայտի կազմումը բաւականին բարդ է տեւական գործընթաց է՝ կապուած բազմաթիւ հաշուարկների ու փաստաթղթերի ձեռքբերման եւ յստակեցման հետ, հասկանալի է, որ այդ ժամկետը բաւարար չէ հայտերի պատշաճ կազմման եւ եկեղեցական գոյքի պատշաճ ետ ստացման համար:

4. Գոյքի վաճառուած լինելը: Բռնագրաւուած գոյքի մի մասն էլ թուրքական կառավարութիւնը ժամանակին վաճառել է մասնաւոր անձանց: Վաճառուած գոյքի առնչութեամբ վերոյիշեալ օրէնքը նախատեսում է փոխհատուցում կրօնական համայնքներին¹⁴: Սակայն որքանով այդ փոխհատուցումը կը լինի համարժէք եւ թոյլ կը տայ լիովին վերականգնել պատճառուած վնասը՝ դժուար է ասել:

Քաղաքական խոչընդոտներից հիմնականում կարելի է առանձնացնել երկուսը.-

1. Բիւրօկրատական քաջքշուկներ: Կրօնական փոքրամասնութիւնները իրենց պատկանող գոյքը ետ ստանալու հարցում յաճախ բախում են լուրջ **բիւրօկրատական** խնդիրների¹⁵: Յաճախ նրանք իրենց գոյքը վերադարձնելու համար ստիպուած են անգամ դատական գործընթացի մէջ մտնել պետութեան հետ¹⁶: Բացի իրաւական խնդրից, այստեղ առկայ է նաեւ հոգեբանական գործօնը: Գոյքի վերադարձման խնդրի արհեստական բարդացումը հոգեպէս ընկճում է քրիստոնէայ համայնքներին՝ առաջացնելով թուրքական պետութեան ամենագորութեան եւ իրենց խնդիրների լուծման անհնարիւթեան զգացողութիւն, ինչը կարող է քրիստոնէայ համայնքներին ետ պահել իրենց իրաւունքների համար պայքարի շարունակութիւնից:

2. Քաղաքական շահարկումներ: Թուրքական կողմը քրիստոնէական փոքրամասնութիւնների նկատմամբ իր պարտաւորութիւնների կատարումը պայմանաւորում է համապատասխան երկրներում մուսուլմանական փոքրամասնութիւնների խնդիրների լուծմամբ, ինչը լրացուցիչ

բարդություններ է հաղորդում առանց այդ էլ ստեղծուած բարդ իրավիճակին: Օրինակ՝ Թուրքիայի կառավարութեան կողմից խոստացուած յունական աստուածաբանական դպրոցի վերաբացումը Ստամբուլին մերձակայ Հէյբելի կղզում ԵՄ հարցերով նախարար Էգեմէն Բադըշը կապել է Յունաստանի իշխանութիւնների կողմից մուսուլման փոքրամասնութիւնների դրութիւնը բարելաւելու ուղղութեամբ ձեռնարկուելիք քայլերի հետ¹⁷:

Վերոնշեալ իրաւական եւ քաղաքական խոչընդոտները ակնյայտ են դարձնում թուրքական իշխանութիւնների կողմից ընդունուած վերոյիշեալ օրէնքի ձեւական բնոյթը: Վերջիններս իրականում վարում են ոչ թէ կրօնական փոքրամասնութիւնների ոտնահարուած իրաւունքները վերականգնելու, այլ արտաքին աշխարհում ժողովրդավարական երկրի համբաւ ձեռք բերելու քաղաքականութիւն:

Այս պատճառով է, որ Թուրքիայի կրօնական համայնքները, այդ թւում նաեւ Հայ Առաքելական Եկեղեցին կարողացել են արձանագրել չնչին ձեռքբերումներ իրենց պատկանող գոյքի ետ ստացման գործում: Թուրքական կառավարութիւնը միայն որոշ կալուածքներ է վերադարձրել Կ. Պոլսի հայոց եւ յունաց պատրիարքարանների¹⁸: Դրանով բնականաբար խնդիրը լուծուած չի կարելի համարել, քանի որ *«Կան հազարաւոր առգրաւուած եկեղեցիներ եւ (հայ - Վ.Հ.) համայնքին պատկանող կալուածքներ, Թուրքիայի ամբողջ տարածքում, որոնք պէտք է վերադարձուեն իրենց օրինական տէրերին»*¹⁹:

Թուրքիայի բացասական վերաբերմունքը՝ բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձման հարցում, երեւում է նաեւ նրա արձագանգից վերոնշեալ թիւ 4347 բանաձեւի նկատմամբ: Այն կարելի է բաժանել երկու մասի՝ հասարակական-քաղաքական շրջանակների արձագանգներ, որոնք արտացոլուեցին թուրքական մամուլում, եւ պաշտօնական արձագանգ, որով հանդէս եկաւ Թուրքիայի Արտաքին Գործերի Նախարարութիւնը: Պէտք է նշել, որ մամուլում արտացոլուած արձագանգը եւ պետութեան պաշտօնական դիրքորոշումը համահունչ են եւ փոխլրացնում են մէկը միւսին:

Մամուլի էջերում հնչած արձագանգի համաձայն՝ 4347 բանաձեւը Թուրքիայի շահերի դէմ ուղղուած փաստաթուղթ է, որն ընդունուել է ԱՄՆում հայկական լոբիի ազդեցութեամբ²⁰:

Պաշտօնական դիրքորոշման մեջ երեւում է թուրքական կողմի անհամաձայնութիւնը բանաձեւի դրոյթների նկատմամբ, ինչպէս նաեւ աւանդական սպառնալիքների ձեռագիրը: Ընդհանուր առմամբ, Թուրքիայի պաշտօնական վերաբերմունքը բանաձեւի նկատմամբ յանգում է հետեւեալին.

1. Բանաձեւում տրուած գնահատականներն անհիմն մեղադրանքներ են:
2. Թուրքիան մեծ ջանքեր է գործադրել քրիստոնեայ փոքրամասնութիւնների կրօնական իրաւունքներն ապահովելու ուղղութեամբ:
3. Նման բանաձեւի ընդունումը վտանգում է թուրք-ամերիկեան համագործակցութիւնը տարբեր ոլորտներում:
4. Թուրք-ամերիկեան յարաբերութիւններով մտահոգուածները պէտք է սատարեն Թուրքիային այս հարցում²¹:

Այսպիսով, Թուրքիան, մի կողմից չընդունելով բանաձեւում տրուած գնահատականները, միւս կողմից՝ փորձում է ձեւացնել, թէ շահագրգռուած է իր երկրում բնակուող քրիստոնեայ փոքրամասնութիւնների իրաւունքների եւ կրօնական ազատութիւնների երաշխաւորմամբ: Գործնականում, սակայն, շարունակում է իրական եւ քաղաքական խոչընդոտների այն քաղաքականութիւնը, որոնցով իրականում ձախողում է քրիստոնեայ փոքրամասնութիւններին եկեղեցական գոյքը վերադարձնելու գործը:

ՅԵՏԱԳԱՅ ՔԱՅԼԵՐ

Չնայած առկայ խոչընդոտներին, քանի դեռ խնդիրը շարունակում է հրատապ մնալ ինչպէս միջազգային, այնպէս էլ Թուրքիայի մակարդակով, հայութիւնը պէտք է շարունակի իր պայքարը բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձման ուղղութեամբ:

Հարկ է նշել, որ ԱՄՆ երկպալատ խորհրդարանում մինչ օրս ընդունուած բանաձեւերում հիմնական թերութիւնը, որը հնարաւորութիւն է տալիս Թուրքիային խուսանաւել, խուսափել իր պարտաւորութիւնները կատարելուց՝ պարունակուող

դրոյթների որոշակիութիւնից զուրկ, իհիստ ընդհանրական բնոյթն է: Միակ որոշակի դրոյթը 4347 բանաձեւում՝ վերադարձուելիք եկեղեցական գոյքի ցուցակագրման պահանջն է, որը թոյլ է տալիս յստակեցնել քրիստոնեայ փոքրամասնութիւններին վերադարձուելիք եկեղեցական գոյքը:

Հետեւաբար, ԱՄՆ հայկական, յունական, ասորական եւ միւս շահագրգիռ համայնքները ինդրի առնչութեամբ յետագայ քննարկումներում եւ ընդունուելիք փաստաթղթերում պէտք է ջանքեր գործադրեն յստակութիւն մտցնելու ուղղութեամբ: Յստակութեան կարօտ հարցերից են, օրինակ.-

1. *Թուրքիայի քրիստոնեայ փոքրամասնութիւնների կազմը:* Յստակեցնելով քրիստոնեայ փոքրամասնութիւնների կազմի հարցը՝ նպատակայարմար է յետագայ փաստաթղթերում այդպիսիք համարել նաեւ Թուրքիայում պաշտօնական կարգավիճակ չունեցող քրիստոնէական համայնքներին եւ բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձման պահանջը տարածել նաեւ նրանց վրայ: Մա նաեւ կ'ընդլայնի դաշնակիցների բանակը՝ գործին ներգրաւելով նաեւ Հռոմի Կաթողիկէ Եկեղեցուն, բողոքական եկեղեցիներին եւն., քանի որ, օրինակ, հայ կաթողիկէներն ու աւետարանականները, հայ լինելով հանդերձ, միաժամանակ համաշխարհային կաթողիկէութեան եւ բողոքականութեան մի մասն են:

2. *Վերադարձման ենթակայ եկեղեցական գոյքը:* Նպատակայարմար է բանաձեւերում ընդգրկել քրիստոնէական եկեղեցիների՝ կորսուած ողջ գոյքի, եւ ոչ թէ դրա մի մասի (1936ից յետոյ բռնագրաւուած գոյքի) վերադարձման պահանջը:

3. *Գոյքի վերադարձման ընթացակարգը:* Բիւրօկրատական քաշքշուկներից եւ քաղաքական շահարկումներից խուսափելու համար անհրաժեշտ է մշակել եկեղեցական գոյքի վերադարձման պարզ ընթացակարգ եւ այն դարձնել ընդունուելիք փաստաթղթերում Թուրքիային ներկայացուող պահանջներից մէկը:

4. *Հայտերի ներկայացման ժամկէտը:* Այս հարցը վերաբերում է ոչ թէ ժամկէտեր սահմանելուն, այլ սահմանուած ժամկէտի վերացմանը: Խօսքը վերաբերում է Թուրքիայում 2011 Օգոստոսին ընդունուած եկեղեցական գոյքի վերադարձի մասին օրէնքով քրիստոնեայ համայնքների կողմից իրենցից բռնագրաւուած

եկեղեցական գոյքի վերադարձի հայտերի ներկայացման համար սահմանուած մէկ տարուայ ժամկէտին: Յետագայում ընդունուելիք փաստաթղթերում անհրաժեշտ է ամրագրել եկեղեցական գոյքի վերադարձման հայտերի ներկայացման որեւէ ժամկէտի սահմանման անթոյլատրելիութեան դրոյթ:

5. *Օտարուած եկեղեցական գոյքի գնահատում եւ համարժէք փոխհատուցում:* Անհրաժեշտ է մշակել օտարուած գոյքի համարժէք գնահատման յստակ բանաձեւ եւ այն որպէս պահանջ ներառել յետագայ փաստաթղթերում:

Վերոյիշեալ եւ այլ յստակեցումների պարագայում է, որ կարելի է ակնկալել էական արդիւնքներ Թուրքիայում քրիստոնէայ փոքրամասնութիւններից իլուած եկեղեցական գոյքի վերադարձման խնդրում: Հակառակ պարագայում այդ խնդրի մասին ընդունուած բանաձեւերը կը մնան սոսկ որպէս իրավիճակ նկարագրող եւ Թուրքիային դատապարտող, սակայն գործնականում խիստ սահմանափակ նշանակութիւն ունեցող փաստաթղթեր: Դրանց նշանակութիւնը կը լինի աւելի շատ բարոյական, քան իրական: Իսկ Թուրքիան, օգտուելով վերացական ձեւակերպումներից, կը շարունակի խորհրդանշական զիջումների գնալով ստեղծել քրիստոնէայ համայնքների իրաւունքների եւ կրօնական ազատութիւնների երաշխաւորման նմանակում:

ԽՆԴԻԻ ՇՈՒՐՁ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձի հարցում յաջողութեան հասնելու համար կարելոր է նաեւ միջեկեղեցական համագործակցութիւնը: Թուրքական պետութեան համար շատ աւելի հեշտ է գործ ունենալ առանձին քրիստոնէական համայնքների, քան նրանց միաւորման հետ: Առանձին համայնքների պահանջները չեզոքացնելը կամ դրանց բաւարարումը նուազագոյն մակարդակով իրականացնելը պետութեան համար շատ աւելի հեշտ է, քանի որ առանձին-առանձին իւրաքանչիւր համայնք, չունենալով բաւականաչափ միջոցներ, աւելի խոցելի է պետութեան կամայականութիւնների դիմաց: Մինչդեռ համատեղ ջանքերը կը բարձրացնեն ընդհանուր

ներուժը՝ անելի սահմանափակելով պետութեան կամայականութիւնների եւ ոտնձգութիւնների հնարաւորութիւնը:

Միջեկեղեցական համագործակցութիւնը կարող է լինել երկու մակարդակով՝ ներազգային եւ միջազգային:

- *Ներազգային* համագործակցութիւնը ենթադրում է միջդաւանական համագործակցութիւն Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական եկեղեցիների միջեւ, որը կարծես թէ գիտակցում է վերջիններիս կողմից: Քանի որ խնդիրը ունի ոչ միայն կրօնական, այլեւ իրաւա-քաղաքական ենթախորք, ապա միանգամայն նպատակայարմար է այս գործում ներգրաւել նաեւ Մփիւռքում գործող հայ ասանդական կուսակցութիւններին: Այս առումներով պատահական չէր Թուրքիայում քրիստոնէական եկեղեցիներին պատկանող գոյքի վերադարձի առնչութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի յայտարարութիւնը²² առ այն, որ *«Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Հայ Կաթողիկէ ու Բողոքական եկեղեցիներուն եւ մեր կուսակցութիւններուն հետ գործակցաբար յառաջիկային պիտի պատրաստէ աշխատանքային ծրագիր»*²³:

Հարկ է նշել, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն արդէն սկսել է իրաւական գործընթաց իրեն պատկանող գոյքը ետ ստանալու նպատակով: Այդ մասին յայտարարութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ը արեց դեռեւս 2014 Մեպտեմբերի 19-20ը Երեւանում անցկացուած Հայաստան-Մփիւռք Հինգերորդ Համաժողովի ժամանակ, նշելով. *«Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մօտ ժամանակներս Թուրքիայի սահմանադրական դատարանում հայց է ներկայացնելու՝ պահանջելով իր պատմական կենտրոնի՝ Միսի Կաթողիկոսարանի վերադարձը իր իրաւատիրոջը՝ հայ եկեղեցուն ու հայ ժողովրդին»*²⁴: Սոյն յայտարարութիւնից յետոյ գործնական քայլերը իրենց երկար սպասեցնել չտուեցին: 2015 Ապրիլի 28ին Կաթողիկոսութիւնը յիշեալ պահանջով հայց ներկայացրեց Թուրքիայի սահմանադրական դատարան²⁵:

Թէ ինչպիսին կը լինի Թուրքիայի սահմանադրական դատարանի վճիռը, դժուար է կանխատեսել: Փաստ է միայն այն, որ դատական գործընթացը եկեղեցական գոյքի վերադարձման հարցում սկսուած է եւ կ'ունենայ շարունակութիւն: Մասնաւորապէս՝ Թուրքիայի սահմանադրական դատարանում

խնդրի լուծման ձախողման պարագայում Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իրաւունք ունի դիմելու միջազգային աստեաններ եւ կ'օգտուի իր այդ իրաւունքից²⁶:

Ինչեւէ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յիշեալ խիզախ քայլից յետոյ նման իրաւական թղթածրարի պատրաստման աշխատանքներ սկսեց իրականացնել նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

- *Միջազգային* համագործակցութիւնը ենթադրում է Թուրքիայի այլ քրիստոնէական փոքրամասնութիւնների՝ Յոյն Ուղղափառ Եկեղեցու, քրիստոնէայ արաբների, ասորիների, Հռոմի Կաթողիկէ Եկեղեցու, բողոքական ուղղութեան եկեղեցիների հետ համագործակցութիւն:

Բռնագրաւուած եկեղեցական գոյքի վերադարձի նպատակով ներազգային եւ միջազգային համագործակցութիւնը քրիստոնէական եկեղեցիների միջեւ կարող է դրսեւորուել հետեւեալ հարցերում.-

- *Հայտերի կազմում եւ ներկայացում:* Եթէ հնարաւոր էլ չէ միասնական հայտերի կազմումը եւ ներկայացումը, ապա քրիստոնէական համայնքները կարող են նուազագոյնը համատեղ ջանքեր գործադրել առանձին համայնքների հայտերը կազմելու գործում՝ այս հարցում փոխօգնութեան գնալով միմեանց:

- *Իրաւական եւ տեղեկատուական փոխօգնութիւն:* Թուրքիայի բարդ իրաւական համակարգին ամբողջութեամբ չտիրապետելով՝ առանձին համայնքները չեն կարող լիարժէք պաշտպանել իրենց շահերը: Բացի այդ, եկեղեցական գոյքի հետ առնչուող խնդիրը կապուած է մեծ քանակութեամբ տեղեկատուութեան հետ, որին նոյնպէս առանձին համայնքները կարող են ամբողջութեամբ չտիրապետել՝ անգամ այնպիսի հարցերում, որոնք վերաբերում են զուտ իրենց: Հետեւաբար, իրաւական եւ տեղեկատուական փոխօգնութիւնը (իրաւական խորհրդակցութիւններ, տեղեկատուութեան փոխանակում եւն.) նոյնպէս կարեւոր նշանակութիւն ունի համայնքների կողմից իրենց շահերի պաշտպանութեան արդիւնաւետութիւնը բարձրացնելու տեսանկիւնից:

- *Հաշուարկների կատարում:* Եկեղեցական գոյքի վերադարձման խնդիրը կապուած է նաեւ բազմաթիւ եւ բազմազան (երբեմն՝ բարդ) հաշուարկների հետ: Այս հարցում

տարբեր եկեղեցիները նոյնպես կարող են փոխօգնութեան գնալ միմեանց:

Կարծում ենք՝ եկեղեցական գոյքի վերադարձման խնդրի առնչութեամբ համատեղ ջանքեր գործադրելու, ինչպես նաև այդ համատեղ ջանքերի արդիւնաւետութիւնը բարձրացնելու համար նպատակայարմար է միջեկեղեցական աշխատանքային խմբի ձեւաւորումը, որի գործունէութիւնը կը կենտրոնանայ վերոյիշեալ խնդիրների իրականացման վրայ:

Այսպիսով, միասնական ջանքերի գործադրմամբ իւրաքանչիւր եկեղեցի ընդհանուր շահերի պաշտպանութեան մէջ կարող է տեսնել եւ զգալ իր մասնաւոր շահերի պաշտպանութիւնը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Treaty of Peace with Turkey Signed at Lausanne, July 24, 1923, article 40 (<http://www.hri.org/docs/lausanne/part5.html>):
- ² Ռուբէն Սաֆրաստեան եւ ուրիշներ, *Թուրքիայի Հանրապետության Պատմութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2014, էջ 78-79:
- ³ *Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան*, Երեւան, «Տիգրան Մեծ», 2002, էջ 464:
- ⁴ «Թուրքիայից Պահանջում ենք Վերադարձնել Բնագրաւուած Հայկական Եկեղեցիներն Ու Եկեղեցապատկան Կալուածքները», *Հայաստանի Հանրապետութիւն*, 25.04.2013:
- ⁵ Վ. Բաում, *Թուրքիան Եւ Նրա Քրիստոնէայ Փոքրասանությունները*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2010, էջ 176:
- ⁶ H. Res. Resolution 306 Urging the Republic of Turkey to Safeguard its Christian Heritage and to Return Confiscated Church Properties, June 15, 2011 (<http://www.atour.com/government/pdf/20110615-USCongress-BILLS-112hres306ih.pdf>):
- ⁷ H. R. 4347 (http://foreignaffairs.house.gov/sites/republicans.foreignaffairs.house.gov/files/HR%204347_Turkey%20Christian%20Churches%20Accountability%20Act.pdf):
- ⁸ «ԱՄՆ Կոնգրէսի Յանձնաժողովը Քուէարկել Է Թուրքիայի Քրիստոնէական Եկեղեցիների Մասին Բանաձեւի Օգտին», <http://m.news.am/arm/news/216498.html> :
- ⁹ «Ամերիկայի Հայերը, Յոյներն Ու Ասորիները Ողջունում են Թուրքիայի Քրիստոնէական Եկեղեցիների Մասին Բանաձեւի Ընդունումը», <http://m.news.am/arm/news/216512.html> :
- ¹⁰ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Ողջունում Է ԱՄՆ Կոնգրէսի Արտաքին Յարաբերութիւնների Յանձնաժողովի Որդեգրած H. R. 4347 Բանաձեւը», <http://www.aravot.am/2014/06/27/475133/> :
- ¹¹ Վահան Բայրուրդեան, *Օսմանեան Կայսրութեան Պատմութիւն*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2011, էջ 150-151:

- ¹² Վատիկանի եւ Թուրքիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններ հաստատուել են 1960ին (Բաում, էջ 163):
- ¹³ “V Turtsii Realizatsii Zakona O Vozvrashenii Nemusulmanskim Religioznim Obshinam Konfiskovannogo Imushestva Meshayut Burokraticheskie Preponi” (Թուրքիայում ոչ-մուսուլմանական կրօնական համայնքներին բռնագրաւուած գոյքի վերադարձի մասին օրէնքի իրականացմանը խանգարում են բիւրոկրատական խոչընդոտները) <http://drevo-info.ru/news/11648.html> :
- ¹⁴ Նոյն. նաեւ՝ “Bolgarskoy Tserkovnoy Obshine V Stambule Budut Vozvrasheni Rance Konfiskovannie Obyekti Nedvijimogo Iumushestva” (Ստամբուլի բուլղարական եկեղեցական համայնքին կը վերադարձուեն նախկինում բռնագրաւուած անշարժ գոյքի օբեկտները) <http://drevo-info.ru/news/11553.html> . նաեւ՝ “Turtsia Vernet Khristianam I Yudeiam Konfiskovannuyu Sobstvennost” (Թուրքիան կը վերադարձնի քրիստոնէաներին եւ հուդայականներին բռնագրաւուած սեփականութիւնը) <http://drevo-info.ru/news/11330.html> :
- ¹⁵ Տե՛ս՝ “V Turtsii Realizatsii Zakona”:
- ¹⁶ Տե՛ս օրինակ՝ «Ստամբուլի Դատարանը Մերժել Է Հայոց Պատրիարքարանին Վերադարձնել «Սանասարեան Տունը» http://ermenihaber.am/?lang_id=2&news_=9&cur_news=479 :
- ¹⁷ “Otkritie Khalkinskoy Bogoslovskoy Shkolo Zavisit Ot Vstrechnikh Shagov So Storoni Gretsii, Zayavil Turetskii Minister” (Հէրբէլիի աստուածաբանական դպրոցի բացումը կախուած է Յունաստանի ընդառաջ քայլերից, յայտարարել է թուրք նախարարը) <http://drevo-info.ru/news/12661.html> :
- ¹⁸ Տե՛ս, օրինակ՝ նոյն. նաեւ՝ “Turetskie Vlasti Nachinayut Vozvrashat Konfiskovannuyu Nedvijimost Kionstantinopolskogo Patriarkhata” (Թուրքական իշխանութիւնները սկսում են վերադարձնել Կոնստանդնուպոլսի Պատրիարքութեան բռնագրաւուած անշարժ գոյքը) <http://drevo-info.ru/news/12646.html> . նաեւ՝ “Turetski Vlasti Vernuli Kionstantinopolskoy Patriarkhi Zdanie Shkoli V Galata” (Թուրքական իշխանութիւնները վերադարձրել են Կոնստանդնուպոլսի Պատրիարքութեանը Գալաթայի դպրոցի շէնքը) <http://drevo-info.ru/news/12343.html> :
- ¹⁹ Յարութ Սասունեան, «Ինչպէ՞ս Պետք Է Սփիւռքն Արձագանգի Թուրքիայի Մերձեցման Նախաձեռնութիւններին http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6508&sphrase_id=17981 :
- ²⁰ «Թուրքիայի ԱԳՆն Արձագանգել Է ԱՄՆ Կոնգրէսի Յանձնաժողովի Ընդունած Բանաձեւին», http://ermenihaber.am/?lang_id=2&news_=9&cur_news=478 :
- ²¹ Նոյն :
- ²² 2012 Փետրուարի 23-26ը Պէրոյքի արուարձան Անթիլիասում «Հայկական Ցեղասպանութիւնը՝ Ճանաչումից Հատուցում» խորագրով միջազգային գիտաժողովի փակման խօսքում:
- ²³ «Ազգային Պահանջատիրութիւնը Նոր Հորիզոններու Դիմաց (Անթիլիասի Մայրավանքին Մէջ Տեղի Ունեցած Միջազգային Համագումարին Առիթով)», *Հասկ*, 2012, Փետրուար, թիւ 2, էջ 116:

²⁴ «Ճանաչումն Ու Հատուցումը Պէտք Է Տեղափոխել Իրաւական Դաշտ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի Օրհնութեան Խօսքը», *Հայաստանի Հանրապետութիւն*, 20.09.2014:

²⁵ Տե՛ս՝ «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Դատ Բացաւ Թուրքիոյ Սահմանադրական Դատարանին Մօտ», *Հասկ*, 2015, Ապրիլ, թիւ 4, էջ 240-241:

²⁶ Տե՛ս՝ «Ճանաչումն Ու Հատուցումը» :

THE ISSUE OF CHURCH PROPERTY RESTITUTION
AS A CONSTITUENT ELEMENT OF ARMENIAN DEMANDS
(SUMMARY)

VAHRAM HOVYAN
Vahram@noravank.am

The issue of church property restitution in Turkey as a constituent element of Armenian demands has recently become a matter of further urgency. Action related to the issue is conditioned by the existence of the competent body, namely the Armenian Patriarchate of Istanbul, as a legitimate-organizing and self-governing institution of the Armenian community, the pressures by the European Union and the USA and the adoption of a relevant law in Turkey in August 2011.

In spite of the existence of the above-mentioned positive conditions, there are also a number of practical legal and political obstacles, which severely hinder the issue of property return. Among the legal obstacles are: time constraints, the issue of the legal status of the churches (as some religious communities are not recognized by the Turkish state), the limitations of retroactivity (as the law is applied to properties confiscated after 1936, while most of the church properties were confiscated between WWI and 1936), the fact that some properties have been sold. The political obstacles are bureaucratic acrimony and political speculation.

Notwithstanding the obstacles raised by the Turkish authorities, the issue continues to be urgent, and the Armenian Church must press harder. This would help bring further transparency to the difficulties of the Christian minorities in Turkey.

The author suggests a set of steps and strategies to be adopted by the Christian minorities for more hopeful results. Among these strategies the author calls for broad collaboration and extensive cooperation between churches at both national and international levels in the matters of drafting and submitting claims, mutual legal and information assistance, etc.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԱԼ-ՄՈՒՇԻՐՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԵՐԳԻԾԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՄ ԺԹ. ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

ՆԱՐԻՆԷ ԵՐԱՆՈՍԵԱՆ
anara20072007@yandex.ru

Ալ-Մուշիր (խորհրդական) երկլեզուեայ (արաբերեն եւ անգլերեն) քաղաքական, գրական, քննադատական շաբաթաթերթը (յետագայում՝ երկշաբաթաթերթ) լոյս է տեսել 1894ին Ալեքսանդրիայում, այնուհետև տեղափոխուել է Կահիրէ: Թերթի հիմնադիր-խմբագիրն էր բէյրութցի վտարանդի Սելիմ Սարգիսը: Վերջինս երկար ղեգերումներից յետոյ, խուսափելով Կ.Պոլիս մեկնելուց, որն անուանում էր «*մտքերի դամբարան, ուղեղների գերեզման, որտեղ ոչ մէկն ականջալուր չէ իրեն*», իվերջոյ հաստատուել է Եգիպտոսում:

Արաբ մտաւորականները մեծ ներդրում ունէին երիտօրրքական պարբերականների հրատարակման, ինչպէս նաև՝ Իթթիհադ վէ Թերաքքըի մամուլի հիմնադրման գործում: «Երիտասարդ Թուրքիայի» յայտնի գաղափարախօս Ահմադ Ռիզայի հետեւորդներից էր Խալիլ Ղանէմը (բարենորոգումների գործօն ջատագով, Բէյրութի Վիլայէթի ներկայացուցիչն օսմանեան խորհրդարանում եւ դրա առաջին նախագահը): Վերջինների ջանքերով 1895ին Փարիզում սկսեց հրատարակուել երիտօրրքական շարժման առաջին պաշտօնական պարբերականը՝ *Մէշուերէթը* (խորհրդակցութիւն)¹, իսկ 1896ին Կահիրէում սկսում է վերստին լոյս տեսնել շարժման ամենակարեւոր հրատարակութիւններից *Միզանը* (կշեռք)՝ Միզանջի Մուրադի խմբագրութեամբ:

ԺԹ. դ. վերջերին ժընեւի, Լոնդոնի, Փարիզի կողքին Կահիրէն եւս դարձել էր երիտօրրք ընդդիմադիրների ազատ պարբերական հրատարակութիւնների կենտրոն:

Ալ-Մուշիրի ուղղութիւնը եւ հրատարակչի դիրքորոշումը 1890ականներին Կահիրէում լոյս տեսնող համիդեան վարչակարգի դէմ կտրուկ արտայայտուող միւս պարբերականների նման, եւս կարելի է բնորոշել որպէս իշխող վարչակարգի նկատմամբ ծայրայեղ թշնամական: Պարբերականն արձագանգում էր երիտօրրքերի քարոզչութեանը եւ գաղափարախօսութեան հիմնական հայեցակէտերին:

Ի տարբերություն 1894-1896ի հայկական կոտորածների վերաբերեալ օսմանեան մամուլում գրաքննութեան ճնշման տակ տպագրուող ապատեղեկատուութեանը, որտեղ դրանք ներկայացում էին որպէս աննշան միջադէպեր, *Ալ-Մուշիքի* էջերում արտացոլուած է Արեւմտահայաստանի² իրական վիճակը:

Հայերին առնչուող իրադարձութիւնները լուսաբանուած են պարբերականի գրեթէ բոլոր համարներում՝ «Հայաստան», «Հայկական ճգնաժամ», «Իրավիճակը Հայաստանում», «Հայկական Հարց» խորագրերով յօդուածաշարերում եւ բազմաթիւ այլ յօդուածներում:

Ժամանակի կարեւորագոյն խնդիրները, այդ թւում արդէն միջազգային դիւանագիտութեան հիմնախնդիր դարձած Հայկական Հարցը, առաւել դիպուկ են ներակայացուած թերթի երգիծապատկերներում³:

Ալ-Մուշիքի բազմաթիւ համարների առաջին էջերում երգիծապատկերների միջոցով ներկայացուած են Օսմանեան Կայսրութեան դրութիւնը եւ եւրոպական երկրներից նրա կախուածութիւնը: Դրանց շարքում մեծ տեղ են գրաւում Հայկական Հարցին վերաբերուող պատկերները, որոնց հիմնական հերոսը միշտ սուլթանն է կամ օսմանեան պետութիւնը՝ եւրոպական դիւանագիտութեան ճնշումների տակ կքած, իսկ գլխաւոր թեման՝ Հայկական Հարցը:

Արիւնտ սուլթանը եւ Հայկական Հարցում նրա քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ մեծ տերութիւնների դիրքորոշումը Հայկական խնդրում երգիծական արտացոլում են գտել նաեւ հեղինակաւոր այլ պարբերականներում՝ ֆրանսիական *Le Rire, L'Assiette au Beurre* եւ անգլիական *Punch* պարբերականներում: Կոպէնհագընում 1903ին տպագրուել է Թուրքիայում բնակուող իսլամացած շուէդ գրող Ալի Նուրի Բէյի (Գուստաւ Նուրինգ, 1861-1937) *Աբդուլ Համիդը Երգիծանկարներում* գիրքը, որն ընդգրկում է կարմիր սուլթանին պատկերող երգիծանկարներ ու բանաստեղծութիւններ, որոնք, ի թիւս այլ երեւոյթների, դատապարտում են նաեւ հայոց ջարդերը⁴:

Արաբալեզու մամուլում այդ շարքը լրացնելու է գալիս *Ալ-Մուշիքը*⁵:


Երգիծական սեռը, յատկապէս քաղաքականը, կոչուած է իրականութեան արատաւոր ու մերժելի կողմերն աւելի զգացմունքային եւ պատկերաւոր արտայայտչամիջոցներով ներկայացնելու եւ դրանով իսկ այն մերժելու: Մեր ներկայացրած երգիծապատկերներում արատաւորն ու դատապարտելին Օսմանեան Կառավարութիւնն է եւ նրա արիւնարբու ղեկավարը, ընդ որում՝ երգիծապատկերներում գրեթէ բացակայում է երգիծական ժանրին բնորոշ գրոտեսկը՝ երեւոյթը խիստ չափանզգուած, սուր հակասութիւնների միջոցով ներկայացնելը. Աբդուլ Համիդի դէպքում դրա կարիքը բոլորովին չկար, իրականութիւնն ինքնին

չափազանց ազդու էր: Ինչ վերաբերում է երգիծապատկերների հեղինակներին, ցարք, նրանց անունները չեն յիշատակում:

Այ-Մուշիրը արդարացիորեն Օսմանեան Կայսրութեանը ներկայացրել է որպէս քաղաքակրթութեան զարգացմանը խոչընդոտող գործօն⁶:

Պատկերում երեւում է քաղաքակրթութիւնը, որը ցանկանում է երկրագունդը մաքրել աղտոտութիւնից: Նրան դա գրեթէ յաջողուել է, սակայն ամբողջովին սեւ մի հատուած կայ (Աբդուլ Համիդի կերպարանքով, դեմքի խղճուկ արտայայտութեամբ - Ն.Ե.), որը յամառում է: Յոգնած, վերջին ճիգերը գործադրող քաղաքակրթութիւնը դժգոհում է՝ ասելով. «արդէն ուժասպառ եմ երկրագունդը մաքրելով, մնացել է մի տարածք, որը յամառօրէն դիմադրում է ինձ»: Նրան պատասխանում է երկրագունդը՝ յորդորելով. «պէտք չէ զարմանալ, Նորին մեծութիւն քաղաքակրթութիւն, չէ՞ որ դա Օսմանեան Կայսրութիւնն է»:

Օսմանեան Թուրքիան, որի գոյութեան հիմքում դրուած էր բռնութիւնը, երկրում ծագած խնդիրները արեան մէջ խեղդելու քաղաքականութիւնը, դատապարտուած էր յետամնացութեան, որն իր բացասական ազդեցութիւնն է թողել նրա կազմում գտնուող ժողովուրդների քաղաքակրթական զարգացման բնականոն ընթացքի վրայ:



الدولة وكيف تتلاشى

մէջ՝ «Ինչպէս է Կործանուում Երկիրը» վերառաւորութեամբ երգիծապատկերում⁷:

Եւրոպական տէրութիւններին, որոնց քաղաքականութիւնն առանցքային նշականութիւն ունէր աշխարհում խաղաղութեան եւ անվտանգութեան պահպանման տեսանկիւնից, այդ կործանուող «հիւանդ մարդու» գոյութիւնն անհրաժէշտ էր՝ քաղաքական հաւասարակշռութիւնը



الدولة - قد قمت في تنظيف الارض من الادران الا بقعة واحدة استعصت علي العالم -- لا تستعري ابنا الدولة فبذره الدولة الثانية



علم القراءة وحرکيا

ظور لي من علم القراءة ان هذه الصورة احسن مثال لهذه الدولة الغائبة اما جسمها فخر ارضه لانه لا يوجد اناس من الاذن على شكله وبي الثقافت اوروبا على كيف يكون رسمته للعيان

պահպանելու նպատակով, մինչև համաձայնության կը գային կայսրությունը մասնատելու հարցում:

Ալ-Մուշիթում դա այլաբանօրէն արտացոլուած է Օսմանեան Թուրքիայի գլխի տեսքով՝ վերնագրուած «Ֆիզիոնոմիկան Եւ Օսմանեան Կայսրութիւնը»⁸:

Օսմանեան Պետութեան գաղափարական բովանդակութիւնը նկարի հեղինակը տեղադրել է թուրքական գլխում՝ մեծ եւ կենտրոնական մասնաբաժիններ յատկացնելով «բռնութեանը», «ընչաքաղցութեանը», «արինահեղութեանը», «լճացմանը», «բռնատիրութեանը», «ստին», «աւերածութիւններին», մինչդէռ «խիղճը», «հաւասարութիւնը», «սէրը», «հայրենասիրութիւնը», «խիզախութիւնը» եւ բազմաթիւ այլ դրական հասկացութիւններ փոքր մակերեսներով հազիւհազ տեղաւորուել են գլխի եզրագծերի մօտ, կարծես՝ ուր որ է դուրս են գալու:



Հեղինակի կարծիքով դա լուսագոյնս ներկայացնում է Օսմանեան Կայսրութեան գլուխը, իսկ ինչ վերաբերում է մարմնին, ապա նա ձեռնպահ է մնում այն նկարելուց, քանի որ դեռ եւրոպական տէրութիւնների միջեւ համաձայնութիւն գոյութիւն չունի դրա ձեւի շուրջ:

«Երկդէմ Թուրքիա»⁹ վերտառութեամբ երգիծապատկերում արդէն երեւում է այն Թուրքիան, որը ձգտում էր աշխարհից իր ներքին խնդիրները թաքցնել եւ ներկայանալ հօգրի կերպարանքով:

Օսմանեան Թուրքիայի դէմքն աբդուլհամիդական է՝ սեւ ու սպիտակ լոյսի ներքոյ: Հեղինակը բացայայտել է նրա դիքորոշումը՝ ասելով, որ Թուրքիան երկու դէմք ունի. մէկով նա ներկայանում է Եւրոպային՝ սպիտակամաշկ, ձեռքին ձիթէնու շիւղ, որը խորհրդանշում է խաղաղութիւն: Միւս դէմքով նրան տեսնում է Օսմանեան Կայսրութեան ժողովուրդը՝ սեւացած կերպարանքով, ձեռքին սուր է ճօճուում, թաթախուած՝ անմեղ զոհերի արեամբ:

Գաղտնիք չէ, որ սուլթանը ձգտում էր աշխարհից թաքցնել երկրի իրական վիճակը, ապատեղեկատուութիւն էր տարածում կայսերահպատակ քրիստոնէաների դրութեան վերաբերեալ՝ զսպաշապիկ հագցնելով ոչ միայն օսմանեան, այլեւ արտասահմանեան որոշ պարբերականների¹⁰:

Այդպիսի տեղեկատուութեան կարելի է հանդիպել նաեւ Եզիպտոսի արաբական մամուլի՝ օսմանեան պաշտօնական լրահոսի վրայ հիմնուող պարբերականներում: Դրանցում թերահաւատութիւն է արտայայտուում երկրում տիրող խռովութիւնների, կոտորածների

վերաբերեալ լուրերի իսկութեան մասին: Իսլամական *Ալ-Մուսլայա* յօդուածներից մէկում նշում է, որ Կ.Պոլիսը հանդարտ բազմել է Ոսփորի ասիին, այն ապրում է իր սովորական առօրեայով, եւ դժուար է հաւատալ պտտուող լուրերին¹¹:

Իսկ *Ալ-Մուշիքի* «Մեծ Վախ»¹² յօդուածում հակառակի ապացոյցն է. այնտեղ զետեղուած է սուլթանի հրամանը՝ օտարերկրեայ լրագրողների մուտքը երկրի խորքը, յատկապէս Հայկական Նահանգներ՝ արգելելու մասին:

Օսմանեան Կայսրութեան կործանման իրական ակունքներն առաջին հերթին դրա յետադիմական քաղաքականութեան մէջ էին: Ուժի ու բռնութեան սպառնալիքը երբեւէ խաղաղութեան երաշխիք չէր դառնալու: Հոգեվարքի մէջ գտնուող պետութիւնը փրկելու վերջին ճիգերը՝ Սահմանադրական Շարժումը, դրան ուղղորդող «նոր օսմանների», «երիտօրքերի» քաղաքական հայեցակարգերը, իզօրու չէին շօշափելի բարեփոխումներ կատարելու, քանի որ դրանց իրական նպատակը կայսրութեան միասնութեան պահպանումն էր ու համիսլամականութեան ամրապնդումը, յետագայում՝ թուրքականացումը: Այս գաղափարախօսութիւնները հակասում եւ անհամատեղելի էին երկրի կազմում գտնուող ժողովուրդների շահերին: Այդ ամէնը որեւէ կերպ չէր փոխում ազգային փոքրամասնութիւնների նկատմամբ կիրառուող հարստահարութիւններն ու իրաւական, հարկային քաղաքականութիւնը: Դրան զուգահեռ աճող ազգային գիտակցութեան զարթօնքի պայմաններում կուտակուած դժգոհութիւնը վերածուում էր պայթիւնավտանգ իրավիճակի՝ տարածուելով ամբողջ կայսրութիւնում:

Առաջին հերթին հանդէս գալով ի դէմս Մեծն Բրիտանիայի՝ եւրոպական երկրները Օսմանեան Կայսրութեանը սկսել էին վերաբերուել ոչ թէ որպէս առաջադիմութեան արգելակի, այլ ուժերի հաւասարակշռութիւնը պահպանելու անհրաժեշտ գործօնի, ուստի շեշտադրում էին ոչ թէ այն քայքայելու, այլ բարեփոխման ուղիներ գտնելու միտումները: Թուրքիան յաջողութեամբ կարողանում էր խուսանաւել՝ բազմաժ քաղաքական շահերի բախման կենտրոնում:

Մեծն Բրիտանիան առաջ էր քաշել Օսմանեան Կայսրութեան ամբողջականութիւնն ու անկախութիւնը յարգելու եւ պահպանելու խնդիրը՝ *ստատուս քօ* անուանմամբ, որն իրականում միանգամայն հակասում էր կայսրութեան քրիստոնէայ բնակչութեան շահերին եւ աւելի նպաստում պահպանելու օսմանեան բռնաճնշումները՝ կայսրութեան քրիստոնէայ հպատակների նկատմամբ:

Դա երեւում է *Ալ-Մուշիքի* հերթական երգիծապատկերում: Բրիտանիան խաղում է մի կողմում, Ռուսաստանը եւ Ֆրանսիան՝ միւս, Թուրքիան անսասան վայելում է կենտրոնական դիրքը, մինչեւ

հորիզոնում Հայաստանի երեւալը՝ սեւ հագուստով աղջկայ կերպարանքով, որը ողբում էր ու պատմում յեղափոխութիւնների, մեծ խնդիրների մասին: Բրիտանիան թողնում է իր խաղը՝ ընդամաջ գնալով բռնութեան ենթարկուած օրիորդին: Դրանից խախտում է հաւասարակշռութիւնը եւ Թուրքիան հզօր անկում է ապրում՝ վայր ընկնելով իր կենտրոնական դիրքից¹³:

Այս ամենի ակունքները սկիզբ էին առնում «Արեւելեան Հարց»ից, որը ձեւաւորուել էր Օսմանեան Կայսրութեան հետ եւրոպական տէրութիւնների եւ Ռուսաստանի դիւանագիտական յարաբերութիւնների արդիւնքում: Մեծ տէրութիւնները ձգտում էին օգտագործել թուրքական տիրապետութեան դէմ ճնշուած ժողովուրդների ազատագրական պայքարը եւ ռազմաքաղաքական ու տնտեսական առաւելութիւնների հասնել: Իսկ շարժառիթը կայսրութեան բռնապետական բնոյթը, նրա տիրապետութեան տակ դարեր շարունակ ճնշուած եւ կեղեքուած ժողովուրդների ազատագրական մաքառումներն էին: Եւրոպական դիւանագիտութիւնը կառչել էր այդ պայքարից՝



ان الدول العظمى الأوروبية تؤيد عرش السلطان عبد الحميد محاولة حفظ الأوتة - حرباً على أملاكها ونحوها من الحرب العموية بينا الدول الصغيرة والادارات التي لا مال لها تقوى عليه عند تركيا تحاول اشغال قبة الديمقراطية التي هي عبارة عن السلطة الشعبوية



ترکیا و اروپا

هوذا تركيا قد ملأت جوفاً حتى أصبحت لا تستطيع حركاً وفي معظمها غير خيرات الثورة في ولاياتها ولا تستطيع ذلك فاهتمت أوروبا على نقلها من فوق سكانها الثورة وكان اذا سقط هذا الجسم المائل من ايدي أوروبا كيف يكون مثابه لانه يقع على رؤوس السكان المذلة - حنا الله

թուրքահպատակ քրիստոնէաներին օգնելու պատրուակով փլուզում ապրող կայսրութիւնում արտօնեալ դիրքեր նուաճելու նպատակով:

Ինչպէս երեւում է երգիծանկարում¹⁴ եւրոպական տէրութիւնները ջանքեր են գործադրում հաւասարակշռութեան մէջ պահել սուլթանի գահը (պէտք է նկատել, որ դա կատարում են սրերի միջոցով), իսկ ներքեւում քրիստոնէայ ազգերը փորձում են վառել ռումբի պատրոյգը, որն Արեւելեան Հարցն է ներկայացնում: Նոյնաբնոյթ մէկ այլ դէպքում

շեշտադրում են ազգային-ազատագրական շարժումները: Այստեղ սուլթանն անելի վատ վիճակում է եւ առաւել դժուար է դարձել նրան օժանդակելը:

Այն վերնագրուած է «Թուրքիան Եւ Եւրոպան»¹⁵: Մուլթանը, որը չափազանց շատ է ծանրացել, ստիպուած է յաղթահարել կայսրութեան նահանգներում ծագած ապստամբութիւնների փորձութիւնը: Նա միայնակ չի կարողանում դա անել, Եւրոպան է նրան



بينما الكثير من الطرف الواحد وروسيا وفرنسا في الطرف الاخر يترقبون تركيا كانت في الوسط متمسكة بتركيا لا تتحرك شرقاً ولا غرباً، فمن حيث من جسد ثوري المولى واليوزر ومطارد الامور «سرف الكترا» تركيا كذا في ساعدة الملك الطورقة وهكذا تركيا المذبذبة ودمست تركيا من تركيا وكان معها حنا

փորձում անցկացնել՝ իր ուսերի վրայ տանելով: Եթե սուլթանը վայր ընկնի, կը խոցուի ներքեւում պատկերուած թրերով, որոնց վրայ գրուած են ազգային-ազատագրական պայքարի ելած երկրների անունները, դրանց թում՝ նաեւ Հայաստանը:

Օսմանեան Թուրքիայի ներքին քաղաքականութեանը միջամտելու արտաքին ձգտումների հարցում Ռուսաստանի գործօնը որոշիչ էր: Ոսփորին տիրելու եւ դէպի Դարդանէլ անցնելու ռուսական յաւակնութիւններն արգելելուն էր ուղղուած եւրոպական դիւանագիտութիւնը:

Բրիտանիայի կողմից Մերձաւոր Արեւելքում Օսմանեան Կայսրութիւնը որպէս եւրոպական հաւասարակշռութեան պահպանման գործօն դիտարկելու պարագայում Արեւմտեան Հայաստանը ձեռք էր բերել կարեւոր ռազմավարական նշանակութիւն՝ Փոքր Ասիայում եւ Բալկաններում Ռուսաստանի վերահսկողութիւն հաստատելը կանխելու ակնկալիքով:

Հայկական Հարցով Բրիտանիան առաւել լրջօրէն սկսեց զբաղուել 1877-1878՝ ռուս-թուրքական պատերազմից յետոյ, երբ Սան Ստեֆանոյի պայմանագրի բովանդակութիւնը չէր բաւարարում նրա շահերը, եւ անգլիական կառավարութիւնը մեծ ջանքերով պարտադրեց Ռուսաստանին՝ հրաժարուել իր յաղթանակի պտուղներից:

Անգլո-թուրքական գաղտնի «Պաշտպանողական Դաշինք Անգլիայի եւ Թուրքիայի Միջեւ» եւ ռուս-անգլիական դաշնագրերի կնքումից յետոյ միայն Անգլիան համաձայնեց մասնակցելու համաեւրոպական վեհաժողովին:



Բեռլինի Վեհաժողովում Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16րդ յօդուածը խմբագրուեց յօգուտ Բրիտանիայի շահերի եւ տեղ գտաւ պայմանագրի 61րդ յօդուածում, որտեղ արդէն ոչ մի յիշատակութիւն չկար Ասիական Թուրքիայում, նաեւ Արեւմտեան Հայաստանում ըստ թուրք-բրիտանական պայմանագրի Բրիտանիայի ստանձնած պարտաւորութիւններին: 61րդ յօդուածով Հայկական Հարցն Օսմանեան Կայսրութեան ներքին խնդիր լինելուց եւ Ռուսաստանի հովանաւորութեամբ լուծուելու հնարաւորութիւնից զրկուելով՝ վերածուեց միջազգային հարցի, որի համար պատասխանատուութիւն էին ստանձնում արդէն եւրոպական տերութիւնները՝ Բրիտանիայի գլխաւորութեամբ:

Տերութիւնների դիւանագիտութիւնն Օսմանեան Թուրքիայի նկատմամբ պատկերուել է հետեւեալ ձեւով: Երեք տերութիւնները կախադանի օղակն անցկացրել են Արդուլ Համիդի պարանոցին եւ սպառնում են նրան մահապատժով: Որոշիչ դերակատարութիւնը ստանձնել է Բրիտանիան, որը բռնել է պարանը՝ միւս ձեռքին պահելով մկրատը, որով կարող է ցանկացած պահի կտրել այն եւ կեանք պարգեւել Օսմանեան Թուրքիային: Սակայն պարանի ծայրը Ֆրանսիայի ձեռքին է, որն Բրիտանիայի կողքին է կանգնած եւ դիտում է, սակայն նրա միւս ձեռքին գաւազան է դրուած: Այս երեքին սաստում է ետեւում կանգնած Ռուսաստանը, որն ուշիուշով հետեւում է նրանց՝ իր գաւազանը ձեռքին¹⁶:

Հայկական Հարցը Բեռլինի Վեհաժողովից յետոյ Թուրքիայի վրայ ճնշում գործադրելու հիմնական լծակներից էր Եւրոպայի ձեռքին: Այն արծարծում էր հիմնականում Արեւմտեան Հայաստանում բարեփոխումներ իրականացնելու պահանջով:



ترکيا تحمل بضاعتها . والطلاب زائد لكن الثمن قليل . والبائع شكك « بالدين »

Թերթը չի մեղանչել ճշմարտութեան առաջ՝ Օսմանեան Կայսրութեան նկատմամբ տերութիւնների քաղաքականութիւնը դիտարկելով որպէս առեւտրային բանակցութիւններ: Լաւագոյնս արտայայտուած է անգլո-ռուսական մրցակցութիւնը՝ Հայկական Հարցի

շահարկումով՝ կայսրութիւնից նոր զիջումներ կորզելու ակնկալիքով: Երբ երկու քաղաքական հսկաները յայտարարում էին կայսրութեան քրիստոնէայ բնակչութեան շահերի պաշտպանը լինելու մասին, նրանք միեւնոյն ժամանակ շօշափելի արդիւնքների էին հասնում իրենց քաղաքական ձգտումներում: Քրիստոնէայ բնակչութիւնը շարունակում էր հալածանքների ու կոտորածների ենթարկուել, իսկ տերութիւնները ստանում էին իրենց ցանկացածը կայսրութիւնից, ճիշտ այնպէս՝ ինչպէս ներկայացուած է թերթում:

Թուրքիան տիրապետում էր որոշակի ապրանքների՝ տարածքների տեսքով: Դրանց պահանջարկը աստիճանաբար մեծանում էր, գինը՝ իջնում՝ վերածուելով պարզ ապրանքափոխանակութեան: Բրիտանիան Եգիպտոսն է քաշում, Ռուսաստանը՝ ասիական մասերը, Յունաստանը՝ Կրետէն, Ֆրանսիան ձգտում է մօտենալ Թունիսի կողմից: Յատկանշական է, որ Հայաստանը գտնուում է Բրիտանիայի եւ Ռուսաստանի թիկունքում՝ փաստօրէն ամրապնդելով վերջինների դիրքերը Փոքր Ասիայում եւ Եգիպտոսում:

Տարածքային գոհողությունների գնով ձեռք բերած յարաբերական ազատությունը սուլթանն օգտագործում էր իր տարբերակով՝ գործադրելով խնդրայարոյց ժողովրդին բնաջնջելու ծրագիրը:

Դա լաւ է երեւում «Գահին Բազմել Է Մարդասպանը»¹⁷ Գլադսթոնի բնութագրով¹⁸ վերնագրուած պատկերում: Թուրքական եաթաղանի հարուածից տապալուել է հայ կինը, եաթաղանի շէղբին գրուած է «բռնութիւն», իսկ միւս ձեռքին՝ «ինձանից յետոյ՝ թէկուզ ջրհեղէղ»: Նկարի հեղինակը նշել է, որ այդպէս է պատասխանել Գլադսթոնը *Armenia and its Sorrows* աշխատութեան հեղինակ Ու. Ջ. Ուինթլիին¹⁹:

Տէրութիւնների վարած քաղաքականութեան բացասական ազդեցութիւնը հայերի կոտորածների խնդրում պարբերականն այսպէս է պատկերացնում.



شفق الموت على ما يقامه الأرمين من الموت والقتل أبو يقول لاوريا أما ان ينتهي لهم باب الراحة والراحة واما ان الجيش تؤسهم جيباً (فان الموت احدى الراحتين)

Մահը պատրաստում է մտնել Հայաստան այն դրան միջով, որի բանալիները Եւրոպան է առաջարկում նրան²⁰:

Մեկնաբանուած է այսպէս.

«մահուան գուլթը շարժուեց, երբ տեսաւ,

թէ ինչ սպանդի եւ բռնութիւնների եւ ենթարկում հայերը: Նա Եւրոպային յորդորում է բացել հայերին դէպի հանգստութիւն եւ խաղաղութիւն տանող դուռը, այլապէս իր հետ կը տանի հայերին, քանի որ մահը նոյնպէս հանգիստ է նշանակում»:

1882ից, երբ Եգիպտոսում հաստատուեց բրիտանական գաղութարարութիւնը Եգիպտոսի պարբերական մամուլի վերաբերմունքը հայկական խնդրում եւ ընդհանրապէս ցանակացած քաղաքական իրադարձութեան նկատմամբ, սկսել էր որակապէս փոխուել:

Արդէն ձեւաորոտող ազգային գաղափարների ազդեցութիւնը կրող եգիպտական հասարակութեանը մտահոգում էր բրիտանական ներկայութիւնը, եւ այն հանդէս էր գալիս երկիրը բրիտանական զօրքերից ազատելու պահանջով:



السفاح الجالس على العرش
The assassin who sits on the throne
هي عبارة مأخوذة من جواب رسالة المستر غلاستون الى المستر ج. و. و. ويكيل مؤلف كتاب «مصائب ارمينيا»

Սակայն Բրիտանիան յապաղում էր դուրս գալ Եգիպտոսից եւ ձգտում էր երկարաձգել իր մնալու ժամանակը: Այդ խնդրով իր հերթին մտահոգուած էր նաեւ Ֆրանսիան:

Ծաղրանկարը, որը արտատպուած է *Քաշֆ Ան-Նիկար* թերթից, ցայտուն ձեւով է պատկերել հակամարտութիւնը:

Եգիպտական բուրգերի յետնախորքի վրայ պատկերուած բրիտանիացի զինուորի ուղեւորից արմատներ են աճել հողի մէջ. նրան դիմում է ֆրանսիացի զինուորականը՝ ասելով, որ Բրիտանիան պարտաւոր է հեռանալ Եգիպտոսից: Վերջինս պատասխանում է. «ինչպէ՞ս դա անել, եթէ իմ երկու ուղեւորն ել արդէն արմատակալել են Եգիպտոսի հողում»²¹:

Եգիպտոսի կորուստը մեծ հարուած էր Օսմանեան Կայսրութեան համար: Սուլթանը ձգտում էր սանձել Բրիտանիային՝ Ռուսաստանի հետ յարաբերութիւնները կարգաւորելու սպառնալիքով, իսկ Բրիտանիան՝ Հայկական Հարցի վերաբացումը շահարկելով, ձգտում էր զսպել Թուրքիային եւ ստիպել նրան հաշտուել իր՝ Եգիպտոսում հաստատուելու հետ:



بند ضغط قليل فوق هذا الضغط ترحق روح تركيا او يندى الى الصواب في آخر دولة من تقدم الخير الطبع ورد تقرب هذاب اليوم ان جلاة السلطان قبل شروط الدول بتمرس اصلاحات اريشيا فكان هذا الحزب حجة حسنة لموضوع الرسم المرفى ادلاء الذي صار جنداً والظاهر ان الضغط الموضوع على تركيا في الرسم ابرهما على القول قبل ان توثق في كلام في العدد القادم

Հայկական Հարցի եւ բրիտանիացիների կողմից Եգիպտոսը նուաճելու միջեւ եղած փոխկապակցութիւնը շատ լաւ է նկատել Գալուստ Գալոյեանը: Նա նշում է, որ նախապատրաստուելով Թուրքիային դուրս մղել Եգիպտոսից՝ բրիտանիական իշխանութիւնները շահագրոռուած էին եւրոպական տէրութիւնների եւ հասարակութեան հակակրանքը շահելու Թուրքիայի դէմ՝ դրանով իսկ մեկուսացնելով նրան:

Լաւագոյն առիթը սուլթանական կառավարութեան հայահալած քաղաքականութիւնն էր: Եւ այդ պարագայում Բրիտանիան հանդէս էր գալիս որպէս թուրքական բռնատիրական վարչակարգի քննադատ, քաղաքակիրթ հայ ժողովրդի շահերի պաշտպան: Եւ եթէ Բրիտանիան իրօք անկեղծ լինէր, հեղինակը ճիշտ է նկատել, որ հայ ժողովուրդը շատ բան կարող էր շահել²²:



في ١٨ الجاري اصدر السلطان اعادة سنية بتبني الاملاجات الاربعة التي وضعتها الدول الثلاث ومع في هذا الرسم قد فهدوا تركيا برجلها وعتابوا اوتوما في طريق الاملاحة على مجلاته وعين الى انقضاء الدول والاصناف والسوازة


Այդ շրջանում Բրիտանիան Ռուսաստանին սիրաշահելով էր զբաղուած, երբ խոստանում էր Թուրքիայի հաշուին մեծ զիջումների (այդ թւում՝ Հայաստանը նուիրաբերել) գնալ: Իսկ Ռուսաստանն իր հերթին հետեւում էր, թէ ինչով կ'աւարտուէին Եգիպտոսի գրաւումից յետոյ առաւել սուր բնոյթ ձեռք բերած անզլօ-թուրքական հակասութիւնները:

1890ականներին, չնայած Բրիտանիան շարունակում էր սպառնալ Արդուլ Համիդ Բ.ին, այնուամենայնիւ Բրիտանական Կառավարութեան

բողոքներն ու սպառնալիքները, հանրային կարծիքի ընդվզումները չկարողացան կանխել հայ բնակչության կոտորածները:

Մայիսեան բարենորոգումների ծրագիրը, որ երեք տերութիւնների կողմից ներկայացուել էր Աբդուլ Համիդին, կարելի է բնութագրել որպէս քաղաքական ճնշումների գագաթնակէտ:

Արդիւնքում, երբ միակարծիք հանդէս եկան երեք տերութիւնները, Աբդուլ Համիդի ոչ միայն պարանոցը, այլ նաեւ ոտքերն էին յայտնուել



مناذرة أكتوبر - فرنسا - بيب عليك يا اكلترا ان تصلي عن مصر - اكلترا - كيف العمل
ورجلای قد تأصلا فی ارضها

կապանքների մեջ (նկ. 13): Ռուսաստանը, Բրիտանիան եւ Ֆրանսիան ձգտում էին սուլթանին «բարենորոգումների ճանապարհով» հասցնել մինչեւ «արդարութեան», «հաւասարութեան», «արդարացիութեան» հանգրուան²³:

Սուլթանի մերժողական կեցուածքը եւ երկար ձգձգելուց յետոյ միայն դրա ընդունումը արժանացել են *Ալ-Մուշիրի* բացասական գնահատականին՝ ոչ միայն երգիծանկարներում, այլեւ բազմաթիւ յօդուածներում: Պարբերականի կարծիքով Բրիտանիան մեղմ էր վարում սուլթանի հետ՝ «միայն Թուրքիայի քիթը տրորելով»²⁴:



«Ճնշումը Փոքր-Ինչ Աւելացնելու Դէպքում Թուրքիան Շունչը Կը Փչի»²⁵ վերնագրուած պատկերում, ինչպէս երեւում է, հաւասարակշռութիւնը կշեռքի վրայ կարող է պահպանուել միայն Հայաստանի խնդիրը լուծելով, իսկ կշռաքարերից ամենկարեւորը Բրիտանիան է: Աբդուլ Համիդը գրեթէ շնչահեղձ է լինում ծանրութեան տակ:

Հեղինակը, որպէս յետգրութեան, տեղեկացնում է, որ թերթի այդ համարի տպագրումից առաջ հաւաստի հեռագիր է ստացուել սուլթանի կողմից տերութիւնների առաջարկած պայմաններն ընդունելու մասին:

Սուլթանը, սակայն, ձեւականօրէն ընդունելով պայմանները, չէր հրաժարուել իր ընտրած քաղաքական գծից. մի կողմից նա յայտարարում էր բարենորոգումներ իրականացնելու մասին, միւս կողմից շարունակում վերացնել բարեփոխումների անհրաժեշտութիւնը զգացող հայ բնակչութեանը:

Աբդուլ Համիդը նստած է կենտրոնում, հագուստին նկարուած են գանկեր, ոսկորներ, ձախ ձեռքով հեռագիր է ուղարկում բրիտանիացի

Մուգըրիին՝ երոպական տերութիւններին բարեփոխումներ խոստանալով, միեւնոյն ժամանակ աջով հեռագիր է ուղարկում դէպի Արեւելեան Վիլայէթներ՝ քրդերին եւ զինուորներին հրամայելով բնակչութեանը կոտորել:

Այս երգիծանկարում յստակ պատկերուած է նաեւ այն, որ իրականում օսմանեան պետութիւնը ղեկավարում էր միայն Աբդուլ Համիդի հրամաններով: Յայտնի է, որ նա յատկապէս հայերին առնչուող հարցերում անմիջականօրէն ինքն էր հեռագրերի միջոցով հրահանգներ արձակում նահանգների տեղական կառավարիչներին՝ շրջանցելով կառավարութեանը²⁶:

Ալ-Մուշիքի երգիծանկարների հեղինակների անունները, ցաօք, որեւէ տեղ չեն նշուած: Արտանկարուածների վրայ յղուած է իրական աղբիւրը:

Հարկ է շեշտադրել, որ երգիծանկարների մեծ մասը տեղադրուած են պարբերականի առաջին էջերում, ինչը վկայում է, թէ որքանով է պարբերականը կարեւորել խնդիրը:

Ալ-Մուշիքը իր գլխաւոր խնդիրն էր համարում հասարակութեանն առաւել սպառիչ եւ հասկանալի ձեւով ներկայացնել կայսրութիւնում տիրող իրավիճակը, ինչը պէտք է յաջողուած համարել, քանի որ թերթը երգիծապատկերների միջոցով կարողացել է արտացոլել իրականութիւնը, ինչպէս դա կատարել էր իր յօդուածներում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Հայկական հարցը դիտարկուել է «Եգիպտական Հարցի» հետ միեւնոյն հարթութեան վրայ՝ արժանանալով թերթի հաւասար ուշադրութեանը:

Ալ-Մուշիքն իր հրապարակած երգիծապատկերներում ճշմարիտ պատմական յենքի վրայ ներկայացրել է այնպիսի իրողութիւններ, ինչպիսիք են.-

- Օսմանեան Կայսրութեան գոյութիւնը՝ որպէս իր կազմում գտնուող ժողովուրդների քաղաքակրթական զարգացմանը խոչընդոտող գործօն:
- Օսմանեան Կայսրութեան քաղաքական դրութիւնը ԺԹ. դարի վերջին՝ ընդգծելով կայսրութիւնը դէպի կործանում տանող ներքին եւ արտաքին պատճառները:
- Հայկական Հարցը եւ Արեւմտեան Հայաստանում բարեփոխումների իրականացման խնդիրը՝ երոպական տերութիւնների եւ Օսմանեան Կայսրութեան քաղաքական առճակատումներում:
- Եւրոպական տերութիւնների վարած քաղաքականութիւնն Օսմանեան Կայսրութեան նկատմամբ Հայկական Հարցի

շահարկման միջոցով դրանից հնարաւոր քաղաքական զիջումներ կորզելու ակնկալիքով:

- Հայոց Ցեղասպանութեան առաջին փուլի իրականացման արդուլիամիդեան մեթոդները եւ հայերի զանգուածային կոտորածները Արեւմտեան Հայաստանում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ահմադ Ռիզան պարբերականի էջերում սուր ելոյթներով հանդես է գալիս հայկական կոտորածների դեմ, միաժամանակ նա եւ Խալիլ Ղանեմը վերստին կեանքի են կոչում օսմանական միասնական հայրենիքի հայեցակարգը՝ դեմ արտայայտուելով կայսրութեան տարածքում հայերին յատուկ կարգավիճակ շնորհելու գաղափարին, ինչպէս նաեւ մեծ տերութիւնների կողմից կայսրութեան ներքին գործերին միջամտելուն (Anatoliy Jelyakov, *Pechat' V Obshchestvenno-Politicheskoy I Kulturnoy Jizni Turtsii* (Տպագրութիւնը Թուրքիայի հասարակական-քաղաքական եւ մշակութային կեանքում), Մոսկուա, Նաուկա, 1972, էջ 249-254:
- ² Արեւմտեան Հայաստանը պարբերականում յիշատակուում է «Արմինիա» կամ «Թուրքական Արմինիա» անուանումներով:
- ³ Պէտք է ասել, որ երգիծանքն արդէն իր հաստատուն տեղն էր գրաւել արաբական մամուլում՝ այլ ժանրային արտայայտչամիջոցների կողքին: Առաջին արաբերէն երգիծաթերթը *Արու Նազարաթ Ալ Ջարթա* (Կապոյտ ակնոցատրը), հիմնադրուել է 1877ին, Փարիզում, Եակուբ Սաննուի կողմից (էջ 283-284, 1913, *المطبعة الأدبية, بيروت الجزء الثاني, تاريخ الصحافة العربية, دى طرازي, الفيكونت فيليب*)
- ⁴ Տե՛ս՝ Արծուի Բախչինեան, *Հայութիւնը Սկանդինաւեան Երկրներում. Հայ-Սկանդինաւեան Պատմամշակութային Առնչութիւնները (Սկզբից Մինչեւ Մեր Օրերը)*, Երեւան, ՀՀ ԳԱԱ ՊԲ, 2010, էջ 151:
- ⁵ Որոշ երգիծապատկերներ հրապարակուել են նաեւ *Քաշֆ Ալ Նիքաբ* (Քօղազերծում) երգիծաթերթում, որը հիմնադրել էր Ամին Արսլանը: Նա եւ *Ալ-Մուշիքի* խմբագիրը գաղափարակիցներ եւ սերտ գործակիցներ էին:
- ⁶ *Ալ-Մուշիք*, 17 Օգոստոս 1895:
- ⁷ Նոյն, 26 Յուլիս 1895:
- ⁸ Նոյն, 23 Նոյեմբեր 1895:
- ⁹ Նոյն, 7 Դեկտեմբեր 1895:
- ¹⁰ Օսմանեան գրաքննութիւնը պայքարի որոշակի ձեւ էր մշակել, որտեղ կաշառքը եւ պետական գումարների յատկացումները քիչ տեղ չէին զբաղեցնում: Պէտք է ասել, որ ինչպէս Օսմանեան Կայսրութեան տարածքում, այնպէս էլ բուն Եւրոպայում լոյս տեսնող եւրոպական լեզուներով պարբերականները եւս գնում եւ վաճառում էին համիդեան գործելակերպին: Թուրքասէր պարբերականների մի ամբողջ ցանց էր ստեղծուած Եւրոպայում: Դէպի արտասահման առատօրէն հոսում էին նուէրներն ու պարգէւները, որոնք բաւական արդիւնաւէտ էին (Ալբերտ Խառատեան, *Արեւմտահայ Պարբերական Մամուլը Եւ Գրաքննութիւնը Օսմանեան Թուրքիայում (1857-1908)*, Երեւան, ԳԱ Հրատ., 1989, էջ 8):

-
- ¹¹ *Ալ-Մուսայյադ*, 13 Օգոստոս 1896:
¹² *Ալ-Մուշիբ*, 7 Փետրուար 1895:
¹³ Նոյն, 21 Օգոստոս 1895:
¹⁴ Նոյն, 8 Մայիս 1897:
¹⁵ Նոյն, 10 Յունիս 1897:
¹⁶ Նոյն, 16 Նոյեմբեր 1895:
¹⁷ Նոյն, 26 Սեպտեմբեր 1896:
¹⁸ *The New York Times*, 12.09.1896:
¹⁹ W. J. Wintle, *Armenia and its Sorrows*, 3rd edition, London: Andrew Melrose, 1896, էջ 119:
²⁰ Նոյն, 2 Հոկտեմբեր 1896:
²¹ *Ալ-Մուշիբ*, 5 Հոկտեմբեր 1896:
²² Գալուստ Գալոյեան, *Հայաստանը Մեծ Տէրութիւնների Աշխարհակալական Առճակատումներում (XVI Դարից 1917 թ.)*, Երևան, Գիտութիւն, 2004, էջ 393-394:
²³ *Ալ-Մուշիբ*, 19 Հոկտեմբեր 1895:
²⁴ Նոյն, «Հայկական Հարց», 7 Փետրուար 1895:
²⁵ Նոյն, 4 Սեպտեմբեր 1895:
²⁶ *Հայոց Պատմութիւն, Հտր. Գ. Առաջին (XVII Դարի Երկրորդ Կես- XIX Դարի Կերջ)*, Երևան, Զանգակ-97, 2010, էջ 507:

THE ARMENIAN QUESTION THROUGH THE CARICATURES OF THE
EGYPTIAN PERIODICAL *AL-MUSHEER* (LATE-19th Century)
(SUMMARY)

NARINE YERANOSYAN
anara20072007@yandex.ru

The periodical *Al-Musheer*, issued in Egypt by young Turkish emigrants, highlighted the policy of both the Ottoman Empire and the European Powers concerning the Armenian question through articles and caricatures.

Al-Musheer presented caricatures based on historical facts. Specifically the paper underlined:

1. The obstructive role of the Ottoman Empire with regard to the development of the civilized societies within the empire;
2. The political situation of the Ottoman Empire at the close of the 19th century, exposing both the internal and external factors which were leading the empire to its destruction;
3. The Armenian Question and the issue of applying reforms in Western Armenia, and the ongoing bargains between the European Powers and Ottoman Empire;
4. The policy of the European Powers vis-a-vis the Ottoman Empire in getting concessions by instigating/promoting the Armenian Question;
5. The mass killings of Armenians in Western Armenia by the orders of the Sultan Abdul Hamid.

1912-14Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ ԵՒ

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. ՊԱԼԱՔԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԷՈՐԳ Է. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՆԱՐԵԿ ՅԱԿՈԲԵԱՆ
narhak1991@gmail.com

Հայկական Հարցը հայոց պատմության ամենաքաղաքականացած, ամենազգացմունքային եւ գիտական հրատապ ուսումնասիրություն պահանջող հիմնախնդիրն է: Նրա իրաքանչիւր ընկալում առաջադրել եւ առաջադրում է բախումնային դիտանկիւններ: Յարդ կատարուած զանազան հետազոտութիւններն իրենց աղբիւրագիտական եւ տեսական հարցադրումներով լրացնում, հարստացնում եւ առաջ են տանում այս հիմնախնդրի ուսումնասիրութիւնը:

Այս հրապարակումը նպատակ ունի աղբիւրագիտական վերլուծութեան միջոցով Էջմիածնի Կաթողիկոսական Դիւանի Արխիւային Ֆոնդի հաւաքածուից ցուցանել կարեւոր մի փաստաթուղթ, որը կարող է յաւելեալ լոյս սփռել Հայկական Հարցի պատմութեան վրայ, իմաստաւորել կամ վերաիմաստաւորել որեւէ շրջափուլ: Մեր նպատակն է նաեւ աղբիւրագիտական համադրութեան մեթոդով պարզել, թէ ինչպիսի՛ դերակատարում ունէր Հայ Առաքելական Եկեղեցին Հայկական Հարցի ճակատագրում՝ տուեալ ժամանակահատուածում, ինչպիսի՛ն էին Եկեղեցու տեսական մտեցումներն ու տեւականը՝ Հայկական Հարցի լուծման վերաբերեալ, ինչպիսի՛ գործնական քայլերի են դիմել Եկեղեցու հայրերը քաղաքական խառնակ ժամանակահատուածում:

Ընդունուած տեսակէտի համաձայն, Հայկական Հարցը հայ ժողովրդի քաղաքական պատմութեան խնդիրների այն ամբողջութիւնն է, որը կապուած է հայ ժողովրդի համախմբման, Հայկական Լեռնաշխարհում հայկական պետականութեան վերականգնման եւ այդ նպատակներին հասնելու համար մղուած հայ ազգային-ազատագրական պայքարի, իր բնօրրանում ազգային համախմբման ձգտման հետ¹:

Հայկական Հարցի պատմութեան մէջ կարեւոր փուլ է 1912-14 հանգրուանը: 1912-14՝ բալկանեան ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի հետեւանքով նոր հարուած հասցուեց թուրքական բռնատիրութեանը, եւ Հայկական Հարցը դարձեալ դարձաւ մեծ տերութիւնների եւ Օսմանեան Թուրքիայի միջեւ բանակցութիւնների նիւթ: Արեւմտեան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու համար սկսուեց երկար քաջքշուք, որը շարունակուեց մինչեւ Առաջին Աշխարհամարտի սկիզբը:

Կաթողիկոսական դիւանի արխիւային հաւաքածուն հարուստ է նշեալ ժամանակաշրջանի փաստաթղթերով, որոնք հիմնականում նամակներ են՝ բնագիր եւ պատճէն, որոնց մեծ մասը հրատարակուած չէ:

Ստորեւ հրատարակում ենք ժամանակի ականաւոր հոգեւոր գործիչներից Գրիգորիս վարդապետ Պալաքեանի², 1912 Հոկտեմբեր-Նոյեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ին յղած ցարդ անտիպ նամակը Հայկական Հարցի վերաբացման առիթով³:

Ներկայացուող նամակում Պալաքեանը անդրադարձ է կատարում Օսմանեան Կայսրութեան հայաբնակ գաւառների վիճակին, ինչպէս նաեւ արեւմտահայ շրջանակներում տիրող տրամադրութիւններին: Այն սկսում է բաւականին յուզական տողերով. վարդապետը, գիտակցելով իրավիճակի ամբողջ լրջութիւնը, գրում է. «*Եթէ օգտուիլ չցիտնանք ներկայացած այս բացարկի պատեհութենէն, իրաւամբ պիտի ենթարկենք զմեզ ապագայ հայ սերունդներու դատին, դատաստանին եւ անէծքին*»⁴: Այնուհետեւ, անցում կատարելով քաղաքական իրավիճակին նշում է, որ թուրքահայերի վիճակի բարեկարգման գործը ամբողջութամբ վերապահում է Ամենայն Հայոց ազգընտիր Կաթողիկոսին⁵: Սա նշանակում էր, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ստանձնելով Հայկական Հարցի վերաբացման պատասխանատուութիւնը, գլխաւոր հարցի լուծման համար սկսուելիք գործընթացում, իր աչքի առջեւ ունենալով արեւմտահայութեան վիճակի պատկերը, պետք է ունենար յստակ ռազմավարութիւն:

Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցող վայրագութիւնները լայնօրէն իրենց արձագանգն էին գտնում հայկական պարբերականների էջերում: Ընդհանուր միտումը եւ տիրապետող կարծիքն այն էր, որ պետք էր դիմել օտար երկրների միջամտութեանը՝ Արեւմտեան Հայաստանում որոշակի փոփոխութեան հասնելու համար: *Արարատը՝* անդրադարձ կատարելով արեւմտահայութեան վիճակին գրում է. «*այդպիսի պետութեան խօսք հասկացնել կարող է միմիայն ուժը - արտաքին զօրեղ եւ վճռական միջամտութիւնը*»⁶: Պալաքեանը, տեսնելով բալկանեան ժողովուրդների պայքարի արդիւնքը, նամակում գրում է. «*մեր փրկութեան միակ յոյսը Թուրքիոյ դրացի Ռուսական մեծագոր կայսրութիւնը կրնայ լինել քանի որ Թուրքիոյ ազատագրուած բոլոր ժողովուրդները եւ ազգերը շնորհիւ Ռուսիոյ կայսրներու ազատագրուած են*»⁷: Վարդապետն այլեւս տեղեկութիւններ չի տրամադրում յետագայ քայլերի եւ ծրագրերի մասին, նշելով. «*մանրամասնութեանց չպիտի կրնամ մտնել թողլոթին ասկէ աւելին չվստահելով*»⁸:

Նամակը բաւականին հարուստ է արժեքաւոր տեղեկութիւններով: Պէտք է նկատել, որ Ապահովութեան Յանձնաժողովը տեսնելով արեւմտահայերի օրէցօր վատթարացող դրութիւնը եւ այն, որ կուսակցութիւնները այլեւս ունակ չէին իրենց մասնատուածութեամբ եւ

կուսակցական շահից այն կողմ ոչինչ չտեսնելով որեւէ էական խնդիր լուծել, դիմում է կաթողիկոսին, որպէսզի վերջինս իր ձեռքը վերցնի Հայկական Հարցի վերաբացման պատասխանատուութիւնը:

Մեր կարծիքով, պատմական տուեալ պահին Ապահովութեան Յանձնաժողովի որոշումը ճիշտ քայլ էր, քանի որ հայոց հարցի յաջող լուծման գրաւականներից մէկը համարում էր հայ յեղափոխական կուսակցութիւնների մեկուսացումը ներկայ դիւանագիտական գործընթացներից, նրանց միջամտութեան բացառումը, քանի որ պետք էր թողնել, որ հայ ժողովուրդը ի նքր հանդէս գայ իր համաժողովրդական եւ ոչ թէ կուսակցական բողոքներով⁹:

Պէտք է նշել, որ դեռեւս 1910ին Հայ Առաքելական Եկեղեցին արգելում է եկեղեցիներում հաւաքներ եւ հանդիպումներ կազմակերպել¹⁰:

Աչքի առաջ ունենալով կուսակցութիւնների անյաջող գործողութիւնների հետեւանքով ժողովրդի էլ աւելի ծանրացած վիճակը եւ Պօղոս Նուպարի¹¹ հանդիպումը Ֆրանսիայի վարչապետ Պուանկարէի¹² հետ, երբ վեջինս նոյնպէս խորհուրդ էր տուել հայկական բարենորոգումների խնդրի լուծումը կապել Ռուսաստանի հետ¹³, Գեորգ Ե. Կաթողիկոսը որդեգրեց Ռուսական կողմնորոշում:

Հրատարակուող նամակում կատարել ենք որոշ ուղղագրական շտկումներ:

23 Հոկտեմբերի/6 Նոյեմբերի 1912թ.

Կ. Պոլիս

Նորին Ս. Օծութիւն Ս. Տ. Գեորգ Սրբազնագոյն կաթողիկոս
Ամենայն Հայոց ի Մայր Աթոռ
Ս. Էջմիածին

Վեհափառ Ս. Հայրապետ

Ապաքեն, կ'ապրինք պատմական հազուադէպ այնպիսի օրերու մէջ, որ դարեր միայն կը ծնին, եւ եթէ օգտուիլ չգիտնանք ներկայացած այս բացառիկ պատեհութենէն, իրաւամբ պիտի ենթարկենք զմեզ ապագայ հայ սերունդներու դատին, դատաստանին եւ անէծքին:

Ստուգիւ յոյժ մխիթարական է, որ ընդհանրական Ս. Հովուապետոյ լրութեան ազգիս առձեռն ամէն միջոց ի գործ կը դնէք դարման մը տանելու համար թուրքաբնակ բազմաչարչար եւ տառապեալ հօտիդ, որ շատ լալէն, ցամքեցաւ արցունքը աչքերուն մէջ, եւ շարունակաբար կոտորուելէն ու ջարդուելէն, ցամքեցաւ այլեւս արիւնը երակներուն մէջ ու այժմ իւր արիւնոտ աչքերը յառած է ողջոյն հայութեան լուսատու մայրն ի Ս. Էջմիածին, ուր ամէն ոք կռահած է, թէ բաներ կը դառնան:

Թուրքիաբնակ հայ ամբողջ ժողովուրդը անհունս երախտապարտ է, որ Ձեր Վեհափառությունը ստանձնած է գործին նախաձեռնությունը¹⁴, որովհետև ի դեպ է յիշել, թե ոչ թե դժուար է, այլ բացարձակապես անհնար է Ազգ. Պատրիարքարանիս յայտնի կերպով գործին մեջ մխրճուիլ, որ կրնայ ոչ միայն օգտակար չըլլալ, այլև աղետաբեր հետեւանքներ ունենալ, որուն դառն փորձերն անցեալին մէջ մէկէ աւելի կան ու կը մնան:

Ահա այս հրամայողական շարժառիթներով Ամեն Ս. Պատրիարքը Կեդ. Վարչութենէն բխած Ապահովութեան Յանձնաժողովը¹⁵ որուն իբր անդամ կը վարեմ նաև ամբողջ թղթակցութիւնը, այսպէս գծած է իր գործունէութեան ուղղութիւնը, որ Ազգ. Պատրիարքարանս իր բարօք պաշտօնական յարաբերութիւնը շարունակելով հանդերձ (օսմ. կառավարութեան հետ) թուրքահայ ժողովուրդի վիճակին արմատական բարելաման գործին նախաձեռնությունը թողու Ամենայն Հայոց ազգընտիր Սրբազան Հայրապետիդ, որպէս զի մի արասցէ գործին անյաջողութեան պարագային, պատրիարքարանը նահանջի ճամբայ մը ունեցած լինի՝ Թուրքահայը ազատ պահելով ձախորդութեան հաւանական հետեւանքներէն: Այս ուղղութիւնը ցոյց տուած ենք նաև արտասահմանեան հայ գաղութներուն: Փարիզի, Լոնտոնի, Նիւ-Եորքի, Մոֆիայի հայ գաղութներէ պաշտօնապէս եղած դիմումներուն պատասխան ու հրահանգ տրուած է ուղղակի դիմել Ձեր Վեհափառութեան ի Ս. Էջմիածին: Գործնական ապացոյցը տալու համար որոնց որ անկ է, թէ Ազգիս Ս. Հայրապետը ինքնագլուխ չէ, որ իր դիմումները կը կատարէ, այլ ամբողջ Հայ Ազգը իւր հատուածներով ըլլան ի Թուրքիա, Պուլկարիա, Ռումանիա, Ֆրանսա, Անգլիա, Ամերիկա եւ ի սփիւռս աշխարհի, իրենց սիրեցեալ Հայրապետի հետ են, որ միշտ իրաւունք ունի իբր ազգընտիր հովուապետ լրութեան ազգիս, յանուն ազգի խօսելու, դիմելու, խնդրելու եւ պահանջելու, եւ թէ Ազգ. Պատրիարքարանս, նոյնիսկ եթէ բռնադատեն անհատ է եւ անկարող է Դատաւոր Հայրապետական իրաւանց եւ իրաւասութեանց դէմ ծառանալ:

Միբելի է յուսալ, թէ այս ուղղութիւնը օգտակար եւ հաճելի կը թուի նաև Վեհափառ Հայրապետիդ:

Ազգիս մէջ, թէ արտասահմանի եւ թէ կեդրոնիս մէջ, ընդհանուր համոզումը սա է, թէ անցեալ այնքան արիւնտ դառն փորձերէ վերջ, ի զուր է հաւատալ Օսմ. Կառավարութեան բարեկարգութեան խոստումներուն¹⁶ եւ մանաւանդ հայոց վիճակը հինապէս բարելաւելու անկարող է (եթէ անկեղծօրէն փափագի իսկ), քանի որ կազմակերպչական արժանիք չունի եւ աւելի լաւ կը համարի իր երկիրները մէկիկ մէկիկ ձեռքէ հանել, քան բարեկարգել: Հետեւապէս պատմական եւ ներկայ դէպքերու համոզիչ այսքան ապացոյցներէն վերջ ընդհանուր փափագը սա է, թէ մեր փրկութեան միակ յոյսը Թուրքիոյ

դրացի Ռուսական մեծագոր կայսրութիւնը կրնայ լինել, քանի որ Թուրքիոյ ազատագրուած բոլոր ժողովուրդները եւ ազգերը շնորհիւ Ռուսիոյ կայսրներու ազատագրուած են, եւ մենք՝ հայերս ալ այժմ բոլորովին տարբեր ճակատագիր եւ բախտ ունեցած պիտի լինէինք, եթէ Պերլինի վեհաժողովով Սան-Սթեֆանոյի դաշնագրութիւնը չայլափոխուէր¹⁷, ուր Ռուս. կառավարութիւնը շատ գործնական կերպով՝ Հայոց վիճակին բարելաւութիւնը ստանձնած էր, մինչեւ այդ իր յաղթական բանակները ի Կարին պահելու պայմանով¹⁸:

Ս. Պատրիարքի հետ ծայր աստիճան գաղտնապահութեամբ գործող մարմինս ալ այս ուղղութեամբ արդէն կը գործէ, եւ այս մտօք եւս գաղտնի դիմումներ եղան մայրաքաղաքիս Ռուս դեսպան Պարոն Կիրսի¹⁹, որ իր կարգին հաղորդեց ի Բեդերպուրգ:

Ռուս պետութեան պաշտպանութեան դիմելու թելադրութիւն կ'ըլլայ ամէն ազգային եւ օտար շրջանակներէ եւ նոյն մտօք թելադրութիւն ըրած է նաեւ պարոն նախարարապետն Ֆրանսայի Փուանքառէն, Վսեմաշուք Պօղոս Փաշա Նուպարի հետ ունեցած քաղաքական մէկ տեսակցութեանը միջոցին:

Կը ցաւիմ, որ ասկէ աւելի մանրամասնութեանց չպիտի կրնամ մտնել թուղթին ասկէ աւելին չվստահելով, եւ եթէ այսքանն ըրի, պարտականութիւն համարեցի Վեհափառ Հայրապետիդ վաւերական տեղեկութիւններ հաղորդել մեր կողմերու իրադարձութեանց մասին՝ խնդրելով, որ խորհրդապահաբար գրուած այս նամակը միայն Ձեր Վեհափառութեան ուշադրութեան արժանանայ, որպէսզի հնար լինի ինձ, ըստ Ձեր Ս. Օծութեան փափագանաց եւ խոստմանս, մերթ տեղեկութիւն հաղորդել, միշտ խորհրդապահաբար, անշուշտ:

Եւ որպէսզի Ս. Պատրիարքը եւ ապահովութեան յանձնաժողովս կարենանք անվերապահ կերպով ամէն մեր խորհուրդներուս եւ իրադարձութեանց իրազեկ ընել Ձեր Վեհափառութիւնն, արժան դատեցինք ի Ս. Էջմիածին փութացնել հարկ եղած յանձնարարական-պաշտօնագրով՝ յանձնաժողովիս անդամներէն Ազն. Սարգիս Էֆ. Սուին²⁰, որմէ պիտի կրնայ ստանալ Վեհափառութիւնդ պահանջուած ամէն տեղեկութիւն եւ գործին մանրամասնութիւնը, ինչպէս եւ անվերապահ կերպով կրնայ անհրաժեշտ դատուած իրողութիւնները, կամ ցարդ ի Բեդերպուրգ կատարուած բանակցութիւնները հաղորդել յիշեալին:

Պաշտօնական թուղթերը պատրաստուելու վրայ են, որով յուսալի է, որ առ առաւելն 5 օրէն մեկնի մայրաքաղաքէս:

Ձեր Ս. Օծութեան պահանջած տոքումանները²¹ եւս արդէն տպագրուած լինելով Սուին Էֆենտիի հետ կը յղենք ի Մայր Աթոռ:

Մաղթելով, որ Աստուած հարցն մերոց, զօրավիզ լինի քաջարթուն հովուապետիդ եւ արդիւնաւէտ ընծայէ յանուն իւր չարչարուած եւ

բիրիցս դժբախտ հօտին, փրկութեան համար տարած Իւր Հայրական ջանքերն, մատչիմ ի համբոյր հայրապետական սրբազնած Աջոյն Վեհափառութեանդ:

Մնամ ամենախոնարհ որդի՝ Գ. Վարդ. Պալաքեան
23/6 Նոյեմբեր 1912

Կ. Պոլիս

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Արման Կիրակոսեան, *Ակնարկներ Հայկական Հարցի Եւ Եղեռնի Միջազգային Ճանաչման*, Երեւան, Տիգրան Մեծ, 2006, էջ 5:
- ² Գրիգորիոս Պալաքեանը (1879-1934) ծնունդ է Եւրոկիայում (Թոքթաթ): Նախակրթութիւնը ծննդավայրում ստանալուց յետոյ, կրթութիւնը շարունակում է Կարնոյ Սանասարեան Վարժարանում, ապա մեկնում Գերմանիա եւ Բեռլինի Համալսարանում սովորում է աստուածաբանութիւն եւ փիլիսոփայութիւն: 1915ին ի թիւս հարիւրաւոր այլ մտաւորականների, աքաղարկել է Չանկըրը: Մի կերպ ազատուելով սպանդից՝ վերադարձել է Կ. Պոլիս: 1919ին մեկնում է Երոպա, ընտրում Մարսելի ապա Մանչեսթըրի հոգեւոր առաջնորդ:
- ³ Բնագիրը տե՛ս՝ Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան Արխիւային Ֆոնդ, Թղթապանակ 238, փաստաթուղթ 64:
- ⁴ Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան, թղթ. 238, գ. 64, էջ 1:
- ⁵ Նոյն, էջ 2:
- ⁶ Գ. Ալթունեան, «Թիրքահայաստանի Նոր Ճգնաժամը» *Արարատ*, Սեպտեմբեր, 1912, էջ 798:
- ⁷ Տե՛ս՝ Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան, թղթ. 238, վաւ. 64, էջ 4:
- ⁸ Նոյն:
- ⁹ Հրաչիկ Միմոնեան, *Ազատագրական Պայքարի Ուղիներում*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2013:
- ¹⁰ Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 17:
- ¹¹ Պօղոս Նուպար Փաշա (1851-1930), հայ քաղաքական գործիչ:
- ¹² Ռեմոն Պուանկարե (1860-1934), ֆրանսիացի պետական գործիչ:
- ¹³ Տե՛ս՝ Մատենադարան, Կաթողիկոսական Դիւան, թղթ. 238, վ. 64, էջ 5:
- ¹⁴ Կ. Պոլսի Հայոց Պատրիարքութեան հասցեով տեղում էր հեռագրերի, նամակների, հանրագրերի անկասելի հոսք. դրանց հեղինակները պատրիարքից պահանջում էին դիմել Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ինդրել, որ նա ստանձնի Հայկական Հարցի վերաբացման պատասխանատուութիւնն ու գլխաւոր հարցի լուծման համար սկսուելիք գործընթացը:
- ¹⁵ 1912 Դեկտեմբերի 21ին Կ. Պոլսի Հայոց Ազգային Ժողովը որոշում է Հայկական Հարցը բարձրացնել Լոնդոնում հրաւիրուելիք դեսպանների համաժողովում, որը պետք է քննարկէր Բալկանեան Առաջին Պատերազմի հարցը: Ժողովն ընտրում է Ապահովութեան Յանձնաժողով, որի կազմի մէջ մտնում էին Յովհաննէս Արշարունին (նախագահ), Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեանը, Գրիգորիոս վարդապետ Պալաքեանը, Գնէլ վարդապետ Գալամբերեանը,

Ազգային Վարչութեան նախագահ Ստեփան Գարայեանը, Օսկան Մարտիկեանը, Վահան Փափազեանը, ուսուցչապետ Տէր-Յակոբեանը: Ապահովութեան յանձնաժողովի գործունէութիւնը բարենորոգումների ծրագրի մշակումն էր, որը պէտք է բաց քննարկուէր եւրոպական տէրութիւնների ներկայացուցիչների հետ բանակցութիւնների անցկացման ժամանակ: Յանձնաժողովի հրատարակած նիւթերն ու տեղեկութիւնները նպատակ ունէին ներկայացնել իրերի փաստական դրութիւնը Արեւմտեան Հայաստանում, պարզաբանել թուրքահայերի կարիքները եւ դրանց բաւարարման միջոցները: Յանձնաժողովի աշխատանքը եւ գոյութիւնը պէտք է հնարաւորինս գաղտնի լինէր: Այն բանից յետոյ երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացրէր Հայկական Հարցը՝ դիմելով ռուսական իշխանութիւններին եւ դրանով զբաղուէլու պատասխանատուութիւնը վերցրէր իր վրայ, Ազգային Խորհուրդը ստացաւ հնարաւորութիւն միջազգային մակարդակով ձեւականօրէն դուրս մնալու այդ խնդրագրում պաշտօնական մասնակցութիւն ունենալուց: Սակայն այն, հասկանալի պատճառներով, խուսափելով բացայայտ գործունէութիւնից միեւնոյն ժամանակ անհրաժեշտ էր համարում տեղեկանալ, ջջակցել եւ կաթողիկոսին օգնել միջազգային ուժերին դիմելու հարցում: Այդ նպատակով էլ կազմաւորուէր վերոնշեալ Ապահովութեան Յանձնաժողովը, որի պարտքն էր ամէն բան անել ըստ հայ եկեղեցու հետ եղած պայամանաւորութեան եւ ցուցաբերել աջակցութիւն անհրաժեշտ նիւթերը, վկայութիւնները եւ նկատառումները հասանելի դարձնելու հարցում:

- ¹⁶ Սան Ստեֆանոյի Պայմանագրի (19 Փետրուարի 1878) 16րդ յօդուածով Բարձր Դուռը պատրաստում էր բարեփոխումներ անցկացնել հայաբնակ վայրերում, սակայն մինչեւ 1912 ոչ մի էական բարեփոխում տեղի չունէցաւ:
- ¹⁷ Հայկական Հարցն առաջին անգամ իր արտայայտութիւնը գտաւ Սան Ստեֆանոյի Պայմանագրում, որի 16րդ յօդուածով, Թուրքիան պէտք է բարեփոխումներ անցկացնէր հայաբնակ վայրերում, սակայն Մեծ Բրիտանիայի եւ Աւստրո-Հունգարիայի ճնշմամբ 1878 Յունիսի 1ին Բեռլինում հրաւիրուէր համաժողով, որտեղ ընդունուէր Սան Ստեֆանոյի Պայմանագրի 16րդ յօդուածի անգլիական խմբագրումը, որը կազմէր Բեռլինի Դաշնագրի 61րդ յօդուածը, ըստ որի Բարձր Դուռը պարտաւորում է բարենորոգումներ իրականացնել հայաբնակ մարզերում եւ ապահովել հայերի անվտանգութիւնը քրդերից եւ չէրքէզներից: Բարձր Դուռը տէրութիւններին պարբերաբար կը հաղորդի այն միջոցների մասին որոնք ինքը ձեռք է առել, իսկ տէրութիւնները կը հսկէն դրանց կիրառմանը: Այսպիսով՝ հայերին հետաքրքրող խնդիրների լուծումը վերցուէր Ռուսաստանից եւ յանձնուէր եւրոպական տէրութիւնների տնօրինութեանը:
- ¹⁸ Ռուս-թուրքական պատերազմում ռուսական զօրքերը 1877 Նոյեմբերի 6ին գրաւէցին Կարսը: Կարսի գրաւումից արդէն պարզ էր, որ ռուսական բանակը Կովկասեան ճակատում յաղթանակի է հասել, որից յետոյ առանց մարտերի գրաւէր Ադրիանապոլիսը եւ Կարինը (Էրզրում): 1878 Փետրուարին ռուսական զօրքերն առանց դիմադրութեան մտան Էրզրում:
- ¹⁹ Միխայիլ Կիրս (Գիրս, 1856-1932), ռուս դիւանագէտ:

²⁰ Սարգիս Սուխին (Սիւնկիւճեան), Պոլսի Ազգային Վարչութեան քարտուղար:

²¹ Ֆրանսերէն document՝ փաստաթուղթ:

FATHER GRIGORIS BALAKIAN'S LETTER TO
THE CATHOLICOS OF ALL ARMENIANS GEVORG V,
CONCERNING THE ARMENIAN REFORMS OF 1912-1914
(SUMMARY)

NAREK HAKOBYAN
narhak1991@gmail.com

In the history of the “Armenian Question” one of the most important periods was the years between 1912 and 1914, when the issue of reforms in the Armenian populated Eastern Vilayets (Western Armenia) was discussed again and the “Armenian Question” appeared once more on the international stage.

The article presents the secret letter of Grigoris Balakian sent to the Catholicos of All Armenians, Gevorg V of Echmiadzin. The letter reports on the political situation in 1912 in the Ottoman Empire, the fate of the Western Armenians, the issue of reforms in Armenian populated areas, and the reopening of the “Armenian Question” as well as the role of the Catholicos of all Armenians and the Safety Committee in all these issues.

ՇԱՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ [28 ՄԱՅԻՍ-17 ՅՈՒՆԻՍ 1915]¹

ԱՆՂՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ
adakessian@haigazian.edu.lb

Ստորեւ հրատարակուող տեղեկագիրը կը նկարագրէ Հաճնոյ մերձակայ գիւղերէն Շարի տեղահանութիւնը, գրուած՝ խուճապահար ու շփոթեալ տրամադրութեամբ, գիւղի Վրթանէս Քինյ. Գարատաղեանի կողմէ, իր Հալէպ հասնելէն երկու օր ետք: Ամփոփ՝ ան կը ներկայացնէ 22 օր տեսած ողիսականը Շարի հայութեան Եղեռնի ելիցին:

23 Մայիս 1915ին Շար կը ժամանէ տեղահանութեան վերահսկող ոստիկանապետը, եւ խստաբարոյ ու բռնակալ իր ընթացքով կը յաջողի խուճապ յառաջացնել շարցիներուն մէջ, որոնք լեռնային արօտավայրերը ելած էին: Անոնք հապճեպ կը վերադառնան Շար եւ 28 Մայիսին կը պարտադրուին լքել իրենց ծննդավայրը: Կարաւանը յաջորդ օր՝ 29 Մայիսին կը հասնի Օպրուք, 30ին կը գիշերեն բացօթեայ՝ Չաթախի շրջանը, 31 Մայիսին կը հասնին Կիւլէշէն, ապա երեկոյեան՝ Կեօքսու, ուր տեղահանուածները կը թողուն իրենց կառքերը: 1 Յունիսին անոնք կ'ելլեն Քիրազի լեռը, կը հասնին Թափան ու կը մտնեն Գարսպագար, ուր կը մնան երկու օր: 3 Յունիսին կ'ելլեն Գարսպագարէն՝ Յունիս 6ին հասնելու համար Օսմանիէ, ուր իրենց կը տրուի սնունդ ու քիչ մը պաշար: Միքանի օր ետք՝ Յունիս 10ին, լքելով Օսմանիէն 14 Յունիսին անոնք կը հասնին Հասան Պէլի: Հոն իրենցմէ բաժնուած խումբ մը կը վերամիանայ եւ բոլորով ճամփայ կ'ելլեն դէպի Բալահիէ, ուր կը հասնին Յունիս 14ի յետինքին, ապա կ'անցնին Բաճօ եւ Յունիս 17ին, շոգեկառքով կու գան Հալէպ:

Շարք մը յատկանշական երեւոյթներ չենք կրնար գանց ընել այս տեղեկագրին առնչութեամբ. այսպէս՝ տեղահանութեան գործընթացը կը բնութագրուի զինաթափումով, ապա եւ կարճատեւ պայմանաժամի մը տուչութեամբ՝ տեղահանուելու պատրաստութեան համար, իսկ ժողովուրդը հլու-հնազանդ կ'ենթարկուի հրամանին: Դեռ չգաղթած դրացի գիւղերէն կը մտնեն Շար եւ կը կողոպտեն ինչ որ կը գտնեն տուներէն դուրս. տեղի կ'ունենայ "ապրանքափոխանակութիւն", երբ շարցիք կը ստիպուին ամէն գնով փոխադրամիջոցներ ձեռք ձգել անհամեմատ սուղ պայմաններով²: Տարագրութեան ամբողջ ընթացքին հայկական ինչքի կորուստը նկատելի է՝ կողոպուտով, փրկագինի պահանջով, թէ՛ այլապէս - ինչ որ կը նշանակէ նիւթական եւ մշակութային հարստութեան կորուստ³: Գաղթականներուն հանդէպ վերաբերումը միանշանակ չէ. կարաւանը կը կիսուի-կը բաժանուի եւ կը վերամիացուի, գաղթականութեան ուղիները՝ վերահսկողներու

պարտադրանքով կ'ընտրուին դժուարամատոյց ու դժուարանցանելի ճամփաներ. կառքերը կը ձգուին ճամբան եւ կը փոխարինուին նուազ քանակի ուղտերով: Միւս կողմէ, տարագրութեան որոշ վայրերու մէջ տեղահանուածներուն կը տրամադրուի ուտեստ: Ուշագրաւ այլ երեւոյթ մըն է Հալէպի մէջ այս գաղթականներուն կատարած դիմումը՝ Կաթողիկոսին, առանց յստակացնելու թէ ի՛նչ կ'ուզեն:

Տեղեկագրին վրայ կատարած ենք լեզուական-ուղղագրական մանր հպումներ: Նկատելով կէտադրական բացթողումները, յաւելումներ կատարած ենք այդ առումով՝ նախադասութիւնները աւելի հասկնալի դարձնելու մտասուեռումով: Երկար պարբերութիւնները եւս վերածած ենք միքանի պարբերութիւններու: Իսկ բառային բոլոր յաւելումները կատարած ենք շեղ փակագիծերով:

Եօթ էջանի (էջը շուրջ 25 տող), թուղթի մէկ երեսին, սեւ մելանով, հեղինակին կողմէ էջագրուած, ընթեռնելի ձեռագրով այս լաւ պահպանուած տեղեկագիրը կը գտնուի Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան Անթիլիասի արխիւատան մէջ, Հաւաքածոյ 21, Յուցակ 1, Թղթածրար 17 թիւին տակ⁴:

ՀԱՃՆՈՅ ՇԱՐ ՏԵՐԷ՝⁵ ԳԻԻՂԻ
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՄ⁶
ՏԵՂԵԿԱԳԻՐԸ⁷

1915 Մայիս 23: Այսօր լսեցինք որ քոմանտանը կու գար շատ մը զօրքերով: Դիմաւորութեան ելանք: Կէսօրէն քիչ յետոյ եկաւ 200 հետեւակ ու 60ի չափ հեծելազօրքով: Միասին էին նաեւ մօտակայ գիւղերու աղաներն իբրեւ հեծելազօրք: Գիւղին մէջ մտան: Նախապէս տեղ պատրաստած էինք: Քոմանտան Ապտուլլահ պէ կանչվոտեց՝ «եալլա, շուտ եկեղեցին բացէք»: Անմիջապէս բանալին եկաւ հոն: Թաղ[ային] նորաշէն եկեղեցին ու վարժարանը եւ շատ մը տեղեր տեղաւորեց զինուորները: Բարի գալուստի գացած էին[ք]: Միայն թէ մեզի բարեւելէն վերջ ըսաւ. «Ժողովուրդը ամարանոց է ելեր: Շուտով 2 ժամէն պիտի հաւաքուին իրենց հօտերով»: Ժամանակը շատ նեղ էր. ժամը 8 1/2ին մէկ կողմէն հրամանը, միւս կողմէն զօրքերը ելան լեռները: Ժամը 12ի ատենները լացուկոծով թափեցաւ ժողովուրդը: [Ժողովուրդը իրեն հետ բերեր էր] որչափ որ ձեռք անցուցեր է իր այծ ու կովերէն: Կիրակի առաւօտ եղաւ: Դարձեալ [մեզ] ուզած էր: Գնացինք: [Ըսաւ]՝ «Ժողովրդեան ըսէք քովերնին ինչ գէնք եւն. ունին, մինչեւ վաղը առաւօտ պիտի բերեն հոս»: «Լաւ, ձեր հրամանը գլխու վրայ» ըսելով ելանք ու եկանք հաւաքել գէնքերը ինչ որ կը գտնուէր իրենց (այսինքն՝ ժողովուրդին - Ա.Տ.) քով: Վերջապէս ամէն մարդ ունեցածը յանձնեց:

«Քոմանտան պէլի, ամենայն սիրով», որովհետեւ մեզի (ժողովրդեան) հանգստութիւն պէտք էր ոչ թէ զենք...

Երրորդ առտու Քոմանտան Ապտուլլահ պէլ դարձեալ կանչեց գիւղիս մեծերը: Գնացինք: Քիչ մը մտածելէն վերջ, մեղքնալով մը մեր վրայ ըսաւ. «24 ժամ վերջ գիւղիդ համայն ժողովուրդը պիտի ելնէ Շարէն»: Հոն գտնուածներս կարծես շանթահար, լաց ու կոծերով խնդրեցինք որ գոնէ քանի մ'որ միջոց տայ մեզի պատրաստութեան համար: Վերջապէս մեր պաղատանաց չղիմանալով (ինքը որ ազնիւ եւ բարի մէկ պաշտօնեայ կ'երեւար) երեք օր միջոց տուաւ: Ահա այդ օրեր դրացի գիւղացի թրքերը թափեցան [Շար]: Խեղճ գեղացի ժողովուրդը ինչ որ ներս կրցաւ առնել (այսինքն՝ տուն կրցաւ մտցնել - Ա.Տ.) իր այծ ու կովերէն միայն զայն կրցաւ փոխանակել [բեռնատար] կենդանիի հետ. այն ալ տասնապատիկը տալով: Ուրիշ շատեր կողոպտուեցան: [Տունէ] դուրս ելնել ալ անկարելի էր: Ամէն կողմ թրքեր պաշարած էին: Նոյնիսկ ներսը: Քոմանտան պէլն ալ երկրորդ օր տեղէս մեկնելուն դրացի թրքեր ու չերքեզները մանաւանդ միւտիւր Արսլան պէկ խիստ զօրացան, ամէն ընելիքնին ի գործ դրին: Միւտիւր եւ Հաճի Պեքիր (Պոլատ գիւղի մուխթար) թէլադրութեան սկսանք: Գիւղացի թրքերը կը պտտին: Կը համոզեն [առուտուր ընող թուրքերը, թէ՛] «մի առնէք, խէնթ էք, քիչ մ'ալ սպասեցէք, ամէնքը ձեզի կը մնայ»: Մէկը կու գայ [գանգատելու միւտիւրին]. «Միւտիւր պէլ, 36 այծ ունէի ճերմակ հոտ էր, տղաս ալ քովը: Թրքերը քաշեր են: Խնդրեմ ընելիքդ»: Կը կանչվոտէ միւտիւր պէկը. «Կորսուէ՛ կեաւուր խնզրը. տէր ըլլայիր»: Անդիէն միւս խեղճ մը՝ «կովս, եզս, ոչխար...»: Միւտիւրը ատելի կատղած՝ «Ճեհեննէմ օլ շուրտան աստպսիգ. մալըն գարնը թեփելեսին»⁹ են.: Ի՞նչ կրնայինք ընել: Որո՞ գանգատ ընէինք: Վերջապէս լաւ կողոպուտ մը տալով, 28 Մայիս, Հինգշաբթի կէսօրին աճապարանքով ճամփայ հանեց զմեզ բոլոր ժողովուրդով: Թուրքերը այնքան շատ էին որ հազիւ զիրար կրցաւ գտնել ժողովուրդը: Ինչ որ ունէինք մնաց գիւղ: Շնորհիւ միւտիւրին եւ իր արբանեակ հեծելազօրքերու: Կարծես իր բուն անուան (արսլան) ուժով ??? գէլ դարձեր է, մինչդեռ թոյլ, շատ պաղ մէկն էր: Մտրակով ճամփայ դրաւ զմեզ: Ալ ճամփայ ելանք: Ժողովրդոյ խնդրանաց համաձայն քոմանտան պէլ գթալով արտօնեց որ՝ «Գոզանի վրայով, կառքով պիտի երթաք»: Ամէն մարդ մինչեւ յետին աղքատը որքան որ կրցաւ բառնալ կառքին վրայ իր ուտելիքը հետը առաւ որ մինչեւ Հալէպ չնեղուինք եւ կառավարութեան ալ ձանձրոյթ չպատճառենք:

Օպրուք¹⁰ եկանք երկրորդ օր ժամը 9ին: Հրամայուեցաւ մեզ որ հոն գիշերենք: Դեռ մէկուկէս օր է կը ճամփորդէինք՝ շատ յոգնած վիճակի մէջ է ժողովուրդը, որովհետեւ շատեր կը քալեն ու կը քաշկոտուին: Ուշանան՝ գլուխնին մտրակը կը հասնի: Ինչեւիցէ: Կերակուր կը պատրաստենք: Ժամը 10,5[ին] զինուորները եկան՝ «Շուտ ելէք

բեռնուցք»: Վազեցինք յիսնապետին՝ ճախտ պէյի քով: «Ի՞նչ է այս էֆենտի, ամէն մարդ կերակուր կը պատրաստէ. մանաւանդ իրիկուն կ'ըլլայ խնդրենք մի ընէք»: Վերջապէս չլսուեցաւ: Ժանտարմաները եկան կէս եփած կերակուրի դազանները¹¹ գետին թափելով ճամփայ հանեցին: Այլ գիշերը վրայ հասաւ: Շատ նեղութիւններով գառի վարը իջանք: Հաճըն չհանեցին զմեզ: Ճամփան մնացինք. ժամը 4,5ն էր: Չաթախի¹² ճամբուն մէջ անօթի պատկեցանք:

31 [Մայիս] Կիւրակի առաւօտ Հաճընէն ելանք ու կէսօրն Կիւլէշէն¹³ հասանք: Օդը շատ տաք էր: Ջուրին գլուխը իջանք: Գօփուշեան Սաֆար անունով ծեռ մ'ունէինք՝ հոն թողուցինք, որովհետեւ ժանտարմաները խօսք մը հանեցին թէ կառքերը պիտի մնան: Ամէն մարդ վախէն իր ունեցածները թափել սկսաւ: Կիւլէշէնցիները «ես կ'առնեմ - դուն [կ'առնես]» ըսելով իրար ինկան: Մեր մուհաֆըզ¹⁴ Մուսաթաֆա Չաւուշին ըսինք. «Էֆենտի մեր մեծերը դեռ Հաճըն են, թող գան: Եթէ հրաման չբերին, ի՞նչ ընենք ճակատագիրնիս կը քաշենք»¹⁵: Մարդը քիչ մը թուլցաւ: Երեկոյեան դէմ եկանք Կէօքսու¹⁶: Մեր մարդիկն ալ եկան Հաճընէն: Անկարելի եղաւ կառքով երթալը: Առաւօտ եղաւ: Ամէն մարդ թափեց գետին ինչ որ ունէր. ուտելիք, զգեստեղէն, անկողիներ եւ ամէն բան: Նոյնը պատահեցաւ խեղճ բումուցիներուն¹⁷ որ մեզի հասան...:

150ի չափ կառքերը հոն թողուցինք: 75ի չափ ալ [կառք]՝ բումուցիները [թողուցին]: Երեսունի չափ ուղտեր տրուեցան կառավարութեան կողմէն որ շատ քիչ էր: [Ուրիշ բեռեր] ալ եզերուն բեռնելով դէպի վեր քալել սկսանք, թողլով դարձեալ երկու ծեր կին, որ[ոնք մեզի հետ] բերել անկարելի էր. մին Մարթա Կտիկեանը՝ դեռ կրնար քալել: [Իմացանք որ մեր մեկնելէն ետք ան] Հաճըն կ'երթայ եղեր կամաց-կամաց: Իսկ միւս ծեր կինը որ հիւանդոտ էր, հոն մնաց, որ[ով] ետեւնուս եկողներ «ջուրը ձգեր են» կ'ըսէին:

Քիրազի¹⁸ լեռը կ'ելնենք. Պօղոս Լալուկեան¹⁹ ծեր մ'ալ մնաց: Դժբախտաբար զայն ալ թողուցինք հոն:

Թափան²⁰ եկանք: Մեր մուհաֆըզ Մուսաթաֆա չաւուշ կատրիլ սկսաւ: Բացէ[ի]բաց դրամ, պահանջեց: Թշուառ ժողովուրդէն դրամ հաւաքելով ոսկի մը տուինք: Երկրորդ օրը՝ 1 Յունիս, Գարս²¹ մօտեցանք: Դարձեալ ոսկի մ'ալ տրուեցաւ, որով քիչ մը հանգիստ ըլլալով Գարսպագար եկանք: Դեմերնիս ելնող թուրքերը ինչ որ գտնեն՝ ձեռքերնէս կ'առնեն: Երկու օր Գարս նստանք: Ուղտապանները կողոպտեր են բեռան մէջ կեցող [մեր] պիտանի առարկաները: Չաւուշին ըսինք: Ան չլսեց: Հարիւրապետին գնացինք: Մէկ քանին կանչեց, սակայն բան մը դուրս չհանեցին: Միայն շուրջառ մը ուղտի հավ...տէն²² հանեց եւ ըսաւ «ի՞նչ ընեմ, տեր եղէք»: Ամէնքը կ'ըսեն «տեր եղէք». գիշերը չենք քնանար, դարձեալ մէկ կողմէն կը գողնան:

Գարսի ճամբան 2-երեք հատ գրքագ (գրա՝ ստ - U.S.) եւ աւանակներ գողցան: Արդէն եզերը տաքէն չդիմանալով ճամբան կ'իյնան կը մնան: 50ի չափ եզ ու կովեր մորթեցինք. միայն քիչ մը կաղին առնելով անցանք: Գարսի մէջ կիսով չափ տուին չոր հաց մը միայն:

Գարսէն ելանք: Շատեր նորէն կը քալեն ու կը քաշկոտուին: Յունիս 6ին Օսմանիէ²³ եկանք: [Գաղթականներուն] Կէսը մնաց Ճիհուն²⁴ գետը: Միւթեսարըֆ փաշայէն խնդրեցինք որ օգնութիւն մ'ըլլայ մնացողներուն համար: Նորին Վսեմութիւնը հարիւրապետին հրամայեց (այսինքն՝ հարիւրապետին յեց - U.S.): Հոն գնացինք: Վերջապէս [հարիւրապետը] տոմսակ մը տուաւ, որ Ճիհունի գոմանտանը պէտք եղած կառքերը տայ: Սակայն Գարսէն եկող ժանտարմաները մտրակելով ճամփայ հաներ են [Ճիհուն մնացողները], որոնք եկան իրիկուան դէմ: Մնացողներն (ճամփաները) ալ երկրորդ օր (Կիւրակի առաւօտ) կէսօրին եկան ցիրուցան վիճակի մէջ:

Քանի մը օր Օսմանիէ մնացինք: Վսեմաշուք Միւթեսարըֆ փաշան մեր օրական պարէնը [առաւել] 1 օրուայ համար հաց, իսկ երկու օրուան ճամփու համար ալիւր (ճերմակ) տալ հրամայեց որ [մեզ բոլորս] շատ գոհ թողուց:

Յունիս 10ին Օսմանիէն ելաւ ժողովրդոյ մեծ մասս: 120ի չափ խեղճեր, յոգնած թշուառներ մնացին: Ստիպուեցայ ես ալ մնալ ու երեկոյին կառավարութիւն գնացի: Մարդ չկայ: Միւթեսարըֆ փաշա պաշտօնի գնացեր է: Ետ դարձայ, եկայ: Բացը պատկեցանք [այդ գիշեր]: Առտու դարձեալ գնացի, [միւթեսարըֆին] փոխանորդը տեսայ, խնդրեցի: Ազնիւ մէկն է եղեր: Գոմանտան պէյին մարդ դրկեց որ «կէսը երթալ ու կէսը մնալ չ'ըլլար: Քանի կենդանի պէտք է տու ը, ճամփայ դի ը»: 6 կառք եւ 8 հատ ալ կենդանի տուաւ: [Անոնց վրայ այդ մնացած 120 խեղճ ու թշուառները] փոխնիփոխ հեծցնելով երկրորդ օր կէսօրին Հասան Պէյի²⁵ գալով միացանք մեծամասնութեան:

13 Մայիս²⁶ Կէսօրին Հասան Պէյիէն ելանք, երկրորդ առտու Իսլահիէ²⁷ եկանք: Մեր մուհաֆէզ ժանտարմաները՝ Խալիլ (քիլիսցի) եւ Մահմուտ (սիլիֆքեցի) շատ լաւ գօրքեր էին՝ ճիշտ ու ճշմարտութիւնը խօսելով: Մինչեւ առաւօտ պահեցին ու խնամեցին [մեր կարաւանը], ամէն ջանք ի գործ դնելով: Մէկ օրուայ հաց ալ առինք ու 13²⁸ Մայիս (պէտք է ըլլայ Յունիս - U.S.), եկանք Թախթալը Քէօփրի²⁹: Հոն ալ հազարապետ մը կար: Գնացինք իրեն: Անմիջապէս տուաւ հացի բաժիննիս: [Յունիս] 14ին ճամբայ ելնելով, յետինքին Բաճ³⁰ հասանք, թրէնի քով: Ալ հոտ հաց, պուլկուր, իւղ եւ աղ տրուեցաւ ժողովրդոց: Երկու օր ալ այդտեղ սպասելէ վերջ Մայիս (պէտք է ըլլայ Յունիս - U.S.) 17 Դշ. օր երեկոյեան ժամը 10ին շմէնտըֆեր³¹ նստելով ելանք Հալէպ:

Ճիշդ 22 օր ճամփորդութիւն ըրինք, յոգնած ու տքնած: Ինչ որ ձախորդութեան ու դժբախտութեան ենթարկուեցանք ամէնը մեր

Հաճընի սիրելի պաշտօնեաներու շնորհիւ եղաւ, մինչեւ Գարս չարչրկելով եկանք: Սակայն անկէ Հալէպ՝ Բաւական հանգիստ [եկանք]³²:

Ահա այս ամէնը ճշգրիտ կերպով տեղեկագրելով կը մատուցանենք Նորին Վեհափառ Սրբ. Կաթողիկոս Հօր եւ կողկողագին կը խնդրենք որ իր ողորմելի փոքրիկ հօտին այս տաժանելի ցաւերու մասին ուր որ անկ է պարտ ու պատշաճը տնօրինել հաճի որ սրբած պիտի ըլլայ թշուառ ծառաներուն արցունքը:

19 Յունիս 915
Հալէպ

Համբուրիւ Հայրապետական Օճեալ աջոյն
Ի Դիմաց Շարու համայն ժողովրդոց
Մնամք ամենախոնարհ Ծառայդ
Վրթանէս Քինյ.
Գարատաղեան³³

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒԻՒՆՆԵՐ

- ¹ Շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել Խաչիկ Մուրատեանին, որ կարդաց այս նիւթը եւ օգտակար դարձաւ ծանօթագրութիւններուն աւելի հարստացման:
- ² Ակնարկելով այս ապրանքափոխանակութեան, Արամ Ասպետ կը հաւաստէ. «Տունի մը ամբողջ կահկարասիները չէին բաւեր էջ մը գնելու» (Արամ Ասպետ, *Դրուագներ Հաճնոյ Հերոսամարտէն Եւ Հերոսին Ողիղտականը*, Պէյրուօ, Տպ. Տօնիկեան, 1961, էջ 55):
- ³ Ասոր նշանակութիւնը կը մեծնայ նկատի առնելով որ գիւղական միջավայրի մէջ, երբ տնտեսական առատութիւն չկար, նիւթական պայմաններու բարելաւումը կ'ենթադրէր տասնամեակներու տեւողութեամբ խնայողութիւն:
- ⁴ Շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիւատան պատկան մարմիններուն՝ այս փաստաթուղթի տրամադրումին եւ օգտագործման համար:
- ⁵ Շար կամ Շար Տերէ կը գտնուէր Հաճընէն հիւսիս, հետիոտն ութ-ինն ժամ, իսկ ձիով մէկ ժամ հեռաւորութեան վրայ: Զայն կառուցած էին Հաճընէն հոն տեղափոխուած խումբ մը հայեր, շուրջ 1860ականներուն: Ան գուտ հայաբնակ գիւղ էր, 350 տուն կամ մօտաւորապէս 2000 շունչ բնակչութեամբ, որոնց միայն 300ը զինադադարին ողջ մնացած ու վերադարձած էր գիւղ (Մեսրոպ Շիրազմեան, *Մոռցուած Դէպքեր Եւ Դէմքեր Հաճնոյ 1920ի Հերոսամարտէն*, Նիկոսիա, [Պէյրուօ], Տպ. Արագ, 1974, էջ 11, 140. նաեւ՝ Յ. Պօղոսեան, *Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը Եւ Շրջակայ Գոգան Տաղի Հայ Գիւղերը*, Լոս Անճելըս, Պոզաճեան Տպ. 1942, 94): Շարի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Գրիգոր Թաթուլեան, *Անթէղուած Գաղտնիքներ*, Պէյրուօ, Տպ. Ատլաս, 1967, էջ 28-34:
- ⁶ Ասիկա շարցիներու երկրորդ ելիցն էր: Այս ելիցը կատարուեցաւ առանց ընդդիմութեան: Առաջին ելիցը եղած էր 1895 Դեկտեմբերի վերջերը, երբ Շարը պաշարուած էր ու կարճատեւ դիմադրութենէ մը ետք, գիւղակից չէրքէզներու օգնութեամբ շարցիք նահանջեր էին ու հասեր Հաճըն (Թաթուլեան, էջ 56-60): Երրորդ ելիցին, Հաճնոյ պաշարման հետ, 1920ին կը պաշարուի նաեւ Շարը: Շարցիք կը դիմադրեն մօտ չորս ամիս, ապա 60-70 դիմադրականներ կը ձեռքեն

պաշարման շղթան ու կը բարձրանան լեռը, կը ճեղքեն Հաճնոյ պաշարման շղթան եւ միայն 35 հոգի կը հասնի պաշարեալ Հաճըն: Փաստօրէն զինադադարէն ետք վերադարձած շուրջ 300 շարցիներէն միայն 35ը կը յաջողի մտնել Հաճըն, ետին ձգելով «*միայն ծերերը, վիրաւորները եւ կիները*», որոնք կը ջարդուին (Ասպետ, էջ 81-3): Շարի այս պաշտպանութեան ղեկավարն էր փաստաբան Միսաք Բէճեպեան (Շիրտըմեան, էջ 78-9):

1909 Մարտի վերջաւորութեան՝ Կիլիկիոյ Ադէտի օրերուն, Շար կը պաշարուի եւ շուրջ երկու շաբաթ կը դիմադրէ, բայց չի նահանջեր (Թաթուլեան, էջ 68-76. նաեւ՝ Ասպետ, էջ 41):

⁷ Այս ելիցին այլ նկարագրութեան կը հանդիպինք Թաթուլեանի գիրքին մէջ, էջ 88-91: Գլխաւոր տարբերութիւնը՝ ելիցի թուականն է, որ կը տարուբերի Մայիսի ու Յունիսի միջեւ: Մենք աւելի վստահելի կը գտնենք Վրթանէս Քահանայի տեղեկագիրը՝ նկատի առնելով տեղահանութենէն շատ կարճ ժամանակ ետք անոր գրուած ըլլալը: Այս ելիցը շատ ամփոփ ձեւով տուած է նաեւ Պօղոսեան (Պօղոսեան, էջ 99):

⁸ Տեղահանութեան պատճառով շարցիք իրենց ընտանի կենդանիները կը ծախեն՝ կը փոխանակեն բեռնակիր կենդանիներով: Փոխանակութեան հետեւանքով եռուզեռ կը յառաջանայ թուրքերուն եւ շարցիներուն միջեւ:

⁹ Թրք.՝ «*Կորսուէ՛ հոսկէ, անկի՛ ըթ (անամօթ). ինչքին (ապրանքին, առարկային) փորը ցալի՛»:*

¹⁰ Օպրուխ՝ Հաճընէն 1-2 ժամ հեռու վայր (Ասպետ, էջ 78):

¹¹ Թրք. կաթսաները:

¹² Չաթախ՝ Ատանայի Նահանգի Մարաշի Գաւառին մէջ, Հաճընէն մօտ 10-12 քիլոմէթր հեռաւորութեամբ գիւղ (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Աշխարհագրական Բառարան, Հտր. 4, Ն-Վ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1998, էջ 192):

¹³ Կիւլէշէն՝ Հաճընէն 4-5 քմ. հարաւակողմ գտնուող թրքաբնակ գիւղ (Շիրտըմեան, էջ 89):

¹⁴ Այստեղ *մուխաֆըզ* կը թուի նշանակել տեղահանուածները հսկող ոստիկան պատասխանատու:

¹⁵ Ըստ երեւոյթին, շարցիներու պատուիրակութիւն մը մեկներ էր Հաճըն՝ բարեխօսութեան:

¹⁶ Կէօքսու՝ Շարէն հարաւ, ձիով 6 ժամ հեռաւորութեամբ եւ 400 տուն չերթէր բնակչութեամբ գիւղ (Թաթուլեան, էջ 35):

¹⁷ Բումլու՝ Շարէն 4 ժամ արեւմուտք եւ Հաճընէն վեց ժամ հեռու, 45 տուն թուրք բնակչութեամբ գիւղ (Թաթուլեան, էջ 35. նաեւ՝ Ասպետ, էջ 39): Ունէր փոքրաթիւ հայ բնակչութիւն, որ կը տեղահանուի Հալէպ, ապա Պապ, Մումպուճ, իվերջոյ՝ Բաքքա եւ Տեր Զօր:

¹⁸ Քիրագ, Քիրեզ, Քիրեզի Լեռ - Կիլիկեան Տարոս լեռնաշղթայի լեռներէն: Կը գտնուի Հաճընի մօտակայքը, Սառան գետի ձախ կողմը, Վահկայ բերդէն հարաւ: Անոր լանջին կը գտնուէր Քերէս գիւղը (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Աշխարհագրական Բառարան, Հտր. 5, Տ-Յ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 2001, էջ 360):

- ¹⁹ Ըստ Թաթուլեանի, ծերունին կը կոչուէր Պօղոս Լալիկեան եւ 120 տարեկան էր (Թաթուլեան, էջ 90):
- ²⁰ Թափան, Թափան Օղլու՝ կը հանդիսանայ Ատանայի Նահանգին, Քոզանի Գաւառի Թափան գիւղախումբի կեդրոնը: Ի. դարասկիզբին ունէր շուրջ 1000 բնակիչ, որոնց մօտ 300ը՝ հայեր էին: Գիւղին մօտակայքը կը գտնուին հին Կոպիտառ բերդի ամերակները (Թ. Յակոբեան, Ստ. Մելիք-Բախշեան, Յ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Աշխարհագրական Բառարան*, *Հտր. 2, Դ-Կ*, Երեւան, Երեւանի Համալսարանի Հրատ., 1988, էջ 424):
- ²¹ Գարս կամ Գարսպագար՝ Սիսէն վեց ժամ հեռու գտնուող գիւղաքաղաք, ուր կ'ապրէին 150է աւելի հայ ընտանիքներ (Ասպետ, էջ 95):
- ²² Անընթեռնելի երկու տառ. թերեւս 'սապատ':
- ²³ Օսմանիէ՝ Ատանայի Նահանգի Ճեպէլ Պերեքէթ Գաւառին մէջ, նոյնանուն գաւառակի կեդրոնը (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի, Հտր. 5*, էջ 487):
- ²⁴ Հին անունով Պիռամոս/Պիւռամոս, հայերէն՝ Ջահան գետ: Կիլիկիոյ ամենաջրառատ գետն է: Ան սկիզբ կ'առնէ Կիլիկեան Տաւրոս լեռնաշղթայի լանջերէն, երկարութիւնը՝ 474 քիլոմէթր (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի, Հտր. 3*, էջ 612, եւ՝ *Հտր. 4*, էջ 337):
- ²⁵ Հասան Պէլլի, կամ Հասան Պայլի - գիւղ՝ Ատանայի Նահանգի Ճեպէլ Պերեքէթ Գաւառի մէջ, Օսմանիէէն հիւսիս (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի, Հտր. 3*, էջ 366):
- ²⁶ Պէտք է ըլլայ Յունիս, ինչ որ կը ցուցնէ իր խուճապեալ վիճակը:
- ²⁷ Իսլախիէ՝ աւան Ատանայի Նահանգի Ճեպէլ Պերեքէթ Գաւառին մէջ, նոյնանուն գաւառակի կեդրոնը (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի, Հտր. 2*, էջ 539):
- ²⁸ Այստեղ տրամաբանական շփոթ մը կայ. պէտք է ըլլայ 14:
- ²⁹ Կը գտնուի Ատանայի Նահանգի Քոզանի Գաւառին մէջ, Ծամնդաւ (Զամանդի) եւ Սառան գետերու միջեւ (Յակոբեան, Մելիք-Բախշեան, Բարսեղեան, *Հայաստանի, Հտր. 2*, էջ 399):
- ³⁰ Բաճօ՝ գաղթակայան մը՝ Քաթմայի եւ Ազեզի միջեւ:
- ³¹ Ֆրնս.՝ շոգեկառք:
- ³² Շարի այս գաղթականները տեղաւորուեցան Ճեմիլիէ թաղը, յետոյ միանալով հաճընցի գաղթականներու ցրուեցան Մումպուճի եւ Պապի ու շրջակայքի գիւղերը՝ փոքր թիւերով, ապա դարձեալ տեղահանուեցան տարուելու Մեսքենէ, Բաքքա եւ Տէր Զօր (Թաթուլեան, էջ 90, 99):
- ³³ Այս տեղեկագրի հեղինակ Վրթանէս Քինյ. Գարատաղեանի մասին չկրցանք տուեալներ ձեռք բերել: Պօղոսեան կը յիշատակէ Շարի երկու քահանաներ՝ Տէր Սարգիս Սահակեան եւ Տէր Կաճեան (Պօղոսեան, էջ 95), բայց կը յիշէ Տէր Սարգիս Քինյ. Գարատաղեան մը՝ իբրեւ Հաճնոյ Ս. Աստուածածին եկեղեցոյ քահանայ (Պօղոսեան, էջ 368):

THE DEPORTATION OF SHAR
(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN
adakessian@haigazian.edu.lb

This is a seven-page report about the deportation of the residents of Shar, a village of some 2000 inhabitants. An off-shoot of Hadjin, Shar was founded in the 1860s next to some Roman ruins, about 8 hours' walk from Hadjin.

The deportation lasts two weeks, as they are uprooted on June 3 and arrive in Aleppo on June 17. The report, written by Father Vertanes Karadaghian, details the uprooting of the inhabitants and their settlement in Aleppo. It maps in detail the route the deportees are forced to take and the dates they arrive at each location. The dates and details of the report are fresh as Fr. Karadaghian writes his story down two days after their arrival in Aleppo on June 19, 1915.

ԱՄԵՐԻԿԱԶԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆԸ.
ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ ՄԸ՝ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ (1916)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ
varny1@yahoo.com

Եթէ, ինչպէս կ'ըսուի, ԺԹ. «երկար» դարը իր աւարտին հասած է 1914ին՝ Առաջին Աշխարհամարտի յայտարարութեամբ, կասկած չկայ, որ Ի. դարուն առաջին մարդասիրական աղէտի տարակուսելի «պատիւ»ը կը պատկանի օսմանեան կառավարութեան ծրագրումով ու գործադրութեամբ իրականացած հայոց Մեծ Եղեռնին: Դէպի ստոյգ մահ ուղղուող զանգուածային տեղահանութեան զոհերը թուաքանակ չէին միայն, այլ որակ՝ մարդկային շունչ, իսկ զոհերուն մաս կը կազմէին թէ՛ մեռելները եւ թէ՛ վերապրողները: Աղէտը պիտի ունենար բազմաթիւ տարածքներ, թէ՛ Օսմանեան Կայսրութեան մէջ, յատկապէս Թուրքիոյ սահմաններէն դէպի հարաւ, եւ թէ՛ Ռուսական Կայսրութեան մէջ, ինչպէս եւ Պարսկաստանի հիւսիսը: Թրքական սուրէն ու հուրէն հրաշքով փրկուած հայ գաղթականները, բազմաթիւ պարագաներու, զոհ պիտի դառնային սովի, հիւանդութեան ու այլ չարիքներու:

Թիֆլիսի Հայ Ազգային Խորհուրդի անդամներէն Սամսոն Յարութիւնեան Օգոստոս 1915ին կը տեղեկագրէր *Հորհրդն* օրաթերթին մէջ, թէ Իգդիր-Էջմիածին 30 քիլոմէթր ճանապարհը խճողուած էր գաղթականներով. Իգդիրի մէջ 20,000 գաղթականներ կուտակուած էին, իսկ Էջմիածնի մէջ՝ 45,000: Օգոստոս 13ին ան կը գրէր, թէ օրական 15 հոգի կը մեռնէր Իգդիրի մէջ, իսկ 40՝ Էջմիածնի մէջ: Օգոստոս 21ի իր տեղեկագրութիւնը կ'աւելցնէր, թէ երկու օր առաջ Էջմիածնի մէջ 103 հոգի թաղուած էր, իսկ նախորդ օրը՝ 80¹:

Բախշի Իշխանեան Օգոստոս-Սեպտեմբեր 1915ին գաղթականներուն այցելութիւն կու տար եւ կը ներկայացնէր անոնց զարհուրելի վիճակը՝ գրքոյկով մը, ուր *աղէտ* բառը առաջին անգամ կ'երեւէր գիրքի մը կողքին վրայ²: Բայց աղէտը արդէն գիտակցուած էր նախօրօք, երբ Միհրան Տամատեան կը գրէր՝ «*ծովացեալ աղէտին*» դէմ յանդիման. «*Աւերումի աննախընթաց փոթորիկ մըն է որ կ'անցնի մեր հայրենիքին վրայէն... Հայաստանը հուրի ու սուրի է մատնուած. Եփրատի ու Տիգրիսի, Երասխի ու Ճորոխի ականակիտ ջուրերը կարմիր ներկուեցան. Մեղրագետը դարձաւ Արեան գետ. Կարին, Մուշ, Բաղէշ, Տիգրանակերտ... գուցէ եւ Վան, մոխրակոյտեր են հիմա: Հարիւր հազարաւոր սարսափահար փախստականներու կարաւաններ, մեծ*

մասամբ բաղկացած կիներէ, ծերերէ եւ մանուկներէ, շարան-շարան կը դիմեն դէպի Իզդիբ, Էջմիածին, Երեւան. չափահաս այրերը մէջտեղ չկա՛ն. անոնց մեծ մասը սրախտոյտոյ եղած են, իսկ մնացեալները վերջին յուսահատ կռիւր կը մղեն անագորոյն թշնամիին դէմ...: Ահա՛ պատկերը Հայաստանին»³:

Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովը, որ հիմնուած էր Դեկտեմբեր 1914ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ի կոնդակով ու նախագահութեամբ, կ'աշխատէր ըստ կարելոյն հասնիլ գաղթականներու կարիքներուն: Օգոստոս-Նոկտեմբեր 1915ին, մօտ 25,000 արեւմտահայ գաղթականներ կուտակուած էին Երեւան, ուր հազարաւոր կիներ եւ երեխաներ կ'ապրէին անբնակելի շէնքերու եւ հիւղակներու մէջ, կամ պարզապէս՝ բացօթեայ: Յանձնաժողովին երեւանեան մասնաճիւղը, նախագահութեամբ Արարատեան Թեմի հայրապետական փոխանորդ Խորէն Եպս. Մուրադբէկեանի, «*աշխատեցաւ կարգ կանոն դնելու այս քառսին մէջ, մեռելները թաղելու, ջերմին եւ թանջքին աւերները կասեցնելու, եւ սնունդի ու պատսպարանի սահմոկեցուցիչ պետքերը դիմագրաւելու համար: Առաջնորդը՝ ինք անձամբ աշխատեցաւ անխոնջ եռանդով՝ հիւանդներուն եւ մեռեալներուն մէջ*»: Խիստ ձմրան դէմ յանդիման, ճիգ եղած էր բաց երկինքի տակ ապրող կիներուն ու երեխաներուն օթեւան տալու. «*Գրեթէ ամէն Ռուսահայ իր դուռը բացաւ, ներս ընդունելու եւ պատսպարելու համար երեք, չորս կամ հինգ փախստական: Կամաց կամաց երկու երեք մանկապարտէզներ բացուեցան եւ շատեր սկսան իրենց կրցած չափով որբեր հոգայ*»⁴:

Ամերիկահայ համայնքը, ինչպէս եւ Թուրքիոյ մէջ ԱՄՆի դեսպան Հենրի Մորկընթաուի նախաձեռնութեամբ հիմնուած Հայոց եւ Մուրիացոց Նպաստամատոյց Ամերիկեան Յանձնաժողովը (American Committee for Armenian and Syrian Relief)՝ ապագայ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը (Near East Relief), նիւթական լայն օժանդակութիւն մատուցած էին գաղթականներուն, նուիրատուութիւններու մէկ մասը հասցնելով Մայր Աթոռ: 15 Դեկտեմբեր 1915 թուակիր կոնդակով, Գեորգ Ե. Կաթողիկոս իր գնահատանքը կ'արտայայտէր ամերիկահայ համայնքին եւ ամերիկացիներուն. «*Ձեր նուիրատուութիւնները մեզի կու գան առանց դանդաղելու եւ մենք ձեր բարի տուրքերով կարօտեալներու կարիքները կը հոգանք, ծածկելով չունեցողներուն մերկութիւնը, մատակարարելով ամէնօրեայ պարէն եւ կերակուր որպէս սնունդ՝ աղքատներու եւ տնանկներու, օժանդակելով հիւանդներու՝ պահպանելով հիւանդանոցը, ուր մեր ազգակիցներէն հարիւրաւորներ եւ հազարաւորներ բժշկութիւն կը գտնեն, շնորհելով ասպնջականութիւն անոք որբուկներու, ծնողազուրկ մանուկներու, ինչպէս եւ բազմապիսի հոգերու եւ պետքերու, ըստ կամքին նուիրատուներու եւ ըստ*

նպատակին նպաստներու (...)»։ Ան կը յայտնէր նաեւ, թէ գումարները ստացուած էին բազմապիսի ճանապարհներով՝ նամակով, դրամատնային փոխանցումներով եւ այլ միջոցներով, ինչ որ կը դժուարացնէր հաշիւներու ճշգրիտ պահպանումը եւ ստացուած դրամին ստուգութիւնը, նկատի ունենալով արժոյթի վերիվայրումները։ Աւելի արդիւնաւէտ հաշուապահութեան համար, Կաթողիկոսը կը յորդորէր, որ նուիրատուութիւնները կէդրոնանային Ազգային Առաջնորդարանին քով, որ այնուհետեւ պիտի կատարէր անհրաժեշտ փոխանցումները Մայր Աթոռին⁵։

Յունուար 1916ին կը հաղորդուէր, թէ մահացութեան համեմատութիւնը նուազած էր Էջմիածնի մէջ (օրական 15-20 հոգի)։ Երեւանի Նահանգին մէջ 93,000 գաղթականներ արձանագրուած էին, որոնցմէ 26,000ը՝ Ալեքսանդրապոլի Գաւառը, 16,000ը՝ Էջմիածնի Գաւառը, 10,000ը՝ Երեւանի Գաւառը, 9800ը՝ Երեւան քաղաքը, եւ 6500ը՝ Էջմիածին քաղաքը⁶։ Երկու ամիս ետք, Կովկասի եւ Ատրպատականի գաղթականներու ընդհանուր թիւը 255,000ի կը հասնէր. գլխաւոր զանգուածը տեղաբաշխուած էր Էջմիածնի Գաւառը (45,000), Երեւանի Գաւառը (35,000), Իգդիր (25,000) եւ Ալեքսանդրապոլ (20,000)։ Մեծամասնութիւնը՝ 150,000 հոգի, իգական սեռին կը պատկանէր (100,000 կիներ՝ 15 տարեկանէն վեր)⁷։

Վան Տոսպ կը գրէր, թէ Էջմիածին 6800 գաղթական կար (ներառեալ 300 որբեր), որոնցմէ 450ը տեղաւորուած էր ազարակին եւ ձիթհանքին մէջ, 856ը՝ շուկային մէջ, իսկ 200ը՝ զօրանոցին մէջ։ Գաղթականներուն ստացած միակ նպաստը օրական 2 փառնոտ (908 կրամ) սեւ հաց էր եւ հագուստեղէն⁸։ Յունիսի կէսերուն *Կոչնակի* թիֆլիսահայ թղթակից մը հաւանական կը նկատէր, որ շուրջ 200,000 փախստականներուն մէկ-տասներորդը երկիր վերադարձած ըլլար։ Մնացողները անմիաթար վիճակի մէջ էին. օրական 15-20 կոպէկ կը ստանային (7,5-10 ամերիկեան սենթ), որ հազիւ կը բաւէր սեւ հաց ձեռք բերելու⁹։ Նոյն թերթը նոր վիճակագրութեան մը կ'անդրադառնար երկու շաբաթ ետք։ Գաղթականներու ընդհանուր թիւը հասած էր 286,470 հոգիի (105,995 մանուկ, 100,264 կին եւ 80,211 տղամարդիկ), որոնք գլխաւորապէս տեղաբաշխուած էին Երեւանի Նահանգին (93,117), Արեւմտեան Հայաստանի ազատագրուած վայրերուն (50,390) եւ Կարսի (32,590) մէջ¹⁰։ Յուլիսի վերջաւորութեան, ռազմական վերիվայրումները 30,000 փախստականներու նոր հոսանք մը կը ստեղծէին Վանէն դէպի Իգդիր¹¹։ 1 Հոկտեմբեր 1916 թուակիր տեղեկագիր մը կը հաստատէր, թէ գաղթականներու թիւը 366,992ի հասած էր. մեծամասնութիւնը՝ կին (36%) ու երեխայ (36%), իսկ երեխաներուն 40 առ հարիւրը 5 տարեկանէն նուազ էր։ Մինչ կովկասեան երկրամասին մէջ գաղթականները տարածուած էին Ստաւրոպոլէն մինչեւ Գանձակ եւ Կուրանէն մինչեւ Բաթում,

գլխավորաբար կեդրոնացած ըլլալով Երեւանի Գաւառը (115,000) եւ Կարսի շրջանը (28,100), 123,050 հոգի հաստատուած էր Արեւմտեան Հայաստանի եւ Մեւ Ծովու մերձափնեայ շրջաններուն (Վան, Տիատին, Արճէշ, Տրապիզոն, Խնուս-Մուշ, Կարին, Բաբերդ, Երզնկա եւ Լազիստան), իսկ 51,650 հոգի՝ Պարսկաստանի մէջ (Ուրմիա, Խոյ, Թաւրիզ): Գաղթականներուն մէջ կային նաեւ ասորիներ¹²:

Հայց. Եկեղեցոյ Ամերիկայի Արեւելեան Թեմին կից «Գրիգոր եւ Գլարա Զօհրապ» Տեղեկատուական Կեդրոնին մէջ պահպանուած է 1 Յունիս 1916 թուակիր անստորագիր փաստաթուղթ մը, որ առաքուած է Մայր Աթոռի Հայրապետական Դիւանէն, եւ որուն հեղինակը, ամենայն հաւանականութեամբ, դիւանապետ Տիրայր Ծ. Վրդ. Տէր Յովհաննիսեանն է (Ամերիկայի Թեմի ապագայ առաջնորդ՝ 1921-1928ին): Այս պաշտօնական գիրը կեդրոնացած է հինգ կէտերու վրայ, որոնցմէ առաջինը հագուստեղէնի ու դրամի խնդրանք է ի նպաստ գաղթականներուն: Անոր հրապարակային արձագանգը կը գտնուի Միհրան Սվազլեանի ստորագրութեամբ Ազգային Պաշտպանութեան Միութեան կողմէ իր բոլոր մասնաճիւղերուն ուղղուած Օգոստոս 1916ի շրջաբերականին մէջ.

«Էջմիածնէն հասած վերջին պաշտօնագրով Ազգիս Վեհ(ափստ) Հայրապետը ստիպողաբար կը յանձնարարէ Ազգ(ային) Պաշտ(պանութեան) Միութեանս, որպէս զի զգեստներու անմիջական հաւաքում տեղի ունենայ եւ շուտով դրկուի Էջմիածին, ձմրան կարենալ պատասխարելու համար թշուառ գաղթականները, աւելցնելով միանգամայն թէ անցեալ տարուայ դրկուածները օգտակարօրէն ծառայած են նպատակին:

Ազգ. Պաշտպանութեան Միութիւնս կոչ կ'ընէ իր բոլոր մասնաճիւղերուն, որ փութով ձեռնարկեն զգեստներու հաւաքումին եւ շուտով դրկեն մեր Նիւ Եորքի հասցէին, որն է

*Armenian National Defence Union
c/o Service Photo Engraving Co.
168 Park Row, New York City*

Կը յուսանք որ գործը փութով պիտի սկսուի եւ յառաջ տարուի, եւ թէ ամէն Հայ այս առթիւ պիտի յօժարի իր կարելին ընել զգեստներու ու կօշիկներու այս հաւաքումին մէջ: Արագութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ ասկէ դրկուած հագուստեղէնները հազիւ 5-6 ամիսէն Էջմիածին կը հասնին»¹³:

Պաշտօնագրին երկրորդ կէտը կ'անդրադառնայ 1915-1916 ուսումնական տարեշրջանին փակուած Գէորգեան Ճեմարանի վերաբացման, ինչպէս եւ բաւարար եկամուտ ապահովելու անհրաժեշտութեան: Հետաքրքրական է նշել, որ ճեմարանին տարեկան պիւտճէն սովորաբար կը կազմէր 85,000-90,000 ռուբլի, իսկ

պատերազմական պայմաններուն ու տնտեսական դժուարութիւններուն բերումով, 1916ին կը նախատեսուէր 45-50 առ հարիւրի յաւելում (128,000 ռուբլի): Որպէս համեմատութիւն, առ 1 Սեպտեմբեր 1916, Մայր Աթոռի՝ գաղթականներուն ի նպաստ ստացած նուիրատուութիւններուն ընդհանուր գումարը 2,559,000 ռուբլիի (համարժէք՝ 853,000 ամերիկեան տոլարի) հասած էր¹⁴:

Երրորդ կէտը, ուր ակնարկութիւն կայ ամերիկեան ու եւրոպական աւետարանական միսիոնարներու երախտապարտութեան արժանի օժանդակութեան, բայց նաեւ անոնց հետ կապուած ապագայի զարգացումներու հանդէպ որոշակի վերապահութիւն, համայնքային խլրտումի պատճառ եղած է: *Կոչնակը*, որ աւետարանական համայնքին կիսապաշտօնական օրգանն էր, Նոյեմբեր 1916ին կ'արձագանգէր շրջան ընող տարաձայնութեան մը՝ կաթողիկոսական կոնդակի մը գոյութեան մասին, որ իբր թէ «*ազգավնաս*» կը նկատէր աւետարանականներու գործունէութիւնը Կովկասի մէջ, զոր կը նկատէր «*իրենց հօտը ստուարացնելու*» ուղղուած: Ենթադրեալ կոնդակը կարդացուած կ'ըլլար առաջնորդին կողմէ գումարուած խորհրդապահական համաժողովի մը ընթացքին: Կոնդակին գոյութեան ակնարկուած էր *Հայրենիք* օրաթերթին կողմէ, իսկ *Կոչնակ* կը հետապնդէր անոր ամբողջական հրատարակութիւնը, միաժամանակ աւետարանական գործիչներու՝ գաղթականներու օժանդակութեան ի խնդիր աշխատանքներուն երկարաշունչ պաշտպանողականն ու ջատագովութիւնը կատարելով¹⁵: Երկու շաբաթ ետք, թերթը ամբողջութեամբ լոյս կ'ընծայէր թեմակալ առաջնորդին պատասխան նամակը ուրիշ խմբագրականի մը ծիրին մէջ: Արսէն Ծ. Վրդ. Վեհունի կը յայտնէր, թէ «*այդպիսի կոնդակ գոյութիւն չունի եւ խնդրի առարկայ դարձած գրութիւնը Հայրապետական դիւանէն եկած հրահանգ մըն է, որուն մէջ Հայ Աւետարանական եկեղեցիի մասին գրուած բան չիկայ բնա*»: Յիշեալ հրահանգը, ինչպէս կը պարզուի, սոյն հրապարակումին առարկայ վաւերաթուղթն էր: Առաջնորդը կ'աւելցնէր, թէ «*Հայրապետական հրահանգի մէկ մասը գուտ Հայց. եկեղեցիի հարազատներուն վերաբերելուն, յարմար չէ նկատուած անոր հրատարակութիւնը, նոյնպէս չենք կարծեր որ՝ Հայց. եկեղեցիի հարազատներու առանձին խորհրդակցական ժողովները խտրական ոգի կրնան յառաջ բերել, քանի որ նոյնանման ժողովներ կ'ունենան նաեւ ուրիշ հաստատութիւններ՝ ինչպէս օրինակ Հայ Բողոքականներու Ֆիլատէլֆիայի ժողովը*»¹⁶: Ընդունելով այս բացատրութիւնները, *Կոչնակ* քննադատաբար կ'անդրադառնար Ամերիկեան Նպաստամատոյց Յանձնախումբէն աւետարանական անդամները դուրս հանելու մասին ինչ-ինչ առաջարկներու¹⁷: Երկու շաբաթ ետք, յօդուածագիր մը կ'անդրադառնար խնդրին եւ կ'ընդգծէր Առաքելական եւ Աւետարական եկեղեցիներուն ուժերու համախմբումի եւ փոխլրացումի

անհրաժեշտությունը՝ հայրենիքի վերաշինության գործը յառաջ տանելու համար¹⁸:

Ուշադրության արժանի է նամակին չորրորդ կետը: Տիրայր Ծ. Վրդ. Տեր Յովհաննիսեան կը բանաձևէր տուեալ պահուն աշխարհասփիտ ամենամեծ համայնքներէն մէկուն՝ ամերիկահայութեան հայրենիք վերադարձի անհրաժեշտութիւնը, Եղեռնի թուական հսկայական կորուստը գէթ չափով մը դարմանելու համար: Յունիս Յին, *Կոչնակ* գրած էր վերապահութեամբ. «*Պատրաստուինք վերադարձի. մեր փլշած տուները, մեր պապերուն աւերակ օճախները մեր ներկայութեանը կը կարօտին, բայց սպասենք, մինչեւ որ յարմար ժամը հասնի եւ չուի կոչը տրուի*»¹⁹: «Վերադարձ»ը նկատի ունէր Արեւմտեան Հայաստանի այն տարածքները, որոնք 1915-1916ին ազատագրուած էին ռուսական բանակին կողմէ, եւ որոնք կայսրութեան տիրապետութեան տակ պիտի մնային մինչեւ Ռուսական (բոլշեւիկեան) Յեղափոխութիւնը՝ Նոյեմբեր 1917ին:

Նամակին վերջին կետը կ'անդրադառնայ հայութեան տարագիր բեկորներուն, որոնք Միջագետք կը գտնուէին որպէս հետեւանք տարագրութեան, եւ որոնցմէ շատերը պիտի չվերապրէին թրքական արհաւիրքին:

Փաստաթուղթը, որուն բովանդակութիւնը ծանօթագրութեան գրեթէ չի կարօտիր, կը հրատարակենք նոյնութեամբ, պահպանելով լեզուական եւ ուղղագրական առանձնայատկութիւնները:

1 Յունիսի 1916

No. 1170
75/914²⁰

Ամերիկայի Առաջնորդ
Գեր. Տ. Արսէն ծ. վ[ա]ր[դա]պետ
Վեհունուն²¹

Տաճկահայ գաղթականութեան ներկայ ու ապագայի վիճակը այն ծանր պարագան լինելով, որի մասին Ն[որին] Ս[ուրբ] Օծութիւնը անդադար հոգածու եւ իսկական միջոցներ որոնելու հոգսերով է տարուած, բարուք համարեց գրութեանս միջոցով մասնակից անել Ձեզ՝ իբրեւ Ամերիկահայ ժողովրդեան Հոգեւոր հովուի, Ձեզ հետ նաեւ Ամերիկայ [sic] գտնուած բարձրաստիճան եւ այլ կարգի պատկանող Հոգեւոր դասին, - ինչպէս աշխարհիկ ամէն խաւերի անձերին, այն մտածումների եւ կարիքների հետ, յապագային, որ այդ ծանր ու սրտամաշ խնդիրը դրել է Ն[որին] Վեհափառութեան առաջ եւ որին, յոյս

The writer's sister fainted at the sight, and on recovery two Turkish officers, speaking French, remonstrated with her on her lack of patriotism since the Armenians were enemies. She also gives details of the misery and death caused by over-crowding railway carriages and trucks when transport was from time to time provided.

TYPHUS

The greatest havoc was caused by typhus. Those who died from it were left unburied for days. One reason for this, as given to the writer by a superior Turkish officer, was to increase infection in order that there would be greater mortality among the living. The Armenians, however, can claim some revenge, for the plague naturally did not confine itself to Armenians only, and the whole country through which these refugees passed was devastated: The writer saw dozens of villages in Syria empty of all inhabitants, killed off by typhus. No sanitary measures to combat the epidemic were taken.

PROPERTY PLUNDERED

The Armenians were ordered from their homes at the shortest notice, and no time was given for them to provide transport for their belongings or to dispose of their property. The Turks took possession of all, and relieved the unfortunate people of such things as they attempted to carry with them.

LACK OF ROAD TRANSPORT

The demand for road transport became so great that price ran to a prohibitive height. The writer saw thousands of Armenians near Hassan Beylu, in the Taurus Mountains, lying out in the snow waiting for vehicles, and the same state of things prevailed at Aleppo and other transfer stations. There was no organization to meet the situation created by the forcible evacuation of the Armenian population, partly the result of Turkish incompetence and partly through deliberate neglect.

FOREIGN PUBLIC OPINION JEMAL PASHA

After a time European and more especially American public opinion began to be heard on the subject of Armenians, and upon this Jemal Pasha (the Great!) went to Constantinople and insisted that the massacres should cease, urging that it was not only a crime but a mistake. In addition he foresaw that a useful source of forced labor could be tapped for his public works in Syria and Palestine. It was reported that Talaat was not disposed at first to listen, but that Jemal was powerful enough to override opposition, and it is said that in this way the lives of over 100000 Armenians were spared but only on the condition that they should be sent to Syria. Jemal Pasha was promptly nicknamed the "Armenian Pasha" in Constantinople, but the Armenians were grateful and neutral Ambassadors were duly impressed.

The Armenians, wishing to show their appreciation of Jemal Pasha's action, and being prohibited from uttering their thanks, decided to march past his house in Constantinople in silence, and in this manner 40000 Armenians paraded in front of Jemal, who stood on the balcony of his house for three hours with his arms folded like Napoleon the Great. The train by which Jemal returned to Syria was frequently stopped for him to receive the thanks of Armenians, which, however, the writer thinks a mere farce to impress the outside world and to increase the importance of Jemal. The treatment of the Armenians under Jemal's administration confirms him in this opinion.

THE ARMENIANS UNDER JEMAL

Jemal having thus got a large number of Armenians into his clutches, decided to send them to remote parts of Syria and Palestine. The writer considers that his motive for this action was to prevent them from contaminating the existing population, and also to minimize the chances of neutrals witnessing their treatment.

They were sent to various camps where 3000 to 5000 were herded together, and the writer visited such camps in Hauran, Adflun, and South East of the Dead Sea.

ARMENIAN CAMPS

The inmates of these camps are entirely dependent on food and water supplied by Government: they were forbidden to enter towns or villages, or to work for pay: they are made to live in the desert. Men, women, and children were put to hard labor, and each working man and woman received 2d. a day. That was their sole income on which they had to live.

In some cases there was no water nearer than six miles, and it had to be brought to the camp by rail. The trains frequently failed to run, the fact that there was a war in progress was a convenient excuse, and was made to cover deliberate neglect.

The writer has seen an overdue train carrying water arrive. The Armenians, parched with thirst, rushed to the halting place, each carrying an earthen jar on tin. As soon as the train stopped it was besieged by the mob, which was beaten back by the Turkish guard with the butt end their rifles. Having thrust the crowd back, all the taps of the tanks were then turned on and the water allowed running to waste in full view of the hundreds who are dying for want of it. The Administration duly dispatched waters to the desert; that was enough a far as Jemal Pasha and his friends were concerned. An accident might have happened subsequently, but that was no fault of theirs. Such was the view taken of the above incident by Jemal when he heard of it, according to a report which reached the writer.

Hunger and thirst swept away half the number in these camps in a few weeks. Those that live led a wretched existence; all family life had been broken up, husbands, wives, children had been separated, and there were no means of finding out what had become of those who were missing. Immorality flourished; sanitation in its most elementary form did not exist.

In the meantime Jemal loudly proclaimed that he was colonizing waste lands with thrifty Armenians, which was enough for the inspired press of the Central Powers to give out to the world that in the last two years Syria and Palestine, under Jemal's administration, had flourished more than in the whole of the preceding fifty years.

A flat refusal was given to representatives of neutral countries who asked to go to Syria to witness the conditions under which the Armenians lived.

SLAVE MARKETS

In the track of the Armenians, as they were driven along, female slave-markets were established. The price of an Armenian girl from 12 to 14 years of age was from 2 mejideiehs to [Br. Pound] £1. The writer saw such a market in Damascus, and he was told by his relatives in Aleppo and by American missionaries that thousands of young girls had been sold in the open markets. The so-called intellectual leaders of the Moslem world, the Khojas, Ulemas, Padis, and Muftis, were not slow to avail themselves of the opportunities that these markets offered, and these frequently saved their pockets and increased the numbers of their slaves by claiming to have made converts, in which case no money transaction was demanded.

CONVERSION TO ISLAM

These alleged converts were usually young women who were driven into harems ostensibly for the purpose of being instructed in the "true faith"! Conversion to Islam was attempted on a large scale, among men as well as women, and with some success amongst those Armenians from some parts of the Caucasus who had long practiced some Turkish customs, and whose belief in Christianity was not deeply rooted, but the writer knows of a number of educated and wealthy Armenians of Constantinople and the coast towns who have professed their conversion. The later seem however to have taken this step in the hope of preserving at least some of their property from confiscation.

WHOLESALE MASSACRES

So far description has been given of the destruction of the Armenian nation by organized deportation accompanied by neglect and by the unchecked ravages of disease but in addition there is systematic butchery in which boys and men. The unusual method employed was to organize labor in which boys and men were collected together and these were sent under a guard of about twenty Turkish soldiers to some out-of-the-way place where no provision was made for rations or water. The guard was given orders to use their rifles without hesitation in case of desertion, or any sign of mutiny, on the part of those put under their charge. After a day or two the guard would return alone. The story given was either the Armenians as a whole attempted to desert, or that there had been a mutiny and the guard in self defence had compelled to kill the lot. The writer never witnessed such a scene himself but he had reports from trustworthy sources. One of his informants was an Armenian who speaking and dressing like a Turk had travelled from Armenia to Jaffa. There he mixed with a number of Turkish soldiers who had just executed the butchery of about 400 Armenians in the manner described above and who regaled him with many repulsive details. This man on the following day came upon a heap of murdered Armenians, and journeying on to Aleppo he made a full report of his experience to the American consul there.

GERMAN OPINION

The writer discussed these murders with German officers in Constantinople, and they admitted that unfortunately they were entirely true.

ARMENIANS IN CONSTANTINOPLE

Orders were issued that only Armenians who had been born in Constantinople should be allowed to remain there. This was signal for a house-to-house search by the police as well as arrests in the open streets. The witness has seen batches of Armenians being led through the streets, the victims of the zeal of the police in fulfilling this order. The raids are usually carried out at night, but he saw a wealthy and influential Armenian arrested in broad daylight and hurried away. Nothing more is seen or heard of those whom the police take, unfortunately there are some Armenians who act as police spies, and sell their countrymen.

The writer can give details of hundreds of young Armenian girls who have become prostitutes in Constantinople, the only means left to them by which they can support their parents. One he quotes in particular a well-bred girl recently married, whose husband was killed before her eyes, and who was driven to her present position only after months of struggling to live decently.

THE MASSACRES CONTINUE

Lately there has not been so much heard of Armenian massacres, but they continue nevertheless; it is only that there are fewer means by which the outside world can hear of them.

The writer considers that the reason for this treatment of the Armenians is that they are an easy prey, and that Mahommendans, rich, or poor, high or low, are by nature wedded to murder and robbery. The Turk, in addition, is still an invader, who treats others under his power as subject races.

The Armenians, morally and economically, are utterly ruined; probably the most industrious and thrifty race (and it is a Jew who described them as such) in the Turkish Empire has ceased to exist.

ENDNOTES

¹ F.O.371/2781/201201

² F.O.311/2781/4815

³ F.O.371/2781/264888

⁴ F.O. 371/2781.

ԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1916Ի (ԳԻՇԵՐ)
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ԶԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքին ցարական Ռուսիան, որոշակիորեն՝ 1916ին իր գերեվարած օսմանեան բանակի երկու արաբ սպաներ յանձնած էր իրեն դաշնակից Մեծն Բրիտանիոյ: Այս սպաները Շուքրի Շուրպաժի եւ Ահմետ Շէյխա, 27 Սեպտեմբեր 1916ին հարցաքննութեան ընթացքին ահաւոր իրողութիւններ կը պարզեն ի միջի այլոց Հայկական Յեղասպանութեան մասին, յատկապէս թէ «տեղահանութիւն» կը նշանակէր բնաջնջում:

Բրիտանական պաշտօնատար Մարք Սայքս, որ հայասէր մը չէր, կ'ուզէր հրապարակայնացնել փոխանցուած տեղեկութիւնները քանի որ թշնամին՝ Գերմանիա, Ասսորո-Հոնգարիա եւ Թուրքիա, «Աստուծոյ եւ մարդկութեան» անունով կոչէր կ'ընէին նոյն օրերուն:

Հայկական Յեղասպանութեան պատմութեան համար շատ կարեւոր վաւերաթուղթ մըն է այս՝ կանխատրամադրութիւն փաստող:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆԻ ԱՆՏԻՊ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ ՏԷՐ ԶՕՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ
mihran.min@gmail.com

Բանասեր, գրող, խմբագիր, մանկավարժ եւ երգիծանկարիչ Արամ Անտոնեան (Պոլիս 1875-Փարիզ 1952), Յեղասպանութենէն հրաշքով փրկուելէ եւ սուրիական անապատէն վերադառնալէ ետք ամբողջ կեանքը նուիրած է Մեծ Եղեռնի պատմագրման ու վաւերագրման աշխատանքին: Նախ՝ Զինադադարին, Հալէպի *Հայ Չայն* թերթին մէջ կոչով դիմած է տեղւոյն վերապրողներուն ու խնդրած անոնցմէ, որ աղէտին հետ առնչուող իրենց յուշերը գրի առնելով՝ տրամադրեն իրեն¹, ապա ի՛նք կամ իր կողմէ յանձնարարուած անձեր՝ իրենք գրի առած են անգրագէտ վերապրողներու յուշերը: Նոյն շրջանին, ան կրցած է Նայիմ Պէլէն եւ ուրիշներէ ձեռք ձգել Յեղասպանութեան վերաբերող թուրք կառավարութեան տասնեակ պաշտօնագրեր, ու այդպիսով իր մօտ մէկտեղուած է Հայոց Յեղասպանութեան յուշագրութիւններու եզակի ու մեծարժէք հաւաքածոյ մը, որ ցարդ հայերէն բնագիրով կը մնայ անտիպ²:

Զբաւարարուելով նիւթի հաւաքումով, Անտոնեան լոյս ընծայած է նաեւ Յեղասպանութեան վերաբերող վաւերագրական մեծարժէք հատոր մը՝ *Մեծ Ոճիրը*³ խորագիրով, ուր հրատարակած է կոտորածներուն մասին իր ձեռք ձգած պետական վաւերաթուղթերը եւ թարգմանաբար՝ թուրք պետական պաշտօնէայ Նայիմ Պէլի յուշերը, անոնց կցելով կարեւոր դիտողութիւններ ու բացատրութիւններ:

Վերոյիշեալ հատորին առընթեր, Անտոնեան լոյս ընծայած է նաեւ մեծ մասամբ Մեսքէնէի հայ գաղթականներու առօրեայէն վերցուած *Այն Սեւ Օրերուն... (Պատկերներ)* հատորը⁴ եւ պարբերական մամուլի էջերուն՝ հրատարակած է յուշագրական բնոյթի զանազան գործեր՝ «Աքսորի ճամբուն Վրայ»⁵, «Կոմիտաս Վարդ. Աքսորի Մէջ»⁶ եւ բազմաթիւ այլ յօդուածներ:


Տպագիր հսկայական նիւթերու կողքին, Անտոնեանի գրիչէն ծնած եւ Յեղասպանութեան հետ առնչուող բազմաթիւ այլ գործեր եւս կան, որոնք նուիրուած են Պապի, Ռաս Իւլ Այնի, Մեսքէնէի, Հալէպի, Տէր Զօրի եւ սուրիական անապատի միւս քստրավայրերու հայութեան ու այնտեղ տիրող պայմաններուն:

Անտոնեանի վերոյիշեալ անտիպներէն հոս հրատարակութեան կու տանք Տէր Զօրի կոտորածներուն վերաբերող իր ընդարձակ գրառումներուն մէկ մասը:

Սուրիական անապատին մէջ տեղի ունեցած կոտորածներուն մասին Անտոնեանի այս գրառումները իրենց պատմական մեծ արժէքին կողքին,

կը նպաստեն նաեւ որ բացայայտուին իր հիմնական աշխատանքին՝ Մեծ Ոճիրըին հետ կապուած բազմաթիւ մանրամասնութիւններ, նպաստեն չայոց Տեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան

նուիրուած այս կարեւորագոյն գործը աւելի լաւ հասկնալու, ինչպէս նաեւ անոր հետ կապուած բազմաթիւ լրացումներ ու բացայայտումներ կատարելու:



Անտոնեանի բնագիրը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց ոեւէ միջամտութեան: Կատարած ենք միայն կէտարդական աւելցուցած ենք անհրաժեշտ

աննշան հպումներ եւ մեր կողմէ ծանօթագրութիւնները:

Ծանօթագրութիւններուն մէջ աշխարհագրական վայրերու մասին եղած տուեալները տրուած են 1915 թուականի դրութեամբ:

ՆՕԹԵՐ ՏԵՐ ԶՕՐԻ ՄԱՍԻՆ ⁷

Զարդուելու երթալիք սելքիաթներուն⁸ սկզբնաւորութեան օրերուն, Զեքի պէյ⁹ տեսաւ որ քաղաքէն դժուար կ'ըլլայ մէկիկ մէկիկ փնտռելով երեւան հանել հայ գաղթականները, լուր հանեց թէ բոլոր հայերը պէտք է Մալիհիլէ թաղը¹⁰ հաւաքուին, եւ թէ հոն գացողները պիտի ազատին: Աւելի վստահութիւն ներշնչելու համար, ըսաւ որ քաղաքին արաբները հայերու ներկայութենէն դժգոհ ըլլալով, բողոքած են կեդրոնական կառավարութեան, որուն որոշմամբ՝ Սուվար¹¹-Շէտտատիյէ¹² գիծին վրայ մասնաւոր քաղաք մը պիտի շինուի հայոց համար: Սելք եղող հայերը այդ քաղաքին շինութեան պիտի աշխատէին իբր գործաւոր: Այս խաբէութեամբ մանաւանդ յաջողեցաւ ժողովուրդէն ստուար զանգուածներ համախմբել ու ճամբայ հանել: Մնացած մասը որ այդ առասպելին չհաւատալով կը շարունակէր պահուրտիլ, վերջէն դժուար ձեռք բերուեցաւ այլեւս:

Երբ Զաւէն Պատրիարք¹³ [Տէր] Զօր հասաւ¹⁴, սարսափ կը տիրէր արդէն տեղոյն հայոց մէջ: Բոլորն ալ պահուրտածի պէս էին: Պատրիարքը, Զօրէն Անայի¹⁵ ճամբով Պաղտատ պիտի երթար: Զօր ժամանած օրն իսկ հայերը տարտամօրէն լսեցին թէ բարձրաստիճան անձնաւորութիւն մը եկած է: Ինչ ազգի պատկանիլը չէին իմացած: Կը

կարծելին թե եկողը քննիչ մըն է, ինչ որ սրտապնդութիւն կու տար իրենց: Շուտով սակայն արարները հասկցուցին իրենց թե եկողը հայ է.- «Ձեզի մեծ մը եկած է», կ'ըսէին: Երբ իմացուեցաւ որ այդ խորհրդաւոր անձնաւորութիւնը պատրիարքն է, բոլորն ալ տխրեցան, որովհետեւ չէին գիտեր անոր Պաղտատ արքայութեամբ ըլլալը, ու կը մտածէին թե ազգը ամբողջ փճացնելէ ետք՝ Պատրիարքն ալ կը բերեն իբր կափարիչ բացուած գերեզմաններուն: Անոր սպաննուիլը գուշակելով կը սկսէին նախազգալ թե իրենց վախճանը նոյնը պիտի ըլլայ:

Այդ միջոցին՝ Տէր Զօրի մերքեզ մեմուրը՝¹⁶ վատահամբաւ Մուսթաֆան¹⁷, իր օգնականը Պետրի, մահափորձի ծրագիր մը կը մշակէին՝ Ձէքիի հետ: Պատրիարքը կը տարագրուէր գրեթէ մինակ. միայն քրոջը աղջիկը կար հետը¹⁸: Անապատէն անցած էին անշշուկ, Զօր գալն իսկ վստահաբար ծանօթ չէր քաղքին ժողովուրդին: Պետրի՝ որ պատրիարքին պիտի ընկերանար իբր հետեւորդ, իր վրայ կ'առնէ սպաննութեան գործը եւ իսկոյն ճամբայ ելլելով կը հասնին Անէ: Նոյն օրերուն՝ Անէի գայմագամն էր պարկեշտ մարդ մը, ազգական Զօրի Մէճլիսը Իտարէի¹⁹ պաշտօնակալ²⁰ Ալի Մայիտ պէյի: Պետրի շիտակ գայմագամին քով կ'ելլէ, եւ կը բացատրէ ծրագիրը, յայտնելով որ սպաննութիւնը պիտի կատարուի անանկ պայմաններու մէջ որ եթէ յայտնուի ալ, բնաւ պատասխանատուութիւն չպիտի գայ ո՛ր եւէ մէկուն վրայ: Ըստ իր ծրագրին՝ զաղտնաբար կառքին հետեւող արբանեակներ յանկարծ իբր աւազակ յայտնուելով, հրացան պիտի արձակէին կառքին վրայ եւ սպաննէին պատրիարքը:

Բայց գայմագամը խստիւ կ'ընդդիմանայ եւ կը սպառնայ իրողութիւնը հրատարակել՝ եթէ սպաննութիւնը կատարուի: Պետրի կը պնդէ, բայց անօգուտ տեղը, ու վերջապէս կը ստիպուի լքել սպաննութեան ծրագիրը²¹:

Այս անցքը պատմած է նոյն ինքն Ալի Մայիտ պէյ՝ Տոքթ. Մարգարեանի²²:

* * *

Տէր Զօրի Մերքեզ Մեմուրի Մուսթաֆան՝ ջարդերուն ու խռչտանգումներուն մէջ Ձէքի պէյի աջ բազուկը եղաւ: Այնթապցի էր, ուր իր տունը կը գտնուի Տապպաղխանէ²³ փողոցը: Չափազանց անողորմ ու բարբարոս մարդ մը որ հայոց համար ճշմարիտ սարսափ մը դարձած էր: Բոլոր տանջանքները իր հսկողութեան տակ կը տրուէին: 1917ին՝ Զօրի սուրիանիներու եկեղեցին բոզանցի վերածեց եւ քաղաքին մէջ գտնուող հայ կիներն ու աղջիկները բռնի այդ եկեղեցին լեցուց իբր բոզ, եւ ինքն իսկ օրինակ ըլլալով բնիկ ժողովուրդը մղեց որ զանոնք լլկեն ու պղծեն անխնայ: Այս արարքը կատարեց Ձէքիի յաջորդող միութեսարըֆին²⁴ այնթապցի Ապտիւլ Գատէրի (կը բնակէր Այնթապ՝ Ամերիկեան Հիւանդանոցին²⁵ դէմը) հաւանութեամբ: Իրեն պէս արիւնկզակ մարդ մըն

ալ աս էր, շատ հակառակ հայոց, եւ եթէ ջարդը Ձեքի պէ կատարած չըլլար՝ ապահովաբար ինք պիտի ընէր: Իր յաջորդը՝ Հիլմի պէ, որ լաւ համբաւ մը թողուց, պաշտօնի անցնելուն պէս վերջ տուաւ սուրիանիներու եկեղեցիին մէջ կատարուող այդ խայտառակութեանց, եկեղեցին յանձնեց տէրերուն եւ կիներն ու աղջիկները արձակեց: Բայց չկրցաւ դպչիլ Մուսթաֆային՝ որ մեծ ազդեցութիւն ունէր նոյն իսկ արաբ շրջանակներու մէջ: Ապտիլ Գատեր վերջէն պաշտօնի բարձրացմամբ՝ Գասթամպօլլի²⁶ միութեսարըֆ եղաւ: Արժանի էր որ վարձատրէին զինքը, որովհետեւ կերպով մը Ձեքի պէյի գործը լրացուց Ջօրի մէջ, վերապրող սակաւաթիւ հայերը անընդհատ խոշտանգելով:

Ջօրի ջարդերուն ատենը մանաւանդ Մուսթաֆա մեծ գործունէութիւն ու եռանդ ցոյց տուաւ: Տեսնելով Ձեքիի թափած ճիգերը՝ ժամ առաջ Ջօրի գաղթականները բնաջինջ ընելու մասին.


- Փաշա՛ս, հոգ մի՛ ընէր, կ'ըսէր անոր, ես ամէն բան կը կարգադրեմ կոր:

Հալէպի անկման վրայ՝ երբ թուրք իշխանութիւնը վերցաւ Ջօրէն, տեղւոյն ջարդուկտոր հայերը սկսան ձեռնարկել ազգային կազմակերպութեան մը: Էն առաջ որբերը հաւաքել սկսան, որովհետեւ մեծ մասամբ փողոցներն էին: Կոտորակուելով կոտորակուելով հազիւ 50 հատ միայն մնացեր էին, բայց նոյն իսկ ատոնք աչքի փուշ էին իրեն համար, շատ կ'երեւային:

- Մեծ սխալ գործեցի, կ'ըսէր այդ օրերուն, ասոնք ալ ապրեցնելու չէի:

Երբ թրքական իշխանութիւնը վերջնականապէս վերցաւ Ջօրէն, տեղւոյն վերապրողները կազմեցին «Ազգային Մարմին» անունով Միութիւն մը (նախագահ՝ Եզնիկ քահանայ Թէքէեան²⁷, ատենապետ՝ Կ. Մօրճիկեան²⁸, ատենադպիր՝ Սահակ-Մեսրոպ²⁹): Այս Մարմինը՝ որուն ոյժ կու տային բոլոր վերապրողները, արաբ կառավարիչին ժամանելուն յաջորդ օրն իսկ դիմում ըրաւ Մուսթաֆան ձերբակալել տալու համար: Դիմումը մնաց ապարդիւն, որովհետեւ կառավարիչը առարկեց թէ այդ կարգի ոճրագործները միջազգային ատեանի մը առջեւ պիտի դատուին եւ ինք իրաւասութիւն չունի այդ ատեանին գործառնութեանց խառնուելու: Խոստացաւ միայն՝ խնդիրը Հալէպ իմացնել:

Մուսթաֆա, տեսնելով որ Ջօր այլեւս ապահով չէ իրեն համար, պատրաստուեցաւ Հալէպ մեկնելու: Ազգ. Մարմինը անկէ առաջ լուր հասցուց Հալէպ, ինձի գրուած նամակով մը: Իսկոյն դիմեցինք Մուրիոյ եւ Հայաստանի Գօմիսէր Պ. Բիքօի³⁰ որ խոստացաւ ձերբակալել տալ Մուսթաֆան: Երբ այս վերջինը հասաւ Հալէպ, մեծ դժուարութեամբ միայն կարելի եղաւ զինքը բանտարկել տալ, որովհետեւ ազդեցիկ բարեկամներ ունէր, որոնք նոյն իսկ մտադիր էին զինքը Մերքեզ Մեմուրիի պաշտօնով վերահաստատել Հալէպի մէջ:



Սահակեան Լեւոն³¹ այնթապցի ծանօթ ընտանիքի մը կը պատկանէր, Սահակ աղա Սահակեանի զաւակն էր եւ Այնթապի մէջ՝ ներկայացուցիչ Տօյ Օրիանթ Պանքի: Տեղահանութեան միջոցին ինք ալ Հալէպ բերուած ըլլալով՝ կ'աշխատի նորէն Այնթապ դառնալու, եւ որովհետեւ Տօյ Պանքի համար շատ կարող գործակալ մըն էր, այս վերջինն ալ ձեռնարկներ կ'ընէ Պոլսոյ մէջ ու կը յաջողի ներքին գործոց նախարարութենէն հրաման հանել տալ այդ մասին: Հրամանը Հալէպ կը հասնի Մուսթաֆա Ապտիլ Խալիքի³² օրով:

Մինչեւ այդ ատենը Լեւոն՝ Այնթապի մէջ թուրք էշրաֆներու³³ վրայ ունեցած առնելիքները գանձելու ձեռնարկներ ըրած էր բազմիցս: Էշրաֆները դիմեր էին երկու հայահալածներու՝ Այնթապի միւթեսարք Ահմէտ պէյի³⁴ եւ մէպուս Ալի Ճէնանի պէյի³⁵, որոնք ձեռքի տակէ կ'աշխատէին Սահակեանը հեռացնելու Հալէպէն:

Անգիտակ անցած դարձածին՝ Սահակեան կ'աշխատի նաեւ ձեռք անցնել այն գոհարեղէնները, գորս Այնթապէն ելած ատենը իբր աւանդ թողած էր տեղւոյն Օսմ. Պանքան: Պետական կարգադրութեամբ՝ պանքաներու մէջ գտնուած հայու աւանդները գրաւուելով կը յանձնուէին Էմլաքը Մէթրուքէի Քօմիսիոններուն³⁶: Օսմանեան Պանքային Այնթապի տնօրէն էր այդ միջոցին հալէպցի մը՝ Լեւոն Տահէր, ծանօթ հայատեաց, որ չէր խպներ հրապարակաւ ըսելու թէ «Հայերը արժանի էին իրենց կրած պատժին»: Երբ Սահակեան իրեն դիմում կ'ընէ գոհարեղէններուն համար, իսկոյն Միւթեսարք Ահմէտ պէյի կ'իմացնէ թէ Սահակեան պանքան թողած աւանդները կ'ուզէ, եւ այդ դիմումը ընելէ վերջ,

կառավարութեան կը յանձնէ թէ՛ Սահակեանի գոհարեղէնները եւ թէ՛ առ հասարակ բոլոր այնթապցիներու, նոյն իսկ Հալէպ գտնուող հայերու կողմէ պանքան թողուած ականները:

Ճիշդ նոյն օրերուն Ահմետ պէյի թելը կը կոտրի արկածով, կու գայ Հալէպ դարմանուելու, եւ առթիւ մը լուր կը դրկէ Սահակեանի որ «Ան շունը թող տեղը նստի, գոհարեղէն, եւայլն չպահանջէ, հակառակ պարագային զինքը կը փճացնեմ»: Ինք ու Ալի Ճենանի ամեն էնթրիկ կը բանեցնեն, մինչեւ որ, հակառակ ներքին գործոց նախարարութեան կողմէ եկած հրամանին՝ վալին, Մուլթաֆա Ապտիւլ Խալիք, Սահակեանը հսկողութեամբ կը քշէ Տէր Զօր:

Ժամանակ կ'անցնի, Զէքի պէյ Զօր կ'երթայ իբր միութեսարըֆ: Այնտեղ կը ծանօթանայ Սահակեանի ու կը մտերմանան այնքան որ շատ հեղ միասին բօքեր կը խաղային: Գիշեր մը՝ Սահակեան հիւր եղած էր Զօրի հեռագրատան տնօրէն Պէհճէթ պէյի, շատ պատուաւոր երիտասարդ մը: Ժամանակ անցընելու համար կը նստին նարտ խաղալու, բայց հագիւ սկսած, կու գան կը կանչեն Լեւոնը, ըսելով որ Զէքի պէյ զինքը կ'ուզէ: Թէ՛ Լեւոնի եւ թէ՛ Պէհճէթ պէյի տպաւորութիւնը այն կ'ըլլայ որ Զէքի պէյ խաղի համար կը կանչէ: Լեւոն կ'ելլէ կ'երթայ:

Առտուն՝ Պէհճէթ պէյ հեռագրատուն կ'երթայ եւ առաջին տեսած բանը կ'ըլլայ օրինակը հեռագրի մը որ նախորդ օրը հասած էր, եւ որով ճէմալ Փաշա Զէքի պէյի կը յանձնարարէր Լեւոն Սահակեանը հանգստօրէն (միւրէֆֆէէն) Հալէպ դրկել: Պարագաները՝ Հալէպի մէջ Փաշային դիմեր, եւ ներքին գործոց նախարարութեան ծանօթ հրամանը ցոյց տալով, յաջողէր էին հեռագիրը զարնել տալ:

Պէհճէթ պէյ չափազանց կ'ուրախանայ, ու կը մտածէ թէ Զէքի պէյ այդ աւետիսը հաղորդելու համար անշուշտ գիշերանց կանչած էր Սահակեանը: Չի կրնար կենալ պաշտօնատեղին եւ ուրախութենէն կ'երթայ Սահակեանի տունը: Այնտեղ իրեն կ'ըսեն թէ Լեւոնը նախորդ գիշերը եկան փնտռեցին, բայց տունը չէր, ու գիտնալով որ Պէհճէթ պէյի հիւր գացած է, հոն դրկեցին փնտռողը. անկէ ի վեր երեւան չէ ելած:

Պէհճէթ պէյ կը շփոթի կը մնայ, բան մը չի հասկնար եղածէն, ու կը դառնայ հեռագրատուն, եւ ահա հոն կը հասնի նաեւ Զէքիի մէկ հեռագիրը, ուղղուած ճէմալ Փաշայի, թէ «Լեւոն Զօրի մէջ չի գտնուիր, եւ թէ երկու ամիս առաջ՝ Զօրի շրջակաները գործող հայ չէթէներուն միանալով աներեւոյթ եղած է»: Պէհճէթ պէյ կը կատողի, կը փրփրի, կը սկսի պոռակ կանչել Զէքիի դէմ: Որովհետեւ կը հասկնայ թէ իրօք ի՞նչ եղած է խեղճ Սահակեանը:

Իրապէս ալ Զէքի զայն սպաննած էր՝ Շաշեանի խումբին հետ:

Պէհճէթ պէյ Հալէպ էր քաղքին անկումէն ետք, եւ այս անցքը ինք անձամբ պատմեց հալէպցի ծանօթ վաճառական Պ. Խաչատուր Շահինի³⁷ ներկայութեան:

* * *

Ձեքի պէլ շատ լաւ ձի կը նստէր: Արաբները անգամ, որոնք զմայլելի ձիավարներ են, միշտ մեծ գովեստով կը յիշատակէին ասիկա: Մեւ գամբիկ մը ունէր՝ Մէօհրէն, եւ անով շատ հեղ 10-12 ժամուան ճամբայ կտրած է 6-7 ժամուան մէջ: Սովորաբար սակայն ֆայթօն կը նստէր, եւ ընդհանրապէս ֆայթօնով կը հետեւէր սէվքիյաթներուն մինչեւ Մարաթ³⁸ ու Սուվար: Իր բարբարոսութիւնը նոյնիսկ չէլէններուն՝ իր հաւատարիմ արբանեակներուն, սոսկում կը պատճառէր:

Սէվքիյաթներէն առաջ Րէս-Իւլ-Այն գնաց, եւ ամբողջ ամիս մը աշխատեցաւ կազմակերպելու ջարդը, բանակցելով չէլէններուն հետ: Սակայն չէլէնները շատուոր չէին, եւ ջարդուելիք ատելի քան 100,000 հայ կար Տէր Ջօրի մէջ ու շրջակաները: Մէկ կողմէն ալ կը դրկուէին Մէսքէն³⁹ Ջօր գիծն ի վար, որուն վրայ կը գործէր տխրահռչակ Հազգը պէլ: Այս պատճառաւ ձեռք առաւ նաեւ Մարաթ-Շէտտատիէ գիծին արաբները, մասնաւորաբար Ջօր-Մարաթ-Սուվար գիծին երկայնքը բանակող Պըկկարա աշիրէթը⁴⁰, Սուվար-Շէտտատիէ գիծին երկայնքը բանակող Ակէլտէ⁴¹ աշիրէթը, եւ Շէտտատիէի ու շրջականերուն մէջ գտնուող Ճպուրի աշիրէթը⁴², զանոնք շլացնելով կատարուելիք կողոպուտով: Րէս-Իւլ-Այնէ⁴³ դարձին կանգ առաւ նաեւ Սուվար, Շէտտատիէ, մասնաւորաբար Մարաթ, որուն միտիւրն⁴⁴ էր այդ միջոցին Ջօրի ծանօթ հայասէր պէլէտիէ ըէիսի⁴⁵ Հաճը Ֆատըլի⁴⁶ մէկ ազգականը՝ Մուհամմէտ Լապէին: Ձեքիի առաջարկին վրայ, անիկա մերժեց ջարդերուն մասնակցիլ: Ձեքիի կատողած՝ անմիջապէս պաշտօնանկ ըրաւ զայն, եւ անոր տեղ իբր առժամեայ միտիւր Մարաթ դրկեց գովեստը Պէտրին, որ քիչ մնաց Ջաւէն Պատրիարքը պիտի սպաննէր: Տէր Ջօրի արաբներէն ալ ստուար մաս մը Ձեքիի ծրագրին յարեցան, հետեւելով Ջօրի մէպուս⁴⁷ Մուհամմէտի⁴⁸ որ շատ վարնոց մարդ մըն էր, ինչպէս արդէն քաղքին բնակչութեան մեծագոյն մասը: Այս արիւնկզակը, Պուլէն դարձին՝ տեսնելով Ջօր խոնուած հայերու բազմութիւնը՝

- Այս շուները ինչո՞ւ կը սպասցնեն այստեղ, ինչո՞ւ չեն դրկեր ու փճացներ, ասա՞նկ կը գործադրեն պետութեան հրամանները, պոռացեր էր:

Նոյն խօսքը կրկնած էր նաեւ տեսնելով Ջօրի հայ որբերը, զորս Հաճի Ֆատըլ պատսպարած էր որբանոցի մը մէջ:

Այս մէպուսէն գատ՝ Ձեքիի գործակիցներուն մէջ կ'արժէ մասնաւոր կերպով յիշատակել Անէի գայմագամ Թուրքի Մահմուտ⁴⁹, Ապտուլլահ Փաշա⁵⁰, որ բաւական ժամանակ անցուցած է Պոլիս, եւ որ վերջէն՝ որբերը պիտի սպաննէր: Ձեքի զայն սէվք մեմուրի նշանակած էր: Մէպուսին եղբայրը՝ Խալէտ էֆէնտի[ն էր]: Ջինուորականներէն [էին]՝ ալայ գօմանտանը⁵¹ Սալաէտտին պէլ, թապուր գօմանտանի⁵² Ալի Մահիպ պէլ, էսթէր սիւվարի իւզ պաշի⁵³ Հասան էֆ., էսթէր սիւվարի

միլլազիմ⁵⁴ Թեֆիք էֆ.: Նաև՝ վերոյիշեալ մերքեզ մեմուրի Գավարատ օղլու Մուսթաֆան, Անէյի զօմիսէր Պէտրի էֆ., փոլիս Մուհարրէմ պոլսեցի: Ոստիկանները 10 հատ էին, բացի երեքէն (փոլիս Հիքմէթ՝ պրուսացի, Գօմիսէր Մահմուտ՝ տէր-զօրցի եւ ուրիշ մը) միշտ բարբարոս ընթացք մը ունեցան հայերուն հանդէպ:

* * *

Ալի Մուստ պէյի⁵⁵ պաշտօնավարութեան օրով կատարուած սէվքիյաթները (հաւանականաբար երեք սէվքիյաթ) դէպի Մուսուլ⁵⁶, դրկուեցան Մարաթ-Պուսարա⁵⁷ ճամբով, անցան Խապուրի⁵⁸ վրայ ձգուած քարէ կամուրջէն եւ բարձրացան Սուվար: Այս ճամբան՝ միշտ ջուրի ափերուն հետեւելուն՝ լաւագոյն էր քան Մարաթ-Սուվար գիծը որ անապատէն կ'անցնի, բոլորովին անջրդի է: Ձեքի պէյ դիտմամբ այդ գիծը ընտրած էր՝ թէ՛ աւելի տաժանելի դարձնելու համար կարաւաններուն գնացքը, եւ թէ մանաւանդ աւելի հեշտիւ իրականացնելու համար իւր դժոխային ծրագիրը: Կարաւանները՝ քաղքէն՝ Սալիհիյէի համախմբման թաղէն ելլելէն վերջ՝ փայտէ պզտիկ կամուրջը անցնելով կանգ կ'առնէին վրաններուն յատկացուած վայրը: Երբ ջարդի համար ճամբայ հանուած մեծ սէվքիյաթները սկսան՝ Մէսքէնէի գիծէն եւ Բաքքայի⁵⁹ շրջականերէն վար իջած աւելի քան 10,000 գաղթականներ կային հոն՝ վրաններու տակ: Շատ հիւանդ կար իրենց մէջ, անանկ որ ստիպուած էին հողը փորելով գետնափոր հիւանդանոց մը շինել ուր կը մեկուսացնէին, - աւելի ճիշդը՝ ողջ ողջ զերեզման կը դնէին հիւանդները: Առ հասարակ շատ խեղճ էին, եւ կ'ապրէին չափազանց ողբալի դրութեան մը մէջ, - հակառակ անոր որ կարողութեան տէր մարդիկ ալ ունէին, - որովհետեւ Ձեքի պէյ՝ Ջօրի վաճառորդներուն արգիլած էր անոնց բան տանելով ծախելու: Այդ թշուառներուն [համար] շուն ու կատու ուտելը խնջոյքի պէս բան մըն էր: Ասոնցմէ բոլորովին անտէր 7-800 կին անջատելով տարած են Պուսարա եւ թողած են գետին եզերքը: Ծայրայեղ աղքատութեան մէջ էին ամենքն ալ. մէկ քանին վրաններ ունէին, բայց անոնք ալ կողոպտուեցան արաբներու կողմէ: Ոչ միայն ո՛ր եւ է ողորմութիւն չէր ըլլար անոնց, այլ նոյն իսկ չէին թողուր որ շրջակայ արտերուն մէջ ինկած ցորենի հատիկները հաւաքեն կամ բոյսերը ուտեն: Ամէն օր արաբները կը մտնէին անոնց մէջ, եւ ամենէն գործի գալիքները առեւանգելով կը հեռացնէին մէկ քանի քայլ, կը լլկէին միւսներուն աչքին առջեւ: Օրն ի բուն դժոխային տեսարաններ իրարու կը յաջորդէին այսպէս: Լլկուած կիներ՝ եթէ գեղեցիկ ըլլար, ձեռքէ ձեռք կ'անցնէր. շատ հեղ մինչեւ 15-20 հոգի յաջորդաբար կը լլկէին զայն: Յաւի աղաղակներուն վերջը չէր գար: Եղան կիներ որոնք դէմքերնին ճանկոտելով պատառ պատառ ըրին, որպէս զի տգեղ երեսնան, եւ ազատին այդ զարհուրանքէն: Այս բոլոր կիներն ալ շատ հազուագիւտ բացառութեամբ, Պուսարայի մէջ մեռան անօթութենէ: Սատկած ձիու մը նեխած, գրեթէ որդնոտած դիակը միջոց

մը զիրենք ապրեցուց շաբաթի մը չափ: Ջարհուրելի կռիւներ տեղի ունեցան այդ որդնոտած միսին համար: Ձիուն մինչեւ ոսկորները, քարերու միջոցաւ ծեծելով, փոշիացնելով, կերան: Երբ այլեւս ուտելիք բան չմնաց, իրենց մեռած պզտիկներուն դիակները կերան: Մարդակերութեան այս դեպքերը տեղի ունեցան նաեւ ուրիշ տեղուանք, մասնաւորաբար Մարաթի մէջ՝ Ջօրի սելվիյաթներու ընթացքին եւ Բաքայի շրջակաները:

* * *

Ջօրի բնիկ տարրը, սելվիյաթներու միջոցին առ հասարակ ցնծութեան մէջ էր: Արդէն վարնոց ժողովուրդ, բոլորովին կ'ուրախանար, որովհետեւ գաղթականները, մեկնած ատեննին, աժան աժան կը ծախէին ինչ որ ունէին: Շատեր խանութ բացած ըլլալով, ապրանք ունէին, բայց մանաւանդ՝ տակաւին գոհարեղէն կը մնար շատ մը ընտանիքներու մօտ՝ այնքան վաճառումներէ եւ կողոպուտներէ ետք:

Ջօրէն մինչեւ Մարաթի շրջանակը կը գտնուի Պրկկարա Աշիրէթը. Սուվարի շուրջ՝ Ակէյտէտ Աշիրէթը, անկէ վեր՝ Շէտտատիյէի շուրջը՝ Ճպուրի Աշիրէթը որ կը տարածուի մինչեւ Հասիչէ⁶⁰, ուր իրեն կը խառնուի Շերապի Աշիրէթը⁶¹: Աւելի վեր՝ դէպի հիւսիս՝ Սինճարի⁶² շրջանակին մէջ խառն կը գտնուին Թայ⁶³ եւ Շամմար⁶⁴ Աշիրէթները: Այս բոլոր աշիրէթներուն մէջ ամենէն զօրաւորն է Շամմարը: Բոլորն ալ, գրեթէ առանց բացառութեան, մասնակցեցան ջարդերուն եւ կողոպուտին: Ջէքի պէյ ամենուն հետ ալ բանակցած էր նախապէս, եւ անոնց նոյն իսկ լաւագոյն տարրերը յաջողած էր անբարոյականացնել, կատարուելիք կողոպուտին հրապուրիչ հեռանկարը խաղցնելով անոնց սովորական ընչաքաղց աշուրներուն առջեւ: Բայց ամենէն աւելի Ջէքի պէյի ձեռնտու գտնուեցան Սէֆայի⁶⁵ եւ Բէս-Իւլ-Այնի շրջանակին չէրքէզները: Երբ Ջէքի՝ ջարդերու նախապատրաստութեան համար շրջան մը ըրաւ մինչեւ Բէս-Իւլ-Այն եւ Հասիչէ, անոնք մեծ փութկոտութեամբ ընդգրկեցին իր ծրագիրը: Վերադարձին հետը Տէր Ջօր բերաւ անոնցմէ 20-30 հոգի: Ժանտարմաներուն հետ՝ չէչէններու յանձնուած էր սելվիյաթներու հսկողութիւնը թէ՛ ճամբուն ընթացքին, եւ թէ՛ Մարաթ-Սուվար ճամբուն համախմբման կէտերուն վրայ: Մպանութիւնները, խմբական ջարդերը կատարուեցան առ հասարակ թէ՛ չէչէններու եւ թէ՛ արաբներու կողմէ:

Սելվիյաթները այն աստիճան շահաբեր էին որ իւրաքանչիւր ժանտարմա յաճախ մինչեւ 50 ոսկի կու տար իր պետերուն՝ որպէսզի ինք ալ ընկերանայ կարաւանին: Արդէն թէ՛ ներքին գաւառներու եւ թէ՛ անապատին մէջ՝ նոյն բանն էր: Շատ անգամ կ'ըսէին ժողովուրդին թէ մենք ձեզի սաչափի գնած ենք,- անշուշտ տուած դրամին խոշորցնելով, բազմապատկելով,- եւ այդքան գումարի փոխարէն դրամ, գոհարեղէն կամ ծանրագին հագուստներ կը պահանջէին ու կ'առնէին:

* * *

Հինգ ամիս կար որ Զեքիի մեծ ջարդերը կը տեւէին- եւ այլեւս գրեթէ գաղթական չէր մնացած Զօր, բացի մէնզիլը աշխատող սակաւաթիւ հայերէ եւ փոսպաններէ, որոնք տակաւին կը պահուէին, որովհետեւ պէտք կար իրենց աշխատութեան: Որքանոցը, այդ պահուն զարհուրելի դրութեան մը մէջ էր: Աւելի քան 800 բոլորովին անոք տղաք խոնուեր էին քստմնելի աղտոտութեան մը մէջ, մեծ մասամբ առանց հագուստի, եւ անօթի կը տուայտէին այդ անանուն որջին մէջ, ուր արեւուն լոյսն անգամ կը խնայուեր իրենց: Հալած, ծիրած տղաք էին, կաշի ու ոսկոր մնացած եւ լորճած ամէն տեսակ սարսափներով ու անբարոյութեամբ լծուած կենցաղի մը մէջ: Ոմանք կը փախէին այդ գերեզմանէն ուր զիրենք թաղեր էին ողջ ողջ, կը սկսէին թափառիլ փողոցները, ձեռքերնին բաց, պատահ մը հացի համար հազարումէկ աղերս բերաննին: Ընդհանրապէս հացէ աւելի ծեծ էր կերածնին: Կը ծեծէին մանաւանդ երբ զիրենք ձեռք անցընէին այդ փախստականի վիճակով: Ապտակներով, կիցերով, հայհոյութիւններով կը քաշքշէին փողոցներէն նորէն կը տանէին որքանոցը կը թխմէին:

Մօտ 800 պզտիկներ, ընդհանրապէս հիւանդ, անկար ու ցաւագարած, կեանքի այդ պայմաններուն մէջ կը ճենճերէին՝ երբ Հագգը պէ որբերու վերջին հունձքը ըրաւ Մէսքէնէի գիծէն վար, եւ բոլոր կայքերուն ալ մէջ գտնուած փոքրիկները հաւաքելով դրկեց Զօր: Այլակերպ, անբանացած, անճանաչ տղոց կարաւան մըն էր որ անապատն ի վար քշուեցաւ անօրինակ վայրէնութեամբ մը, ձմեռուան ամէնէն խստագոյն օրերուն: Շատեր ինկան ճամբաներուն վրայ, ուրիշներու մօտ՝ որոնք կայքէ կայք կամ արաբ վրաններու շուրջը անճար ու անօթի թափառած ատեննին նոյնպէս ինկեր, անթաղ մնացեր, որդնտներ կամ կմախ[ք]ացեր էին:

Աննկարագրելի բան էր իրենց թշուառութիւնը: Կը քալէին մեծ մասամբ բոպիկ ոտքով ու կիսամերկ, տաժանքի լուծը վիզերնուն, եւ այլեւս հոգի չկար իրենց վրայ որ փորձէին փախչիլ, շրջականերէն պատահ մը հաց մուրալու համար: Շատերուն ոտուրները ուռեր, կարմրեր, շարառտ վերքերու խառաններով ծածկուած ահռելի մսագունդեր դարձեր էին: Եւ այդ վերքերը առանց դարմանի մնալով մնալով որդնտներ էին ալ, ու խեղճ պզտիկները մատուրներով կը քաշէին կը հանէին այդ որդերը իրենց վերքերուն մէջէն, եւ գետին նետելէ առաջ կը վարանէին կը կենային, անգամ մը երկուք կը նայէին անոնց կակուղ, իւղոտ մարմնին որ կը գալարուեր իրենց մատուրներուն շուրջբոլորը, կը նայէին զարհուրելի ըղձանքով մը, իբր թէ ուտել ուզէին զանոնք,- այնքա՛ն անօթի էին: Իրենց ցաւը պոռալու կարողութիւնը չունէին այլեւս, եւ ճամբաներուն երկայնքը այդ տաժանքի փոթորիկէն հնձուելով, կ'իյնային իրարու ետեւէ, անձայն, անշուկ:

Կիլիկեցի կառապան մը՝ Հաֆրզ՝ որ այդ օրերուն Հագգը պէր⁶⁶ Ջօր տարաւ, պատմեր էր թէ ճամբուն ընթացքին Հագգը պէր դիտմամբ այդ դիակներուն վրայէն քշել կու տար կառքը՝ սարսափելի հայհոյանքներով եւ աւելի սարսափելի հրճուանքով մը: Մա՞նչ թէ աղջիկ մը, յայտնի չէր, որովհետեւ՝ այդ ահռելի կերպարանափոխութեան մէջ այլեւս կարելի չէր որոշել պզտիկներուն սեռը, ինկեր էր ճամբէն հեռու, հողակոյտի մը կուշտը, ու կը տնքար ո՛վ գիտէ ինչ անպատում ցաւերէ խարտոցուելով: Հնար չկար կառքը մինչեւ այդ բլրակը դարձնելու: Հագգը պէր՝ կատղած որ չի կրնար այդ տակաւին ապրելու յամառող հայու ձագը ջախջախել կառքին անիւներուն տակ, ատրճանակը հանելով երեք գնդակ կ'արձակէ անոր վրայ: Կառապանը չէր գիտեր այլեւս թէ ի՞նչ եղաւ տղուն, զարնուեցա՞ւ: Բայց չէ՞ որ մեռնելու դատապարտուած էր այդ ամայութեան մէջ: Վերադարձին՝ իրիկուան մը մօտ՝ նորէն անցեր էր այդ հողակոյտին առջեւէն, եւ աչուրները ինքնաբերաբար փնտռեր էին զայն: Բայց չէր կրցեր տեսնել տղան կամ անոր մարմինը, որովհետեւ ագռաւներու ահագին երամ մը խոշոր սեւ պատանքի մը պէս ծածկած էր այն կետը որուն վրայ խեղճ պզտիկը հոգի կը քաշքշէր օրեր առաջ: Կառքը քշեր անցեր էր առանց այլեւս հետաքրքրուելու, եւ քանի մը քայլ անդին հանդիպեր էր խոշոր գամբերու որոնք իրարու հետ կը կռուէին այլեւս անճանաչ ու արիւնտ գունդի մը համար որ մարդկային գլուխի մը կը նմանէր:

Ջօր իջնելուն, Հագգը պէր հետաքրքրուեր էր թէ քանի՞ որբ իջեցուցին վար: Արձանագրութիւնները հազիւ 250 պզտիկ ցոյց կու տային: Ջարմացեր ու կատղեր էր, պնդելով որ աւելի պիտի ըլլան, եւ փնտռել տուեր էր այն ժանտարմաները որոնք որբերուն կարաւանը քաղաք իջեցուցած էին, որովհետեւ կը կասկածէր թէ խոշոր մաս մը որուն պակասած ըլլալուն ապահով էր, կրնար փրկուած ըլլալ չարաշահութեամբ կամ անփութութեամբ: Ժանտարմաները սակայն Ջօր չէին, մեկներ էին ուրիշ կէտ մը: Բայց անոնց հետ տեսնուած մարդիկ կը փութան Հագգը պէրը ապահովցնել, պարզելով թէ ինչպէ՞ս այդ պզտիկները պակսեցան:

Մէքքէնէն ու շրջականերէն հաւաքուած որբերու կարաւանը, 300 տղոցմով, իջեր էր Ապու Հարրար⁶⁷, ուր կը գտնուէր նոյն կայքին տխրահռչակ Միւտիբը՝ օն պաշի⁶⁸ Բահմէտտինը⁶⁹: Միւտիբը չէր թողած որ անոնք կայքը մտնեն, եւ ժանտարմաները տղաքը տարեր ձգեր էին կառուղիին այն կէտին վրայ ուրկէ անապատը քողարկող սարերը կը սկսին: Քիչ ետքը՝ Բահմէտտին գացեր էր զանոնք ճամբու դնելու: Տակաւին կարաւանը ճամբայ չելած, այդ տղոցմէն չորս հինգը յանկարծ խոյացեր էին դէպի օն պաշիին ձին, եւ անոր յետոյքն ի վար փերթ փերթ իյնող աղբին մէջէն սկսեր էին իրարմէ յափշտակել մարսուած զարիի հատիկները որոնք յստակօրէն կ'որոշուէին զարշահոտութեամբ միացող թրիքի կոյտին մէջ: Անասունը՝ այդ անակնկալ արշաւէն վախնալով

խորշեր էր ու քիչ էր մնացեր որ օնպաշին վար նետե վրայէն: Այն ատեն՝ կատաղութեան նոպայի մը կուրութեան մէջ, արիւնարբու հրէշը զարհուրագին արշաւով մը ձին քշեր էր տղոց խումբին վրայ՝ եւ անոր սմբակներուն տակ ամբողջ վարկեաններ անխնայ ճզմեր էր տարաբախտ փոքրիկները որոնք ոչ իսկ փախչելու ոյժ ունէին այլէս: Գինովցած այդ դժոխային վայրենութենէն զոր այն մարտիրոսացող մանուկներուն ողբերն ու հեծեծանքները բոլորովին կը գրգռէին, օնպաշին կատարածը կը շարունակէր կատաղութեան կոյր ոգիի մը պէս, հայեոյելով ամէն բանի եւ ամէն մարդու, փչելով նոյն իսկ Հագգը պէյի դէմ որ այդ իժի ձագերը երկար բարակ ժողվելու եւ ճամբայ դնելու տաղտուկը տուեր էր իրեն՝ երբ կարելի էր տեղին վրայ ալ լմնցնել զանոնք մինչեւ յետինը:

Քառորդ ժամ վերջ՝ երբ կարաւանը ճամբայ ելեր էր վերջապէս՝ հագիւ 150 պզտիկներ մնացեր էին քալելու կարող: Միւսները մեծ մասամբ ողջ էին, բայց ոչ իսկ կրնային շարժիլ: Շատերուն անդամները ճմլուեր կամ կոտորտեր էին, ոմանց գանկը ճեղքուեր էր, ոմանց միսը բզիկ բզիկ կախուած կը մնար սրունքներու եւ թելերու երկայնքը, եւ բոլորն ալ կը լողային արիւնի, պատռտած կուշտերէն դուրս ինկած աղիքներու եւ կղկղանքի լճակներու մէջ⁷⁰:

Նոյն իրիկունն իսկ՝ ագռաւներու ճշմարիտ բանակ մը եկեր թառեր էր այդ ահռելի մսակոյտին վրայ, սովալլուկ կոչնականներու խումբի մը պէս, խոպոտ ու վայրենի կանչերու յորձանքի մը մէջ, ուրախ ու փութկոտ այդ խնձոյքին հանդէպ որ անակնկալ բախտ մըն էր այլէս: Մարդիկը՝ իյնալով իյնալով հատեր լմնցեր էին ալ, եւ երկար ատեն կար որ ագռաւները ատանկ հարսնիք չէին տեսեր: Անոնց գիշակերի անկուշտ ախորժակը կեղորոնացեր էր մասնաւորաբար դեմքերուն վրայ, որովհետեւ շատ միս չունէին խեղճ պզտիկները, հալեր, վտիտցեր, քամուեր էին վաղուց: Կտուցները բարբարիկ մոլեգնութեամբ մը մխուեր էին աչքերու խոռոչներէն ներս, փորեր փորփորեր էին կապիճները, բզիկ բզիկ փրցուցեր էին այտերու միսը եւ բաց մնացած բերաններէն վար մխրճելով՝ արմատէն փրցուցեր հաներ էին լեզուները զորս արիւնի թափօնին մէջէն կը հափափէին զարհուրագին կափկափումներով: Ամբողջ երկու օր, ինչպէս վկայեցին շրջակաները հաստատուած վրանաբնակ արարներ, անլուր չարչարանքի մը մէջ, ողջ ողջ յօշոտուող պզտիկներուն ահռելի վայնասունները ուրիշ ամէն աղմուկ խափաներ էին անապատին այդ անիծած անկիւնին մէջ:

Այս ահաւոր մարտիրոսագրութեան պատմութիւնը լոկ հրճուանք կրնար պատճառել Հագգը պէյի խմորը ունեցող մարդու մը: Ապահով էր այլէս թէ իր կողմէ հաւաքուած որբերը չէին արձակուած ու փրկուած, եւ յուշատետրի մը մէջ արձանագրեր էր այդ դժոխային բարբարոսութեան հեղինակին՝ օն պաշի Բահմէտտիին անունը: Քիչ ետքը, երբ ինք ալ, Չէքի պէյ ալ այլէս մեկնած էին Պոլիս՝ որովհետեւ զործ չէր մնացած ու

ջարդուելիք հայ չէր մնացած,- Ապու Հարրարի աննշան օն պաշին, աստիճանի անօրինակ բարձրացումով մը, Բաքայի ժանտարմա գումանտանի⁷¹ կը կարգուէր:

Հագգը պէ չէր մոռցեր յուշատետրը թղթատելու Պօլսոյ մէջ:

Մնացած որբերը աւելի բախտաւոր չեղան: Տէր Զօր գտնուող միւս 800ին հետ ժամանակ մը որբանոց անունը կրող այն դժոխքին մէջ չարչարուելէ վերջ, Դեկտեմբերի ցուրտ օրով մը կառքերը լեցուցին զանոնք ու ճամբայ հանեցին⁷²: Մեծ մասամբ լմնցած տղաք էին: Երբեմն մինչէն 3000ի բարձրացաւ անոնց թիւը: Քաղքէն դուրս՝ 5-6 խոշոր տուներու մէջ հաւաքած էին զանոնք, չէին թրքացուցած, ոչ իսկ անուանապէս, եւ սկիզբները՝ մէնզիլը կը նայէր զանոնք: Վերջը՝ պէլէտիյէ րէիսի⁷³ Հաճը Ֆատըլ⁷⁴ ստանձնեց անոնց հոգատարութիւնը: Որբերուն համար լաւագոյն շրջանն էր ասիկա: Հաց ու կերակուր, սովորաբար ապուր, կանոնաւորապէս կը մատակարարուէր իրենց, եւ լաւ հագուած էին: Ջէքի պէ՛ գալուն պէս, աչքը այդ որբերուն վրայ դարձուց, եւ անոնց բախտաւոր վիճակը այլեւս փուշի պէս բան մը եղաւ իրեն համար: Մէկ քանի անգամ Հաճը Ֆատըլի ազդարարեց որ ետ կենայ զանոնք պաշտպանելէ, բայց տեսնելով որ այս մասին իր տուած հրամաններն ու թելադրութիւնները չեն գործադրուիր, պաշտօնանկ ըրաւ Հաճի Ֆատըլը, եւ անոր տեղ պէլէտիյէ րէիսի կարգեց իր արբանեակներէն մէկը՝ Անէի նախորդ գայմագամ Թուրքի Մահմուտը: Դժոխքի շրջանն էր որ կը սկսէր տարաբախտ տղոց համար: Այդ պայմաններուն մէջ էին՝ երբ Մէսքէնէի գիծէն բերուած տղոց հետ զանոնք ճամբայ հանեցին այդ Դեկտեմբեր ցուրտ օրով:

Մէսքէնէի եւ Համամի կառապանները որոնք Զօր՝ մենզիլին մօտ կ'աշխատէին, կարգ կարգ շարելով որբերը բեռցնել տուին անոնց: Կամուրջէն անցուցած ատեննին՝ ջուրը նետեցին ամենէն աւելի հիւանդներէն մէկ քանին, որոնք այլեւս տոկալու անկարող էին: Կամուրջէն անդին՝ կառքերը բռնեցին Սուվարի ճամբան, բայց փոխանակ Մերաթի⁷⁵ վրայով Սուվար ուղղուելու, բռնեցին անապատի ճամբան որ ուղիղ Սուվար կ'երկարի, եւ կամուրջէն սկսեալ 12 ժամ կը քշէ: Ջուր չունէին տղաքը, եւ սարսափելի կը նեղուէին, ծարաւէն ու ցուրտէն: Ջէքի պէ՛ որ բաւական տեղ ընկերացաւ կարաւանին, միւթէհահիտ⁷⁶ Օննիկ Քիւրտեանէ⁷⁷ 1200 օխա⁷⁸ հաց առած էր տղոց համար, առանց բան մը վճարելու: Տղոց խումբին բուն վարիչն էր զօրցի խոֆած գազան մը՝ Ապտուլլահ փաշա, որ անապատին ամենէն անմարդի մէկ անկիւնը քշեց տղաքը, մաս մը օդը հանեց պայթուցիկ նիւթերով զորս միասին բերած էին, մաս մը լեցուց բնական քարայրներու մէջ եւ թաց փայտերու ու թրջուած յարդի կրակի մը մուխով խեղդեց, եւ մնացածն ալ որ ընդհանրապէս անկար եւ այլեւս շարժելու անկարող տղոցմէ կը բաղկանար, գետինը պատկեցուց, վրանին յարդ ցանեց ու ողջ ողջ այրեց:

Արդէն մինչեւ տանջանքի վայրը գալերնին շատ տղոց որոնք իրենց ողբերով անհանգիստ կ'ընէին զինքը, կառքերէն վար թափած էր, թողլով որ հոգինին տան ճամբաներուն վրայ: Տղոց հետ՝ կառապաններն ալ չվերադարձան: Անոնք ալ սպաննուած էին: Կառքերը միայն դարձան Զօր:

Որբերու տեղահանութիւնը կատարուեցաւ Զօրի վեցերորդ սելվքիյաթէն ետք: Զանոնք հանելու համար՝ Զէքի պէյ օրինաւոր պատճառ մը ստեղծեց: Զօրի սրբիյէի միւսիրիին⁷⁹, որ թուրք մըն էր, տեղեկագիր մը գրել տուաւ թէ որբերու թիւը աւելցած ըլլալով, կրնան թիֆլիսի եւ ուրիշ տարափոխիկ հիւանդութեանց տարածման պատճառ դառնալ:

Այս կոտորածէն երկու պզտիկներ միայն ազատեցան, Օննիկ անուն բոսուրթըն⁸⁰ տղայ մը, 13-14 տարեկան, որ քարայրի մը անկիւնը գտնուելուն՝ ծուխէն չէր խեղդուեր, ու վերջէն՝ սթափելով՝ ելեր էր դուրս: Այս տղան ինք իր գլխուն Զօր վերադարձաւ, բայց արդէն իսկ հիւանդոտ ու վախցած ըլլալով, հագիւ 3-4 ամիս միայն կրցաւ ապրիլ: Միւս ազատողն է շապիւն գարահիսարցի⁸¹ Աննա անուն աղջիկ մը, որ բանակին մէջ սպայ եղբայր մը ունէր: Այս աղջիկը միեւնոյն պայմաններուն մէջ ազատեցաւ եւ փախաւ Ուրֆա⁸²: Իր պատմութիւնը՝ մանկանց կոտորածին նկատմամբ, կ'ետ առ կ'ետ կը հաստատէ մեր առած տեղեկութիւնները⁸³:

Ապտալլահ փաշա՝ Հալէպի անկումէն վերջ նոյն քաղաքը եկաւ: Այդ միջոցին՝ Սուրիոյ եւ Հայաստանի ֆրանսական բարձր Քօմիսէր Պ. Բիքօ Հալէպ էր: Գրաւոր տեղեկագիր մը տուինք իրեն մանուկներու այդ կոտորածին նկատմամբ, խոստացաւ որ պետք եղած հրամանը կու տայ Ապտալլահը ձերբակալելու համար, բայց մարդը մէկ քանի օր ամենայն հանգստութեամբ շրջելէ վերջ, նորէն ելաւ Զօր գնաց, առանց բնաւ անհանգիստ ըլլալու:

* * *

Նախապատրաստութիւն Զօրի սպանդին.-

Պապի⁸⁴ սելվքիյաթներու ամենէն սաստիկ շրջանին, Հալէպի ընդհ. դատախազութեան կողմէ Պապ հասաւ հետեւեալ հեռագիրը.-

(ղայէթ միւսթաճէլ վէ մահրէմ)

Էրմէնիլերտէն ճինայէթլէ մահքում վէ միւթթէհիմ օլանլարտան՝ վէլէվ ժանտարմա տախրէսինճէ տէրտէթ էտիլմիշ օլսա պիլէ՝ թէվքիֆ էթմէլէրէք հէման իլէրիյէ սելքի⁸⁵:

Այս հեռագիրը տրուած էր Դատական նախարարութեան կողմէ Հալէպ հասած հրահանգի մը վրայ: Պապի հեռագրատան պաշտօնէան որ թուրքերէնի շատ տեղեակ չէր, կարծելով որ ընդհանուր գաղթականներու վերաբերող բան մըն է, Հաճընի էրբեմնի հեռագրական պաշտօնէայ Պ. Կարապետ Էվիխանեանի⁸⁶ տուած էր զայն որ կարդայ⁸⁷:

Հեռագրին իմաստը յայտնի էր: Նոյն իսկ ոճրագործները մի պահեք եւ սեւեք ըրեք կ'ըսէր, որովհետեւ ընդհանուր հայութիւնը այդ միջոցին Ձօր կը դրկուէր ջարդուելու համար: Բանտերուն մէջ մնալով ապահովաբար սպանդէն պիտի փրկուէին: Ճիշդ այդ կարելիութիւնը կը նախատեսէր կեդրոնը, եւ կը փութացներ այդ հրահանգը, որպէսզի ո՛ր եւ է ձեռով մարդ չագատի:

* * *

ՏԷՐ ԶՕՐ

Զեքի.- Խապուրի շուրջը վրաններ: Տեսակ մը շարժական քաղաք որ գիշերուան մը կեանքը պիտի ունենար: 400 չէչէններ հաւաքուած էին այդ վրաններուն շուրջը, կը սպասէին սպանդին: Բոլոր գաղթականները անօթի էին, զարհուրանք էր պարզապէս: Ոչինչ կար ուտելիք: Էշերն ու բեռնատարի անասունները լմնցեր էին: Տղու դիակ ուտողներ կային: Զեքի կը հաւաքէ չէչէնները ու կ'ըսէ.- «Կը լսեմ որ երբեմն կողմնակցութեամբ, կամ մեղքնալով, կամ կաշառքով մարդ կ'ագատէք», յետոյ ձին կը քէլ վրաններուն մէջ, կը վերցնէ հագիւ երկու տարեկան հաճընցի⁸⁸ աղջիկ մը, թեւէն բռնած կ'առնէ կը բերէ, ցոյց կու տայ չէչէններուն ու կ'ըսէ.- Ահա նոյնիսկ այս անմեղը, ենթադրելով որ կարելի ըլլայ հայու ճիտ մը անմեղ նկատել, որովհետեւ այդ շան ձագերն ալ անմեղ չեն, պէտք է մինչեւ այս տարիքը գտնուողներն ալ անխնայ խողխողել, որովհետեւ օր մը պիտի ելլեն այս սպանդին հաշիւը փնտռեն եւ վրէժ լուծել պիտի ուզեն», ու տղան քանի մը անգամ դարձնելով անջրպետին մէջ, ուժգնօրէն կը զարնէ գետին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ «Կոչ Հալէպ Գտնուող Հայ Գաղթականներուն», տե՛ս՝ *Հայ Չայն*, Հալէպ, Ա. տարի, թիւ 20, 11 Դեկտեմբեր 1918, էջ 1:
- ² Անտոնեանի հաւաքած նիւթերէն կարելոր մասեր ֆրանսերէն թարգմանութեամբ լոյս տեսած են հետեւեալ երկու հատորներուն մէջ. Raymond H. Kévorkian, "L'extermination des Déportés Arméniens Ottomans dans les Camps de Concentration de Syrie-Mésopotamie (1915-1916)," *Revue d'Histoire Arménienne Contemporain, Tom II*, Փարիզ, 1998, եւ Raymond H. Kévorkian, *Le Génocide des Arméniens*,# Փարիզ, Imp. Sagim-Canale, 2006: Առաջինին մէջ, էջ 180-190, թարգմանաբար տպուած է հոս հրատարակուող հատուածը:
- ³ Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիրը. Հայկական Վերջին Կոտորածները Եւ Թալէադ Փաշա*, Պոստոն, Տպ. Պահակի, 1921, 304, 1 էջ:
- ⁴ Տպուած՝ Պոստոն, *Հայրենիքի* հրատարակութիւն, 1919, 204, 3 էջ:
- ⁵ Լոյս տեսած Փարիզի *Վերածնունդ* շաբաթաթերթին մէջ, Գ. տարի, թիւ 19, 31 Յուլիս 1919ի թիւէն սկսեալ:
- ⁶ Տպուած՝ Փարիզի *Արեւմուտք* շաբաթաթերթի 1946-1947ի թիւերուն մէջ:

⁷ Նուպարեան Գրադարան, Փարիզ, Արամ Անտոնեանի Ֆոնտ (ԱԱՖ), թղթածրար թիւ 52, «Նիւթեր Տեղահանութեանց Եւ Կոտորածներու Պատմութեան Համար. Տէր Զօրի Կոտորածներ»:

⁸ Սէվգ - Արաբերէն՝ առաքում, ուղարկում, փոխադրում: «Սէվքիաթ»ը՝ բառին յոգնակի ձեւն է:

⁹ Նկատի ունի Տէր Զօրի գաւառապետ Սալէի Զեքի Պէյը, որուն կենսագրութեան շուրջ աղբիւրներու մէջ յաճախ առկայ են հակասական տեղեկութիւններ:

Ըստ աղբիւրի մը, ան Մակեդոնիայէն եկած ազգութեամբ չերքեզ իթթիհատական մըն է, որուն մանկութեան, պուլկար յեղափոխականներ, աչքերուն առջեւ մորթած են իր ծնողները եւ ինք ուխտած է վրէժ լուծել քրիստոնէաներէն (Կարապետ Ա. Քինյ. Գալֆայեան, *Գիրք Ելից Հայոց. Յիշատակ Անշիրիմ Նահատակաց Հնուց Եւ Նորից, Յայտից Եւ Անյայտից*, Պէյրութ, Տպ. Տոնիկեան, 1955, էջ 173):

Ըստ այլ աղբիւրի, ան եղած է մօտիկ ազգականներէն Վանի երբեմնի կուսակալ Ալի պէյին, որ պաշտօնէ հրաժարելէ ետք, Կովկասի վրայով Պոլիս վերադարձի ճանապարհին, Պաթումի մէջ հայերու կողմէ մահափորձի ենթարկուած է՝ Վանի մէջ «իւր ցոյց տուած հայահալած ընթացքին համար» (Զաւէն Արքեպս. [Տէր Եղիայեան], *Պատրիարքական Յուշերս. Վաւերագիրներ Եւ Վկայութիւններ*, Գահիրէ, 1947, էջ 214: Զաւէն պատրիարք թիրիմացաբար ըսած է թէ՛ Զեքի որդին էր Ալի պէյի: Այդ մասին տես Թէոդիկէն մէջբերում մը՝ *Յուշամատեան Մեծ Եղեռնի*, Պէյրութ, 1965, էջ 931, Խորէն Յ. Գըլըճեան, *Ալպում-Յուշամատեան Էվերէկ-Ֆենէսէի*, Պէյրութ, 1984, էջ 108):

Ըստ այլ աղբիւրի մը, Զեքի ծնած է Սամսոն 1879ին եւ որդին էր Սամսոնի վաճառականներէն Իսմայիլ Էֆենտիի: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ, իսկ երկրորդականը՝ Տրապիզոնի: Յուլիս 1902ին աւարտած է Պոլսոյ «Մուլքիէ» Վարժարանը եւ նոյն տարին պաշտօնի անցած է տեղւոյն Երկրագործական Դրամատան մէջ: Կարճ ժամանակ մը դասաւանդած է Սամսոն, ապա դարձած է նոյն գաւառակի կառավարիչ, յետոյ յաջորդաբար եղած է Թերիպոլի, Վաքֆիքեպի, Ինիէ, Պաֆրա եւ Ալաշեհիր գաւառակներու կառավարիչ: 9 Նոյեմբեր 1914էն 25 Փետրուար 1915, եղած է Ինճէ Սուի (Կեսարիա) տեղակալ, ապա նոյն պաշտօնով Մարտ 1915ին տեղափոխուած է Տեւէլի (Էւերէկ-Ֆենէսէ) եւ վերջին երկու վայրերուն մէջ կոտորած է տեղւոյն հայ ազգաբնակչութիւնը: 27 Հոկտեմբեր 1915ին նշանակուած է Պոլսոյ «մէքթուպճի», իսկ 25 Յունիս 1916ին՝ Տէր Զօր Գաւառի կառավարիչ եւ իր նոր պաշտօնատեղին հասած է Յուլիսի սկզբնաւորութեան:

Զեքի գլխաւոր կազմակերպիչն էր Տէր Զօրի անապատներուն մէջ աւելի քան 200 հազար արքորական հայերու կոտորածին (*Patrik Zavenin Armeni Soykirimi Orgütleyicilerin Listesi*, Sait Cetinoğlu, Իսթանպուլ, 2011, էջ 48): Ան պաշտօնի վրայ մնացած է մինչեւ 17 Մարտ 1917: Կոտորածներէն ետք, Տէր Զօրէն արձակուրդով ժամանակաւորապէս մեկնած է Պոլիս եւ այլեւս Տէր Զօր չէ վերադարձած, այլ պաշտօնի կոչուած է Ներքին Գործոց Նախարարութեան մէջ: Կ'ենթադրուի որ աւելի ետք անցած է Կովկաս եւ մասնակցած 1919ի Պաքուի Իսլամական Համաժողովին:

Ըստ այլ վկայության մը, որ սակայն չէ հաստատուած այլ աղբիւրներէ, Ջեքի, իր գործակիցներէն Ապտուլլահ Եուսուֆի (Ապտուլլահ Փաշա, հայ մանուկներու դահիճ) հետ, անգլիացիներու կողմէ ձերբակալուելով՝ բանտարկուած է Հալէպի Սթամպուլ Խանին մէջ: Ֆրանսացիներու Հալէպ մուտքէն ետք, երեք հայ լեգեոնականներ բանտ մտնելով, ըսած են անոնց թէ՛ «մենք հայ կամաւորներ ենք, ձեռքը ոտքը կապուած մարդիկ չենք սպաններ» եւ Ջեքին ու Ապտուլլահը կապանքներէ ազատելէ ետք՝ կացինահար ըրած են զանոնք եւ դիակները նետած են մօտակայ հոր մը ([«Թումա Կիրակոսեանի Յուշերը»], *Յուշամատեան Մեներակի*, պատրաստեց Թովմաս Գ. Արապեան (Մեներակցի), Պէյրութ, Տպ. Սեւան, 1971, էջ 390):

Զինադադարին, Պոլսոյ մէջ ստեղծուած թրքական պատերազմական արտակարգ ատեանը, 28 Ապրիլ 1920ի իր նիստին, ի բացակայութեան՝ Ջեքին դատապարտած է մահուան: Դատավճիռին մէջ մահապատիժը բացատրուած է այսպէս. «... *Օսմանեան Կայսրութեան տարբեր շրջաններէն [Տէր] Զօրի Գաւառ արքայութեան եւ հոն բնակեցուած բազմաթիւ հայեր չէթէներէ (հրոսակներէ – Մ.Մ.) բաղկացած ձիաւոր եւ հետիոտն խումբերով կրկին այլ վայր մը արքայութեան է եւ անոնց հանգիստի պահուն, ի՞ր իսկ ներկայութեան գոհեղուն վրայ հրապարակաւ յարձակած եւ անոնց վրայ գտնուած դրամները, թանկարժէք իրերն ու ունեցումները կողոպտած է ու անոնց մէկ մասն ալ Խապուրի Հովիտի ամայի վայրերուն մէջ խիստ ահաւոր կերպով սպաննած եւ ոչնչացուցած է, ինչ որ հաստատուած է իսլամ եւ ոչ-իսլամ բազմաթիւ վկաներու կողմէ...*» (Վաքըթ օսմաններէն օրաթերթ, Կ. Պոլիս, Յրդ տարի, թիւ 890, 2 Մայիս 1920, էջ 2, ուր տպուած է պատերազմական ատեանի վճիռը ամբողջութեամբ):

Տէր Զօրի կոտորածներէն հրաշքով փրկուածները, գրեթէ առանց բացատրութեան, իրենց յուշերուն մէջ գրած են Ջեքիի մասին:

¹⁰ Ըստ Անտոնեանի ձեռագիր մէկ այլ գրառումին, «*Մալիհիյէ տեսակ մը կայք է, անջատ անջատ շինուած տուներով, որոնք միջոց մը իբր զօրանոց ծառայեցին: Հայ տարագիրները շինած են այն տուները, որոնք վերջէն [Տէր] Զօրի կոտորածներուն մեկնակէտ պիտի դառնային*» (Նուպարեան Գրադարան, ԱԱՖ, Matériaux pour l'histoire du génocide, P.J.1/3, liasse 52 bis):

¹¹ Գիւղ՝ սուրիական անապատին մէջ, Խապուր գետի վերջնամասին մօտ, անոր աջ ափին, Տէր Զօր քաղաքէն 51 քլմ. արեւելք: Գիւղին մօտ կայ 5 մեթր բարձրութեամբ բլրակ մը, որ նախաքրիստոնէական շրջանին եղած է աշուրիներու բնակավայր (*السوري العربي للقطر الجغرافي المعجم*) (Սուրիական Արաբական Հանրապետութեան աշխարհագրական բառարան), Հրատ. Զինուորական Ուսումնասիրութիւններու Կեդրոնի, Դամասկոս, Դ. Հտր., 1992, էջ 156): Ի. դարասկզբին գիւղը մեծ մասամբ ունեցած է չէչէն ազգաբնակչութիւն: Սուվարը Հայկական Յեղասպանութեան գլխաւոր սպանդանոցներէն մէկն է: Օգոստոս-Հոկտեմբեր 1916ին, Սուվարի, Շետտատիէի ու Հասըրճայի մէջ կոտորուած են 110 հազար հայեր, մինչ 60 հազար ուրիշներ մահացած են յիշեալ արքայավայրերուն մէջ տիրող անմարդկային պայմաններուն հետեւանքով (Մ[իհրան] Աղապարեան, *Աքարականի Յուշեր*, Ատանա, Տպ. «Հայ Չայն»ի, 1919, էջ 38-39):

¹² Կամ Շատատե - Աւան՝ հարաւային Ճեզիրէի մէջ: Կառուցուած է Խապուր Գետի երկու ափերուն, Հասիճէ քաղաքէն հարաւ, 48 քլմ. հեռաւորութեան վրայ եւ Տէր Զօրէն հիւսիս-արեւելք, այժմու Սուրիա-Իրաք սահմանագիծէն ոչ-շատ հեռու: Անոր մօտակայքը կայ Ն. Ք. 5րդ հազարամեակէն բնակավայր-բլուր մը, ուրկէ յայտնաբերուած են բազմաթիւ հնագիտական իրեր: Շրջանին մէջ կան նաւթի պաշարներ, որուն համար ալ ան դարձած է նաւթարդինաբերութեան կարեւոր կեդրոն (*المعجم*, էջ 14-15): Ի. դարասկիզբին Շետատէն եղած է փոքրիկ ասան մը, որ ունեցած է զօրանոց մը, կառավարչատուն մը եւ քանի մը կրպակներ: Շետատէն Հայոց Ցեղասպանութեան գլխաւոր սպանդանոցներէն մէկն էր, ուր կոտորուեցան Տէր Զօրէն զրկուած աքսորական հայերը:

¹³ Նկատի ունի Կ. Պոլսոյ հայոց պատրիարք Զաւէն Արք. Տէր Եղիայեանը: Ծնած է 8 Սեպտեմբեր 1868ին, Մուսուլ (Իրաք): Աշխարհական անունով՝ Միքայէլ: Նախնական կրթութիւնը ստացած է Սղերդի Միացեալ Ընկերութեան եւ Պաղտատի Ազգային Վարժարաններուն մէջ: 1888-1890 պաշտօնավարած է որպէս ուսուցիչ, իսկ 1890ին մտած է Արմաշի Դպրեվանք: 1892ին ձեռնադրուած է սարկաւազ, 1895ին՝ արեղայ, իսկ 1896ին, Օրմանեան Սրբազանէն ստացած է վարդապետական աստիճան ու նշանակուած՝ Դպրեվանքի տեսուչ: Եղած է քարոզիչ Սամաթիոյ եւ Խասգիւղի եկեղեցիներուն (1897-1898), առաջնորդական տեղապահ, ապա առաջնորդ Կարնոյ (1898-1906), առաջնորդական տեղապահ Վանի (Օգոստոս 1908-1909), ապա առաջնորդ Տիարպէքիի (1909-1913) եւ հուսկ պատրիարք Կ. Պոլսոյ՝ 30 Օգոստոս 1913ին: Եպիսկոպոս ձեռնադրուած է Մատթէոս Բ. կաթողիկոս Իզմիրլեանէն, 19 Սեպտեմբեր 1910ին:

28 Յուլիս 1916ին, Թալէթի կարգադրութեամբ, պարտադրուած է լքել պատրիարքական աթոռը: Օգոստոսի 22ին աքսորուած է Պաղտատ՝ նախկին հայ կաթողիկ հաւատորաց վարդապետ Հիտայէթի (Միսլեան) հսկողութեամբ, ապա Պաղտատէն անցած է Մուսուլ:

Համաշխարհային Առաջին Պատերազմի Զինադադարէն ետք, 19 Փետրուար 1919ին, Զաւէն Պատրիարք վերադարձած է Կ. Պոլիս եւ ստանձնած՝ պատրիարքական իր նախկին պաշտօնը: Ան 1920ին մեկնած է Անգլիա եւ Ֆրանսա՝ Հայկական Պատուիրակութեան աշխատանքներուն օժանդակելու համար եւ հոն հանդիպումներ ունեցած տեղւոյն քաղաքական դէմքերու հետ: Վերադառնալով Կ. Պոլիս, պատրիարքական աթոռին վրայ մնացած է մինչեւ 10 Դեկտեմբեր 1922, որմէ ետք քանի մը տարի վարած է աստանդական կեանք, ապա քաշուած է Պաղտատ, ուր անցուցած է կեանքին մնացեալ տարիները մինչեւ իր վախճանը՝ 4 Յունիս 1947 (Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան, *Ազգապատում, Դ., Ա. Գիրք*, Նիւ Եորք, St. Vartan Press, 1995, էջ 13, 112. նաեւ՝ Մկրտիչ Եպս. Աղանունի, *Միաբանք Եւ Այցելութիւն Հայ Երուսաղէմի*, Երուսաղէմ, Տպ. Ս. Յակոբեանց, 1929, էջ 140):

Զաւէն Պատրիարք հրատարակած է մեծարժէք հատոր մը՝ *Պատրիարքական Յուշերս. Վաւերագիրներ Եւ Վկայութիւններ* խորագիրով (Գահիրէ, Տպ. «Նոր Աստղ», Հրատ. Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, 1947, 424 էջ):

¹⁴ Ըստ Զաւէն Պատրիարքի տպագիր յուշերուն, ինք կառքով Տէր Զօր հասած է 13 Սեպտեմբեր 1916ին: Ան իր յուշերուն մէջ տուած է նաեւ Տէր Զօրի մէջ

անցուցած քանի մը օրերուն մասին բազմաթիւ մանրամասնութիւններ (Զաւէն Արք., էջ 212-213):

¹⁵ Կամ Անէ - Նամեայ քաղաք՝ Պաղտատ նահանգի, Պաղտատ Գաւառի, Անէ Գաւառակի կեդրոնը, Տէր Զօրէն եւ Ապու Քեմալէն հարաւ-արեւելք, վերջինէն մօտ 85 քմ. հեռաւորութեան վրայ: Նախ՝ եղած է Եփրատի մէջ կղզեակ մը, ապա՝ ընդարձակուած դէպի գետին ափերը: Բնակեցուած է անյիշելի ժամանակներէ: Քաղաքին մէջն ու շուրջը տեսանելի են բազմաթիւ պատմական յուշարձաններ՝ բերդը, մզկիթներ, եկեղեցիներ, եւն.: Քաղաքը կառուցուած է Եփրատի երկու ափերուն, երկար տարածութեան մը վրայ, մինչ լայնքը եղած է 250 մէթր միայն: Անան 1980ականներուն մնացած է նորակառոյց ջրամբարի մը ջուրերուն տակ, իսկ բնակիչները տեղափոխուած են նորակառոյց մօտակայ համանուն քաղաքը: 1912ին ունեցած է 700 տուն իսլամ եւ 500 տուն հրեայ բնակիչ: Յունիս 1915-Մայիս 1916 Անէ Գաւառակին մէջ հաւաքուած են մօտաւորապէս 12,000 հայ արքայականներ (Աղագարեան, էջ 23-24):

¹⁶ Մերքէզ - Արաբերէն՝ կեդրոն, *մեմուր* արաբերէն՝ պաշտօնեայ. *մերքէզ մեմուրը*՝ կեդրոնի պաշտօնեայ:

¹⁷ Մուսթաֆա Սըրքի - Բնիկ այնթապցի: Ծնած է մօտաւորապէս 1875ին: 1914էն-20 Հոկտեմբեր 1918 եղած է Տէր Զօրի ոստիկանապետ (Raymond Kévorkian, *The Armenian Genocide A Complete History*, Լոնտոն-Նիւ Եորք, Հրատ. I. B. Tauris, 2011, էջ 972) եւ կառավարիչ Զեքիի գլխաւոր գործակիցը ու արքայական հայերու կոտորածներուն կազմակերպիչներէն մէկը (Երուանդ Օտեան, *Անիծեալ Տարիներ 1914-1919 (Անձնական Յիշատակներ)*, աշխ. Գրիգոր Յակոբեանի, իմր. Գուրգէն Գասպարեան, Երեւան, «Նայիրի» Հրատ., 2004, էջ 275):

Մուսթաֆան յիշուած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի պատրաստած Հայոց Ցեղասպանութեան պատասխանատուներու ցուցակին մէջ որպէս արինարբու ոճրագործ (*Patrik Zavenin...*, էջ 96):

Այլ աղբիւրի մը մէջ անունը տրուած է Մուսթաֆա Օքթէշ ձեւով: Հոն ըսուած է թէ՛ Կ. Պոլսոյ Պատերազմական Արտակարգ Ատեանին կողմէ անոր դատավարութիւնը սկսած է 20 Յունուար 1921ին եւ Մարտին ազատ արձակուած է՝ իրեն դեմ եղած մեղադրանքները չհաստատուելու պատճառաբանութեամբ (*Judgment at Istanbul. The Armenian genocide trials*, Vahakn N. Dadrian and Taner Akcam, 2011, Berghahn Books, New York-Oxford, 2011, էջ 222, Աքչամի յօդուածը. նաեւ՝ Մելինէ Անուսեան, *Ճանաչում Եւ Դատապարտում. Երիտթուրքերի Դատավարութիւնները (1919-1921 թթ. եւ 1926 թ.)*, Երեւան, Հրատ. Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, 2013, էջ 108):

¹⁸ Զաւէն Պատրիարքի արքայի ժամանակ իրեն ընկերակցած են իր երեք եղբայրը՝ Յովակիմ ու անոր դուստրը՝ Վարդանուշ:

¹⁹ Մեճիլիս իտարէ՛ վարչական ժողով: Առկայ էր Օսմանեան Կայսրութեան վարչական բոլոր շրջաններուն մէջ: Անոր մաս կազմած են նաեւ քրիստոնէաներ ու հրեաներ:

²⁰ Մեճիլիսը իտարէի պաշ-քեաթիպ՝ վարչական ժողովի գլխաւոր քարտուղար, գլխաւոր գրագիր:

- ²¹ Չաւեն Պատրիարք իր յուշերուն մէջ մանրակրկիտ նկարագրած է Պետրիի հետ իր ուղեւորութիւնը: Ան, ըստ երեւոյթին, անգիտացած է իրեն դէմ հիւսուող դաւադրութիւնը եւ գրած է, որ Անայի մէջ «Պետրի չէր ուզեր ճամբայ ելլել հիւանդութիւն պատրուակելով»: Ըստ երեւոյթին, Պետրի այդպէս վարուած է ժամանակ շահելու եւ Պատրիարքի սպաննութեան հետ կապուած գործերը դասաւորելու համար (Չաւեն Արք., էջ 218): Չաւեն Պատրիարքի սպաննութեան ծրագրին մասին տես նաեւ Գրիկերի (Գրիգոր Վրդ. Կերկերեան) պատրաստած *Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը*, Նիւ Եորք, Տպ. Ոսկետառ, 1980, էջ 69:
- ²² Բժ. Արմենակ Մարգարեան - Գոնիայէն նախ արքայութեան է Տէր Զօր, ապա Մէսոսին եւ Էլ Պուսէրայ: Այս արքայավայրերուն մէջ քանիցս իրեն հանդիպած է Օտեան ու այդ մասին գրած է ցեղասպանութեան տարիներու իր յուշերուն մէջ, ուր, ի միջի այլոց, ըսած է թէ՛ Էլ Պուսէրայի մէջ «Տոքթոր Արմենակ Մարգարեան իր արհեստը ի գործ կը դնէր բնականաբար, իբրեւ վարձք ընդունելով ցորեն, իւղ, կաթ, հաւ կամ հաւկիթ պայմանաւ սակայն որ իր խնամած հիւանդները առողջանային» (Օտեան, էջ 319): Ջինք յիշած է նաեւ Առնակ, որպէս իր աներձագը ու ըսած թէ՛ ան շատ կանուխէն Տէր Զօրէն վերադառնալով մեկնած էր Գոնիա, իր ընտանիքին մօտ (Առնակ, *Թուրքերու Ճանկին Մէջ (1916-1919)*, Երեւան, Վերահրատ. «Լուսարաց» Հրատարակչատան, 2007, էջ 145):
- ²³ Այնթապի թաղերէն: Բառացիօրէն՝ կաշեգործարան, խաղախորդարան:
- ²⁴ Արաբերէն գաւառապետ:
- ²⁵ Հիմնուած է 1883ին, Այնթապի Հայիկ Բլուրին վրայ, ամերիկացի միսիոնար Տոքթ. Թիւման Գ. Թրոպրիճի ջանքերով եւ կոչուած՝ «Ագարիա Սմիթ Հիւանդանոց», ի յիշատակ Այնթապի առաջին ամերիկացի միսիոնարին: Հիւանդանոցը իր գոյութիւնը պահած է մինչեւ 1915: Իր կողքին ունեցած է նաեւ առանձին դեղարան:
- ²⁶ Կամ Գաթթեմունի - Քաղաք Սեւ Ծովու ափին, համանուն նահանգի կեդրոնը: Ունեցած է Ս. Աստուածածին անունով հայկական եկեղեցի ու վարժարան: Տեղւոյն հայ աւետարանականները եւս ունեցած են իրենց եկեղեցին: Քաղաքը ունեցած է փոքրաթիւ հայ գաղութ մը, որ Յեղասպանութեան նախօրեակին բաղկացած էր 406 տունէ՝ 2153 անձէ (Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'empire Ottoman a la Veille du Génocide*, Փարիզ, ARHIS Հրատ., 1992, էջ 176), իսկ ըստ Թէոդիկի, անիկա ունեցած է 150 տուն հայութիւն, մինչ անոր մօտակայ ամառանոցային քանի մը գիւղերուն մէջ գտնուած են 400 տուն հայեր: Տեղւոյն հայերը տեղահանուած են միայն մէկ կարաւանով եւ անոնցմէ Ռագգա հասած են 150 հոգի, որոնցմէ տարի մը ետք ողջ մնացած է 10 հոգի միայն (Թէոդիկ, *Գողգոթա Հայ Հոգեւորականութեան Եւ Իր Հօտին Աղէտայի 1915 Տարին*, խմբ. Արայ Գալայճեան, Նիւ Եորք, Հրատ. St. Vartan Press, 1985, էջ 423, Գալֆայեան, էջ 270):
- ²⁷ Ծնած է Պանտրմա 6 Մեպտեմբեր 1876ին: Աշխարհական անունով՝ Ստեփան: Մեպտեմբեր 1891ին մտած է Արմաշի Դպրեվանք եւ երեք տարուայ ուսումնառութենէ ետք՝ քանի մը տարի ծննդավայրին մէջ զբաղած է ուսուցչութեամբ, ապա, 8 Յուլիս 1901ին, Տիւրքոնու Եպս. Սափրիչեանէն

ձեռնադրուած է քահանայ Պուրսայի Մըխալիճ գիւղին եւ քահանայագործած է անդ մինչեւ 1915: Օգոստոս 1915ին, իր հօտին հետ աքսորուած ու հասած է Ռագգայի Ջիարէթ գիւղը: Թուրքեր ուզած են իսլամացնել զինք, բայց երբ մերժած է, խոշտանգած ու աքսորած են զինք Տէր Զօր, ապա՝ Մարաթ, ուր շրջան մը դարձած է խոտաճարակ: Յետոյ, անցած է մօտակայ Շամաթիա գիւղը, որուն *միւտիքը* զինք իր քով առած է՝ որպէս սպասաւոր, մինչ իր երեք զաւակները, սովի հետեւանքով, յաջորդաբար մեռած են: Անօթութենէ չմեռնելու համար երեցկնոց հետ անապատները, վրանէ վրան թափառած է որպէս մուրացկան եւ ամիսներ ետք, ոստիկանի մը ընկերակցութեամբ, հովիւ կարգուելով՝ դրկուած է Տէր Զօր, ուր գաղտնի պահելով իր եկեղեցականի հանգամանքը, գործի անցած է զինուորական աշխատանցի մը մէջ՝ որպէս ջուլիակ: Ջինադադարին, մեծ աշխատանք տարած է Տէր Զօրի անապատին մէջ ցրուած հայութեան բեկորներու հաւաքման ու զանոնք Հալէպ տեղափոխելու ուղղութեամբ: Նոյն օրերուն, շրջան մը մնացած է Մունպուճ, ապա՝ Օգոստոս 1919ին, երեցկնոց հետ վերադարձած է Մըխալիճ եւ քահանայագործած է անդ՝ մինչեւ Քեմալական Շարժման յաղթանակը: Եղած է ատենապետը Ջինադադարէն անմիջապէս ետք Տէր Զօրի մէջ հիմնուած Որբախնամ Միութեան: Ջինադադարի առաջին օրերուն Տէր Զօր գտնուած վերապրող մը իր յուշերուն մէջ Տէր Եգնիկի մասին գրած է թէ՛՝ ան Տէր Զօրի մէջ հանած էր սքեմը, ածիլած մօրուքը եւ զինուորական տեղեր աշխատած ու անգլիացիներու Տէր Զօր մուտքէն ետք միայն՝ *«նորէն հագաւ իր սքեմը, երկնցուց մօրուքը եւ դարձաւ շնորհքով քահանայ»* (Եղիսաբէթ Գըլպյըզեան-Շմաւոնեան, *Արիւնոտ Ճանապարհ*, Պէյրութ, Տպ. «Զարթօնք», 1985, էջ 31):

²⁸ Կարապետ Սորճիկեան, Յեղասպանութեան տարիներուն Տէր Զօրի մէջ վարձակալած է տեղոյն թաղապետութեան սրճարանը, ուր յաճախ ներկայ գտնուած է նաեւ Օտեան (Օտեան, էջ 382):

²⁹ Բանաստեղծ, գրող, խմբագիր, բուն անունով՝ Մեսրոպ Սահակեան: Ծնած է Մալաթիա: Շրջանաւարտ է Խարբերդի Եփրատ Գոլէճէն, ուր աւելի ետք որպէս ուսուցիչ պաշտօնավարած է տարի մը: Սահակ-Մեսրոպ աւարտած է Կ. Պոլսոյ Օսմանեան Իրաւաբանական Համալսարանը եւ հոն ունեցած է փաստաբանական իր գրասենեակը: Որպէս գրականութեան եւ հոգեբանութեան այցելու ուսուցիչ՝ դասաւանդած է Գատըզիւղի Արամեան Վարժարանի բարձրագոյն կարգերուն: Խմբագրած է Կ. Պոլսոյ մէջ հրատարակած է տարեցոյցերու շարք մը՝ *Գաւառին Տարեցոյցը 1911* (Կ. Պոլիս, Առեւտր. Նոր Տպարան Յովակիմեան, 1910), *Հայրենի Տարեցոյց (Յեղին Կեանքին Թերթերը) 1912* (Կ. Պոլիս, Տպ. Մանուկ Յ. Գօչունեան, 1911), *Հայկական Վերածնունդ 1913* (Կ. Պոլիս, Գրատուն Պալէնց) եւ *Հայուն Տարեցոյցը (1913)* (Կ. Պոլիս, Գրատուն Պալէնց): Լոյս ընծայած է նաեւ *Պատուհան (Առաջին Պրակ: Արեւելեան Դէմքեր)* հատորը (Կ. Պոլիս, 1910), *Յոլարան Անգլիական Գրականութեանը* (Կ. Պոլիս, "Կոհակ", 1913) եւ.:

Յեղասպանութեան սկզբնաւորութեան Կ. Պոլսոյ մէջ նախ ապրած է ծուարած, ապա, 6 Յունուար 1917ին, աքսորուած ու մեծ տառապանքով հասած է Համամ: Ճամփան վարակուած է թիֆուսէ: Ընկերակիցները, *«տեսնելով որ քաղելու կարողութիւն չունի, ճերմակ էջ մը գտած ու գնած էին եւ զինքը վրան*

հեծցնելով՝ շուանով կապած էին որ վար չիյնայ ու այդ վիճակին մէջ, գրեթէ մահամերձ, հասած էր Համմաս», ապա անցած է Տէր Զօր, ուր եղած է պատերազմական ատեանի քարտուղար եւ աւելի ետք՝ աշխատանոցի գրագիր: Տէր Զօրի մէջ բանտարկուած է, դատապարտուած մահուան, բայց թուրքերու քաղաքէն հեռանալով՝ արձակուած է բանտէն: Ի՛ր խորհուրդով է որ Օտեան անցած է Տէր Զօր ու մտած տեղոյն աշխատանոցը (Երուանդ Օտեան, «Վերապրողները. Սահակ Մեսրոպ», *Շանթ*, Կ. Պոլիս, Դ. տարի, Նոր Շրջան, թիւ 7, 28 Դեկտեմբեր 1918, էջ 83): Օտեան իր տարագիրի յուշերուն մէջ բազմիցս գրած է Սահակ-Մեսրոպի մասին ու նկարագրած է քսորավայրին մէջ իրենց յաճախակի հանդիպումները: Զինադադարին, եղած է ատենադպիր Տէր Զօրի Որբախնամ Միութեան եւ հաւաքած է անպատասխար բազմաթիւ հայ որբեր: Սահակ-Մեսրոպ, 8 Յունուար 1919ին, Ապու Քեմալի ճամփով անցած է Պաղտատ, ուր վարած է ազգային վարժարանի տնօրէնութիւնը եւ ուժ տուած է ազգային կեանքի վերագարթումին, ապա, 18 Յուլիս 1919ին, վերադարձած է Պոլիս եւ վերաբացած իր փաստաբանական գրասենեակը: Յեղասպանութեան անմիջական ազդեցութեան տակ, գրի առած է բանաստեղծութիւններու գողտրիկ շարք մը՝ *Անապատի Երգեր (1916-1918)* խորագիրով (Կ. Պոլիս, Տպ. «Արարատ», 1919, 95 էջ), ուր կան քերթուածներ հետեւեալ վերնագիրներով. «Եփրատին», «Ըագայի Աւերակներուն Մէջ», «Քապուր», «Շէտտատիէ», «Տէր-Զօրի Որբերուն Երգը» են.: Ունի նաեւ Յեղասպանութեան նիւթով յուշագրական եւ գրական այլ գործեր՝ *Եղեռնի Յուշարձան* (Ա. շարք, Կ. Պոլիս, Տպ. Մ. Յովակիմեան, 1919, 80 էջ), *Անապատին Գիրքը*, արձակ էջեր, *Եղեռնի Ճամբուն Վրայ*, (տպուած Կ. Պոլսոյ *Ճողովուրդի Չայնը* օրաթերթին մէջ, Ա. տարի, թիւ 161, 8 Օգոստոս 1919էն սկսեալ), *Դէպի Անապատ, Զօրի Եղեռնը, Տարագրի Մը Յուշատետրը* են.: Նոյնպէս օրուայ թերթերուն մէջ տպած է նոյն թեմայով գործեր՝ «Տէր Զօրի Եղեռնը» (Թեոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, Ժ.-ԺԴ. Տարի, 1916-1920*, Կ. Պոլիս, Տպ. Կ. Քէշիշեան եւ Որդի, էջ 129-131), «Տէր Զօրի Որբերը» (*Կոչնակ Հայաստանի*, Նիւ Եորք, ԺԹ. տարի, թիւ 14, 5 Ապրիլ 1919, էջ 430-432) եւ բազմաթիւ այլ յօդուածներ՝ Կ. Պոլսոյ *Ճողովուրդի Չայնը* եւ Գահիրէի *Յուսաբեր* օրաթերթերուն մէջ:

³⁰ Ֆրանսուա Մարի Տենիզ Ժորժ-Փիքօ - Ֆրանսացի քաղաքական գործիչ: Ծնած է Փարիզ, 21 Դեկտեմբեր 1870ին: 1916ին, երբ Ֆրանսայի արտաքին գործոց նախարարն էր, Բրիտանիոյ հետ ստորագրած է Սայքս-Փիքօ ծանօթ համաձայնագիրը, որ կը ճշդէր Օսմանեան Կայսրութեան ենթակայ հողատարածքներու ապագայ բաժանումը Բրիտանիոյ եւ Ֆրանսայի միջեւ, մանաւանդ՝ Միջագետքի մէջ: Բրիտանիոյ կողմէ համաձայնագիրը ստորագրած է Մարք Սայքս: Համաձայնագրին ստորագրման ներկայ գտնուած է Ռուսաստանի ներկայացուցիչ՝ Մերկէյ Սազոնով: Փիքօ մահացած է Փարիզ, 20 Յունիս 1951ին:

³¹ Ծնած է Այնթապ, 1881ին: Բերիոյ Թեմի Ազգ. Առաջնորդարանի դիւանատան մէջ պահուած են իրեն առնչուող գոյգ վաւերաթուղթեր, որոնցմէ առաջինը 18 Նոյեմբեր 1927 թուակիր նամակ մըն է, յղուած բնիկ այնթապցի Յովհաննէս Քինյ. Էթմէքճեանէն՝ առաջնորդ Արտաւազդ Ծ. Վրդ. Միւրմէանին, իսկ երկրորդը, որ կցուած է առաջինին, նոյն նամակին աւելի մանրամասնեալ

ֆրանսերեն անստորագիր տարբերակն է: Ձոյգ վաւերաթուղթերը կը ներկայացնեն «բռնագաղթի շրջանին Տէր Զօր շարդուած հանգուցեալ Լեւոն Սահակեան»ի ժառանգորդներուն ցուցակը: Ըստ զոյգ վաւերաթուղթերուն, Սահակեան որդին է այնթապցի Սարգիս Սահակեանի: Ան սպաննուած է Մուվարի մէջ 1917ին, եւ 1927ի դրութեամբ, իր ժառանգորդներն էին մայրը՝ Մեննուշ (70 տ.), կինը՝ Համիտէ (42 տ.), տղաքը՝ Սարգիս (25 տ.), Ֆէրտինանտ (23 տ.), Յարութիւն (20 տ.) եւ դուստրերը՝ Մարի (17 տ.) եւ Բոզա (15 տ.): Լեւոն Սահակեանի մօրը տապանաքարին վրայ «ի յիշատակ» արձանագրուած է նաեւ Լեւոնի անունը, ուր անոր նահատակութեան թուական տրուած է 1916ը (Ռաֆֆի Քորթոշեան, *Հալէպի Արձանագրութիւնները*, Երեւան, Հրատ. ՀՃՈԻ, 2013, էջ 223):

- ³² Մուսթաֆա Ապտիւլ Հալիք - թուրք քաղաքական գործիչ, Թալէաթ Փաշայի աներձագը, ազգութեամբ՝ ալպանացի: Ծանօթ է նաեւ Բենտա անունով: Ծնած է Եանիա (Ռումելի), 29 Նոյեմբեր 1881ին: 1903ին աւարտած է Կ. Պոլսոյ Մուլքիէ Վարժարանը, որմէ ետք դասաւանդած է Ռոտոսի նախակրթարաններէն մէկուն մէջ: 1904ին պաշտօններ վարած է Եգեականի կղզիներուն եւ Եանիայի մէջ, ապա՝ Պալքանեան Երկիրներուն մէջ եղած է քանի մը գաւառակներու կառավարիչ, յետոյ՝ Սղերդի գաւառապետ եւ հուսկ՝ Մարտ 1914էն Սեպտեմբեր 1915 եղած է Բաղէշի (Պիթլիս) նահանգապետ, ուր կոտորած է շրջանի մօտ 150 հազար հայերը: Թեոդիկի բնութագրումով, Բաղէշի մէջ անոր «գործած հրէշտութիւնները չափ ու սահման չեն ունեցած: Քաղաքին եւ շրջակայ 70-է աւելի գիւղերուն հայութիւնն ամբողջ ջարդուած է, մեծ մասամբ՝ քաղքէն քիչ հեռու «Արապի-Կարմունճ» կոչուած տեղը, կիներ՝ լլկուած, այրեր՝ կծիկ կծիկ բրածեծ, դաշունահար եւ տապարահար, երախաներ՝ ողջ ողջ գետամոյն, իսկ եկեղեցւոյ պաշտօնեաներ՝ նշուակ եպերեյի անարգանաց, նախքան իրենց նահատակումը» (Թեոդիկ, *Գողգոթա...*, էջ 59): Իր հրահանգով եւ իր անմիջական մասնակցութեամբ է որ դաւադրաբար սպաննուած է նաեւ Արշակ Վռամեանը՝ Վանէն քիչ մը անդին: Նոյն միջոցին, ան հաւաքած է մօտ հազար հայ մանուկներ եւ զանոնք Թաշխտ առաջնորդելով՝ այրել տուած է (Արամ Անտոնեան, *Մեծ Ոճիրը. Հայկական Վերջին Կոտորածները Եւ Թալէաթ Փաշա*, Պօսթըն, Տպ. «Պահակ», 1921, էջ 177): Հալէպի նահանգապետ նշանակուելով, քաղաք հասած է 2 Նոյեմբեր 1915ին ու պաշտօնի վրայ մնացած է մօտ մէկուկէս տարի: Զինք փոխարինած է Թաուֆիք Պէլը, որ պաշտօնը ստանձնած է 16 Մայիս 1917ին եւ Ապտիւլ Հալիք մեկնած է Կ. Պոլիս ու դարձած Ներքին Գործոց Նախարարութեան խորհրդական, աւելի ետք կրկին Հալէպի նահանգապետ նշանակուելով քաղաք հասած է 14 Հոկտեմբեր 1918ին եւ ընդամենը քանի մը օր ետք, 26 Հոկտեմբերին, քաղաքը յանձնուած է Դաշնակից Չորքերուն, եւ ինք, այդպիսով, դարձած է Հալէպի չորսհարիւրամեայ օսմանեան տիրապետութեան վերջին նահանգապետը: Հալէպէն ետք, կարճ ժամանակով նշանակուած է Պուրսայի նահանգապետ, որմէ պաշտօնանկ եղած է մօտաւորապէս 21 Դեկտեմբեր 1918ին: Ապտիւլ Հալիք գլխաւոր դերակատարներէն է 1915ի վերջերէն մինչեւ 1916ի վերջերը երկարած Հալէպի, շրջակայքի ու Տէր Զօրի անապատը արքայութեան բազմահազար հայ զաղթականներու սպանդին: Հալէպի մէջ, իր նահանգապետութեան շրջանին,

կոտորածները հրահանգող Թալէաթէն ստացած եւ նոյն բովանդակութեամբ ուրիշներուն յղած իր բազմաթիւ հեռագիրերը Անտոնեան ձեռք անցնելով՝ հրատարակած է իր *Մեծ Ոճիրը* հատորին մէջ: Հայկական կոտորածներուն մէջ իր ունեցած դերակատարութեան համար 9 Մարտ 1919ին ձերբակալուած է թրքական կառավարութեան կողմէ եւ երաշխաւորութեամբ ազատ արձակուած: Սօտաւորապէս 14 Մայիս 1920ին կրկին ձերբակալուած է, այս անգամ՝ անգլիացիներու կողմէ (Vartkes Yeghiayan, *British Foreign Office Dossiers on Turkish War Criminals*, Pasadena, California, Doctorian Productions, 1991, էջ 305, 307): 7 Յունիս 1920ին արքայուած է Մալթա, իսկ 6 Դեկտեմբեր 1921ին Մալթայէն ազատ արձակուելով՝ վերադարձած Կ. Պոլիս ու դարձած Տնտեսութեան եւ Ներքին Գործոց նախարարութիւններու խորհրդակալ: Մուսթաֆա Քեմալի իշխանութեան անցնելէ ետք, եղած է անոր գլխաւոր գործակիցներէն ու վարած է պետական կարեւոր բազմաթիւ պաշտօններ. եղած է Զմիւռնիոյ նահանգապետ, Չանկըրըն ընտրուած է երեսփոխան, 1924-1934՝ երեք անգամ վարած է Տնտեսութեան նախարարի եւ 1927-1930՝ Ազգային Պաշտպանութեան նախարարի պաշտօններ, ապա՝ եղած է Ռազմածովային նախարար, իսկ 1935-1946 եղած է Ազգային Մեծ Ժողովի նախագահ՝ Ապտիւլ Հալիք Բենտա անունով (Անումեան, էջ 71. նաեւ՝ السعيد نديم علاء، حلب تاريخ العثماني العهد أواخر المصور 1880-1918 (Նատիմ Ալասա Ալ Մալէտ, Պատկերագրող Պատմութիւն Հալէպի Օսմանեան Ժամանակաշրջանի Աւատրին 1880-1918, Հալէպ, Հրատ. Ալ Շուաս, 2015, էջ 487, 512): Իր դէմ եղած ամբաստանութիւններուն եւ իր գործած ոճիրներուն ընդարձակ ցանկը տես՝ Yeghiayan, էջ 306-310: Մահացած է Կ. Պոլիս, 1 Հոկտեմբեր 1957ին:

³³ Արաբերէն բազմիմաստ բառ, *շարիֆ* բառի յոգնակին. իսլամ արաբներու այն դասակարգը, որ սեռած է Մուհամմէտ մարգարէէն եւ այդ իսկ պատճառով ստացած է առանձնաշնորհեալ վիճակ: Բառը ընդհանրապէս գործածուած է ազնուական դասակարգի, երեւելիներու իմաստով:

³⁴ Թուրք քաղաքական գործիչ, Դեկտեմբեր 1914էն Մարտ 1915՝ եղած է Պաղտատի նահանգապետի օգնական, 29 Օգոստոս 1915էն 14 Մայիս 1916՝ Այնթապի գաւառապետ, 1916-1918՝ Պոլսոյ ոստիկանապետ, իսկ 1918 Ապրիլէն Հոկտեմբեր՝ Սեբաստիոյ նահանգապետ (Yeghiayan, էջ 108, 144): Եղած է վատահամբաւ անձնաւորութիւն, որ յատուկ դրկուած է Այնթապ՝ հայոց բռնագաղթը իրականացնելու (Yeghiayan, էջ 144): Ան տեղոյն հայութեան տեղահանութիւնը վարած է «*ամենասոսկալի պայմաններու մէջ*» եւ զանոնք փոխանակ Հալէպ դրկելու, ինչպէս ըրած էր իր նախորդը, բոլորն ալ դրկած է Տէր-Զօր, եւ որոնց մօտ երեք քառորդը մահացած է այնտեղ (Ս[եպուհ] Ակունի, *Միլիոն Մը Հայերու Ջարդի Պատմութիւնը*, Բ. տիպ, Կ. Պոլիս, Տպ. Յ. Սաստուրեան Որդիք, 1921, էջ 312, Yeghiayan, էջ 335-336): Ահմէտ պէյ, Զինադադարին, թրքական կառավարութեան կողմէ ձերբակալուած է եւ 28 Մայիս 1919ին յանձնուած տեղոյն բրիտանական իշխանութիւններուն. շրջան մը բանտարկուած մնալէ ետք արքայուած է Մալթա (Yeghiayan, էջ 108, 114):

³⁵ Ալի Ճենանի Պէյ - Թուրք քաղաքական գործիչ: Ծնած է 1872ին: Թոռն է նշանաւոր սատրապամ (վարչապետ) Մուհամմէտ Քատրի Փաշա Ճենանի Զատէի եւ որդին՝ Ռասէմ Փաշայի: 1895ին, համիտեան կոտորածներու

ժամանակ, կրակի տուած է իր հայազգի դրացիին տունը, որուն հետեւանքով դրացին, անոր կինն ու զաւակները մահացած են (Yeghiayan, էջ 336): Եղած է Իթթիհատ Վէ Չերաքքը Կուսակցութեան Այնթապի ներկայացուցիչը: 1908ին, 1912ին եւ 1914ին երեք անգամ Հալէպի Նահանգէն, որպէս Այնթապի ներկայացուցիչ, ընտրուած է անդամ Օսմանեան Երեսփոխանական Ժողովին: Մէկն է հայ եւ թուրք այն երեսփոխաններէն, որոնք կիլիկեան կոտորածներէն ետք, միասնաբար դիմած են օսմանեան խորհրդարանին եւ առաջարկած՝ զինուորական դատարանին առջեւ դատել Ատանայի կուսակալ՝ Ճեւատ պէր, Ներքին Գործոց Նախարարութեան խորհրդական՝ Ատիլ պէր ու քանի մը այլ յանցագործ պաշտօնեաներ՝ կոտորածներու ժամանակ անոնց բերած մասնակցութեան կամ որպէս պաշտօնեայ պարտագանցութեանց համար (Հրաչիկ Միմոնեան, *Հայերի Չանգուստային Կոտորածները Կիլիկիայում (1909 թ. Ապրիլ)*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2009, էջ 242): Ճեւանի Պէյ Այնթապի տեղահանութեան ուշացումով, բազմիցս դիմած է Պոլիս՝ պահանջելով հայերու շուտափոյթ աքսորը քաղաքէն: Ամենավատ դերը խաղացած է 1915ին, Այնթապի հայութիւնը տեղահան ընելու գործին մէջ ու Պոլիսէն եկած հրահանգներով՝ գրգռած է տեղւոյն իթթիհատականները հայոց դէմ (Ակունի, էջ 312): Հայերէն կողոպտած իրերը տեղափոխած է Եւրոպա ու վաճառած՝ 50 հազար օսմանեան ոսկիի (Yeghiayan, էջ 336): Իր գործած արարքներուն համար բրիտանացի զինուորականներու կողմէ ձերբակալուած է 24 Մայիս 1920ին եւ աքսորուած՝ Մալթա (Yeghiayan, էջ 332): Աւելի ետք, ընտրուած է Հանրապետական Թուրքիոյ Երեսփոխանական Ժողովի անդամ եւ 1924-1926՝ երկու անգամ վարած է Առեւտուրի նախարարի պաշտօնը: 1928ին, նիւթական զեղծարարութիւններու ամբաստանութեամբ, իրմէ խլուած է երեսփոխանական անձեռնմխելիութիւնը եւ դատուելէ ետք՝ բանտարկուած է ամիս մը ու դատապարտուած՝ 170 հազար ոսկի տուգանքի, որմէ ետք վերջնականապէս քաշուած է քաղաքական ասպարէզէն (Ալ Մայէտ, էջ 364): Իր դէմ եղած ամբաստանութիւններուն եւ իր ըրած չարագործութիւններուն ընդարձակ ցանկը տե՛ս՝ Yeghiayan, էջ 334-340: Մահացած է 1934ին:

³⁶ Բառացիօրէն՝ լքեալ գոյքերու յանձնախումբեր, որոնք ստեղծուած էին 10 Յունիս 1915ի պետական օրէնքով եւ ունէին իրենց մասնաճիւղերը Օսմանեան Կայսրութեան բոլոր հայաշատ կեդրոններուն մէջ: Անոնց պարտականութիւնն էր՝ աքսորուող հայերու գոյքերուն գրաւումն ու ցանկագրումը:

³⁷ Բնիկ խարբերոցի, ծնած է 1877ին: 1919ի Յունուարին եղած է ՀԲԸՄի Հալէպի մասնաճիւղի վարչութեան գանձապահ: Մահացած է Հալէպ, 1940ին (Քորթոշեան, էջ 145, 296-297): Եղած է Հալէպի ծանօթ վաճառականներէն եւ ունեցած է երկու վաճառատուներ Համմամ Ալ Դալլ եւ Պապ Ուլ Ֆարաճ թաղամասերուն մէջ: Ինք է որ 1905ին առաջին անգամ կրամոֆոնը ներմուծած է Հալէպ եւ ապագային ալ զբաղած է անոր վաճառքով (Ալ Մայէտ, էջ 341): Շահին եղած է հալէպահայ հին գաղութի ծանօթ դէմքերէն: Ան ծառայած է ազգային զանազան մարմիններէ ներս. անդամակցած է Հայ Ազգային Միութեան՝ որպէս Ազգային Առաջնորդարանի ներկայացուցիչ եւ 1919ին՝ եղած է անոր Տնտեսական Մարմնին ատենապետը, իսկ 7 Դեկտեմբեր 1921ին, Սահակ Կաթողիկոսի կողմէ նշանակուած է Քաղաքական Ժողովի

անդամ ու այդ պաշտօնին վրայ մնացած է 2 տարի: 1922ին եղած է Ազգային Արտի Շինութեան Մասնախումբի գանձապահ, իսկ 1924 Մայիսին կրկին մաս կազմած է Հայ Ազգային Միութեան:

³⁸ Գիւղ տուրիական անապատին մէջ, Եփրատի ձախ ափին, Տէր Զօրէն՝ արեւելք, անկէ 10 քլմ. հեռաւորութեան վրայ: Գիւղէն յայտնաբերուած են ուշ քարեդարեան հնութիւններ եւ բիւզանդական ժամանակաշրջանի պարսպապատ քաղաքի մը ակերակներ: Գիւղին մէջ տեղի ունեցած է ֆրանսացի նուաճողներու եւ սուրիացի ապստամբներու միջեւ ճակատամարտ մը (Սուրիական Արաբական Հանրապետութեան..., Ե., Դամասկոս, 1993, էջ 191): Յեղասպանութեան օրերուն հոն գտնուած են քանի մը հազար հայ աքսորականներ, որոնց «*մէկ մասը ջարդէն ճողոպրած, մէկ մասն ալ ջարդէն յետոյ եկած*», որոնցմէ ողջ մնացած են հազիւ 100-150 հոգի, «*իսկ միւսները ամէնքն ալ մեռեր են հիւանդութենէ, խեղճութենէ, անօթութենէ*» (Օտեան, *Անիծեալ Տարիներ*, էջ 289):

³⁹ Փոքրիկ գիւղ տուրիական անապատին մէջ, Եփրատի աջ ափին, Մունպուճէն հարաւ եւ Հալէպէն հարաւ-արեւելք, առաջինէն 80 եւ երկրորդէն՝ 90 քլմ. հեռաւորութեան վրայ (Սուրիական Արաբական Հանրապետութեան..., Ե., էջ 249): Կառուցուած է պրոնզեդարեան շրջանի Իմար քաղաքի ակերակներուն վրայ: Քաղաքը վերելք ապրած է արաբական տիրապետութեան ժամանակ եւ վերանուանուած է Պալէս: ԺԳ. դարակիսուն մոնկոլներու կողմէ հիմնայատակ կործանուելով վերածուած է աննշան բնակավայրի: 1973ին, Մեսքենէն մնացած է նորակառոյց ջրամբարի մը ջուրերուն տակ, մինչ անոր բնակիչները տեղափոխուած են Նոր Մեսքենէ ասանը, որ կառուցուած է առաջինէն ոչ-շատ հեռու, տափարակ դաշտավայրի մը վրայ, իսկ անոր պատմական աշտարակը քակուելով՝ տեղափոխուած է իր նախկին տեղէն 1-1.5 քլմ. հարաւ եւ հոն վերակառուցուած: 1915ին Մեսքենէն եղած է աննշան վայր մը եւ ունեցած է իջեւանատուն մը եւ արաբական 12-15 հողաշէն տնակներ միայն: Յեղասպանութեան տարիներուն ան եղած է հայ աքսորականներու համակերպողանցման գլխաւոր կայքերէն մէկը, ուր ստեղծուած դժուարագոյն պայմաններուն հետեւանքով մահացած են գաղթական մեծաթիւ հայեր: Իշխանութիւնները սպաննած են հոն հաւաքուած որբերը՝ ձիերու սմբակներուն տակ կոխկոտելով, ձմրան ցուրտին կիսամերկ ու բոկոտն անապատ քշելով, Եփրատի ջուրերուն մէջ նետելով, նաֆթով այրելով եւ կամ շնչահեղձ ընելով զանոնք (Հայկական Հարց Հանրագիտարան, Հայկական Հանրագիտարանի Գլխաւոր Խմբագրութիւն, Երեւան, 1996, էջ 328): Յեղասպանութեան տարիներուն, կառավարութեան հսկողութեամբ հոն հիմնուած է որբանոց մը, ուր ապաստանած են 335 հայ որբեր (Զաւէն Արք., էջ 213): Նոյն օրերուն հոնկէ անցած Հայկ Ա. Արամեան վկայած է, որ ինք Մեսքենէի մէջ «*մէկ ժամ կառքեր քշելով*» համրած է «*ճամբուն երկայնքին 657 կիներու դիակ ահռելի խոշտանգումներով...*» (Փրոֆ. Հայկ Ա. Արամեան (Ուլնիածովք), *Մեծ Եղեռնի Պատգամ. Հայոց Տանթեական Քաւարան Եւ Հրաշալի Յարութիւն*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1970, էջ 179): Ըստ Անտոնեանի, Յեղասպանութեան տարիներուն Մեսքենէի մէջ թիֆուսէն զոհուած են 100 հազար հայեր: Իր հոն գտնուած միջոցին, օրական մահացած է 300-500 հոգի (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 18-19):

Մեսքենէի հայ աքսորականներու առօրեայէն վերցուած բազմաթիւ դրուագներ տեղ գտած են Անտոնեանի *Այն Սեւ Օրերուն...* (*Պատկերներ*) հատորին մէջ (Պօսթըն, Տպ. Հայրենիք, 1919), ուր մանրամասն նկարագրուած են տեղոյն աքսորականներուն թշուառութիւնը, հոն տիրող սովն ու վրանաքաղաքին անտանելի պայմանները:

⁴⁰ Սուրիոյ եւ Իրաքի արաբական ցեղախումբերէն որ կը բանակէր առաւելաբար Հալէպէն Տէր Զօր տարածուող շրջանին մէջ եւ Եփրատի հովիտին շուրջ, Ապտուլ Ազիզ Լեւան լանջերուն վրայ եւ մասամբ նաեւ Հալէպէն արեւմուտք եւ Յորդանան: Անոր անդամները ծանօթ են որպէս քաջ ու դաժան վարքի տէր մարդիկ: Պակկարաները հին ցեղախումբ են, բաժնուած գլխաւոր երկու մասի՝ [Տէր] Զօրի Պակկարաներ եւ [Ապտուլ Ազիզ] Լեւան Պակկարաներ: Կան նաեւ գլխաւոր այս երկու ճիւղերէն բաժնուած այլ ճիւղեր եւս (Մաքս Ֆրայիէր Ֆոն Օփենհայմ, Արշ Պրոնիշ Եւ Ֆերնէր Քասքէլ, *البندى* (Պետուիները), թարգմ. Միշէլ Քիլօ եւ Մահմուտ Քապիպօ, Ա. Հատոր, Բ. տիպ, Պէրուժ, 2007, էջ 357. նաեւ *كحالة رضا عمر معجم، والحديث القديمة العرب قبائل معجم* (Օմար Ռըտա Քահիպլէ, Արաբական Հին Եւ Նոր Աշիրէթներու Բառարան), Ա. Հատոր, Դամասկոս, 1949, էջ 87-88): Շատերու մօտ կայ այն թիւր կարծիքը թէ իբր պակկարաները Բագրատունի հայերու շառաւիղներն են (Նիզար Խալիլի, «Հայերը Հալէպի Մէջ», *Գեղարդ*, Ա. Տարի, Հալէպ, Տպ. Արեւելք, 1975, էջ 414): Եղածը անունի նմանութիւն է միայն եւ ոչ՝ աւելի. *Պակկարա* բառը արաբերէն կը նշանակէ կովարած, որ ըստ երեւոյթին եղած է յիշեալ ցեղախումբին զբաղումն ու զիրենք բնորոշող գլխաւոր յատկանիշը:

⁴¹ Սուրիոյ արաբական մեծագոյն ցեղախումբերէն որ ճիւղաւորումներէն մէկն է արաբական Էնեզէ մեծ ցեղախումբին: Միջագետք գաղթած են Նաճրտէն (Արաբիա), ԺԸ. դարու սկզբնաւորութեան, ու բանակած են առաւելաբար Սուրիա եւ Իրաք, Եփրատի հովիտին ու Խապուրի ափերուն եւ մանաւանդ՝ Տէր Զօրի, Մէատինի ու Ապու Քեմալի շրջաններուն մէջ, Պուսարայէն մինչեւ Սվար, Սալամիէ, Յորդանան եւ Արաբական Ծոցի երկիրներ: ԺԹ.-Ի. դարերուն բազմաթիւ արհնաւախի բախումներ ունեցած են օսմանեան բանակին հետ:

⁴² ԺԶ.-ԺԷ. դարերուն Եամանէն Սուրիա ու անկէ Իրաք գաղթած արաբական մեծ աշիրէթ: Սուրիոյ մէջ բանակած են առաւելաբար Խապուր եւ Ճաղճաղ գետերու զոյգ ափերուն, Մարկատէն Շետտատէ ինկող տարածութեան վրայ, մինչեւ Հասիճէն հիւսիս, ինչպէս նաեւ Տէր Զօրի, Ռագգայի ու Հալէպի շրջակայքը, իսկ Սուրիայէն դուրս՝ Պարսից Ծոց, Արաբիա, Յորդանանի արեւելք են.: 1908ին, Ճուպուր աշիրէթը օսմանեան իշխանութիւններուն վճարած է Տէր Զօր Գաւառի տուրքերուն կէսը, իսկ երիտօրքերու իշխանութեան հասնելէ ետք, աշիրէթին վիճակը աւելի եւս վատթարացած է եւ Առաջին Աշխարհամարտի տարիներուն անոնցմէ շատեր պետական պաշտօնեաներու եւ հարկահաւաքներու անիրաւութիւններէն խուսափելու համար՝ գաղթած են Մուսուլ կամ ապաստանած Շամմար մեծ աշիրէթին մօտ: Ճուպուրցիներ ընդհանրապէս եղած են խաղաղասէր եւ ունեցած են բազմաթիւ ճիւղաւորումներ (Քահիպլէ, էջ 163-166):

⁴³ Գիւղ՝ հիւսիսային Սուրիոյ մէջ, Հասիճէ քաղաքէն հիւսիս-արեւմուտք, անկէ 84 քլմ. հեռավորութեան վրայ, այժմու Սուրիա-Թուրքիա սահմանագծին մօտ,

տափարակ դաշտի մը մէջ: Գիւղին մէջ եւ մանաւանդ անոր հիւսիսը տեսանելի են նախաքրիստոնէական շրջանի բազմաթիւ հնութիւններ: Միջնադարուն գտնուած է Մուսուլի առետրական ճանապարհին վրայ ու այդ իսկ պատճառով ստացած է յատուկ նշանակութիւն, մինչեւ որ Լենկթիմուր ւաւերած է զայն ԺԴ. դարավերջին: 1877ին, Ռաս Իւլ Այնի եւ Հասիճէի միջեւ ինկած տարածութեան վրայ, բնակեցուած են մօտ 5 հազար չեչէն ընտանիքներ, որոնց մեծ մասը Առ. Աշխարհամարտի արարտին զոհ գացած են համաճարակի ու անոնցմէ ողջ մնացած է ընդամենը 300 ընտանիք: 1900ին, Ռաս Իւլ Այնը դարձած է շրջանի գինուորական հրամանատարութեան կեդրոնը (*Սուրիական Արաբական Հանրապետութեան...*, Գ., 1992, էջ 436): Ի. դարասկիզբին, եղած է փոքրիկ գիւղ մը, հազիւ 50 տունով, բայց աւելի ետք, անոր մօտէն անցած Պոլիս-Պաղատա շոգեկառքի գիծին պատճառով ստացած է յատուկ նշանակութիւն եւ դարձած գաւառակի կեդրոն: Գիւղի բնակիչները եղած են չեչէններ եւ թուրքեր: Ունեցած է 10 տունի չափի հայ արհեստատրներ, որոնք կոտորուած են տարագրութեան հրամանին առաջին օրն իսկ (*Արիամարտ*, Կ. Պոլիս, Նոր Շրջան, թիւ 13 (1828), 7 Դեկտեմբեր 1918, էջ 1): Ցեղասպանութեան ժամանակ գիւղը եղած է քսորական հայերու համակեդրոնացման գլխաւոր կայքերէն մէկը, ուր հաւաքուած են Սեբաստիոյ, Տիարպէքիի ու Խարբէրդի նահանգներէն ինչպէս նաեւ Կ. Պոլիսէն ու Կիլիկիայէն քսորուած հայերը, որոնց վրանները տեղակայուած են գիւղէն քիչ անդին, բլուրի մը վրայ: Հայկէն սուրիական անապատ քսորուած հայերուն մօտ մէկ-երրորդը դրկուած է Ռաս Իւլ Այն: Յուրտի, անօթութեան եւ համաճարակներու հետեւանքով, այնտեղ օրական մահացած են 5-600 հայ քսորականներ, իսկ 4 ամուսայ ընթացքին՝ 13-14 հազար: Ռաս Իւլ Այնի առաջին մեծ ջարդը կազմակերպած է Վանի նախկին կուսակալ՝ Ճեւտէօ պէյը, որ Փետրուար 1916ին Ատանայէն հասնելով՝ հրահանգած է սպաննել տեղւոյն 50 հազար հայերը: Չարդը սկսած է Մարտի 17ին (*Հայկական Հարց Հանրագիտարան*, էջ 384): Ըստ Աշիրթէններու տեղաւորման եւ գաղթականներու Հայկէի ընդհանուր տեսուչի փոխանորդ՝ Ապտիւլ Ահատ Նուրիի 7 Մարտ 1916 թուակիր հեռագրին, մինչեւ այդ թուականը, Ռաս Իւլ Այնի մէջ «այլեւայլ պատճառներէ» մահացած են 35 հազար քսորական հայեր, իսկ ըստ Անտոնեանի՝ հոն տեղի ունեցած կոտորածներուն զոհուած են մօտաւորապէս 70 հազար հայեր (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 18, 169): Ցեղասպանութենէն ետք, այնտեղ հաստատուած է փոքրաթիւ հայութիւն մը, որ ունեցած է իր դպրոցները, Ս. Աստուածածին եկեղեցին եւ ազգային-մշակութային համեստ կեանքը: 1926ին, գաղթօճախը ունեցած է 30 հայ ընտանիք (Դիւան Բերիոյ Թեմի, Ներսէս Քհնյ. Պապայեան, *Համառօտ Տեղեկագիր Տէր Զօր Եւ Շրջակայից Հայաբնակ Վայրերու*, 6 Սեպտեմբեր 1926, էջ 3) իսկ 1950ականներուն՝ այնտեղ գտնուած է 70 հայ տուն. իսկ ազգային վարժարանը՝ ունեցած է 65 աշակերտ:

⁴⁴ Արաբերէն՝ տնօրէն:

⁴⁵ Պելետիէ - Արաբերէն՝ թաղապետարան, *րէխի* արաբերէն՝ մեծաւոր, *Պելետիէ րէխի*՝ քաղաքապետական ժողովի նախագահ:

⁴⁶ Հաճի Ֆատըլ կամ Ֆատէլ Ալ Ապպուտ - Ազգութեամբ արաբ: Ցեղասպանութեան տարիներուն եղած է Տէր Զօրի քաղաքապետարանի

նախագահ: Եղած է հայասեր անձնավորություն: Մեծապես օգնած է աքտրական հայերուն եւ անոնցմէ շատերը պատասպարած որբանոցի մը մէջ: Երբ մերժած է որբերը պաշտպանելէ հրաժարելու գաւառապետ Սալէի Ձեքիի հրամանները՝ պաշտօնանկ եղած է անոր կողմէ: Երբ Տէր Զօր գտնուող 1500 զինուորներէ բաղկացած թրքական զօրագունդը հեռացած է քաղաքէն 6 Նոյեմբեր 1918ին, եւ անկէ ետք մօտ ամիս մը կառավարական ուժերու բացակայութեան պատճառով անիշխանութիւն տիրած է քաղաքին մէջ, այս խառնաշփոթ օրերուն Հաճի Ֆատըլ դարձեալ մեծապես օգտակար եղած է հայութեան իլեակներուն: Նոյն միջոցին, Էմիր Ֆայսալ, անսալով տէրօրոցիներու խնդրանքին, քանի մը արաբ զինուորներու հետ հրամանատար մը դրկած է Տէր Զօր եւ Հաճի Ֆատըլը նշանակած գաւառապետ: Այս դրութիւնը շարունակուած է 18 Դեկտեմբեր 1918էն 6 Յունուար 1919, երբ բրիտանական զօրագունդ մը Տէր Զօր մտնելով ստանձնած է տեղւոյն իշխանութիւնը:

⁴⁷ Օսմանեան Խորհրդարանի անդամ:

⁴⁸ Կը կոչուէր Մուհամմէտ Իֆթիայի Կուրնուս: Եղած է Տէր Զօրի գաւառապետ Ձեքիի գլխաւոր գործակիցներէն եւ Տէր Զօրի կոտորածներու գլխաւոր կազմակերպիչներէն:

⁴⁹ Բնիկ տէր զօրցի, Անայի տեղակալ: Յեղասպանութեան տարիներուն Տէր Զօր գտնուած գրող Սահակ Մեսրոպ զինք բնութագրած է որպէս «*Կիսարսայ ճիւղի մը: Թուրք զուլումը անկէ աւելի դիւային պաշտօնէյ չէր կրնար գտնել անապատի անասնանութեան մէջ: Ոճրագործի գանկով, մանր խորունկ աչքերով, հաստ ու երկար կզակով, սեւի սեւ մորթով տարամերժ ճիւղի մըն էր ան՝ Թրքի Մահմուտ, ջարդարար Ձեքիի աջ բազուկը... Թրքի Մահմուտ վարպետն է ոճիր գործելու...*»: Ան է որ Տէր Զօրէն հարաւ-արեւելք գտնուող Անա քաղաքին մօտակայ Ռաւայի բերդին մէջ 1916ին բանտարկած եւ սովամահ ըրած է Տէր Զօրի գաւառապետ Սալէի Ձեքիի կողմէ ճանապարհաշինութեան պատրուակով Անա դրկուած 13 հազար հայ երիտասարդները (Սահակ-Մեսրոպ, *Եղեռնի Յուշարձան*, էջ 66-68): Անոր անունը յիշուած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի պատրաստած Հայոց Յեղասպանութեան պատասխանատուներու ցուցակին մէջ (*Patrik Zavenin...*, էջ 92):

⁵⁰ Եղած է Տէր Զօրի «Իսքեան մեմուրի»՝ բնակեցման պաշտօնէյ: Անոր անունը յիշուած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի պատրաստած Հայոց Յեղասպանութեան պատասխանատուներու ցուցակին մէջ (*Patrik Zavenin...*, էջ 91): Ենթադրաբար սպաննուած է հայ երիտասարդներու կողմէ՝ Տէր Զօրի գաւառապետ՝ Սալէի Ձեքիի հետ միասին (տե՛ս՝ վերեւ):

⁵¹ Ալայ – Թրք.՝ գունդ, զօրագունդ, գոմանտան, ֆրանսերէն՝ հրամանատար: Ալայ գոմանտանը՝ զօրագունդի հրամանատար:

⁵² Թապուր – Թրք.՝ վաշտ, որ կը բաղկանար 600-1000 զինուորներէ. Թապուր գոմանտանի՝ վաշտի հրամանատար, վաշտապետ:

⁵³ Էսթեր՝ ջորի, սիւվարի՝ հեծեալ, իւզ պաշի՝ հարիւրապետ: Էսթեր սիւվարի իւզ պաշի՝ ջորիի հեծեալներու հարիւրապետ:

⁵⁴ Միւլազիմ – Արաբերէն՝ յիսնապետ:

⁵⁵ Թուրք գրագետ, որ երկար տարիներ ապրած է Եգիպտոս: Ցեղասպանության շրջանին ըլլալով Տէր Զօրի գաւառապետ, մերժած է Տէր Զօր քստրուած հայերը բնաջնջելու Կ. Պոլսոյ կեդրոնի բազում հրահանգները այն առարկութեամբ՝ թէ փոխադրութեան միջոցներ չկան, որպէսզի կարենայ ժողովուրդը տեղահան ընել Տէր Զօրէն անդին: 23 Դեկտեմբեր 1915ին Հալէպի նահանգապետ Մուսթաֆա Ապտիւլ Հալիք տեղեկագիր մը յղած է Ներքին Գործոց Նախարարութեան, ուր նկարագրած է Տէր Զօրի հայ գաղթականներուն բարուօք վիճակն ու անոնց նկատմամբ Ալի Սուատի բարեացակամ վերաբերմունքը, ուր ի միջի այլոց ըսած է թէ՛ հայոց հանդէպ անոր «*ցոյց տուած կողմնակցութիւնն ու պաշտպանութիւնը զարմանալի համեմատութեան մը հասած են*»: Այս հեռագիրէն կարճ ժամանակ անց, Ալի Սուատ պէյ պաշտօնանկ եղած է (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 50-52. Նաեւ՝ Տիգրան Ճեպեճեան, *Ապրուած Օրեր Հայաստանութենէն. Տէր-Զօր 1915*, Հալէպ, Հրատ. Վիոլէտ Ճեպեճեան Գրադարանի, 2001, էջ 8): Տէր Զօրէն անոր հեռացումին թուական նշուած է 1916ի Յունիսը: Ան Տէր Զօրէն փոխ նահանգապետի պաշտօնով տեղափոխուած է Պաղտատ, ապա Բաղէշ: Ալի Սուատ դէմ եղած է հայերը կոտորելու գաղափարին եւ արտօնած, որ Տէր Զօր քստրուածները առետուրով եւ հողագործութեամբ զբաղին ու շէնցնեն անապատները. բայց նաեւ քստրականներէն կաշառք ստացած է, նիւթապէս օգտուած ու պղծած է բազմաթիւ դեռատի հայուհիներ (Փրոֆ. Վահագն Տատրեան, *Հայկական Ցեղասպանութիւնը Խորհրդարանային Եւ Պատմագիտական Քննարկումներով*, Պըրքլի, Քալիֆորնիա, «Պայքար» Հրատ., 1995, էջ 90-91): Իր մասին եղած դրական փաստերուն կողքին, ժամանակակից մամուլին մէջ տպուած է նաեւ ոչ-դրական վկայութիւն մը: Ան հայ կարաւաններու խումբի մը Ռաս Իւլ Այն հասնիլը իմանալով, յատուկ մեկնած է Ռաս Իւլ Այն եւ գաղթականներուն թելադրած՝ որ իրեն յանձնուին իրենց մօտ պահուող թանկագին առարկաներն ու դրամները: Կամքը կատարուելէն ետք, իր ստորագրութեամբ քստրականներուն ընկալագրեր յանձնած է, զորս քանի մը ժամ ետք, բռնութեամբ կրկին հաւաքուած են իր իսկ ոստիկաններուն կողմէ (Կ. Ագիլեան, «Ո՞վ է Տէր-Զօրի Նախկին Կառավարիչ Ալի Սուատը», *Ժողովուրդի Չայնը*, Կ. Պոլիս, Ա. տարի, 10 Մայիս 1919, թիւ 85-176, էջ 3):

⁵⁶ Պատմական քաղաք Իրաքի, Մուսուլ Նահանգի կեդրոնը: Կառուցուած է Տիգրիս Գետի աջ ափին: Միջնադարուն քաղաքը ունեցած է փոքրաթիւ հայ գաղութ մը, որուն մասին հնագոյն յիշատակութիւնները կու գան ԺԴ դարակէսէն: 1857ին այնտեղ կառուցուած է հայկական նորաշէն եկեղեցի մը՝ Ս. Էջմիածին անունով: 1915ին Մուսուլ գտնուած են մօտաւորապէս 200 հայեր, մեծամասնութեամբ գաղթած Սղերդէն: Ցեղասպանութեան շրջանին, Մուսուլը եղած է հայ քստրականներու համակեդրոնացման կարեւոր վայր մը, ուր հաւաքուած են մօտ 30 հազար գաղթականներ, որոնցմէ պատերազմի աւարտին մնացած են մօտաւորապէս 4 հազար եւ աւելի քան հազար որբեր: Անոնցմէ շատեր աւելի ետք հեռացած են քաղաքէն: Զինադադարին, տեղոյն որբանոց-այրիանոցին մէջ ապաստան գտած են 5-600 անոքներ, իսկ 1928ին՝ հոն մնացած են հազիւ 200 հայ ընտանիքներ՝ 155 երկսեռ աշակերտութեամբ

ազգային վարժարանով մը (*Եփրատ*, Հալեպ, Բ. տարի, թիւ 126, 29 Սեպտեմբեր 1928):

- ⁵⁷ Կամ Պուսերա, Էլ Պուսերա - Գիւղ, որ կառուցուած է պատմական Քարքիսիա քաղաքի աւերակներուն վրայ: Կը գտնուի Տէր Զօրէն հարաւ-արեւելք, 40 քմ. հեռավորութեամբ: Այժմու քաղաքը կառուցուած է բլուրի մը վրայ, Խապուրի աջ ափին, հոն՝ ուր Խապուրը կը միանայ Եփրատին: Քաղաքին պատմական կառոյցները մեծ մասամբ քանդուած են ու աւերուած. մնացած են զինուորական միջնաբերդին աւերակները միայն (*Սուրիական Արաբական Հանրապետութեան...*, Բ., 1992, էջ 326-327): Ի. դարասկիզբին, Պուսերան եղած է քանի մը հարիւր արաբ բնակիչ ունեցող գիւղակ մը: Յեղասպանութեան օրերուն, շրջան մը, հոն հաւաքուած են 8-10 հազար հայ քստրականներ, որոնցմէ, սովկէն ու հիւանդութիւններէն վերապրածները, աւելի ետք, դրկուած են Սուվար եւ Շետտատէ ու հոն կոտորուած: Ան շրջան մը եղած է քստրավայրը Երուանդ Օտեանի:
- ⁵⁸ 456 քմ. երկարութեամբ գետ, որ կը բխի վերին Միջագետքի Գարաճատաղ լեռան ստորոտէն եւ Սուրիա կը մտնէ Ռաս Իւլ Այնի մօտակայքէն: Սուրիոյ մէջ կը հոսի Հասիճէ եւ Տէր Զօր նահանգներուն մէջ, կ'անցնի Հասիճէի, Շետտատէի, Մարկատէի եւ Սուվարի մօտակայքէն ու Տէր Զօրէն վար, Պուսարայի մօտ կը թափի Եփրատի մէջ: Այժմ անոր վրայ կառուցուած են բազմաթիւ ջրամբարներ (*Սուրիական Արաբական Հանրապետութեան...*, Գ., էջ 194-195): Գետը ունի քանի մը ակ, որոնցմէ մէկը կը բխի Ռաս Իւլ Այնի արեւմուտքէն, միւսները՝ անոր արեւելքէն:
- ⁵⁹ Քաղաք, Ուրֆա անկախ Գաւառի Ռազգա Գաւառակի կեդրոնը: Մեծն Աղեքսանդրի օրօք կառուցուած պատմական Նեկիֆորիոմ քաղաքը որ կը գտնուի Հալեպէն հարաւ-արեւելք եւ Տէր Զօրէն՝ հիւսիս-արեւմուտք, վերջինէն 140 քմ. հեռավորութեան վրայ, Եփրատի ափին: Ան կարճ ժամանակ մը եղած է արաբական Ապպասեան Պետութեան մայրաքաղաք, որուն բնակիչները հեռացած են անկէ 1371ին՝ Լենկթիմուրի կողմէ քաղաքի գրաման նախօրեակին: Անկէ ետք, մինչեւ 1880ականները, քաղաքը մնացած է լքուած ու անմարդաբնակ, ապա կրկին բնակեցուած է Ուրֆայէն եւ Մուսուլէն հասած զաղթականներով (*Սուրիական Արաբական Հանրապետութեան...*, Գ., էջ 500-502): Քաղաքը հարուստ է պատմական յիշատակարաններով, որոնցմէ առաւել յիշատակելի է 720ին կառուցուած պաշտպանական պարիսպը որ ունի մօտ 5 քմ. երկարութիւն: 1915ին Ռազգան ունեցած է 3000 տուն բնակիչ, որուն աւելի քան 300ը եղած են արաբ շրջուն պետեւիներ: Աւելի առաջ, հոն զաղթած էին նաեւ պերեճիքցի թուրքեր, իսկ 1906ին եւ 1917ին կառավարութեան կողմէ Ռազգայի մէջ վերաբնակեցուած են Քապարտայ եւ Եաճտուղ ցեղախումբերէն մօտ 200 չերքէզ ընտանիքներ: Քաղաքը ունեցած է նաեւ քիւրտ եւ չեչէն ազգաբնակչութիւն եւ 7-8 տուն ուրֆացի հայեր, որոնց տղամարդիկը Յեղասպանութեան տարիներուն տեղոյն իշխանութիւններուն կողմէ Ուրֆա տարուելու պատրուակով՝ հեռացուած են քաղաքէն ու սպաննուած: Ըստ կայսերական հրամանի, Ռազգան նշանակուած է որպէս քստրական հայերու առժամեայ բնակավայրերէն մէկը, ուր պիտի բնակեցուէին մինչեւ 20 հազար զաղթական հայեր (Գուժկան Սերաստիոյ (Կարապետ Գաբիկեան),

Եղեռնապատում Փոքրուն Հայոց Եւ Նորին Մեծի Մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթրն, Տպ. «Հայրենիք», Հրատ. Ամերիկայի Սեբաստիոյ Վերաշինութեան Միութեան, 1924, էջ 420 եւ 429-430): Հոն արտորուած հայերէն շատեր, որոնց արտօնուած չէր քաղաք մտնել, այնուամենայնիւ, կաշառքով, կրցած են մտնել Ռազգա ու փրկուիլ Տէր Զօր դրկուելէ ու կոտորուելէ: Ըստ Գալֆայեանի, Ռազգա հաստատուած գաղթական հայերու թիւը Դեկտեմբեր 1915ին կատարուած պաշտօնական մարդահամարին համաձայն՝ անցած է 30 հազարը, իսկ յաջորդ Մայիսի աւարտին՝ այն բարձրացած է 50 հազարի (Գալֆայեան, էջ 257 եւ 507): Ռազգա արտորուած հայերէն շատեր մնացած են այնտեղ ու կազմած՝ փոքրիկ գաղթօճախ մը: Անոնց թիւը 1926ին եղած է 287 անձ (Պապայեան, էջ 6, մինչ այլ աղբիւր մը, 1927ին տեղւոյն հայութեան թիւը ցոյց կու տայ որպէս 302 անձ (*Արեւ, Գահիրէ, 26 Նոյեմբեր 1927*) իսկ 1934ին հոն գտնուած են 350 հայեր, որոնք ունեցած են եկեղեցի մը, վարժարան մը ու մանկապարտէզ մը 85 աշակերտ-աշակերտուհիով: Ռազգայի մէջ գործած են նաեւ հայկական մշակութային եւ բարեսիրական միութիւններ:

⁶⁰ Արաբական անուանումով Հասաքէ, քաղաք Խսպուր եւ Հերմաս (Ճաղճաղ) գետերու միացման կէտին մօտ, Տէր Զօրէն հիւսիս արեւելք, անկէ 179 քմ. հեռաւորութեան վրայ: Քաղաքին առաջին բնակատեղին կառուցուած է գետին հիւսիսակողմը գտնուող բլրակին վրայ, իսկ նոր ժամանակներուն՝ անոր առաջին շէնքը եղած է ցարդ իր գոյութիւնը պահող օսմանեան զօրանոցը: Հասիճէն այժմ գիւղատնտեսական մեծ քաղաք է եւ Սուրիոյ համանուն նահանգին կէդրոնը (*Սուրիական Արաբական Հանրապետութեան... Գ.*, էջ 63-65): Յեղասպանութենէն ետք, հոն հաստատուած է փոքրաթիւ հայ գաղութ մը, որ ունեցած է իր դպրոցները, Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցին եւ ազգային-մշակութային համեստ կեանքը: 1926ին, հոն կային 41 հայ առաքելական ընտանիքներ (Պապայեան, էջ 6), իսկ 1950ականներուն՝ 70 հայ ընտանիք, մինչ տեղւոյն ազգային վարժարանին մէջ ուսանած են 80 աշակերտներ:

⁶¹ Միջագետք հաստատուած արաբական հնագոյն ցեղախումբերէն, որ համեմատաբար եղած է փոքրաթիւ՝ քան միւս ցեղախումբերը: Անոր անդամները Ի. դարակիզբին մասամբ դարձած են քաղաքաբնակներ եւ զբաղած երկրագործութեամբ, մինչ ուրիշներ՝ բանակած են Ճեզիրէի հիւսիսը՝ Հասիճէի եւ Ռաս Իւլ Այնի շրջանները, մինչեւ Սինճար եւ Մուսուլ, ինչպէս նաեւ Հալէպի շրջակայքը: Այս ցեղախումբի անդամները եղած են աղքատ եւ ծանօթ՝ իրենց աւագակային վարքով, որ եղած է իրենց գլխաւոր յատկանիշը:

⁶² Կամ՝ Սընճար - Լեռ՝ Մուսուլ նահանգին մէջ, Մուսուլ քաղաքէն արեւմուտք, այժմու Սուրիա-Իրաք սահմանագծին մօտակայքը: Համանուն պարսպապատ քաղաքը կը գտնուի լեռան հարաւային ստորոտին, Մուսուլէն 80 քմ. հեռաւորութեամբ: Բնակիչները մեծ մասամբ եզիտի քիւրտեր են: Սընճարը գլխաւոր կէդրոնն է անոնց, ուր կը մնայ նաեւ իրենց հոգեւոր առաջնորդը: Շրջանին մէջ կ'ապրին նաեւ փոքրաթիւ ասորիներ ու արաբներ: Հայոց Յեղասպանութեան տարիներուն, բազմահազար հայեր փախուստ տալով սուրիական անապատէն, ապաստանած են Սընճարի եզիտիներուն մօտ ու փրկուած: Անոնց մէկ մասը, մանաւանդ՝ մերտինցի արաբախօս կաթօլիկները, Զինադադարէն ետք մնացած են հոն եւ 1930ին կառուցած Ս. Գէորգ եկեղեցին,

իսկ 1932ին՝ Անարատ Յոլութեան Քոյրերու վարժարանը: Մինչ ուրիշներ, ասելի էտք, անցած են Մուսուլ, Պաղտատ եւ Սուրիա, իսկ ներգաղթի օրերուն՝ հայրենադարձուած են Խորհրդային Հայաստան: Օրին, անոնց հետ Հայաստան գաղթած են նաեւ բազմաթիւ եգիտիներ: 1933ին Սընճարի հայ կաթողիկներուն թիւը եղած է 70-80 ընտանիք («Թեմեր», *Աւետիք*, Բ. տարի, Մարտ, թիւ 1 (13), Պէյրուօ, 1933, էջ 91):

- ⁶³ Արաբական հնագոյն ցեղախումբերէն, որ իր մէջ ունի 40 ճիւղաւորում: Միջագետք գաղթած են Եմէնէն: Ի. դարասկիզբին, մասամբ դարձած են քաղաքաբնակներ, մինչ ուրիշներ՝ բանակած են առաւելաբար Սուրիոյ Հասիճէ եւ Իրաքի Մուսուլ քաղաքներուն միջեւ ինկած տարածաշրջանին մէջ, ինչպէս նաեւ Հալէպէն արեւելք՝ Մունպուճի ու Ճարապլուսի շրջակայքը: Մեծ եղած է անոնց թիւը մանաւանդ Իրաքի մէջ:
- ⁶⁴ Արաբական մեծագոյն ցեղախումբերէն, որուն հետեւորդները Նաճըտէն (Արաբիա) Միջագետք գաղթած են ԺԷ. դարուն եւ ծանօթ են իրենց քաջութեամբ: Բանակած են Խապուրի ափերուն, Ռազզայի ու Պաղտատի միջեւ ինկած տարածաշրջանին մէջ, ինչպէս նաեւ Իրաքի, Արաբիոյ, Արաբական Ծոցի երկիրներուն, Պարսկաստանի եւ այլ երկիրներու մէջ, իսկ ամբան՝ բարձրացած են Սինճար Լէտ: Օսմանեան տիրապետութեան վերջին շրջանին շամմարները բազմաթիւ արիւնալի բախումներ ունեցած են օսմանեան բանակին հետ:
- ⁶⁵ Կամ Սաֆա - Գիւղ՝ Ռաս Իւլ Այնէն հարաւ-արեւելք, 18 քլմ. հեռաւորութեամբ, Խապուր գետի աջ ափին, համանուն բլրակի կողին (*Սուրիական Արաբական Հանրապետութեան...*, Բ., էջ 529): Բնակիչները եղած են չեչէններ, որոնք հոն գաղթած են Լազիստանէն մօտաւորապէս 1835ին (Սարգիս Սարունի, «Սաֆա, Սաֆա...», *Շանթ* շաբաթաթերթ, Կ. Պոլիս, Դ. տարի, Նոր շրջան, թիւ 7, 28 Դեկտեմբեր 1918, էջ 87):
- ⁶⁶ Թուրք քաղաքական գործիչ, որ ցեղասպանութեան սկզբնաւորութեան, հայերու բռնագաղթի ընդհանուր տնօրէնի օգնականի պաշտօնով, Կ. Պոլիսէն դրկուած է Հալէպ եւ Տէր Զօրի կոտորածներու նախօրեակին, Եփրատի գիծին վրայ գտնուող բովանդակ հայութիւնը քշած է Տէր Զօր ու պատճառ դարձած անոնց փճացումին (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 8): Հազար Պէլ եղած է սուրիական անապատի մէջ իրագործուած հայերու կոտորածներուն գլխաւոր դերակատարներէն մին: Տէր Զօրի մէջ ան կը սիրէր ինքզինք կոչել «Հայոց Աստուած»: Ի միջի այլոց, ինք է որ «18 կառքերու մէջ լեցուած հայ որբերը քարիւղով այրելու հաճոյքը տուած էր ինքզինքին»: Կը համարուի 5 հազար հայերու սպանութեան կազմակերպիչը: Յիշուած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի պատրաստած հայոց ցեղասպանութեան պատասխանատուներու ցուցակին մէջ (*Patrik Zavenin...*, էջ 91): Զինադադարին, 7 Մարտ 1919ին, ձերբակալուած է Աֆիոն Գարահիսարի մէջ, երբ քաղաքի կառախումբին մէջ հաւաքուած հայեր, որոնք մեծ մասամբ եղած են իր ճիրաններէն փրկուածներ, ճանչցած են զինք եւ «հանդիսաւորապէս» ձերբակալել տուած են բրիտանացի զինուորներու միջոցաւ, մինչ նոյն պահուն, պատահաբար հոն գտնուող Պարթընի օգնութեան յանձնախումբի անդամ ամերիկացիներ «սինեմայի համար» զանազան ձեւերով լուսանկարած են զինք՝

ձերբակալուած վիճակով («Հայոց Աստուածը» Կը Ձերբակալուի», *Ճակատամարտ*, Կ. Պոլիս, նոր շրջան, թիւ 102 (1923), 11 Մարտ 1919, էջ 2):

⁶⁷ Կամ Ապու Հարար-Ապու Հարրար - Փոքրիկ գիւղ՝ սուրիական անապատին մէջ, Եփրատի աջ ափին, Տիփսիի եւ Համամի միջեւ: Եղած է զինուորական կայան եւ ունեցած է իջեւանատուն (խան) մը: 10 Սեպտեմբեր 1916ի դրութեամբ, գետէն 200 մէթր հեռաւորութեան վրայ գտնուող Ապու Հարրարի Բլուրին վրայ, տեղակայուած էին 240 արքայական հայեր (*United States Official Records on the Armenian Genocide 1915-1917*, compiled with an introduction by Ara Sarafian, Gomidas Institute, Princeton and London, 2004, էջ 557-558): 1974ին, Ապու Հարրարը մնացած է Եփրատի վրայ կառուցուած Ալ Ասատ ջրամբարի ջուրերուն տակ, իսկ գիւղացիները տեղափոխուած են անոր մօտակայքը հիմնուած համանուն նորահաստատ գիւղը, մինչ գիւղին մէջ գտնուող կղմինտրէ պատմական կլոր աշտարակը քակուելով՝ տեղափոխուած եւ վերակառուցուած է Թապքա քաղաքի (այժմ՝ Ալ Մաուրա) մօտակայքը գտնուող ջրամբարի պատին մօտ:

⁶⁸ Թրքերէն տասնապետ:

⁶⁹ Ապու Հարրարի գաղթականաց առաքման պաշտօնէայ: Տեղասպանութեան տարիներուն, Ապու Հարրարէն անցած բազմաթիւ վերապողներ իրենց յուշերուն մէջ գրած են անոր մասին: Ըստ անոնց, գաղթականներու շրջանակին մէջ ան ստացած է «Ոսկոր կտորող» եւ «Գարա Օնպաշը» (Սեւ Տասնապետ) մակդիրները՝ իր բիրի հարուածներուն տակ սպաննուածներուն կամ կտորածքներ ստացածներուն մեծ թիւին պատճառով (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 39. նաեւ՝ Յակոբ Ա. Սերոբեան, *Եղեռնի Յուշերս*, հրատարակութեան պատրաստեց Անդրանիկ Տազեւեան, Պէյրութ, Տպ. Խոթօկրաւիւր Բագլայեան, 2005, էջ 140-142): Ըստ Սերոբեանի, Բահմէտտին «*թխագոյն, միջահասակ, մարդասպան գազան*» մըն էր, որուն «*ըրած վայրագութիւնները նկարագրելու համար բառեր չենք կրնար գտնել*»: Գաղթականներու իւրաքանչիւր առաքումի ժամանակ, «*ոսկոր կտորող*» Սուհամմէտ Բահմէտտինի ձեռքով, «*2-3 մարդ անպայման կը սպաննուէր՝ մտրակի, բիրի հարուածներուն տակ*»: Սերոբեան ականատես եղած է անոր ձեռքով երկու հայերու սպաննութեան դէպքին ու ըսած է, թէ անոր վճարուած 300 օսմ. ոսկիի կաշառքի մը շնորհիւ 34 հայ ընտանիքներ կրցած են մօտ հինգ ամիս մնալ Ապու Հարրար ու փրկուիլ Տէր Զօր արքայունէլէ (Սերոբեան, էջ 140-142): Ըստ Սեպուհ Լուսարարեանի, Բահմէտտին կ'ապրէր «*քանի մը գեղանի հայ աղջիկներով*» հարեմի մը մէջ: Ան եղած է «*երկայնահասակ, նիհար, սեւ տգեղ դիմագիծով, մոնկոլական, բարակ պէխերով... մէկ ձեռքը ճիպոտ, մէջքին կապած դաշոյն, տասհարուածանոց, արիւնարբու մի գազան, խուզարկու հրէշային նայուածքով...*»: Լուսարարեան ըսած է նաեւ, թէ ան իր կօշիկին երկաթէ կռունկով գլուխներ ջախջախած ու դիակները Եփրատ նետել տուած է (Սեպուհ Լուսարարեան, «Մի Կեանքի Պատմութիւն», ձեռագիր յուշեր, պատճէնը՝ Հայոց Տեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտ, էջ 315-316): Թալասցի Միսաք Թ. Աբրահամեան եւս գրած է իր մասին. «*[Ռագգայի մէջ] ...որ մը բանտ պատկելէն վերջը գայմագամութեան տուած աղերսագրիս վրայ երաշխաւորութեամբ ելնելու արտօնեցին, այս անգամ ալ զարագօլ գօմանտանը* [պահականոցի

նստիկանապետ] Սեւ Բահմէտտինը չ'ձգեց (այս Սեւ Գազանը այն Բահմէտտինն է որ Գարա Օնպաշը (Սեւ Տասնապետ – Մ.Մ.) կը յորջորջեն եղեր Ապու Հարրերի հայ գաղթականները հոն՝ շատ մը հայերուն ծեծի տակ սպաննելուն, Տէր Զօր ղրկուելնուն պատճառ ըլլալով մէկտեղ՝ շատերէն ալ շատ ստակներ շորթած եւ կողոպտած է, հիմա ալ անպաշտօն կերպիւ Բազգա կը գտնուի եղեր եւ քովն ալ հայ աղջիկ մը կայ), այն գազանն ալ կաշառելով օձիքնիս ազատեցինք եւ դուրս ելլելով լայն շունչ մը առի, դժոխային երկրին մէջ ինքզինքս արքայութեան մէջ կարծեցի» (Միսաք Թ. Աբրահամեան, «Համառօտ Կենսագրութիւն Միսաք Թ. Աբրահամեանի», ձեռագիր յուշեր, գրի առնուած Հալէպ, 30 Դեկտեմբեր 1918ին, բնագիրը՝ Նուպարեան Գրադարան, Ա.Ա.Ֆ, Կեսարիոյ Թղթածրար): Իսկ ըստ այնթապցի Գրիգոր-Թորոս Ըլէպէճեանի, Ապու Հարրարի մէջ կառավարութիւնը հաւաքած է 8-9 տարեկան 50 մանուկներ, զանոնք Կ. Պոլիս՝ որբանոց ղրկելու համար, որոնք 12 ոստիկաններու ընկերակցութեամբ ճամփայ հանուած են. բայց քանի որ մանուկները անկարող եղած են քալելու, ոստիկանապետ Բահմէտտին հրամայած է ձիերը տղոց վրայ քշել եւ 15 վայրկեան ետք անոնցմէ «հատ մը ոտքի վրայ ողջ մնացած չէր» (Գաբիկեան, էջ 511):

⁷⁰ Բահմէտտինի եւ որբերուն առնչուող այս դէպքերը, նոյն մանրամասնութիւններով, կրկնուած են Անտոնեանի տպագիր հատորին մէջ (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 197-199) եւ Սերոբեանի կողմէ (Սերոբեան, էջ 156-157):

⁷¹ Ժանտարմա՝ քաղաքային ոստիկան, զմանտան՝ հրամանատար. Ժանտարմա զմանտան՝ քաղաքային ոստիկանութեան հրամանատար:

⁷² Այս պարբերութեան լուսանցքին կայ հետեւեալ հատուածը. «Մէնզիլ Գոմանտանի Նուրէտտին պէյ, անձնապէս համակիր հայոց, օճառ կու տար, քարավանա կը հանէր, հացը առատ կու տար: Որբանոցը առաջին անգամ բացողը Նուրէտտին պէյն է»:

⁷³ Տէ՛ւ՝ ծանօթագրութիւն թիւ 45:

⁷⁴ Տէ՛ւ՝ ծանօթագրութիւն թիւ 40:

⁷⁵ Նկատի ունի նախապէս յիշուած Մարաթը:

⁷⁶ Արաբերէն՝ հայթայթիչ, յանձնակատար:

⁷⁷ Ներսէ-Օննիկ Քիւրտեան, բնիկ իզմիթցի (Նիկոմիդիա): Յեղասպանութեան օրերուն Տէր Զօրի մէջ եղած է փռապան եւ յաճախ օգնած կարօտեալ հայ գաղթականներուն: Ան, բանակին հացի հայթայթիչը ըլլալուն՝ ողջ ձգուած է: Տէր Զօրի մէջ իրեն հանդիպած է Օտեան եւ իր յուշերուն մէջ յաճախ գրած է անոր մասին: Ա՛ն է որ կազմակերպած է Օտեանի ու քանի մը այլ աքսորականներու Հալէպ փախուստը 10 Մարտ 1918ին, վճարելով նոյնիսկ Օտեանի ճանապարհածախսը՝ 12 օսմանեան դեղին ոսկի պատկառելի գումար մը (Օտեան, *Անիծեալ Տարիներ*, էջ 369, 392): Քիւրտեան եղած է ատենապետը 1918ի Զինադադարէն ետք Տէր Զօրի մէջ հիմնուած Որբախնամ Միութեան:

⁷⁸ Ծանրութեան չափ, որ տարբեր կշիռք ունեցած է ըստ տեղի ու ժամանակի: Մերթ կշռած է 213.6 կրամ, մերթ՝ 1225, 1282 են.: Ի. դարասկիզբին ընդհանրապէս կշռած է 400 կրամ:

- ⁷⁹ Արաբերենէ փոխառեալ թրքերէն՝ առողջապահական, միւտիրի՝ արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ տնօրէն. Սըհիէ միւտիրի՝ առողջապահական տնօրէն:
- ⁸⁰ Հայկական անտուանումը Թեքիրտաղ կամ Թագուրտաղ քաղաքին (պատմական Ռետեպոս բիւզանդական քաղաքը), որ Էտիրնէ Նահանգի Թեքիրտաղ Գաւառի կեդրոնն էր եւ ծովեզերեայ քաղաք մը՝ Մարմարա Փովոս եւրոպական ափին: Ունեցած է Ս. Թագաւոր, Ս. Փրկիչ եւ Ս. Խաչ անունով հայկական եկեղեցիներ, քանի մը վարժարան եւ մշակութային միութիւններ: Տեղոյն հայ աւետարանական համայնքը եւս ունեցած է երկու եկեղեցի եւ 170 հետեւորդ (Վեր. Կարապետ Պ. Ատանալեան, *Յուշարձան Հայ Աւետարանականաց Եւ Աւետարանական Եկեղեցւոյ*, Ֆոնէզօ, Crown Printing Co., 1952, էջ 239): 1914ին Ռոտոպօսն ունեցած է աւելի քան 25 հազար բնակիչ, որուն մօտ 10 հազարը՝ հայեր, իսկ մնացեալները՝ թուրքեր, յոյներ եւ հրեաներ եղած են (Ս[արգիս] Ս. Ծոցիկեան, *Արեւմտահայ Աշխարհ*, Նիւ Եորք, Տպ. Ա. Յ. Լէյլէկեան, 1947, էջ 619), իսկ ըստ այլ աղբիւրի, 1915ին, քաղաքի բնակչութեան ընդհանուր թիւը եղած է 30 հազար, որուն «ճիշդ կէտը» եղած են հայեր (Սարգիս Գ. Փաչաճեան, *Յուշամատենան Ռոտոպոյի Հայերուն 1606-1922*, Պէյրութ, Տպ. Տօնիկեան, 1971, էջ 202), մինչ երրորդ աղբիւր մը, Յեղասպանութեան նախօրեակին, տեղոյն հայոց թիւը արձանագրած է 16 հազար (*Ժողովուրդի Արձագանգը*, Կ. Պոլիս, Ա. տարի, թիւ 20-79, 8/21 Յունուար 1919, էջ 2):
- ⁸¹ Հայաբնակ քաղաք, պատմական Հայաստանի Սեբաստիա նահանգի Շապին Գարահիսար Գաւառի կեդրոնը, Սեբաստիա քաղաքէն հիւսիս-արեւելք: Հիմնուած է Ք.ա. 60 թուականին, հսկայ լեռան մը ստորոտին: 1895ի համիտեան կոտորածներու ժամանակ, հակառակ շապին գարահիսարցիներու ինքնապաշտպանական փորձերուն, քաղաքի հայերը տուած են մօտ 5 հազար զոհ, իսկ ամբողջ գաւառը՝ 8-9 հազար զոհ: Տեղոյն հայ առաքելականները ունեցած են Նախավկայ Ս. Ստեփանոս կամ Ս. Աստուածածին եւ Ս. Փրկիչ հայկական եկեղեցիները, Ս. Առաքելոց վանքը եւ բազմաթիւ վարժարաններ, որոնցմէ գլխաւորը ունեցած է 500 աշակերտ: Տեղոյն հայ աւետարանականները եւս ունեցած են իրենց եկեղեցին: Յեղասպանութեան նախօրեակին, Շապին Գարահիսարի մէջ գտնուած է 950 հայ տուն՝ 7200 բնակիչ (Գաբիկեան, էջ 602), բոլորն ալ առաքելականներ, իսկ ըստ այլ աղբիւրի՝ ան ունեցած է 13 հազար հայ բնակիչ (Ծոցիկեան, էջ 490), մինչ երրորդ աղբիւրի մը համաձայն, տեղոյն հայերուն թիւը եղած է 7800 (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Դ. Հատոր, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1998, էջ 78-79): Քաղաքը ունեցած է նաեւ թուրք եւ յոյն բնակչութիւն: Յեղասպանութեան ժամանակ, 2 Յունիսէն 29 Յունիս 1915, տեղոյն հայերը բարձրանալով բերդ, դիմած են ինքնապաշտպանութեան, բայց թրքական բանակը գրաւելով գայն կոտորած է հոն գտնուողներուն մեծամասնութիւնը (Շապին Գարահիսարի համապարփակ պատմութեան համար տես՝ Արամ Հայկազ, *Շապին Գարահիսար Ու Իր Հերոսամարտը*, Պէյրութ, Տպ. Մշակ, 1957, 459 էջ):
- ⁸² Պատմական քաղաք՝ համանուն անկախ գաւառի կեդրոնը: Հայկական Միջագետքի գլխաւոր ոստաններէն, որ միջնադարուն եղած է հայ եւ ասորի

մշակոյթներու կարեւորագոյն կեդրոն: Քաղաքը հարուստ էր իր պատմական յուշարձաններով՝ բերդի մնացորդներով, հնադարեան եկեղեցիներով, մզկիթներով են.: Եղեսիոյ մէջ է որ տեղի ունեցած է հայերէն գիրերու գիտութիւնը: Համիտեան կոտորածներու ժամանակ, տեղւոյն հայերը դիմած են ինքնապաշտպանութեան, բայց յիսնօրեայ հերոսական դիմադրութենէ ետք թրքական զօրքը մտած է հայկական թաղերը եւ կոտորած է մօտ 10 հազար հայեր, որոնց շուրջ 3500ը եկեղեցոյ մէջ ողջ-ողջ այրուածներն են (Ռ. Սահակեան, Ուրֆայի Հերոսամարտ», *Հայկական Հարց Հանրագիտարան*, Հրատ. Հայկական Հարցի Գլխ. Խմբագրութիւն, Երեւան, 1996, էջ 450): Հայ առաքելականները ունեցած են Ս. Աստուածածին եկեղեցին եւ Ս. Սարգիս վանքը, իսկ հայ աւետարանականները՝ երկու եւ հայ կաթողիկոսները մէկ եկեղեցի: Հայեր ունեցած են նաեւ 15 դպրոց, աղջկանց բարձրագոյն վարժարան, որբանոցներ, մշակութային եւ բարեսիրական կազմակերպութիւններ, թերթեր, գրադարաններ են.: 1915ին, քաղաքը ունեցած է շուրջ 100 հազար բնակիչ, որոն 35 հազարը՝ հայեր: (Արամ Սահակեան, *Պիցազնական Ուրֆան Եւ Իր Հայրորդիները*, Հրատ. Ուրֆայի Յուշապատումի Յանձնախումբին, Պէյրութ, Տպ. Ատլա, 1955, էջ 612), իսկ ըստ այլ աղբիւրի ունեցած է 32.600 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 325): Ցեղասպանութեան ժամանակ, տեղւոյն հայերը, 29 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր 1915, դիմած են ինքնապաշտպանութեան, որ սակայն ունեցած է ողբերգական աւարտ, երբ թրքական բանակը յաջողած է մտնել քաղաք ու կոտորել հայերուն մեծամասնութիւնը: Նոյն շրջանին, Եղեսիան եղած է Արեւմտեան Հայաստանէն արքայութեան հայերու համակերպողներու կայան, ուր հաւաքուածները աւելի վերջ արքայութեան են Ռաս Իւլ Այնի ու Ռազգայի անապատները: Զինադադարին, Հոկտեմբեր 1919ին, ֆրանսացիներ պահ մը գրաւած են քաղաքը, ուր հաւաքուած են փոքրաթիւ ուրֆացի հայեր եւ այլ շրջաններէ հոն ապաստանած վերապրողներ, մօտ վեց հազար հոգի: Բայց աւելի ետք, ֆրանսացիներու հեռանալով, 1923ին, անոնք եւս հեռացած են քաղաքէն՝ ինքնապաշտպանական կարճատեւ մարտեր մղելէ ետք տեղւոյն թուրքերուն դէմ:

⁸³ Այս դէպքերը, նոյն մանրամասնութիւններով յիշուած են Անտոնեանի տպագիր հատորին մէջ: Հոն ըսուած է, որ առաջին որբը Տէր Զօրի մէջ պատասպարուած է նիկոմիդացի հացագործ Օնիկ Բիրտեանի մօտ (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 199-200): Այս նոյն դէպքերը յիշուած են նաեւ Սերոբեանի մօտ (Սերոբեան, էջ 157):

⁸⁴ Պատմական քաղաք՝ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Պապ Գաւառակի կեդրոնը, Հալէպ Քաղաքէն հիւսիս-արեւելք, 38 քլմ. հեռաւորութեամբ: Հոն գտնուած հնութիւնները ենթադրել կու տան, որ ան հիթիթեան շրջանի բնակավայր մըն է (*Սուրիական Արաբական Հանրապետութեան...*, Բ., էջ 199): 1216-1233ի Հալէպի կառավարիչ՝ ծագումով հայագգի Շահապուլտին Թուրքիլ Ալ Արմանին, հոն կառուցած է իջեւանատուն մը եւ մետրեսէ (իսլամական դպրոց) մը: 1890ին Պապը ունեցած է 5720 բնակիչ (حميدة الرحمن عبد, *حلب محافظة*, Ապտուրահման Համիտէ, *Հալէպի Նահանգը*, Դամասկոս, Սուրիոյ Մշակոյթի Նախարարութեան Հրատ., 1992, էջ 214): Ցեղասպանութեան շրջանին ան դարձած է արքայական հայերու համակերպողներու գլխաւոր կայքերէն մէկը,

ուր հաւաքուածներուն համար ստեղծուած են անտանելի պայմաններ: Աշիրէթներու տեղաւորման եւ գաղթականներու Հալէպի ընդհանուր տեսուչի փոխանորդ Ապտիլ Ահատ Նուրին, 20 Յունուար 1916ին հրահանգած է Պապի գաղթականներու առաքման պաշտօնեայ Մուհարրէմ Պէլին որ հոն գտնուող բոլոր հայերը աքսորէ [Տէր Զօրի անապատ]: Ըստ Անտոնեանի, Պապի մէջ թիֆուսէ զոհուած են մօտաւորապէս 80 հազար հայեր: Պատահած է որ մէկ օրուայ ընթացքին հոն մահացած է 1111 հոգի (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 91-92, 18-19): Ցեղասպանութենէն ետք Պապը ունեցած է փոքրաթիւ հայ գաղութ մը որ 1926ին բաղկացած է 178 անձէ (Պապայեան, էջ 6):

⁸⁵ Այս հեռագրին հայերէն թարգմանութիւնը տպուած է Անտոնեանի *Մեծ Ոճիրը*ին մէջ, էջ 81:

«Խիստ ստիպողական եւ գաղտնի.

Նոյն իսկ ոճրագործութեամբ դատապարտուած կամ ամբաստանուած եւ ոստիկանութեան կողմէ ձերբակալուած հայերը բանտերը մի՛ պահէք, իսկոյն առաջ դրկեցէք»:

Մենք զայն բառացիօրէն պիտի թարգմանէինք այսպէս.

«(Խիստ ստիպողական եւ գաղտնի).

Հայերէն սպանութեան համար դատապարտուածներն ու ամբաստանուածները ոստիկանական գրասենեակին կողմէ եթէ նոյնիսկ ձերբակալուած են՝ զանոնք վար դնելով անմիջապէս պէտք է յառաջ դրկել»: Էլիխանեան հեռագրին բովանդակութիւնը ի՛նք փոխանցած է տեղւոյն գաղթական հայերուն, որպէսզի *«ամէն մարդ իր զլիտուն ճարը նայի»* (Անտոնեան, *Մեծ Ոճիրը*, էջ 81):

⁸⁶ Ծնած է Հաճըն 1885ին, նախակրթութիւնը ստացած է ծննդավայրի վարժարաններուն մէջ, ապա հետեւած է հեռագրագիտութեան եւ երկար տարիներ աշխատած է Հաճնոյ հեռագրական գրասենեակին մէջ, ապա եղած է յիշեալ գրասենեակին տնօրէնը: 1909ի կիլիկեան կոտորածներու ժամանակ իր յղած հեռագիրերը մեծապէս նպաստած են որ տեղւոյն հայութիւնը փրկուի համընդհանուր կոտորածէ (Յակոբ Յ. Թէրզեան, *Կիլիկիոյ Աղէտը*, Կ. Պոլիս, [Տպ.] Յ. Ասատուրեան, 1912, էջ 241): 1919ին վերադարձած է ծննդավայր ու ստանձնած իր նախկին պաշտօնը եւ նոյն թուականի Մարտի 29ին ընտրուած է Հաճընի նորակազմ Հայ Ազգային Միութեան ատենապետ: Հաճնոյ անկումէն օր մը ետք, 16 Հոկտեմբեր 1920ին նահատակուած է Տաւրոսեան Լեռներուն վրայ, կոտորածէն փախուստ տուող խումբ մը համաքաղաքացիներու հետ:

⁸⁷ Անտոնեանի ձեռագրին մէջ, այս հատուածի լուսանցքին գրուած է հետեւեալը. *«Կարապետ Էփիխանեան Հաճնոյ մէջ հեռագրական եւ թղթատարական տնօրէն էր: Մէպուս Նալպանտեանի ազգական ըլլալուն, ետ բերուելով Հալէպ մնաց հեռագրական եւ թղթատարական պաշտօնատան հաշուակալութեան ճիւղին մէջ»:* Իր յուշերուն մէջ նոյնը հաստատած է Խաչէր Սարգիսեան եւ աւելցուցած որ Գոզանի պետական երեսփոխան Նալպանտեան Ներքին Գործոց Նախարարութենէն արտօնութիւն ստացած է իր ազգականներէն ու բարեկամներէն 40 հոգի զերծ պահելու տեղահանութենէն, իսկ եթէ անոնք արդէն իսկ տեղահանուած ըլլան՝ ապա պահել զանոնք իրենց աքսորավայրերուն մէջ, յետոյ աւելցուցած է որ Կ. Պոլիսէն այդ մասին հեռագիր հասած է այն պահուն երբ Էլիխանեան կը գտնուէր Պապ, այնպէս որ անոր

արտօնուած է մնալ հոն ու փրկուիլ Տէր Զօր ճամփուելէ (Խաչեր Սարգիսեան, *Եօթանասուն Տարիներու Յուշերս*, Պէյրուօ, Տպ. Տօնիկեան, 1970, էջ 559), իսկ Ակունի աւելցուցած է որ Նալպանտեան այս ձեռով կրցած է փրկել նաեւ կեանքը կարգ մը հայրենակիցներու՝ զանոնք եւս ցոյց տալով որպէս իր ազգականները (Ակունի, էջ 308): Քելէշեան, Սիսի արձանագրութեան դիւանէն քաղելով տուած է ցանկը Նալպանտեանի շնորհիւ արքորէ զերծ մնացած սսեցի 13 ընտնիքներու 100 անդամներուն (Միսաք Քելէշեան, *Միս-Մասեան*, Պէյրուօ, Տպ. Հայ Ճեմարանի, 1949, էջ 562): Մատթէոս Նալպանտեան ծնած է Սիս 1876ին: Պետական շրջանակներու հետ ունեցած է սերտ յարաբերութիւններ: 1906ին եղած է Հաճըն Գաւառակի կառավարիչ: Որպէս Սիսի ներկայացուցիչ, 1914ին ընտրուած է անդամ Օսմանեան Երեսփոխանական Ժողովին, փոխարինելով Համբարձում Պոյաճեանը (Մեծն Մուրատ) եւ Կ. Պոլիս մեկնելով մաս կազմած է տեղոյն Ազգային Քաղաքական Ժողովին եւս: Իր հսկայ հարստութեան համարեա կէսը կաշառք տալով զերծ մնացած է արքորէ: Զինադադարին, 1918 Նոյեմբեր-Ղեկտեմբերին Օսմանեան Խորհրդարանին մէջ խիստ ելոյթներով պախարակած է հայութեան դէմ ի գործ դրուած կոտորածները: Կիլիկիոյ պարպումէն ետք անցած է Փարիզ ու պարապած՝ վաճառականութեամբ: Գործօն անդամ եղած է ՀԲԸՄի: Մահացած է Փարիզ, 3 Մարտ 1942ին (Քելէշեան, էջ 305-306):

⁸⁸ Հայաբնակ պատմական քաղաք լեռնային Կիլիկիոյ հիւսիսը, Ատանա Նահանգի Սիս Գաւառի Հաճըն Գաւառակի կեդրոնը: Կառուցուած է Սարոս Գետի աջ կողմը, պատմական Հարգան Քաղաքի աւերակներուն մօտակայքը: ԺԲ.-ԺԴ. դարերուն մտած է Կիլիկիոյ հայկական թագաւորութեան կազմի մէջ: Տեղոյն հայ առաքելականները ունեցած են վեց, կաթոլիկները՝ մէկ իսկ աւետարանականները՝ երկու եկեղեցի: Մօտակայքը գտնուած է Ս. Յակոբ պատմական վանքը: Տեղոյն հայերը ունեցած են նաեւ աւելի քան տասնեակ մը վարժարաններ, որոնցմէ նշանաւոր էին Սահակ-Մեսրոպեան վարժարանն ու Ամերիկեան աղջկանց գիշերօթիկ եւ մանչերու բարձրագոյն վարժարանները: Անոնք ունեցած են նաեւ որբանոց-արհեստանոց, բարեսիրական-մշակութային միութիւններ, հայերէն թերթեր, հիւանդանոց եւն.: 1915ին Հաճընը ունեցած է 5 հազար տուն՝ շուրջ 35 հազար բնակիչ (Գնէլ Եպս. Ճերեճեան, «Հաճընի Դիւցազնական Ինքնապաշտպանութիւնը» *Յուշամատեան Մեծ Եղեռնի*, վմբ. Գ. Ահարոնեան եւ Ն. Թովպալեան, Գ. տիպ, Պէյրուօ, Տպ. Հայ Տիպ Քոմփիլիքաֆ Թեքնոփրէս, էջ 868), իսկ ըստ այլ աղբիւրի, ան ունեցած է 26,480 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 300), մինչ երրորդ աղբիւր մը տեղոյն հայութեան թիւը ցոյց տուած է իբր 30-35 հազար (Յակոբ Պ. Պօղոսեան, *Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը Եւ Շրջակայ Գօգան-Տաղի Հայ Գիւղերը*, Լոս Անճելլոս, Տպ. Պոզաճեան, 1942, էջ 105): Քաղաքին մէջ ապրած են փոքրաթիւ օտարականներ միայն: Յեղասպանութեան, մեծ կորուստներ տալէ ետք, վերապրած հաճընցիներ Զինադադարին վերադարձած են բնօրրան, բայց քեմալական թուրքեր պաշարած են զայն ու հաճընցիք դիմած են ինքնապաշտպանութեան (1 Փետրուարէն 15 Հոկտեմբեր 1920): Աւելի քան ութամսեայ հերոսական դիմադրութենէ ետք թուրք խուժանը մտած է քաղաք ու կոտորած է հեռանալու անկարող ամբողջ ժողովուրդը, 6-8 հազար հոգի:

ARAM ANDONIAN'S NOTES ON THE MASSACRES OF DEYR ZOR
(SUMMARY)

MIHRAN MINASIAN
mihran.min@gmail.com

Author, philologist, editor, educator and caricaturist, Aram Andonian (Constantinople 1875-Paris 1952), after surviving the Genocide and returning from the Syrian desert dedicated his whole life to the historiography of the Genocide and its documentation. He collected hundreds of survivors' accounts, as well as putting into writing the oral accounts of many others. Thus, his very precious archives are full of genocide accounts and memoirs, most of which have not been published in Armenian yet.

Alongside his renowned book *Medz Vodjire* (The Great Crime) Andonian published articles in newspapers and periodicals. Nonetheless, most of his research works based on memoirs of Aleppo, Bab, Ras Ul Ayn, Meskene, Deyr Zor and the other stations of the Armenians exiled to the desert, remain unpublished.

In this article, Mihran Minasian brings to the limelight parts of Andonian's extensive writings on Deyr Zor. These excerpts depict a clear picture of the remnants of the exiled Armenians that arrived in Deyr Zor, the terrible condition they were in, the destiny of the children and women and the behaviour and activities of the Turkish officials. Specifically, the misdeeds of the head of the Deyr Zor district, Saleh Zeki, and his assistants, Mustafa (the police headman) and the assistant of the general director of the forced deportation of the Armenians, Ismail Hakke Bey, are brought to light. These and many other details are being revealed for the first time and have not been quoted in research papers.

ԵՂԵՌՆԱՇԱՐԻՆ ԱՌՆՉՈՒՈՂ
ՔԱՆԻ ՄԸ ՊԱՏԱՌԻԿ
(ՀԱՅՈՑ ԴԷՄ ԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

ԴՈԿՏ. ՎԱԶԷ ՂԱԶԱՐԵԱՆ
mayrenipublishing@comcast.net

30 Հոկտեմբեր 1918ին Մուսրոսի մէջ Համաշխարհային Առաջին Պատերազմին աւարտը հռչակող զինադադարային պայմանագրին կնքումով, դարեր շարունակ հայերը հարստահարած ու կոտորած թուրքն ու թուրքին կողմէ կեղեքուած հայը իրար դիմաց գտնուեցան նոր իրականութեան մը լոյսին տակ: Թուրքը պարտուած էր Դաշնակից Տէրութիւններէն եւ դրուած՝ իբրեւ եկուոր տարր հայ, արաբ եւ այլ ժողովուրդներու բնօրրաններու յափշտակումով կերտուած կայսրութեան մասնատման հաւանականութեան առջեւ, մինչ հայը Համաձայնական Տէրութիւններուն դէմ պայքարին իր արիւնը նուիրաբերած ըլլալով եւ Դաշնակից Տէրութիւններու խոստումներուն հաւատալով, իրաւունք ունենալ կը կարծէր իր պապենական հողերուն վրայ ինքնավարութիւն կամ անկախութիւն վայելելու:

Սակայն երբ մէկ կողմէ յաղթական Դաշնակից Տէրութիւնները գործադրութեան կը սկսէին՝ դնել օսմանեան տարածքներու անդամահատման ծրագիրները՝ խորքին մէջ հետապնդելով անգլեֆրանսական ռազմաքաղաքական ու տնտեսական շահերը, միւս կողմէ թուրքերը կը ջանային գաղտնօրէն թէ յայտնօրէն կազմակերպուիլ՝ վերականգնելու իրենց բացարձակ տիրապետութիւնը այդ տարածքներէն գէթ մէկ մասին վրայ:

Այսպիսով, սկիզբէն իսկ իրարու կը բախէին ու կը հակադրուէին հայերու եւ թուրքերու ձգտումները՝ տարածքներու նկատմամբ, որոնց շուրջ Դաշնակիցներն իրենք ալ կը պարզէին որոշ հակասութիւններ, որոնք Ֆրանսայի քաղաքական շրջանակներուն մօտ մղում կու տային թուրքերու հետ հասկացողութեան գալու տրամադրութեան:

Պարտեալ թուրքերը անկախութեան պատերազմի կոչելու եւ անոնց ազգայնական ձգտումները բանաձեւելու առաջին նշանակալի ազդանշանը պիտի գար Մուսթաֆա Քեմալի եւ անոր քանի մը գործակիցներուն 22 Յունիս 1919ին Ամասիոյ մէջ խմբագրած շրջաբերականով, որ Թուրքիոյ ամբողջականութիւնը վտանգուած տեսնելով, հրաւեր կը կարդար Կարինի (Էրզրում) մէջ Անատոլիոյ արեւելեան նահանգներու ներկայացուցիչներով նախապատրաստական

համաժողովի մը գումարումեն ետք համազգային համաժողով մը ունենալու Սեբաստիոյ (Սվազ) մէջ¹:

Հետեւողաբար, 1919ի 23 Յուլիսէն մինչեւ 7 Օգոստոս երկարող եւ «Էրզրումի Համաժողով» անունով ծանօթ նախապատրաստական գումարումներուն կազմակերպումը կը ստանձնէր «Արեւելեան Անատոլիոյ Իրաւունքներու Պաշտպանութեան Ընկերութիւն» անունով հանդէս եկած մարմին մը:

Համաժողովը ճիգ մըն էր պահպանելու Օսմանեան Կայսրութեան անբաժանելիութիւնն ու սուլթանական կամ խալիֆայական գահը՝ բացայայտօրէն պայքար հռչակելով հայկական եւ յունական «անջատողական» ձգտումներու դէմ²:

Սվազի Համաժողովը, որ պիտի կայանար 4էն 11 Սեպտեմբեր 1919ին, ունէր աւելի ընդգրկուն ներկայացուցչական հանգամանք, հոգ չէ թէ նուազ մասնակիցներով: Հոն աւելի շեշտակի կերպով պիտի դրուէր «թուրքերու հայրենիքը» ամէն կարգի ներխուժման եւ «անոր հողերուն վրայ» հայկական կամ յունական պետութիւն ստեղծելու ձգտումներուն դէմ պաշտպանելու հարցը³:

Վերոյիշեալ քայլերը պիտի առաջնորդէին 22 Հոկտեմբեր 1919ին ազգայնական շարժման պարագլուխներուն եւ օսմանեան կայսերական կառավարութեան միջեւ Ամասիոյ Համաձայնագրի կնքման, որ իբրեւ հիմ ընդունելով Սվազի Համաժողովին որոշումները, կը տրամադրէր ընտրութիւնը նոր խորհրդարանի մը, որ իր հերթին 12 Յունուար 1920ին պիտի օրինականացնէր Ազգային Ուլտը, որուն շուրջ համաձայնութիւն գոյացած էր Էրզրումի Համաժողովի ընթացքին⁴:

Միջանկեալ, սակայն, որոշ աղբիւրներու նշումներուն համաձայն, Ֆրանսուա Ժորժ-Փիքօն 1919ի Դեկտեմբերին ֆրանսական կառավարութեան ներկայացուցիչի հանգամանքով քննարկումներ ունեցած էր Մուսթաֆա Քեմալի հետ եւ ընդունած թուրք ազգայնականներու կեցուածքը Կիլիկիոյ նկատմամբ.- զիջիլ Ճեզիրէն, Իրաքն ու Սուրիան, բայց բնաւ երբեք Կիլիկիան, որ մէկ մասնիկն է թրքական իրանին⁵:

Նկատի ունենալով որ կայսերական կառավարութիւնը հիմնականին մէջ կը բաղկանար իթթիհատականներէ, վերոշարադրեալէն կարելի է հետեւցնել թէ կատարուածը քեմալական-միլլի-ազգայնականներու եւ իթթիհատականներու համագործակցութիւնը, եթէ ոչ՝ միաձուլումը, ապահովող քայլ մըն էր⁶:

Հոս ներկայացուող նիւթերը քաղուած են Պոլսոյ պատրիարքական դիւանաթողութիւնէն, որոնք ապահովական նկատառումներով Պոլսէն ուղարկուած էին Եւրոպա եւ հոնկէ՝ Գրիգորիս Եպս. Պալաքեանի միջոցով՝ Երուսաղէմ, Զաւէն Պատրիարք Տէր Եղիայեանի փափաքով,

որպեսզի ան իր յուշագրությունն⁷ ընծայե աւելի փաստացի եւ առարկայական:

Վերաբերելով Դաշնակից Տերութիւններու որդեգրած Սայքս-Փիքոյի համաձայնութեան հիմամբ Համաշխարհային Առաջին Պատերազմէն ետք Կիլիկիոյ վրայ տարածուած ֆրանսական տիրապետութեան եւ նոյն հողերուն վրայ ինքնավարութիւն կամ անկախութիւն ունենալու հայկական ցանկութիւններուն, այս նիւթերը կը դատապարտեն ֆրանսացիներու պարզած կեցուածքը, միաժամանակ փաստագրելով ազգայնական եւ իթթիհատական թուրքերու գործակցութեամբ կամ միաձուլումով մասնաւորապէս հայոց դէմ գործադրուած եղեռնաշարը, որ սկիզբ առած էր սուլթանական տիրապետութեան շրջանին:

Եղեռնաշար մը, որուն հետեւանքով հայութիւնը կորսնցնելէ ետք մեծամասնական տարրի հանգամանքը Պատմական Հայաստանի «Արեւելեան Նահանգներ» անուամբ ծանօթ տարածքներուն մէջ, նոյն կացութեան պիտի ենթարկուէր նաեւ յետպատերազմեան Կիլիկիոյ մէջ⁸, այդպիսով կորսնցնելով իր հողերուն վրայ ինքնավարութիւն կամ անկախութիւն հաստատելու առարկայական հնարաւորութիւնը:

Դիւանաթուղթերը կը յուշեն թէ Համաշխարհային Ա. Պատերազմէն պարտութեամբ դուրս եկած թուրքերը հետեւողապէս կը շարունակէին եղեռնագործութեամբ Հայաստանն առանց հայոյ թողով հայկական հողերուն վրայ իրենց տիրապետութիւնը տեսականացնելու քաղաքականութիւնը⁹:

Անոնք լուսարձակի տակ կ'առնեն Կիլիկիոյ մէջ հայկական գերիշխանութիւնը վերականգնելու վերաբերեալ հայոց յոյսերն ու յուսախաբութիւնները, ֆրանսացիներու «սպիկար» յորջորջուած քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ իրադարձութիւններուն նկատմամբ պատասխանատու դիրքերու վրայ գտնուող հայ գործիչներու մօտեցումները:

Փորձած ենք յարաբերաբար ժուժկալ գտնուիլ մեր ծանօթագրութիւններուն մէջ, լուսաբանել եւ մեկնաբանել աւելի կարելոր համարելով, այս հանգրուանին, նամակներուն եւ Համազգային Ժողովի ատենագրութիւններէն քաղուած նիւթերուն հարազատօրէն շրջանառութեան մէջ դրուիլը, ուղղագրական կամ կետադրական խիստ աննշան հպումներով:

Ուշագրաւ կ'էտերուն մաս կը կազմեն, առանց հետեւեալներով սահմանափակուելու Իթթիհատի եւ Միլլի շարժման նմանութիւնները. Կիլիկիոյ նկատմամբ հայոց եւ ֆրանսացիներու իրարու հակադիր ձգտումներն ու շահերը¹⁰. անվստահութիւնը ֆրանսացիներու որդեգրած քաղաքականութեան նկատմամբ. ուժի կիրարկումով Կիլիկիոյ հայկական նկարագիրը պահպանելու դիմաց ի հարկին թուրքերու հետ բանակցելու ճանապարհով մնացորդացը փրկելու ուղղութիւնները.

տարտամ յոյս մը՝ որ թերեւս հնարաւոր ըլլայ կացութիւնը շրջել ֆրանսացիներու դաշնակից անզլիացիներու միջոցով, որոնք կարելի դարձուցած էին Կիլիկիոյ յանձնումը ֆրանսացիներուն, եւ դեռ ուրիշ բաներ...:

* * *

Ա.

20 Յունուար 1920, Կ. Պոլիս¹¹

Վսեմ. Նախագահ¹²

Հայ Ազգ. Պատուիրակութեան¹³

Փարիզ

Ամսոյս 4ին Ատանայէն մեկնելով Պոլիս աշխատեցայ Վեհ[ափառ] Կաթողիկոսին¹⁴, Տիար Մ. Տամատեանի¹⁵ եւ Ատանայի Հայ Ազգ[ային] Միութեան¹⁶ կողմէն եղած յանձնարարութիւններու համաձայն Կիլիկիոյ ազգ[ային] կացութիւնը պարզելու պոլսական շրջանակներու եւ իհարկին տեղեկագրելու Ազգ[ային] Պատուիրակութեանդ Կիլիկիոյ արդի կացութիւնը եւ զձելու այն անհրաժեշտ փոփոխութիւնները, որոնց կիրարկումէն կախումն ունի Հայ ազգին գոյութիւնն ու զարգացումը նոյն շրջանակին մէջ:

Պատ[ուարժան] Պատուիրակութիւնդ շատ լաւ գիտէ թէ ի՛նչ յուսատու խոստումներով Կիլիկիա մուտք գործեցին ֆրանսացիները, որոնք առաջին օրերուն, նոյն իսկ չվարանեցան իբրեւ Հայաստան ճանչնալ այդ երկրամասը: Իրարու յաջորդող դէպքերը, սակայն, դժբաղդաբար ցոյց տուին, թէ ֆրանսացիք հոն մուտք կը գործէին տիրապետութեան որոշ ծրագիրներով, որոնց յաջողութեան համար ուխտած կը թուէին ըլլալ կիրարկել նոյնիսկ ամենէն անբարեխիղճ միջոցները: Մեքենայութիւնները ծայր տալ սկսան շուտով եւ ֆրանս[ական] վարչութիւնը, նոյնիսկ վերին վարիչ Col[onel] Brémond-ի¹⁷ կեղծ հայասիրութեան լանջին տակ, սկսաւ գործադրութիւնը քաղաքական ծրագրի մը, որ շատ մը զձերով նմանութիւններ կը ներկայացնէր Իթթիհատի¹⁸ ծրագիրներուն: Թուրք Իթթիհատը ջանադիր եղաւ մէկ կողմէն ջարդերով ուժասպառել Հայ ժողովուրդը, ու միւս կողմէ հետեւեցաւ իսլամ տարրերու ազգայնական կազմակերպութիւններովը:

Ժորժ Փիքօի¹⁹ ղեկավարութեամբ եւ Col. Brémond-ի անմիջական հսկողութեամբ կիրարկուած քաղաքականութեան հետեւանքով Կիլիկիոյ մէջ անտեսուեցան երկու ժողովուրդներ, թուրքը եւ հայը, թո՛ւրքը իբրեւ պարտուած ժողովուրդ մը, որ պիտի չուզէր բաժնուիլ իր գրաւած հողամասերէն եւ որ ատով իսկ անվստահելի տարրը կը ներկայացնէր, եւ հայը, որ, հակառակ իր ֆրանսասիրութեան, կը ներկայացնէր գործօն մեծ զանգուածը, [իր] ազգայնական գաղափարին եւ իր անմարսելի հանգամանքով եւ պատմական տուիքներու վրայ հիմնուած կը հետապնդէր այն միեւնոյն իրաւունքները, որոնց ֆրանսացիք կ'ուզէին

բռնատիրել Հայկական Կիլիկիոյ մէջ: Ֆրանսական այս քաղաքականութեան կիրարկութեամբ ձեռնարկուեցաւ չերքէզներէ, ֆելլաի արաբներէ եւ քիւրտերէ ազգեր կազմելու արուեստական ձեւին, մոռնալով թէ այդ փոքրաթիւ ցեղերը, ինքնին գաղթական, ազգ կազմելու ո՛չ ցեղագրական, ո՛չ ընկերական եւ ո՛չ ալ քաղաքական յարմարութիւնները ունէին: Եւ երէկուան այդ ջարդարարները, կողոպտիչներն ու մարդասպանները, քաղաքական յետին միտքերու գործադրութեան համար, դրուեցան առաջին գիծի վրայ, քանի որ անոնք անհատական շահերու հետամտութենէ մը զատ ազգայնական վտանգ մը չէին ներկայացներ յաշս ֆրանս. վարչութեան եւ որոնք ընդհակառակն, կրնային իբր գործիք ծառայել ֆրանս. տեսակէտներու իրագործումին համար:

Գոմանտան Անֆրէ²⁰, Մերսինի մէջ, Քափիթէն Անտրէ²¹՝ Օսմանիյէի սանճագին մէջ, այս ծրագրին ու քաղաքականութեան կատաղի գործադրութեան ելան, եւ այս քաղաքականութիւնն էր պատճառ, որ Հայ Լեզգոնականները²² առաջնորդեց սա տրամաբանութեան. *«Մենք բարեկամ Ֆրանսայի դրօշին տակ զինուորագրուեցանք եւ այսօր որ Ֆրանսա կը ջանայ Կիլիկիոյ յափշտակութեան, չենք կրնար այլեւս իբրեւ զինուոր ծառայել թշնամի Ֆրանսայի դրօշին տակ»:*

Թէպէտ Գոմ. Անֆրէ հեռացուեցաւ իր պաշտօնէն, բայց մեր բոլոր բողոքները անլսելի մնացին Քափ. Անտրէի համար, որ ահաւոր չարիք մը եղաւ Կիլիկիոյ հայ ազգաբնակչութեան, քանի որ իր այդ քաղաքականութեան հետեւանքով ականատես եղանք, քանի մը ամիս առաջ, Շէյխ Մուրատի դէպքերուն²³, եւ հիմա Մարաշի դաշտի կոտորածներուն եւ հայահալած քաղաքականութիւնն է որ օրէ օր կը շեշտուի: (Ես հոս չեմ ուզեր խօսիլ ֆրանս. ապիկար վարչութեան ապրած զեղծումի, կաշառակերութեան եւ գողութեան մասին, այն համոզումով, թէ ուշ կամ կանուխ այդ բոլոր վարչական յոռութիւնները կրնան վերջ գտնել, երբ երկրին մէջ բնականոն (normal) վիճակ մը ստեղծուի Թուրքիոյ հետ հաշտութեան պայմաններու ստորագրութեամբ:)

Շէյխ Մուրատի դէպքերու պահուն, քրիստոնէայ ազգութիւններու ժողովով մը ֆրանս. վարչութեան ուշադրութիւնը հրաւիրեցինք տիրող վտանգաւոր կացութեան մասին եւ իբրեւ աւելի ծանօթ միջավայրի պայմաններուն եւ իսլամական հոգեբանութեան, մեր յիշատակագրով, ի միջի այլոց, պահանջեցինք, որ ոստիկան զօրաց 75%-ը ինչպէս նաեւ անոնց հրամանատարութիւնը յանձնուի քրիստոնէաներուն, գիւղացիները ինքնապաշտպանութեան վիճակին մէջ դրուին, եւ Անտրէի տեղ ուրիշ մը կառավարիչ նշանակուի: Մեր պահանջումները անտեսուեցան Col. Brémond-ի կողմէն որ պաշտօնական պատասխանով մը ջատագովեց իր իսլամատէր քաղաքականութիւնը եւ վտանգը մնաց ու մնաց մեր գլխուն: Սպասեցինք Ժէն. Կուրօի²⁴ ժամանումին, յուսալով թէ

անոր գոյութիւնը վերջ մը կը դնէ Փիքօի քաղաքականութեան: Ընդհակառակը Ժէն. Կուրօ աւելի պաղ վերաբերում մը ունեցաւ հանդէպ հայութեան: Անոր Ատանա ժամանումին առթիւ սարքուած պաշտօնական ընդունելութեան միջոցին՝ Ամբողջական Հայաստանի Պատուիրակութեան ներկայացուցիչը՝ Տիար Մ. Տամատեան եւ իրեն հետ Ազգ. Միութեան անդամները անպատուուեցան գրեթէ Col. Brémond-ի տան մէջ եւ նոյնիսկ Տիկ. Պրեմօն զիրենք Կիլիկիայէն աքսորելու պէս սպառնալիքներ ալ ըրաւ, յայտարարելով «*Քանի մը ամիս վերջը կը տեսնէք*»:²⁵

Ատանայէն մեկնած օրերու քաղաքական դրութիւնը չափազանց վատ էր արդէն Մարաշ-Ըսկաիիէ-Պաղչէ շրջանակին մէջ: Նոյ. 20ի (1919) Ժէն. Կուրօի ժամանումին առիթը ուզեցին շահագործել եւ նոյն օր Կիլիկիոյ գրաւեալ հողամասերուն վրայ պարզեցին պաշտօնապէս ֆրանս. դրօշը²⁶: Նոյնը ընել ուզեցին նաեւ Մարաշի, Այնթապի եւ Քիլիսի մէջ, որոնք ֆրանսացիներուն փոխանցուեցան անգլիացիներուն կողմէ, իրենց մեկնումին առիթով, պայմանով որ status quo²⁷ պահուի մինչեւ վեհաժողովին վերջնական որոշումը: Իմ Մարաշ գտնուած պահուն, ֆրանսական բանակին մուտքէն օր մը վերջ, հայ զինուոր մը սպաննուեցաւ իմամի մը ձեռքով, եւ ֆրանս. իշխանութիւնը նոյնիսկ չյօժարեցաւ մարդասպանը պահանջել: Այս եւ այսպիսի դէպքեր արդէն իսկ շփացուցին թուրք ժողովուրդը, այնպէս որ երբ ֆրանսացիներ որոշեցին վար առնել թուրք դրօշակը, եւ տեղը ֆրանսականը տնկել Մարաշի միջնաբերդին վրայ, թուրք խուժանը յարձակեցաւ, վար առաւ ֆրանս. դրօշը եւ նորէն բարձրացուց թրքականը: Կ'սպասուէր որ ֆրանս. վարչութիւնը կորովի ընթացք մը ունենար, բայց շնորհիւ վարիչներու սկզբնական եւ կամ յետին միտքերուն եւ Քափ. Անտրէի զգուելի քաղաքականութեան, ո՛չ մէկ զգաստացուցիչ քայլ առնուեցաւ թուրքերու դէմ: Խրախուսուած ֆրանս. այս ապիկարութենէն, Մարաշի [թուրք] շրջանակը կազմակերպեց տեսակ մը ապստամբութիւն, որուն միացան բոլոր թուրք ոստիկանները, եւ 2500 հոգինոց հրոսախումբ մը գործեց հրապարակաւ, ֆրանսացիներու եւ հայերու դէմ: Հայ գիւղացիները փախան դէպի Պաղչէի կողմերը լուր բերելով միեւնոյն ժամանակ թէ ճամբաներու վրայ հայերու դիակներ կան: Այս պահուս Մարաշ-Ատանայի հեռագրական թելերը դեռ խորտակուած չէին, բայց դժբաղդաբար Ատանայի ֆրանս. վարչութիւնը մեզի, այսինքն Ազգ. Միութեան ուղղակի [ղրկուած] հեռագիրները վար կը դնէր զմեզ անտեղեակ պահելու համար կատարուած դժխային արարքներէն:

Իրարու յաջորդող եւ այդ դէպքերուն շարունակութիւնը կազմող խնդիրներու մասին հետ նոյնութեամբ կը դնեմ Տիար Մ. Տամատեանի 13 Յունվար թուակիր ինծի ղրկած տեղեկագրին կարեւոր մասերը նոյնութեամբ: Տիար Տամատեան կը գրէ. «Ներկայս կը գրեմ հապճեպով:

Ես քիչ կը գրեմ դուք շատ իմացեք, քանի որ Կիլիկիոյ կացութեան բոլոր կողմերուն լաւատեղեակ էք արդէն: Պաղչէի եւ Մարաշի միջեւ ծագած խառնակութիւններուն մասամբ տեղեակ էք արդէն: Ընդհարումները 15 օրէ ի վեր կը շարունակուին եւ տակաւին վերջացած չեն: Ինձմէ մանրամասնութիւններ մի սպասէք այս մասին: ... Միայն թէ կացութիւնը ծանրակշիռ է եւ դէպքը կրնայ կանոնաւոր ապստամբութիւն որակուիլ: Հայերու կողմէ կեանքի կորուստը չստուգուած տեղեկութեան մը համաձայն 105 է. հաստատապէս գիտցուած կորուստները 35ի չափ են: Երբ յարաբերութիւնները կանոնաւորապէս վերահաստատուին եւ մեր տեղեկութիւնները ամբողջանան, վախնամ այդ թիւը 105է աւելի երեւան պիտի գայ: Միւս կողմէ տարակոյս չկայ, որ այս դէպքն ալ պիտի զսպուի ինչպէս զսպուեցաւ Շէյխ Մուրատի դէպքը: Կարելի չէ ըսել, թէ *դէպքը ծագելէն վերջը* ֆրանսացիք կորովի ընթացք չբռնեցին: Միայն խնդիրը հոն է, թէ ի՞նչ երաշխաւորութիւն կայ նման դէպքերու չկրկնուելուն, եւ մերայնոց կողմէ նոր զոհերու կորուստին: Բոլոր ազգաբնակչութիւնը ահ ու սարսափի մէջ է, վաղուան անստուգութիւններուն համար խորապէս մտահոգ: Գիտեք, թէ Շէյխ Մուրատի դէպքին առթիւ, մեր հանդիսաւոր դիմումը եւ մեր այնքան կարելոր - ու չափաւոր - թելադրութիւնները ինչ ընդունելութեան արժանացան: Ձեր Պոլիս ներկայութիւնը զիս ազատ կը կացուցանէ այդ մասին երկար վերլիշում մը ընելու հարկէն: Այդ մէկը դուք անձամբ կը բացատրէք պէտք եղած տեղերը: Ամսոյս 8ին հայ յարանուանութիւններու եւ հոսանքներու ամբողջին ներկայութեամբ համագումար ժողով մը գումարեցինք եւ կացութեան մասին, երկար խորհրդակցութիւններէ վերջ, որոշեցինք.

«ա. Նոյն օրն իսկ ամէն հոսանքի եւ հատուածի ներկայացուցիչներով Մր. Պրէմոնին ներկայանալ, բողոքել այս կրկնուած արիւնահեղութեանց դէմ եւ չարիքին արմատքին ջնջումին համար լուրջ միջոցներու եւ կարգադրութիւններու գործադրումը պահանջել:

«բ. Այս դիմումէն զատ, նոր յիշատակագիր մը պատրաստել եւ անոր մէջ ամփոփել մեր պահանջները:

«Յիշատակագիրը դեռ չէ պատրաստուած, իսկ դիմումը կատարուեցաւ նոյն օրն իսկ նախագահութեամբ Վեհ. Կաթողիկոսին, մասնակցութեամբ Հայ Եկեղեցւոյ եւ հայ հռոմէականներու առաջնորդներու եւ հայ բողոքականներու վեր. հովիւին, Ազգ. Միութեան եւ կուսակցութիւններու ներկայացուցիչներուն: Աննախընթաց ուժգնութեամբ արտայայտուեցանք: Վեհափառը չվարանեցաւ ըսել, թէ «Կարմիր Սուլթանի օրերու տպաւորութեան տակ կ'ապրինք»: Գլխաւորապէս ծանրացանք հայ ժողովուրդը զինելու եւ ոստիկանութեան մէջ հայ տարրին, աւելի ճիշդը քրիստոնէայ տարրին բացարձակ մեծամասնութիւն կազմելու չափ ուժեղացումի մասին: Մեր ջախջախիչ փաստերուն ազդեցութեան տակ Քոլոնէլը կարծես

նպաստաւոր տրամադրութիւն ցոյց տուաւ եւ կարգ մը խոստումներ ըրաւ զէնքի խնդրոյն մասին, առանց ոստիկանութեան հարցին մասին որոշակի արտայայտուելու: Բայց երկրորդ օրէն ի վեր տրամադրութիւնները կարծես հիմնովին փոխուեցան: Մինչ մենք դեռ տաք ու դեռ չթաղուած մեր մեռելները կ'ողբանք, ան իր երկու պատասխան նամակներով կը խօսի հայ ժանտարմներու դասալքութեան մասնակի դէպքերու մասին (ասկէ առաջ տեղի ունեցած), Հաճընի մէջ հայ «կամաւոր»ներու կողմէ 14 թուրքերու սպանութեան մասին (որ, նոյնպէս, ինչպէս գիտէք, արդէն հինգսը դէպք մըն է), Ճիհանի մէջ կամ մօտերը երկու անձերու կողմէ կառքի մը վրայ զէնք արձակուելու հետեւանքով երկու հոգիներու սպանութեան մասին, աւելցնելով որ ինք ապահովութիւն ստացած է թէ այդ երկու յարձակողները հայեր են եղած: - նոր դէպք մը, որու մասին տակաւին ռեւէ տեղեկութիւն չունինք մենք-, ինչպէս նաեւ մեր մէջ «գաղտնի ընկերուհիներ»ու մասին²⁸, ինչ որ արդէն երեւակայութիւն է, եւ որ սակայն մեր դատը կ'անպատուէ եղեր, եւ այլն: Վերջապէս այսպիսի նամակներ որոնցմէ վերջ հեռի բողոքողի կեցուածք առնելէ, մեզի կը մնայ երթալ ներողութիւն հայցել մեր գործած կամ աւելի ճիշդը մեր չգործած մեղքերուն մասին: Վստահ եղէք որ այս ամէնուն գորս դու պատուիրեցիր պատասխանը պիտի տամ: Այսօր (13 Յնվր) Général Dufeuo-ի²⁹ դիմեցի, քիչ մըն ալ գանգատելով մեր սա վերին վարիչին ըրած դիմումներուն ընդունելութեան այս կերպին մասին: Ժէնէրալը աւելի փափկանկատ եւ համակիր վերաբերում ցոյց տուաւ: Յամենայն դէպս, մեր դիմումներուն վերջնական արդիւնքին մասին սկեպտիկ եւ նոյն իսկ յոռետես ըլլալու ամէն պատճառ ունինք:

«Դէպքը պիտի խաղաղի անջուշտ, անկէ վերջ *էսկի համամ, էսկի թաս*³⁰. առաջին ամբիւ դէպքերը պիտի կրկնուին եւ նոր նոր զոհեր պիտի տանք:

Այս բանին ամէն ոք համոզուած ըլլալով՝ կրնաք երեւակայել ինչ գերագրգռուած տրամադրութեան մէջ են ամէնուն միտքերը: Անտրէն իր սովորական քաղաքականութենէն եւ երկդիմի ընթացքէն երբեք հրաժարած չէ: Ապստամբ գիւղերէն մեծ աղա մը (անունը չեմ յիշեր) զէնքովը կուգայ հպատակութիւն կը յայտնէ, եւ ներողութեան արժանանալով զէնքովը միասին առօք փառօք իր գիւղը կը վերադառնայ: Այս խնդիրը դուք լաւ գիտէք:»

Մեր եւ Տիար Տամատեանի այս ամփոփ տողերով մասնաւոր դէպքերը չէ որ նկատողութեան կ'առնունք, այլ ֆրանսացի վարիչներու հոգեբանութիւնը եւ անոնց որդեգրած քաղաքականութեան զգուելի հանգամանքը: Մենք խորապէս եւ էապէս ֆրանսասէր, պարզապէս կը զգուինք մեզի հրամցուած դիւանագիտական այս ստորին խաղերէն, որոնց դրոշմը դժբախտաբար ֆրանսական է:

Հեռի ասպետական վերաբերումներ՝ ֆրանսական դիւանագիտութեան այս մատնիչ եւ անուղղամիտ կեցուածքը կիլիկեան հողի վրայ, ոչ մէկ երաշխաւորութիւն կը խոստանայ հայկական տեսակէտով: Եւ արդէն Տիար Տամատեանի գրած օրէն ի վեր (13 Յնվր) նոր փոփոխութիւններ կան կիլիկեան քաղաքականութեան մէջ, այնպէս որ այսօր Ատանայէն առնուած նամակէ մը, գրուած արժանաւոր անձի մը կողմէ, կ'իմանանք թէ ֆրանսական վարչութիւնը հայերու զենքերը կը գրաւէ, անոնցմով զինելու համար չերթեզներն ու քիւրտերը: Կիլիկիոյ ճակատագրի որոշման մասին Վեհաժողովին³¹ կողմէ վերջնական վճիռ մը չէ տրուած, [բայց] եթէ այս է ֆրանս. վարչութեան ընթացքը հանդէպ Կիլիկիոյ հայերուն, դիւրին է երեւակայել թէ ինչ անհանդուրժելի վիճակ պիտի ստեղծուի հոն, երբ վերջնապէս որոշուի Ֆրանսայի տիրապետութիւնը կիլիկեան հողամասին վրայ, որ իր սահմանները պիտի երկարէ մինչեւ Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ, համաձայն 1916ի գաղտնի դաշնագրին³²: Ահա թէ ինչ կը գրէ Տիար Մ. Տամատեան այսպիսի դժբախտ հաւանականութեան մը մասին:

«Եթէ երաշխաւորութիւններ ձեռք չբերուին, մեր ապագան բոլորովին վտանգուած է այս երկրին մէջ, եւ նկատի ունենալով մեր ժողովուրդին խորունկ գիտակցութիւնը եւ հայրենասիրութիւնը, ինչպէս նաեւ իր դարաւոր յուսախաբութիւններուն իբր հետեւանք չափազանց դիւրագրգռութիւնը, կրնաք երեւակայել, թէ ինչ ցաւալի դէպքեր ծայր պիտի տան եւ ինչ անլուծելի կնճիռ մը առաջ պիտի գայ, ընդերկար ձգտելով երկու ազգերու յարաբերութիւնները եւ անհաշուելի չարիքներու պատճառ դառնալով»:

Այսօրինակ դրութեան մը այժմէական ստեղծումը եւ անոր շարունակութիւնը ոճրագործ արարք մը պիտի ըլլայ անշուշտ ազգերու արդարութեան պատմութեան մէջ: Հայկական Լեզեռնի զօրքերուն արիական զոհաբերութիւնովը փրկուած մեր հայրենիքին մէջ օտարներ կամ ստրուկներ նկատուելու մտածումն իսկ անհանդուրժելի է եւ ընդվզեցուցիչ մեզի համար: Եթէ ֆրանսացիք ներկայ քաղաքականութեամբ եւ մտայնութեամբ պիտի կառավարեն երկիրը, ապագային ու այժմէն իսկ հայերու Կիլիկիա բնակութիւնը պիտի դառնայ անկարելի:

Հրամայական ստիպողականութիւն մը կը ծանրանայ Ազգ. Պատուիրակութեանդ վրայ ջանադիր ըլլալու որ խաղաղութեան վեհաժողովը այն պարագային երբ Ֆրանսայի գրաւումը վերահաստատէ, Կիլիկիան եւ Հայաստանը սահմանակից երկիրներ շինէ, Սեբաստիայէն Տիգրանակերտ գծին ամբողջ երկարութեանը վրայ եւ բացորոշ երաշխաւորութիւններ հաստատէ կիլիկեան հողամասերուն հայկական հանգամանքը շեշտող. «երաշխաւորութիւններ՝ հիմնուած մեր

պատմական իրաւունքներուն վրայ, մեր զոհերուն եւ մեր ճիգերուն, ինչպէս նաեւ մեր թշնամիներուն պարտեալի հանգամանքին վրայ»:

Իբրեւ անդամ Ատանայի Ազգ. Միութեան եւ իբրեւ ընդհ. վարիչ Կիլիկիոյ Ազգ. Միութիւններու, մօտէն ուսումնասիրելով ֆրանսական ներկայ վարչութիւնը, անոր քաղաքական ձգտումներն ու յոռութիւնները, անոր հակահայկական - չըսելու համար հայահալած - վերաբերումները, անոր բաժանարար էնթրիկները³³, առաւել քան երբեք անհրաժեշտ կը նկատենք, որ Պատ. Ազգ. Պատուիրակութիւնդ ջանադիր ըլլայ. յանուն եւ ի սեր Կիլիկիոյ ներկային ու ապագային Վեհաժողովին ընդունելի ընէ Կիլիկիոյ մասին հետագայ երաշխաւորութիւնները, զոր Տիար Ս. Տամատեան բանաձեւած է իր տեղեկագիր նամակին մէջ ամփոփ ձեւով մը:

«1.- Պէտք է երկրին վարչութիւնը քրիստոնէական նկարագիր ունենայ, առաւելապէս հայկական ոստիկանութիւնը, զինուորութիւնը, դատաստանական կազմը նոյնպէս:

2.- Մեր իրաւունքներու որոշողութեան մէջ մեծամասնութեան, փոքրամասնութեան, pourcentage-ի³⁴ խնդիր պէտք չէ յարուցուի:

3.- Կրթութիւնը առողջ ազգային դաստիարակութեան յատկանիշէն պէտք չէ զիջի (մենք Կիլիկիոյ մէջ այժմէն կը տեսնենք թէ ֆրանսացիք կը նախագծեն հանրային կրթութիւն մը որ հայկական չէ ու պիտի չըլլայ:)

4.- Երկրին մէջ թուրք մուհաճիւրներ³⁵ պէտք չէ բերուին:

5.- Հայերու կեդրոնացման դէմ արգելքներ պէտք չէ յարուցուին:

6.- Արաբ, Սուրիացի, Յոյն, Քաղդէացի, եւայլն պարզ գաղթականներ պէտք է նկատուին, իսկ չէրքէզ, քիւրտ, եւայլն՝ իբրեւ նախնական ժողովուրդներ որոնց կրթիչները մենք պէտք է ըլլանք գոնէ՝ հաւասար չափով ֆրանսացիներուն հետ:

7.- Երկիրը պէտք չէ ունէ պարագայի մէջ Ֆրանսայի կցուած յայտարարուի եւ կամ իբրեւ Սուրիոյ մէկ մասը:

8.- Վարչութիւնը Սուրիայէն բացարձակապէս անջատ պէտք է ըլլայ եւ դրուի Ազգերու Ընկերակցութեան³⁶ հովանոյն տակ:

9.- Հայ լեզուն նախապատիւ պէտք է ըլլայ:

10.- Երկիրը իր առանձին դրօշակը եւ դրոշմաթուղթերը պէտք է ունենայ:

11.- Տնտեսական մարզին մէջ եւս անհրաժեշտ է որ ֆրանսացիք հիմնականէն տարբեր նկատումներէ եւ հայեացքներէ առաջնորդուին, երկրին հողէն, հանքերէն, արտադրութիւններէն օգտուողը առաջնապէս տեղացիները պէտք է ըլլան, եւ հողերու վաճառումը կամ փոխանցումը տեղացիներու կամ տեղական հպատակութիւնը ընդունողներու պէտք է մասնաւորուի:

12.- Ֆրանսական ձեռնարկներու մէջ պէտք է տեղական դրամագլուխներու կամ հայկական հաստատութեանց

Մի քանի ամիսներէ ի վեր թէեւ կիլիկեան մթնոլորտը մթագնած էր, սակայն Յունուար մէկէն ի վեր ալ աւելի խաւարած է: Մարաշի թրքութիւնն է որ առաջին ահագանգը կը հնչեցնէ: Թուրք խուժանը ի մի հաւաքուած, խումբ խումբ Չէթէներ կազմած կը յարձակին անզէն հայ գիւղերու վրայ, կը ջարդեն, կը կողոպտեն եւ կ'առեւանգեն: Մարաշի շուրջը ամիսէ մը ի վեր կանոնաւոր պատերազմը կը շարունակէ, այժմ թուրք խուժանը չէ, կանոնաւոր զինուորն է, թուրք սպաներու հրամանատարութեանը տակ պատերազմ կը մղեն ֆրանսական եւ հայկական զինուորներու դէմ: Մարաշէն ստոյգ տեղեկութիւն մը չկայ, կ'ըսեն թէ քաղաքը բոցերուն մէջ է, չենք գիտեր թէ որքան կորուստ ունինք, միայն սա ստոյգ է թէ՝ *Ֆրնտըճագ, Տէրէքէօյ* եւ շրջակայ գիւղերու 1800ի մօտ բնակչութիւնը ջարդուած եւ բնակարանները քարուքանդ եղած [են]. այսօրուան մեր ստացած լուրերը աւելի վրդովեցուցիչ են, *Ձէթունը, Տոնուզը եւ շրջակայ հայ գիւղերը* 25 օրէ ի վեր պաշարուած էին թուրքերու կողմէ, 3 օր առաջ ամբողջ բնակչութիւնը ջարդուած, թալլուած եւ քաղաք ու գիւղերն ալ քարուքանդ եղած են: Ամբողջ լեռնային Կիլիկիան ահ ու սարսափի մէջ է, անզէն ժողովուրդը՝ շարունակ օգնութեան աղաղակ կը բարձրացնեն, չեն ուզեր երկչոտ ճագարներու նման ձեռքերը ծալլած մեռնիլ, պատրաստ է կռուիլ եւ զէնք կը պահանջէ մենէ. իսկ մենք չունենալով միջոցներ ժողովուրդի այս արդար պահանջին գոհացում տալու, դիմեցինք տեղական ֆրանս. իշխանութեան՝ որը խուսափողական պատասխաններով զմեզ գոհացուց: Այս դիմումները ամիսներէ ի վեր եղած են միշտ ժխտական արդիւնքով:

Այս ծանր կացութեան հանդէպ չուզելով պատասխանատուութիւնը ստանձնել, համաձայն Պատուիքականութեան Լիագօր Ներկայացուցիչ Պ. Մ. Տամատեանի հետ, արտակարգ ժողով մը գումարեցինք, որուն հրաւիրուած էին Վեհ. Կաթողիկոսը, տեղույս Ս. Առաջնորդը, Հայ Կաթողիկներու Գերապայծառը եւ Հայ Բողոքականներու Հովիւը, նաեւ քաղաքական կուսակցութիւնները եւ տեղույս մեծամեծները, հոն կացութիւնը մանրամասնօրէն քննելէ յետոյ, հասանք այն եզրակացութեան՝ որ եթէ ֆրանսացիք մեր պահանջներուն գոհացում չտան, ամբողջ իշխանութիւնները հրաժարին եւ ժողովրդեան յանձնեն երկրին դէկը, միշտ մնալով ժողովրդեան հետ եւ առաջնորդելով զինքը անպաշտօն հանգամանքով: Ներփակ հեռագիրը որոշ գաղափար մը պիտի տայ Ձեր Սրբազնութեան այն պահանջներու մասին որ ներկայացուցինք ժէներալ *Կուրօին*:

Սրբազան Հա՛յր,

Այս ճգնաժամային ըոպէներու՝ որ կ'սպառնայ Կիլիկիոյ հայութիւնը իսպառ ջնջելու, որքան մեր վրայ նոյնքան եւ Ձեր վրայ ծանր պատասխանատուութիւն կը կշռէ, որովհետեւ մենք զուրկ

յարաբերական ամեն միջոցներէ, չենք կարող ձայն բարձրացնել եւ բողոքել հայութեան վերջին բեկորներու բնաջնջմանը դէմ եւ ֆրանսական իշխանութեանց երկդիմի եւ թրքասէր քաղաքականութեան, հետեւաբար փութով կը դրկենք Ձեզ այս տողերը՝ որպէսզի Դուք, Ձեր տրամադրելի միջոցներովը հանուր աշխարհի լսեցնէք հեռագրաւ այս վերջին աղաղակը կիլիկեան հայութեան եւ բողոք բարձրացնէք թրքութեան խժողով վայրագութիւններու դէմ եւ ֆրանսական իշխանութեանց բռնած ընթացքին նկատմամբ:

Գալով զէնքի խնդրոյն, մենք ի գո՛ւր Ձեր դռները ափ առինք նիւթական միջոցներ հայթայթելու մեզի, ի գո՛ւր մատնանշեցինք տեղւոյն 20000⁴⁰ գաղթականութեան խղճալի վիճակը, սակայն դուք չլսեցիք մեր աղաղակներուն եւ ձգեցիք զմեզ մեր ճակատագրին եւ թողուցիք որ իրերը յանգին այս վիճակին: Այսօր տակաւին ուշ չէ, եթէ խնամատարութիւն կամ պատրիարքարան ուզեն ձեռք կարկառել մեզի եւ նիւթական որոշ օժանդակութեամբ մը:

Ատանայի ժողովուրդը չափազանց յուզուած, այսօր համախմբուած էր հազարներով եւ Պ. Տամատեան եւ Ազգ. Միութեանս անդամները կանչելով պահանջեցին անմիջապէս զէնք՝ որպէսզի երթան իրենց խողխողուած եղբայրներու վրէժը լուծելու եւ մնացեալները պաշտպանելու, սակայն վերի պատճառներով մենք անկարող էինք բաւարարութիւն տալ ժողովրդեան պահանջին եւ բաւականացանք հեռագրել Ժէնեւի Կուրօին:

Ամփոփելով մեր խօսքը, օրըստօրէ կ'ապրինք տաժանելի վայրկեաններ եւ ուրիշ յոյս չունինք այլեւս բայց եթէ Ձեր ազդու դիմումները զմեզ փրկելու համար:

Մնամք որդիական յարգանօք

Ամբողջական Հայաստանի Լիազօր
Ներկայացուցիչ
Մ[իւրախ] Տամատեան
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Ատենադպիր
Կ[արապետ] Աբրահամեան

Ատենապետ
Տօթթ.Գ[արեգին]
Վարդապետեան⁴¹

Յետ Գրութեան.՝ Կացութիւնը վերջին աստիճան քրիթիքական է եւ ամենաձանր անակնկալներով յղի: Անհրաժեշտ է ամենալուրջ նկատողութեան առնել այս կացութիւնը եւ առնել ամենէն վճռական քայլերը:

Մ. Տամատեան

Գ.

Ատանա, 16 Փետրուար 1920

Ամենապատիւ

Տ. Զաւէն Արք. Եղիա[յ]եան

Բարեխնամ Պատրիարք Հայոց

Կ. Պոլիս

Ամենապատիւ

Սրբազան Պատրիարք Հայր,

Ահագանգէն վերջ ահա մահագանգ... Ամենատխուր պարտականութիւնը ունիմ այս անգամ արիւնի եւ նախճիրի տխուր բօթը գուժելու Ձեր Սրբազնութեան եւ իր միջոցով Ազգ. Պատուիրակութեան: Մարաշ, իր ամբողջ շրջանով, ոչ էւս է⁴²:

35-40000 հայութեամբ օժտուած պանծալի ու ցանկալի հայկական կիլիկեան շրջանէ մը մէկ քանի հազար իլեականեր միայն այսօր անսուաղ եւ կիսամեռ աստանդական կը թափառին մարդահասակ ձիւներու մէջ ուրիշ հազարաւորներու թաղումը իրենց աչքերով տեսնելէ վերջ՝ նոյն վտանգին որեւէ վայրկեան ենթակայ: Թուրքական վատութիւնը եւ վայրագութիւնը մեզի վաղածանօթ էր: Ինչ որ քստմնեցուցիչ եւ պակուցիչ է միանգամայն, ֆրանսական դաւաճանութիւնն ու մատնութիւնն է, որ տասնեակ հազարաւոր անմեղ եւ *ֆրանսասէր* հայերու կորուստին եւ կիլիկեան ամէնէն կարեւոր միջնաբերդին կործանումին պատճառ դարձաւ...: Փաստերը դժբախտաբար ջախջախիչ են այս մասին:

Կիլիկիոյ ամբողջ շրջանը ամենաճանր վտանգներու ենթարկուած է եւ ամէն տեղ՝ վառօդի տակառը, որուն վրայ նստած է հայ ժողովուրդը, պայթելու մօտիկ է: Կիլիկիոյ ամբողջ հայութեանը սպառնացող այս օրհասական վտանգին, այս ահաւոր աղէտին հանդէպ, ժողովուրդին անդոհական գալարումներուն ինչպէս նաեւ արդար յուզման եւ գերագրգռութեան միջոցին, մեր շուրջ այնպիսի ահռելի եւ անմիջական պարտականութիւններ եւ պատասխանատուութիւններ կը ծառանան, որ անկարողութեան մատնուած ենք երկար տեղեկագրելով մեր կացութիւնը պարզելու Ձեր Սրբազնութեան, Ազգ. Կեդր. Վարչութեան, Ազգ. Պատուիրակութեան եւ հայկական կառավարութեան:

Այս հանգամանքներուն մէջ մեզի ուրիշ բան չէր մնար ընել բայց միայն այստեղէն ճամբայ հանել պաշտօնական իրազեկ անձնաւորութիւններ, որ զան պարզէն Ձեզ մեր դժոխային կացութիւնը--կացութիւն մը, որուն առջեւ կը նսեմանան Համիտեան շրջանի եւ Ատանայի 1909ի եղերբերգութեան ամէնէն տխուր դրուագները--եւ մեր բարձրագոյն իշխանութեանց եւ անոնց միջոցաւ «ասպետական» Ֆրանսային եւ դաշնակից «պաշտպան» պետութեանց ներկայացնեն մեր

գլխուն սպառնացող բնաջնջումի ահաւոր վտանգը, ինչպէս նաեւ մեր բողոքը, մեր պահանջները, մեր անվերածելի պահանջները:

Արդարեւ, պէտք է լաւ համոզուած ըլլայ ամէն հայ եւ ամէն մարդ, որ Կիլիկիոյ հայութիւնը եւ իր վարիչները, կեանքի եւ մահուան մէջ համերաշխ եւ ամենասուկալի փոթորիկներու եւ ծանրագոյն վտանգներու հանդէպ անընկճելի իրենց պահանջները ունին: Դուք էք, ազգային բարձրագոյն մարմիններն են որ պիտի բարձրացնեն անոր ձայնը ի լուր քաղաքակիրթ աշխարհին.- եթէ, աւա՛ղ, քաղաքակրթութիւնը սնամէջ բառ մը չէ իր անունով մղուած ամենավերջին համաշխարհային պատերազմէն վերջն ալ:

Ներկայ նամակը Ձեր Սրբազնութեան պիտի յանձնէ Տիար Կարապետ Աբրահամեան, որ իբրեւ Ատենադպիր Ատանայի Հայոց Ազգային Միութեան, ամենակատարեալ կերպով իրագել է ոչ միայն Կիլիկիոյ կացութեան բոլոր մանրամասնութեանց, այստեղ խաղացուած քաղաքական էնթրիկներուն եւ հայաջինջ դաւերուն շուրջ մեր բոլոր մտահոգութիւններուն, ինչպէս նաեւ մեր բոլոր տեսութիւններուն եւ հայեցակէտներուն, եւ վերջապէս մեր բոլոր պէտքերուն:

Նոյնպէս ճամբայ կը հանենք Մարաշի ամբողջ անցքերուն ականատես արթնամիտ վկայ մը յանձին Տօքթ. Յարութիւն Տ. Ղազարեանի⁴³: Մեր թախանձագին դիմումին վրայ՝ մեր ամենաանկէղծ բարեկամ եւ բազմերախտ բարերար Տօքթ. Զէմպրու⁴⁴՝ հակառակ իր յառաջացած տարիքին եւ այստեղ ունեցած պատասխանատու պաշտօնին՝ ի սէր մեր Ազգին գերագոյն գոհողութիւնը յանձն առաւ անմիջապէս ճամբայ ելնել Կ. Պոլիս գալու իր հեղինակաւոր ձայնը, իր անժխտելիօրէն անկողմնակալ վկայութիւնը եւ թուրք եւ հայկական գործերու շուրջ իր բազմամեայ փորձառութիւնը ի սպաս դնելու յօգուտ Կիլիկիոյ տառապեալ ժողովրդեան փրկութեանը եւ ի պաշտպանութիւն անոր սրբազան շահերուն: Անոր Կ. Պոլիս ներկայութիւնը պիտի ունենայ, կը հաւատանք, իր ամենամեծ նշանակութիւնը, մանաւանդ որ ան պիտի կրնայ նաեւ խօսիլ յանուն բազմաթիւ ականատես Ամերիկացիներու, որոնք իրեն տեղեկացուցին Մարաշի եղեռնին ամբողջ աղէխարշ եւ ըմբոստացուցիչ մանրամասնութիւնները:

Աւելորդ է ըսել թէ Կ. Պոլսոյ մէջ այս միջոցին ներկայութիւնը Գերապատիւ Տ. Մուշեղ Արքեպ. Սերոբեանին⁴⁵, որ կիլիկեան գործերու շուրջ խորունկ փորձառութեան մը կը միացնէ ներկայ տագնապին նախընթացներուն ամենամօտիկ իրագելի հանգամանքը երկարատեւ ամիսներ մեզ հետ բաժնած ըլլալով մեր բոլոր մտահոգութիւնները, մեր ցաւերը, եւ մեր այնքան արդարացի ակնկալութիւնները,- Մուշեղ Արքեպ.ի ներկայութիւնը, կ'ըսեմ, պիտի ունենայ իր մեծագոյն օգտակարութիւնը: Անշուշտ պիտի հաճիք միշտ զինք խորհրդակից ունենալ:

Ասկէ գատ՝ կարծեմ Գեր. Պալաքեան⁴⁶ Հայր Սուրբն ալ Պրն. Աբրահամեանի եւ իր ընկերակցին հետ միեւնոյն շոգենաւով կը մեկնի Պոլիս եւ ինքն ալ պիտի բերէ Ձեզ իր թանկագին վկայութիւնը այս կողմերու կացութեան մասին:

Ահա այսպէս ամէն կարեւոր տարրերը ունիք Ձեր տրամադրութեան տակ կացութեան ամէն կողմերը լիովի ուսումնասիրելու եւ ըստ այնմ ոչ միայն պետք եղած կորովի ամենաազդու դիմումները կատարելու, այլեւ <զավիք> ահաւոր չարիքը եւ վտանգը դիմագրաւելու համար ազգովին կարելի միջոցները ձեռք առնելու համար: Մասնաւորապէս կը խնդրեմ Ազգ. Պատրիարքարանէդ եւ Ազգ. Պատուիրակութենէն նկատի ունենալ մեր տասնեակ հազարաւոր հին եւ նոր գաղթականներուն ամենաթշուառ դրութիւնը եւ *շուտակոյտ* եւ *կարեւոր* օգնութիւններ հասցնել մեզ: Զպիտի դադրիմ մեր ազգին համար իբրեւ ամօթալի իրականութիւն նկատելէ սա անհաւատալի պարագան թէ, անցեալ Յունիսէն մինչեւ այսօր 8 ամսուան երկար շրջանին մէջ ուր այստեղ կը գտնուիմ - Բացի Բարեգործականի եւ Ռրբախնամի կանխորոշ նպատակով դրկուած գումարներէն եւ Բժշկական Առաքելութեան պիւստէն - Կիլիկիոյ ընդհանուր պետքերուն համար Ատանայի Ազգային Միութիւնը ստացած է միայն 100000 (հարիւր հազար ֆրանք) այն ալ մի միայն Ազգային Պատուիրակութենէն իմ միջոցաւ:

Նոյն ժամանակաշրջանին օտար հաստատութիւնները, Անգլ. կառավարութիւնը եւ մանաւանդ ֆրանսական ամենախոշոր գումարներ տրամադրած են,- ֆրանսական նպաստը միլիոններով կը հաշուուի, ու ես ուրիշ առիթով մատնանիշ ըրած եմ որ այստեղ սանթիմ մը չծախսուիր որ բարեգործութեան պատրուակին տակ միանգամայն չծառայէ քաղաքական նպատակի եւ հողային հաշուեյարդարութեան ժամանակ նծարին մէջ չդրուի անհամեմատ փոխարինութիւններու, իրաւունքներու, շահերու, ապահովութեան ու տիրացումին համար...:

Եւ ըսել թէ մենք տակաւին կը պնդենք ու պիտի պնդենք ցմերջ թէ Կիլիկիան մեր հայրենի հողին գոհարն է, թէ մեր կիլիկեան շահերը մեր ազգային շահերուն ամէնէն հոգեբանական, ամէնէն կենսական մասը կը կազմեն: Եթէ մեր կացութեան այս ամօթալի կողմին հակառակ, պատուիրակութեան Կիլիկիոյ ներկայացուցչութիւնը եւ Ազգ. Միութիւնը կրցած են բարձր պահել Ազգին prestige-ը⁴⁷ օտարներուն եւ ֆրանսացիներուն իսկ առջեւ, եթէ կրցած են իրենց հեղինակաւոր դիրքը պահպանել մեր թշուառ եւ յուսավրէպ ժողովուրդին հանդէպ, եթէ ժողովուրդին, յուսախաբ լեզունականներուն կարգապահութիւնը ցարդ կարելի եղած է պահպանել, եթէ անիշխանութիւնը, ներքին երկպառակութիւնները, ծայրայեղ յուսահատութիւնը եւ անոր յարակից բոլոր չարիքները տակաւին չեն շղթայազերծուած, եթէ տակաւին այս դժոխըմբեր կացութեան հանդէպ եւ ազգին մնացեալ հատուածներուն

կողմէ դէպի ցանկալի Կիլիկիան ցոյց տրուած անտարբերութեան հակառակ՝ զանգուածային արտագաղթի կործանարար - բայց վերջ ի վերջոյ անխուսափելի - շարժումը ծայր տուած չէ, պէտք է ընդունիլ եւ խոստովանիլ որ հրաշք մը իրականացած է, հրաշք մը, որ պատիւ կը բերէ ինչպէս Ազգային Դատին անխոնջ աշխատատարներուն եւ ազգին ամէն հատուածներու հոգեւոր պետերուն եւ իշխանութեանց եւ քաղաքական կազմակերպութեանց համերաշխութեանը, իմաստութեանը եւ խոհեմութեանը, նոյնպէս Կիլիկիոյ հայ ժողովուրդին գիտակցութեանը, հայրենասիրութեանը, կենսունակութեանը, չարքաշուութեանը եւ ասոնց նման բնատոհմիկ պանծալի արժանիքներուն: Բայց վերջապէս մեր իրաւունքն է սուրի եւ հուրի ընդմէջէն, մինչեւ վերջին վայրկեանը մեր ձայնը բարձրացնելու եւ մեր սիրելի ազգակիցներուն «օգնութիւն» «օգնութիւն» աղաղակելու:

Աւելի քան երբեք ժամանակն է, քանի որ Ձեր մէջ ունիք Կիլիկիոյ վիճակին եւ բազմակողմանի պահանջներուն լիովին տեղեակ անձնաւորութիւններ, ամբողջ Կիլիկիոյ խնդիրը խորաքննին կերպով ուսումնասիրելու եւ ըլլայ դիմումներու, ըլլայ ձեռք առնուելիք ազգային միջոցներու մասին վերջնական որոշումները կայացնելու: Պատմական պարտականութիւն մըն է որ այս կերպով կ'աւանդենք Ձեզի. Կիլիկիոյ 200000ի մօտիկ հայութիւնը⁴⁸ իր կողկողագին աչքերը ձեզի դարձուցած է: Այսօր կամ երբեք. վաղը գուցէ շատ ուշ ըլլայ...:

Գալով մեզի, կրնաք բացարձակապէս վստահ ըլլալ որ Ազգ. Միութիւն եւ Ազգային մարմիններ եւ կուսակցութիւններ մինչեւ վերջը պատնէշի վրայ պիտի գտնուինք: Դուք կրնաք գուշակել մեր դիրքին բովանդակ փափկութիւնը եւ դժուարութիւնները. մենք ստիպուած ենք հակառակ մեր դիմումներուն վերջերս առած սպառնագին կերպարանքին, մինչեւ վերջ հաշտ քաղաքականութեան մը հետեւիլ ֆրանսական իշխանութեանց հանդէպ:

Մարաշի աղէտէն զատ, այստեղ Ատանայի մէջ ալ վտանգը ամենալուրջ է եթէ անկէ առաջ բան մը չպատահի: Վտանգին իրական ըլլալը կը խոստովանին նոյնիսկ ֆրանսական իշխանութիւնները:

Հաճընի, Միսի եւս վիճակին վրայ չեմ ծանրանար: Մեր պատգամաւորը, Պրն. Աբրահամեան, Ձեզ լիովին կը տեղեկացնէ:

Աւելի երկարել աւելորդ համարելով Կիլիկիոյ եւ կիլիկիաբնակ հայ ազգաբնակչութեան կեանքը եւ նուիրական շահերը Ձեր ձեռքերուն մէջ կը յանձնենք:

Ամենախորին յարգանքներով մատչիմ ի համբոյր Ս. Աջոյ Գերապատիւ Սրբազնութեանդ

Ամբ[ողջական] Հայաստանի Պատուիրակ
Կիլիկիոյ Լիազօր Ներկայացուցիչ
Մ. Տամատեան

Դ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

ՀԱՅՈՑ Ի ԿԻԼԻԿԻԱ

Համար 177/68

Պատճեն

Ատանա, 21 Մարտ 1921⁴⁹

Վսեմաշուք

Պօղոս Փաշա Նուպար

Նախագահ Ազգ. Պատուիրակութեան

ի Փարիզ

Թերեւս ստացած էք մեր Փետր. 28 ամսաթիւ գրութիւնը, յորում ներփակած էինք 1^o Վեհաժողովին ուղղեալ, 2^o Ձեր Վսեմութեան, 3^o Սրբազան Պապին, 4^o Քէնթրպրիի Արք.-Եպիսկոպոսին ուղղեալ հեռագրերու պատճենները:

Լոնտրայի Վեհաժողովն⁵⁰ ալ մեր դարաւոր ցաւերուն դարման մը չընելէ գատ վերքերնիս աւելի խորնկցուց: Ֆրանսացիք հապճեպով մեկնելու պատրաստութեան վրայ են. այսօր կամ վաղը Ատանան, աւելի ճիշդ բոլոր Կիլիկիան, նոյն իսկ ֆրանսական գօտի կարծուածը, պիտի յանձնուի նախկին տիրոջ եւ մենք՝ ինչպէս բոլոր քրիստոնեայք պիտի մնան հին լուծին եւ շղթային տակ:

Ժողովուրդը ահագին տագնապի եւ օրհասի ժամեր կ'ապրի. անպատճառ հաշուետուութեան պիտի հրաւիրուի, որուն վախճանը թէեւ ակնյայտնի, բայց բերանս վրայ չ'երթար բուն բառը արտաբերելու: Երանի թէ անցեալ տարւոյ երբ Եւրոպա մեկնած չէի, ժողովուրդը ունեցած հանդարտ եւ համեմատաբար խաղաղ վիճակին մէջ մնացած ըլլար, կամ ինչպէս փորձեր էին, համաձայնութեան մը եկած ըլլային մեր դրացիին հետ, սակայն տաք, կամ անխելք գլուխներ, որոնք այստեղ չէփ⁵¹ մը չունին, արգելք եղած են այդ խոհական քայլին, եւ վաղը, վտանգի պահուն, այդ եկուոր փրկիչները իրենց օձիքը պիտի ազատեն փախուստի հերոսական ճանապարհով. մնացողները, Կիլիկիոյ բնիկները եւ դրսի գաւառներէն հոս հաւաքուողները պիտի քաւեն այն յանդուգն ու ոճրապարտ քայլերն ու արարքները, որոնց ո՛չ մասնակից են եւ ո՛չ պատասխանատու:

Մի քանի օր առաջ Ժենեւալ Տիւֆիօյի այցելեցինք Պէյրութէն վերադարձի առիթով. ժողովուրդի խռովքին եւ տագնապին վրայ խօսքը յանգեցաւ. ելք մը, միջոց մը ցոյց տալու կամ խորհուրդ մը, տատամսեցաւ, ըսաւ որ տակաւին մեկնելու որեւէ հրահանգ ստացած չէ՛, երբ առնէ, հաղորդել խոստացաւ: Դիցուք թէ հաղորդէ. ինչ կրնանք ընել ժողովուրդը փրկելու համար, թերեւս քիչ շատ կարողութիւն ունեցողները թողուն քաշուին, մեծագոյն մասը, որ ուտելու հաց չունի, ո՛ր երթայ եւ ո՛ր պարտկուի. գոնէ քրիստոնեայ պետութիւններէն մին

այնքան մարդասիրություն ունենար, որ տեղ մը ցոյց տար եւ դիրություններ տրամադրէր. վազ գալով ամէն երազներէ, թողունք ամէն բան եւ գաղթականութեան ցուպը ձեռքերնիս՝ յաջողէինք ֆիզիքական գոյութիւննիս պահպանել:

Այս իմաստով գրություն մը տուի ժեներալին, որուն պատճենը կը ներփակեմ, որպէս զի ֆրանսական կառավարութեան հաղորդէ, սակայն 'ի գուր, օգնութեան ամէն յոյս ջախջախուած է. առկայծեալ պատրոյգը վերջապէս շիջանելու վրայ է:

Վսեմափայլ Տէր, եթէ ձեր յոյսը տակաւին զօրաւոր է, եւ եթէ կը կարծէք թէ բոլոր միջոցները սպառած չեն, Աստուծոյ սիրուն, Ազգի սիրուն, ըրէք ինչ որ հնարաւոր է, ո՛ր զիտէ, թերեւս Աստուած գթայ մարտիրոս ժողովուրդին եւ արեան կարմիր ծովը հրաշքով պատռէ եւ անցք տայ փրկուելու բիրաւոր փառաւորներու ձեռքէն եւ Եգիպտոսի գերութենէն:

Գուցէ վերջին գրութիւնս եւ վերջին ողջոյնս է զոր կ'ուղղեմ Ձեր Վսեմութեան, հանդերձ խորին յարգանքօք

Աղօթարար
Սահակ Բ. Կթ. Կիլիկիոյ

ՔԱՂՈՒԱԾՔ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՏ⁵² ՆԻՍՏԵՐՈՒ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Թ755 համարակալումով 14 Ապրիլ 1920 թուակիր ատենագրութեան Բ. կէտ. «Ժողովը Կիլիկիայէն եկած պաշտօնական գրութեանց պատճեններէն գոհութեամբ տեղեկացաւ թէ կացութեան մէջ պզտիկ մեղմացում մը կայ եւ ֆրանս. իշխանութեանց կողմէ բաղաքականութեան մէջ փոփոխութիւն մը կը նշմարուի»:

Թ771 համարակալումով 21 Ապրիլ 1920 թուակիր ատենագրութեան Գ. կէտ. «Կիլիկիայէն առնուած տեղեկութիւնները չափազանց ծանր կացութիւն մը մատնանիշ կ'ընէին, մանաւանդ Այնթապի մասին առնուած լուրերը շատ դառն էին եւ մեծ հաւանականութիւն կար որ Այնթապ եւս մասամբ Մարաշի բաղդին վիճակակից եղած էր:

Տօք. Նագաշեանի ստացած թղթակցութիւնները կարդալէ յետոյ ժողովը տեղեկացաւ նաեւ Ազգապետ Բրօֆ. Պէզճեանի մէկ մասնաւոր դիմումին որ կատարած էր Անգլ. դեսպանատան մօտ: Բրօֆ. Պէզճեան ներկայացած էր Օովակալին⁵³ պարզելու համար Այնթապի վիճակը եւ անոնց օգնութիւնը խնդրած էր: Բրօֆ. Պէզճեանի պատասխանած էին թէ Կիլիկիա ֆրանսական շրջանակին մէջ ըլլալով իրենք բան մը չէին կրնար ընել: Բրօֆ. Պէզճեան այն ատեն դիտել տուած էր թէ իրենք ալ պատասխանատու էին այս ջարդերուն, վասնզի Մուրիոյ պարպուած

պահուն Անգլիացի սպաները իրենց պատուոյն վրայ խոստացած էին թէ Կիլիկիա դարձող հայոց կեանքը ապահովուած էր:

Շովակալը՝ Ազգապետին այս յայտարարութեան վրայ մեծապէս ազդուած, խոստացած էր թէ այս պարագան Անգլիոյ Արտաքին գործոց նախարարութեան պիտի ծանուցանէր եւ պիտի խնդրէր որ ինչ որ կարելի է ի գործ դրուէր Կիլիկիոյ Հայոց կեանքը փրկելու համար:

Համազգային ժողովը այս պարագան լսելէ յետոյ ինքն ալ իր կարգին Անգլիացոց եւ Ֆրանսացոց խոստումը յիշեցնելու եւ Հայոց ցար յայտնելու համար [որոշեց] դիմել Սան-Ռեմօ գումարուող Գերագոյն Խորհուրդին եւ խնդրել որ քանի որ իրենց տուած խոստումին հակառակ Կիլիկիոյ մէջ հայերը կը ջարդուին, անոնք վերադարձուին այն տեղերը ուրկէ բերուեցան եւ իրենց կեանքը փրկուի»:

Թ772 համարակալումով 28 Ապրիլ 1920 թուակիր ատենագրութենէն կէտեր. «Ա. Ատանայէն 17 Ապրիլ թուակիր հեռագիր մը կը ծանուցանէր թէ մասնակի ջարդը կը շարունակուի, Հաճըն եւ Սիս պաշարուած են: Միայն կացութեան մէջ մեղմացում մը կը նշմարուէր, թէւ դիմումներու պէտք ցոյց կը տրուէր:

Որոշուեցաւ Ֆրանսական դեսպանատունէն պահանջել տեղեկութիւն Հաճընի եւ Սիսի մասին, ըսելով թէ մտատանջութեան մէջ ենք: Նոյնպէս որոշուեցաւ որ Ազգապետ Էֆ.ն ալ դիմէ Անգլիական դեսպանատուն:

Բ. Կարդացուեցաւ ամփոփում[ը] այն երեք տեղեկագիրներուն, որոնք մինչեւ Ապրիլ 7 Այնթապի անցուդարձերը կը նկարագրէին: Բրօֆ. Պէզճեան Էֆ. աւելցուց թէ բերանացի աւանդուած լուրերու համաձայն 500 սպանեալ կայ Այնթապի մէջ:

... Զ. Շովակալ Վ. Պրիսթօլ⁵⁴ նամակով մը կը հաղորդէ թէ Ուրֆայի, Պիրեճիկի եւ Մարտինի հայերը ազատուած են»:

Թ775 համարակալումով 19 Մայիս 1920 թուակիր ատենագրութեան համաձայն, «Ֆրանսական Բարձր Քոմիսերութենէն կը պատասխանուէր ի պատասխան կատարուած դիմումներուն թէ ամէն կարելին պիտի գործադրուէր Հայերը ազատելու համար սպառնացող վտանգէն: Հակառակ այս հաւաստիքին, սակայն, Կիլիկիայէն եւ Կիլիկիոյ մասին առնուած լուրերը շատ աննպաստ էին: Ազգապետ Էֆ. շատ հաւաստի եւ արժանահաւատ աղբիւրէ տեղեկացած էր անցեալ Կիրակի օր Այնթապէն մեկնող ճամբորդի մը միջոցաւ, թէ 3000 Ֆրանսացի զինուոր երբ Այնթապ կ'երթային[,] պաշարուած քաղաքին Միլլի աւելի գերակշիռ ուժերու հանդիպած եւ անոնցմէ հալածուելով Քիլիս ապաստանած են: 6000ի չափ Միլլիներ ասոր վրայ Այնթապը պաշարած եւ նոյնիսկ թնդանօթի բռնած են Հայոց թաղը: Այնպէս որ կացութիւնը յուսահատական էր:

Նոյնպէս հրատարակուած Հաշտութեան Դաշնագրին պայմաններէն կը հասկցուէր թէ բացի աննշան մասէ մը Կիլիկիա պիտի վերադարձուէր թուրքիոյ, ինչ որ աւելի տագնապալի կը դարձնէր կացութիւնը: Կիլիկիոյ պարպումը Տ. Զաւէն Պատրիարք եւս Բարիզէն կը հաղորդէր: Այս կացութեան առջեւ որոշուեցաւ որ Ազգապետ Էֆ. եւ Տօք. [Գրիգոր] Դաւիթեան միասին Անգլ. եւ Ամերիկեան դեսպանատանց կարծիքները շօշափեն...»:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
21 ՄԱՅԻՍ 1920Ի ՆԻՍՏԻՆ

Թ776

21 Մայիս 1920

Առաւօտեան ժամը 10ին

Ս. Պատրիարքի բնակարանը

Համազգային Ժողովի վերջին նիստի որոշման համաձայն այս նիստին հրաւիրուած էին Խորհրդարանական Յանձնաժողովի անդամները եւ Քաղ. Կուսակցութեանց ներկայացուցիչները եւ ուրիշներ:

Ներկայք.-

Տ. Մեսրոպ Եպս. Նարոյեան
Տ. Օգոստինոս Արքեպս. Սայեղեան
Բրօֆ. Զենոբ Պէզճեան
Տեարք Ստեփան Գարայեան
Տքթ. Գրիգոր Դաւիթեան
Դաւիթ Տ. Մովսէսեան
Հայկ Խօճասարեան
Արամ Ինճիճեան
Գարեգին Տէվէճեան
Տքթ. Նազաշեան

Հրաւիրեալներ.-

Ներսէս Օհանեան
Պետրոս Խօրասանճի
Յակոբ Պահրի
Տ. Յովսէփ Վրդ. Տ. Մարգարեան
Տքթ. Ստեփան Թէրզեան
Յ. Ամատունի
Տքթ. Յ. Թօփճեան
Սեդրակ Գարեան
Լեւոն Փափազեան
Արամ Ճիւմպիւշեան
Յարութիւն Խաչատուրեան

Վարչությունը հաղորդեց թե 7 Մայիս թուակիր նամակով մը Ս. Պատրիարքը Բարիզէն կը գրէր որ Ֆրանսական պետական անձնատրութիւններ յայտարարած էին թէ՛ իրեն, թէ՛ Սահակ Կաթողիկոսի եւ թէ՛ Պօղոս Փաշա Նուպարի՝ թէ Ֆրանսա որոշած է պարպել Կիլիկիան: Ս. Պատրիարքը կը տեղեկացնէր նաեւ թէ՛ դիմում կատարած էր Ֆրանս. Կառավարութեան, թէ գէթ այս պարագային կռուող ուժերը անկէ վերցնելու մէկ ճարը նայուէր:

Նոյնպէս դիտել տրուեցաւ թէ դաշնագրին հրատարակեալ տրամադրութիւններէն ալ բացորոշ կ'երեւար որ Կիլիկիոյ մեծագոյն մասը կը մնար Թուրքիոյ:

Այս տագնապալի կացութեան առջեւ Վարչությունը կ'ուզէր տեղեկանալ զանազան հոսանքներու տեսակէտին Կիլիկիոյ մասին ազգին հետեւելիք ուղղութեան մասին:

Տիար Արամ Բնճիճեան կարծիք յայտնեց թէ քանի որ Ֆրանսացիք կը մեկնին Կիլիկիայէն, ասիկա Հայոց տեսակէտով յարմար առիթ մըն է որ Հայերը տէր կանգնին այս երկրին իրենց սեփական ուժերով:

Ֆրանսացւոց մեկնումը ոմանք կասկածելի համարեցին, սակայն *Տիար Տրթ. Նաիթեան* բացատրեց թէ այլեւս ռեւէ կասկած չէ մնացած Կիլիկիոյ Թուրքիոյ թողուած ըլլալուն վրայ:

Տիար Յակոբ Պահրի կը կարծէր որ որոշում տալու կարող չէին քանի որ կացութեան տեղեակ չէին: Տիար Պահրի յայտնեց թէ ինքն համամիտ չէ որ կռուողները մեկնին Կիլիկիայէն, որովհետեւ Հայերը պիտի տկարանան եւ ընտանիքները անպաշտպան պիտի մնան: Իսկ Կիլիկիոյ բոլոր Հայերը չէին կրնար այլուր գաղթել հաւաքաբար, հետեւաբար ուրիշ ճամբայ չկայ եթէ ոչ դիմադրութիւնը շարունակել:

Տիար Յ. Ամատունի դէմ արտայայտուեցաւ այս գաղափարին, վասն զի կարելիութիւն չկար կռիւր շարունակելու, անյուսալի է պայքարը եւ հետեւաբար ցնորք մըն է Եւրոպան կատարուած իրողութեան մը առջեւ դնելու փափաքը: Ամէն բան պարզ է. Ֆրանսացիք հոն ըլլան կամ ոչ, վտանգը միշտ գոյութիւն ունի Հայոց համար: Ֆրանսացիք չեն ուզեր որ Հայերը Կիլիկիոյ մէջ մնան եւ միւս պետութիւններն ալ հարկադրուած են ուժ տալ Ֆրանսական ուղղութեան: Հայոց Կիլիկիոյ մէջ մղած կռիւր ուժերու աւելորդ վատնում մըն է: Եւրոպացիք երբեք չպիտի խառնուին եւ ընդհակառակը, թերեւս ոյժ պիտի տան ազգամիջեան կռիւներուն: Պ. Ամատունի չէր հաւատար թէ Ֆրանսա պիտի մեկնէր Կիլիկիայէն: Երկաթուղիի գիծին պաշտպանութիւնը անհրաժեշտութիւն մըն է Անգլիոյ համար եւ այդ գիծը պաշտպանելու համար Եւրոպացիք պիտի պահեն Կիլիկիան: Եւ որքան ստեն որ Ֆրանսացիք հոն են, հաւանական

չէ որ հաւաքական ջարդեր պատահին, սակայն արդի ձեռով մասնակի կոտորածները պիտի շարունակուին:

Լոյտ-Ճօրճ⁵⁵ ըսած է թէ նոր ջարդեր եթէ պատահին, Թուրքերը նոր աղէտներ պիտի հրաւիրեն իրենց վրայ. եւ սպիկա բաւական է սանձելու համար Թուրքերու վայրագութիւնը: Կամ պէտք է հրաժարիլ Կիլիկիայէն, կամ շարունակել կռիւր, սակայն երկու ճակատի վրայ չենք կրնար կռիւ մղել. պէտք է գտնել ճամբայ մը, հասկցնելու համար Ֆրանսացոց թէ քաղաքական ցանկութիւններ եւ յաւակնութիւններ չունինք Կիլիկիոյ վրայ:

Տիար Արամ Ճիւսպիշեան կարծիք յայտնեց թէ Ֆրանսա Կիլիկիան թէ՛ իբր գաղթավայր եւ թէ՛ իբր տնտեսական շահաստան դարձուցած պարագային չպիտի թողու որ Հայերը իբր Հայաստան կռուին Կիլիկիոյ մէջ եւ դէմ արտայայտուեցաւ ժողովուրդը Կիլիկիայէն հեռացնելու գաղափարին եւ ի նպաստ[] կռուողները հեռացնելու առաջարկին:

Տօթ. Նազաշեան իբր Կիլիկեցի եւ զայն մօտէն ճանչցող զարմանք յայտնեց թէ կռուողներու խօսք կըլլայ մինչդեռ իրականութեան մէջ հոն պատերազմիկներ գոյութիւն չունին:

Ժողովուրդն է որ իր գոյութիւնը պաշտպանելու համար առանց ուել կազմակերպութեան իր միջոցներով կը կռուի իր տուները ապաստանած: Անոնք ուտելիք չունին, զէնք չունին եւ օգնութիւն ստանալու ուել յոյս չունին: Հաճըն եւ Այնթապ, որ այսքան ատենէ ի վեր պաշարուած են, արդէն իսկ մեռնելու վրայ են եւ անկարելի է որ ի վիճակի ըլլան կռիւր շարունակելու: Տօթ. Նազաշեան յայտնեց թէ ջարդի վտանգը պիտի դադրի եթէ Ֆրանսացիք այն տեղէն մեկնին եւ ասոր համար Ուրֆայի օրինակը⁵⁶ բաւական համարեց:

Քանի որ Ֆրանսացիք չեն հաւատար շայոց անկեղծութեան, լաւագոյն է անմիջական վտանգը անհետացնելու եւ շայոց ֆիզիքական գոյութիւնը փրկելու համար ուրիշ միջոց չկայ եթէ ոչ Թուրքերու հետ համաձայնիլ: Ապագայի տեսակէտով մեր ազգային շահերու տեսակէտով Կիլիկիոյ Թուրքերու տրուիլը աւելի նպաստաւոր [է] քան թէ Ֆրանսացոց:

Դաւիթ Տ. Մովսէսեան դիտել տուաւ թէ մեր ջանքերը Ֆրանսան Կիլիկիոյ մէջ պահելու համար անօգուտ են, վասնզի ասկէ առաջ Կիլիկիոյ բոլոր Քրիստոնեաներու կողմէ ասանկ դիմում մը խիստ փաստացի կերպով եղած էր, սակայն անիկա՝ ինչպէս կը տեսնուի, նկատի չէ առնուած ոչ թէ անոր համար որ քաղաքական շահեր արգելք եղած են այդ գրաման:

Շայոց ֆիզիքական գոյութեան սպառնացող վտանգը անհետացնելու համար Ֆրանսայի հետ համաձայնութեան մը կարելիութիւնը թէական է, ուստի պէտք է բանակցիլ Ֆրանսայի հետ առանց մեծ յոյս մը տածելու:

Եթէ իր քաղաքական շահերը ձեռնտու են, թերեւս մեր արտայայտութիւնները օգտագործէ եւ ասով Հայերն ալ օգտուին:

Եթէ ոչ, պէտք է համոզուինք թէ ոչ միայն Ֆրանսա, այլ[եւ] բոլոր Եւրոպա միայն մեզի օգնելու համար անշահախնդրաբար ունէ դոյզն գոհողութիւն իսկ չ'ընէր: Մեր գոյութիւնը պաշտպանելու համար կռուիլ սխալ մըն է, ընդհակառակն խաղաղ միջոցներու պէտք է դիմել, վասնզի կռուելու կարելիութիւն չկայ: Ինքնապաշտպանութեան եւ կռուին մէջ տարբերութիւն կայ: Որչափ ատեն որ յարձակող մը կայ, ինքնապաշտպանութիւնը նուիրական պարտականութիւն մըն է, սակայն աննպատակ կռիւ մը դատապարտելի է:

Պէտք է խոստովանիլ որ Ֆրանսացւոց հակակրօնութիւնը մեր վրայ հրաւիրելու սխալը ըրինք Կիլիկիոյ վրայ մեր ցանկութիւնները անվերապահ արտայայտելով: Հիմա թէեւ ուշ մնացած ենք, սակայն պէտք է որ մեր ընթացքը փոխենք: Լրագրութիւնը կամաց կամաց պէտք է փոխէ իր լեզուն, յետոյ պէտք է Ատանա խորհուրդ տալ որ իրենց ուղղութիւնը փոխեն: Այս կերպով թերեւս կարելի ըլլայ Ֆրանսացւոց վստահութիւնը գրաւել:

Գալով Թուրքերու հետ համաձայնելու խնդրին, պէտք է նկատի ունենալ թէ Հայերը Ֆրանսացւոց օգնած ըլլալնուն համար էր որ Թուրքերը Հայոց վրայ յարձակեցան: Եթէ Հայերը չէզոք մնային, ինչպէս Ուրֆան, Կիլիկիոյ վերջին ջարդերը չպիտի ըլլային:

Տիար Դաւիթ Տ. Մովսէսեան համաձայն էր որ Ֆրանսայի հետ բանակցութիւններ կատարուէին եւ միւս կողմէն ինքնապաշտպանութեան միջոցներ մտածուէին եւ Թուրքերու հետ համաձայնութեան մը գալու միջոցներ խորհուէին:

Տօքթ. Դաւիթեան դիտել տուաւ թէ պէտք չէ նախապաշարուիլ սա գաղափարով թէ Ֆրանսացիք Կիլիկիոյ մէջ Հայերը բնաջնջելու ծրագիր մը ունին, վասնզի անոնք իրական տկարութեան նշաններ ցոյց կուտան:

Տօքթ. Թէրզեան ըսաւ թէ Կիլիկիոյ խնդիրը երկու կերպով կրնար կարգադրուիլ՝ դիւանագիտութեամբ կամ ուժով: Դիւանագիտութեան միջոցը ձախողած է ինչպէս դաշնագրէն կը հասկցուի, եւ մեր դիմումները անլսելի մնացած են:

Իսկ ուժ չունինք որ կատարուած իրողութեան մը առջեւ դնենք Եւրոպան: Կիլիկիոյ մէջ կռուողը ժողովուրդն է եւ լեռնային Կիլիկիոյ ժողովուրդն է որ բան մը կ'արժէ: Դաշտային մասին բնակիչները չունին անոնց յատկութիւնները: Լեռնային մասն ալ արդէն պէտք է փճացած ըլլայ: Հաճընէն եւ ոչ մէկ լուր կայ մէկուկէս ամիսէ ի վեր եւ որովհետեւ անոնք պաշար չունին, հաւանօրէն անձնատուր եղած եւ ջարդուած են: Առանց Ֆրանսայի դէմ ելլալու ինքն ալ համամիտ եղաւ թէ Թրքաց հետ համաձայնութեան մը գալէն զատ ուրիշ հնար չկայ:

Տօթ. Թօփճեան պարզեց Ֆրանսայի անհամակիր վերաբերման շարժառիթները: Ֆրանսացիք զինադադարէն յետոյ առաջարկեցին մեզի պահանջել Կիլիկիոյ եւ Հայաստանի վրայ Ֆրանսական հովանաւորութիւն: Մենք պատասխանեցինք ո՛չ կարիմք, յոյս ունենալով Ամերիկեան հովանաւորութեան վրայ⁵⁷: Ասիկա եղաւ առաջին պատճառը անոնց թշնամանալուն: Հիմա Ֆրանսան սիրաշահիլ կը մտածենք, սակայն հաւանական չէ որ յաջողինք: Ֆրանսա Կիլիկիան գրաւել կ'ուզէ. ասիկա անուրանալի է, ուստի հոն գտնուող ժողովուրդները իրեն հետ ունենալ կ'ուզէ:

Հոն գտնուող երկու գլխաւոր տարրերը՝ Թուրքերը եւ Հայերը, երկուքն ալ մրցակից են Կիլիկիոյ մասին իրենց ցանկութեամբ:

Ֆրանսայի կը մնայ անոնցմէ մէկը շահիլ միւսին դէմ, քանի որ իրարու հակառակորդ են: Իրենց համար շահաւոր էր Թուրքերը շահիլ, վասնզի Թուրքերը աւելի շատ բան կրնային տալ իրեն քան Հայերը, ուստի Թրքաց մօտեցաւ:

Այս ուղղութիւնը փոխել տալ կարելի չէ: Իսկ Թուրքերու վստահիլ ալ կարելի չէ, վասնզի *Թէշքիլաթը Մախսուսէն*⁵⁸ զինադադարէն յետոյ ալ կը շարունակէր եւ հիմա ալ իր գոյութիւնը կը պահէ Մուսթաֆա Քէմալի կառավարութեան մէջ, վասնզի անոր վարիչը այսօր կը գտնուի անոր քով:

Պէտք է գիտնալ թէ այսօր Թուրքիոյ իսկական կառավարութիւնը Մուսթաֆա Քէմալի կառավարութիւնն է եւ անիկա իր ծրագրէն չէ ջնջած Հայերը բնաջինջ ընելու քաղաքականութիւնը, որ հիմնական քաղաքականութիւն մըն է Թրքաց համար: Մուսթաֆա Քէմալ՝ օգոտուելով անցեալին փորձառութենէն, աւելի վարպետ է քան Իթթիհատը: Հետեւաբար, Թրքաց հետ համաձայնութեան մը գալու կարելիութիւնը չկայ: Միակ միջոցը Կիլիկիոյ Հայութեան ֆիզիքական գոյութիւնը փրկելու համար սա է որ պահանջենք դաշնագրին ստորագրութեան հետ համաձայնագիր մը, որով Կիլիկիոյ Հայերն ալ Վենիզելոսի⁵⁹ կողմէ ծրագրուածին համաձայն ունենան ա՛յն իրաւունքները, որ Պոնտոսի Յոյները պիտի ունենան:

Թուրքերը կ'աշխատին երկարաձգել հաշտութեան դաշնագրին շուրջը եղած բանակցութիւնները, յուսալով զայն մեղմել Իտալացիները եւ Ֆրանսացիները շահելով, տնտեսական առաւելութիւններ խոստանալով: Այս պատեհութենէն օգուտ պէտք է քաղել ամէն բան ընելու համար՝ որ Ազգերու Լիկը կամ Գերագոյն Խորհուրդը միջամուխ ըլլայ Կիլիկիոյ Հայոց կեանքի ապահովութեան հարցին:

Տիար Ստեփան Գարայեան դիտել տալով թէ Կիլիկիոյ խնդրոյն մէջ չորրորդ շահագրգռուող կողմ մըն ալ կայ, այն ալ Անգլիա[ն] է, [նշեց թէ] մրցակցութիւնը մասնաւորապէս Ֆրանսայի եւ Անգլիոյ [միջեւ] է:

Այս երկու պետություններուն ռեւէ մէկուն գործիք պէտք չէ ըլլանք ասկէ յետոյ: Փոքրամասնութեանց պաշտպանութեան հարցը՝ որուն ակնարկուած է դաշնագրին մէջ, պարզուած չէ թէ ի՞նչ կերպով պիտի ըլլայ: Յետոյ ուրիշ բան է դաշնագրին մէջ նշանակել, ուրիշ բան է զայն գործադրել:

Յոյս դնել դաշնագրին մէջ նշանակուած այս տեսակ յօդուածի մը վրայ շատ ճիշդ չէ, մանաւանդ որ Կիլիկիոյ Հայոց սպառնացող վտանգը անմիջական է: Ջարդի մը առաջին առնելու համար ձեռք առնուելիք միջոցները պէտք է ըլլան այնպիսի եղանակով մը, որ երեք զլխաւոր ուժերուն՝ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Թուրքիոյ հետ համախոհութեամբ գործադրուին:

Տիար Յ. Ամատունի յայտնեց թէ նախ պէտք ունինք Ֆրանսայի բարեկամութիւնը ապահովել[ու], եւ ասոր համար առաջին բանը Կիլիկիոյ վրայ մեր ցանկութիւնը չունենալը գործնականապէս ապացուցանելն է: Այս տեսակէտով Բարիզի մէջ շատ լաւ մտածեր են Ֆրանսական կառավարութեան առաջարկելով կռուողները վերցնել, վասնզի ասիկա կերպով մը գործնական ապացոյց մը կ'ըլլայ: Յետոյ եթէ այդ կռուողները հող մնան, Ֆրանսացոց մեկնած ատեն անոնք ապստամբ պիտի նկատուին եւ պիտի մահուամբ պատժուին: Ֆրանսա հաւանական չէ որ մեկնի, որով [«]կռուողներու մեկնելով ժողովուրդը անպաշտպան եւ անդէկ կը մնա[»]ն ճիշդ չէ: Անոնց մեկնելով միայն Ֆրանսայի մօտենալու կամ զայն ապահովելու նախաքայլը առնուած կ'ըլլայ:

Տիար Արամ Ճիւնպիշեան յայտնեց իր համամտութիւնը Ամատունիի, վստահութիւն յայտնեց թէ՛ Ֆրանսացիք եւ թէ՛ Թուրքերը ջարդ չպիտի ընեն եթէ կռուող ուժերը քաշուին, վասնզի երկուքն ալ Հայ կռուողներու մէջ կը տեսնան Հայաստանի համար կռուողներ եւ իրենց տիրապետութեան այս մրցակիցներուն չեն հանդուրժեր: Յետոյ յայտնեց թէ ինքն դէմ էր շատ մը պետութիւններու հետ միանգամայն բանակցելու քաղաքականութեան եւ ըսաւ թէ միակ պետութենէ մը պէտք է սպասենք մեր օգնութիւնը:

Տիար Հայկ Խօճասարեան կարծիք յայտնեց թէ մենք շատ կը չափազանցենք մեր դերը, որ աննշան է եւ անկարելի: Եւրոպա մեզի կարեւորութիւն չի տար: Եթէ Կիլիկիոյ մէջ ջարդուեցանք, հաւանօրէն գոհ գացինք այն պայքարին, որ Անգլիա եւ Ֆրանսա կը մղէին Կիլիկիոյ շուրջը: Մոռցուած չէ անշուշտ Անգլիացի սպաներու յայտարարութիւնը, երբ Նոյեմբերին կը պարպէին Սուրիան եւ Կիլիկիան: Անոնք ըսած էին թէ մենք դարձեալ պիտի գանք հոս, սակայն ատերակ պիտի գտնանք, եւ ասի այդ էր որ կը կատարուէր:

Հայոց ֆիզիքական գոյութեան տեսակէտով պէտք է գոհ ըլլալ որ Կիլիկիա Թուրքիոյ ձգուած է: Ջարդի վտանգ այլեւս չի կրնար ըլլալ:

Ջարդը պատահեցաւ հոն ուր օտար տիրապետութիւն կար. իսկ հոն ուր մենք եւ Թուրքերը առանձին ենք, ջարդ երբեք չեղաւ: Թուրքերը հիմա ունին այն քաղաքական գերագանց հասունութիւնը, որ գիտեն թէ արդի պայմաններու մէջ ջարդ մը ի՞նչ կրնայ արժել իրենց: Անգամ մը որ որոշուի թէ Կիլիկիա Թուրքիոյ կը մնայ, այլեւս Թուրքերը հոն ջարդ չեն ընէր: Վտանգը միայն կոռուդ դասակարգին դէմ է, զոր պէտք է հեռացնել:

Տիար Սեդրակ Գարեան կարծիք յայտնեց թէ Հայ ժողովուրդը պէտք է իր շահերը պատշաճեցնէ աշխարհի հզօրներու շահերուն, սակայն երբեք համամիտ չեղաւ այն գաղափարին, թէ կարելի էր հաշտութեան կամ իրաւախոհութեան եզր մը գտնել Թուրքերու հետ: Թուրքերը հնուց ի վեր միայն մէկ քաղաքականութիւն ունեցած են այլացեղ ժողովուրդներու նկատմամբ՝ որ է բնաջնջել զանոնք: Այս պայմաններու մէջ մտածել թէ Թուրքը այլեւս չպիտի ջարդէ սխալ մըն է: Կը կարծէր կոռուդները քաշելով Թուրքերու այս նպատակին ծառայած պիտի ըլլայինք, ուստի համամիտ չէ այդ կարծիքին, զի անպատճառ Թուրքերը դարձեալ պիտի ջարդեն:

Եւ եթէ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը կ'ընդունուի եւ պէտքը կը խոստովանուի, անգամ մը եւս անհրաժեշտ է որ կոռուդները հոն մնան: Յետոյ առարկեց թէ եթէ Կիլիկիոյ ժողովուրդը չհամակերպի մեր որոշումի[ն] եւ չուզէ Կիլիկիոյ վրայ մեր ունեցած յաւակնութիւններէն հրաժարիլ, ի՞նչ պիտի ըլլայ: Անհրաժեշտ է որ կոռուդներու ընծայուի ամէն օժանդակութիւն կոիւր շարունակելու համար: Արդէն կ'ըսուի թէ Ամերիկայի մէջ բանակ կը կազմուի օգնութեան գալու համար Կիլիկեցոց: Մենք չենք կրնար Կիլիկիայէն հրաժարիլ: Ֆրանսա կ'ուզէ Կիլիկիոյ մէջ շահեր ապահովել եւ որովհետեւ ուղղակի չի կրնար տիրել, կ'ուզէ երկրորդ ձեռքերով գործել: Այսօր Ֆրանսացիներու եւ Թուրքերու շահերը համաձայն են, ուստի մենք կը տուժենք, սակայն վաղը այդպէս չպիտի ըլլայ:

Այսօր ուժը Թուրքերը կը ներկայացնեն, ուստի Ֆրանսացիք անոր վրայ կը յենուն: Եթէ վաղը Հայերը ուժ ներկայացնեն, Ֆրանսացիք Հայոց վրայ պիտի յենուն քան այլոց: Հետեւաբար Հայերը հոն պէտք է ուժ կեդրոնացնեն:

Տիար Յ. Ամատունի եւ *Տօթթ. Նազաշեան* յաջորդաբար խօսք առնելով պարզեցին թէ արդէն այսօր Կիլիկիոյ մէջ ուժ գոյութիւն չունէր, եւ ժողովուրդն է որ անկանոն կռիւով մը իր գոյութիւնը կը պահէ ճարահատ: Պաշար գոյութիւն չունի եւ ուշ կամ կանուխ անոնք ալ պիտի հարկադրուին անձնատուր ըլլալ կամ սովէն մեռնիլ:

Օգնութիւն հասցնելու ալ կարելիութիւն չկայ եւ Ֆրանսա ալ չի թողոր որ այդ տեսակ ձեռնարկ մը ըլլայ:

Տ. Յովսէփ Վրդ. Տ. Մարգարեան առաջարկեց կոռուդները ետ քաշել եւ ինքնապաշտպանութիւնը զօրացնել եւ որովհետեւ

դիւանագիտութիւնը կեղծիք մըն է, արտաքուստ եթէ ոեւէ համաձայնութիւն կարելի է՝ գոյացնել Ֆրանսացոց եւ Թուրքաց հետ:

Տիար Յ. Պահրի հակառակ խօսեցաւ Թուրքերու հետ համաձայնութեան. իսկ պնդեց թէ Ֆրանսա մեր յայտարարութեան անկեղծութեան չպիտի հաւատայ որքան որ ալ ապահովել ուզէք: Եթէ դաշնագրին մէջ յիշատակուած փոքրամասնութեանց իրաւունքը իրապէս պիտի ապահովուի՝ լաւ, սակայն եթէ խօսք պիտի մնայ...:

Անիկա եղած առաջարկները գործնական չէր գտնար եւ միակ յոյս մը կը նշմարէր, ան ալ Ամերիկեանի փոխարինող *մանտա* մը, վասնզի Ամերիկեան մանտան եթէ իրականանար, Կիլիկիան ալ պիտի կցուէր Հայաստանի: Միակ լուծումը կը համարէր Անգլիոյ միջոցաւ *Գանատայի մանտան* խնդրել:

Տիար Սեդրակ Գարեան կարծիք յայտնեց թէ եթէ Ֆրանսա չպիտի քաշուի Կիլիկիայէն, աւելորդ է հոն ուժ պահել, իսկ եթէ Ֆրանսա քաշուի, քանի որ կ'ուզէ իր ազդեցութիւնը պահել Կիլիկիոյ վրայ, եթէ հոն հայերը ուժով ըլլան՝ Ֆրանսա կ'օգնէ:

Տիար Յ. Ամատունի մերժեց այս կարծիքը թէ Ֆրանսա կ'օգնէ Հայոց կամ ուրիշ օգնող մը կ'ըլլայ: Պաթումի մէջ մեր օդանաւերը վար դրած են եւ չեն տար Հայ բանակին, մտածելով որ Հայերը գերակշիռ ուժ չունենան: Ժողովուրդին ֆիզիքական գոյութիւնը պահպանելու համար պէտք է համոզել եւ հաւաստիացնել Ֆրանսան թէ մենք կը հրաժարինք Կիլիկիայէն:

Տիար Դաւիթ Տ. Մովսէսեան համամիտ գտնուեցաւ Տիար Յ. Ամատունիի սա տեսութեան թէ պէտք է համոզենք Ֆրանսան թէ քաղաքական յաւակնութիւններ չունինք Կիլիկիոյ վրայ եւ ասկէ առաջ ասանկ ձգտում մը ունենալով սիսալ մը ըրած ենք: Յետոյ Թուրքերու հետ համաձայնութեան մը անկարելիութիւնը չտեսաւ: Սիսալ է թէ, ըսաւ, Թուրքերու պատմութիւնը մեզի վստահութիւն չի ներշնչէր:

Թէեւ այդ պատմութիւնը փակուած է այլեւս, սակայն անիկա ընդհակառակը վստահութիւն կրնայ ներշնչել, եթէ մինչեւ ասկէ [առաջուն] 30-40 տարիներու մասը նկատի առնենք:

Իսկ անկէ յետոյ, եթէ անոնք անվստահելի դարձան, պէտք է մենք ալ խոստովանինք թէ սխալներ գործեցինք եւ Թուրքերու զայրոյթը գրգռեցինք: Հետեւաբար ոեւէ պատճառ չկայ որ ժամանակաւոր համաձայնութիւն մը չգոյացնենք անոնց հետ:

Մեզի համար մէկ սկզբունք միայն կայ, ոչ մէկուն բարեկամութեան վստահիլ եւ ոչ մէկուն դէմ թշնամանալ:

Մենք գործիք եղանք մինչեւ հիմա Ռուսաց, Ֆրանսացոց եւ Անգլիացոց, ասկէ յետոյ պէտք չէ ըլլանք:

Տիար Հայկ Խօճասարեան դիտել տուաւ թէ Պատրիարքը արդէն քայլ մը առած է կռուողներու ետ առնուիլը պահանջելով: Մենք հիմա չենք

կրնար հակառակը որոշում տալ: Դժբաղդություն մըն է [որ] ընդհանուր ներդաշնակություն մը չկայ ազգին մէջ: Ատանա անջատ կը գործէ, Բարիզ անջատ, Կ. Պօլիս անջատ եւ քաղ. կուսակցութիւնները անջատ կը գործեն:

Ազգապետ Բրօֆ. Պէզճեան դիտել տալով որ արդէն ժամանակը լրացած է եւ կարելի չէ որոշ եզրակացութեան մը հասնիլ, ուզեց որ ամէն մէկ կուսակցութիւն արտայայտէ իր տեսակետը գլխաւոր երկու խնդիրներու համար:

Ա. Կիլիկիոյ Հայոց ֆիզիքական գոյութիւնը պահպանելու համար ի՞նչ կը մտածէ:

Բ. Թուրքիոյ հետ համաձայնութեան մը գաղափարին վրայ ինչ կը խորհի:

Ռամկավարներու կողմէ *Sopp. 3. Թօփճեան* պարզեց իր կուսակցութեան տեսակետը, որ էր՝ 1. Ինքնապաշտպանութեան միջոցները պահպանել մինչեւ Կիլիկիոյ Հայոց քաղաքական վիճակը եւ ֆիզիքական գոյութիւնը ապահովուէր: 2. Քաղաքական կացութեան փոփոխութիւնները նկատի առնելով բանակցիլ պետութեանց հետ փոքրամասնութեանց ապահովութեան մասին երաշխաւորութիւններ ձեռք բերելու համար, եւ 3. Թուրքերու հետ բանակցիլ, սակայն միայն օտարներու երաշխաւորութեան տակ զինաթափ ըլլալ:

Ս. Դ. Հնչակեաններու կողմէ *Տիար Սեդրակ Գարեան* կ'առաջարկէր՝ 1. Ուժեղ կերպով զարկ տալ Կիլիկիոյ ինքնապաշտպանութեան, նիւթական-ֆիզիքական-բարոյական ամէն տեսակ օժանդակութիւն հասցնելով կռուող Հայութեան: 2. Ոչ մէկ ձեռով ու կերպով չժողովնալ Թրքօ-Հայ համաձայնութեան՝ ըլլայ տեսականօրէն կամ ժամանակաւորապէս: 3. Ունէ գնով չհրաժարիլ Կիլիկիոյ վրայ ըլլալիք մեր պատմական ու ազգային իրաւունքներէն: Ըլլալիք զիջումը պիտի ըլլայ առառաւելն մինչեւ 1916ի Պ. Պրիանի եւ Պ. Պօղոս Նուպարի միջեւ կնքուած համաձայնութիւնը⁶⁰:

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ *Տիար Յ. Ամատունի* կ'առաջարկէր նկատի ունենալով որ Կիլիկիոյ աղէտներուն ամենագլխաւոր պատճառը եղած է Հայ ժողովուրդին քաղաքական ցանկութիւնները Կիլիկիոյ հողամասին վրայ, ազգային իշխանութիւնները պէտք է որ ամէն գնով Ֆրանսական իշխանութեան մտքին մէջէն ջնջեն վերոյիշեալ կասկածը ի՞նչ միջոցներով որ հնարաւոր է: Հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան պաշտպանութեան տեսակետէն ինքնապաշտպանութիւնը շարունակել առանց քաղաքական նպատակներ հետապնդելու:

Իսկ Թրքաց համաձայնութեան մը համամիտ չէր Դաշնակցութիւնը նոյնիսկ Կիլիկիոյ Հայոց գոյութիւնը պահելու համար, միայն թէ տեղւոյն վրայ, տեղական միջոցներով կրնային մասնակի կարգադրութիւններ ըլլալ:

Ազատական-Ազգայնականներու կողմէ Տիար *Արամ Ճիւմպիւշեան* կատարեալ համամտութիւն կը յայտնէր դաշնակցական տեսակետին եւ հաւատք՝ թէ Ֆրանսա Կիլիկիայէն չպիտի քաշուի: Հակառակ պարագային, եթէ անկարելին պատահէր, այն ատեն իրենք համամիտ էին որ Թրքաց հետ առերեւոյթ համաձայնութիւն մը գոյացուէր:

Տիար *Յակոբ Պահրի* իբր անձնական կարծիք կրկին պահանջեց որ արձանագրուի իր տեսութիւնը թէ իբր միակ ելք պէտք է Անգլիոյ դիմել եւ անոր միջոցաւ Գանատայի *մանտան* պահանջել Հայաստանի [համար]:

Ժողովը փակուեցաւ ժամը 1ին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ http://en.wikipedia.org/wiki/Amasya_Circular , 17 Յունիս 2014ի ժամը 11:15ի դրութեամբ:
- ² Համաժողովին ընդունած որոշումներու մանրամասնութիւններուն համար տեսնել՝ Ռ. Գ. Սահակեան, *Թուրք-Ֆրանսիական Յարաբերութիւնները Եւ Կիլիկիան 1919-1921 թթ.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1970, էջ 42-48:
- ³ Նոյն, էջ 51-52:
- ⁴ http://en.wikipedia.org/wiki/Amasya_Protocol , 10 Ապրիլ 2015, ժամը 11:43ի դրութեամբ:
- ⁵ Սահակեան, էջ 79:
- ⁶ Հետաքրքրական է հետեւեալ մէջբերումը, զոր կը կատարենք Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի ատենապետութիւնը ստանձնած բժիշկ Գրիգոր Դաւիթեանի 295 թուահամարով 7 Հոկտեմբեր 1919 թուակիր նամակէն. «...*Թուրքիոյ մէջ սկսած նոր «միլլի» շարժման տեղեակ էր անշուշտ. ասոր պարագլուխը եղող Մուստաֆա Բէմալի մասին գրած եմ արդէն: Այդ շարժումը կայծակի արագութեամբ տարածուեցաւ եւ հասաւ մինչեւ Իզմիր. կեդրոնական կառավարութիւնը բոլորովին կղզիացած, ստիպուեցաւ տեղի տալ եւ անոր յաջորդեց նոր նախարարութիւն մը, որ կ'երեւի չ'զոհացներ զիրենք եւ նոր պայմաններ ու փոփոխութիւններ կը պահանջեն: Կարծեմ գաղտնիք մը չ'է այլեւս որ եղածը իրօթհատական շարժում մըն է միլլի անուան տակ, եւ արդէն այսքան շուտ տարածուած ըլլալն իսկ ապացոյց է թէ իրօթհատականներն են որ իբր թէ գունափոխ մէջտեղ ելած են եւ չպիտի զարմանամ եթէ մօտ օրէն իշխանութիւնը բոլորովին ձեռք անցունեն. ինչ պիտի ըլլայ հետեւանքը. նոյնը ինչ որ եղած է մինչեւ այսօր. հրապուրիչ ծրագիրներ, մեծամեծ խոստումներ, յետոյ յարմար առիթը ներկայացածին պէս հայածանք եւ ջարդ...»:*
- ⁷ Զաւէն Արքեպս., *Պատրիարքական Յուշերս - Վաւերագիրներ Եւ Վկայութիւններ*, Հրատարակութիւն թ. 7 Մտաւորական Սպասարկութեանց Գրասենեակի, Տպ. Նոր Աստղ, Գահիրէ, 1947:
- ⁸ Զինադադարէն ետք, վերապրող հայերու Կիլիկիա վերադարձով, հայերը Կիլիկիոյ մէջ կրկին կազմած էին մեծամասնութիւն՝ կիլիկեբնակ զանազան ազգային խմբաւորումներ անջատաբար եւ իրենց կրօնական պատկանելիութենէն անկախաբար նկատի առնելու պարագային, ինչպէս կը

պարզեն մէկէ աւելի աղբիւրներ (Սահակեան, էջ 109-110. նաեւ՝ Բիւզանդ Եղիայեան, *Շամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972*, Անթիլիաս, 1975, էջ 82-83. նաեւ՝ Աւետիս Եափուճեան, *Հայ ժողովուրդին Անկախութեան Պայքարը Կիլիկիոյ Մէջ 1919-1921 ԹԹ.*, Գահիրէ, 1977, էջ 250-259):

⁹ Անհրաժեշտ է նշել թէ հայերը ճնշելու եւ կոտորելու քաղաքականութիւնը յառաջ կը տարուէր ամէնուր: Հոս տալու համար այս հաստատումը ապացուցող մէկ օրինակ միայն, տեղին պիտի ըլլայ մէջբերել Պարտիզակի Հայ Ազգային Միութեան կողմէ 6 Մարտ 1920ին Թուրքիոյ Հայոց Պատրիարքական Տեղապահ Մեսրոպ Եպսկ. Նարոյեանին ուղղուած նամակը, որ կը կրէ L997 թուահամարը: «*Հայերուս հանդէպ թուրք կառավարութեան գծած ջնջումի վաղածանօթ ծրագրին հետեւանքով, նախաքտրեան մեր կեանքին մէջ, արդէն շրջապատուած էինք իսլամներու հոծ բնակչութեամբ: Այն ատեն, շարունակ ասեղի, յաճախ դանակի հարուածներ կ'ընդունէինք ու միայն համբերութեամբ կը պատասխանէինք:*

Քաղաքակիրթ աշխարհը ցնցող Հայուն տարագրութիւնը եկաւ մեր բազմահայ շրջանակը եւս անխնայ կոտորակել: Ու 10000 զուտ հայնոց Պարտիզակը, զինադադարէն ետք բեկորներու հաւաքումով, հազիւ այսօր 1500 հոգի կը համրէ իր կիսաքանդ տուններուն մէջ:

Վերապրողներս, Համաձայնական ազատաբեր դրօշին հովանիին տակ, մեծ հաւատքով ու հաստատուն վստահութիւնով, եկանք ամփոփուիլ մեր օճախներուն շուրջը, սուգն ու կսկիծը մեր սրտին, վերստին նուիրուելու համար կեանքին, որ Հայուն համար եղած է միշտ ծառայութիւն քաղաքակրթութեան:

Հիմա որ 15 ամիսէ ի վեր ետեւէ ենք՝ Ազգերու ընտանիքին իբր մէկ Անդամը մեր այդ շինարար աշխատանքին, չունէի՞նք իրաւունք այլեւս ձգուելու հանգիստ մեր գործին, չունէի՞նք իրաւունք Թուրքիոյ սրտին վրայ յաղթածաճան Դրօշէն սպասելու անդառնալի պատգամը՝ թէ վճռապէս տէր ենք այլեւս մեր պատիւին, մեր կեանքին, մեր ինչքին:

Բնչո՞ւ այս յաղթական Դրօշին առջեւ խոնարհաբար ծոող պարտուածը պիտի շարունակէ դարանակալ սպասել մեզի: Այս վերադարձի ամիսներուն քանի՞ քանի՞ զոհ իլէց մեզմէ, ըլլա՞յ աշխատանքի ճամբուն վրայ, ըլլա՞յ հարեւան գիւղերուն մէջ: Ասոնց բոլորին դարձեալ պատասխանեցինք համբերովին: Ու, ո՛չ մէկ թուրք կրնայ այսօր մեր մաքուր ճակտին նետել թրքասպանի մը անունը:

Իսկ վերջին օրերս, Սրբազան Հայր, խիստ դառն է մեզ յայտնել, Պարտիզակը մինչեւ Ասլանպէկ շրջապատող մութ ուժերը՝ ա՛յն աստիճան լեցուած, պատրաստուած, շղթայաւորուած են, որ մէկ ազդանշանի մը վրայ, զսպանակէ մղուած պիտի թափին մեր վրայ վանտալապէս, ու պիտի լմնցնեն ինչ որ կիսատ մնացած է իրենց ճիւղային ծրագրէն:

Ատոր օրինակը տուին դեռ քանի մը օր առաջ, երբ տեղաբնակ թուրքերէ ծնունդ առած սուտ զրոյցի մը վրայ, Ս. Մինասի կոնակին բնակող իսլամ լազերէ մօտ 200ի բազմութիւն մը, ոտքէն գլուխը զինուած, մինչեւ 1 մղոն հեռու գիւղիս կը մօտենան, ինչ որ իսլամ խանութպաններ մեր մէկ ժողովին մէջ որոշապէս հաստատեցին իրենց բերանով: Լազերը, անկէ առաջ, արեւմտակողմի

կիրճիներուն՝ իրենց հետ գործակցարար յարձակելու համար՝ հրաւեր դրկած ըլլալով, երբ յարձակման ժամի մասին սխալ իմացութիւնով անոնք ուշ կը մնան, կ'որոշեն ետ դառնալ, ուրիշ ատենի թողելով իրենց դիւային ծրագիրը:

Միւս կողմէ, թշնամին, իր խելքով Համաձայնական սուր աչքերէ հեռի թաքուն վայրերու մէջ, միլլիճիի գինուորական պատրաստութիւն կը տեսնէ. շարունակ, պարկերով ռազմանիւթ կը փոխադրէ մեր շուրջի իսլամ գիւղերը. ու պօլթօթ մըն ալ, տարբեր կողմէ, արդէն սկսած են գործադրել սպառող ժողովուրդին դէմ: Դարձեալ, թաքնամիտ միւտիքին խորհրդաւոր պտոյտները կը հաստատեն մեր կասկածն ու վախը:

... Ժողովս, յանուն Պարտիզակի եւ շրջականերու վերապրող Հայութեան, օրուայ կացութեան ի դարման՝ հրամայական անհրաժեշտութիւն ընդունեց եւ պարտականութիւն տուաւ իր պատուիրակներուն.- մէկը՝ իր Ա. Ատենապետը՝ Պ. Պողոս Գուրեան, եւ երկրորդը՝ Պ. Արամ Գըմպըլեան-, որ անձամբ եւս շեշտեն այդ մեծ կարիքը. այն է՝ Համաձայնական Ուժերէն խնդրել որ եթէ հնարաւոր չէ խլեակներուս փրկութեան համար գոնէ 50 զինուոր յատկացնել, այն ատեն՝ իրենց յաղթական Դրօշակին սիրոյն, պատիւին եւ փառքին համար, հաճութիւն ունենան մեզի տրամադրելու զէնքեր եւ մօտ 500 հոգի մեզմէ զինել, այսպէս միանգամ ընդ միշտ ապահովելով մեր ինքնապաշտպանութիւնը:

Ժողովս, իր կողքին գտնուող Հայ ժողովուրդին պատիւովը, կը խոստանայ նոյն զէնքերը ետ վերադարձնել Համաձայնական իշխանութեան հրամանին, ո՛ր պահուն ալ պատահի ատիկա»:

¹⁰ Պատրիարքական դիւանաթուղթերուն մէջ կայ Բ930 թուահամարը կրող խօսուն փաստաթուղթ մը, ուր կը նկարագրուի թէ ինչպէս 1919ի Յունիսի վերջերը Հալէպէն Մարաշ այցելած ֆրանսական ներգաղթի պետը «...հաճելի վերաբերում մը ունեցած է Հայերուն հանդէպ, վարժարանը այցելած ատեն սեւ տախտակին վրայ «Կեցցէ Հայաստան» գրած է եւ յետոյ հարցուցած է Հայերուն թէ ցեղագրական եւ աշխարհագրական տեսակետով Մարաշ Կիլիկիոյ թէ Սուրիոյ մաս կը կազմէ եւ յամառօրէն փափաք յայտնած է որ Հայերը իրեն ստորագրեալ գրութիւն մը յանձնեն, յայտարարող թէ Մարաշ Սուրիոյ մաս կը կազմէ, եւ այդ մասին շատ պնդած եւ ըսած ալ է թէ դուք շատ պիտի վնասուիք եթէ այժմէն իսկ չընդունիք այդպիսի յայտարարութիւն մը:

Արփիարեան Գերապայծառ այդպիսի յայտարարագիր մը յանձնէր է քօլօնէլին, բայց յետոյ ուրիշ Հայ կաթողիկ վարդապետի մը պնդումին եւ սպառնալիքին վրայ, Արփիարեան ստիպուէր է այդ յայտարարագիրը ետ առնել քօլօնէլէն...»:

¹¹ Կը կրէ Ը559 համարը:

¹² Պողոս Նուպար (1851-1930):

¹³ Հայ Ազգային Պատուիրակութիւնը նշանակուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեանցի կողմէ: Անոր խնդիրն էր Համաշխարհային Առաջին Պատերազմին մասնակցող Դաշնակից Տէրութիւններուն (սկզբնապէս Անգլիա, Ֆրանսա եւ Ռուսիա) մօտ բանակցութիւններու ճամբով պաշտպանել հայկական շահերը:

¹⁴ Սահակ Բ. Խապայեան (1849-1939), Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

- ¹⁵ Միհրան Տամատեան (1863-1945) Հայ Ազգային Պատուիրակութեան կողմէ Կիլիկիա առաքուած էր ամբողջական Հայաստանի լիազօր ներկայացուցիչի հանգամանքով:
- ¹⁶ Հայ Ազգային Միութիւն անուան տակ Համաշխարհային Ա. Պատերազմի շրջանին նախ Եգիպտոսի եւ ապա Միացեալ Նահանգներու մէջ կեանքի կոչուած մարմինները, որոնք հետզհետէ պիտի կազմուէին նաեւ զանազան հայաբնակ շրջաններու մէջ, կը բաղկանային յարանուանութիւններու եւ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներէն եւ չէզոք անձնաւորութիւններէ՝ ուղղութիւն տալու համար հայոց ինքնապահպանութեան աշխատանքներուն:
- ¹⁷ Édouard Brémond (1868-1948), 1919ի Յունուարէն մինչեւ 1920ի Սեպտեմբերը վարած է Կիլիկիոյ ընդհանուր կառավարիչի պաշտօնը: Ան 1921ին իր յուշերը պիտի յանձնէր *Revue des Études Arméniennes*-ի: Յուշերը նոյն տարին պիտի հրատարակուէին 368 էջ գրաւող առանձին հատորով, *La Cilicie en 1919-1920* խորագրով Փարիզի մէջ, հրատարակութիւն՝ Ազգային Տպարանի:
- ¹⁸ Թրքական Միութիւն եւ Յառաջդիմութիւն (Իթթիհատ վէ Թերաքքը) կուսակցութիւնը, որ 1889ին հիմնուած էր իբրեւ զաղտնի խմբակցութիւն, հետզհետէ պիտի դառնար թրքական քաղաքականութիւնը ձեւաւորող մղիչ ուժը եւ առ այդ կրէր գլխաւոր պատասխանատուութիւնը Հայկական Յեղասպանութեան կազմակերպման:
- ¹⁹ François Marie Denis Georges-Picot (1870-1951) ֆրանսացի այն դիւանագէտն էր, որ անգլիացի Մարք Սայքսի հետ հեղինակած էր "Սայքս-Փիքոյի Համաձայնագիր" անունով ծանօթ եւ Համաշխարհային Ա. Պատերազմէն ետք երբեմնի օսմանեան տիրոջները Դաշնակից Տերութիւններուն միջեւ բաժնող ծրագիրը:
- ²⁰ Մերսինի զինուորական կառավարիչ Anfré:
- ²¹ Pierre-Jean Daniel André Մարաշ տեղադրուած ֆրանսական ջոկատի հրամանատարն էր:
- ²² 1918ին Հայկական Լեզէոն անուան տակ գործել սկսած հայ զինուորները սկզբնապէս մաս կը կազմէին Մարք Սայքսի եւ Ֆրանսուա Ժորժ-Փիքոյի հետ Հայ Ազգային Պատուիրակութեան (Հոկտեմբեր 1916) եւ Սուրիական Կոմիտէի գլխաւոր դէմքերուն ունեցած բանակցութիւններուն հետեւանքով ի վերջոյ ստեղծուած Արեւելեան Լեզէոնին, որուն կազմութիւնը կը պաշտօնականացուէր 1916ի Նոյեմբեր 15ին: Մանրամասնութիւններու համար տեսնել՝ Տիգրան Յ. Պոյաճեան, *Հայկական Լեզէոնը – Պատմական Յուշագրութիւն*, Ուոթթթաուն, Մեսէչուսէց, Պայքար Հրատ., 1965, էջ 7-16:
- ²³ *Արեւ* օրաթերթի 24 Հոկտեմբեր 1919ի համարով «Եղէոնը Դարձեալ Գլուխ Կը Յցէ Կիլիկիոյ Մէջ» խորագրով հրատարակուած նիւթը կը նշէ թէ Ատանայի թուրք աւագանիին միջոցներով զինուած ձիաւոր չէթէներ սուրբ անցուցած են հայաբնակ Շէյխ Մուրատ գիւղի բնակչութիւնը: Դէպքը կը թուի պատահած ըլլալ Հոկտեմբերի առաջին կիսուն: Դէպքին մասին Համազգային Ժողովի 29 Հոկտեմբեր 1919ի ատենագրութեան մէջ (Թ740 համար վաւերագիր) կը կարդանք. «Ս. Պատրիարքը Ատանայի Առաջնորդին նամակը հաղորդեց որով

տեղեկություն կուտար Շելյա-Մուրատ գիտի ջարդին եւ շրջակայից մէջ պատահած մասնակի սպանություններու մասին»:

- ²⁴ Henri Joseph Eugène Gouraud (1867-1946), ֆրանսական Արեւելեան Բանակի հրամանատարը, 1919ին սկսեալ զանազան հանգամանքներով Միջին Արեւելքի մէջ վարած է Ֆրանսայի գաղթարարական գործունէությունները եւ 1920ին նշանակուած Սուրիոյ եւ Լիբանանի Բարձր Քոմիսէր:
- ²⁵ Նամակագիրը՝ Մուշեղ Սերոբեան, իր *Դիտումներ Եւ Դատումներ* գիրքին մէջ (Պէրյուօ, Տպ. Ազդակ, 1932, էջ 139-140) պատմելով նոյն միջադէպը, որ տեղի ունեցած է 1919ի Դեկտեմբեր 10ին, կը նշէ թէ երբ տիկին Պրեմոնի բարեկամուհի «ծանօթ տիկին մը» ցաւ կը յայտնէ հայ ներկայացուցիչներու նկատմամբ ցուցաբերուած պաղ ընդունելութեան համար, հիւրընկալուհին «ինքնիրմէն ելած» կը պոռայ անոր երեսն ի վեր. «Կ'ուզէ՞ք որ ձեզի աքսորել տամ Ժենեւային. սպասեցէք, երեք ամիս ետք կը տեսակցինք ձեզի հետ»:
- ²⁶ Պէտք է կարդալ *Թրքական դրօշը*:
- ²⁷ Ընթացիկ կամ առկա գոյավիճակը (լտն.):
- ²⁸ Բնագիրը իբրեւ ծանօթագրություն կը նշէ հետեւեալը. «(1) Col. Brémondի պաշտօնագրէն քաղուած եւ Տիար Տիմիթոսի տեղեկագրին «գաղտնի ընկերություններու[»] խնդիրը դժբախտաբար ստեղծուած է Առաջնորդարանի հետ կապ ունեցող անձերու կողմէ եւ գաղտնապէս տեղեկագրուած Col. Brémondի: Իմ քաղած գաղտնի տեղեկություններուս համաձայն, Ատանայի առաջնորդն ալ պատասխանատուութեան ծանր բաժին մը ունի այդ լրտեսական դաւաճանութեան մէջ»:
- ²⁹ Julien-Claude-Marie-Sosthène Dufieux (1873-1959) 1919ին Կիլիկիա առաքուած էր զլիսաւորելու համար հոն գործելու սահմանուած ֆրանսական ուժերը:
- ³⁰ Թրքական ասացուածք, որ կը նշանակէ վերադարձ կամ կրկնություն հին սովորութեան կամ ընթացքի մը:
- ³¹ Համաշխարհային Ա. Պատերազմի զինադադարի հռչակումէն ետք Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովը իր աշխատանքներուն ձեռնարկած էր 18 Յունուար 1919ին եւ զանոնք իրենց աւարտին պիտի հասցնէր այս նամակի գրութեան թուականէն օր մը ետք, 1920ի Յունուար 21ին, բացման նիստովը Ազգերու Լիկային, որուն հիմնադրությունը Վեհաժողովը որոշած էր 1920ի Յունուար 10ին:
- ³² Կ'ակնարկուի 1916ի Մայիս 16ին եզրակացուած Սայքս-Փիքոյի համաձայնությունը, որ կը վերաբերէր Օսմանեան Թուրքիոյ անդամահատման մանրամասնություններուն:
- ³³ Մեքենայությունները (ֆրնս.):
- ³⁴ Տոկոսային յարաբերութեան (ֆրնս.):
- ³⁵ Գաղթականներ (թրք.):
- ³⁶ 19րդ ծանօթագրութեամբ նշուած Ազգերու Լիկան իբրեւ զլիսաւոր առաքելություն որդեգրած էր համաշխարհային խաղաղութեան պահպանումը՝ ապագինման ճամբով եւ վէճերը բանակցություններով եւ իրաւարարութեամբ լուծելու միջոցով:
- ³⁷ Մենաշնորհները (ֆրնս.):

- ³⁸ Առաւելաբար գերմանախօս բնակչութեամբ Ալզասի շրջանը կռուախնձոր մը եղած է Ֆրանսայի եւ Գերմանիոյ միջեւ եւ անցած՝ ձեռքէ ձեռք: Տուեալ պարագային, Համաշխարհային Ա. Պատերազմի աւարտին, Ֆրանսա 28 Յունիս 1919ին կնքուած Վերսայի Դաշնագրով իրեն կցած էր Ալզասը, ուր փոքրամասնութիւն կազմող ֆրանսախօսներու եւ մեծամասնութիւն կազմող գերմանախօսներու ներկայութիւնը, ինչպէս նաեւ բնակչութեան ազգային զգացումներն ու պատմական յիշողութիւնը բարդ, անկայուն եւ ապագայ անկանխատեսելի արդիւնքներու առաջնորդող վիճակ մը պարզելու կարողականութիւնը կը յուշէին:
- ³⁹ Կը կրէ Շ576 համարը:
- ⁴⁰ Բնագիրը իբրեւ ծանօթագրութիւն կը նշէ հետեւեալը. «Կիլիկեան հայերու թիւը, վերջին տարագրութենէն առաջ, վերը նշանակուած արդի թուանշանին գրեթէ կրկին էր»:
- ⁴¹ Բժիշկ Գարեգին Վարդապետեան (1881-1957), որ 1909ին Պէրլորի Ամերիկեան Համալսարանի ընթացքն աւարտելէ ետք վերադարձած էր իր ծննդավայրը՝ Մարաշ, հետեւողականօրէն գործած է զանազան ազգային մարմիններուն մէջ՝ Մարաշէն Ատանա եւ այնուհետեւ Ալեքսանտրէթէն Լիբանան, ուր եւ մահացած է:
- ⁴² Իբրեւ Մարաշի ինքնապաշտպանական կոնիւնէրու աւարտի թուական կը նշուի 11 Փետրուարը (Աւետիս Եափուճեան, էջ 525):
- ⁴³ Բնիկ մարաշցի բժիշկ Յարութիւն Տէր Ղազարեան (1882-1975) Համաշխարհային Ա. Պատերազմի տարիներուն եղած է բժշկապետը Մարաշի Գերմանական Հիւանդանոցին եւ Կիլիկիոյ պարպումէն ետք, իր ասպարէզին զուգահեռ, զբաղած է Կիլիկիոյ պատմութեամբ եւ տեղագրութեամբ:
- ⁴⁴ Միսիոնար William Nesbitt Chambers, որ շրջան մը Ատանայի մէջ գլխաւորած է Ամերիկեան Բողոքականներու Առաքելութիւնը եւ ականատես եղած Ատանայի 1909ի կոտորածներուն, Կիլիկիոյ պարպումի նախօրեակին կը գործակցէր Ամերիկեան Նպաստամատոյցին հետ եւ 1920 Յունուար 21էն Փետրուար 10ը ընդգրկող ժամանակահատուածի անցուդարձերուն մասին Ամերիկեան Նպաստամատոյցին պիտի դրկէր «վստահելի աղբիւրներէ» քաղուած տեղեկութիւններով լի տեղեկագիր մը (Stanley E. Kerr, *The Lions of Marash: Personal Experiences with American Near East Relief, 1919-1922*, Albany, State University of New York Press, 1973, էջ 255-258):
- ⁴⁵ Մուշեղ Արք. Սերոբեան (1869-1951) իր *Մեր Պայքարը Հայ Ազատագրութեան Ուղիով – Վերլուծումներ Հայկական Հարցին Շուրջ* աշխատութեան (Գահիրէ, Տպ. Նոր Աստղ, 1948), ԺԷ գլուխը խորագրած է «Զինադադարին (1918) Յաջորդող Կոտորածներուն Հանդէպ Համաձայնական Պետութիւններու Պատասխանատուութիւնը» (էջ 281-288):
- ⁴⁶ Գրիգորիս Եպս. Պալաքեան (1875-1934) յետագային իր յուշերը պիտի ամփոփէր *Հայ Գողգոթան – Դրուագներ Հայ Մարտիրոսագրութենէն* խորագրեալ աշխատութեան մը մէջ (Ա. հատորը հրատարակուած Վիեննա, 1922ին, իսկ Բ. հատորը՝ յետմահու՝ Փարիզ, 1959ին):
- ⁴⁷ Արժանապատուութիւնը (Ֆրնս.):

⁴⁸ Պատրիարքական դիւանաթուղթերուն մէջ Ը601 համարակիր փաստաթուղթ մը, որ պատրաստուած է Ատանայի Հայ Ազգային Միութեան կողմէ 20 Յուլիս 1919ին եւ մաս կազմած՝ Կիլիկիոյ վերաբերեալ ամերիկացիներու ներկայացուած հայոց ցանկութիւններուն, կը ներկայացնէ հետեւեալ վիճակագրական պատկերը:

Բաղդատական Յուցակ Կիլիկիոյ Բնակչութեան

Քրիստոնեաներ

<i>Հայեր</i>	<i>150.000</i>
<i>Յոյներ</i>	<i>35.000</i>
<i>Միւրիան[ի]ներ Կաթողիկ եւ Օրթոտոքս</i>	<i>20.000</i>
<i>Քաղղէացի եւ Նեստորականներ</i>	<i>5.000</i>
	<i>Գումար 210.000</i>

Մահմետականներ

<i>Քիւրտեր</i>	<i>20.000</i>
<i>Չէրքէսներ</i>	<i>10.000</i>
<i>Զանազան գաղթականներ</i>	<i>10.000</i>
<i>Թիւրքեր</i>	<i>55.000</i>
	<i>Գումար 95.000</i>

Զանազան կրօնքներ

<i>Եէօրիք, Ավշար, Թիւրքմէն, Չանղըր, կրօնափոխ եղած հայեր</i>	<i>50.000</i>
<i>Ֆէլլահ Անսարի</i>	<i>40.000</i>
<i>Գըզըլ Պաշ</i>	<i>15.000</i>
	<i>Գումար 105.000</i>
	<i>Ընդհանուր գումար 410.000</i>

⁴⁹ Կը կրէ Ժ590 թուահամարը:

⁵⁰ 1921ի Փետրուար եւ Մարտ ամիսներուն գումարուած Լոնտոնի Վեհաժողովը զբաղելէ ետք Սերի Պայմանագրով, զոր քեմալական Թուրքիան կը մերժէր ընդունիլ՝ պատրուակելով թէ ան կնքուած էր Օսմանեան Կայսրութեան եւ ոչ թէ Թուրքիոյ հետ, մասնակից կողմերու հակադիր շահերուն հետեւանքով ջրեց Սերի Պայմանագրին տրամադրութիւնները, որոնցմով կը նախատեսուէր վարչական ինքնավարութեան շնորհումը ֆրանսական ազդեցութեան ներքեւ գտնուող Կիլիկիոյ, ի փոխարէն սեղանի վրայ դնելով պատմական Հայաստանի արեւելեան նահանգներուն մէջ ազգային տան մը կազմութեան առաջարկը, որ ոչ մէկ լուրջ պարտաւորութեան տակ կը դնէր Թուրքիան եւ արդէն շատ չանցած պիտի թաղուէր Լոզանի Խորհրդաժողովի ընթացքին (աւարտած 1923 Յուլիս 24ին):

⁵¹ Շիւղ (թրք.):

⁵² Զաւէն Պատրիարք իր նախապէս յիշատակեալ *Պատրիարքական Յուշերս* հատորին մէջ կը նշէ թէ իր առաջարկով երեք յարանուանութիւններէ ներկայացուցիչներ հաւաքուած և համաձայնած էին կազմել երեք հոգեւոր պետերէն եւ չորս առաքելական, երկու կաթողիկէ եւ երկու աւետարանական ներկայացուցիչներէ կազմուած համազգային մարմին մը՝ պաշտօն ունենալով «*յարաբերական խնդրոց մէջ ի հարկին հաւաքական դիմումներ կատարել եւ ազգային պահանջները ներկայացնել Օսմանեան եւ Համաձայնական*

պետություննց մօտ, ինչպէս նաեւ համազգային բնոյթ ունեցող միւս խնդիրներու մասին խորհրդակցիլ...»: Համազգային Ժողովի առաջին նիստը տեղի ունեցած է 1918 Մարտ 8ին:

⁵³ Ծովակալ John Michael de Robeck (1862-1928) 1919ի Օգոստոսէն ի վեր կը վարէր դաշնակից ուժերու Բարձր Քոմիսերի պաշտօնը:

⁵⁴ 1919-1927 տարիներուն Միացեալ Նահանգներու Բարձր Քոմիսերի պաշտօնը վստահուած էր ծովակալ Mark Lambert Bristolի (1868-1939), որ ինչպէս յայտնի պիտի դառնար յետագային լոյսին եկած նիւթերէ, հակառակած է ամերիկեան հոգատարութիւն վայելելու նկատմամբ հայոց ցանկութիւններուն:

⁵⁵ David Lloyd George (1863-1945), 1916ին ստանձնած էր Անգլիոյ վարչապետի պաշտօնը եւ կարելոք դերակատարութիւն ունեցած՝ Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովի ընթացքին, 1919ին:

⁵⁶ 1920ի Փետրուարին Ուրֆայի մէջ ֆրանսացիներու եւ հայերու դէմ թուրքերու շղթայագերծած յարձակումները դադար պիտի առնէին Ապրիլ ամսուն, ֆրանսացիներու հեռացումէն ետք (Պօյաճեան, էջ 324): *«Ֆրանսացիներու մեկնումէն ետք, հայերը անարգել լծուեցան վերաշինութեան աշխատանքներու, վերակազմեցին Ազգային Միութիւնը... անոնք բաւականին ապահով ապրեցան մինչեւ 1923 թուականը, երբ Քէմալական կառավարութիւնը որոշեց Փոքր Ասիոյ գաւառներէն ընդմիջտ վտարել օտարազգիները»* (Եսփուճեան, էջ 710-711):

⁵⁷ Թիւ 37 ծանօթագրութեամբ նշուած փաստաթուղթը, գոր Ատանայի Հայ Ազգային Միութիւնը խորագրած է «Կիլիկիոյ Հայերու Յանկութիւնները Մատուցուած Ամերիկեան Յանձնախումբին» եւ թուագրած՝ 20 Յուլիս 1919, կը բովանդակէ հետեւեալը:

«Նկատելով որ՝ Կիլիկիան ըլլայ աշխարհագրական, պատմական եւ ազգագրական տեսակէտէն, ինչպէս նաեւ մտատրական եւ տնտեսական, կազմած է միշտ ամբողջացուցիչ մասը Հայաստանին, եւ հակառակ հայաձանքներու, ջարդերու եւ մանաւանդ տարագրութեան՝ որուն ենթարկուեցաւ հայ տարրը եւ այն ջանքերուն՝ որ թուրք կառավարութիւնը ի գործ դրաւ գետեղելու համար քիւրտ, չէրքէս, ֆէլլահ գաղթականներ, որոնք կուգային կայսրութեան ամէն կողմերէն եւ նոյնիսկ Ալժերիայէն եւ Թունուսէն, Կիլիկիան դեռ կը պահէ հիմնովին հայկական գաւառի մը նկարագիրը [տեսնել Կիլիկիոյ ներկայ բնակչութեան բաղդատական մի ցուցակը].

Նկատելով որ՝ Կիլիկիոյ հայերը, միւս գաւառներու հայերու նման այս մեծ պատերազմի շրջանին, իրենց լաւագոյն արիւնը հոսեցին, Ազգային հողին համար իրենց պատմական իրաւունքները արժեցնելու [Հայկական Լեզնոնի գրեթէ ամբողջութիւնը կազմուած էր կիլիկիայի հայերէ՝ որոնք կրուեցան Պաղեստինի եւ Սուրիոյ մէջ Դաշնակիցներու կողքին եւ որոնք այժմ կը գտնուին Կիլիկիոյ մէջ իբրեւ պահակազօրք].

Նկատելով որ՝ Հայերը ընդհանրապէս եւ կիլիկեցի հայերը մասնաւորապէս, երբեք չպիտի համակերպէին որ Հայաստանի զանազան մասերը դրուին զանազան պետութիւններու վարչութեան եւ գօնթօրոյն տակ, այլ ընդհակառակը, կը փափաքին եւ կը պահանջեն հաստատօրէն, որ այսուհետեւ ամբողջ Հայաստանը վայելէ Ազատութեան եւ Անկախութեան միօրինակ ռէժիմ

մը, միայն մեկ պետութեան մը անշահախնդիր եւ արժամանակեայ օգնութեան տակ.

Նկատելով որ՝ իրօք 30 Նոյեմբեր 1918էն սկսեալ Փարիզի Հայ Ազգ. Պատուիրակութիւնը, հռչակած եւ ծանուցած է Դաշնակից պետութիւններու ամբողջական Հայաստանի անկախութիւնը՝ Գիլիկիան ալ մէջը ըլլալով, եւ թէ ռուսահայ հողին վրայ կազմուած Հայկական Հանրապետութիւնը նուիրագործած եւ հանդիսաւորապէս յայտարարած է անցեալ Մայիս 28ին, իր կազմութեան տարեդարձին առթիւ, անլուծելի միութիւնը հայ հայրենիքի ամբողջ մասերու.

Նկատելով որ՝ Հայ Ազգային Համագումարը՝ որ գումարուած էր վերջերս Փարիզի մէջ, մասնակցութեամբ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Գիլիկիոյ ներկայացուցիչներուն, միաձայնութեամբ քուէարկած է որ՝ Ամբողջական Հայաստանի վերակազմութիւնը յանձնուի Ամերիկայի Միացեալ Նահանգներուն եւ թէ՛ Ազգին այս միաձայն փափաքը Խաղաղութեան Ժողովէն եւ նոյնիսկ Միացեալ Նահանգներէն նպաստաւոր ընդունելութիւն մը գտած է.

Նկատելով որ Գիլիկիոյ հայերը առանց խտրութեան դաւանանքի եւ կուսակցութեան համերաշխ եւ Ազգին մնացեալ մասերուն հետ, եւ հիացումն ունին Ամերիկայի համար եւ միեւնոյն վստահութիւնը իր մարդասէր քաղաքականութեան, զերծ կցումի եւ գաղթավայրի յետին մտքերէ.

Այս ամբողջ պատճառներով, մենք իրաւասու ներկայացուցիչներս Գիլիկիոյ հայերուն, կը յայտարարենք եւ հանդիսապէս կը ցանկանք որ Գիլիկիան իրեն բնական սահմաններուն մէջ միանայ եւ դրուի հայ կառավարութեան հետ, ինչպէս մի անբաժանելի մասը Հայաստանի, Ամերիկայի Միացեալ Նահանգներու արժամանակեայ խնամատարութեան տակ.

Մենք խորապէս համոզուած ենք՝ որ Դաշնակից եւ ընկերացող պետութիւնները, որոնք ճնշուած Ազգերու իրաւունքներու եւ Ազատութեանը համար կռուեցան, պիտի գնահատեն հիմնաւորութիւնը մեր միահամուռ բաղձանքներուն եւ մեր Ազգ. Պահանջներուն, նոյն վստահ ակնկալութեամբ մեր ամենախորին երախտագիտութիւնը կը յայտնենք բոլոր Դաշնակից պետութիւններուն, որոնք այս կերպով նպաստաւորած պիտի ըլլան Հայաստանի միացումը եւ անկախութիւնը, եւ մասնաւորապէս Ֆրանսայի եւ Անգղիոյ՝ որոնք զինադադարէն ի վեր Գիլիկեան գրաւումը եւ վարչութիւնը ստանձնելով, զմեզ դրին մեր դարաւոր բաղձանքներուն իրականացման շաւղին վրայ»:

⁵⁸ Պատերազմական նախարար Էնվերի կողմէ 1913ին հիմնուած Յատուկ Կազմակերպութիւնները, որոնք նախակարապետը պիտի ըլլային Թուրքիոյ Ազգային Անվտանգութեան Սպասարկութեան, նպատակ ունէին ապահովել Օսմանեան Կայսրութեան անվտանգութիւնը՝ ճնշելով արաբական անջատողական շարժումները եւ ընդդիմանալով օտար ազդեցութիւններու: Անոնք իրենց ջարդարար բաժինը ունեցան հայկական ցեղասպանութեան իրագործման մէջ: Այս Յատուկ Կազմակերպութիւններու վարիչը, որուն կ'ակնարկուի, կը կոչուէր Հուսամետտին Էրթուրք: Մուսթաֆա Քեմալ Աթաթիւրք զայն պիտի հրաւիրէր գլխաւորելու 1921ին իր հիմնած Ազգային

Պաշտպանության Ընկերություն գաղտնի կազմակերպությունը: Քայլ մը, որ կ'ամրապնդէ Միլլի-Իթթիհատ նկարագրի նոյնության տեսությունը:

⁵⁹ Eleftherios Venizelos (1864-1936) 1910-1920 տարիներուն վարչապետն էր Յունաստանի եւ յունական շահերու պաշտպանության գծով կարեւոր յաջողություններու հասած էր Փարիզի Խաղաղության Վեհաժողովի ընթացքին:

⁶⁰ Կարելի չէ ստուգապէս ըսել թէ ի՛նչ համաձայնության կ'ակնարկուի: Որքան ծանօթ է մեզի, Պօղոս Նուպար Ֆրանսայի Արտաքին Գործերու նախարար Արխաթիտ Պրիանի հետ 17 Մարտ 1917ին ունեցած հանդիպման ընթացքին նախարարէն միայն լսած է թէ տակաւին կանխահաս է որեւէ ապագայ լուծման քննարկումը, բայց թէ հայերը կրնան վստահ ըլլալ թէ պիտի վայելեն Ֆրանսայի համակրանքը (տեսնել մեր թարգմանութեամբ եւ խմբագրութեամբ լոյս տեսած *Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918 – Documents* (Ուոլթիւմ, 1996) աշխատութիւնը, էջ 321-322): Կը տարուինք ենթադրելու, թէ ակնարկութիւնը կրնայ վերաբերիլ 27 Հոկտեմբեր 1916ին Լոնտոնի մէջ Մարք Սայքսի եւ Ֆրանսուա Ժորժ-Փիքոյի հետ Պօղոս Նուպարի ունեցած տեսակցութեան, որ պիտի առաջնորդէր Արեւելեան Լեզեռնի կազմութեան յայտարարութեան: Այդ տեսակցութեան ընթացքին կը քննարկուի Ֆրանսայի վիճակուելիք տարածքներուն մէջ ինքնավար Հայաստան ստեղծելու հարցը եւ Փիքօ կը լիազօրէ Պօղոս Նուպարը այդ ուղղութեամբ իր երաշխիքը յայտնելու լեզեռնը կազմելիք կամաւորներուն (նոյն, էջ 395):

A FEW FRAGMENTS RELATED TO THE CHAIN OF MASSACRES
(SUMMARY)

VATCHE GHAZARIAN
mayrenipublishing@comcast.net

The Armistice, signed on October 30, 1918, in Mudros, found the defeated Turks and victorious Armenians facing one another under the new post-WWI reality. Though defeated, the Turks resisted the dismemberment of the Ottoman territories planned by the Allies, denied the Armenians the right to autonomy or independence on their historic lands, and took up arms to retain their dominance over Cilicia and the Armenian provinces. The rise of the Turkish nationalist movement under Mustafa Kemal and his supporters emboldened the Turks.

The Armenians, on the other hand, had helped Britain and France win the war. Thanks to the contributions of Armenian volunteers, and with the blood they had shed for the Allied cause, they rightfully hoped to have won the right to autonomy and eventual independence.

The conflict of interests, however, was not limited solely to Armenians and Turks. The French, while trying to tighten their grip on Cilicia to the detriment of Armenian aspirations, competed with the British for political-economic gains and for favorable relations with the Turks.

With these conflicting interests in view, France began to disarm the Armenian volunteers and avoid taking decisive actions to curb the rising ambitions of Turks, despite the loss of numerous French soldiers in Turkish attacks. The French policy culminated in the abandonment of Cilicia to Mustafa Kemal and his followers who, according to the Armenians, were no different than the Young Turks.

مؤكداً أن المذابح الكبرى كانت بتدبير اليهود الاتحاديين وأنها امتدت بعد خلع السلطان عبد الحميد واصفاً إياها بأنها إحدى المآسي التي عاشها البلد والذين آمنوا بنصرة المظلوم.

وفي دراسته للواء الزور في العصر العثماني اجتماعياً واقتصادياً يشير عمر صليبي إلى العائلات الأرمنية في دير الزور، وأن بيت لولي منهم كريم لولي الخياط وهو خياط ومن قدامى العائلات المسيحية.

إن تواجد الأرمن في المنطقة وفق صليبي هو قديم، إلا أن تواجدهم الرسمي في اللواء جاء بعد أحداث الأرمن في تركيا بدءاً من عام ١٨٩٠م حتى نهاية الحرب العالمية الأولى، وهم يميلون إلى العمل الصناعي ولهم الفضل في ظهور بعض الحرف في وادي الفرات وتطوير بعضها الآخر.

ويقول: "لقد عامل أبناء لواء الزور كافة الغرباء معاملة حسنة من حيث حمايتهم كما حدث مع الأرمن والزواج منهم وحفظ أعراضهم مثلهم مثل بقية الفئات الأخرى التي لا تزال أسرهم بالمنطقة وتصاهروا مع أهلها ولقد أدى الظلم بأبعاده السياسية والعسف والجور بأبعاده الاقتصادية والسياسية والاجتماعية على المواطنين قانوناً أم أخوة، سلطوياً أم اجتماعياً إلى التأثير في البنية النفسية والسلوكية والتي تمثلت بأفاق متعددة، فالإرهاب وانتشار رجال الخفية والتسلط الحكومي والاجتماعي وانتشار الرشوة والفساد وإرغام الشباب على الذهاب إلى الخدمة الإلزامية خارج حدود اللواء والوطن العربي والطبيعة الصحراوية والأصول الأبوية قادت إلى ترجمة نفسه وصفات سلوكية واضحة حدد فيها التناقض سمة، إذ تجد في أبناء اللواء الثورة السريعة والعصبية إلى جانب الهدوء والصبر كما تظهر الطبيعة والقسوة والثأر والتسامح معاً"^{١٢}.

وفي موضوع تواجد الأرمن في دير الزور ذكرت كذلك صحيفة *الأفكار* في نيسان ١٩١٨ بتفاصيل هامة تسهم في توضيح أسباب تواجد الأرمن في دير الزور، ووصف طرق تعذيبهم والفتك بهم، حيث ذكرت أن الترك أخرجوا ٨٠٠ عائلة أرمنية من قره حصار وأغرقوا نصفهم بإنقلاب الزوارق في نهر الفرات، ولما وصل الباقون إلى دير الزور وضعوا في محلة اعتقال وكان قد سمح لهم عند إخراجهم من قره حصار بأن يأخذوا معهم ما عندهم من النقود، فلما وصلوا إلى دير الزور أخبروا المتصرف في أمر فداء أنفسهم وعرضوا عليه مبلغ ثلاثة آلاف ليرة عثمانية فلم يكتف بهذا القدر وحينئذ جمع الأرمن كل ما كان معهم من النقود فبلغت خمسة آلاف ليرة عثمانية قدموها للمتصرف فقبلها منهم بشرط أن يوقعوا على تعهد. ولكن كل هذا لم ينجهم من مخالب رجال الجندرية الذين رافقوهم في سيرهم، ولما وصلوا بهم إلى مسافة تسعة أميال من المدينة ابتدأت المذبحة بالعصي والحجارة وقليل جداً من العيارات النارية إلى أن أعيى الجلادين التعب فأجلوا الفتك بمن بقي إلى يوم آخر، وفي نهاية الأمر غمزه أحد رجال الجندرية التعيين لكي ينجوا بأنفسهم وكان ظلام الليل دامساً والحرس أقل اكتراثاً فهربت البقية الباقية من ٨٠٠ عائلة وعددها خمسة وخمسون نفساً ونجت بأنفسها.

وأضافت الصحيفة وفق أحاديث رواة أن وصف المذابح كلها كانت تقريباً على نمط واحد فإذا لم يفتك بالمهجرين في الطريق فإنهم يؤخذون إلى مستودع حيث يقيمون أياماً قليلة وهناك يجدون محلة فيها نحو ألفين أو ثلاثة آلاف. ومن ثم يأتي علم من الاستانة بأن الحكومة منحت مهاجري ناحية (مركز) كذا أراض زراعية ويجب بناء على ذلك أن يقوموا إليها فيعودون إلى الرحيل، وفي نصف اليوم الأول من سفرهم يكونون آمنين على نفوسهم لأن القتل "بالجملة" بالقرب من المدن غير ممدوح. ومن الأمثال على ذلك أنه لم يقتل أحد في مدينة طرابزون ولكن بعد أن ترك الأرمن المدينة بأيام قليلة رؤيت جثثهم طافية على وجه مياه النهر. ورأس العين وهي آخر محطة للسكة الحديدية قريبة جداً من العمران فلا يجوز ارتكاب المذابح فيها على الطراز القديم ولكن لا مانع من موت النساء والأولاد جوعاً^{١٣}.

ونخلص إلى أن الباحثين أجمعوا على أن مدينة دير الزور بدأت بالتوسع نوعاً ما في الفترة العثمانية خاصة سنة ١٨٦٧م، وفي سنة ١٩١٥م ازداد عدد سكان المدينة بشكل ملحوظ جداً وتوسعت أكثر بسبب قدوم الأرمن. فبلغ عدد سكانها في أوائل القرن العشرين حوالي تسعة آلاف نسمة، وارتفع في العام ١٩١٠م إلى ما يقدر بـ ١٥ ألف نسمة، وارتفع حجم سكانها في العام ١٩١٥-١٩١٦م بسبب عامل الهجرة الخارجية إليها، إلى ما يقارب ٢٠-٢٥ ألف نسمة، ويعزون ذلك إلى الهجرة القسرية الأرمنية من ولايات الأناضول الشرقية، مؤكداً أنه في العام ١٩١٥م قامت إدارة ولاية حلب بتوزيع اللاجئين الأرمن الذين تدفقوا عليها إلى كل من حماة ودير الزور والجزيرة، فعملياً كان التجميع يتم في دير الزور.

كما تؤكد الدراسات أنه رغم الجانب المأساوي من هجرة الأرمن القسرية إلى دير الزور، إلا أن ذلك انعكس على ارتفاع عدد سكان المدينة، وبالتالي ارتفاع معدل النمو السكاني فيها.

وفي النهاية، نلاحظ أن الباحثين السوريين استخدموا تعبير "السوقيات" لوصف عمليات التهجير القسرية والمذابح التي جرت للأرمن، وأن المصادر العربية والسورية

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՏԷՐ ԶՕՐԻ ՄԷՋ ՀԱՅԵՐՈՒ
ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ՝ ԸՍՏ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՂԲԻՒՆԵՐՈՒ
(ԱՄՓՈՓՈՒՄ)

ՆՈՐԱ ԱՐԻՍԵԱՆ
narissian@hotmail.com

Յողուածը կը լուսաբանէ ԺԹ. Դարավերջ-Ի. Դարասկիզբի Տէր Զօրի իրավիճակը եւ հայերու ներկայութիւնը այնտեղ՝ ըստ արաբական աղբիւրներու:

Ուսումնասիրութիւնը կ'օգնէ ծանօթանալու Տէր Զօրի շրջանին՝ պատմական անուանումէն մինչեւ քաղաքի կազմաւորման եւ հայերու այնտեղ ներկայութեան խնդիրներուն:

Հիմնուելով արաբ, մանաւանդ սուրիական, աղբիւրներու վրայ - որոնք Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան համար բաղկացուցիչ նիւթեր կը համարուին - կը հետազօտուի Յեղասպանութեան օրերուն Տէր Զօրի հայ գաղթականութեան իրավիճակը:

Վերոյիշեալ աղբիւրները տեղեկատուական վկայութիւններու կողքին կը ներկայացնեն սուրիական արաբական տեսակէտը Տէր Զօր բնակութիւն հաստատող հայերու նկատմամբ, մասնաւորաբար՝ Հայոց Յեղասպանութեան առնչութեամբ անոնց դիրքորոշումը:

ՀԱՅՈՑ ԴԷՄ ԳՈՐԾՈՒԱԾ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ
ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵԻԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
artsvi@yahoo.com

Իր աննախադեպ բնոյթի պատճառով Ի. դարի հայ ժողովրդի պատմութեան ամենաողբերգական իրադարձութիւնը՝ ցեղասպանութիւնը, որոշակի արձագանգ է գտել նաեւ Հայաստանից աշխարհագրականօրէն հեռու տարածաշրջաններում: Սակաւաթիւ, սակայն ուշագրաւ տեղեկութիւններ են պահպանուել Ծայրագոյն Արեւելքի կամ Ծայրագոյն Ասիայի երկրներում հայոց դէմ գործուած եղասպանութեան արձագանգների վերաբերեալ, որ առուելապէս վերաբերում է եղեռնից փրկուածներին ցուցաբերած մարդասիրական օգնութեանը:

Սոյն հաղորդման մէջ ի մի են բերուած այն հատուկէնտ վկայութիւնները, որոնք վերաբերում են Ծայրագոյն Ասիայի երկրներում (հիմնականում՝ Չինաստան, Ճապոնիա, Կորէա, Ինդոնեզիա) 1910-1920ականներին հայոց ցեղասպանութեանը վերաբերող իրողութիւններին:

Հարցը մինչ այժմ արծարծել է Սիդնիի Հոլոքոսթի եւ Ցեղասպանութեան Ուսումնասիրութիւնների Հաստատութեան աշխատակից Վիզէն Բարկէնեանը ամերիկահայ *Արմինիըն Ուիկլի* պարբերականում հրատարակած իր յօդուածներում¹:

ԻՐԱԶԵԿՈՒՄ

Թեմայի յիշատակումը պատմաբան-բանասերի մէջ առաջին հերթին գուզորդում է ճապոնաբնակ հայ հրապարակախօս, 1920ին Ծայրագոյն Արեւելքում ՀՀ կառավարութեան կողմից պատուոյ հիւպատոս նշանակուած Դիանա Աբգարի գործունէութեանը, որը քիչ թէ շատ ծանօթ է: Քանի որ այս գործչին մենք արդէն նուիրել ենք մանրամասն ուսումնասիրութիւն², այստեղ հակիրճ յիշենք, որ 1909ի Ադանայի կոտորածներն առիթ հանդիսացան, որպէսզի ճապոնիայում բնակուող ծնունդով հնդկահայ առետրական գործիչ եւ գրող Աբգարը սկսի զբաղուել հրապարակախօսութեամբ եւ քաղաքագիտութեամբ: Նա իր բեղմնաւոր գրիչը ծառայեցրել է Հայ Դատի եւ հայ ժողովրդի վիճակի հանրահռչակմանը եւ լուսաբանմանը, Առաջին Համաշխարհային Պատերազմի նախօրեակին եւ՝ տարիներին հանդէս եկել հայ ժողովրդի մասին դասախօսութիւններով, յօդուածներով, աշխատակցել

Եոկոհամայում հրատարակուող *Japan Gazette* անգլերեն պարբերականին: *Japan Gazette*ի հրատարակչությունը մեկը միւսի ետեւից լոյս է ընծայել Աբգարի անգլերեն գրքոյկները եւ տարածել: Իր գրաւած հասարակական բարձր դիրքի շնորհիւ Աբգարը կարողացել է ազդել 1919ին Փարիզի Խաղաղութեան Համաժողովի ճապոնական պատուիրակութեան վրայ, որպէսզի նա եւս նպաստի հայ դատի բարեյաջող լուծմանը³:

Դիանա Աբգարի գրութիւնները որոշակիօրէն կատարել են իրենց դերը, ճապոնական հանրութեանն իրազեկ դարձրել Հայոց Ցեղասպանութեան իրողութեանը: Հաւանաբար հենց նրա գործունէութեան արձագանգը կարող են լինել հետեւեալ երկու փաստերը: Ճապոնացի հետազօտող, Տոկիոյի Վասեդա Համալսարանի պրոֆեսոր Եոսիօ Սաեկիին 1916ին հրատարակած *Նեստորական Յուշարձանը Չինաստանում* աշխատութեան մէջ, յիշատակելով ԺԹ. դարի վերջին չինացի նեստորականների բնաջնջման փաստը, զուգահեռ է կատարել հայերի հետ՝ մասնաւորապէս նշելով. «*Մենք բաւական համոզուած ենք, որ չինացի նեստորականների շատաւիղներն էին, որոնք անխղճօրէն կոտորուեցին չինական զինուորականների կողմից 1891 թուականին: Այդ 15 հազար չինացի Չինտան Չիաոյի հաւատացողները, որոնք սպանուեցին, անձանօթ եղբայրներն էին խեղճ հայ քրիստոնէաների, որոնք դաժանօրէն կոտորուեցին միեւնոյն ժամանակ Մերձաւոր Արեւելքում*»⁴:

Երկրորդ օրինակը վերաբերում է 1919ին, երբ թուրքական *Թաւֆիք* թերթն աշխարհի չորս կողմից ի վնաս հայոց փաստեր է հաւաքել՝ այդ առթիւ հարցաքննելով նաեւ Կ.Պոլսում գտնուող մի ճապոնացու: Վերջինս պատասխանել է. «*Շատ պատմութիւններ հասկցուցին հայկական ջարդերու մասին: Չեմ կրնար պնդել թէ Թուրքերն անմեղ են: Իր պատմութիւնը ունենալու է այդ. հարկաւ դուք ալ կեցած տեղերնիդ չջարդեցիք եւ: Խառն ցեղերով երկիր մը վարելը դժուար է: Միայն ձեզի խրատ մը տամ: Եթէ չէք ուզեր որ ասկէջ վերջ Եւրոպայի առջեւ ամբաստանութեան տեղի տաք, ջանացէք կարելի եղածի չափ յարմարիլ ոչ-իսլամ տարրերուն հետ*»⁵:

Նշուած իրողութիւններն, անշուշտ, նշանակալից չեն, սակայն ապացուցում են, որ տեղեկատուական դժուարամատչելիութեան պայմաններում ճապոնացի ժողովրդի զաւակներ եւս որոշակի գաղափար են ունեցել հայութեան հետ կատարուող արհաւիրքի վերաբերեալ...

ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1916ից սկսած եղեռնից տուժածներին օգնութեան ձեռք են մեկնել Ծայրագոյն Արեւելքի երկրները, հիմնականում՝ տեղի հայ համայնքների

միջոցով: Յատկապես օժանդակություն է եկել Ինդոնեզիայից, որտեղ եղել է ամենից ստուար եւ կազմակերպուած հայ համայնքը: Մասնաւորապէս Ճաւայի հայերը հանգանակել են 3500 անգլիական ոսկի: Հանգանակութեանը մասնացել են նաեւ կղզու չինացի, անգլիացի եւ հոլանդացի բնակիչները⁶:

Սեբաստիայում Ամերիկեան Քոլէջի ուսուցիչ, ամերիկացի քարոզիչ, վերապատուելի դոկտոր Էոնեսթ Քլարք Փարթրիջը 1917ին մեկնել է Չինաստան, որտեղ քրիստոնէացած չինացիների սեղմ շրջանակում խօսել է հայկական տառապանքների մասին: Ունկնդիրներն այնքան են յուզուել, որ անմիջապէս 20 դոլար են հաւաքել, նոյնքան էլ տուել են դպրոցի աշակերտները, իսկ դպրոցի դռնապանը, որն իր ծննդավայրը վերադառնալու համար բացառիկ գումար է ստացած եղել, հայաջինջ սարսափների պատմութիւնից ազդուելով՝ այդ գումարն ամբողջովին տրամադրել է հայ տուժածներին: Այս մասին Փարթրիջը գեկուցել է 1919ին Սկիւտարի ժողովասարահում, իր հայերէն ելոյթում⁷:

Ուշագրաւ է նաեւ, որ 1920ին, ԱՄՆի չինացի ուսանողների ամսագրի խմբագրականներից մեկում, խօսելով չինացիների՝ իրենց հարեւանների հետ կապերի եւ առհասարակ ազգամիջեան յարաբերութիւնների մասին, աշխարհում ուժեղի եւ թոյլի, արդարի եւ անարդարի մասին, որպէս բնորոշ օրինակ բերուած են հայերը. *«Նայէք հայերին: Հազարաւոր հայեր կոտորուեցին կամ ստրկացուեցին թուրքերի կողմից: Այնտեղ նրանց հիանալի երկիրն աւերուած է դաժան թուրքերի կողմից: Ինչո՞ւ: Նրանք քրիստոնէաներ են: Նրանք չեն վիրաւորել թուրքերին: Նրանք, իհարկէ, ճիշտ են: Նրանք ունեն իրաւունք: Մակայն նրանք չունեն ուժ: Նրանք թոյլ են եւ ընկնում են թուրքերի կոռուկների առաջ: Այդպիսին է համաշխարհային փորձառութեան ողբերգութիւնը: Եւ մենք չենք կարող նախազգուշանալ»⁸:*

1920ին Միջագետքի Հայ Տարագրելոց Յանձնախումբը ձեռնարկել է Բաքուբայի (Իրաք) հայկական որբանոցին օգնելու նպատակով դրամ եւ միջոցներ հայթայթել եւ այդ առաքելութեամբ Հնդկաստան է գործուղել իր ատենապետ Մարտիրոս Գոյումձեանին: Միջագետքի անգլիացի կոմիսար Ա. Թ. Վիլսոնը նամակ է յղել Հնդկաստանի ղեկավար պաշտօնատարներին՝ յանձնարարելով ամեն դիւրութիւն ընծայել Գոյումձեանին: Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Հոնկոնգի, Սինգապուրի եւ Ճապոնիայի հայերի, ինչպէս նաեւ տարբեր ազգութիւնների ներկայացուցիչների առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ Գոյումձեանի առաքելութիւնը պսակուել է յաջողութեամբ: Գոյումձեանը հասել է *«մինչեւ Հնդկաստանի հեռաւոր անկիւններն ու Ովկիանիոյ կղզիները միշտ այն յոյսով թէ աւելի մեծ գումար մը ձեռք ձգել պիտի յաջողէր եւ իրօք ալ նա կը հանգանակէր 395000 ռուբլիի չափ գումար մը, մէջն ըլլալով նուիրուած հազուստեղէններ եւ Առաքել*

*Մարտինեանի նուիրատուութիւնը*⁹: Ուշագրաւ է, որ նուիրատուների մէջ կան նաեւ Մակասարում (Բնդոնեզիա) ապրող 13 չինացիների անուններ, որոնցից տասը նուիրաբերել են 250ական ռուբլի, երեքը՝ 100ական¹⁰: Հոնկոնգից Ա. Թութունճեանը նուիրաբերել է 50 են, Ս. Մանուկը եւ Տիգրան Գրեգորին՝ 25ական, Հարոլդ Լէթը՝ 15 են, իսկ Շանհայից (մայրցամաքային Չինաստան) տիկին Ա. Բագիլը հանգանակել է 30 են¹¹: Ճապոնիայի Կոբէ քաղաքից հանգանակութեանը մասնակցել է ինը հոգի՝ հայ եւ օտարազգի (675 են), Եոկոհամայից՝ տաս, հայերից՝ 222 են, օտարազգիներից՝ 55 են¹²:

Հայ համայնքների կազմակերպած այս տարերային ջանքերին յետագայ տարիներին եկել է միանալու Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Յանձնախմբի աւելի կանոնակարգուած գործունէութիւնը, որն ընդգրկել է նաեւ Ծայրագոյն Արեւելքի երկրները: Յայտնի է, որ 1919ին հիմնուած Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցը մասնաճիւղեր է հիմնել տարբեր երկրներում եւ աւելի քան 110 միլիոն դոլար է հանգանակել ցեղասպանութիւնից փրկուածներին օգնելու նպատակով: *«Երբ 1920ականների սկզբին Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կոմիտէն սկսեց տարբեր երկրներում կազմակերպել այսպէս կոչուած 'Ոսկէ կանոնի' միջոցառումներ, որի ընթացքում լուսաբանում էր Մերձաւոր Արեւելքում պատերազմից տուժածների ներկայ դրութիւնը եւ հանգանակութիւններ էին կազմակերպուում նրանց օգտին, այդ երկրներից անմասն չմնացին նաեւ Չինաստանը եւ Ճապոնիան»*¹³: Եւ ահա, չնայած 1921ի Չինաստանի սովին, Պեկին, Գուանձօ եւ Շանհայ քաղաքներում 1922ին հիմնուել են հայերին նպաստամատոյց յանձնախմբեր: Չինաստանում ճանաչուած ամերիկացի միսիոներ վերապատուելի Էլուուդ Ջ. Թիլքքերին դարձել է Կենտրոնական Յանձնախմբի նախագահ, որը գործել է Շանհայում: Դրանից առաջ ամերիկեան Բնդիանապոլիս քաղաքում միացեալ միջոցառում է կազմակերպուել Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Յանձնախմբի եւ Չինաստանի Սովի Հիմնադրամի կողմից: Տիկին Աննա Ազգապետեանն իր ելոյթում ներկայացրել է Եղեռնից փրկուած գաղթական հայերի կարիքները: Նրա խօսքից խորապէս ազդուած ԱՄՆում չինական առաքելութեան ղեկավար Սաօ-Քէ (Ալֆրէդ) Ծէն նկատելի գումար է տրամադրել հայ գաղթականներին¹⁴:

Եղեռնից փրկուած հայերի նպաստամատոյց խումբ է ստեղծուել նաեւ Կորէայում: Այս երկրում Հայկական Նպաստամատոյց Յանձնախումբն ստեղծուել է ԱՄՆի հիւպատոս Միլերի կողմից: Կորէայում աւելի քան յիսուն տարի առողջապահական գործունէութիւն ծաւալած կանադացի բժշկական քարոզիչ, Թորոնթոյի Համալսարանի ուսուցչապետ Օլիւրը Ռ. Աւիսընը (1860-1956), ի թիւս այլ ամերիկացիների եւ եւրոպացիների, եղել է այդ յանձնախմբի նախագահը

(որոշ ժամանակ նրան փոխարինել է Թումրս Հոբզը¹⁵): Տեղեկացուել է, որ Մքրայի Բիչի (Կորեա) ամառային շաբաթօրեայ դպրոցում կազմակերպուել է յատուկ հայ գաղթականների օգնութեանը նուիրուած մի օր, որի ընթացքում որոշակի գումար է ժողովուել: Կորեացիները, իրենք էլ լինելով աղքատ, իրենց լուման են ներդրել հայ գաղթականների վիճակը թերեւացնելու գործում¹⁶:

Ըստ Բարկէնեանի՝ միջազգային մարդասիրական շարժմանը Ճապոնիայի մասնակցութեան պատմութեան վաղ տարիները մինչ այժմ չեն եղել առանձին ուսումնասիրութեան առարկայ: Ըստ նրա, ընդունուած է համարել, որ Ճապոնիայի առաջին յայտնի մասնակցութիւնը միջազգային մարդասիրական շարժմանը եղել է 1953ին, երբ կառավարութիւնն օժանդակել է պաղեստինցի գաղթականներին: Իսկ աւելի վաղ՝ 1922ին՝ ի պատասխան հայոց ցեղասպանութեան եղած մարդասիրական օժանդակութիւնը մնացել է անձանօթ:

Ամէն ինչ սկսուել է երբ ամերիկացի վերապատուելի դոկտոր Լինքըն Լ. Ուիրթը 1922 Փետրուարին ժամանել է Ճապոնիա: Նա կոչ է արել Տոկիոյում բնակուող ամերիկացիներին եւ եւրոպացիներին՝ օգնութեան ձեռք մեկնել հայերին: Ուիրթին յաջողուել է կազմել մի գլխաւոր յանձնախումբ՝ ամերիկացի գործարարներից, իսկ նրա նախագահ ընտրուել է ԱՄՆ դեսպան Չարլզ Բիչըր Ուորընը (1870-1936): Հայերին օգնելու շարժումը սկսել է թափ առնել, եւ Ճապոնիայում գործող տարբեր օտարերկրեայ հասարակայնութեան խմբեր, օթեակներ, եկեղեցիներ, ակումբներ հրաւիրել են Ուիրթին՝ ելոյթներ ունենալու: Հայերին օգնելու նրա կոչը տպագրուել է *Ջրփէն Էդվըրթայզըր* անգլերէն թերթում եւ արտատպուել մի ճապոնական լրագրում, որտեղից էլ այդ մասին տեղեկացել են մի խումբ ազդեցիկ ճապոնացիներ: Նրանք դիմել են Ճապոնիայում երկար տարիներ աշխատող եւ հեղինակութիւն վայելող ամերիկացի քարոզիչ, վերապատուելի Գիլբըրթ Բոուլզին (1869-1960)՝ ասելով, որ հետաքրքրուած են Ուիրթի առաքելութեամբ: Վերջինիս Բոուլզը տարել է Կայսերական Դրամատուն, ծանօթացրել մի շարք գործարարների հետ, որոնց մէջ էր նաեւ առաջնակարգ դրամատէր եւ Արտաքին Գործերի փոխնախարար, դերկոմս Էիիծի Սիբուսաւան (1840-1931): Վերջինս հարցրել է Ուիրթին, թէ ովքե՛ր են հայերը եւ ինչո՛ւ նրանք օգնութեան կարիք ունեն: Որոշ աշխարհագրական եւ պատմական տեղեկութիւններ ստանալուց յետոյ Սիբուսաւան ընդհատել է Ուիրթին՝ ասելով. *«Ինչո՞ւ մեզ մօտ չէք բերել ձեր հայրը: Քանի որ մենք բողոքայական ենք, կարծում էք, որ չե՛նք օգնի հայերին»*: Սիբուսաւան անձամբ Ուիրթին է տրամադրել 11,000 դոլարի չէք (այսօրուայ չափով՝ մօտ 140,000 դոլար) եւ ստանձնել տեղում կազմուած Ճապոնիայի Հայ Օգնութեան Յանձնախմբի նախագահութիւնը: Բոուլզը նշանակուել է

յանձնախմբի քարտուղար: Միբուսական անմիջապես նամակ է յղել մօտ 100 ճապոնացի պատասխանատու անձանց՝ հայերին օգնելու գործում հետաքրքրություն ստեղծելու նպատակով: Այս հիմնադրամին սկսել են նուիրատուություններ գալ ճապոնական հասարակութեան բոլոր դասերից՝ հասարակ մարդկանցից մինչև կառավարական պաշտօնատարները, գլխաւոր գործարարներից մինչև կայսերական ընտանիքի անդամներ: Մի ճապոնական իգական դպրոց ստանձնում է երկու հայ որբի լրի պաշտպանությունը: Օգնութեան արշաւին է միացել արքայազն Տոկուգաւա Եոշիհիսան եւ պատկառելի գումար ուղարկել: Նա նաեւ կարեւոր դեր է ունեցել Լորդերի Պալատի բոլոր անդամներին հայ օգնութեան հայտի վերաբերեալ գրականություն տրամադրելու գործում: Ուիրթը շարունակել է իր գործունէութիւնը՝ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի մասնաճիւղեր բացելով նաեւ Չինաստանում, Կորեայում, Ֆիլիպիններում, Նոր Զելանդիայում եւ Աւստրալիայում: 15 այլ ազգային յանձնախմբերի հետ միասին ճապոնական յանձնախումբը անդամակցել է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին, որի գլխաւոր կենտրոնը եղել է Ժնևը: Յայտնի չէ, թէ որոշակի որքան գումար է հաւաքել ճապոնիայի յանձնախումբը, սակայն կարեւոր է, որ ճապոնական հասարակութեան բոլոր խաւերն իրենց համակրանքն են արտայայտել հայ ժողովրդի ցեղասպանուած զուակների հանդէպ եւ իւրաքանչիւրն իր հնարաւորութեան սահմաններում օգնել նրանց¹⁷:

Ուիրթի օգնութեամբ հայերին օժանդակող յանձնախումբ է ստեղծուել նաեւ Ֆիլիպիններում, որ ղեկավարել է Ֆիլիպինների ընդհանուր-նահանգապետ Լենըրդ Վուդը (1860-1927): Նրա խորհրդական գնդապետ Ֆրանք Ռոս Սքոյը (1874-1954) հանդիպումներ է կազմակերպել Ֆիլիպիններում եւ միջոցներ հաւաքել Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի համար: Ուիրթը վկայել է, որ Ֆիլիպիններում բնակուող ամերիկացիները եւ եւրոպացիները շոայլ նուիրատուություններ են կատարել, իսկ տեղացի ֆիլիպինցի ժողովուրդը դրամահաւաքին չնչին մասնակցություն է ունեցել¹⁸:

Նշենք նաեւ, որ հայ գաղթականների փոխադրման եւ տեղաւորման հարցերը 1923ին որոշ ժամանակ զբաղեցրել են Ֆրանսիայում ճապոնիայի դեսպան Կիկուձիրի Իշիիին (1866-1945), որի հետ Հայ Ազգային Պատուիրակութիւնը նամակագրութիւն է հաստատել այդ թեմայով¹⁹:

ԵՐԿՈՒ ԱՅԼ ԴՐՈՒԱԳ

1922ին Պեկինում կայացած Աշխարհի Ուսանողների Քրիստոնէական Դաշնութեան Համաժողովում հնչել է հայերի կոտորածների դատապարտման հարցը: Փոքր Ասիան ներկայացրել է

Զմիւռնիայի Ամերիկեան Քոլէջի պատմութեան եւ ընկերաբանութեան պրոֆեսոր Սեմուըլ Ռալֆ Հարլոուն (1885-1972): Ապրիլի 2ին Համաժողովը որոշում է կայացրել ի նպաստ Մերձաւոր Արեւելքի հալածուած ժողովուրդներին, այդ թւում՝ հայերի. այն ստորագրել են 32 ազգերի ներկայացուցիչներ²⁰:

1922ին, երբ քեմալականներն այրել են Զմիւռնիան՝ բնաջնջելով տեղի հայ եւ յոյն բնակիչներին, նաւահանգստում եղել է նաեւ մի նաւ՝ ճապոնացի նաւապետի հրամանատարութեան ներքոյ: Ի տարբերութիւն անգլիական, իտալական եւ ամերիկեան նաւերի պատասխանատուներին, որոնք վանել են իրենց օգնութեան դիմած հայ եւ յոյն փախստականներին, ճապոնացի նաւապետն իր նաւի վրայ ապաստան է տուել մի շարք հալածեալներին: Նոյնիսկ նաւի բեռները ծովն է նետել, որպէսզի կարողանայ աւելի օգտակար լինել դժբախտներին: Ի դէպ, այդ հայերի մէջ է եղել ամերիկահայ երգեհոնահար Պերճ Ժամկոչեանի հայրը²¹: Այս ճապոնացի նաւապետին 1935ին ճապոնիայում հանդիպել եւ զրուցել է հայ քամանչահար Ռուբէն Կարախանեանը²²:

ՅԵՏ ԳՐՈՒԹԵԱՆ. ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Հայոց դէմ գործուած ցեղասպանութեան գիտական ուսումնասիրումը Ծայրագոյն Արեւելքի երկրներում համեմատաբար նոր ասպարէզ է: Չինաստանում Մեծ Եղեռնի վերաբերեալ աշխատութիւններ, որքան մեզ յայտնի է, առայժմ չկան: Եղած հատուկնտ օրինակները վերաբերում են ճապոնիային եւ Կորեային:

Հայոց դէմ գործուած ցեղասպանութիւնն առաւել կամ պակաս չափով ներկայացուել է ճապոնացի հեղինակների՝ Հայաստանի մասին գրուած ճանաչողական գրքերում: Առաջիններից մէկը եղել է 1990ին Տոկիոյում հրատարակուած Հիդեհարու Նակաձիմայի *Հայաստան. Յոյսի Ակնթարթ Պատմութեան Աջ* հատորը, որն ընդգրկում է հայոց համառօտ պատմութիւնը՝ սկզբից մինչեւ Մեծ Եղեռն: Նոյն հեղինակը տարիներ անց ճապոնացի ընթերցողին է ներկայացրել երկու այլ ճանաչողական հատոր՝ *Հայոց Յեղասպանութիւնը*, *Հայ Ժողովրդի Պատմութիւնն Ու Մշակոյթը* (2007) եւ *Ամէն Ինչ Հայաստանի Մասին՝ 65 Գլխով* (2009): 1991ին լոյս է տեսել Եուկիօ Ֆուձիմոյի *Ողբերգական Հայաստան* գիրքը, որտեղ տրուած է հայոց պատմութեան ընդհանուր ակնարկ եւ մասնաւորաբար շեշտուած է ցեղասպանութեան իրողութիւնը: Ճապոնացի ընթերցողին հայ ժողովրդին եւ Մեծ Եղեռնը լայնօրէն ծանօթացրել է Ֆրանց Վերֆելի *Մուսա Լեռան Քառասուն Օրը* վեպի ճապոներէն հրատարակութիւնը, որ գերմաներէնից թարգմանել եւ 1993ին հրատարակել է Եուկիօ Ֆուկուդան:

Նաեւ այս ոչ-գիտական հրատարակութիւնների շնորհիւ է հայոց դէմ գործուած ցեղասպանութեան վերաբերեալ որոշ հետաքրքրութիւն սկսուել Ճապոնիայի ակադեմական շրջանակներում:

Առաջին անգամ Ճապոնիայում հայոց դէմ գործուած ցեղասպանութիւնը բարձր ամբիոնից հնչեցրել է ականաւոր պատմաբան Վահագն Տատրեանը, որը ելոյթ է ունեցել 2003 Մարտին Հիրոսիմայում տեղի ունեցած ցեղասպանութիւններին նուիրուած գիտաժողովում: Մէկ տարի անց, 2004ին լոյս է տեսել Մեծ Եղեռնի մասին ճապոներէն առաջին գիրքը՝ Աիծի Սանգիոյ Համալսարանի դեկան եւ իրաւունքի ուսուցչապետ Հիրոյոսի Սեգաւայի *Հայերի Մոռացուած Յեղասպանութիւնը. Հետազօտութիւն Յանցագործութիւնը Կանխարգելելու Եւ Պատժելու Վերաբերեալ* ծաւալուն ուսումնասիրութիւնը: Սեգաւան, որ 2002ից սկսած այցելում է Հայաստանի Հանրապետութիւն, Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութիւնն ուսումնասիրում է իրաւական տեսանկիւնից՝ փորձելով այդ տեսանկիւնից դատապարտել Ի. դարի սկզբին տեղի ունեցած ոճիրը: Սեգաւան առաջիններից էր Ճապոնիայում, որն արժարձեց 20րդ դարի սկզբին հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան ճանաչման հարցը՝ համեմատելով այն հրէական Ողջակիզումի հետ: Աշխատութիւնը գրելիս Սեգաւան օգտուել է ոչ միայն հայկական, այլեւ ամերիկեան, անգլիական, գերմանական աղբիւրներից եւ հիմնուել բազմաթիւ վկայակոչումների վրայ: Գրքում զետեղուած են նաեւ քարտեզներ: Այս գրքի համար հեղինակն ընտրուել է Հումանիտար Գիտութիւնների Միջազգային Ակադեմիայի Հայկական Մասնաճիւղի իսկական անդամ: Աշխատութիւնը հայ գիտական մամուլի համար անգլերէնով գրախօսել է ճապոնացի հեղինակ Մ. Աբէն²³, իսկ 2005ին Երեւանում այն լոյս է տեսել հայերէն՝ ճապոնագէտ բանասէր Կարինէ Քարամեանի թարգմանութեամբ²⁴:

2008ին Ճապոնիայում դարձեալ Հիրոյոսի Սեգաւայի նախաձեռնութեամբ լոյս է տեսել *Հայերի Յիշողութիւնները Յեղասպանութեան Վերաբերեալ (Նոր Դիրքորոշում)* խորագրով յօդուածների ժողովածուն: Նաեւ Սեգաւայի թարգմանութեամբ ճապոներէն լոյս է տեսել ցեղասպանագէտ Նիկոլայ Յովհաննիսեանի *Հայոց Յեղասպանութիւնը* աշխատութիւնը, որն ընդգրկուել է պատմաբանի՝ 2009ին Երեւանում լոյս տեսած նոյն վերտառութիւնը կրող աշխատութեան տասլեզուեայ հրատարակութեան մէջ²⁵:

Յովհաննիսեանի նշեալ աշխատութիւնը 2011ին լոյս է տեսել նաեւ կորէրէն: Թարգմանութիւնը կատարուել է անգլերէնից:

Վերջին տարիներին հայոց դէմ գործուած ցեղասպանութեան ուսումնասիրութեամբ զբաղում է նաեւ կորէացի պատմաբան Եանգսիգ Հան, որը 2005ին եւ 2014ին այցելել է ՀՀ եւ ցայժմ երկու յօդուած է

հրատարակել կորեական մամուլում Մեծ Եղեռնի մասին՝ «Ցեղասպանությունը Ցեղասպանություն է, Ճշմարտությունը՝ Ճշմարտություն» (*Հանկեռթ* 21 (Մէկ ազգ 21), 1.11.2000, թիւ 337) եւ «Մի՛ Մոռացէք Հայաստանը» (նոյն, 3.08.2005, թիւ 571):

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպէս երեւաց սոյն հաղորդումից, հայոց դէմ գործուած ցեղասպանութեան իրողութիւնը որոշ չափով ծանօթ է եղել նաեւ հեռաւոր եւ տարաշխարհիկ նկատուող Ծայրագոյն Ասիայի երկրներում: Դրանցում եղած հայ համայնքները, նաեւ տեղի այլազգի բնակիչները նոյնպէս իրենց լուրսն են ներդրել եղեռնից փրկուածներին օժանդակելու գործում: Սակայն, Հայոց եղեռնը դեռեւս մեծ մասամբ անձանօթ է մնում հսկայական բնակչութիւն եւ տարածաշրջանում կարեւոր կշիռ ու դերակատարութիւն ունեցող այդ երկրներում՝ չնայած խնդրի հանդէպ յատկապէս Ճապոնիայի գիտական շրջանակներում ատկայ որոշ հետաքրքրութեանը: Վերջին տարիներին Ծայրագոյն Արեւելքի երկրների հետ ՀՀի եւ հայութեան կապերի սերտացումը ակնկալութիւն է ներշնչում, որ հայ ժողովրդի աւելի լայն ճանաչման հետ մէկտեղ այդ երկրներում կը բարձրանայ նաեւ իրազեկութիւնը հայոց դէմ գործուած ցեղասպանութեան վերաբերեալ:

2012ի Մայիսին Երեւան է այցելել Հարաւային Կորեայի խորհրդարանական պատուիրակութիւնը Ազգային ժողովի փոխիսօսնակ Հոնգ Ջայ-Հեօնգի զլխատրութեամբ: Վերջինս Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտում ասել է, որ կորեացի ժողովուրդը տեղեակ չէ Հայոց դէմ գործուած ցեղասպանութեանը, այնուամենայնիւ, պատուիրակութեան անդամ Նահ Եուն Միւնը փորձել է ներկայացնել 1915ի իրադարձութիւններն իր «*Տամանակակից Ողբերգութիւն*» գրքում²⁶:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Vicken Babkenian, “Japan and the Armenian Genocide”, *The Armenian Weekly*, 29.09.2010. նոյնի՝ “The Forgotten Global Humanitarian Response to the Armenian Genocide: Cuba, China, Korea, Hawaii and Others Come to the Rescue”, *The Armenian Weekly*, 13.11.2010:
- ² Տե՛ս՝ մեր «Հայաստանի Մայրը. Ուրուագիծ Դիանա Աբգարի Կեանքի Եւ Գործունէութեան» յոդուածը՝ *Դիանա Աղաբէկ Աբգար. Կեանքը Եւ Գործունէութիւնը*, Նոր Ջուղայ, 2011, էջ 8-28:
- ³ «Տիկիի Տիանա Աբգար», *Ժողովուրդ*, 12.08.1919:
- ⁴ P. Yoshio Saeki, *The Nestorian Monument in China*, London, Society for Promoting Christian Knowledge, 1916, էջ 61:
- ⁵ «Ճաբոն, Թասֆիր Եւ Հայերը», *Վերջին Լուր*, 30.04.1919:

- ⁶ Ղարիբ, «Նամակ Ջալայ Կղզուց», *Մշակ*, 17.04.1916. նաեւ՝ «Օրինակելի Քայլեր», *Արձագանգ Փարիզի*, 25.05.1917, թիւ 4, էջ 7:
- ⁷ «Զինացիներն Ալ Կ'օգնեն Հայերու», *Ճակատամարտ*, 1.04.1919:
- ⁸ “What Shall Be Our Policy Toward Japan? [Editorial]”, *The Chinese Students' Monthly*, v.15 no. 3, 1920 January, էջ 7:
- ⁹ Եղիշէ Վարդանեան, *Անապատէ Անապատ: Շար. Վասպուրականի Նահանգ Բիրոնցին*, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1923, էջ 418: Նուիրատուների ցանկը տե՛ս՝ նոյն, էջ 503-517 (բնագիրը տե՛ս՝ Հայաստանի Ազգային Արխիւ (ՀԱԱ), ՊՖոնդ 430, ցուցակ 1, գործ 770):
- ¹⁰ Վարդանեան, էջ 513:
- ¹¹ Նոյն, էջ 515-516: Հաւանաբար այս հանգանակութիւնը նկատի ունենալով է յիշատակուել, որ հայերին պատկանող չինական միքանի գործարաններ մեծ նուիրատուութիւններ են կատարել յօգուտ Մեծ Եղեռնից տուժած հայրենակիցների (Nadia H. Wright, *Respected Citizens: The History of Armenians in Singapore and Malaysia*, Melbourne, Amassia Publishing, 2003, էջ 77):
- ¹² Վարդանեան:
- ¹³ Սսեա Դարբինեան, «Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Կոմիտէի Մարդասիրական-Քարոզչական Քաղաքականութեան Առանձնայատկութիւնները (1915-1930 թթ.)», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2011, թիւ 2, էջ 57:
- ¹⁴ Babkenian, Cuba:
- ¹⁵ Տե՛ս՝ ՀԱԱ, Պոնդ 430, ցուցակ 1, գործ 1318, էջ 7:
- ¹⁶ Babkenian, Cuba:
- ¹⁷ Babkenian, Japan:
- ¹⁸ Babkenian, Cuba:
- ¹⁹ Տե՛ս այդ նամակագրութիւնը՝ ՀՀՊ Արխիւ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 1257:
- ²⁰ «Արեւելքի Ջարդերու Մասին», *Ճակատամարտ*, 6.02.1922:
- ²¹ Տուեալը մեզ հաղորդել է Պերճ Ժամկոչեանին մօտիկից ճանաչած, Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէի երբեմնի աշխատակից Արթուր Նաւասարդեանը (2011, Մարտի 10):
- ²² Յակոբ Մանուկեան, *Քեմանչիստ Ռուբէնի Յուշերը*, Պէլրութ, Հայ Տիպ Քոմիտիւկրաֆ-Թէքնոփրէս, 1989, էջ 61:
- ²³ Hiroyoshi Segawa, “The Forgotten Armenian Genocide: A Case Study of the Prevention and Punishment of Crimes of Genocide” (in Japanese), Sankeisha Press, Nagoya, Japan, 2004”, *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. ԲԶ., Պէլրութ, 2006, էջ 371-373:
- ²⁴ Հիրոյոսի Մեգաւա, *Հայերի Մոռացուած Յեղասպանութիւնը. Հետազօտութիւն Յեղասպանութեան Յանցագործութիւնը Կանխարգելելու Եւ Պատժելու Վերաբերեալ*, Երեւան, Նշանակ, 2005:
- ²⁵ Տե՛ս՝ Nikolay Hovhannisyán, *The Armenian Genocide*, Yerevan, 2009, էջ 293-307:
- ²⁵ Korean delegation visits Memorial to Armenian Genocide victims, <http://news.am/eng/news/105544.html> :

ECHOES OF THE ARMENIAN GENOCIDE IN FAR EAST COUNTRIES
(SUMMARY)

ARTSVI BAKHCHINYAN
arsvi@yahoo.com

The Armenian Genocide has had some echoes as far away as East Asian countries. Local Armenian communities have somehow raised awareness about what happened to the Armenian population in the Ottoman Empire. The writer and publicist Diana Apcar in particular wrote a series of articles, pamphlets and books about the Armenian genocide. We also found knowledge of the Armenian massacres in the testimonies of two Japanese, expressed in 1916 and 1919.

When the Near East Relief organization was founded in 1919, it also established branches in China, Korea and Japan. In 1920 the Committee of Armenian refugees of Mesopotamia sent an envoy to India and Far East countries for fundraising. The mission was successful due to donations by Armenian and non-Armenian donors from China, Hong Kong, Japan and Indonesia.

Nowadays there is a certain interest in the issue of the Armenian Genocide in academic circles of Japan and Korea. In particular, lawyer Hiroyoshi Segawa examines the juridical side of the Genocide in his studies.

ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԻ «ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 30,000
ՔՈՒՐԴ Է ՍՊԱՆՈՒԵԼ, 1 ՄԻԼԻՈՆ ԷԼ ՀԱՅ»
ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒՑԱԾ ՓՈԹՈՐԻԿԸ

ԱՆԻ ԱԻԵՏԻՍԵԱՆ
aniavet84@mail.ru

*«Երբ թեկուզ մի գրող աշխարհում ազատ չէ,
նրա գրչակից եղբայրները չեն կարող
վայելել իրենց ազատությունը»:*
Օրհան Փամուք¹

Նոբելեան Գրական Մրցանակի դափնեկիր, համաշխարհային գրականության մեջ իր ուրոյն տեղը զբաղեցրած թուրք գրող Օրհան Փամուքը (ծն. 1952 Յունիսի 7ին, Ստամբուլ)² այն թուրք մտաւորականներից է (Էլիֆ Շաֆաք, Թաներ Աքչամ, Սեհմուս Ուլեքի, Ռագրփ Ջարաթօլու, Ֆաթիհ Թաս, Բիրոլ Դուրույ, Ռեդուան Քըզզըն եւ այլք)³, որոնք վերջին տասնամեակում ձգտում են ազատել Թուրքիայի Հանրապետությունը պատմական եւ ներկայ ժամանակների «տխուր էջերից», երկրի հասարակական կեանքը՝ դեպի ժողովրդավարություն տանող ճանապարհի ընթացքը խոչընդոտող բարդոյթներից եւ գտնում են առիթներ՝ խօսելու այդ մասին հրապարակայնօրէն:

Այսպիսի առիթ Փամուքի համար ստեղծում է, երբ 2005 Փետրուարին հրաւիրում է Գերմանիա՝ մասնակցելու իր *Ջին* վեպի գերմաներէն հրատարակութեան շնորհանդէսին, ուր շուէյցարական *Tages Anzeiger*-ի Փետրուար 6ի համարին օրուայ իրադարձութեան վերաբերեալ տուած հարցազրոյցում, անդրադառնալով երկրների եւ ժողովուրդների պատմութեան փոխարաբերութիւնների ընթացքում տեղի ունեցած, նոյնիսկ ներկայ ժամանակներում կատարուող իրադարձութիւնների մասին մարդու ազատ արտայայտուելու իրաւունքի հանդուրժողութեանը, ընդգծում է՝ *«Թուրքիայում երեսուն հազար քուրդ եւ մէկ միլիոն հայ է սպանուել, ոչ ոք դա չի յանդգնում ասել, ես ասում եմ, եւ այդ պատճառով ինձ ասում են»*⁴: Միայն այս յայտարարութիւնը բաւարար էր, որ Թուրքիայի Հանրապետութեան լրատուամիջոցներ բազում յանցանքներով մեղադրէին Փամուքին:

Star-ի քաղաքական մեկնաբան Արդան Ջենթուրքը իր «Օրհան Փամուք... Հոգիս Այրեցիր» յօդուածում Փամուքի քայլը համարում է *«նչ-բարոյական»*, «Նոբելեան մրցանակ⁵ ստանալու համար արուած քայլ»⁶, *Hürriyet*-ի մեկնաբան Ֆաթիհ Ալթայլըն իր «Մեւ Գրող» յօդուածով՝ *«ստախօս»*, *«խղճուկ արարած»* է անուանում Փամուքին, որին

«*Թշնամանքն իսկ ափսոս է*» յաւելելով, որ մտաւորականը պէտք է փնտոյի ճշմարտութիւնը, պէտք է մտածի, դեռեւս անորոշ պատմական իրադարձութիւնների, ընդգծելով նաեւ թէ՛ մօտ ժամանակաշրջանում յայտնի դէպքերը խեղաթիւրելու իրաւունքը «*իսկական*» մտաւորականին վայել չէ: Այլթայլըն հաւաստում է, որ Հայկական Հարցը քննարկելու համար պէտք է նախապէս հարցի վերաբերեալ փաստաթղթեր ձեռք բերել եւ յետոյ միայն գրել դրա մասին, որ Փամուքը միմիայն ցանկացել է որոշ «լոբիների» օգտակար լինել, Նոբելեան Մրցանակի յանձնաժողովի ուշադրութիւնը գրաւել, «*էրէք-հինգ*» գիրք աւելի վաճառել, «*մէկ-երկու*» մրցանակ աւելի ստանալ⁷:

Նոյն թերթի մէկ այլ լրագրող՝ Ահմէդ Հաքանը, իր «Տեսակէտներ Օրհան Փամուքի Վերաբերեալ» կարծիքում բնական է համարում գրողի արտայայտած յիշեալ մտքերի հանդէպ հրապարակումները, բողոքները, ցոյցերը, առաջ քաշուած հակընդդէմ տեսակէտները..., հայրենիքի դաւաճանի պիտակ «կպցնելը», բայց մերժում է Փամուքին «*հինգ կոպէկանոց գրող*» համարելը՝ զգուշացնելով, որ «*վաղը կամ միւս օրը, ուրիշ մի հեղինակ, որի գրքերը կը կարդանք, կը հիանանք, բացառուած չէ՛ վեր կենայ ու նոյն բաներն ասի, եւ չենք իմանայ, թէ ինչ անենք*»⁸:

*Cumhuriyet*ի թղթակից Աթայոլ Բեհրամօղլուն հարցազրոյցը դիտում է՝ «*հերթական կատակ*», «*անձնական շահ հետապնդող*», «*փոքր հերոսութիւններով ձայնը լսելի դարձնելու, թուրք կամ Թուրքիայի անգրագէտ եւ թշնամական շրջաններին սիրաշահելու...*, արտերկրներում վաճառուող գրքերի քանակը աւելացնելու եւ մի պահ առաջ միջազգային գրական մրցանակ ստանալու ցանկութիւն»⁹:

Նոյն թերթի «Մեր Սահմանները Ճանաչենք Եւ Մեր Անելիքը Իմանանք» յօդուածի հեղինակ Օրալ Չալըշարըն ընդդիմախօսներին խորհուրդ է տալիս «*չանհանգստանալ*», «*քննարկել եւ իմաստաւորել ասուածը*» եւ ընթանալ «աւանդութեան» ճանապարհով. «*Հայկական հարց, քրդական հարց, ալեիների հարց, կամ էլ մէկ ուրիշ հարց, այս բոլորն էլ վտանգաւոր հարցեր են: Եթէ սրանք միայն մեծ տէրութիւնների ուզածի պէս քննարկենք, ոչ մի հարց չի առաջանայ: Միայն սահմանները չպէտք է խախտել ... բոլորն էլ իրենց սահմանը պէտք է իմանան: Ի՞նչ է, մենք մեր սահմանը չգիտէնք*»՝ յիշեցնելով «*Արդեօք չիմացողների գլխների եկածի վկան չեղա՞նք ...*»¹⁰:

Orta Dogu թերթը լայն տեղ է տալիս «Գաղափարական օջախների Ընդհանուր Կենտրոնի» (թրք. *Ülkü Ocakları Genel Merkezi*) սպառնալիքով լի հաղորդագրութեանը. «*Օրհան Փամուքի նմանները այս երկրի մէջ անգամ հող չպիտի գտնեն շրջելու համար, իսկ որոշ ընդդիմադիրներ, նրան պաշտպանելով, գիտակցաբար թուրքի նկատմամբ թշնամութիւն են սերմանում, այս դէպքերից եւ Օրհան Փամուքի դաւաճանութիւնը ապացուցելուց յետոյ այս երկրում նրա շնչած օդն անգամ պէտք է հարամ*

համարել: Թուրքի հայրենիքում թրքութեան վրայ կատարուած այս յարձակումից յետոյ էլ որեւէ միջոցառումի դէմ յանդիման պետք չէ գտնուել: Օրհան Փամուքին եւ նրա նմաններին հանդուրժելու համբերութիւնը սպառուել է: Այդպիսիների նկատմամբ օրէնքի միջամտութիւնը պարտադիր է, այսուհետեւ բոլորն էլ մեր զայրոյթից իրենց արժանի պատիժը պիտի ստանան, Թուրքիայում ապրելով հանդերձ պիտի սովորեն թուրքին թշնամութիւն չանել»¹¹:

Փամուքի վրայ գրոհող լրագրողներից ետ չեն մնում ակադեմական եւ համալսարանական շրջանակների գիտա-դասախօսական կազմերը՝ նրա խօսքերը որակելով սուտ եւ դիտումնաւոր, Փամուքից պահանջելով փաստել թուրքի ճշգրտութիւնը: Թուրք Պատմաբանական Հիմնարկի Հայկական Ուսումնասիրութեան Բաժնի պրոֆեսոր Քեմալ Չիչքը գրողին որակում է «*հայ ազգայնական*»¹²:

Vatan թերթում հարցազրոյցներով իրար ձայնակցող գիտնականներից՝ Ստամբուլի Համալսարանի դասախօս, դոկտոր-պրոֆեսոր Թոքթամըշ Աթէշը Փամուքի արտայայտութիւնը համարում է «*Անմիտ եւ մեծ թերութիւն վիպասանի համար*»¹³, Թուրքիայի Հանրապետութեան ընկերային պատմութեան մասնագետներից, դոկտոր-պրոֆեսոր Բահաէդդին Եդիբըլդըզը մեղադրել է Փամուքին «*անտեղեակութեան եւ անգրագիտութեան*» մէջ՝ արդարացնելով օսմանեան եւ մերօրեայ իշխանութիւնների ոճրագործութիւնները, բռնութիւնները. «*Աշխարհում չկայ մի երկիր, որտեղ ստանձին էթնիկ խմբի ապստամբութեանը չմիջամտեն պետական իշխանութիւնները*»¹⁴: Թուրքական Պատմական Ընկերութեան աշխատակից դոկտոր-պրոֆեսոր Հիքմէթ Օզդէմիրը ստախօսութիւն է համարել Փամուքի «*մէկ միլիոն հայի սպանութեան*» պնդումը՝ խոստանալով գիտականօրէն մերկացնել գրողին¹⁵: Վոսփորի Համալսարանի դասախօս դոկտոր-պրոֆեսոր Հալիլ Բնալջըքը առաջարկում է անպատասխանատու յայտարարութիւններով ազգին վիրաւորող Փամուքին դատապարտել¹⁶, ձախ մտաւորական գրողներից Նեդիմ Գիւզէլը Փամուքի յայտարարութիւնը մեկնաբանել է որպէս երոպացիներից միաւոր հաւաքելու միջոց՝ «*Մեր գործընկեր*» Փամուքը ստել է, որպէսզի ստանայ *Նորէլեան մրցանակ, բայց մինչեւ հիմա ամբողջովին չի մերկացել*¹⁷»: Արմատական աջակողմեան մամուլն էլ Փամուքի եւ հրէական լոբիի միջեւ կապ է գտել՝ հաւաստիացնելով, որ նա ունի սաբէթական ծագում¹⁸:

Փամուքի համարձակութիւնը յարգողներ էլ են եղել՝ որոշ վերապահումներով: Սաբանջը Համալսարանից Հալիլ Բերքթայը Փամուքի ելոյթը գնահատել է իբրեւ ճշմարտութիւն եւ մտաւորականի ազնուութեան եւ արիութեան վայել երեւոյթ, ու իր հերթին յաւելել է. «*1915-1916 թթ. գուցէ 800 հազար, գուցէ եւ 1 միլիոն հայ վստահարար*

սպանուել է ... հնարաւոր է երկրի հարաւ-արեւելքում... սպանուած քրդերը 30 հազար լինեն»¹⁹:

Յայտնի քաղաքական մեկնաբան Մեհմեդ Ալի Բիրանդը *Posta*-ի մէջ «Ինչու՞ Օրհան Փամուքը Չպիտի Ասի Իր Մտածածը» խորագրով իր ելոյթում, դիմելով ընդդիմախօսներին, իրաւացիօրէն հարցադրում է. «Այս յարձակումն ի՞նչ է նշանակում: Մարդիկ իրենց ճիշտ կամ սխալ իմացածները իրաւունք չունեն՝ ասելու: Այսպիսի բան ասելու համար Թուրքիան Օրհան Փամուքին միջազգային դատարան՝ է յանձնելու, Միաւորուած Ազգերի Կազմակերպութիւնը Փամուքին որպէս վկայ Թուրքիային փոխհատուցում տալու որոշում է կայացնելու: Ո՛չ: Եթէ Օրհան Փամուքի տեսակետները չէք կիսում, դուք էլ ասպարէզ դուրս եկէք եւ ընդդիմախօսէք: Ի՞նչ է այս լինչի գրականութիւնը: Այս տարբեր տեսակետները ինչքան էլ մեզ անհանգստացնեն, ստիպուած ենք համակերպուել: Ես Փամուքի խօսքերին չեմ միանում, բայց նրա արտայայտած խօսքերին պաշտպան եմ կանգնում: Այս հրահրումը ամօթ է եւ ժամանակավրէպ»²⁰:

Փամուքին իր զօրակցութիւնն է յայտնում նաեւ Մարդու Իրաւունքների Միութիւնը: 16 Փետրուարի 2005ին մամլոյ ասուլիս կազմակերպելով եւ «Յեղապաշտ, Շովինիստական Յարձակումների Դիմաց Օրհան Փամուքի Կողքին Ենք» վերտառութեամբ հաղորդագրութիւն հրատարակելով, Միութիւնը յայտարարում է. «Գրող Օրհան Փամուքը վերջերս ինքնակորոյս ու սանձարձակ ցեղապաշտ շովինիստական յարձակումների թիրախ է դարձել ... թշնամի յայտարարելով Փամուքին, փորձում են նրա նկատմամբ բացայայտ սպառնալիքները վերաճեցնել պատժական վճիռ կայացնելուն: Իբրեւ Մարդու Իրաւունքների Պաշտպան, մենք, ցեղապաշտութիւնը խստիւ մերժելով, կոչ ենք անում մտքերն ազատօրէն արտայայտելու կողմնակիցներին եւ կազմակերպութիւններին միմեանց սատար կանգնել յանուն ժողովրդավարութեան, ազատ խօսքի»²¹:

Լրագրող Հալուկ Շահինը «Օրհան Փամուքին Յիշեցնենք Բարեկամաբար» (թրք. *Orhan Pamuk'a Dostça Hatırlatma*) յօդուածով պաշտպանութեան տակ առնելով հանդերձ Փամուքին՝ նրա քայլը համարում է հայկական եւ յունական լոբիների ազդեցութիւն. որ «Օրհան Փամուքի շուէյցարական թերթին տուած հարցազրոյցը Թուրքիայի Հանրապետութիւնում բազում հակադրութիւնների ճանապարհ է բացել, որոշ «ոգեւորուած» շրջանակների նոր ժամանակների Թուրքիայի ասենայայտնի վիպասանի դիմաց սկսած սպառնալիքներով լի յարձակումը անհանգստացնող է, հակադարձութեան կոպտութիւնը, ատելութիւնը, արհամարհանքը՝ անբացատրելի», եւ Օրհան Փամուքին յորդորում է շփոթահար չլինել իր դիմաց համախմբուած

գաղափարապաշտներից, ազգայնամուլներից, գորշ ֆաշիստներից, քանզի իր խօսքերից «*Վիրաւորուած, ընկճուած, երազներից զրկուածների շրջանակներում իր երկերը ինքնամոռաց կարդացողներ, նոյնիսկ զմայլուողներ էլ կան*», որ Համաշխարհային գրականութեան բուրգի գագաթնի վեր թուրք երիտասարդ գրող Օրհան Փամուքի բարձրացումը, թուրք հասարակական-քաղաքական մտքում հետաքրքրութիւն եւ ուրախութիւն է արթնացրել, վերջապէս, «*լռութեան մատնուածի*» անունից իր երկրի հասարակական իրականութեան վերաբերեալ ցաւալի եղելութիւնների մասին համաշխարհային չափանիշերով խօսող է գտնուել:

Յօդուածագիրը յիշեցնում է նաեւ՝ «*90 տարի առաջ տեղի ունեցած դէպքերի մասին ճշգրիտ թուերով չեն կարող խօսել իհարկէ: Բայց վերջին ժամանակներում 30 հազար քրդերի սպանութեան թուի մասին ինչ կարելի է ասել: ... Տարբեր էթնիկ արմատներով Թուրքիայի Հանրապետութեան քաղաքացիներ չէին: ... Նրանք ծագումով քուրդ էին, նրանց ո՞վ սպանեց, ապա մեղմելով իր մտքերը՝ լրագրողը բարեկամաբար խորհուրդ է տալիս ընդդիմախօսներին. «Յայտնի է, որ Օրհան Փամուքի տուած թիւը սխալ է, մօտաւոր եւ ոչ-ճշգրիտ: Վիպասանները վէպերում պատմական իրականութիւնը մի փոքր կարող են տարափոխել, նոյնիսկ խեղաթիւրել: Դա նրանց, գրողի գրական իրաւունքն է: Այնինչ պատմիչներն ու լրագրողները այդ իրաւունքը չունեն: Նրանք պարտաւոր են պահպանել թուերի ճշգրտութիւնը: Լաւ է, որ Օրհան Փամուքը պատմաբան կամ լրագրող չէ...»²²:*

Շուէյցարական թերթին տուած հարցազրոյցում Թուրքիայում մէկ միլիոն հայի սպանութեան փաստի ակնարկման վերաբերեալ այս թեր ու դէմ կարծիքներին զուգահեռ թուրքական դատախազութիւնը մեղադրական հայց է ներկայացնում Թուրքիայի Քրեական Օրէնսգրքի՝ 6 ամսից մինչեւ 3 տարի կալանք նախատեսող 301 յօդուածով՝ «թուրք ժողովրդի ինքնութիւնը վիրաւորելու մեղադրանքով»²³, եւ Ստամբուլի Շիշլիի դատարանը, ընդունելով հայցը, դատաւարութիւնը նշանակում է Դեկտեմբերի 16ին²⁴:

Այս որոշմանը անմիջապէս հետեւում է Եւրոմիութեան պատասխանատու Օլի Ռէնի Թուրքիայի Հանրապետութեանը սադրանքի մէջ մեղադրող յայտարարութիւնը իրլանդական *Irish Independent* թերթի Սեպտեմբեր 14ի համարում՝ Փամուքի դէմ բացուած դատաւարութիւնը լուրջ խախտում համարելով մարդու իրաւունքների Եւրոպական Ուլստի դրոյթներին, առաջ քաշելով Թուրքիայի Քրեական Օրէնսգրքի յօդուածների վերանայման պահանջի հնարաւորութիւնը²⁵:

Փամուքի հրապարակային խօսքի նկատմամբ լրագրային հարցադրումները Թուրքիայի դատախազութեան ձեռնարկումների հետեւանքով դատարանի գործողութիւնների ոլորտ տեղափոխուելով,

ստանում են քաղաքական բնոյթ, դառնում միջազգային աւելի լայն քաղաքական շրջանակների հետաքրքրութիւնների առարկայ: Փամուքի համար ոչ-նպաստաւոր ընթացքի դէպքում, նման ժխտական վճիռը եւրոպական հանրութեան եւ Եւրոմիութեան քաղաքական շրջանակներում գնահատուելով «մարդու իրաւունքների բնագաւառում Թուրքիայի կողմից իրականացուող բարեփոխումների գործընթացում ետընթաց քայլ», սպառնում է վերաճել Թուրքիայի Հանրապետութեան Եւրոմիութեան անդամակցութեան հարցի վրայ բացասաբար ազդող գործոնի:

Վիճակի նրբութիւնը զգալով՝ Թուրքիայի Հանրապետութեան Արտգործնախարարութիւնը յայտնում է իր մտահոգութիւնը, եւ կարծէս հասարակական տրամադրութիւնը խաղաղեցնելու համար Արտգործնախարար Գիւլը նկատում է. «Թուրքիայում դատարանները անկախ են: Որեւէ մէկը չպէտք է կասկածի: Մարդիկ Թուրքիայում ազատ են գրելու այն, ինչ մտածում են...: Կուզենայի յայտարարել ի լուր աշխարհի, որ Թուրքիայում գոյութիւն ունի խօսքի ազատութիւն: Մարդիկ հանգիստ յայտնում են իրենց կարծիքը, քանի դեռ նրանք չեն քարոզում բռնութիւն՝ վստահեցնելով, որ իրականացուող բարեփոխումների շնորհիւ դրական մթնոլորտ է ստեղծուել Եւրոմիութեան անդամակցելու համար»²⁶: Իսկ ամերիկեան հեղինակաւոր թերթերից *Los Angeles Times*ը նկատում է որ «Թուրքիայի կառավարութեան ներքում պահպանողականները մտածուած փորձում են ձախողել Եւրոմիութեան անդամակցումը»²⁷, բրիտանական *Financial Times*ը եւս գրում է. «Թուրքիան ոչ միայն պէտք է մաքրի պատմութեան հետ ունեցած իր հաշիւները», այլեւ ընդունի, որ «Եւրոմիութեան սկզբունքներում խօսքի ազատութիւնից աւելի հիմնարար սկզբունք հազիւ թէ լինի»²⁸:

Ի պաշտպանութիւն Փամուքի ազատախօսութեան պայքարին, Ամերիկեան Հելսինկեան Յանձնախումբը իր յորդորակոչն է յղում Թուրքիայի Հանրապետութեան օրուայ վարչապետ Ռեջէփ Թայիփ Էրդողանին (ներկայիս նախագահ)՝ առանձնապէս զգուշացնելով. «Ինչպէս գտնում է Ամերիկեան Հելսինկեան Յանձնաժողովի նախագահ Սէմ Բրաունը, եթէ դատարանը մեղադրական որոշում կայացնի Օրհան Փամուքի գործով, դա միայն կը պարտադրի աւելի կասկածանքով վերաբերուել ազատութեան եւ ժողովրդավարութեան նուիրուած լինելու թուրքական քաղաքագէտների հաւաստիացումներին»²⁹:

Փամուքին իրենց պաշտպանութեան տակ են առնում նաեւ 8 աշխարհահռչակ գրողներ՝ ժողով Մարամազուն, Գաբրիէլ Գարսիա Մարկէսը, Գիւնթեր Գրասը, Ումբերտո Էկօն, Կառլոս Ֆուենտէսը, Խուան Գոյտիսոլօն, Ջոն Ափոյայքն ու Մարիօ Վարզասը³⁰:

Փամուքն էլ իր հերթին փորձում է պարզաբանել հարցազրույցում հնչեցրած մտքերը Հոկտեմբերի 15ին քաղաքական մեկնաբան Թայֆուն Էրթանի վարած CNN-Türk «Söz Sizde» (Խօսքը ձերն է), ուղիղ եթեր հեռարձակուող ծրագրով: Այդ պարզաբանումներն էլ հրապարակում են հանրապետության *Hürriyet* եւ *Milliyet* օրաթերթերը իրենց յաջորդ օրուայ համարներում: Փամուքը նախ պատասխանելով Էրթանի՝ քրդերի սպանութեան վերաբերեալ հարցին, նկատում է որ սպանուած քրդերի թուաքանակը երբեք վիճարկելու անհրաժեշտութիւն չունի, կարելոք չէ 30 թէ 3 հազար քուրդ է սպանուել, դա անժխտելի եղելութիւն է: Եւ որպէս մարդասէր մտաւորական՝ կարծում է, որ այդ թուի մէջ թուրքական բանակի նահատակուած զինուորներ եւս կան, որոնց յիշատակը պէտք է յարգել: Ապա անդրադառնալով Թուրքիայում հայերի սպանութեան հանգամանքների մասին իր արտայայտած մտքերին՝ գրողը դրանք մեկնաբանում է հետեւեալ կերպ. «Ոչ մի անգամ մենք չենք ասել. մենք՝ թուրքերս, այսքան հայ ենք սպանել: Մենք՝ թուրքերս ենք սպանել: «Գենոցիդ» կամ «Ցեղասպանութիւն» բառերը չեն օգտագործել: Շատ փափուկ է ասուել այս ամէնը: Որոշ ժամանակ անց ընդդիմախօսներս չափազանցնելու մարտավարութեան են անցել, աւելորդախօսութիւններով ինձ հայրենիքի դաւաճան են յայտարարել, երեսուն տարուայ գրական ջանքս աղբարկղ են փորձում նետել: ... Նպատակս էր մի քիչ խօսել տաբուների շուրջ: ... Խօսելու արգելքը խոչընդոտ է Թուրքիայի Եւրոմիութեան մուտքին: Ես չեմ ցանկանում, որ իմ դէմ բացուած դատական գործը արգելք լինի Թուրքիայի Եւրոմիութիւն մտնելու ճանապարհին, անկեղծօրէն մտածում եմ, որ իմ դէմ բացուած դատական գործը անօրինական է: Միջոպայրում մեզ նեղութիւն պատճառող վիճակ կայ: Լրագրողների մի մասը ուզում է, որ Թուրքիան վատ լոյսի տակ երեւայ, ... Ես խաղանիւթ չեմ ուզում դառնալ»³¹: Փամուքը հաւաստիացնում է. «Ես թուրք եմ: Թուրքիայի Հանրապետութեան առկայ քարտէզի սահմաններով Եւրոմիութիւն մտնելն եմ ցանկանում: Ես քարտէզի փոփոխութիւն չեմ ուզում: Մայրենի լեզուս թուրքերէնն է: ...Բայց երկրում կան մարդիկ, որոնց մայրենի լեզուն թուրքերէնը չէ, մենք՝ թուրքերս ստիպուած ենք վերջնականապէս ընդունել, որ մի երկրում, եթէ կայ այդ երկրի անունը կրող լեզուով խօսող հասարակութիւն, լինի Թուրքիա, լինի Ֆինլանդիա, որեւէ այլ երկիր, մէկ էլ այդ երկրում այլ լեզուով խօսող փոքրամասնութիւն, կրուի փոխարէն խաղաղութեամբ ապրել ցանկացողներ, իշխանութիւն ունեցող մեծամասնութիւնը պէտք է սովորի հանդուրժողականութեամբ վերաբերուել իրենց լեզուով խօսող մարդկանց նկատմամբ, գոնէ մինչ այսօր ցուցաբերածից աւելի նուրբ, 'ես քուրդ եմ' ասողին, չօտարի...»³²:

Փամուքը իր մեկնաբանութիւնը ընթերցողներին լսելի է դարձնում նաեւ Գերմանական Հրատարակչութեան Միութեան որոշումով՝ «2005 թ.

Խաղաղութեան Մրցանակը»ի արժանացման առիթով Ֆրանկֆուրտ այցելելիս: Նա 20 Հոկտեմբերի 2005ին գերմանական *DW-World* թերթին տուած հարցազրոյցում վերահաստատում է Թուրքիայում 90 տարի առաջ եւ մօտ անցեալում տեղի ունեցած եղելութիւնների մասին նախապէս իր ասած մտքերի նկատմամբ իր պատասխանատուութիւնը. *«Ես իմ խօսքերիս պատասխանատուութիւնն եմ կրում: Օսմանեան Կայսրութիւնում հայերի գլխին եկածի մասին խօսելը Թուրքիայում արգելուած է: Ես վիպասան եմ, եւ հարցը մարդու ցան է, դրա մասին պէտք է կարողանալ խօսել: Իրաքանչիւր ոք ուզում է իմանալ, թէ ինչ է եղել պատմութեան ընթացքում... Այն, ինչ հայերի հետ տեղի է ունեցել 1915 թ., վիթխարի իրադարձութիւն էր, ինչն, ըստ էութեան թաքցում է թուրք ազգից, դրա վրայ դրուել է տաբու: Բայց մենք պէտք է հնարաւորութիւն ունենանք խօսել անցեալի մասին»³³:* Այս իրավիճակի ստեղծող ուժը նա համարում է Թուրքիայի Հանրապետութիւնում այնուամենայնիւ գոյութիւն ունեցող զինուժի ճնշումը՝ ընդգծելով. *«Ես չեմ կարծում, որ իշխող Արդարութիւն Եւ Զարգացում Կուսակցութիւնը սպառնալիք է Թուրքիայի ժողովրդավարութեանը: Սպառնալիքը, դժբախտաբար, աւելի շատ կապուած է զինուորականութեան հետ»³⁴:*

Այնուամենայնիւ Փամուրը Շիշլիի դատարան է կանչում «Թուրքիայի ազգային արժանապատուութիւնը վիրաւորելու» մեղադրանքով, չներկայանալու դէպքում «բերման ենթարկել» յանձնարարականով:

Փամուրը Դեկտեմբերի 16ին Շիշլիի դատարան է ներկայանում գաղափարակից համախոհներով եւ Երոյանձնաժողովի ընդլայնման հարցերով յանձնակատար Օլի Ռէնի եւ Երոխորհրդարանի մի քանի պատգամաւորների ընկերակցութեամբ³⁵:

Դատարանի լսումներին նախորդում է Երոխորհրդարանի Ընդլայնուած Յանձնաժողովի յայտարարութիւնը՝ զգուշացնելով, որ գրողի նկատմամբ ընթացող դատավարութեան անցանկալի որոշումը կարող է Թուրքիային զրկել Եւրոպական Միութեանը անդամագրուելու հնարաւորութիւնից, իսկ Երոխորհրդարանի անդամ Քամիլ Իւրլինգը լրագրողներին բացայայտօրէն յայտարարում է՝ *«Խօսքի ազատութիւնը հիմնական պահանջն է Թուրքիային ներկայացուած, եթէ դեռեւս նա ձգտում է մտնել Եւրոմիութիւն»³⁶:*

Դատարանը, տեղի տալով Երոխորհրդի յիշեալ մարմնի ճնշմանը, որոշում է գործի լսումը յետաձգել մինչեւ 7 Փետրուարի 2006ը՝ հարցում կատարելով Արդարադատութեան Նախարարութեանը, թէ արդէօք հնարաւոր է իրականացնել յիշեալ գործով դատավարութիւն, երբ Թուրքիայի Հանրապետութեան նոր Քրեական Օրէնսգրքի 301 յօդուածով «Թուրք ազգին նուաստացնելու համար» Փամուրին մեղադրելու

պատճառ հանդիսացող նրա հարցազրոյցը հրապարակուել է մինչեւ նոր Քրեական Օրէնսգրքի ընդունումը, այսինքն՝ 1 Յունիս 2005ից առաջ³⁷:

Թուրքիայի Հանրապետութեան Արդարադատութեան Նախարարութիւնը Յունուարի 22ին Շիշլիի դատարանին է ուղարկում իր պատասխանը՝ նշելով, որ նոր Քրեական Օրէնսգրքի համաձայն՝ դատարանը թոյլտուութիւն հայցելու անհրաժեշտութիւնը չունի, իրաւասութիւնը դատարանինն է: Ուստի, Շիշլիի դատարանը, հիմք ընդունելով Արդարադատութեան Նախարարութեան գրութիւնը, որոշում է կարճել Փամուքի դէմ յարուցուած գործը: Սակայն, իրաւաբան Քերինչսիզը (դատարանում Փամուքի ընդդիմախօս) պնդում է, որ կը բողոքարկի որոշումը, նկատելով որ՝ *«Օրհան Փամուքը պէտք է պատժուի, Թուրքիային եւ թուրքականութիւնը վիրաւորելու համար. սա մեծագոյն յանցանք է եւ այն չի կարելի անպատիժ թողնել»*³⁸:

Լրատուական մարմինները միասնաբար արձանագրում են, որ դատարանի յիշեալ որոշումով վերանում է Եւրոմիութեան հետ Թուրքիայի Հանրապետութեան տարակարծութիւնների ծանրագոյն պատճառներից եւս մէկը, եւ եւրոպացիները գրկւում են խօսքի ազատութիւնը սահմանափակելու մէջ Թուրքիայի Հանրապետութեանը մեղադրելու հնարաւորութիւնից³⁹:

Այս հարցը, Փամուքի կենսագրականում գրաւելով կարեւոր տեղ, բնականաբար չէր կարող չքննարկուել, չպարզաբանուել իր *Այլ Գոյներ* ինքնակենսագրական բնոյթի վէպում: Գրքում, Փամուքը հանգամանօրէն անդրադառնում է ստեղծուած իրավիճակին, եւ վերամփոփում իր խօսքերը. *«2005 թուականի Փետրուարին շուէյցարական թերթին տուած հարցազրոյցի ժամանակ ես ասել եմ, որ «Թուրքիայում սպանուել է 30.000 քուրդ եւ 1 միլիոն հայ», ինչպէս նաեւ ասել եմ, որ իմ երկրում գոյութիւն ունի արզելք այսպիսի թեմաների քննարկման համար: Ես խօսել եմ դէպքերի մասին, որոնք հայերի հետ են կատարուել Օսմանեան Կայսրութիւնում 1915 թուականին: Լուրջ պատմաբանների շրջանակում կասկած չկայ, որ հայերի մեծ մասը, ովքեր ապրել են Օսմանեան Կայսրութիւնում, Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ, անվտանգութեան ապահովման պատրուակով ենթարկուել են տեղահանման եւ ընթացքում սպանուել: Թուրքիայի Հանրապետութեան պաշտօնական ներկայացուցիչները պնդում են, որ մահացածների թիւը ուռճացուած է, եւ տեղի ունեցածը չի կարելի համարել ցեղասպանութիւն, քանի որ հայերի ոչնչացումը պարբերաբար տեղի չի ունեցել եւ նաեւ «փաստում» (չակերտաւորումը՝ հեղինակային - Ա.Ա.), որ պատերազմի ժամանակ հայերն էլ են սպանել շատ մուսուլմանների:*

... Եթէ կառավարութիւնը մանրակրկիտ թաքցնում է թուրք ժողովրդից այն ինչ տեղի է ունեցել հայերի հետ Օսմանեան Կայսրութիւնում 1915 թուականին, ուրեմն այս թեմայի վրայ

իսկապէս դրուած է արգելք: Այս ամէնի ապացոյցը իմ ասած բառերն են: Շատ թերթեր իմ դէմ բացեցին մոլեգին պայքար, որոշ յօդուածագիրներ գրեցին, որ բոլորի օգուտի համար ինձ պէտք է լռեցնել, ազգային ծայրայեղական խմբաւորումներ կազմակերպեցին ցոյցեր՝ այրելով գրքերս⁴⁰ ու նկարներս: Քաղաքական հայեացքների պատճառով ես ստիպուած էի որոշ ժամանակով լքել հայրենիքս, քաղաքիս սիրելի փողոցները: Ես ամէնէնին ցանկութիւն չունէի մեծացնել այս պատմութիւնը եւ չէի ցանկանում լսել այս գործընթացի մասին: Սկզբում լռութիւն էի պահպանում եւ ամօթի զարմանալի զգացումով փորձում էի թաքցնել կատարուածը: Բայց գործը ստացաւ միջազգային արձագանգ, երբ նահանգապետերից մէկը հրամայեց այրել իմ գրքերը, իսկ Մտամբուլում յարուցուեց իմ դէմ դատական գործ: Ես գիտակցեցի, որ հասարակութեան մէջ բարձրացուած ատելութիւնը ուղղուած էր ոչ միայն իմ դէմ, եւ հասկացայ, որ եկել է ժամանակը խօսելու կատարուածի մասին եւ Թուրքիայում, եւ նրա սահմաններից դուրս: Ես համոզուած էի, որ ազգի պատիւը կարող է կեղտոտել ոչ թէ պատմութեան «մութ հետքերի» բացայայտ քննարկումը, այլ հակառակը՝ նրանց մասին լռութիւնը: Անհնարին է չնկատել, որ այսօրուայ Թուրքիայում աճել է Օսմանեան Կայսրութիւնում հայերի ճակատագիրը քննարկելու արգելքը: Իրականում սա նաեւ ազատ խօսքի արգելք է: Ես հասկացայ, որ այս երկու թեմաները անքակտելիորէն կապուած են իրար հետ: Գտնում էի միջազգային հետաքրքրութեան եւ ուշադրութեան կենտրոնում, սակայն ինձ համար տհաճ էր գիտակցել, որ ես յայտնուել եմ իմ երկրի եւ այլ աշխարհների միջեւ: Բացի այդ, ակնյայտ է, որ երկիրը, որը ոչ մի կերպ չի կարողանում հրաժարուել գրողներին բանտ նետելու հաճելի սովորոյթից, չի կարող դառնալ Եւրոմիութեան լիիրաւ անդամ: Զգում էի, որ անհրաժեշտ եւ պարտադիր է նկատել Եւրոպայի պահպանողականներին, որոնք չէին ցանկանում տեսնել Թուրքիային Եւրոմիութեան անդամ:

Անբացատրելի է, թէ ինչու է երկիրը, որի գլխաւոր արտաքին քաղաքականութեան խնդիրը համարում է Եւրոմիութիւն մտնելը, փորձում է, ինչպէս կ'արտայայտուէր Ժոզէֆ Կոնրադը՝ «Արեւմուտքի աչքերի առաջ» բանտարկել հեղինակի, ում գրքերը լաւ յայտնի են հենց Եւրոպայում: Ինձ համար դժուար է բացատրել այս անբացատրելին՝ հասարակ տգիտութեամբ, նախանձով կամ անհամբերութեամբ, բայց սա միակ անբացատրելին չէ յիշեալ գործում: Ինչ մտածել, երբ հակառակ եւրոպացիների, թուրքերը իրենց համարում են բարի, ոչ ընդունակ ցեղասպանութեան, մարդկանց կարեկցող, եւ միեւնոյն ժամանակ տարբեր ազգայնական

խմբավորումներ ինձ սպանել են ուզում: Ի՞նչ տրամաբանությամբ է առաջնորդում կառավարությունը, որը բողոքում է, որ նրա թշնամիները սեւացնում են Թուրքիան ամբողջ աշխարհի աչքի առաջ, դրանով իսկ ամրապնդելով «թուրք-գալթիչի» կերպարը ամբողջ աշխարհում:

... Թուրքիայի՝ Եւրոմիութեանը անդամակցելու կողմնակիցները յաճախ քննադատում են մեզ՝ Եւրոպայի շեմին ճակատագրին սպասող թուրքերիս, տնտեսության զարգացման ոչ-բաւարար մակարդակի եւ ժողովրդավարական կանոնակարգերի եւ մարդու իրաւունքի անհետեւողականութեան համար: Վստահ եմ, որ վաղուայ վիպասանները, ովքեր պատրաստում են գունեղ եւ իրական նկարագրել անձնական կեանքը նորի, ... յոյս են փայփայում, որ Արեւմուտքը ապագայում հանդէս կը գայ հենց իրենց իսկ երկրներում խօսքի ազատութեան սահմանափակման քննադատութեամբ⁴¹:

10 Նոյեմբերի 2009ին Նիւ Եորքի Քուինզ Քոլէջում կայացած Փամուքի Անւեղութեան Թանգարան նոր գրքի ներկայացումից յետոյ գրողին հարց է ուղղել Արմինիզի «Քոմենտ» հեռուստահաղորդումից յայտնի, Սորբոնի Համալսարանի դոկտորանտ, նիւեորքաբնակ Հայկ Մարտիրոսեանը: Հարցի իմաստը եղել է այն, որ թէեւ Փամուքը Հրանտ Դինքի հետ առաջիններից մէկն է եղել, ով քաջութիւն է ունեցել խօսել հայերի Ցեղասպանութեան մասին, վերջերս կարծես թէ կրաւորական դիրք է բռնել այդ հարցում: Հարց տուողը ցանկացել է իմանալ, թէ արդե՞ս ք դա նախկինում Փամուքի հանդէպ կատարուած քրեական հետապնդման հետեւանք է:

Փամուքը հարցից անակնկալի է եկել եւ ներադայնացած, առանց «ցեղասպանութիւն» բառն օգտագործելու (բառը երբեք Փամուքը իր յայտարարութեան մէջ չի օգտագործել - Ա.Ա.)՝ պատասխանել է. «Դա ինձ համար նախեւառաջ խօսքի ազատութեան խնդիր է եղել, եւ յետոյ դա իմ կեանքի միակ թեման չէ: Առաւել կարեւոր խնդիրներ կան: Բացի այդ՝ այս թեմաները նախ պէտք է քննարկի թուրք ժողովուրդը»⁴²: Եւ հետացել է դահլիճից:

Յունուար 2011ին Աթէնքում տեղի ունեցած գիտաժողովից յետոյ, հարցազրոյց տալով տեղական թերթերից *Քայթիւերին* եւ խօսելով երկու աշխարհներում (Արեւելք եւ Արեւմուտք) Թուրքիայի ունեցած դիրքի մասին, Փամուքը, հաւանաբար, յիշելով անպատասխան մնացած վերյիշեալ հարցադրումը, մէկ անգամ եւս բարձրաձայնում է՝ «Հայերի եւ քրդերի մասին յայտնի խօսքերիցս չեմ հրաժարուում»⁴³:

27 Նոյեմբերի 2011ին Քերինչսիզը, փորձելով իրականացնել իր խոստում-յայտարարութիւնը, դիմում է Շիշլիի Գերագոյն վերաքննիչ դատարան նորից Փամուքի գործը բացելու համար: Այս անգամ

դատարանը Փամուքին մեղաւոր է ճանաչում, եւ նա վճարում է տուգանք 6,000 թրք. լիւրա⁴⁴:

Հաւանաբար Փամուքը, միանգամայն գիտակցելով Թուրքիայի Հանրապետութեան ոչ-թուրք ազգերի ինքնութեան, նրանց քաղաքացիական եւ պատմական իրաւունքների նկատմամբ իր կառավարութեան վարած քաղաքականութեան ծանրութիւնը եւ երբեք չկիսելով դրա պատասխանատուութիւնը, 2008ից հեռանում է երկրից՝ բնակութիւն հաստատելով Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Նիւ Եորքում:

Այնուամենայնիւ, 2015 Փետրուարի 15ին Ստամբուլի Ֆրանսիայի Լրատուական Գործակալութեան (Agence France Press/AFP) հետ հարցազրոյցի ժամանակ, վերստին անդրադառնալով Թուրքիայի Հանրապետութեան քաղաքական կեանքին, քննադատել է իշխանութիւնների ձեւական բնոյթ կրող ժողովրդավարութիւնը, յիշատակել այն գրողների ճակատագրերը, որոնք «բանտարկուել են, աքտորուել, նոյնիսկ սպանուել», նկատել նաեւ, որ այդ միջավայրում, երբ ինքը տարիներ առաջ համարձակուել է խօսել ժողովուրդների թեմայով, մեծ դժուարութիւններ է ունցել. «Ես դժուարութիւններ եմ ունեցել 8-10 տարի առաջ, երբ խօսել եմ ազատօրէն այս թեմայի շուրջ»: Եւ եզրափակել է հարցազրոյցը⁴⁵:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Orkhan Pamuk, *Drugie Tsveta* (Այլ գոյներ), Սանկտ Պետերբուրգ, Ամֆորա, 2008, էջ 87:

² Ապրել եւ մեծացել է Նիշանթաշում (Ստամբուլի Գալաթա հատուածամասի հիւսիս-արեւելեան թաղերից): Սերում է հին եւ հարուստ ընտանիքից, Մանիսա եւ Իզմիր քաղաքների յունա-թուրքական միջավայրից: Սովորել է Ստամբուլի Ամերիկեան Ռոբերտ Քոլէջում: Երեք տարի ուսանել է Ստամբուլի Ճարտարագիտական Համալսարանի Ճարտարապետութեան Բաժնում, ապա նախասիրութիւնը փոխել է եւ 1976ին աւարտել Ստամբուլի Համալսարանի Լրագրութեան Ֆակուլտետը: Ի վերջոյ, նախընտրել է վիպասանի ճանապարհը: (Անի Աւետիսեան, «Օրհան Փամուքը Եւ Իր «Սեւ Գիրքը», *Թիւրքագիտական Եւ Օսմանագիտական Հետազոտութիւններ*, IV, Արեւելագիտութեան Ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան, 2006, էջ 166-83. նաեւ՝ նոյնի, «Օրհան Փամուքի «Սպիտակ Ամրոց»ը, *Բնօրրան*, թիւ 1-4 (17-20), Երեւան, 2007, էջ 231-36):

³ Amnesty International, Statement, 23 January 2006, Turkey: Court Drops Case Against Novelist Orhan Pamuk, www.orkhanpamuk.net, 27. 01. 2009:

⁴ «Թուրքիայում Մէկ Միլիոն Հայ Է Սպանուել» *Յայտարարում Է Յայտնի Թուրք Վիպասանը*, *Ազգ օրաթերթ*, թիւ 24 (3190), 11 Փետ. 2005 թ., էջ 8. նաեւ՝ Ս.Դ. Գրիգորեան, «Զօրակցինք Օրհան Փամուքին», *Նոր Կեանք* շաբաթաթերթ, ԻԷ.

- տարի, թիւ 43, 6 Հոկտեմբերի 2005, Լոս Անճելըս. նաեւ՝ «Խօսքի Ազատութիւն Թուրքիայում», *Վասն Հայութեան* ամսագիր, թիւ 2, Նոյեմբեր 2005:
- ⁵ 12 Հոկտեմբեր 2006ին Շուէդական Ակադեմիան Օրհան Փամուքին շնորհեց Նոբելեան Գրական Սրբանակ հետեւեալ ձեւակերպմամբ՝ «Նա իր քաղաքի մեղամաղձոտ հոգին որոնելիս, յայտնաբերեց նոր խորհրդանիշեր բախտոտ եւ իրար յաջորդող մշակողների համար» (*The Nobel Prize in Literature 2006 Orhan Pamuk*, www.nobelprize.org, 12. 10. 2006):
- Այս քայլը թուրքերը որակեցին «Յեղասպանութեան ճանաչման համար արուած «վարձատրութիւն», «Փամուքի համար յորհնուած» եւն. (*Pamuk's Nobel Prize - "Fee" for Genocide Recognition, Turks say*, www.hhk.am, 24. 10. 2006. նաեւ՝ www.realitycafe.blogspot.com, 27. 03. 2009):
- ⁶ Ardan Zentürk, "Orhan Pamuk ... Canımı Yaktın ...", (Օրհան Փամուք ... Հոգիս այրեցիր), *Star* gazetesini, 11 Şubat 2005. նաեւ՝ *Agos* gazetesini, "Basının Pamuk Hezeyanı" (Մամուլի զանանցանքը Փամուքի դէմ), sayı 464, 18 Şubat 2005, էջ 8:
- ⁷ Fatih Altaylı, "Kara Yazar" (Մե գրող), *Hürriyet* gazetesini, 11 Şubat 2005. նաեւ՝ *Agos* gazetesini, sayı 464, էջ 8:
- ⁸ Ahmet Hakan, "Orhan Pamuk Üzerine Tezler" (Տեսակետներ Օրհան Փամուքի վերաբերեալ), *Hürriyet* 16 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8: Այս եւ յաջորդ թուրքական պարբերականներից թարգմանութիւնները յօդուածագրիւն են:
- ⁹ Ataoğulları Behramoğlu, "Orhan Pamuk'un Şakaları" (Օրհան Փամուքի կատակները), *Cumhuriyet* gazetesini, 12 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8:
- ¹⁰ Oral Çalışları, "Haddimizi Bilelim, Hizaya Girelim!" (Մեր սահմանները ճանաչենք եւ մեր անելիքը իմանանք), *Cumhuriyet*, 16 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8:
- ¹¹ "Bırakın Herkes Konuşsun" (Թողէք բոլորը խօսեն), *Agos*, sayı 464, էջ 1. նաեւ՝ «Հիմա Ալ «Փամուք»ը Ելաւ», *Uçou* (Հայերէն ներդիր), թիւ 464, էջ 5:
- ¹² Նոյն:
- ¹³ Յակոբ Չաքրեան, «Օրհան Փամուքը Նշանառութեան Թիրախ Թուրքիայում, Թուրքական Թերթերը Նրան Հռչակում Են Ազգի Դաւաճան, Իսկ Թուրք Գիտնականները Չայնակցում Են», *Uçq*, թիւ 25 (3191), 12 Փետրուարի 2005, էջ 1. նաեւ Hakob Chakrian, *Turkish Papers and Scientists Declare Him Traitor of Nation*, www.neomail.sorceforge.net , 15. 02. 2005 :
- ¹⁴ Նոյն:
- ¹⁵ Նոյն:
- ¹⁶ Նոյն:
- ¹⁷ Zentürk, էջ 8:
- ¹⁸ Չաքրեան, էջ 1:
- ¹⁹ "Bırakın Herkes Konuşsun", էջ 1:
- ²⁰ Mehmed Ali Birand, "Orhan Pamuk neden düşündüğünü söylemesin?" (Ինչու՞ Օրհան Փամուքը չպիտի ասի իր մտածածը), *Posta* gazetesini, 16 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8:
- ²¹ "Bırakın Herkes," էջ 1:
- ²² Haluk Şahin, "Orhan Pamuk'a Dostça Hatırlatma" (Օրհան Փամուքին յիշեցնենք քարեկամաբար), www.radikal.com.tr , 01. 07. 2005:

- ²³ 301 յօդուածի համաձայն դատավարութիւններ են սկսուել նաեւ Հրանտ Դինքի, Սեհմուս Ուլէքի, Ռագըփ Զարաթօլուի, Թանէր Աքչամի, Ֆաթիհ Թասի, Բիրոլ Դուրույի, Ռեդուան Քըզզընի, Էլիֆ Շաֆաքի եւ այլոց, լրագրողներ՝ Սուրադ Բելզէի, Հասան Ջեմալի, Էրոլ Քաթըրըջըղուի, Իսմէթ Բերքանի, Հալուկ Շահինի դէմ (Բաղըջլար Դատարանի Առաջին Ատեան՝ 7 Փետրուար 2006)՝ իրենց բարձրաձայնած մտքերի, յօդուածների պատճառով: Ինչպէս նաեւ Հալիլ Ալթընդէրէի դէմ (Բէյօղլուի Քրեական Դատարանի Առաջին Ատեան՝ 13 Ապրիլ 2006)՝ նկարների ցուցադրութեան պատճառով, որն, իբր «վիրաւորել» է թուրքական բանակին, մտաւորականներ՝ Իբրահիմ Քաթօղլուի եւ Բասքըն Օրանի դէմ (15 Յունուար 2006)՝ փոքրամասնութիւնների եւ մշակութային իրաւունքների համար, գրող Ջուլքուֆ Քըսանաքի դէմ (Ստամբուլի Քրեական Դատարանի Առաջին Ատեան՝ 22 Դեկտեմբեր 2005)՝ *Ինչպէս ժառանգութիւնը Հարիւր Տարի Այրուեց. Կորցրած Գիւղեր* գրքի համար, որը Թուրքիայի Հանրապետութեան դէմ ուղղուած վիրաւորանք էր որակուել (Turkey: Court Drops Case Against Novelist Orhan Pamuk, www.orhanpamuk.net, 27.01.2009. նաեւ՝ *Agos*, “Türkiye Sanık Kürsüsünde” (Թուրքիան մեղադրեալի աթոռին), sayı 507, 16 Aralık 2005, էջ 1):
- ²⁴ *Hürriyet*, “Türkler Ermenileri Kesti Demedim” (Չեմ ասել «թուրքերը հայերին կոտորեցին»), 16. 10. 2005, www.openarmenia.com, 30. 10. 2005:
- ²⁵ Erdal Şafak, “Zamanlama Şaheserleri” (Ժամանակաւոր գլուխգործոցները), *Sabah*, 9 Ekim 2005. նաեւ՝ *Agos*, sayı 498, 14 Ekim 2005, էջ 10:
- ²⁶ «Ազատութեան Ռ/Կ, Գիւլը Արձագանգել է», *Առաւօտ* օրաթերթ, թիւ 172 (2545), 10 Սեպտեմբեր 2005, էջ 2:
- ²⁷ Նոյն:
- ²⁸ Նոյն:
- ²⁹ Informationsnaya Slujba Genocide.ru, Khelsinkaya Komisia Prizivayet Snyat Obvneniya V Adres Orkhana Pamuka 14 Oktyabr 2005 (Հէլսինքեան Յանձնաժողովը կոչ է անում չեղեալ նկատել Օրհան Փամուքի դէմ յարուցուած դատը) 14 Հոկտեմբեր 2005, www.news.genocide.ru, 22.01.2006:
- ³⁰ “Türkiye Sanık Kürsüsünde,” էջ 1:
- ³¹ *Hürriyet*, “Türkler Ermenileri”:
- ³² *Milliyet*, “Ölenler İçinde Türk Askerleri De Var” (Սպանուածների մեջ թուրք զինուորներ էլ կան), www.openarmenia.com, 30. 10. 2005:
- ³³ Aydınlik, “Orhan Pamuk’a Ödülü Alman Istihbaratı Verdirdi” (Օրհան Փամուքին մրցանակ Գերմանական Հրատարակչութիւնը յանձնեց), 30 Ekim 2005, www.aydinlikgazete.com :
- ³⁴ «Օրհան Փամուքին Այս Անգամ Մեղադրում Են «Թուրք Զինուորականութեանը Նուաստացնելու Մէջ», *Ազգ*, թիւ 195, 28 Հոկտեմբերի 2005 թ., էջ 1:
- ³⁵ «Նիւ Եոքք Թայմս» Թուրքիան Դատաստանի Առաջ», *Ազգ*, թիւ 235 (3401), 23 Դեկտեմբեր 2005, էջ 5. նաեւ “Türkiye Sanık Kürsüsünde”, էջ 1. նաեւ՝ Orkhan Pamuk Posadyat Za Genotsid (Օրհան Փամուքը կը բանտարկէն Ցեղասպանութեան համար), www.resheto.ru, 12. 10. 2005:
- ³⁶ Şafak, էջ 10. նաեւ՝ Informationsnaya Slujba Genocide.ru.:

-
- ³⁷ Turtsiya Ostanovila Sud Nad Orkhanom Pamukom Posle Oogroz Yevrosoyuza (Թուրքիան կասեցրեց Օրհան Փամուքի դատը՝ Եւրամիութեան սպառնալիքից յետոյ), www.podrobnosti.ua , 18.12.2005:
- ³⁸ 2008 Յունուար ամսին, 33 (35) ազգայնամուլներ, այդ թում նաեւ Քեմալ Քերինչսիզը, ձերբակալուեցին թուրքական իշխանութիւնների կողմից, ընդատակեայ գործող թուրքական ազգայնական կազմակերպութեան անդամ լինելու մեղադրանքով: Այդ կազմակերպութեան անուանումն է Էրգենեկոն, որը սպանել էր քաղաքական անձանց, ներառեալ միքանի քրիստոնէաների, այդ թում՝ խմբագիր եւ հրատարակագիր Հրանտ Դինքին: Միքանի գրութիւններ վկայում էին, որ Փամուքը այս մարդկանց ցուցակում եւս կար: Ծայրայեղականները խոստացել էին 1,5 մլն. ԱՄՆ դոլար՝ Փամուքի սպանութեան դիմաց (*Murder Attempt on Orhan Pamuk Prevented in Turkey*, www.tv.am, 24 January 2008. նաեւ՝ Orhan Pamuk, www.kupec.org.ua , 03. 02. 2009):
- ³⁹ Յակոբ Չաքրեան, «Կարճուեց Օրհան Փամուքի Գործը», *Ազգ.* թիւ 11 (3415), 24 Յունուար 2006, էջ 5. նաեւ՝ «Հանգիստ Թողեցին», *Առաւօտ*, թիւ 11 (2630), 24 Յունուար 2006, էջ 2. նաեւ՝ Radio Svoboda Ob Orkhane Pamuke (Ազատութեան ձայնասփիւղը Օրհան Փամուքի մասին), www.svoboda.org , www.belintellectuals.com , 22.01.2006. նաեւ՝ Turkey: Court Drops Case Against Novelist Orhan Pamuk, www.owww.orhanpamuk.net , 27.01.2009:
- ⁴⁰ Ռ. Պ., «Թուրքերը Փորձել Են Ոչնչացնել Օրհան Փամուքի Գրքերը», *Ազգ.* թիւ 57 (3223), 1 Ապրիլ 2005, էջ 1:
- ⁴¹ Pamuk, *Drugie Tsveta*, էջ 115-17:
- ⁴² «Փամուկին Նեարդայնացրել Է Հայի Հարցումը», *Ազգ.* թիւ 207 (4349), 13 Նոյեմբեր 2009, էջ 1:
- ⁴³ Sözlrimi Geri Almam (Խօսքերս եւս չեմ վերցնի), 17 Ocak 2011, www.gazete5.com/haberler/kultursanat-307.htm :
- ⁴⁴ Orhan Pamuk, from Wikipedia, *the free encyclopedia*, www.en.wikipedia.org/wiki/Orhan_Pamuk :
- ⁴⁵ Turkey's military, which has forced out civilian governments in the past, has been pushed to the sidelines but largely replaced with an Islamist and authoritarian government, Turkish Nobel Laureate Orhan Pamuk said in remarks published on Saturday (<http://www.todayzaman.com/news> , 17.02.2015):

THE REACTION OF ORHAN PAMUK'S "ONE MILLION ARMENIANS AND
THIRTY THOUSAND KURDS KILLED IN TURKEY" STATEMENT
BREAKS HAVOC
(SUMMARY)

ANI AVETISYAN
aniavet84@mail.ru

The author of the paper refers to a statement by the modern Turkish writer and winner of the Nobel Prize in Literature, Orhan Pamuk (Ferit Orhan Pamuk). The statement regarding the Armenian Genocide made during an interview given to the Swiss daily newspaper *Tages-Anzeiger* in February 2005 was: "One million Armenians and thirty thousand Kurds were killed in Turkey. And almost nobody dares to mention it. So I do...".

The paper includes Armenian and foreign media materials and opinions expressed by scientific circles (concerning 2005-2006 and recent years) regarding the above mentioned statement. The paper also presents the course of the court case raised against him in Turkey.

Finally, the author of the paper makes remarks, which allow readers to develop their own opinions.

Փոխան Գրախօսականի

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՔՐԴԵՐԻ

ԲԱՆԱԻՈՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ԸՍՏ՝ ԳԻԻԼՉԻՉԷՔ ԹԵՔԻՆԻ ՔՐԴԵՐԸ ՊԱՏՄՈՒՄ
ԵՆ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԳՐՔԻ)

ԳՈՌ ԵՐԱՆԵԱՆ
goreranyan@mail.ru

Հայոց ցեղասպանութեանը քրդերի մասնակցութեան հարցը համապարփակ եւ բազմակողմանի ուսումնասիրութեան կարիք ունի: Ի՞նչ չափով են քրդերը մասնակցել Մեծ Եղեռնին, ինչու՞ նրանք աջակցեցին հայաջինջ քաղաքականութեանը, եւ ամենակարեւորը՝ առանց քրդերի գործուն աջակցութեան արդե՞՞ք Օսմանեան Կայսրութեանը կը յաջողուէր հայրենագրկել եւ բնաջնջել արեւմտահայութեանը կամ ի՞նչ ծաւալներ այն կ'ընդունէր:

Ինչպէ՞ս են քրդերն իրենք մեկնաբանում Հայոց Ցեղասպանութիւնը եւ ի՞նչ են յիշում այդ մասին: Այս հարցին պատասխանում է 2013 Ապրիլին Թուրքիայում Ռազրփ Զարաքօլուին պատկանող հրատարակչատանը տպագրուած Գիւլչիչէք Գիւնէլ Թեքինի *Beni Yakamadan Gömün, Kürtler Ermeni Soykırımını Anlatıyor* ուշագրաւ գիրքը¹:

Գրքի հեղինակը շրջել է Վանի, Ոստանի, Աղբակի, Հաքիարիի, Մատունի, Սուշի, Բիթլիսի, Սղերդի, Դիարբեքիի, Մարդինի, Խարբերդի, Դերսիմի, Երզնկայի, Մալաթիայի, Կարսի, Իգդիրի եւ Բայազետի տասնեակ բնակավայրերում եւ քրդերից գրի է առել շուրջ 130 բանաւոր պատումներ Հայոց Ցեղասպանութեան մասին: Նրա գրուցակիցների՝ վկայութիւնների հեղինակների, միջին տարիքը 60ից բարձր է, իսկ ամենատարեցը՝ 128ամեայ մի ծերունի է²: Նրանք պատմում, վերաշարադրում ու ներկայացնում են, թէ ի՞նչ են լսել իրենց պապերից, տատերից, ծնողներից ու հարեւաններից՝ հայերի կոտորածների մասին, թէ ջարդերին ո՞ր քրդական աշիրէթն է մասնակցել, որը՝ ո՛չ, ինչպիսի՞ն էին հայերի հետ յարաբերութիւնները: Երբեմն յիշում են հայ գործիչների, օրինակ՝ Արամ փաշային (Արամ Մանուկեան): Թեքինի գրուցակից քրդերից շատերը հայկական արմատներ ունեն: Կան նաեւ այնպիսիք, որ ընդունում են իրենց հայ լինելը: Նշեալ ենթախմբերի առկայութիւնն աւելի է բարձրացնում գրքի արժէքը, պատմութիւնները դարձնելով աւելի բազմաբնոյթ ու հետաքրքիր:

Թեքինին մեծապէս օգնել է իր քրդական ծագումը. գրուցակիցներն նրան համարել են «իրենց մարդը»: Քրդերէնի իմացութիւնը եւս դրական դեր է կատարել ստանձնած առաքելութեան իրականացման գործում:

Հեղինակի գործը դիրքին չի եղել: Եղել են դեպքեր, երբ վախեցել են խօսել՝ հարցնելով՝ «կարո՞ղ է մեզ վատ բան պատահի»: Մակայն քրդերի մեծ մասը պատմել է առանց վարանելու: Պատճառն այն է, որ քրդերը չեն մոռանում նշել, որ հայերին ոչնչացնելուց յետոյ, քրդերի նկատմամբ Թուրքիան որդեգրեց բռնաճնշումների ու հալածանքների քաղաքականություն: Քրդաբնակ շրջաններում այսօր գոյություն ունեցող եւ սարսափ ներշնչող քորուջուններին³ նրանք նույնացնում են Համիդէական Գնդերի հետ: Մի խօսքով՝ քրդերի նկատմամբ Թուրքիայի վարած կոշտ քաղաքականությունը նպաստում է, որպեսզի նրանք համեմատության եզրեր գտնեն իրենց ներկայ կացության եւ հայերին պատուհասած ողբերգության միջեւ: Առ այդ, քրդերը փորձում են իրենց յիշողությունը՝ հասկանալու համար իրենց դժուարին վիճակի խորքային պատճառները:

Գրքում գրեթե չկայ Թուրքիայի պաշտօնական պատմագրության ազդեցությունը, ինչն աւելի՛ է մեծացնում դրանց արժանահաւատությունը, եւ հնարաւորություն տալիս ասել, որ քրդերը ճշմարտացիօրէն վերարտադրում են իրենց իմացածը: Դիարբեքիրի քրդերից Հայոց Յեղասպանության մասին պատումներ գրի առած հետազօտող Ադնան Չելիքի կարծիքով՝ Անկարայի պաշտօնական պատմագրությունը տարածաշրջան չի ներթափանցել, քանի որ Թուրքիայի Հանրապետության հռչակումից երկու տարի անց տեղի ունեցած Շէյխ Սաիդի ապստամբությունից⁴ յետոյ քրդերը պետության դէմ դուրս եկան՝ դրանով տարածաշրջանի առաջ փակելով պաշտօնական գաղափարախօսության դուռը⁵: Խօսելով յիշողության դերի մասին՝ Յարութին Մարութեանը նշում է. «Չնայած անցեալ եւ ներկայ ժամանակների միջեւ քերականական զանազանութեանը, անցեալն ու ներկան միմեանցից ամբողջութեամբ առանձնացուած միաւորներ չեն»⁶:

Բանաւոր պատմությունները իրենց ներկայացրած մանրամասներով ու ճշգրտութեամբ զարմանք են յարուցում: Հետազօտող Նամրք Քեմալ Դինչը երեք հիմնական պատճառ է նշում, թէ ինչու՞ թուրքերը ոչինչ չէ՛ն յիշում, իսկ քրդերը, ընդհակառակը, հայերի պէս յիշում եւ պատմում են 1915ի մասին: Ըստ նրա՝ առաջինը յիշողության եւ բնակավայրի միջեւ գոյություն ունեցող կապն է, երկրորդը՝ կիրարկուած դաժանութեան չափը, եւ երրորդը՝ հայերի եւ քրդերի ընդհանուր ու երկարատեւ անցեալն է⁷:

Քրդերի ներկայացրած պատումները նաեւ հնարաւորություն են տալիս լաւ ճանաչելու այս ժողովրդին, հասկանալու նրա բնաւորութեան գծերն ու մտածելակերպը:

Թեքինի գրքում առկայ բազմաթիւ պատումներն ընդհանրացնելով՝ ներկայացնենք, թէ ի՛նչ են պատմում քրդերը Հայոց Յեղասպանության ու յարակից մի շարք հարցերի մասին:

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՔԻՐՎԱՅՈՒԹԻՒՆ

Անշուշտ, պատմագիտական մեթոդաբանության տեսանկյունից սխալ է Բ. դարի սկզբի հայ-քրդական յարաբերությունների մասին կարծիք կազմել հիմք ընդունելով միայն քրդերի վկայություններն ու պատումները: Քրդերի պատկերացումները այդ դարի հայ-քրդական յարաբերությունների մասին չեն կարող արտայայտել պատմական առարկայական իրականությունը, այդ յարաբերությունների բոլոր ծայքերն ու խութերը: Դրանով հանդերձ, այն կարելուում է Հայոց Ցեղասպանությանը մաս կազմելու կամ հակառակը՝ հայերին օգնության ձեռք մեկնելու, քրդերի դիրքորոշման պատճառները հասկանալու համար: Որպես կանոն, մինչև 1915ի իրադարձություններին անդրադառնալը քուրդ մարդիկ հարկ են համարում խօսել հայ-քրդական յարաբերությունների մասին: Տարեց քրդերը գրեթե միաբերան նշում են, որ երկու ժողովուրդները համերաշխ էին ապրում: Որպես լա յարաբերությունների հիմնական ապացույց նրանք մատնացոյց են անում հայերի եւ քրդերի միջև գոյություն ունեցած *քիրվայական* (կնքահայր, քաւոր) յարաբերությունները:

1939ին Մշոյ Խոպէր գիւղում ծնուած մոլլա Մեհմէթ Սալիհ Եիղիթը Թեքինին ասում է. *«Մայրս մեզ միշտ պատմում էր՝ հայերը մեր քիրվաներն էին, մեր յարաբերություններն ու հարեւանությունը նրանց հետ շատ լաւ էր: Հայերի հետ մի տան պէս էինք: Մենք նրանց շատ էինք վստահուծ»*: Մանագկերտից Նուրի Բալշըն էլ պատմում է. *«Հայերի եւ քրդերի միջեւ որեւէ խնդիր չկար, ընկերային յարաբերություններն էլ բաւական լաւ էին: Միմեանց դիմում էին՝ ասելով «քիրվա»: Քիրվայութիւնը հետեւեալն է. «Մուսուլման տղայ երեխայի թլփատման արարողութեան ժամանակ թլփատուող երեխան նստում է այն մարդու ծնկին, որն այդ ընտանիքի ամենասիրելի, յարգելի ու վստահելի մարդն է: Նրա ծնկին էլ երեխային թլփատում են: Քիրվայութիւնը միաժամանակ նշանակում է բարեկամութիւն ու ընկերութիւն: Եթէ միմեանց քիրվա են դառնում, ապա միմեանց միջեւ աննշան անհամաձայնութիւն էլ չպիտի լինէր եւ այդպէս պիտի շարունակուէր մինչ մահ: Քրդերի համար քիրվայութիւնն այնքան կարեւոր էր, որ աւելի արժէքաւոր էր համարում, քան արիւնակցական կապը: Այն միաժամանակ փոխադարձ յարգանք, վստահութիւն ու սէր էր եւ կարեւորագոյն առանձնայատկութիւնն էր, որ պէտք է այդ յարաբերութիւնները պահպանուէին մինչեւ մահ: Քիրվայական յարաբերութիւններում անհամաձայնութիւնն ու թշնամութիւնը տեղ չունէին: Բարեկամի հետ կարող ես թշնամի լինել, քիրվայի հետ՝ ոչ: Եւ քրդերն ու հայերը քիրվաներ էին»*°:

Չեյիքը նկատում է, որ *քիրվայությունը* հիմնուած էր փոխադարձ հովանաւորչութեան վրայ: Ըստ նրա՝ հայերը քրդերի պաշտպանութեան, իսկ քրդերը հայերի արհեստների կարիքն ունէին¹⁰:

Մինչեւ 1915, քրդական աշիրէթներն անդադար կողոպտում էին հայ ժողովրդին, մեծ չափերի էր հասել գիւղացիութեան հողագրկումը: Քրդերը դարձել էին հայկական գաւառներում հայութեան զարգացման խոչընդոտող հիմնական ուժը: Մասունի Խեշտէ գիւղի բնակիչ, 1911ին ծնուած Ռէսուլ Երլըզը պատմում է. «Մեր Մասունի եւ Մուշի բոլոր կողմերում հայեր էին ապրում. մուսուլմանները փոքրաթիւ էին: Մուսուլմանները բռնի ուժով վերցնում էին հայերի բերքը եւ իւրացնում: Նրանք հայերի դէմ անհրաւութիւն էին գործում»¹¹: Քրդերի պատումներում ուշադրութիւն է գրաւում «իմ հայը» արտայայտութիւնը. այդպէս էին անուանում քուրդ աղաներն ու բէկերը իրենց ենթակայ գիւղերի տարածքում ապրող հայերին:

Այնուամենայնիւ, գրքում տեղ գտած վկայութիւնները ցոյց են տալիս, որ հայերի կոտորածներին մասնակցութիւնը քրդերը բացարձակօրէն չեն պայմանաւորում հայ-քրդական յարաբերութեամբ: Պատումներում քրդերը յաճախ զարմանում են՝ ինչու՞ պէտք է իրենք կոտորէին հայերին եւ իբրեւ միակ բացատրութիւն, ասում են՝ իրենց հրամայուած էր կոտորել հայերին:

FERMANA(E) FILLEN (FILLEHAN)¹² ԿԱՄ ՀԱՅԵՐԻ ՖԵՐՄԱՆԸ՝ ՈՐՊԷՍ ՀԱՅԵՐԻՆ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ

Քրդերի այս պատումները գրեթէ անխտիր սկսում են պետական հրամանի մասին վկայութիւններով: Նրանք յստակ նշում են, որ հայերին կոտորելու հրաման են ստացել: Քրդերի պատումներում հրաման տուողի դերում Օսմանեան Պետութիւնը կամ պարզապէս պետութիւնն է, կառավարութիւնը, փառիշահ-սուլթանը, ինչպէս նաեւ Թալէաթ փաշան: Ընդ որում իսօք չկայ գրաւոր որեւէ հրամանի մասին. քուրդ աշիրէթապետերին՝ հայերին կոտորելու մասին յայտնում են Օսմանեան Կայսրութեան տեղական պաշտօնեաները՝ բանաւոր: Պետական հրամանը քրդերն անուանում են «*Ֆերմանա(է)*» «*Ֆըլլէն*» կամ «*Ֆըլլէհան*», այսինքն՝ հայերի *ֆերմանը*՝ հրամանը: Մա ամենատարածուած արտայայտութիւնն է եւ հանդիպում է պատումների մեծ մասում. հենց այս եզրով են քրդերը բնորոշում Մեծ Եղեռնի մեկնարկի ազդանշանն ու յետագայ գործողութիւնները: Դատելով քրդերի վկայութիւններից՝ այդ անուանման տակ նրանք հասկանում են հայերի թէ՛ կոտորածը, թէ՛ տեղահանութիւնն ու աքսորը:

Վանի Գեւաշ (Գաւաշ, Ոստան) նահանգի Ա(ր)փէթ գիւղի բնակիչ Աբդուլլահ Հաքանը, որին հեղինակը բնորոշում է որպէս քայլող պատմութիւն, ասում է. «*Ինչպէս պատմում են, քրդերի եւ այլ*

մահմեդական ժողովուրդների աղաներին, բեյերին եւ այլ նշանաւոր մարդկանց ֆերմանի մասին լուր է գալիս: Ֆերմանի լուրն առաջինը Վան է հասնում: Վանի նահանգապետն էլ Սերհաթի¹³ շրջանի բոլոր աղաներին, շէյխերին, բեյերին ու նահանգների միւս նշանաւոր մարդկանց հաւաքում է Վանում: Վանի նահանգապետը նրանց համար կարդում է փառիշտի ֆերմանը: Վանի նահանգապետն ասում է. «Անմիջապէս սկսէ՞ք այս տարածքներում գտնուող հայերի կոտորածը: Հաւաքից յետոյ այնտեղ գնացած բոլոր բեյերն ու նշանաւոր մարդիկ ընդունում են հայերի ֆերմանը»¹⁴: Մշոյ Հաւատորիկ գիւղից եօթանասունն անց հաջի Հանիֆէն, վերապատմում է Սասունի կոտորածների վերաբերեալ ծնողներից լսածը. «Երբ հայերի հրամանը (ֆերմանը) գալիս է, կառավարութիւնը սկսում է սպանել նրանց: Հայերին հաւաքում, տանում էին եւ ամայի վայրերում, անտառներում, աչքից հեռու լեռնային վայրերում սպանում էին»¹⁵:

Մղերդի Էրուի շրջանի Բըներուէ գիւղի բնակիչ, 68ամեայ Մըխեմէդը պատմում է. «Կոտորածի հրամանը պետութիւնը տուեց. դրանից յետոյ մեզ լուր եկաւ. ասացին՝ կոտորէ՞ք հայերին»: 1936ին Շըրնաքի Ռոբար գիւղում ծնուած Էբուբեքիր Եադարջըքը փոխանցում է հօրից եւ հօրեղբօրից լսած պատումները. «1915ին, երբ արձակուում է հայերի ֆերմանը, զինուորները գալիս եւ հաւաքում են բոլոր հայերին»¹⁶:

Քրդերի բանաւոր յիշողութիւններում պահպանուել է մի շատ արժեքաւոր տեղեկութիւն: Թէպէտ քրդերը նշում են, որ թիրախը հայերն էին, սակայն չեն մոռանում խօսել նաեւ եզդիներին եւ ասորիներին կոտորելու մասին: Սասունի գիւղերից մէկի բնակիչ, 1927ին ծնուած Ջեմբելի Արաթեմուրը փոխանցում է մեծերից լսածները. «Հայերի կոտորածի հրամանը պետութիւնը տուեց: Դրանից յետոյ քրդերին ասացին՝ հայերը քրդերի թշնամիներն են, նրանց սպանելը հալալ է: Ով հայ սպանի, դրախտ կ'ընկնի»: Այնուհետեւ նա պատմում է, որ նոյնը վերաբերել է եւ եզդիներին¹⁷: Շըրնաքի Ջիզրէ շրջանի Շախ գիւղում ծնուած Ֆադիր Բեդիրհանօղլուն պատմում է. «1915ին դուրս է գալիս հայերի ֆերմանը: Վճիռ կայացնողը Օսմանեան պետութիւնն էր: Սակայն այդ հրամանը չէր սահմանափակուում միայն հայերով, այն ներառում էր նաեւ տարածաշրջանում ապրող բոլոր քրիստոնէաներին, այդ թւում եւ մեր գիւղում ապրող ասորիներին»¹⁸:

ՔՐԴԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆԸ

1915ի նախօրէին Օսմանեան Կայսրութիւնում ձեւաւորուել էր հակաքրիստոնէական հզօր ալիք: Քրդերի պատումներում հայերի կոտորածն առաւել յաճախ դիտարկուում է քրիստոնէայ-մուսուլման հակադրութեան ենթախորքում: Հայերի կոտորածներին իրենց մասնակցութեան հիմնական պատճառներից մէկն, ըստ քրդերի,

կրօնական քարոզչութիւնն էր: Քրդերին ներշնչում էին, որ հայերին սպանելու դէպքում դրախտում կը յայտնուեն: 1949ին Արձեշում ծնուած Ֆարօա Աւջըն ասում է. «*Ինչպէս պատմում են, կառավարութիւնը որոշում է կայացնում կոտորել հայերին եւ դա անելու համար դիմում է քրդերին, այդպիսով՝ հայերին եւ քրդերին իրար դէմ հանելով: Հայերին կոտորելու համար մեր կրօնը շատ է օգտագործուել: Որոշ իմամներ ու շէյխեր քրդերին ասում էին, թէ հայ սպանելը բարի գործ է: Եթէ մի հայ սպանես՝ կը բացես դրախտի դուռը, եթէ եօթ հայ սպանես՝ միանգամից դրախտ կ'ընկնես*»¹⁹: 1938ին Հաքիարիում ծնուած Թեֆիք Թաշն ասում է. «*Թալէաթ փաշայի ժամանակ քրդերին ասացին՝ հայերին սպանէք, դրախտ կը գնաք: Դրանից յետոյ իւրացրին քրիստոնէայ ժողովուրդների ապրանքն ու գոյքը: Մի մասին սպանեցին, մի մասն էլ փախաւ Իրան, Իրաք, Միլիա ու Հայաստան: Քրդերի մեծ մասն արեց այն, ինչ ասում էր կառավարութիւնը՝ սպանեց ու կոտորեց քրիստոնէաներին: Մի մասը դէմ էր դրան, սակայն քանի որ բաւարար ուժ չունէր, չէր պաշտպանում նրանց: Սակայն օգնեցին, որ հայերը փախչեն*»²⁰: Շըրնաք Նահանգի Իդիլ Գաւառից Սաբրի Ուզունը պատմում է. «*Հայերին պետութիւնը ջարդեց. մահմեդական բնակչութիւնն էլ էր կոտորում, պետութիւնն էլ: Մահմեդականների մի մասը օգնում էր զինուորներին: Կրօնն էր գլխաւոր պատճառը, որ մահմեդականների մի մասը օգնում էր զինուորներին: Այն ժամանակ ամէն ինչ գործադրում էր ըստ աշիրէթի կանոնների եւ ըստ կրօնի: Այդ ժամանակ հայերը, քրդերը, ասորիները իրար հետ էին ապրում եւ միմեանց միջու յարաբերութիւններն էլ լաւ էին: Յետոյ ըստ կրօնի կոտորած եղաւ: Մերոնք էլ են հայերի սպանել: Դաշոյներով հայերին սպանում էին: Մեխմէ Ռեշկօն ու հայրս՝ Գաֆուրը, հայերի են սպանել: Մեխմուդէ Աղմօն դաշոյնով մի կնոջ գլուխ է կտրել*»²¹:

Սասունի Հեշտեր գիւղում ծնուած մոլլա Ալիյէ Խըլյանլըն պատմում է, որ Սասունի Փարմըս (Բերմ) եւ Շեխըկէն (Շեխկոնք) գիւղերում հայերին հաւաքել են մի տեղ եւ ողջ-ողջ այրել²²: Ուշագրաւ է, որ Բերմի բնակչութեանը վառելու մասին վկայում է նաեւ Բերմի տանուտէր, կոտորածի ակնատես Բերբուշ Լադոյեանը²³ 1916ին գրառուած վկայութեան մէջ. «*Բերմցի կիները եւ երեխաները վերադարձուցին Բերմ եւ տան մը մէջ լեցնելով՝ վառեցին*»²⁴:

Հայերին կոտորելու թերեւս գլխաւոր շարժառիթը հայերի ունեցուածքին տիրանալու մոլուցքն էր: Այս հանգամանքը վճռական դեր է կատարել քրդերին՝ ցեղասպանութեանը մասնակից լինելու գործում: Հայերի գոյքին տիրանալու տենչը քրդերին՝ հրաման կատարողներից ու օգտագործուող ուժից վերածում է շահագրգիռ կողմի, նրանք ջանասիրաբար անցնում են գործի: Միաժամանակ թուրքական կառավարութիւնը դիմում է պարտադրանքի ուժին՝ ամէն ինչ անելով քրդերի մասնակցութիւնն ապահովելու համար:

Մասունի Այնրաս գիւղի բնակիչ Արիֆը վերապատմում է իր հարեւան, հայերի կոտորածների մասնակից Ֆիլիթից լսածը. «Պետութիւնը մեզ ասաց՝ հայերը մուսուլմաններին ոչնչացնելու են, բոլորին սպանելու են: Դուք թոյլ մի՛ տուէք, որ այդպէս լինի: Դուք միաւորուէք, հայերին սպանէք: Հայերին սպանելուց յետոյ նրանց ապրանքը, գոյքն ու հողը ձերը կը լինի: Դրանից յետոյ մենք սկսեցինք սպանել հայերին: Սպանելուց յետոյ նրանց գեղեցիկ կանանց, աղջիկներին մեզ էինք վերցնում: Երբեք չեմ մոռանայ՝ յղի կանանց սուինով մասնատում էինք, երեխան փորից դուրս էր գալիս: Փոքրիկ տղաներին վերցնում տանում էինք ու դաշտերում աշխատեցնում»²⁵: Մասունի Բազըքէն գիւղի բնակիչ Ադիլէ Համզօն պատմում է. «Պետութիւնը քուրդ բէլերին լուր ուղարկեց, ասաց՝ սպանէ՛ք հայերին: Նրանց ապրանքը, տունուտեղը, ինչպէս նաեւ կանայք ձերը կը լինեն, սպանէ՛ք նրանց: Քուրդ բէլերի մի մասը համաձայնեց եւ շատ հայ կոտորեց: Բէլերի մի մասն էլ մերժեց»²⁶: Սղերդի Էրուհ Գաւառի Բընէրուէ գիւղի բնակիչ հաջի Մըխեմէդը պատմում է իր հօր՝ Ահմէդի վկայութիւնը. «Զեթէները շրջում էին քրդական գիւղերում եւ փորձում իրենց կողմը գրաւել եւ համոզել քրդական աշիրէթներին, նրանց լիքը փող եւ ոսկի էին տալիս: Նրանք ասում էին՝ ով հայ սպանի, կառավարութեանը կ'օգնի, հայերի գոյքը, տունուտեղը, աղջիկները նրանը կը լինեն: Քրդերի մի մասը կառավարութեան եւ չեթէների վախից սպանեցին հայերին, մի մասը սպանեց հայերի գոյքին, տունուտեղին ու նրանց կանանց տէր դառնալու համար: Մի մասն էլ դէմ դուրս եկաւ: Ես էլ դէմ դուրս եկայ, չեթէներն ինձ փող առաջարկեցին, բայց ես չընդունեցի: Հայերի ջարդը չեթէների հետ միասին ոստիկաններն իրականացրին, ինչպէս նաեւ կոտորածի հրամանն ընդունած աշիրէթները: Նրանք յարձակւում էին հայերի գիւղերի վրայ, հաւաքում էին հայերին ու սպանում: Գիւղերն էլ վառում եւ աւերում էին»²⁷: Ոմանք էլ, ինչպէս Հասան Բէզը, միայն տղամարդկանց էր սպանում, իսկ կանանց ու երեխաներին ուղարկում էր Իրան²⁸: Սղերդի Էրուհ Գաւառից Մահֆուզ Աթաբայը պատմում է. «1915ի կոտորածի ժամանակ իմ պապ Եուուսֆի մեծ եղբորը՝ Աբդուլլահին, պետութիւնը տասնապետի կոչում է տալիս: Աբդուլլահը մասնակցում է հայերի ջարդերին: Նոյնիսկ Եուուսֆ պապիս օգտագործում է որպէս զինուոր: Եուուսֆ պապս չէր ուզում սպանել հայերին, սակայն բացայայտ դէմ դուրս չի գալիս: Եուուսֆ պապիս պէս քրդերի մի մասը, պետութեան ցանկութեանն ընդառաջելով, մասնակցում է հայերի ջարդերին, մի մասն էլ դէմ է դուրս գալիս կոտորածին»²⁹:

Քրդերի համատարած մասնակցութիւնը հասկանալու համար պէտք է հաշուի առնել այդ ժողովրդի բնաւորութեան մի շարք գծեր: Ազգագրագէտ Հմայեակ Արամեանը գրում է. «Մարդուն իր կեանքէն

գրկելն այնքան սովորական, անմեղ ու աննշան բան է քրդուն համար, որ նա մարդ սպանելիս շատ անգամ ցոյց չի տար վրդովմունքի առանձին նշաններ իսկ»³⁰:

Սասունի Թըմոք գիւղից Ջեմբելի Արաթեմուրը պատմում է. «Իմ հորեղբայր Ահմէդն Այշան անունով հայ կին ուներ: Կոտորածի ժամանակ այդ կինն ամուսնացած էր եւ մի աղջիկ ուներ, որ դեռ կաթից կտրուած չէր: Ահմէդ հորեղբայրս փախցրեց այդ կնոջը, սպանեց այդ երեխային եւ ամուսնացաւ նրա հետ: Ահմէդն իմ հարազատ հորեղբայրն է: Նա օրօրոցում գտնուող հայ երեխայի է սպանել: Ես պատմում եմ ձեզ այս պատմութիւնը, որովհետեւ մեծ ցաւ եմ ապրում: Նա թէպէտ իմ հորեղբայրն է, սակայն մեծ մեղք է գործել: Աստուած թող ների նրան: Նա ընդամենը մի երեխայ ունեցաւ, որ մահացաւ եւ ընդհատուեց նրանց ճիւղը: Գուցէ Աստուած այդ կերպ պատժեց նրան»³¹:

Սասունից Նշան Դեմիրջին պատմում է. «Կոտորածից առաջ հայերի ձեռքից բոլոր զենքերը, նոյնիսկ դանակները վերցրել էին: Կոտորածը գարնանն է լինում: Քրդական աշիրէթները միջամտում են, փորձում են թոյլ չտալ: Սակայն բեժիկները [համիդեականները - Գ.Ե.] զինուորների հետ միասին հայերին կոտորում են: Ում բռնում՝ սպանում են: Միւսներին՝ երեխաներին, կանանց, տղամարդկանց, լցնում են եկեղեցի ու վառում, մի մասին զցում են Սասունի գետը»: Դեմիրջին պատմում է նաեւ, որ Սասունում յատկապէս երկու աշիրէթ է մասնակցել հայերի կոտորածներին եւ օգնել պետական ուժերին: Այդ երկու աշիրէթներին քրդերը չեն սիրում, նրանց անիծում են»³²:

Հաքիարիից Իհսան Չոլեմերիկլին ասում է. «այդ իրադարձութիւններում պետական օսմանեան ուժերը «ուղեղի դերն էին կատարում», իսկ քրդական աշիրէթները՝ օգտագործուեցին որպէս «հարուածող ուժ», եւ նրանց ձեռքով էլ իրականացրին: Չլինէր տեղանքին քաջատեղեակ քրդերի օգնութիւնը, հնարաւոր չէր լինի նոյն տարածաշրջանի 2500-2600 տարուայ տեղաբնիկ հայ եւ ասորի ժողովուրդներին տեղահան անել ու վտարել: Ջարդերի ենթարկուած հայերն ու ասորիները գիտակցում են եւ պատմում են իրենց գրոյցներում այդ մասին: Սակայն չպէտք է մոռանալ, որ վարագոյրի ետեւում ամէն ինչ պլանաւորում էր հենց Բաբը Ալին [Բարձր Դուռը, թուրքական Պետութիւնը - Գ.Ե.]»³³: Նեզիր Քաբաքը (Մարդինի Դերիկ Գաւառից) պարզօրէն նշում է, որ հայերի կոտորածը պետութիւնը քրդերին անել տուեց»³⁴:

Ամփոփելով քրդերի վկայութիւնները՝ կարող ենք նշել, որ նրանք ընդունում են իրենց մեղսակցութիւնը, խոստովանում, որ շահագրգիռ են եղել հայութեան բնաջնջման գործում եւ անգամ շեշտում, որ վճռական դեր են կատարել եւ, որ առանց իրենց Օսմանեան Թուրքիան չէր կարող իրագործել հայերի կոտորածը: Այնուամենայնիւ, քրդերը չեն մոռանում

ընդգծել, որ կոտորածների կազմակերպիչը պետութիւնն է, որն էլ արտրի անուան տակ ոչնչացրեց հայերին: Նրանք նշում են, որ հայերին կոտորել են զինուորները, չեթէները, համիդէական գնդերը:

Թեքինի գրուցակիցներից Սուլէյման Ըշըքն ասում է. *«Ուզում եմ յատուկ ընդգծել. ջարդի հեղինակը պետութիւնն է: Թէ՛ քրդերը, թէ՛ ամբողջ աշխարհը դա լաւ գիտի: Այդ մասին գիտեն նաեւ այստեղ ապրող հայերը: Մուշում ապրող հայերի մեծ մասին քրդերն են փրկել: Եթէ պետութեանը մնար, մի հայ անգամ կենդանի չէր մնայ»³⁵:*

Հարցին ատլի զգուշ են մօտենում քուրդ գործիչները: Թուրքիայի քրդերի շրջանում մեծ հեղինակութիւն վայելող Ահմէթ Թիւրքը 2014 Դեկտեմբերին ներողութիւն խնդրեց հայերից, ասորիներից ու եզդիներից այն բանի համար, որ 1915ին քուրդ աշիրէթների մի մասը մասնակցել է Յեղասպանութեանը: Ըստ Ահմէթ Թիւրքի՝ քուրդ ժողովուրդը իսլամի անուան տակ օգտագործուել է³⁶:

Ահմէթ Թիւրքի արտայայտած այն միտքը, թէ քրդերը օգտագործուել են, վիճարկում է պատմաբան Թանէր Աքչամը. *«Ինձ թւում է օգտակար կը լինի այն, որ քրդերն արդէն հրաժարուեն հետեւեալ թեզից. «Թուրքերը մեզ օգտագործել են հայերի ջարդերի ժամանակ»: Հայերի կոտորածը թուրք-քրդական կամաւոր համագործակցութեան հետեւանքն է, եւ երկու կողմերն էլ միասնաբար պատասխանատու են»³⁷* գրում է պատմաբանը:

Դիարբեքիի քրդերի շրջանում բանաւոր յիշողութիւններ գրի առած Ադնան Չելիքը հարցի վերաբերեալ հետեւեալ կարծիքն է արտայայտում. *«Բոլոր այն խմբերը, որոնք մասնակցել են Յեղասպանութեանը, շատ «բանաւոր» բացատրութիւններ են ներկայացնում: Քրդերի այն խօսքը, թէ «մենք օգտագործուել ենք»՝ պարզապէս ներկայից անցեալի իրադարձութիւններին նետուած հայեացք է»³⁸:*

Քրդական շարժման զգուշաւորութեան երկու պատճառ կարելի է նշել.- 1) Թուրքիան պետական մակարդակով փորձում է ողջ պատասխանատուութիւնը բարդել քրդերի վրայ, 2) քրդերի համար դժուար է խոստովանել, որ հայաթափումից յետոյ տիրացել են հայերի գոյքի մի զգալի մասին, ինչպէս նաեւ հողերին եւ շարունակում են ապրել հենց այդ հողերի վրայ:

Քրդերից շատերը պարբերաբար ներողութիւն են հայցում հայերից, նշում, որ քրդերը սխալ են արել եւ ամաչում են:

Ի պատասխան այն բանին, որ քրդերը հայերի ջարդերի հիմնական իրագործողներից են, նրանք յաճախ մատնացոյց են անում, որ օգնել են հայերին, այն պայմաններում, երբ թուրքերը ջանում էին կոտորել մինչեւ վերջին հայը: Մի քուրդ ասել է, որ եթէ թուրքերի թրերից փրկուած հայեր էին մնացել, ապա առանց չափազանցնելու նրանց երեք քառորդն ազատուել էր քրդերի օգնութեամբ³⁹:

ՔՐԴԵՐԸ ՕԳՆՈՒՄ ՈՒ ՓՐԿՈՒՄ ԷԻՆ ՀԱՅԵՐԻՆ

Քրդերի բանաւոր յիշողութիւններն ու պատումները, ինչպէս նաեւ հայ-քրդական յարաբերութիւնների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ քրդերը դէմ են եղել հայերի տեղահանմանը՝ այն համարելով սեփական շահերին հակասող: Հայերին ոչնչացնելու դէպքում նրանք կը զրկուէին տարածաշրջանի աշխատաւոր ու ստեղծարար ուժից: Անասնապահ ու աստանդական կեանքով ապրող քրդերը յատկապէս հայ արհեստաւորների կարիքն ունէին: Ինչպէս դեռ 1905ին գրում է ազգագրագետ Արամեանը. «*Հայ զինագործը քրդու երկրորդական Ալլահն է*»⁴⁰: Համիդեան կոտորածների ժամանակ նրանց համար հայ զինագործը անձեռնմխելի էր, քանզի պատրաստում էր քրդի համար կենսական նշանակութիւն ունեցող ու սրբութեան աստիճանի հասցուած զէնքը: Բնականաբար, քրդերի մի մասը հենց այս պատճառով չէր ցանկանալու սպանել հայերին: Հայոց Յեղասպանութեան մասին քրդերի բանաւոր պատումներում առկայ է հենց այս մտայնութիւնը:

Արձէշի բնակիչ Սուգան Աւջըն, որի տատը հայ է, պատմում է, որ իր մեծ պապ Աւջը Ահմէդը պահպանել է միայն իրեն պատկանող գիւղերում ապրող հայերին: Նա հայերին կոտորելու համար եկած պետական ուժերին ասում է. «*Մեր գիւղերում ապրող հայերը, լսելով կոտորածների մասին, արդէն փախել են: Բոլորի տները դատարկ են, եթէ ուզում էք, գնացէ՛ք ու տեսէ՛ք: Այդ ուժերը նրան հաւատում են ու հեռանում են գիւղից*»: Ահմէդը հայերին չի պաշտպանում մարդասիրութիւնից դրդուած: Ըստ Սուգանի՝ Ահմէդը ձերբակալուում է գիւղից դուրս գտնուող հայ տղամարդկանց, տանում եւ մի բարձր բլուրից ցած է նետում⁴¹:

Դիարբեքիի քրդերի շրջանում այս թեմայով դաշտային ազգագրական հետազոտութիւն իրականացրած Չելիքն այն կարծիքին է, որ հայերի մեծ մասը կենդանի է մնացել սոսկ այն պատճառով, որ որեւէ արհեստի է տիրապետել: Նա մատնացոյց է անում այն պատմութիւնը, երբ նոյն ընտանիքից մօտ 30 մարդ սպանելուց յետոյ Լիջէի բէլերից մէկը փրկում է 14 տարեկան մի տղայի: Բէյն ասում է. «*նրան էլ եթէ սպանենք, ո՞վ է մեզ համար կօշիկ կարելու*»⁴²:

Այս պարագայում ճիշտ չէ ասել, թէ քրդերն օգնել կամ փրկել են հայերին: Քրդերին մտահոգողը սեփական տնտեսութիւնն էր, նրանք հայերին օգնել են միայն եսասիրական ու շահադիտական նպատակներով: Նրանք վախենում էին, որ կը զրկուեն տնտեսական հիմնական շարժիչ ուժից: Պատահական չէ այսօր քրդերի շրջանում լայնօրէն տարածուած քրդերէն՝ «*Fille çû; xêr û bereket jî çû*» (թուրքերէն՝ Ermeniler gitti; hayır ve bereket bitti), «*հայերը գնացին, բարիքն ու օրհնութիւնն (առատութիւնն) էլ հետը գնացին*» արտայայտութիւնը⁴³:

Վանի Ա(ր)փէթ գիւղի բնակիչ Աբդուլլահ Հաքանը պատմում է, որ բոլորն ընդունում են հայերին կոտորելու հրամանը, բացառութեամբ

երկու հոգու: Նրանցից մեկը Մոկսի Մուրթուլահ բեկն է⁴⁴: Հետաքրքիր է, որ Հայաստանի Հանրապետության դպրոցական դասագրքերում որպես Ցեղասպանության ընթացքում հայերին օգնության ձեռք մեկնողի ընդհանրացուած կերպար ներկայացում է հենց Մոկսի միւղիքը՝ Մուրթուլահ բեկը: Պատմական տեղեկութիւններից յայտնի է, որ նա ոչ միայն չկոտորեց իր իշխանութեան տակ գտնուող հայ գիւղացիներին, այլև սովեալներին կերակրելու համար նուիրեց 250-300 թուրքական լիբա⁴⁵:

Քրդերը պատմում են, որ Մուրթուլահ բեկը հրամանը չկատարելու համար դժուարութիւնների է հանդիպում. նրան մատնում են: Բեկն ասում է Մոկսի ժողովրդին. *«Հայերին ձեռք չտա՛ք, նրանք մեր բարեկամներն են, հարեւաններն ու արհեստատրները: Մուրթուլահ բեկը իրատել է եղբորը, որն աջակցում էր հայերի կոտորածի ծրագրին, ասելով հետեւեալը. «Հայերը մշտապէս պատրաստ են մեզ ծառայութիւն մատուցել: Մեր ամբողջ գործը նրանք են անում: Հիմա ես ինչու՞ պիտի սպանեմ նրանց: Հայերը մեզ ի՞նչ վատութիւն են արել, որ մենք նրանց սպանենք»⁴⁶:*

Աղբակի (Բաշկալէ) գիւղերից մեկի բնակիչ Լեզգին Դողանը ներկայացնում է վկայութիւնն իր տատի, որն անձամբ է տեսել հայերի կոտորածը եւ իրենց աշիրէթի մէջ տեղի ունեցած կոռիւները: Նա պատմում է, որ օսմանեան ղեկավարները կանչում են քուրդ աշիրէթապետերին եւ յայտնում, որ անմիջապէս պետք է սկսել իրենց աշիրէթների սահմաններում բնակուող հայերի կոտորածը: Քրդերին վախեցնում են՝ ասելով, թէ հողերն անցնելու են հայերի ձեռքը, թէ հայերը համաձայնութեան են եկել ռուսների հետ, թէ սպանելու են քրդերի երեխաներին, վերցնելու են գոյքը եւն.: Երկու եղբայր կուում են, որովհետեւ Թամիր բեկն իր տիրապետութեան տակ աշխատող ոչ մի հայի թոյլ չի տալիս դիպչել: Նա ասում է, որ հայերը մեզ շատ ծառայութիւններ են մատուցել, աշխատել են մեր այգիներում, մեր կենդանիներին պահել: Թահիրը եւ իր եղբայրը՝ Հասանը, իրար վրայ զենք են բարձրացնում, եւ Թահիր բեկը ոտքից վիրաւորում է: Աշիրէթը բաժանում է երկու մասի: Թահիր բեկը կռիւ է մղում իրեն պատկանող գիւղերում հայերի վրայ յարձակուողների դէմ, սակայն, զգալով, որ չի կարողանալու պահել հայերին, տանում է Իրանի սահման եւ փրկում նրանց, թեպէտ ինքն էլ վիրաւոր էր⁴⁷:

Աղբակի Խանիկ Գիւղի բնակիչ Շեքի Էլբաքին պատմում է. *«Հայերի հարեւանութեամբ ապրող մուսուլման քրդերը եւ Սորեդերի [քրդերէն՝ կարմիր եկեղեցի - Գ.Ե.] գիւղացիները դէմ են դուրս գալիս հայերի կոտորածին եւ կռուի մէջ մտնում համիդէական գնդերի հետ: Չեբարի նշանաւոր աշիրէթի պետը եւս հանդէս է գալիս հայերի կոտորածների դէմ, ինչի համար դաւաճան է յայտարարում եւ սպանում»⁴⁸:*

Ի տարբերություն շատ մոլլաների ու շէյխերի, որոնք քրդերին գրգռում են հայերի դեմ եւ նրանց ոչնչացնելու քարոզ անում, լինում են նաեւ հակառակ դիրքորոշումը որդեգրած քուրդ կրօնաւորներ: Սդերդի Էրուի Գաւառի Ֆընդըք գիւղի բնակիչ մոլլա Ֆընդըք Էրզէն պատմում է. *«Պետությունը հայերի կոտորածի ֆերման էր հրապարակել: Պապս ու հայրս կտրականապէս դէմ դուրս եկան այդ որոշմանը: Պապս՝ շէյխ Հասանը եւ հայրս, որոնք ֆէթուա հրապարակելու իրաւունք ունէին, Օսմանեան կառավարութեան կոտորածի որոշման դէմ ֆէթուա են արձակում»:* Քուրդ ծերունին պատմում է նաեւ, որ իր ցեղակիցները համոզում են հարեւան աշիրէթապետին, որ չկոտորի հայերին: Բացի այդ, ըստ պատմողի՝ իր պապերը փրկել են հայերի, որոնք ապաստանել էին Սիրիայում եւ որոնց ինքը յետագայում հանդիպել է⁴⁹: Մասունից, մոլլա Ալիյէ Խըյանլըն պատմում է. *«Կառավարությունը հաւաքում է իմամներին, աշխատավարձ է նշանակում, յետոյ մի ֆէթուա է արձակում. «Եթէ մուսուլմանը եօթ հայ սպանի, դժոխքի եօթ դռները փակ կը լինեն, իսկ եթէ ութ հայ սպանի, դրախտի դռները կը բացուեն: Չնայած կառավարութեան այս ջանքերին, 147 քուրդ իմամ ֆէթուա են արձակում, ըստ որի՝ հայ սպանողը ոճրագործ է»⁵⁰:*

Քրդերի բանաւոր պատումները ցոյց են տալիս, որ քրդերը հիմնականում թաքցրել են աղջիկների՝ իրենց կինը դարձնելու նպատակով: Քիչ են դէպքերը, երբ քրդերը փրկել են տղայ երեխաների: Դիարբէրիից Եալչըն Եուսուֆօղլուն պատմում է. *«Մուսուլման տղամարդու հետ ամուսնանալուց յետոյ աղջիկ երեխան չէր կարող շարունակել իր ցեղը, իսկ ահա տղայ երեխան կարող էր: Այդ պատճառով այդ ժամանակ հայերի ցեղը չորացնելու համար բացարձակօրէն բոլոր տղայ երեխաներին եւ տղամարդկանց առհասարակ սպանում էին: Ահա եւ ձեզ «ցեղասպանություն» եզրին համապատասխանող գործողություն»⁵¹:*

Մարդինի Նահանգի Դերիք Գաւառից Նայիֆ Դեմիրջին, որ արմատներով հայ է, պատմում է մօրից, հօրից եւ հարեւաններից լսածները. *«Եղան քրդեր, որ օգնեցին կառավարութեանը՝ հայերին կոտորելու գործում: Նրանք զինուորների հետ միասին առանց նայելու մանուկ-երեխայ, սպանեցին հայերին: Մակայն հայերին կոտորածից փրկած քրդերն էլ են շատ: Յատկապէս կանանց ու երեխաներին թաքցրեցին իրենց տանը, նրանք մեծացրին ու իրենց երեխաների պէս պահեցին: Նրանց ամուսնացնելով՝ երեխայի տէր դարձրին: Օրինակ, Ռուտայ աշիրէթից Նեջիմօղլուները մի վայրում թաքցնում ու փրկում են աւելի քան տաս երեխայի»⁵²:*

Հայոց Ցեղասպանությունը վերապրողների վկայությունների եւ քրդերի բանաւոր պատումների համեմատությունը մի հետաքրքիր խնդրի առջեւ է կանգնեցնում: Հայ վերապրողների պատմություններում շատ են

դէպքերը, երբ քրդերին գումար են առաջարկել: Բայց ահա քրդերի հարիւրաւոր պատումներում սակաւադէպ են յիշատակութիւնները գումարի դիմաց օգնելու մասին: 90 տարեկան Ահմէդը՝ Դերսիմից, պատմում է, որ հայերն այս ու այն կողմ էին փախել մահից փրկուելու համար: Դերսիմի լեռները բարձրանալու եւ փրկուելու համար նրանք պէտք է անցնէին գետի միւս կողմը: Ով փող ուներ՝ մի ոսկի էր տալիս լողալ իմացողներին, նրանք էլ գետի միւս ափն էին անցկացնում: Լողալ չիմացողներն ու ոսկի չունեցողները մնում էին գետի ափին: Իսկ գետն անցնողները ցրում էին, թաքնուում գիւղերում եւ այդպէս փրկում իրենց կեանքը⁵³: Արմատներով Սասունի Սեմալ գիւղից, այժմ Մուշում ապրող եւ իրեն հայ համարող Արմէն Գալուստը նոյնպէս վկայում է, որ մի քուրդ իր պապի եղբորից մարդու ամէն գլխի համար գումար է ուզել, սակայն այն վերցնելուց յետոյ դրժել է խոստումը⁵⁴:

Այնուամենայնիւ, շատ քրդեր, անտեսելով վտանգը, փորձել են օգնել հայերին: Սոյն ժողովածուի մէջ Խնուսի Գաւառակի Գոփալ Գիւղից Շարօ Նազարեանը պատմում է, որ Գոփալի ու շրջակայ մի քանի հայկական գիւղերի կանանց ու երեխաների մեծամասնութեանը կոտորածից ազատել է տորախանցի Շամիլի որդի Բարէն, ազգով՝ տաճիկ: *«Տաճիկ կառավարութիւնը այս լսելով՝ մահուան պատիժ նշանակեց»*⁵⁵: Իսկապէս, կառավարութիւնը ոչ միայն պարտադրում էր քրդերին մասնակցել հայերի ջարդերին, այլ պատժում էր նրանց, ովքեր կը համարձակուէին օգնել հայերին: Քրդերը պատմում են, որ զինուորները մտնում էին տները եւ ստուգում, թէ արդեօք քրդերը մարդ չէ՞ն թաքցրել: Մշոյ դաշտի Խոպէր Գիւղի բնակիչ Մեհմէթ Սալիհ Եիլիթը պատմում է. *«Այդ ժամանակ հայերին օգնելն արգելուած էր: Կառավարութիւնը սպանում էր այն մարդուն, որը կ'օգնէր հայերին: Չնայած դրան՝ կային մուսուլման ընտանիքներ, որոնք մահն այցի առաջ ունենալով, իրենց հարեւաններին հաց եւ ջուր էին տալիս, օգնում էին»*⁵⁶:

Սասունի Թերուք Գիւղի բնակիչ հաջի Սեմեդօն պատմում է. *«Քրդական աշիրէթների մի մասը մասնակցել է կոտորածներին, մի մասը՝ ոչ: Այն աշիրէթները, որ չեն մասնակցել, իրենց հայերին փախցրին Սիրիայի սահման եւ յանձնեցին այնտեղ ապաստանած հայերին»*: Հաջի Սեմեդոյի Օսէ պապն էլ մարդկանց է փրկել, որոնք այժմ Սիրիայում են ապրում⁵⁷:

Դերսիմի Մազգիրթ (Մազկերտ) Գաւառի Գոլան Գիւղից Ադա Աքթաշը պատմում է, որ իր Ֆերօ պապը թաքցնում է հայերին եւ չի ներկայացնում կառավարութեանը: Այդ մասին, սակայն, գիւղացիները տեղեկացնում են կառավարական մարմիններին: Ֆերօն երկու հայ ընտանիք է թաքցնում, տղամարդկանց անտառում է պահում, իսկ աղջիկներին տալիս է իր հարսների շորերը, որպէսզի զինուորները չկարողանան տարբերել: Զինուորները գալիս են, Ֆերօն նրանց համար

մեծ հիւրընկալութիւն է պատրաստում, երդում է, որ հայերը թողել-գնացել են: Ջինուտորները չեն հաւատում, տանը փնտռում են, բայց չեն գտնում, իսկ կանանց սենեակ Ֆերօն թոյլ չի տալիս մտնել: Կոտորածներից մի քանի ամիս անց այդ երկու ընտանիքն էլ գաղտնի Ամերիկա են տեղափոխուում, այնտեղից նամակ են գրում, եւ նամակագրութիւնը շարունակուում է մինչեւ Ֆերոյի մահը: «Ջարդի ժամանակ Դերսիմի քրդերը հազարաւոր հայերի են մահից փրկել: Մեծ մասին իրենց ընտանիքում են թաքցրել՝ ցոյց տալով կառավարութեանը, թէ իրենց ընտանիքի անդամներն են: Հազարաւոր մարդկանց էլ տարել են ռուսական սահման»⁵⁸:

Մասունի Էրսենգէ Գիւղից Սելոօն պատմում է. «Հայրս՝ Շիւքրին, 17-18 տարեկան էր, երբ հայերի ֆերմանը եկաւ: Կառավարութիւնը հայերին սպանելու որոշում էր արձակել, սակայն ժողովուրդը չէր ուզում կոտորել հայերին, որոնց հետ միասին էր ապրում: Կոտորածի ժամանակ ինչքան կարողանում էին, թաքցնում էին հայերին, կամ էլ նրանց փախցնում, տանում էին Միրիա, սակայն եղան քրդական աշիրէթներ, որոնք մասնակցեցին հայերի ջարդերին: Պապս հերթով թուարկում էր հայերի ջարդերին մասնակցած աշիրէթների անունները ու նրանց անիծում: Պապս՝ Ջուման, հայերի կոտորածների ժամանակ երկու հայ ընտանիք է թաքցնում, պետութիւնը լսում է այդ մասին, պապս էլ նրանց փախցնում է լեռները: Ջինուտորները լեռներում ընկնում են պապիս ետեւից: Նա, զինուորներից փախչելով, երկու հայ ընտանիքի հետ միասին, թաքնուում է լեռներում, անտառներում եւ նրանց Հալէպ հասցնելով՝ փրկում է պետութեան ձեռքից»⁵⁹:

Գրքում կան բազում պատումներ այն մասին, թէ ինչպէս են քրդերը՝ տանը, մարագում, անտառում եւ այլ վայրերում թաքցնում հայերին, խաբում թուրք զինուորներին, եւ յետագայում օգնում, որ նրանք անցնեն Միրիա, երբեմն էլ՝ Ռուսաստան ու Պարսկաստան:

ԻՍԼԱՄԱՅՈՒԱԾ ՀԱՅԵՐ

Թուրքական ազգային պետութեան ջատագով երիտթուրքերի նպատակը հայութեան ամբողջական բնաջնջումն էր. այս ճանապարհին չէին խնայում ոչ միայն առաքելադաւան, աւետարանական եւ կաթողիկէ հայերին, այլեւ նրանց, ովքեր պատրաստ էին իսլամ ընդունել:

Քուրդ տարեցներից մէկը պատմում է, որ հենց հարեւան գիւղում հայերը չէին փախել, իսլամ էին ընդունել, արդէն սկսել էին Ղուրանի սուրանները սովորել: Հաւատում էին, որ իսլամ դառնալով կը փրկուէին եւ կարող էին մնալ գիւղում: Չնայած բոլոր թախանձանքներին՝ նրանց սպանում են, քանի որ «պէտք էր հայերի վերջը տար»⁶⁰:

Մակայն ինչպէս հայ ականատես վերապրողների վկայութիւններում, այնպէս էլ քրդերի պատումներում հանդիպում են դէպքեր, երբ հայերին

առաջարկում է իսլամ ընդունել եւ որպէս կանոն, հայերը համաձայնութիւն չեն տալիս, թէեւ, ինչպէս տեսանք, իսլամ ընդունելը չէր նշանակում կեանքի երաշխաւորութիւն: Դերիկից տիկին Մալիհան Մարին պատմում է, որ հայերին հաւաքել, տարել են մի վայր, եւ ասել՝ իսլամացէ՛ք, թէ չէ՝ բոլորիդ կը սպանենք: Հայերն էլ, ի պատասխան, ասել են, սպանում էք՝ սպանէք, մահմեդական չենք դառնայ: «*Հայերը չընդունեցին իսլամ, եւ տանջամահ արուելով սպանուեցին, նրանց վրայ բենզին լցրեցին ու վառեցին*»: Այնուհետեւ Թեքինի գրուցակիցը ցոյց է տալիս այն վայրը, որտեղ հայերին սպանել են⁶¹:

Ժողովրդական պատկերացումներում եւ նոյնիսկ գիտական շրջանակներում թիւր կարծիք կայ, թէ ներկայում Արեւմտեան Հայաստանի եւ Թուրքիայի Հանրապետութեան այլ վայրերում ապրող իսլամացուած, կրօնափոխ հայերը իսլամ ընդունելու շնորհիւ է, որ Յեղասպանութեան զոհ չեն դարձել: Իրականում հայութեան այդ բեկորները փրկուել են սոսկ պատահաբար՝ դիպուածի բերումով, իսկ իսլամ ընդունելու խնդրին բախուել են անլի ուշ:

Քիչ են դէպքերը, երբ փրկուած հայ ընտանիքը կրօնափոխ չի եղել: Վկայութիւններից մեկում ասում է, որ չնայած շրջապատի բոլոր ճնշումներին՝ Դիարբեքիի հայ ընտանիքներից մեկը շարունակում է մնալ քրիստոնէայ՝ ենթարկուելով շրջապատի անդուլ ճնշումներին: Քուրդ աղաների շրջանում ապաստանած հայ երեխաները կամ առանձին ընտանիքները իսլամացում են: Գաֆուր Թուրքայը, որն արմատներով սասունցի է եւ այժմ ապրում է Դիարբեքիում, պատմում է, թէ ինչպէս է իրենց մեծ ընտանիքը սրի քաշում: Կոտորածից փրկուում են ընդամենը երեք երեխայ՝ 7-8 տարեկան, որոնցից երկուսը ապաստանում են քրդերի մօտ: Գաֆուրը պատմում է, որ իր պապերն ու հայրերը դաստիարակում են որպէս մուսուլման քրդեր⁶²: Իր հայկական արմատների մասին իմացող Գաֆուրը ամուսնանալուց եւ Դիարբեքի տեղափոխուելուց յետոյ շփում է տեղի սակաւաթիւ հայ բնակչութեան հետ, կապում տեղի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցուն, սկսում Հայաստան այցելել⁶³: Գաֆուրն այժմ իրեն հայ է համարում:

Գաֆուրը պատմում է, որ թէպէտ իր Ռեշօ անունով հօրեղբայրը հաջի էր գնացել եւ անլի շատ էր նամագ անում, քան մուսուլմանները, սակայն նրան նայում էին որպէս հայի: «*Հայն ինչքան էլ իսլամ ընդունի, մուսուլմանի աչքում մնալու է «հարամ ոսկորով» հայ*»⁶⁴:

Գրքում հանդիպում են բազում վկայութիւններ այն մասին, որ Յեղասպանութունից յետոյ իսլամ ընդունած հայ տղաներն ու աղջիկները ամուսնացել են իրար հետ: Գաֆուր Թուրքայը նշում է, որ իր պապն ու նաեւ ինքը ամուսնացել են մահմեդականացուած հայ աղջկայ հետ: Այսպիսի բազում օրինակներ կան նաեւ հենց քրդերի բանաւոր պատումներում:

Գաֆուր Թուրքայի ընտանիքի օրինակը եզակի չէ: Եղել են շատ ընտանիքներ, որոնք թեպետ երեխաներին ասել են իրենց հայկական ծագման մասին, սակայն մեծացրել են քրդական միջավայրում՝ իւրացնելով նրանց բնորոշ նիստուկացը, լեզուն եւ ասանդոթները: Իրերի բերումով՝ ընտանիքի անդամներից մի քանիսը սկսել են վերականգնել կապը հայութեան հետ, որը մահմեդական միջավայրում արտայայտուում է քրիստոնեություն ընդունելով: Մի մասն էլ, սակայն, այդ մասին մտածել անգամ չի ուզում, դառնում է աւելի ջերմեռանդ մահմեդական, մեկնում է Մեքքա ուխտագնացութեան են.: Իսլամացուած հայերի շրջանում կան նաեւ ընտանիքներ, ովքեր կրօնական պատկանելությունը չեն կարեւորում, մի մասն էլ իսլամ է դաւանում եւ իրեն հայ համարում:

Մի հսկայ խումբ էլ՝ Մասունից, Վանից, Սղերդից, Դիարբեքիից եւ այլ շրջաններից, նշում է, որ իր տատը, մայրը հայ են եղել, սակայն իրեն հայ չի համարում, այլ՝ մուսուլման ու քուրդ: Այս խմբի մեծ մասը այն կանայք են, որոնց քրդերը փախցրել են կոտորածների ժամանակ, շատ յաճախ նաեւ կարաւաններից՝ ստիպելով հայ աղջիկներին ամուսնանալ իրենց հետ: Ներկայում հայկական արմատներ ունեցող քրդական հազարաւոր ընտանիքներ կան: Կան նաեւ քիչ թուով մարդիկ, ովքեր բաւարարում են յիշատակումով, թէ պապը կամ հայրը հայ է եղել, եւ դրանով սահմանափակում հայութեան հետ կապը:

Դատելով քրդերի պատումներից եւ կրօնափոխ հայութեան վերաբերեալ այլեայլ տեղեկություններից՝ ամենից մեծ խումբը կազմում են նրանք, որոնք ընդհանրապէս չեն բարձրաձայնում եւ ամէն գնով փորձում են մոռացութեան մատնել իրենց նախնիների հայկական ծագումը: Ֆաթմա Աւջըն խնդրոյ առարկայ թեմայի վերաբերեալ ասում է. *«Սպանուողը սպանուեց, աքսորուողը աքսորուեց, փախչողը փախաւ.....: Մի շարք մահմեդական ընտանիքներ հայերի աղջիկներին, երեխաներին թաքցրին եւ նրանց փրկեցին մահից: Նրանք մեծացան, ամուսնացան ու երեխաների տէր դարձան, այստեղ այդպիսի շատ ընտանիքներ կան: Մենք նրանց բոլորին շատ լաւ գիտենք: Հիմա իրենց ներկայացնում են որպէս թուրք, ամաչում են ասեն՝ հայ ենք: Ամաչում են իրենց հայկական ինքնությունից եւ շատ են վախենում: Այդ պատճառով էլ ասում են՝ թուրք ենք: Այժմ նրանք պետութեան կողքին դուրս են եկել քրդերի դէմ: Նրանց մեծամասնությունը դեւլեթչի [պետութեան մարդ - Գ.Ե.] է դարձել»⁶⁵*: Հայկական արմատներ ունեցող այս մարդկանց հակաքրդական դիրքորոշման պատճառներից մէկը, թերեւս, այն է, որ նրանց յիշողութեան մէջ պահպանուել է, որ քրդերն են եղել իրենց անմիջական կոտորողները: Հարցն ունի նաեւ հոգեբանական կողմ՝ անցեալից չկարողանալով ազատուել, նրանք ցանկանում են ապահով ապրել:

Արճէշցի Մուգան Աւջըն իսլամացուած հայերի մասին ասում է. *«Նրանք մինչեւ հիմա էլ մեր գիւղում են եւ ապրում են որպէս մուսուլման*

քրդեր, նրանց թոռները հենց այդպէս գիտեն: Իսկ ես ընդամենը հինգ տարի առաջ իմացայ, որ դրանք հայկական ընտանիքներ են եղել»⁶⁶:

ՎՐԷԺԽՆԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Բնական է, որ ռուսական բանակի հետ Արեւմտեան Հայաստան մտած հայերը պէտք է վրէժ լուծէին իրենց հարազատների, հայրենակիցների ջարդերի համար: Գրքում կան նման պատմութիւններ: Երզնկայի գիւղերից մէկի բնակիչ Մուստաֆա Ջանին Մայիդ անունով մի տարեց մարդ պատմել է, որ մի հայի սպանել է միայն այն բանի համար, որ վերցնի նրա գեղեցիկ ձին եւ կօշիկները: Կոտորածից յետոյ ռուսական բանակի հետ վերադառնում են նաեւ այս սպանուած հայի եղբայրները եւ վրէժ լուծելու համար սպանում են Մայիդի եղբորը: Դրանից յետոյ Մայիդն էլ սպանում է նրանց: Երզնկացի քուրդը պատմում է նաեւ, որ հայերը վրէժխնդրական ուրիշ գործողութիւններ էլ են իրականացրել⁶⁷:

Ոստանի գիւղերից մէկի բնակիչ Աբդուլլահ Հաքանը նկատի ունենալով կամաւորական գնդերին, ասում է, որ ֆիդայիների գալուց առաջ հայերը, որպէս երախտագիտութեան նշան, լուր են հասցնում Մուրթուլահ բէկին, որ հեռանայ Մոկա՝ նրան ապահովութեան երաշխիք տալով: Այնուհետեւ հայերը Մոկայում վրէժխնդրական գործողութիւն են իրականացնում⁶⁸:

Ռուսական բանակի Արեւմտեան Հայաստան մտնելուց յետոյ հայերը վրէժխնդրական գործողութիւններին զուգահեռ օգնում են քրդերին, հարկ եղած դէպքում միջնորդում, որ ռուսները վնաս չտան նրանց: Մանազկերտցի Հիւսէյին Չաքանը, փոխանցելով հօրից լսած պատմութիւնն, ասում է, որ ռուս զինուորները փորձել են վերցնել իրենց պատկանող ոչխարներն ու խոշոր եղջերաւոր անասունները: Օգնութեան նպատակով քրդերը դիմել են իրենց հարեւան հայերին, որոնք էլ այդ մասին տեղեկացրել են ռուսական հրամանատարութեանը: Առհասարակ խօսելով քրդերին ցոյց տուած օգնութեան մասին՝ Հիւսէյինը մեջբերել է իր հօր խօսքը. «*Եթէ հայերը չլինէին, ռուսները հաստատ մեզ սպանելու էին*»⁶⁹:

ՀԱՅԻ ԿԵՐՊԱՐԸ ՔՐԴԵՐԻ ԲԱՆԱԻՈՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Արամեանը, որը լաւ է ճանաչում քրդերին եւ ապրել է նրանց մէջ, Ի. դարասկիզբին գրում է. «*Քրդու համար զարգացման, յառաջադիմութեան նպատակակէտը հայկական կեանքն է, ինչպէս մեզ համար՝ եւրոպականը: Հայի օճաղը քրդերի ամենաբարձր համալսարանն է: «Ախրը եղը, ախրը ֆրլլան է (Հայի խելք ունիս)՝ կը նշանակէ փիլիսոփայ ես»⁷⁰*: Չելիքն էլ նշում է, որ քրդերի՝ հայերի նկատմամբ վերաբերմունքը նման էր երիտթուրքերի՝ արեւմուտքի նկատմամբ հիացումին: Նամըք

Քեմալ Դինչը համոզմունք է յայտնում, որ քրդերի շրջանում արդիականացումն ընկալում էր հետեւեալ կերպ՝ նմանուել հայերին⁷¹:

Հայերի մասին խօսելիս՝ քրդերը մշտապես նշում են հայերի արհեստների մէջ հմուտ լինելը, չափազանց աշխատասիրութիւնն ու հիւրասիրութիւնը, գովաբանում նրանց գեղեցկութիւնը: Շատախի գիւղերից մեկի բնակիչ Սազհար Արուսար փոխանցում է հայերի մասին իր հօր խօսքը. «*Իրենց խօսքի տէրն էին, եթէ նոյնիսկ գլուխը կտրէիր, իր խօսքից ետ չէին կանգնի*»⁷²: Դիարբեքիի Նահանգից Սուլէյման Ըշրքն ասում է. «*Հայերը շատ ազնիւ մարդիկ էին, կեղծաւորութիւն չունէին*»⁷³: Սասունի շեշտեր Գիւղի բնակիչ մոլլա Ալի Երլըզն ասում է. «*Հայերը շատ ազնիւ ու հաւատարիմ մարդիկ էին, շատ-շատ նամուսով էին ու մէկ էլ շատ հիւրասէր, իրենց խօսքի տէրն էին: Մինչեւ եղ ժամանակը [Ցեղասպանութիւնը - Գ.Ե.] որեւէ զիջման չգնացին իրենց կրօնի ու ազգութեան հարցում: Այդ պատճառով էլ էս աղէտն եկաւ իրենց գլխին*»⁷⁴:

ԿՈՏՈՐԱԾԻ ՎԱՅՐԵՐ, ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՈՉԼՉԱՅՈՒՄ

Քրդերը նկարագրում են, որ հայերի կոտորածները իրականացուել են աչքից հեռու լեռնային ու խուլ վայրերում: Իգդիրից մինչեւ Վան, Վանից մինչեւ Մուշ-Սասուն, ու մինչեւ Դիարբեքի ու Մարդին, այնտեղից էլ մինչեւ Սեբաստիա՝ քրդերը գիտեն կոտորածի վայրերը, ձորերը, ժայռերն ու դաշտերը: Խօսելիս՝ շատ քրդեր պատրաստամակութիւն են յայտնում ցոյց տալ այն վայրը, որտեղ սպանուել են հայերը, կամ այն ժայռերը, որից ցած են նետել հայերին, կամ այն քարանձաւը, որի մէջ լցրել են հայերին ու սպանել, այրել: Քրդերը ցոյց են տալիս նաեւ եղբայրական գերեզմաններ, որոնց կոչում են «հայերի գերեզման»:

1960ին Վանի Բաշկալէ Գաւառի Խանիկ Գիւղում ծնուած Շեքի Էլբաքին պատմում է, որ 16-17 տարեկան հասակում Դերեսոք գիւղում հայկական եկեղեցու շրջակայքում հող փորելիս գիւղացիները հանդիպել են ոսկորների, մարդկային գանկերի, որոնց վրայ ջարդուածքներ կային, ինպէս նաեւ՝ փամփուշտի հետքեր: Երիտասարդ Էլբաքին հարցուփորձ է անում տարեց գիւղացիներին: Գիւղացիներից մեկը պատասխանում է, որ հայերի ոսկորներն են. թէ՛ եկեղեցու մօտ, թէ՛ գիւղի տարբեր մասերում կան հայերի հաւաքական գերեզմաններ: Հաջի Մըխամեդն էլ ասում է. «*Հայերի կոտորածն իրականացրել են քրդական Մերգիք*»⁷⁵ *աշիրէթի ղեկավարը, շրջանի համիդիէ գնդերի հրամանատար Շարաֆ բէկը եւ թուրք զինուորները*»⁷⁶:

Չելիքը, խօսելով Արեւմտեան Հայաստանի տարածքում մեծ չափերի հասած գանձագողութեան, հայերի ոսկիները գտնելու տենչի մասին, այն կապում է մշակութային ցեղասպանութեան հետ: Ըստ նրա՝ փորձ է

արում պահպանուած մշակութային ժառանգութեան հետքերը վերացնելով՝ մոռացութեան տալ, որ անցեալում այս տարածքում հայերն են ապրել: «Գանձագողութեան աճը մի կողմից պայմանաւորուած էր հասարակ մարդկանց մէջ հայ հարուստների գանձերի մասին տարածուած առասպելով, միւս կողմից՝ պետութեան՝ հայկական մշակութային ժառանգութիւնն ամբողջութեամբ ոչնչացնելու մտադրութեամբ»⁷⁷:

Բիթլիսցի Քուդրէթ Բալշըն պատմում է, որ հայերի կոտորածից յետոյ հայկական եկեղեցիները վերածուել են մզկիթի⁷⁸: Քրդերի պատումները վկայում են, որ հայկական մշակութային ժառանգութիւնից առաջին հերթին ցանկանում է ազատուել թուրքական պետութիւնը: Շեքի Էլբաքին Սորեդէր գիւղի եկեղեցու մասին պատմում է. «*Բաշկալէի կայմականութիւնից բազմաթիւ անգամներ գիւղացիներին ասել են. «Դէ մի բան արէք, էդ հայկական եկեղեցին մէջտեղից վերացրէք: Նրանք [հայերը – Գ.Ե.] մի օր կարող է գան ու էս կողմերը ձեզնից ուզեն»*⁷⁹:

Մի քուրդ էլ պատմում է, թէ ինչ է ասել իրեն իր հայրը. «*Որդի՛ս, այս բոլոր կողմերը հայերին է պատկանում: Մի օր ետ են գալու, մեզնից վերցնելու են*»: Այս շարունակում է. «*Այդ պատճառով հայերից մնացած ինչ կար՝ ամբողջովին ոչնչացուեց, ամէն ինչ աւերուեց, իսկ բնակավայրերի անունները թուրքացուեցին*»⁸⁰:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Թէքիւնի գիրքը մեզ յայտնի առաջին աշխատութիւնն է, որտեղ մեկտեղուած են քրդերի վկայութիւններն ու բանաւոր արանդումները Հայոց Յեղասպանութեան մասին: Դրանք յստակօրէն ցոյց են տալիս, որ քրդերն իրենց բնակավայրերի պատմական անցեալը կապում են հայերի եւ առհասարակ հայկականի հետ:

Բանաւոր յիշողութիւնների այս իւրայատուկ ժողովածուն յստակ պատկերացում է տալիս, թէ ինչպէ՛ս են քրդերը մեկնաբանում հայերի տեղահանութիւնն ու զանգուածային կոտորածը: Թէեւ նրանց բանաւոր զրոյցներում գործածական չէ Յեղասպանութեան եզրը, սակայն պատումներում անշեղօրէն ընթանում է այն գիծը, ըստ որի, Օսմանեան ղեկավարութիւնն է ծրագրել ու իրականացրել հայերի կոտորածը՝ նրանց իսպառ ոչնչացնելու մտադրութեամբ:

Ընդհանրացնելով, կարող ենք արձանագրել, որ քրդերը, հաստատելով հայերի կոտորածին իրենց մասնակցութիւնը, այնուամենայնիւ, պնդում են, թէ Օսմանեան իշխանութիւններն իրենց օգտագործել են որպէս հարուածող ուժ:

Հայերի կոտորածների վերաբերեալ քրդերի վկայութիւնների եւ հայկական սկզբնաղբիւրների համադրութիւնից պարզում է, որ քրդերը հիմնականում առանց ճշմարտութիւնը խեղաթիւրելու են

վերարտադրում իրենց տեղեկությունները: Քրդերի պատմական յիշողությունը Հայոց Յեղասպանության մասին կենդանի է:

Մեծ Եղեռնին քրդերի մասնակցության հարցը որոշակիորեն պայմանավորում է նաև հայ-քրդական ներկայի յարաբերությունները, ասելի ճիշտ քրդերի մերօրեայ վերաբերմունքը հայերի նկատմամբ: Հայերի կոտորածին մասնակից քրդական աշխրթների մի մասն այսօր էլ գործակցում է թուրքական պետության հետ եւ հակահայկական դիրքորոշում ունի: Հայերի զանգուածային ջարդերին քրդերի մասնակցության հարցը դեռևս հանգամանօրէն ուսումնասիրուած չէ ինչպէս առանձին գաւառների, այնպէս էլ՝ ընդհանուր պատկերով:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Գիւլչիչէք Գինէլ Թէքին, *Beni Yıkamadan Gömün, Kürtler Ermeni Soykırımını Anlatıyor*, (Բնձ չլուացած թաղեցէք. քրդերը պատմում են Հայոց Յեղասպանության մասին), Պէլկէ Համալսարանի Հրատ., Բաթանպուլ, 2013:
- ² Նոյն, էջ 260:
- ³ Թուրքական Պետության կողմից ստեղծուած միաւորումներ, որոնք պայքարում են «Քրդստանի Աշխատաւորական Կուսակցության» (PKK) դէմ:
- ⁴ Թուրքիայի նախագահ Սուստաֆա Քեմալի քաղաքականութիւնից դժգոհ քրդական ցեղերի մի մասը 1925ին հարաւարեւելեան շրջաններում ապստամբութիւն բարձրացրին: Ապստամբութիւնը, որ ընդգրկում էր հսկայական տարածքներ, շուտով ճնշուեց, իսկ նրա առաջնորդ Շէյխ Սաիդը կախաղան բարձացուեց:
- ⁵ “Diyarbakırlı Ermeniler Nasıl Katledildi?” (Տիարպէքիրի հայերը ինչպէ՞ս սպանուեցին), *Ռատիքայ*, http://www.radikal.com.tr/kultur/diyarbakirli_ermeniler_nasil_katledildi-1288793 :
- ⁶ Յարութիւն Մարութեան, *Յիշողութեան Դէրն Ազգային Ինքնութեան Կառուցուածքում. Տեսական Հարցադրումներ*, Երեւան, «Նորավանք» ԳՀ, 2006, էջ 32:
- ⁷ “Kürt Hareketi 1915 Konusunda Resmî Tarihin Şablonculuğundan Sıyrılamadı,” (1915ի վերաբերող մօտեցումներում քրդական շարժումը չի ազատուել պաշտօնական պատմագրութեան կարծրատիպից), *Աղջու*, <http://www.agos.com.tr/tr/yazi/10413/kurt-hareketi-1915-konusunda-resm-tarihin-sablonculugundan-siyirilamadi> :
- ⁸ Թէքին, էջ 92: Այս եւ գրքից մէջբերուող բոլոր թարգմանությունները կատարել է յօդուածագիրը:
- ⁹ Նոյն, էջ 110:
- ¹⁰ “Diyarbakırlı Ermeniler”:
- ¹¹ Tekin, էջ 154:
- ¹² Կուրմանջիախօս քրդերը այդպէս են անուանում հայերին: Բառը, որ նշանակում է հողագործ, ամենայն հաւանականութեամբ, երկրագործ (նստակէաց) եւ անասնապահ (քոչուոր) մշակոյթների շփման արդիւնքն է:

¹³ Նշանակում է սահմանային. օսմանեան շրջանում այդ եզրով էր ընդունուած ասել կայսրութեան սահմանային տարածքները: Ժամանակակից Թուրքիայում Սերիաթի տարածաշրջան ասելով հասկանում են Իրանի, Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի (Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութիւն) հետ սահմանային շրջանները եւ առաւելապէս Կարսը, Արդահանը, Իգդիրը եւ Ադրըն (Մասիս Լեռան յարակից տարածքները): Այստեղ, Թեքինի զրուցակիցը նկատի ունի յատկապէս Իրանի սահմանների մօտ բնակուող քրդական ցեղերին:

¹⁴ Tekin, էջ 15:

¹⁵ Նոյն, էջ 147:

¹⁶ Նոյն, էջ 300:

¹⁷ Նոյն, էջ 184:

¹⁸ Նոյն, էջ 307:

¹⁹ Նոյն, էջ 37:

²⁰ Նոյն, էջ 77:

²¹ Նոյն, էջ 310:

²² Նոյն, էջ 87:

²³ Պէտք է լինի Գարբուշ: Մեզ հետ զրոյցում նրա թոռը՝ Թալինի շրջանի Դաւթաշէն Գիւղի բնակիչ Խաչիկ Ազատեանը նշեց, որ իր պապի անունը եղել է Կարապետ (Գարբուշ):

²⁴ *Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, Վերապրածների Վկայութիւններ, Փաստաթղթերի Ժողովածու, Հտր. II, Բիթլիսի Նահանգ*, գլխ. խմբ. Ա. Վիրաբեան, Երեւան, , ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2012, էջ 295:

²⁵ Tekin, էջ 134:

²⁶ Նոյն, էջ 57:

²⁷ Նոյն, էջ 276:

²⁸ Նոյն, էջ 46:

²⁹ Նոյն, էջ 256:

³⁰ Հ. Արամեան (Մ. Տ. Շուտ), *Քրդերը Տաճկաց-Հայաստանում, Ազգագրական Նիւթեր, Հտր. Ա.*, Ս. Պետերբուրգ, Տպ. Պուշկինեան, 1905, էջ 141:

³¹ Tekin, էջ 188:

³² Նոյն, էջ 143-144:

³³ Նոյն, էջ 63:

³⁴ Նոյն, էջ 437:

³⁵ Նոյն, էջ 368:

³⁶ Ahmet Türk, “Ezidi, Süryani ve Ermenilerden Özur Diledi,” (Ահմէթ Թիւրքը ներողութիւն է խնդրել եզիդիներից, ասորիներից եւ հայերից) *Ջումհուրիէթ*, http://www.cumhuriyet.com.tr/haber/turkiye/164619/Ahmet_Turk_Ezidi_Suryani_ve_Ermenilerden_ozur_diledi.html :

³⁷ Թանէր Աքչամի յօդուածը տպուել է *Թարաֆ* թերթում, որի յղումն անհասանելի է (<http://www.taraf.com.tr/taner-akcam/makale-iktisatcilarimiz-ve-ermeni-mallari.htm>) : Այն ամբողջութեամբ կարելի է կարդալ այստեղ՝ <http://akunq.net/tr/?p=25476> :

³⁸ “Diyarbakırlı Ermeniler”:

-
- ³⁹ Տե՛ս՝ Մ. Կ. Պողոսեան, *Քրդերը Եւ Հայկական Հարցը*, Երեւան, Հայաստան Հրատ., 1991, էջ 232:
- ⁴⁰ Արամեան, էջ 175:
- ⁴¹ Tekin, էջ 26-29:
- ⁴² “Diyarbakırlı Ermeniler”:
- ⁴³ Tekin, էջ 103:
- ⁴⁴ Նոյն, էջ 15:
- ⁴⁵ Տե՛ս՝ *Հայերի Յեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում, Փաստաթղթերի Ու Նիւթերի Ժողովածու*, խմբ. Մ. Գ. Ներսիսեան, Երեւան, Հայաստան, 1991, էջ 115:
- ⁴⁶ Tekin, էջ 17:
- ⁴⁷ Նոյն, էջ 43-44:
- ⁴⁸ Նոյն, էջ 50:
- ⁴⁹ Նոյն, էջ 236-237:
- ⁵⁰ Նոյն, էջ 89:
- ⁵¹ Նոյն, էջ 321:
- ⁵² Նոյն, էջ 406:
- ⁵³ Նոյն, էջ 483:
- ⁵⁴ Նոյն, էջ 98:
- ⁵⁵ *Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, Վերապրածների Վկայութիւններ, Փաստաթղթերի Ժողովածու Հտր. III, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի, Սերաստիայի, Տրապիզոնի Նահանգներ, Պարսկահայք*, գլխ. խմբ. Ա. Վիրաբեան, Երեւան, 2012, էջ 120: Հայ ականատես վերապրողների վկայութիւնների մասին տե՛ս նաեւ՝ Վերժինէ Սվազլեան, *Հայոց Յեղասպանութիւն. Ականատես Վերապրողների Վկայութիւններ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2011:
- ⁵⁶ Tekin, էջ 94:
- ⁵⁷ Նոյն, էջ 135-136:
- ⁵⁸ Նոյն, էջ 477-480:
- ⁵⁹ Նոյն, էջ 139:
- ⁶⁰ Նոյն, էջ 51:
- ⁶¹ Նոյն, էջ 432:
- ⁶² Նոյն, էջ 204-205:
- ⁶³ Նոյն, էջ 207-209:
- ⁶⁴ Նոյն, էջ 206:
- ⁶⁵ Նոյն, էջ 38:
- ⁶⁶ Նոյն, էջ 28:
- ⁶⁷ Նոյն, էջ 560-561:
- ⁶⁸ Նոյն, էջ 20:
- ⁶⁹ Նոյն, էջ 105-106:
- ⁷⁰ Արամեան, էջ 84-85:
- ⁷¹ “Diyarbakırlı Ermeniler”:
- ⁷² Tekin, էջ 56:
- ⁷³ Նոյն, էջ 367:

⁷⁴ Նոյն, էջ 85-86:

⁷⁵ Ամենայն հաւանականութեամբ խօսքը տխրահոշակ Մազրիկ ցեղի մասին է:

⁷⁶ Նոյն, էջ 49-50:

⁷⁷ “Diyarbakırlı Ermeniler”:

⁷⁸ Tekin, էջ 131:

⁷⁹ Tekin, էջ 53:

⁸⁰ Նոյն, էջ 227:

KURDISH ORAL HISTORY ON THE ARMENIAN GENOCIDE AND
GULCICEK TEKIN’S BOOK
(SUMMARY)

GOR YERANYAN
goreranyan@mail.ru

How do Kurds interpret their engagement in the Armenian Genocide? Kurdish researcher Gülçiçek Günel Tekin roamed through Western Armenian areas currently inhabited by Kurds and registered the reflections of 130 Kurds about the Armenian Genocide. She collected these stories in a book called “*Kurds Tell about the Armenian Genocide*”. In these stories, Kurds tell about Armenian-Kurdish relations, the official command for the slaughter of Armenians, the engagement of Kurds in the massacres, their assistance to Armenians, islamized Armenians, etc. This unique collection of oral memories gives us insight into the Kurds’ interpretation of the uprooting and massacres of the Armenians.

ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՐԱԽՏԱԻՈՐ
ՊՐՈՖԵՍՈՐ ՀԱՅԿ ՂԱԶԱՐԵԱՆԻ ՄԱՀԸ

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
varuzhan.poghosyan@mail.ru



Հ. Ղազարյան

83 տարեկան հասակում կեանքին հրաժեշտ տուեց վաստակաշատ պատմաբան եւ մանկավարժ, մեծաթիւ պատմագիտական աշխատութիւնների հեղինակ, պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ղազարեանը, որը խոր հետք թողեց արեւմտահայութեան, Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան պատմութեան ուսումնասիրութեան սապարէզներում:

Նա ծնուել է 1930ին, ՀՀ Մարտունու շրջանի Վարդենիկ գիւղում, ուսանել տեղի միջնակարգ դպրոցում, այնուհետեւ 1946ին ընդունուել Խաչատուր Աբովեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտի Պատմութեան Ֆակուլտետ, որն ավարտելուց յետոյ 1952-1954ին աշխատել է Կամոյի շրջանում իբրեւ դպրոցի ուսուցիչ: 1954ին ընդունուել է ՀԽՍՀ ԳԱ Պատմութեան Ինստիտուտի ասպիրանտուրա եւ ականաւոր պատմաբան ակադէմիկոս Աշոտ Յովհաննիսեանի ցուցումներով ձեռնամուխ եղել արեւմտահայութեան պատմութեան մանրագին ուսումնասիրութեանը: Նրա ղեկավարութեամբ նա գրել է եւ 1959ին պաշտպանել թեկնածուական ատենախօսութիւն՝ «Արեւմտահայ Դեմոկրատական Հոսանքը 1860ական Թուականներին» թեմայով: 1958-1976ին նա աշխատել է Պատմութեան Ինստիտուտում, որտեղ 1968ին պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն՝ «Արեւմտահայերի Սոցիալ-Տնտեսական Եւ Քաղաքական կացութիւնը 1800-1870 ԹԹ.» թեմայով:

1976ին Հայկ Ղազարեանը տեղափոխուել է աշխատանքի ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետ, որտեղ մինչեւ 1988 աշխատել է իբրեւ ԽՍՀՄ Պատմութեան Ամբիոնի վարիչ, միաժամանակ՝ 1980-1984ին զբաղեցրել նաեւ Ֆակուլտետի ղեկանի պաշտօնը: 1988-1995ին նա աշխատանքի է անցել Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Պատմութեան Ֆակուլտետում նախ իբրեւ պրոֆեսոր, այնուհետեւ Ռուսաստանի Պատմութեան Ամբիոնի

վարիչ (1992-1995): Կեանքի վերջին երկու տասնամեակը նա գերադասեց անմնացորդ նուիրաբերել միայն գիտահետազոտական աշխատանքներին:

Հայկ Ղազարեանն արհեստավարժ պատմաբան էր: Նրա գիտական հետաքրքրությունների կենտրոնում էին մինչ այդ գրեթե չուսումնասիրուած՝ արեւմտահայութեան պատմութեան հիմնախնդիրները գլխաւորապէս ԺԹ. դարում: Կեանքի տարբեր ժամանակահատուածներում նա ոչ միայն գրեց արեւմտահայութեանը նուիրուած ընդհանրացնող բնոյթի ծաւալուն հետազոտութիւններ, ինչպիսիք են *Արեւմտահայերի Սոցիալ-Տնտեսական Եւ Քաղաքական Կացութիւնը 1800-1870 ԹԹ.* (Երեւան, 1967), *Արեւմտահայութիւնը Յեղասպանութեան Նախօրեակին* (Երեւան, 2001) մենագրութիւնները, այլեւ որոշ արեւմտահայ յայտնի գործիչների նուիրուած ուսումնասիրութիւններ՝ *Գրիգոր Չիլինկիրեան* (Երեւան, 1959), *Մատթէոս Մամուրեան* (Երեւան, 1961), *Յարութիւն Սվաճեան: Կեանքը Եւ Գործունէութիւնը* (Երեւան, 1986): Հայկ Ղազարեանն իր նպաստը բերեց նաեւ նրանցից ոմանց երկերի հրատարակութեան գործին՝ Սրբուհի Տիւսար, *Երկեր* (Երեւան, 1959), Յարութիւն Սվաճեան, *Հրապարակախօսութիւն* (Երեւան, 1960), Մատթէոս Մամուրեան, *Երկեր* (Երեւան, 1966), հանդէս գալով իբրեւ դրանց կազմող եւ ծանօթագրութիւնների հեղինակ:

Յետագայում՝ դարեր շարունակ արեւմտահայութեան հատած բարդ քառուղիների առեջքներում հիանալի կողմնորոշումներ ունեցող պատմաբանը ձեռնամուխ եղաւ Հայկական Հարցի եւ Հայոց Յեղասպանութեան հիմնախնդիրների ուսումնասիրութեանը: Նրա գրչին են պատկանում ստուարածաւալ ուսումնասիրութիւններ՝ *Հայ Ժողովրդի Յեղասպանութիւնն Օսմանեան Կայսրութիւնում 1890-1922 ԹԹ., Հտր. Ա.-Բ.* (Երեւան, 2004, երկրորդ, վերամշակուած Հրատ.՝ Երեւան, 2007), *Մոսկուայի Եւ Կարսի 1921 Թուականի Պայմանագրերն Ու Նրանց Ողբերգական Դերը Հայ Ժողովրդի Ճակատագրում* (Երեւան, 2010), *Սեւրի Պայմանագիրը Եւ Վոլդրօ Վիլսոնի Իրաւարար Վճիռը Հայաստան-Թուրքիա Սահմանաբաժանման Վերաբերեալ, Գիրք Ա.-Բ.* (Երեւան, 2012): Հաշուի առնելով Թուրքիայի ժխտողական քաղաքականութեանը հակահարուած տալու անհրաժեշտութիւնը՝ նա Հայոց Յեղասպանութեան պատմութեանը նուիրուած իր մենագրութեան համառօտ տարբերակները լոյս ընծայեց նաեւ ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն, իսպաներէն եւ թուրքերէն լեզուներով:

Հայկ Ղազարեանի արժանիքներից էր հայ ժողովրդի բնաջնջման դիտարկումն իբրեւ օսմանեան տարբեր վարչակարգերի կողմից իրականացուած ցեղասպան քաղաքականութեան անքակտելի մաս: Այդ մասին է վկայում օսմանահպատակ տարբեր ժողովուրդների նկատմամբ

Օսմանեան Կայսրութիւնում կիրառուած ցեղասպան քաղաքականութեան դիմագիծը լուսաբանող *Օսմանեան Բռնապետութեան Ներքոյ Ապրող Հայ Եւ Միւս Ժողովուրդների Յեղասպանութեան Պատմութիւնը 1453-1922 ԹԹ.*, Հտր. Գ. (Երեւան, 2010) նրա մենագրութիւնը, որտեղ քննարկուած են մասնաւորապէս յոյն, բուլղար, ասորի, եգիպտացի ժողովուրդների ոչնչացման գործընթացները երկարատեւ ժամանակահատուածում, ինչն անկասկած, պայմանաւորուած էր Հայոց Յեղասպանութեան՝ իբրեւ օսմանեան տարբեր վարչակարգերի կողմից իրականացուած շարունակական գործընթացի (1894-1922) շուրջ նրա որդեգրած իրատեսական հայեցակարգային մօտեցմամբ:

Յիշատակութեան է արժանի նաեւ նրա *Armianskoe Obshestvenno-Politicheskoe Dvijenie V 50-60-x Godax XIX Veka I Rossiya* (Հայ հասարակական-քաղաքական շարժումը ԺԹ. դարի 50-60ականներին եւ Ռուսաստանը) (Երեւան, 1979) մենագրութիւնը:

Երկար տարիներ աշխատելով ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտում Հայկ Ղազարեանը գործուն մասնակցութիւն է ունեցել *Հայ Ժողովրդի Պատմութիւն* ակադեմիական բազմահատորեակի աշխատանքների իրականացմանը: Նա հանդէս է եկել ոչ միայն իբրեւ սոյն հրատարակութեան Ե. հատորի (Երեւան, 1974) տարբեր գլուխների հեղինակ, այլեւ գլխաւոր խմբագիր ակադեմիկոս Ծատուր Աղայեանի տեղակալ: Նա անուրանալի աւանդ է ներդրել նաեւ *Հայկական Սովետական Հանրագիտարանի* ստեղծման գործում, գրել բազմաթիւ յօդուածներ, մասնաւորապէս Արեւմտեան Հայաստանի եւ արեւմտահայ գործիչների մասին: Նա զբաղուել է նաեւ Հայաստանի պատմական աշխարհագրութեան հարցերով, իբրեւ հեղինակակից մասնակցել բազմաթիւ քարտեզների կազմման աշխատանքներին, որոնք զետեղուած են ոչ միայն նրա մենագրութիւններում, այլեւ *Հայ Ժողովրդի Պատմութեան* նշուած հատորում եւ *Հայկական Սովետական Հանրագիտարանում*:

Անժխտելի է Հայկ Ղազարեանի մանկավարժական գործունէութեան ոլորտում ունեցած ներդրումը: Սակայն առաւել էականը նրա՝ պատմական գիտութեանն անմնացորդ նուիրուածութիւնն էր: Որքան տարօրինակ է, նոյնիսկ կեանքի վերջին տարիներին, չնայած առաջադիմած տարիքին, նրա աշխատունակութիւնը բացարձակապէս չէր նուազում: Հերթական գրքի լոյս ընծայումից յետոյ նա խօսում էր միայն նախատեսուող նոր մենագրութիւնը թղթին յանձնելու բուն ցանկութեան եւ պատրաստականութեան մասին: Տարիների հեռուից նա ցանկութիւն ուներ գրի առնել նաեւ իր յուշերը, սակայն այդ մտադրութիւնը չհասցրեց իրականացնել:

Հարկ է նշել նրա բնատրությունն որոշ առանձնայատկություններ, որոնք յատուկ են, ցուրտ, սակաւաթիւ անձանց: Հանգուցեալ պատմաբանը մեծ ակնածանք էր տածում իր ուսուցչի՝ Աշոտ Յովհաննիսեանի հանդէպ: Ինձ հետ ունեցած գրեթէ իրաքանչիւր երկարատեւ զրոյցի ընթացքում նա ոչ միայն բարձր կարծիքներ էր յայտնում նրա գիտական գործունէութեան մասին, այլեւ նրա հասցէին ուղղում խորը երախտագիտութեան անկեղծ խօսքեր: Մեծ յարգանքով էր նա արտայայտում նաեւ մեծանուն պատմաբան, ԺԸ. դարի հայկական ազատագրական շարժումների եւ ԺԸ.-ԺԹ. դարերի ֆրանսիական հասարակական մտքի պատմութեան խոշորագոյն մասնագէտ Աբգար Յովհաննիսեանի մասին, որին միանգամայն իրաւամբ համարում էր հայ իրականութեան թիւ մէկ պատմաբանը:

Պրոֆեսոր Ղազարեանը ցանկութիւն չէր դրսեւորում ծանօթանալ իր գրքերի գրախօսականներին ձեռագիր վիճակում, որոնք ընթերցում էր լոյս ընծայուելուց յետոյ:

Հայկ Ղազարեանն աչքի էր ընկնում անեղծ հայրենասիրութեամբ: Ի տարբերութիւն շատ այլոց, Մոսկուայի եւ Կարսի 1921ի պայմանագրերին նուիրուած գրքում նա իր քաղաքացիական պարտքը համարեց հայեացք նետել 2009ին կայացած հայ-թուրքական բանակցութիւնների վրայ եւ յայտնեց իր բացասական դիրքորոշումը Թուրքիայի հետ նման հիմունքներով պայմանաւորուածութեան կայացման շուրջ:

Հաշուի առնելով Հայկ Ղազարեանի գիտական վաստակը 2007ին նրա թեկնածութիւնն առաջադրուեց Նոբէլեան մրցանակի: 2001ին Ռուսաստանի Բնական Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական Մասնաճիւղը եւ Ազգային Անվտանգութեան Պրորլէմների Գիտութեան Միջազգային Ակադեմիան նրան ընդգրկեցին իրենց կազմում, իսկ Հայոց Ցեղասպանութեանը նուիրուած նրա գրքի իսպաներէն տարբերակը նպաստեց նրա՝ Իսպանիայի Թագաւորական Ակադեմիայի անդամի կոչմանն արժանանալուն:

Հայկ Ղազարեանը վախճանուեց Երեւանում, 2014ի Օգոստոսի 20ին, ծննդեան օրուանից երեք օր առաջ:

Ի.ԴԱՐԻ ՄԻՋՆԱԴԱՐ (Գ.)

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ¹

ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՍՏԵԱՆ
hkharatyan@gmail.com

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

«Ի. Դարի Միջնադար» շարքի այս տարուայ նիւթը առաւելաբար կը վերաբերի Թուրքիայում Յեղասպանութիւնից յետոյ հայերի ինքնութեան ձեւաւորման կամ վերաձեւաւորման որոշ խնդիրները ներկայացնող պատմութիւններին: Միայն որոշ, որովհետեւ այս խիստ տարողունակ հարցը բազմաճիւղ է եւ կապ ունի ինչպէս պետական քաղաքականութեան, այնպէս էլ՝ հասարակական մշակոյթի եւ խմբերի ներքին զարգացումների հետ: Ընտրուել են տիպային պատմութիւններ, որոնցից իւրաքանչիւրը որոշակի շերտ ու գիտակցութեան կրողների խումբ է ներկայացնում:

ա) Գաւառի մեկուսացուածութիւնից ստամբուլեան մեզապոլիսեան ինքնութեան հետ ազգային ինքնութեան բախում, Յեղասպանութեան չիմացութիւն եւ յետագայ «յայտնաբերում» (Մարգիսը, Յակոբը),

բ) Ազգային ինքնութեան պահպանութեան համար մեկուսի եւ համայնքային ջանքերի գործադրում եւ ազգային պատկանելութեան «շրջանակի» սահմանում (Մարգիսը),

գ) Ազգային պատկանելութեան յայտնաբերում եւ ինքնութեան վերահաստատում (Մայրիկս Գլխիս Մէջ Ռումբ Էր Դրել),

դ) Նոր որակի ինքնութեան հետ հաշտեցում (Իսկի Ինսան) կամ ինքնութեան ընկերային-գաղափարական նոր տարբերակի ձեռք բերմամբ ինքնահաստատում (Սոցիալիստը),

ե) Թուրքական իշխանութիւնների թելադրած քաղաքականութեան ընթացքին յարմարուելու, դրանցում ձեռքեր գտնելու, գոյատեւելու եւ թուրքական հասարակութեան հետ յարաբերութիւնների վերաիմաստաւորման փնտռոյթ (բոլորում):

Այս պատմութիւնները, նախորդների նման, հաստատում են, որ «Թուրքիան թուրքն է» քեմալական ծրագիրը զգալի յաջողութիւններ գրանցելով հանդերձ, նորանոր խնդիրներ է յարուցել, որոնց լուծման ուղիներում իրականացուած նորանոր բռնութիւնների ձեւերն ու ծաւալները անհատներին՝ «փոքր մարդկանց» դրել են ինքնուրոյն լուծումների առաջ:

Նախորդ եւ սոյն հատորում մասնաւոր շեշտադրում կայ նաեւ Դերսիմում ալեւիացած հայութեան ինքնութեան խնդիրներին: Սա յատուկ նպատակ ունի, քանի որ յետ-ցեղասպանական Թուրքիայում Դերսիմի առհասարակ, եւ Դերսիմի հայութեան՝ մասնաւորապէս,

խնդիրները շատ քիչ են ծանօթ հայ հասարակութեանը, նոյնիսկ՝ Թուրքիայի հայ հասարակութեանը:

Ի. դարի սկզբում Դերսիմում ապրող հայերը, ըստ տարբեր հեղինակների վկայությունների, կազմում էին բնակչության մօտ մեկ-երրորդը: Չանդրադառնալով այն վարկածին, թե Դերսիմի ալեիների ծագումն առհասարակ հայկական է, վաւերացնենք միայն, որ թե՛ ալեիները, թե՛ քրիստոնէայ հայերը համարում էին, որ Դերսիմի ալեի-կզլբաշների զգալի մասը հայկական ծագում ունի: Դեռ համիդեան ջարդերի ժամանակից թուրքական իշխանությունները համոզուած էին, որ Դերսիմի ալեիները հայամետ դիրքորոշում ունեն: Հայերի նկատմամբ ալեիների համակրական դիրքորոշումից զատ իշխանություններին շատ էր անհանգստացնում, որ Դերսիմի ալեիները թշնամբար են վերաբերում սուննիզմին: Այդ շրջանում եւ դեռ երեք տասնամեակ անց Դերսիմի բնակչութիւնը փաստացի կիսանկախ վիճակ ուներ, զինուած էր եւ պարբերաբար դիմադրում էր Դերսիմը վերջնականապէս հնազանդեցնելու թուրքական իշխանությունների քայլերին: 1915ին հայերի նկատմամբ իրականացուած ցեղասպանութեան նախապատրաստման եւ իրականացման գործողությունները մեծ տագնապներ էին առաջացրել Դերսիմի ալեիների շրջանում: Հաստատուն համոզմունք կար, որ յաջորդ քայլը լինելու է իրենց ալեիական ինքնութիւնից հրաժարման հարկադրանքը, եթէ ոչ՝ կոտորածները: Այնուամենայնիւ, հայերի Յեղասպանութեան տարիներին շրջակայ բնակավայրերի շատ հայեր են փրկուել Դերսիմում եւ դերսիմցիների միջոցով: Այդ մասին տեղեկութիւններ կան նաեւ սոյն հատորում ներկայացուող պատմություններում: Միաժամանակ թուրքական ջարդարարները բուն Դերսիմի տարածքում միայն հարթավայրային գօտում կարողացան հայկական բնակավայրերի բնակչութիւնը տեղահանել կամ կոտորել, մեծ մասամբ՝ հարեւան սուննի քրդերի միջոցով: Նախալեռնային գօտիների քրիստոնէայ հայերի զգալի մասն այդ շրջանում ալեիացաւ եւ մնաց իր տարածքներում, իսկ լեռնային հայկական գիւղերը թե՛ մնացին իրենց տարածքներում, թե՛ մնացին քրիստոնէայ: Յայտնի է, որ մինչեւ 1938 Դերսիմի լեռնային շրջաններում դեռեւս հայկական բնակավայրեր էին մնացել, ինչպէս նաեւ շարունակում էր գործել Դերսիմում հանրայայտ եւ Դերսիմի ալեի ու քրիստոնէայ բնակիչների համար հաւասարապէս սրբազան Հալուորի Ս. Կարապետ վանքը: Դերսիմը շարունակում էր կիսանկախ մնալ եւ դիմադրում էր իշխանությունների ճնշումներին՝ երբեմն-երբեմն ապստամբելով իրենց անհնազանդութիւնը բռնութեամբ կոտորելու իշխանութեան քայլերի դէմ: Թուրքական իշխանությունները ի վերջոյ որոշեցին Դերսիմը հնազանդեցնելու փոխարէն դերսիմցիների նկատմամբ կրկնել հայերի Յեղասպանութեան յաջողուած փորձը:

Լոգանի Պայմանագրից յետոյ յաջողութեամբ լռեցուած հայոց Յեղասպանութեան թեման լաւ օրինակ էր Թուրքիայի համար, թէ ինչպէս կարելի է երկրի քաղաքացիներին անպատիժ ոչնչացնել եւ յետոյ շահել միջազգային համակրանք: Դաշնակից Ռուսաստանի (ԽՍՀՄ) եւ ապա եւրոպացիների հետ եղբայրացած Սուստաֆա Քեմալի ձեռքերը լիովին ազատ արձակուեցին արդէն 1927ից յետոյ, երբ ԱՄՆը ինքնօտարուեց հայկական հարցից եւ բնականոն դիւանագիտական յարաբերութիւններ վերսկսեց Թուրքիայի հետ:

Դերսիմի բնակչութիւնը ոչնչացնելու համար թուրքական իշխանութիւնը նոյնիսկ նոր բան չնտածեց, պարզապէս վերարտադրեց հայերի Յեղասպանութեան փորձը՝ մարդկանց զինաթափում են, «տեղափոխում ենք, քստորում ենք» ասելով տեղահանում են, կուտակում են մի վերահսկելի վայրում եւ ոչնչացնում այրելով, գետերը նետելով, իսկ դիմադրութեան դէպքում՝ ուղղակի կոտորում: Կոտորածներն սկսուեցին դեռեւս գործող հայկական Հալոլորի Ս. Կարապետ Վանքի պայթեցումով (սովորաբար յիշում է 1937ը, բայց ոմանք ասում են, որ վանքը պայթեցրել են 1936ին, եւ 1937ի ջարդերի ենթարկուողները փախչում էին իրենց Հրաշագործ Վանքի աներակներ): Դերսիմի ցեղապետերը յամառօրէն դիմադրում էին՝ օգտուելով իրենց դիրքի բնական անառիկութիւնից: Իշխանութիւնները կոտորում էին բոլոր դերսիմցիներին, այդ թում՝ կանանց, երեխաներին, ծերերին, բոլորին, ովքեր ցանկութեան դէպքում անգամ չէին կարող խռովարարական գործողութիւնների մասնակցել: Զինուորական փաստաթղթերում գրում էր, որ ոչնչացնում են «բանդիտներին», բայց, իհարկէ, որեւէ հետաքննութիւն, «բանդիտ»ի փնտռտուք չկար, կար պարզապէս զանգուածային կոտորած: *«Երբ ձմեռն սկսուեց եւ թուրքական բանակը չէր կարող շարունակել իր գործը, առաջարկեցին զինադադար կնքել եւ խաղաղ բանակցելով համաձայնութեան գալ ապստամբների հետ, խոստանալով նաեւ փոխհատուցել վնասները... 1938ի գարնանը իշխանութիւնը ներում յայտարարեց բոլորին, ովքեր զէնքերը կը յանձնեն: Դրան հաւատացած բոլոր ցեղերը ամբողջովին ոչնչացուեցին: Ոչնչացուեցին նաեւ Մազկերտի Կուռէշան, Եուսուֆան, Բախտիար ցեղերը... Նրանց սպաննել են զանգուածայնօրէն... Ամռանը ոչնչացում են նաեւ Նազիմիէի Հոռմեկան, Կուռէշան եւ այլան ցեղերը, Մազկերտի Պամաստուրան ցեղախումբը՝ թունաւոր ռումբերով եւ սուիճներով: Նրանց դիակների վրայ նաւթ են լցնում եւ վառում... նոյնիսկ իշխանութիւնների նկատմամբ մշտապէս հաւատարիմ Լիլուանք եւ Աշըղ Աբաս ցեղախումբերը քշուեցին հարթավայրեր եւ հրացանազարկ սպանուեցին: Աղջիկների ու կանանց վրայ նաւթ լցրեցին ու վառեցին: Յանձնուող գիւղերի բնակչութիւնը կոտորում էին թնդանօթներից եւ վերելից նետուող թունաւոր ռումբերով... հազարաւոր կանայք ու աղջիկներ*

Մեծուր գետն են նետուել... Նոյնիսկ թուրքական բանակում ծառայող դերսիմցի երիտասարդներին են հաւաքել եւ գնդակահարել»²:

Հասկանալի է, որ ոչնչացուեցին հայկական վերջին բնակավայրերը եւ վերջնականապէս ալեւիացիան փրկուած հայերը: Այդ յիշողութիւնները մինչեւ այսօր շատ վառ են կենդանի մնացած դերսիմցիների յուշերում: 2011ին Փիլունէք գիւղում ինձ ամենաչնչին մանրամասներով պատմում եւ ցոյց էին տալիս յարձակման վայրերը, փախուստի փորձերը, բնակչութեան ոչնչացումը, դիակների հրկիզման վայրերը: Ալեւիացած հայերի յիշողութիւնների մի փոքր մասին կարելի է ծանօթանալ սոյն գրքի «Իսկի Ինսան», «Սոցիալիստը», նախորդ հատորի «Թունջելիի Հայը» եւ այլ պատմութիւններից: Շատերը գտնում են, որ դա յարմար առիթ էր հայերից վերջնականապէս ազատուելու եւ նրանցից թշնամու նոր կերպար ստեղծելու: «Մեզ բոլորիս էին հետապնդում, բայց հայերի որսը սոսկալի էր», - ասում են այսօրուայ դերսիմցի ալեւիները: Զինուորականները մի վարկած էին ձեւաւորել, իբր թէ ցեղասպանութիւնից փրկուած դերսիմցի հայերը վերադարձել են Սիրիայից քուրդ ազգայնականների հետ եւ ալեւի ցեղապետերին սաղրել ապստամբութեան:

Այս ամենից յետոյ Թուրքիայի Ներքին Գործերի նախարար Շիրքու Կայը թուրքական Մեծ Ժողովին կոտորուածներին ներկայացրեց որպէս Դերսիմի թուրքերի՝ փաստօրէն հանելով **ցեղի սպանութեան** ենթախորքը: Դերսիմցիները, որոնց ողջ պայքարը «թուրք» չդառնալն էր, ովքեր թուրքերէն անգամ չգիտէին, թշնամի էին թուրքերի ինքնութեան գլխաւոր տարրին՝ սուննիզմին, պաշտօնապէս դասուեցին թուրքերի շարքը³:

Կոտորածներից յետոյ Դերսիմում կենդանի մնացած բնակչութեան զգալի մասին տաս տարով աքսորեցին Թուրքիայի արեւմտեան խորքերը: Երկիրը նօսրացաւ եւ մինչ բնակչութիւնը վերքերն էր լիզում՝ իշխանութիւնները արագօրէն փոխեցին վարչական կառուցուածքը, Թունջելի վերանուանուած Դերսիմի բոլոր քիչ թէ շատ մեծ բնակավայրերում ռազմական կայազօրեր տեղադրուեցին, տարրական դասարաններով թուրքերէնի ուսուցման դպրոցներ բացուեցին եւ մարդկանց թոյլ տուեցին իրենց երբէք չլուծուող (մինչեւ այսօր չլուծուած) հարցերով նորանշանակ թուրք պաշտօնեաներին դիմել, փորձեցին մզկիթներ կառուցել, որով հաստատուեց «Դերսիմի հնազանդեցումը»: Աքսորուածներից նրանք, ովքեր կը վերադառնան, արդէն կը լինեն թրքախօս, յատկապէս երեխաները, հնազանդ եւ վախեցած, կամ չեն վերադառնայ առհասարակ, եւ անհատական յիշողութիւնների միջոցով կը փոշիանայ «թրքացման» գործընթացի մղձաւանջը (տե՛ս՝ սոյն գրքի «Գետինը Ականջ Ունի, Ըսեսնէ՛ Կ'երթայ Չայնը» պատմութիւնը): Նախորդ գրքում հրատարակուած պատմութիւններից մէկի հերոսը՝

«Թունջելիի Հայր», ում ընտանիքը վերադարձողներից էր, վկայում է, թե այդ արքայի հետեւանքով ինչպէս փոխուեց Դերսիմի դիմագիծը. «[19]37 թուականին ստիպել են եւ ամէն մէկին տարբեր տեղեր են ուղարկել, օրինակ իմ մօր ընտանիքը՝ Քէօթահիա, հօրս ընտանիքը՝ Անթայիա: Մենք գնում էինք որպէս դերսիմցիներ, ոչ որպէս հայեր: [19]38ից յետոյ Դերսիմը փոխուեց, քրդացաւ: Հենց մեր ժամանակ քրդացաւ»⁴: Սա տուեալ դէպքում նշանակում է՝ ալեւի-քրիստոնէական Դերսիմը սուննիացաւ. քեմալիզմի աշխարհիկացման ծրագրի շատ կասկածելի արդիւնք: Թերեւս ծրագրուած արդիւնքը ձեռք է բերուել միայն թուրքական բաբելոնում՝ մեզապոլիս Ստամբուլում: Հենց այս քաղաքում են ամէնից աւելի լուծուում ինքնութիւնները, եւ կրկին այստեղ են ամէնից աւելի վիճարկուում ձեռքբերումները: Յիրաւի, ուշագրաւ հետազօտութիւն կը լինէր հասկանալու Ստամբուլի եւ Անկարայի «թուրք»ի ընկալումները: Գոնէ սոյն գրքում հրատարակուող «Սոցիալիստը» պատմութեան հերոսներից մէկը, ով Արդուիւնում վրացի է, Դերսիմում՝ քուրդ, Անկարայում... թուրք է: Իսկ նրա երեխաներից մէկը վրացի է, միւսը՝ հայ: Բարդ դէպք է: Պետք է ենթադրել, որ Անկարայում խտացել է օրուայ պահանջին համապատասխանող «թուրք»ը:

Թուրքիան «ազգային պետութիւն» էր կառուցում այս մեթոդներով եւ դա, իհարկէ, պէտք է ծնէր ինքնութիւնների փնտոտութի համապատասխան ուղիներ, ձեւեր եւ նմուշներ:

1937-38ի ջարդերը Թուրքիային յաջողուեց լուրջեան քօղի տակ պահել, մինչեւ 1990ին թուրքերէնով լոյս տեսաւ Ismail Beşikçiի, *Tunceli Kanunu (1935) ve Dersim Jenosidi* գիրքը⁵: Գրքի հեղինակը տաս տարով բանտարկութեան դատապարտուեց⁶, իսկ Թուրքական Հանրապետութեան այս մղձաւանջային էջը կամ աղաւաղուում է, կամ՝ լուրջեան մատնուում⁷: Իհարկէ այն իր դերը ունեցաւ Դերսիմը ծայրայեղօրէն թուրքական իշխանութիւնների դէմ տրամադրելու եւ դերսիմցիների ինքնութեան նոր տարբերակների վերամշակման խնդրում, բայց սոյն համառօտ յօդուածում դրան չենք անդրադառնալ: Չասել, սակայն, որ սա դարձաւ նաեւ Դերսիմում ալեւիացած հայերի ինքնութեան տառապագին խնդիրներից մէկը՝ չենք կարող, առաւել եւս, որ «հայկական հանրութեանը» մեծ հաշուով այն ծանօթ չէ: Սոյն գրքի «Դ. Դարի Միջնադար» շարքում դրա վկայութիւններին շատ կը հանդիպենք:

Արդիական ազգային պետութիւն ստեղծելու գործում Մուստաֆա Քեմալի կողմից «թուրք» Էթնիկական (ժողովրդի, ազգի, ցեղի) անուան՝ էթնանունի «ազնուացման» եւ Թուրքիայի բնակչութեան «թուրքական» ինքնութեան համատարած ներդրման ծրագիրը քաղաքական, գաղափարական-մշակութային ու վարչա-հրամայական մեթոդներով (կրթութեան, պատմութեան շարադրանքների, հրապարակախօսական յօդուածների, տեղանունների եւ քաղաքացիների անձնանունների

թրքացման, թուրքական ինքնություն չունեցողներին վարչական, նոյնիսկ մանկավարժական աշխատանքից ազատելու, գեղարուեստական գրականության ե.ն.) զգալի յաջողություններով շարունակուեց մինչեւ 1990ականները՝ ընդգրկելով ճիշտ Ի. դարի միջնադարը: Արդիւնքում շատ մեծ թուով քրդեր, արաբներ, յոյներ, լազեր եւ կովկասեան ծագումով այլ ժողովուրդներ, բալկանեան ժողովուրդներ (ալբանացի, բուլղարացի, սերբ ե.ն.), ցեղասպանութիւնից յետոյ կենդանի մնացած հայեր իսկապէս թրքացան կամ «թրքացան» երեւութապէս: Մեծ հաշուով նրանց այլ ելք չէր թողնուած: Բացի այն, որ պաշտօնապէս փաստացի տարբեր մակարդակներով ստորակարգուած էին «ոչ թուրքերը» (ամենաստորին սանդղակում քրիստոնեաներն էին, նրանցից մի մակարդակ բարձր էին ալեւիները, աւելի բարձր՝ սուննի մահմեդական արաբներն ու քրդերը, ամենաբարձրում՝ սուննի թուրքերը), միայն «թուրքը» կարող էր փոխել իր հասարակական կարգավիճակը, պաշտօնեայ լինել, ասպարէզ ունենալ, պետական դպրոցի ուսուցիչ լինել, ամէն վայրկեան չսպասել տարատեսակ քաղաքական, մշակութային, ֆինանսական հետապնդումների ե.ն.: «Թուրք դառնալ»ը պարզ էր խօսել թուրքերէն, լինել սուննի մահմեդական, եւ ինքն իրեն «թուրք» անուանել՝ ազատուելով հասարակական արգահատանքից եւ վարչական ու քաղաքական ճնշումներից, եւ գոնէ սպագայ սերնդին առիթ տալ համարկուելու թուրքական քաղաքական, ընկերային եւ մշակութային կեանքին: Քեմալական Թուրքիայում առանց լուրջ դիմադրութեան յաջողութեամբ իրականացում էր հասարակութեան աշխարհիկացման եւ ինքնութեան թրքա-սուննիացման ծրագիրը (չնայած երկիրը պաշտօնապէս աշխարհիկ էր յայտարարուել, բայց աշխարհիկացումը այս կամ այն չափով քաղաքական եւ ընկերային-մշակութային փոքրաթիւ վերնախաւից այնկողմ չէր տարածում եւ ոչ-սուննիների նկատմամբ անբարեացակամութիւնը հասարակութեան մէջ խրախուսում էր): Մուննիզմի կարեւորութիւնը քաղաքական իմաստով խրախուսում էր, քանի որ առնուազն բնակչութեան մօտ կէսը կազմող սուննի քրդերին թուրքերի հետ կապող հիմնական մշակութային եւ ընդհանուր ինքնութեան բաղադրիչը հենց սուննիզմն էր: Քրդական միջավայրի համար խրախուսում էր «նախ սուննի, ապա նոր՝ քուրդ» ինքնութիւնը, թուրք-քրդական «եղբայրութիւնը» (մինչեւ այսօր յաճախ հնչող բառ թուրք ինքնութեամբ հաստատուած քաղաքական գործիչների հռետորաբանութիւնում) խարսխուած էր հենց սուննիզմի վրայ: Յիրաւի կարճ ժամանակում, թուում է, կտրուկ փոխուեց ոչ-վաղ անցեալի օսմանեան Թուրքիայի բազմազգ եւ բազմակրօն էթնօ/ցեղա-կրօնական պատկերը՝ քանակապէս առնուազն տաս անգամ մեծացնելով «թուրք» ինքնութեան բաղադրիչը: Դրանք ծանր պայքարի տարիներ էին ինչպէս հասարակութեան, այնպէս էլ՝ թուրքական իշխանութիւնների համար:

Հասարակության քանակական մեծամասնության համար դա խելագար տազնապների, թաքնուելու, կեղծելու, խեղուելու, յարմարուելու, երբեմն-երբեմն՝ դիմադրելու շրջան էր, իշխանությունների համար՝ նորանոր լուծումներ, միջոցներ ու ձևեր փնտռելու, ճնշումներ գործադրելու եւ նաեւ այդ նպատակով հասարակության մեջ միշտ պատրաստի «ազգայնական խմբեր» ունենալու, հասարակական կարծիքի վրայ ազդելու եւ այլ, ծածուկ ու բացայայտ ծրագրի իրագործումների շրջան:

«Թրքացման» քաղաքական ծրագրի հանրային յաջողության զգալի մասը պայմանաւորուած էր թուրքական հասարակության մեծ մասի անգրագիտութեամբ եւ անցեալի մասին տեղեկութիւնների սղութեամբ: Մեծ հաշուով անցեալի մասին իմացութիւնը բանաւոր յիշողութիւնն էր, որը կա՛մ խմբերի ներսում էր, կա՛մ՝ ընտանիքներում: Բազմակրօն ու բազմազգ Թուրքիայի թուրքական ազգային պատմութեան նոր սկսուած պատմագրական շարադրանքը յաջողութեամբ շրջանցում էր Թուրքիայի տարածքի «ոչ-թրքական» անցեալն ու նոյնիսկ «ոչ-թրքական» ժողովուրդների յիշատակումը: Սա հնարաւոր էր տեղեկատուութեան պետական մենիշխան տիրապետութեան եւ համատարած վախի պայմաններում, երբ միայն իշխանութիւնն էր կարողանում ապահովել եւ վերահսկել իրեն յարմար իմացութեան եւ աշխարհայեացքի ձեւաւորումը, իսկ այլընտրաքային կարծիքը վախի մեջ է անցեալ եւ առկայ բռնութեան սարսափից: Թուրքիային իսկապէս յաջողուեց «լռութեան պատ» դնել թէ՛ Հայոց Յեղասպանութեան, թէ՛ աւելի ուշ՝ Դերսիմի բնակչութեան նկատմամբ այդ նոյն ցեղասպանական գործողութիւնների մասին հանրային գիտելիքի վրայ: Ընդ որում այնքան յաջող, որ նոյնիսկ այդ արհաւիրքով անցած, բայց այս կամ այն ձեւով ցեղասպանութիւնից փրկուած գաւառահայերի երկրորդ-երրորդ սերունդները մինչեւ վերջերս չգիտէին դրա ծաւալների եւ բնոյթի մասին, դատողութիւնները սահմանափակուում էին «մեր գիւղում», «մեր քաղաքում» տեղի ունեցածով, իսկ տարեցները երբեմն մինչեւ այսօր կրկնում են երիտասարդ շրջանում զինուորութեան ժամանակ լսած եւ/կամ պաշտօնական տեղեկատուութեամբ հանրային գիտակցութիւնը հեղեղած «հայերի դաւաճանութեան» մասին հեքիաթները:

Անցեալի ու պատմութեան մասին պատմութեան պաշտօնական շարադրանքից զատ այլ աղբիւր՝ բացի առանձին խմբերի ներսում սերնդից-սերունդ փոխանցուող բանաւոր յիշողութիւններից, փաստօրէն չկար: Նոյնիսկ պատմագրական հարուստ աւանդոյթներ ունեցող եւ անցեալում գրագէտ հայերի ու յոյների՝ ցեղասպանութիւնից յետոյ կենդանի մնացած սերունդը անցեալի վերաբերեալ բանաւոր յիշողութիւնից զատ այլընտրաքային տեղեկութիւնների աղբիւր չունէր: Գաւառներում կենդանի մնացածները ոչ միայն մայրենի լեզուով, այլեւ յաճախ թուրքերէն անգամ կարդալու հնարաւորութիւն չունէին այն

պարզ պատճառով, որ անգրագետ էին, առնուազն՝ մինչև 1950ականների կեսերը, երբ երկրի գիտերում վերջապես դպրոցներ բացուեցին: Եւ դպրոցն աւարտող սերունդը դեռ պետք է հնարաւորութիւն ունենար դպրոցական գիտելիքից զատ այլ տեղեկութիւնների ծանօթանալ, ինչը հնարաւոր էր միայն վաթսունականների կեսերից: Այս պայմաններում թուրքական «ազգային պատմութիւնը» յիշուի դարձաւ այն հզօր գործօնը, որ ձեւաւորեց միջին խաւի թուրքական ազգայնամոլութիւնը՝ ծածկելով նոյնիսկ այլ ցեղային միաւորների գոյութեան առկայութիւնը, առաւել եւս անցեալի մասին յիշողութիւնը: 1950ականներից յետոյ սկսուած համատարած կրթութեան միջոցով մատուցուող «ազգային պատմութիւնը» թուրքական հասարակութեան հիմնական ընդհանուր իմացութիւնն էր, ուստի եւ՝ հանրային արժարձումի փաստարկների հիմնական, եթէ ոչ միակ ձեւաւորողը:

Քեմալական աշխարհիկացման ծրագրով «թուրք» ցեղային ինքնութեան գլխաւոր բաղադրիչները պետք է լինէին թուրքերէնն ու սուննիզմը, իսկ բուն ինքնութիւնը՝ «նախ թուրք, յետոյ՝ սուննի» առաջնահերթութիւնը: Սակայն կառավարութիւնն այնքան ուշացրեց դպրոցական կրթութիւնը եւ թուրքերէնի պարտադիր ուսուցումը, որ մինչև 1980ականները Թուրքիայի յատկապէս արեւելեան գաւառներում ապրողների բացարձակ մեծամասնութիւնը դեռեւս թուրքերէն չգիտեր եւ թուրքական ինքնութեան այդ կարեւոր բաղադրիչը իր տեղը զգալիօրէն զիջել էր կրօնականին՝ սուննիզմին: Սա պատճառներից մէկն էր, որ արեւելեան գաւառներում սուննիացած բնակչութիւնը, այդ թում՝ հայերը, ասորիները, արեւելեան նահանգներում տարածուած քրդերէնը կենցաղային շփումների հետեւանքով անհամեմատ հեշտ իւրացնելով, աւելի շուտ քրդանում, քան թրքանում էին: Միւս կողմից իշխանութիւնները, Յեղասպանութեան ժամանակ եւ դրանից յետոյ կենդանի մնացածներին կրօնափոխութիւն հարկադրելով, թրքական ինքնութեան կրողների մէջ ոչ միայն կրօնափոխուածների նկատմամբ հանդուրժողականութեան մշակոյթ չէր ձեւաւորում, այլեւ հենց իշխանութիւններն իրենք էին բարձրաձայն կասկածանք ու արհամարհանք արտայայտում նրանց նկատմամբ՝ վերջիններիս դնելով ճնշուածների ու ինքնապաշտպանուողների կարգավիճակում եւ այս կամ այն կերպ նրանց մէջ ներդնելով խմբային նոր որակի ընդդիմադիր «մենք» ձեւաւորման անհրաժեշտութիւն: Արդիւնքում ստացում էին ոչ թէ թուրքական ինքնութիւն կրող քաղաքացիներ, այլ թուրքական ինքնութեամբ ընկերա-քաղաքական շերտին դիմադրելու պատրաստ ձախակողմեան հայեացքներ կրող կամ նոր ինքնութեամբ մեկուսացող, ինքնամփոփուող խմբեր: Որոշակիօրէն, հայերի պարագայում, պետական կառոյցները, պատմութեան դասագրքերը, թերթերը,

հանրային հոետորաբանութիւնը իսպառ շրջանցում էին «հայ» բառը՝ նրանց նախկին կամ ներկայ գոյութիւնն առհասարակ մոռացնել տալու համար, սակայն իսլամացած «հայերը» մարդկանց «յարաբերութիւնների մշակոյթում» նոր անուններով միշտ առկայ են/էին՝ «բա ֆըլա» (քրդական միջավայրում՝ հայրը քրիստոնէայ), «գեաուրշա» (թուրքական միջավայրում՝ «գեաուր ուշադ» քրիստոնէայի երեխայ): Այս եզրերով շեշտում էր անձի քրիստոնէական անցեալը, համապատասխանաբար նաեւ՝ սուննիից տարբերուող ինքնութիւնը: Մրանք սովորաբար անձին եւ խմբին ստորադասող եզրեր են/էին, որով կրօնափոխուածներին յատկանշելով՝ ոչ մի կերպ թոյլ չեն/չէին տալիս մոռանալու «իրենց յատկացուած տեղը» եւ հաւասար հորիզոնականի վրայ գտնուելով իսլամական ընդհանուր միջավայրում՝ լիարժէք համարկուելու հասարակութեանը: Յընթացս ձեւաւորում էին նաեւ կրօնափոխուածների ինքնութեան ներքին օգտագործման եզրերը, ինչպէս, օրինակ, «բիզիմէա» (հայկական միջավայրում՝ «մերինները», «մերոնքականները»), մի եզր, որով «մերինները» ինքնամեկուսանում էին թէ՛ իրենց կրօնակից թուրքերից ու քրդերից, թէ՛ ազգակից քրիստոնէայ հայերից: Այս բոլոր եզրերը այս կամ այն մակարդակով նոյն դերն էին խաղում՝ նպաստում էին յատկանշուող խմբերի ինքնապաշտպանական փնտռութիւններին եւ դրանց հանգրուանին՝ խմբային նոր ինքնութեան ձեւաւորմանը:

1960ականներին սկսուած քրդական ազգային ազատագրական եւ/կամ ինքնութեան վերահաստատման գործողութիւնները, թուրքական բանակի ու Քրդստանի Աշխատաւորական Կուսակցութեան միջեւ զինուած բախումները, հանրային միջավայրում, լրատուամիջոցներում «քուրդ» բառի ցեղային/ազգային պատկանելիութեան իմաստով գործածութեան յաճախացումը սկսեց հարցականներ առաջացնել «թուրքական միասնականութեան» հարցերի շուրջ: Հասարակութիւնում սկսում էր քննարկուել «աշխարհիկ» եւ «իսլամական» համատեղութեան երկուութիւնը: Մրան զուգահեռ 1960-70ականների ընկերվարական գաղափարների ճնշումների հետեւանքով Եւրոպայում յայտնուած փախստականները բախում էին Թուրքիայի պատմութեան մասին այլընտրանքային շարադրանքներին: 1980-90ականներում Թուրքիայում յայտնուում են ազգային պատմութեան շարադրանքի իսկութիւնը կասկածի տակ դնող վերլուծութիւններ, նոյնիսկ՝ քննադատօրէն վերանայող շարադրանքներ:

1990ականները, կարելի է ասել, բեկումնային եղան: Բացայայտուեց, որ թուրքական հասարակութեան հաւաքական ինքնութիւնը թաքնուած ինքնութիւնների վատ կարկատած պաստառ է: Աւելի ու աւելի համարձակ էին դառնում առանձին խմբերի մասնաւոր ինքնութիւնների ինքնահաստատման դրսեւորումները եւ ճգնաժամ առաջացնում

թուրքական հասարակութեան ընդհանուր ինքնութեան ծրագրերում: Շփոթուած իշխանութիւնները, ովքեր խնդիրներ ունէին նաեւ Թուրքիայում զգալի զարգացում ապրող ձախակողմեան հայեացքներով խմբերի դէմ, պատրաստ չէին այսպիսի շրջադարձի, պատրաստի ծրագրեր չունէին ինքնութիւնների բացայայտումների դէմ եւ դրանք վարակիչ փոխանցումներով աւելանում էին: Այս շրջանը որոշ հետազօտողներ նոյնիսկ անուանում են «ինքնութիւնների թոյլտուութեան» շրջան: Քանի որ իրականում Թուրքիայի փոքրամասնութիւնները տեսաբար ապրում էին յայտարարուած ինքնութիւններով եւ դրանք այս կամ այն կերպ փոփոխութիւններ էին կրել, սկզբունքօրէն այն կարելի է անուանել նաեւ «ցեղա-կրօնական ինքնութիւնների կառուցման կամ վերակառուցման» շրջան:

Հասարակութեան ընդերքում կատարուած յարաբերականօրէն դանդաղ խմորումները բացայայտուեցին ութսունականների քրդական շարժումների յենքին, երբ աշխուժացան նաեւ իրենց ինքնութիւնը ճանաչել պահանջող ալեւիները, յատկապէս՝ Դերսիմի զազախօս ալեւիները: Թուրքիայում ընդհանուր թուրքական ինքնութեան նուաճման թուացեալ յաջողութիւնը մեծ ճաքեր էր տալիս:

Ահա այս շրջանում, թուրքական գերձկուն քաղաքական միտքը հրապարակ բերեց ինքնութիւնների աշխուժացման տարածքների բնակչութեան լայնածաւալ տեղահանութեան գաղափարը, որն իրականացուեց 1984-87ի ընթացքում եւ կրկնուեց 1993-94ին: «Բանդիտներ»ի (քուրդ ազգայնականների, քրդական ազատագրական շարժման կենտրոնների...) դէմ պայքարելու յայտարարագրով թուրքական ռազմական ահռելի ուժը ուղղուեց արեւելեան նահանգների լեռնային բնակավայրերի բնակչութեան տեղահանութեան գործին (սոյն գրքում՝ «Իսկի Բնասան», նախորդ հատորում՝ Հազս Գիւլի բնակիչների եւ այլ պատուիրւնները): Այն ներառել է Սասունը, Բիթլիսը, Դերսիմը, մասամբ՝ Դիարբեքիքը եւն: Տեղահանուածների բնակավայրերը եւ տները քանդուեցին եւ դրուեցին ոստիկանութեան վերահսկողութեան տակ՝ մարդկանց վերադարձն արգելելու համար: Բացի բուն տարածքների ներքին կապերն աւերելը, խախտուեցին նաեւ անանդական աշիրէթական կապերը, տեղահանուածները ցրուեցին ողջ երկրով մէկ՝ գոյատեւման նոր միջոցներ գտնելու, եւ զգալի չափով փոշիացուեց, լուծարուեց ընկերա-մշակութային եւ ցեղային ինքնութեան հաւաքականութիւնը: Տեղահանուածների զգալի մասը, յայտնուելով գլխաւորապէս երկրի աւելի զարգացած արեւմտեան թրքախօս հատուածներում, անհամեմատ աւելի արագ իւրացրին թուրքերէնը, քան մինչ այդ արւում էր վաթսունականներին համատարած դարձած դպրոցների միջոցով: Սա, գուցէ, դարձաւ պատճառներից մէկը, որպէսզի քրդերի մեջ ժամանակին ներդրուած «նախ սուննի, յետոյ քուրդ»

ինքնութեանը որպէս հակակշիռ ձեւաւորուի «նախ քուրդ, յետոյ սուննի» սկզբունքը, որն զգալիօրէն արագացրեց քրդական ազգային գիտակցութիւնը: Սուննիզմի դերի նուազումը սկսում է տարածուել նաեւ թուրքերի մէջ, այս անգամ բախուելով գաւառներում սուննիզմի կարեւորութեան վրայ աճած թուրք երիտասարդների ընդվզմանը, ինչը գեղարուեստական լեզուով հիանալի ներկայացուած է թուրք գրող Օրհան Փամուկի *Չիւնը* վէպում:

1980-90ականներին շատ քիչ, բացառիկ իսլամացած հայեր էին խիզախում բարձրաձայնել իրենց թաքցուած ինքնութեան մասին: 1980ի զինուորական յեղաշրջումից յետոյ Թուրքիայում կրկին աշխուժացել էին հակահայկական տրամադրութիւնները, եւ նոյնիսկ արդէն բացայայտ հայերը քաշուել էին խիստ մեկուսի կեանքի: Բայց ինքնութիւնների պռոթկումը երկրում առիթ էր նոյնիսկ որոշ հայերի համար: Հենց այդ շրջանում է տեղի ունեցել 1915ին իսլամացած ծնողներից սերուած, Ուրֆայում ապրող Հատի Կիւմուշի հայկական ինքնութեան վերադարձը, ինչի մասին նա պատմել է 2015ին Հայաստանում հրատարակուող *Առաւօտ* օրաթերթին. «*Դեռ մանկութենէս գիտէի, որ հայ եմ: 1980-ին ֆաշիստական հրամանատարները իշխանութիւն ձեռք բերին, եւ ինքս, ի հակասութիւն իշխանութիւններուն, իմ հայութեան ինքնութեան վերականգնման համար պայքար սկսայ: Կը մտածէի, թէ ինչու այլ ինքնութեամբ պէտք է ապրիմ: Այս որոշումը առնելը հեշտ չէր. երկու տարի շարունակ կը պայքարէի, եւ վերջապէս թրքական ամենավերին ատեանի դատարանը այդ որոշումը կայացուց... Ես մանկավարժ կ'աշխատէի, սակայն երբ վերականգնեցի իմ հայութիւնս, զիս դուրս հանեցին դպրոցէն: Կրկին դիմեցի դատարան, եւ այս անգամ դատարանը որոշում կայացուց, որ եթէ ծագումով հայ ես, թուրք ու քիւրտ երեխաներուն չես կրնար մանկավարժութիւն ընել»⁸:*

Խմբերի ինքնութիւնների վերահաստատման/վերակառուցման հետեւանքով առաջացած ճգնաժամը Թուրքիայի արդիականացող երիտասարդութեանը մղում է հետաքրքրուելու «սեփական ցեղային ծագումնաբանութեամբ», հրատարակում են ինքնախոստովանութիւնների գրքեր, հրապարակախօսական յօդուածներ, գեղարուեստական պատմուածքներ, կազմակերպում են ցուցահանդէսներ, նկահարահանում են ֆիլմեր, կազմակերպում են քննարկումներ: Այս գործընթացը նոր մարտահրաւեր է հասարակութեան ցեղային միատարրութեան ձգտող երկրի իշխանութիւններին: Ակնյայտ է, որ թուրքական հասարակութեան բազմաթիւ անհատներ, ընկերային ու ցեղային խմբեր այսօր ինքնութեան ճգնաժամ են ապրում եւ ներկայումս այս նիւթը այդ երկրի առաւել քննարկուող խնդիրներից է: Սեփական «ցեղային ծագումնաբանութեան» փնտռուքը բախում է

իշխանութիւնների դատապարտող հռետորաբանութեանը եւ նոյնիսկ ներկայացում է որպէս վտանգաւոր ընդդիմադիր քաղաքական գործունէութեան տեսակ (տե՛ս՝ սոյն գրքի «Մայրիկս Մի Անգամ Ասել Է. «Մենք Թուրք Չենք», Բաց Չի Ասել Մենք Ինչ Ենք» պատմութիւնը): Այնուամենայնիւ այն շարունակուում է, եւ նոյնիսկ իշխանութիւնների կողմից մշտապէս խիստ վերահսկողութեան տակ գտնուող տարածքներում, ինչպէս, օրինակ, Մուշում, աւելի ու աւելի յաճախ են մարդիկ խօսում իրենց թաքցուած ծագումնաբանութեան մասին, նոյնիսկ՝ այս երկրում ամենից աւելի վախեցած հայերը. «*Տարիներ շարունակ փորձել ենք երեւալ քուրդ, փորձել երեւալ արաբ, բայց ոչ քուրդ դարձանք, ոչ արաբ, ոչ թուրք: Ես սա եմ, Մաքոյի թոռն եմ, ինչքան էլ ուզենաս Մաքոյին կոչել Սուլէյման, դրանից Մաքօն Սուլէյման չի դառնա*»⁹:

Ներկայիս թուրքական իշխանութիւնները վերսկսել են կարեւորել սուննիզմը, ինչը թուրք ազգայնականների կարեւոր կողմնորոշիչներից է: Սրան զուգահեռ աշխուժացել է նաեւ իրենց բնակութեան տարածքներից չտեղափոխուած եւ ուրեմն հայկական ծագումնաբանութեամբ ու կրօնափոխութեան փաստով տեղի բնակչութեանը յայտնի մարդկանց զգալի մասի կրօնական վարքը. նրանք ամէն կերպ ցուցադրում են իրենց հաւատարմութիւնը իսլամին:

Ամփոփելով, ընդհանրացնենք, որ ինքնութիւնների հարցի թուրքական նոր տրամասացութիւններում տեղաւորում են նաեւ հայկական ինքնութեան նոր զարգացումները,- զուգահեռաբար ընթանում են

ա) իսլամացած հայերի «ցեղային ծագման» բացայայտումները եւ հայկական ինքնութեան հաստատումները,

բ) իսլամացած-թրքացած (զեաուր ուշադ) հայերը, մասամբ նաեւ քրդացած (բա-ֆըլա) եւ արաբացած հայերի մի մասը ամէն գնով փորձում են մոռանալ եւ հասարակութեան մէջ մոռացնել իրենց անցեալի հայ-քրիստոնէութեան իրողութիւնը,

գ) Արեւմտեան Հայաստանի տարածքից կամաւոր կամ տեղահանութեամբ Ստամբուլում յայտնուած իսլամացած-քրդացած հայերը (բա-ֆըլա) երկփեղկուել են «իսլամացած հայ»ի նոր ինքնութիւնը իրաւականացնելու եւ քրիստոնէութեանը վերադառնալու երկուութեան ծանր խնդրում,

դ) աւանդաբար քրիստոնէայ ստամբուլահայերը երկփեղկուել են 1970ականներից Ստամբուլում հաստատուող քրիստոնէայ արեւմտահայերի եւ «իսլամ-հայ»ի նոր ինքնութեան նկատմամբ իրենց դիրքորոշումը յստակեցնելու հարցում:

«ԻՍԿԻ ԻՆՍԱՆ». ԵՐԲ ՄԵՐ
ԾՆՈՂՆԵՐԸ ԴԵՌ ՀԱՅ ԷԻՆ,
ԻՐԵՆՔ ՄԻՐԱՔԵԱՆՆԵՐԻՑ
ԷԻՆ, ՅԵՏՈՅ ԴԱՐՁԵԼ ԵՆ
ՀԱՅԴԱՐԱՆ

(Թունջելիում Ապրող Իբրահիմ
Օզարի Պատմությունը)¹⁰



Իբրահիմ Օզարի հետ ծանօթացել եւ գրուցել եմ Դերսիմի ալեւիական¹¹ «Կուռէշ Բաբա» կոչուող սրբավայրում, 2011 Յուլիսին: Մնձուրի հերթական երաժշտական փառատօսի օրերն էին, եւ ալեւիները Հայաստանից եկած հիւրերին հրաւիրել էին միասին երեկոյ անցկացնել «Կուռէշ Բաբա» ուխտավայրում միաժամանակ ծանօթանալու Կուռէշ Բաբա եւ Դիւզգուն Բաբա ալեւիական ուխտավայրերին ու դրանց հետ կապուած աւանդազրոյցներին¹²: Այստեղ հաւաքուել էին բազմաթիւ ուխտատուներ, եւ մինչ միւս ուխտատուները մատաղ էին անում, Իբրահիմն ինքը մօտեցաւ, հարցրեց հայ լինելս եւ ասաց, որ ինքն էլ հայ է, հայ ալեւի, որ այստեղ է եկել իր որդու հետ, եւ առաջարկեց իր օգնութիւնը: Այս քառասնամեայ շատ համակրելի տղամարդն այնուհետեւ անընդհատ ինձ հետ էր, նկարահանում էր օրուայ գործողութիւնները, եւ միաժամանակ պատմում էր իր կեանքից իր ընտանիքի պատմութիւնը: Զրուցել ենք թուրքերէն լեզուով:

- Այսօր խնջոյքից յետոյ երեկոյեան հաւաքուելու ենք «Կուռէշ Բաբայի» մեծ սրահում, երգելու եւ նուագելու: Տղաս առաջին անգամ պէտք է այդպիսի կարեւոր երեկոյի նուագի: Սովորաբար այդ երեկոներին փորձառուներն են նուագում, բայց տղայիս վստահել են: Ինքն ընդամենը տասնվեց տարեկան է: Շատ է յուզում:

- *Տղադ գիտի՞ քո հայ ալեւի լինելը:*

- Իհարկէ գիտի: Ինքն էլ հայ ալեւի է: Այստեղ հենց հիմա, այս ուխտավայրում հայ ալեւիներ շատ կան: Տեսնու՞մ էք այն երիտասարդին (*ցոյց է տալիս քսանամեայ բարձրահասակ մի տղայի՝ սազը ձեռքին*), նրա ծնողներն էլ հայեր են եղել: Շատ ենք մենք:

- *Այս ուխտավայրը հիմա ձեր բոլորի՞ ուխտավայրն է:*

- Ոչ մի տարբերութիւն չկայ հայ ալեւիների ու ալեւիների միջեւ: Միշտ էլ նոյն ուխտավայրերն ենք ունեցել: Նոյն կերպ ենք մատաղ արել, նոյն կերպ մոմ ենք վառել: Այսինքն ալեւիները հայերի նման են ուխտավայրեր գնացել: Սոմ վառելը հայերից է անցել ալեւիներին: Հիմա

էլ երբ հայերն ալեւիացել են, մեր բոլոր սովորութիւնները նոյնն են դարձել: Հիմա ալեւիացած հայերն էլ սազ են նուագում, գնում են երեկոյեան ալեւիական հաւաքներին, երգում են, պարում են: Այ դրանք ալեւիական սովորութիւններ են, բայց հիմա բոլորս էլ նոյն կերպ ենք դա անում:

- *Ի՞նչ երգեր էք երգում:*

- Դրանք ալեւիական երգեր են: Հայերէն չկայ: Հայերէն խօսելը երբ արգելուեց, հայերէն երգերն էլ մոռացուեցին: Դա վաղուց էր: Ես որ ծնուել եմ՝ արդէն արգելուած է եղել: Հիմա երգում են միայն հազրաթ Ալիի, հազրաթ Հուսէյինի¹³, այդպիսի կրօնական երգեր: Ամէնից աւելի շատ հազրաթ Հուսէյինի մասին:

- *Դուք բոլորդ այդ երգերը գիտէ՞ք:*

- Շատերս գիտենք: Մեր ընտանիքում բոլորը գիտեն: Տղաս էլ շատ լաւ նուագում ու երգում է: Այսօր երեկոյեան կ'երգի, կը լսէք: Այստեղ բաբաներ¹⁴ են գալիս, նրանք նուագում են, երգում են, մենք էլ իրենցից սովորում ենք:

- *Դուք մի շտ էք թունջելիում ապրել:*

- Ոչ, մենք Վարդենիկ¹⁵ գիւղից ենք, այսինքն հայրս էր վարդենիկցի, բայց ես էլ եմ ծնուել Վարդենիկում: 1994ին Վարդենիկն աւերել են զինուորները¹⁶ եւ այնուհետեւ արգելել են այնտեղ ապրել: Ես հիմա թունջելիում եմ ապրում: Վարդենիկ կարող ենք գնալ միքանի ժամով¹⁷: Զինուորականները արտօնութեան թուղթ են տալիս, հաշում են, թէ քանի մարդ է գնում, գրում են, թէ որ ժամին պիտի վերադառնանք, եւ այդ ժամին մենք պէտք է անցագիրը յանձնենք: Վարդենիկը մեծ գիւղ էր: Բոլորը հայեր էին, ալեւի հայեր: Մենք Հայդարաններից¹⁸ ենք, բայց չգիտեմ երբ եւ ինչպէս ենք Հայդարան դարձել, որովհետեւ առաջ, երբ մեր ծնողները դեռ հայ էին, իրենք Միրաքեաններից¹⁹ էին: Շատ յայտնի մի մարդ կար Միրաքեաններից՝ Աուսկան (Ուսկան - Հ.Խ.) աղան, ահա Աուսկան աղան մեր պապերից էր: Աուսկանն իմ ամենամեծ պապն է, որի անունը ես գիտեմ, գուցէ իմ պապի հայրն էր: Այն ժամանակ դեռ Միրաքեան էին:

- *Միրաքեանների մասին որեւէ բան գիտէ՞ք:*

- Չէ, ոչինչ չգիտեմ, միայն գիտեմ, որ մեր պապերը Միրաքեաններից էին, յետոյ դարձել են Հայդարան:

- *Ե՞րբ են Հայդարան դարձել:*


- Չեմ կարող շատ վստահ ասել, գուցէ 1938ից յետոյ, գուցէ եւ 1915ից յետոյ:

- *Ձեր ծնողները գիտէի՞նք իրենց հայ լինելը:*

- Իհարկէ, ամբողջ գիւղը գիտէր, հիմա էլ Վարդենիկին հայի գիւղ են ասում: Չնայած հիմա Վարդենիկն ամբողջովին աւերուած է, տները քանդուած են, ապրող չկայ: Բայց բոլորն էլ հայի գիւղ են անուանում:

- *Ձեր ծնողները հայերեն գիտե՞ն:*
- Մենք չգիտենք հայերեն:
- *Դուք, այո, չգիտեք, բայց Ձեր ծնողները, նրանց տարիքի մարդիկ Վարդենիկում հայերեն գիտե՞ն:*
- Ի՞նչ իմանանք, իմացել են գուցե: Մեր մօտ հայերեն չէին խօսում: Ընդհանրապես հայերեն խօսելը վտանգալոր էր: Գուցե եւ գիտեին, բայց չէին խօսում:
- *Գուցե գիտեին: Բայց դուք չգիտեք՝ գիտե՞ն, թե ոչ:*
- Ոչ:
- *Երբ են նրանք ալեւի դարձել:*
- Մեր հայրերն են դարձել, 1938ից յետոյ են դարձել:
- *Մինչեւ այդ հայ քրիստոնէս յ են եղել:*
- Այո, հայեր են եղել: Բայց հայերին այստեղ 1915ին կոտորել են, իսկ փրկուածները թաքցնում էին իրենց հայ լինելը: Այստեղ, Դերսիմում բոլորը գիտեին, որ նրանք հայեր են, բայց այդ մասին ոչ մէկը չէր խօսում: Հայերն իրենք յատուկ չէին թաքցնում, ուղղակի չէին խօսում այդ մասին, ալեւիներն էլ գիտեին, որ վտանգալոր է, դրա համար նրանք էլ չէին խօսում: Մեր գիւղ՝ Վարդենիկ 1915ին չեն մտել: Մեր գիւղը շատ բարձր է, լեռներում, բացի դա էլ շատ յայտնի կոռուղներ էին: Ընդհանրապես Միրաքեանները շատ յայտնի կոռուղներ էին: Չգիտեմ այդ պատճառով, թէ ուրիշ մի բանի պատճառով, բայց 1915ին մեր գիւղ չեն մտել: Մեր գիւղացիները երեւի նոյնիսկ չգիտեին, որ հայերին կոտորում են: Այստեղ, Դերսիմում, շատ հայի գիւղեր են մնացել: Բայց 1938ից յետոյ բոլորն արդէն, ով մնացել էր հայերից, ալեւի դարձան:
- *Ձեր անունն ի՞նչ է:*
- Իբրահիմ: Իբրահիմ Օզար:
- *Ալեւի դարձածներից մեծ մասն Ալի են, Դուք ինձ հանդիպած ատաջին Իբրահիմն էք:*
- Դէ Աբրահամն է, հայերն Աբրահամ են ասում, հայրս էլ յատուկ այնպիսի անուն է դրել, որ հայերն էլ ունեն: Այստեղ, Թուրքիայում, այլ անուն չէր կարելի դնել: Երեսնական թուականներին արգելեցին, բոլորը պիտի մահմեդական, թուրքական անուններ ունենային: Անունները փոխում էին՝ Մամեդ, Ալի, Քեմալ էին դառնում:
- *Ձեր կի՞նն էլ է Վարդենիկից:*
- Չէ, կինս Վարդենիկից չի, Մալաթիայից է: Բայց ալեւի է:
- *Հիմա դուք ասում էք, որ հայ ալեւի էք, թե՞...*
- Սովորաբար այդ մասին չենք խօսում: Կարիք չի լինում: Բայց եթէ հարց լինում է ասում ենք:
- *Ասու՞մ էք: Չէ՞ք վախենում:*
- Ոչ: Բոլորն էլ գիտեն: Բոլորն էլ գիտեն, որ վարդենիկցիները ծագումով հայեր են: Հիմա արդէն էլ ի՞նչ վախ, ալեւի ենք, ի՞նչ կապ ունի

ծագումը: Համ էլ հիմա պլեի թե հայ՝ երկուսին էլ կառավարութիւնը չի սիրում, ինչ տարբերութիւն: [19]38ին, երբ որ դերսիւցիներին էին կոտորում, այն ժամանակ Դերսիւմի հայերին յատուկ ջարդեցին: [19]38ին հօրս հայրն էլ, մայրն էլ սպանուել են: [19]38 թուին բոլոր վարդենիկցիներին Քոջաքոչ են տանում, իբր թե քստորում են, բայց տանում են Քոջաքոչ ու բոլորին սպանում են: Բոլորին սպանում են, նոյնիսկ երկու տարեկան երեխային են սպանում: Այդտեղ սպանուել են նաեւ պապս ու տատս: Բայց ճանապարհին, Քարսան Դերեսի անունով մի տեղ կայ, լեռներում, այնտեղ հօրս մօրաքոյրն էր ապրում, այդտեղ էր ամուսնացած, Դերի Քարսան²⁰ գիւղում: Այդ գիւղին Մոշիկ²¹ էլ են ասում: Մօրաքոյրն ասում է «այդ երեխային - այսինքն հօրս - թողէք մենք պահենք, այս լեռներում նրան չեն փնտրի»: Ծնողները համաձայնում են, երեխային թողնում են մօրաքրոջ մօտ, իսկ իրենց միւսների հետ տանում են Քոջաքոչ: Քոջաքոչի մօտ Զուր Դերեսի անունով մի տեղ կայ, այդտեղ բոլորին սպանում են: [19]38 թուին:



- Վարդենիկում ոչ մէկը չի մնում:

- Չէ, բոլորովին դատարկուել է, բոլորին ոչնչացրել են: Միքանի մարդ հասցրել է գնալ քարայրները, թաքնուել: Միքանի կին, իրենց երեխաների հետ: Միքանի տարի ապրել են քարանձաններում: Յետոյ, 1945-47ին այդ փրկուածները, կամ՝ իմ հօր նման միքանի երեխայ, մի քիչ մեծանալով՝ ետ են գալիս Վարդենիկ, երեւի 30

հոգի: Գալիս են, իրենց տները մի քիչ կարգի են բերում, սկսում են նորից Վարդենիկում ապրել: Նախկինում շատ մեծ գիւղ է եղել, բայց յետոյ շատ քիչ մարդ էր մնացել: Հայրս որբ էր մնացել: Փաստօրէն իրենց ընտանիքից միայն հայրս էր կենդանի մնացել: Ութ տարեկան երեխայ է եղել: Որոշ ժամանակ ապրել է իր մօրաքրոջ տանը, յետոյ, երբ մի քիչ մեծացել է, վերադարձել է իրենց գիւղ՝ Վարդենիկ: Զարդերն արդէն աւարտուել էին: Գիւղ գալուց յետոյ դարձել է պլեի: Արդէն ով որ հայերից փրկուել էր [19]38ին, բոլորն էլ պլեի դարձան: Հայրս Վարդենիկ վերադառնալուց յետոյ է պլեի դարձել, դա արդէն 40ական թուականներից յետոյ էր: Եկան գիւղ, բայց 80ական թուականներից

նորից պետութիւնը ստիպեց դատարկել գիւղը: Մեր գիւղացիներին, այսինքն Դերսիմի բոլոր լեռնային գիւղերի բնակիչներին կասկածում էին ՊԿԿի²² հետ կապեր ունենալու մէջ, եւ որոշել էին այդ բոլոր գիւղերը դատարկել, գիւղերն էլ վերացնել: 90ականների սկզբներին դեռ միքանի ընտանիք կար, դուրս չէին գալիս: Գնալու տեղ չունէին, դուրս չէին գալիս: Ոչ մի կերպ չէին կարողանում ստիպել այդ մարդկանց դուրս գալ: 93ի դեպքերի ժամանակ այլեւս չեն նայել՝ կին է, երեխայ է, ինչ է, դրանց բոլորին ոչնչացրել են: Այնպէս են ոչնչացրել, որ դրանց դիակներն անգամ չէին կարողանում գտնել: Դրանից յետոյ մինչեւ այսօր Վարդենիկ գնալն արգելուած է:

- *Վարդենիկից բացի է՞լ որ գիւղերում էին հայեր ապրում:*

- Օ՛, շատ են, շատ գիւղերում կան: Միրիք²³, Մազդրա²⁴ Հէյդորուք²⁵: Դրանից բացի այս դեմանաների²⁶ կողմը՝ Բորն²⁷, Գինը²⁸, դրանք 38ին ամբողջութեամբ կոտորուեցին: Գինը գիւղի հին անունը Քոյդարիշ էր, այնտեղ էլ է եկեղեցի եղել: Դրանից յետոյ կային Արեքի²⁹, Փաքուրդիզ³⁰, Բառըի³¹, Հալուորը³²... Հաքիսը³³... Հաքիսում եօթ եկեղեցի կար, հիմա ոչ մէկը չկայ: Փաթարը³⁴, Վանքի կողմերը (նկատի ունի Հալուորի Ս. Կարապետ վանքը - Հ.Խ.)՝ Ենիսը³⁵, Իքսորը³⁶, Մարքասուրը³⁷...

Բոլորին էլ ասել են, թէ իբր աքսորում են, բայց բոլորին էլ ոչնչացրել են: Խոզըքէօյը³⁸ կայ, այնտեղ 90 տոկոսը հայեր են: Մեծահասակներից միքանիսը հայերէն գիտէին, մեռան: Վանքերն էլ են ոչնչացրել: Այստեղ շատ էին վանքերը, եկեղեցիները (վանքին վենք է ասում, եկեղեցուն՝ քիլիսէ - Հ.Խ.): Հիմա երեք հատ վանք կայ³⁹: Հալուորիկում էլ կայ⁴⁰, Նաբաթում⁴¹ էլ կայ, Կիրաբաթում⁴² էլ կայ... Կըզըլի (Կըզըլքիլիսէ, այժմ՝ Նազիմիյէ - Հ.Խ.) կողմերում կան: Այս գիւղերի մարդկանց Քըչըքէնդ կոչուող մի տեղ են տարել, իրար են կապել եւ բոլորին կենդանի վառել են: Կանանց էլ սրով են սպանել, սուրը խրել են փորերը, փորոտիքը հանել են: Դա շատ յայտնի տեղ է, բոլորը գիտեն, կարող եմ տանել ձեզ ցոյց տալ: Այդտեղից մի տաս կին են միայն փախել, յետոյ նրանք բոլորին պատմել են: Փախել են, գնացել Լիլ Դեղէյի մօտ: Նա այդ տաս հոգուն պահել է: Մինչեւ հիմա մի պապիկ կայ, նա այդ բոլորը մանրամասն գիտի, այդ տաս կանանց անուններն էլ գիտի: Բոլորն էլ այդ վայրը գիտեն, հիմա էլ մարդիկ գնում են, այդ վայրում յիշատակի արարողութիւն են անում: Հին անունը Արգումա⁴³ էր, Արգումա էին ասում: Այս թուարկածներս հայկական գիւղերն էին, որտեղ շատ հայեր էին ապրում: Բայց կոտորածը շատ է եղել, թէ՛ հայկական, թէ՛ ալեւիական գիւղերում: Արդէն կոտորուել են նաեւ 1915ին ալեւիացածները: Դրանից յետոյ էլ հայ չմնաց:

- *Հիմա այստեղ՝ Դերսիմում, ու՞մ են «հայ» ասում:*



Խոզաթի Երկէն Գիւղի կիսասքանդ եկեղեցին (լուս.՝ Հ. Խառատեանի, 2011)

- Ոչ մէկի, բոլորս էլ ալեւի ենք: Ամենաուշը ալեւի է դարձել մի մարդ՝ Բաքի Դելլէթլին, այ նրա որդուն էլ այստեղ՝ Թունջելիում հայ են ասում: Որդին Էնէրն է, Էնէր Դելլէթլի Բեդոյի (Պետոյի - Հ.Խ.)⁴⁴: Նրան Թունջելիում յարգում են, նրա խօսքն այստեղ անցնում է: Առեւտրով է հետաքրքրում, հարուստ են:

- Պետոն ո՞վ է, ինչու՞ են Բեդոյի ասում:

- Իրենց գերդաստանին բոլորին «Բեդոյեանց» են ասել, մի տեսակ մականուն է, երեսում է՝ «Բեդոյի ժառանգներ»: Էնէրին հիմա այստեղ «հայ» են ասում, որովհետեւ հայրը երկար ժամանակ հայ է մնացել: Իրենք այստեղ շատ ունեցուածք, հողեր ունէին: Բոլոր հարուստները ամէն ինչ թողել գնացել են, բայց սրանք մնացել են: Սրա հայրը 38ին փրկուել է: Օխնի⁴⁵ գիւղի մօտ մի հաստ գիւղ է եղել, այդ գիւղում դրան կնոջ հագուստ են հագցրել, եւ փախցրել Մազգերտ⁴⁶ են տարել: Այդ ժամանակ այս տարածքը կարծես թէ պետութեան իշխանութիւնից դուրս էր: 38ին կառավարութեան լրտեսներ կային, դրանք էին կազմում կասկածելի մարդկանց ու բնակավայրերի ցուցակները: Հարուստ մարդիկ այդ լրտեսներին փող էին տալիս, եւ իրենց անունը ցուցակներում չէին գրում: Այս մարդն էլ կարողացել է կաշառել, եւ ոչ միայն փրկուել է, այլեւ իր հողերը, հարստութիւնները պահել է: Դրանք Հարչիկ գետի ափին մեծ հողերի տէրեր են: Մազգերտի մօտ էլ տարածքներ են ունեցել: Այդ մարդը յետոյ շատ ողբերգական մահացաւ: Իրենք մի հաստ ցուլ ունէին: Այս մարդը գոմ է մտնում, ցուլը նրան պոզով խփում է: Վիրաւորում է: Երկար ժամանակ հիւանդ պառկած էր, յետոյ հենց դրանից էլ մահացաւ: Գերեզմանն էլ Զմբուրի թաղամասում է⁴⁷, նախկինում այդ թաղամասի անունը Մազրիք էր:

- Իբրահիմ, ինչպէ՞ս է պատահել, որ այդ հային ձեռք չեն տուել, դեռ աւելին, ունեցուածքն էլ մնացել է:

- Հայեր այստեղ շատ են մնացել, այստեղ Խոզաթում, Օւաճիկում շատ հայերի են կոտորել, քանի որ 1914ին կառավարութիւնը Օզալիքից քրդերին, իսկ Հարփութից (Խարբերդ - Հ.Խ.) թուրքերին բերեց, Խոզաթի կողմերում բնակեցրեց: Այդ կողմի գիւղերում շատ էին քաղաքականացուած, այդ կողմի հայերին շատ են կոտորել: Բայց այս կողմի հայերին չեն կոտորել, սրանք Հայդարան[ն]երի, Դեմալարների

աշիրէթներն են: Բայց սրանց էլ ջարդեցին 1938ին: Բոլորն էլ այստեղ գիտեն, որ Հայդարան[ն]երն ու Դեմալարները նախկին հայերն են: Միայն թէ 1938ը 1915ի նման չէր, 1938ից առաջ լրտեսները հաշուետուութիւններ էին կազմում, կասկածելի մարդկանց ու գիւղերի ցուցակներ կազմում: Այդ ցուցակներով էլ յետոյ կոտորեցին: Բայց հարուստները կաշառեցին, ու դրանց ձեռք չտուեցին: Դրանցից մէկն էլ այս Էնւեր Դելթըլիի հայրն էր:

- *Հիմա այդ մարդկաց ինչու՞ են հայ ասում, իսկ օրինակ Ձեզ հայ չեն ասում: Նրանք քրիստոնէա՞յ են մնացել:*

- Ոչ, նրանք էլ, իհարկէ, ալեւիութիւն ընդունել են: Բայց նրանք շատ աւելի ուշ են ալեւի դարձել, նրանք երկար ժամանակ հայ են մնացել:



Հալուոր Գիւղի աւերակները 1994ի բնակչութեան տեղահանումից յետոյ (լուս. Հ. Խառատեան, 2011)

- *Իսկ աւելի ուշ ալեւիացածներ էլի՞ կան, թէ՞ միայն այդ ընտանիքն է:*

- Ես ուրիշների չգիտեմ: Օրինակ մեր գիւղից՝ Վարդենիկից ոմանք Ամերիկա, Գերմանիա են գնացել, այնտեղ են մնացել: Գուցէ նրանք հայ են մնացել: Բայց շատերը մնացել են եւ մեզ նման Հայդարան են դարձել: Հայդարան[ն]երի մեծ մասը հայեր են: Երբ մէկի մասին ասում են «իսկի ինսան» (հին մարդ - Հ.Խ.), ուրեմն հայ է: Բայց պետութիւնը չի իմանում, դա մեր ներսի խօսակցութիւն է:

- *Հիմա դու «իսկի ինսան» ե՞ս:*

- Այո, «իսկի ինսան» եմ: Զազաները հայերին «հերմենի» են ասում, հին մարդիկ էլ՝ «իսկի ինսան»: Այդպէս արտաքինից չես հասկանայ, բայց

այստեղ՝ Դերսիմում մարդիկ գիտեն: Այստեղ նոյնիսկ մի մեծ ընտանիք կայ, Մասեան ազգանունով, նրանք նոյնիսկ ազգանունը չեն փոխել, Մասեան եղել են, Մասեան էլ մնում են: Մասեան Ալին, Մասեան Ահմեդը... Հինգ ընտանիք ես գիտեմ: Բողթաշ ազգանունով մարդիկ կան, դրանք էլ բոլորը հայեր են:

Մինչ գրուցում էինք, մատաղն արեցին, միսն եփեցին, բոլոր ուխտաւորները միասին վայելեցին, եւ երեկոյեան սկսուեց այն յիշարժան հաւաքոյթը, որտեղ բոլոր ալեւիները սազի նուազի տակ հերթական անգամ կրօնական ինքնամոռաց յուզմունքով լսում էին հազրաթ Հուսէյինի սպանուելու պատմութիւնը: Իսլամի հետ որեւէ կապ չունեցող Կուրէշ Բաբայի պատուին կառուցուած տան ներքնասենեակներից մեծում հաւաքուող դեղիններն ու սէյիդները սազի նուազակցութեամբ յուզուած պատմութիւններ են երգում Ալի եւ Հուսէյին իմամների կեանքի, ինչպէս նաեւ իրենց՝ ալեւիների պատմութեան դժուարագոյն դրուագների, «զալումների» (թուրքեր - չ.Խ.) նուաճումների, նրանց դէմ կռիւների մասին, դանդաղ պարեր պարում, ապա նաեւ՝ անցնում դիւցազներգութիւնների, որոնցում դերեր ունեն Կուրաշը, նրա որդի Դիւզգուն Բաբան եւ Շահայդարը, Հալուորու Սուրբ Կարապետը, սէյիդները, հայ քեշիշները են.:



*Ալեւիներն ու ալեւիացած հայերը Կուրէշ Բաբայի Օջախում
(լուս.՝ Չ. Խառատեան, 2011)*

Հաւաքուածներն իսկապէս յուզուած էին: Տարեցներն արցունքոտ աչքերով հոգոց էին հանում, աւելի երիտասարդները խիստ կենտրոնացած էին, իսկ հերթական երգողն աւելի ու աւելի զգայական էր դարձնում երաժշտութիւնը: Իմ մօտ նստած երիտասարդ Ալին, ում

ծնողները նոյնպես «հայից պլեիացել էին» քառասնականներին, ողջ երեկոյի ընթացքում ինքնամոռաց յուզմունքով հագրաթ Հուսէյինի մասին մրմնջում էր. «Պեան սանա կուրբան, Սեան մանա սուլթան (թուրքերէն՝ ես քեզ գոհաբերուողը, դու իմ սուլթանը - Շ.Խ.)»:

Աւելի ուշ Ալին պատմեց, որ իրենք բազմանդամ ընտանիք են, տասից աւելի քոյր-եղբայրներ ունի, ինքը սովորում է Գերմանիայում: Հիմա, ամառային արձակուրդին, հայրենիք է վերադարձել: Ընտանիքում երբեք չեն խօսում հայկական անցեալի մասին, բայց ինքը գիտի, որ ծնողները հայկական ծագում ունեն: Գերմանիայում՝ Քէօլնում, միքանի անգամ փորձել է գնալ հայկական եկեղեցի, ծանօթանալ հայերի հետ, բայց միշտ տագնապներ է ունեցել, որ իրեն չեն ընդունի: Պտտուել է եկեղեցու շուրջը եւ վերադարձել: Օրեր անց, երբ մի խումբ պլեի երիտասարդների հետ մի ամբողջ գիշեր քննարկում էինք նրանց ինքնութեան խնդիրները, եւ որոշ գրուցակիցներ վճռականօրէն պնդում էին «կզլբաշ», «պլեի», «քուրդ պլեի», «գազա պլեի» են. եզրերի կարեւորութիւնն իրենց ինքնութեան արտայայտման գործում, Ալին լուր ու մտախոհ լսում էր վիճողներին, բայց իր կողմնորոշման մասին չխօսեց:

ԳԵՏԻՆԸ ԱԿԱՆՋ ՈՒՆԻ, ԸՍԵՄՆԷ՝ Կ՛ԵՐԹԱՅ ՁԱՅՆԸ

1948ին Խարբերդում ծնուած Յակոբ Այթրկայան 17 Հոկտեմբեր 2011ի Հոկտեմբերին Ստամբուլում իր ընտանիքի պատմութիւնը պատմել է Գոհար Ստեփանեանին: Զրոյցը ընթացել է հայերէն լեզուով:

Յակոբի ծնողները երկուսն էլ դերսիմցի են եղել, մինչեւ 1938ը ապրել են Դերսիմում, բայց 1938ի Դերսիմի ջարդերից յետոյ երկուսի ընտանիքն էլ արքարուել է Քէօթահիա, որտեղ էլ ծանօթացել ու ամուսացել են նրա ապագայ ծնողները:

1948ին «ազատութիւն ստանալուց» յետոյ որոշել են վերադառնալ Դերսիմ: Նրանց թոյլատրուած էր հայրենիք վերադառնալ, բայց դա նախապայման չէր, կարող էին ապրելու այլ վայր նոյնպէս ընտրել: Վերադարձին, ընտանիքը յարմար է գտել Խարբերդում հաստատուել: Յակոբի պատմութեան մէջ 'Խարբերդ' անունը իրականում էլազըկն է:

- Այո, հարկաւ դերսիմցի եմ, բայց ան տեղի բաները շատ-շատ չեմ գիտեր, ասանկ լայն կերպով ըսելիք քիչ բաներ ունեմ, դժբախտաբար: Իմին դեղէն, եայաս, անոր եայան, պապան՝ ամէնն ալ դերսիմցի, այսինքն հին բանը՝ Քալան, թերեւս իմացած էք եւ կամ եթէ փնտռէքնէ՝ կը տեսնաք, անունը Քալան կը կոչուի, մինչեւ 1938ին հոն ապրած են: Մամաս ալ անտեղացի է՝ Մեծկերտ, հիմա՝ Մազկերտ⁴⁸, թրքական Մազգիրտ անունով կը յիշուի, Մեզկերտ, հոն ծնած է: Հայրիկս, իշտէ ըսածիս պէս, Քալան, Մերիս⁴⁹ նստած տեղը, թաղամաս մըն է: Իշտէ, ան [այնտեղ] ապրած են մինչեւ 1938ը եւ ատ թուականին անտեղ ուրիշ քուրդերու, բաներու հետ, միասին, [նրանց] հեռացուցած են, ստիպուած⁵⁰: Մերին շատ ընտանիքները, շատ ազգականներն ալ, մէնակ հայրիկս կամ դեղէն եւ այլն չէ, ուրիշներն ալ, Քէօթահիա ըսուած՝ դէպի արեւմուտք, Իզմիրին մօտ տարուած են: Քէօթահիա հեռացուցած են, եւ, մամաս, որ այն ատեն պզտիկ՝ տասերեք, տասնչորս տարեկան, անոր ալ հայրը, մայրը՝ նոյնպէս ատ կողմը: Ադիկա կառավարութեան, պահանջ էր՝ դուք սա տեղը պիտի ապրէք ըսելով, Քէօթահիան ալ կառավարութեան ընտրութիւնն էր: Աքսոր եղաւ Քալանի բոլոր բնակչութիւնը, բայց ամէնը զատ-զատ տեղեր տարուեցան, մէկ մասը՝ իշտէ ըսենք սա կետը, միւսը՝ ուրիշ կենտրոն մը: Մերին ընտանիքները ո եւէ դիմադրութիւն եւ այլն, բան մը չեն ըրած: Ես հիմա կը մտածեմ՝ քուրդերին հետ ասոնք [թուրքական կառավարութիւնը] ալ մեզի իշտէ դէմ են, ասոնք ալ մէջ մը ցիրուցան ընենք՝ ազատինք՝ ըսել են նէ, ատանք ըրած են: Ես ատանք կը խորհիմկոր հիմա: Ատանք բան մը չեն ըսած⁵¹, ամա՝ ես ատանք կը խորհիմկոր, որ ազատեն անտեղից, քանի ան տեղը բան կար՝ դէմ ըլլալու վիճակներ կային: Շատ ատանք հարուստ բաներ

չեն ունենար [ունեցել], բայց ինչ-որ ունեն՝ ձգած են, էլած են, գացած են: Տասը տարի ապրած են Քեթթահիա, որ իշտէ հայրս, մայրս առ տաս տարիին ընթացքին ամուսնացած են, քոյրիկս որ հոն ծնած է 1944ին, որ մամաս ամուսնացած ատենը տասնվեց տարեկան է եղեր կարծեմ, 16, 17 տարեկան: Մինչեւ՝ քառասունըութին, ըսած են, որ ալ ազատ էք, կրնաք ուր որ ուզէք՝ էրթաք: Վերադարձին եթէ ուզէին ան ատեն՝ Ստամբուլ ալ գալ, բայց չեն էկած, ըսած են, որ մենք նորէն էրթանք մեր երկիրը, բայց վերադարձին մինչեւ Խարբերդ, որ հիմա անունը Էլազըկ կ'ըսենկոր, մինչեւ Խարբերդ էկած են, ըսած են՝ ասկէ վերջը գոնէ իշտէ Խարբերդ, Էլազըկ ըսուած տեղը ապրինք, հոն նստած են: Ատ տարին ալ էս ծնած էմ: Նախ քոյրիկ Մելիսօն ծնած է, առ տարին՝ 1948ին, էս ծնած էմ:

Անտեղը՝ Քեթթահիայի մէջ հարկաւ դժուարութիւններ քաշած են: Իշտէ, քրիստոնէայ են ըսելով՝ հայրս, հօրեղբայրս եւ այլն, էայաս, իմ էայաս ծնեալ թիւր հազար ութը հարիւր եօթանասուններու էայա մըն էր, իմ մեծ մաման այսինքն, իշտէ ասենք ան տեղը պատիկ գիւղին մէջ են, գիտէք գիւղը ինչ է, տաճիկները ոչ մէկը քրիստոնէաներու հետ յարաբերութիւն չեն ունենար էղեր: Իշտէ, մէկ տարի, երկու տարի, անոնք ստիպուած են, որ անունին փոխեն, անձնագիրի մէջի կրօնական բանը փոխեն: Առաջ մերինները հարկաւ դեմ դրած են, բայց ինչ ընեն հիմա, դժուարութեամբ՝ ինչ ընենք, ինչ չընենք... Իմին մեծ հայրիկս, պապայիս հայրը ըսել է, որ երկու մանչ ունեմ, հայրիկս եւ հօրեղբայրս, ըսած է, որ ինծի եթէ մեռցնենէ՛ն՝ էս չեմ փոխիր, էս աս տարիքին էկած էմ, բայց ձերին սիրտը քրիստոնէայ է, միտքը քրիստոնէայ է, գրելով բան մը չըլլար, փոխեցէք, բան մը չըլլար: Հայրս ալ, հօրեղբայրս ալ անունին փոխած են, Գեորգը ըրած են Իզէթ, Սարգիսը, հօրեղբայրս, դրած են անունը Մեհմէդ, մականուննին ալ՝ Ալթըն: Ատ ատենները մականունը շատ բաց գործածուած, 1930ներու մօտ բան էղած է այսինքն, պաշտօնական, շատ գործածուած բան չէ, բայց մերինները, հայրս, հօրեղբայրս ալ, որ հիմա Աւստրալիա կ'ապրի չոճուխներուն հետ, Բուդադ, Բուդաք, Բուդաքեան է, ան տեղը Ալթընկայա ըրած են: Հիմա մերին մականունը Ալթընկայա է՝ ոսկի ժայռ, անիկա անտեղը Ալթըն Դաշ ըսուած տեղ մը, առ Քեթթահիա Ալթըն Դաշ ըսուած տեղը ստիպուած ապրած են, Ալթըն Դաշ, Ալթըն Կայա՝ իրար մօտ իմաստ ունին: Ատիկա ձեւական կրօնափոխութիւն էր հարկաւ, որ Քեթթահիա եղաւ, փաստաթուղթ առին, որ մահմեդական են, եանի իսլամ են: Բան մը չըրին, չոճուխ ըլլալուն, իշտէ, աստեղ բան կ'ըսենկոր, խոշան կ'երթայ, կը կարդայ, սիւննէթ եւ այլն կ'ըսեն, մանչերու համար բան մը ունին, ուրիշ բան չկայ, բայց անձնաթուղթին մէջը իշտէ անունը Մեհմէդ, անունը՝ Իզէթ, իշտէ կրօնական բանը կը գրուի որ աստեղ՝ իսլամ: Առաջ ալ գրեգորեան գրուած էմ էս անձնաթուղթին մէջը: Դեղէս՝ պապիկս, չփոխուեցաւ: Դեղէս արդէն հոն մեռած է, Քեթթահիա, վերադարձէն

առաջ, հիմա տեղն ալ չենք գիտեր այլևս: Վերիվարոյ ամենն ալ ստիպուած էին, որ փոխուին, չի փոխուողը, իշտէ, ապրելու՝ սոսիալ բան ըլլալու ըսեմ, դժուարութիւն կ'ունենայ, կը մեկուսանայ: Մարդիկ հետը չը խօսինկոր իրենց հետ, մէկ մարդ մը բարեւ չի տանկոր, ինչպէս կ'ըլլայ, դուք ինծի, ես հոս նստիմ, դուք քանի մը հոգի հոս ըլլաք՝ դուք զաք ձեր մէջը խօսիք, խնդաք եւ այլն, ես հոս նստիմ՝ բնաւ ինձ հետ չը խօսիք: Ե, մէկ օր կը դիմանաս, երկու կը դիմանաս, ամենէն վերջը՝ էհ... Հարկաւ եղել են չփոխուողները, ամենուն, հարիւրէն հարիւրը փոխուած է՝ չեմ կըրնալ ըսել: Ես ատիկա չեմ տեսել հարկաւ, ես ետքը ծնունցայ, մինակ եայայէս, հայրիկէս, մայրիկէս լսածս է, որովհետեւ, ըսածիս պէս, ես վերադարձին ծնած եմ Խարբերոյ, առ բանը չեմ ապրած, առ ժամանակը:

Վերադարձին, այսինքն 48ին, մենք, երբ որ Խարբերոյ էկեր են, հայրս, հօրեղբայրս, կրկին փոխելու, քրիստոնէայ ըլլալու համար դիմեր են: Քանի մը տարիներ դատարաններու մէջը իշտէ զբաղած են, ի վերջոյ կարծեմ, ես կը յիշեմկոր թուղթ, անձնաթուղթը այսինքն առին, 1955ին: Ատ ատենները 4 տարի, մինչէ 1955ը զբաղեցին այսինքն՝ փոխեն նորէն: Եւ փոխեցինք, նորէն Մարգիս էղաւ, նորէն Գէորգ էղաւ, արդէն մենք մինչէ որ առ տարիքին ես վեց կամ եօթը տարեկան էի, անձնաթուղթս չէի առած, ես ուղղակի քրիստոնէայի անձնաթուղթ առի օրինակի համար: Ամէն, ամէնը, անունն ալ, կրօնն ալ՝ հարկաւ, հարկաւ, նորէն քրիստոնէայ, նորէն՝ Գէորգ, նորէն՝ Մարգիս: Արդէն միշտ հայ էին, հիմա թուղթերով ալ կրկին հայ հաստատուեցան: Կարճ ժամանակ միայն եղան իսլամ, բայց՝ մարդոց համար, իրենց համար միշտ քրիստոնէայ էղան:

- *Ինչու Դերսիմ չվերադարձան, Խարբերոյ մնացին:*

- Դերսիմը ասանկ լեռներու մէջը տեղ մըն է, Խարբերոյը աւելի սոսիալ տեղ մըն է, թերեւս ասորը համար: Նախակրթարանը հոն լմնցրել եմ, Խարբերոյում: Թրքական, հարկաւ, հոն հայ դպրոց չկար: Երբ որ նախակրթարան լմնցուցի, առիթ չունէինք, պայման չունէինք շարունակել կարդալը, գացի մէկ տարի օթոյի, թամիջի կ'ըսեն, այսինք՝ շինող, մէկ տարի աշխատեցայ: 1962ին հոս [Ստամբուլ] կարդալու համար եկայ, Դպրեվանք կարդացի աս տեղ, Դպրեվանքի դպրոց մը, ես անտեղը աւարտած եմ, լիսէ: Առաջ մենակ եկայ, պզտիկ եղբայրս աստեղ՝ Կետիկ Փաշա ըսուած տեղը՝ բողոքականներուն մօտն եկաւ, հոն նախակրթարանը գիշերօթիկ եկաւ: Հիմա 55, 52, 53 տարեկան եղբայր մը ունիմ, անիկա ալ Գարակեօղեան եկաւ: Այն ատեն հոս՝ Ստամբուլէն կու գային, Անատոլուի մէջը իշտէ Դպրեվանքի համար աշակերտ կը հաւաքէին, իշտէ ինծի ալ հարցուցին՝ էրթալ կ'ուզե՞ս, նորէն կարդալ կ'ուզե՞ս: Այո ըսի, եկայ հոս: Պզտիկ եղբայրս ալ նախակրթարանը սկսածի պէս էր առաջին տարեկան, անիկա ալ հոս բերինք, ես եկայ, ան եկաւ, վերջը ամենէն պզտիկ եղբայրս ալ Գարակեօղեան [եկաւ]: Երբ որ ես 1968ին լիսէն աւարտեցի,

համալսարան մտայ, լմննալու մօտ՝ 72ին՝ հայրս, մայրս, ամենն ալ առինք, հոս բերինք, անկէ վերջը հոս ենք: Իմին համալսարանը Էքոնոմի էր, հաշուակալ: 22 տարեկան աշակերտ էի՝ մտայ աշխատելու, 35 տարի աշխատեցայ, հիմա աշխատած տեղս աւ էքոնոմիկ պայմաններով գոցուեցաւ: Աշխատած տեղս Գում Գափու ըսուած թաղամասն էր, նստարաններ, բիրոյի եւ այլն սեղաններ ծախող տեղ մը, տէրն ալ վանեցի հայ: Պոլսեցի էր կրնամ ըսել, բայց իրեն բուն բանը՝ Վանէն էկած էին, ինքը 1915 թ. ատեն հոս ծնեալ է, անոր հայրիկն ալ հոս ծնեալ է, բայց բուն արմատը վանեցի էր:

Ամենէն մեծ քոյր էլ ունիմ, որ հիմա Ամերիկա, Նիւ-Ջըրսի կ'ապրիկոր, գաւակներ ունի անտեղ, վերիվարոյ՝ 20-25 տարի հոն է: Մէկ եղբայրս հիմա Ֆրանսա, Փարիզ կ'ապրի, օղանաւի, բանի մէջը կ'աշխատի, կայարանին: Այն ատեն ասանկ մէկ բան մը կար, որ երիտասարդները, դուրս երթալու ասանկ մէկ հոսանք մը կար, ամէն մարդ իշտէ կ'ուզէր դուս երթայ: Թուրքն ալ, բոլորը, մինակ հայերը չէ, Գերմանիա, Ֆրանսա, քանի հարիւր հազարների գնացին: 1978ին էր կարծեմ: Ես ալ փորձեցի, բայց վերջը վագ անցայ, չգացի, ես դպրոց սկսայ, համալսարան սկսայ, չգացի, անկէ վերջը ամուսնացանք, քանի մը տարիներէ վերջը: Հօրեղբայրս ալ Խարբերդէն հոս էկաւ, 10-15 տարի հոս ապրեցաւ, վերջը չոճուխները մեծցան, անոնք ուզեցին դուս, Աւստրալիա դիմեցին, ընդունուեցան եւ ընտանիքով անոնք ալ հոն գացին,

- Պ. Յակոբ, կ'ուզենայի իմանալ, Դուք Ձեր տատիկից, պապիկից, մեծ ծնողներից լսած կա՞ք ցեղասպանութեան մասին պատմութիւններ, եւ ընդհանրապէս, դրանց մասին առաջին անգամ ե՞րբ էք լսել, ե՞րբ իմացաք, որ նման բան Թուրքիայի տարածքում տեղի է ունեցել, ումից, ի՞նչ ճանապարհով, խօսուու մ էր դրա մասին ընտանիքում, թէ ոչ:

- Հիմա մեզ էլ է, դժբախտաբար, թերեւս ուրիշ տեղէն հասեր: Շատ խօսելու տրամադիր չէին, հա, մենք ալ, որ ատ տարիներուն պզտիկ տարեկաններ էինք, մէկը խօսեցնելու ձեւերը չէինք գիտեր եւ կամ չէինք խորհիր: Հիմա գլուխնիս կը զարնիմք կոր, արդեօք ինչու, իմ եայաս, ըսածիս պէս, 1870ներուց էն եան կնիկ մը, ասանկ դիմացնիս չառինքտէ, ադուր մը չխօսեցուցինք: Տատիկս Իստանպուլ էկաւ, 1969ին հոս մեռեալ եղաւ ինքը, գերեզման եւ այլն հոս է, մերին գերեզմանատունը՝ Գում Գափուի կողմը, հոն է, հայրիկս ալ հոն է, 1980ին վախճանեալ եղաւ: Չէինք խօսեր սակայն: Ինքը, եթէ մէկը, մենք անպայման չէ, ուրիշ մէկը, եթէ մէկը բան մը հարցներնէ՝ ասանկ իշտէ վրայէն-վրայէն, փոքր բաներ կ'ասէր, տակէն-տակէն՝ չէ: Դերսիմէն արքայուելու համար մենք կը հարցնէինք, ուղղակի իրենք արդէն չէին պատմեր եանի, թերեւս կը յուզուէինկոր, թերեւս կը վախնայինկոր, թրքերին մէջ խօսք մը կայ՝ գետինը սկանջ ունի, ըսեսնէ՝ կ'երթայ ձայնը: Ատ բանով ալ չէ, չէր խօսուեր, դժբախտաբար, անոր համար շատ լայն իմացութիւն չունինք

եանի: Ջարդերու մասին իրենցմէ իրաւէն բան մը չեմ իմացած, եւ ատ տարիները իշտէ 12, 11 տարեկան էի, հարցում անգամ չէի ըներ, ինչպէ՞ս հարցնեմ: Դպրոցում ալ չի խօսուեր: Ամա, հետաքրքիր էղողը կարգ մը ուրիշ գիրքերէն, ուրիշ գրուած տեղերէն, ատանկ սորվողներ կան, ամէնին լայն կերպով, օրինակ, եւ բաջանաղ [քենեկալ] մը ունիմ, թերեւս գիտեք, Բագրատ Էստուկեան⁵², անիկա, ուզեսնէ՝ հարիւր չէ, երկու հարիւր, երեք հարիւր տարիներ առաջ ինչ դէպքեր եւ այլն եղած է՝ կ'ըսէ, իմացութիւն ունի, գիտակցութիւն ունի: Մենք աւելի՝ ասանկ, մակարդակը ցած: Եանի ասանկ բան չենք փորած տակը, առանց գիտնալու, գիտնալով չէ, այսինքն, մէկ բանի համար չէ, [ուղղակի] չենք փորած, ատանկ մնացած է, հիմա էլ խօսելու բան չունինք՝ որի՞ն հետ խօսիս, հիմա ամէնէն մեծերը տարիք ըլլալով մէկ են, եւ ալ չեմ ապրած ատ բանը, ապրողներն ալ դժբախտաբար գացած են այլեւս:

- *Հայերէնը Մտամբուլու մ'սովորեցիք:*

- Դպրեվանքի մէջ ատ միջոցը գտանք... մերին դպրոցներուն մակարդակը վերն է, աւելի բարձր է, մեր ատենը աւելի բարձր էր, թերեւս հիմա ալ շատոնցմէ աւելի բարձր է: Թէ՛ թրքերէնը, թէ՛ հայերէնը սովորեցուցին: Խառն էր, թրքերէն ալ կար, հայերէն ալ կար, սոսիոլոժի, փսիքոլոժի, արդէն կարգ մը դասերու ուսուցիչները պետական բանի կողմով կու գար, ուրիշ դասերն ալ մեր հայ ուսուցիչները եւ կամ ուսուցչուհիներն էլ մեզի կը սորվեցնէին: Այո, կարգ մը բաներ կար հայերէն, ամա թրքերէն ալ դաս կ'ընէինք: Տունին մէջը հայերէն ալ կը խօսուի, բայց աւելի թուրքերէնը կրնանք ըսել, այո:

- Մենք միութիւն ալ ունինք Դպրեվանքը, իրարու հետ յարաբերութիւններ, ամէն տարի շրջանաւարտներու օրեր, ամէն 25 տարին լմնցուցած, լիսէն լմնցնելէն 25 տարի յետոյ, մէկ բան կու տան՝ յիշատակ, մեղալիոն կ'ըսենք: Պատիկ իշտէ բան է, վրան մեր Դպրեվանքին յիշեցնող բանը՝ նկարն է, ատանկ: Դպրեվանքին մէջ արարողութիւն կ'ըլլայ, պարտեզ կայ, ամառ ըլլալուն պէս պարտեզ կայ, այո, կը խմենք իշտէ, կ'ուտենք, կը ճաշենք, աշակերտները երգեր կ'ըսեն եւ այլն, օր մը կ'անցընենք, անկէ զատ ալ ուրիշ-ուրիշ բաներ ալ, կարգադրութիւններ կ'ըլլան, միասին կ'ըլլանք: Առաջ ֆուլթրիք կրուփ [ազգագրական խումբ] եւ այլն կար, Թուրքիայի մէջ առաջին հայկական ֆուլթրը մեր դպրեվանքի ընկերները սկսած են, հայկական պարերը առաջին անգամ մերին դպրոցը, որ իմին դասարանիս ընկերները՝ Խաչիկ Աբելեան, Վազգէն, ընկերներով միացան, ատանք բաներ կ'ընէին իշտէ: Սոսիալ բաներն էլ... կրնայ ընել, կը ժողովուեինք կոր իշտէ, գիտակից բաներ:

- *Դերսիմցիներ շատ կա՞ն Պոլսում:*

- Այո, կան, նոր-նոր անոնց հետ ալ յարաբերութիւններ կ'ընենք: Որովհետեւ տակաւին դերսիմցիները, կրնամ ըսել՝ հարիւրէն վաթսունը,

ույթունը տակաւին կրօնը չէ փոխած, իր անցեալը չի գիտեր, հիմա նոր-
նոր ասանկ իշտէ իրարու հետ խօսելով, երթալով, գալով, պրպտելով՝
մէջտեղ կ'ելլակոր, մէկ մասը կ'ընդունիկոր, մէկ մասը չ'ընդունիկոր,
ատանկ կայ: Իշտէ մենք գացինք, ասկէ մէկ, մէկուկէս ամիս առաջ,
Դերսիմ, ֆեստիւալ [փառատօն] մը կար: Շատ մարդիկը, մէկ մասը, այո,
մերին արմատին մէջ կայ՝ ընդունեցին, մէկ մասը չեն ընդունիկոր, ամա
կամաց-կամաց կ'ելլակոր մէջտեղ: Անոնք հայկական դպրոց չի գացին,
քրիստոնէայ չեղան, դպրոցներում միութիւններու մէջ չիկան: Մենք
հոստեղ դպրոցի միջոցով կապ կ'ունենանք, Դպրեվանքի կապով ամենքս
միասին ենք: Աս տեղի հիմա շատը Դպրեվանքը կարդացած են,
դպրեվանքի են, աւարտած են կամ չեն աւարտած, բայց Դպրեվանքին
հետ կապ ունինք եանի, անոր համար ընկեր ենք արդէն, պզտիկութենէն
ընկեր եղած ենք: Դերսիմցին՝ չէ: Ես պզտիկ ատենս ալ Դերսիմ կ'երթայի,
իմին մամայիս պապան հոն կ'ապրէր, արդէն մինչեւ 68ին հոն էր: Ես
երբեմն, իշտէ տարի անգամ մը, կ'երթայի կու գայի կոր, բայց 70էն վերջ
չէի գացած, մինչեւ այս տարուայ՝ 2011ը: Հոս՝ Ստամպուլ, Վազրէֆ գիւղէն
եկածները միութիւնը ըրին, տուն մը առին, հիմա հոստեղը շատ կը
հաւաքուինք, կը խաղանք, կը զբաղինք, կատակներ, զրոյց: Ամէնը
Դպրեվանքէն են: Արդէն տաս տարիէ վեր սրճարան ալ չենք երթայ, եթէ
հոստեղը կայ՝ ինչու երթանք:

- *Թուրքերի հետ յարաբերութիւններն ինչպէ՞ս են:*

- Էս, օրինակ ինծի համար ըսեմ, անոնց հետ գէշ բան մը չունիմ
իրար, իմին ճանչցած, ինծի հետ յարաբերութիւններ ունեցողները ինծի
կը սիրեն, բան կը սեպեն, այսինքն, ատանք գէշ բան բնաւ չունեցանք, ատ
չափ տարի աշխատեցայ, շատ տաճիկներ կային, ամէնն ալ ինծի
ախպարիկի պէս կ'ըսէին, ես ալ անոնց կ'ըսէի, բան մը չէ: Հարկաւ, եանի
ընդհանուր բանի մէջ, ժողովրդին մէջը՝ հարկաւ, ամէնին մէջը՝ չէ: Ամա
ինծի ատանկ բան մը չեղաւ, այսինքն գէշ նպատակով մէկը չհանդիպեցայ:
Երբեմն հեռաձայնով կը խօսինք նախակրթարանի, այսինքն,
նախակրթարան ըսածս 1955էն մինչեւ 61ին միասին կարդացած
Խարբերդի ընկերներս: Անտեղը մենք իրարու հետ շատ լաւ էինք, հիմա
վիճակները փոխուեցաւ քիչ մը: Ուրիշ բան մը ալ կայ, սակայն, հիմա
սրճարաններ եւ, փողոցը հայերէն ալ կը խօսին, լեզուները քիչ մը ազատ
ձգեցան, առաջ աւելի քաշուելով, ասանկ իշտէ չոճուխներուն հետ...
Հիմա աւելի ազատ է կարծեմ: Մէկ քուրդը աւելի բան ըլլալով, ասանք
ազատ կրնայ խօսիլ, մեզմէ աւելի քիչ ազատ պիտի ըլլար կարծեմ,
այսինքն, մենք աւելի դիւրին կրնայինք խօսել, անոնց լեզուն աւելի
յայտնի է՝ քրդերէնը: Հիմա եթէ մէկ հայը հայերէն խօսի, տաճիկը չի
կրնայ հասկնալ, որ ասի հայերէն է, ինչ է, ճափոներէն, չիներէն, ամա
քրդերէնը կը հասկնան: Բայց մենք կը քաշուէինքկոր, թերեւս ալ՝ կը
վախնայինք:

ՄԱՅՐԻԿՍ ՄԻ ԱՆԳԱՄ ԱՍԵԼ Է.
«ՄԵՆՔ ԹՈՒՐՔ ՉԵՆՔ»,
ԲԱՅՑ ՉԻ ԱՍԵԼ ՄԵՆՔ ԻՆՉ ԵՆՔ

2014 Հոկտեմբերի 25 Երեւանում գրուցել եմ Թուրքիայից տեղափոխուած քառասնամեայ մի տղամարդու հետ, ով քրիստոնէութիւն է ընդունել եւ իր համար ընտրել Արմէն անունը: Արմէնի ազգանունը չենք հրապարակում իր խնդրանքով. նրան կ'անուանենք Արմէն Գ.: Արմէն Գ.ն հայերէն սկսել է սովորել մօտ մէկուկէս տարի առաջ, բայց այնքան է առաջացել, որ գրուցում ենք հայերէն: Նա ամուսնացել է արցախցի աղջկայ հետ, տեղափոխուել է Արցախ եւ այժմ ապրում է Շուշի քաղաքում: Իր հայ լինելու մասին իմացել է մօտ տաս տարի առաջ: Նա պատմում է վաղ մանկութիւնից իրեն ուղեկցող հոգեկան ճգնաժամերի, ինքնութեան փնտռութիւնների, տազնապաների ու ձեռք բերած խաղաղութեան մասին:

- Ես այս [պատմողը նկատի ունի իր ծագման պատմութիւնը] պատմութիւնը իմացել եմ երեսուն տարեկանում, բայց սկսել եմ հետաքրքրուել քսանութ տարեկանից: Ծնուել եւ դպրոց եմ գնացել Ստամբուլում, սովորական թուրքական դպրոց: Այդ ժամանակ Թուրքիայում լարուած օրեր էին, ինստանական թուականներին, շատ լարուած. քուրդերու խնդիր կար, արեւիներու: Օրինակ՝ Սեբաստիայում այդ ժամանակ կենդանի՝ կրակով վառել էին արեւիներին Սվազի հիւրանոցում⁵³: Ամէն օր մարդ էր մահանում, սպանում էր մի ձեռով: Ես, որ Թուրքիայում էի ապրում, Ստամբուլում էի ապրում, մինչ այդ ո՛չ քուրդի խնդիր էի լսել, ո՛չ հայի մասին էի լսել: Մինչեւ տաս տարեկանս հայի մասին ընդհանրապէս չեմ լսել: Ոչ մի թուրքական գրքում հայի մասին ոչ մի տեղեկութիւն չկար ընդհանրապէս: Միայն դպրոցում ասել էին, որ քուրդերը Ազատութեան Պատերազմի ժամանակ հայերի դէմ էլ էին կռուել: Դպրոցում միայն Աթաթուրքի մասին էին խօսում, այսպէս եմ եւ մեծացել: Բայց յիշում եմ, որ մի անգամ մայրիկս ասել է՝ «Մենք թուրք չենք»: Այդպիսի մի բան է ասել: Մի անգամ ասել է «մենք թուրք չենք», բայց չի ասել մենք ի՛նչ ենք: Յետոյ ես ասել եմ, որ եթէ մենք թուրք չենք, բա ո՞վ ենք: Ինքն այդ ժամանակ իմ գլխի մէջ մի ռումբ է դրել: Ես դրանից յետոյ սկսել եմ ինձ ուրիշ զգալ:

- *Ղուք քա՞նի երեխայ էիք տանը:*

- Երկու երեխայ: Ես կայի եւ իմ քոյրս. իմ քոյրս ինձնից փոքր է վեց տարով:

- *Ղուք երկու երեխաներով իրար հետ չէ՞ք խօսել այդ մասին:*

- Չէ. շատ փոքր էր ինքը: Յետոյ ես սովորական ապրելս շարունակեցի: Բայց երբեմն տեսնում էի, որ իմ հօր կողմից ազգականները ընտանիքի մէջ խօսում էին քուրդերէն: Ես չգիտէի, որ դա քուրդերէն լեզու է, ուղղակի ինձ անծանօթ լեզու էր, յետոյ եմ իմացել, որ քուրդերէն են խօսում: Շատ տարիներ է անցել:

- *Իսկ դուք տանը ի՞նչ լեզուով էիք խօսում:*

- Թուրքերէն էինք խօսում: Բոլորս էլ թուրքի անուններ ունէինք: Մանկութեանս ժամանակ այդպիսի հարց չկար, թէ ի՞նչ ենք, բայց կարծում եմ եթէ հարց լինէր՝ թուրք պիտի ասէինք: Յետոյ մայրիկիս այդ խօսքը, թէ՛ «մենք թուրք չենք», շատ հարցեր առաջացրեց: Չեմ կարող ասել, թէ հասկանում էի՝ թուրքն ի՞նչ է, բայց թուրք բոլորն էին եւ դա հարցեր չէր առաջացնում: Թուրքը բոլորն են: Իմ ընտանիքն ինքն իրեն ալեւի էր ներկայացնում, բայց ես լաւ չէի հասկանում՝ ալեւին ի՞նչ է: Ալեւին թուրք չի: Հարցեր տալիս էի, բայց ինձ ասում էին՝ կը մեծանաս, կը հասկանաս: Բայց կարծես մի բան չէին ուզում ասել. ինձ այդպէս էր թուում: Ես յետոյ գերմանական դպրոց եմ գնացել, աւստրիական իրականում, գերմաներէն եմ սովորել, յետոյ իրաւաբանական ֆակուլտետ եմ գնացել: Այդ տարիներին արդէն մտածում էի, որ մենք քուրդ ենք՝ քուրդ ալեւիներ ենք:

- *Ի՞նչու էիք այդպէս մտածում:*

- Իմ ընտանիքը իրենց միշտ որպէս ալեւի էին ներկայացնում, բայց ինչ որ մի ազգի անուն չէին ասում այդ ժամանակները, ուղղակի ասում էին «ալեւի»: Ալեւիների մէջ եղպէս խիստ օրէնքներ չկան, ինչպէս մուսուլմանների կամ նոյնիսկ մի քիչ քրիստոնէաների. եկեղեցի չկայ, ալեւիները բնութեան հետ կապուած մարդիկ են եւ այդ ալեւիութիւնը փոքր տարածքներում է, փոքր գիւղերում են ապրում: Ես օրինակ ալեւիների մասին գրքեր եմ կարդացել, որ իմանամ մենք ինչ ենք: Մէկը ասում է ալեւիները թուրք են, մէկը ասում է ալեւիները քուրդ են, մէկը ասում է ալեւիները իսկական մուսուլմաններ են: Ալեւիներն իրենք խճճուել են այդպիսի խօսքերի մէջ⁵⁴: Եւ ես էլ մտածում էի՝ մենք քուրդ ալեւի ենք, որովհետեւ տեսել էի՝ հայրս ազգականների հետ քուրդերէն խօսում էր: Մի անգամ էլ լսել եմ՝ մեր ազգականների մէջ մէկին հայ ալեւի էին ներկայացնում: Այն ժամանակ չգիտէի, որ հայ ալեւի էլ է լինում: Ուսանող ժամանակ կարծում էի, որ քուրդ ալեւի ենք՝ թէ՛ մայրիկիս, թէ՛ հայրիկիս կողմից: Յետոյ քսանհինգ-քսանվեց տարեկանում սկսել եմ հետաքրքրուել: Հայերի մասին այդ ժամանակ շատ էին խօսում, սկսել էին քուրդերու մասին շատ խօսել, ես էլ մայրիկիս շատ հարցեր էի տալիս: Մայրիկս էլ ասաց, թէ ինքը իր ընտանիքի մէջ լսել է, որ առաջ քրիստոնէայ էին: Մօրս հայրը Վարթոյից է: Մուշ Վարթոյից⁵⁵ է, աշիրէթի անունը՝ Գորան աշիրէթն է, իսկ նրա մայրն էլ՝ գիւղի անունը Մադէն է, բայց նոր անունն է Մադէն, հին

անունը հիմա եւ չեմ յիշում, այդ անունը առհասարակ չեն յիշում: Հայրիկս էլ ասում էր, թէ Միւսգ Փախիկ գիւղից է, այդպէս էին ներկայացնում՝ Միւսգ Փախիկ: Բայց ես սկսել էի կասկածել, իրենք որ ասել էին առաջ քրիստոնեայ են եղել՝ նրանք կարելի է, որ հայ են, որովհետեւ ոչ մի բան չէին խօսում հայերի մասին, իսկ ուրիշները խօսում էին: Այսինքն կարծես յատուկ չէին ուզում հայի մասին խօսել: Հայրիկս ու մայրիկս բաժանուել էին արդէն, առաձին էին ապրում: Մայրիկս ասեց, որ իր իմանալով Գորանի աշիրէթը նախկինում հայ են եղել: Մայրիկս, քոյրիկս ու ես շատ էինք խօսում, որ գուցէ հայրիկիս նախնիները հայ են եղել, կասկածում էինք արդէն: Շատ էինք ափսոսում, որ տարեցների հետ չենք խօսել: Մի անգամ էլ մայրիկիս հետ որոշեցինք, որ քոյրս գնայ հայրիկիս մօտ, հարց ու փորձ անի, իմանայ, մեր ընտանիքի պատմութիւնը գրանցի: Քոյրս գնացել է, հայրիկս էլ այդ ժամանակ ծանր հիւանդ էր, դրանից յետոյ էլ շուտ մահացաւ, բայց որոշ բաներ պատմել էր: Մենք առաջին անգամ այնտեղից իմացանք, այնտեղ գրած էր, որ նրանք եկել են 1876 թուին, Չմարա⁵⁶ գիւղից դէպի Հաֆիկ, Սեբաստիա Հաֆիկ⁵⁷: Այդպէս էր գրել: Յետոյ էլ Չմարա գիւղի մասին մայրիկս ասել է, որ Չմարան հայկական գիւղ է: Բայց ես դրա վրայ շատ չեմ մտածել: Հայրիկս ասել էր, որ նրանք հօր կողմից, նրանց մեծը առեւտրական է եղել, մեծ առեւտրով էր զբաղում Օսմանեան Կայսրութեան ժամանակ, եօթ լեզու էր իմանում, ինքը քերուան ունէր (քարաւան): Առեւտրական: Ես նայել եմ, այդ կողմերում առեւտրականների եօթանասուն տոկոսը հայեր էին: Հայ լինելու մասին կասկածումները դրա համար շատացել են:

- *Բայց ի՞նչու դուք որոշեցիք, որ դուք հայ էք, որովհետեւ Չմարան ոնց որ հայկական գիւղ էր:*

- Դէ բոլոր կողմից էլ որ նայում էի, երկու կողմից ծնողներս՝ հայր եւ մայր, նրանք բոլորն էլ հայ գիւղերում էին ապրում, որտեղ հիմա նրանց պլեիններ են ներկայացնում եւ որտեղ հիմա թուրքեր են ապրում: Հիմա ես Չմարա գիւղը չեմ գնացել, բայց ուսումնասիրել եմ: Այս գիւղի անունը սարքել են Ալթընթաշ եւ այնտեղ ապրում են թուրքական ազգայնականները: Չգիտեմ, երեւի չերքեզներ են: Նրանք օրինակ՝ ֆէյսբուքում էլ եմ գտել, նրանք այս գիւղի խումբ են բացել: Մտել եմ, մէկ-մէկ նայել եմ, բոլորի մէջ տեսել եմ շատ քաղաքականացուածներ: Շատ նացիօնալիստ են: Չգիտեմ, արդեօք դրանք ազգափոխ եղած են, թէ՞ գիւղը դատարկուել է, փոխարէնը ուրիշներ են ապրում, այդքանի մասին չգիտեմ:

- *Ոչ էլ ձեր ընտանիքից տեղեկութիւն ունէք, թէ այնտեղ ապրող ազգականներ ունէ՞ք, թէ՞ չունէք:*

- Բոլոր ազգականները, ում որ ես ճանաչում եմ, Ստամբուլ են ապրում:

- Նրանք երբեք իրենք չեն պատմել իրենց անցեալի, գաւառի կեանքի մասին կամ ազգականներից:

- Չէ, ոչ ոք չի պատմել. ասել են «պետք չի, ի՞նչ ես անելու, որ դուրս ես գնում, ոչ մի բան մի ասա համալսարանում, քո գլխի վրայ գործ ես վերցնելու»:

- Ինչի՞ մասին չպատմէք. այսինքն՝ չպատմէք, որ ձեր պապական կողմը Չմարայի ց է, թէ՞ չպատմէք, որ ալեւի էք, թէ՞ չպատմէք, որ հայ էք:

- Ընդհանրապէս այս խօսքերին մէջ, քաղաքականութեան մէջ ոչ մի բան մի՛ մտիք, այդ նիւթերի մասին մի՛ խօսիք:

- Ձեր ծնողները ե՞րբ են Ստամբուլ եկել:

- Իմ ծնողները՝ 1970-80ին:

- Յայտնի է, որ գաւառի թուրքերէնը, արեւելքի թուրքերէնը, Անատոլիայի թուրքերէնը Ստամբուլում տարբերում է, յայտնի է, որ դա արեւելքի լեզուն է: Ձեր ծնողների լեզուի մէջ չէ՞ր երեւում, որ նրանք արեւելքից են: Ինչ որ բան պիտի ասէին, չէ՞, թէ ովքե՞ր են, որտեղի՞ց են:

- Իմ հօր լեզուի մէջ երեւում էր, բայց իմ մօր մէջ՝ չէ:

- Հայրիկը դրա համար պրոբլէմ չի՞ ունեցել Ստամբուլում:

- Չէ, հիմա գիտէք ոնց է, օրինակ Ստամբուլում այդպէս էր՝ թաղամասերում նոյն մտածելակերպով մարդիկ էին ապրում, ինչպէս գետտօները կարող ենք ասել, մեծ մասը գաւառներից եկածներ էին, նոյն տարածքում ընդհանրապէս հայերը, քուրդ ալեւիները միասին են ապրում եւ շատ դուրս չեն գալիս:

- Ձեր թաղամասի ապրողները հիմնականում ալեւիներ է՞ր էին:

- Իմ թաղամասը, որտեղ ես եմ մեծացել, իրենց թուրք ասող մարդիկ էին: Ձեռերդէ մարդիկ են, քեմալիստ: Նրանք չեն սիրում անցեալից խօսել: Բայց հայրս Ստամբուլ նոր եկած ժամանակ ալեւիական թաղամասում էր սկզբից ապրում: Ես փոքր էի, շատ չեմ յիշում այն ժամանակը: Նրանք շատ աղքատ էին եկել այնտեղ, Սեբաստիայի մէջ շատ աղքատ, վատ վիճակի մէջ էին ապրում: Օրինակ՝ Սեբաստիայում քուրդ ալեւի գիւղերում ասֆալտ չեն անում, միայն սիւննի թուրքի գիւղերում են սարքում, եւ մեչիդ չկայ մեր գիւղերի մէջ, ալեւի քուրդ գիւղերի մէջ մեչիդ չկայ: Մարդիկ իրենց մէջ ապրում են, խմում են, օղի են սարքում...

- Դուք դա որտեղի՞ց գիտէք, չէ՞ որ չէք եղել այնտեղ:

- Ես Փախիկ գիւղում եղել եմ: Հայրս ու մայրս Փախիկից են Ստամբուլ գնացել: Փախիկը սարերի վրայ է, քուրդ ալեւիներ են ապրում: Քուրդ ալեւիները միշտ լեռներում են, հարթ տեղերում սիւննի թուրքեր են ապրում: Այդ գիւղ ես գնացել եմ ինը-տաս տարի առաջ: Արդէն մտածում էի հայ լինելուս մասին: Մէկ առ մէկ հարցրել եմ. մէկը ասել է՝ մենք Դերսիմից ենք եկել, մէկը ասել է՝ մենք Մուշից ենք եկել: Ինչքան ես հասկացել եմ՝ այնտեղ ոնց որ թէ այս փախստականները մի ընդհանուր

գիւղ են կազմել: Հիմա ես չգիտեմ, թե հայրիկիս կամ մայրիկիս պապերը կամ ծնողերը երբ են եկել այդ գիւղ: Այդ գիւղում հիմա միայն եօթանասունվեց ընտանիք կայ եւ ինձ ասում էին, որ 1976ին են գնացել այդ գիւղ: Մայրս էլ նոր է իմացել, որ իր ընտանիքը Վարթոյից է եկել այդ գիւղը, եւ մեր աշիրէթի անունը Գորան է: Ոչ մի թիւ, ոչ մի կոնկրետ բան չկայ, չգիտենք: Հայրիկիս ընտանիքն էլ շատ աղքատ է եկել Ստամբուլ, նրանց ընտանիքի մէջ միայն իմ հայրն է բժիշկ է դարձել:

- *Ձեր պապայւթերի անունները ձեր տանը ասել են, պապերի, պապի հօր անունը:*

- Չէ, ամենամեծերի անունները չգիտեմ: Չէին ասում պապի հօր անունն ի՞նչ է: Ասում էին՝ որբ են մեծացել: Ի՞նչու են որբեր եղել՝ անորոշ պատասխաններ: Ի՞նչու ազգականներ չկան՝ անորոշ պատասխաններ: Բայց պապի անունները գիտեմ, օրինակ՝ մէկ պապուս անունը Հասան է, միւսինը՝ Հիւսէյին է. դրանք այլեւի անուններ են: Բայց ուրիշների անուններ չգիտեմ:

- *Երբ որ ձեր հայրիկը ասում էր, որ այլեւի էք, չէ՞ որ այլեւիները ինչ որ աշիրէթներից են: Դուք ինչ որ մի աշիրէթի հետ կապ ունէիք, կամ աշիրէթական անուն ունէիք ձեր ընտանիքում, թէ՞ ձեր աշիրէթը պարզ չէր:*

- Մայրս գիտէի, որ Գորանի է, իսկ հայրական կողմս... նրանք Քոչգիրի⁵⁸ վրայ էին խօսում շատ, այդպիսի բան եմ լսել:

- *Իսկ Գորանի աշիրէթից ուրիշ մարդիկ Ստամբուլում կա՞ն:*

- Չգիտեմ, երեւի կան, բայց մենք կապ չենք ունեցել:

- *Դա գիտակցուած է՞ եղել, որ կապ չունենաք: Այսինքն՝ ձեր ծնողները յատուկ ուզել են կապեր չպահէ՞ն այդ մարդկանց հետ:*

- Իմ հայրիկը առհասարակ քաղաքական հարցերով չէր զբաղում:

- *Ես ուզում եմ հասկանալ, ի՞նչ է նշանակում քաղաքական հարցերով զբաղուել:*

- Դէ, չէր խօսում այդ մասին, վախենում էր, միայն սոցիալիզմի մասին էին խօսում: Հայրիկս ընդհանրապէս վախկոտ մարդ էր: Ոչ միայն հայ, այլ քուրդ լինել էլ էր վախենում:

- *Ուզում էք ասել, որ սոցիալիստական հայեացքներ ունենալը կամ սոցիալիստների ժողովներին գնալը քաղաքականութեամբ զբաղուել չէր համարում, իսկ եթէ փորձես իմանալ քո պապը, կամ պապի հայրը ով է եղել՝ դա քաղաքակա՞ն քայլ է:*

- Հիմա Թուրքիայում երիտասարդներն աւելի շատ ինքնութիւններով են հետաքրքրում, քան սոցիալիզմով: Յամենայն դէպս Ստամբուլում այդպէս է: Դա հիմա աւելի շատ է քաղաքական խնդիր, քան սոցիալիզմը: Հայրիկս ընդհանրապէս վախկոտ մարդ էր: Բայց սոցիալիզմը կամ ազգային ինքնութիւնը՝ դրանք տարբեր վախեր են: Հայ լինելը աւելի վախենալու է, քան սոցիալիստ լինելը: Սոցիալիստների մէջ շատ

ազգայնական թուրքեր կան⁵⁹: Յետոյ էլ իմ հայրիկս սոցիալիստ լինելը ուրիշին չէր պատմում, միայն ընտանիքի մէջ էր պատմում:

- *Բայց հայ լինելը ընտանիքում չէր պատմում:*

- Հա, հօրս շրջապատի մասին ասեմ, ինքը միայն այն ալեւիական թաղամասում է աշխատել եւ ինքը այդ թաղամասը գնացած առաջին բժիշկն է: Միայն ինքն էր, այնտեղ անվճար բոլորին նայում էր: Այնտեղ նոյնիսկ այդ ազգայնական թուրքերի հետ միշտ կռում էին: Նրանք սոցիալիստների հետ կռում էին. նրանց կազմակերպութեան անունը «պարտիզան» էր: Դրա մէջ էր իմ հայրիկս, Բայց ինքը միայն բուժում էր անում, ոչ մի ձայն չէր բարձրացնում, օրինակ՝ չէր գնում ինքը միտինգների մէջ մի բան ասում: Ինքը որ մահացել էր, այդ մարդիկ ասել են, որ ինքը մեզ օգնել է, եկել էին դրոշներով, այդ ժամանակ եմ իմացել, որ ինքը «պարտիզան»ի հետ կապ է ունեցել, ուրիշներից եմ լսել: Թաղման ժամանակ եմ իմացել:

- *Ինձ շատ հետաքրքիր է, որ հայրիկդ մի բանից վախեցել է, Բայց միւս վախենալու բանից քիչ է վախեցել:*

- Նրանց ընտանիքը ընդհանրապէս շատ հետաքրքիր է: Օրինակ՝ իմ հօր եղբայրը ընդհանրապէս *պարանոյ*ի սահմաններում վախկոտ մարդ էր: Ահաւոր վախենում էր. ամէն ինչից վախենում էր: Պատմում են, որ երբ մի մեքենայ էր գալիս՝ սուկալի վախենում էր. «այս մեքենան ի՞նչու եկաւ»: Բայց այն տարիներին բոլորին հետեւում էին, այդ թուրք աջակողմեանները բոլորին հետեւում էին: Երեւի այս տարիներից մնացած վախ էր, եւ նրանք էլ այդ *գետտոյ*ի մէջ էին ապրում: Հիմա նրա երեխաները աւելի հանգիստ են ապրում, Բայց քաղաքական հարցերով ոչ մի խօսք չեն խօսում: Իրենց ալեւի են ներկայացնում:

- *Հիմա եկէք հասկանանք, համարել եւ ներկայացնել՝ դրանք տարբեր բաներ են: Ալեւի համարել, այսինքն՝ իր ներսում իրեն ալեւի զգալ, իսկ ալեւի ներկայացնել՝ ասել, որ ես ալեւի եմ, առանց իրեն ալեւի զգալու:*

- Այո, երկուսն էլ նոյն ժամանակ: Բայց որ հարցնեն նրանց, ես գիտեմ, ալեւիների մասին չեն կարող մի բան ասել կոնկրետ, չգիտեն, թէ ալեւիները ով են, ինչ են: Օրինակ՝ իրանք չգիտեն, որ Դերսիմի ալեւին եւ ենթադրենք Հաթայի ալեւին տարբեր ալեւիներ են: Ես այդ մասին գիտեմ, որովհետեւ աւելի շատ եմ հետաքրքրուել այս հարցերի մասին: Ես այս հարցերի մասին մօրս հետ էի գրուցում ամենաշատ: Մայրիկս աւելի քաջ էր: Հայրս ու մայրս բաժանուել են, որովհետեւ նրանք տարբեր բնաւորութիւններ ունեին: Ամուսնանալիս էլ իրար չեն ճանաչել, մայրիկիս ասել են՝ այս մարդը քուրդ ալեւի է, բժիշկ է եւ դու կարող ես նրա հետ ամուսնանալ: Աւելի ուշ են իմացել, որ երկուսն էլ հայ են եղել: Հիմա մայրիկս էլի քաջ է, գնում է միտինգների, գնացել է Դերսիմ, ինքը գնացել է Մուշի Վարթօ հայերի մասին ուսումնասիրելու համար:

- *Հիմա ձեր ազգականները ոնց են նայում Ձեզ, որ դուք յանկարծ հայ էք, Արսէն էք եւ եկել էք Ղարաբաղում էք ապրում: Չե՞ն վախենում դրանից:*

- Չէ, իրենց համար չեն վախենում, իմ մասին էլ բան չեն ասում: Իմ մօր մայրը ասում էր՝ այնտեղ ի՞նչ ունես, այստեղ մի հատ հարուստ աղջիկ գտնենք, այստեղ ամուսնանաս, այստեղ ապրես: Իրենք չեն ուզում հայի մասին խօսեն: Իմ մօր քոյրն էլ ֆրանսիացու հետ ամուսնացաւ: Թուրքիայում են ապրում, գնում են, գալիս են: Նրանք միայն մուսուլմանների հետ ամուսնանալուն են դէմ: Երկու կողմից էլ այդպէս է: Բայց ընդհանրապէս ծագումի մասին չեն ուզում խօսել: Ես չեմ խօսել երբեք, ինձ էլ ասել էին ալեւի լինելու մասին մի խօսիր:

- *Պուք երիտասարդ տարիներին չէ՞ք հետաքրքրուել, թէ ինչու չպէտք է խօսել: Ինչու մն է վտանգը, ի՞նչ կը կատարուի, եթէ խօսէք:*

- Ճիշտն ասած ես էլ եմ վախկոտ մեծացել այդ ժամանակներում: Որ այդ դէպքերը եղել էին, Սեբաստիայում մարդկանց վառել էին, ես փոքր էի այդ ժամանակ: Մենք գիտէինք, որ ալեւիներին են վառել: Շատ խօսակցութիւններ կային: Մեր ընտանիքից այդ ժամանակ մի մարդու սպանել են: Հօրս կողմից մէկին սպանել են Սեբաստիայում: Ինքը այդ «պարտիզանի» մէջ էր աշխատում որպէս սոցիալիստ:

- Որպէս սոցիալիստ: Ինքը այնտեղ ալեւի թաղամասում էր ապրում, բայց ինքը սաստիկ գործեր չէր անում, ուղղակի գնում էր մարդկանց հետ զրուցում էր: Յետոյ ինքը գնացել է Սեբաստիա ընտանիքին այցելելու համար, յետոյ կորել է, ընդհանրապէս ոչ մի տեղեկութիւն չկար: Բայց բոլորը խօսում էին, որ ժանդարմներն են սպանել: Յետոյ ոստիկանութիւնը զանգել է նրանց տուն, ասել են ձեր տղան ինքն իրեն կախել է. այդպիսի բան են ասել: Ուրեմն ճիշտ էր, որ սպանել են ժաղարմները:

- *Իսկ Ձեր ազգական երիտասարդները իրենք կասկածներ ունե՞ն իրենց ծնողների հայ լինելու մասին:*

- Չէ, նրանք առհասարակ քաղաքականութեամբ չեն զբաղւում:

- *Այսինքն՝ դա համարւում է քաղաքականութիւն, եթէ փորձես իմանալ քո պապը, կամ պապի հայրը ով է: Դա քաղաքական քայլ է:*

- Քաղաքական քայլ է եւ թուրքերի մէջ դա միշտ կայ, երիտասարդութեան մէջ:

- *Այսինքն՝ եթէ մարդ ուզում է իր ինքնութիւնը իմանալ, դա համարւում է քաղաքական քայլ:*

- Հա, նրանք այդպէս են: Նրանք բոլորը, իմ ազգականները բիզնէսներ ունեն, օրինակ՝ շէնքեր են շինում, շրջապատ ունեն, գործ են անում եւ նոյնիսկ չեն ուզում շրջապատում հասկանան, որ իրենք քուրդ են: Նրանք քուրդերէն իրար մէջ խօսում են, բայց դրսում այդպիսի բան չեն անում: Օրինակ՝ քուրդերի դէմ են խօսում, ասում են ինչի էք քրդերէն շարժում

(քրդական մշակոյթով ապրում – Հ.Խ.): Նրանք չեն ուզում նոյնիսկ իրենց մասին մտածեն, որ քուրդ են: Ո՛չ թէ հայ, հայի մասին առհասարակ չեն խօսում, ո՛չ լաւ, ո՛չ վատ: Իրենց որպէս ալեւի են ներկայացնում:

- *Բայց իրականում ձեր կարծիքով իրենց ալեւի չե՞ն զգում:*

- Չէ: Այդպէս միայն ասում են:

- *Ի՞նչ են զգում, իսլա՞մ են զգում, սիւննի՞ն են զգում:*

- Չէ, որպէս ալեւի են ներկայացնում, իրենց ալեւի են ասում: Ես, օրինակ, այդպէս չէի զգում ճիշտն ասած: Ալեւիների մասին գրքեր կարդալուց յետոյ մտածում էի, թէ ո՞վ են ալեւիները, չգիտէի, բացատրութիւն չէի գտնում: Յետոյ երբ որ քրոջս գրածը հօրս պատմածից կարդացի, նայել եմ այդ տարիների համապատասխան իրադարձութիւնները, այդ ժամանակ որոշել եմ, որ հայ եմ:

- *Ձեր մայրը դէմ չէ՞ր, որ դուք ձեզ հայ զգաք:*

- Չէ, հիմա ինքն էլ է իրեն այդպէս զգում: Ես իրենց աշիրէթի վրայ՝ Գորան աշիրէթի վրայ ինքը ուսումնասիրել է Վարթոյի մէջ, Գորան աշիրէթը շուտուանից փախած, ալեւիացած հայեր են:

- *Ձեր քո՞յրն էլ իրեն սկսեց հայ համարել:*

- Իմ քոյրս իր ինքնութեան մասին այդքան արժէք չի տուել. ասում է ինձ համար ամենաառաջինը մարդ լինելն է ազգութիւնից բացի: Ես էլ եմ այդպէս մտածում: Ես, օրինակ, գոռալով չեմ ասում «ես հայ եմ», կամ ես ինչ որ մի բան եմ: Բայց ես համալսարանից, արտօրիական դպրոցից հայ ընկերներ ունեմ, եւ դեռ այն ժամանակ, դպրոցում, ես հոգով ինձ ամենամօտիկ հայերին եմ զգացել, չգիտեմ նոյնիսկ ինչու: Այն ժամանակ հայ լինելս չգիտէի: Իսկ դրանից առաջ, երբ դեռ թուրքական դպրոց էի գնում, հայերի հետ երբեք չեմ շփուել: Չգիտէի նոյնիսկ հայեր ապրում են Թուրքիայում, կամ՝ որ հայերը քրիստոնէայ են: Լրիւ մութ էր: Գուցէ դա էր պատճառը, բայց ես մենակ էի մնացել, ընկերներ չունէի, ես համալսարանում ընդհանրապէս ոչ մէկի հետ չէի շփուում: Իրաւաբան[ական] ֆակուլտետ եմ սովորել, բայց դասերի համար ընդհանրապէս շատ չէի գնում, տանը սովորում էի, քննութիւնի ժամանակ գնում էի: Մենակ էի փաստօրէն, ես ոչ մէկի հետ խորը չէի կարողանում խօսել այս թեմաներով այս բոլորի մասին: Հիմա համալսարանում ես չէի գնում դասերին, ընկերներ չունէի, բայց քոլեջից մօտիկ ընկեր կար, նրան չէի կարողանում ասել մեր արմատները հայ են կամ ես կասկածում եմ, կամ նրա մասին ուսումնասիրում եմ:

- *Ի՞նչ էք կարծում, եթէ ասէիք ի՞նչ պիտի լինէր:*

- Չգիտեմ, բայց այդպէս է, այդպէս էի զգում: Մի բան կայ, որ կ'ուզէի պատմել: Ճիշտն ասած, իմանալուց առաջ - որ մենք հայ ենք - ես քրիստոնէութեան մասին կարդում էի, եւ ուզում էի քրիստոնէայ դառնալ: Դեռ չգիտէի հայ լինելս, թուրք չլինելս արդէն գիտէի, ալեւի լինելս չէի հասկանում, եւ քրիստոնէութիւնը ձգում էր, մի տեսակ

համապատասխանում էր իմ փնտրություններին: Չեմ կարողանայ ասել՝ ինչ էի ուզում, ինչու էի ուզում: Աթեիստ էի ճիշտն ասած, հիմա էլ կոնկրետ բան չեմ ասում կրօնի մասին: Գիտեմ միայն, ազնուութեամբ ասեմ, որ հայ լինելս իմանալուց առաջ ուզում էի քրիստոնեայ դառնալ, չգիտեի օրթոդոքս պիտի լինի, պրոտեստանտ, թե՛ կաթոլիկ: Ես շատ գրքեր էի կարդում եւ կարծում եմ ուզում էի քրիստոնեայ դառնալ: Շատ Դոստոևսկի էի կարդում եւ միշտ մտածում էի, թե ինչու ինձ վրայ նրա գրքերը շատ ազդել են: Թուրքերեն էի կարդում, բայց մի ռուսախօս աղջիկ էր թարգմանում, շատ լաւ էր թարգմանում: Դոստոևսկու գրքերը շատ էի սիրում, ընդհանրապէս ռուսական գրականութիւն շատ էի սիրում: Ֆրանսիական գրականութիւն էլ էի կարդում: Երեւի դրա ազդեցութեամբ էր, բայց ես արդէն ինձ թուրքերից շատ հեռու էի զգում: Ես շատ սիրով օտար լեզուներ եմ սովորում, եւ կար մի ժամանակ, որ քուրդերեն եմ սկսել սովորել, յետոյ հայերեն եմ սկսել սովորել: Մինչեւ երեսուն տարեկանս ես թուրքերէնի հետ ժամանակ եմ կորցրել, եւ ես թուրք չեմ: Ալեւիների խնդիրն այն է, որ նրանք թուրքերեն են խօսում, արդէն մարդը ստիպուած այդ ազգն է դառնում՝ ինչ լեզուով խօսում է:

- Դոստոևսկու մօտ քրիստոնէութիւնը տառապանք է, Դոստոևսկու փիլիսոփայութիւնը - իր գրքերում - քրիստոնէութեան մասին՝ տառապանք է եւ հոգեկան ազատագրում միաժամանակ, բոլոր դէպքերում շատ խոր հոգեկան ապրում է, բայց նաեւ տառապանք է: Ինչու Դոստոևսկին ձեզ մղեց քրիստոնէութեան, դուք ուզու՞մ էիք տառապել:

- Դոստոևսկին իմ մտածելակերպին շատ էր համապատասխանում: Նրա հերոսները միշտ մարդկանց մէջ են, բայց մենակ են, իրենց մտքերի հետ մենակ են: Երեւի ինքնութեան խնդիրը իմ մէջ մեծ է շատ, ինձ պետք էր հասկանալ՝ որտե՞ղ ես կարող եմ գտնուել: Այդ ժամանակ մի պահ գնացել եմ Լեհաստան, ընկերուհի ունեի Լեհաստանում, եւ ես նրանց ընտանիքին ասել եմ, որ ուզում եմ քրիստոնեայ դառնալ: Լեհաստանում կաթոլիկ են, ռոման կաթոլիկ, լատին կաթոլիկ եկեղեցի է. եւ այդպէս էլ ես այնտեղ մկրտուել եմ, եւ թուրք եմ ստացել, որ քրիստոնեայ եմ: Արդէն հայութեանս կասկածում էի, բայց դէ այս տեղեկութիւնները չկար:

- Դուք ձեր լեհ ընկերուհուն կամ Լեհաստանի ընկերուհուն իչպե՞ս ներկայացաք, որպէս քուրդ ալեւի՞ :

- Այո, ես նրան այդպէս էի ներկայանում՝ քուրդ ալեւի: Աւելի շատ ալեւի էի ասում: Ես ասում էի ես թուրք չեմ, քուրդ ալեւի էի ասում: Այն ժամանակ ինձ համար այս ազգային հարցերը այնքան էլ կարեւոր չէր: Աւելի շատ հաւատի վրայ էի կենտրոնանում:

- Կարծում էք, որ այդ խնդիրը հիմա լուծուա՞ծ է:

- Ես հիմա ազնուութեամբ եթէ ասեմ, Ղարաբաղում շատ հանգիստ եմ զգում, քան թէ Թուրքիայում: Հարիւր տոկոս:

- Ի՞նչու:

- Որովհետեւ... ո՞նց ասեմ, ուղղակի այդպէս եմ զգում: Ես միայն հայերի մօտ եմ հարազատ զգում: Օրինակ՝ իմ ամենամօտիկ ընկերը, ում ես ամէն ինչ կարողանայի պատմել, ինքը հայ էր: Ո՛չ քուրդի, ոչ-թուրքի էի կարողանում պատմել, նոյնիսկ ես իմ բարեկամներին չէի կարողանում պատմել: Ես նրան շատ մօտիկ եմ զգացել ինձ, նրա մտածելակերպը... Նրան ամէն ինչ ասել եմ: Իմ ամենամօտիկ ընկերը հայ էր: Ինքն էլ է սեքսստիացի: Սեւան, Ստամբուլում է ապրում: Քրիստոնէայ հայ է, բայց նրանց ընտանիքի մէջ էլ ալեւիներ կան, հայ ալեւիներ: Սեքսստիայում նոյնիսկ նոյն թաղամասում էր ապրում, որտեղ իմ հայրս էր եղել: Հիմա ես եկել եմ Հայաստան, հայերէն սովորել եմ, ինքը բայց քիչ է հայերէն խօսում: Ղարաբաղ է եկել նրա հայրը, ուզում է այնտեղ ապրել:

- *Սեւանը ուրեմն ձեր զգացմունքները նոյնպէս հասկանում էր, գիտէր. այսինքն՝ դուք նրան բացատրելու խնդիր չունէիք:*

- Այո, այդպէս է, կարող էի նոյնիսկ չխօսել: Յետոյ, ուզում էի Հայաստանը տեսնել, ուզում էի գամ Հայաստան: Մի անգամ որոշել եմ, ձմեռ էր, ինքնաթիռի տոմս եմ առել, յետոյ բայց հրաժարուել եմ, չեմ եկել:

- *Այդ առաջի՞ն անգամն էր, ծանօթ չունէի՞ք Հայաստանում:*

- Հայաստանում ծանօթ չունէի, ուղղակի ուզում էի գալ, բայց յետոյ ասել եմ ի՞նչ եմ անում, Հայաստանի մասին ընդհանրապէս տեղեկութիւն չունէի: Բայց միշտ էլ դէպի Հայաստան գալու ցանկութիւն ունէի: Հիմա ես այստեղ եմ:

- *Ի՞նչու որոշեցիք գնալ Արցախ: Եթէ հարցս կոռեկտ չի, կարող էք չասել:*

- Կինս դարաբաղցի է՝ արցախցի:

- *Որտե՞ղ էք ծանօթացել:*

- Սենք ինտերնետի միջոցով ենք ծանօթացել, Երեւանում ենք առաջին անգամ իրար հանդիպել. այդպէս է:

- *Ղարաբաղում ձեզ որպէս ի՞նչ գիտեն:*

- Ղարաբաղում իմ անձնագրի անունով բոլորին ներկայացել եմ, թուրքական անունով: Բոլորը գիտեն, բայց Արմէն են ասում: Ես այդպէս եմ խնդրել:

- *Դա որեւէ պրոբլէմ ձեզ համար առաջացնու՞մ է ընդհանրապէս: Ձեզնով հետաքրքրու՞մ են:*

- Եթէ հետաքրքրուեն՝ ես դա չգիտեմ, 100% կը հետաքրքրուեն: Բայց ինձ ոչինչ չեն ասում: Իմ կնոջ ընտանիքում բոլորն իմ կեանքը գիտեն, նրա բոլոր հարազատները: Մարդիկ ինձ շատ լաւ են վերաբերում, ես բոլորին ասում եմ, բոլոր այդ մարդիկ իմանում են ես Թուրքիայից եմ: Բոլորը բայց Թուրքիայով հետաքրքրում են, հարցնում են, թէ հայերի հանդէպ ոնց են վերաբերում:

- *Ղարաբաղում որեւէ մէկը հասկացա՞ւ ալեւին ինչ է:*

- Դրա մասին շատ չեմ խօսել՝ պլեիների մասին, անլի շատ կնոջս հետ եմ խօսել: Նրան պատմում եմ միշտ պլեիների ու հայերի կապերի մասին: Շատ նման մշակոյթ կայ: Ալեիների մէջ ազատութիւն կայ, մշակոյթով շատ են հետաքրքրուած, նոյնը Արցախում է: Բնձ համար բոլորովին դժուար չի Արցախում, շատ հարազատ եմ ինձ զգում, շատ հանգիստ: Ընկերներ ունեմ: Արդէն Ղարաբաղի բարբառով համարեա ինչ որ ասում են՝ հասկանում եմ: Շուշիում եմ ապրում. ռուսերէն էլ շատ եմ սովորել:

- *Թուրքիա հիմա որ գնում էք, ձեր միջոցով հետաքրքրու՞մ են Հայաստանը ինչ, Ղարաբաղը ի՞նչ է, ձեզ հարցեր տալի՞ս են:*

- Այո, իմ ազգականներուն մէջ լինում է, բայց շատ մարդկանց հետ ես չեմ շփում: Ես այնտեղ, ճիշտն ասած, շատ ընկերներ չունէի, մի տեսակ ես չէի վստահում. երեւի լաւ բան չէ ինչ ես անում էի, որ ընկերներ չունէի:

- *Ի՞նչու որոշեցիք Ձեզ Արմէն կոչել: Որովհետեւ «Արմէն» հա՞յ է նշանակում:*

- Էդ էլ կապ ունի ճիշտն ասած, բայց այդ «արմ» արմատով անունները ինձ դուր են գալիս, որովհետեւ արեւ են նշանակում:

«ՏԵՍԱԿ ՄԸ ԹԱՔՆՈՒԱԾ Կ'ԱՊՐԷԻՆ ՀԱՅԵՐԸ.
ԻԲՐԵԻ ԹԷ ՉԻԿԱՆՔ».
ՍԱՐԳԻՍ ԷՐՔՈԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Սարգիսը Ստամբուլում է ծնուել, 1954ին, Կեսարիայի քուրդ-ալեւիական գիւղերից մէկից իր գերդաստանի 1951ին Ստամբուլ տեղափոխուելուց երեք տարի յետոյ:

Չրոյցը ընթացաւ հայերէնով, 2011 թուին, Ստամբուլում:

- Մենք քիչ մը մեծ ընտանիք ենք, երկու հարիւր, երեք հարիւր հոգի կ'ելլայ, շատ պատմեմ՝ գլուխնիդ կը խառնեմ: Հիմա ասանկ քիչ պատկերներ ցոյց տամ ձեզի: Ասի Բոզօն է, պապս, ինքն էլ Սարգիս էր, ջարդերէն [1915ի ջարդերը] ետքը մեր ընտանիքի հաւաքողն էր [ջարդերի ժամանակ կենդանի մնացած եւ տարբեր վայրերում յայտնուած ընտանիքի անդամներին] եւ հիմա, կրնամ ըսել, մեր նոր տոհմի հիմնադիրը: ... Ասոնք քուրդեր են, մերին քօքը (արմատը – Հ.Խ.) ալեւի գիւղերուն կապուած է եւ քուրդերու հետ շատ լաւ, սերտ յարաբերութիւններ ունինք: Ասի հայրս է, ասի մեր գիւղերուն ալեւի՝ դեղէ կ'ըսենք ասոնց: Մեր գիւղը ալեւի են, բայց աթէիստ են, եթէ ճիշտը խօսենք:

- Ո՞րն էր ձեր գիւղը:

- Քըրքըսըրաք: Կեսարիայի գիւղերէն է: Ես ինքս ինձի կեսարացի կը սեպեմ: Մերին ալեւի գիւղէն՝ Քըսքըսըրաքէն պատմութիւն մը կայ, կը պատմեմ. հօրաքոյրս փախցուցեր են, անկէ էսի մերինները գիւղէն խրտչեր են արդէն եւ աւելի ուրիշ նահանգները՝ գիւղէն աւելի մեծ նահանգ իջած են, ետքը հոնէն Իստամբուլ գաղթեր են: Ասի Փնար Բաշիէն Իստամբուլ գաղթելու թուականի իրանց պատկերն է, որ իրանք ամէնը միասին իրանց պատկերը քաշել են: Պապայիս անուն քուրդ Յակոբ կ'ըսէին Իստամբուլ, քանի որ քուրդի գիւղէն եկած էր, քուրդերէն գիտեր:

- Հիմա լսենք Սարգիս Էրքոյի կեանքի պատմութիւնը:

- Իմ մօտ արմատներս ըսեմ՝ գիւրունցի եմ, Սեբաստիա կը գտնուի Գիւրունը⁶⁰: Աւելի հին ժամանակները երթանք՝ զէյթունցի ենք: Իմին դեղէս, որ Բոզօ կ'ըսենկոր, Սարգիս է անունը, անոր հայրիկն ալ Յակոբ կ'ըսեն: Ինքը Գիւրունում կը բնակիկոր, իրեն մեծ հայրիկն ալ զէյթունցի է, Չէյթունէն Գիւրուն գաղթեր են, թուականները ես շատ ճիշտ չեմ կրնար ըսել, հաւանաբար 90ական՝ Չէյթունի կոտորածների ատեն Գիւրուն գաղթած են: Գիւրունի մէջ, իրեն մեծ հայրիկը, որ Յակոբ է անունը, Խաչիկ եւ Վարդէառ անունով եղբայրներ ալ ունի: Եւ դեղէիս հայրիկը Յակոբը կին մըն ալ ունի, իրեն կինը դեղէիս մայրիկը կը մահանակոր,

ուրիշ կին կ'առնի: Դեղէն՝ Սարգիսը միայն տղան ինքն է, միւսները աղջիկ են, Անուշ կար, Ռաքել կար, Աղանի կար, Մայրամ կար, մէյ մըն ալ երեք հաստ աղջիկ ունեցեր է մեծ հայրիկիս մաման, անոնք մահացել են: Արդէն մեծ հայրիկիս հայրիկը՝ Յակոբը Գիւրունին մէջ, Գիւրունէն դուրսը Բարսակ Դերեսը ըսուած տեղ մը կայ, բարսակ՝ աղիք կը նշանակի, Բարսակ Դերեսը կը սպանենկոր, կը նետենկոր գետը, եւ իրեն ընտանիքէն ոչ մէկը չէ մնացեր: Կարծեմ մի հաստ հորեղբոր տղայ մը մնացեր է: Ասիկա 1915ին: Մեծ հայրիկս բայց, Սարգիսը զինուոր էր, բանակը կը ծառայերկոր աղ միջոցին: Իր հայրը, մայրը, հորեղբայրները, ամէնը կը սպանենկոր: Իրեն մայրը աւելի առաջ մահացած է, իրեն խորթ մայրն է արդէն ան ժամանակներուն, որ կը սպանեն: Ինքը զինուորէն կը վերադառնակոր, եօթը տարի բանակին ծառայեր է արդէն, բաւական տեղեր պտտել է, Աղանայի կողմերը ճամփայ շիներ են, Հալէպ գացեր է, Հալէպ բանակը ծառայեր է, վերջը եկել է Գիւրուն եւ տեսել է, որ իրեն ազգականները ոչ մէկը չէ մնացել: Միայն հորեղբոր տղան կարծեմ կար: Ինքը քալայջը է, այսինքն՝ ամանները անագապատում կ'ընէրկոր: Արդէն իրեն տեղի անունը քալայջի Բոգո էր եւ տեղին բնակիչները քալայջի Բոգո կ'ըսէին, մեզին ծանօթացնողները Քալայիջէ Բոգոյին թոռերն են կ'ըսեն, անանկ կ'ըսեն: Մեծ հայրիկիս ալ 'Բոգո' կ'ըսէին շէկ ըլլալու համար: Բոգոն կու գակոր գիւղ եւ կը տեսնայ, որ իր ազգականներէն ոչ մէկը չիկայ գիւղին մէջտեղը: Ինքը իրեն արհեստանոցը կ'երթակոր, արհեստանոցը իրեն աշկերտը կայ, աշկերտին վարպետն է դեղէն: Աշկերտը անոր ձեռքը կը համբուրէկոր, վարպետ, կ'ըսէկոր, ձեզմէ ոչ մէկը չէ մնացած Գիւրունին մէջ, միայն քոյրդ կայ, ան ալ Աւշէն գացած է: Դեղէնիս կ'ըսէ որ հիւրասիրեմ քեզի կ'ըսէկոր: Լաւ, տղաս,- կ'ըսէկոր, բայց ի՞նչ ընէ, դեղէն կը կասկածիկոր, որ մահափորձ կրնայ պատահի, ինքը կը վախնակոր, եւ ալ մինչեւ առաւօտ չէ սպասեր, լաւ կ'ըսէ, բայց կեզգիշերին ճամփայ կ'ելլակոր, Աւշէն կ'երթակոր: Աւշէնը Մարաշ քաղաքին մէկ նահանգն է: Գիւղաքաղաք ըսեմ: Աւշէն կ'երթակոր, իրեն քոյրը կը գտնակոր: Քոյրը Նազիրէն է, որ Աղանի էր [մինչեւ իսլամանալը]: Ամուսնացած է Էրքէշին (Օքէշ) հետ, Էրքէշին երրորդ կինն է արդէն եւ իսլամացած, Աղանիէն Նազիրէ դարձած: Եւ իրեն պատմութիւնը արդէն Ներգիսը գրեթէ ամէնը պատմեց⁶¹: Իրեն քոջը քովը կ'երթակոր, քոյրը ամենափոքրն է արդէն: Դեղէն Աւշէն արտերը կ'աշխատի ան ժամանակները, զիշերը կ'աշխատի, որովհետեւ լոյս ժամերուն Աւշէնի մէջ կենալը վտանգաւոր է: Կրնան սպանել: Ինքը հոն արտերը կ'աշխատիկոր: Աւշէնում ուրիշ հայեր չիկար ան ժամանակ: Եւ Եուսուֆ օնքաշը կայ, Եուսուֆ օնքաշը [տասնապետ] Քըրքըսաք գիւղին զօրաւոր անձերէն մէկն է, որուն կինը Նազիրէին կեսրարին հետ մօրաքրոջ աղջիկներ են, կ'ըսէ որ «աս տղան ո՞վ է»: «Աներձագս է», կ'ըսէ Էրքէշը: «Ի՞նչ գործ ունի աստեղը, հոս մի՛ պահէք,- կ'ըսէ,- վտանգաւոր

կրնայ ըլլայ, կրնան սպանիլ: Ես ասիկա առնիմ տանեմ Քրրքըսրաքին մէջ, մենք անտեղը 45 հատ հայ կը պահինքկոր, աս ալ տանիմ մեր գիւղին մէջ կը պահիմ»: Քրրքըսրաքը Կեսարիոյ մը գիւղն է եւ լեռներուն վրայ է: Ես գացած եմ, 2000 թուին գացած եմ, ամենավերջին գիւղն է եւ քարերուն մէջ գիւղ մըն է: Քուրդերը կ'ապրինկոր, ալեւի քուրդերը կ'ապրինկոր անտեղը: Եուսուֆ օնքաշին ալ արդէն ալեւի քուրդ է, եւ կ'ըսէ «տուէք ինձ»: Մեծ հայրիկս Քրրքըսրաք կ'երթակոր: Քրրքըսրաքին մէջին գիւղի հայերուն պատմութիւնը սապէս է. Քրրքըսրաքը լեռներուն վրայ գիւղ մըն է, անտեղը քարայրի մէջ հայերը ապրստանած են եւ մեզմէ առաջ Պօղոս անունով մէկը կայ, որ քիչ մը Պետոյին պատկերն է, Պետոյին հայրն է: Պետօն ետքը դեղէիս հետ շատ մտերիմ եղաւ, մենք անոր հօրեղբայր կ'ընդունենք: Ան ալ ծագումով գիւրունցի է, աւելի առաջաց Պօղոս դեղէն Քրրքըսրաք քարայրին մէջ ապրստաներ են, իրեն տղան կայ Պետօն, մէյմ'ալ Լեւոն անունով մէկը կայ, մէկ հատ ալ մէկը կայ, որուն անունը մենք չենք գիտեր, չորս հոգի են եղել առաջներ, բոլորը Գիւրունէն: Քրրքըսրաք ապրստանել են քարայրին մէջ, քարայրին՝ մեր քուրդերուն հարցնէքնէ, անունն ալ Փուխուս կ'ըսեն, անունը Փուխուս ըսելը «Պօղոսին քարայր» ըսել է քրդերէն, Փուխուսը Պօղոսն է: Հիմա Փուխուսը որ ըսեսնէ, քեզի ադ տեղը կը ցուցնեն: Գիւղէն, ես գացի տեսայ, մէկ ու կէս ժամ քալելով, այսինքն՝ մերին գիւղաքաղաքէն ահագին հեռու է, ամենավերջին գիւղն է, անկէ ալ քալելով մէկուկէս ժամ կ'երթասկոր: Ադ ժամանակ տասնչորս հատ հայր ադ քարայրը ապրստանել են, մէկերը տեսել է, որ աստեղը բան մը կայ, որովհետեւ ոչխարները առանց կաթի կը մնանկոր, մէկը անոնց կը կթէկոր, անոնք անօթի կը մնան: Ապրստանածները գիշերները գաղտնի կ'ելնանկոր, քանի մը ոչխար կը կթենկոր, անոր կաթով կը սնուցանեն: Գիւղացիները՝ քանի մը հատ, աս բանը նշմարել են, եւ կը բռնենկոր, որ հայեր կան աստեղը: Վերջը կ'ըսենկոր, որ «դուք ո՞վ էք, ի՞նչ էք»: Աս միջոցին մեծ հայրիկս չէր գացեր դեռ գիւղ, ասի աւելի առաջուայ պատմութիւն է, եւ մեր գիւղացիները՝ քրրքըսրացիները, երկու տարի ասոնց կը պահենկոր: Եուսուֆ օնքաշին, որ այն ատեն գիւղին մուխթարն (գիւղապետ – Հ.Խ.) էր, կ'ըսէ որ մենք գիւղին ծայրամասը ձեզի ժամ⁶² պիտի ձգենք, դուք պիտի գաք պիտի առնիք: Գիշերները կ'ելլանկոր եւ իրենց սնունդները կ'առնին կը տանենկոր եւ անոնք մերիննու «մարիէ շաւեր» կ'ըսեն, «գիշերուան մարդ» այսինքն, քանի որ գիշերը կ'ելլանկոր: «Մարիէ շաւեր» կ'ըսեն մերիններուն: Հիմա երբ որ մեծ հայրիկս էր օնքաշիին հետ կը ծանօթանակոր, Եուսուֆ օնքաշին մեծ հայրիկս կ'առնիկոր, կը տանիկոր գիւղ: Ադ մերինները քարայրէն էլած են արդէն, քարայրին աւելի վերին մասերը կամաց-կամաց տեղաւորուիլ սկսան, եւ մեծ հայրիկս անագ կ'առնէկոր, եւ նեշաղըր, նեշաղըրը ամունիում քլորիդ է, անագապատած ատենը նեշաղիր կը գործածես: Գիւղացիները ամանները կը բերենկոր եւ

ինքը անագ կը պատկեր անոնց, դրամ կ'առնէ եւ Եուսուֆ օնբաշին իրեն պարտքն ալ կը վճարիկոր, եւ կ'ըլլայ որ իմին մեծ հայրիկս քրքրարաքցի է: Հոն տեղը կը սկսիկոր, կը ջանակոր կամաց-կամաց ազգականները հաւաքել: Հիմա՝ քանի որ դեղէս այլեւս քրքրարաքցի եղաւ, հիմա հայ ընտանիքները, իրեն ազգականները հաւաքելու կը ջանայ: Առաջ քուրդ աղջկայ մը կը սիրէկոր, քուրդ աղջիկ մը առնել կ'ուզէկոր: Եուսուֆ օնբաշին կ'ըսէ քի, «Բոզօ,- կ'ըսէկոր, (Բոզօ կ'ըսեն, քանի որ շէկ էր, արդէն բոլորը իրեն Բոզօ կ'ըսեն),- մենք քեզի հայ ըլլաս ըսելով հոս պահեցինք, եթէ քուրդի հետ ամուսնանաս, քուրդ ալ չես ըլլար, աս ալ մեր նպատակին հակառակ բան մըն է կ'ըսէկոր, եկուր դուն հայ աղջկայ մը հետ ամուսնացիր»: Հաւանաբար ան թուականներուն այլեւս Սուդրոսի Պայմանագիրը⁶³ եղած էր, 1918 թուականները պիտի ըլլային, քանի որ հայու ընտանիքները հաւաքելու աշխատութիւնները ակելի ազատ սկսած են ադ միջոցին: Քերերի ըսած գիւղ մը կայ, Քերերին Մարաշին մէկ գիւղաքաղաքն է, քուրդի գիւղ է, անտեղէն կ'ըսեն որ անտեղը Պայծառ անունով աղջիկ մը կայ, արի քեզի առնենք: Չեն տարկոր մեծ մայրիկս, կ'ըսեն, որ տալու համար դուք ալ աղջիկ մը տուէք (քրիստոնէայ հայ աղջիկների մեծ պակաս կար, քանի որ կենդանի մնացած, փրկուած աղջիկներին սովորաբար սուննի քրդերն ու թուրքերը իսլամացնում եւ տանում էին որպէս հերթական կին - Չ.Խ.): Մերիններուն՝ Պետոյին քովը աղջիկ մը կայ՝ Մարիցան: Մարիցան Գիքորին հետ կ'ամուսնացնենկոր, մեծ մայրիկիս եղբոր հետ: Մէկ աղջիկ կու տանկոր, եւ անոր վրայ մեծ հայրիկս եայայիս հետ կ'ամուսնանակոր, Պայծառին հետ: Ատանկ պատիկ մանրամասնութիւն մը: Ադ միջոցին Գիքորին հայրիկը Քերերին մէջ ջաղացպան է, իմ աստեղ քուրդ ազգական ունենալու օգուտը պիտի ըսեմ: Պայծառ եայայիս հայրիկը կը մեռնիկոր, ջաղացպան էին իրենք հոն, եւ մեծ հայրիկս կ'ուզէրկոր, որ իրեն աներձագը նոյնպէս այլեւս գիւղ՝ Քրքրարաք բերէ: Քանի որ ինքը եայայիս հետ ամուսնացաւ, իրեն աներձագն էլ Քերերին մէջ ջաղացպան էր, Քրքրարաք բերել կ'ուզէկոր, որովհետեւ Գիքորին հայրիկը մահացած էր: Բայց այդ Քերերին գիւղին աղան չթողներկոր, որ էրթայ եւ կ'ըսէրկոր, որ 15000 լիրա դու պարտական ես ընձի: Կրնայ ըլլալ, որ թիւը սխալ ըսեմ, ինչ որ է՝ «պարտք ես», կ'ըսէ: Անոր վրայ դեղէս կ'երթակոր Քերերին, կ'ըսէկոր աղային, Գիքորը ազատ ձգէ, Քրքրարաք պիտի տանիմ, ետքը կը վճարէ: Չի տար: Անոր վրայ քուրդ ազգականը՝ Շուքրէ էֆենդին կ'առնէկոր, կ'երթայ: Շուքրէ էֆենդին իր իսլամացած քրոջը՝ Նագրիէի տեգրն է, ամուսնու եղբայրը: Ան ալ Դեր Զօրէն հայ աղջիկ մը եւ իր մայրը բերած էր, աղջիկը իսլամացրած եւ իրեն որերորդ կինը ըրած էր: Շուքրէ էֆենդին հետ ազգական են եւ շփումը միշտ կայ: Շուքրէ էֆենդին հօր մարդ է: Շուքրէ էֆենդին հետ գիւղը կ'երթանկոր, Շուքրէ էֆենդին կ'ըսէ որ, առ աս 15000 լիրան, մեր մուրհակը տուր եւ մենք կ'առնենք կ'երթանք:

Աս ալ՝ «կորսունցուցի, չիկայ»: Շուրքէ Էֆենդին կ'ըսէկոր, որ աստեղ քո գիւղդ է, ես քեզի բան մը չեմ ըներ հիմա, բայց աս գիւղէն դուրս չես կրնար էլլալ, իմանաս: Էս մուրհակը որկորսունցած է, թուղթին վրայ կը գրէկոր՝ 15000ը ես յանձնեցի, եւ անոր վրայ ստորագրութիւնը կ'առնէկոր եւ իրեն աներձագը կը վերցնէկոր: Աս ձեռով մեծ հայրիկս Քըրքըսրաքի մէջ ազգական ընտանիք ունեցաւ: Ան միջոցին, ժամանակների սխալութիւն կրնայ ըլլալ, մեծ հայրիկս կ'իմանակոր, որ միւս քոյրն ալ՝ Անուշը, փրկուած է եւ Անթէպն է: Վերջը կ'իմանանք, որ մեծ հայրիկս՝ Մարգիսն է փրկուել, Ադաւնին, որ ինքը Նագիմիէն է, միւս քոյրը՝ Անուշը, Ռաքէլը, որ Բրագիլն է, եւ Մայրամ կայ, ան ալ պիտի ըսեմ, Ֆրանսիա է: Հիմա Այնթապէն կ'իմանակոր Անուշը որ գիւղում է:

Անուշին պատմութիւնը պատմեմ հիմա ձեզի: 1915ին Անուշը ամուսնացած էր, երկու զաւակ ուներ, լեբլեբիջէներու Սեդրակ եղած են, մէկուն հետ ամուսնացեր է եւ պրոտեստան են անոնք՝ բողոքական են: Իրենք դեռ աքսորի ճամփան չելած ամուսինը սպանուած էր արդէն, երկու զաւակ եւ աներհայրը (աները – Հ.Խ.) կայ, ուրիշ մէկը չիկար: Գիւրունէն Անուշը կ'ելլակոր ճամփայ, աքսորի ճամփան է, պապան՝ աներհայրը կը մահանակոր, կը հիւրնդնայ, կը մահանակոր: Երկու զաւակ ունի, մէկը շատ ծանր կը հիւրնդնակոր, եւ կամուրջի մը ոտքին տակը շուք[ը] կը ձգէկոր, որ գոնէ չմահանայ, գուցէ մէկը առնէ, ազատէ: Ինչ կ'ըլլայ՝ չենք գիտերկոր կ'ըսէկոր, թերեւս հիմա մեռած է, մէկու մը իսլամացած է, ինչ, չենք գիտեր: Միւս տղան ալ ճամփու գացած ատենը տեղ մը ջուր խմելու կը դնիկոր, ժանդարմը եւ ուրիշ մէկը հրացանի թուրովը կը զարկէկոր եւ կը մեռնէկոր: Ան ալ կը մեռնէկոր, անոր վրան քիչ մը հող կը նետէկոր, ան միջոցին շուները կու գանկոր վրան, բզիկ-բզիկ կ'ընենկոր իրեն զաւակը, եւ ան միջոցին հորաքոյրը կը մարիկոր: Առանձին մնացեր է արդէն, կը մարիկոր եւ ինքը ասթմա ուներ՝ Անուշը, եւ գիտէք, վերջը ասթմա հիւանդութիւնէն կ'ազատի եւ ասթմա չունենարկոր անկէ վերջ: Վերջը երկու զաւակը մահացաւ, իմ քեռակինէս իմացած եմ ես, եւ Անուշը կ'ըսէր, որ մէջս պարպուեցաւ կ'ըսէկոր, եւ անանկ կը հետեւցնէ որ ասթման այդ ծանր ապրումէն վերացաւ: Անկէ վերջը ան ալ զաւակ չունեցաւ այլեւս: Երբ որ մեծ հայրիկս կ'իմանակոր, որ Անուշը Այնթափն է, Այնթափէն իրեն քոյրը ձեռով մը իրեն քովը կը բերէկոր: Ան միջոցին գիւղին մէջը ապաստանած Մատոս՝ Մարտիրոսը կայ, կ'ամուսնացնենկոր եւ տուն կ'ըլլանկոր: Բայց Անուշը զաւակ չունենարկոր: Իմին մեծ հայրիկս քանի հաս զաւակ ունեցած է, Պայծառի հետ ամուսնացած է, քանի հաս զաւակ ունեցած է՝ Յակոբ, Պետրոս, Մարգիս, Արեգնազ՝ Արեգ, Սիրանուշ, Մարգրիտ, Նիշան, եօթ հաս զաւակ ունեցած է, երեք հաս ալ մեռած է ադ միջոցին: Ինքը ուրեմն եօթ հաս զաւակ ունեցաւ, բայց իրեն քոյրը զաւակ չունի: Անուշը զաւակ չունենալուն համար Մարգիսը իրեն որդեգրեցին: Մերին մականունը

Էրբոյ է, Մարտիրոսի մականունը Օֆլազ է: Հիմա մենք հօրեղբօր զաւակներ ունինք, որինիս ազգանունը Օֆլազ է, Մինասը: Մէկ հատ մըն ալ ուրիշ որդեգրած աղջիկ մը կ'առնին, Նուարդն է: Նուարդն ալ որուն աղջիկն է՝ Պետոյին աղջիկն է, գիւրունցի, մտերիմ են, ուղղակի մի քարանձաւում միասին թաքնուած, ապրստանած են: Պետոյին մէկ աղջիկը՝ Նուարդը Անուշին որդեգրած է եւ Նուարդը Արժանթին կ'ապրի արդէն: Ամէնոնց հաւաքեցին, իրենք ընտանիք կազմեցին, որչափ որ ազգական ունէինք՝ կարելին եղածին չափ գիւղ կը հաւաքէինկոր: Ինքը դեռ անագապատում կ'անէրկոր, ադ միջոցին լաւ վիճակին մէջ էր արդէն, գիւղին վիճակին նայելով լաւ վիճակին մէջ էր: Գիւղերին մէջ անագութիւն նորէն կ'ընէկոր եւ լաւ կ'ապրինկոր, եւ ամէնէն մեծ տուն մը ունին, առջելին մասը մերոնք կ'ապրէինկոր, ետեւին մասը իրեն աներձազը եւ իրեն շառաւիղները կ'ապրէինկոր: Ամէնուն ալ գործը լաւ է: Աս էլ ասեմ՝ սեփական տուն չէր: Մէկ տարի սա տունին մէջ, մէկ տարի միւս տունին մէջ ապրել են ասանկ: Գործերնին լաւ էր, եւ մեծ հայրիկս՝ Մարգիս դեղէս օր մը սեփական տուն մը ունեցեր ուզեր է, եւ մեր գիւղացիներէն մէկը ըսեր է, որ Բոզօ, եկուր աստեղը քեզի տուն մը շինէ: Դեղէս ալ շատ սիրով ուզեցել է սանկ տեղը տուն մը ունենայ, եւ մէկուն պատուէր տուեր է, կոտորուած ծառեր, մաքրուած ծառեր առեր է... Տախտակ, փայտեր առեր է, փայտը վրայ-վրայէ շարեր է: Պօղոս դեղէն ըսեր է «աս ի՞նչ է, Բոզօ»: «Պօղոս,- ըսեր է,- ինքզինքս տուն պիտի սարքեմ»: Քանի մը օր անցել է, դեղէս կ'ասէ, որ փայտերը չիկայ: Պօղոս դեղէն անոնք ամէնը գիւղերին հեռագիրը տուեր են, սիւները դնող մարդեր եկեր են, որ առէք, ձմեռը վառէք, ձրի տուեր է: Դեղէս Պօղոսին՝ «փայտը ի՞նչ եղաւ»: Տուի,- ըսեր է: Ի՞նչու տուեր ես դուն: Ըսաւ քի, «Բոզօ, մենք հոս բնակուելու՞ եկանք, բնաւ չէ: Մենք պիտի էրթանք աստեղէն, ի՞նչ գործ ունինք մենք աստեղ» ըսել է: Բայց եկուր նայէ, որ Պօղոսը մահացաւ, իրեն գերեզմանը հոն է հիմա: Ինչ որ է՝ կ'ապրէին: Աս միջոցին կ'իմանանկոր, որ մէկ քոյրն ալ Բրազիլն է: Ռաքէլն է ան: Ռաքէլն ալ Բրազիլ կ'եսարիացի Մինաս անունով մէկուն հետ ամուսնացած է: Մերիներուն լուր կու տայ, որ եկէք, ես զաւակ չունիմ, շատ լաւ վիճակի մէջ ենք, մերիներն ալ կ'ըսեն, որ չէ, մենք շատ լաւ վիճակին մէջ ենք, լաւ կ'ապրինքկոր, չեն էրթարկոր: Անտեղը մեծ հայրիկիս հօրեղբօրը տղան Խաչերը կար, անիկա որդեգրեր են Բրազիլին մէջ: Մեծ հայրիկս մէկ քոյր մըն ալ ունի՝ Մայրամը: Գիւրունը ամուսնացած է եղեր եւ մէկ աղջիկ է ունէր եղեր: Իստամբուլ կու գակոր, ան միջոցին Քրքրըսրաք նամակ կը գրենկոր, որ աղբար, քիչ մը ինձի օգնէ, ես Ֆրանսիա պիտի էրթամ: Բայց հայրիկս կ'ըսէկոր, որ ես ինչպէ՞ս օգնեմ քեզի, մենք մեր ընտանիքը դժուար կը պահենքկոր: Անի կը վշտանայ, իրեն աղջիկը ֆրանսիացի սպայի մը հետ կ'ամուսնանայ եւ Մարսիլիա կ'երթակոր, եւ բնաւ լուր չունինք անոնցմէ:

Երբ որ աս ժամանակներուն մերինները կամաց-կամաց կը հաւաքուինկոր, Թուրքիոյ մէջ 1918 թուին էր, որ հայերը քիչ մը ընտանիք կազմել սկսան: 1923էն վերջը այլեւս անչափ հանգիստ օրեր չէր, ժանդարմները գիւղերը կը կռիւէին՝ հայերին գտնան: Օր մը մերին գիւղը հարիւրապետ մը կ'իմանակոր, որ հայ կայ, գիւղին մէջ մէկը կը մատնէկոր, որ հայ կայ: Մերինները եթէ իմանան, գիւղացիները եթէ իմանան, որ ժանդարմ պիտի գայ, անոնք անմիջապէս մերին պստիկները իրենց երեխաների մէջ կը խառնեն եղեր, մեծերն ալ հետեւի ախոռներուն մէջ կը պահեն եղեր: Բայց անանկ մը եղեր է, որ չեն կրցեր պահել եւ մերին բոլոր հայերը գտեր են եւ անոնց հետ ալ 40 հատ քուրդ բանակէն փախածներ գտեր են: Անոնց ամէնը մէկէն սենեակի մէջ կը հաւաքինկոր: Հարիւրապետը Եուսուֆ օնբաշիին կ'ըսէկոր, որ պիտի տանեմ աս հայերը եւ ան կ'ըսէ, որ չեմ տար, ինչ կ'ուզեսկոր ըրէ ինձի: Չէ, պիտի տանեմ, չէ, չեմ տայ,- եւ հարիւրապետին 100 մէջիդի կու տակոր: Օնբաշին մէկ մը կը տեսնակոր գիւղին մէջ, որ ադ մատնիչ մարդը զինուորէն փախած մարդ մըն է, պիտի տանէին անիկա: Աս ալ կ'ըսէկոր «ինձի մի տանէ, կը տանես, որ կիներս հայերուն մնայ»: Վերջը սա օնբաշին անկէ տասը մէջիդիէ կ'առնէկոր, բանակէն փախած 40 քուրդերէն օրէն ((ոռից – Հ.Խ.) երկուական, օրէն հինգ մէջիդիէ կ'առնէկոր, հարիւր մէջիդիէն ետ առած կ'ըլլակոր: Հայերէն բան մը չ'առներկոր, հայերը փող չունին արդէն, միայն քուրդերէն կ'առնէր: Ասանկ պատմութիւն մը կայ մերին գիւղին մէջ:

Հիմա հետաքրքիր քանի մը պատմութիւն պատմեմ: Աս Լեւոն կայ, կը յիշէ ք, քարայրին մէջ: Լեւոնը մէկու մը սպանութիւնէն լուր կ'ունենակոր, ականատես կ'ըլլակոր աս սպանութեան: Դատաւարութիւն պիտի ըլլայ, կայմակամը Լեւոնը կ'ըսէ, որ վկայութիւն մի՛ ըներ: Լեւոնը կ'ըսէ, որ ինչ ճիշտն է՝ ան ալ կ'ըսեմ, եւ դատաւարութիւնէն առաջ կը սպանեն Լեւոնը: Անցեալներս մէկը ինձի զանգեց, որ դուն ասանկ պատմութիւն կ'ընեսկոր եղեր, եւ սպանողին թոռն է աս զանգողը: Քուրդ է. մերին քուրդերէն է, ալեւի քուրդ են մերինները, քուրմանջի կը խօսին: Ադ սպանողին անունն ալ Մեհմէդ Քահիյա է: Անոր թոռը ինձի զանգեց, որ «դուն կը գրես որ ասանկ բան մը կայ: Իմին դեղէն շատ դեմոկրատ մարդ մըն էր,- կըսէ,- հայերուն շատ կը սիրէր, չէր սպանէր»: Ասի որ եանի ես հիմա գրելու բան մը չունիմ, բայց եթէ գրեմ, իմին տեսանկիւնս ալ կը գրեմ, քուկինն ալ կը գրեմ, բայց մերին գիւղացիներուն արժէքը չ'իջեցներ ասիկա, մեր գիւղացիները շատ յարգի մարդեր են, որովհետեւ մենք ինչ որ ծագում ունինք, անոնց կը պատկինք (պարտինք – Հ.Խ.):

Լաւ մարդիկ են, բայց դարձեալ պատմութիւններ կը պատահէին: Ես Մայրամ հօրաքոյր մը ունիմ ըսի: Մայրամ հօրաքոյրս շատ աղուոր աղջիկ մը եղեր է, տասնհինգ-տասնվեց տարեկան, մեր գիւղին քուրդերէն մէկը կը փախցնէկոր անիկա: Մեծ հայրիկս, հօրաքոյրս, մեծ մայրիկս,

հայրիկս, մեկ հորեղբայրս եւ հոպարս չիկան տունը, ուրիշ տեղ են, միայն կիները կան՝ հորաքոյրս կայ, մեծ մայրիկս կայ, կարծեմ Անուշ հորաքոյրս ալ եղեր է, եւ մէյ մըն ալ ծերերը կան, Մատո դեղէն կայ, որ անիկա կտոր կը հիւսէ, որոնցմէ շալուար կը սարքիս, տասներկու հոգի: Մեր գիւղի քուրդերը կը գան, դուռը կը կտորեն, Մայրամը կը տանեն: Աս փախցնելու խնդիրը թոփալ Հայդար կայ եւ Քյարամ Մեհմէդլէրը Սալմա, ադոնք կը սարքենկոր, Երմութն ալ իրենց հետ: Իրենք ամուսնացած են իրականութեան մէջ, երկրորդ կին ըլլայ կ'ուզենկոր, եւ հորաքոյրիս կ'ըսեն, որ մեզմէ մէկը պիտի ընտրես: Անոր եւ Հուսէյինը կու գայ, անիկա կ'ընտրէկոր, որովհետեւ Հուսէյինը մեր տուն եկող-գացող մէկն էր: Մեծ հայրիկս բնաւ ազգականութեան կապ չունէր անոր հետ, չ'ուզէր: Հուսէյինը կ'ըսէրկոր եայայիս՝ մեծ մայրիկիս. «Պայծառ թէյգէ, (մօրաքոյր – Հ.Խ.),- կ'ըսէրկոր,- Մայրամին ձեռք չդիպցուցի, կ'ուզէրկոր առէք, Մայրամը ձեզի ետ կը վերադարձնեմ,- կ'ըսէրկոր,- բայց խօսք չեմ կրնար տալ խաղաղութեան, գիւղը փոխեցէք, գիւղէն ելէք»: Մերինները ասոր վրայ գիւղէն փախելու կը մտածեն, բայց գիւղացիները աս անգամ չեն ձգէրկոր: Մայրամն ալ այլեւս իրեն տունը ունի, բայց մեզմէ մէկը չէր երթակոր քովը, միայն հորաքոյրս, մեծ մայրիկս՝ Պայծառը, եայաս կ'երթակոր երբեմն, եւ Նշան հոպարս՝ ամենէն պստիկը կ'երթարկոր: Եայաս բաներ մը երբեմն՝ թան, իւղ, անանկ բաներ մը կը դրկէկոր, բայց մեծ հայրիկէս գաղտնի: Նշան հոպարս անգամ մը կ'երթակոր, Մայրամ հորաքոյրս պատուիլ (հիւրասիրել – Հ.Խ.) կ'ուզէկոր, Նշան հոպարս կը փախիկոր, շատ կը յուզուիկոր անոր վրայ: Տասնվեց տարեկան, թերեւս տասնհինգ տարեկան...Իմին հայրիկս բանակ պիտի երթայ, Յակոբ հայրիկս բանակ պիտի երթայ, հիմա հորաքոյրս իրեն գլխարկ կը հիւսէկոր, ձեռնոց կը հիւսէկոր, տալ կ'ուզէկոր, հայրիկս չ'առնէկոր: Մայրամը կ'ըսէկոր. «աղբարիկս, սիրելի վ գացի որ, որ դուն ինձ հետ ասանկ կը վարուիսկոր»: Կու լայ, կու լայ, ասանկ բաներ կ'ըլլակոր: Մե՛ դք: Վերջը՝ Մայրամը յղի կը մնակոր, բայց չ'ուզէրկոր իրմէ զուակ ունենալ: Յղի կը մնակոր եւ անանկ կ'ընէկոր, որ... գիտէ՞ք, եալան կ'ըսեն թրքերէն, մէջը ջուր կը հաւաքուի, որ անասունները մէջէն ջուր խմեն: Աս փորը անտեղ քսելով, քսելով, որ զուակը մեռնի: Չուակը կը ծնիկոր, որ ուղեղը չիկայ, այսինքն՝ գանգը վնասել է, եւ կը մեռնիկոր: Մի ժամանակ վերջը Մայրամն ալ կը մեռնիկոր, քսան տարեկան էր միայն, վիշտէն կը մեռնի թերեւս: Դագաղը մերին տունին առջեւը կ'անցնիկոր, մեծ հայրիկս չի դառնար, չի նայէկոր: Բայց կ'ըսեն որ վերջէն շատ լացեր է, մեծ հայրիկս շա՛տ լացեր է: Անկէ վերջը Հուսէյինը բանի մը կը խառնուիկոր, դատավարութեան խնդիր մը կ'ունենակոր, ժանդարմիայի հետ խնդիր մը կ'ունենայ, ժանդարմը կը բռնէկոր, ադ միջոցին անտեղէն գետ մը կ'անցնիկոր, գետին մէջը կը նետուիկոր, կը վիրաւորուիկոր: Վերջը լողալով գետին ափը կ'ելլակոր, բայց հոն կը մեռնիկոր, եւ կուրծքին

մէջը՝ Մայրամին մագը: Մայրամին մագը պահեր է: Մանկ երկար-բարակ պատմութիւններ: Եւ մերինները այլեւս աւ դէպքէն վերջը, 48 թիւին այլեւս աղ գիւղին մէջ չեն կրնար կենալ: Աս դէպքին մէջ քիչ մըն ալ մերինները մեղաւոր են ըստ ինձի, որովհետեւ այլեւս երիտասարդները մեծցած են, քուրդ տղաքները մեր աղջիկներուն սիրելը սկսած են, ասանկ բաներ կայ եւ մերին գիւղին մեծերը կ'ըսեն, որ գացէք աւ տներէն, կամ ձեր աղջիկները քուրդերուն պիտի տաք, չենք ուզենայ, որ ատանկ ալ ըլլայ, մենք կ'ուզենք որ հայ մնաք: Ասանկ դէպք մը պատահեցաւ, բայց գացէք այլեւս: Այն ատեն հայերուն թիւը հարիւրին մօտեցած էր: Դժուար, շատ դժուար էր միասին ապրելը: Թուրքիոյ մէջ քուրդ մը կամ թուրք մը հայ աղջիկ ուզի՝ իրաւունքն իրենն է արդէն, չես կրնայ «ոչ» ըսել: Բայց ասիկա սուննիներուն կը վերաբերի, ալեւիներուն չի վերաբերի, եւ մեծ հայրիկս կրնար դատարան ալ դիմել: Բայց գիւղի ալեւիներուն պատժելը մերիններուն շահին չէր գայ, անոնք է, որ մերիններուն օգնեցին, փրկեցին: Միւս հարցն ալ կար՝ Մայրամին անձնագիրը: Մայրամը անչափահաս էր իրականում, բայց քանի որ Մայրամին անձնագիրը իրան մեռած քրոջ անձնագիրն է, անձնագիրին տարիքը 18էն մեծ է: Մեծ քոյրը մեռեր է, անոր անձնագիրը փոքր քոյրին տուեր են: Որովհետեւ գիւղաքաղաքէն անձնագիր հանել դժուար էր, առաջ աղջիկ մը ունեցեր էր, անունը Մայրամ էր, անիկա մեռեր է, անոր անձնագիրը կը պահենկոր, ուրիշ աղջիկ մը պիտի ունենայ, ուրիշ աղջիկ ունեցեր է, ալ անձնագիր հանելու չեն գացած: Միրանուշ հօրաքոյրս ալ ատանկ է: Միրանուշ հօրաքոյր ունիմ, որ անձնագիրով 80 տարեկան է, ինքը 70 տարեկան է իրականութեան մէջ, ուրեմն՝ տասը տարի առաջ մեռած քրոջը անձնագիրովը կ'ապրիկոր: Աս չէր բայց, որ Մայրամին չիտեւեցին, պարզապէս յարաբերութիւնները պահելու խնդիրը կար: Ասիկա հարցը չլուծեց սակայն, եւ Հոսէյինի մահէ ետք մերին գիւղացիները հայերին խնդրեցին թողնել գնալ:

Մերոնց լեզուն ի՞նչ եղեր է, գիտէ՞ք, տունին մէջ հայերէն կը խօսին, բայց՝ իրենց բարբառը: Մերոնք գիւղին մէջ քուրդերէն խօսին եղեր, տունին մէջ՝ հայերէն, բայց պետական լեզուն թրքերէնն է, այսինքն՝ թրքերէն գիւղին մէջ մերիններէն զատ գիտցող չիկար: Եւ մերինները թրքերէն կը դասաւանդեն եղեր, որովհետեւ Քըրքըսարաք դպրոց չիկար, եւ մերինները տղաքը Աւշին կ'ուղարկեն եղեր ուսանելու: Արդէն միայն տղաները կ'ուղարկեն, աղջիկների ուսումին շատ կարեւորութիւն չէին տար: Հայրիկս Աւշին գացեր է ուսանելու, իր հօրաքոյր Նազիրէին տունը կ'ապրէր: Անոր ընտանիքի հետ շատ ջերմ ենք մենք, շատ մտերիմ, իր քուրդ զաւակներներն ու թոռները իմ մտերիմներս են, սիրելի ազգականներս: Ասիկա ուրիշ ճիւղ է, ուրիշ պատմութիւն: Հիմա ըսի, որ մերինները գիւղը կը թողնենկոր, Փնար Բաշին կ'իջնանկոր: Ասիկա գիւղաքաղաք է: Փնար Բաշը հայեր շատ կան: Մերինները Փնար Բաշը

կ'երթանկոր, այնտեղը կը հաւաքուինկոր, երեք-չորս տարի հոնտեղը կ'ապրինկոր: Հայրիկս ադ տեղի հայ աղջկայ հետ կ'ամուսնանակոր՝ մայրիկիս հետ: Մայրիկիս պատմութիւնն ալ հայրիկիս պատմութեան պէս ասանկ պատմութիւն մըն է: Անկէ վերջը Իստամբուլ կը գաղթենկոր: Աս նկարը որ ցոյց տուի, Իստամբուլ եկեր են, ամէնը մերին ազգականներն են: Բոզօն Փնար Բաշիից հիւանդացեր է, ապմա է եղեր արդէն, Պետրոս հօրեղբօրս հետ Ստամբուլ Սուրբ Փրկիչ հիւանդանոց եկեր են, եւ դեղէն կ'աղօթէր, որ՝ «Աստուած, մերինները չեկած մի՛ առներ կեանքս, տեսնամ, որ մերինները եկեր են, անկէ վերջը առ»: Մերոնք վեց-եօթ ընտանիք նստեր են, Փնար Բաշիէն Իստամբուլ գաղթենկոր՝ 1951 թիւ: Բոլու եկեր են, ադ Ստամբուլին շատ մօտ քաղաք մըն է, բայց կորսուցեր են ճամփան: Մեծ քեռիս եւ Սարգիս հօրեղբայրս երկու հոգով օթոբոս (հանրակառք, աստոբոս – Հ.Խ.) մը նստեր են, կու գակոր եւ լուր կու տան մեծ հայրիկիս, որ եկանք: «Աստուած,- կ'ըսէկոր,- արդէն հոգիս կրնաս առնել»: Եւ մերինները չի տեսած ինքը կը մահանակոր: Աս միջոցին Մարտիրոսը Փնար Բաշը կու գայ կոր, հիւանդանակոր, Պետրոս ամջաս՝ Պետրոս հօրեղբայրս, անիկա կ'առնէկոր Կեսարիա, կը մեռնիկոր հիւանդութիւնէ: Կեսարիա հայոց գերեզմանատունը կը տանիկոր, պատի մը տակ կը թաղիկոր: Հիմա մենք հօպարիս տեղը չենք գիտեր: Փնար Բաշիէն Իստամբուլ կու գակոր, Մարտիրոսի կին Անուշն ալ իր երկու որդեգիր երեխաներով, ամէն մարդ Իստամբուլ եկաւ, Իստամբուլ հաւաքուեցանք ամէնս: Դժուար կեանք մը սկսեցաւ:

Ըսի որ հայրս Փնար Բաշի արդէն ամուսնացաւ: Անտեղ աղբարիկ մը ծնած է, անտեղ մահացեր է անիկա: Ստամբուլ եկեր են, Խաչիկ աղբարս ծներ է, ես ծներ եմ, Մայրամ մէկ քոյր մը ունիմ, վերջը Ռաքէլ, վերջը Մարկոս: Երկու քոյր, երեք եղբայր ենք մենք: Ստամբուլ Գում Գափը կը հաստատուինկոր մերիննին (մերոնք – Հ.Խ.): Շատ մօտ ենք պատրիարքարանին, ի նչ փողոց էր, աղբիւր մը կար, ան տունը կը յիշեմ ես, որովհետեւ, մէկ սենեակ մը կը վարձենկոր, մէկ սենեակին մէջ մամաս, պապաս, աղբարիկս ծներ է, ես ալ կայի: Հօպարս կայ, մէկ հօպարս եւս կայ, հօրաքոյրս կայ մէկ սենեակի մէջը: Ան կը յիշեմ, որ ասանկ կարծեմ չորս սենեակ կար, մէկ հատ մը խոհանոց կար, չորս ընտանիք աս խոհանոցը կը գործածէին: Ան տունի մէկ սենեակն էինք, վերջը վերելին մէկ սենեակը եւս կը վարձենկոր: Մերին փողոցը հայկական փողոց էր, արեւի շատ հայ տղաքին հետ կը խաղայինք: Քուրդերը չեմ յիշերկոր, անանկ շատ քուրդեր չիկար, թուրք երեխէքի հետ ալ կը խաղայինք, բայց հոս արդէն մեզի կը զգուշացնէին հայերէն չխօսել: Մենք երեխաները արդէն հայերէն չգիտէինք ալ, քիչ-միչ բարբառը գիտէինք, արեւի քուրդերէն կը խօսէինք: Բայց վարի փողոցը թուրք տղաք կար, անոնց հետ ալ կռիւ ալ կ'ընէինք, անոնք մեզի նոյնիսկ գետուր ալ կ'ըսէին: Չեմ յիշերկոր ինչու համար, հիմա մէկ հատ ընտանիք մը կար,

մեզ գեաւուր չէին ըսեր, այսինքն նորմալ էին, բայց տան կինը իրենց զաւակներուն կը խրատէր, այսինքն՝ մի՛ խաղաք անոնց հետ ըսելով: Անոնք հայ են, էրմենի են: Անընդհատ դու կը յիշեսկոր, որ հայ ես: Չյիշած բաներն ալ կը յիշեցնեն քեզի: Եւ մեր տանն էլ միշտ կը զգուշացնէին՝ զգուշ եղէք: Օր մը մեզի չէին խաղցներ, գնդակ չունէինք հետերնիս: Խաղ մըն էր, որ ասանկ հարցազրոյցին մէջը կ'որոշուի, խաղալով ալ գնդակնիս կը դնէինք: Մենք պիտի ունենք (պէտք է ունենայինք – Յ.Խ.) մեր գնդակը, մեր գնդակով պիտի խաղայինք, որ մեզի ալ խաղու մէջը դնեն: Անոր համար կեանքիս մինչեւ վերջը ես կ'աշխատիմ, որ գնդակը իմս ըլլայ, որ խաղին մէջ դնեն մեզի: Միշտ հայերը պարտաւոր են իրենց գնդակը ունենալ, չենէ խաղին չէր կարող մասնակից ըլլալ:

Ապրուստը դժուար էր: Ան տարիներին Իստամբուլ շատեր կու գային, ոչ միայն հայերու համար էր դժուար: Տղամարդիկ շատ կ'աշխատէինկոր, ան միջոցին պղինձ կը ձուլէին, ձուլելու գործ կ'ընէին, բայց աշխատավարձնին շատ քիչ կու գար: Պետրոս հօրեղբայրս Դինիզ՝ ուրիշ քաղաքը կ'երթայ... Ես ան ժամանակը շատ լաւ կը յիշեմ, կ'աշխատէին մինչեւ կէս գիշերներ, մենք օրերով հօրս երեսը չէինք տեսնար, կ'աշխատէին: Առտու եօթին կ'ելլային, կէսգիշեր մինչեւ քանի կ'աշխատէին, շատ աշխատասէր էին: Իրար շատ կը բռնէին բայց: Մէկ տունին մէջ կ'ապրէինք, աս հօրեղբայրս ալ հինգ զաւակ ունէր, չորս զաւակ ունեցաւ, վերջը իրեն կինը մահացաւ, նորէն ամուսնացաւ, մէկ զաւակ ալ անկէ եղաւ, ան ալ հինգ հատ ունի, Սարգիս հօրեղբայրս ալ հինգ զաւակ ունի, Սիրանուշ հօրաքոյրս զաւակ չունի, Արեգ հօրաքոյրս երեք զաւակ ունի, Սարգրիտ հօրաքոյրս երեք զաւակ ունի: Անոնք ամէնը Իստամբուլ ամուսնացան, ամէնը նոյն տունը կ'ապրին, ամէնը զաւակ ունեցան: Երիտասարդութեան տարիները ամէնը կը յիշեմ, մենք հիմա շատ հանգիստ ենք, բոլոր տանջանքը անոնք կրեցին, անոնք շատ տանջուեցան եւ չիկրցան վայելել, օրինակի համար հայրիկս կ'աշխատէր, մայրիկս ալ տունը կ'աշխատէր: Իստամբուլահային կիները քոլիմաջիք կ'ըսեն՝ շապիկներին թելերը, օձիքները կը կարէին, մէկելները կոճակները կը կարէր, ասանկ: Ըշտէ խանութին տէր կ'ըլլան, անտեղերնին գործերները կը մեծցընեն ըշտէ, վերջը փոխադրուեցանք: Մինչեւ 1964 վարձով կ'ապրէինք, աղբարիկս Գարակէօզեան⁶⁴ կ'ուսանէր, ես Պեզճեան կ'ուսանէի, Մայրամը Պեզճեան կ'ուսանէր, Ռաքէլը արդէն պստիկ էր: 64ին Բաքըր գիւղ փոխադրուեցանք, երեք յարկանի տուն մը առինք: Առած էր հայրիկս, ան տունին մէջ երկու ընտանիք՝ Պետրոս հօրարիս հետ միասին կ'ապրէինք: Ետքը, 1974ին ան տունը փլեցինք, յարկաբաժիններ ալ սարքեցինք, հոպարենքս իջան ուրիշ յարկաբաժին, ասանկ իրարմէ բաժնուեցանք անկէ վերջը:



«Մայեաթ-Նովա», «Թիւրք Կարդաշլար» եւ «Վան» համոյթների երաժիշտները Ստամբուլի Երեք Մանկունք Եկեղեցու բակում, (լուս.՝ Հ. Խառատեանի, 2011)

Բաքըր գիւղում եւ եւ հօրեղբօրս գաւակները Պեզճեանը⁶⁵ կ'ուսանէինք, մէկ տարի բողոքականացուած ժառանգ գացած ենք, անիկ քիչ մը թանկ էր, Պեզճեանը աւելի էժան էր: Բողոքական վարժարանում Հրանտ Դինքին⁶⁶ ծանօթացայ, Հրանտէն մէկ տարի, մէկ դասարան մեծ էի եւ: Մերիններուն մասնաւոր նախընտրանքը մասնաւոր վարժարան էր դարձել, թուրքական վարժարան երբեք չի գացինք հէջ մէկերնիս, ամենքս հայկական վարժարան, եւ որչափ որ կրցանք, անչափ ուսանեցանք: Ամէն մարդ որչափ ուզեր, անչափ պիտի ուսաներ, փոխանակ որ մերինները աշխատող մարդու միտք ունէին, փողի միտք ունէին, եւ օր մը չնախատեցան, որ մենք չենք աշխատիլկոր, կ'ուսանենքկոր: Ուսանեցանք, եւ բողոքական վարժարան, վերջը Տատեան⁶⁷, Տատեան՝ Բաքըր գիւղն է, Տատեանէն վերջը Կեղրոնականին⁶⁸ շրջանաւարտ եղայ, վերջը համալսարան քիմիայի ֆակուլտետին շրջանաւարտ եղայ, աղբարիկս՝ Գարակէօզեանէն վերջը Կեղրոնականին շրջանաւարտ եղաւ, քոյրս Էսսեանին⁶⁹ շրջանաւարտ եղաւ, Ռաքլը Տատեանին շրջանաւարտ եղաւ: Մարկոսը՝ ամենափոքրերնիս, ատամնաբուժ համալսարանի շրջանաւարտ եղաւ, Տատեան-Սահակեան ատամնաբուժական համալսարանին շրջանաւարտ է, հօրեղբօրս բոլոր գաւակները որչափ որ կրցան ուսանել՝ ամէնը լիսէին շրջանաւարտ եղան: Վարդանը, միւս հօրեղբօրս տղան, համալսարանի շրջանաւարտ

եղաւ, անի հիմա ատամնաբուժ է, միւսները լիսեյին շրջանաւարտ եղան, ոսկերիչներ ալ կան, հօրենական գործը շարունակողներ կան՝ կահոյքի գործը, հօրեղբայրս Ֆրանսիա կ'ապրի արդէն մի հատը, ասանկ բաներ: Ես ճարտարագէտ եմ, բայց հիմա տեքստիլի գործի վրայ կը զբաղուիմ, շուկային մէջ խանութ մը ունիմ, որ արտադրանքս հոն կը վաճառիմ: Երեսուն տարիէ ի վեր աս գործը կ'ընեմ: Աւելին ըսեմ, հօրս գործը՝ կահոյք սարքելը շատ լաւ հասկանում եմ, մինչեւ 26 տարեկան թէ՛ կ'ուսանէի, թէ՛ ադ գործին մէջն էի: 28 տարեկանին ամուսնացայ: Կնոջս հայրը մալաթիացի է, մայրը սեբաստացի է, ինքը Էսսեանի շրջանաւարտ է, Ստամբուլ Թեքնիք Համալսարանի քիմիա բաժնի շրջանաւարտ է, «Սայեաթ Նովա» երգչախումբէն⁷⁰ ընկերներ ենք իրարու հետ:

Հայկական դպրոց կ'երթայինք, հայերէն սովորեցինք, բայց մեզի միշտ կ'ըսէին՝ հայերէն չխօսէք փողոցներու մէջը: Կստահ չեմ, թէ հասկանում էինք՝ ի նչու հայերէն չխօսենք, բայց միշտ վախ կար, տագնապ մը կար: Կը յիշեմ, 1963 թուականն էր, մեր տունը մէկը եկաւ, ասեղ կ'ըներ՝ սրսկել, մեծ մայրիկիս սրսկելու համար մէկը եկած էր, կինարմատ, թուրք կին մը: Ան ալ օրէնք մը եղած էր, որ ապրանքներուն վրայ թուրք մալը պիտի գրես, այսինքն՝ Թուրքիոյ ապրանք, Թուրքիոյ արտադրանք: Հայրիկիս գործն ալ այդ շրջանին կահոյքագործութիւն էր: Հայրիկս Թուրքիոյ քարտէզը դրած էր, ճիշտն ասած կը պատմերկոր հայրիկս ադ կնոջը, որ Թուրքիա գրել պետք է: Ես ալ Թուրքիոյ քարտէզը կը նայիմ, պապա,- ըսի,- բայց Հայաստանի քարտէզը դնել պետք չէ՞ որ,- ըսի: Երեխայ էի, ես Հայաստանի ուր ըլլալը գիտեմ: Ըսածս՝ գիտենք որ Հայաստանը Թուրքիային կից երկիր մըն է, մենք Հայաստանին տեղը գիտենք: Կը պարծենամ՝ Հայաստան երկիր մը գիտենք, իշտե տղայական բան մը: Կնիկը էրթալէն վերջը պապաս անանկ ծեծեց ինձի. «Շան գաւակ, Հայաստանին ուրտեղ ըլլալը գիտե՞սկոր, ի նչու ասանկ բան մը կ'ըսես, հիմա կնիկը պիտի ըսէ, որ տունին մէջը ասանկ բաներ կը խօսին»: Ասչափ վախու օրեր եղան: ԱՍԱԼԱյի շրջանին ամենէն վատ, դժուար ժամանակները անցուցինք, շատ դժուար էր: Ամէն մարդ կը սպանէին, կը հայիոյէին: «Էրմենի քոփեկլար» (շանորդի հայեր – Հ.Խ.) կը գրէին թերթին վրայ, հիմա՝ կողքի դրացին որ երեսով պիտի խօսիս, ամենաճիշտ թաքնուած կ'ապրէինք: Դուրս կ'ելլէինք, բայց առանց խօսելու, բան մը չէինք խօսեր: Շատ մասնաւոր տեսակ մը ունէինք ապրելու համար, չեմ կրնարկոր յստակ ըսել սահմանները, բայց կարգ մը դժուար ապրում (ապրելակերպ – Հ.Խ.) ունէինք: Շատ դժուար կացութեան մէջ էինք: Այն ատենները դեռ նոր քիչ-միչ բաներ իմացած էինք հայերու մեծ ջարդերու մասին, նոր կ'իմանայինք, որ միայն Գիւրունում չէ, միայն Սեբաստիայում չէ, որ հայերը ջարդել են: Բայց ծաւալները դարձեալ չէինք իմանում:

1982ին հրաման էլաւ, որ քրիստոնէաները կալուածք չեն կրնար վաճառել: Ատիկա զինուորական յեղաշրջումէն ետքն էր: 82ին մեզի չարօտնեցին մեր ունեցածէն բան մը վաճառել: Մենք տեղ ունէինք, իմին խանութս այրեցաւ 82ին: Բոլոր խանը այրեցաւ, 229 խանութ կար արդէն, ես ալ մէկ հատ տեղ ունէի ասանկ, ամէնը այրեցաւ: Մենք ուզեցանք, որ տեղ մը ծախենք, որ մեր գործը կարգի դնենք, գացինք եւ չարօտնեցին, չենք կրնար վաճառել: Աս օրէնքը յոյներուն համար ըրին իբրեւ թէ, բայց սխալութեամբ մեզի կիրարկէր են: Մենք գացինք-եկանք, պապաս քիչ մը աշխուժ մարդ էր, եւ մարդիկ ըսին, որ Յակոբ ուստա, քիչ մը կեցէք, պիտի էլլայ աս օրէնքը, պիտի շտկուի ըսաւ, իրաւ վեց-եօթ ամսէն շտկուեցաւ, բայց շատ վախեցանք: Հիմա աւելի դեմոկրատ օրեր կ'ապրինքկոր, մեր կեանքի մէջ չիտեսած, բայց անցողակա՞ն է, չէ՞, միայն վերջի տաս-տասնհինգ տարին շատ լաւ ենք հիմա, մարդու տեղ կը դնենկոր մեզի: Որ ասանկ խօսի՞նք առաջ: Չէինք խօսիլ արդէն:

Մերիննին Իստամբուլ եկան՝ մենք գիւղացի հայեր էինք Իստամբուլին մէջ, Իստամբուլի հայերու մշակութային կեանքին մէջ մենք շատ տեղ չունէինք ան ատեն: Թութութի հօրաքոյրս, որ պապայի հօրաքոյրոջ աղջիկն է, մենք անոր հօրաքոյր կ'ըսենք, Քերէր գիւղը կը բնակին եղեր, ուխտ ունեցեր է, որ իրենք Քերէրէն բնաւ եկեղեցի չեն տեսել, որ եթէ օր մը եկեղեցի ունեցող տեղ մը երթամ, անպայման պիտի մաքրեմ: Իստամբուլ կու գակոր, Մայր եկեղեցին 1951 կարծեմ, նոր նորոգուեր է եւ պիտի օծուի եկեղեցին, օծումէն առաջ մաքրութիւն պիտի ըլլայ, թաղականներէն կը խնդրէկոր, որ մենք մաքրինք. անոնք կ'ըսեն, որ աս գիւղացի է, ինչ կը հասկանակոր մաքրելը: Անոր վրայ կ'աղաչէկոր Թութու հօրաքոյրս, անոնք կարծեմ մեզմէ քիչ մը առաջ եկած են, որ կ'երթային եկեղեցի կողի փոսը կը նստէին: Անտեղի թաղականներէն մէկը լաւ մարդ է եղեր, Թութու հօրաքոյրս կը խնդրէ, կը խոստանայ, որ կիները լաւ կը մաքրինկոր, մերինները: Հօրաքոյրս ամէնը կը կազմակերպէկոր, որ մամաս, միւս հօրաքոյրներս, ամէնը կը հաւաքիկոր, աղուոր մը մաքրենկոր եւ միւս օրն ալ անոնք ալ կը հաւնիկոր, կը գնահատենկոր, ասանկ պատմութիւն մըն ալ կայ Իստամբուլի կեանքին: Փակ էին պոլսահայերը, գաւառներու հայերուն համար ալ փակ էին, ատոր համար ալ իստամբուլահայերը աւելի հայախօս են: Ասանկ թրքախօսներու, քրդախօսներու հետ շատ լեզու չեն գտնալ: Մեզի շատ դժուար ներս կը թողէին: Ժամանակ անցաւ, նոյնիսկ ատ Մայր եկեղեցիին վարչութեան մէջ մտան մերինները: Որովհետեւ գիւղացիները այլեւս, գաւառացիներ ըսենք աւելի ճիշտ, շատցան: Պոլսահայերը գաղթեցին շատը, որովհետեւ ասանկ ուրիշ պատմութիւն մըն ալ կայ, որ կը ճնշէին հայերին վրայ Իստամբուլին մէջ: Մենք որ եկանք՝ մօտաւորապէս հաւանաբար հարիւր, հարիւր յիսուն հազարէն աւելի հայ կար, բայց վեց Սեպտեմբերէն յետոյ⁷¹ արդէն հայերուն թիւերը

շատ պակսեցան աստեղը: Հարուստ հայերը մանաւանդ հոս տեղէն ամէնը գաղթեցին:

Արդէն մինչ այդ էլ տեսակ մը թաքնուած կ'ապրէին հայերը, իբրեւ թէ չիկանք, անանկ կ'ապրէին: Եւ իստամբուլահայեր, քանի որ փող ալ ունէին ամէնը, գաղթեցին, գացին, գաւառացիները մնացին: Եկեղեցիներուն մէջը գաւառացիները սկսան անդամներ դառնալ, նոյնիսկ մայրիկս որպէս աղքատախնամի մարմինի մէջ կ'աշխատէր իշտէ, իշտէ քեռիս վարչութեան անդամ է, կեանքին յարմարուեցինք: Մերինները հայերէն շատ քիչ գիտէին, բայց մենք հայ ենք միշտ, հայոս վարժարաններ գացինք, որովհետեւ Յակոբ մնալուն համար եկան հոս:

- *Ի նչու, թող չմնային Յակոբ:*

- Չգիտեմ, բայց մեզէն ալ միշտ հայ մնալու ջանք կը պահանջէին: Օրինակի համար ես էսաեան վարժարան գացի, առաջին դասարանում բնաւ հայերէն չգիտէիկոր, գրատախտակի վրայ բաներ կը գրենկոր, ես չեմ հասկընարկոր, միւսներէն դասերս կ'առնեմկոր, կ'երթամ Սիլվա քոյրիկ կար մերինները, նախակրթարանին շրջանաւարտ կին մըն էր, կ'երթամ,- Սիլվա քոյրիկ, լալով, ողբալով կը խնդրէի, կ'օգնէր ինծի: Կ'երթայի՝ հայրիկիս քեռիին տղան կար, քեռիին աղջիկները կային, անոնց կ'երթայի, անոնք ինձմէ երեք տարի մեծ են, չորրորդ դասարան, ես առաջին դասարան եմ, հիմա մեծ կ'երեւանկոր. անոնք ալ ինծի կ'օգնէին. մանաւանդ կրօնքի դասերէն բան մըն ալ չէի հասկանար: Շատ դժուար կու գար ինծի անոնք: Իշտէ կը պատմէին, դասերը կ'ընէի, կու գայի տուն, ամէնէն մեծ աղբարիկս ալ Գարակէօզեան կ'ուսանէրկոր, անիկա մեզի օգնելիք բան մը չունեցաւ, ամէնէն մեծը ես էի, բան մը չէի գիտեր, որ մեծ էի, ինձմէ աւելի դիւրին դպրոցին գործին մէջը եղաւ, ան ստէն ես ուխտ ըրած էի, որ զաւակներս հայերէն պիտի գիտնան:

- *Ի նչու:*

- Որովհետեւ շատ դժուարութիւն ունեցած էի աղ դպրոցներուն մէջը: Մեր տունը թրքախօս էր, բայց երբ որ ամուսնացայ, մեր տունը հայախօս տուն դարձուցի, եանի (այսինքն – Հ.Խ.) տունին մէջ միշտ հայերէն խօսէինք, զաւակներիս հետ հայերէն խօսէինք, միշտ հայերէն խօսէինք արդէն: Հետաքրքիր բան մըն է, իմին տղաս ինծի հետ հայերէն կը խօսի: Խանութ կ'երթանք, ես թրքերէն կը խօսիմ, ալ հայերէն չ'ըլլար, որովհետեւ յաճախորդին քովը չեմ ուզեր հայերէն խօսիլ, տղաս նորէն հայերէնը կը դառնակոր, այսինքն՝ հայերէն վարժութիւն է ըրեր արդէն, մեր մօտ միշտ հայերէն կը խօսինք արդէն:

- *Ուզում եմ հասկանալ, ի նչու ձերոնք այդքան տառապանք կրեցին, տեսնում էք՝ հայերին ջարդում են, սպանում են, էդ գիւղում թաքնուած հայեր են, կը գայ ժանդարներ՝ թաքնուած էք, յետոյ եկաք Ստամբուլի մէջ՝ ամէն գնով փորձում էիք թաքցնել ձեր ներկայութիւնը՝ իբր չկաք, բայց*

կաք իրականում: Երբեք չուզեցի՞ք վերջ տալ այդ տառապանքին: Թուրք դառնալ, թուրք լինել:

- Չէ: Արժանապատուութեան հա՞րց է արդեօք, չեմ գիտերկոր: Բայց երբեք աս մասին չեմ մտածեր, այսինքն՝ ուրիշ տեսակ ըլլալն ալ չի մտածեցի: Հաւանաբար կրօնափոխ եղողները հանգիստ եղան: Ուրիշ բան ըսեմ ձեզի ան ատեն, պապաս կը պատմէր ադ պատմութիւնը: Մէկը կար, որ Հաջի էր անունը եւ իսլամացեր էր: Հիմա աստեղը պիտի ամուսնանայ, մուսուլմանները աղջիկ չեն տարկոր, եւ ինքը Արժանթին գաղթեր է: Արժանթին ալ իսլամ եղած դէյին (ասելով – Հ.Խ.) աղջիկ չեն տար, քրիստոնէայ եղեր է, բայց հայերը նորէն ալ իրեն թուրքի տեղ դրած՝ աղջիկ չեն տար: Հիմա նոր ամուսնացեր է, տուն կազմեր է, բայց շատ դժուարութիւնով: Ան ալ կայ, որ եթէ դու նոյնիսկ ուզենաս թուրք դառնալ, անոնք չեն թողնում: Անոնք արդէն կը յիշեցնեն: Քեզի միշտ հայ կ'ընդունեն, քո տեղդ վերջին տեղն է, եւ դեռ քանի սերունդ: Ամէն մարդ կ'իմանայ ծագումդ: Թերեւս հայ մնալը անելի հեշտ է, քան թրքանալը: Միշտ գիտես, որ վտանգ կայ, կը յարմարիս վտանգին: Մենք արդէն աստեղը բնաւ չենք թաքնուեր, եթէ թաքնուենք, ասի անելի վատ է: Օրինակի համար եթէ մէկ տեղ բազմութիւն ըլլայ, անպայման հայ ըլլալնիս կ'ըսենք: Արդէն թուրքերուն մէջ ասանկ անեկդոտ մըն ալ կայ, մէկուն հայ ըլլալուն եթէ հասկնաս, արդէն ինքը կ'ըսէ: Կ'ըսենք: Մեզի պէս մարդերը շատը արագ կ'ըսեն անմիջապէս: Հիմա արդէն վարժուած ենք անանկ բաներու. մենք՝ հայերը քիչ մը տարբեր ենք. ամէն տեսակ նեղութիւններ տեսած կանք, ամէն տեսակի կը համակերպուենք:

- Դուք ե՞րբ իմացաք հայերի ցեղասպանութեան մասին:

- Հետաքրքիր հարց մըն է ասի: Հիմա ես լիսելի առաջին դասարան էի, օր մը գրականութիւն մը կը կարդանքկոր, կը կարդայինքկոր՝ ան 15ին մահացեր է, միւսը 15ին մահացեր է, մեր ընկերներէն մի մասը կ'ըսէր որ՝ արդէն ջարդին սպանեցին կ'ըսեն, մի մասը «ոչ» կ'ըսէր: Ետքը սկսանք ուսուցիչը քրքրել: «Պարոն,- ըսինք,- ինչու համար 15ին մեռեր է իշտէ Գրիգոր Զօհրապ, Դանիէլ Վարուժանը, աս, ան...»: Ըսաւ որ ադ թուականներուն շատ մեծ հիւանդութիւն մը եղաւ, ամէնը մեկէն մահացան» ըսաւ: Ասչափ, շրջանցեց: Մէկս միւսի՝ եալան սեօյիյոր, եալան սեօյիյոր՝ սուտ կ'ըսէ կ'ըսենք. մեր համար ասչափ լմնցաւ⁷²: Ես, չէիք կրնար խօսիլ ասանկ բան մը: Մեր ընտանիքին մէջն ալ չէին ըսեր: Շատ մեծ տղայ էի, համալսարանին շրջանաւարտ ըլլալ տարիքն էի, որ հայերին ցեղասպանութեան մասին իմացանք: Ասիկա շատ հետաքրքիր է, ո՞ր թուականն էր, մոռցայ ես, Իւ Թերնոնին⁷³ *Էրմէնի Թաքուսը* գիրքը էլաւ. ներողութիւն՝ ամէնէն առաջ՝ *Նենէմին Մասայլարը*, այսինքն՝ «Մեծ մայրիկիս պատմութիւնները», հեքիաթները: Ատանկ գիրք մը էլաւ, դիարբաքըրցի քուրդ մըն է, ասի կարդացի ես, զարմացայ, չի կրցայ դիմանալ ես. իրեն մեծ մայրիկը հայ է եղեր, սապէս կը սկսիկոր. «իմ մեծ

մայրիկէս իմացածները ձեզի պատմեմ, բայց ես շատ չեմ հաւատարկոր, դուք ալ հաւատալ պարտաւոր չէք, բայց ես հաւատացած եմ, ասոնք կը պատմեմ ձեզիկոր»։ Ետքը ամիջապէս կ'ըսիկոր՝ «Առտուն նախաճաշ ըրաւ, յետոյ կէսօրուան ճաշ պիտի ըլլայ»։ Քուրդերուն կ'ըսէկոր, իբրեւ առտու հայերին ջարդեցին, կէսօրին ձեզի պիտի ջարդեն։ Հայու լեզուով մը ասանկ կը լմնցնակոր. «մեզ առաւօտեան սպանեցին, ձեզ կէսօրին կը սպանեն»։ Ան թուականներուն դժուար էր ասանկ բան ըսել։ 80ական թուականներուն է, ես համալսարանին շրջանաւարտ եղած եմ, ամուսնացած եմ, մեծ մարդուն պէս եմ, ես աս գիրքը կարդալէն վերջ, աս գիրքը շատ տպաւորեցաւ, ազդեց։ Ամէն մարդ կը կարդակոր աս գիրքը, եւ ետքաբ ասի աս ինչ բան է, բոլոր հայերու հետ եղած է։ Տեղահանութիւն կ'ըսենք մենք, քստոր կ'ըսենք... հայրիկս կը խօսէր իշտէ։ Կ'ըսէր թէ սեֆերբելիք, սեֆերբելիքէն առաջ, սեֆերբելիք ալ քստոր ըսէր է, ըշտէ մեր գիւղին մէջ սեֆերբելիքը տեղահանութեան իմաստով գործ կ'ածուի Թուրքիոյ մէջ իշտէ քստորէն առաջ, քստորէն վերջ։ Ասի Դիարբաքըրին մէջը դալֆէ կ'ըսեն, մէկելը սեֆերբելիք կ'ըսէ, մէկելը ջարդ կ'ըսէ, մէկը քստոր կ'ըսէ. ամէն տեսակ բան կ'ըսեն։ Աս գիրքը կարդացի,- ալլահ, ալլահ, ասի մերին պատմութիւնին շատ կը նմանիկոր ըսի։ Վերջը Բու Թերնունին գիրքը ելաւ, *Էրմենի Թաքուսու*՝ գիրքին անունը, ֆրանսերէնէն թարգմանուած։ Կարդացի։ Ալլահ, ալլահ, կ'ըսեմկոր, ասիկա Գիւրունին մէջ եղած նիւթերուն եղած նոյն նմուշը եղեր է. Արաբկիր, Սասուն, ալլահ, ալլահ, ինչպէ՞ս կ'ըլլայ։ Բայց չէի մտածեր, որ ամբողջ տարածքներուն եղած է այդ բաները, հետաքրքիր բան մըն է։ Վերջը Թանըր Աքչամէն⁷⁴ գիրք մը ելաւ, անկէ վերջը հասկցանք, որ ցեղասպանութիւնը շատ լուրջ գործ մըն է եւ բոլոր աս սեֆերբելիք ըսուածը միայն մեր գիւղին մէջը չի եղեր, ամէն տեղը եղեր է... Բայց բան մը չգիտենք։ Ըսեմ քեզի, որ նորմալ է բայց։ Աս երկրին մէջ կ'ապրինքկոր, հո չես կրնար ամէն բան ասիլ։ Ես շատ կը սիրեմկոր աս երկիրը, ես շատ լաւ ընկերներ ունիմ, աս ալ ըսեմ քեզի, շատ լաւ թուրք ընկերներ ունիմք մենք։ Մենք հիմա պետութիւնէն հետոն ալ շատ լաւ լեզու կը գտնանք, որ մինչեւ... թերեւս մեռնենք։ Շատ ալ չեմ գիտերկոր, բայց շատ գիտնալ ալ պայման չէ, ասանկ պիտի ապրիս, ասանկ գուշակելն (կանխատեսումներ անել – Հ.Խ.) ալ պարտաւոր ալ չեմ։ Կեանքս աս է, քանի տարի է, որ ես անիկա մտածեմ թէ ոչ՝ հիւանդ կ'ըլլամ։ Բան մը ալ ըսիմ՝ հաստատ գիտեմ, որ թուրքերը նոյնպէս չէին գիտեր։ Եթէ մենք չգիտէինք, իրենք ինչպէ՞ս իմանային։ Հիմա ալ չեն գիտերկոր... Եւ հիմա ալ ոմանք կ'ապրինկոր, գիտեն որ իրենց մեծ հայրիկը ասանկ խնդիր ունի, հիմա անոնք ալ նոր կ'անդրադառնանկոր, որ ասանկ պատմութիւններ կան. իրանց ալ մեղք է։ Թալէաթ փաշային թողը իմին աներձագիս կիսն է, կ'ըսէկոր որ, իրար հետ յարաբերութիւն ունինք, կ'ըսէկոր, որ դուն ինծի հետ խօսք չես ուզեր (զրուցել – Հ.Խ.), չէ՞,

եւ Թալէաթ փաշային թոռն եմ, դուն ինձի չես սիրեր հաւանաբար կ'ըսէկոր: Աման, ինչու,- կ'ըսէմկոր,- ինչ կապ ունի, ինչու չսիրեմ: Ձեմալ փաշային թոռը՝ Հասան Ձեմալը հիմա մէջտեղ կ'ելլակոր, կը գրէկոր, աս ալ կը տեսնանքկոր, ասպէս մարդուն ալ կը տեսնանքկոր, հիմա չիմանանք աս մարդերուն արժէքն ալ, աւելի լաւ կը սեպուի, եթէ լռեն:

Շատ դժուար, շատ: Էսպէս բանի մը կը նայենք մէկ կողմէն, բայց միւս կողմը կայ դէռ: Մենք հիմա մեր գիւղին մէջ այլեւս տեղացի ենք, քանի որ գիւղին հողին տակն ալ արմատներ ունինք, ազգականներ ունինք այլեւս, անտեղը քանի հատ գերեզմաններ, անիկա գտնալ չ'ըլլակոր: Հիմա մենք գերեզմանները շինել տուինք ասկէ վեց տարի առաջ, բայց ասանկ ուղղահայեաց խաչ չ'դրինք⁷⁵, տապանաքարին վրայ խաչ դրաւ Մինասը: Հիմա երկու հատ գերեզման ունինք, մէկ հատին մէջ Պօղոս դեղէն կայ, մէկ հատն ալ Մայրամ հօրաքոյրս կայ, որ փախցուցած են, 25ին ծնած է, 44ին մահացեր է արդէն... մէկ հատ մը Սիրանուշ հօրքոյրը կայ, որ մէկ տարեկանին մահացեր է, Մայրամ հօրաքոյրն ալ՝ ան ալ ուրիշ է, ասի մէկ տարեկանին մահացեր է: Ասոնք մեր յիշատակներն են:

Շատ մը իսլամացած հայեր ունինք, փաստ է ասիկա, եւ իրենց հետ յարաբերութիւններ ունենալու դժուարութիւն կայ: Ասիկա նոր առաջացած խնդիր է: Ես իսլամ ազգականներ ունեմ, իմ հարազատներս են, բայց անոնք հայի խնդիր չեն դներ, քուրդ են, ալեւի են, աս են, ան են, բայց չեն կարեւորեր, չեն դժգոհեր: Հիմա Անաստուլուն եկան՝ կ'ուզեն, որ իրենց հայ ընդունենք: Եւ հայ են իրաւամբ: Ասիկա պրոբլէմ է: Կը կարծեմ, որ իրենք պիտի ջանք գործադրեն: Վերջապէս մենք ալ հայ մնալու համար շատ ջանքեր արեցինք: Օր մը, Հրանտ Դինքի մահանալէն վերջը, Իստամբուլին մէջ կազմակերպուեցանք, փոսին (գերեզմանատան – Շ.Խ.) մէջ մէկ շաբաթ հերթով գիշերները կեցանք: Օր մը մենք՝ «Մայեաթ-Նովա»ցի ընկերներ հոն կը կենայինքկոր, օրն ալ չէր լմնցած սասունցիներն ալ ուզեցան, որ նոյն գիշեր իրենք ալ մեզի հետ կենան: Հարկաւ՝ ըսինք, հրամմեցէք: Սասունցիների միութեան մէջ մէկ մասը իսլամացածներ, մէկ մասը քրիստոնէաներն են, եկան, իրար հետ կը խօսինկոր: Մենք ալ ըսինք, որ աղբարիկ, դուք հա՞յ էք: Հայ ենք,- ըսաւ մին, միւսները՝ մենք ալ հայ ենք: Հիմա գիտենք, որ մէկը հայ է, միւսները իսլամացած են, էս մէկ հայը՝ «ես իսլամացած հայ եմ» ըսաւ: Կը խօսենքկոր: Ըսաւ այո, դուք շատ տանջուեցաք, բայց ըսաւ, հայ ըլլալով մնացիք, մենք իսլամացած մնացինք, բայց մերին ինքնութիւնը շատ դէֆորմ (այլափոխուեց – Շ.Խ.) մը եղաւ, ըսաւ, մերին վիճակը շատ աւելի դժուար է ձեզմէ ըսաւ:

- Ինչո՞վ է դժուար:

- Չեմ գիտերկոր, բայց ըսաւ, որ շատ դժուար վիճակին մէջ ենք մենք ըսաւ, մերին ինքնութիւնը՝ հիմա մենք մուսուլման ենք՝ մուսուլման ենք, հայ ենք՝ հայ ենք, բայց ոչ մէկուն չենք կրնայ ասիկա բացատրել, չենք ալ կրնարկոր մեր ինքնութեան հետ համակերպուիլ: Բայց իրենք մեզի հայ կ'ըսենկոր, իսկ իրենք իրենց հեռուէն հեռու կ'ըսեն, որ կրօնափոխ մուսուլմաններ ենք, համա իրենց չեմ կարծեր որ հայ ըսեն: Իրենց մէջը աս կոխը կ'ենին ըստ ինձի:

- *Այս կրօնափոխների հայ համարուելու համար մկրտուածութիւնը նախապայման է:*

- Այո: Սփիւռքահայութեան մէջ մկրտուած ըլլալը նշան մըն է: Խորհրդանշան մըն է, անոր համար, որովհետեւ մենք պետութիւն չունինք, մենք եկեղեցիին հետ կապուած ենք, եկեղեցիին անդամ ըլլալու համար ալ մկրտուած ըլլալ պէտք է: Նոյնիսկ այժիստ ըլլալու դէպքում: Եկեղեցին է մեզի համախմբողը: Հիմա՝ հետաքրքիր բան մը: Ես Հայաստան կ'երթամկոր, կը նայեմկոր, որ մեր տղաքը, ընկերները, հէջ մէկը եկեղեցիին հետ կապ չունի: Եկեղեցին Հայաստանում ուրիշ բան է, հոս՝ այլ բան է: Եկեղեցին հոս միայն կրօն չէ, հայկական կեանքի կառուցուածքի կարեւոր մաս մըն է: Մերին հայկական կեանքը եկեղեցիի շուրջ կը դառնայ: Երեւանում Զէյթունին մէջ եկեղեցի մը կայ, Քանաքեռին մէջ ալ եկեղեցի կայ, բայց պատ⁷⁶ չիկայ: Պատ չիկայ: Մեր եկեղեցիները միշտ պատ ունին, գիտե՞ք, աստեղները, այսինքն՝ սա տեղը, պատին ներսը պիտի հաւաքուենք, պատին մէջ պիտի քննարկենք բաներ, որ դուրսը չենք քննարկիր: Պատին ներսն է հայութիւնը: Իսկ իսլամները չեն կրնայ եկեղեցի, պատին ներսը ըլլալ:

- *Դուք, որ քրիստոնէայ մնացիք, ամէն ջանք արեցիք կրթութիւն ստանալ: Իսլամ հայերի մէջ կրթութիւնը ինչպէ՞ս է:*

- Իսլամ հայերին մէջ կրթութիւնը նորմալ, երկրի գնացքին (ընթացքին – Հ.Խ.) հետ հաւասար է ըստ իս: Ուսանողներ ալ կան, տգետ մնացողներ ալ կան, ինչպէս թուրքին հետ համեմատութեան՝ հաւասար են ըստ ինձի: Քրիստոնէայ հայերի ուսանելու բանը աւելի շատ է, ան ալ ուրիշ ձեւի բան մըն է ձեզ ըսեմ: Օրի օր արհեստը մեր ձեռքէն կ'երթակոր, որովհետեւ մեր տղաքները կ'ուսանինկոր, մենք արհեստաւոր ժողովուրդ էինք, արհեստը մեր ձեռքէն կ'երթակոր բայց:

- *Թու՞րքն է հիմա զբաղեցնում այդ տեղը:*

- Քուրդը աւելի ճիշտ: Որովհետեւ արեւելքէն խախտեցին (շարժուեցին, գաղթեցին – Հ.Խ.) եւ հիմա քուրդը արհեստին մէջ աւելի առաջացաւ: Մեծ շինարարութեան համար էլ եթէ ըսենք՝ դարձեալ քուրդերը: Առաջացած շինարարական ֆիրմաներին շատերը քուրդերն են, անոնց բանուորներն ալ շատը քուրդեր են: Հիմա Իստամբուլում շինարարութիւն է եթէ, հարիւրէն՝ 80 տոկոս բանուորները քուրդեր են:

Վեց յարկանին տունին համար չեմ ըսերկոր, անոնք ամեն ոք կրնայ ըլլալ, հայ ալ կրնայ ըլլալ, Բայց մեծ ֆիրմաները քուրդերն են շատը:

- *Հիմա էս սասունցիների խնդիրը, որ եկել են. դուք բոլորդ՝ ստամբուլահայերդ, այն՝ 50ականների եւ աւելի շուտ եկածները շատ էլ մօտ չեն թողնում սասունցիներին հայկական գործերին:*

- Հիմա ուրիշ տեսակ ըսեմ: Ինչպէս պոլսահայերը չհանեցին մերիններին, մերինն ալ չհանեցին, որ սասունցիները մաքրեն: Հիմա ալ սասունցիները չեն արտօնիր նոր եկողներուն: Ասիկա, չնայած հայկական միջավայրի վիճակ է, Բայց առհասարակ ենթակայ է Իստամբուլի կանոններուն: Հիմա դժբախտաբար աս Իստամբուլը շատ վատ բիզնէս է արդէն, իրեն խաղը ինքը կը կերտէկոր արդէն, իրեն մէջ ապրող ժողովուրդը իր մէջը կը հալեցնէկոր, եւ դժբախտաբար աս սասունցիները պոլիսեցի դարձան: Մի մասը՝ երբեմն մեզի պէս ընդդիմադիր կեցողները անոնց կը քննադատենկոր,- դուք ինչու էք Պոլիսը: Ես մէկ հատ մը ծանօթ ունիմ սասունցի՝ շատ աղուոր հայերէն կը խօսիկոր, Բայց ես կը կարծէի, որ հայերէն չի գիտեր: Օր մը պատմեց Մասունին պատմութիւնը եւ անանկ աղուոր հայերէն կը խօսի եղեր որ, Մասունի հայերէնը, բարբառը: Բայց սովորաբար իրենց Մասունի բարբառը չեն գործածերկոր, իբրեւ թէ ամօթ է: Թուրքերէն կը խօսեն: Բայց ամօթը այն է, որ հենց որ գործածեն՝ բոլորը իրենց պիտի արհամար[հ]են: Ես քաջալերեցի, որ իրենք հայերէնը խօսեն:

- *Ես էնպէս զգացողութիւն ունեմ, որ սասունցին հիմա խնդիր ունի, որ ուզում է պոլսահայութեանը ապացուցել, որ ինքը հայ է:*

- Հա, դժբախտաբար աւելի վատը՝ իստամբուլահայ է: Կ'ըսենք, որ հայերէն չգիտեն, հայ չենք սեպէ իրեն: Բայց դրամ ունեցանէ՛ չենք նայի՝ հայերէն գիտի, չգիտի, անմիջապէս հայ է՝ եթէ ինք ուզենայ հայ ըլլալ: Յուցամոլութիւն կայ, դրամի ցուցամոլութիւն: Իմին համայնքին մէջ է աս, ցուցամոլութիւնը հային համայնքին համար է, թուրքին համար չէ: Պրիստիժը (պատիւը, հեղինակութիւնը – Հ.Խ.) դրամն է, որքան որ. հիմա եթէ նայէքկոր մեր թաղականներուն՝ ամէնը շատ հարուստ մարդեր են, շատ փող ունենաս՝ կ'ընտրուիս: Հիմա որ շրջանաւարտ կ'ըլլանք մեր դպրոցներու, քսան տարի մեր միութիւնին կը ծառայենքկոր, իշտէ մի կողմ ալ կ'աշխատենքկոր: Ան էլ կայ որ, քսան տարի փող աշխատեր է, համայնքի գործերուն չի օգնել, ոչինչ չի արել, քսան տարիէն վերջը կու գակոր ատենապետ կ'ըլլակոր: Առանց մերին ներքին գործերէն, անցուդարձերէն տեղեակ ըլլալու, կու գակոր, անկէ վերջը կը սկսիկոր սովորիլ: Ադ մարդը հեշտութեամբ դրամ կը հաւաքի: Դրամ հաւաքելը շատ կարեւոր է: Ինքը նոյնիսկ իրեն դրամը չի տար, ես երթամ հիմա մէկուն ըսեմ, որ սա չափի դրամ տուր, բան պիտի դնենք, ինձի չի տար, Բայց անոր կու տայ: Ի վերջոյ ադ դրամն ալ իրեն աւելի դիւրութեամբ կու տան: Նոյնն է սասունցիներու համար: Կը հարստանայ, կը գայ մարդը՝

հայ կ'ուզեմ համարուիլ: Փող ունիսնէ՝ անմիջապէս հայ ես, հրամեցէ՛ք: Փող չունիս՝ ապացուցի՛ր հայ ըլլալդ: Միշտ կը խօսիք այս նիւթին վրայ, բայց միշտ "ժամանակ չիկայ", հիմա, հենց հիմա այս գործը պիտի լմննայ, գործն ալ ադ մարդը աւելի դիւրութեամբ կ'ընէ: Բայց "ժամանակ չիկայ" ասելով, մենք շատ սուղ կը վճարենք անիկա: Աս մարդիկը ետքը կը թելադրեն, իսկ մէջը հոգի չիկայ, մեծ ծրագիր չիկայ:

- *Ձեր գաւակները պիտի այստե՞ղ ապրեն:*

- Անպայման: Ես չեմ ուզեր որ ուրիշ տեղ էրթան: Հոս պիտի ապրենք, ամէն ինչ պիտի անեմ ես ատոր համար:

- *Ձեզի համար կարեւո՞ր է, հայի հետ կ'ամուսնանան, թէ՞...*

- Այո: Ամէն բանին մէջ ես կրնամ թոյլ վարուիլ, բայց անոր մէջ՝ չէ: Անպայման: Գիտեն, անոնք ալ գիտեն:

ՍՈՑԻԱԼԻՍՏԸ. «ՎՐԱՑԻ ԵՄ, ԹՈՒՐՔ ԵՄ, ՀԱՅ ԵՄ,
ԱՅՍԵՂ՝ ՔՈՒՐԴ ԵՄ. ԵՍ ԿՈՄՈՒՆԻՍՏ ԵՄ»

2011ի ամռանը Դերսիմի Ջիւրիզի գիւղում հարսանիք կար, որին, իմ խնդրանքով, հրաւիրել էին նաեւ ինձ: Ջիւրիզին խիստ բարձր լեռնային ալեւիական փոքր գիւղ է, որի բնակիչներից 70 մարդ գոհ է գնացել 1938ի ջարդերին: Հիմա, այն Դերսիմի դատարկուած գիւղերից է, որտեղ երբեմն-երբեմն, ոստիկանների թոյլտուութեամբ, նախկին բնակիչները եւ նրանց ժառանգները կարող են այցելել ծիսական պահանջների դէպքում: Հարսանիքը այդ պահանջներից մէկն էր, եւ հիմա հարսանիքի առիթով նախկին ջիւրիզեցիներից շատերն էին Ջիւրիզի եկել՝ հարսանիքին մասնակցելու: Ջիւրիզի գիւղից յստակ երեւում է Դերսիմի հայերի համար սրբազան Սուրբ Լոյս (Մըլիս) լեռը, եւ հարսանքաւորներից շատերը, իմանալով հայ լինելս, սիրալիր պատմում էին Մըլիսի կարեւորութիւնը հայերի համար եւ Մըլիսի «հրաշագործութիւնների» մասին: Ինձ մօտեցաւ միջին տարիքի միջահասակ, ժպտադէմ մի տղամարդ եւ թրթրէնով հարց տուեց.

- Հա՛յ էք, Հայաստանի՞ց էք: Էրմա՞նի ետլդաջ:
- Այո, - ասացի, - դու՞ ք:
- Վրացի եմ, Արդուի՞նից:
- Վրացերէն գիտե՞ք:
- Չգիտեմ:
- Արդուի՞նից Դերսիմ հարսանիքի համա՞ր էք եկել:
- Ես Անկարայից եմ եկել, այնտեղ եմ ապրում:
- Վրաստանում երբեւէ եղե՞լ էք:
- Չէ, ես չեմ եղել, բայց որդիս այնտեղ է սովորում: Ես այստեղ քուրդ եմ:

- Ո՞նց այստեղ քուրդ էք: Դուք վրացի էք, բայց այստեղ Չեզ քու՞րդ էք ներկայացնում:

- Ես Արդուի՞նում վրացի եմ, Անկարայում թուրք եմ, այստեղ քուրդ եմ, Համշէնում հայ եմ: Քրդերի մէջ քուրդ եմ, հայերի մէջ՝ հայ եմ: Ես կոմունիստ եմ:

- Կոմունի՞ստ էք: Իսկ այստեղ ալեւի չե՞ք, միայն քու՞րդ էք:

- Չէ, ալեւի չեմ, ես Արդուի՞նում սուննի մահմեդական եմ (այսինքն՝ չի կարող ալեւի լինել - Հ.Խ.), բայց կրօնի հետ գործ չունեմ, ես կոմունիստ եմ, աթէիստ եմ: Կրօնն իմ կեանքում դեր չունի: Ես շատ հայ ընկերներ ունեմ: Անունս Մամմադ Օզար է: Ես կոմունիստ եմ, ու ինձ համար ազգութիւնը ոչ մի նշանակութիւն չունի: Ստամբուլում ես Հրանտ Դինքի հետ ընկերութիւն էի անում, շատ հայերի հետ եմ ընկերութիւն անում: Կիսս էլ Հոսայից է, համշէնահայ է:

- Ձեր կինը կոմունիստ չի՞: Նա իրեն հայ է համարում:
- Այո, նա հայ է: Աղջիկս էլ իր մօր նման հայ է, իրեն հայ է համարում: Տղաս էլ իրեն վրացի է համարում, ու Վրաստանում է սովորում:
- Տղադ վրացերեն գիտի՞: Ի՞նչ լեզուով է Վրաստանում սովորում:
- Անգլերեն: Վրացերեն չգիտի, բայց իրեն վրացի է համարում:
- Իսկ կինդ հայերեն գիտի՞:
- Այո, Համշենի հայերենը: Աղջիկս էլ գիտի, մօրից է սովորել:
- Արդուին գնու՞մ էք:
- Այո, լինում եմ: Այնտեղ շատ ընկերներ ունեմ: Արդուինում շատ վրացիներ կան, սուննի մահմեդական են:
- Արդուինում վրացիներդ բոլորդ ձեզ վրացի՞ էք ասում:
- Չէ, թուրք ենք ասում: Սուննի մահմեդական են:
- Բայց դուք ձեզ վրացի՞ էք ասում:
- Այո, ես վրացի եմ ասում: Արդուինում ես վրացի եմ:
- Արդուինի վրացիներն է՞լ են ձեզ վրացի ասում:
- Այո, ինձ վրացի են ասում, քանի որ ես ինքս ինձ վրացի եմ ասում:
- Արդուինում հայերի հետ է՞լ էք ընկերություն անում:
- Արդուինում հայ չի մնացել, հայ չկայ Արդուինում: Արդուինից մինչև Էրզրում շատ հայկական եկեղեցիներ կային, հիմա էլ կան, չորս հատ եկեղեցի կայ: Բայց հայ չի մնացել: Հայերին բոլորին սպանել են:
- Ե՞րբ էք կոմունիստ դարձել: Քանի՞ տարի է, որ կոմունիստ էք:
- Տասնվեց տարեկանից կոմունիստ եմ: Արդեն 35 տարի կոմունիստ եմ:
- Տանը, ընտանիքում ի՞նչ լեզուով էք խօսում:
- Թուրքերեն: Բոլորս էլ թուրքերեն ենք խօսում:
- Իսկ քրդերի հետ տ: Ասում էք, որ այստեղ քուրդ էք:
- Թուրքերեն: Ցաօք քրդերեն չգիտեմ: Աղջիկս է սովորել քրդերեն Անկարայում: Մենք այնտեղ շատ քրդերի հետ ենք ընկերություն անում:
- Անկարա ի՞նչու էք գնացել ապրելու: Այնտեղ կոմունիստների համար աւելի՞ լավ է:
- Անկարայում շատ գեղեցկուհիներ կան,- ասում է կատակով:
- Ձեր զուակներն է՞լ են կոմունիստ:
- Այո, նրանք էլ կոմունիստ են:
- Բայց կոմունիստ լինելը չի խանգարում, որ նրանք վրացի կամ հայ լինեն:
- Այո, չի խանգարում: Բայց կոմունիստի համար ազգությունը կարևոր չի:
- Թուրքիայում՝ Դիարբեքիրում, Արդուինում, Անկարայում, Ստամբուլում, այստեղ՝ Դերսիմում, կոմունիստների համար որտե՞ղ է աւելի լավ:

- Ամեն տեղ էլ կան կոմունիստներ, բայց մի մասը գործ անող է, մի մասը ուղղակի հայեացքներով կոմունիստ է: Թուրքիայում ամեն տեղ նոյնն է:

- *Ձեր գաւակներն ի՞նչ տեսակ կոմունիստ են, գործ անող, թե՛ հայեացքներով:*

- Տարբեր են: Աղջիկս պատմութիւն է ուսումնասիրում, հայերի պատմութիւնը: Նա գիտի Դէր Զօրի, Վարուժանի, Վարդանեանի, Կոմիտասի, Ասլամազեանի մասին: Նա ինքնութեամբ հայ է: Նրա կոմունիստ լինելը կոմունիստներին հաւատալն է:

- *Թուրք կոմունիստներն ի՞նչ են ասում, ինչպե՞ս են գնահատում հայերի Յեղասպանութիւնը: Ինչ որ ծրագիր ունեն՞ այդ հարցի հետ կապուած:*

- Կոմունիստները «Սէյքիբիմ» են ասում: Շատ չեն խօսում այդ մասին: Բայց կոմունիստների մէջ շատ հայեր կան:

- *Ձեր՝ կոմունիստական ծրագրում հայերի Յեղասպանութեան մասին որեւէ բան կա՞յ:*

- Չէ, ծրագրում չկայ: Մենք դա չենք քննարկում:

- *Իսկ թուրք կոմունիստների մէջ ազգայնականներ չկա՞ն:*

- Կան, ինչպէս չկան, ազգայնականներ ամեն տեղ կան: Չէ՛ որ սա Թուրքիան է:

Այս երկխօսութիւնը ինձ համար շատ անակնկալ չէր, որովհետեւ Դերսիմում եւ շրջականերում՝ Երզնկա, Խարբերդ, Սեբաստիա...յաճախ էի հաղիպում մարդկանց, ովքեր դժուարութիւն ունէին իրենց ազգային ինքնութիւնը ձեւակերպելու եւ յաճախ էին իրենց համար թուացեալ համաշխարհային՝ ընդհանրական գաղափարական ինքնութիւն ընտրում: Իմ գրուցակիցներից մէկ ուրիշի՝ Կըզըլքիլիսեում (ներկայիս Նազիմիյէ) ապրող սոցիալիստի դատողութիւնները այս հարցի շուրջ զգալիորէն արտայայտում են այս կարգի կողմնորոշումները, ուստի համառօտ ներկայացնում եմ այն.

«Ես անձնագիր չունեցող մարդ եմ: Տաս տարի բանտերում եմ եղել, հիմա էլ անձնագիր չեն տալիս: Այստեղ կ'ասեն հայ եմ, ալեւի եմ, քուրդ եմ, կըզըլքաշ եմ, տարբեր բաներ կ'ասեն, բայց բոլորին միաւորողը մի բան է՝ սոցիալիստական հայեացքները: Եւ այդ հայեացքների տարածուածութեան հիմքում մի բան է ընկած՝ բոլոր դերսիմցիները ճնշուած են պետութեան կողմից: Այստեղ անարդարութիւնները տարբեր են, թե՛ ազգային, թե՛ կրօնական, թե՛ տնտեսական: Այդ անարդարութիւններն են ձախ հայեացքների ձեւաւորողը: Դերսիմը, կարելի է ասել, ձախական է: Իմ պապերն էլ հայ են եղել: Եթէ ես սոցիալիստ չլինէի, կ'ասէի՝ ես էլ հայ եմ: Բայց ես սոցիալիստ եմ, նախ եւ առաջ՝ սոցիալիստ եմ: Կրօնն ինձ համար որեւէ դեր չունի, բայց եթէ

հարցնեն՝ կ'ասեմ ավելի եմ, որովհետեւ ավելիները ճնշուած են: Իհարկէ քրիստոնէականներն էլ են ճնշուած: Բայց քանի որ ես արդէն ավելիների մէջ եմ, կ'ասեմ՝ ավելի եմ: Որովհետեւ եթէ ասեմ քրիստոնէայ եմ, նախ՝ չգիտեմ քրիստոնէական ուսմունքը, երկրորդ՝ ես այստեղ, Դերսիմում, կ'ունենամ ճնշուածութեան մի քանի մակարդակ. հայկական, քրիստոնէական ճնշուածութիւն, որով պիտի տարբերուեմ ընդհանուր դերսիմցիներից, նաեւ դերսիմական ճնշուածութիւն, քանի որ բոլոր բնիկ դերսիմցիները ճնշուած են նաեւ դերսիմցի լինելու բուն փաստով: Արդիւնքում իմ ճնշուածութեան տեսակը պիտի տարբերուի Դերսիմի ընդհանուր բնիկ բնակչութեան ճնշուածութեան տեսակից: Իմ խոր համոզմունքով մենք բոլորս էլ այստեղ՝ Դերսիմում, եւ բոլոր ճնշուածները Թուրքիայում նոյնն ենք՝ «ճնշուածներ»: Ուրեմն ի՞նչու ինձ որպէս հայ ճնշուած զգամ, եթէ դրանով պիտի տարբերուեմ Դերսիմի ընդհանուր բնակչութիւնից եւ դրանով պիտի գատուեմ: Մենք այստեղ դերսիմցի ենք եւ սոցիալիստ: Սա է մեր ինքնութիւնը: Ինչ վերաբերում է Դերսիմի հայութեանը, այստեղ համարեա մարդ չէք գտնի, որ հայկական արիւն չունենայ: Մենք իրականում մի ընդհանրութիւն ենք, ծագումով՝ հայ-ավելիական, պետութեան կողմից ճնշուած եւ դրա դէմ պայքարող: Ժամանակին իմ պապերը պայքարել են որպէս հայեր: Մեր տոհմը մինչեւ [19]38թ. հայութիւնը պահպանել էր, եւ [19]38ին հետապնդուել է հենց հայ լինելու համար: Մերոնք Կաղնուտ⁷⁷ գիւղից էին: Կաղնուտում բոլորն էլ հայեր են եղել: Ամբողջ Դերսիմն այդ մասին գիտի: Նոյնիսկ Կաղնուտի ավելիները անելի վաղ ավելիացած հայեր են եղել: Մերոնք կռուել են: Մեր գիւղը շատ յայտնի է իր դիմադրութեամբ: Մեր տոհմը [19]38ին լրիւ սպանուել է, 99 տոկոսով, միակ մարդը, ով մնացել է, հայրս է: Հայրս փոքր երեխայ է եղել, իրեն թաքցրել են: Հայրս տեսել է, թէ ոնց իր հօրեղբայրը, հայրն ու մայրը մի ամբողջ օր իրենց տունը կարողացել են պաշտպանել զինուորներից: Պաշտպանել են մինչեւ փամփուշտները լրիւ վերջացել են, զինուորները եկել գրաւել են այդ տունը, բոլորին սպանել են: Վառել են: Այդ տունը լրիւ կրակի մէջ է եղել, լրիւ, լրիւ... Կաղնուտում մնացած հայերը ավելիացել են [19]38ից յետոյ: Դրանից յետոյ հայրս մի կերպ մեծացել է: Ես ու եղբայրս ենք հիմա էլ կռում, գաղափարների կռումով ենք կռում: Մեզ ձերբակալել են: Նստել ենք: Բանտ ենք նստել: Եղբայրս տասը տարի նստել է: Ալելիների մէջ շատ տարբեր հայեացքների մարդիկ կան, դրա համար նոյնպէս ես չեմ ուզում ինձ ավելի անուանել: Որովհետեւ ես ընդհանուր եմ սոցիալիստ ավելիների հետ, ոչ բոլորի: Յետոյ էլ ավելիները յաճախ են ասում, որ իրենք էլ են մահմեդական: Բայց մենք մահմեդական չենք, մենք արեւն ու ջուրն ենք պաշտում: Ես մահմեդական չեմ: Ես մեր տոհմի ողջ պատմութիւնը, ապուպապերիցս սկսած, գրի եմ առել: Հայրս պատմել է, ես գրել եմ: Ուրիշներին էլ եմ հարցուփորձ արել»:

Դերսիմում ես որոշ այլ կաղնուտցիների նոյնպես հանդիպեցի: Նրանց պատմածների համաձայն նախկինում վարչականօրէն Խոզաթին ենթարկուող կաղնուտցի հայերը գիւղից հեռանում էին դեռևս ՄԹ. դարավերջին, շատերն անցել են Սասուն: Կաղնուտցիներից է ձեւաւորուել Դերսիմի Քարաքոչ գիւղը: Այժմ Կաղնուտում ապրողներ կան, բայց մեծ մասը ցրուել են:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ ՄԹ. Այս հատորով աւարտին կը հասնի *Հայկազեան Հայագիտական Հանդէսի* ԼԳ. եւ ԼԴ. հատորներուն մէջ այս նիւթով հրապարակումներու ծրագրեալ շարքը: Յառաջիկային այս ամբողջութիւնը, վերամշակեալ, առանձին հատորով լոյս պիտի ընծայուի:
- ² Martin Van Bruinessen, “Genocide in Kurdistan? The Suppression of the Dersim Rebellion in Turkey (1937-38) and the Chemical War Against the Iraqi Kurds (1988)”, էջ 6, 7 (http://www.hum.uu.nl/medewerkers/m.vanbruinessen/publications/Bruinessen_Genocide_in_Kurdistan.pdf):
- ³ Անդ, էջ 8-9:
- ⁴ «Բ. Դարի Միջնադար (Իսլամացում, Իսլամացած, Ալեւիացած, Ծպտեալ Հայերը Թուրքիայում)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԴ.*, Պէյրուի, 2014, էջ էջ 505-506:
- ⁵ Ismail Beşikçi, *Tunceli Kanunu (1935) ve Dersim Jenosidi (1935) Թունջելիի օրէնքը եւ Դերսիմի ցեղասպանութիւնը*, Istanbul, Belge yayinlari, 1990:
- ⁶ Արժի յիշել, որ ԽՍՀՄում նոյնպէս մինչեւ 1960ականները՝ Խրուշչեւեան «ձնհալի» շրջանը Հայկական Յեղասպանութեան մասին ոչ միայն գրել եւ հրատարակել, խօսել անգամ չէր կարելի: Այդ մարդիկ ոչ թէ բանտերում էին յայտնուում, այլեւ գնդակահարում էին: Բանաւոր յիշողութիւնը մնում էր ընտանիքների ներսում եւ նոյնիսկ այդ տարբերակով էր ճնշում, քանի որ մարդիկ պարզապէս վախենում էին իրենց երեխաներին պատմելով՝ նրանց վտանգների ենթարկել: Սասունի փախստականներից Թալինի Ահազի գիւղում ապրողների մասին սասունցի Պօղոս Գրիգորեանը գրում է. «բոլշեւիկեան բռնապետութեան դաժան տարիներին, վախի ու սարսափի մէջ լեզուները կաս պարծ ապրեցին, քշախօս դարձան, գոմերի մէջ քնեցին, իրենց տառապանքները, հոգսն ու ցարը աւելի շատ անասունների ու լծկան եզների հետ կիսեցին, քան ընտանիքի անդամների ու հարեւանների հետ» (Պ. Գրիգորեան, *Անպարտ Սասուն, Մարտնչող Շէնիկ*, Երեւան, «Լուսակն», 2012, էջ 44): Աւելի ուշ, մինչեւ ԽՍՀՄ կազմալուծուելը, կարելի էր գրել զգալի վերապահութեամբ, միշտ շրջանցելով խորհրդային դարձած Ռուսաստանի նիւթական (զինամթերք, դրամ) եւ բարոյական օժանդակութիւնը քեմալական Թուրքիայի իրականացրած հայկական ջարդերին, եւ, իհարկէ, լրել 1920ի հայթորքական պատերազմի եւ 1921ին արդէն խորհրդայնացած Հայաստանի բնակչութեան կոտորածների մասին: Միայն Ալեքսանդրապոլի Գաւառում

քեմալականների 1921ի թողած «ժառանգութեան» վերաբերեալ Ապրիլ ամսի ՀայՅեղհոմի Յանձնաժողովի ստուգումը պարզել էր. «Մպանուածներ - 60.000, սովից մահացածներ - 34.000, բռնաբարուածներ - 50.000, որից 20.000 աղջիկներ, գերուել են 8000: Տարուել են խռչոր եղջերաւոր անասուն՝ 80.000 գլուխ, մանր եղջերաւոր՝ 25.000 գլուխ, ողջ գիւղատնտեսական մթերքները եւ տեխնիկան» (Կտրիճ Սարգարեան, «Հայաստանում Սովետական Իշխանութիւնն Ամրապնդելու Միջոցառումները», *Հրաբեր Հասարակական Գիտութիւնների*, 1986, #3, էջ 25-26 ([http://raber.asj-oa.am/4524/1/1986-3\(21\).pdf](http://raber.asj-oa.am/4524/1/1986-3(21).pdf))): Յատկապէս մինչեւ Ստալինի մահը՝ 1953, այդ մասին գրել չէր կարելի կամ գրելու դէպքում պարզապէս չէր հրատարակուի. ԽՍՀՄում տպագրութիւնը պետութեան բացառիկ իրաւունքն էր եւ ոչինչ չէր հրատարակուում առանց «Գլաւլիտ» կոչուող հզօր կառոյցի թոյլտուութեան:

⁷ Van Bruinessen, էջ 3-4:

⁸ http://www.horizonweekly.ca/news/details/71581#.Vc_UUdO4w8U.facebook, Օգոստոս 14, 2015:

⁹ Մուշի իսլամացած հայերը՝ <http://hayernaysor.am/%D5%B4%D5%B8%D6%82%D5%B7%D5%AB-%D5%AB%D5%BD%D5%AC%D5%A1%D5%B4%D5%A1%D6%81%D5%A1%D5%AE-%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A8-2/>:

¹⁰ Թունջելի - Թուրքիայի նախկին Դերսիմի Նահանգի (այժմ՝ Թունջելի) կենտրոնը:

¹¹ Ալեւի - Ալեւիզմն իսլամական աշխարհում համարուում է շիիզմի ծայրայեղ աղանդաւորական ուղղութիւն: Համարուում է, որ ալեւիների կրօնական պատկերացումները խարսխուած են իսմայիլիզմի, շիիզմի, քրիստոնէութեան, նախաիսլամական կրօնական պատկերացումների, յունական փիլիսոփայական ընդհանրացումների վրայ: Ալեւի են Դերսիմի եւ յարակից տարածքների (Մուշ, Խարբերդ, Երզնկա, Մալաթիա, Էրզրում են.) զագախօս բնակչութեան մեծ մասը եւ նոյն տարածքի քրմանջիախօս քրդերի մի մասը: Դերսիմի ալեւիների մեծ մասը, ովքեր դատողութիւններ են անում ալեւիզմի մասին, պնդում են, որ ալեւիզմը կրօն չէ, այլ՝ «մարդասիրութիւն», «սէր աշխարհի եւ մարդկանց նկատմամբ»: Նրանք կրօնական որեւէ գիրք չունեն, սակայն կրթոտ սէր եւ պաշտամունք ունեն գրքի՝ առհասարակ, քրիստոնէական կրօնական գրքերի նկատմամբ մասնաւորապէս. կրօնական կառոյցներ չունեն, սակայն խիստ զգայուն պաշտամունքային վերաբերմունք ունեն Դերսիմում այժմ մեծ մասամբ ոչնչացուած հայկական քրիստոնէական եկեղեցիների եւ վանքերի եւ նոյնիսկ դրանց աւերակների նկատմամբ, եւ նոյնքան մերժողական վերաբերմունք՝ իսլամական ցանկացած՝ սուննիական կամ շիայական ուսմունքի եւ կրօնական կառոյցների՝ մզկիթի նկատմամբ:

¹² 1938ին Դերսիմի բնակչութեան կոտորածներից յետոյ, երբ ալեւիացան նաեւ Դերսիմում դեռեւս մազապուրծ բոլոր քրիստոնէայ հայերը, ինչպէս նաեւ հայերի ու ալեւիների համար դադարեցին կրօնական ծառայութիւնները հայկական եկեղեցիներում ու վանքերում, վերացուեցին կրօնական գրքերը, կենցաղից ամբողջովին դուրս մղուեց հայերէնը են., եւ դրան զուգահեռ տարբեր ձեւերով փորձեր արուեցին ներդնել սուննի մահմեդական կրօնական

աղօթատեղիները՝ մզկիթները (ջամի), ալեիների (այդ թուում՝ ալեիացած հայերի) առաջ կանգնեց սեփական, ոչ-քրիստոնեական, ոչ-մահմեդական, այլ՝ ալեիական կրօնական շինություններ ունենալու հարցը: Որպես կրօնական շինություններ հայկական եկեղեցիներն ու վանքերը ճանաչող մարդկանցից հաւանաբար մեծ ջանքեր պահանջուեց լուծում գտնել այդ հարցի համար: Առաջինը, ինչպէս ալեի զագաների մօտ յաճախ եղել է, «լուծում գտան» Կուրեշյան աշիրէթի մարդիկ. («Կուրեշյանցիները սէիդ են», «Տերսիմի գլխաւոր կրօնապետը Մէյիտ Իպրահիմ պէկն է, Կուրեշյանցիներու ցեղէն սերած» «Կուրեշյանցիներն առանձին ազգեցիկ ցեղ մ'են Տերսիմի մէջ, որոնցմէ գատ ուրիշներն իրաւունք եւ կարողութիւն չունին կրօնական լինելու»): Անդրանիկ, Ճանապարհորդութիւն Դէպի Տերսիմ, Թիֆլիս, 1900, էջ 152, 165-166): Ահա Կուրեշյան աշիրէթի ընտանիքներից մէկի՝ Կըզըլքանների (կըզըլքան՝ ոսկէ արիւն, գուցէ նաեւ՝ կարմիր արիւն - Հ.Խ.) նախաձեռնութեամբ 2002ին կառուցուել է Դերսիմի թերեւս առաջին ալեիական կրօնական կառոյցը՝ «Կուրեշ Բաբայի Օջախ» սրբավայրը, ներկայիս Նազիմիէից (նախկին Կըզըլքիլիսէ՝ Կարմրավանք կամ Կարմիր եկեղեցի) մօտ 20 կլմ. հեռավորութեան վրայ, ներկայիս Բոստանլը գիւղի մօտ: Կուրաշը ալեիների ժողովրդական ասանդազրոյցների հերոսներից եւ միաժամանակ սրբերից է, ում անյայտ մասունքը, բազմաթիւ մետաքսէ եւ ատլասէ կտորներով ծածկուած, գտնուում է «Կուրեշ Բաբա Օջախ»ի ներսի սենեակներից մէկում:

¹³ Հագրաթ Ալի, հագրաթ Հուսէյին - Ըստ իսլամական ասանդութեան Ալին Մուհամմէդի հօրեղբորորդին եւ միաժամանակ նրա դուստր Ֆաթիմայի ամուսինն էր, Հուսէյինը՝ սրանց կրտսեր որդին: Շիաները Հուսէյինին համարում են երրորդ իմամ եւ նրա զոհուելու օրը ողբում են յատուկ հանդիսաւորութեամբ (Աշուրա): Իմամ Հուսէյինը զոհուել է 680ին, Մեքքայից Կուֆա (քաղաք Իրաքի կենտրոնում, Եփրատ Գետի ափին, Բաղդադից 170 կլմ. հարաւ) գնալու ճանապարհին: Հուսէյինը Կուֆա էր մեկնում ժամանակի խալիֆ Եագիդ Ա.ի իշխանութեան դէմ ըմբոստութիւնը գլխաւորելու նպատակով (կուֆացիները հաւատարմութեան երդում էին տուել Հուսէյինին): Ճանապարհին Հուսէյինի հետեւորդների փոքրաթիւ խումբը շրջապատուում է խալիֆի մեծաթիւ զօրքերի կողմից: Չոհուում են շատերը, այդ թուում՝ Հուսէյինը, նրա երկու որդիները, նրա աւագ եղբայր Հասանի երեք որդիները եւն.: Հուսէյինի թոռան կտրուած գլուխը ուղարկուում է Դամասկոս՝ խալիֆ Եագիդ Ա.ին: Համարուում է, որ Հուսէյինի եւ նրա հետեւորդների ողբերգական մահը նպաստել է նրա հայր Ալիի հետեւորդների համախմբանը եւ ինքը՝ Հուսէյինը դարձել է ինչպէս շիիզմի խորհրդանիշը, այնպէս էլ իսլամական աշխարհի նշանաւոր դէմքերից մէկը: Դերսիմի ալեիներից շատերի տանը կարելի է հանդիպել Հուսէյինի դիմանկարը: Առհասարակ Հուսէյինի մասին պատմությունները Դերսիմի ալեիների ամենասիրուած եւ ամենայուզիչ պատմություններից են, սակայն նրանք իմամի մահուան օրուայ հետ կապուած շիաների նման որեւէ հանդիսութիւն, ողբի օր չունեն: Դերսիմի ալեիների մէջ ամենատարածուած անունները Ալի, Հուսէյին, Հասան անուններն են:

¹⁴ Բաբա - Ալեիները «բաբա» անուանում են տարիքով, յարգարժան մարդկանց:

- ¹⁵ Վարդենիկ – 1914ին Ռեսիդան արևիական աշիրէթի տիրապետութեան տակ գտնուող լեռնային Վարդենիկ Գիւղը Խոզաթի Գաւառակի գիւղերից էր, ունեցել է Ս. Աստուածածին անունով եկեղեցի եւ շրջակայքում հոշակաւոր Ս. Սարգիս եկեղեցի (Գեորգ Հալաջեան, *Դերսիմի Հայերի Ազգագրութիւնը*, հրատ. պատր. եւ խմբ. Դ. Վարդումեան, *Հայ Ազգագրութիւն Եւ Բանահիւստութիւն*, Հտր. 5, Երեւան, Հայկական ՄՍՀ ԳԱ Հրատ., 1975, էջ 35):
- ¹⁶ 1984-87ի ընթացքում Թուրքիայի արեւելեան նահանգներում, մասնաւորապէս Արեւմտեան Հայաստանի տարածքում քուրդ զինեալների դէմ պայքարի պատրուակով, թուրքական բանակի միջոցով 2400 գիւղ եւ 1500 գիւղակ ամբողջութեամբ կամ մասնակիօրէն դատարկուել է կամ ոչնչացուել, եւ տեղահանուել է շուրջ 3 միլիոն բնակչութիւն (Forced Evictions: Violations of Human Rights, Global Survey on Forced Evictions, No7COHRE, September 1998, www.cohre.org, pp. 65-69 (<http://www.jubileecampaign.co.uk/world/tur2.htm> . նաեւ՝ <http://www.dozame.org/villages/burnedvillages.htm> . նաեւ՝ The Wall Of Denial: Internal Displacement in Turkey, U.S.Committee for Refugee, November 1999, pp. 14-15; Asylum Seekers From Turkey: The Dangers they Flee, A Report to Asylum Aid (Report of a Mission to Turkey), 4-17 October 2000, p. 59. նաեւ՝ Turkey Human Rights Practices, 1993, Author: U.S Department Of State, January 31, 1994. նաեւ՝ R. Benninghaus, Production, Usage and Diffusion of the Shal of Shapik Men’s Costume in Turkish Kurdistan, 31 May 2001, <http://www.chaldeansonline.net/forums/ruediger-benninghaus.html>): Բնակչութեան տեղահանութիւնները եւ բնակիչների վերադարձն անհնար դարձնելու նպատակով գիւղերն ամբողջովին աւերելը շարունակուել է նաեւ 1992-1995ին: 1993-1994 աղետաբեր էին նաեւ Դերսիմի արևի եւ արևիացած հայ բնակչութեան համար, ովքեր ԺԹ. դարում թուրքական բանակի յաճախակի յարձակումների պատճառով թողել էին ցածրավայրային եւ նախալեռնային շրջանների իրենց բնակավայրերը եւ տեղաւորուել երկրի լեռնային մասերում: 1993-1994ին լեռնային բնակավայրերի ողջ բնակչութեանը զենքով եւ բանակի միջոցով ամբողջովին տեղահանեցին, իսկ բնակավայրերն՝ աւերեցին: Իրենց դարաւոր հայրենիքից վճռաբարձ բնակչութիւնը ցրուեց երկրով մէկ կամ հեռացաւ Թուրքիայից:
- ¹⁷ 1993-1994ի բռնի տեղահանութիւնից եւ բնակավայրերի աւերումից յետոյ դատարկուած եւ զինուորականների կողմից վերահսկուող բնակավայրերի նախկին բնակիչներն իրենց աւերուած բնակավայրերը գնում են սովորաբար ծիսական նկատառումներով՝ ուխտավայրեր կամ գերեզմանոցներ, յատուկ թոյլտուութեամբ: 2011ին ես ակնատես եմ եղել դրան:
- ¹⁸ Հայդարան - Արևիական աշիրէթ Դերսիմում: Ըստ Հալաջեանի, այս աշիրէթը «*համագործակցում էր Միրագեան տոհմի անդամների հետ եւ ծայրաստիճան հայասեր էր...*, ըմբոստ էին եւ խիստ թրքատեաց» (Հալաջեան, էջ 75): Մինչեւ այսօր մարդիկ պատմում են, որ Հայոց Յեղասպանութեան տարիներին Հայդարանները շատ են օգնել հայերին: Դերսիմում համատարած կարծիք կայ, որ Հայդարան եւ Դեմանան աշիրէթները «հայից արևիացածներ են» եւ 2011ին Դերսիմում աշխատելու օրերին համարեա միշտ, հենց իմանում էին հայ լինելս, բազմիցս խօսք են բացել այդ մասին:

- ¹⁹ Միրագեանների մասին տե՛ս՝ «Ի. Դարի Միջնադար», *Հայկազեան Հայագիտական Հանդես*, *Հտր. Լ.Բ.*, էջ 549, ծնթ. 31):
- ²⁰ Քարսան ալեիական լեռնային գիւղը մեկուսի գիւղ էր Բոլմերիի Գաւառակում, որին ամենամօտ գիւղը՝ Պաղըր Գիւղը հաւանաբար մօտ քսան կլմ. հեռաւորութեան վրայ էր: Քարսանը «Քարշան» ալեիական աշիրէթի կենտրոնական գիւղն էր (Հալաջեան, էջ 62):
- ²¹ Մոշիկ - հաւանաբար Մոշուտ Գետի անունից է Մոշիկ անունը: Մոշուտ Գետի եզերքին 1915ին տեղի է ունեցել Երզնկայի Գաւառի Կուրուչայի Գաւառակի Մեծ եւ Փոքր Արմտաններ, Թեղուտ եւ Ապուշտա գիւղերից տեղահանուած բնակչութեան սպանողը («Վերապրած Պետրոս Պրաճեանի Վկայութիւնը», *Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, Փաստաթղթերի Ժողովածու*, *Հտր. 3*, Երեւան, 2012, էջ 198): Այս հաւանականութեան հիմքում ընկած է նաեւ այն իրողութիւնը, որ 1915ի եւ 1938ի ջարդերի ընթացքում որտեղ հնարաւոր էր՝ սպանոյի վայրերը կրկնուել են:
- ²² Քրդական (կամ Քրդստանի) Աշխատաւորական Կուսակցութիւն - *Partiya Karkerên Kurdistan - PKK*, թուրքերէն՝ *Kürdistan İşçi Partisi*: Հիմնադրուել է 1978ին, 2000ին վերանուանուել է «Դեմոկրատական ժողովրդական Միութիւն», 2002ին՝ «Քրդստանի Ազատութեան Եւ Դեմոկրատիայի Կոնգրէս», 2005ին՝ կրկին «Քրդստանի Աշխատաւորական Կուսակցութիւն»: Քրդական քաղաքական միաւորում է, որը պայքարում է Թուրքիայի քրդերի իրաւունքների համար, այդ թում՝ ռազմական միջոցներով (Ինքնապաշտպանութեան ժողովրդական Ուժեր): Թուրքական իշխանութիւններն իրենց հերթին այն ճնշելու նպատակով ոչ միայն ռազմական միջոցներ են կիրառում, այլեւ՝ այլընտրանքային կառոյցներ ձեւաւորում, ինչպէս, օրինակ, «Քրդական Հզօրա»ն:
- ²³ Միրիք - Թերեւս Կրզըլքիլիսէի լեռնային, անառիկ համարուող Միրաւան գիւղն է, 1914ին՝ 1800 հոգի Միրագեան հայկական տոհմի զինուած բնակչութեամբ (Հալաջեան, էջ 75):
- ²⁴ Մազդար - Հաւանական է Կրզըլքիլիսէի Մաստան քուրդ-ալեիական գիւղը լինի, որի շուրջօրըրը ապրում էին Միրագեանների հայկական աշիրէթի քրդախօս հայեր (Հալաջեան, էջ 74): Մաստան գիւղ կար նաեւ Մեծկերտի (թրք. հնչիւնաբանութեամբ՝ Մազգիրտ) գաւառակում (Գարեգին Սրուանձտեանց, *Երկեր*, *Հտր. 2*, Երեւան, ՀՄՍՀ ԳԱ Հրատ., 1989, էջ 399): Մէկ այլ Մաստան էլ կար Չարսանճագի շրջանում, իստը հայ-քուրդ բնակչութեամբ, Ս. Սարգիս եկեղեցով (Հալաջեան, էջ 96):
- ²⁵ Հէյդորոք - Հայդերոք, Հայդարան անուններով գիւղերի թիւը Դերսիմում մեծ է: Համարում է, որ այս բնակավայրերի անունները Հայդարան/Հայտերան աշիրէթի անունից է (Հալաջեան, էջ 75): Խօսքը տուեալ դէպքում Կրզըլքիլիսէի շրջանի Հայտարան/Հայդարան գիւղի մասին է, որի բնակիչների հայկական մասը Միրագեաններից էին (Հալաջեան, էջ 76): Կրզըլքիլիսէի Գաւառակում մէկ այլ Հայտերան/Հայդարանի գիւղ կար, գտնուում է Խութաց Ձորի ափին, 1914ին ունէր 135 տուն (1350 հոգի) հայ եւ 360 տուն (2160 հոգի) քուրդ բնակիչ, զինուած էին եւ Խութաց Ձորի արեւելեան կողմի պահապաններն էին (Հալաջեան, էջ 75):

- ²⁶ Դեմանաններ - Ալեիական աշիրէթ Դերսիմում, որ, ըստ Հալաջեանի, սերս յարաբերութիւններ ունէր Միրագեանների հետ (Հալաջեան, էջ 73), եւ Դերսիմի բնակչութեան կողմից ընդունում էին որպէս վաղուց ալեիացած հայեր, ինչի մասին ինձ նոյնպէս յաճախ էին պատմում:
- ²⁷ Բորն գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ:
- ²⁸ Գինը գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ: Գինի անունով գետ է եղել՝ Տիգրիսի վտակներից մէկը, բայց տեղը չի ճշտուած: Գինի է կոչուել Դիարբէքիի գաւառակներից մէկը (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Հ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Հտր. 1*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1986, էջ 866):
- ²⁹ Արեքի - Արեգ, Առէք գիւղ կար Քոլիում, ըստ «Քոլի Գաւառակի Հայկական Գիւղերի Կոտորածների Մասին» Նազարէթ Փոստոյեանի 1917ին գրանցած գրառումների, 1915ի կոտորածերի ժամանակ գիւղի 1680 մարդուց 1200ը զոհուել էր (*Հայոց Տեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում... , Հտր. 3*, էջ 142, 168):
- ³⁰ Փաքուրդիգէ գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ:
- ³¹ Բառըխ գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ: Քանի որ Դերսիմի հայ բնակչութիւնը յաճախ է գիւղերով տեղափոխուել Սասուն, հիմնադրելով նոյնանուն բակավայրեր, չեմ բացառում, որ այս անունը կապ ունի Սասունի Խարզան Գաւառակի Բառընջ գիւղի անուան հետ: Նոյնն է պարագան Դերսիմի Կաղնուտ, Աղտատ գիւղերի, որոնց բնակիչներից պարբերաբար մասեր են անցել Սասուն: Այդ մասին շատ լաւ գիտեն Դերսիմի այսօրուայ բնակիչները եւ յաճախ են թուարկում իրենց տարածքից Սասուն անցած եւ զուգահեռ նոյնանուն գիւղեր հիմնածների մասին:
- ³² Հալուոր - նաեւ Հալուր: Դերսիմի յայտնի գիւղերից է, համարում է, որ այն եղել է դեռեւս չորրորդ դարից, երբ իբր թէ Տրդատ թագաւորի եւ Գրիգոր Լուսաւորչի վերահսկողութեամբ կառուցում էր գիւղի մօտ գտնուող Հալուորի Ս. Կարապետ անունով Դերսիմում հռչակաւոր վանքը: Հալուորը Խոզաթ Գաւառակի գիւղերից էր, շրջապատուած խիտ անտառներով: Գիւղի բնակիչները Միրագեան հայեր էին (Հալաջեան, էջ 40): Ս. Կարապետի անունից գիւղը յաճախ խօսակցական լեզուով կոչուել է նաեւ Վենք (Վանք) եւ մինչեւ այսօր շարունակում են յիշել այդ անունով: 1994ին զինուորները վերջնականապէս աւերել են Հալուոր հնագոյն գիւղը: Այսօր այն անտառներով շրջապատուած աւերակների կոյտ է՝ մացառներով ծածկուած (տե՛ս լուսանկարը):
- ³³ Հաքիս - Հագս, տե՛ս՝ «Ի. Դարի Միջնադար», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. 17*, էջ 552, ծնթ. 42):
- ³⁴ Փաթար գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ: Հաւանական է, որ սա Դերսիմում շատ տարածուած Փութա անունով գիւղերից Օւաճիկի շրջանի Փութան է: 1914ի համար Հալաջեանը գրում է, որ Դերսիմի բոլոր Փութաներում նախկինում հայեր էին ապրում (Հալաջեան, էջ 50):
- ³⁵ Ենիս - Ենիսմիյա գիւղը Կրզըլքիլիսէից Ջիւրիգի ճանապարհին, նախկին Հալիս գիւղը:

- ³⁶ Իքսոր - սա Դերսիմի Բոլումերիի շրջանի Իքսորն է (նաեւ՝ Իքձոր): Սոյն Իքսորում 1914ին կար 780 հայ եւ 570 ալեւի քուրդ անուանուող բնակչութիւն (Հալաջեան, էջ 62): Իքսոր/Իքձորը նոյնպէս որպէս գիւղանուն յաճախ է հանդիպում Դերսիմում: Իքսոր/Իքձոր կար նաեւ Օւաճիկի Գաւառակում (Հալաջեան, էջ 52):
- ³⁷ Մարքասուր գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ:
- ³⁸ Խոզըքէոյ - տե՛ս «Ի. Դարի Միջնադար», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Հտր. 1.7., էջ 550, ծնթ. 33):
- ³⁹ Պէտք է նկատի ունենալ, որ երբ պատմողն ասում է՝ «Վանք կայ», սովորաբար նկատի ունի նախկին վանք: Դերսիմում մինչեւ այսօր թե՛ ալեւիացած հայերը, թե՛ ալեւիները նախկին վանքերի մասին խօսում են ներկայ ժամանակով: Բուն Դերսիմի տարածքում քիչ թէ շատ պահպանուել է Խոզաթի Գաւառակի Երկան Գիւղի Ս. Կարապետի կիսականգուն վանքը, որի մասին Սրուանձտեանցը ԺԹ. դարում գրում է. *«հոյակապ եւ մեծագոյն շէնք է, բայց քանի մը մասեր քայքայուած, ընտիր ճարտարապետութիւն, որոյ ձեւն ու քանդակներն եւրոպացի ուղեւորաց իսկ հիացումն պատճառեր, եւ օրինակած են ոմանք»* (Սրուանձտեանց, էջ 401): 2011ի այցելութեանս ես տեսել եմ վանքը եւ սոյն նիւթում տեղադրում եմ լուսանկարը: Երկան Գիւղի անունը չի փոխուել, գիւղապետի պատմածով վանքը քանդել են զինուորականները 1960ականներին եւ քարերը օգտագործուել են գիւղի դպրոցի շինարարութեան համար:
- ⁴⁰ Հալուորում իրականում վանք չկայ, չկան նոյնիսկ հռչակաւոր Հալուորի Ս. Կարապետ վանքի աւերակները: 1937ին ռումբով պայթեցուելուց յետոյ ողջ Դերսիմի համար չափազանց կարեւոր այս վանքի վերջին քարերն անգամ մաքրել տարել են: Հնարաւոր է նաեւ, որ դա արել են տեղացիները՝ որպէս մասունք տանելով իրենց սիրելի վանքի մնացորդները: Սակայն վանքի միայն տեղանքը շարունակում է հզօր դեր խաղալ դերսիմցիների միաւորման մէջ եւ բոլորն այդ տարածքը շարունակում են "Վանք" անուանել եւ վանքից դատարկուած տարածքում չեն դադարում ուխտագնացութիւնները (տե՛ս Ն. Խառատեան, «Հայ-Ալեւիական Սոցիալ-Կրօնական Միութեզը Դերսիմի Ալեւիների Աւանդազրոյցներում», *Հանդէս Անսօրեայ*, Վիեննա-Երեւան, 2014, էջ 135-233): Հայկական քրիստոնէական կանգուն կամ աւերուած եկեղեցիները ուխտ գնալը Դերսիմի ալեւիների համար աւանդական է: ԺԹ. դարի կէսերի մասին Սրուանձտեանցը գրում է. *«յաճախ ուխտ կ'ընեն հայոց շէն կամ աւեր տաճարներուն, որոց քարերը կը համբուրեն, խունկ կը ծխեն, մոմ կը վառեն, մատաղ կը կտրեն, հիւանդաց վրայ Աւետարան կարդալ կու տան եւ երկիւղածութեամբ կը համբուրեն գայն»* (Սրուանձտեանց, էջ 395):
- ⁴¹ Նաբաթ - Դերսիմում Նաբաթ անունով գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ: Նաբաթ անունով գիւղ է եղել Վանի Վիլայէթի Արձակի Նահանգում:
- ⁴² Կիրաբաթ գիւղի մասին այլ տեղեկութիւններ չգտայ:
- ⁴³ Արգունա - գուցէ Արգունիկ/Աղգունիկն է: Արգունիկ անունով գիւղ կար Չարսանջակի Գաւառում: Յայտնի է նաեւ Աղգունիկ, Աղձունիք անուններով: 1872-73ին գիւղն ունեցել է խառը հայ եւ քուրդ, որոշ տեղեկութիւններով՝ նաեւ թուրք բնակչութիւն (*Հայաստանի Եւ Յարակից Շրջանների Տեղանունների*

Բառարան, Հտր. 1, էջ 173, 437): Ցեղասպանության շրջանի տեղեկություններով Աղզունիք Գիւղը Դերսիմի Չարսանջակում քրդական գիւղ էր, որտեղ, ըստ Խարբերդի ջարդերից փախած Միհրան Կարիպճանեանի տեղեկությունների, 1916ին 250 փախստական հայեր կային. «Այդ քրդի գիւղում մի կիսակործան եկեղեցի կար, ուր բնակուեցինք մինչեւ Օգոստոսի վերջերը» (Հայոց Ցեղասպանությունը Օսմանեան Թուրքիայում..., Հտր. 3, էջ 291): Աղզունիկը Դերսիմի քրդական գիւղ է անուանում նաեւ Խարբերդի ջարդերից փախած Հայկ Վարդանեանը՝ «Աղզունիկում» մի ախոռի մէջ ուրիշ փախստական հայերի հետ ապրած լինելով մինչեւ 1916 գարուն» (Հայոց Ցեղասպանությունը Օսմանեան Թուրքիայում, Հտր. 3, էջ 277): Դերսիմի Աղզունիկ քրդական գիւղում, ըստ Մկրտիչ Մադաթեանի վկայութեան, Երզնկա գնալու ճանապարհին 15 օր ապաստանել են Բաբերդից Ցեղասպանության ժամանակ տեղահանուած հայերը (Հայոց Ցեղասպանությունը Օսմանեան Թուրքիայում..., Հտր. 3, էջ 88), իսկ ահա արաբկիրցի վերապրող Գալուստ Գալուստեանի վկայութեամբ 1917 Յունուարին Աղզունիկում կային 2000ի չափ փախստական հայեր, ովքեր Երզնկա գնացին այն ռուսական զօրքերի կողմից գրաւուելուց յետոյ (Հայոց Ցեղասպանությունը Օսմանեան Թուրքիայում..., Հտր. 3, էջ 321): Սրուանձտեանցի այցելութեան ժամանակ Աղզունիկ գիւղը Խոզաթին էր ենթարկում, ունէր Ս. Սարգիս եկեղեցի եւ եօթ տուն հայ բնակչութիւն (Սրուանձտեանց, էջ 400): Սրբազանը չի խօսում գիւղի ոչ-հայ բակչութեան մասին, սակայն չի բացառում նրանց գոյութիւնը: Չի բացառում նաեւ, որ Աղզունիկի փոքրաթիւ հայերը վերջնականապէս ալեւիացած-քրդացած լինէին համիդեան կոտորածների ժամանակ:

⁴⁴ Տե՛ս՝ «Ի. Դարի Միջնադար», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԴ, էջ 502-509:*

⁴⁵ Օխնի - Օւաճիկի շրջանի քրդական գիւղերից է, աւելի շուտ՝ ձորի մէջ ժայռափոր տների խմբերի հաւաքածոյ (Հալաջեան, էջ 48):

⁴⁶ Մազգերտ - Դերսիմի շրջաններից: Հայերէն՝ Մեծկերտ:

⁴⁷ Թաղամաս Դերսիմի կենտրոն Թունջելի քաղաքում: Թունջելի քաղաքը կառուցուել է 1938ի ջարդերից յետոյ, միքանի գիւղերի վրայ, որոնցից մէկը հայկական Մազրա/Մազրիք գիւղն էր, որ ներկայիս Թունջելիի Չմբուրի թաղամասն է:

⁴⁸ Մեծկերտ/Մազկերտը ԺԹ. դարի կէտերին, ըստ Սրուանձտեանցի, Կարինի Միլիտարիֆութեան Խոզաթի Վիլայեթի գայմագամանիստ աւան էր, ունէր երկու եկեղեցի՝ Ս. Աստուածածին եւ Ս. Յակոբ եւ ութսուն տուն հայ բնակչութիւն (Սրուանձտեանց, էջ 399): Սրուանձտեանը թուարկում է նաեւ Մեծկերտի մօտի աւերակ եկեղեցիները՝ Ճերմակ Վանք, Ս. Փրկիչ, Պօղոս-Պետրոս, Ս. Գէորգ, Ս. Աթանաս, Ս. Եղիա, Ս. Սարգիս, Ս. Մեսրոպ (Սրուանձտեանց, էջ 401): 1914ի համար Հալաջեանը Մեծկերտը գիւղաքաղաք է անուանում, որտեղ կար 3888 հայ, 215 քուրդ բնակչութիւն, երկու եկեղեցի՝ Ս. Աստուածածին եւ Ս. Յակոբ, եւ եօթ եկեղեցու աւերակներ՝ Ս. Փրկիչ, Ս. Մեսրոպ, Ս. Սարգիս, Ս. Պօղոս, Ս. Գէորգ, Ս. Աթանաս, Ս. Եղիա, ինչպէս նաեւ Ճերմակայ Վանքի աւերակները (Հալաջեան, էջ 85-86):

- ⁴⁹ Մարխո անունով բնակավայր է յիշատակել Սրուանձտեանցը Դերսիմի Մեծկերտի Գաւառակում՝ վեց ընտանիք հայ բնակչությամբ ԺԹ. դարի կեսերին (Սրուանձտեանց, էջ 400): Հայդերան աշիրէթին պատկանող քրդական Մախօ անունով գիւղ կար Բոլմերիի շրջանում (Հալաջեան, էջ 62):
- ⁵⁰ 1937-1938ի Դերսիմի 'հնազանդեցման' ջարդերը լայնօրէն յայտնի դարձան շատ ուշ, դարի վերջերին: Դերսիմում շատ մանրամասներ են պատմում այդ սարսափելի ջարդերի մասին, այդ թւում նաեւ դրանց՝ Դերսիմում դեռեւս զգալի թիւ կազմող հայերի դէմ մասնաւոր ուղղուածութեան մասին (տե՛ս՝ այստեղ հրատարակուող «Սոցիալիստը», «Իսկի Բնասան» պատմութիւնները եւ Նախաբանը. նաեւ՝ Ռ. Մելքոնեանի ուսումնասիրութիւնը - *ՕԽ*): Սակայն Յակոբն, ըստ երեւոյթին, իսկապէս քիչ բան գիտի Դերսիմում կատարուածի մասին, որովհետեւ Դերսիմից հեռացուած կամ արտաքսուած հայկական ընտանիքներում գերադասել են լռել, յետագայում նրանց զաւակները քիչ են առնչուել կամ համարեա չեն առնչուել Դերսիմի Յեղասպանութիւնը բարձրաձայնող ալեիների եւ ալեիացած հայերի հետ, իսկ թուրք հանրութիւնն իրականում չէր իրազեկուում տեղի ունեցող ջարդերի մասին:
- ⁵¹ Իրականում Դերսիմի ջարդերի շրջանում թուրք պաշտօնատարների կողմից շատ էր բարձրաձայնուում քրդական շարժումներին հայերի մասնակցութեան հարցը: Ռազմական փաստաթղթերում հարցը ներկայացուում էր այնպէս, իբրեւ Յեղասպանութիւնը վերապրած եւ Սիրիա անցած դերսիմցի հայերը վերադարձել են եւ քուրդ ազգայնականների հետ ապստամբութեան են հրահրել Դերսիմի ցեղերին (Van Bruinessen, էջ 7):
- ⁵² Ստամբուլում Հրանտ Դինքի կողմից հիմնադրուած երկլեզու՝ հայերէն եւ թուրքերէն, թերթի խմբագիր:
- ⁵³ 1993 Յուլիսի 2ին Սվլազ (Միւսս) քաղաքի «Մաղըմաք» հիւրանոցում ալեի մտաւորականների կողմից կազմակերպուել էր մշակութային փառատօն: Հիւրանոցը պայթեցուեց, զոհուեցին 37 ալեի մտաւորականներ եւ հիւրանոցի 2 աշխատակից: Դրան յաջորդեց թուրքական իշխանութիւնների կողմից 1993-1994ի Դերսիմի ալեիների լեռնային բնակավայրերի բնակչութեան բռնի տեղահանութիւնը եւ բնակավայրերի հիմնայատակ աւերումը՝ ալեիների վերադարձն անկարելի դարձնելու նպատակով: Սա պատասխանն էր 1937-38ի Դերսիմի ջարդերով լռեցուած ալեիական ինքնութեան ըմբոստութեան 1980ականների վերագարթօսքին:
- ⁵⁴ Թուրքիայի ալեիների, յատկապէս «քուրդ ալեիների» ինքնութեան խնդիրներն այսօր շատ քննարկուող հարցերից է: Մասնաւորապէս Դերսիմում կիրառուում են «ալեի», «ալեի քուրդ», «կըզըլբաշ», «ալեի կըզըլբաշ», «քուրդ կըզըլբաշ», «գագա ալեի», «գագա քուրդ» եզրերը, բայց գնալով շատանում է «դերսիմցի» կիսաաշխարհագրական, կիսամշակութային բառի կիրառութիւնը: Այս խնդրի շուրջ տե՛ս՝ Հ. Խառատեան, «Ինքնութեան Որոնումը Դերսիմում» (<http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenia-ar/the-search-for-identity-in-dersim-part-1-identities-in-dersim-armenian>), իսկ Դերսիմի ալեիացած հայերի ինքնութեան մասին տե՛ս՝ (<http://repairfuture.net/index.php/hy/identity-standpoint-of-armenia-ar/the-search-for-identity-in-dersim-part-2-the-alevized-armenians-in-dersim-armenian>):

- ⁵⁵ Մուշի Վարթո - Վարդոյի Գաւառակ Բիթլիսի Նահանգի Մուշ Գաւառի հիւսիս-արեւմուտքում, կենտրոնը՝ հայաբնակ Գիւմգիւմ Գիւղը:
- ⁵⁶ Զիմարա/Չմարա - Գիւղ Սեբաստիա Նահանգի Տերիկի Գաւառում, Եփրատ Գետի աջ ափին, Տերիկ քաղաքից մօտ 28 կլմ. հիւսիս-արեւելք: Զիմարացի Լեւոն Կօշկարեանի վկայութեամբ մինչ 1915ի հայերի տեղահանութիւնը Զիմարայի միւղիքը փորձում է իսլամացնել տեղի հայերին: Բինկեան, Զիմարա եւ Կասմա երեք հայ գիւղերի մի խումբ երիտասարդներ փախչում-ապաստանում են Բինկեանի լեռներում. նրանց մի մասը տեւական պաշարման չդիմանալով համաձայնում է իսլամանալ: Իսլամացման ծեսը հրապարակաւ կատարում է Զիմարայում, որից անմիջապէս յետոյ, Յուլիսի 25ի երեկոյեան, Բինկեան, Զիմարա եւ Կասմա գիւղերի 2500 բակչութեանը հաւաքելով՝ նետում են Եփրատը: Շատ քչերին է յաջողում փրկել, այդ թումը՝ քարայրում մէկ տարի ապաստանած եւ յետոյ Դերսիւմ անցած երիտասարդներին (*Հայոց Յեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում...*, *Հտր. 3*, էջ 363-368):
- ⁵⁷ Հաֆիկ - գիւղ Սեբաստիա Նահանգում, Սվազից մի փոքր հիւսիս արեւելք, Քոչգիրիի մօտ: Հաֆիկի հայկական յուշարձանները տե՛ս՝ <http://team-aow.discuforum.info/t6301-S-vas-Sepastia-Hafik-Havig-Tuzhisar-Duzasar-Koyu-Ermeni-Kilisesi.htm> :
- ⁵⁸ Քոչգիրին գաւառակ է Սեբաստիայում, Սվազի մօտ, Դերսիւմի արեւմտեան սահմանին:
- ⁵⁹ Սոցիալիստների մէջ շատ ազգայնական թուրքեր կան. տե՛ս՝ սոյն շարքում «Սոցիալիստները» գրութիւնը:
- ⁶⁰ Գիւրուն կամ Կիւրին - Քաղաք Սեբաստիա Վիլայէթի Սեբաստիա Գաւառում:
- ⁶¹ Ներգիւր իսլամացած Նազիրէի թոռնուհին է: Նրա պատմութիւնը տե՛ս՝ «Ի. Դարի Միջնադար», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, *Հտր. ԼԴ*, Պէյրուք, 2014, էջ 519-523:
- ⁶² Ժաժ - Կաթնաշոռ, պանիր:
- ⁶³ Մուղրոսի Պայմանագիր - Ա. Աշխարհարտում Երիտթուրքերի կողմից կառավարուող սուլթանական Թուրքիայի պարտութիւնից յետոյ, 1918 Հոկտեմբերի 30ին Մուղրոս Նաւահանգստում կնքուեց զինադադարի պայմանագիր, մինչեւ վերջնական պայմանագրի կնքումը: Զինադադարի պայմանագիրը ժամանակաւորապէս զգալիօրէն նուազեցրեց հայերի նկատմամբ հետապնդումները, քանի որ նախատեսում էր թուրքական զօրքերի դուրս բերում Կիլիկիայից եւ վեց հայկական վիլայէթների բռնազաւթում՝ «դրանցից որեւէ մէկում անկարգութիւնների դէպքում»: Իրականում զօրքերի դուրս բերումը փաստացի չիրականացուեց, շուտով մեծ թափ ստացաւ Մուստաֆա Քեմալի կողմից գլխավորուող "ազատագրական պատերազմ"ը, որի ընթացքում զօրքերի կողմից միքանի կրկնակի հայկական ջարդեր կազմակերպուեցին, բայց տեղական վարչակազմերը որոշ ժամանակ աւելի զգուշ էին եւ թաքնուած հայերի յայտնաբերման գործընացը փաստացի զգալիօրէն դանդաղել էր:
- ⁶⁴ Գարակէօզեան Վարժարանը գտնուում է Ստամբուլի Շիշլի Թաղամասում: Հիմնադրուել է 1912ին, որպէս Տիգրան Գարակէօզեանի 1896ի կտակի

իրագործում: Ի սկզբանե եղել է որբանոց-գիշերօթիկ դպրոց: Շենքը նախապես եղել է հիւանդանոցի շենք, դպրոցի յարմարցրել են Գարակեօզեան ընտանիքի անդամները՝ ճարտարապետեր Սարգիս եւ Աւետիս Բեկմեզեանների օգնութեամբ: Մինչեւ 1994 Գարակեօզեանը նախատեսուած էր միայն տղաների համար, այնուհետեւ բացուել է նաեւ ցերեկային բաժինը եւ դարձել է երկսեռ: Գարակեօզեան դպրոցը, լինելով գիշերօթիկ, շատ մեծ դեր է խաղացել գաւառից 1950ականներից յետոյ Ստամբուլ տեղափոխուող հայ ընտանիքների թրքախօս եւ քրդախօս երեխաներին հայերէն սովորեցնելու գործում: Ներկայումս Ստամբուլի հայկական համայնքի յուզումների առարկան է դպրոցին սեփականութեան իրաւունքով պատկանող տարածքում եւ դպրոցի հարեւանութեամբ աւարտին մօտեցող 34 յարկանի երկնաքեռի կառուցումը, որի 18 յարկերը վարձով տրուած են «Մարիոթ» հիւրանոցային ըկերութեանը, իսկ 16 յարկերը նախատեսուած են առեւտրական կենտրոնների գրասենեակների համար:

⁶⁵ Պեզճեան Վարժարանը համարուում է միջնակարգ դպրոց: Մինչեւ 1994ը այստեղ սովորում էին միայն տղաները: Բայց նոր տնօրէնի գալուստով բացուեց ցերեկային բաժին նաեւ աղջիկների համար: 2011ին գիշերօթիկը դարձաւ հանրակրթական դպրոց: Այն հիմնադրել է 1715ին Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի պատրիարքը Կ.Պոլսի Սկիւտար Թաղամասում՝ եկեղեցու սպասաւորներ եւ ուսուցիչներ պատրաստելու նպատակով: 1741ին Յակոբ Բ. Նալեան պատրիարքը տեղափոխել է Գում Գափու Պատրարքարանին կից, եւ վերանուանել Մայր Դպրատուն: 1826ի հրդեհի ժամանակ այրուել են Պատրարքարանը, Մայր Դպրատունը եւ եկեղեցին: Շենքերը վերականգնել է Պեզճեան Յարութիւն ամիրան եւ 1830ին վարժարանը վերանուանուել է Պեզճեան Մայր Վարժարան: Ներկայումս գործում է միջնակարգ դպրոցի ծրագրով, հայերէն դասաւանդուում են միայն հայերէն լեզու եւ կրօն, ուսուցումը թուրքերէնով է:

⁶⁶ Հրանտ Դինք - (1954-2007), Ստամբուլում գործած հայ թղթակից, հայ-թուրքերէն լեզուներով լոյս տեսնող *Ալլօս* թերթի հիմնադիրը (1996) եւ մինչեւ մահը՝ գլխաւոր խմբագիրը: *Ալլօսը* Հայոց Տեղասպանութիւնից յետոյ առաջին թերթն էր, որում 2000ից բարձրաձայնուում էին թուրքահայերի խնդիրները: Միաժամանակ, թերթը ուղղուած էր հայ-թուրքական յարաբերութիւնները վերաձեւաւորելու, վերաիմաստաւորելու, երկխօսութիւն սկսելու, նոր որակ առաջացնելու խնդիրներին: Սպանուել է 2007ին թուրք ազգայականների կողմից Ստամբուլի Շիշլի Թաղամասում գտնուող *Ալլօսի* խմբագրատան շէնքի առաջ: Մինչեւ այսօր դատաւարութիւնը շարունակուում է՝ պարբերաբար հանրային յուզումներ առաջացնելով: Դինքի սպանութիւնը եւ դրան յաջորդող դատաւարութիւնները, մամուլի արձագանգը թուրքահայերի շատ խնդիրներ դարձրեց քննարկման նիւթ, եւ մի կողմից նպաստեց Թուրքիայի հայկական համայնքի գոյութեան հրապարակայնացմանը, իրենց ինքնութիւնը մեկուսի պահող բազմաթիւ հայերի ինքաբացայայտմանը, միւս կողմից, յատկապէս Թուրքիայի ազգայնական գաւառներում, գաւառահայութեան ինքնամեկուսացման նոր փնտոտութիւններին: Այժմ *Ալլօսի*ց գատ գործում է նաեւ Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Հրանտ Դինք Հիմնադրամ, որի

գլխավոր առաքելությունը հայ-թուրքական յարաբերությունների վերախմբման համար է: Հիմնադրամը գիտաժողովներ է կազմակերպում, պարզեցնում է մարդու իրաւունքների համար պայքարող անձանց, ֆինանսավորում է հայ-թուրքական հետազոտություններ են:

⁶⁷ Ստամբուլի Բաքըրբեյ Թաղամասի Տատեան Վարժարանը 1844ին հիմնադրել է Յովհաննէս բէյ Տատեանը:

⁶⁸ Ստամբուլի Ղալաթիա Թաղամասում գտնուող Կեդրոնական Վարժարանը համարում է բարձրագոյն կրթական հաստատութիւն, որտեղ ուսումը շարունակում են ճամբայ նախակրթարանը ււարտելուց յետոյ: Հիմնադրուել է 1886ին Ներսէս Պատրիարք Վարժապետեանի ջանքերով: Կեդրոնական էր, որովհետեւ ի սկզբանէ նախատեսուած էր, որ այստեղ պէտք է ուսումը շարունակէին Կ.Պոլսի, յետագայում՝ Ստամբուլի բոլոր թաղերի նախակրթարանների շրջանաւարտները: Մեծ դեր է խաղացել եւ շարունակում է խաղալ հայկական կրթութեան գործում:

⁶⁹ Էստեան Վարժարանը գտնուում է Ստամբուլի սրտում՝ Թաքսիմում: Կառուցել են Յովհաննէս եւ Մկրտիչ Եստեանները, 1890ին հող գնելով Ս. Յարութիւն Եկեղեցու մօտ, միաժամանակ նորոգելով եկեղեցին: 1908ին դպրոցը ստացել է աղջիկների լիւթի արտօնագիր, իսկ 1913ից դարձել է երկսեռ: Առաջին Աշխարհամարտի տարիներին դարձել է բուժօրրերի վերապատրաստման դպրոց, սակայն 1922ին մի մասը վերածուել է որբանոցի, իսկ 1923ից վերսկսուել է դպրոցական դասաւանդումը: Այժմ ունի մանկապարտեզ, նախակրթարան, միջնակարգ եւ լիւթի ծրագրերով դասաւանդում:

⁷⁰ Սայէաթ-Նովա երգչախումբը Ստամբուլում հիմնադրուել է 1972ի Ապրիլի 24ին: Ունի 60 երգիչ: Այսօր կենդանի են երգչախումբը հիմնադրած մարդիկ, ովքեր պատմում են երգչախումբը հիմնելու շրջանում իրենց վախերի, իրաւունքների մասին: Դա մի շրջան էր, երբ Ստամբուլում հայերը չէին բարձրաձայնում իրենց գոյութիւնը, խուսափում հրապարակային-հանրային կեանքից, հաւաքում ու երգում էին հայկական եկեղեցիները շրջապատող «փակ պարիսպների ներսում», «իրենք իրենց համար»: Բազմաթիւ փորձություններով անցնող երգչախմբի անդամները յաճախ համալրում էին նոյն ընտանիքների անդամներից՝ ամուսիններ, ծնողներ-գաւակներ, որպէս առաւել համարձակներ: Աւելի ուշ համատեղ համերգեր են ունեցել 1993ին հիմնադրուած եւ շատ շուտով սիրուած «Քարդէշ Թիւրքուլերը» խմբի հետ, որը Բողազիչի Համալսարանում ձեւաւորուած երգչախումբ էր եւ փորձում էր Թուրքիայի հանրութեանը ներկայացնել Թուրքիայի այլալեզու ժողովուրդների – ներառեալ՝ հայերի - երաժշտական ժառանգութիւնը իրենց ազգային լեզուներով: Այսօր «Սայէաթ Նովա» հարուստ փորձառութիւն ունեցող երգչախումբը յաճախ է ելոյթներ ունենում Ստամբուլի եւ Երեւանի համերգասրահներում:

⁷¹ 1955ի Մեպտեմբերի 6-7ին Ստամբուլում կազմակերպուեց ոչ-մահմեդականների հեղթական ջարդ: Այն ուղղուած էր գլխավորապէս յոյների դէմ, բայց ջարդարարները հաւասարապէս ջարդեցին ու կողոպտեցին նաեւ հայերի ու հրեաների բնակարանները, խանութները, արտադրական կառոյցները: Իշխանութիւնները ոչ միայն երկու օր չմիջամտեցին դէպքերի

ընթացքին, այլև, ըստ տեղեկությունների, իրենք էին Ստամբուլի յարակից տարածքներից հանրակառքերով նորանոր ջարդարարների խմբեր տեղափոխում Ստամբուլ: Այդ ջարդերից յետոյ Ստամբուլում կտրուկ նուազեց յոյների ու հայերի թիվը:

⁷² Մինչև 1965 ԽՍՀՄում նոյնպես Հայոց Ցեղասպանութեան մասին դասագրքերում ոչինչ չէր գրում, եւ սպանուած հայ գրողների կենսագրությունների մասին հանրագիտարաններում սովորաբար գրում էր՝ «մահացել է»: Նոյնն էր պարագան նաեւ ստալինեան բռնությունների զոհերի. գնդակահարուած մարդկանց մասին բոլոր տեղեկատուներում ընդհուպ մինչև 70ականների վերջերը գրուած էր՝ մահացել է 1937ին, 1938ին:

⁷³ Իւ Տերնոն (Yves Ternon) - Ֆրասիացի բժիշկ եւ պատմաբան, Հայոց Ցեղասպանութեան հետազոտող:

⁷⁴ Թանէր Աքչամ - Ազգութեամբ թուրք պատմաբան, որ ԱՄՆում աշխատում է Հայոց Ցեղասպանութեան վերլուծութեան խնդիրների վրայ:

⁷⁵ Ուղղահայեաց խաչից խուսափել են գիւղի ալեւիների զգացմունքները չվիրատրելու համար:

⁷⁶ Պարիսպ, որի ներսում մարդիկ կարող են հաւաքուել եւ պարսպից դուրս գտնուողներից իրենց մեկուսացած զգալ:

⁷⁷ Կաղնուտ - գիւղ Օւաճիկի շրջանում: «Մամզուն (Մամիկոնեան) աշիրէթին պատկանող Կաղնուտը գտնուում էր Օւաճիկից հարաւ-արեւմուտք, չորս ժամուայ ճամփի վրայ: ...Կաղնուտի բնական դիրքն անառիկ էր, շրջապատուած իրար խաչաձեւուող լեռների գագաթներով ու կիրճերով, որոնք գիւղը դատում էին անառիկ ամրոցների շարքը: ...Առաջին անգամ լինելով, ծանօթացայ մի գիւղի բնակչութեանը, եւ այն էլ աղաների, աշիրէթապետերի, փիրերի եւ տեսէների շրջանակի մէջ, որը տէր եւ ծառայ, բէկ եւ աղա չունէր: Գիւղի հայ համայնքը մի հաւաքականութիւն էր, բոլորն էլ կապուած իրար արենակցական կամ խնամիական կապերով... Զինագործները ոչ միայն նորոգում էին ամէն տեսակ զէնքեր, այլև շինում նորերը՝ շէշխանաներ, մարտին հրացաններ, երկաթ կտրող թրեր եւ խենջալներ... Այստեղ ամէն ինչ բնական էր՝ լեզուն, կրօնը, հաւատալիքը, երգն ու պարը, ամէն ինչ նախնական: Առատ մանանա (կազպէ) էր իջնում կաղնու ծառերի վրայ... [բնակչութիւնը] հանքային տաք աղբիւրների հրաշագործութեանը հաւատում էր, պաշտում բնութիւնը եւ աստծուն վերագրում դրա ստեղծագործութիւնը: Մատաղ էին մորթում Լուսնակի գագաթին, տաք ջրի աղբիւրին, կաղնու անտառին եւ մանաւանդ գարնան վերագարթնումին ու Վարդավառին: ... Գործում էր Լուսնակի գագաթին կառուցուած Ս. Լուսաւորիչ եկեղեցին: Գիւղի ստորոտում գտնուում էին Ս. Փրկիչ եկեղեցու փլատակները»,- գրում էր Հալաջեանը 1914ի Կաղնուտի մասին (Հալաջեան, էջ 56-57):

Katia Peltekian, *The Times of the Armenian Genocide. Reports in the British Press Vols. 1 & 2, 1914-1923, Beirut, 2013, 976 pages:*

Քաթիա Փելթեքեանի խմբագրած այս գոյգ հատորներով լաւագոյն ծառայութիւնը կը մատուցուի Հայկական Յեղասպանութեամբ հետաքրքրուած իւրաքանչիւր ուսանողի, պատմաբանի ու դիւանագետի: Ահաւասիկ եւս երկու հատոր, ուր ամփոփուած են անգլիական պատկանելի թերթերու մէջ ատենին - օրը օրին - լոյս տեսած այն հարիւրաւոր հաղորդագրութիւններն ու տեղեկատուութիւնները, որոնք անհերքելի ապացոյցները կը հանդիսանան մարդկութեան դէմ գործադրուած աննախընթաց ոճիրներէն ամենէն ահաւորին Հայկական Յեղասպանութեան, որուն ենթարկուեցաւ իր բնօրրանին մէջ սպարող ու ստեղծագործող հայ ժողովուրդը:

Հեղինակը տակաւին 2000 թուականին ուսումնասիրողներու տրամադրութեան տակ դրած էր *Heralding of the Armenian Genocide: Reports in The Halifax Herald, 1894-1922* ժողովածուն, ուր վերոյիշեալ թերթին աշխատակիցները իրենց հասած սարսափելի դէպքերու ծաւալումներուն մասին ղրկուած հարիւրաւոր լուրերով ու թղթակցութիւններով կ'արձագանգէին Օսմանեան Թուրքիոյ տարածքին ընթացք առած այն ահաւոր խժոժութիւններուն, որոնք յետագային կոչուեցան «դարուս առաջին ցեղասպանութիւնը»:

Տքնանքով, յամառ ու հետեւողական աշխատանքով մէջտեղ եկած գոյգ հատորներ, ուր 976 մեծադիր էջերու մէջ ներկայացուած են 1038 թղթակցութիւն եւ հաղորդագրութիւն, բոլորը պատճենահանուած: Ասոնք կու գան վկայելու հայուն գողգոթային մասին՝ 1914էն 1923. եւ ասոնք տակաւին միայն *The Times, The Sunday Times* եւ *The Manchester Guardian* թերթերու մէջ լոյս տեսածներն են:

Հեղինակին առաջնային նպատակը եղած է ընթերցող եւ ուսումնասէր լայն շրջանակի մը սեղանին դնել Ա. Համաշխարհային Պատերազմին նախորդող ամիսներէն սկսեալ մինչեւ 1923ի Լոզանի Պայմանագիրը երկարող տարիներու ժամանակագրութիւնը, ուր ներառուած են ոչ միայն ջարդերու, տեղահանութիւններու, կողոպուտներու, առեւանգումներու սահմոկեցուցիչ նկարագրութիւններ, այլեւ Բրիտանական Կայսրութեան խորհրդարանին մէջ եղած աշխուժ քննարկումները, սրտցաւ կոչերը՝ օգնութեան փութալու պատերազմի ու ցեղասպանութեան արհաւիրքներուն ենթարկուող հայութեան եւ, ինչու չէ նաեւ, ապահով օրրան մը ապահովելու հայ ժողովուրդին համար:

Այսպես օրինակ, *The Manchester Guardian*-ի 1915 Ապրիլ 28-ի թիւին մէջ «Հայաստանի Ապագան» վերնագրով *Նամակ Խմբագրին* բաժնին մէջ A. S. S. անունով սրտցաւ ընթերցող մը կը գովէ Սըր Ուիլիըմ Ռամզէյի (Sir William Ramsay)¹ տեսակէտը, որ կ'առնչուի Թուրքիոյ ապագային: Սըր Ռամզէյ կարելոր կը նկատէր նախաձեռնող եւ գործարար ոգի ունեցող հայ ազգին համար բնօրրան մը ստեղծելը: Նամակին հեղինակը կը պնդէ որ Անտանտի Երկիրներու հսկողութեան տակ դրուելիք վեց վիլայէթներու (90.000 քառ. քմ.) տարածութեան վրայ պէտք է աւելցնել նաեւ Կիլիկիան (էջ 45):

Հետաքրքրական փաստ է այն, որ շատ յաճախ Հայաստանի եւ հայ ժողովուրդին առնչուող լուրերը տպուած են գոյգ թերթերու առաջին էջերուն վրայ, ինչ որ ցոյց կու տայ հայոց կացութեան հրատապութիւնը՝ Անգլիոյ համար: Յիշեցնենք թէ *The Times*-ը դեռեւս ԺԸ դարու վերջերէն արժանահաւատ ու վստահելի թերթի համբաւ ունէր, եւ տասնեակներով թղթակիցներ ունէր Օսմանեան Կայսրութեան ամբողջ տարածքին:

Անգլիական մամուլին մէջ յաճախ կը յիշուին նաեւ հայերէն վրէժխնդիր ըլլալու դէպքեր, թէեւ կայսրութեան գլուխը անցած իթթիհատականները ջանք չեն խնայեր թուրքերուն եւ աշխարհին համոզելու թէ հայեր եւ Օսմանեան բանակին մէջ ծառայող (հաւատարիմ) հայ քաղաքացիներ իբր կը գործակցէին կամ միտք ունէին գործակցիլ թշնամիին հետ: Այսպէս, 11 Ապրիլ 1917-ի թիւին մէջ թղթակիցը կը գրէ թէ Օսմանեան բանակը մինչ անկազմակերպ կը նահանջէր դէպի Անկորա (Անգարա) եւ ռուսական զօրքերուն ձեռքը կ'անցնէր Երզնկան, իսկ քայգերական բանակները գրեթէ ոչինչ կ'ընէին դրութիւնը փրկելու համար, թուրք հրամանատարութեան կարգադրութեամբ կ'ոչնչացուին 1700 հայ զինուորներ եւ վարպետ արհեստաւորներ, որոնք կ'աշխատէին արհեստանոցներու եւ ճամփաներու վրայ (էջ 222):

Անգլիա լուրջ արշաւ կազմակերպած է հայ գաղթականներուն օգնութեան հասնելու ուղղութեամբ: Այս մասին կան առատ տեղեկութիւններ, որոնք լոյսին կը հանեն ազնուասիրտ անգլուհիներու անսակարկ նուիրումին փաստերը: Փայլուն օրինակ է Օրդ. Էմիլի Ճ. Ռոպինսընի պարագան: Ան Լոնտոնի մէջ պատուակալ քարտուղարուհին էր Հայկական Կարմիր Խաչի եւ Գաղթականներու Հիմնադրամին: Ռոպինսըն, *The Manchester Guardian*-ի 25 Ապրիլ 1917-ի թիւին մէջ սրտառույց կոչ կ'ընէ որ չէքերն ու այլ օգնութիւնները դրկուին նշուած հասցէին (էջ 223):

Ա. եւ Բ. Հատորները կը սկսին Քաթիա Փելթէքեանի նախաբանով, որուն կը յաջորդէ հայ ժողովուրդի երեքհազարամեայ պատմութեան ժամանակագրութիւնը՝ 883 Ք.ա. մինչեւ 29 Հոկտ. 1923, երբ Մուսթաֆա Քեմալ հայերէն եւ այլ փոքրամասնութիւններէն զաւթուած

տարածքներու վրայ յայտարարեց Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադրութիւնը: Հատորները օժտուած են նաեւ մատենագիտական ցանկով:

Տարիներու քրտնաջան արդիւնքի մը առջեւ կը գտնուինք ըսելը՝ ամբողջական պատկերը չի տար ներկայացուող երկու հատորներուն, որոնց լոյս ընծայման մէջ ոչ միայն իր ժամանակը, այլեւ՝ նիւթական աղբիւրները չէ զլացած ուսումնասէրը, որուն լոկ փափաքը եղած է թուրքին հետ խօսիլ փաստերու լեզուով:

Յիրաւի՝ լուրջ անձնական ներդրում մը հայկական ցեղասպանագիտութեան բնագաւառէն ներս՝ 100 ամեակի սեմին:

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ
mkojayan@sbcglobal.net

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Սըր Ուիլիըմ Ռամզեյ (1852-1916)՝ քիմիագետ, 1904ի Նոպելեան մրցանակակիր:

Jahn Otto Johansen, *Folkemordet på armenerne (The Armenian Genocide)*, Minoritetsbiblioteket V Kultur og Utenriks, Oslo, 2015, 143 pages.

In light of the 100th year commemoration of the Armenian Genocide on April 24, 2015, the prominent Norwegian journalist, newspaper editor, author and Professor of Media at Oslo University, Jahn Otto Johansen (born 1934), has written the book *Folkemordet på armenerne* (“The Armenian Genocide”).

Presumably because of fear of irritating the international diplomatic community, not a single major book publisher in Norway would publish Johansen’s new book, but the Pen Club, supported by Fritt Ord, financed the project.

Johansen contributed to financing the book himself by selling his own house in Drøbak, Norway, and using the Prisoner’s Testament Peace Award given by Peace Research Institute Oslo (PRIO) and Aktive Fredsreiser/Travel for Peace AS, which he had earned for his tireless work against suppression and discrimination.

There have been many books about the genocide, the second-most-studied case of genocide in history. This book will give Norwegian society an opportunity to be acquainted with the documentary data and analytical comments on the Armenian Genocide.

The book is not just another book for researchers and people with a special interest, but is meant to be a book anyone can read. It is a thin book, less than 150 pages, that is easy for anyone to read, which has also been one of the goals.

In addition, it is a contextually rich book about Armenia and the Armenian Genocide. It seeks to explain the reasons behind the genocide, how it happened and what it led to. But it is also about the political situation in Turkey and the rest of the region today, and how Turkey tries to deny that the genocide ever happened.

Johansen touches on many topics, and gives many different examples when it comes to Armenian history, art and culture, as well as the genocide, definitions and juristic matters.

In the book Johansen mentions the unwillingness of the Republic of Turkey, the successor to the Ottoman Empire, to recognize the Armenian Genocide, which, according to Johansen, was genocide in its most severe expression and must not be denied. What the Armenians underwent is unambiguously genocide, which is legal a category with legal consequences. In fact Turkey also pressures and bribes other countries not to recognize the genocide.

As Johansen writes: “*There has never been any doubt in my soul that we must not forget the Armenian genocide. The horrible fate of the Armenians was not an isolated phenomenon. It is linked to a long tradition of persecution and genocide. People from all around the globe must gain insight into this crime, or we will not be able to break away from the circle of evil*” (p. 136).

The Turkish government acknowledges that during World War I many Armenians died, but does not accept that the deaths were the result of a systematic plan to destroy the Armenians. They counter that Muslim Turks died as well,

claim that the number of Armenian victims has been inflated, and state that massacres were committed by both sides as a result of inter-ethnic violence and the wider conflict of World War I.

However, the overwhelming majority of historians as well as academic institutions on Holocaust and Genocide Studies recognize the Armenian Genocide.

As of 2014, the governments of twenty-two countries, including Russia, France, Wales, Scotland and Northern Ireland, as well as forty-three states of the United States of America have recognized the events as 'genocide'. International organizations officially recognizing the Armenian Genocide include the European Parliament, Council of Europe, World Council of Churches, Permanent Peoples' Tribunal, and Mercosur.

One of the people Johansen mentions in the book is Raphael Lemkin (1900–1959), a Polish lawyer best known for his work against genocide, who migrated to the United States in 1941. Lemkin coined the word genocide from the root words *genos* (Greek for family, tribe, or race) and *-cide* (Latin for killing) in 1943. However, the concept of the crime, which later evolved into the idea of genocide, was based on the Armenian Genocide and prompted by the experience of Assyrians massacred in Iraq during the 1933 Simele massacre.

However, Johansen emphasizes that the book is not directed against the Turks or the Turkish people, although President Erdoğan aggressively denies the genocide. The Turkish people, according to Johansen, suffer today under Erdoğan's suppression, which not only affects writers and journalists, such as Hrant Dink and Orhan Pamuk, both mentioned in the book, but also everyday citizens, not least the youth.

According to Johansen, Erdoğan follows a Neo-Ottoman political line and “*works hard to make Turkey more Islamic and less secular. He has turned his back to the West and is trying to establish Turkish leadership in a radicalized Muslim world*” (p. 8).

The opposition, who liken Erdoğan to the sultan and the Prime Minister Davutoğlu to his grand vizir, see this as an “*attempt to make the country into a regional superpower with the Sunni-Islamic Ottoman Empire as a paradigm*” (p. 8).

One of the most important targets of the Erdoğan government is the independent media. Very large numbers of newspaper journalist and TV commentators have been arrested for criticizing the government, and these journalists have been kept in prison without any charges filed.

In a supplement describing the situation 100 years ago, the book also makes connections to the situation in the region today. According to Johansen, there is a red line from the Armenian Genocide, which resulted in one to one and a half million deaths, to the Jewish Holocaust and the extermination of Gypsies as well as to massacres by ISIL (Islamic State in Iraq and the Levant), which Turkey partly supports today.

Johansen not only criticizes Turkey, but also the Western powers, like the United Kingdom, Germany and France, and their war crimes. These have been too busy playing their own power games, and have been reluctant to do anything.

He quotes an Armenian saying about the situation for the minorities in Syria and Iraq today that “*History repeats itself. The US did not intervene in time, because these minorities did not mean as much to them as oil, gas, and other strategic interests. During the First World War it was not in the interests of Great Britain, France or Russia to sacrifice anything for the Armenians. They would not do anything at all to help us*” (p. 63).

Johansen also mentions the Armenian resistance, a name given to the military and political activities of the Armenians against the Ottoman Empire during World War I, considered a struggle for freedom and resistance to the Armenian Genocide by the Armenian combatants but high treason by the Ottoman Empire. However, there is no doubt that the goal of the Genocide was to finally solve the so-called "Armenian Question", which meant the extinction of the Armenian people.

There were previous instances of Armenian resistance within the Ottoman Empire, like the Zeitun Resistance, the Defense of Van, the Urfa Resistance, and the Shabin-Karahisar uprising in 1915. Johansen mentions the heroic defense of Musa Dagh at the beginning of the Armenian Genocide. The story is featured in the well known book *The Forty Days of Musa Dagh* written in 1933 by the Austrian-Bohemian writer Franz Werfel.

Johansen writes that “*I have often praised the Germans for the fact that they, more than any other European people, have made a break with their past. Not in any other capital was one of the most central plots of land been used to raise a gigantic monument to the country’s own crimes – Holocaust Mahnmal by The Brandenburg Gate in Berlin*” (p. 136).

In Turkey the situation is quite different. The concept of a cultural genocide, the acts and measures undertaken to destroy any nations or ethnic groups, has not yet been accepted into the 1948 UN Convention on the prevention and punishment of the crime of Genocide. However, the word ‘Genocide’ coined by Raphael Lemkin not only refers to the physical extermination of a national or religious group, but also its national, spiritual and cultural destruction.

That is exactly what Turkey has done to the Armenian nation. Turkey’s politics of culture genocide is simple. After dispersing the Armenian people, the Turkish intentions are to completely bury their presence, thus erasing any future claims to the land. Cultural genocide against the Armenian heritage on the territory of Turkey continues, and the rest of the world does nothing, or too little, to prevent it. It is happening, and the whole world is watching.

One can conclude from the book that the whole world has to be united against attempts at genocide, and not be led by strategic considerations about natural resources, control and power. Rather, the world should be united in the battle for justice, freedom and peace.

We have to recognize and condemn the Armenian Genocide, and make sure that Turkey does not continue its politics of denial. In the long run such a thing will not only honor the victims of the genocide, but make it possible for Turkey and Armenia to build bridges and together create a future of prosperity.

SJUR PAPAŽIAN
sjur.cp@gmail.com

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայկազեան Հայագիտական Հանդէս տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն ի վեր, Հայկազեան Համալսարանի Հայագիտական Ամբիոնին կողմէ:

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան պատմական, հնագիտական, աշխարհագրական, բանասիրական, կրօնական, լեզուագիտական, գրական, ազգագրական, մշակոյթի (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), տնտեսագիտական, իմաստասիրական, իրաւագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի նիւթեր:

*Հայկազեան Հայագիտական Հանդէս*ին մէջ կը հրատարակուին հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական եւ մատենագիտական ցանկեր ու մահագրականներ:

Ներկայացուած աշխատակցութիւնները պարտին ըլլալ անտիպ, նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 20-25 մեքենագիր էջ, համակարգիչի թուայնացած տարբերակով (softcopy), ARMENIAN UNICODE, ծրագրի շարուածքով:

Աշխատակցութեանց ծանօթագրութիւններու բաժինին մէջ պէտք է նշուին հեղինակին եւ օգտագործուած գիրքին-յօդուածին անունը, հրատարակիչը, տպարանը, թերթին անունը, հրատարակութեան տարեթիւր եւ էջաթիւր, իսկ արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, համարը: Աշխատակցութիւնը պարտի ունենալ համառօտ ներածական, ուր ներկայացուի նիւթը, անոր կարեւորութիւնը, մօտեցման եղանակը եւ բերած նորութիւնը: Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, շուրջ 150 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլայ նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները (թուա-

կան-հրատարակչատուն, վայր), ներկայ պաշտօնը եւ նկար մը) եւ ելեկտրոնային հասցէն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեան սկզբունքներով: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լատրակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէսներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Հրատարակուած նիւթերը կ'արտացոլացնեն հեղինակին տեսակէտը:

Քննարկումներ բաժինով խմբագրութիւնս կը հրաւիրէ տուեալ նիւթին շուրջ հիմնաւոր այլ կարծիք ունեցող մասնագէտներ՝ առարկայականօրէն քննարկելու տուեալ նիւթը եւ արտայայտելու իրենց տեսակէտը:

Յօդուածներու, թղթակցութիւններու, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով պէտք է հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian

Haigazian Armenological Review

P.O.Box 111748 Beirut Lebanon

Fax: 01349230/1, 03712058

Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երկու ամիս ետք:

Հեղինակներ-հրատարակիչներ, որոնք կը փափաքին գիրքի մը գրախօսուիլը ՀՀՀի մէջ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին յղել այդ գիրքէն երկու օրինակ՝ գրախօսողին եւ Համալսարանի Տէրեան Հայագիտական Գրադարանին:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մեջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը անվճար կը ստանայ *Հանդէսի* տուեալ հատորէն 2 օրինակ եւ իր յօդուածէն 20 առանձնատիպ:

Հայկագեան Հայագիտական Հանդէսի բոլոր հատորները մատչելի են հետեւեալ կայքին վրայ.- <http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx>

NOTE TO CONTRIBUTORS

Haigazian Armenological Review is published annually from 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University.

The review is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with history, archaeology, geography, philology, religion, linguistics, literature, ethnography, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, philosophy, politics, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, scrutiny, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French.

Manuscripts submitted to *Haigazian Armenological Review* should preferably be not more than 20-25 typewritten pages in length. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published, in any language. Presentation of manuscripts submitted for consideration on disc with hard copy is preferred. All discs are acceptable.

Authors should provide in the endnotes the name of the author, title, the year of publication and relevant page numbers of all the books cited. In the case of cited articles, they should mention the title of the book or journal in which the articles appear, the number of volume and part, the year of publication, and relevant page numbers. Submitted manuscripts must include a 150 word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the books published, the titles of the last two books published – with date and publisher – current position, and a passport size photo).

The editors reserve the right to copy edit manuscripts to conform to the review's style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *Haigazian Armenological Review* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *Haigazian Armenological Review*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to 20 offprint and two copies of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the website:
<http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական

Հարիւրամեակէն Անդի՛ն, Եւ՝ Ի՛նչ

ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշոտ Ոսկանեան	9
Աղէտի Պահապանը	
Րոպէր Քոփթաշ	45
Հայ Քաղաքական Միտքը	
Երիտթուրք Յեղափոխութենէն Առաջ Եւ Ետք	
Եղիկ Ճերէճեան	91
Համբարձում Պոյաճեանի (Մեծն Մուրատ)	
Խորհրդարանական Գործունէութիւնը (1908-1912)	
Վահրամ Շեմմասեան	137
Մուսա Լեռան Դիմադրութիւնը՝	
Հայոց Յեղասպանութեան	
Անահիտ Խոսրոեա	185
Ասորիների Յեղասպանութիւնն	
Օսմանեան Կայսրութիւնում. Համառօտ Ակնարկ	
Արմինէ Քրէտեան	201
Առաջին Համաշխարհային Պատերազմը,	
Հայոց Յեղասպանութիւնը Եւ	
Եգիպտահայութիւնը (1914-1919)	
Արմէն Ս. Հայրապետեան	249
Առաջին Աշխարհամարտը Եւ	
Ալեքսանդրապոլի Գաւառ Հաստատուած	
Գաղթականութեան Թուաքանակը	
Գայիանէ Մախմութեան	273
Արեւմտեան Հայաստանի	
Պաշտպանութեան Խնդիրները ԱՄՆի Եւ	
Դաշնակից Տէրութիւնների	
Քաղաքականութեան Ոլորտում (1917-1918 ԹԹ.)	

Կարինե Ալեքսանեան	293
Հայ-Թուրքական Յարաբերութիւնները Ալեքսանդրապոլի Գաւառի Թուրքական Ռազմակալման Շրջանում (1918-1921)	
Լեռնա Էքմէքճիօղլու	327
Առեւանգումի Եւ Ազատագրումի Մթնոլորտ. Կիներու Եւ Մանուկներու Ներգրաման Քաղաքականութիւնը Հայոց Ցեղասպանութեան Ընթացքին Ու Անկէ Ետք	
Անդրանիկ Տազէսեան	375
Ցեղասպանութեան Զոհ՝ Ուրֆայի Պղնձագործութիւնը Եւ Անոր Արհեստագէտ Յակոբ Մաներեան	
Ռուբէն Մելքոնեան	399
1936-38ի Դերսիմի Ցեղասպանութեան Հակահայ Ուղղուածութեան Շուրջ	
Անդրանիկ Ծ. Վրդ. Կոստեան	421
Բառերուն Միւս Երեսը "Ջարդաբանութիւն" Եւ Մասամբ Նորին	
Անիթա Մուշոյեան	429
Յուշը, Վեր-Յուշը Եւ Յետ-Յուշը. Միջ-Սերունդային Թրոսային Հետքերը Ուիլիըմ Սարոյեանի, Փիթըր Պալաքեանի Եւ Քրիս Պոհճալեանի Գրական Երկերուն Մէջ	
Արմէն Իւրնէշլեան	491
Ցեղասպանութեան Նիւթի Արծարծումը Սփիւռքահայ Թատրերգութեան Մէջ	
Կարինե Ռաֆայէլեան	519
Հայի Խտատիպի Միքանի Դրսետրումներ Դերենիկ Դեմիրճեանի «Հայը» Խոհագրութեան Խորապատկերին	

Արմեն Շ. Սարգսեան	543
Հայ Ժողովրդական Երգիծական Մանրապատումներում Զուարճախօսութիւնները Որպէս Յեղասպանութեան Վկայութիւններ	
Զաւէն Սարրլեան	559
Հայոց Յեղասպանութեան Մասին Թրքական Խեղաթիւրումները Հերքող՝ Փաստաթուղթերու Ընտրանի Մը	

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Արիստակէս Միմաւորեան	573
Հայոց Մեծ Եղեռնը Եւ Հայ Կաթողիկէները. Որոշ Դիտարկումներ	
Գրիգոր Արշակեան	583
Հայոց Յեղասպանութեան Ճանաչման Խնդիրը Եւ Թուրքիա-Իսրայէլ Յարաբերութիւնները	
Վահրամ Հովեան	605
Եկեղեցական Գոյքի Վերադարձման Խնդիրը Որպէս Հայոց Պահանջատիրութեան Բաղկացուցիչ	

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Նարինէ Երանոսեան	623
Հայկական Հարցը Եզիպտոսի <i>Ալ-Մուշիր</i> Պարբերականի Երգիծանկարներում, ԺԹ. Դարի Վերջին Քառորդին	
Նարեկ Յակոբեան	637
1912-1914ի Հայկական Բարենորոգումները Եւ Գրիգորիս Վրդ. Պալաքեանի Նամակը Գէորգ Է. Ամենայն Հայոց Կաթողիկոսին	
Անդրանիկ Տազէսեան	645
Շարի Տեղահանութիւնը [28 Մայիս-17 Յունիս 1915]	

Վարդան Մատթեոսեան	655
Ամերիկահայութիւնը Եւ Ս. Էջմիածինը. Վաւերաթուղթ Մը՝ Մեծ Եղեռնի Հայ Գաղթականներուն Մասին (1916)	
Զաւէն Սարրլեան	671
Արաբական Գաղտնի Տեղեկագիր 27 Սեպտեմբեր 1916ի (Գիշեր)	
Միհրան Մինասեան	685
Արամ Անտոնեանի Անտիպ Գրառումները Տէր Զօրի Կոտորածներուն Մասին	
Վաչէ Ղազարեան	725
Եղեռնաշարին Առնչուող Քանի Մը Պատառիկ (Հայոց Դէմ Գործադրուած Ցեղասպանութեան 100ամեակին Առիթով)	
Եղիկ Թաշճեան, Անդրանիկ Տազէսեան	765
Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի Եւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Միջեւ Գործակցութիւնը Որբերու Եւ Գաղթականներու Օգնութեան	
Հրայր Եսայեան, Անդրանիկ Տազէսեան	773
Ճինիի Որբանոցին Մասին Պատառիկ Մը (1920-1925)	

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Նորա Արիսեան	781
Հայոց Ցեղասպանութեան Շրջանին Տէր Զօրի Մէջ Հայերու Ներկայութիւնը՝ Ըստ Արաբական Աղբիւրներու	
Արծուի Բախչինեան	791
Հայոց Դէմ Գործուած Ցեղասպանութեան Արձագանգները Ծայրագոյն Արեւելքի Երկրներում	

Անի Աւետիսեան	803
Օրհան Փամուքի «Թուրքիայում 30,000 Քուրդ Է Սպանուել, 1 Միլիոն Էլ Հայ» Արտայայտութեան Յարուցած Փոթորիկը	
Գոռ Երանեան	819
Հայոց Յեղասպանութեան Մասին Քրդերի Բանաւոր Պատմութիւնները (Ըստ Գիւլչիչէք Թեքինի <i>Քրդերը Պատմում Են Հայոց Յեղասպանութեան Մասին</i> Գրքի)	
Վարուժան Պօղոսեան	843
Հայոց Յեղասպանութեան Ուսումնասիրութեան Երախտաւոր Պրոֆեսոր Հայկ Ղազարեանի Մահը	

ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրանուշ Խառատեան	
Ի. Դարի Միջնադար (Ինքնութեան Զարգացումը) (Գ.)	
Ներածութիւն	847
«Իսկի Ինսան». Երբ Մեր Ծնողները	859
Դեռ Հայ Էին, Իրենք Միրաքեաններից Էին, Յետոյ Դարձել Են Հայդարան	
Գետինը Ականջ Ունի, Ըսեանէ՝ Կ'երթայ Չայնը	868
Մայրիկս Մի Անգամ Ասել Է. «Մենք	874
Թուրք Չենք», Բայց Չի Ասել Մենք Ինչ Ենք	
«Տեսակ Մը Թաքնուած Կ'ապրէին Հայերը.	885
Իբրեւ Թէ Չիկանք». Սարգիս Էրքոլի Պատմութիւնը Սոցիալիստը. «Վրացի Եմ, Թուրք Եմ, Հայ Եմ,	906
Այստեղ՝ Քուրդ Եմ». Ես Կոմունիստ Եմ	

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Մինաս Գոճայեան	923
Քաթիա Փելթեքեան, <i>Հայոց Յեղասպանութեան Ժամանակը. Տեղեկատուութիւններ՝ Բրիտանական Մամուլէն, 1914-1923, Հտր. 1 եւ 2</i>	
Շուր Փափազեան	926
Եան Օթթօ Եոհանսէն, <i>Հայոց Յեղասպանութիւնը</i>	
Աշխատակիցներու Ուշադրութեան	929
Բովանդակութիւն	933

TABLE OF CONTENTS

Editorial

What Beyond the Armenian Genocide Centenary?

ARTICLES AND STUDIES

Ashot Voskanian	9
The Guardian of the Disaster	
Rober Koptaş	45
Armenian Political Thinking Before and After the Young Turk Revolution	
Yeghig Djeredjian	91
The Parliamentary Activities of Hampartsum Boyadjian (Medzen Murad) (1908-1912)	
Vahram L. Shemmassian	137
The Musa Dagh Resistance to the Armenian Genocide	
Anahit Khosroyeva	185
The Assyrian Genocide in the Ottoman Empire: Brief Introduction	
Armin Kredian	201
The Armenian Community in Egypt: World War I and the Armenian Genocide (1914-1919)	
Armen S. Hayrapetyan	249
The Number of Refugees Settled in the Province of Alexandropole During WWI	
Gayane Makhmourian	273
The Policies of the US and the Allied Powers Regarding the Defense of Western Armenia (1917-1918)	
Karine Alexanian	293
Armenian-Turkish Relations During the Occupation of the District of Alexandropole (1918-1921)	

Lerna Ekmekcioglu	327
Climate of Abduction and Redemption: The Politics of Inclusion of Women and Children during and After the Armenian Genocide	
Antranik Dakessian	375
A Victim of the Armenian Genocide: The Art of Urfa Coppersmiths and Coppersmith Hagop Manerian	
Ruben Melkonyan	399
The Armenian Factor in the Dersim Genocide (1936-38)	
Father Antranik Granian	421
The Other Side of the Words: Words Denoting Massacres etc.	
Anita Moutchoyan	429
Memory, Postmemory, and Beyond: Tracing Trans-Generational Trauma in the Literary Works of Saroyan, Balakian, and Bohjalian	
Armen Urneshlian	491
The Reflection of the Armenian Genocide in Diaspora Armenian Plays	
Karine Rafayelian	519
Derenik Demirchyan's Essay "The Armenian" in Relation with Other Armenian Authors' Manifestations Regarding the Character of the Armenian	
Armen Sh. Sarksyian	543
Armenian Popular Comic Anecdotes as Reflections of Genocide Accounts	
Zaven Messerlian	559
Turkish Falsehoods Concerning the Armenian Genocide: Selected Documentary Evidence	

SCRUTINY

Aristakes Simavoryan	573
The Armenian Genocide and the Armenian Catholics: Some Remarks	
Krikor Arshagyan	583
Armenian Genocide Recognition and Turkish-Israeli Relations	
Vahram Hovyan	605
The Issue of Church Property Restitution as a Constituent Element of Armenian Demands	

UNPUBLISHED DOCUMENTS

Narine Yeranosyan	623
The Armenian Question Through the Caricatures of the Egyptian Periodical <i>Al-Musheer</i> (Late-19 th Century)	
Narek Hakobyan	637
Father Grigoris Balakian's Letter to the Catholicos of All Armenians Gevorg V, Concerning the Armenian Reforms of 1912-1914	
Antranik Dakessian	645
The Deportation of Shar	
Vartan Matiossian	655
The Armenian American Community and Holy Echmiadzin: A Document on the Armenian Refugees of the Medz Yeghern (1916)	
Zaven Messerlian	671
Secret Arabian Report of September 27, 1916 (Night)	
Mihran Minasian	685
Aram Andonian's Notes on the Massacres of Deyr Zor	

Yeghig Tashjian & Antranik Dakessian	765
Near East Relief and AGBU Cooperation in Relieving Armenian Refugees and Orphans	
Hrayr Yessayan & Antranik Dakessian	773
Some Notes on the Orphanage of Jounieh (1920-1925)	

BRIEFINGS

Nora Arissian	781
The Presence of Armenians in Deyr Zor During the Armenian Genocide, According to Arab Sources	
Artsvi Bakhchinyan	791
Echoes of the Armenian Genocide in Far East Countries	
Ani Avetisyan	803
The Reaction of Orhan Pamuk’s “One Million Armenians and Thirty Thousand Kurds Killed in Turkey” Statement Breaks Havoc	
Gor Yeranian	819
Kurdish Oral History on the Armenian Genocide and Gulcicek Tekin’s Book	
Varujan Boghossian	843
The Loss of Professor Haig Ghazarian, Dedicated Researcher of the Armenian Genocide	

MEMOIRES

Hranush Kharatian	847
The Middle Period of the 20 th Century (the Development of Identity) III	
Introduction	847
“Iski Insan” When Our Parents Were Still Armenians, They Were from the Mirakians, Later on They Were Converted to Heydaran The Ground Has Ears.	859
If You Say Something the Sound Communicates My Mother Once Said “We Are Not Turks”, But Did Not Say What We Are “The Armenians Used to Live A Sort of Covered Life, As If We Do Not Exist.”	868
The Story of Sarkis Erkol The Socialist: “I Am Georgian, I Am A Turk, I Am An Armenian. At this Place I Am A Kurd. I Am A Communist	874
	885
	906

BOOK REVIEWS

Minas Kodjayan	923
Katia Peltekian, <i>The Times of the Armenian Genocide. Reports in the British Press Vols. 1 & 2, 1914-1923</i>	
Sjur Papapzian	926
Jahn Otto Johansen, <i>Folkemordet På Armenene</i>	
Note to Contributors	931
Table of Contents	939

**ՀԱՅԿԱԶԵԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՆՐԷՍ**

ՏՊԱՔԱՆԱԿ՝ 300

**Գին՝ Լիբանան 30.000 Լ.Ոսկի
Արտասահման 20 Տոլար**

Տպագրութիւն Գրիգոր Անթունեան

**HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW
HAIGAZIAN UNIVERSITY
P.O.BOX 11-1748
BEIRUT-LEBANON
Email: review@haigazian.edu.lb**